

ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀԻՆԳ ԳԱՒԱՌԱՅՆ ԱՐԱՐԱՏԱՅ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
2014

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Յ 630

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Աշխատասիրությամբ

Արմեն Տեր-Ստեփանյանի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ
Յ 630 ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀԻՆԳ ԳԱՒԱՌԱՑՆ ԱՐԱՐԱՏԱՅ/ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ; Աշխատասիրությամբ Ա. Տեր-Ստեփանյանի.- Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2014.- 560 էջ:

Ներկա հրատարակությունը ընդգրկում է Հովհաննես եպս. Շահխաթունյանցի [20.5.1799, գ. Շահրիար (Շարուր գավառ) – 1.3.1849, գ. Շահրիար] «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ (հ. 1–2, 1842) աշխատությունը, որը փաստական նյութեր է պարունակում քաղաքամայր Վաղարշապատի սրբավայրերի ու հուշարձանների, Այրարատի հինգ գավառների վերաբերյալ:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ
ՄԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ

ISBN 978-9939-59-131-5
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հովհաննես եպս. Շահխաթունյանցի «Ստորագրութիւնք»-ը տարիներ շարունակ օգտագործվել է բազմաթիվ պատմաբանների, հատկապես՝ վիմագրեր հրատարակած գիտնականների կողմից:

Սույն վերահրատարակության մեջ ուղղում ենք առկա վրիպակները Մատենադարանում պահվող Շահխաթունյանցի ինքնագրերով (ՄՄ 4535. Մատենադարանի արխիվ, զանազան հեղինակների ֆոնդ, թղթ. 41, վավ. 1, 2, նաև՝ անդ, թղթ 42, վավ. 1, թղթ. 55, վավ. 16[1]): Այս նյութերի մեջ կան վիմագիր արձանագրություններ, ուր Շահխաթունյանցը նկարել է չընթերցվող բառը, իսկ տպագրում դրել է կետեր: Այն բառերը, որոնք մենք կարողացել ենք վերծանել և ընթերցել, բերում ենք իբրև ծանոթագրություն:

Միօրինակ ենք դարձրել տարբեր գրությամբ ներկայացվող բառերը (Հայաստանեաց - Հայաստանեայց, Յովսեփ - Յովսէփ, Ներսես - Ներսէս, Գեղարքունի - Գեղաքունի, Դադի վանք - Դատի վանք, կարմրախայտ -կամրախայտ, դուքան - տուքան և այլն):

Ինչպես ձեռագրերում, այս հրատարակության մեջ ևս բազմաթիվ են հապավումները, որոնք բացել ենք: Բառաբաժանումները, մեծատառերի և փոքրատառերի գործածությունն անկանոն են: Մենք ուղղել ենք ինչպես ուղղագրությունը, այնպես էլ կետադրությունը՝ պահելով հեղինակի ոճային առանձնահատկությունները:

Հայկական թվականների կողքին ոչ միշտ է տրված Փրկչականը. մենք ամենուր լրացրել ենք: Եթե վիմագրերը հրատարակվել են «Դի-

---

[1] [Եթե նախորդ երկուսը սույն «Ստորագրութեան» առաջին և երկրորդ հատորների բնագրերն են, ապա երրորդը պարունակում է երկրորդ հատորի նյութերը: Թղթ. 55-ինը մի ամբողջական գործ է, որի խորագիրն է՝ «Ստորագրութիւն երկուց քաղաքացն Արմաւիրայ և Վաղարշապատու և հանգամանք շինութեանցն սրբոյ Կաթողիկէ Շողակաթ անուանելոյ Մայր Աթոռոյն Էջմիածնի և չորից մենաստանացն առընթեր նմին եղելոց հանդերձ արձանագրութեամբ նոցին: Աշխատասիրեալ Յովհաննու աբեղայի Գէորքեան Շահխաթունեանց Շահրիարցւոյ, միաբանի սրբոյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի: ՌՄՀԸ.1829»: Հավանաբար Շահխաթունյանցը նախապես ծրագրել է սա որպես առանձին գործ հրատարակել, սակայն հետագայում ծրագիրը փոխել է և այստեղի նյութերն ևս օգտագործել է «Ստորագրութեանց»-ի մեջ]:

վան հայ վիմագրության» կամ այլ ժողովածուներում, համեմատել ենք և ծանոթագրություններում արտահայտել կարևոր տարբերությունները: Մեր բոլոր միջամտությունները և ծանոթագրությունները տվել ենք ուղիղ ([]) փակագծերում: Մյուս բոլոր ծանոթագրությունները և հավելումները Շահխաթունյանցինն են:

Պատմիչներից կամ վիմական արձանագրություններից բերված մեջբերումներում կատարված կրճատումները և հավելումները ևս Շահխաթունյանցինն են: Մեր բոլոր դիտարկումները բերված են իբրև ծանոթագրություն՝ ուղիղ փակագծերում:

Շահխաթունյանցն իր ինքնագրում հայկական թվականի կողքին փակագծում դրել է նաև փրկչականը՝ հաճախ **յամի** բառով (օրինակ՝ **յամի 1221**): Ինչ-որ պահի որոշել է **յամի** բառը ջնջել: Ստացվել է այնպես, որ մի մասում **յամի** բառը կա, մյուս մասում՝ ոչ: Մենք ամենուր **յամի**-ն հանել ենք և դարձրել միօրինակ, ինչպես, հավանաբար, ցանկացել էր կատարել հեղինակը:

Երկրորդ հատորում Շահխաթունյանցն օգտագործել է նաև Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանցի ընդօրինակությունները (ՄՄ 4337, 7821 և 9923): Դրանք ևս համեմատված և սրբագրված են:

Շահխաթունյանցի «Ստորագրութեան» երկու հատորների ընդհանուր անվանացանկերը կազմված են մեր կողմից: Ոչ թավ տրված են Շահխաթունյանցի համարակալումները, իսկ թավ՝ սույն հրատարակության էջերը:

Վերջում իբրև հավելված բերված են երկու բնագրեր: Առաջինը Շուշիում տպագրված մի Ժամագրքի վերջում Շահխաթունյանցի հրատարակած կաթողիկոսացանկերն է, իսկ երկրորդը՝ 1840 թ. երկրաշարժի մասին Շահխաթունյանցի գրած և դեռևս անտիպ մի նյութը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Կաթուղիկէ Էջմիածնի

և հինգ

Գաւառացն Արարատայ

Աշխատասիրութեամբ Յովհաննու
եպիսկոպոսի շահխաթունեանց շահրի-
արքայ միաբանի արբոյ Էջմիածնի

Բոժանէաղ Յէրիցու հոգոյ

ՀԱՏՈՐ ԱՌՈՒԱՐՔԻՆ

առաջին

Հրամանաւ վեհափառ կաթուղիկոսի ամ Հայոց
Ը, Յովհաննու կարբեցւոյ և զանազան նշանակրի
Տէրութեանն Ռուսաց

Ի Ս, Կաթուղիկէ Էջմիածին

1842 = ռմղա։


Ուրա՛խ լեր սիրելի մա՛յր եկեղեցի։
քանզի ՝ի քեզ շող ածեղէն ՝ի հօրէ
լուսոյ ծագեաց։

ԼՀ միածինն ՝ի հօրէ և լոյս փառաց
ընդ նմա։ ձայնք հնչեցին սանդարա-
մետք անդնդոց։

՝Ի շրջանոցն։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զի՛ք ոք ծնեալ ի բանաւորս, եթէ ոչ ի հայրենիս ուրեք: Զի՛ք ոք ճանաչող անձին ծնեալ առանց օգտի անձին եւ հայրենեաց: Այլ առաւել ընդունելի դատեսցի օգուտն հայրենեաց, քան անձին. քանզի յօգտիլ հայրենեացն անտարակո՛յս հաշուեսցի եւ ինքն ի թիւս համազգեաց, որք միահաղոյն բաղկացուցանեն զյիշեալ հայրենիսն. առ որ ի դէպ գայ բարոյական խրատն Սողոմոնեան. Որդեա՛կ իմ, թէ իմաստուն լինիցիս, անձին քում իմաստուն իցես եւ ընկերաց (Առակաց Թ գլուխ, 12 համար). այլ օգնել համազգեաց՝ ա՛յն է հայրենեաց, բազմօք առեալ լինի ըստ կոչման եւ յատկութեան անձին:

Զի՛ք ոք անձն ժառանգ հայրենեաց, որ չիցէ ըստ իմիք պիտանի կամ օգտաբեր իւրոց հայրենեաց. հայրենեաց ասեմ, իւրում իսկ տան եւ գերդաստանի: Եւ ահա միով բանիւ առաքելոյն Պօղոսի բացատրի իմաստ ասացելոցս՝ առեալ զայն յօգտաբեր պէտս եւեթ. Այլ ի տան մեծի ո՛չ միայն են անօթք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլեւ փայտեղէնք եւ խեցեղէնք (յԲ Տիմէթէ, Բ գլուխ, 20 համար):

Յայս նպատակ գովանի միշտ խորհրդածելով մեր ըստ պարտաւորութեան կոչման մերոյ առ հայրենիս, հանդիպեցայ երբեմն յԵրեւան քաղաքի այցելութեամբ սիրոյ թանկագին բարեկամի մերում ազգասէր եւ հայրենասէր իշխանի գերազնիւ Թովմայի Յովսէփեան Ղօրղանեանց Տփխիսեցւոյ եւ ասպետի[1]: Եւ տեսեալ առ նմա զՍտորագրութիւն հին Հայաստանի՝ զարդիւնաւոր վաստակն հայր Ղուկասու Ինճիճեան[2]: Եւ զկնի ինչ ինչ առարկութեանց պարունակելոց յայն մատեան՝ տեսի ի վախճանի այնր յաւելորդ թերթի անդ ի մի երես բովանդակեալ զայս բան գրուածոյ ի նորուն գերազնուութենէ.

«Բազո՛ւմ են յոյժ սխալմունք ի Ստորագրութեան յայսմիկ հին Հայաստանի. գոլով ես ներկայ եւ տեսեալ զբազում տեղիս այժմեան Հայաստան նահանգին Ռուսաց, որ չրջափակէ յինքեան զգաւառսն

---

[1] Սա զկնի քանի ամաց՝ ա՛յն է յամի 1836, ի 21 օգոստոսի, ըստ բարձրագոյն կամաց՝ հրամանաւ կառավարիչ Սինկղիտոսի հզօր տէրութեանն Ռուսաց կարգեցաւ Ա պրօկուրօր Լուսաւորչեան Հայոց Սիւնհոդոսի Սրբոյ Էջմիածնի, յորում պաշտաման եւ ընկալեալ է զաստիճան կոլլէժսկի սովետնիկի եւ զանազան նշանս ասպետութեանց տէրութեանն:

[2] [Տե՛ս Ստորագրութիւն հին Հայաստանեայց, տեառն հ. Ղուկաս վարդապետի Ինճիճեան. Մեծ Հայք, Վենետիկ, 1822]:

Այրարատ, Շիրակ, Սիւնիք, Տայք, Արցախ, Գուգարք, Փայտակարան, Ուտի եւ այլն, յոլով զանազանութիւնս գտի յայսմ մատենի: Բայց գովեմ զաշխատանս Աբբայեցւոց, քանզի սոքա ի պատմագրաց եւ ի հին մատենից մերոց հանեալ են զայս ամենայն եւ ո՛չ թէ ներկայ գոլով ստուգեալ: Ուրեմն մատուցանելով սոցա զլիովին շնորհակալութիւնս, հրաւիրեմ զմիաբանս Սրբոյ Էջմիածնի, մանաւանդ զծանօթն իմ զՅովհաննէս վարդապետն Շահխաթունեանց զայրն գիտնական, փոյթ տանել եւ ջանադիր լինել՝ ուղղել զայն ամենայն եւ զջանս Աբբայեցւոց պսակել եւ ի կատար հասուցանել: Ո՛հ թէ քանի երջանկութիւն լինէր աշխարհին Հայաստանեայց, եթէ յիշեալ միաբանութիւնն Աբբայեան թողեալ զօտար եւ զայլասեռ երկիր եւ զսնոտի մտերմութիւնս իւրեանց առ նոսա, գային ի Հայրենիս իւրեանց եւ աստէն գնէին զջանս եւ զաշխատանս իւրեանց ի ծոց հայրենեաց եւ սեպհական մայր եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ընդ հզօր հովանաւորութեամբ մեծի կայսեր Ռուսաց եւ արքային Հայոց Նիկողայոսի Առաջնոյ:

Անդամ նահանգական կառավարութեանն Հայաստանի նատվորնիյ սովետնիկ եւ ասպետ Թ. Ղ.: Ի 5 յունիսի 1832:

Ի Ծաղկոցաձոր, առ քայքայեալ, բայց երբեմն հռչակաւոր վանս Կեչառուաց»:

Ապաքէն ի գրուածոց աստի եւ ի կենդանաբարբառ յորդորանաց նորին գերազնուութեան եւ մանաւանդ ես ինքնս գոլով հարազատ ծնունդ Լուսաւորչեան եկեղեցւոյ Հայոց եւ նոյն իսկ եկեղեցին ինձ հայրենիք, պարտաւոր էի ըստ իմիք լինել պիտանի. վասն որոյ ըստ իմովսանն ի հանդիպմունս ինձ յառաջ ելեալ միջոցաց պարապեցայ յօգուտ համազգեաց՝ ա՛յն է անդամոց հայրենի եկեղեցւոյ, որքան կարելին էր հաւաքել ի մի զհին եւ զնոր ծանօթութիւնս ստորագրութեանց մեծի տաճարիս Շողակաթ Աստուածածին Կաթուղիկէ Մայր եկեղեցւոյ Հայաստանեայց՝ հայրապետական Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, բաժանելով զայն յեօթն հատուածս, որք բովանդակին յառաջին հատոր այսր մատենի:

Յառաջնումն հատուածի՝ շինութիւնք, քանդմունք եւ նորոգութիւնք մեծի տաճարին սրբոյ ի Լուսաւորչէ անտի ցայսր:

Յերկրորդումն՝ ինչ ինչ նշանաւոր գործք ճարտար արհեստաւորաց, որք արդէն գտանին յայսմիկ մեծի տաճարիս Աստուծոյ:

Յերրորդումն՝ պաշտելի հնութիւնք՝ այն է նշանք սրբութեանց եւ մասունք նշխարաց սրբոց, որք գտանին այժմ աստ ի գանձարանի սրբոյ Կաթուղիկէ եկեղեցւոյս:

Ի չորրորդումն՝ շինուածք տան կաթուղիկոսարանի եւ մենաստանի ցարդ եղեալ փոփոխութեամբքն հանդերձ, յորում եւ գրական լուսաւորութիւնն եւ ուսումնարանն իսկ:

Ի հինգերորդումն՝ կալուածք տան կաթուղիկոսարանի եւ մենաստանին:

Ի վեցերորդումն՝ հիմնադիրք քրիստոնէական հաւատոյ Հայաստանի եւ պահպանողք զայն ցսուրբն Գրիգոր Պարթեւ, եւ անտի յաջորդ կաթուղիկոսունք մինչեւ ցԸ-րդ Յովհաննէս Կարբեցի:

Եւ յեօթներորդումն՝ միւս չորք եկեղեցիք Վաղարշապատու, այն է սրբուհեացն Գայիանեայ, Հռիփսիմեայ, Շողակաթի եւ Սուրբ Գրիգորի:

Իսկ յերկրորդումն հատորի ի մասնաւորի հաւաքեալ ծանօթութիւնք ստորագրութեանց շինուց եւ դաստակերտաց եւ ի նոսին ականաւոր մենաստանաց եւ եկեղեցեաց գաւառացն Արագածոտան, Կոտայից, Նգայ, Վարաժնունեաց եւ Գեղարքունւոյ: Յորս միջոց առ միջոց շրջեցայ՝ թէ՛ ըստ դիպաց եւ թէ՛ ըստ տասնեւութնամսեայ ժամանակի պարտաւորութեանն ինձ յանձն եղելոյ ի ծայրագոյն հոգեւոր իշխանութենէ յամփոփեալ վիճակին Երեւանայ հոգեւոր այցելութեամբ ըստ առաջին դրութեանն յաման 1834, 1835: Իսկ եւ ի վերջոյ իբր յաւելուած եդաք եւ զստորագրութիւն ինչ ինչ ականաւոր մենաստանաց, որք գտանին ի նահանգի աստ Երեւանայ արտաքոյ վերոյգրեալ գաւառացն: Եւս եւ զշարակարգութիւնս կաթուղիկոսացն Աղուանից՝ հանեալ ի պատմագրաց եւ ի հատուածական թղթոց գտելոց առ ոմանս եւ յարձանագրութեանց, որովհետեւ կաթուղիկոսունքն այնոքիկ ըստ վաղեմնի սահմանադրութեանց կային ընդ իշխանութեամբ կաթուղիկոսացն Հայոց Սրբոյ Էջմիածնի եւ ցարդ իսկ ոչ գտանէր ուրեք ի պատմագիրս ամբողջութեամբ: Եւ թէպէտ տպագրեցաւ այն յամրոցն Շուշի յամի 1838 յաւարտ Ժամագիրք մատենին, այլ առանց ժամանակագրական տեղեկութեան[1]*: Եւ ոմանք պակասք ի կարգի անդ եւ ոմանք եւս կրկնութեամբք եղեալ, զորս յայտ առնեն եթէ նախադաս ծանօթութիւնն եւ եթէ*

[1] [«Կարգ եւ թիւք անուանց կաթուղիկոսացն Հայոց, սկսեալ ի սրբոյն Թադդէոսէ առաքելոյն եւ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մինչեւ այս վայր՝ ի տէր Յոհաննէս սրբազնասուրբ կաթուղիկոսն, հաւաքմամբ ուրումն բանասիրի, ի փառս մեծին Աստուծոյ», Ժամագիրք, Շուշի, 1838, էջ 579-584. «Անուանք եւ թիւք կաթուղիկոսացն Աղուանից, սկսեալ ի սրբոյն Եղիշէէ առաքելոյն յաշակերտէ սրբոյ առաքելոյն Թադէոսի մինչեւ ի տէր Սարգիս վերջին կաթուղիկոսն, որ էր ի տոհմէ Հասան Ջալալեանց», անդ, էջ 585-590. բնագրերը տե՛ս երկրորդ հատորի վերջում՝ հավելվածում]:

ի շարակարգի անդ յառաջ բերեալ տեղեկութիւնքն ապացուցութեամբք հանդերձ. եւս եւ զի՛նչ ինչ արձանագրութիւնս եկեղեցեացն Աղուանից:

Այս դուզնաքեայ երկասիրութիւն մեր յերկուս հայի նպատակս. նախ՝ ի ծանօթութիւն ընդհանուր անդամոց հայրենի եկեղեցւոյ զայնր գերայարգ տեղւոյ, որ ընդունարան է առաջին ընդհանուր լուսաւորութեան քրիստոնէական հաւատոց Հայաստանի եւ ընդհանուր գրական լուսաւորութեան հայրենի եկեղեցւոյ, եւ երկրորդ՝ ի հրատարակումն գովանի ջերմեռանդութեանց հայրենասէր որդւոց Հայաստանի ըստ արդիւնաշատ նուիրատուութեանցն յայսոսիկ չինարարութիւնս, որոց ստուգութեանցն անխարդախ վկայք են արձանագիր յիշատակագրութիւնքն յեկեղեցիս եւ ի մենաստանս եւ յայլս, զորս եւ ունիք ընթեռնուլ յայսմ մատենի:

Ի վախճանի մաղթեմ ի բարեմիտ վերծանողացն անբասիր առնել զմերս չափաւորութիւն յաղագս թերութեան գործոյս այսորիկ, քանզի դիտաւորութիւն մեր իսկ էր գլխաւորել զայս վաստակ լրութեամբք հին եւ նոր ծանօթութեանց թագաւորաբնակ քաղաքաց, գիւղաքաղաքաց, դաստակերտաց եւ բովանդակ գիւղորէից, մեծակառոյց եկեղեցեաց, մենաստանաց, մատրանց, պանդոկաց, կամրջաց այլովքն հանդերձ՝ զէ՛թ եղելոցն յայս ամփոփեալ Արարատ աշխարհ, որ ի տիրապետութեան օգոստափառ ամենողորմած կայսեր Նիկողայոսի Ա անուանեցաւ Նահանգ Հայոց, իսկ ըստ կարգադրութեանն եղելոյ յանցեալ 1840 ամի՝ գաւառ, յերկուս բաժանելով զայն՝ յԵրեւան եւ ի Նախիջեւան ինքեանց յատկացեալ սահմանօքն, որք պարունակեն յինքեանս Երեւան՝ զմասն Երասխաձոր գաւառի, զՃակատք, զՄասեացոտն, զԱրագածոտն, զՆիգ, զԿոտայս, զՎարաժնունիս, զԳեղարքունի շուրջ զծովակաւն, զՇարուր, զՎետի, զդաշտն Դունայ եւ զառանձինն Արարատ, ուր գտանի Վաղարշապատ քաղաք, յորում եւ Կաթուղիկէ Մայր եկեղեցին Հայաստանեայց: Նախիջեւան՝ զԵղեգնաձոր, այսինքն Վայոց ձոր, զԵրնջակ, զԳողթն եւ զՋահուկ:

Բայց ինչ ինչ բանաւոր պատճառք արգելք եղեն առ այժմ այնպիսի դիտաւորութեան մերում, իսկ թէ դէպք ինչ լինիցին մեզ բարեյարմար միջոցաց, ո՛չ դանդաղեսցուք առաջի առնել հետաքնին հնասիրաց եւ զայնց մնացեալ գաւառացն Արարատայ զստորագրութիւնս եւ զմասնաւոր չինուց ստորագրեալ այսց գաւառաց, որք ի կարգէ ստորագրութեանցն մնացին ի բացեայ:

ՀԱՏՈՒԱԾ Ա

Շողակաթ Աստուածածին Կաթուղիկէ Մայր եկեղեցի Հայաստանեայց, այն է տաճար Սրբոյ Էջմիածնի ի Վաղարշապատ

1. Սուրբն Գրիգոր Մեծն Պարթեւ Լուսաւորիչ Հայաստանեայց զկնի երկոտասան թուով անտանելի չարչարանացն եւ լինելոյն ի համար վերջին պատժի ի Խոր Վիրապին Արտաշատ քաղաքի՝ ի տեղւոջն մահապարտաց զամս հնգետասան հանդերձ ժամանակօք չարչարանացն, ելեալ ի խորոց անտի Վիրապին երկնազգեցիկ հրաշիւք տեսլեանց քեռ թագաւորին՝ բժշկէր աղօթիւք զհարուածեալսն ի դիւէ եւ վարդապետէր բազմութեան ազգի Հայոց եւ Մեծին Տրդատայ արքայի նոցա զուսումն քրիստոնէական հաւատոց յերկամսեայ աւուրս: Եւ ապա ի հասարակիլ գիշերոյ միոյ մինչ կայր սուրբն Գրիգոր յարթնութեան եւ սուգեալ էր ի խորս խորոց խորհրդոցն Աստուծոյ՝ սքանչելի տնտեսութեանց նորա ի փրկութիւն որդւոց մարդկան եւ մտախորհ լինէր յայնմ, տեսանէ զայն հրաշալին տեսիլ, յորում եւ ձեւ մեծի տաճարին այլովքն հանդերձ այսօրինակ կերպանայր ի լուսոյ անտի ճառագայթելոյ յերկնից. ուստի զկնի բացման վերին հաստատութեանն երկնից եւ լուսոյն հոսելոյ վերուստ ի վայր մինչեւ յերկիր եւ անչափ զօրաց լուսեղինաց իջելոց ընդ լուսոյն: Գրէ Ագաթանգեղոս.

«Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր եւ ահեղ, որ զառաջն ունէր եւ զէջսն ի վերուստ մինչ ի խոնարհ առաջապահ յառաջեալ եւ ի ձեռին իւրում ուռն մի մեծ ոսկի... եւ ինքն սլացեալ գայր ըստ արագաթեւ նմանութեան արծուոյ. եւ եկն, էջ, եհաս մօտ ի յատակ երկրիս, ի չինամէջ քաղաքիս (Վաղարշապատու). եւ բախեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյս, եւ մեծ եւ անչափ թնդիւնք հնչեցին ի սանդարամետս անդնդոց. եւ ամենայն երկիր յերեւելիս ական տեսանելեաց բաւականի՝ հա՛րթ, հաւասա՛ր, դաշտաձեւ յատակեցաւ:

Եւ տեսանեմ ի մէջ քաղաքիս մօտ յապարանս արքունի՝ խարս-խաձեւ, ճախարակաձեւ խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրեւ զմեծ մի բլուր եւ բարձր մինչեւ յոյժ. եւ ի վերայ նորա սիւն մի հրեղէն. եւ ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ եւ խաչ լուսոյ ի վերայ նո-րա:... Եւ ի չորեցունց սեանցն (երեք սիւնքն եւս ի տեղւոջ նահա-տակութեան կուսանացն) ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան. եւ ի վերայ այնորիկ տեսիլ գմբէթաձեւ խո-րանարդ ամպեղէն՝ շինուած աստուածակերտ զարմանալի:... Եւ ի կատար շինուածոյն տեսանէի աթոռ զարմանալի աստուածակերտ սքանչելի հրեղէն եւ զխաչն տէրունական ի վերայ նորա, զորով փարեալ լոյսն համատարած եւ խառնեցաւ ընդ ճառագայթս խա-չին: Եւ մածեալ ի նոյն միացեալ եւ սիւն գործեաց լոյսն շողացեալ եւ ծագեաց ի մէջ ներքին սեանցն խարսխաց: Եւ բղխեաց աղբիւր յորդառատ եւ հոսեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտն ամենայն, եւ ելից առհասարակ որչափ ակն բաւեաց» եւ այլն:

2. Ապա ի բացատրութեան հրեշտակին առ սուրբն Գրիգոր, գրէ նոյն հեղինակ.

«Իսկ այրս ահաւոր եւ շքեղաւոր, որ զառաջն ունի զլուսոյն եւ զուռն ոսկի ի ձեռին իւրում եւ բաղխեաց զսանդարամետս: Այս տեսչութիւն Աստուծոյ է:... Ոսկի խարիսխն՝ վէմն հաստատութեան անշարժութիւնն է, եւ սիւնն հրեղէն՝ կաթուղիկէ եկեղեցի է, որ ժո-ղովէ զամենայն ժողովուրդս ի միաբանութիւն հաւատոյ ի ներքոյ թեւոց իւրոց:... Իսկ խաչն լուսաւոր ի նմա՝ ինքն մեծ քահանայա-պետութիւնն է ի մէջ ժողովրդոց՝ օրինակ Քրիստոսի պատկերին մարմնացելոյ քահանայապետութեան օծութեան Աստուածորդւոյն: Եւ տեղին այն լիցի տաճար Աստուծոյ եւ տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց եւ աթոռ քահանայապետութեան:... Իսկ զի բարձր է սիւնն առաջին, զի մեծ եւ բարձր է պատիւ կաթուղիկէ եկեղեցւոյ:... Եւ ի վերայ կատարոյ շինուածոյն զոր տեսանես, նոյն ինքն աթոռ ամենազօր բնութեան աստուածութեանն բարձրութեան ինքնութեանն, զի նա ինքն է գլուխ եկեղեցւոյ սրբոյ եւ կատարիչ ամենայն բարութեանց: Եւ ի նմա ամենայն շինուած պատշաճի եւ աճէ զաճումն Աստուծոյ, յորում ամենայն յօդիւք եւ խաղալեօք հաստատեալ եւ կազմեալ է:... Եւ զի ծագեաց լոյս ի մէջ սեանցն չորեցունց եւ բղխեցոյց զաղբիւրն յորդառատ, զի ի կաթուղիկէ եկեղեցւոյ՝ շնորհք հոգւոյն ի մէջ վկայելոցն եւ ի մէջ քահանայա-պետութեանն, բղխեսցէ աղբիւրն մկրտութեան լուանալ զաղտս ոգ-ւոց մարմնովքն հանդերձ: Եւ այն զի յորդեաց, ելից բազում վայրս,

զի լինելոց է փրկութիւն բազում ժողովրդոց մկրտութեամբն:... Արդ, զգո՛յշ լեր աւանդիդ, որ քեզ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. չինեսջի՛ր զտաճար անուանն Աստուծոյ ի տեղւոջն, ուր քեզ ցուցաւ:... Եւ զայս ասացեալ (Հրեշտակին) շարժումն եղեալ եւ ընդ առաւօտանալն ծածկեցաւ տեսիլն»:

Ապա սուրբն Գրիգոր զկնի չինութեան երից վկայարանացն սրբուհեաց, ասէ.

«Եւ չորրորդ սիւնն կենդանութեան, որ զձեզ առ Աստուած վերացուցանէ: Եկա՛յք զնկատեալ տեղին տէրունական տանն եւ մեզ հրամայեալ ի մէջ առեալ ի պատիւ փակեսցուք: Թագաւորաւն եւ ամենայն ժողովրդովքն հանդերձ երթեալ հասանէր ի ցուցեալ տեղին հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին. եւ անդէն բարձր քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ եւ դրամբք եւ դռնափակօք ամրացուցեալ եւ կանգնեալ եւ անդ զնշան տէրունական խաչին, զի առհասարակ հասեալ ամենայն ոք յայն տեղի՝ ամենազօր Արարչին Աստուծոյ երկրպագեալ ծունր կրկնեսցեն:

3. Եւ զկնի այնր սուրբն Գրիգոր ըստ աստուածատուր շնորհացն եղելոյ յինքեան քարոզէր, ուսուցանէր եւ խելամուտ առնէր զամենեսին աստուածպաշտութեան խորհրդոցն եւ ճանապարհին փրկութեան հոգւոց նոցա: Եւ այնու եռանդեամբ թագաւորին եւ բազմութեանն զկուռսն խորտակէր, զմեհեանսն դից աւերէր: Եւ այնպէս զամենեսին մերձ առ ինքն եղեալսն վարժեաց աւետարանական ուսմամբն եւ յարդարեաց պատրաստ տեղի ընդունելութեան շնորհաց սրբոյ աւազանին: Եւ ապա հարկեալ ի թագաւորէն եւ ի ժողովոյ նախարարացն եւ տեսլեամբ իսկ ի հրեշտակէ Աստուծոյ՝ գնացեալ ի Կեսարիա Կապադովկացւոց յԱռաջին Հայք առ Ղեւոնդիոս արքեպիսկոպոս քաղաքին, որ էր ի ձեռնադրութենէ առաքելոյն Թադէոսի, ձեռնադրեցաւ ի նմանէ յեպիսկոպոսութիւն եւ վերադարձաւ առ արքայն մեծ Տրդատէս, զոր հանդերձ արքայազնովքն եւ ամենայն բազմութեամբ բանակին մկրտեալ յԵփրատ գետ եւ հաղորդեցուցեալ մարմնոյ եւ արեան Տեառն՝ գան այնպիսի լուսազգեստ շնորհօք դէպի թագաւորանիստն Վաղարշապատ ըստ նորուն Ագաթանգեղոսի.

«Հասանէր յառաջին դաստակերտն իւր յԸռոստակն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաքի. ուստի նախ զառաջին՝ աստուածասաստ հրամանացն լինէր սկիզբն, ուր նախ նշմարեացն իսկ եւ նշանակեաց, կանգնեաց զնշան սրբոյ խաչին:... Եւ զնկատեալ

տեղի տանն Աստուծոյ չինեաց՝ զցուցեալն նմա ի տեսլեանն զյառաջագոյն դրոշմեալն իւր եւ կանգնեաց անդ զեկեղեցին Աստուծոյ»:

Եւ այս ամենայն լինէր ի հնգետասաներորդ ամէ թագաւորութեանն Տրդատայ ցտասն եւ եօթներորդ ամն, այն է՝ յամէ Տեառն 301 ցամն 303, յորում ամի հիմնարկութեամբ պայծառ չինուածովք կառուցեալ կանգնեցաւ սոյն Կաթուղիկէ եկեղեցի:

4. Այս փառացի տաճար որպէս եւ նկատի ըստ պատմութեանց եւ ըստ աւանդութեանց կայ յայնմ դրութեան ըստ մեծութեան չինուածոցն՝ ի բարձրութիւնս, յերկայնութիւնս եւ ի լայնութիւնս, որպէս եւ յառաջն անդ ի մեծէն Գրիգորէ: Եւ թէպէտ չունին նշանակեալ պատմիչք ազգի Հայոց զառաջին դրութենէ մեծութեան տաճարիս, այլ որպէս ասացաւն՝ անփոփոխ հասեալ ցմեզ կայ ի նոյնութեան առանց ինչ ընդարձակութեան եւ փոքրկութեան: Եւ որպէս նշմարի՝ երկիցս այս տաճար անկեալ է ի ներքոյ մեծի աւերանաց եւ անդրէն նորոգեալ, յամսն 380 եւ 483. այլ նորոգութիւնք կամ կառուցմունքն այնք եղեալ են դարձեալ ի վերայ նոյն առաջին հիմանն ըստ ամենայն ձեւակերպութեանցն:

Առաքել պատմիչ Դավրիժեցի ի նորոգութեան անդ սուրբ տաճարիս եւ մենաստանի նորա ի Մովսէսէ Սիւնեցւոյ, գրեաց լիովին զամենայն զհանգամանսն. գրեալ է եւ զչափոյ մեծութեանն. 50 հալապի յերկայնութեանն, 48 ի լայնութեանն եւ 35 ի բարձրութեանն: Իսկ այժմ չափեալ մեր չափով պարսկային գազի Երեւանայ՝ եղեւ երկայնութիւն նորա թեւէ ի թեւ, ի ներքին երեսաց որմոցն 32 եւ կէս, լայնութիւնն նոյնպէս թեւէ ի թեւ 30 եւ կէս, իսկ բարձրութիւնն ի յատակէ եկեղեցւոյն մինչեւ ցառաստաղ մեծի կաթուղիկէին՝ 21:

5. Ունէր յայնժամ այս տաճար սրբութեան զմի միայն սեղան սրբազան խորհրդոյն յարեւելեան թեւի իւրում ի կիսաշրջանակ մեծի կամարի անդ եւ է մինչեւ ցայժմ. եւ օծաւ այն օրհնութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի յանուն օրհնաբանեալ կուսին Մարիամայ մօր Տեառն եւ անուանեցաւ Շողակաթ Աստուածածին*, յոր անուն եւ եկեղեցին իսկ:*

Քաջայայտ իսկ է ամենեցուն լինելն սեղանոյ սրբոյ տաճարիս մեծի յանուն սրբուհւոյ Աստուածածնի, զի եկեղեցական մատեանք ազգիս Հայոց բացատրեն ըստ այնմ: Հին Տօնացոյցն ըստ սահմանելոյ սրբոյն Գրիգորի ունի զտօն մեծի եկեղեցւոյս ի շաբաթ աւուր վերափոխման սուրբ Աստուածածնի յամսեանն օգոստոսի եւ ասէ. «Շաբաթ Շողակաթին տեսլեան սրբոյն Գրիգորի»: Ստեփաննոս Տարօնեցի վասն Ապլհաճայ ամիրայի այլազգւոյ ասէ թէ՝ «Այլ յետոյ

եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց եւ զփրկական նշանն, որ ի վերայ Շողակաթի գմբեթին կանգնեալ էր՝ ճոպանօք ի վայր բերէր ի ՆԼԱ (982) թուականին». ըստ այսմ եւ այլք:

6. Անուանէր եւ Կաթուղիկէ եկեղեցի եւ այն, ըստ բացայայտութեան հրեշտակին առ սուրբն Գրիգոր, որպէս ի համարն 2: Եւ զի անուանեցաւ Մայր եկեղեցեաց Հայաստանեայց, ըստ Յովհանու կաթուղիկոսի. «Իսկ... ապա մեծ հայրապետն Հայոց Բաբկէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց եւ Աղուանից ի Նոր քաղաքի (Վաղարշապատ) ի սուրբ Կաթուղիկէի ի Մայր եկեղեցեաց Հայոց»: Եւ թէպէտ նախքան զսա կառուցան եկեղեցիք ի Հայոց՝ որպէս յԵդեսիա, յաւանն Ագուլիս եւ յայլ տեղիս, այլ այնք ի թագնութեան եւ յառանձին հաւատացելոց: Եւ կառուցան եւս յընդհանուր լուսաւորութեանն՝ որպէս յԱշտիշատ, յիննակնեան տեղին եւ յաւանն Բագուան ի Բագրեւանդ գաւառ, բայց նշանագրութիւն այսր տեղւոյ յընդհանուր լուսաւորութեանն նախքան զայնս եւ ի թագաւորաբնակն իսկ քաղաքի: Եւ յատկապէս ի տեղւոջն, ուր նշանք եւ արուեստք զօրութեանց խնամակալ Արարչին առաւելապէս զեղան, յորդեցան ի փրկութիւն. վասն այնորիկ՝ Կաթուղիկէ եկեղեցի եւ Մայր եկեղեցեաց Հայաստանեայց:

7. Անուանի եւ Էջմիածին ի յետագայից, քանզի զբան տեսլեան սրբոյն Գրիգորի. «Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր եւ ահեղ», զոր հրեշտակն բացատրեաց յաղագս տեսչութեանն Աստուծոյ (ի համարսն 1, 2). առին յետագայ վարդապետք փոխանակ Որդւոյն Միածնի՝ բանին մարմնացելոյ: Ստեփաննոս Օրբէլ, յՈղբն որ ի վերայ մեծի Տաճարիս, յերես 8.

«Այս է՛ս, այս է՛ս՝ Էջք Միածնին,

Իմ Կուսածին Թագաւորին»:

Եւ Շարակնոցն ի մանկունքն տօնի Շողակաթին. «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» եւ այլն:

8. Այս տաճար յայնմ լուսաւորութեան ազգի Հայոց եղեւ մայր ամենայն եկեղեցեաց Հայաստան աշխարհի եւ յատկացեալ տեղի Աթոռոյ կաթուղիկոսական իշխանութեանն ըստ բացատրութեան հրեշտակին առ սուրբն Գրիգոր: Եւ ի լրութեան անդ եկեղեցւոյն եւ օծմանն կարգեաց տօն եկեղեցւոյ սուրբն Գրիգոր եւ կանոնեաց կատարել զայն ամ ըստ ամէ, զոր անուանեն տօն Շողակաթի եւ կատարեն ի նաւակատիսն վերափոխման սուրբ Աստուածածնի:

9. Ապա ի տկարանալ իշխանութեան Հայոց եւ ի մեկնելն Մեծին Ներսէսի սրբոյ հայրապետի ի Յունաստան՝ հրամանաւ Շապհոյ Բ

արքային Պարսից, ուրացեալքն ի հաւատոց Մէհրուժան եւ Վահան զօրօք նոցին Պարսից մտեալ ի Հայաստան յամի 380, աւերեցին եւ գերեցին զբազում գաւառս. ընդ որս եւ զՎաղարշապատ քաղաք տապալեցին ի հիմանց, զորմէ Բուզանդ պատմիչ (ի Դ դպրութեան, ի գլուխ ԾԵ): Ուր որպէս երեւի աւերեալ էր եւ մեծապէս եւ մեծ եկեղեցին Կաթուղիկէ, զոր թերեւս զկնի թագաւորելոյն Պապայ նորոգեալ էին նախնիք մեծին Վահանայ Մամիկոնէի, որպէս ստուգի ի բանից Փարպեցւոյն (10): Եւ գուցէ ի ժամանակէ անտի նորոգութեանն եկեղեցւոյս ի նախնեաց Վահանայ Մամիկոնէի, յորում ժամանակի տակաւին չէր տառ հայացի, մնացեալ իցէ յունական արձանագրութիւնն խաչաձեւ, որ եղեալ կայ ի հիւսիսային որմն եկեղեցւոյս արտաքուստ զթիկամբ սրբոյ աւազանին: Եւ Վահան Մամիկոնեան ի նորոգելն զայս տաճար թողեալ իցէ զայն յիւրումն տեղւոջ ի նշան եւ ի յարգանս իւրոցն նախնեաց: Իսկ այն վէմ յունական արձանագրութեան ունի զայս ձեւ ըստ ամենայն կազմութեան եւ տառիցն.

Իսկ ի յարեւմտակողմն այսր յունական արձանի ի նոյն բարձրութեան՝ մերձ ի կիսաբոլորակ բուրգն սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի դնի միւս այլ վէմ հին աւուրց, յորում կոփեալ են՝ յարեւմտից պատկեր Պօղոսի առաքելոյն նստեալ յաթոռ ծալովի եւ յարեւելից պատկեր Թեկղեայ կուսի կանգուն ի յոտին. երկոցունցն անուանք եւս յունական տառիւք ըստ այսմ ձեւոյ.

10. Անցեալ ի վերայ երկրորդ նորոգութեանն սրբոյ տաճարիս ամք 103, այն է՝ յամի Տեառն 483, յիշատակեալդ Վահան Մամիկոնեան զօրավար Հայոց որդի Հմայեկայ՝ եղբօր մեծին Վարդանայ, որում սովորութիւն իսկ էր զկնի քաջադէպ յաղթութեանցն ընդդէմ թշնամեաց դառնալ անդրէն եւ զյաղթութեանն գոհութիւն յայսմիկ եկեղեցւոջ մատուցանել առ Աստուած: Եւ այն ինչ միջնորդութեամբ Անդեկանայ Պարսիկ մարզպանի խաղաղացաւ Հայաստան ի պատերազմաց, հրովարտակաւ արքային Պարսից ընկալաւ զլիակատար իշխանութիւն մարզպանութեան ի վերայ հայրենի աշխարհին: Եւ եկն յայս քաղաք Վաղարշապատ եւ զյաջողուածոցն զգոհութիւն մատուցեալ Ամենաբարձրելոյն ի սմին յայսմիկ Կաթուղիկէ եկեղեցւոջ, նորոգեաց ապա եւ զայն ի հիմանց բոլորովին ըստ առաջնոյն սրբատաշ քարամբք, ըստ Ղազարայ Փարպեցւոյն (թղթ. 273). «Եւ եկեալ այնուհետեւ հասանէր ի Վաղարշապատ քաղաք հանդերձ ողջախորհուրդ եւ աննենգ ուխտապահ նախարարօքն Հայոց, կատարէր զսովորական ուխտս ի սուրբ եկեղեցւոջն Կաթուղիկէի, զոր հիմն արկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց քաջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»: Զորմէ եւ պատմիչն Սեբէոս եպիսկոպոս. «Այս Վահան (Մամիկոնեան) ժողովեաց եւ զհարկս աշխարհիս Հայոց (զորս տային յարքունիս Պարսից) եւ շինեաց զեկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաք եւ ի Դունի եւ ի Մզբայս եւ ի բազում տեղիս աշխարհիս Հայոց. եւ շինեալ զերկիրս՝ նորոգեաց վերստին»:

11. Երանելին Կումիտաս ի յաջորդելն իւրում յԱթոռ հայրապետութեան Հայոց ձեռն ի գործ արար ի շինութիւն եկեղեցեաց Վաղարշապատու. ուր տեսեալ եւ զանվայելչութիւն փայտեայ շինուածոց մեծի գմբեթին Կաթուղիկէ եկեղեցւոյս, որ երեւի մնացեալ թերեւս ի շինութեանց անտի Վահանայ Մամիկոնէի՝ տեւողութեամբ միջոցի 135 ամաց, այն է՝ յամի 618, քակէ զայն եւ չքնաղ ձեւակերպութեամբ կանգնէ ի կոփածոյ քարանց, առնէ եւ ինչ ինչ նորոգութիւնս յորմունս նորա յամի Տեառն 618: Զորմէ այլովք ծանօթութեամբք հանդերձ Սեբէոս եպիսկոպոս պատմիչ. «Վերացոյց (Կումիտաս) եւ զփայտայարկս սրբոյ Կաթուղիկէին, նորոգեաց եւ զխախուտ որմոյն, շինեաց զքարայարկսն. այս եղեւ յամս Յովհանկան վանաց երիցու սրբոյ Կաթուղիկէին»: Եւս եւ Յովհաննէս Զ[1] կաթուղիկոս պատմաբան. «Յետ որոյ ապա քակեալ սորա (Կումիտասայ) զփայտայարկ գմբէթ սրբոյ Կաթուղիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի, շինէ զնա գեղեցկայարմար եւ չքնաղատես կոփածոյ քարամբք»:

12. Արար յայս Կաթուղիկէ եկեղեցւոջ ինչ ինչ նորոգութիւնս եւ Ներսէս Գ կաթուղիկոս, որ յիշատակի ի Ստորագրութեան հին Հայաստանի՝ առեալ ի պատմութեանց ժողովոց Հայոց. «Երկասիրաբար յարդարեալ շինէ (Գ Ներսէս կաթուղիկոս) զսուրբ Շողակաթն ի (Նոր) քաղաք (այն է ի Վաղարշապատ)»:

13. Այս տաճար սրբութեան ունէր ի գագաթ մեծի գմբեթին զքառաթեւ նշանն տէրունեան խաչի, զոր յամի Տեառն 982 Ապլհաճ պարսիկ բռնաւորն Դուին քաղաքի իջոյց ի վայր, առ Ստեփաննոսի Ասողկայ (հատոր Գ, գլուխ 12). «Այլ յետոյ եկեալ (Ապլհաճ պարսիկ ամիրայն) զՀոռոմոսի վանքն այրեաց եւ զփրկական նշանն, որ ի վերայ սրբոյ Շողակաթի գմբեթին կանգնեալ էր, ճոպանօք ի վայր բերէր ի ՆԼԱ [982] թուականին (Հայոց)»:

Արդ՝ այս փառացի տաճար սրբութեան ի ժամանակէ անտի Մելիտէ կաթուղիկոսի, յորոյ աւուրս յամի Տեառն 452 փոխադրեցաւ Աթոռ հայրապետութեանն ի Դուին եւ անտի մինչեւ ցամ Տեառն 1441, ցանդրէն նորոգութիւն Աթոռոյն ի Վաղարշապատ՝ յայս Կաթուղիկէ եկեղեցի առ Վիրապեցի Կիրակոս կաթուղիկոսիւ[2] գրեա՛

[1] [Շահխաթունյանցի մոտ ամենուր Հովհաննես Դրասխանակերտցին նշվում է իբրև Հովհաննես Զ: Հեղինակը սխալմամբ Հովհաննես Գ չունի և Հովհաննես Բ Գաբեղյանից հետո Հովհան Գ Օձնեցուն համարել է Հովհաննես Դ: Սխալը վերաբերվում է նաև հաջորդ Հովհաննեսներին]:

[2] Անտարակո՛յս եմք, թէ շինութիւնն Կաթուղիկէ եկեղեցւոյս եւ թէ յաջորդութիւնն վաներիցութեան կամ քորեպիսկոպոսութեան յօրէ անտի փոխադրութեան Աթոռոյն

թէ կայր ի չինութեան եւ շարունակէր անդ յաջորդութիւնն վանեռիցութեան կամ քորեպիսկոպոսութեան յանուն Արարատեան վիճակի: Եւ ի Վիրապեցւոյ անտի մինչեւ ցՍահակ Դ, ցամ Տեառն 1627, ոչինչ նորոգութեան կամ աւերանաց պատմին վէպք:

14. Իսկ յաւուրս Մելքիսէթ եւ Գրիգոր կաթուղիկոսաց՝ նախորդացն Սահակայ Դ, շահ Ապաս Ա արքայ Պարսից, որ աւերեաց զՀայաստան եւ զբազմութիւն հայազգի ժողովրդեան ածեալ ի բազում

ի Դուին եւ անտի յԱնին Շիրակայ մինչեւ ցl064 թիւն՝ ցփոխադրութիւնն Աթոռոյն եւ անտի ի Թաւբլուր ըստ հարկելոյն Յունաց կային ի շարունակութեան, որպէս վկայեն պատմիչք: Քանզի ի սկզբան անդ փոխադրութեան Աթոռոյն ի Դուին ի պատճառս բնակելոյ յայնմ քաղաքի նախարարազուն իշխանացն առ ի զդէմ ունելոյ ասպատակութեանց պարսկային հինիցն, կարգեցաւ միաբանութիւն աղօթաւոր անձանց պարէգօտաւորաց աստէն ի Կաթուղիկէ եկեղեցւոջ ի Վաղարշապատ քաղաքի, որոց եւ կացուցաւ գլխաւոր եւ կառավարիչ՝ ըստ ձեռնտուութեանն մեծին Վահանայ Մամիկոնէի Ղազար Փարպեցի՝ ըստ նորուն ինքեան գրութեանն առ յիշեալդ Վահան Մամիկոնեան (84):

Ապա յամի 565, Բ Մովսէս կաթուղիկոս կարգէ զԿիւրիոն (որ զկնի կաթուղիկոս Վրաց) վանէրէց մեծի Կաթուղիկէին եւ քորեպիսկոպոս Արարատեան դաշտին, յորում պաշտաման եկաց նա ինքն Կիւրիոն զամս եօթն ցամ Տեառն 572, զորմէ Ուխտանէս եպիսկոպոս պատմիչ (հատոր Բ, գլուխ Ա). «Եւ նա (Մովսէս Բ) կացուցանէ զնա (զԿիւրիոն) վանաց էրէց սրբոյ Կաթուղիկէին, այլ եւ քորեպիսկոպոս՝ տալով նմա զվիճակ՝ զգաւառն Այրարատեան, եւ կացեալ ի նմին ամս եօթն»: Ըստ այսմ Ստեփաննոս Ասողիկ եւ Վարդան պատմիչ: Յամի Տեառն 596, ի ժողովն Դուինայ առ Աբրահամ Ա կաթուղիկոսիւ յիշատակի Աբրահամ ոմն վանաց էրէց սրբոյ Կաթուղիկէին Վաղարշապատու, զորմէ Ուխտանէս եպիսկոպոս պատմիչ (հատոր Բ, գլուխ 37): Եւս յամի 618, ի նորոգութեան անդ սրբոյ տաճարիս ի Կումիտասայ կաթուղիկոսէ, գտանէր աստէն յայսմիկ եկեղեցւոջ վաներիցութեան պարտաւորութեամբ Յովհանիկ ոմն ըստ Սեբէոսի, որ ի վեր անդր: Այս Յովհանիկ է, զոր Յովհան անուամբ յիշատակէ Ատեփաննոս Ասողիկ պատմիչ (հատոր Բ, գլ. 2): Թերեւս եւ Եզր կաթուղիկոս եւ Յովհան Մայրավանեցի ընդ փակակալութեան պաշտամանցն ունէին եւ զայս պաշտօն վաներիցութեան սրբոյ Կաթուղիկէիս:

Ապա ըստ այսոցիկ գրուածոց ահա երեւի շարունակութիւն յաջորդութեան վանահարց եւ քորեպիսկոպոսաց՝ որչափ տեւեաց կաթուղիկոսական իշխանութիւնն թէ ի Դուին եւ թէ յԱնին Շիրակայ եւ անդր եւս, թէեւ Սիմէոն կաթուղիկոս Երեւանցի ի մեծի մատենին Ջամբռ անուանեալ՝ դնէ տեւողութիւն միաբանութեան հոգեւորականաց յայս Կաթուղիկէ եկեղեցի եւ խնամարկութեան կաթուղիկոսացն ցվախճան հայրապետական իշխանութեանն եւ յԱնւոյ (գլուխ Գ, թղթ. 14). «Արդ յայնքան միջոցումս յորս կաթուղիկոսունքն ի Դուին եւ յԱնի նստան, երբեմն ի յԱթոռոջս էջմիածնի գտանէին վանականք եւ կրօնաւորք՝ թէեւ կարի սակաւք եւ գծուծք. իսկ ի միջոցին ի յամս ՅԻԴ (324), յորս նստան ի Սիս, իսպառ մնաց ի յամայութեան մինչեւ ի ՊՂ թիւն մեր (1441), յորում վերստին գթացաւ Տէր ի յիւրակերտ Աթոռն եւ նորոգեաց, յորում սկզբանն նստաւ Կիրակոս ծգնազգեաց հայրապետն»:

Եւ յիրաւի յայսմ նշանակեալ միջոցիս ըստ այլոց եւս մնայր յամայութեան Կաթուղիկէ եկեղեցին Վաղարշապատու, այլ ո՛չ իսպառ եւ շարունակաբար, քանզի է՛ր զի մնայր անբնակ ի պատճառս հալածանաց եւ գերութեանց, եւ է՛ր զի բնակէին անդէն եպիսկոպոսունք Արարատեան դաշտի յանուն մեծի Կաթուղիկէիս յանդրէն խաղաղանալ երկրին եւ հանդարտիլ բնակչացն, որպիսիք եղեն եւ լինին ցարդ եւ այլ միւս աթոռանիստ վանորայք եւ մենաստանք: Վասն զի ահա՛ ի սկզբան անդ նորոգութեան Աթոռոյ հայրապետութեանն անդրէն ի Վաղարշապատ՝ ի ժողովի անդ ընտրութեանն Կիրակոսի Վիրապեցւոյ նշանակի ընդ այլոց եպիսկոպոսաց ժողովոյն եւ անուն եպիսկոպոսին էջմիածնի՝ տէր Գաբրիէլ (եպիսկոպոս) էջմիածնին եւ այլն. առ Թովմայի Մեծոբեցւոյ ժամանակակից պատմագրի:

գաւառաց վարեաց ի Պարսկաստան, խորհուրդ հաստատուն եդ ի մտի քակել զբովանդակ շինուած մեծի տաճարիս, որոյ եւ զքար եւ զհող տալ տանել ի Պարսկաստան եւ նոքօք կառուցանել անդէն յանուն Էջմիածնի զտաճար նորոգ, որոյ եւ զտեղին եւս նշանադրեալ էր անդր ի Նոր Ջուղայ Պարսից, մերձ յայգին արքունի՝ առ ի հանգուցանել զմիտս ժողովրդեանն Հայոց մնալ անդէն անդարձ ի սէր այնր տաճարի: Այլ զկնի թէպէտ կասեցաւ ի խորհրդոց անտի, բայց յետոյ՝ այն է յամի Տեառն 1614, այն ինչ ինքն շահ Ապաս Ա էր զօրօք իւրովք յաշխարհին Վրաց աւերութեամբ եւ գերութեամբ, ետ քակել ի շինուածոց Կաթուղիկէ եկեղեցւոյս զհնգետասան նշանաւոր քարինս, որք էին. Վէմն սեղանոյ սրբազան խորհրդոյն եւ Սիւն նորա, Վէմն Իջման տեղւոյն, Աւազանն մկրտութեան, Աստիճանավէմ մի հիւսիսակողման եւ Աստիճանավէմ մի հարաւակողման մեծի բեմին, չորք քարինք չորից անկեանց եկեղեցւոյն յարտաքին կուսէ, երկու մեծամեծ մոմակալքն քարեայ եւ երեք քարինք ի սալայատակէ բեմին մեծի, զորս եւ Թահմազ Ղուլի բէկ, որդին Ամիրգիւնայ խանին Երեւանայ ըստ հրամանի շահին հանեալ եւ ամրացուցեալ կաշեօք՝ ետ տանել յԱսպահան քաղաք Պարսից դարձեալ վերակացութեամբ նոյն Յովհաննէս քահանային՝ ընդ որոյ ձեռն յառաջագոյն ուղարկեալ էր անդր յԱսպահան զԱՀ Լուսաւորչին, զԱւետարանն ոսկետուփ եւ զխաչն արծաթի:

Այսոքիկ վէմք յերկար ժամանակք կային անդ ի Ջուղայ եղեալ ի նշանաւոր ինչ տեղւոջ: Այլ զկնի անցման ժամանակաց վերառան՝ վէմն սեղանոյ եդաւ ի տեղի վէմ քարի սեղանոյ Ամենափրկիչ վանացն, երկոքին մոմակալքն եդան ի վերայ բեմին նոյն եկեղեցւոյ, երեք եւս այլ քարինք եդան առ բեմբիւ սեղանոյ այնր վանաց, ուր է ծածկոյթ ինչ կամարայարկ: Իսկ միւս վէմքն կան եղեալ ի սենեակ ինչ, որ ի մէջ պարսպի եկեղեցւոյն Խօճենց անուանելոյ յանուն սրբոյն Գէորգայ:

15. Մովսէս վարդապետ Սիւնեցի, որ զկնի եղեւ կաթուղիկոս յամի Տեառն 1627, ի կառուցանել զմենաստանն՝ նորոգեաց ըստ մասին եւ զայս Կաթուղիկէ եկեղեցի ի գմբէթն, ի տանիսն, յառաստաղն, յորմունսն, ի հիմունսն եւ ի սալայատակսն ի ներքս եւ յարտաքս եկեղեցւոյն: Քանզի տաճարն թէեւ ո՛չ ըստ մենաստանին, այլ ըստ բաւականաչափ մասին խարխալեալ էր. զորմէ Առաքել պատմիչ Դավրիժեցի յերես 298. «Եւ սալայարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ՝ եղեալ որջ զեռնոց եւ թռչնոց եւ մեծամեծ լուսամուտքն, զորս ունի (եկեղեցին)՝ ամէնն ի բաց կայր առանց վանդակի...: Իսկ

յարտաքուստ կուսէ գլուխ Կաթուղիկէին եւ տանիքն ամենայն եւ երեսք որմոցն քանդքանդեալք եւ քարինքն թափեալք եւ որմոյ յատակաց վէմքն փշրեալք եւ ծակոտեալք»:

16. Ապա յաջորդ սոյն Մովսէսի Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի յամի Տեառն 1633 նորոգէ նորապէս ըստ բոլորին զտանիս սրբոյ եկեղեցւոյս բացի մեծ գմբէթէն: Եւ սա ինքն դարձեալ զկնի պէսպէս ազգօգուտ գործառնութեանց յազգս Հայոց ի Կոստանդինուպօլիս եւ յԵրուսաղէմ, սկիզբն առնէ ապա յամի Տեառն 1654 շինութեան մեծի զանգակատանն, որ կայ ի վերայ մեծի դրանն արեւմտեանն՝ կից ի հին շինուածն, այնպէս, զի երկոքին սիւնք զանգակատանն միացեալ են ընդ առաջին շինուած եկեղեցւոյն եւ միւս երկուքն արեւմտակողման կան որոշ սիւնաձեւ՝ ընդ միջոցս որոց մտանեն յեկեղեցին եւ ելանեն: Եւ հասեալ շինուածոյն ցհիմունսն միջնայարկին՝ վախճանի երանելին Փիլիպպոս, որում յաջորդեալ Յակոբ Դ Ջուղայեցի գլխաւորէ զայն շինուած հրաշակերտ յամի Տեառն 1658: Այս զանգակատան որպէս ներքին, նմանապէս միջին յարկքն հաստատեալ կան ի վերայ չորեցունց սեանց. իսկ եռայարկն սորին ի վերայ միաստանի սեանց ութնից եւ կաթուղիկէ ծածկութիւն վայելչաձեւ սրածայր ութանկիւնի, որոյ եւ արձանագրութիւն շինութեանն գտանի ի ներքուստ կողմանէ այսր կաթուղիկէի շուրջանակի միաշար՝ ուր ութեքին սեանց գլուխք միանան, այս ձեւ.

«Ի թագաւորութեան Պարսից շահ Ապասի (Բ), նաեւ ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, թուին (Հայոց) ՌՃԳ [1654] հիմնարկեցաւ. տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ ՌՃԶ [1657] աւարտեցաւ[1] զանգակատունս ծախիւք Անտոն պարոն Զէլէպիի ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

Երկրորդ արձանագրութիւն գտանի ի վերայ ընդարձակ վիմեայ բարաւորի մեծի դրանն արեւմտեան արտաքուստ, յորոյ վերայ է կառուցեալ սոյն զանգակատուն, յերկկարգս, յայս օրինակ.

«Շնորհիւ Աստուծոյ եւ օժանդակութեամբ սրբազան կաթուղիկոսացն Փիլիպպոսի եւ Յակոբայ հրաշակերտեցաւ զանգակատունս եւ ծաղկեցաւ ի թվին (Հայոց) ՌՃԺԳ (1664)»[2]:

---

[1] Թէպէտ յարձանագրութեան անդ նշանակի կատարումն զանգակատանս ի ՌԵՁ [1657] թուին Հայոց, բայց ժամանակակիցն Առաքել պատմիչ դնէ միով ամաւ աւելի. «Եւ կատարումն զանգակատանն եղեւ հազար հարիւր եւ եօթն [1658] թուին եւ ի տօնի Խաչվերացին օրհնեցին զխաչն որ ի գլուխ զանգակատանն, եւ քակեցին զիսկալէն: Արդ՝ ստոյգ պատմութիւն զանգակատանն այս է. թէպէտ ի վերայ նորին գրեալ թուականքն այլապէս են»:

[2] Թուականն երկրորդ արձանագրութեանս է ծաղկելոյն եւ ո՛չ շինութեանն. եւ ծաղ-

Սքանչելի են դրուակքն յայս շինուած եռայարկ եւ քաջահմուտ քարակոփի արդարեւ գործ, զի ի վերուստ մինչ ի վայր՝ ի սիւնսն, ի կամարսն ներքոյ եւ արտաքոյ գրեթէ հաւասար քանդակք բազմակերպ եւ մանուածոյք: Իսկ ի հիմունսն անդ երրորդ յարկի գմբեթին ի կամարագլուխսն միջնայարկին՝ յերիս կողմունս արտաքուստ են երեքին պատկերք քանդակեալք ի վէմ. յարեւմտեան ճակատանն է Կենարարին մերոյ եւ Փրկչին Յիսուսի՝ բարձրացեալ ունելով զԱջ իւր հովանի մենաստանին. ի հիւսիսայինն՝ Մեծին Տրդատայ արքայակերպ տեսլեամբ. իսկ ի հարաւայինն՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի հայրապետական զգեստուք:

17. Զաքարիա վարդապետ Վաղարշապատցի, որդի Յովհաննու քահանայի, ձեռնադրեալ եպիսկոպոս ի Փիլիպպոս կաթուղիկոսէ, առաքի յառաջնորդութիւն վանաց սրբոյն Յովհաննու Կարապետի, որ մերձ ի գիւղաքաղաքն Կարբի: Գնացեալ ապա յԵրուսաղէմ՝ դարձ առնէ անդրէն ի վանս իւր: Եւ ըստ հարկելոյ եւ խնդրանաց միաբանիցն Էջմիածնի յաղագս գործունէութեան իւրոյ յամենայն իրս՝ գայ յԱթոռ այսր: Եւ ապա իւրով վերահասութեամբ եւ ծախուք տայ շինել զսալայատակն շուրջ զկաթուղիկէ եկեղեցեաւս եւ զմիւս սալայատակն ընդարձակ զառաջեաւ մեծի դրանն արեւմտեան՝ ուր լինի ժամերգութիւն յամառնային տօթաւոր եղանակսն: Եւ ի միջին տեղւոջ այսր քարայատակի տայ յարդարել զտապան մարմնոյ իւրոյ. եւ ի լրանալ գործոյն իսկ հասանէ նմա վախճան կենաց: Եւ դնի անդէն մարմին նորա յամի Տեառն 1659, 30-րդ աւուր յունիսի, որոյ ամբողջ տապանաքարն արդ եւս կայ ի շիրմի անդ նորա (զայսմանէ Առաքել պատմիչ յերես 342, 343 եւ պատմիչն Զաքարիա Սարկաւագ այնր վանաց):

18. Զկնի վախճանին Յակոբայ կաթուղիկոսի գայ այսր յԱթոռ հայրապետական Եղիազար կաթուղիկոս յամի Տեառն 1682 եւ շինէ զերեսին միանման փոքրիկ զանգակատունսն յերեսին թեւսն շինուածոց սրբոյ տաճարիս, այն է՝ յարեւելս, ի հարաւ եւ ի հիւսիս. յարեւելս՝ ի վերայ կամարայարկին սեղանոյ սուրբ Աստուածածնի Շողակաթ անուանելոյ, ի հարաւ՝ ի վերայ նոյնօրինակ կամարայարկին սեղանոյ սրբոյն Յովհաննու Կարապետի եւ ի հիւսիս՝ նմանապէս ի վերայ կամարայարկին սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային: Յայս երկոքին թեւք սրբոյ տաճարիս չէին կանխաւ սեղանք սրբազան խորհրդոյն եւ ո՛չ բեմք, զի յատակք նոցա հա-

---

կումն այն է միմիայն ի ներքնայարկի անդ ի ներքուստ կողմանէ յառաստաղն եւ ի կամարսն գոյնզգոյն երանգօք:

ւասար էին յատակաց սրբոյ տաճարիս: Իսկ սոյն այս Եղիազար կա-թուղիկոս ետ բարձրացուցանել զհարաւայինն երեք աստիճանօք, ուր կանգնեաց եւ կաթուղիկէ փոքրիկ ի վերայ չորից սեանց եւ ի նմա սեղան պատարագի՝ ուղղեալ դէպ յարեւելս եւ ունի արձանագ-րութիւն ի հիւսիսային ճակատ իւր կաթուղիկէն փոքրիկ ըստ այսմ.

«Յիշատակ սուրբ Յովհաննէս խորանս Եղիազար կաթուղիկո-սին, ի թուին (Հայոց) ՌՃԼԳ (1684)»:

Ի վերայ բեմի այսր սեղանոյ եւ զառաջեաւն պատրաստին վկայք՝ եպիսկոպոսունք եւ այլ գղերք եւ նորընծայ եպիսկոպոսացուն յա-ւուր ձեռնադրութեան եպիսկոպոսի:

Իսկ զհիւսիսակողմանն՝ եօթն աստիճանօք ըստ վերնոյն եւ սա ունի կաթուղիկէ եւ սեղան համանման առաջնոյն ամենեւին, որոյ եւ արձանագրութիւն ի հարաւային ճակատ կաթուղիկէին գտանի այս օրինակ.

«Յիշատակ է սուրբ Ստեփաննոսի սեղանս տէր Եղիազար կա-թուղիկոսին, թուին (Հայոց) ՌՃԼԳ [1684]»:

Ի վերայ այսր եօթնաստիճանաւոր բեմի պատրաստի Աթոռն հայրապետական յաւուր ձեռնադրութեան եպիսկոպոսի: Ուր եկեալ նա ինքն հայրապետն փառացի զգեստուք բազմի յաթոռ եւ կոչէ զվկայսն ըստ իւրաքանչիւրումն կարգի. եւ ապա զնորընծայ եպիս-կոպոսացուն, ցոր հարցեալ զդաւանութենէն այլովքն հանդերձ, տայ զկարգն եմիփորոնի եւ ապա զօծումն յաւագ սեղան անդր սուրբ Աստուածածնի:

19. Կանգնեաց սա եւ զփոքրիկ կաթուղիկէ ի վերայ չորից սեանց նոյնպէս ի հասարակ քարանց ի միջին տեղւոջ յատակի սրբոյ տա-ճարիս, որ անկանի ուղղակի ի ներքոյ մեծի Կաթուղիկէին. յորում տեղւոջ այրն ահաւոր եհար զոսկեւուն ըստ տեսլեան սրբոյն Գրի-գորի Լուսաւորչին (1)[1]: Այս տեղի նշանաւոր ըստ տեսլեանն եւ ըստ առման յետագայիցն յանուն իջման Միածնի Բանին, ուր բաղխեցաւ ուռն ոսկի եւ անչափ թնդիւնք հնչեցին ի սանդարամետս անդնդոց: Թէպէտ չունէր յառաջագոյն ըստ այժմեան դրութեանն արժանաւոր ինչ շինուածս գմբեթի եւ սեղանոյ, այլ չէ՛ր եւ այնպէս հասարակ տեղի, որպէս միւս յատակք եկեղեցւոյն: Քանզի որպէս տեսանի ի գրուածսն Առաքելի Դավրիժեցւոյ, էր յատկացեալ տեղի նշանա-ւոր վիմօք՝ ըստ գրեցելումն, յանուն իջման տեղւոյն, որ ուղղակի անկանի ի կեդրոն յատակի եկեղեցւոյն՝ ի միջին տեղւոջ ընդար-ձակութեան չորից սեանցն, վասն որոյ եւ յատկացեալ ուխտական

[1] [Շահխաթունյանցը փակագծում նշում է հղված համարը]:

տեղի: Ընթերցի՛ր զբանս նորին Առաքելի Դավրիժեցւոյ, ուր յերես 210, ասէ. «Եւ զնշանաւոր քարինսն Էջմիածնի քակեալ հանին ի տեղւոյն՝ որք են այսոքիկ. սուրբ սեղանն, յորոյ վերայ պատարագն սուրբ մատչիւր, եւ այս սեղանոյ սիւնն, Քրիստոսի իջման տեղեաց քարն» եւն: Յերես 245. «Իսկ ի նեղութենէ ցաւոյն յաւուր միում ասաց Սահակ կաթուղիկոսն բառնալ զինքն եւ տանիլ ի տաճար սրբոյ Էջմիածնին: Եւ անկեալ ի վերայ իջման տեղեացն Քրիստոսի, յորում տեղի Քրիստոս իջեալ է. եւ բազմօք հառաչանօք...» եւ այլն: Յերես 298. «Զի ամենեւիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց եւ կողոպտեալ ի զարդուց... մինչ զի Քրիստոսի իջման տեղին եւ սուրբ սեղանն եւս ո՛չ ունէին զծածկոցս, ո՛չ կանթեղք...» եւն: Ահա՛ յայսմ տեղւոջ կանգնեաց զկաթուղիկէն եւ ուղղեաց ի նմա զսեղան սրբազան խորհրդոյն: Եւ զերիս միջոցս երկուց սեանցն արեւմտեան ետ կանգնել վանդակ քարեայ առ ի լինել տեղի կալոյ աղօթից միաբանութեան հանդէպ սեղանոյ այսր իջման տեղւոյ: Վասն այսոցիկ գործոց Եղիազար կաթուղիկոսի, գրէ Սարկաւագն Յովհաննավանից Զաքարիա (հատոր Բ, գլուխ ԾԲ). «Այլեւ կանգնեաց (Եղիազար) քարեայ կաթուղիկէ ի վերայ իջման տեղին եւ հաստատեաց սեղան՝ առնել պատարագ. եւ երկու կողմն եկեղեցւոյն բարձրացոյց յերկրէ եւ արար ամպիոն, եւ կանգնեաց սեղան պատարագի, եւ չինեաց որմ ի մէջ եկեղեցւոյն ի հարաւոյ դրանէն մինչեւ ի դուռն հիւսիսոյ, զի անդ կացցեն յաղօթս... եւ ի տանիս եկեղեցւոյն երիս տեղիս կանգնեաց կաթուղիկէ»:

20. Զայս յիշատակեալդ կաթուղիկէ ի վերայ իջման տեղւոյն հանդերձ սեամբքն եւ ինչ ինչ քարամբք յատակին՝ Աստուածատուր կաթուղիկոս Համատանցի նոր ի նորոյ ետ կառուցանել ի սպիտակ մարմարոնեայ քարանց կարի վայելչաձեւ: Յարդարեաց եւ զճակատ մեծի բեմին աւագ սեղանոյ սուրբ Աստուածածնի ի նոյն օրինակ մարմարոնեայ քարանց: Նորոգել ետ եւ զսալայատակ եկեղեցւոյն եւ զչորեսին մեծամեծ սիւնսն եւ զմէջ տաճարին՝ զորմունսն եւ զառաստաղն ետ սպիտակացուցանել բոլոր եւ ծաղկել ըստ բոլորին, որոյ չինութեանց արձանագրութիւն կայ ի շրջապատ մեծի Կաթուղիկէին ի ներքուստ կողմանէ, ուր չորից մեծամեծ սեանց գլուխք միանան սեւորակ դեղով միակարգ՝ յայս ձեւ օրինակի.

«Ի թուականութեան Հայկական ՌՃԿԹ (1720), ես՝տէր Աստուածատուր Համատանցի կաթուղիկոս Ամենից Հայոց, ետու նորոգել զչորեսին խախտեալ սիւնքն սրբոյ եկեղեցւոյս եւ զբոլոր եկեղեցին նորոգեալ եւ ծաղկեալ հանդերձ մարմարոնեայ չինուածովք, որ ի

մէջ սրբոյ եկեղեցւոյս են յիշատակ հոգւոյ իմոյ, ի վայելումն տառապեալ ազգի Հայոց եւ աստ ի սուրբ Աթոռս զետեղեալ միաբանից. եւ որք ընթեռնուք զարձանս զայս, յիշեցէ՛ք զիս ի մաքրափայլ յաղօթս ձեր եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն»:

Տեղին իջման Միածնի որդւոյն Աստուծոյ, ուր կանգնեցաւ փոքրիկ կաթուղիկէն եւ սեղան, շուրջանակի փակեալ է քառակուսի պղնձեայ վանդակաւ, որ ունի եւ երկփեղկեան դրունս երկուս. մին ի հարաւ եւ միւսն յարեւմուտս. յերկոսին կողմանս սոյն արեւմտեան դրան ի վանդակի անդ գոն արձանագրութիւնք ի վերայ պղնձեայ տախտակաց ամրացելոց ընդ վանդակն այս օրինակ.

«Ի թուին (Հայոց) ՌՃՁԱ (1732), ի հայրապետութեան Աբրահամ կաթուղիկոսի եւ հոգաբարձութեամբ նորին // շինեցաւ շրջապատ ճաղերս իջման տեղւոյն Քրիստոսի գեղեցիկ շինմամբ: Յիշեցէ՛ք ի Տէր»:

Գոյ արձանագիր մի եւս ի հարաւակողման այսր վանդակի յանուն Էրզուրումցի վարպետ Միքայէլին՝ շինողին զայս վանդակ պղնձեայ:

21. Սա ինքն Աբրահամ Բ կաթուղիկոս շինէ նորոգ զերկոսին սեղանս. մի յաջմէ աւագ սեղանոյն սուրբ Աստուածածնի յանուն սրբոց Յակոբեանց առաքելոց եւ միւսն յահեկէ նորին յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ բարձրացուցեալ զբեմն այնց ի յատակէ եկեղեցւոյն աւելի քան զկանգուն մի, որոց միջոց ընդ բեմ աւագ սեղանոյն են դրունքն երկուց աւանդատանց: Եւ դրուագեալ փայտիւք արար կամարակապ գծածկոյթս երկոցունց եւս մի օրինակ՝ ուղղեալ ի վեր ընդ որմունս նոյն աւանդատանցն. եւ ունի արձանագրութիւն միայն սեղանն սրբոց Յակոբեանց ի վերայ փայտի ընդ հարաւակողմն ի խոնարհ, սեւորակ դեղով՝ յայս օրինակ.

«Հրաշակերտեալ տաճար փառաց,
Վասն զենման Գառին կենաց,
Ի փրկութիւն մարդկան մեղաց՝
Յանուն երկուցըն Յակոբեանց:
Եղբօր Տեառն եւ Որոտմանց,
Աբրահամու վեհին արդեանց,
Ի վայելումն Հայոց ազանց,
Ի ներ թուոջ մերում ազանց,
Ռճ ութսուն ւերկուց՝ թուին ՁԲ, Ռճ [1733]»:

22. Ապա Սիմէոն Երեւանցի բազմարդիւն կաթուղիկոս տայ նորոգել զտանիս սրբոյ տաճարին բովանդակ եւ ի բաց առեալ գլխո-

վին զտանիս երկուց աւանդատանցն նորոգապէս տայ շինել, որոց արձանագրութեանն վէմ եղեալ կայ ի ներքոյ արեւելեան զանգակատան՝ ի վերայ լուսանցոյց պատուհանին եղելոյ ի գագաթ կամարին աւագ սեղանոյ յարտաքին կուսէ, եւ ունի օրինակ գրչութեանն ըստ այսմ.

«Աստուծով վերանորոգեցաւ բոլոր տանիք սրբոյ տաճարիս եւ երկուց խորանացն իսկ (աւանդատանց) ի ներքուստ եւ արտաքուստ հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Երեւանցւոյ եւ աշխատասիրութեամբ լուսարար Գրիգոր վարդապետի Եղվարդեցւոյ, ի ՌՄԻ (1771) թուին մերոյ (Հայոց): Վարպետ Գասպար»:

23. Յաւուրս սորին Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ նորոգեացն երկոքին հարաւային սիւնք սրբոյ տաճարիս, որոց յիշատակագրութեանցն արձանք յանուն նուիրողացն զարդիւնս ծախուց նշանակին ի սիւնսն անդ սեւորակ դեղով:

Յարեւելեան սիւնն՝ ի ճակատն արեւմտեան.

«Նորոգեցաւ սիւնս մինչեւ[1] ի վերին կամարսն հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Ամենայն Հայոց, արդեամբ Երեւանու Բլրցի ի Քրիստոս հանգուցեալ Եաղուբի որդի մելիք Մինասին, ի յիշատակ իւրեանց եւ իւրայնոցն, ի ՌՄԻԶ [1777] թուոջս»:

Յարեւմտեան սիւնն՝ ի ճակատն արեւելեան.

«Նորոգեցաւ սիւնս մինչեւ ի վերին կամարսն հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Ամենայն Հայոց, արդեամբ Ջուղայեցի եւ ի Վան բնակեալ ի Քրիստոս հանգուցեալ տէր Յովհաննէսի որդի տիրացու Ստեփաննոսին ի յիշատակ ինքեանց, ի ՌՄԻԶ [1777]»:

24. Յաջորդ Սիմէոնի Ղուկաս կաթուղիկոս Կարնեցի նորոգել տայ զչորեսին կարգ քարինս որմոցն եկեղեցւոյս շուրջանակի, յարտաքին կուսէ մերձ յաստիճանսն յատակի գետնոյն, որոյ եւ արձանագրութիւնն դնի յարեւելեան ճակատ մեծի տաճարիս ի թիկանց կողմանէ աւագ սեղանոյ, յայս ձեւ.

«Օգնականութեամբն Աստուծոյ նորոգեցան ներքնաշարեալ չորս կարգ քարինքս բոլոր որմոց լուսանկար սրբոյ տաճարիս՝ հոգաբարձութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին Ամենայն Հայոց, արդեամբ Ակնայ Ապուչեխցի եւ ի Կոստանդինուպոլիս

---

[1] [Ինքնագրում՝ **մինչ**]:

բնակեալ ի Քրիստոս հանգուցեալ մահտեսի Աստուածատուր աղայի որդի բարեպաշտ մահտեսի Յարութիւն ամիրային, ի յիշատակ ինքեան եւ ծնողացն եւ որդւոյն իւրոյ մահտեսի Յովհաննէսին եւ այլ ամենայն իւրայնոցն, թուին (Հայոց) ՌՄԼԴ (1784)»:

Ի վեր քան զայս արձանագիր յորմն անդր դնի փոքրիկ վէմ մարմարոնեայ եւ ի նմա քանդակեալ նշանն քառաթեւ, յորոյ ներքոյ ի նոյն վէմ գրի այս ինչ.

«ՌՄԼԴ [1784].
Սուրբ խաչս աստէն արձան դնի,
Միջնորդ առ Տէրն համայնի,
Վասն Ղուկասու հայրապետի,
Սուրբ տաճարիս բազմաշխատի,
Զոր ի ներքուստ եւ արտաքուստ
Շքեղաշուք նորոգողի»:

Ի նորոգելն զայս չորս կարգ քարինքս յարեւելից կուսէ մեծի տաճարիս ի թիկանց աւագ սեղանոյն յորմոյ անտի, ուր զետեղեալ է մեծ վէմն արձանագրութեան, գտանեն զերիս բոլորակ հատուածս մոմոյ եւ զմի գաւազան սեաւ փայտեայ՝ գլուխն խաչաձեւ հասարակ գործուած:

25. Եւ նորոգել սա ինքն Ղուկաս կաթուղիկոս եւ զսալայատակսն շուրջանակի Կաթուղիկէ եկեղեցւոյս՝ արդեամբք նուիրանաց Յովհանջան աղային Գերագեանց, որոյ յիշատակագրութեանն արձան դնի ի հիւսիսակողմն արեւմտեան մեծի դրանն ի ներքնայարկի անդ մեծի զանգակատան, յայս օրինակ.

«Կամաւն Աստուծոյ նորոգեցան սրբոյ տաճարիս շուրջանակի սալայատակքն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, ծախիւք եւ ի Սուրաթ բնակեալ Գերագեանց բարեպաշտ Յօհանջան աղային վասն հոգւոյ իւրոյ եւ իւրայոցն՝ հօրն Յակոբին եւ մօրն Մէհրաբանին եւ նոցին ծնողացն՝ Գերաք աղային եւ Թագուհւոյն, Աղամալին եւ Վալիտային եւ եղբարցն՝ Աւետիքին, Գերաքին եւ Աբրահամին եւ քեռցն՝ Ազիզին, Թագուհւոյն եւ Խաթունին եւ կնոջն Կիւլիստանին եւ դստերացն Վալիտային եւ Թիրվանտային եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի: ՌՄԼԴ (1785) թուին (Հայոց)»:

26. Նորոգել եւ ըստ բոլորին եւ զմէջ սրբոյ տաճարիս զորմունս եւ զառաստաղն բազմատեսակ գեղեցիկ նկարուք եւ խորհրդաւոր պատկերօք՝ ի ձեռն հանճարաւոր արհեստագէտ նկարչին Յովնաթանու, որոյ յիշատակարան արձանագրութեանն դնի ի շրջապատ

հիման մեծի կաթուղիկէին ի ներքոյ արձանագրութեանն (20) Համատանցի Աստուածատուր կաթուղիկոսի, յայս օրինակ.

«Ի թուին (Հայոց) ՌՄԼԵ (1786), շնորհիւն Աստուծոյ տէր Ղուկաս կաթուղիկոսս վերստին նորոգել ետու զխախտեալ զերկուս սիւնս սրբոյ տաճարիս, ապա եւ զբոլոր մէջս սորին, որ անշքացեալ էր, նորապէս բռեալ ծաղկեցուցի հանդերձ խորհրդաւոր պատկերօք՝ իմս գոյիւք ստացելովք ի յօրհնեալ ժողովրդոց մերոց ի յիշատակ ինձ եւ իմոցն ի վայելս ազգի Հայոց եւ միաբանից սրբոյ Աթոռոյս: Արդ՝ խնդրեմ ի վայելողացդ յիշել զիս յարժանահայց յաղօթս ձեր առ Աստուած, յորմէ եւ դուք յիշեալ լիջիք, ամէն»:

Նորոգութիւնն երկուց խախտեալ սեանց յիշատակելոց յայդմ արձանագրութեան ունի որոշ յիշատակագրութիւնս ի վերայ սեանցն յանուն նուիրողացն զարդիւնս. առաջին սիւնն արեւելեան հիւսիսոյ ունի զայս՝ սեւորակ դեղով.

«Նորոգեցաւ սիւնս մինչ ի վերին կամարն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին Ամենայն Հայոց, արդեամբ Ագուլեցի Պապայեան մահտեսի Կարապետին, ի յիշատակ իւր եւ կենակցին մահտեսի Եղիսաբեթին եւ որդւոյն մահտեսի Հայրապետին եւ համայն կենդանեաց եւ ննջեցելոցն, ի ՌՄԼԵ [1786] թուին (Հայոց)»:

Եւ երկրորդ սիւնն արեւմտեան հիւսիսոյ զայս՝ դարձեալ սեւորակ դեղով.

«Նորոգեցաւ սիւնս մինչ ի վերին կամարն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, արդեամբ Կեսարացի մահտեսի Խըտրրին, ի յիշատակ ինքեան եւ ծնողացն՝ Աբրահամին եւ Աննային եւ եղբօրն մահտեսի Պետրոսին եւ որդւոցն՝ Պողոսին, Սերոբէին, Յակոբին եւ Աբրահամին եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն. ի ՌՄԼԵ [1786] թուին (Հայոց)»:

27. Նորոգութիւնն տանեաց սրբոյ տաճարիս ի Սիմէոն կաթուղիկոսէ Երեւանցւոյ փութով խանդարեցաւ, քանզի ի գալ զօրացն Ռուսաց յԱրարատ ի 1804 ամի եւ յայլ ժամանակս, զօրք Պարսից ելեալ ի տանիս սրբոյ տաճարիս՝ արարեալ էին ի բազում տեղիս կրակետղ, յորմէ այրեալ եւ փշրեալ քարանցն, վտանգ մեծ լինէր կամարաց եւ առաստաղի եկեղեցւոյն ի ժամանակի յորդութեան ջուրց անձրեւաց: Զայս տեսեալ կաթուղիկոսին Եփրեմայ Ա, ետ նորոգել զբովանդակ տանիսն ի նորակոփ քարանց ագուցելոց ընդ իրեարս ի 1816 ամի, արդեամբք երկուց պատուելի հայազգի արանց, որոց

միոյն յիշատակագրութեանն արձան դնի յարեւելեան հարաւ ի հիման մեծի Կաթուղիկէին արտաքուստ, յայս օրինակ.

«Այս ներքին դասուն տանեաց նորոգութիւնն է արդեամբ ի Ղզլար բնակեալ ազնիւ աղայ Յակոբայ Գալստեան ի յիշատակ կենդանեացն եւ ննջեցելոց ի (թիւ Հայոց) ՌՄԿԵ [1816]-ին»:

Իսկ միւսոյն՝ յարեւելեան հիւսիս նոյնպէս ի հիման մեծի կաթուղիկէին, յայս ձեւ.

«Այս վերին դասուն տանեաց նորոգութիւնն է արդեամբ ազնիւ աղայ Մարկոսին Թառումեան ի յիշատակ կենդանեաց եւ ննջեցելոցն, ի ՌՄԿԵ [1816] (թուին Հայոց)»:

28. Այս փառացի տաճար սրբութեան, որ ունէր յառաջագոյն զմի միայն տեղի պատարագելոյ, այն է աւագ սեղանն սուրբ Աստուածածնի, այլ այժմ հանդերձ նովաւ ունի զեօթն սեղանս սրբազան խորհրդոյն, զերկուսն յաջմէ եւ յահեկէ աւագ սեղանոյն, զմին ի տեղւոջ իջման Բանին Աստուծոյ, զերկուս եւս յաջմէ եւ յահեկէ սորին ի հիւսիսային եւ ի հարաւային թեւսն սրբոյ եկեղեցւոյս. իսկ զեօթներորդն ի միջնայարկի անդ մեծի զանգակատան՝ օծեալ յանուն հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի, ուր երկիցս ի տարին մատչի պատարագ. ի տօնի համբարձման Տեառն եւ ի տօնի նոցին հրեշտակապետացն:

29. Բաց յերից դրանց մեծի տաճարիս, որոց աւագ դուռն է ուղղակի յարեւմուտս ընդ մեծ զանգակատամբն. իսկ երկուքն ընդ հիւսիս եւ ընդ հարաւ յարեւմտեան բաժնի եկեղեցւոյն՝ յանուն Լուսաւորչի եւ Յովհաննու Մկրտչի, որոց պատկերք եւս կան նկարեալք յայնս. է եւ տեղի դրան միոյ ի հարաւոյ կողմանէ ի ներքին դասուն յարեւելեան բաժնի մերձ ի սեղանն Լուսաւորչի, որ ստուգի ըստ հին աւանդութեանն, թէ է դուռն արքունի, ընդ որ եւ մտանէր եւ ելանէր առանձին ի ժամ աղօթից նա ինքն արքայն Հայոց. բայց այժմ այս դուռն, որ արտաքուստ եւս ունի յայտնապէս գնչան կիսակամարի դրան նոյն առաջին հնացեալ քարամբքն, հիւսեալ է նորատաշ վիմօք եւ ի ներքուստ պատուհանաձեւ տեղի դատարկ, ուր յառաջն կախէին բուրվառք խնկոց սարկաւագացն եւ այժմ պահպանին շուրջառք հասարակաբար ի գործ ածելիք յեկեղեցւոջ եւ արտաքոյ:

30. Ունի այս սուրբ տաճար եւ զմեծամեծ լուսամուտս քառասուն՝ բացի չորից փոքունց լուսամտացն երկուց աւանդատանց (որոց երկուքն հիւսեալ են վիմօք եւ միւս երկուքն լուսաւորեն զերկոսին յիշեալ աւանդատունսն). զերկոտասան լուսամուտս ի շրջապատի անդ մեծի կաթուղիկէին, որ ի միջավայր տանեացն, զմին յարեւելից

կուսէ ի գագաթ կամարին աւագ սեղանոյ, զինն հատս յարեւմտից, որոց չորքն հիւսեալ են քարամբք վասն մերձ լինելոյ այնց յատակի գետնոյն՝ թերեւս յերկիւղէ գողոց եւ աւազակաց զկնի բարձման իշխանութեանն Հայոց եւ երբեմն երբեմն մնալոյ Հայաստանի ի ձեռս ինքնագլուխ բռնաւորաց. զտասն ի հարաւոյ, որոց հինգքն նոյնպէս հիւսեալ են վիմօք, զութն ի հիւսիսոյ, որոց երեքն հիւսեալ են. չորք էին թէպէտ յառաջագոյն հիւսեալքն, այլ զմին, որ գտանի ի հիւսիսային թեւ եկեղեցւոյն, բացին յանցեալ ամ 1834:

31. Ի հարաւային կողմն մեծի դրան տաճարիս ընդ զանգակատամբն գտանի արձանագիր յանուն ասնաֆաց եւ դուքանդարաց քաղաքին Տփխիսոյ՝ ըստ այսմ.

«Կամաւն Աստուծոյ մեք Թիֆլիզու ամենայն ասնաֆ եւ դուքանդար, խոստացաք տարէնն ամէն դուքան մէկ մէկ չարէք մոմ տալ սուրբ Էջմիածնայ եւ միաբանք սուրբ Աթոռոյս խոստացան Ե [5] նաւակատեացն զմեզ պաշտամամբ եւ պատարագօք յիշատակել: Ի թուին ՌՃԼԱ (1682), ի հայրապետութեան տեառն Եղիազարու»:

Զայս նուէր ջերմեռանդութեան հայազգի բնակչաց քաղաքին Տփխիսոյ ստանայ մինչ ցարդ սուրբ տաճարս այս յիւրաքանչիւր ամի ի լուսաւորութիւն ինքեան, յորում եւ կատարի եւ ցարդ յիշատակութիւնն խոստացեալ ի միաբանից Աթոռոյս:

ՀԱՏՈՒԱԾ Բ

Ինչ ինչ գործք եւ նկարք ճարտար արհեստաւորաց նուիրեալք յոմանց յանուն սրբութեան տաճարիս, յորում եւ գտանին

32. Խաչկալն աւագ սեղանոյ սուրբ Աստուածածնի, որ լնու զընդարձակ միջոց մեծի կամարայարկին, է քանդակ վայելուչ հմուտ ատաղձագործ հիւսան՝ քանդակեալ անդ ի քաղաքն Զմիւռնիա. ի միջին տեղւոջ բարձրութեանն դրուագեալ է իջումն Բանին Միածնի ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի. ոսկեզօծ է բոլորովին եւ է նուիրեալ ի մեծաց եւ ի փոքունց անդր ի Զմիւռնիա բնակելոց հայազարմ ժողովրդոց՝ հոգաբարձութեամբ առաջնորդի նոցա Սիմէոն վարդապետի Երեւանցւոյ, որոյ եւ յիշատակագրութեանն արձան գտանի ի գագաթ միջին կամարի նորա՝ յստորեւ քան զքանդակն իջման Միածնի, փորագրեալ յերիս կարգս ի փայտ անդր՝ յայս օրինակ.

«Յիշատակ է իջման == Իզմիրցի Աբրահամ
տեղւոյս ամիրային»:

«Շնորհօք ամենազօրին Աստուծոյ, որ ի հայրապետութեան տեառն Աստուածատուր կաթուղիկոսի Ամենայն Հայոց կազմեցաւ եւ ծաղկեցաւ խաչկալս ի մայրաքաղաքն Իզմիր, արդեամբք քահանայից եւ ժողովրդոց յարեւելականաց եւ արուեստականաց, մեծ եւ փոքր վաճառականաց. եւ եղաւ յիշատակ ի մեծ սեղանն Սուրբ Էջմիածնի՝ հոգաբարձութեամբ Իզմիրու առաջնորդ Սիմէոն վարդապետին Երեւանցւոյ»:

Գտանին եւ ինչ ինչ մասնաւոր գրուածք ի տեղիս տեղիս յայս խաչկալ յանուն նուիրողացն զարդիւնս շինութեան:

Ունի այս խաչկալ զերկուս դրունս յերկոսին կողմանս սեղանոյ սրբազան խորհրդոյն, յորոց վերայ նկարեալ են պատկերք երկուց սրբազան առաքելոցն Հայաստանի՝ Բարդուղիմեայն յաջմէ՝ ունելով ի գիրկն զպատկեր օրհնաբանեալ կուսին Մարիամու ի յիշատակ բերելոյ նորա զառաջինն ի Հայս, եւ Թադէոսին յահեկէ՝ ունելով ի ձեռին զնկար Գեղարդին (39) մխելոյն ի կող Փրկչին մերոյ եւ Տեառն, որ յառաքելոյ անտի բերաւ ի Հայաստան:

33. Երկու կաթուղիկոսարանք են ի սմին յայսմիկ պատրիարգա-կան տաճարի, այն է տեղիք կալոյ կաթուղիկոս հայրապետին ի ժա-մու աղօթից, որոց ճարտարարուեստ քանդակեալն ի փայտ ընկու-զենի՝ կայ զետեղեալ անշարժ առ մեծի սեանն արեւմտեան հիւսիսոյ ի դասագլխի անդ վերին դասու միջնաբաժնին բարձրութեամբ իբ-րեւ գիրկ երկու:

Միջոց չորից սեանց սորա յերեսին կողմանս՝ յաջմէ, յահեկէ եւ ի թիկանց, ի ստորին բաժնի բովանդակն վարդանման շուշանաձեւ քանդուած ընտիր. իսկ վերին բաժինքն, որք միացուցանեն զգլուխս սեանցն, կամարաձեւ այլատեսակ դրուագեալ. տանիք սորա կազ-մեալ փորուածու՝ զարդարեալ հնգեքին սրածայր փոքրիկ կաթուղի-կէիւք հանգունատիպ կաթուղիկէից տանեաց մեծի տաճարիս:

Զսմանէ թէպէտ ոչ գոյ գրաւոր ծանօթութիւն ինչ, թէ երբ եւ ուստի, բայց ըստ աւանդութեանն թուի լինել ա՛յն, զորմէ գրէ հայր Միքայէլ Զամչեան ի Պատմութեան (հատոր Գ-րդ, յերես 725). «Եւ զայս թուղթ յղեաց (Իննովկենտիոս քահանայապետ) ձեռամբ Խա-չատուր վարդապետի Կարնեցւոյ Առաքելեան... յղեաց ընդ նմա եւ ազնիւ ընծայս ինչ առ կաթուղիկոսն (Հայոց Նահապետ) եւ աթոռ մի փառազարդ, յամի Տեառն 1697 կամ 1699»:

Յայսմիկ կաթուղիկոսարանի դնի շարժական աթոռ, ուր երբեմն հանգչի նա ինքն կաթուղիկոսն յերկարաձիգ ժամերգութիւնս հան-դիսաւոր աւուրց, երբ է պաշտօնակատարութիւնն ի միջին դաս անդր:

34. Իսկ միւս կաթուղիկոսարանն նոյնպէս զետեղեալ անշարժ առ սեանն արեւելեան հիւսիսոյ դասագլուխ առաջին դասու արե-ւելեանն բաժնի. վերին շինուածքն, որ է տանիքն, է բոլորովիմբ փայտեայ վայելուչ իմն դրուագեալ հրաշակերտ. ունի ի միջին տեղւոջ գմբէթ կիսաբոլորակ. եւ ի չորեսին անկիւնսն զչորս փոք-րիկ կաթուղիկէս եւ ի շրջանակսն չորից կողմանց փոքր պատկերք փորածոյք. այս վերին շէնք է բոլորովին ոսկեզօծ:

Յստորեւ քան զշրջանակսն յիշատակեալ վերին բաժնի ի չո-րից կողմանց յինն բաժինս է յիշատակագրութիւն նուիրողացն արդեամբք իւրեանց զայս կաթուղիկոսարան ըստ այսմ. «Շինեցաւ պատրիարգարանս ի յիշատակ Ակնցի մահտեսի Մինասի որդի / Սեղբոսին եւ Կամրկապցի Նազարի որդւոց / մահտեսի Առաքելին, Մարտիրոսին եւ Յարութիւնին / եւ ամենայն զարմից նոցին, թուին ՌՃՀ [1721], / ի հայրապետութեան տեառն Աստուածատրոյ / սրբա-

զան կաթուղիկոսին Ամենայն Հայոց / եւ հոգաբարձութեամբ տէր Յովհաննէս եւ տէր Պետրոս վարդապետաց»:

Իսկ սիւնքն եւ ներքին շինուածքն յարմար վայելչութեամբք պատեալ ի մանրահատ ծաղկաձեւ եւ անկիւնաւոր սատափէ եւ ի խղտոյ (պաղայ):

Ի վերին եզերս այսր ներքին շինուածոյ, ի վեցեքին բաժինսն է նոյն յիշատակագրութիւն եւ տառքն գեղեցկապէս եւ յարմար ձեւացութեամբ ի սատափէ յանուն նոյն վերոյիշեալ արանցն՝ ըստ այսմ.

«Ի հայրապետութեան տէր Աստուածատուր սրբազանի / Սուրբ Էջմիածնի եւ հոգաբարձութեամբք Բաղիշեցի / Յովհաննէս եւ Աստապատցի Պետրոս վարդապետացն»:

Այս յարեւելից կուսէ, իսկ ի հարաւոյ՝

«Յիշատակ է Ակնցի մահտեսի Մինասի որդի մահ/տեսի Սեղբեստրոսին եւ Կամրկապցի Ազարի[1] որ/դւոցն մահտեսի Առաքելին, Մարտիրոսին, Յարութիւն/ին եւ ծնողաց եւ ամենայն ազգաց եւ զաւակացն. ՌՃՀ [1721] թվին»:

Այս կաթուղիկոսարան փոքր ինչ լայնանիստ է քան զմիւսն, իսկ բարձրութեամբն գրեա՛ թէ հաւասարաչափ:

35. Յայսոսիկ նիւթոց ներքին շինուածոց կաթուղիկոսարանի եւ ըստ արհեստի ձեւակերպութեանցն կազմեալ են եւ երկոքին դրունքն երկուց աւանդատանց, որք ըստ այնց ունին զյիշատակագրութիւնս: Դուռն սրբութեան մասանց, որ ի հարաւակողման, ըստ այսմ.

«Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր սրբազանի, յիշատակ է Ապուչեղցի Ազատենց սառաֆ Յակովբին եւ հոգաբարձութեամբ Աստապատցի Պետրոս վարդապետին. ՌՃՀ (1721) թվին»:

Դուռն որ ի հիւսիսակողման, ըստ այսմ.

«Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր սրբազանի. յիշատակ է Ապուչեղցի Ազատենց սառաֆ Յակոբին եւ հոգաբարձութեամբ Բաղիշեցի Յովհաննէս վարդապետին. ՌՃՀ [1721] թվին»:

36. Գտանին յայսմ փառացի տաճարիս քաջարուեստ պատկերք տէրունականք եւ ականաւոր սրբոց, որպիսի են քաջահմուտ նկարք՝ պատկերքն աւետման շրջանակաւ ամրացեալ ի բարձրութեան անդ արեւմտակողման երկուց սեանցն արեւելեան. հրեշտակին՝ ի սիւն հիւսիսային. կուսին սրբոյ՝ ի հարաւայինն: Եւ պատկերքն երկոտասան առաքելոց, յորում է շօշափումն Թովմայի, դասաւորեալք ի կիսաշրջանակի անդ կամարայարկին արեւմտեան մեծի դրանն ի ներքին կողմանէ. եւ պատկերքն երկոքին՝ աղօթելոյն Տեառն ի պար-

[1] [Հավանաբար պիտի լինի Նազար, քանի որ վերևում բերված արձանագրության մեջ նույն անձնավորությունն այդպես է հիշվում]:

տիզին, որ կայ եղեալ ի ներքուստ ի հարաւային կողմանէ սեղանոյ սրբուհւոյ օրհնաբանեալ Կուսին. եւ յարութեանն Ղազարու, որ եղեալ է յորմն հիւսիսային մերձ ի սեղան որդւոցն Որոտման: Եւ այլ պատկերք տէրունականք առ պատշգամբաւ մեծի կաթուղիկէին եւ զանազան սրբոց հայրապետաց եւ վարդապետաց ի սիւնս եւ յորմունս տաճարիս այսորիկ: Ի կիսաշրջանակի կամարայարկին սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի նկարեալ կան հայրապետական զգեստուք ի կանգուն պատկերք սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, որդւոց եւ թոռանց նորա: Նոյնպէս ի կամարայարկին սեղանոյ Յովհաննու Կարապետի՝ պատկերքն սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ սրբոց հայրապետաց: Ի սոսա քաջարուեստ են պատկերք երկուց առաքելոցն:

Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփաննոսի Լեհացւոյ եւ քաջ նկարչին հօր Յովնաթանու:

37. Գտանէին եւ երկու միանման փոքրադիր պատկերք սուրբ Աստուածածնի՝ ունելով զՅիսուս ի գիրկ, բերեալ յԵփրեմայ կաթուղիկոսէ ի վերադարձի նորա յաշխարհէն Հնդկաց. նկարքն ի վերայ ապակւոյ գեղապանծ շքեղութեամբ: Զմին յերկուց աստի էառ ընդ իւր արքայորդին Պարսից Ապպազի Միրզայ ի գալստեան իւրում յաթոռ այսր յամի Տեառն 1810. իսկ միւսն կայ աստէն՝ եղեալ յաւագ սեղան անդ նորին սրբոյ կուսի:

38. Նար-Բօբերթ Պօրթեր աստիճանաւ պօլկովնիկ այր անգղիացի, շրջագայելով ի զանազան տեղիս Ասիոյ, գայ եւ ի սուրբ տեղիս այս՝ ի պատրիարգական Աթոռս Հայաստանեայց յաւուրս Եփրեմայ կաթուղիկոսի յամի 1817. յորմէ եւ պատուասիրեալ յարգանօք՝ զկնի վերադարձին իւր ի հայրենիս, առաքէ անտի զիւր ձեռաց նկար՝ զմի մեծադիր պատկեր Յիսուսի նուէր յանուն Եփրեմ կաթուղիկոսի. կայ Յիսուս ի կանգուն՝ ի յաջմէ զգուեալ աստուածազգեաց մանուկն Իգնատիոս, եւ ի ձախմէ մանկունք երկու լանջափարեալ զմիմեամբք՝ օրհնին յամենազօր Աջոյն. այս ըստ խորհրդաւոր բանիցն, որ յԱւետարանին. «Եւ առեալ մանուկ մի կացոյց ի միջի նոցա» եւ այլն. եւ թէ՝ «Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս» եւ այլն: Արդարեւ նուէր յիշատակաց արժանի եւ արժանաւոր գործ հմուտ ձեռին. այս պատկեր կախեալ կայ այժմ ի մէջ տաճարիս յորմն հարաւային մերձ ի սեղան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

ՀԱՏՈՒԱԾ Գ

Յաղագս սուրբ մասանց եւ նշխարաց սրբոց եղելոց ասպէն ի գանձարանի սրբոյ խորանի մեծի Կաթուղիկէ եկեղեցւոյս: Գեղարդ Ղունկիանոսի հարիւրապետին

Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս Նորա
եւ վաղվաղակի ելն արիւն եւ ջուր.
յԱւետարան Յովհ., գլուխ ԺԹ, համար 34:

39. Զայս տէգ, որ եւ ասի Գեղարդ, ագուցեալն ի ծայր նիզակին Ղունկիանոսի հարիւրապետի, որով խոցեցաւ կող կենագործողին զմեզ Յիսուսի, զկնի համբառնալոյ Տեառն առ Հայր ի յերկինս՝ Թադէոս առաքեալ ունելով ընդ իւր գայ յԵդեսիա առ Աբգար արքայ Հայոց ըստ խոստման Փրկչին. եւ յետ քարոզութեան եւ նահատակութեան առաքելոյն ի Հայաստան, մնայ այն շնորհ առ հաւատացեալսն յազգէ Հայոց, որոց առանձինն փոքրիկ եկեղեցի եկաց, մնաց մինչեւ ցբովանդակ լուսաւորութիւն ողջոյն ազգին՝ նահատակութեամբ եւ քարոզութեամբ մեծին Գրիգորի Պարթեւի առ Տրդատաւ. եւ այսպէս մնաց այս անգին պարգեւ Գեղարդս սուրբ առ Հայազնեայս, որ եւ այժմ կայ աստ ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոջ Էջմիածնի, որոյ ստուգութեանն լինելոյ ի Հայս, վկայ եղիցին քեզ յետագայ գրուածքդ:

Ի Թուղթն Դաշանց առ Ագաթանգեղոսի ի Նորոգ սրբագիր տպագրեալն ի Կոստանդնուպոլիս յամին 1824, յերես 347, ուր յետ յիշատակութեան փրկչական պատկերին եւ սուրբ Աստուածածնի եւ փայտին կենաց պարգեւելոյն միջնորդութեամբ սրբուհւոյն Հռիփսիմեայ, գրի եւ վասն Գեղարդայ, թէ՝ «Անդ (ի Հայաստան) կայ եւ Գեղարդն Ղունկիանոսի հարիւրապետին, որով խոցեցաւ կող Փրկչին եւ բղխեաց ջուր եւ արիւն, նշանակ մկրտութեանն եւ հաղորդութեաննն»:

Գրի եւ ի Յայսմաւուրս ի Ի Գ դեկտեմբերի ի ճառի անդ Թադէոսի առաքելոյ թէ՝ «Յորժամ եկն առ նա (առ Սանատրուկ) սուրբ առա-

քեալն Թադէոս ունելով ընդ ինքեան զ Գեղարդն աստուածամուխ, որով առնէր նշանս մեծամեծս եւ փարատէր զամենայն չար ախտ հիւանդութեանց. վասն որոյ եւ բազումք հաւատացին ի Քրիստոս, նաեւ դուստր թագաւորին Սանդուխտ»:

40. Գտաւ ի գրանոցի հայրապետական Աթոռոյ Էջմիածնի ի մէջ ձեռագիր շարակնոցաց՝ Շարակնոց մի կարի հարուստ եւ ճոխ, յորում ընդ այլ անծանօթ շարական երգոց, գրեալ կայր եւ շարական մի ի վերայ սուրբ Գեղարդայ, յօրինեալ ի մեծէն Վարդանայ Բարձրբերդցւոյ, զոր արժա՛ն է ընթեռնուլ.

«Իսկ դու պարծանքդ պարծանաց, Գեղարդըդ սուրբ եւ գերազանց, որ ձեռամբ Թադէոսի սուրբ եւ ընտրեալ առաքելոյն առաքեցար մեզ ապաւէն հիմն բարեաց հաստատութեան. քեւ զ Քրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Թեւաւոր սուր երկսայրի եւ բանալի անճառ շնորհաց, զի դու բացեր զկողն Կենաց՝ ջուր եւ արիւն արտաբերեալ, որով մկրտիմք եւ հաղորդիմք ի բնակութիւն Երրորդութեան. քեւ զ Քրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Գեղեցիկ գոյն գովելի ներկեալ արեամբն Յիսուսի, ի փառս ազգիս Հայաստանեայց արձանացար յերկրի մերում, աշտարակ բարձր եւ ամուր պարիսպ հրեղէն շուրջանակի, քեւ զ Քրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Աստուածամուխ սուսերդ սուրբ աստուածախառն զօրութեամբ, որով կտրին արմատք ախտից եւ ցաւք մեղաց եւ յանցանաց, քեւ փրկեսցուք ի փորձութեանց եւ յամենայն որոգայթից, քեւ զ Քրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Գեղապաճոյճ Գեղարդն սուրբ եւ թարգմանիչ անմահ որդւոյն, որով ցուցաւ Աստուած եւ մարդ՝ ըստոյգ մեռեալ եւ կենդանի, յոր հաւատաց Հարիւրապետն եւ վկայեաց աստուածութեանն. քեւ զ Քրիստոս բարեբարեաց եկեղեցւոյ:

Աստուածաներկ սուր փայլածու նիզակ ի ձեռն Յիսուսի, որով փախչին փաղանգ դիւաց եւ բնակին գունդք հրեշտակաց, քեւ կնքեսցուք զգայարանս եւ դրոշմեսցուք զմիտս եւ զհոգիս, տալով պատիւ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, կենդանութեան եւ յետ մահու եւ յանսպառ յաւիտենից»:

41. Գտանին ո՛չ սակաւ գրուածք զսուրբ Գեղարդայ յինչ ինչ ձեռագիր մատեանս ազգի Հայոց. գիրք իմն ի վերայ բազմազան նիւթոց, բառից աստուածաշունչ գրոց եւ այլն, գրեալ յԱսպահան՝ ի Նորն Ջուղայ գիւղաքաղաքի Հայոց, գրչութեամբ Ազարիայի ու-

րումն ի թուին Հայոց ՌՃԽԱ [1692], որ ունէր յինքեան զվէպս ինչ ինչ երեւելի մասանց եղելոց ի Հայաստան. ընդ որս եւ զսուրբ Գեղարդայ՝ յայս օրինակ.

«Եւ արդ, սուրբ Գեղարդն Քրիստոսի երկնային գանձն լուսոյ կայ... յաշխարհին Հայոց. եւ որք տեսանեն զնա, մի՛ տեսցեն զմահ յաւիտենից: Եւ նմանութիւն աստուածակիր Գեղարդին այսպէս է. գմբէթաձեւ ի վեր քարշեալ զգլուխ նորա որպէս նիզակին սուր թառփաւոր եւ ձեւեալ որպէս զխաչ. եւ փորեալ հատուածին երկու կողմանց երեսաց սուրբ խաչին բեւեռեալ. եւ վայր կողմն նիզակին, չորս մատնիչափով, բայց ոչինչ քանդակեալ, այլ անարատ եւ հաւասար. ա՛յս է նշան սուրբ Գեղարդին»: Եւ զի գրի ի վեր անդր թէ՝ «Եւ ձեւեալ որպէս զխաչ եւ փորեալ հատուածին երկու կողմանց երեսաց սուրբ խաչին բեւեռեալ»[1]*:*

Ի միջակէտ բաժնի անդ ծայրին արարեալ է նշան քառաթեւ խաչի եւ զբաժին այնց քառաթեւիցն իսպառ հատուածեալ ի Գեղարդէն: Եւ անդրէն զնոյն երկաթ ձեւացուցեալ խաչ բեւեռեալ են ի վերայ նորա եւ զերկուս եւս փոքր հատուածս յերկոսին կողմանս նորա իբրեւ կապ բեւեռեալ են ի վերայ՝ առ ի պահպանել զնա ի խորտակմանէ: Եւ աւանդութիւն է յազգի Հայոց, թէ այն ձեւացութիւն նշանի խաչին եւ այն բեւեռակապ պնդութիւնք հատուածոց երկաթիցն, են գործք ձեռաց նորին Թադէոսի առաքելոյ, որ եբերն զայն ի Հայաստան աշխարհ:

42. Եւ զի ի յոլով ժամանակս պահիւր այս սուրբ Գեղարդ յԱյրիվանան անդ Գառնւոյ, յորմէ եւ անուն մենաստանին այնորիկ փոփոխակի առեալ կոչի եւ Գեղարդայ վանք՝ թէ ի գրուածս, եւ թէ ի խօսս հայազգի մատենագրաց եւ ժողովրդոց, մանաւանդ՝ բովանդակ բնակչաց կողմանցս. մինչ զի գրեթէ մոռացեալ զառաջինն, զերկրորդն յիշեն՝ **Գեղարդայ վանք***, ուր յաճախեն տակաւին եւ ուխտաւորք երկիցս ի տարին՝ ի միջոցս Համբարձման եւ յաշնանամտին: Այս սուրբ Գեղարդ ի վանաց անտի ունի տուփ արծաթի ծանրակշիռ երկայնաձեւ, գլուխն ուղիղ հաւաքեալ սրածայր ըստ օրինակին նոյն Գեղարդայ, որ եւ ունի զերկփեղկեան դուռն նմանապէս արծաթի, որոյ ի թիկանց կողմանէ գտանի յիշատակագրութիւն անուան ընծայողի այնմ Պռոշ իշխանի եւ նորոգողին Դաւիթ վարդապետի առաջնորդի այնր վանաց, յայս ձեւ.*

«Ի թուին ՉԺԷ [1268].

[1] [ՄՄ ձեռ. 451]:

Այս արփիափայլ նշան ահաւոր եւ աստուածային զէն անպարտելի ներկեալ արեամբ Որդւոյն (Աստուծոյ) աստուածամուխ սուսերս սուրբ մեծ եւ հզօր սպանիչս վիշապին, որ զցօղ անապական սուրբ արեանն էհեղ ի փրկութիւն աշխարհի: Այս Գեղարդ աստուածաշուք եւ հիազօր արձան լուսատու կանգնեալ ի փառս Հայաստան աշխարհի. հրափայլ եւ ծաղկանկար արեամբն Քրիստոսի վառեալ եւ վայելչացեալ պսակ պարծանաց Կաթուղիկէ եկեղեցւոյ եւ թագ արքունական ի գլուխ քրիստոնէից. ուստի ի կամս բարձրելոյն օրհնեալ, ես Պռոշ իշխան, որդի Վասակա արժանաւորեալ աստուածեղէն սուրբ նիզակիս՝ զարդարեցի զսա պատուական պահարանաւ, բարեխօս ինձ յահաւոր ատենին Քրիստոսի եւ մեծաւ յուսով ընծայեցի յիմ գանձագին գերեզմանատունս ի սուրբ ուխտս Այրիվանից յիշատակ յաւիտենական ինձ եւ զաւակաց իմոց՝ Պապաքին, Ամիր-Հասանին եւ Վասակա եւ կենակցի իմոյ Խութլու-Խաթունին, որ կիսօրեայ ելին յաշխարհէ, յորոց վերայ ամենեցուն սոցա՝ կենդանեաց եւ մեռելոց ծագէ շնորհ ողորմութեանն Քրիստոսի միշտ եւ հանապազ//: Եւ փոխանակ այսմ նիզակի շնորհեսցէ Քրիստոս բարեպաշտ իշխանին Պռոշայ խորան արեգակնափայլ եւ անճառելի եւ լուսափայլ պսակ կազմեալ ի ձեռն Աստուծոյ»:

«Իսկ ի թվին ՌՃԼ եւ Զ-ին [1687], ես՝ Դաւիթ վարդապետս, առաջնորդ սուրբ ուխտիս Այրիվանից, յազգէն Խաղբակա եւ Պռոշա որդի Ինանկին, ետու նորոգել զպահարան սուրբ Գեղարդա առաւել պայծառ քան զառաջինն՝ սակս յուսոյն, զոր առ Քրիստոս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ հօրեղբարց իմոց Դաւիթ եպիսկոպոսին եւ Ստեփաննոս վարդապետին՝ հանգուցելոց ի Քրիստոս, եւ եղբարցն իմոց Բէկումին, Կիրակոսին եւ քեռն իմոյ Մարիամու, յորոց առհասարակ կենդանեաց եւ մեռելոց ամենեցուն ողորմեսցի: Եւ զկազմողի սորին Գրիգորի եւ Սարգսի»:

Միխայէլ պատրիարգ Ասորւոց ի վախճանի Պատմութեան իւրում գրէ վասն իսկական Գեղարդայ լինել ի Հայաստան՝ ըստ այսմ. «Եւ Գեղարդն աստուածամուխ պսակաւն փչեայ ի Թադէոսէ բերեալ եւ կայ անդէն ի Հայս ի պարծանս ազգին եւ ի փառս Աստուծոյ»:

Վարդան վարդապետ յԱշխարհագրութեան իւրում ասէ զկնի ճառելոյն զ Դուին. «Իսկ ի կողմն Գառնոյ... Եւ Այրիվանքն, ուր կայ սուրբ Գեղարդն աստուածամուխ ներկեալ արեամբ կենարարին»[1]*:*

[1] [Արարեալ է Աշխարհացոյց նորոգ թարգմանչին եւ երկրորդ լուսաւորչին Վարդանայ վարդապետին պարզ եւ համառօտ տեսութեամբ, տե՛ս «Բառգիրք Հայոց, արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիա վարդապետէ», Կ. Պոլիս, 1728, էջ 497–535]:

Եւ Թովմա պատմագիր վարդապետ Մեծոբայ վանաց վասն նորոգութեան Աթոռոյ Էջմիածնի եւ ընտրութեան կաթուղիկոսի ընդհանուր ազգային ժողովով յամի 1441, գայ ընդ այլոց այսր ի Վաղարշապատ ի վանաց անտի Մեծոբայ եւ զճանապարհորդութենէ իւրմէ պատմելով վկայէ այսմ այսպէս. «Եւ ապա ուրախութեամբ մեծաւ եւ աներկբայ յուսադրութեամբ ելեալ գնացաք յամենալից եւ օրհնեալ գաւառն ի Դարօն (Բայազիտ) եւ յոտն Մասեաց ի յԱկոռի. եւ անտի մտաք ի կենդանաթաղ գերեզմանն Լուսաւորչին ի Խոր Վիրապն եւ անտի յերկրպագութիւն սուրբ Գեղարդեանն (որ էր յԱյրիվանան անդ) եւ սկզբնատիպ պատկերի մարդեղութեանն Քրիստոսի. եւ պատահեալ դիպեցաք մեծ վարժապետին մերոյ եւ առեալ եկաք ի գիւղաքաղաքն Երեւան»: Ի գանձարանի եկեղեցւոյ Հայաստանեայց ի յօրինեալ երգն ի Գրիգոր վարդապետէ գրի ըստ այսմ.

«Ի գալ Թադէին,
Հրամանաւ Քոյին (Փրկչին),
Յաշխարհս վերին,
Զինու Գեղարդին,
Նախ առ Աբգարին,
ՅՈւրհայ քաղաքին»:

43. Այլ զի երբեմն երբեմն պահէին կաթուղիկոսունք Աթոռոյ Էջմիածնի զայս սուրբ Գեղարդ ի տաճարիս այսմիկ մեծի Կաթուղիկէի առ ինքեանս. եւ թէ առ ինչ պատճառ, չունիմք թէպէտ զտեղեկութիւն ինչ, բայց որպէս ինձ թուի՝ պատճառ այնմ գլխաւորապէս եղեալ են խառնակութիւնք եւ վրդովմունք սահմանացս այսոցիկ յասպատակութեանց եւ ի հեծելաշարժութեանց յառնելոց ի վերայ միմեանց՝ թագաւորաց աշխարհաց եւ իշխանաւորաց գաւառաց: Քանզի յինչ ինչ կոնդակս կաթուղիկոսաց յիշատակի ընդ այլ սրբութեանց եղելոց յԱթոռ այսր եւ Գեղարդն սուրբ ներկեալն արեամբ Յիսուսի: Յառաջին կոնդակի գրեալ ի թուին Հայոց ՋԱ [1452], ի Ա դեկտեմբերի ի Գրիգոր Ժ կաթուղիկոսէ: Յերկրորդումն գրեալ ի թուին Հայոց ՋԾԳ [1504], ի ԻԴ [24] նաւասարդի յԵղիշայէ Բ կաթուղիկոսէ: Յերրորդումն գրեալ ի թուին Հայոց ՋՂ [1541], ի Գրիգորէ ԺԱ կաթուղիկոսէ: Եւ ի չորրորդումն գրեալ ի թուին Հայոց ՌԺԲ [1563] ի Միքայէլ կաթուղիկոսէ Սեբաստացւոյ: Իսկական օրինակք այսոցիկ կոնդակաց գտանին ընդ այլ հնութեանց ի վանս Ստեփաննոսի Նախավկայի որ ի ձորն հին Ջուղայու առ Մաղարթայ լերամբ:

44. Թերեւս վիճեսցեն ընդ այս լատինք՝ հաստատելով զառ յինքեանս եղեալն հատուած տիգին, որով հրէայք ընդ կատակս խոցեցին զպատկեր իմն փրկչական ի Բիւրիտոն քաղաք Հրէաստանի. եւ ի լինել հրաշից ի պատկերէ անտի, պատուեցաւ առաւելապէս ի քրիստոնէից որպէս պատկերն այն, նմանապէս եւ այն տէգ. եւ զերկոսեան իսկ եւս զկնի ժամանակաց տարան ի Կոստանդինուպօլիս. զպատկերն՝ կայսրն Յունաց Զմշկիկ որ եւ Յովհաննէս, այն ինչ յաղթահարէր զկողմանս երուսաղէմացւոց. զտէգն՝ Զնջիլ անուն կոմսն տարեալ յԱնտիոք քաղաքէ՝ ետ պարգեւ Ալէքսի կայսեր Յունաց յամի 1099: Առ որ եղիցին քեզ սիրողիդ հնութեանց ճշմարիտ վկայ յետագայ գրուածքդ:

Ի գիրքն Հայելի վարուց կոչեցեալ[1], որ տպագրեալ է յամին 1702, անդ ի թղթահամարն 334 գրի վասն պատկերին այնորիկ, ըստ այսմ.

«Պատմեաց մեզ սուրբ Աթանաս Աղէքսանդրու հայրապետ, թէ ի Բիւրիտոն քաղաք մերձ յԵրուսաղէմ ի սահմանս Տիւրոսի եւ Սիդոնի բազում հրէայք բնակեալ էին խառն ընդ քրիստոնեայս. եւ մի ոմն ի հրէիցն խնդրէր տուն ի վարձու: Եւ առեալ ընդ իւր այլ սիրելի հրէայս եւ գնացին գտին տուն մի դատարկ, յորմէ քրիստոնեայք ելեալք էին եւ մոռացեալ էին յորմն յարեւելից կուսէ կախեալ զտէրունական պատկերն: Եւ յորժամ մտին ի տունն հրէայքն, տեսին զպատկերն եւ ասէին ցմիմեանս, թէ՝ «Այս պատկերս Գալիլեացւոյն է. եւ որպէս արարին հարքն մեր ընդ նմա, արասցուք եւ մեք ընդ պատկերս»: Եւ առեալ եղէգն հարկանէին զգլուխն եղեգամբ եւ ծեծէին զծնոտսն եւ թքանէին յերեսն. եւ ծակեցին սրով զձեռսն եւ զոտսն: Եւ յորժամ խոցեցին զկողն պատկերին, առ ժամայն ել արիւն եւ ջուր: Եւ զայն տեսեալ զահի հարան եւ ընթացեալ պատմեցին քահանայապետիցն իւրեանց եւ այլ հրէիցն: Եւ նոքա փութանակի գնացին ի տունն եւ տեսին զպատկերն, որ խոցուածոյն բղխէր ջուր եւ արիւն: Եւ ասեն քահանայապետքն. «Փորձեսցուք եթէ ճշմարիտ է զոր ասեն քրիստոնեայքն»: Եւ հրամայեաց բերել ման եւ ժողովեաց զարիւնախառն ջուրն: Եւ երթեալ օծեցին զհիւանդս իւրեանց, զկոյրս, զխեղս, զկաղս եւ զանդամալոյծս եւ առ ժամայն բժշկէին: Եւ միահամուռ ժողովեցան եւ գնացին առ եպիսկոպոս քաղաքին եւ պատմեցին զամենայն եղեալ զսքանչելիս: Եւ յարուցեալ գնացին զհետ նոցա ի տունն եւ տեսին զպատկերի երեսն որպէս զարեգակն պայծառացեալ եւ դադարեալ բղխումն ի կողից: Եւ առ ժամայն

[1] [Գիրք Հայելի վարուց, որ ասի Հարանց վարք, Մարսիլիայ, 1702. հմմտ Հայելի վարուց, աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի, Երեւան, 1997]:

ամենայն հրէայքն հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան. եւ ուրախութիւն մեծ եղեւ քաղաքին յայնմիկ: Եւ նուիրեցին զտունն զայն ժողովրդեան, զոր եւ շինեցին եկեղեցի, յորում կայր պատկերն սքանչելի: Եւ եդին զանունն Ամենափրկիչ:... Եւ յետ ժամանակաց թագաւորն Զմշկիկ գնաց ի Համս եւ էառ զՔրիստոսի պատկերն եւ հողաթափն պատուական: Եւ եկեալ ի Բիւրիտոն էառ զպատուական պատկերն զայն եւ տարեալ ի Կոստանդինուպոլիս եւ եդին ընդ սրբութիւնսն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն»:

Համաձայն այսմ գրէ եւ վասն սոյն պատկերիս Մատթէոս Ուրհայեցի պատմիչ զկնի ասպատակութեանցն նորին Զմշկիկ կայսեր ի կողմանս Պաղեստինոյ ընդդէմ հագարացի տաճկաց՝ յառաջ բերելով զթուղթն նորա որ առ շահանշահն Աշոտ թագաւոր Հայոց յԱնին Շիրակայ՝ յասելն.

«Զի այսպիսի յաղթութիւնս ետ Աստուած քրիստոնէից, որ ոչ եղեւ երբէք. եւ գտաք յայնմ քաղաքին ի Գաբաւոն զսուրբ հողաթափն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որով եւ շրջեցաւ իսկ ի վերայ աշխարհի. նոյնպէս եւ զպատկերն Փրկչին, զոր հրէայքն յետ ժամանակի խոցեալ էին, ուստի վաղվաղակի ել արիւն եւ ջուր եւ զխոց տիգին ոչ գտաք»:

Դարձեալ նոյն Ուրհայեցի պատմիչ ի թիւն Հայոց ՇԽԷ (1098) գրէ. «Եւ ահա՛ երեւեցաւ սուրբ առաքեալն Պետրոս (յանուրջս) ֆռանկի միոջ բարեպաշտի (յԱնտիոք) եւ ասէր, եթէ ի ձախակողմն եկեղեցւոյդ կայ ի պահեստի զէնն, որով Քրիստոս ի հրէիցն էառ զխոցումն ի յանարատ կողն իւր (ի պատկեր անդր ըստ վերոյիշելոցն)... ահա կայ յառաջի խորանին. հանէք զնա, եւ նովաւ ելէք ի պատերազմ եւ նովաւ յաղթեցէք թշնամեաց ձերոց»: Եւս ի թիւն Հայոց ՇԽԸ (1099) նոյն Ուրհայեցի գրէ. «Յայսմ ամի դարձաւ Զնջիլ կոմսն եւ գնաց ի Ֆռանկ եւ տարաւ զէնն Քրիստոսի, զոր գտին յԱնտիոք, եւ ետ Ալէքսին (կայսեր) Հոռոմոց թագաւորին եւ ինքն գնաց ի Ֆռանկ»: Եւս եւ ի թիւն Հայոց ՇԾ [1101]:

Ըստ այսոցիկ խառն գրուածոց գրէ եւ Կիրակոս պատմիչ Գանձակեցի. «Բայց յաւուրս հաւուն սորա (Կիռ Մանուէլ կայսեր) Ալէքսի (կայսեր Յունաց) կոմս ոմն եկն յԵրուսաղէմէ յԱնտիոք եւ իբրեւ եմուտ ի տաճար սրբոյն Պետրոսի առաքելոյ եւ հաղորդ եղեւ պաշտամանն, երեւեցաւ նմա սուրբ առաքեալն Պետրոս եւ ասէ. Ի պատուհան եկեղեցւոյդ թաղեալ կայ Գեղարդն, որով խոցեցին Փրկիչն մեր (ի պատկերի անդ), առեալ տարցես յաշխարհն քո: Եւ

նորա առեալ խնդութեամբ եկն ի Կոստանդինուպոլիս: Եւ լուեալ Ալէքսի կայսեր, մեծարանս արար նմա յոյժ եւ ետ նմա գանձս բազումս եւ խնդրեաց ի նմանէ զ Գեղարդն. եւ եթող առ նմա կոմսն եւ գնաց զճանապարհս իւր»:

45. Հայր Մկրտիչ Աւգերեան Մխիթարեանց ի Վարս սրբոց (հատոր Է, յերես 358), ի ծանօթութեան վարուց Ղունկիանոսի հարիւրապետի՝ չգիտեմ առ ինչ վախճան, զանց արարեալ զստուգութենէ Հայաստանեայցս իրաւանց՝ զԼատինացի Բոլլանդեանցն բերէ անդէն զերկարաձիգ բանս, զոր արժան համարեցաք դնել աստ ի զբօսանս ընթերցանելեացն.

«Իսկ յաղագս աստուածամուխ Գեղարդեանն, զորմէ աւանդութիւն է ազգիս ի Հայաստան լինել՝ բերեալ[1] *ի Բարդուղիմեայ առաքելոյն, բերեն Բոլլանդեանք զաւանդութիւնս արեւմտեայց, որպէս թէ առ նոսա իցէ, գրելով այսպէս. «Յաղագս Գեղարդեան, որով խոցեցաւ կող Փրկչին, որ ոք կամի քաջ խելամուտ լինել ամենայնի, ընթերցցի զՅակոբ Բոսիոս. գիրք Ա. Յաղագս յաղթական խաչի. գլ. 17, ուր ճոխագոյն բացատրէ, թէ զիա՛րդ ընդ սուրբ խաչափայտի եւ ընդ այլ գործեաց չարչարանաց Տեառն յերկիր թաղեցաւ այն ի հրէից եւ ընդ նոսին գտաւ ի Հեղինեայ դշխոյէ ի մօրէն մեծին Կոստանդիանոսի: Եւ թէ սովոր էր պահիլ այն յայնմհետէ ի գաւթի տաճարի սուրբ գերեզմանին, ուսուցանէ հեղինակ գրոցն՝ որ յաղագս սուրբ սուրբ տեղեաց, համառօտեալ, որպէս կարծի, ի պատուականն Բեթայէ: Անդանօր առ նմին Բոսիոսի մա՛րթ է վերծանել, թէ որպէս նոյն սուրբ Գեղարդն յամի 1118 կամ 1098, սքանչելեօք գտեալ յԱնտիոք՝ սքանչելապէս ազատեաց զայն քաղաք ի սաստիկ պաշարմանէ: Եւ թէ որպէս նոյնն անկաւ ի ձեռս կայսերն Կոստանդնուպոլսոյ, որոյ զսայր նորա խարտոցեալ՝ զառաջինն ետ ի պարգեւի մասին Վենէտիկեցւոց եւ ապա յղեաց ընծայ առ սուրբն Լուդովիկոս արքայ Գաղղիացւոց*[2]*. իսկ մնացեալ երկաթն, որ մնաց ի թագաւորական քաղաքին, յառման անդ նորա անկաւ ընդ ձեռամբ*

---

[1] Ոչ ի Բարդուղիմեայ առաքելոյ, այլ ի Թադէոսէ, որ եկն առ Աբգար արքայ Հայոց յԵդեսիայ՝ ըստ վերոյգրելոցդ. եւ զի հնագոյն եւ նոր պատկերք այդոցիք երկոցունց սուրբ առաքելոցդ միշտ նկարին՝ Բարդուղիմեայն հանդերձ պատկերաւ Տիրամօր կուսին, զոր նա ինքն եբեր ի Հայաստան եւ Թադէոսին հանդերձ նկարաւ սրբոյ Գեղարդեանն:

[2] Եւ այս հատուած այնր տիգի, որ առաքեցաւ առ սոյն Լուդովիկոս արքայ Գաղղիացւոց, թերեւս իցէ ա՛յն Գեղարդ, զորմէ գրի յաշխարհագրութեան Եւրոպիոյ հատոր Դ, յերես 17, որ եդեալ ի մէջ ոսկեզօծ արծաթի տապանակի՝ կախեալ կայ զառաստաղէ եկեղեցւոյն եղելոյ յանուն Հոգւոյն Սրբոյ ի քաղաքի անդ Նօրիմպէրկայ:

կայսերն Թուրքաց Մահմէտի Երկրորդի, յամի Տեառն 1453: Եւ անդ էր մինչեւ որդի նորա Պայազիտ կամեցեալ ուղերձ ինչ մատուցանել մեծի զօրավարի գնդին երուսաղէմացւոց եւ զգուշացեալ, զի մի՛ թողացուսցէ նա, կամ յանձին կալցէ դարձուցանել յետս զեղբայր իւր զվանեալն յիւրմէ պատերազմաւ, զայն սուրբ երկաթն յղեաց առ պապն Իննովկենտիոս Ը յամի 1492, զոր մեծաշուք փառօք ընկալեալ՝ պատուով մեծաւ բերին ի տաճարն Վատիկանու, ուր եւ ցարդ պահի: Զայս ամենայն ասեմ, զորոց ճոխ եւ անվրէպ ճառէ Բոսիոս, մա՛րթ է ընթեռնուլ առ նմա»: Այլ յայսպիսի աւանդութիւնս իւրաքանչիւր ազգ զիւր միտս հաճի:

46. Ի տեղեկութեանց այսոցիկ գրուածոց բացայայտ նշմարի ստուգութիւն իրաւանց Հայաստանեայցն քան եւրոպացւոց, քանզի հայք զապացուցութիւնս իւրեանց շարունակեն սկսեալ ի Թադէոսէ առաքելոյ իւրեանց եւ այսր, յորում չի՛ք ինչ ժամանակ ընդհատեալ. իսկ եւրոպացիք առ ի հաստատել զիւրեանցն՝ ունին զկարի հեռաւոր ժամանակն, սկսեալ յամէն 1098, յորում միջոցի գտաւ յԱնտիոք քաղաքի առ յինքեանս եղեալն այն տէգ. ուստի տարաւ ի Կոստանդնուպոլիս եւ անտի ըստ գրուածոց իւրեանց յամի 1492 տարաւ ի Հռովմ: Առ այս ամենայն պատշաճ իսկ է համարել, զի Հռովմ եղեալն տէգ՝ այն, որով հրէայք ընդ կատակս խոցեցին զպատկերն զայն փրկչական ի Բիւրիտոն քաղաքի, զոր եւ հաստատէ մեծն Վարդան վարդապետ Բարձրբերդցի երգող վերոյգրեալ շարականին, ի Պատմութեան իւրում այսպէս.

«Այլ Շխէ Թուին (յամի Տեառն 1098) Պաղտոյն կոմսն էառ զԹլպաշար եւ զՈւրհա եւ ի միւս ամին սպասալարն Բէկիարուխին եկեալ յԱնտիոք ի վերայ փռանկին՝ հարաւ ի նոցունց իբրեւ Լ (երեսուն) բիւր. քանզի գտին ի ճախակողմն (եկեղեցւոյ) սրբոյն Պետրոսի զ Գեղարդն, որով հրէայքն խոցեցին ընդ կատականս զպատկերն փրկչական. ուստի ել արիւն եւ ջուր, որպէս ի Տէրունի կողէն. եւ պատուեցաւ զէնն, որպէս զաստուածամուխն այն, զոր Հայք ունին, որով զօրացեալ փռանկքն հարին զԹշնամիս իւրեանց եւ ապա առաքեցին զնա Ալէքսին (կայսեր Յունաց)»:

Եւ ահա ի բանից աստի մեծին Վարդանայ քաջայայտ երեւի թէ՝ այն Գեղարդ, որով հրէայք կատականօք խոցեցին զպատկերն զայն ի Բիւրիտոն քաղաքի, պատուեալ բերաւ յԱնտիոք եւ պահեալ անդէն յեկեղեցւոջն, որ յանուն սրբոյն Պետրոսի առաքելոյ. ապա ի նմին յայնմիկ ժամանակի յայտնեալ եւ ցուցեալ զյաջողուածս պատերազմին ընդդէմ Թշնամեացն պատուեցաւ եւ եւս, զոր եւ ընկա-

լեալ կոմսն Զնջիլ անուն տարաւ ընդ իւր ի Կոստանդինուպոլիս եւ ընծայեաց Ալէքսի կայսեր: Եւ նա խարտոցաւ հատեալ զերկոսին զայն մասն, առաքեաց զմին պարգեւ վենէտկեցւոց եւ զմիւսն առ արքայն Լուդովիկոս. իսկ մասն մեծագոյն մնացեալ անդ ի Կոստանդինուպոլիս՝ զկնի ժամանակաց առաքեցաւ ի սուլթանէն տաճկաց ի Հռովմ, ըստ յառաջ բերելոյն հայր Մկրտչի Աւգերեան:

47. Այսոքիկ ծանօթութիւնք հանդերձ վկայութեամբք հնութեանցն Հայաստանեայց հաստատեն թէ իսկական Գեղարդն, որով խոցեցաւ կող կենարարին մերոյ Յիսուսի, է եղեալն ի Հայաստան, որ այժմ գտանի ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոջ հայրապետական Աթոռոյ Էջմիածնի:

Իրաւունք Հայաստանի գեր ի վերոյ պանծայր առաւել քան զայս, եթէ չէ՛ր անյայտ եղեալ յատուկ մատեանն պատմութեան սուրբ Գեղարդայ, որ նշանակի ի կարգի անդ հին ցուցակի մատենից գրանոցի մեծի Աթոռոյս Կաթուղիկէ Էջմիածնի. քանզի քանիցս անգամ ի ժամանակս պատերազմաց ի դաշտի աստ Արարատայ, ի կորուստ գնացին ինչ ինչ հարկաւոր մատեանք՝ թէ ի գրանոցէ աստի եւ թէ յառանձին զգուշաւոր պահպանութեանցն այնց ի զանազան յապահով կարծեցեալ տեղիս, ընդ որս եւ պատմութիւնն սուրբ Գեղարդայ:

48. Ամենափրկիչ անուանեալ պատկեր Յիսուսի իջմանն ի խաչէն՝ ի վերայ երկար քառանկիւնի անփուտ փայտեայ տախտակի. երկարութիւն նորա Գ [3] թիզ, Դ [4] մատն, լայնութիւն Ա [1] թիզ, Է [7] մատն, իսկ թանձրութիւնն երկմատնաչափ. ի գագաթ խաչին նշան հայրական աջոյն, յստորեւ քան զայն աղաւնակերպ հոգին Յիսուսի. ըստ աւետարանական բանին՝ «Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղուկ. գլ 23, համար 46): Յերկոսին կողմանս խաչին երկու արք, որոց աջակողմեանն զերծուցեալ զբազուկ Յիսուսի ի խաչէն՝ արկեալ է զուսովն, եւ ունի ձեռօք զմարմին նորա. իսկ ահեկանն՝ ագցան ի ձեռին քարշէ զբեւեռն ի ձեռաց եւ ի խաչէ անտի:

Յիսուս եւ այսոքիկ նշանակեալքս հանդերձ խաչիւն եւ չորեքկուսի եզերօք տախտակին են դրուագեալ փորածոյք. իսկ միւս մակերեւոյթ տախտակին՝ ամենեւին հա՛րթ հաւասար:

Այս Ամենափրկիչ անուանեալ պատկեր՝ ձեռագործ Յովհաննու աւետարանչի ըստ Գրիգորի Մագիստրոսի, յարձանագրութեան անդ եկեղեցւոյն Հաւուց Թառայ՝ բերեալ ի Յունաստանէ ի Հայս յորդւոյ Աշոտոյ իշխանի Բագրատունւոյ տեառն Դարունից ի

սկզբան անդ եօթներորդ դարու, զոր յընկալնուլ իշխանին ի ձեռաց որդւոյ իւրոյ զայսպիսի գանձ սրբութեան, անդէն անդ տայ հիմն արկանել եկեղեցւոյ սրբոյ ի կոփածոյ քարանց յանուն Փրկչական պատկերին՝ ի ստորոտս անդ քաղաքին Դարունից (Պայազիտ), ուր էին շիրիմք յոլով իշխանաց նախնեացն իւրոց, զորմէ Ղեւոնդ վարդապետ պատմիչ՝ ի չորրորդ հատուածն. «Իսկ ապա յետ մահուանն Գրիգորի (Մամիկոնւոյ) յաջորդէ զիշխանութիւնն Աշոտ (Բիւրատեան), պատրիկ այր երեւելի եւ նախամեծար ի մէջ նախարարացն Հայոց, ի տոհմէ Բագրատունեաց... փոյթ յուսումնասիրութեան եւ զարդարէր զեկեղեցիս Աստուծոյ վարդապետական արուեստիւք եւ պաշտօնէից խմբաւորութեամբ, պատուէր եւ երեւելի սպասիւք յիւրոց գանձուց եւ շինէր զեկեղեցին Դարունից յիւրում ոստանին եւ զկենդանագրեալ զպատկերն մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտից արեւու՝ մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր ի նմա. եւ նորա անուամբ զեկեղեցին անուանեաց»:

Տեղի այսր եկեղեցւոյ կայ տակաւին անդ ի ստորոտս քաղաքին Պայազիտոյ այլ շինուածք տաճարին քայքայեալ եւ խանգարեալ՝ շուրջ զորով այժմ է գերեզմաննոց հայազգի բնակչաց քաղաքին եւ նոյն իսկ բնակիչք մինչեւ ցայժմ յիշատակեն զանուն եկեղեցւոյն այնորիկ Ամենափրկիչ*:*

Արձանագրութիւն եկեղեցւոյն՝ ի քայքայեալ որմոց անտի, այսքան եւեթ նշմարեալ, բացայայտեցաւ ճշմարիտ վկայ բանից պատմութեանն, ի հիւսիսային որմն եկեղեցւոյն. «Ի պատրկութեան... իշխան Հայոց ազգի... ինքնական կենակցութեան... եւ ի հանդերձեալ քո գալստեան»:

Յորմն հարաւային. «Ի ծագաց մտից արեւու ածեալ պարգեւել մեզ հաճեցար՝ որ յամենայնի...»:

Զայսմանէ եւ Բարձրբերդցին մեծն Վարդան վարդապետ պատմիչ. «Զկնի Աշոտոյ, որ շինեաց զ Դարօնից եկեղեցին յանուն Փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա յարեւմտից մասամբ եւ ի նաւակատիսն գրեաց զորս ըստ պատկերին»: Այն է՝ շարականն կարգեալ առ ողորմեա փոխն ի հինգերորդ աւուր նաւակատեաց սուրբ Խաչին:

Տողէ եւ փողն Տարսոնեան Ներսէս Լամբրոնացի առ այս՝ յերկոսին նամակսն իւր. առ Յուսկան արգելական ճգնաւորն յոյն. «Զոր լուծանեն մեկնիչք ընդարձակ բանիւ ի վերայ թագաւորական քաղաքին (Կոստանդնուպօլսի), ուր եղաւ հիմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ ըստ ումեմն ի մեր վարդապետաց», որ այն ինքն է երգող

չարականիս: Ի թուղթն առ Լեւոն արքայ Հայոց Կիլիկիոյ. «Որպէս ասի յերգ մի, որ առ մեզ եղանակի, կեցո՛ զորդի ծառայի քո, զոր ի Հռոմայ գահիցն վերապատուեցեր՝ ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ» եւն:

49. Ապա զկնի անցանելոյ միջոցաց իբրեւ երից հարիւր ամաց ի ձեռս բերէ զայս պատկեր Փրկչական Գրիգոր Մագիստրոսն Պահլաւունի որդի Վասակայ (Հասանայ՝ ըստ արձանին եղելոյ յեկեղեցին Կեչառուաց ի նոյն Մագիստրոսէն Գրիգորէ). եւ յանուն այսր պատկերի վերստին նորոգ եկեղեցի տայ կառուցանել յորձաքար վիմաց ի Հաւուց Թառ կոչեցեալ սահմանին, որ մերձ ի Գառնի, կից յարեւմտեան ճակատ փոքրիկ եւ անշուք եկեղեցւոյն կառուցելոյ յառաջագոյն ի Գէորգ իշխանէն Քեղոյ ըստ Մխիթարայ Այրիվանեցւոյ, եւ հանգուցանէ ի նմա զայս պատկեր, յորոյ անուն կոչի ի պատմագիրս եւ յարձանագիրս եւ այս եկեղեցի՝ որոշ յեկեղեցւոյն Դարունից, որ ի Կոգովիտ գաւառի առ հարաւային ստորոտով մեծի լերինն Մասսեաց. իսկ սա ի հիւսիսակողմն Երասխ գետոյ հանդէպ Գառնւոյ յարեւմտեան լանջս լերին, որոյ զառաջեաւ ի խորաձոր միջոցս հոսի գետակն Գառնւոյ, Ազատ գետ կոչեցեալ ի գիրս:

Զսոյն պատկերէ որ յարձանագրութեան անդ Գրիգորի Մագիստրոսի եւ զեկեղեցւոյ՝ տե՛ս ի Հաւուց Թառ:

50. Այս հրաշալի պատկեր փրկչական իւրով հնութեամբ, մանաւանդ լինելով ձեռագործ Յովհաննու աւետարանչի՝ պահպանիւր ի մենաստանի անդ Հաւուց Թառայ որչափ կայր այն ի չինութեան. այլ զկնի վերջին ասպատակութեանց յայս նահանգ Հայաստանի ի Կովկասեան ելուզակաց եւ խսպառ անշքանալոյ մենաստանացն, յորոց կարգի եւ մենաստանին Հաւուց Թառայ, բերաւ այս սուրբ պատկեր ի սուրբ աթոռ այսր Կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի եւ կայ այժմ ընդ այլ սրբութեանց ի գանձարանի աստ:

Իսկ Միքայէլ Զամչեան չունելով գծանօթութիւն ինչ ի մասին այսր պատկերի, գրէ ի Պատմութեանն (հատոր Բ, համար 312). «Ասի՝ թէ չինեաց սա (վերոյիշեալն Աշոտ Բիւրատեան) յայնժամ զեկեղեցին Դարունից եւ եբեր անդ զպատկեր Փրկչին. այլ թէ ո՛ր իցէ՝ ո՛չ է յայտ»:

51. Մասունք խաչափայտին Քրիստոսի. Ա մասն զետեղեալ կայ ի թանկագին ոսկեայ ականակուռ եպիսկոպոսական փոքրիկ խաչի եւ է յանուն Փիլիպպոս կաթուղիկոսի Հաղբակեցւոյ, որոյ ի թիկանց կողմանէ գտանի յիշատակագրութիւն՝ ըստ այսմ.

«Սա՛ է պսակ սուրբ Սիոնի,

Փայտ եւ բեւեռն Քրիստոսի,
Առիթ յիշման Փիլիպպոսի,
Հանուրց Հայոց հայրապետի,
Որ բարեխօս է Մարտիրոսին
Եւ իւր որդւոյ Սիմէօնին»:

Բ-րդն, նոյնպէս զետեղեալ յոսկեայ ականակապ եպիսկոպոսական խաչի, ի միջակէտսն անդր երկուց երկերեսաց եւս գոն գրչութիւնք յիշատակաց յանուն Յակոբ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ. «Յիշատակ է սուրբ նշանս Յակոբ կաթուղիկոս սրբազանին, Աստուծոյ իջման տեղի, ՌՃԻ [1671] թվին (Հայոց). կենաց փայտէն կենսատուին եւ մասն անկար պատմուճանին, ամփոփեալ կայ ի սուրբ խաչս սմին»:

Գ-րդն՝ ի քառակուսի նոյնօրինակ խաչ արծաթի թելկատ (չիֆտիշի), որոյ ի թիկանց կուսէ ի ներքոյ ապակւոյ ունի գիր՝ ըստ այսմ. «Սուրբ նշանս է ի կենաց փայտէն՝ կարմիրն եւ սպիտակն է ի Նոյեան տապանէն»:

Դ-րդն՝ նոյնպէս յոսկեայ ականակուռ եպիսկոպոսական խաչի, յորոյ բնոյն (բռնետղ) վերայ գոյ գիր ըստ այսմ. «Յիշատակ է սուրբ խաչս կենաց փայտին Մինաս վարդապետին՝ Սուրբ Էջմիածին, ՌՃԽԹ (1700) թվին»:

52. Տապանակ երկար քառանկիւնի արծաթի շինուած երկդրամբք եւ անուանի սուրբ նշան մենաստանին Խոտակերաց: Ունի ի թիկանց ընդարձակ արձանագիր ըստ այսմ. «Կամաւ կարողին Աստուծոյ ես Էաչի որդի Հասանա որդո Պռոշա որդո մեծին Վասակա յազգէ Հախպակաց տիրեցի Հայրենի երկրիս իմո Շապունաց եւ այլ յոլով գաւառաց, զօրավիգն եւ օգնական ունելով զՔրիստոս եւ զսուրբ նշանս Խոտակերաց, որով եւ նախնիքն իմ զօրացան. ետու կազմել պահարան սմին անջինջ յիշատակ. որք հանդիպիք սմա, զիս եւ զծնօղսն իմ զԱմիր-Հասան եւ զԹաճերն եւ զհօրեղբայրն իմ զՊապաք յաղօթս յիշեցէք. այլեւ զամենայն նախնիսն մեր եւ զազգատոհմ»:

Ի շինուածի աստ յառաջին երեսի ի բարձրութեան անդ է պատկեր Փրկչին եւ յերկոսին կողմանս երկուց հրեշտակաց, Աստուածածնի եւ Յովհաննու, ի վերայ երկուց դրանցն Լուսաւորչի եւ Յովհաննու Մկրտչի: Յերկոսին ստորին անկիւնսն Պետրոսի եւ Պողոսի առաքելոց եւ ի միջին տեղւոջ այսց երկուց պատկերաց է այլ պատկեր բազկատարած, յորոյ երկուս կողմանս գրուած այսպէս.

«Սուրբ նշան տէրունական,

Դու Էաչու լե՛ր օգնական:
Թվ. ՉԽԹ [1300]»:

Մէջն տապանակաձեւ շինուածոյս այսորիկ է հարթ շէնք արծաթի ծաղկեայ ոսկեզօծ, յոր ագուցեալ կայ փոքրիկ խաչ արծաթի ոսկեզօծ հասարակ քարամբք եւ մարգարտօք. իսկ ի ներքին երես երկուց դրանցն են պատկերք Գաբրիէլի եւ Միքայէլի հրեշտակապետացն:

53. Տապանակ ծանրակշիռ շէնք արծաթի, յորում ամփոփեալ կայ հատուած տախտակի տապանին Նոյի նահապետի եւ է թգաւ երկայն, քլաւ լայն եւ թանձր երկմատնաչափ. մակերեւոյթ նորա կարի փայլուն հարեալ ի գոյն դեղնաշորթ եւ կարի կարծր, որոյ մի անկիւնն բեկեալ եւ վերառեալ ընկզաչափ: Ի միջակէտ տախտակին ամրացեալ կայ փոքրիկ խաչ արծաթի ոսկեզօծ եւ ունի հասարակ քարինս: Շէնքն արծաթի պարունակիչ տախտակին ունի երկփեղկեան դրունս, յորոց վերայ են պատկերք սրբոյն Յակոբայ հայրապետին տարածեալ ունելով զբազուկսն, եւ հրեշտակին, որ մատուցանէ զտախտակն:

Ի թիկանց կուսէ շինուածոյն գոյ յիշատակագրութիւն այսպիսի. «Կամաւն Աստուծոյ ես մեղսամած եւ գծուն Դաւիթ անարժան հաբեղէս ազգաւ Պռոշեցի, տեղապահ վանիցս սուրբ Գեղարդայ, շինել ետու եւ գոյնզգոյն օրինվածօք զարդարեցի զպահարանս Նոյեան տապանիս փրկագործ սուրբ տախտակիս, որ այժմ կոչի Սուրբ Յակոբ, յիշատակ ինձ եւ իմ ծնողացն եւ ամենայն արեանառու մերձաւորաց. եւ որ շատ եւ որ սակաւ արթունք ունիցին այսմ պահարանիս Տէրն Քրիստոս հատուսցէ ի միւսանգամ գալստեան, ամէն: Եւ որ ոք կամեսցի հանել վանիցս սուրբ Գեղարդայ կամ ծախել կամ գրաւն ղնել ազգայնոցս եւ այլոց, յանէծս Կայենայ եւ Դադանայ եւ խաչահանվացն առցէ եւ սեւերես առ յիս գացէ, ամէն: Շինեցաւ ձեռամբ Քանաքեռցի մեղսապարտ ոսկերիչ Աւետին, թվ. ՌՃԽԷ (1698)»:

54. Տապանակ փոքրիկ հասարակ արծաթի. ունի զերկփեղկեան դրունս. ի մէջն գոյ պատկեր եւ ի սրտի նորա ագուցեալ է մեծ ակն դեղնագոյն, յորոյ ներքոյ նշմարի մասն:

55. Տապանակ սոսկ փայտեայ փորածու. մէջն սիւնաձեւ քանդակ եւ ի վերայ խաչ. եւ ի չորս թեւսն խաչին մանր երկաթք մխեալք. անուանի եւ սա՝ մասն ի փշեայ պսակէ Փրկչին մերոյ:

56. Տապանակ հասարակ արծաթի ստորին շինուած երկդրամբք, որ պարունակէ յինքեան զփորածու խաչ փայտեայ, յորոյ վերայ եւ խաչ փոքրիկ արծաթի, որ ունի ի միջակիտին կարմիր ակն բեկեալ:

Ի թիկանց կուսէ ունի յիշատակագիր ըստ այսմ. «Ես Գաբրիէլ վարդապետս, առաջնորդ սուրբ Սաղմոսավանից, շինել տուի զպահարան սուրբ Արագածու Սուրբ Նշանին ըստացուածովք աստուածասէր Երեւանցի Գուլումին վասն յիշատակի ամենից իւրոց ննջեցելոցն խօջայ Աղումբէկին եւ խօճայ Սիմէօնին եւ զաւակաց Աղամջան, Ահարոն» եւ այլն:

57. Տապանակ փոքրադիր արծաթի հարթ շինուածով. սա անուանի Աստուածընկալ Սուրբ Նշան, որ գուցէ իցէ Աստուածընկալ վանացն, որ ի Նիգ գաւառի:

58. Տապանակ միջակ դրութեամբ բոլորովին մաքուր արծաթի կարի ընտիր գործուած քաջ արհեստաւորի. գլխովին ոսկեզօծ, անուանեալ բազմամասն. եւ է յանուն Յովսէփ արքեպիսկոպոսի Արղութեանց. ունի զերկփեղկեան դրունս, որոց ի ներքին կողմն պատկերք Բ՝ Լուսաւորչի եւ Յակոբայ Մծբնայ հայրապետի, իսկ յարտաքին երեսսն, ի վեր անդր ննջումն Աստուածամօր, Իջումն Տեառն ի խաչէն եւ այլ պատկերք՝ Տեառնեղբօր, Հռիփսիմէի, Թադէոսի, Յովհաննու Մկրտչի, Անդրէասի, Ստեփաննոսի Նախավկայի եւ Անանիայի:

Ի միջին տեղւոջ ագուցեալ կայ խաչ արծաթի ոսկեզօծ անդամանդ, յակինթ եւ զմրուխտ ակամբք, յորում մասն փայտին կենաց. ի վերայ բնոյն խաչի գրեալ՝ ի վայելումն Յովսէփ վարդապետին Սանահնեցւոյ: Ի շրջապատ այսր խաչի ի մակերեւութի անդ տապանակին են որո՛շ որո՛շ տեղիք մասանց նշխարաց յիշատակեալ սրբոցն եւ այլոց:

Ունի ի թիկանց յիշատակագրութիւն՝ ըստ այսմ. «Յիշատակ է պահարանս այս Հաշտարխանու քաղաքի քրիստոսասէր եւ բարեպաշտուհի օրհնեալ կանանցն ամենից՝ յորդորմամբ եւ աշխատութեամբ Թիֆլիզեցի Վիրշելէնց Փարսադանի կողակից մայր Աննային եւ Մարիամին, ի վայելումն տեառն Սիմէօն սրբազան կաթուղիկոսի աշակերտ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի նուիրակ եւ Հաշտարխանու առաջնորդ Սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոսին Արղութեանց, զկնի մահուանն ի դուռն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. թուին Փրկչին 1775, իսկ Հայոց ՌՄԻԴ»:

59. Գագաթ գլխոյ սրբուհւոյն Հռիփսիմեայ կուսի ի մէջ ութանկիւնի արծաթաշէն անօթոյ, կազմեալ ի ժամանակէ Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ, որոյ եւ կաթուղիկոսական կնիքն փոքրիկ տեսանի կնքանիւթով ի վերայ եւ կպեղբ ամրացեալ գմբէթն եւ

անօթն գագաթան. ունի եւ յիշատակագրութիւն յերկոսին անկիւնս յերկկողմանս յիշեալ կպեղն.

«Ձեռամբ Սիմէօն կաթուղիկոսին»:

Սուրբ Հռիփսիմէի գագաթն է. «ՌՄԺԴ (Հայ թուական) (1765)»:

60. Աջ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի պարունակեալ յարծաթաշէն կազմուածի յարմնկանէ ցծայր մատանցն. ի ծայր արմնկանն յարծաթի անդ է պատկեր սուրբ հօրն հայրապետական զգեստուք. եւ բովանդակ բազուկն ընդ երկայնութիւն յերկուս բաժանեալ է քանդուածովք ոսկերչին. ի մի բաժնին քանդակեալ են երկոտասան չարչարանք սրբոյն, իսկ ի միւս բաժնին դրուագք ծաղկաքանդակք՝ յերկոսին միջոցս այսց քանդակաց է յիշատակագրութիւնն, ըստ այսմ.

«Յաւուրս մեծի հայրապետի,
Ջուղայեցի տեառն Յակոբի,
Թիւն Հայոց ըստ տումարի
ՌՃԶ [1657] ամի,
Ի յիշատակ Ստեփաննոս Իլովացի վարդապետի,
Նոր պահարան Աջոյ ձեռին,
Սուրբ Գրիգորին Լուսաւորչի,
Կազմեալ եղեւ Էջմիածնի,
Առ ի պարծանս Հայկայ զարմի»:

Ի ծայր բազկին, ուր միանայ թաթն, գոյ ընդ առաջին շինուածն ամրացեալ ապարանջան (պիլէզիկ) սէլեան ակամբք եւ մինայ. գոյ եւ երկրորդ ապարանջան ի մաքուր ոսկւոյ, յորոյ վերայ երեք վարդաձեւ շէնք յակինթ ակամբք եւ ունի գիր յիշատակի յանուն տուողին, ըստ այսմ. «Յիշատակ է ապարանջան Թիֆլիզեցի Մարիամ մայր Շաշինի ի յաջ սուրբ Լուսաւորչին, որ ի Սուրբ Էջմիածին, ի 1770»:

61. Աջ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի պարունակեալ յարծաթի շինուածի յարմնկանէ ցծայր մատանցն՝ բովանդակն ծաղկաքանդակ. ընդ երկայնութիւն բազկին ունի զերկկարգ գրչութիւն եւ ի ծայր անդ արմնկանն ըստ այսմ. «Արդ, ես՝ Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի, յաջորդեալ յԱթոռ սրբոյն Լուսաւորչի ի Սուրբ Էջմիածին, տեսեալ զաջ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին յիշատակ ի դուռն Սաղմոսավանաց, բայց էր կարի խրթին եւ ի խորտակել պահարան, զոր առեալ Նորոգեցի վայելուչ յօրինուածով եւ եդի յիշատակ եւս ի նոյնում վանս Սաղմոսաց անեղծանելի արձան, ի թվիս Հայոց ՌՃԷ [1658] ամի»:

Ի մատանց աջոյ սրբոյ հայրապետիս շղթայիւք կախեալ կայ փոքրիկ փայտ քանդակեալ տէրունական եւ այլ պատկերօք եւ ասի լինել մասն ի փայտէ տախտակի Նոյեան տապանին:

62. Աջ Թադէոսի առաքելոյն արծաթաշէն ոսկեզօծ, ունի երեք կարգ գրուած յիշատակի ընդ երկայնութիւն բազկին, ըստ այսմ. «Աջս Թադէոսի առաքելոյն կազմեալ կայր ի թվին ՉԻԴ [1275]. վերստին նորոգեցի ի թվին ՌՃԻ [1671], ծախիւք Ջուղայեցի Մատ~թէոս վարդապետին եւ տուաւ ի դուռն Ամենափրկչին յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց հօր Գրիգորին եւ մայր» եւ այլն:

63. Աջ Մատթէոս աւետարանչի յամբողջ շէնք արծաթի ոսկեզօծ. քանդակն հնագոյն ձեւացութեամբ յարմնկանէ ցծայր մատանցն, ընդ երկայնութիւն բազկին չորք կարգ հարթ արծնեալ, յորս է յի~շատակագրութիւն, ըստ այսմ. «Սուրբ Մատթէոս աւետարանչի Աջս յիշատակ Յովհաննէս վարդապետին եւ հոգեւոր եւ մարմնաւոր ծնողացն, որ ի դուռն Յօհաննու վանից Սուրբ Կարապետին. թվին ՌՃԻԸ [1679]»: Ի ծայր արմնկանն յարծաթ անդր է պատկեր Աւետարանչին եւ գիր անուանն՝ Սուրբ Մատթէոս*:*

64. Աջ առաքելոյն Թովմայի՝ ի հարթ շէնք արծաթի ոսկեզօծ. ունի յիշատակագրութիւն ըստ այսմ. «Զի օծեալ կենարարին մե~րոյ Յիսուսի Քրիստոսի կողն մխեալ սուրբ աջս Թովմայի առաքելոյ ապաւէն եւ աւգնական պարոն Միայսարին եւ կողակցին Խանու~մին, որ փափագանաւք ետ պատվել որդւոցն՝ Ղուկասին, Ղուպա~սարին. Աստուած ողորմի իւրեանց կենդանեաց եւ ննջեցելոց հո~գոցն, ամէն. արուեստաւոր սուրբ աջիս Գալուստ նուաստ աբեղաս, ուստայ Յակոբն. Քրիստոս»:

65. Աջ Արիստակեայ հայրապետի որդւոյ Լուսաւորչի, ի շէնք արծաթի ոսկեզօծ. քանդակն հանգոյն քանդակի աջոյ հօրն իւրոյ՝ յարմնկանէ ցծայր մատանցն. ընդ երկայնութիւն բազկին ունի գիր ըստ այսմ.

«Աջս է որդւոյն Լուսաւորչի,
Արիստակէս հայրապետի,
Որ պատուեցաւ զարմանալի,
Ոսկենկար ըստ քանդակի,
Ծախիւք մեծի դիտապետի,
Փիլիպպոսի սրբազանի,
Ի թիւ Հայոցս տումարի,
ՌՂ ութերորդի [1649]»:

Ի ծայր արմնկանն յարծաթի անդ՝ է պատկեր սրբոյս Հայրապետական զգեստուք եւ գիր անուանն՝ Սուրբ Արիստակէս *(78):*

66. Աջաձեւ արծաթի շէնք ոսկեզօծ, յորում են չորք կարի փոքրիկ արծաթի տուփք մասանց. յերկոսին՝ մասունք ի փայտէն կենաց, ի միումն՝ Յակոբայ Տեառնեղբօր եւ ի միւսումն Անդրէաս առաքելոյ: Ի վերայ այսր աջաձեւ շինուածոյս, որ ձեւանայ յարմնկանէ ցծայր մատանցն, գոյ նօտրագիր գրուած այսպիսի. «Յիշատակ է աջս Ոհան վարդապետին առ դուռն սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսայ. եւ որ ոք Կողասցէ *կամ ծախեսցէ կամ գրաւեսցէ՝ Կայենի, Յուդայի պատիժն առցէ, ամէն: Թվին ՌԺԶ [1567], շինողն» եւ այլն:*

67. Աջ արծաթի շէնք քանդակեալ՝ թաթն եւեթ ոսկեզօծ. ընդ երկայնութիւնն ունի չորս կարգ գրուած, ըստ այսմ. «Ամենազօր սուրբ Աջս է յիշատակ Թարվիզէցի Ղազար վարդապետին, ուրն հօրն, մորն ի դուռն սուրբ Աստուածածին ամենայ մերձաւորացն. յորում ամփոփեալ կան նշխարք սրբոց առաքելոցն Յակոբայ Ալֆեայ, Բարդուղիմէոսի եւ Եղիշէի մատունքն եւ սրբոյն Հռիփսիմէի, սրբոյն Գէորգայ մասունքն ի բարեխօսութիւն եւ ի փրկութիւն հաւատացելոց, զոր Տէր Աստուած իւր մեղացն թողութիւն շնորհեսցէ, ամէն: Թվ. ՌՃԾ [1701]»:

68. Ոսկր փոքրիկ, որ ըստ աւանդութեան է ճկոյթ մատին Պետրոսի առաքելոյ, եղեալ կայ ի մէջ երկուց կորնթարդ ապակեաց եւ այն դարձեալ ի մէջ վեց անկեամբ արծաթի շինուածոց հանդերձ ապակեօք եւ վերին ծայրն գմբէթաձեւ՝ ընդ որս համարձակ երեւի նոյն մասն ոսկեր:

69. Տապանակ արծաթի հասարակ շէնք. առաջին երեսն ոսկեզօծ, ի վերին բաժնի՝ Փրկիչն յաթոռ բազմեալ, իսկ ի ստորին բաժնի՝ կանգուն կան պատկերք նոյնպէս յարծաթի անդ Անդրէի առաքելոյ եւ Մատթէոսի աւետարանչի եւ ի միջոցի երկուց պատկերացս ագուցեալ են երկու մեծ ապակիք, յորոց ներքոյ երեւին մասունք նշխարաց այսց սրբոց: Ի թիկանց կուսէ ունի գիր շինութեանն.

Ի վերին բաժնի.

«Շինեցաւ ի մայրաքաղաքն Բաղէշ, թվ. ՌՃՀԴ [1725]. Տէր ողորմեա՛»:

Ի ստորին բաժնի.

«Ի պահարանի աստ ամփոփի աջն սուրբ առաքելուն Անդրէի, եղբայր մեծի Պետրոսի Վիմի, որ է շնորհօքն Քրիստոսի. ես՝ Գաւառեցի Սիմէօն վարդապետս նորոգել տուի զայս սուրբ Աջս արծաթով ակնով եւ ոսկեջրով յիշատակ հոգւոյն իմոյ եւ ծնողացն իմոց. թէ ոք

ծախէ կամ գրաւ դնէ, պատիժն Յուդայի առցէ եւ խաչահանողացն. չինեցաւ ձեռամբն ուստա Պօղոսին եւ Բարաղամին»:

Յաջակողմն.

«Եղաք ի դուռն Կարենավանից»:

70. Փոքրիկ խաչ քառաթեւ եւ ի չորս թեւսն չորս հասարակ ակունք. ի միջակէտ այսր խաչի ամփոփեալ կայ վերին մասն միոյ սեղանատաման: Այս խաչ այսու մասամբ եղեալ է ի մէջ քառակուսի արծաթի տփոյ, որ ունի գիր ի թիկանց, ըստ այսմ. «Յիշատակ է սուրբ նշանս, որ է ատամն սուրբ առաքելոյն Պետրոսի. եւ է պատճառ սորին Մարիամ ապաշխարողն, ի վայելումն Սուրբ Երուսաղէմայ. յիշեցէք գծագրող տէր Գրիգորին: Թվին ՌՃՂԲ [1743]»:

71. Տապանակ փոքր հարթ չէնք արծաթի, յորում է մասն ոսկեր յանուն Մարկոսի աւետարանչի, որպէս յայտնէ ի նմին եղեալ թուղթն հայացի եւ ռուս գրչութեամբ:

72. Խաչ հաւասար քառաթեւ երկբաժին հանդերձ թեւօքն եւ ագուցեալք յիրեարս. երեսի բաժինն թելկաթ (չիւթիշի) ոսկեզօծ. իսկ միւսն հարթ չէնք, յորում է յիշատակագրութիւնն, ըստ այսմ.

«Սուրբ խաչս է յիշատակի
Ի դուռն Սուրբ Թադէոսի,
Նախկին մերոյ Լուսաւորչի,
Շինեալ արդեամբ առաջնորդի
Տէր Իսահակ վարդապետի,
Նշխարք սրբոց բազմադիմի,
Լցեալք գոն ասա սուրբ նշանի,
Հոգւոյն ասեմք Տէրն ողորմի,
Որ շինեցոյց մասանց տեղի,
Սա էր գիւղէն Փառակեցի,
Որդի Յակոբայ եւ Թամամի,
Տո՛ւք զողորմին անանց բարի,
Հոգիքն մեր լուսաւորի,
Մեծ եւ փոքրն Հայոց ազգի,
Ննջեցելոցն որք յուսով կան լի.
ՌՄԼԷ [1788]-ին.
Սուրբ խաչ օգնէ ինձ գրողիս
Տէր Յարութիւն քահանայիս»:

Ունի եւ վկայագիր մասանցն ի նոյն առաջնորդէ:

73. Բ տատասք եւ Բ քերանք երկաթիք ի գործեաց չարչարանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Հայաստանեայց. երկոքին ծայրք քերանացն ագուցեալ են յարծաթ ի յետնոց:

74. Մանեկաձեւ շէնք բոլորակ արծաթի ոսկեզօծ. յերկոսին կողմանս կարմիր, կանաչ եւ կապոյտ ակունք յեռեալք. ի մի երես՝ երեւին ի ներքոյ փոքրիկ ապակեաց ի հինգ բաժնի մասունք հնգեքին սրբոց. եւ ի միւսում երես՝ նոյնպէս ի ներքոյ ապակեաց գրեալ են ի վերայ թղթոց անուանք նոցին՝ այն է, Յակոբայ Մծբնայ հայրապետի, Թադէոսի առաքելոյ, Ստեփաննոսի Նախավկայի, Ստեփանոսեանց եւ Մինասայ եւ Երմոգինեայ:

75. Տապանակ փոքրիկ քառակուսի արծաթապատ ի մի երեսն խաչելութիւն Տեառն եւ երկու կանացի պատկերք աստի եւ անտի ոսկեզօծք. եւ յստորեւ պատկերացն երկու երկար բոլորակ ապակիք ամրացեալք յարծաթի անդ, յորոց ներքոյ գրեալ են՝ ի միումն հայացի գիր. «Մասն սուրբ կուսին Կատարինեայ». եւ ի միւսումն՝ լատին գիր: Իսկ ի միւս երես տապանակին՝ յիշատակ շինեցուցանողի այսր տապանակի ըստ այսմ. «Իմն որդի Կարապետին ի նահանգէն Թավրիզու, ի քաղաքս Մարաղացի տէր Ղեւանդի որդի տէր Օվաննէսս ՌՃՁ [1731] գնեցի սուրբ Երուսաղէմայ օրհնեալ մասունքս, որ է Կատարինա կուսին, իմ հալալ ընչիս. նորոգեցի սուրբ նշանս ի քաղաքն Թիֆլիս, վայելս՞»:

Ունի ի վերայ շղթայիւք կախեալ փոքրիկ խաչ մասամբ:

76. Խաչ արծաթի բոլորակ քառաթեւ. յերեսի անդ հինգ դեղնագոյն հասարակ ակունք. ի մէջ երկրորդ բաժնի քառաթեւ խաչիցն են հինգ որոշ տեղիք. ի միջին տեղւոջ՝ մասն կենաց փայտի, յերկրորդումն՝ ատամն սրբուհւոյն Գայիանեայ, յերրորդումն՝ մասն ոսկեր մեծի Անտոնի անապատականի, ի չորրորդումն՝ Նիկողայոսի սքանչելագործի եւ ի հինգերորդումն՝ Պօղիկարպոսի վկայի, զորս գրութեամբ եւ կնքով հաստատէ Զաքարիա արքեպիսկոպոս Թիֆլիզեցի:

77. Խաչ միջակ հաւասար քառաթեւ ոսկեզօծ. ի միջին տեղւոջ յերկուս երեսսն եւս փոքրիկ ապակիք ագուցեալք յարծաթ անդր եւ ի ներքոյ գիր. ի միումն՝ «Մասն ի Կենաց փայտէն Քրիստոսի». եւ ի միւսումն եղեալ գիր՝ անվերծանելի: Բայց ի նոյն երես ի չորեսին ծայրսն խաչին յարծաթի անդ գիր, ըստ այսմ.

«Է սա փայտէն, զոր Տէր կապեալ,
Եւ կենաց փայտն ի մէջն եղեալ,
Պատմուճանէն մասն փայլեալ,
Առիթ յիշման Բարսեղիս լեալ»:

78. Կէս բաժին ոսկը աջոյ բազկին Արիստակեայ հայրապետի՝ այն է մասն արմնկան կիսով եւեթ արծաթապատ, եւ ունի գիր ի վերայ ըստ այսմ. «Այս է Աջն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին որդուն Արիստակէս հայրապետին»:

79. Թաթ արծաթի հինգ մատամբքն հանդերձ ուղղաձիգ՝ ոսկեզօծ. ի բազկակողման ծայրի անդ ի վերայ կափարչին գրի. «Անդրէաս առաքելոյ մասն, Գէորգայ զօրավարին, Մարութայ ճգնաւորին, Հռիփսիմէ կուսին եւ այլ բազում մասունք ի տեղս ամփոփեալ կայ»: Իսկ յերեսի անդ ձեռացն գրի. «Յիշատակ է սուրբ աջս Յակոբջանին, հօրն Եղիին, մօրն Վարազին, ի վայելումն Կարապետ քահանային. թվին ՌՃԹ [1660] ամին. կողակցուն Մարիամին»:

80. Խաչ բոլորակ քառաթեւ ոսկեզօծ. յերեսի անդ հինգ ակունք. իսկ ի թիկանց կուսէ ի թեւսն խաչին գրի. «Յիշատակ է սուրբ խաչս Ղաբանցի մահտեսի Մարուքին ի դուռն Լուսաւորչի անապատին. թվին ՌՃԱ [1652]»: Յաջ թեւի անդ. «Սուրբ մասն՝ Թումա առաքելի գագաթն է»: Ի միւս թեւի. «Սուրբ մասն Յովհաննէս Մկրտչին է». ունի եւ փոքրիկ խաչ շղթայիւք:

81. Բոլորակաձեւ կորնթարթ տափարակ չէնք արծաթի. ի միջին տեղւոջ ի ներքոյ ապակւոյն տեսանի մասն ոսկեր, զոր անուանեն գագաթ Թադէոսի առաքելոյ. թերեւս իցէ յիշատակեալն ի Վարս սրբոց հատոր Դ-րդ, յերես 62, ի ծանօթութեան վարուց սրբոյ առաքելոյս:

82. Խաչ փոքրիկ քառաթեւ. ի թեւսն խաչին՝ երկոքին երեսքն եւս վարդաձեւ խաս ակամբք զարդարեալ. ի միջակիտին ի ներքոյ ապակւոյն տեսանի մասն ոսկեր եւ թուղթ ի վերայ, յոր գրի. «Մասն սուրբ Պանդալեւոնի»: Իսկ ի միւս երեսի՝ եղեալ է յիշատակագրութիւն, բայց եղծեալ է երկաթի գրչաւ եւ գրեալ փոխանակ «Պետրոս վարդապետ Աստապատցի»:

ՀԱՏՈՒԱԾ Դ

Շինուածք շուրջ զԿաթուղիկէ եկեղեցեաւս Սրբոյ Էջմիածնի, այն է Մենասպանին

83. Անտարակոյս եմք, թէ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ մեծն Պարթեւ, որ լուսաւորեաց զհամօրէն Հայաստանեայց ազգ, եւ ձեռնտուութեամբ Մեծին Տրդատայ կանգնեաց զմեծ Կաթուղիկէ տաճարն սրբութեան եւ նստաւ անդէն պատրիարգ ընդհանուր ազգին, չիցէ ստացեալ ի մեծէն Տրդատայ ի պարգեւի մասին, կամ ինքնին կառուցեալ զարժանաւոր յարկ բնակութեան հոգեւոր բարձր իշխանութեանն առ եկեղեցեաւս, զոր տուն կաթուղիկոսարանի[1] *անուանեն պատմիչք ազգիս Հայոց. այլ թէ զիա՞րդ եւ յո՞ր կողմն տաճարին եւ կամ յումմէ ձեռնարկեալ՝ չկայ ինչ նշմարանք յայտնութեան:*

Այս չէնք եւ նիստ կաթուղիկոսարանի թերեւս քակեցաւ, տապալեցաւ ընդ այլ շինուածս քաղաքին յամի անդ 380, ի յարձակմանց պարսկական զօրացն առաջնորդութեամբ ուրացելոյն Մերուժանայ. եւ զկնի որոյ մինչեւ ցփոխադրութիւն Աթոռոյ կաթուղիկոսութեանն ի Դուին յամի 452, թէ յո՛ր վիճակի կայր չէնք կաթուղիկոսարանի, չունիմք դարձեալ ծանօթութիւն ինչ:

84. Յայսմիկ տան կաթուղիկոսարանի ի Վաղարշապատ[2] *նստան երկոտասան կաթուղիկոսունք սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսա-*

---

[1] Այս բառ յունական **կաթուղիկոս,** որ ի հայ լեզու թարգմանի **ընդհանրական**, ի գործ եդաւ ի հայումս անդ ի սկիզբն հինգերորդ դարուն, զորմէ առաջինն Խորենացին Քերթողահայր ի Պատմութեան Հայոց, հատոր Գ, գլուխ 64. «Նոյնպէս եւ զՄեծն Սահակ եւ զտունն կաթուղիկոսական ունիլ յարքունիս» եւն: Եւս Կորիւն վարդապետ ի Պատմութեան թարգմանչացն. «Եւ պատահեալ (Մեսրոպ) Սահակայ կաթուղիկոսի Հայոց՝ պատմէր նմա»: Որոյ զկնի յատուկ վերտառութիւն եղեւ հայրապետաց Հայոց այս բառ:

[2] Այս քաղաք յԱրարատեան դաշտի ի հիւսիսոյ գետոյն Երասխայ՝ բացագոյն ի նմանէ իբրեւ յերկուց ժամուց, յարեւելեան եզեր Քասաղ անուանեալ գետոյն՝ առ Շրէզ բլրաւ. յարեւելից ունի զերեւան քաղաք հեռաւորութեամբ երից ժամուց, եւ յարեւմտից զակունս Մեծամօր գետոյն՝ երկուց ժամուց. շինեալ ասի յառաջագոյն յերուանդայ Ա արքայէ Հայոց եւ կոչէր յայնժամ **Արտիմէտ** սակս ի նմա լինելոյն մեհենին դիցն Արտեմեայ (Անահիտ). այլ փոքր ինչ զկնի նորոգեցաւ յումեմնէ Վարդգէս անուն իշխանէ, որ ունէր կին զքոյրն յիշեալ Երուանդայ Ա եւ կոչէցաւ յանուն նորոգողին **Աւան Վարդգէսի**:

Տիգրան Երուանդեան զբազմութիւն գերդաստանաց հրէից՝ գերելոցն ի նմանէ յերուսաղէմայ, բնակեցոյց ի սմին յայսմիկ աւանի, որ փարթամացեալ բնակչօք եւ ծաղկեալ տուրեւառութեամբ եւ շինութեամբ՝ եղեւ քաղաքագեօղ անուանի:

Ապա յետ ժամանակաց Վաղարշ արքայորդի վերջնոյն Տիգրանայ շինէ զայս Աւան Վարդգէսի ընդարձակագոյն եւս. եւ ածէ շուրջանակի պարիսպ՝ յարդարեալ հզօր պատուարաւ եւ բրգամբք եւ կոչէ յիւր անուն **Վաղարշապատ,** այլեւ՝ **Նոր քաղաք**, ուրանօր եւ փոխադրէ զարքունիսն եւ այնուհետեւ լինի այն յատուկ տեղի Աթոռոյ արքայութեանն Արշակունի թագաւորացն Հայոց եւ ձմերանոց իսկ: Առ որ Խորենացին, հատոր Բ, գլուխ 62. «Սա (Վաղարշ) պատեաց պարսպաւ եւ զհզօր Աւանն Վարդգէսի՝ որ ի վերայ Քասաղ գետոյ, յորմէ յառասպելսն ասեն. հատուած գնացեալ Վարդգէսն մանուկ ի Մուրհաց (կամ Տուհեաց) գաւառէն, եկեալ նստաւ զՇրէզ բլրաւ, զԱրտիմէտ քաղաքաւ, զՔասաղ գետով՝ կռել, կոփել զդուռնն Երուանդայ արքայի... զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս, յորում եւ միջին Տիգրան յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն հրէից, որ եղեւ քաղաքագեօղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ, հզօր պատուարաւ եւ անուանեաց **Վաղարշապատ**, որ եւ **Նոր Քաղաք**:

Պաշարեցաւ այս քաղաք յամի 351, յաւուրս փոքուն Խոսրովու արքայի ի կովկասեան զօրաց իբրեւ երից բիւրուց՝ թելադրութեամբ Շապհոյ արքային Պարսից. այլ յայնմ միջոցի արեւելեայ եւ արեւմտեայ զօրապետք Հայոց հանդերձ զօրօք իւրեանց՝ ա՛յնպէս հասին ի վերայ եւ քաջութեամբ պատերազմեալ անդրէն դարձուցին հալածական, զի ամենեւին առանց վնասու զերծաւ քաղաքն:

Պաշարեցաւ դարձեալ եւ քանդեցաւ մեծ վնասուք յամին 380, քանզի հրամանաւ Շապհոյ Բ արքային Պարսից ուրացեալն Մերուժան զօրօք նորա էառ պատերազմաւ եւ աւերեալ քանդեաց զմեծ մասն եւ զբազմութիւն բնակչացն վարեաց ի գերութիւն ի Պարսկաստան. զորմէ Բիւզանդ պատմիչ, դպրութիւն Դ, գլուխ ԾԵ. «Առնուին եւ զՎաղարշապատ քաղաք՝ քանդէին, բրէին զքաղաքն եւ ի հիմանց տապալէին. եւ խաղացուցին յայնմ եւս քաղաքէ ԹԺՌ [19000] երդս». այսինքն տասնեւինն հազար գերդաստանս բնակիչս քաղաքին՝ յազգէ հրէից հաւատացեալս ի Քրիստոս:

Այս քաղաք այս օրինակ եւ առաւել եւս զկնի բարձման Արշակունի թագաւորութեան Հայոց եւ զկնի փոխադրութեան հայրապետական Աթոռոյն ի Դուին առ Մելիտէ կաթուղիկոսիւ եւ հետզհետէ յառնելոյ պարսիկ եւ հագարացի թշնամեաց ի վերայ, իսպառ խանգարեցաւ. եւ տեղին գոլով դաշտային, պարիսպն եւ բոլոր շինուածքն հողային, ամենեւին անհետացաւ եւ ո՛չ մնաց նշմարանք ինչ առաջին շինութեանցն. որով եւ շրջապատ տարածութիւն պարսպի բերդին թէ ո՛րչափ՝ անյայտ. բայց փոքր ինչ նշմարին հիմունք պարսպի նորա յարեւելեան կողմն Կաթուղիկէ տաճարին սրբոյ հեռի յայժմեան արտաքին պարսպէ իբրեւ ըռմբաձիգ մի հրացանից, որոյ եւ երկայնութիւնն ի հիւսիսոյ ի հարաւ գտանի իբրեւ եօթն հարիւր յիսուն քայլ. եւ ի միջին տեղւոջ երկայնութեանն ունի եւ զնշան տեղւոյ դրանն արեւելեան՝ զոր **Արեգ դուռն** անուանէին. եւ հարաւային ծայր հիմանս այսորիկ հայի ուղղակի ընդ մէջ մեծի Կաթուղիկէին եւ մենաստանին Գայիանեայ կուսի՝ որով պարիսպն առնու ի մէջ իւր զտեղին գործարանի թղթաշինութեան. իսկ հիւսիսային ծայրն յառաջացեալ յարեւմուտս ունի զհայեցուած իւր ի գիւղամէջ անդր. ուստի այս ձեւ հիմանց պարսպին կացուցանելն ցուցանէ զբերդն զշինեալն ի Վաղարշակայ երկար քառանկիւնի յարեւելից յարեւմուտս, զի տեղին Կաթուղիկէ սրբոյ տաճարին անկանէր ի քաղաքամէջ անդր, զորմէ Ագաթանգեղոս. «Եւ եկն (այրն լուսաւոր) էջ, եհաս մինչեւ մօտ ի յատակ երկրիս ի շինամէջ քաղաքիս» եւ այլն: Այսու ամենայնիւ մեծութիւն պարսպապատ բերդին գտանի վեցիցս աւելի քան այժմեան ընդարձակութիւն արտաքին պարսպի մեծի Աթոռոյս:

Տեղին ապարանից Արշակունի թագաւորաց Հայոց ի սոյն յայս Վաղարշապատ, ապացուցանի լինել յարեւմուտս հարաւոյ մեծի տաճարին եւ մերձ նմին, ըստ

ւորչէ մինչեւ ցՄելիտէ, յորոյ աւուրս ի փոխադրիլ հայրապետա-կան Աթոռոյն ի Դուին, կարգեցաւ աստ միաբանութիւն հոգեւորա-կան ուխտի կրօնաւորական դասուց ի պաշտօն փառաբանութեանն Աստուծոյ. եւ նոքին իսկ կաթուղիկոսունքն, որք նստան ի Դուին ի միջոցս 472 ամաց, ունէին զկատարեալ հոգացողութիւն վասն հաստատութեան մեծի եկեղեցւոյս եւ պահպանութիւն հոգեւորա-կան դասուն եղելոցն ի սմին. առ որ Ստեփաննոս Օրբէլեան յՈղբն էջմիածնի ի դիմաց մեծի տաճարին ասէ (թղթա՛՛ 15). «Բայց անտի (ի Դունայ) աստ (ի Վաղարշապատ) զիս խնամէին (կաթուղիկո-սունք), որպէս օրէն է ծնողին»:

85. Բացի կաթուղիկոսաց զնոյն հոգացողութիւն ունէին եւ հա-յազգի մեծամեծ իշխանք, քանզի սպարապետք կամ իշխանք Հա-յաստանի զպատերազմական յաղթութեանն իւրեանց զգոհութիւն, որ առ բարձրեալն, եկեալ յայս քաղաք Վաղարշապատ ի սմին յայս-

---

յայտնի գրուածոց ականատես վկային Ագաթանգեղոսի. «Մօտ յապարանս արքունի», ուր է այժմ պարտեզ փոքր եւ ջրաղաց ի նմա. յայս տեղի Սիմէոն կաթուղիկոս Երեւանցի շինէ զգործարանն թղթաշինութեան. ուրանօր ի պեղելն զերկիր գտանին մարմարոնեայ վէմք շինուածոց դրան եւ լուսամտից. եւ ի յայտ գայ սալայատակ ինչ փոքրադիր եռանկիւնի կերտեալ քարանց ի զանազան գոյնս՝ զորոց պատմեն ականատես անձինք. եւ յաւուրս մեր իսկ ի 1825 ամի՝ ի մաքրելն զջրանցս քանքանին, որ ի ներքոյ տաճարին մեծի, մերձ ի հարաւային դուռն Ղազարապատին բացաւ ներքնատուն ըստ երկրաւ, յորում եւ գտան քանի հատ թրծեալ աղիւսք խաչանիշ դրոշմիւք մատանց. եւ երբեմն եւս ի փորելն ուրեք ուրեք յայն պարտէզ եւ ի շրջակայս նորա, մանաւանդ՝ յարեւելից եւ ի հիւսիսոյ, յերեւան գան կրաշաղաղ հիմունք որմոց. ո՛չ այսօրինակ եւ յայլ տեղիս ի նշանակեալ քաղաքամէջսն:

Այսու ամենայնիւ՝ եւ աւանդութեամբ բնակչացս, հաւանական ընծայի լինելն յայս տեղի պարտիզիս արքունի ապարանից՝ մինչեւ ցդուռն անուանեալ Տրդատայ արեւմտեան ներքին քառակուսի պարսպին սրբոյ Աթոռոյս՝ ուր վերջանայ եւ հիւսիսային ծայր շինուածոց կաթուղիկոսարանին. քանզի անուանադրութիւն այսր դրան յանուն Տրդատայ, չէ՛ նորոգ որպէս այլոց դրանցն, որք անուամբ դռնապանացն կոչին, այլ ի հնոց անտի աւանդեալ ցմեզ, որով ստուգի թէ՝ է տեղի հիւսիսային դրան ապարանից մեծին Տրդատայ. եւ այսու՝ ապարանն արքունի ի մէջ փակէ որպէս զպարտէզն տեղւոյ գործարանի թղթաշինութեան, նմանապէս եւ զտեղին Ղազարապատի եւ կաթուղիկոսարանի իսկ:

Յայսմիկ ծանօթութեան ի վեր անդր յիշատակեցաւ Շրէզ բլուր, զոր յիշատակէ եւ Խորենացին. այլ այնպիսի անուանի բլուր չգտանի ի մերձակայս Վաղարշապատու. բայց եթէ փոքր այն բլուր, զոր այժմ բնակիչք կողմանցս անուանեն **Որ յանէից կոնդ**, հեռի գտանի այս ի քաղաքէ աստի ուղղակի դէպ ի հիւսիս իբրեւ քառորդ մի ժամու, եւ համեմատի մեծութեամբ բլրոյն Դուին քաղաքի. եւ պատճառ նորոգ անուանադրութեանս է. սովորութիւն լեալ երբեմն բնակչաց տեղւոյս ելանել ի բլուր անդր ի զբօսանս զուարճութեան, որոց ի վերադարձի ի միում նուագի՝ զմնացորդ գինին անօթովն հանդերձ եւ ուտելեօքն թագուցանեն ի ներքոյ մանր քարանց եւ հողոյ՝ ի նախապատրաստութիւն միւսանգամ ելանելոյ անդր. այլ նախքան զերթ նոցա՝ դիպեալ անդր ոմանց աբեղայից յաւուր միում զբօսանաց աղագաւ, գտանեն զայն, որոյ վասն եւ երգեն անդէն զշարականն **Որ յանէից**, յօրէ անտի եւ այսր անուանի այն բլուր՝ **Որ յանէից կոնդ**:

միկ տաճարի սրբութեան մատուցանէին առ Աստուած նուիրական պատարագօք հանդերձ:

Վահան Մամիկոնեան զօրավար Հայոց, զկնի յաղթահարելոյն զզօրս Պարսից գայր իջանէր բազմութեամբ նախարարաց աստ ի Վաղարշապատ եւ մատուցանէր զյաղթութեանն գոհութիւն առ Աստուած յայսմիկ Կաթուղիկէ եկեղեցւոջ, որոյ ի հիմանց շինութեան եւ նորոգութեանն զկնի շինէ եւ զմենաստանն որ առ եկեղեցեաւս վասն կրօնաւորացն, յորոց վերայ վերակացու եւ հոգաբարձու կարգէ զՂազար Փարպեցի, զորմէ Ստեփաննոս Ասողիկ պատմիչ, հատոր Բ, գլուխ 2. «Իսկ Վահան (Մամիկոնեան) զեկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր՝ զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով, նոյն եւ ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծն Կաթուղիկէ եկեղեցին՝ որ ի Հայս, վերստին մեծապէս նորոգեաց զդասս կրօնաւորաց բազմացուցանելով, որ Սուրենայ անապատն ասի[1], վերակացու նոցա կարգեալ զՂազար Փարպեցի ճարտասան եւ պատմագիր»: Եւ զի սա ինքն Ղազար Փարպեցի, որ հոգաբարձուն էր մենաստանին հրամանաւ Մամիկոնեանն Վահանայ, ի բաց լինելն յայնմ պաշտամանէ դիպուածով իւիք՝ գրէ թուղթ երկարաձիգ բանիւք առ նա ինքն Վահան Մամիկոնեան, յորում եւ ասէ. «Եւ կամաւ եւս խորհիցիս զյիշելդ զտուեալ պատգամն երանելոյն Յօհաննու, Գիւտա կաթուղիկոսի՝ եղբօրորդւոյն քեզ տեառն ի Սեւկոյ դրախտին, յոմանց արանց՝ իրք խոստանալով քեզ տեառն կարասի, խնդրէին զտեղիդ (զմենաստանն) եւ քո տեառն կոչեցեալ զտէր Վարդ զքո եղբայր եւ զՀայդիկ եւ զիմ անարժանութիւնս՝ հրամայեցեր միւսանգամ երկրորդել Յովհաննու զպատգամսն... եւ ընդ տեառն Յովհաննայ զայրացար՝ թէ բնաւ իբրեւ քեզ առն ո՛չ

[1] Յայս յիշատակութիւն անծանօթ **Սուրէնայ անապատ** տարակուսի Ստորագրութիւնն հին Հայաստանի եւ յիրաւի, զի չի՛ք յայլ ծանօթ գիրս այսպիսի ինչ, այլ միայն սա ինքն Ստեփաննոս Ասողիկ զայսքան եւեթ համառօտակի յիշատակէ:

Մերձ այսմ անուանակոչութեան գտանի ծանօթութիւն ինչ ի գրուածս Զաքարիա Սարկաւագի յարձանագրութիւնս Յօհանավանից. «Որպէս եւ բազում անգամ հարցեալ եմք յԱռաքէլ վարդապետէ (Դավրիժեցի) եւ ուսեալ ի նմանէ հարցաք եւ զայս, թէ մարտիրողոք ճառընտիրն եւ այլք ի Սիւղի վանք ասեն եւ կամ ի Սովի վանք սմա. իսկ կոնդակն Տաթեւու եւ Կիրակոս եւ Թումա եւ Այսմաւուրքն եւ այլք, Յօհաննու վանք ասեն. պատասխանի ետ վարդապետն եւ ասէ. «Յորժամ սուրբ Լուսաւորիչն շինեաց, Սիւղոս ոմն վերակացու կարգեաց, եւ անուամբ նորա կոչեցաւ Սիւղի վանք. իսկ յաւուրս թարգմանչացն Ղազար Փարպեցի էր առաջնորդ եւ գրէր զՊատմութիւնն: Յօհան ոմն կարգեցին տեսուչ, ուստի կոչեցաւ Յօհաննու վանք»: Ի բանից աստի եւ ի գրուածոցն Ասողկայ երեւի թէ վերակացութիւն Ղազարայ Փարպեցւոյ էր միանգամայն ի վերայ միաբանութեան Կաթուղիկէ եկեղեցւոյս եւ այսր յիշատակեալ վանաց. եւ թերեւս յայնժամ կոչէր այնպէս, այլ զկնի փոփոխեալ կոչեցաւ **Սուրենայ անապատ**:

լսել... եւ ես վասն զի տկարամիտ եւ անզգուշացող այր եմ յերկրաւոր միտս, ո՛չ զգացի առ ժամայն դաւոյն. այլ պա՛րտ էր փութով եւ երագ երագ անկանել ի յոտսդ արտասուօք եւ աղաչելով ի բաց փախչել ի հոգաբարձութենէ տեղւոյդ. եւ ահա՛ լինէի պրծեալ ի չարթոյն ժանեաց գազանացն...: Դարձեալ ասէին, թէ գամ մի պիղծ եւ չարագործ, Ղազարայ վա՛նք անդէն եւ սիրէ (Վահան Մամիկոնեան) զնոսա. եւ զայսպիսի բանից ասացողաց զգործս ես ահա՛ լռեմ. զի ոչի՛նչ է ինձ հարկ ասել...: Դարձեալ այլ շոքմոք բանիւք զայրացուցանել զքեզ, Տէր, ընդ իս փութային՝ թէ մանուկ մի հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել...: Ասէին (թշնամիք Ղազարու). Ո՛վ անմիտ մարդիկ, ընդ է՞ր վաստակիք յանօգուտս, հի՞մ լայք իզուր ի խորշակահար տեղւոջդ եւ խօլութեամբ անձնամահ լինիք. զի են ի Մամիկոնէից տանէ աւագ ծառայք ոմանք եւ այլ քահանայն աւագ, որ է ի տանն, որոց ընդ մեզ բանք են երդմամբ՝ թէ ե՛րբեւէ Ղազարա իսկ չտամք հանգչել այդր եւ այլն...: Եթէ սակաւ մի երեւէի նուազեալ քան զայնոսիկ, որք յերկերիւր ամէ չինեալ վանորայքն, չհամարէի զանձն արժանի կալոյ. զի թէպէտ միանգամ եւ երկիցս ջարդեցաւ բոլոր կահն յանհաստատութենէ չինուածոյն» եւ այլն:

86. Այս մենաստան այսու առաջին դրութեամբ հանգամանաց իւրոց տեւեաց յընդերկար միջոցս բարեզարդութեամբ, բազմութեամբ հոգեւորականաց եւ յաջորդութեամբ վանահարց կամ ընդ պաշտպանութեամբ քորեպիսկոպոսաց յանուն վիճակին Արարատայ. այլ թէ առ յապայն յո՞րպիսի փոփոխութեանց ներքոյ անկեալ իցէ եւ յո՛ր վիճակ վշտաց եւ տառապանաց՝ չունի ինչ թէպէտ գրաւոր ծանօթութիւն որոշակի, եւ թէ եղեալ եւս իցէ, չէ՛ ի յայտ եկեալ տակաւին եւ հասեալ ի ծանօթութիւն հասարակութեան ազգին, բայց սակայն՝ ակն յայտնի տեսանի եւ իւրաքանչիւր ոք յընթերցանելեաց կարո՛ղ է քաջ կշռադատ լինել զվիճակէ հանգամանաց նորա յընդհանուր պատմութեանց Հայոց՝ ի մասին աւերանաց, գերութեանց, ասպատակութեանց եւ այլ բազմադէմ յարձակմանց այլազգի բազմազան թշնամեաց յԱրարատ եւ ի շրջակայս նորա մինչեւ ցդարն հնգետասաներորդ:

87. Ապա այն ինչ Կիրակոս Վիրապեցի ընտրութեամբ ազգային ժողովոյ յամի 1441 կացուցաւ յԱթոռ հայրապետութեան աստ ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոջ, ձեռն ի գործ էարկ եւ ետ նորոգել անդրէն զաւերեալ զշէնսն առ եկեղեցեաւս եւ հոգացաւ զայլոց եւս կարեւորաց, որչափ եւ ձեռնհաս եղեւ ի միջոցի անդ երկուց ամաց կաթուղիկոսութեան իւրոյ:

Ի Կիրակոս կաթուղիկոսէ աստի մինչեւ ցՍահակ Դ, քսան եւ երկու կաթուղիկոսունք յաջորդեցին մի զկնի միոյ յԱթոռ հայրապետութեանն ի միջոցս 183 ամաց, այլ ամենեքեան նոքա չեղեն ձեռնհաս ըստ արժանի անուան պատրիարգական Աթոռոյն բարեկարգել, յարդարել զայն. մանաւանդ ի շինուածս՝ ի պատճառս պէս-պէս հալածանաց, վշտաց եւ գերութեանց Արարատայ եւ շրջակայ գաւառաց նորա առաւելապէս ի Պարսից՝ մինչեւ ցամ Տեառն 1627:

88. Ապա յայսմ միջոցի Մովսէս վարդապետ Սիւնեցի ի գաւառէն Բաղաց, ի Խոտանուն գեղջէ, որ եռայր հոգւով վասն պայծառութեան ազգին եւ կատարեալ վերանորոգութեան շինուածոց Կաթուղիկէ եկեղեցւոյս եւ կաթուղիկոսարանի նորա, աներեւոյթ իմն ձեռնտուութեամբ խնամոց վերին այցելութեանն՝ սիրելի եղեւ յաչս պատուաւոր իշխանաց համազգեացն իւրոց եւ մեծամեծ իշխանաւորացն Պարսից՝ վարդապետական արդեամբք եւ մարդասէր բարուք. մինչեւ եւ յաչս շահ Ապասայ Ա արքային Պարսից՝ յորմէ եւ ի պարգեւի մասին ընկալաւ զլիակատար իշխանութիւն աւագ լուսարարութեան (փակակալութեան) պատրիարգական Կաթուղիկէ եկեղեցւոյս, որ ի Վաղարշապատ՝ կնքեալ արքունի հրովարտակաւ յամի 1627, որոյ ահա՛ հայացի օրինակ թարգմանութեանն.

«Առաջի արարին ինձ, թէ ի խաչադաւան հոգեւորականաց ընտրեալ է լուսարար Էջմիածնայ եւ կառավարիչ հոգեւորական գործոց նորա ըստ քրիստոնէական արարողութեանց, որ մաղթէ այժմ յինէն շնորհել յայն պաշտօն զսոյն հրովարտակ, վասն որոյ այսու հրամանագրեմ ընդհանրաբար համայն պետաց եւ այլոց անձանց, իւրաքանչիւր ումեք ի նոցանէ՝ թողլով նմա ազատաբար վարել զնորընկալ պաշտօն իւր. չարգելուլ իւիք նմա, այլ յարգելով եւ օգնելով պահպանել զկողմն նորա: Եւ զի որովհետեւ հաստատեցի զայս հրովարտակ դրոշմամբ կնքոյ իմոյ, այնր աղագաւ հաւատալ սմա: Տուաւ ի ջամադիալ ամսոջ, յամի 1036», որ համապատասխանէ Փրկչական թուականին 1627: Յետկոյս հրովարտակին եղեալ զկնիք չորեքին անձինք խորհրդականք՝ վկայեալ են ստուգութեան այնր:

89. Ապա այսու հրամանաւ փութացեալ ի նոյն ամի գայ յէջմիածին եւ ի 24 ամսեանն յունիսի այնր ամի նա ինքն Մովսէս վարդապետ սկիզբն առնէ նորոգութեան շինուածոց մենաստանին եղելոյ առընթեր մեծի տաճարին, քանզի արտաքին շինուածք մենաստանին եւ տան կաթուղիկոսարանի գրեա՛թէ բոլորովին քայքայեալ եւ խանգարեալ էին, զորմէ Առաքել պատմաբան Դավրիժեցի. գլուխ ԻԴ, թղթա՞՞ 299. «Եւ ի վաղեմեաց ժամանակաց որ շուրջ զեկեղե-

ցեաւն շինութիւն եղեալ էր եւ դարձեալ աւերեալ եւ ի վերայ մի-մեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն եւ մոխիրն, որ յամենից կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն եւ հողն եկեալ եւ ծածկեալ էր զհիմունս եւ զաստիճանս եկեղեցւոյն, որք կան յարտաքուստ կողմանէ»: Ա՛յնքան՝ մինչ զի անհնարին լինել հիմնարկութեան շինուածոցն. վասն որոյ զառուս ջուրց անդաստանացն խոտորեցուցեալ ի շրջապատս տաճարին՝ ջրողող ետ մաքրել զտեղին մինչեւ հարթ, հաւասար գետնոյն. եւ ապա կառոյց շուրջ զեկեղեցեաւն ընդարձակ քառակուսի պարիսպ ի հողոյ հանդերձ ութն բրգամբք. այնպէ՛ս, զի տաճարն անկանէր ուղղակի ի միջին տեղւոջ պարսպին. եւ ի ներքս ի չորից կողմանց առ պարսպօքն ձեւացոյց զբովանդակ շէնս բնակութեանցն:

90. Յարեւմտեան կողմն ետ կառուցանել զմեծամեծ դարպասս եւ սենեակս կամարայարկ ի քարանց, ի կղմնդրաց եւ ի կրոյ՝ որիշ վասն կաթուղիկոսական տան եւ որիշ վասն հիւրոց, զորս անջրպետէ յիրերաց կամարայարկ դուռն յանուն Տրդատայ եղեալ ի միջին տեղւոջ այնր բաժնի, որ հայի հանդէպ արեւմտեան դրան տաճարին:

91. Յերկոսին կողմանս հիւսիսոյ եւ արեւելեան ըստ առաւելագոյն մասին ետ կանգնել նմանապէս ի քարանց եւ ի թրծեալ աղիւսոյ սենեակս միաբանութեան հոգեւորականացն առհասարակ: Իսկ ի մնացորդ տեղւոջն արեւելակողման մերձ յանկիւնն արեւելեան հարաւոյ ետ կառուցանել զփուռն հաց եփելոյ եւ զայլ սենեակս պատկանեալս նմին:

92. Իսկ ի հարաւային կողմն շինեցաւ զանազան սենեակք ընդ մեծ եւ ընդ փոքր, այսինքն է խոհանոց, սեղանատուն կրկին՝ ամռան եւ ձմռան, համբարանոցք ցորենոյ, որիզոյ եւ այլ հարկաւոր նիւթոց: Այս ամենայն շէնք բաց յամռան սեղանատանէն, էին քարամբք եւ կղմնտրօք կառուցեալ:

Յայս ամենայն նորոգութիւնս մենաստանին, որպէս եւ տաճարին իսկ ձեռնտու էին նմին Մովսէս վարդապետի՝ երեւելի անձինք ազգին Հայոց յօժարակամ տրօք իւրեանց միջնորդութեամբ պատուաւոր հոգեւորականաց՝ եպիսկոպոսաց եւ վարդապետաց, յորոց բազումք իսկ էին ի կարգէ աշակերտաց նորա:

93. Այս ամենայն շինուածք՝ զկնի փոքր միջոցի ի հեծելաշարժութենէ բազմութեան զօրաց Օսմանեանց եւ Պարսից ի վերայ Երեւանայ եւ մերձակայ սահմանաց նորա՝ յամսն 1635, 1636. գրեա՛ թէ ըստ մեծի մասին խանգարեցան. զորս յաջորդ Մովսէսի Փիլիպպոս կաթուղիկոս բազում ծախուք վերստին նորոգեաց կոփածու քա-

բամբք եւ թրծեալ աղիւսովք: Զարեւելակողման զսենեկան միաբանից ծայրէ ի ծայր ի հիմանց ետ կառուցանել հաստատուն շինուածովք, յորոց վերայ եւ զտուն կաթուղիկոսական՝ վայելչաձեւ յօրինուածովք արժանի պատրիարգական իշխանութեան, որոյ եւ աւերակքն կային մինչեւ ցժամանակս մեր. իսկ ներքնայարկ սենեակքն տակաւին նոյն են: Ետ սալայատակ առնել եւ զառաջոյսն սենեկաց ի չորից կողմանց ի կոփեալ քարանց՝ լայնութեամբ չորից կանգնոց:

94. Եւ զի տեսեալ թէ խոնաւութիւն գետնոյն ի մէջ պարսպին վնաս մեծ գործէ շինուածոցն եւ տաճարին իսկ, ետ փորել ջրհոր մի ի հարաւակողմն տաճարին մերձ ի մեծ դուռնն ներքին պարսպի հարաւային կողման, յորմէ ընդ երկրաւ ճանապարհ բացեալ եւ անցուցեալ զայն ջուր հորոյն՝ զառաջեաւ մենաստանին սրբուհւոյն Գայիանեայ հարուստ մի հեռագոյն հանէ յերես երկրի. եւ է ջուր բաւականաչափ ժողովեալն ի ջրհոր անդր յերակաց երկրին եւ յատակէ տաճարին իսկ: Արար եւ զայլ մասնաւոր շինուածս ի տեղիս տեղիս յայս կաթուղիկոսական մենաստան, որպէս եւ զայն մեծ կամարայարկն յանուն Տրդատայ յիշատակեալ դրանն, որ յարեւմտեան միջնապարսպին ի միջին տեղւոջ՝ ընդ որ անցանեն ի փոքրիկ վաճառանոցն. եւ զայն՝ կրկնայարկօք երկերեսանի: Անդ յարեւելեան յարկն դրան ի միջակէտ առաստաղին դնի փոքրիկ վէմ մարմարոնեայ, յորոյ վերայ գրեալ կայ արձան անուան որմնադրի այնր շինութեան հանդերձ թուականաւ Հայոց, յայս օրինակ. «Ուստայ Գրիգոր ծառայ Աստուծոյ. թ՛՛ ՌՁԸ (1639)»:

95. Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի տեսանելով զկարի հարկաւորութիւն մաքուր ջրոյ, մանաւանդ յամառնային եղանակի եւ ի սաստիկ ցրտութեան ձմռան՝ թէ վասն հոգեւորական ժառանգաւորացն մենաստանի եւ թէ վասն երթեւեկացն յանուն սրբոյ տաճարին, աշխատեցոյց զբազում մշակս դրամովք եւ ետ փորել զյոլով ջրհորս յարեւմտեան հիւսիսակողմն Աթոռոյն՝ մերձ ի գետն Քասաղ եւ անդր եւս. եւ ճանապարհ բացեալ ընդ երկրաւ առ միմեանս, ժողովեաց զջուրսն ամենայնի ի մի: Եւ այնպէս միով ընդերկրեայ ճանապարհաւ կրաշաղաղ եւ քարակերտ առուով եբեր եմոյծ ի մէջ պարսպի մենաստանին, որ ելանէ ի պարտէզ տան կաթուղիկոսարանին եւ անտի ելեալ ընդ Ղազարապատ հիւրանոցն՝ ոռոգանէ զպարտէզս արտաքոյ պարսպին հարաւոյ եւ զարտօրայսն: Առաջին փոքր բաժին ի ջրոյ աստի ի հարաւային եզեր գեղջն հանդէպ մեծի դրան շուկային (վաճառանոցին) ելանէ ի վիմակերտ աւազան վասն բնակչաց գեղջն եւ շուկային: Երկրորդ բաժինն ճանապարհաւ

խողովակի գայ մտանէ ի մոմատուն կոչեցեալ շէնքն, որ շինեցաւ ի Սիմէոն կաթուղիկոսէ Երեւանցւոյ յաղագս սպիտակացուցանելոյ զմոմս. եւ անդ մտեալ ի հոր երթայ խառնի ի քանքանն (94), որ ի Փիլիպպոս կաթուղիկոսէ Հաղբակեցւոյ: Իսկ երրորդ բաժինն նմանապէս ճանապարհաւ խողովակի ի շուկայէն մտանէ ի ներքին պարիսպն եւ թափի երկու պղնձեայ բերանօք յաւազան քարեայ. եւ անտի անցեալ զառաջեաւ սենեկաց միաբանութեանն քարակոփ ճանապարհաւ՝ գնայ, անկանի զառաջոյ մեծի դրան հարաւոյ ներքին պարսպի անդրէն ի գետնափոր ճանապարհն վերոյիշեալ:

Այս երրորդ բաժին ջրոյ ճանապարհն եւ աւազանն գոլով փորածու վիմօք եւ ամրացեալ կրովք, քայքայեալ էր. եւ էր շինեալ ի ժամանակէ անտի Ղուկաս կաթուղիկոսի, որ ունէր արձանագրութիւն ըստ այսմ.

«Նորոգեցաւ քանքանս բոլոր շրջանակօքն ի հայրապետութեան տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, արդեամբ Ագուլեցի մահտեսի Կարապետին եւ կնոջն մահտեսի Եղիսաբեթին եւ որդւոյն մահտեսի Հայրապետին. ի թուին Հայոց ՌՄԼԳ (1784)»:

Ուստի յանցեալ ամ 1835, ետ վերանորոգել տէր Յովհաննէս Ը կաթուղիկոսն արդեամբ աղայ Յակոբայ մահտեսի Յովհաննէսեան Մատակեանց Ղարսեցւոյ՝ վերաբնակելոյն ի յԱլէքսանդրապոլ (Գիւմրին Շիրակայ), որոյ յիշատակագրութիւնն ի վերայ երկբերան աղբերն ըստ այսմ օրինակի.

«Այժմ եւս վերստին նորոգեցաւ քանքանս ի հայրապետութեան տեառն Յովհաննու սրբազան կաթուղիկոսին Կարբեցւոյ, արդեամբ Ղարսեցի Մատակեանց մահտեսի Օվէսի որդի մահտեսի Յակոբ աղային յամի Տեառն 1835»:

Իսկ և չորրորդ բաժին մասնաւոր ջուրն բաժանեալ նոյնպէս խողովակաւ ի պարտիզէ տան կաթուղիկոսարանին գնայ ի պէտս բաղանեացն, որ յանկեան պարսպի արեւմտեան հարաւոյ (105):

96. Աղէքսանդր Ա կաթուղիկոս Ջուղայեցի ետ նորոգել զսեղանատունն ճմռան ի խարտեալ քարանց կամարակապ կարի հաստատուն շինուածովք, որ ցարդ եւս կայ ի նոյն հաստատութեան, որոյ արձանագրութեանն յիշատակարան դնի ի ներքուստ ի հիւսիսակողման ի միջակէտ երկայնութեան որմոյն՝ ի վէմ սպիտակ մարմարոնեայ յայս օրինակ.

«Ի թուին (Հայոց) ՌՃԿԲ (1713), ես՝ Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոս Ամենայն Հայոց, շինեցի սեղանատունս ի վայելումն Սրբոյ Էջմիածնի միաբանից վասն ճմռան»:

97. Աբրահամ Բ կաթուղիկոս ետ նորոգ շինութեամբ կառուցանել զփոնատունն հաց եփելոյ՝ ի նոյն առաջին տեղւոջն (91) կոփածու քարամբք կամարակապ՝ յայլ եւ այլ սենեակս յամին 1731: Ետ շինել նոր ի նորոյ եւ զերկոսին բազմահատուած յարկսն արտաքնոցաց յերկոսին ծայրսն հիւսիսային ներքին պարսպի ի խարտեալ քարանց:

98. Ղազար կաթուղիկոս Ջահկեցի ի յաջորդել իւր յԱթոռ հայրապետութեան, հոգ տարեալ ետ կառուցանել զբազմայարկ հիւրանոցն ի հարաւային կողմն մենաստանին՝ կից ի պարիսպն այնր կողման, ընդարձակ քառակուսի կրկնայարկօք. հիւսիսակողման վերնայարկքն շինեցան ի վերայ սեղանատանն ձմռան՝ կառուցելոյն յԱղէքսանդր Ա կաթուղիկոսէ (96), իսկ հարաւակողմանն՝ եռայարկ շինուածովք. ծածկք սոցա բոլորովին են փայտ եւ հող և որմունքն յանեփ աղիւսոյ, բացի մասնաւորաց, որք հիւսեալ են կրովք եւ կղմնտրովք. եւ արտաքին պարիսպ սորա ի հիւսիսակողմն, որ ձգի մինչեւ ցմեծ դուռնն Մսրի կոչեցեալ, կառուցեալ է ի թրծեալ աղիւսոյ եւ ի կոփածու քարանց՝ յարդարեալ ամրագոյն բրգամբք. եւ անուն բովանդակ շինուածոյս կոչի Ղազարապատ *յանուն կանգնողի սորա Ղազար կաթուղիկոսի. եւ ունի կրկին դրունս՝ առաջին դուռն մեծ ընդ հարաւ, յորոյ վերայ դնի արձանագրութիւն այս ձեւ.*

«Ի ՌՃՂԹ թուին (Հայոց. 1750):
Աստուածային շնորհիւ լցեալ,
Տէր Ղազարոս հովիւն ընտրեալ,
Եւ պատրիարգն մեր գովեալ,
Կրկի՛ն զաթոռս լուսաւորեալ,
Զքնաղ ձեւով ազնիւ կազմեալ,
Զոր տեսանողքն եղեն ափշեալ,
Քաղցր անուամբ զսա պսակեալ,
Ղազարապատ վերաձայնեալ»:

99. Որովհետեւ տուն կաթուղիկոսարանին շինեալն ի Փիլիպպոս կաթուղիկոսէ հնացեալ էր բազմօք, սա ինքն Ղազար կաթուղիկոս փոխադրեաց զայն յարեւմտակողմն տաճարին՝ կառուցանելով զնորոգ դեղաշէն շինուածս, որ բովանդակի ի տասն յարկս սենեկաց ընդ մեծ եւ ընդ փոքր՝ ի վերայ ներքնայարկացն կառուցելոց ի Մովսէսէ Սիւնեցւոյ, մեծամեծ ճաղերկաթ լուսամտօք. հիւսիսային ծայր այսր շինուածոյ սկսանի ի դրանէն եղելոյ յանուն Տրդատայ եւ աւարտի յանկիւնն արեւմտեան հարաւոյ ներքին պարսպի՝ ուր է մեծ կամարայարկ քառանկիւնի բաց բոլորովին կողմն հիւսիսային.

իսկ յերեսին կողմունս երեք դրունք. արեւելեանն՝ է դուռն սեղանատան, հարաւայինն՝ երկրորդ դուռն Ղազարապատի, յորոյ վերայ դնի արձան այսպիսի.

«Հաստիչն հանուրց ի ներկայումս զմեզ սիրեաց,
Զտէր Ղազարոս զիւր սիրելին մեզ պարգեւեաց,
Որ զսուրբ Աթոռս սովիմբ ձեռամբ նորոգեաց,
Եւ հիահրաշ կերտեցելովք յոյժ զարդարեաց,
Եւ ի պատիւ վայելչութեան Մօրս փառաց,
Եւ ի պարծանս մերոց ազգաց Հայոց մեծաց»:

Իսկ արեւմտեանն, յատկացեալ վասն կաթուղիկոսաց՝ ընդ որ ելանէին յառաջն կաթուղիկոսունք ի ճաշել ընդ հասարակութեանն ի հանդիսաւոր աւուրս անդ ի սեղանատան. ի վերայ կամարի այսր դրան, ուր վերջացեալ է հարաւային ծայր կաթուղիկոսարանին, եդեալ կայ վէմ մարմարոնեայ, որ ունի արձանագիր շինութեանս այսորիկ ըստ այսմ.

«Շնորհօք Արարչին չքնաղ յօրինմամբ,
Կառուցեալ կանգնեցաւ բազմածախ արդեամբ,
Պատրիարգարանս այս գեղեցիկ տեսլեամբ,
Մեծին Ղազարու սրբազան վեհին ձեռամբ.
1190 (Հայոց թիւ) (1741)»:

100. Արար սա եւ զայլ շինուածս յարկաց յարեւմտեան կողմն՝ կից ի հիւսիսային ծայր կաթուղիկոսարանին, երկայնեալ զայն ընդ արեւմուտս վասն ընակութեան կաթուղիկոսաց ի ձմեռնային եղանակի, որ ունի զհայցուած իւր ընդ հարաւ:

101. Սիմէոն կաթուղիկոս Երեւանցի բազում գովութեանց արժանաւոր յազգասիրութեան մեծագործութեամբ իւրով: Սա ի յաջորդել իւրում յԱթոռ հայրապետութեան յամի 1763, հոգ յանձին կալեալ ձեռն ի գործ էարկ պայծառացուցանել զԱթոռ կաթուղիկոսական վայելչական բարեզարդութեամբն: Եւ նախ սկիզբն արարեալ հեռացոյց զընակութիւնս տանց գեղջն Վաղարշապատու, որ կարի մերձ էր ի մենաստան Աթոռոյս եւ գրեա՛ թէ շրջապատեալ զնովաւ, դէպ ի կողմն հիւսիսային: Եւ հարթ հաւասար արար զշրջապատս մենաստանին՝ թողլով ընդարձակ միջոց ընդ գիւղն եւ ընդ մենաստանն: Եւ ապա ետ ածել շուրջ զմենաստանաւն հաստատուն պարիսպ բազում բրգամբք եւ բաւականաչափ բարձրութեամբ՝ ի մէջ առեալ զամենայն զշէնսն պատկանեալս մենաստանին. զհիմունս ընդարձակ պարսպիս այսորիկ ետ հիւսել ի կռանակոփ քարանց եւ բարձրացոյց զայն յերկրէ գրկաչափ մի եւ զմիւս բարձրութիւնն յանեփ աղիւսոյ:

Այս արտաքին պարիսպ ունի չորս դրունս, յորոց մին փոքր գտանի ի հարաւային արեւմուտս մերձ ի բուրգն այնր անկեան, ընդ որ մտանեն եւ ելանեն բնակիչք գեղջն եւ այլ օտարականք ի պատճառս բաղանեացն, որ կայ անդէն ի նմին անկեան. իսկ միւս երեքն մեծամեծք եւ կամարայարկք, որոց առաջինն է ի հիւսիսակողմն հանդէպ գեղջն, որ անուանի Դուռն շուկայի*, զի ընդ այն մտանեն ի փոքր վաճառանոցն բնակիչք մերձակայ գիւղօրէիցն եւ կատարեն զառեւտուր իւրեանց, յորում գտանին իբրեւ ութսուն կրպակք զանազան արհեստաւորաց, որք ամենեքեան են ի բնակչաց* Վաղարշապատ գեղջ*. եւ երկրորդն՝ ի հարաւակողմն մերձ ի բուրգն արեւելեան եւ կոչի* Կալի դուռն*, ընդ որ ընկալնուն ի ներքս զամենայն արդիւնս անդաստանաց եւ կալուածոց մենաստանին. իսկ երրորդն՝ ի կրկնակի անդ հարաւային պարսպին, որ հայի դէպ յարեւմուտս. եւ այս անուանի* Դուռն Մսրի *յանուն ուրումն դռնապանի նորա: Այս յիշեալս կրկնակ՝ եղեալ է ի պատճառս շինուածոց Ղազարապատ անուանեալ հիւրանոցին:*

Արձանագիր շինութեան այսր պարսպի եղեալ կայ ի վերայ կամարի մեծի դրանն, որ մերձ ի բուրգն արեւելեան հարաւոյ յայս օրինակ.

«Շինեցաւ բոլոր շրջապատ պարիսպս սրբոյ Աթոռոյս ի հիմանէ ի փառս Աստուծոյ եւ ի պարծանս ազգիս Հայոց հրամանաւ տեառն Սիմէոն կաթուղիկոսին ի ՌՄԺԵ թուոջ մերում (1766)»:

Գտանին ինչ ինչ արձանագրութիւնք յայսմ պարսպի յանուն ոմանց նուիրատուաց յօգնութիւն շինութեան սորին:

Արձանագիր, որ գտանի ի վէմ անդր եղեալն ի ներքին կողմանէ պարսպին ի վերայ դրան բրգանն, որ երկրորդ է ի բրգանէ անկեան արեւելեան հիւսիսոյ.

«Յիշատակ է բուրգս Ղափանեցի մահտեսի Թադէոսի որդի Թողաթեցի մահտեսի Գրիգորին եւ որդւոցն Յարութիւնին եւ Եղիային. թվ. ՌՄԺԴ [1765]»:

Արձանագիր, որ գտանի ի պարսպի անդ արտաքուստ ի բաժնի արեւելեան հարաւոյ ի միջոցի երկուց բրգանցն ի վէմն եղելոյ ի վերայ լուսամտին յարդանոցի.

«Յիշատակ է եօթնագազաչափ տեղ ի պարսպէն Ագուլեցի Ոսկանի որդի Յովսեփին եւ իւր կենակցին եւ որդւոյն Դանիէլին եւ այլոցն. թվ. ՌՄԺԵ [1766]»:

Արձանագիր՝ ընդ մէջ մեծի դրան կալի կոչեցելոյ եւ բրգանն արեւելեան հարաւոյ այս ձեւ.

«Շինեցաւ մեծ բուրջս արդեամբք ի յԱտրանայ (Ատրիանապոլիս) սառաֆ մահտեսի Զաքարիային եւ հանգուցեալ եղբօրն իւրոյ մահտեսի Գրիգորին ի յիշատակ ամենից կենդանեացն եւ ննջեցելոցն իւրեանց: Թվին (Հայոց) ՌՄԺԵ [1766]-ին»:

Գտանի եւ արձանագիր մի ի միջին բուրգն արեւմտեան պարսպին ի հիւսիսակողման նորա յանուն Կարապետ պատրիարգին Երուսաղեմի, որ ունի օրինակ զայս.

«Շինեցաւ բուրգս այս արդեամբ սրբոյ Սաղիմայ պատրիարգ տեառն Կարապետի աստուածաբան վարդապետին՝ ի յիշատակ իւրեան եւ հոգեւոր եւ մարմնաւոր ծնողաց իւրոց ի ՌՄԺԶ (թուին Հայոց 1767)»:

102. Կառուցանել ետ զհամբարանոց մի միջակ մեծութեամբ հաստատուն շինուածովք ի բուն իսկ ծայրի անդ յանկեան արեւելեան հարաւոյ. ի հիւսիսոյ կից է փռնատունն հացի, դէպ ի հարաւ աւարտեալ երկայնութիւնն յարտաքին որմն նոյն իսկ ներքին պարսպի. յարեւելակողմն կից է բուրգն նոյն անկեան, որ ի շինուածոց Մովսէս կաթուղիկոսի. յարեւմտից մեծակառոյց համբարանոցն, որ ի Ղուկաս կաթուղիկոսէ: Այս չէնք այժմ անուանի Օշականայ ամբար, *որովհետեւ արդիւնք արմտեաց կալուածոց այնր գեղջ՝ սովորաբար ժողովին յայս համբարանոց. եւ ունի ներքնայարկ եւս, ընդ որով մտանեն ի ներքնայարկ յիշեալ բրգան:*

103. Ետ նորոգել եւ զսեղանատունն ամռան կամարայարկ կառուցմամբ ի կոփեալ քարանց: Շինել ետ ի հիւսիսակողմն տաճարին ընդ մէջ ներքին եւ արտաքին պարսպացն զմոմատուն անուանեալ տեղին սրահօք եւ յարկօք. ուր է եւ միջակ դրութեամբ քարեայ աւազան ջրոյ ի պէտս սպիտակացուցանելոյ զմոմս: Աստ նստի աւագ լուսարարն (փակակալ) մեծի տաճարին, որոյ եւ դուռն հայի հանդէպ հիւսիսային դրան տաճարին սրբոյ, որ անուանի Բ կոչմամբ՝ Դուռն լուսարարի*:*

104. Ընդարձակեաց եւ զձմռան կացարանն կաթուղիկոսական, զոր չինեալ էր Ղազարու Ջահկեցւոյ (100). քանզի քակեալ զորմն նորա, որ բաժանէր զայն կացարան եւ զշուկայն, հեռացոյց աւելի քան զտասն կանգուն, զոր ի բաժնէ շուկային ի ներքս էառ. եւ նորագոյն հաստատ եւ բարձր որմով ամրափակեաց եւ զի ներքս առեալ զմիջոցն, որ սկսանի ի դրանէն Տրդատայ ցբուրգն արտաքին պարսպի դէպ յարեւմուտս, ետ կառուցանել հատուածեալ մեծ եւ փոքր սենեակս վասն հարկաւորութեան տան կաթուղիկոսարանի ի ձմեռնային եղանակի, որ կայ եւ ցարդ:

105. Եւ կառուցանել եւ բաղանիս յանկեան արեւմտեան հարաւոյ արտաքին պարսպի ի պէտս մաքրութեան բնակչաց մենաստանին, գեղջն եւ երթեւեկացն ի հեռաստանէ: Եւ կառուցանել եւ ի հարաւակողմն պարտիզի տան կաթուղիկոսարանի երկայարկ շինուածս բազմասենեակ առ ի արգելուլ զտեսութիւն այլազգեացն հիւրելոց ի Ղազարապատ անդր դէպ ի տունն հայրապետանոցի, որ ինքնին խախտեալ կործանեցաւ յամի 1826:

106. Եւ փորել զբազում ջրհորս զառաջեաւ սենեկացն եւ շուրջ զտաճարաւն հեռագոյն՝ վասն առաւել պահպանութեան շինուածոցն, որք ի գիճութենէ վնասէին եւ վասն առողջութեան հոգեւորականաց կացելոցն յայնոսիկ շէնս եւ եւ բանալ ճանապարհ ընդ երկրաւ առ միմեանս: Եւ այնպէս տարեալ եւ միացուցանել ընդ ջուր ջրհորոյն մնացելոյ ի շինութեանցն Փիլիպպոս կաթուղիկոսի (94): Այս ժողովեալ ջուր ի ջրհորոց աստի եւ ջուրն, որ ի ներքոյ տաճարին՝ անկանին ի նոյն առաջին ճանապարհն, եւ անցեալ, որպէս ասացաւն զառաջեաւ վանաց Գայիանեայ եւ ընթացեալ հարուստ մի ապա ելանէ յերես երկրին եւ օգուտ մեծ բերէ անդաստանացն հարաւակողման:

107. Նոր ի նորոյ կանգնեաց եւ զգործարան տպագրութեան ամենայն պարագայիւքն՝ նուիրական արդեամբք բարեյիշատակ առն աղայ Գրիգորի Խօջաջանեան վերաբնակելոյն ի Հնդիկս, որոյ յիշատակագրութեանն արձան եղեալ կայ ի վերայ դրան տպարանին, եղելոյ կից յարեւմտեան ծայր ձմեռնային կացարանի կաթուղիկոսաց՝ (100) (104) այս օրինակ.

«Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն՝ հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Երեւանցւոյ՝ արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խօջաջանեան, որ մականուամբ Զաքիկենց, ի յիշատակ իւրեան եւ իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Միքայէլին եւ Մամխաթունին, իւր կենակից Մատլինային եւ վաղաթառամ Միքայէլ որդւոյն եւ քերցն Անամարիային եւ Զիպիտային, հօրեղբարցն՝ Եղիազարին, Սաֆարին եւ Աղէքսանդրին, պապուն՝ Գրիգորին եւ կենակից Թագուհւոյն եւ հօրաքեռն Զիժազատային եւ մեծ պապ Յակոբջանին եւ հօրեղբօր դստերացն՝ Պէկզատային եւ Գիւլնաբաթին եւ այլ ամենայն հին եւ նոր ննջեցելոցն նորին: Այսու պայմանաւ՝ զի ի տարին Բ անգամ ի տօնի Լուսաւորչին եւ Հրեշտակապետացն ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ՝ յիշելով զնոսա,

որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն: Թ[ուին] (Հայոց) ՌՄԻ (1771)»: Յորում եւ ետ տպագրել զինչ ինչ գրեանս:

108. Սոյն երանելի հայրապետ իբրեւ ետես թէ յաջողի այս գործ շահաստանութեան Աթոռոյ եւ ազգի Հայոց, եւ թէ առաւել ձեռնտու իսկ է այնմ տպագրատան եւ գործարան թղթաշինութեան, ետ բերել յԵւրոպիոյ զքաջահմուտ անձինս յայնմ. եւ ձեռն ի գործ եղեալ ո՛չ խնայելով՝ ո՛չ յաշխատանս եւ ո՛չ ի ծախսն, կանգնեաց եւ զայն գործարան ի հարաւակողման տաճարին՝ արտաքոյ մեծ պարսպին հանդէպ հարաւային դրան Ղազարապատին, յորմէ ելեալ թղթովքն ետ տպագրել զգիրս: Եւ այն նորակազմ թուղթ ունէր նշան յինքեան յառաջին թերթն զփակատառ անունդ եւ ի ներքոյ նորա զերկոսին հայկական տառ՝



Որք են՝ **էջմիածին** *եւ* **Սիմէոն կաթուղիկոս**. *իսկ ի յաջորդ թերթն զթուական Հայոց, որ է հազար երկու հարիւր քսան եւ հինգ եւ համապատասխան է 1776 Փրկչական թուականին: Եւ ի ներքոյ նորա՝ զայս երկու տառ.*

*Որ թերեւս նշանակեն զ***Գրիգոր Միքայէլեան** *զայրն բարեյիշատակ՝ որ ընդ ծախուց տպագրատան, գուցէ վճարեալ իցէ եւ զծախս այսր գործարանի թղթաշինութեան, քանզի չունիմք այլուստ զծանօթութիւն ինչ՝ թէ արդեօ՞ք ծախք սորին ի գանձարանէ Աթոռոյն եղեալ է, թէ ի նուիրանաց ուրումն ջերմեռանդի: Եւ զի տակաւին վէմն արձանագրի՝ որ կայ ի վերայ դրան նոյն գործարանի, գտանի առանց ինչ գրուածոյ:*

Այս երկու գործարանք՝ պարծանք Աթոռոյն եւ ազգին, կային ի հաստատութեան եւ ի շարունակ գործադրութեան ի ժամանակի անդ կաթուղիկոսութեան եւ փափագելի կենդանութեան նորին Սիմէոնի Երեւանցւոյ: Այլ զկնի վախճանի նորա ի պատճառս յարուցման պատերազմաց ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայ միմեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարգական Աթոռով, խանգարեցան մեծ մասամբ եւ գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան, զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ եւ պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցան եւ ցիր եղեն ի հեռաւոր տեղիս: Մինչ զի եւ զձուլեալ տառսն տպարանին ի հեռաւոր քաղաքաց գնեալ ի գերչացն Հայազգի անձինք՝ վերադարձուցանէին յԱթոռ այսր զկնի այնպիսի պատերազմաց: Իսկ տպագրատունն թէպէտ եւ անկաւ յառաջին վայելչութեանցն իւրոց, այլ այնու ամենայնիւ խնամօք պահպանեալ՝ տակաւին եւս ի լոյս ընծայէ զկարի կարեւոր մատեանս եկեղեցական եւ զայլս:

Այս գործարան տպագրութեան, որ յառաջն ունէր տեղի անդ ի ներքս տան կաթուղիկոսարանին յարեւմտեան ծայրի նորին (107), այժմ փոխադրեալ կայ յընդարձակ կամարայարկն խոհանոցի (110), որ կից յարեւմտից կուսէ հարաւային մեծի դրանն ներքին պարսպի[1]*:*

109. Ղուկաս կաթուղիկոս Կարնեցի եւս արար զբազում շինուածս յայս մենաստան: Առ հարաւային ներքին պարսպաւ ետ կառուցանել համբարանոցս ցորենոյ եւ որիզոյ ի միջոցի անդ անկեան արեւելեան հարաւոյ եւ մեծի դրանն Քշուկի անուանելոյ յանուն ուրումն դռնապանի այնր, ներքնայարկօք եւ վերնայարկօք կամար առ կամար ձգեալ ի կոփածու քարանց կարի հաստատուն՝ ըստ կիսոյն արդեամբք նուիրական տրոց Ջուղայեցի Էմնիազեան Խաչիկ աղայի, որոյ յիշատակագրութեանն արձան դնի յարեւելակողման որմն մեծի կամարայարկի դրանն վերոյիշեալ այս օրինակ.

---

[1] [Թղթի գործարանի մասին տե՛ս Հ. Աբրահամյան, Թղթի գործարան Հայաստանում, Գիտական նյութերի ժողովածու (Մատենադարանի), թիվ 1, էջ 61-72]:

«Շնորհիւն Աստուծոյ շինեցան կամարակապ դուռնս եւ արեւելակողմն ներքնայարկքս, որք են վեց խուցք եւ մի համբարանոց բրնձոյ հանդերձ կցորդ շինուածովքն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, արդեամբք Ջուղայեցի Էմնիազեան Խաչիկ աղային ի բարի յիշատակ իւր եւ կենակցին իւրոյ Մարիամ խանումին եւ որդւոյն իւրեանց Մովսէս աղային եւ այլ ամենայն կենդանեաց եւ ննջեցելոց իւրեանց, ի ՌՄԼԴ թուին (Հայոց) (1785)»:

110. Ի մեծ դրանէ աստի ուղղակի յարեւմուտս ցհարաւային ծայր շինուածոց կաթուղիկոսարանին գրեա թէ բոլորովին հիմնարկեալ՝ ետ նորոգել և կառուցանել բարձրաբերձ շինուածովք կրկնայարկաց՝ բացի ձմռան սեղանատանէն, որ յԱղէքսանդր կաթուղիկոսէ (96). մերձ ի յիշեալ մեծ դուռն ետ յարդարել զխոհանոցն ընդարձակ և բարձր կամարաւ, որոյ հիւսիսային որմն կիսով չափ տակաւին է յառաջագոյն շինեալն ի ժամանակէ անտի Համատանցի Աստուածատուր կաթուղիկոսին, որ և ունի արտաքուստ յորմն հիւսիսային արձանագիր շինութեանն ըստ այսմ.

«ՌՃԿԷ թուին (Հայոց) (1718): Ես՝ Համատանցի տէր Աստուածատուր կաթուղիկոս, ետու շինել տնտեսատունս ի վայելումն Սուրբ Էջմիածնիս միաբանից»:

111. Եւ աստի մինչև ցծայր շինուածոց կաթուղիկոսարանին յարդարեաց սեղանատուն մեծ և ընդարձակ վասն ամառան և բովանդակ շինուածք սորա են ի կոփածու քարանց և ի թրծեալ աղիւսոյ. նմանապէս և նստարանքն և սեղանն հացի՝ երկու կարգ ծայրէ ի ծայր են ի խարտեալ մեծահատոր վիմաց, որոյ յարևմտեան ծայրի անդ ի միջին տեղւոջ է քարակերտ կաթուղիկէ փոքրիկ ի վերայ չորից սեանց, յորում պատրաստի սեղան և տեղի բազմելոյ հայրապետին ի ճաշելն ընդ հասարակութեան. այլ այս կաթուղիկէ այժմ փոխադրեցաւ յարևելեան ծայր սեղանատանն նովին դրութեամբ՝ ի պատճառս փոխարկութեան խոհանոցին յայլ տեղի, զի յառաջին խոհանոցն, որպէս գրեցաք, փոխադրեցին զգործարանն տպագրութեան: Ի սեղանատանէ աստի մտանեն ի սեղանատունն ձմռան ընդ երկուս դրունս. իսկ ի միջոցս այսոցիկ երկուց շինուածոց՝ տպագրատան և սեղանատան, է սրահ կամարայարկ և ունի դուռն մեծ հանդէպ հարաւային դրան տաճարին, ընդ որ անցանեն ի տնտեսատունն, ի մառանն, ի սառցատունն, ի գինետունն և ի խոհանոցն նորոգ. ի վերայ այսր սրահի և սեղանատանն մեծի է շինուած մեծ համբարանոցի նմանապէս ի քարանց և ի կղմնդրաց

և է կառուցեալ արդեամբք բարեյիշատակ առն աղայ Մարգարի Խալդարեանց Ջուղայեցւոյ գաղթելոյն ի Պաղտատ, որոյ և արձան յիշատակագրութեան ջերմեռանդ նուիրանացն և անուան նորա և ազգայնոցն դնի արտաքուստ ի կամարի մեծի դրանն, որ ընդ մէջ տպարանին և սեղանատան, այս օրինակ.

«Յաջողմամբ ամենակարողին Աստուծոյ և հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին Ամենայն Հայոց նորոգեցաւ ի հիմանէ սեղանատունս և փոքր սրահս հանդերձ ամենայն վերնայարկօքն ծախիւք Ջուղայեցի Խալդարեանց ի Բաղտատ բնակեալ Մարգար աղային ի յիշատակ ինքեան և հոգելոյս ծնողացն իւրոց Աւետին և Ովսաննային և քեռն իւրոյ Աննային և կանանցն իւրոց հանգուցելոց և կենդանեաց և այլ ամենայն իւրայնոցն. ի ՌՄԼԷ թուականիս (Հայոց) (1788)»:

112. Ընդարձակեաց այս սրբազան կաթուղիկոս և զձմռան սեղանատունն յերկայնութեան նորա ընդ յարևելս նորոգ հնգեակ կամարօք, որոյ և արձանագիր շինութեանն կայ յորմն անդ հիւսիսային ի սպառուածի նորա ի ներքուստ ի փոքրագիր վէմ մարմարոնեայ, այս օրինակ.

«Ի թուին (Հայոց) ՌՄԼԹ (1790), հրամանաւ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին շինեցաւ հինգ կամար կցորդս սեղանատան՝ ծախիւք Կեսարացի բարեպաշտ մահտեսի Յովհաննէս ամիրային ի յիշատակ իւր և հօրն պաշպազրկեան մահտեսի Յարութիւնին, մօրն մահտեսի Եւային և զաւակացն Կարապետին և Սարգսին, Տալիթային և Մարիամին և այլ համայն կենդանեաց և ննջեցելոց իւրոց»:

113. Զվերնայարկ համբարանոցն, որ ի վերայ այսր սեղանատան, ևս ետ կառուցանել Ղուկաս կաթուղիկոս արդեամբք մահտեսի Նիկողայոսին Թօխաթցւոյ, որոյ յիշատակագրութեան արձան եդեալ կայ ի մէջ լուսամտին արևելեան ի կողմն հիւսիսոյ, ըստ այսմ.

«Շինեցաւ ամբարանոցս հրամանաւ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին արդեամբք Թօխատցի մահտեսի Նիկողայոսին ի յիշատակ նորին և հօրն իւր Պոյաճիզատէ հանգուցեալ մահտեսի Սարգսին և համայն կենդանեաց և ննջեցելոց իւրոց. թուին (Հայոց) ՌՄԽ (1791)»:

114. Շինուած այնր համբարանոցի, որ ի վերայ ամառնային սեղանատան, մնացեալ էր թերի ի ժամանակէ անտի Ղուկաս կաթուղիկոսի և էր յարևմտակողմն երեք բաժին տեղի, այսինքն՝ երեք գմբէթատեղի կամարօքն հանդերձ, յորոց զերկուսն քարամբք և կղմնտրօք և զմին փայտեայ ծածկօք լրացոյց Դաւիթ կաթուղիկոս

էնէկէթեցի: Այս տեղի է այժմ գրանոց այսր հայրապետական մենաստանի, քանզի ըստ ծանօթութեանն հասելոյ առ մեզ՝ յառաջագոյն մատենադարան այսր մենաստանի եղեալ է անդ ի կաթուղիկոսական տան, զոր կառոյց Փիլիպպոս Հաղբակեցի (98), անդ էր մինչև ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ, զոր սա ինքն փոխադրեաց անդրէն յայս ներկայ տուն կաթուղիկոսարանի մերձ ի շէնսն տպագրատան և ճմեռնային կացարանի կաթուղիկոսաց, որոյ տեղին գոլով ներքնայարկ և խոնաւուտ, տեսեալ Եփրեմայ կաթուղիկոսի, թէ վնասին անդ մատեանքն, փոխադրեաց յայս նորակառոյց շէնս ի Դաւթայ կաթուղիկոսէ. և յարդարել ետ զտեղի մատենիցն առ երեսօք որմոցն մինչև ցառաստաղ շինուածոյն փայտեայ հիւսնաշէն դարանօք. այլ գոլով տեղին տակաւին փոքր, գրեա թէ ի վերայ միմեանց կուտակեալ կային մատեանքն. վասն որոյ յանցեալ 1837 ամի զերկու գմբէթաբաժին տեղի ևս ի համբարանոցէն, որ կից յարևելից նորա, բաժանեալ միացուցին ընդ այս գրանոց և եղև երկու յարկ գրանոցն և ընդարձակեցաւ տեղի մատենիցն. ուստի և մատեանքն նոր ի նորոյ կարգադրեցան ըստ նիւթոյն ի մետասան բաժինս. յառաջին յարկի անդ՝ Ա. Սուրբ գիրք և մեկնութիւնք նոցին: Բ. Աստուածաբանութեան վերաբերեալ մատեանք: Գ. Աղօթից մատեանք: Դ. Եկեղեցական ընթերցուածոց մատեանք և մեկնութիւնք նոցին: Ե. Հոգևոր կանոնք ժողովոց և վարդապետաց: Յերկրորդ յարկի՝ Զ. Պատմութիւնք, Ճառընտիրք և աշխարհագրութիւնք: Է. Զափաբերութիւնք, այն է՝ ոտանաւոր մատեանք: Ը. Վարդապետական մատեանք: Թ. Արհեստական մատեանք: Ժ. Վիճաբանականք: ԺԱ. Այլազգական մատեանք՝ Լատինաց, Յունաց, Ռուսաց և Տաճկաց, ևս և այլոց:

115. Յամի 1839, յամսեանն մայիսի եկն յԱթոռ այսր բարեպաշտ հայազգի իշխան աղա Ստեփաննոսն Սահակեան Խէլֆայեանց բնակիչն այժմ Եգիպտոս քաղաքի, որ զկնի ջերմեռանդ ուխտակատարութեանցն եւ առատ նուիրանացն յանուն հայրենի Աթոռոյ գերագահ տաճարի Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի եւ ուխտի հոգեւորականաց նորին, յաւել եւ զյատուկ արդիւնս ի ծախս շինութեան երից սենեկաց վերնայարկացն արեւմտակողման Ղազարապատի, քանզի յայնմ միջոցի սոյն կողմն արեւմտեան վերնայարկօք եւ ներքնայարկօք ի պատճառս կարի խախուտ գոլոյն, բովանդակապէս քակեալ ի հիմանց նոր ի նորոյ կառուցաւ: Եւ այն նուէր արդեանց յանուն իշխանապետի Հայոց պերճաշուք Պօղոս բէկին Յովսէփեան եւ գերապատիւ աղա Պետրոսի նորին հարազատի եւ իւր ինքեան,

որոց յիշատակագրութեանցն արձանագիր ի վէմս՝ եդան յարեւելեան ճակատ նոյն երից սենեկացն ըստ այսց.

«Յամի 1839, յաւուրս 8-րդ Յովհաննու կաթուղիկոսի Ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք եւ ծախուք բարեպաշտ իշխանապետին Հայոց պերճապատիւ Պօղոս բէկին Յովսէփեան Զմիւռնացւոյ, բնակելոյ այժմ յԱլէքսանդրիա Եգիպտոսի»:

«Յամի 1839, յաւուրս 8-րդ Յովհաննու կաթուղիկոսի Ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք եւ ծախուք բարեպաշտ իշխանին Հայոց գերապատիւ աղայ Պետրոսի Յովսէփեան Զմիւռնացւոյ, բնակելոյ այժմ ի Թրէստ»:

«Յամի 1839, յաւուրս 8-րդ Յովհաննու կաթուղիկոսի Ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք եւ ծախուք բարեպաշտ իշխանին Հայոց մեծաշուք աղայ Ստեփանի Խէլֆայեանց Սահակեան՝ բնակելոյ այժմ յԵգիպտոս»:

116. Զմիջոցն այսր վերոյնշանակեալ շինուածոց եւ բաղանեաց (105), ուր էր յառաջագոյն փոքր Ղազարապատ կոչեցեալ հիւրանոցն, քակեալ բոլորովին եւ նորոգ հիմնարկութեամբ յամի 1830, կառուցին ընդ մեծ եւ ընդ փոքր սենեակս ուրն՝ մեծամեծ ճաղերկաթ լուսամտօք եւ սիւնազարդ գաւթօք, ուրանօր է այժմ ատեանն Լուսաւորչեան Հայոց սիւնհոդոսի եւ գրագրանոց նորա:

Գրական լուսաւորութիւն ազգի Հայոց եւ ուսումնարան Կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի

117. Թողլով առայժմ զմիջոց ժամանակի հեթանոս թագաւորացն Հայոց՝ զքրիստոնէութեանն զդարու յառաջ բերցուք՝ այն է, ի սկզբան անդ հինգերորդ դարու ի ժամանակս սրբոցն Սահակայ Պարթեւի հայրապետի եւ մեծ վարդապետին Մեսրովպայ՝ գրական լուսաւորութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ թէ յոր աստիճան բարձրացաւ, քաջայայտ իսկ է ամենեցուն մերազանց եւ այլոց օտարազգեաց, որք զհետ պնդեալ իցեն հնութեանց Հայաստանի. եւ փայլեցոյց զայն բոցափայլ լուսաւորութիւն ուսումնարանն Կաթուղիկէ Մայր եկեղեցւոյ Հայաստան աշխարհի, որ ո՛չ միայն զազգ եւ զեկեղեցի իւր լուսաւորեաց գիտութեամբ գրաւոր իմաստից եկեղեցական եւ արտաքին մատենից, այլեւ զմերձաւոր ազգս՝ զՎիրս եւ զԱղուանս, հոգեռանդ երկասիրութեամբ ծննդոց՝ որդւոց Հայաստանի, վարժելոցն առ ողջամիտ վարդապետութեան սրբոյն Սա-

հակայ եւ Մեսրովպայ: Եւ բազմացան այնու առաջին լուսաւորութեամբ երեւելի ականաւոր անձինք հարիւրիւչափ աւելի հարազատ որդիք Հայաստանի, որք ամենեքեան նոքա եղեն մի մի առանձին նշանաւոր հեղինակք գրոց գիտութեանց, թարգմանութեանց եւ մեկնութեանց: Եւ այնքան բազմացուցին զարդիւնս գրաւոր իմաստից, մինչ զի յայնպիսի վերջին շունչ անկեալ ժամանակի մարմնաւոր իշխանութեան, զկնի պահպանելոյ զազգն ողջոյն ի հզօրագոյն բռնութենէ հրապաշտութեանն արեւելից, չթողին եւ ի մերձաւոր լուսաւոր ազգս զիմաստս գիտութեանց, զորս ո՛չ հեղին, ածին ի հայրենի լեզու Հայոց, մանաւանդ զՅունացն, յորում ժամանակի փայլէր առաւելութիւն գիտութեանց եւ արհեստից, որ եւ անուանէր մայր իմաստութեան: Եւ համարձակիմ յայնմ դարու զմերսն գերագոյն դասել քան զհելլենացուցոցն զիմաստասէրս, որում բացայայտ վկայէ երկրորդն Թեսաւրոս Մագիստրոսն Գրիգոր Վասակեան Պահլաւունի յերկրորդ թուղթ իւր առ Կիրակոս յոյն դպիր՝ յասելն. «Իսկ մերոցն արիական արանց եւ առաքինասէր իմաստնոցն թուի ինձ եթէ յոյժ յաղթող եղեալք ամենայն արհեստից եւ մակացութեանց, որ վեհ ինձ նոցա հաւանիմ[1] ելոյ քան յոգունցն շփոթաբանութեան ձերոց ելլենական կարծեցելոցն. նաեւ այժմ ցուցանէ ի նոցունց (յԵբրայեցւոց եւ ի Քաղդէացւոց եւ յԵգիպտացւոց եւ յԵթիովպացւոց) դպրութենէ մերս[2] փանաքութիւն առ ձերն վեհագոյն, յոր այժմ են կարգեցեալք[3]»: Եւս յերրորդ թղթին առ Սարգիս վարդապետ Հայոց. «Եւ դու այժմ փութասցիս յայսոսիկ քոյով իմաստասիրական մակացութեամբքդ հրատարակել. վասն զի ոչ եմք երբէք դադարեալ ի թարգմանութենէ, եւս բազում մատեանս, զորս ո՛չ եմք գտեալ ի մեր լեզուս. զերկուս մատեանսն Պղատոնի. զՏիմէոսի տրամաբանութիւնն եւ զՓեդովնի, յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, եւ զայլս բազումս յիմաստասիրացն. իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարեւոր տաւնականս, բայց եւ գտեալ մեր իսկ ի հայ լեզու գրեալ թարգմանչացն զգիրս Ոլոմպիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի եւ հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ եւ զԿալիմոքոսի եւ զԱնդռաւնիկեայն ի հայ լեզու, բայց եւ զերկրաչափականն զԵւկլիտոսին սկսայ թարգմանել.

---

1 [Հմմտ Կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 115: Տպագրում՝ **համարիմ**]:

2 [Տպ՝ **մերոյ**]:

3 [Տպ՝ **կարծեցեալք**]:

եւ եթէ տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բա-զում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց եւ յԱսորոց թարգմանել ո՛չ դանդաղեցայց»[1]*:*

118. Նա ինքն Գրիգոր Մագիստրոս ի վախճան ընդարձակ չա-փաբերութեանն իւրոյ՝ որ զարարչութենէն ցվերջին կատարած.

«Զորդւոցն (Գրիգորի Լուսաւորչի) սքանչելի՝
որ իւր զկնի կարգ ըստ կարգին.
զգիւտն իմաստութեան՝
եւ զարուեստի նոր հանճարին.
զգիր մերոյ ազգիս՝
ըզՎրացւոց եւ զԱղուանին.
առեալ նշանեցին՝
զարմանալի թարգմանեցին.
առաւել նորոգեցին՝
եւ լուսաւոր յօրինեցին»[2]*:*

Ներսէս Շնորհալի յոտանաւոր պատմութիւնս նախնեաց.

«Յայսմ վայրի եղեւ յայտնեալ,
Այն որ Մեսրովպն կոչեցեալ.
Որ տեսական ուսմամբ վարժեալ,
Գործնականաւ գերազանցեալ.
Բարեաց պատճառ Հայոց եղեալ,
Զիմաստութեան գանձն խնդրեալ,
Զոր աղօթից մասամբ գտեալ,
Հոգւոյն մատամբ տպաւորեալ.
Ըստ Մովսիսի արժանացեալ,
Զաստուածագիծ տառս ընկալեալ,
Երիւք տասամբք վեցիւք յանգեալ,
Արեգական ելիւք չափեալ.
Այսմ շնորհի սովաւ տուեալ,
Սուրբն Սահակ օժանդակեալ....
Արդ երկոքին սոքա ընտրեալ,
Եկեղեցւոյ ամոլք լծեալ.
Զբանին ակոսն պատառեալ,
Զիմաստութիւնն սերմանեալ,
Մանկունս ուշեղս ժողովեալ,

---

1 [Անդ, էջ 66]:

2 [Հմմտ Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868, էջ 72]:

Նոր դպրութեամբ այնու վարժեալ.
Որք թարգմանիչք հոգւովն եղեալ,
Ըստ Պաղոմեայ ի նոյն շարժեալ,
Յաթենացւոց քաղաքն երթեալ,
Զիմաստութեան ծաղիկս առեալ.
Որպէս մեղու թեւօք բարձեալ,
Յեկեղեցիս Հայոց բերեալ.
Այս է՝ Մովսէս Դաւթիւ եղեալ,
Եւ Մամբրէիւ այլք հետեւեալ.
Այնքան շնորհօք վերին լցեալ,
Մինչ զի Յունաց գերազանցեալ.
Բայց Մեսրովպայ շրջագայեալ,
Զամենեսեան լուսաւորեալ,
Վրաց, Աղուանից գիր ստեղծեալ,
Հոգւոյն շնորհօք առատացեալ»:

119. Սքանչելին Կորիւն վարդապետ աշակերտ սրբոցն Սահակայ եւ Մեսրովպայ, որ առաջին գրիչ եղեւ զայնպիսի բարեդիպութեանց ազգին, գոլով ականատես վկայ եւ աշակերտ այնպիսի դպրոցի՝ գեղեցիկս խօսի զգրական լուսաւորութենէն եւ զուսումնարանէ տան կաթուղիկոսարանի սրբոյ Կաթուղիկէ եկեղեցւոյ Էջմիածնի.

«Որոց եւ ինքեանք ի կողմանց եւ ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ. քանզի յԱյրարատեան գաւառին ի կայս թագաւորացն եւ քահանայապետիցն՝ բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: ... Որ եւ սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս ի գաւառս՝ ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցն ի կատարումն գիտութեան բաւականս եւ առ ի զայլսն զեկուցանելոյ... եւ պատուիրեալ կալ ի նմին կանոնի եւ իւրեանց անդրէն զառընթերակաց արքունիսն, հանդերձ ամենայն ազատագունդ բանակիւն աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ, առաւել երանելոյն Սահակայ զՄամիկոնեանն որեարն ի վարժս վարդապետութեան պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդ անուն էր, որ եւ Վարդան կոչէր, նոյնպէս եւ զամենայն ոգի ջանայր յերիւրել, հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեանն:

Ի սոյն ուսումնարանէ շառաւիղեցան այլ եւս բազում ուսումնարանք ի զանազան նահանգս Հայաստանի յերկոսին բաժինսն եւս

ի Պարսկային եւ ի Յունային եւ յօտար ազգս՝ ի Վիրս եւ յԱղուանս. առ որս քեզ ականատես պատմիչ վերոյիշատակեալն Կորիւն սքանչելին, յորոյ բանից գրուածոցն փոքր ինչ ընդարձակօրէն դիցուք առաջի ընթերցանելեաց.

120. Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց (Մեծն Մեսրովպ)... հրաժարեալ ի նոցանէն (ի թագաւորէն եւ ի հայրապետէն) հանդերձ այլովք եւս օգնականօքն, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն եւ երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարոնոյ, որք էին սուրբք եւ զուարթագոյնք, հանդերձ այլովք եւս սպասաւորօք Աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել... երթեալ իջանէր առ ոտս տանն Գողթան յառաջին դաստակերտն իւր. եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ (իշխանին Գողթան) լի՛ առնէր զգաւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի եւ կարգէր յամենայն գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց (ուսուցիչս յեկեղեցականաց):

121. Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր... մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ, զվայրենագոյն, զճիւաղաբարոյ կողմանցն. եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեաց եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգեալ, որոյ անունն կոչէր Անանիաս՝ այր սուրբ եւ երեւելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ:

122. Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի (Մեծն Մեսրովպ) եւ վասն բարբարոսական կողմանն եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին ըստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ գրէր, կարգէր եւ օրինօք յարդարէր եւ առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց՝ յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց. եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր եւ եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս... եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ եւ ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց ի կողմանց կողմանց ի խառնաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել մանկունս, տալ ի ձեռն վարդապետին, զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեանն:... Իսկ իբրեւ ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածպաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ

դառնայր յերկիրն Հայոց եւ պատահեալ Սահակայ կաթուղիկոսի Հայոց՝ պատմէր նմա:

123. Ապա դարձեալ ելանէր, շրջէր զտեղեօք կարգելեօք եւ զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց զուարթացուցանել, նորոգել, հաստատել. եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս լի՛ առնէր... խորհուրդ առնոյր այնուհետեւ վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց, եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք անցանել ի կողմանս Յունաց եւ վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց յառաջագոյն զնմանէ անդ ի հիւսիսական կողմանց հռչակելոց, առաւել միամտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին եւ յիշխանաց եւ ի գաւառականացն պատուեալ լինէր, մանաւանդ ի սպարապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անտիոխ, ի մուտ ճանապարհին, որ զիրս առաջի եդեալ գրով ցուցանէր կայսերն որում անուն Թէոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր: Ուստի եւ հրաման ելանէր վայելուչ մեծարանօք զսուրբն Ակումիտ անուն կոչելոյ: Իսկ նորա զբազմութիւն աշակերտացն տարեալ ի քաղաքն Մելիտինացւոց յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին, եւ գլխաւոր աշակերտացն թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին, այր հաւատարիմ եւ ճշմարտապաշտ:

Եւ առեալ երանելւոյն զպատուական եպիսկոպոսն Դերջանոյ, որոյ անուն կոչէր Գինթ, եւ սակաւս յաշակերտաց անտի եւ ելեալ յանարւոյն դիմոսական, եւ բազում պատիւ գտեալ հասանէին ի թագաւորական քաղաքն Կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն: Եւ մտեալ առաջի պատուական աթոռոյն, յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին, յորոց եւ գտեալ շնորհս՝ հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելովք յեկեղեցւոյն եւ յարքունեաց եւ ի պատուական իշխանաց քաղաքին:

Եւ ապա յետ պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյից հանգամանս եւ առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք վասն մանկտւոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ եւ վասն ժանտագործ ազգին բարբարոսաց եւ եկեղեցեաց հաստատութեան եւ մեծամեծ պարգեւօք պատուեալ, վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտասիրին զարքունիսն անակնկալ թողոյր եւ երկրպագեալ ծիրանափառ օգոստականացն եւ սրբոյ կաթուղիկոսին եւ ընկալեալ ողջոյն յեկե-

ղեցւոյն եւ յերեւելի իշխանացն քաղաքին եւ ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս եւ ի կառս արքունատուրս: Եւ մեծաւ շքով եւ բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս ... եւ գային հասանէին ի ժամադիր կողմունս եւ անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք փութայր վաղվաղակի զհրամանն կատարել. եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեան կայսեր բազմութիւն մանկտւոյ ժողովել եւ նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յոր եւ երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, եւ ժողովելոցն քաղցրացուցանէր: ... Իսկ երանելւոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ՝ սակեալ եւ վճարեալ եւ զբազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ ծովացուցանէր զվարդապետութեան զխորութիւն եւ լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք:

124. Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա (Մեծին Մեսրովպայ) այր մի էրէց ազուան ազգով Բենիամեն անուն, եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարբարոս զբանս ազուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ եւ հաստատեալ կշռէր: Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց եւ յիշխանաց աշխարհին եւ յամենայն եկեղեցեաց, առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն, որոյ առաջնոյն Ենովք անուն էր եւ երկրորդին՝ Դանան, արք կրօնաւորք եւ յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն, զորս յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ անդէն զետեղէր եւ ինքն բազում աշակերտօք գայր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց, եւ հասեալ ի Նոր Քաղաքն (ի Վաղարշապատ)՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին եւ ամենայն բանակին, եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ յաջողութեանց շնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աւուրս ինչ. մխիթարէր վասն հոգեւոր անձուկն սփռելոյ:

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից եւ երթեալ իջանէր յաշխարհն, եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից՝ որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր՝ որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ՝ որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի:

Ապա հարցեալ ի նոցանէ՝ առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր. եւ նոցա երկոցունց զուգեցելոց եպիսկոպոսին եւ թագաւորին՝ յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ, տային եւս հրաման ի գաւառաց եւ ի տեղեաց իշխանութեանն իւրեանց, բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեան ածել եւ գումարել ըստ արժանաւոր եւ պատեհ տեղեաց դասս դասս դպրոցաց եւ ռոճիկս կարգել ի դարմանս:

Իսկ իբրեւ հրամանն այն արդեամբք եւ գործովք յանկ ելանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսին ի ձեռն առեալ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր: ... Դարձեալ առաւել եւս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից միամիտ փութով հրաման տայր սատանայակիր եւ դիւամոլ ազգին սաստիւ՝ թափել, զերծանել յունայնավար հնացելոցն եւ հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի. եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ եւ լցեալ զպիտոյն իւրեանց եւ զկամացն յօժարութիւն, ձեռնտու եւս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին. հրաժարէր ապա եւ ի թագաւորէն եւ յեպիսկոպոսացն եւ ամենայն եկեղեցւոյն Աղուանից. եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն՝ որում անունն Յովնաթան կոչէին, որոյ բազում յօժարութիւնս ի վարդապետութենէ էր գտեալ, եւ յանձն առնելով զնոսա եւ զանձն ամենապահ շնորհացն Աստուծոյ՝ խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից» եւ այլն:

Եւ առ այս ահա՛ քեզ վկայ պատմիչն Աղուանից Մովսէս Կաղանկատուացի, զորմէ տողէ յիւրումն պատմագրութեան (գիրք Ա, գլուխ Իէ). «Եւ եղեւ յետ վկայութեանն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի, բարբարոսական ազգ կողմանցն Արեւելից վերստին ի դիւցամոլար կռամոլութիւնս կործանեցան եւ բազում ուխտ ատրուշանաց կատարելով յարուցին հալածանս ի վերայ քրիստոնէից. մի ոմն (երանելին Մեսրովպ) ի նախ եղելոց վարդապետաց, որ ի Հոգւոյն Սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգացն առնէր՝ Հայոց, Աղուանից եւ Վրաց»:

Նոյնն եւս գիրք Բ-րդ, գլուխ Գ. «Յորում ժամանակի Թոդոս (Թէոդոս) Յունաց էր կայսր եւ Վռամշապուհ Հայոց թագաւոր եւ Յազկերտ Պարսից արքայ, Եսուաղէն Աղուանից թագաւոր՝ եկեալ երանելին Մեսրոբ յԱղուանս, մեծավաստակ ընտիր անաւթ հոգւոյն սրբոյ առ հայրապետն մեր Երեմիա եւ թագաւորն Եսուաղէն, որոց կամաւ առեալ յանձն զվարդապետութիւնն նորա ըստ շնոր-

հելոյ նմա յաստուածուստ պարգեւին, որ Հայոց եւ Վրաց ետ նշանագիր ի ձեռն նորա Հոգին Սուրբ. հաճեցան եւ ետուն մանկունս ընտիրս յուսումն. եւ զԲենիամին թարգման կոչեալ ի Սիւնեաց, զոր Վասակ ի ձեռն Անանէի եպիսկոպոսին արձակեաց եւ նոքա եկեալ առ Մեսրոբ եւ նոքաւք ստեղծ գնշանագիրս կոկորդախաւս, աղխաղուր, խժական խեցբեկագունի լեզուին Գարգարացւոց: Թողու աստ վերակացու զաշակերտն Յաւնաթան եւ ի տան թագաւորի կարգեալ քահանայս՝ դառնայ ի Հայս»:

125. Մեծն Վարդան վարդապետ Բարձրբերդցի ասէ ի ճառի անդ վարուց Յովհաննու Ուձնեցւոյ իմաստասէր հայրապետի. «Էր (Յօհան Ուձնեցի) որպէս գիրք պատմագրաց ցուցանեն՝ աշխարհաւ երկոտասաներորդ ի Գուգարաց, գաւառաւ չորրորդ ի Տաշրայ, բնակութեամբ ի նշանաւոր գիւղաքաղաքէն յՈւձնայ, ի յարենէ ծննդեան յազատ տանէ՝ քաջաբոյս գոլով մանուկ եւ ուշիմ ի վարժս կրթութեան հռետորական ուսման եւ փիլիսոփայական արուեստից պարապեալ. զտիս տղայութեան անցուցանէր առ հանճարեղս, քանզի գոյր յայնժամ այսպիսի ուսմանց դպրոցք յաշխարհիս Հայոց, Յունաց եւ Ասորաց ճարտարաց: Յաղագս որոյ զիմաստասիրական անունն կոչմամբ եւ արդեամբ զարդարեալ ամենայն առաքինութեամբ երթայր այնուհետեւ եռանդնոտ բնութեամբն եւ ի շարժմանէ հոգւոյն առ մեծ ճգնաւորն եւ անուանի վարդապետն Քռթենաւորն կոչեցեալ»:

Այս Քռթենաւորն կոչեցեալ Թէոդորոս անուն վարդապետ գտանէր յայնժամ կարգեալ վանահայր միանձանցն վանաց սրբուհւոյ Աստուածածնի, որ յոտին Արագած լերինն ըստ Միքայէլի Չամչեան (յԲ հատոր, համար 361): Այս մենաստան իցէ թերեւս վանքն Հառիճոյ անուանեալ յանուն սուրբ Աստուածածնի ի հիւսիսոյ կողմանէ յիշատակեալ լերին:

126. Եւ ահա այսօրինակ վաստակ սրբոց թարգմանչացն մերոց պայծառացոյց զգրական լուսաւորութիւն յուսումնարանի աստ Կաթուղիկէ Մայր եկեղեցւոյ Հայաստանեայց եւ յայլ նահանգս եւ գաւառս, ի Վիրս եւ յԱղուանս, յորս ժողովեալ զմանկունս եւ կարգեալ ուսուցիչս զարդարեցին զմարդիկ լուսաւորութեամբք աստուածային պատգամացն եւ գիտութեամբք վարդապետական եւ արտաքին մատենից. եւ այնպէս զարգացեալ աճեցաւ իմաստ բանին առ ամենեսեան առաւելապէս ի պահպանութիւն քրիստոնէական հաւատոյ:

Եւ թէպէտ զկնի փոխադրութեան հայրապետական Աթոռոյն ի Դուին եւ յԱնի Շիրակայ հանդերձ աշխարհական իշխանութեամբն

գտանէր դարձեալ վարժումն գրական լուսաւորութեան ի սոյն յայսմիկ տեղւոջ ի ժամանակս շինութեան նորա բազմութեամբ միաբանելոցն ի նմին, այլ նսեմ ըստ զօրութեանն. քանզի ընդ իշխանութեանցն փոխադրեցան եւ մեծանձն անձինք գիտնականք յայլ եւ այլ սահմանս աշխարհիս Հայոց՝ ի Շիրակ, ի Բագրեւանդ եւ ի Տարօն եւ յայլս. եւ մնաց այնպէս ուսումնարանն Կաթուղիկէ եկեղեցւոյ Հայաստանեայց ի տարաբախտ վիճակի մինչեւ ցանդրէն նորոգութիւն այսմիկ հայրապետական Աթոռոյ աստ ի Վաղարշապատ քաղաք առ Կիրակոս կաթուղիկոսիւ յամի 1441. ապա զկնի այնր վերստին սկսաւ ուսումնարանն վարդապետութեան աստ ի սուրբ Էջմիածին. եւ առաւել եւս ի ժամանակի անդ Մովսէս կաթուղիկոսի Սիւնեցւոյ, որ յետ բարեկարգելոյ զամենայն շէնս եւ զբարեկարգութիւնս մենաստանին վայելչապէս, հոգ տարեալ կառոյց եւ ուսումնարան ի սուրբ ուխտն Յովհանավանք, ուր ժողովեալ զմանկունս՝ կացոյց եւ վարժապետ նոցա զՄելքիսէթ վարդապետ, որ յայնմ ժամանակի եկեալ էր ի Լիմն անապատէ յԱթոռ այսր, առ որ յարեցան եւ ոմանք յերիտասարդ վարդապետաց Աթոռոյն, եւ օր ըստ օրէ զարգացեալ յուսումն գիտութեան ծաղկեցան եւ եղեն ականաւոր անձինք, զորմէ ականատեսն Առաքել վարդապետ Դավրիժեցի, (ի ԻԴ գլուխ, համար թղթոց 301). «Այլեւ հոգելից սուրբ վարդապետս տէր Մովսէս կարգեաց զդպրատուն ի մեծափառ սուրբ ուխտն Յօհանավանք, ուր ժողովեաց զմանկունս յոլովս եւ զամենեցուն զծախսն ինքն հոգայր եւ մանկունքն անզբաղ եւ անխափան ուսանէին զեկեղեցական ուսումն եւ զգիրս Աստուածաշունչս եւ զիմաստասիրականս, որք եղեն ամենեքեան արք պիտանիք եւ օգտակարք աշխարհի, վարդապետք, եպիսկոպոսք եւ աբեղայք եւ երիցունք» եւ այլն: Եւս անդ (ի գլուխ ԻԹ, համար թղթոց 390). «Այսու աղագաւ եւ Մելքիսէթ վարդապետս ելեալ ի Լմայ անապատէն եկն ի բարձրագահ Աթոռն ի Սուրբ Էջմիածին... եւ հանդիպեցաւ տեսութեան Մովսէսի կաթուղիկոսին եւ նորին աշակերտացն, յորոյ գալստենէ ուրախութիւն անպատում եղեւ ամենեցուն»: Այս Մելքիսէթ վարժապետ վարդապետ ի Վժան գեղջէ երկրին Երեւանայ էր աշակերտ Ներսէսի Մոկացւոյ, առաւել աղօթիւք եւ ջանիւք քան թէ դասաւութեամբ ուսաւ մակացութիւնսն եւ ուսոյց բազում աշակերտաց զՍահմանաց գիրսն զՊորփիւրիոն, զՍտորոգութեանցն, զՊէրիարմէնիասն եւ զայլսն ըստ կարգի յուսումնարանի անդ Յօհանավանաց եւ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի:

Զկնի վախճանի յիշեալ Մելքիսէթ վարժապետ վարդապետի ի վանսն անդ Անանիա առաքելոյ՝ որ յԵրեւան, յամի 1631, եկաց դասատու յառաջադէմ աշակերտն նորա Սիմէոն վարդապետ Ջուղայեցի, յետոյ որոյ Յովհաննէս եպիսկոպոս Թմօքեանց կամ Սահակեանց Կարբեցի, զոր վերակոչեաց յանապատէն Լմայ յէջմիածին Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի, ըստ պատմելոյ Զաքարիա սարկաւագի Յօհանավանից եւ այլք յոլովք զկնի միմեանց:

127. Այս ուսումնարան ի Յօհանավանք ոչ տեւեաց կարի ընդ երկար, քանզի որպէս կարծի՝ ի պատճառս երբեմն երբեմն հալածանաց եւ գերութեանց եւ ասպատակութեանց փոխադրեցաւ անդրէն յայս պատրիարգական մենաստան. եւ յօրէ անտի շարունակեցաւ աստ ուսումն վարդապետութեան ի ժառանգաւորս Աթոռոյս. բայց չինուած ուսումնարանին՝ թէ յոր կողմ մենաստանիս եւ որպիսի՞ չինուածովք՝ չէ յայտ. այլ որպէս երեւի՝ լինէր այնպիսի վարժումն, ուսումն ի միում ի մեծամեծ սենեկացն այսր մենաստանի մինչեւ ցժամանակս Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ, որ հոգ տարեալ եւ այնմ՝ ետ կառուցանել ի հիւսիսակողմն տաճարին ի միջոցս երկուց պարսպացն յարեւելս անդ մոմատան՝ բաժանեալ ի նմանէ հաստատուն որմով, եւ ժողովեալ անդր զմանկունս ժառանգաւորս տաճարին՝ կարգեաց նոցա ուսուցիչս. ուրանօր շարունակեցաւ ուսումն եկեղեցական ընթերցուածոց եւ երաժշտութեանց եւ ինչ ինչ արտաքին դասասացութեանց՝ քերականութեան, ճարտասանութեան եւ տրամաբանութեան: Լինէր յայնժամ եւ ուսումն բարձրագոյն վարդապետական գիտութեանց՝ այն է, դրական աստուածաբանութեան եւ մեկնութեան Սուրբ Գրոց: Յայսմիկ ուսման վարդապետաց եւ սարկաւագաց վարժապետ յատկացեալ էր ականաւոր մեծանուն եպիսկոպոսն Պետրոս Բերթումեանց կամ Աղամալեանց, Սահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ եւ քաղցրանուագ երաժիշտ: Իսկ ի միւսումն ուսումնարանի յիշատակին վարժապետք՝ Յօհան եպիսկոպոս, Ստեփաննոս եպիսկոպոս, Ղազար վարդապետ Աստապատցի, որ յարձանագրութիւնս շիրմաց մենաստանին սրբուհւոյն Հռիփսիմեայ, Թադէոս եպիսկոպոս ատենադպիր Ղուկաս կաթուղիկոսի Կարնեցւոյ, Նիկողայոս եւ Մարգար եպիսկոպոսունք եւ այլք ոմանք յեպիսկոպոսաց եւ ի վարդապետաց, որք նշանակին յօրագրութեան մեծի Աթոռոյս:

128. Այս վերոյիշեալ տեղի ուսումնարանին տեւեաց մինչեւ ի ժամանակս կաթուղիկոսութեան Դաւթի Էնէկէթեցւոյ. այլ զկնի այնր լքեալ զայն տեղի վասն գիճութեան եւ խախուտ գոլոյ շի-

նուածոցն, պատրաստեցին տեղի ուսման մանկանցն զվերնայարկն սրահի դրանն Տրդատայ, որ յարեւմտակողմն մեծի տաճարին: Ապա զկնի քանի ինչ ամաց՝ այն է, յամի 1813 ի կաթուղիկոսութեան Եփրեմայ նոր ի նորոյ կառուցին ուսումնարան բազմասենեակ յարեւելս տաճարին սրբոյ ի վերայ սենեկացն, որք առ ներքին պարսպաւ ի տեղւոջ կաթուղիկոսարանին Փիլիպպոսի Հաղբակեցւոյ, ուր շարունակեաց ուսումն ըստ առաջին կարգին մինչեւ ցամ Տեառն 1838, ցնորոգ կարգադրութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ հաստատութեամբ իսկական ստորագրութեան Ն.Կ.Մ, ի 11-էն մարտի 1836 ամի: Եւ ահա ըստ ներկայ դրութեան միջոցաց մեծի Աթոռոյս ուսանին ի նոյն ուսումնարանի աշակերտք ժառանգաւորք եկեղեցւոյ ի Հայ եւ ի Ռուս լեզուս՝ ըստ յատկացեալ ժամուցն պատշաճ աւուրց եւ ըստ բաժանմանց ուսանելի առարկայիցն:

ՀԱՏՈՒԱԾ Ե

Կալուածք տան կաթուղիկոսարանի, յորոց ելանէր եւ ելանէ հարկաւոր պիտոյք ծախուց նորա եւ հոգեւորական միաբանելոցն ի նմին

129. Ի սկզբան անդ լուսաւորութեան բովանդակ ազգի Հայոց առ ժամանակօք Մեծին Տրդատայ Խոսրովեան եւ յետ կառուցանելոյ զմեծն տաճար Կաթուղիկէ Էջմիածին եւ առ նմին զտուն կաթուղիկոսարանի, անտարակոյս եմք թէ՝ պարգեւեցան ի պէտս ծախուց կառավարութեան եկեղեցւոյն եւ տան կաթուղիկոսարանին բաւական կալուածք գիւղից եւ գերդաստանաց ի մեծէն Տրդատայ արքայէ եւ ի նախարարացն իսկ. եւ թէպէտ չգտանի որոշակի ժողովեալ ծանօթութիւն ինչ առ այս նպատակ ի նախնեաց, բայց մասնաւորապէս գտեալքն ի պատմաբանս եւ ի դիւանական թուղթս աշխարհակալ իշխանաց եւ դատաւորաց բաւականասցին մեզ առ այժմ ըստ յետագայ տեղեկութեանցս:

Ի կենդանութեան իսկ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին պարգեւեցաւ նմա յարքայէն Տրդատայ ի սեպհական կալուած Արամօնս գիւղ ի Կոտայս գաւառի, որոյ եւ յետկար վճռանն յարքայէ պահիւր ի տան անդ կաթուղիկոսական մինչեւ ցժամանակս Զ-րդ Յովհաննու կաթուղիկոսի, զորմէ նա ինքն պատմէ յայս ձեւ օրինակի. «Իսկ զկնի սորա (Յովհաննու Օձնեցւոյ) կացուցանեն յԱթոռ հայրապետութեան զԴաւիթ ի գեղջէն Արամօնից, որ ի Կոտայսն գաւառի: Այս գիւղ սեպհական էր տան կաթուղիկոսարանի՝ նախքան զչարչարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ, նմա իսկ հոգեցատուր պայմանաւ ընձեռեալ, որոյ եւ յետկար վճռան պահի մինչեւ ցայսօր ժամանակի»:

Պարգեւեալ էր թերեւս յարքայէն Տրդատայ եւ Թիլն աւան, որ ի գաւառին Եկեղեաց, ի կալուած սրբոյն Գրիգորի կամ Արիստակեայ որդւոյ նորին, զորմէ Բուզանդ (դպրութիւն Գ, գլուխ Բ). «Եւ եդին զնա (զԱրիստակէս) զԵկեղեաց գաւառի ի Թիլն աւանի ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ»: Առ որ եւ Խորենացին (հատոր Բ, գլուխ 88).

«Իսկ զմարմին սրբոյն (Արիստակեայ) բարձեալ աշակերտաց նորին, բերին ի դաւառն Եկեղեաց հանգուցանել ի Թիլս իւրումն աւանի»:

Ըստ այսոցիկ եւ բազում կալուածք էին տան կաթուղիկոսարանին, զորոց միով բանիւ բացայայտ տողէ Խորենացին, քանզի Վռամ արքայ Պարսից ըստ անիրաւ բողոքանաց նախարարացն զԱրտաշրէ՝ յետ ունելոյ անդէն ի Պարսս զնա ինքն զԱրտաշիր արքայ Հայոց եւ զամենայն զտուն նորա գրաւելոյ յարքունիս, հրամայէ նոյնպէս եւ վասն սրբոյն Սահակայ Պարթեւի. «Նոյնպէս եւ զՄեծն Սահակ եւ զտունն կաթուղիկոսական ունել յարքունիս» (հատոր Գ, գլուխ 64): Եւս ի նոյն հատոր ի յաջորդ գլուխն, յասելն. «Եւ զՄեծն Սահակ արձակեալ՝ թողու ի նա գեօղս սակաւս ի նորին տանէ, զի նստցի միայն յինքեան» եւ այլն:

130. Ի վախճան ութերորդ դարու ոստիկանն Խուզիմա ընչաքաղցութեամբ կամէր յինքն կորզել զկալուածս տան կաթուղիկոսարանին, այլ հայրապետին Յովսէփայ ոչինչ տուեալ տեղի ագահութեան նորա՝ ըմբռնի ի նմանէ եւ դնի ի բանտի. եւ հուսկ ապա տարապարտ զրկանօք յինքն կորզէ ոստիկանն զԱրտաշատ եւեթ, զորմէ Զ-րդ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ. «Եւ տեսեալ (Խուզիմա) զգեղեցկութիւն մեծամեծ դաստակերտիցն տան կաթուղիկոսարանին՝ զԱրտաշատն եւ զԿաւակերտն եւ զՀոռոմոց մարգ հանդերձ նոցունց ագարակօք եւ դաւաճանեալ ի չար ցանկութենէն եւ ի դիւամոլ ագահութենէն ուժգին իմն դժուարութեամբ յինքն ի հայրապետէն Յովսէփայ խնդրէր տալ նմա զմեծ դաստակերտս իբր ի պատճառս գնոց արծաթոյ: Իսկ մեծի առնն Աստուծոյ զմահ ընդ կեանս խառնեալ՝ ամենեւին ո՛չ տայր տեղի չար եւ ապիրատ բանից նորա: Իսկ ոստիկանն առ մղձկեալ սրտին դնէ ի բանտի զայրն Աստուծոյ եւն... Եւ այսպէս տարապարտ զրկեալ գտանէր (Յովսէփ կաթուղիկոս) յԱրտաշատէն յայնմանէ եւ առ յապա»:

Պատմաբան կաթուղիկոսն Յովհաննէս Զ-րդ ի ժամանակի հայրապետութեան իւրոյ գնէ զԲիւրական գիւղ յստորոտի անդ Արագածու եւ կառուցանէ ի նմա շինուածս եւ զեկեղեցի իսկ՝ զորմէ գրէ ինքն յիւրումն պատմութեան. «Եւ դարձեալ չու յուղի անկեալ չոգաք մինչեւ ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ գանձի գնոյ, ուր եւ շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք: ... Էին ոմանք եւ հեթանոսք (մահմէտականք) ի բնակչաց տեղւոյն (Բիւրականայ) հողագործ մշակութեան պարապեալ եւ հարկս մեզ հարկանէին եւ իբրեւ այս եղեւ» եւ այլն:

131. Այսոքիւք կալուածովք եւ այլ կամաւոր նուիրանօք հաւատացելոցն կառավարէր տուն կաթուղիկոսարանին (թէեւ յայլ եւ այլ տեղիս փոխադրեցաւ) եւ հոգեւորական նմին պատկանեալ միաբանութիւնն աստ յԱթոռ էջմիածնի ի Վաղարշապատ քաղաքի, քանզի զկնի փոխադրութեան կաթուղիկոսական Աթոռոյն ի Դուին յամի 452, պէտք ծախուց կառավարութեան միաբանական ուխտի հոգեւորականացն հաստատելոց աստէն անպակաս լինէր ի մերձակայ գաւառացն հոգեւոր եւ կամաւոր նուիրանօք ժողովրդոցն եւ մանաւանդ ի կալուածոց սեպհական գաւառաց եւ գեօղից իսկ նախարարացն Հայոց՝ ջերմեռանդօրէն պաշտպան կացելոցն այսմ ուխտի, զորմէ ընդարձակ գրէ Ղազար Փարպեցի ի բողոքական թուղթս իւր առ Վահան Մամիկոնեան՝ այս օրինակ. «Բայց սիրէին երեքեան եղբարք զվանսն սրբոյ Կաթուղիկէի պտղովքն եւ ամենայն պիտոյիւք, որոց իւրաքանչիւր ուրուք տուրն յայտնի էր եւ գրով մնաց ի տեղւոջն, որք արդարեւ քո տեառն կամացդ դոքա երեւեցան կամակատարք. վասն զի յօրէ յորմէ հետէ դու տէ՛ր ըստ քո անարգամեծար խնամոցդ յանձնեցեր զիս քո ընտանեաց, դոքա երեւեցան յիս հրամանակատարք բանի քում՝ ուրոյն ըստ կամի զպտղատրութիւն տեղւոյն հատուցանելով, զի տրտում եմ անմխիթար մինչեւ ի մահ, որ նման գայլոց յարձակեցան յարարս իմ եւ գիշատեցին յանխնայ, տեսեալ զիս թէ մերժեցայ յաչաց քոց: Եւ արդ՝ իմով ընչիւք շրջին պճնեալք ծաղր առնելով զիս. այլ որ ինչ ի տեղւոջդ մնաց իմ, ուրա՛խ եմ եւ ցնծամ, զի ի սուրբ եւ ի հոգեւոր տեղւոջ մնաց...: Սակայն ես նման մեղուի բերելով յամենայն կողմանց (զտուրս ժողովրդոց) բաւական լինէի եւ ծախողացն ի մթերից տեղւոյն (այսր մենաստանի), բայց դու տէ՛ր՝ այր երկարայուշ ես եւ անմոռաց, մանաւանդ թէ՝ ըստ ի քեզ հոգասիրութեանդ, քանզի յոլով նորա արբանեկեալ էր զպէտս տեղւոյդ. հարցցի՝ թէ կայ ուրեք, եւ ասասցի. այլ կարգեալքն ինձ ըստ տարւոյ տեառն Ներսեհէ եւ Հրահատայ ի պէտս դարմանոյ եւ հանդերձոյ եւ ձիոյ՝ յայտնի է. նոյնպէս եւ ի քո տեառն յեղբօրորդեացդ եւ այն իսկ շատ լինէր ինձ և բաւական. այլ երբէք եւ յաւելորդացն ի պէտս տեղւոյդ ծախիւր յիմոցն: Բայց բերեալքն իմ յԱղուանից եւ ի Վրաց եւ Սիւնեաց եւ յԱրշարունեաց. եւ որ ի դոցունց իսկ ի քո տեառն եղբօրորդեացդ, ամենայն իւրաքանչիւր ուրուք տուրն որոշողութեամբ մնաց ի տեղւոջն (ի մենաստանի Կաթուղիկէ եկեղեցւոյ) գրով եւ զիս հանին մերկ եւ թշնամանօք յամենայն արարելոց, զոր ի մանկութենէ արարեալ էի. քանզի յօրէ յորմէ հետէ տարար դու տէ՛ր զիս ի տեղիդ, մինչեւ

յօր հալածման իմոյ ի մտից տեղւոյդ եւ կամ յերախայրեաց մինչեւ ցդրամ մի յանձն իմ ո՛չ էր յարեալ. եւ յիրս իմոց պիտոյից ումեք ո՛չ էր տուեալ եւ գիտեն զայս բնակեալքն ընդ իս, այլ առաւելագոյն այր մի Ակիթ անուն, որ եկեալ ի տեղիդ ի Գարդմանայ վանաց ի նմին աւուր, յորում հիմն արկաւ տեղւոյդ եւ մինչեւ ցգնալն իմ ի տեղւոջդ էր» եւ այլն:

132. Այլ առաւել քան զվերոյիշեալսդ ընթեռնուլ արժան է զբան Ուրհայեցւոյն Մատթէոսի զկալուածոց տան կաթուղիկոսարանին Շիրակայ. «Եւ այսպիսի օրինակաւ սուգ ունէր տէր Խաչիկ (կաթուղիկոս) ի սրտի իւրում եւ յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տանն Հայոց, նաեւ զխափանել Աթոռոյ թագաւորութեանն յազգէն Բագրատունեաց եւ գալ ծառայել... եւ աղքատութեամբ տիրապէս ելայ յաթոռոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. վասն զի յորժամ էր տէր Պետրոս յԱթոռ հայրապետութեանն եւ ի Հայաստան աշխարհին՝ ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց Շ (հինգ հարիւր) գեղ անուանի եւ մեծանիստ եւ շահաւէտ ընտիր ընտիր. նոյնպէս եւ եպիսկոպոսս ԵՃ (հինգ հարիւր) փառաւորք եւ գաւառապետս ի վերայ ԷՃ (եօթն հարիւր) թէմի ԺԲ [12] եպիսկոպոսս եւ Դ [4] վարդապետս. ի տանն հայրապետին անպակաս լինէր եւ Կ (60) էրէց ի կրօնաւորաց եւ յաշխարհականաց ԵՃ [500]: Եւ չէր նուաստ Աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեան Հայոց. եւ նաեւ զարդարանք եկեղեցեացն եւ տանն հայրապետութեան բազում եւ անհամար եւ հրաշալի մեծութեամբ լցեալ, զորս յառաջին թագաւորաց տուեալ հաստատութեամբ առաջին հայրապետացն, որ գայր հասանէր մինչեւ ի տէր Պետրոս (կաթուղիկոս) եւ առ նովաւ խափանեալ լուծաւ» եւ այլն: Առ այս յարէ Արիստակէս Լաստիվերտցի ի ԺԴ գլուխ. «Ապա ի զեղջ եկեալ (Յունաց) արձակեցին զնա (զԽաչիկ կաթուղիկոս) առանց հարկի՝ տուեալ նմա գրով եւ ոսկի մատանեաւ զոր ի Հայս՝ իւրեանց տեղիք էին, եւ երկու վանս ի Տարընտայ»:

Ապաքէն այսու դրութեամբ կառավարէր մենաստանն Կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի եւ կաթուղիկոսարանն իսկ՝ թէ ի Վաղարշապատ, թէ ի Դուին եւ յԱնին Շիրակայ. իսկ մենաստանն ընդ առանձին խնամարկութեամբ քորեպիսկոպոսացն որ յանուն Արարատեան նահանգի յիշատակելոցն ի վերոյ ի ծանօթութեան անդ յերես 22, շատացաւ արդեամբք առաջնորդական հասութիից ի ժողովրդոց վիճակին, որքան տեւեաց եպիսկոպոսութիւնն Արարատեան թէմի յանուն Կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի:

133. Հուսկ ապա անդրէն ի նորոգիլ ըստ առաջին վայելչութեանն մենաստանիս այսորիկ՝ փոխադրելով ի նմա պատրիարգական աթոռոյն, համաձայն հաւանութեամբ ազգին առ Կիրակոս կաթուղիկոսիւ յամի 1441, աղբերացան վերստին պիտոյք ծախուց կառավարութեանն ի կամաւոր նուիրանաց ժողովրդոց ազգին՝ հեռաւորաց եւ մերձաւորաց, յորոց ստանային կաթուղիկոսունք զայն նուէր արդեանց միջնորդութեամբ վարդապետաց իւրեանց՝ առաքելոց առ ժողովուրդսն հանդերձ սրբազնագործ մեռոնաւն ի վերաքննութիւն հոգեւորական գործոց, եկեղեցեաց եւ նոցին ժողովրդոց, որպէս ցուցանեն պատմիչք եւ կոնդակք կաթուղիկոսաց:

134. Ի վերայ այսր արդեանց նուիրանաց ժողովրդեանն յաւելին կաթուղիկոսունք եւ զարդիւնս անշարժ կալուածոց գնելով զգեօղս, տնկելով զայգիս, ստանալով զջրաղացս, զբրնձահանս եւ զայլս այսպիսիս, որով առաւել դիւրացաւ կառավարութիւն այսր պատրիարգական մենաստանի, տաճարին սրբոյ ուխտի հոգեւորականացն ի նմին:

Տասներորդ Գրիգոր կաթուղիկոս Ջալալբէկեանց Մակուեցի գնէ[1] *զվեց դանկ մուլքն այսր Վաղարշապատ գեղջս ի սեպհականութիւն Աթոռոյ Էջմիածնի ի Սէյիդ բէկ կոչեցեալ այլազգւոյ, որ յայնժամ տիրէր գեղջս այսորիկ. եւ առնու հաստատուն գիր դատաւորական՝ ստորագրութեամբ եւ կնքով Զամանադին անուն ղազիյին Երեւանայ ի թուին տաճկաց 832:*

Զկնի ապա ի նոյն թուականի ոմանք յազգականաց յիշեալ Սէյիդ բէկին երկիցս վէճ յարուցանեն ընդ կաթուղիկոսին վասն գեղջս, զորս եւ բաւականացուցանէ կաթուղիկոսն դրամովք եւ ի նոցունց եւս առնու զգիր հաստատութեան ձեռամբ նոյն դատաւորին Երեւանայ: Յայս թուղթ նշանակին սահմանք անդաստանաց այսր գեղջ. յարեւելից՝ ղօռուղն (խոտատեղին ընդարձակ՝ որ նոյնպէս կալուածք է Աթոռոյս), ի հիւսիսոյ՝ քարաքիթ եւ Մոլլադուրսուն գիւղն՝ այն է, ցստորոտն խոնարհ առապարին, որ այսր քան զառապարն Օշականայ՝ այնպէս, զի եւ փոքրիկ ծովակն որ մերձ առ Մոլլադուրսուն գիւղ՝ յարեւելից նորա, անկանի ի բաժին անդաստանաց Վաղարշապատու, յարեւմտից՝ գետն Քասաղ. իսկ ի հարաւոյ՝ փոքր բլրակն որ ի ռամկաց **Քիւլթափայ** *կոչի:*

---

[1] Ըստ հասարակեալ կանոնի կողմանցս՝ իւրաքանչիւր գիւղօրէից սահման վեց բաժին որոշողութեամբ յատկանայ. ուստի ըստ այսմ բաժանման վաճառեն եւ գնեն զսահման գիւղօրէից, զոր այլազգիք կոչեն **շեշտանկ** կամ **ալթըն ահճէ**, այն է՝ վեց ստակ՝ մասն:

Զկնի այնր ի թուականին տաճկաց 835, յառնէ ոմն այլազգի Ռուստամ անուն որդի Ամիրշքեանի եւ թոռն Ամիր-Սմբատայ եւ տիրէ գեղջս Վաղարշապատու բռնութեամբ. դարձեալ նոյն Գրիգոր կաթուղիկոս գնէ ի նմանէ դրամովք զայս գիւղ եւ զվեց գիւղօրայս եւս ընդ նմին՝ զԱշտարակ, զԲաթռինճ, զՆորագաւիթ, զԱղաւնատուն, զՔիրաչլու եւ զՄօղնի եւ տայ հաստատել զսեփհականութիւնն այնց յանուն Աթոռոյ Էջմիածնի դատաւորական գրով ի նոյն թուին տաճկաց 835:

Եւ զկնի անցանելոյ ամաց բազմաց եւ անդրէն աւերութեանց երկրիս Արարատայ պէսպէս փոփոխութեամբք իշխանութեանն Երեւանայ, ի ժամանակի անդ մեծին շահ Ապասայ արքայի Պարսից՝ կարգի իշխող Երեւանայ Ամիրգիւնէ խանն եւ տիրէ գեղջս Վաղարշապատու. ուստի վարդապետք Աթոռոյ Էջմիածնի դիմեն առ նա եւ խնդրեն զայս գիւղ՝ ցուցանելով նմա եւ զթուղթսն դատաւորական՝ զհոգացեալսն ի Գրիգոր կաթուղիկոսէ Մակուեցւոյ առ այս նպատակ: Խանն Ամիրգիւնէ ըստ քաղցր եւ հայասէր բարուցն դարձուցանէ զգիւղն անդրէն յիշխանութիւն Աթոռոյն տալով եւ զհաստատուն թուղթ յիւրմէ սաստիւք հանդերձ՝ չլինել ուրուք ձեռնամուխ յայն գիւղ ամենեւին, ի թուին տաճկաց 1022, յամի 1612:

Իսկ յետ վախճանի Ամիրգիւնէ խանին որդի նորա, որ յաջորդեաց յիշխանութեան հօրն, տիրեաց գեղջս եւ ինքն ստանայր զարդիւնսն: Եւ յետ սորա այլք ոմանք ի սերնդոց առաջին տեարց գեղջս՝ մինչեւ ցժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսի Հաղբակեցւոյ. որոյ հոգ յանձին կալեալ՝ խնդրամատոյց լինի առ շահ Ապաս Բ-րդ արքայ Պարսից եւ իրաւաբան վկայութեամբ իշխողին Երեւանայ Խոսրով անուանելոյ, անդրէն սեպհականէ ի կալուած Աթոռոյն՝ հրովարտակաւն նոյն շահ Ապասայ, որ ի թուին տաճկաց 1060 (1650):

Ի ժամանակէ անտի ցՅակոբ կաթուղիկոս Ջուղայեցի առանց վիճոյ ուրուք տիրեաց գեղջս այսորիկ Աթոռն Էջմիածնի. եւ թէպէտ ոմանք այլազգիք ի սերնդոց առաջնոցն եւ այլք յարուցին զվէճս ընդ Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի եւ ընդ Սիմէոն կաթուղիկոս Երեւանցի, այլ ոչինչ զօրելոյն զկնի, եղեն եւ պատճառ առաւել հաստատուն սեպհականութեան այնր՝ յանուն Աթոռոյ Էջմիածնի ըստ ամենայն պարագայիցն, որոյ սեպհականութեանն վկայագիրք, վճռագիրք եւ հրովարտակք արքունի գտանին ի դիւանատան մեծի Աթոռոյս:

Օշական գիւղ

135. Այսր գեղջ հինգ դանկ՝ այն է, զհինգերորդ մասն ի վեցից գնէ դրամովք Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի յինն նուագս յայլեւայլ տեարց գեղջն ի 1050 (1640) թուականէն տաճկաց ց1055 թիւն՝ ինն հատոր հաստատեալ գրութեամբք. իսկ զմնացեալ վեցերորդ մասն գնէ Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի հանդերձ վեց դանկ մլքովն անդաստանի Մանկանոց կոչեցեալ աւեր եկեղեցւոյն՝ մերձ եղելոյն յՕշական յարեւմտից հիւսիսոյ, որոց վասն գոն հաստատուն գրուածք դատաստանական ի թուին տաճկաց 1078 (1667):

Զկնի այսր այլազգիք ոմանք չորիցս անգամ վէճ յարուցանեն, այլ նոյն Յակոբ կաթուղիկոս վասն մասնաւոր բաժանորդութեան նոցա ի մասին գեղջս, տուեալ դրամ՝ առնու ի նոցունց եւս գիր ապահովութեան:

Սահմանեզերք անդաստանաց գեղջս այսորիկ նշանակին ի մեծ հին կոնդակաձեւ վկայագրին եղելոյ ի թուին տաճկաց 894, ի հարաւակողմն՝ աւերակն Ղարաքիլիսէ կոչեցեալ, որ մօտ ի Հաճիլար գիւղ, յարեւմտից՝ գետակն Շաղվերթու, այն է՝ Փարպւոյ, ի հիւսիսոյ՝ Թաքեայ կոչեցեալ գիւղն եւ ճանապարհն Կարբւոյ եւ Առապարն:

Ի թուականին Հայոց ՌՃԾԱ (1702), բովանդակ բնակիչք գեղջս Օշականայ անիրաւ պահանջողութեամբ իշխողաց երկրիս անկեալ ի ներքոյ պարտուց՝ խնդրեն աղերսանօք յԱստուածատուր կաթուղիկոսէ Համատանցւոյ հարիւր յիսուն թուման դրամ ի վճարել զպարտս իւրեանց եւ խոստանան հատուցանել այնուհետեւ յամենայն եկամտից սերմանցն անդաստանաց իւրեանց ի տասնէն զերկուս, զի յառաջն վճարէին ի տասնէն զմի. առնուն զդրամն եւ տան թուղթ այնու պայմանաւ՝ հաստատեալ ստորագրութեամբ դատաւորացն Երեւանայ ի թուին տաճկաց 1134, յամի 1721: Այսոքիկ իրաւամբք զայս գիւղ եւս սեպհականէ ինքեան ի կալուած Աթոռն Էջմիածնի եւ ունի ցարդ շարունակաբար:

Մասպարա գիւղ

136. Մասպարա անուանեալ գեղջս այսորիկ, որ յստորոտս Արագած լերին յարեւմտից նորա, զերկու եւ կէս դանկն գնէ Թարխան անուն ոմն հայազգի Ոսկանեան ի բնակչաց գեղջս՝ ի Մուհամատ աղայէ որդւոյ Մուղատտամ Բատր խանի ի 1066 թուին տաճկաց եւ

ի յաջորդ ամին, այն է յամի 1656, ի ժամանակի անդ Յակոբ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ ընծայէ զայն բաժինսն զգնեալսն յիւրմէ յանուն Աթոռոյ Էջմիածնի հոգեկան նուէր եւ տայ հաստատել զայն ի վերայ նոյն առաջին պայմանագրութեանն ստորագրութեամբ եւ կնքով չեխիսլամին ի թուին տաճկաց 1067:

Զկնի ութն ամաց Ըռզաղուլի ոմն այլազգի որդի Ալփաւուտ Իբրահիմ խալիֆայի վէճ յարուցանէ ի մասին այսր բաժնի՝ թէ իմ է եւ այլն. ընդ նմա գնացեալ ի դատարան տաճկաց՝ տան նմա զսակաւ ինչ դրամս յԱթոռոյն եւ առնուն ի նմանէ դատաւորական գիր ապահովութեան ի թուին տաճկաց 1075:

Աղէքսանդր կաթուղիկոս Ջուղայեցի ի 1121 թուին տաճկաց, յամի 1709՝ գնէ զերիր մասն միոյ դանկի գեղջս ի Մհեր անուն հայազգւոյ ումեմնէ Ոսկանեան Երեւանցւոյ հաստատ պայմանագրով: Ի ՌՃԿԳ թուականին Հայոց, յամի 1714, թոռունք յիշեալ Մհերի եւ Մուզաբարի որդիք Պէկլարն եւ Մկրտիչն ընկալնուն յԱթոռոյ զդրամ եւ անուամբ գրաւի վաճառեն Աթոռոյն զկէս դանկ մուլք գեղջս. եւ այնու մնայ այն սեպհական կալուած Աթոռոյն:

Սոյն յիշեալ երկոքին եղբարք Պէկլար եւ Մկրտիչ ի ՌՃԿԸ թուականին Հայոց եւ տաճկաց 1132, յամի 1719 վաճառեն զմի դանկ մուլք գեղջս Աթոռոյն՝ գիտութեամբ խօջայ Յակոբջանին ի ժամանակի անդ Աստուածատուր կաթուղիկոսի Համատանցւոյ. իսկ նա ինքն Աստուածատուր կաթուղիկոս եւ զմնացեալ բաժինսն գնեալ դրամովք սեպհականէ յանուն Աթոռոյն: Այսու օրինակաւ զբովանդակ եկամուտս արդեանց վեց դանկ մլքին գեղջս ստանայ Աթոռն Էջմիածնի եւ ունի ցարդ հաստատուն վկայագրովք եւ պայմանագրովք առաջին տեարց այսր գեղջ, որոյ եւ անդաստանացն սահմանեզերք նշանակին յայն գրուածսն ըստ այսմ. ի մի կողմն Ղարախաչ անուանեալ տեղին, ի միւս կողմն՝ փարախն ոչխարաց եւ ի միւսն՝ ճանապարհն Ապարանու (Նգայ), իսկ ի չորրորդ կողմն՝ Ղըզըլ Օրան կոչեցեալն:

Եղիվարդ գիւղ

137. Այսր գեղջ զչորս եւ կէս դանկն պարոն Յակոբջանն Սեթեան ընդ այլոց արդիւնաբեր տեղեաց ընծայէ Աթոռոյ Էջմիածնի հոգենուէր յիշատակ ի թուին տաճկաց 1069, յամի 1658: Զայս գիւղ ի բազում ժամանակս պարսիկ խանք իշխողք Երեւանայ բռնացեալ յափշտակեն եւ առ ժամանակ մի եւս աւեր մնայ առ ի չգոյէ բնակ-

չաց: Ապա ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսին Երեւանցւոյ՝ այն ինչ իշխողն Երեւանայ Հիւսէյին Ալի խան կամէր նորոգել զայն գիւղ բնակչօք եւ իւրացուցանել, նա ինքն Սիմէոն կաթուղիկոս հաստատուն պայմանագրովն, որ ի Յակոբջանէն Սէթեան եւ այլ հաստատուն թղթովք հաճեցուցեալ զՀիւսէյին Ալի խանն՝ գրաւէ անդրէն ընդ իշխանութեամբ Աթոռոյն զչորս եւ կէս դանկն ի թուին Հայոց ՌՄԺԷ, յամի 1768, զոր եւ ունի ցարդ Աթոռն եւ ստանայ զմուտս արդեանցն:

Մօղնի գիւղ

138. Այսր գեղջ գվեց դանկն գնէ Գրիգոր կաթուղիկոսն Մակուեցի յամիր Ռուստամ այլազգւոյ որդւոյ Ամիրշքեանի ի թուին տաճկաց 835. հաստատուն պայմանագրովք՝ կնքով եւ ստորագրութեամբ զազիյից եւ շեխիսլամաց. եւ այնպէս սեպհականէ զայս գիւղ յանուն Աթոռոյն:

Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի տեսանելով զարիաջան աշխատութիւն Մարտիրոս վարդապետի՝ առաջնորդի վանաց Սրբոյն Գէորգայ գինաւորի, որ յայս գիւղ, ի կառուցումն փառացի տաճարի սրբոյն, շնորհէ զայս գիւղ ամենատեսակ եկամտովքն նմին Մարտիրոս վարդապետի յանուն վանացն ի պէտս շինութեան տաճարին եւ կառավարութեան ուխտի նորին:

Վէճ յարուցանեն վասն գեղջս Ապտլբաղի տաճիկ ոմն որդի Ալիտօստի Երեւանցւոյ, եւ կինն իսկ Ապտլբաղի՝ ի թիւսն տաճկաց 1071, 1086, յամսն 1660, 1675. թէ մեր է այս գիւղ. մինչեւ բերեն եւ հրովարտակ յարքայէն Պարսից յԲ շահ Ապասէ, այլ ի քննութեան անդ յԵրեւան ի դատարանի ունայնանայ վէճ վերոյիշելոցն եւ հաստատի իրաւունքն սեպհականելոյ զայս գիւղ յանուն Աթոռոյ դարձեալ՝ առ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսիւ հանդերձ հաստատութեան գրով դատաւորին Երեւանայ ի նոյն թիւ 1087:

Իսկ ի թուականին Հայոց ՌՄԹ, յամի 1760 Աղէքսանդր վարդապետ վանահայր այսր մենաստանի Սրբոյն Գէորգայ գաղտ ի Ե Յակոբ կաթուղիկոսէ Շամախեցւոյ տայ զբովանդակ մուլք՝ զեկամուտ գեղջս այսորիկ ցԻբրահիմ աղայն, որ էր նազիր ի դրան Հիւսէյին Ալի խանին Երեւանայ, որպէս զի յամենայն ժամանակի ի հարկաւոր դէպս օգնական եւ պաշտպան լինիցի նմա. այսու անիրաւ պարգեւատուութեամբ յիշեալ վարդապետին ստանայ զարդիւնս այսր գեղջ Իբրահիմ աղայն յութնամեայ ժամանակս՝ մինչեւ ցՌՄԺԷ թուա-

կանն Հայոց, ց1768: Ապա Սիմէոն կաթուղիկոս Երեւանցի իրազգած եղեալ այսմ անիրաւ յափշտակութեան՝ անդրէն ստանայ ի սեպհականութիւն Աթոռոյն. եւ յօրէ անտի ցայսր մնայ այս գիւղ յանվէճ սեպհականութիւն պատրիարգական Աթոռոյ Հայաստանեայց:

139. Ցայսոսիկ վերոյնշանակեալ հնգեսին գիւղօրայսն գտանին գերդաստանք հարկատուք եւ շունչք կրկին սեռի.

Ի Վաղարշապատ	*381*	*արական 933, իգական 785.*
Յոշական	*118*	*արական 408, իգական 302.*
Ի Մողնի.	*15*	*արական 44, իգական 48.*
Յեղիվարդ.	*53*	*արական 184, իգական 156.*
Եւ ի Մաստարա.	*85*	*արական 314, իգական 277*
	652	*3451*

Գոն սեպհական կալուածք Աթոռոյ Էջմիածնի եւ ստացուածք այսոքիկ ի ներքոյ նշանակեալքս:

140. Ի Վաղարշապատ այգիք հինգ.

Մեծ այգի Ղռի անուանեալ.

Մեծ այգի Վերի.

Այգի Լուսարարի.

Այգի ի միասին կաթուղիկոսի եւ Եփրեմ եպիսկոպոսի.

Այգի Օղուզի:

141. Ջրաղացք չորք՝ անուանեալք Վերի, Միջի, Դնկի եւ Վարդիկի: Մի եւս տեղի ջրաղացի ի պարտիզի գործարանի թղթաշինութեանն:

Ձիթիհանք երկու ի պարսպի Աթոռոյս՝ մին քարայարկ եւ միւսն փայտածածք, կից իրերաց:

Մի դահինխանայ փայտածածք եւս ի պարսպի Աթոռոյս:

Մի դինկ բրնձոյ:

Մի խաղախորդանոց:

Ութն տունք, յորս բնակին ծառայողքն ի գիւղատան լուսաւորչեան սիւնհոդոսի:

Վեց տեղիք ծառատնկովք հանդերձ. լիճն, որ մերձ ի Մօլլադուրսուն գիւղ, յորում է ձգեալ անտառ: Պարտէզն Միրզայի անուանեալ, յորում գոյ եւ որթն խաղողոյ: Պարտէզքն տնտեսատան, գերեզմաննոցի, Գրիգոր եպիսկոպոսի եւ գործարանին թղթաշինութեան:

142. Ի պէտս անդաստանաց եւ այլ կալուածոց Աթոռոյն թէպէտ հոգացեալ էին յառաջագոյն զբաժին ջուր ինչ ի Քասաղ գետոյ, այլ հետզհետէ կագք եւ վէճք ի բնակչաց այլոց գիւղօրէիցն, որ առ Քասաղ գետաւն, ընդ բնակչաց Վաղարշապատու անհանգիստ արարին զկաթուղիկոսունս Էջմիածնի: Այսորիկ աղագաւ Փիլիպպոս կաթուղիկոս աշխատեցուցեալ զբազում մշակս ի հիւսիսակողմն Արագած լերին ի բարձր դիրս անդ ստորոտի նորա եւ զբազմաջուր առուակ ինչ, որ գնայր ի սահման Շիրակայ, խոտորեցուցեալ յայս կողմն՝ ետ խառնել ընդ Քասաղ գետ: Եւ այսր ծախուց եւ աշխատութեանց իրաւամբք ընկալաւ ի փոքր շահ Ապաս արքայէ Պարսից զհրովարտակ ի մասին սեպհականելոյ յանուն Աթոռոյն, գրեա՛ թէ զկէս բաժին ջուր յիշեալ գետոյն, ուստի ի ժամանակէ անտի եւ այսր վերջացեալ են այնպիսի վէճք:

143. Յօշական գիւղ.

Մի ձիթիհանք փայտածածք.

Մի մեծ այգի:

144. ՅԱշտարակ գիւղ.

Երեք այգիք՝ մի յանուն Գալուստ եպիսկոպոսի յերկուս բաժինս կից իրերաց, մի յանուն Սաղմոսավանից եւ մի Զորահորիկ կոչեցեալ:

145. Ի Փարաքար գիւղ.

Մի մեծ այգի.

Մի տեղի այգւոյ:

146. ՅԵրեւան քաղաքի.

Երկու այգի՝մին մեծ ի սահմանի Նորագեղջ եւ միւսն մերձ յեկեղեցին Անանիա առաքելոյ:

Մի այգւոյ տեղի եւ մի ծառատունկ	*ի Նորք:*
Մի ջրաղաց՝ երեք աղորեօք, մի խաղախորդանոց եւ մի աւեր տեղի տան	*ի Զորագեղջ:*

147. Անդաստանն վանից Գետարգելայ եւ ի նմա եղեալ աւերակ գեղջն, զոր եւ այլազգիք կոչեն Զայղայթարան, այն է՝ Գետադարձ, զի երբեմն յայս մենաստան լինէր Սուրբ Նշանն Գետարգել անուանեալ:

Տեղին անապատի՝ ուր է այժմ եպիսկոպոսարանն, հանդերձ բոլոր շինուածովքն. տե՛ս Զորագիւղ:

148. Տալմայ կոչեցեալ մեծ առուն, որ ի սպառուածի անդ այգեստանեայցն Երեւանայ կոչեցելոցն յանուն Նորագեղջ ի հարաւակողմն քաղաքին ի ձորի անդ Հրազդան գետոյ՝ սկզբնաւորի ի գետոյն եւ անցեալ ընդ աւերակն Սարվանլար գեղջ եւ ընդ Քարատակաւն ձորոյն, ապա ընդ երկրաւ անցեալ հարուստ մի՝ ելանէ յերեսս երկրի ի փոքր ձորակն Իւչ Թէփէ անուանեալ բլրոց: Եւ այնպէս յառաջացեալ խոտոր ընթացիւք զհիւսիսակողմամբ Փարաքար գեղջ առ ստորոտովք առապարացն գայ մտանէ ի սահմանս Վաղարշապատու եւ կայ ցարդ որոշ խորութեամբ տեղի առուին:

Զայս մեծածախ առու յառաջն ետ բանալ Բուրճալիբէկ անուն ոմն տաճիկ ի բնակչացն Երեւանայ վասն անդաստանացն Կաւակերտ գեղջ եւ սահմանակից վայրացն. այլ ի մեռանիլ տաճկին այնորիկ մնայ առուն անկատար: Ժառանգք այլազգւոյն Խդմաթ Ղուլիբէկ, Մահմատ Ղուլիբէկ եւ Թամուր Ղայաբէկ վաճառեն զայս առու, եւ գնէ Նահապետ կաթուղիկոս ի սեպհականութիւն Աթոռոյն ի թուին Տաճկաց 1110, յամի 1698:

Նահապետ կաթուղիկոս բազում ծախուք աշխատեցուցեալ զմշակս ի յիշեալ փոքր ձորակէն սկսեալ բերէ զառուն ընդ երեսս երկրի մինչեւ ցսահմանս Վաղարշապատու ցփոքր բլուրսն՝ որք հանդէպ արեւելից հիւսիսոյ վանացն Հռիփսիմէի, ապա անտի եւս ընդ երկրաւ ճանապարհ տայ յորդել: Եւ այնպէս բերեալ զջուրն ի գործ դնեն վասն անդաստանաց եւ այգեաց Աթոռոյն: Իսկ ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսի Համատանցւոյ ոմանք յազգականաց յիշեալ վաճառողացն զայս առու, իբր ժառանգակցութեան իրաւամբք տանին ի ջրոյ աստի ի պէտս անդաստանաց իւրեանց: Ապա նա ինքն Աստուածատուր կաթուղիկոս գրէ առ խանն Երեւանայ վասն այսր եւ խանն յղէ զայն ինչ ի դատարանն, ուր տեսեալ զհաստատուն վկայագիր ի վաճառողացն յանուն Աթոռոյն, անդրէն հաստատեն դատաւորք զայն վկայագիր վճռով եւ ստորագրութեամբ իւրեանց ի նոյն իսկ յառաջին թղթի ի թուին Տաճկաց 1129, յամի 1716:

Այս առու բազմօգուտ եւ արդիւնաբեր թէ յո՛ր ժամանակէ ցայսր եւ յի՞նչ պատճառէ այնպէս խափանեալ աւեր կայ՝ չի՛ք ինչ ծանօթութիւն. իսկ եթէ դէ՛պք ինչ լինիցին՝ նորոգեսցի այս առու եւ բերցի ջուրն յառաջին սահման իւր, ո՛չ սակաւ շահաստանութիւնք լինիցին Աթոռոյ Էջմիածնի. քանզի բազում տեղիք անդաստանաց եւ այգեաց եւ այլ արդիւնաբեր վայրք կան այնպէս անգործ սակս պակասութեան ջուրց:

149. Յելիսավէտապոլ (Գանձակ).

Մի մեծ այգի.

Մի տուքան (կրպակ).

Տեղի միոյ տուքանի.

Աւեր տեղի պանդոկի (քարվանսարայի):

150. ՅԱլէքսանդրապոլ (Գիւմրին Շիրակայ).

Տասն եւ երկու տուքան.

Մի փուռն հաց եփելոյ:

151. Ի Տփխիս.

Տասն եւ ինն կրպակք. տասն հասարակք, չորքն չօրսուի անուանեալ եւ հինգն դաշտի խէչի. վասն լինելոյ ի տեղւոջ աւեր եկեղեցւոյն Սուրբ Խաչի.

Տասն տունք՝ երկուքն մեծք.

Տեղիք երեք տան:

Ստրուկք ի վիճակին Վրաստանի՝	*արականք 532.*
կրկին սեռի.	*իգականք 402:*

152. Ի Սղնախ.

Մի տուքան.

Մի տեղի պանդոկի (քարվանսարայի):

153. Ի Շուլավեր, ի սահմանին Բօրչալուայ.

Տեղի միոյ այգւոյ:

154. Ի Ղզլար.

Մի մեծ այգի.

Մի փոքր այգի.

Մի քայքայեալ տուն փայտեայ:

155. Ի Տուխուրղան, ի սահմանին Դավրիժոյ մի մեծ այգի:



ՀԱՏՈՒԱԾ Զ

Հիմնադիրք քրիստոնէական հաւատոց Հայաստանի եւ պահպանողք զայն ցսուրբն Գրիգոր Պարթեւ եւ անտի յաջորդ կաթուղիկոսունք մինչեւ ցութներորդ Յովհաննէս Կարբեցի

156. Աբգար արքայ Հայոց՝ որդի Արշամայ Արշակունւոյ, լուեալ զշփոթ տարաձայնութեան յարքայութեանն Պարսից՝ իբրեւ ազգակից նոցին, գնայ անդր եւ խաղաղէ զայն ինչ ի միջի նոցա եւ ապա դարձ առնէ յիւր թագաւորութիւն:

Այսմիկ ճանապարհորդութեան Աբգարու տեղեկացեալ թշնամեաց նորա՝ չարախօս լինին առ Տիբեր կայսր Հռոմայ, իբր թէ առ միաբանութեան գնացք նորա առ նոսա եւ ապստամբութեան ի կայսերէ: Զայսմանէ ստուգութեամբ հասու եղեալ Աբգարու՝ գրէ առ նա ինքն կայսր եւ առ երեւելի գործակալս տէրութեան կայսեր զանմեղութենէ անձին եւ զստոյգ պատճառէ գնալոյն անդր, առ որ մնան նոքա դժուարահաւան: Ապա ի վերջոյ գրէ եւ առ Մառինոս ստորոգեայ հազարապետ հռովմայեցւոց, որ կայր ի կողմանս Պաղեստինոյ, Ասորւոց եւ Միջագետաց եւ առաքէ զայն ընդ ձեռն երկուց գլխաւոր իշխանաց իւրոց՝ Մարիհաբ բդեշխին Աղձնեաց եւ Շամշագրամ նահապետին Ապահունեաց, ընդ որոց եդ եւ զԱնանէ հաւատարիմն իւր:

Գնացեալ նոցա առ Մառինոս եւ կատարեալ զգործ յանձնարարութեանցն Աբգարու եւ լուեալ անդ զսքանչելեացն Յիսուսի, ելանեն յԵրուսաղէմ եւ հաւատարմացուցանեն ներկայութեամբ եւ տեսութեամբ իւրեանց եւ ապա եկեալ առ Աբգար արքայ պատմեն ստուգութեամբ: Առ որ սքանչացեալ արքայի, ասէ. Այն զօրութիւնք Աստուծոյ են եւ ո՛չ մարդոյ, զի չի՛ք ոք ի մարդկանէ, որ կարիցէ յարուցանել զմեռեալ, բայց միայն Աստուած. որոց վասն հաւատաց ի Յիսուս իբրեւ արդարեւ յորդի Աստուծոյ իջեալ յերկնից. եւ զի յեօթն ամաց հետէ ունէր Աբգար արքայ ցաւ կեղոյ բորոտութեան ի մարմնի իւրում անբուժելի՝ գտեալ զայն ի ճանապարհորդութեանն

ի Պարսս, որով եւ գրեթէ ապականեալ էր բովանդակ մարմինն. ոյր վասն հաւատալով ի նա որպէս յԱստուած ճշմարիտ, գրեաց թուղթ աղաչանաց առ Յիսուս՝ գալ եւ բժշկել զնա: Եւ առաքեաց զայն ի ձեռն հրեշտակաց ընդ Անանէի հաւատարիմ սուրհանդակին իւրոյ, որ ունէր օրինակ զայս.

157. «Աբգար Արշամայ, իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ եւ բարերար, որ երեւեցար յաշխարհի Երուսաղէմացւոց, ողջոյն:

Լուեալ է իմ վասն քո եւ վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռն քո առանց դեղոց եւ արմատոց, զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել եւ կաղաց գնալ, զբորոտս սրբել եւ զայսս պիղծս հանել, եւ որք միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւանդութեամբք՝ բժշկես դու եւ զմեռեալս յարուցանես: Եւ իբրեւ լուայ վասն քո զայս ամենայն, եդի ի մտի իմում մի յերկուց աստի. կա՛մ դու Աստուած իցես յերկնից իջեալ՝ գործես զայդ, կա՛մ թէ Որդի Աստուծոյ՝ եւ զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս եւ եկեսցես առ իս եւ բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես:

Նաեւ լուայ, զի Հրէայք տրտնջեն զքէն եւ կամին չարչարել զքեզ, բայց քաղաք մի փոքրիկ է իմ եւ բաւական մեզ երկոցունցս»:

Աբգար պատուիրեալ եւս էր հրեշտակաց իւրոց, զի եթէ ո՛չ առնուցու յանձն գալ, առցեն զկենդանագրութիւն նորա եւ բերցեն առ նա ի լրումն փափագանաց իւրոց գէ՛թ այնու:

Գնացին հրեշտակքն Աբգարու ի Հրէաստան եւ հանդիպեցան յաւուր մտանելոյ Տեառն յԵրուսաղէմ: Ասեն ցՓիլիպպոս. «Կամիմք տեսանել զՅիսուս»: Փիլիպպոս ասէ ցԱնդրէաս եւ երկոքեան ասեն ցՅիսուս: Յայնժամ ընկալեալ Յիսուսի զնոսա հանդերձ թղթովն Աբգարու, եցոյց ուրախութիւն յանձն իւր[1] *եւ հրամայեաց Թովմայի գրել առ Աբգար զպատասխանին, ըստ այսմ.*

158. «Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս իբրեւ ո՛չ իցէ նորա տեսեալ զիս, զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանեն զիս, ո՛չ հաւատասցեն յիս, եւ որք ո՛չ տեսանեն՝ նոքա հաւատասցեն եւ կեցցեն: Իսկ վասն այնր, զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ, արժա՛ն է ինձ կատարել աստ զամենայն ինչ, վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրեւ կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն, որ առաքեացն զիս. եւ յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ եւ կեանս քեզ եւ որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ»:

[1] ՅԱւետարանին Յովհաննու, գլուխ ԺԲ, համար 20:

159. Զայս թուղթ Յիսուսի եւ զկենդանագրութիւն դաստառակին[1] ընկալեալ Անանէ սուրհանդակին եւ այլոց հրեշտակացն՝ բերեն փութանակի յԵդեսիա քաղաք առ Աբգար արքայ եւ պատմեն զամենայն անցսն:

Լցեալ Աբգարու անպատմելի խնդութեամբ ընդ այսպիսի պարգեւս՝ անկանէր եւ երկրպագանէր աստուածային պատկերին, որ ի Դաստառակի անդ. եւ իսկ եւ իսկ հաստատեաց ի միտս իւր զճշմարիտ հաւատ, զսէր եւ զջերմեռանդութիւն իւր առ նա ինքն Որդին Աստուծոյ մարդացեալ Փրկիչն աշխարհի, որով եւ զգաց յանձն իւր զփոփոխումն ինչ դիւրութեան ի ցաւոց անտի մինչչեւ եկեալ էր

---

[1] Զթուղթն Յիսուսի եւ զկենդանագրութիւն նորա ի Դաստառակի ընկալեալ Աբգար արքայ Հայոց ետ զգուշութեամբ պահել զթուղթն եւ զկենդանագրութիւն պատկերին ի լուսաւորութեանն ի Թադէոսէ եւ ի խորտակելն զպատկերս դիցն ի քաղաքի անդ, եդ կանգնել ի վերայ դրան քաղաքին յերկրպագութիւն մտելոցն յԵդեսիա. իսկ զկնի վախճանի երջանիկ թագաւորին Աբգարու եւ յաջորդելոյ որդւոյ նորա Անանէի եւ մոլելոյ անդրէն զհետ կռոց, այն ինչ մտադրեալ էր բառնալ զայն ի կամարէ անտի դրանն յամի 35 եւ փոխանակ այնր դնել զդրօշմուած դից, իրազգած եղեւ Ադդէ եպիսկոպոս քաղաքին եւ ի միում գիշերի առեալ զոմանս ի հաւատացելոց՝ գնաց զանխլաբար անդր ի դուռն քաղաքին եւ ի տեղի պատկերին որ էր ծոցաւոր իմն ի ներքս, կախեաց զկանթեղ մի լուցեալ եւ կղմնտրաւ ետ հիւսել զայն ծոցաւոր տեղի եւ ծեփել արտաքուստ՝ որ եղեւ հարթ հաւասար որմոյ պարսպին. եւ այնուհետեւ ապա յանյայտ լինել պատկերին, խափան եղեւ եւ խորհուրդ մտաց թագաւորին ի խնամոցն Աստուծոյ:

Եւ յօրէ անտի մնաց այնպէս ի տեղւոջ անդ անձեռագործ կենդանագրութիւնն փրկչական մինչեւ ցամ Տեառն 539. յորում ամի ի յարձակման Խոսրովու Ա արքային Պարսից ի Յունաստան եւ ի վերայ Եդեսիոյ քաղաքի յատկապէս, յայնժամ տեսլեամբ յայտնեցաւ տեղին՝ Եւղաղեայ եպիսկոպոսի քաղաքին, յորմէ հանեալ ի տեղւոջէն՝ հրաշիւք սքանչելեաց ազատեաց զքաղաքն ի վերահաս վտանգէն:

Ռոմանոս Վաշտակեան Հայկազն՝ կայսր Յունաց Լեկապէն կոչեցեալ, բազում փափագանօք խնդրէր փոխադրել զայն Դաստառակ եւ զթուղթ փրկչական ի Կոստանդինուպօլիս ի պարծանս ինքնակալութեան Յունաց. եւ այսու եռանդեամբ յամի 944, զիարդ եւ է միջոցօք հաճեցուցեալ զայլազգի ամիրայն Եդեսիոյ ընդդէմ կամաց քաղաքացւոցն, ետ տանել զայնս ի Կոստանդինուպօլիս եւ մուծին ի քաղաքն թագաւորական ի 16 աւուր օգոստոսի եւ հանգուցին ի տաճարի սրբուհւոյ Աստուածածնի. եւ մնացին անդ ի կայսերական քաղաքին ի բազում ամս: Ապա թուղթն փրկչական յետ ժամանակաց դարձուցաւ յառաջին տեղին՝ յԵդեսիա, եւ վերստին տարաւ ի Կոստանդինուպօլիս յամի 1030, յաւուրս Ռոմանոս Գ կայսեր. եւ զկնի 295 ամաց՝ այն է յամի 1325, գողացեալ յոմանց անյայտ եղեւ եւ կայ յանյայտութեան ցարդ ըստ գրելոյ բազմաց ի Պատմութեան Հայոց որ ի Չամչեանէ: Իսկ սուրբ դաստառակն փրկչական պատկերի յետ ժամանակաց փոխադրեցաւ ի Կոստանդինուպօլսոյ ի Հռովմ եւ կայ անդէն ըստ վկայելոյ հայր Մկրտչի Աւգերեան ի Վարս սրբոց՝ հատոր Բ, երես 560, ուր խօսելով զգլխոյ սրբոյն Յովհաննու Կարապետի զոյգ ընդ նմին յիշատակէ եւ զանձեռագործ պատկերէ դաստառակին. «որ պահի ցարդ ի Հռովմ ի վանս Սրբոյն Սեղբեստրոսի ի Մարտեան կամ յԱրէս դաշտի, որ եւ ասի Սեղբեստրոս գլխոյ, զոյգ ընդ անձեռագործ Դաստառակի կամ պատկերի գլխոյ Փրկչին առ Աբգար յղելոյ, զորս եւ արժանի եղաք համբուրելոյ ի մօտոյ՝ յամի 1810, ի մայիսի, ընդ անցանելն մեր ընդ Հռովմ»:

աշակերտն խոստացեալ: Ապա ի գալ աշակերտին, որ էր Թադէոս եղբայր Թովմայի, բոլորովին լուսաւորեալ Աբգարու ի հաւատս՝ բժշկեցաւ գլխովին եւ յանողջանալի ապականութենէ մարմնոյն:

Զկնի այնր եղեւ նա կենդանի քարոզ քրիստոնէական հաւատոց ի քաղաքի անդ եւ ի սահմանս իշխանութեան իւրոյ ի Հայաստան. եւս եւ ի հեռաւորս ազգու եւ անաչառ գրութեամբ իւրով զաստուածութենէն Յիսուսի, առ Տիբեր կայսր Հռովմայ՝ երկիցս, առ Ներսէհ որդի Արտաշէսի արքային Պարսից, որ նստէր ի Բաբելոն եւ էր թագաւոր Ասորեստանի եւ առ արքայ Պարսից Արտաշէս. եւ այսպէս եղեւ սկզբնապատճառ քրիստոնէական հաւատոց ի Հայս երջանիկ արքայն Աբգար:

160. Թադէոս առաքեալ եղբայր Թովմայի, մի յեօթանասուն եւ երկու աշակերտաց անտի, արձակեալ յեղբօրէ իւրմէ ըստ խոստման Փրկչին գայ յԵդեսիա քաղաք առ Աբգար արքայ Հայոց՝ ունելով ընդ իւր եւ զԳեղարդն Ղունկիանոսի՝ զմխեալն ի կող Փրկչին (39), եւ մկրտէ զԱբգար եւ զբազմութիւն քաղաքին: Եւ յետ լուսաւորելոյ զքաղաքն ողջոյն՝ ձեռնադրէ նոցա եպիսկոպոս զԱդդէ այր հրէայ մետաքսագործ զխոյրարարն արքայի: Եւ յանձն արարեալ հովուութեան նորա զհաւատացեալսն՝ գնայ անտի ի Շաւարշն գաւառ Հայաստանի առ Սանատրուկ թղթով նորում Աբգարու, յորմէ կարգեալ էր նա ինքն Սանատրուկ իշխան եւ հրամանատար աշխարհին եւ զօրացն եւ էր քեռորդի արքայի. եւ լուսաւորեալ զայն գաւառ եւս քարոզութեամբ Աւետարանին սրբոյ, եւ ձեռնադրեալ նոցա յիւրոց աշակերտաց զոմն Զաքարիա անուն եպիսկոպոս՝ անցանէ յԱղուանս ի քարոզութիւն: Եւ դարձ արարեալ անտի գնայ յաշխարհ Կապադովկացւոց ի Կեսարիա եւ անդ եւս հաստատեալ զեկեղեցի՝ ձեռնադրէ նոցա եպիսկոպոս զԹէոփիլոս ոմն եւ ապա յիջանել նորա ի սահմանս Միջագետաց, պատահին նմա ի ճանապարհին Հռովմայեցի դեսպանք առաքեալք ի Հայս առ Սանատրուկ արքայ Հայոց. ի ճանապարհի անդ քարոզէ նոցա զՅիսուս եւ աշակերտեալ մկրտէ զնոսա: Եւ անցեալ գնայ ի Շաւարշն գաւառ՝ այց առնել աշակերտելոցն: Եւ անդ քարոզութեամբ եւ սքանչելեօք դարձուցանէր զբազումս եւ յաւելոյր ի թիւս հաւատացելոցն. ուստի Սանատրուկ ըստ բողոքելոյ քրմացն կալեալ զառաքեալն՝ եդ ի բանտի: Եւ զկնի աւուրց ետ նահատակել ի 13-ն քաղոց ամսեան 48 ամի. ընդ նմին եւ զդուստրն իւր զմատաղահասակ կուսանն Սանդուխտ վեց աւուրբ յառաջ քան զառաքեալն. որոց մաքուր նշխարք ամփոփեցան ի հաւատացելոց ի նմին Շաւարշան գաւառի (Արտազ)

ի Սանատրուկն կոչեցեալ դաշտի ի վերայ բլրոյ միոյ ընդ մեծ վիմովն յարեւմտակողման գագաթան բլրոյն, յաջ կողմն վիմին մեծի ըստ տեսլեան ճգնաւորին Կիրակոսի, յորոյ ձեռն եւ յայտնեցան նշխարք սրբոցս յսկզբան հինգերորդ դարուն:

Ի նշխարաց սրբազան առաքելոյն սփռեցան յայլեւայլ տեղիս Հայաստան աշխարհի. իսկ Աջ նորա, որ պահէր անդ ի տաճարին կառուցելոյ յանուն նորա, յետ ժամանակաց բերաւ աստ ի տաճար Կաթուղիկէ եկեղեցւոյս Հայաստանեայց (62). նոյնպէս եւ մասն գլխոյն (81):

161. Երկրորդ հայր լուսաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ առաքեալն Բարդուղիմէոս յերկոտասանից անտի՝ աջակցեալ ընդ Թովմայի ի քարոզութիւն Աւետարանին, մտանեն եւ ի Հայաստան եւ անցանեն դէպ յարեւելս մինչեւ ցՀնդկաց աշխարհ: Եւ անտի վերադարձեալ միայնակ Բարդուղիմեայ քարոզութեամբ աւետարանութեանցն Յիսուսի գայ ժամանէ յԵրուսաղէմ, ուր ընկալեալ զպատկեր Տիրամօրն՝ դառնայ անդրէն առաջնորդութեամբ Սուրբ Հոգւոյն ի Հայս ի վիճակ Թադէոսի՝ հարկեալ ի Թղթոյ Թովմայի առաքելոյ, ուրանօր հաստատէ զաշակերտեալսն. եւ տեսեալ զխստասրտութիւն Սանատրկոյ՝ անցանէ ի Պարսս: Եւ անդ եւս անլուր գտեալ զբնակիչսն իւրումն քարոզութեան, վերստին դառնայ ի Հայս՝ ի կողմանս Աղբակայ, Նախիջեւանայ եւ Գողթան հանդերձ ուրն աշակերտօք, զորս դարձուցեալ էր ի մոգուց անտի Պարսից՝ յորս ի գործ արկեալ արօր քարոզութեան բանին, գործէ զբնակիչսն արգաւանդ ընդունելութեան շնորհաց Հոգւոյն եւ մկրտեալ զբազումս լուսաւորէ ի գիտութիւն ճշմարտութեան:

Ապա թողեալ առաքելոյս առ այսոսիկ հաւատացեալս յերիցանց անտի աշակերտաց՝ որ ի մոգուց, յորոց եւ միոյն անուն Կոմսի՝ ի Գողթն գաւառ յաւանն Ագուլիս, գնայ ինքն դէպի բլուրն Արտաշատու, ուր հանդիպեալ Ղէբէոս Թադէոսի Յակոբեան, եւ յօթել նոցա ի միասին անդ ի նոյն գիշերի առ մեծի վիմին՝ յառաւօտուն դրոշմեն ի վէմ անդր զնշան խաչին՝ որ Օթեաց խաչ կոչեցաւ, եւ կայ ցարդ նշանն ի վիմի անդ (տե՛ս Խոր Վիրապ*). եւ այնպէս բաժանեալ ի միմեանց չոգաւ Բարդուղիմէոս եւ եմուտ ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառսն Հայոց. եւ անդ եւս լուսաւորեալ զբազմութիւն մարդկանն եւ յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ, էանց ի կողմանս Անձեւացեաց. ուրանօր յետ բազում քարոզութեանց եւ սքանչելագործութեանց հիմն արկանէ փոքրիկ տաճարի յանուն Տիրամօր կուսի ի վերայ Տիգրիս գետոյն մերձ յամուր բերդն Կանգուար եւ*

դնէ անդ զպատկերն զայն եւ զտեղին առնէ մենաստան կուսանաց եւ անուանէ զնոյն **Հոգեաց վանք**:

Դարձ արարեալ անտի՝ քարոզութեամբ մտանէ յՈւրբանոս քաղաք Հայոց եւ առնէ զմեծամեծ սքանչելիս եւ լուսաւորէ զբազումս մկրտութեամբ, մինչեւ լուեալ Ոգոհւոյ քեռ թագաւորին Սանատրկոյ՝ գայ ի ծածուկ առ սուրբ առաքեալն եւ լուսաւորեալ հաւատայ ի Տէր Յիսուս իւրայովքն հանդերձ:

Տեղեկացեալ իրացս եղելոց Սանատրուկ արքայ Հայոց կոչէ բարկութեամբ առ ինքն ի ձեռն Տերտինոս հազարապետին զառաքեալն. այլ հազարապետին գնացեալ առ նա՝ հաւատայ ի ճշմարտութիւն Աւետարանին ընդ իւր եղելովք:

Ի լսելն զայս արքայի առաւել եւս զայրացեալ՝ առաքէ զնախարար ոմն հանդերձ զօրականօք եւ տայ ածել առ ինքն զսուրբ առաքեալն եւ զհաւատացեալսն նորոգ՝ զորս եւ պէսպէս չարչարանօք նահատակէ. առնուն հաւատացեալք զմարմինս կատարելոցն ի Տէր եւ ամփոփեն ի տապանի. իսկ զմարմին առաքելոյն ի նոյն տեղւոջ նահատակութեան, յորոյ վերայ յետ ժամանակաց շինեցաւ եկեղեցի ի հաւատացելոց եւ տապան առաքելոյն ծածկեցաւ ընդ բեմիւ սեղանոյն եւ մնաց այնպէս մինչեւ ցժամանակս Յազկերտի փոքու Պարսից արքայի անձեռնամուխ ամենեւին, յորում ժամանակի Մարութայ եպիսկոպոս Ասորի ազգաւ հաւաքօղ նշխարաց սրբոց ի Նփրկերտ՝ եկն ի Հայս յՈւրբանոս քաղաք. եւ մնացեալ անդ յերկոտասան աւուրս՝ ընկալաւ հրաշիւք ի նշխարաց սրբոյ առաքելոյս եւ տարաւ անդր ի Նփրկերտ քաղաք մարտիրոսաց, յորմէ փոխադրեցան յետ ժամանակաց եւ յայլ բազում տեղիս նշխարք առաքելոյս (67). իսկ մնացեալն ի Հայաստան՝ կայ ի նոյն իսկ ի տեղւոջն, ուրանօր է վանք հռչակաւոր եւ ունի վիճակ զշրջակայ սահմանսն:

162. Յուդա Թադէոս եղբայր Տեառն եւ Յակոբայ Արդարոյ՝ յերկոտասանից անտի, որդի Կղէոփայ եղբօր Յովսէփայ Աստուածահօրն շարժեալ ի Հոգւոյն՝ քարոզէ զԱւետարանն յԵդեսմայեցիս, յԱրաբացիս, յԱսորիս, ի Մարս եւ ի Պարսս. եւ ապա եկն ի Մեծն Հայաստան եւ հաստատէր զաշակերտեալսն բանին կենաց եւ դարձուցանէր ի հեթանոսաց անտի եւ յաւելոյր զթիւ հաւատացելոցն՝ շինէր զեկեղեցիս, ձեռնադրէր քահանայս: Եւ պատահեալ ի բլրին Արտաշատու առաքելոյն Բարդուղիմեայ, որպէս պատմեցաւ (161), անցանէ ի Պարսկահայս եւ քարոզէ զՔրիստոս գործակցութեամբ Սիմոնի Կանանացւոյ եւ լուսաւորեալ զբազումս՝ հաստատէ ի ճշմարտութեան. եւ կրեալ զպէսպէս վիշտս եւ զնեղութիւն կա-

տարի յՈրմի քաղաքի գաւառին Զարեւանդայ յամի 69 եւ մարմինն ամփոփի անդէն ի հաւատացելոց, յորոյ վերայ շինեցաւ զկնի եկեղեցի վայելուչ, որ կայ մինչեւ ցայժմ, ուր է բնակութիւն Հայոց եւ եկեղեցին աղօթատեղի նոցա. եւ ի հիւսիսակողմն եկեղեցւոյն հեռի իբրեւ քառորդ ժամու է աղբիւրն բժշկութեան:

163. Սուրբն Եղիշա աշակերտ Թադէոսի առաքելոյ նախկին Լուսաւորչի Հայոց եկն ընդ նմա ի Հայաստան եւ զկնի նահատակութեան վարդապետին իւրոյ դարձ առնէ յԵրուսաղէմ եւ անդ ձեռնադրեալ եպիսկոպոս ի Յակոբայ Տեառնեղբօրէ[1] ՝ վիճակ առնու իւր զարեւելս եւ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմէ ընդ Պարսս՝ մտանէ ի Մազքութս. եւ սկիզբն առնէ քարոզութեանն ի Զողա եւ ի յոլով տեղիս զբազումս աշակերտեալ՝ հաստատէ ի գիտութիւնն վերին. եւ անտի դիմէ յՈւտի գաւառ ի Սոհառն քաղաք երիւք աշակերտեալ անձամբք, որոց հարազատք անօրէնք ոմանք զհետ պնդեալ հասանեն, յորոց մին յերից անտի, ընկալնու զվախճան նահատակութեամբ: Իսկ երկուցն թողեալ զերանելին Եղիշա՝ գնան ընդ անօրէն խողխողիչ արանցն: Եւ սուրբն Եղիշա գայ ի Գիս եւ կանգնէ անդ զեկեղեցի, ուր եւ կատարէ զսրբազան խորհուրդ պատարագին: Ատի սկիզբն լուսաւորութեան Աղուանից եւ սա մայր եկեղեցեաց աշխարհին այնորիկ:

Անդ հաստատեալ զնորոգ հաւատացեալսն՝ անցանէ ի Դաշտակն զերգունի, ուր էր տեղի զոհարանացն դիցամոլ արանց աշխարհին, յորոց անդէն նահատակեալ երանելին Եղիշա ընդունի զպսակն մարտիրոսութեան, որոյ զմարմինն ընկենուն ի գուբ մի եւ ծածկեն. եւ տեղին այն անուաներ **Հոմենք** *ցբազում ժամանակս:*

Մնան այնպէս մաքուր նշխարք երանելոյն ի գբի անդ ի հրուստ ժամանակս, մինչեւ յայտնութեամբ տեսլեանց հասու եղեալ արանց ոմանց բարեպաշտից գնան միաբան բազմութեամբ ի գուբ անդր եւ տեսանեն զշեղջակուտեալ ոսկերս յոգունս, յորոց վերայ տարակուսին եւ զելս հնարից ո՛չ գտանեն յորոշումն նշխարաց սրբոյն. ուստի զամենայնն միանգամայն հանեալ ի գբոյ անտի՝ դիզեն արտաքոյ եւ հսկեն զայն գիշեր յաղօթս եւ ի պաղատանս առ Աստուած, եւ յառաւօտանալ գիշերոյն՝ շարժումն մեծ լինի, մինչեւ

[1] Վասն ճանապարհորդութեանն Եղիշայ յԵրուսաղէմ եւ ձեռնադրութեանն եպիսկոպոս ի Տեառնեղբօրէ անհաւան գտանին ոմանք՝ ասելով թէ նա ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի վարդապետէն իւրմէ յառաքելոյն Թադէոսէ եւ այնպէս առաքեցաւ յԱղուանս. եւ մանաւանդ առաքեալն Թադէոս եւ եղբայր Տեառն Յակոբ ի միեւնոյն ամի կատարեցան նահատակութեամբ՝ մին ի Հայս եւ միւսն յԵրուսաղէմ, որպէս եւ Յովսէփ քահանայ Զուղայեցի եւս հաստատէ եւ դնէ զնահատակութիւն երկոցունցն յամի 64:

ամենեցուն անդր եղելոց անկանիլ յերկիր. եւ ահա սաստիկ հողմն յանապատէն ցիր եւ ցան սփռէ զանսրբոցն ոսկերս ընդ բովանդակ դաշտն եւ մնան ի տեղւոջն առաքելականն մաքուր նշխարք, յորոց զգլուխն միայն մեծահաւատ ոմն Ստեփաննոս քահանայ Ուռեկան գեղջ յափշտակեալ աճապարի յերիվար իւր եւ ի բաց գնայ, որում զհետ մտեալ բազմութեանն ունել զնա, մառախուղ խաւարային ընդ մէջ անցեալ զարհուրեցուցանէ զնոսա եւ յետս ընկրկէ. ապա դառնան ի տեղին եւ տեսլեամբ սրբոյն առեալ զմիւս նշխարսն՝ տանեն յՈւռեկան, ուր եղեալն էր պատուական գլուխն ընդ ձեռն յիշեալ քահանային. եւ անտի ապա փոխեցին ի ներս Միրհայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ:

Եւ զկնի ժամանակաց ի մէջ անդ Ե-րդ դարուն Վաչագան արքայ Աղուանից կանգնեաց ի վերայ գբոյ նահատակութեան սրբոյն Եղիշայի սիւն բարձր. եւ ի վերայ այնր սենեկապանն արքայի Սիւնակեաց մենակեաց լեալ՝ կատարի բարի մահուամբ: Զորմէ պատմիչն Աղուանից՝ հատոր Ա, գլուխ Զ, Է:

164. Ադդէ սուրբ հայրապետ առաջին եպիսկոպոս Եդեսիոյ, որ էր մետաքսագործ եւ խոյրարար Աբգարու արքայի Հայոց, ի գալ առաքելոյն Թադէոսի յԵդեսիա առ Աբգար՝ աշակերտեցաւ նմա եւ յառաջադէմ հանդիսացեալ ի հաւատս՝ մկրտեցաւ ի նմանէ եւ արժանացաւ եւս ձեռնադրիլ յեպիսկոպոսութիւն քաղաքին եւ լինել փոխանորդ առաքելոյն եւ տեսուչ ի հովուել զհաւատացեալսն անդ ի Միջագետս: Եւ այնու իշխանութեամբ առաքելաբար հաստատէր զաշակերտեալսն եւ լինէր քարոզ ճշմարտութեան ո՛չ միայն յՈւրհայ քաղաքի, այլեւ ի բազում մերձակայ սահմանս Ասորւոց, Մարաց եւ Պարսից. եւ օր քան զօր ընդարձակէր զառաքելական քարոզութիւնն՝ մանաւանդ յարդիւնալից կենդանութեան Աբգարու արքայի, որոյ զկնի փոխման յաստեացս ի Թագաւորութիւնն վերին, կրեաց երանելին Ադդէ զտառապանս հալածանաց հաւատացելովքն հանդերձ. քանզի Անանուն որդի Աբգարու յԵդեսիա եւ Սանատրուկ քեռորդի նորա յարեւելս՝ յԱրտազ գաւառի, դարձան անդրէն ի կռապաշտութիւն:

Սոյն Անանուն ուրացող որդի Աբգարու յղէ պատուէր առ երանելի հայրապետն Ադդէ պատճառանօք՝ առնել նմա խոյր բեհեզեայ անկուածոյ յոսկւոյ, զորօրինակ առնէր յառաջագոյն հօր նորա Աբգարու, առ որ պատասխանի տայ սուրբ հայրապետն. Ո՛չ արասցեն ձեռք իմ խոյր գագաթան անարժանի, որ ո՛չ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանւոյ: Ուստի բարկացեալ թագաւորին

ընդ այն, հրամայէ միում ի զինակրացն գնալ հատանել զոտս սրբոյն սրով (թերեւս լուեալ էր յայնմ պահու՝ թէ նստեալ յաթոռ վարդապետութեան ուսուցանէ զժողովուրդն, կամ գէ՛թ զի ո՛չ գնաց առ նա). գնացեալ զինակրին տեսանէ զնա յաթոռ վարդապետութեանն եւ անդէն կատարէ զանօրէն զհրամանն. եւ յայնժամ աւանդէ երանելին զհոգին, որոյ զմարմինն բարձեալ հաւատացելոց՝ ամփոփեն ի շիրմի:

165. Եւստաթէոս կամ Ստաթէ. մին յաշակերտաց սուրբ առաքելոյն Թադէոսի, որոյ ի գալն ի Հայաստան էր ընդ վարդապետին իւրոյ եւ ձեռնադրեցաւ ի նմանէ եպիսկոպոս: Եւ մնացեալ ի Հայաստան՝ քարոզեաց ի Սիւնիս եւ անդ կատարեցաւ: Գրի Յայսմաւուրս ի ճառի անդ Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի ի 6 մարտի. «Եւ եդին անդ ընդ սուրբ մարմնոյն (Գրիգորիսի) եւ շիշ մի լի՛ արեամբ՝ յարենէ սրբոյն Զաքարիայ հօրն Յովհաննու Կարապետին, զոր բերեալ էր Եւստաթէոս առաքեալն, որ էր յաշակերտաց սրբոյն Թադէոսի առաքելոյ»: Յիշատակի եւ ի քանի տեղիս ի 27 ապրիլի՝ Յայսմաւուրս, որպէս եւ ի պատմութեանն Հայոց յԲ հատոր, 298 համար. «Եկն ի Հայս եւս եւ սուրբն Եւստաթէոս մին յեօթանասնից, եւ նահատակեալ թաղեցաւ ի տեղւոջն, որ այժմ յանուն նորա կոչի Ստաթեւ, այն է՝ Տաթեւ»:

166. Զաքարիա աշակերտ Թադէոսի առաքելոյ գայ ընդ նմա ի Հայաստան եւ ի լինել առաքելոյն յԱրտազ գաւառի առ Սանատրուկ, ձեռնադրի ի նմանէ եպիսկոպոս գաւառին այնորիկ. եւ զկնի նահատակութեան առաքելոյն ի Սանատրկոյ՝ հովուէ զհաւատացեալսն իբր յամս երկոտասան. եւ ապա կատարի եւ ինքն նահատակութեամբ յԵրուանդայ Բ արքայէ Հայոց՝ իբր յամի Տեառն 76:

167. Թէոփիլոս էր Անտիոքացի. հաւատացեալ կանխաւ՝ շրջէր աշակերտութեամբ ընդ Թադէոսի առաքելոյ ի գալն նորա ի Հայաստան. եւ ապա այն ինչ եմուտ առաքեալն ի Կեսարիա Կապադովկացւոց եւ քարոզութեամբ աշակերտեաց զբազումս ի բնակչաց քաղաքին, ձեռնադրեցաւ ի նմանէ եպիսկոպոս առ ի հովուել անդ զփոքրիկ հօտն հաւատացեալ: Թուի թէ առ սա գրեալ իցէ՝ ըստ Յովսէփայ քահանայի Ջուղայեցւոյ, երանելին Ղուկաս զԱւետարանն եւ զԳործս առաքելոցն՝ քաջ կոչելով զնա զքաղաքացին իւր յբսկզբան անդ մատենի Աւետարանին եւ զանունն յերկոսին եւս. եւ գուցէ սակս անվեհեր քարոզութեանն առ հեթանոսս քաջ կոչէ. սա ինքն Թէոփիլոս բազմօք ճգնեցաւ ի վերայ հօտին եւ գտաւ գլխաւոր ի ժողովի անդ ի Պաղեստին ըստ Եւսեբիոսի յԵկեղեցական պատմութեան (գպր. Ե, գլ. ԻԳ). «Բայց են եւ մինչեւ ցայսօր ժամանակի

գիրք այնոցիկ, որ ժողովեցանն յայնմ ժամանակի ի Պաղեստին, զի գլուխ էր նոցա Թէոփիլոս եպիսկոպոս եկեղեցւոյն Կեսարացւոց»: Հանգեաւ խաղաղութեամբ յամի Տեառն 60:

168. Զեմենտոս. սա էր այր մարդասէր բարուք, խնամածու օտարաց, որբոց եւ այրեաց եւ էր հաւատարիմ ի դրան Սանատրկոյ արքայի՝ կարգեալ ի նմանէ ի վերայ ամենայն ճանապարհացն. յաւուր կատարման առաքելոյն Թադէոսի այն ինչ եղբայր նորա դահճապետն հարկանել կամէր սրով զգլուխ առաքելոյն, եհատ վրիպեցաւ եւ սպան զսա զՁեմենտոս եղբայր իւր, իսկ առաքեալն աղօթիւք ձեռն տուեալ յարոյց զնա ողջանդամ, որ հաւատաց ի Տէր հանդերձ այլովք բազմօք: Սա՝ ըստ Յովսէփայ քահանայի Զուղայեցւոյ, զկնի Զաքարիա եպիսկոպոսի եկաց երկրորդ եպիսկոպոս անդէն յԱրտազ գաւառի եւ հովուեաց զհաւատացեալսն զամս ութն. եւ ապա կատարեցաւ նահատակութեամբ յԵրուազայ քրմապետէ՝ յեղբօրէ Երուանդայ արքայի իբր յամի Տեառն 79:

169. Կոմսի[1] *էր դենիւ մոգ պաշտօնատար արեգական եւ ազգաւ Պարսիկ ի Խորասան քաղաքէ նոցա. ի գնալ անդր առաքելոյն Բարդուղիմեայ աշակերտեցաւ նմա եօթն ընկերօք հանդերձ, որք թողեալ զերկիր եւ զազգ՝ եկին ընդ առաքելոյն ի Հայս մինչ ի Գողթն գաւառ յաւանն Ագուլիս. անդանօր աջակցեալ առաքելոյն քարոզէին բնակչաց գաւառին եւ հաստատէին զբազումս ի հաւատս մկրտութեամբ աւազանին. եւ ի փոխիլ անտի առաքելոյն ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառսն, ձեռնադրեցաւ ի նմանէ եպիսկոպոս Կումսի եւ մնաց անդ ոմամբք ընկերօք ի վերատեսչութիւն նորոգ հաւատացելոցն եւ օր ըստ օրէ քարոզութեամբ եւ սքանչելեօք դարձուցանէին եւ զայլ բազում մարդիկ ի սնոտի պաշտամանցն: Եկաց անդ Կումսի զամս ո՛չ սակաւ՝ արդիւնաւոր վաստակօք եւ հանգեաւ խաղաղութեամբ յամի Տեառն իբր 88, անդ յաւանն Ագուլիս. եւ կայ ցարդ եւս տեղի գերեզմանի նորա մերձ յեկեղեցի եպիսկոպոսարանին ի հիւսիսոյ նորա եւ պատուի ուխտական այցելութեամբ ի բնակչացն, յորոյ վերայ է եւ մատուռն փոքրիկ:*

170. Տուբիաս. սա յազգէ Տուբիթայ եւ Տուբիայ որդւոյ նորա, որ թողեալ զՆինուէ եկն եւ բնակեցաւ յերկրորդն Եկբատան. յետոյ որդիք նորա եկին յԵդեսիա եւ անդ բնակեցան. ուր ի գալ առաքելոյն Թադէոսի ընկալաւ զնա Տուբիաս ի տուն իւր՝ ըստ Եւսեբիոսի յԵկեղեցական պատմութեան. դպրութիւն Ա, գլուխ ԺԳ: Սա եկաց

[1] [Տպագրում այսպես՝ **Կոմսի**: Քիչ անց ունի նաեւ **Կումսի** ձեւը: Աղբյուրում՝ Օրբելյանի մոտ, Կումսի է: Քանի որ Շահխաթունյանցի մոտ երկու ձեւն էլ գործածված են, թողնում ենք անփոփոխ]:

երրորդ եպիսկոպոս Եդեսիոյ եւ ի հալածանս Դոմետիանոսի կայսեր յետ բազում տանջանաց կատարեցաւ յամի Տեառն 94, ըստ Յովսէփայ քահանայի Ջուղայեցւոյ, հատոր Բ, գլ. ԺԶ:

171. Բաբելաս եպիսկոպոս. յաջորդ Կոմսեայ, թերեւս մին յընկերաց նորա ի խուժիկ ազգէ զորս նովաւ (Կոմսեաւ) հանդերձ եթող այցելու նորահաւատ քրիստոնէից վիճակին առաքեալն Բարդուղիմէոս: Որպէս հաւատացեալք, նոյնպէս եւ հովիւք նոցա յաջորդք Բաբելասայ ո՛չ պակասեցան ի Գողթն գաւառէ, թէեւ հալածանօք հանդերձ, մինչեւ ցբովանդակ լուսաւորութիւն ազգին քարոզութեամբ մեծին Գրիգորի, որպէս յառաջ բերէ հին Հայաստան ի ստորագրութեան Գողթան գաւառի՝ առեալ ի պատմութենէ Սիւնեաց. «Զքրիստոնէութիւնն ընկալան բնակիչք գաւառիս քարոզութեամբ սուրբ առաքելոյն Բարդուղիմեայ... յորս մնաց նոյն կրօն մինչ ի սուրբն Գրիգոր, թէպէտ եւ թագուն... սոքա (քրիստոնեայք) կային եւ մնային անտերունչք բնակեալ այսր անդր եւ ոմանք ղօղեալք ի լերինն Գարուայ միայնաւորութեամբ զկեանս իւրեանց վարէին՝ զբազումս ուսուցանելով յոլով ժամանակօք մինչ ի գալ մեծի Լուսաւորչի ի Հայս:... Եւ որպէս յետ քարոզութեան առաքելոյն ո՛չ անհետ եղեւ ի նոսա քրիստոնէութիւնն, նոյնպէս եւ յետ քարոզութեան Լուսաւորչին՝ ո՛չ բարձաւ ի նոցանէ խսպառ աղանդն հեթանոսութեան»: Զայս մնացորդ աղանդ եւս անհետ արար երանելին Մեսրովպ. եւ սա ինքն Բաբելաս իբր յամս 90, 120:

172. Բարսումա կամ Պարսաւմա. Հայկազն եպիսկոպոս յԵդեսիա քաղաքի յամս Տրայիանոսի կայսեր, իբրեւ հովիւ քաջ առաջնորդէր հաւատացելոցն որ անդ. սա դարձոյց զերեւելի զքուրմ կռոցն զայր ծերունի Սարբիւղոս անուն ի հաւատս եւ զքոյր նորա զԲաւէա, որոց պատճառաւ դարձան եւ բազումք ի հեթանոսաց. ի կատարիլ նահատակութեամբ Սարբիւղոսի եւ քեռ նորա ի Լիւսիաս դատաւորէ, ըմբռնեցաւ ի նոյն տանջանս եւ երանելի եպիսկոպոսս Բարսումա եւ քերեցաւ մարմին նորա երկաթի քերչօք ի կախաղանի. այլ փութով հասեալ արքունի հրամանին յաղագս ազատութեան քրիստոնէից առհասարակ ազատեցաւ ի տանջանացն. եւ այնուհետեւ համարձակ եւս քարոզէր եւ դարձուցանէր զբազումս յանհաւատիցն: Կացեալ ամենայն առաքինութեամբ հոգւոյ եւ հասեալ ի բարւոք ծերութիւն՝ փոխեցաւ ի կենաց աստի յամի Տեառն 115:

Սմին Բարսումա եպիսկոպոսի Եդեսիոյ յաջորդեցին եւ այլք ցբովանդակ լուսաւորութիւն ողջոյն ազգի Հայոց ի հաւատս քրիստոնէութեան, որպէս եւ հայր Մկրտիչ Աւգերեան ի Վարս սրբոց

(Հատոր Ժ-րդ, համար 144). «Այլ յայս ամենայն փոփոխութիւնս ո՛չ պակասեաց քրիստոնէութիւն յԵդեսիոյ, այլ հանդերձ հալածանօք մնաց անդ միշտ հօտն քրիստոնէական եւ հովիւ նոցա՝ աթոռակալ սուրբ առաքելոյն Թադէի եւ յաջորդ Ադդէի սուրբ հայրապետին մինչեւ ցայսօր». յորոց, այսինքն ի հովուաց անտի, մին՝

173. Կոն, Կոնոս կամ Կոդնատիոս եպիսկոպոս Եդեսացւոց քաղաքի ի ժամանակի անդ տէրութեանն Դիոկղետիանոսի եւ ի դատաւորութեանն Մուսիսիանոսի ի նոյն Եդեսիա քաղաքի:

Սոյն այս Կոն եպիսկոպոս յիշատակի ի հին Ճառընտրի գրանոցի մեծի Աթոռոյս՝ ի ճառի անդ Շմոնա կամ Սամովնայ եւ Գորիա կամ Գուրիասայ, որպէս ի սկզբան ճառին, նոյնպէս եւ ի վախճանին: Եւ սկսուած ճառին էր ըստ այսմ. «Յամի վեցհարիւրերորդի հնգետասաներորդի Աղէքսանդրի Մակեդոնացւո, որ է ամ ութերորդ թագաւորութեանն Դիոկղետիանոսի, որ թագաւորեաց զինն եւ տասն ամ:... Յամս Կոնա եպիսկոպոսի Ուռհայի, արար Դիոկղետիանոս հալածումն քրիստոնէից յամենայն տեղիս իշխանութեան իւրոյ» եւ այլն:

Այսու թուականօք ստուգի թէ Կոն եպիսկոպոս Եդեսիոյ էր յամսն իբր 291-295. յիշատակի սոյն եպիսկոպոս եւ ի վարս Աբիբասայ սարկաւագի (Վարք սրբոց, հատոր Ը-րդ, համար 444):

174. Մխիթար վանահայր (թերեւս եպիսկոպոս): Սա եկաց ի Սիւնիս յամսն իբր 150 կամ 170. ի տեղւոջն, որ զկնի Թանահատի վանք կոչեցաւ. զայսմանէ տողէ ի պատմութեան Սիւնեաց Ստեփաննոս Օրպէլ, զոր եւ առնու ի ստորագրութեան նոյն Թանահատի վանաց մատեանն հին Հայաստան ըստ այսմ. «Բայց գտաք յիւրոց արձանագրութեանցն (նոյն վանաց) եթէ Ն (400) ամաւ յառաջ (այն է յամի Տեառն 150) չինեցաւ եկեղեցին քան զհայ թուականն յիշխանացն Սիւնեաց յանուն սրբոյն Նախավկային Ստեփաննոսի: Եւ էր եղեալ հայր վանիցն, որոյ անուն Մխիթար, որ անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյլս առաքինութեանց»: Որոյ եւ մարմինն թաղեցաւ փայտակերտ արկեղօք ի գետնափոր վիրապի մերձ յեկեղեցին ի փոքր բլրակ միում, որ կայր մինչեւ յաւուրս Ստեփաննոսի Օրպէլեան:

175. Զոթիկոս. սա էր եպիսկոպոս հաւատացելոցն, որ ի Կոմանա քաղաքի Փոքուն Հայոց. եւ պայծառանայր ի ժամանակի անդ Մարկոս Օրեղիոս կայսեր եւ ընդդիմանայր բանիւք եւ թղթովք հերձուածողին Մոնտանայ՝ ըստ Եւսեբեայ յեկեղեցական պատմութեան (դպրութիւն Ե, գլուխ ԺԶ): Ապա զկնի Մարկոսի Օրեղիոսի եւ որդւոյ նորա, ի հալածանս Սեւերոսի կայսեր կատարեցաւ ի Տէր յամսն իբր 160=190:

176. Աղէքսանդրոս եպիսկոպոս Գամրաց ի Փոքրն Հայաստան, զկնի ո՛չ սակաւ ժամանակ հովուելոյ անդ զժողովուրդն՝ ըստ յայտնութեանն եղելոյ ի վերուստ, ելանէ յԵրուսաղէմ առ ժամանակօք Նարկեսոսի եպիսկոպոսի քաղաքին, որ հարիւրամենիւք աւելի իմն բռնադատեալ յեղբարց անտի երուսաղէմացւոց՝ պաշտէ անդ զեպիսկոպոսութիւնն ընդ Նարկեսոսի, ըստ Եւսեբեայ յԵկեղեցական պատմութեան (դպրութիւն Զ, գլ. ԺԱ). «Իբրեւ ո՛չ կարէր այնուհետեւ Նարկէսոս... վասն բազում ծերութեանն... կոչեաց զնա (զԱղէքսանդրոս) տեսչութիւնն Աստուծոյ ի ձեռն տեսլեան, որ երեւեցաւ նմա ի գիշերի, պաշտել նմա ընդ Նարկէսոս» եւ այլն. յամսն իբր 210=230:

177. Մէհրուժան եպիսկոպոս Հայոց ի Կեսարիա Կապադովկացւոց ի ժամանակս Խոսրովու արքայի Հայոց հօր Մեծին Տրդատայ. առ սա գրեաց սուրբն Դիոնէսիոս հայրապետ Աղէքսանդրիոյ՝ ըստ Եւսեբեայ յԵկեղեցական պատմութեան (դպրութիւն Զ, գլ. Իե). «Եւ առ այնոսիկ (գրեաց Դիոնէսիոս) որ էին յԱրմէնիա. զի էր նոցա եպիսկոպոս Մէհրուժան»: Ապա ի լինել հալածանաց քրիստոնէից ի Դեկոսէ եւ զկնի նորա ի Վաղերիանոսէ, ընդ այլոց բազմաց վկայից կատարեցաւ եւ սա ի Խոսրովայ արքայէ Հայոց յամի 257:

178. Ակակիոս եպիսկոպոս ի Տիգրանակերտ քաղաքի Հայոց՝ ի ժամանակս Դեկոս կայսեր համարձակ քարոզէր զՔրիստոս. կալաւ յանհաւատից եւ կացուցաւ առաջի Մարկիանոս հիւպատոսի. եւ այն ինչ հարցին զվարդապետութենէ նորա, ճառեաց նա յատենի անդ կարգաւ զկամովին մարդեղութիւն Քրիստոսի Աստուծոյ ցՀամբարձումն եւ ցԵրկրորդ գալուստն ի դատել եւ ի հատուցանել ըստ գործոց. իսկ հիւպատոսին անլուր գտեալ բանից սրբոյն՝ ետ հարկանել զնա ուժգին եւ արկանել ի բանտ. եւ ապա գրեաց առ Դեկոս եւ ընկալեալ զպատասխանի՝ արձակեաց զսուրբ եպիսկոպոսն Ակակիոս. եւ նա գնաց ի տեղի իւր, քարոզէր եւ լուսաւորէր զբազումս եւ կացեալ ըստ հաճոյիցն Աստուծոյ՝ հանգեաւ խաղաղութեամբ: Եւ եղեւ սա իբր յամսն 250=280. Յայսմաւուրքն ի 11 ապրիլի, իսկ ըստ տէր Իսրայէլի՝ ի 22 մարտի:

179. Արքեղայոս եպիսկոպոս ի Միջագետս Հայոց յամսն իբր 260=280. զոր յառաջ բերէ հայր Միքայէլ Սալլանդեան յայլազգի հեղինակաց ի Կրօնագիտութեան անդ յերես 99:

180. Փիրմիլիանոս, Պարմելիանոս կամ Պերմեղեղիոս. այր սքանչելի եւ հաւատարիմ պաշտօնեայ եկեղեցւոյ յաշակերտութենէ անտի Որոգինէսի՝ լի շնորհօք վարդապետութեան, որոյ վասն կացու-

ցաւ եպիսկոպոս ի Կեսարիա Կապադովկացւոց յամի 251, որպէս տեսանի ի վարս Յովհաննու Կարապետի եւ Աթանագինեայ եպիս-կոպոսի ի համար 58, Գ հատորոյ Վարուց Սրբոց. «Իսկ Փիրմիլիա-նոս աշակերտ Որոգինի եպիսկոպոս եղեալ Կեսարացւոց յաւուրս հալածանաց Դեկոսի յամի Տեառն 251, բերեալ էր զայն (զնշխարս Յովհաննու Կարապետի) ի Կեսարիա եւ պահիւր պատուով ցաւուրս սրբոյն Ղեւոնդեայ: Եւ երբեմն երբեմն ելանէր սա ինքն ի կողմանս երուսաղէմացւոց ի ժողովս նոցա ընդդէմ Պօղա Շամշտացւոյն՝ ըստ Եւսեբեայ յԵկեղեցական պատմութեան (դպր. Է, գլ. ԻԷ). «Բայց ի սոսին իսկ յայսոսիկ (յեպիսկոպոսունս ժողովոյն) սքանչելի էին Պարմեղիոս եպիսկոպոս Կապադովկացւոց եւ Գրիգորիոս եւ Աթե-նադորոս, որ էին եղբարք եւ հովիւք եկեղեցւոյն Պոնտացւոց եւ Հեղինոս եկեղեցւոյն Տարսոնացւոց» եւ այլն: Եւս ի գլ. ԻԸ. «Պերմե-լիանոս եւս երկիցս անգամ եկն եւ արհամարհեալ դսրովեաց զայն ինչ, զոր միանգամ Նորոգեաց անօրէնն»: Էր սա ժամանակակից Կիպրիանոսի եպիսկոպոսին Կարգեդոնացւոց եւ մտերիմ Նորա ըն-տանի թղթակցութեամբ: Այսպիսի արթուն հսկողութեամբ ի վերայ հօտին՝ տարաւ եւ բազում հալածանաց. եւ ապա խաղաղութեամբ հանգեաւ ի Քրիստոս յամի 272:

181. Կղենէոս կամ Կղէոնիոս եպիսկոպոս ի նոյն Կապադովկիա ի ժամանակս Օրեղիանոսի կայսեր, կրեաց զբազում հալածանս. հա-ղորդեաց ի մարմին եւ յարիւն Տեառն զՊորփիւրոս գուսանն. եւ զկնի նահատակութեան նորա հանգոյց զմարմինն ի տապանի. եւ ինքն յետոյ ի հալածանս Դիոկղետիանոսի ի Լիւսիա դքսէն կրեալ զբազում տանջանս՝ կատարեցաւ յամի Տեառն 287:

182. Վլասիոս եպիսկոպոս Սեբաստիոյ ծննդեամբ յաշխարհէ Փոքուն Հայոց ի սահմանացն Սեբաստիոյ, ըստ միաբան խնդրանաց եւ միջնորդութեան հաւատացելոց այնց կողմանց յանձն առեալ ձեռնադրի եպիսկոպոս. եւ եղեալ հետեւող ճշմարիտ հովուին յան-ձանձէր գթով զհօտ հաւատացելոցն եւ զօրացուցանէր զքաջ նա-հատակսն, որպէս եւ զԵւստռատիոսեանսն. եւ զկնի հալածանաց եւ վշտաց մատնեցաւ ի ձեռս Ագրիկողայոսի դատաւորին եւ ի մի-ջոցի անդ չարչարանացն եւ բանտարկութեան իւրոյ եղեւ պատ-ճառ փրկութեան բազմաց: Եւ ապա ըստ վճռոյ անօրէն դատաւորին գլխատեցաւ սուրբ հայրապետն Վլասիոս արտաքոյ քաղաքին Սե-բաստիոյ ի վերայ վիմի հանդերձ երկու հաւատացեալ մանկամբք յամի Տեառն իբր 315, յամսեանն փետրվարի Ժ կամ ԺԱ:

183. Պետրոս եպիսկոպոս յեպիսկոպոսացն Սեբաստիոյ եւ ընտա-նի բարեկամ Աթանագինէ եպիսկոպոսի. եւ Թերեւս քորեպիսկոպոս

այնր վիճակի, որ վասն քրիստոսական հաւատոցն նահատակեցաւ ի նմին քաղաքի Սեբաստիոյ, յորում տեղւոջ զկնի նահատակեցաւ եւ երանելի եպիսկոպոսն Աթանագինէ, որպէս տեսանի ի վարս նորին Աթանագինեայ ի համար 347, Դ հատորոյ Վարուց սրբոց. «Եւ նոյն ժամայն սպասաւորքն ատենին արագ եւս քան զբանն զգործն կատարեալ, լուցին կրակ մեծ ի տեղւոջն, յորում կատարեալ էր սուրբ եպիսկոպոսն Սեբաստիոյ Պետրոս բարեկամ սրբոյն Աթանագինեայ. ուր եւ յետոյ չինեցաւ փոքր աղօթատուն» եւ այլն:

184. Աթանագինէ. սա էր զաւակ քրիստոնեայ ծնողաց, եղբայր Մարիամու սրբասէր ամուսնոյ Պարթեւին Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց՝ ի սահմանացն Սեբաստիոյ. սնաւ ի մանկութենէ ի գովելի վարս եւ յուսմունս եւ էր զօրաւոր ի բանս եւ ի գործս. լուեալ եւ տեսեալ եպիսկոպոսին Սեբաստիոյ զբարի վարս Աթանագինեայ, էառ զնա առ ինքն եւ ձեռնադրեալ կացոյց տեսուչ իւրումն վիճակի՝ լինել ինքեան գործակից: Եւ այնպէս Աթանագինէս ըստ աստուածային շնորհացն որ յինքեան, խնամարկէր զժողովուրդն արժանի իւրումն կոչման. եւ վասն ազատութեան գերելոցն ի ժողովրդենէ իւրմէ ի բարբարոսս, գնաց զկնի նոցա. եւ ի ճանապարհին արարեալ զսքանչելիս յազատութիւն մանկան միոյ ի վիշապէ՝ յայտնեցաւ եպիսկոպոսի գաւառին եւ բռնադատեալ ի նմանէ ըստ աստուածային կոչմանն ձեռնադրեցաւ եպիսկոպոս. եւ զկնի ազատելոյ զգերեալսն դարձաւ նոքօք հանդերձ ի վիճակ իւր ՝ ոչ հանելով ի լոյս զբան ձեռնադրութեանն իւրոյ յեպիսկոպոս. կացեալ ի նմին պաշտման իբրեւ զամս քսան, հովուէր եւ մխիթարէր զհօտն տէրունի հոգեբուխ վարդապետութեամբն իւրով եւ պէսպէս հրաշից ներգործութեամբք. մխիթարէր եւ քաջալերէր զբանտեալսն ի հաւատացելոց վասն քրիստոսական յուսոյն եւ զկատարեալսն նահատակութեամբ հանգուցանէր ի նշանաւոր տեղւոջ:

Այսպիսի արիական հսկողութիւն Աթանագինեայ ի վերայ հաւատացելոցն հասեալ ի լսելիս թագաւորին՝ որ ի Նիկոմիդա Բիւթանացւոց, կալաւ զնա Ագրիկողայոս դատաւոր Սեբաստիոյ ըստ հրամանի թագաւորին. եւ զկնի բազմօրինակ հարցափորձի եւ հաստատուն գտանելոյ երանելւոյն ի ճշմարտութեանն, վճիռ եհատ դատաւորն՝ այրել զսուրբն:

Այսպիսի նահատակութեամբ վկայեաց սուրբ եպիսկոպոսն Աթանագինէ յամի Տեառն իբր 285=կամ 290, յամսեանն յուլիսի: Ապա զկնի ամաց ինչ պատուական նշխարք նորա բերաւ ի Մեծն Հայս ի ձեռն մեծին Գրիգորի Լուսաւորչի՝ նուիրմամբ ի Ղեւոնդեայ պատրիարգէն Կեսարիոյ Կապադովկացւոց:

185. Ղեւոնդէս. սա եւս եպիսկոպոս ի Կեսարիա Կապադովկացւոց, որ զյոլով վիշտս կրեաց ի ժամանակս մեծի հալածանացն. ձեռնադրեաց զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն յամի 302. եւ եհաս մինչեւ ի ժամանակս ժողովոյն Նիկիոյ եւ էր ընդ գլխաւորսն. եւ ապա խաղաղութեամբ հանգեաւ ի Տէր:

186. Բաց յայսոցիկ, որք ի վերոյ յիշեցան, գտանին եւ այլ աշակերտք եւ եպիսկոպոսունք ի Հայաստան նախքան զսուրբն Գրիգոր. եւ ահա Միխայէլ պատրիարգ Ասորւոց ի շարակարգութեան անդ հովուաց Հայաստանի, յիշատակէ եւ զերկուս աշակերտս առաքելոց Հայաստանի՝ զԽաթ եւ զԴաթէ. եւ յանուն նոցա կառուցեալ են ի վաղուց մենաստանք ի Սիւնիս եւ յԱղուանս եւ կոչին ցարդ յանուն նոցին՝ Խաթրայ վանք եւ Դաթէի վանք. զարձանագիրսն այնց տե՛ս ի վախճանի յաւելուածոյ Բ հատորոյ:

Յովսէփ քահանայ Ջուղայեցի յիշատակէ զԱքիաս ոմն յաջորդ Ադդէի յԵդեսիա՝ յաշակերտաց անտի Թադէոսի եւ դնէ նահատակեալ յամի 46 ի Սանատրկոյ այն ինչ տիրեաց նա եւ Եդեսիոյ զկնի մահուանն Անանէի որդւոյ սրբոյն Աբգարու (Բ հատոր, գլուխ 16), եւ զայլ հովիւս եւս տե՛ս ի կրօնագիտութեան Միքայէլ ծայրագոյն վարդապետի Սալլանդեան. 120, 121, 122:

187. Վաստակք մշակութեան երանելի առաքելոց Տեառն մերոյ Յիսուսի հասելոցն ի Հայաստան աշխարհ ո՛չ մնացին առանց բաւականաչափ արդեանց. թէեւ ո՛չ զօրեցին զազգն ողջոյն ածել ի հաւատս, բայց եւ այնպէս պահպանեցին ի ծոցի Հայոց զեկեղեցի հաւատացելոց հանդերձ հովուօք նոցին՝ եպիսկոպոսօք ի տեղիս տեղիս Հայաստանի որպէս ցուցաւ ի վերոյ յաջորդաբար ցբոնանդակ լուսաւորութիւն ազգին միջնորդութեամբ մեծի Պարթեւին Գրիգորի Լուսաւորչի:

Այսմ յայտնի ստուգութեանս վկայեն յաջորդութիւնքն եպիսկոպոսաց յԵդեսիա, ի Կեսարիայն Կապադովկացւոց, ի Սեբաստիա, յԱրտազ, ի Սիւնիս եւ յայլ մասնաւոր սահմանս Հայաստանի, յորս ո՛չ միայն հովիւքն, այլեւ հօտքն նոցին, յորոց բազումք ժամանակ առ ժամանակ ի մասնաւոր եւ յընդհանուր հալածանսն նահատակեցան. է՛ր զի առանձին, եւ է՛ր զի ընդ հովուի իւրեանց. եւ այնպէս վկայելով ճշմարտութեանն եւ աւանդելով յետագայից զքրիստոնէութիւնն հասուցին ցվախճան երրորդ դարու:

Առ այս նպատակ արժան է ընթեռնուլ զինչ ինչ հատուածս բանից ոմանց երեւելի հեղինակաց ի ծանօթութիւն նոցին ազգասէր ընթերցանելեացն:

Եւսեբի յԵկեղեցական պատմութեանն Բ-րդ դպրութեան ի գլուխ Ա. «Զի Թովմաս զԹադէոս իբրեւ ի զօրութենէ Աստուծոյ առաքեաց յՈւրհա (Եդեսիա) լինել նմա քարոզ եւ աւետարանիչ վարդապետութեանն Քրիստոսի, զի ի գրոց անտի (Եդեսիոյ) որ գտաւ անդ, ցուցաք յառաջ քան զփոքր մի: Իսկ իբրեւ եհաս նա յաշխարհն այն, զԱբգար բժշկեաց բանիւ Քրիստոսի եւ զամենայն մարդիկ աշխարհին զարմացոյց սքանչելի զօրութեամբքն, զոր գործեաց լի՛ կատարեալ: Իսկ ի ձեռն առաքելոցն իւրոց (աշակերտաց) առաքեաց նա (Թադէոս) զգործս իւր եւ մերձեցոյց զնոսա յերկրպագութիւն զօրութեանն Քրիստոսի. եւ արար զնոսա աշակերտս վարդապետութեան կենացն մինչեւ ցայսօր ժամանակի: Իբրեւ ի նմանէ ամենայն քաղաքն Ուրհայեցւոց անուանն Քրիստոսի մշտնջենաւորեալ է եւ օրինակ մեծ օգնութեան Փրկչին մերոյ յայտնի է ի նոսա. եւ սոքա ասացեալ են իբրեւ ի պատմութեանց առաջնոց»:

Եւ նոյնն՝ յԸ-րդ դպրութեան ի գլուխ 12. «Զի՞նչ պիտոյ է այսուհետեւ անուամբ յիշատակել զմնացորդացն, կամ թուել զբազմութիւն արանց կամ նկատել ազգի ազգի տանջանս սքանչելի վկայիցն, զի ի նոցանէ տապարօք կատարեցան որպէս զիարդ եղեւ յԱրաբիա եւ կիսոց բարձք խորտակեցան, որպէս եւ անցք անցին ընդ այնոսիկ, որ ի Կապադովկիայն էին. եւ այլք վերստին ի բարձու զոտից իւրեանց կախեցան. եւ հուր մխախառն եղեալ ի ներքոյ նոցա եւ ի ծխոյն հեղձնուին, որպէս եղեւ ի Միջագետս եւ զոմանց ունչս եւ զականջս դրոշմեցին եւ զմատունսն ծայրաքաղ արարին:... Բայց որ ահագին է լսելեաց անգամ՝ համբերէին. այլք ի կողմանէն Պոնտացւոց, զի եղեգունս սրեալս ի ծայրս մատանցն ի ներքոյ եղնգաց նոցա ցցեալ վարէին» եւ այլն:

Մովսէս Խորանացի ի Պատմութեան Հայոց (հատոր Բ-րդ, ի գլուխն 72). «Պերմելիանոս եպիսկոպոս Կապադովկացւոց էր այր սքանչելի յուսումնասիրութիւն... սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ... գրէ զբազումս վկայեալ եւ Խոսրովու (արքայի Հայոց) ի մերում աշխարհիս. համայն եւ յետ նորա օտարք յօտարաց, բայց զի ո՛չ ճշմարտութեամբ ոճով պատմէ եւ ոչ զանուանսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն, ոչինչ կարեւորագոյնս համարեցաք երկրորդել»:

Միխայէլ պատրիարգ Ասորւոց ի Պատմութեան իւրում առաջի առնէ ըստ այսմ. «Բայց զի փութով վճարեաց նախընթացն ի թագաւորս Աբգարոս զկեանսն եւ անհոգացեալ Սանատրուկ իշխանն թագաւորեաց միահեծան. եւ սպան զառաքեալն (Թադէոս) եւ զդուստր

իւր սուրբ կոյս (Սանդուխտ) զհաւատացեալն ի Քրիստոս: Եւ եղեւ փոխանորդ առաքելոյն Զաքարիա եպիսկոպոս. եւ զկնի այնորիկ եկն ի նոյն վիճակն Բարդուղէմիոս եւ ի նոյն թագաւորէ կատարեցաւ. եւ բարձաւ համարձակութիւնն հաւատացելոց, բայց հաւատն հաստատեալ առաքելական հիմամբ ո՛չ պակասեաց մինչեւ ի գալն առ նոսա սուրբ նահատակացն Հռիփսիմեանց եւ ի պատճառս նոցա հաւատալ Մեծին Տրդատայ ի նմին ցեղէ Աբգարու ի ձեռն մեծահանդէս վաստակաւորին Գրիգորի՝ որ եւ նա ցեղակից անդրանիկ պսակաւորին ի Քրիստոս Աբգարու երանելոյն ի Տեառնէ»:

Հայր Մկրտիչ Աւգերեան ի վախճան ճառի Բարդուղիմեայ առաքելոյ ի վարս սրբոց հատոր Թ-րդ, համար 446, այսպէս խօսի. «Եւ ըստ այսմ իրաւամբ ճանաչի եկեղեցի Հայաստանեայց աշակերտ հարազատ երկոցունց սուրբ առաքելոցս՝ Բարդուղիմէոսի, որ մին է յերկոտասանից, եւ Թադէոսի, որ էր յեօթանասնից. եւ հայրապետութիւն Հայոց կոչի եւ է աթոռակալութիւն, այսինքն յաջորդութիւն Աթոռոյ սրբոյն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի, զի թէպէտ սուրբ Լուսաւորիչն մեր ի Կեսարիա ձեռնադրեցաւ, այլ նստաւ յԱթոռ սուրբ առաքելոցս. այսինքն ի վիճակ նոցա, որ է Հայաստան աշխարհ, ուր ո՛չ երբէք պակասեաց յաջորդութիւն քրիստոնէութեան (եւ եպիսկոպոսութեան) ո՛չ միայն յԵդեսիա, որ յետ միանգամ լուսաւորութեան միշտ ունէր զհօտ հաւատացելոց ի ծոցի իւրում, այլեւ ի Մեծն Հայս, ուր կային քրիստոնեայք սփռեալք աստ եւ անդ հալածանօք հանդերձ, յորոց եւ զբազումս նահատակեաց Խոսրով արքայ Հայոց՝ հայրն Տրդատայ, ըստ գրելոյ Խորենացւոյն. իսկ առ Տրդատաւ յարոյց Աստուած Լուսաւորիչ համօրէն տանս Հայոց զերիցս երանելին զ Գրիգորիոս Պարթեւ՝ որպէս պարթեւական զաւակ կենդանի նշխարաց սրբոյն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ առաքելական հոգւով արժանաժառանգ Աթոռոյ սուրբ առաքելոցս»:

Կաթուղիկոսունք

ամք
Տեառն

188. Գրիգոր Լուսաւորիչ Պարթեւ՝ որդի Անակայ Պահ-
257 *լաւունւոյ, ծնանի ի Վաղարշապատ արքայանիստ քաղաքի*
258 *Հայոց, ընդ ձեռն դայեկին փախստեամբ զերծանի ի Կեսարիա Կապադովկացւոց եւ անդ սնանի եւ աճի կրթութեամբ*

քրիստոնէական հաւատոց եւ ամուսնացեալ ծնանի զերկուս
որդիս՝ զՎրթանէս եւ զԱրիստակէս: Ապա հաւանութեամբ
ամուսնոյն իւրոյ Մարիամայ հրաժարեալ յամուսնական
280 պարտաւորութեանց՝ գնայ, մտանէ ի ծառայութիւն Տրդա-
տայ որդւոյն Խոսրովու արքայի Հայոց, որ օր քան զօր
բարձրանայր ի պատիւ արիական քաջութեամբ իւրով յաշ-
286 խարհին Յունաց: Զարչարի ի Տրդատայ նորապսակ արքա-
յէ Հայոց յԵկեղեաց գաւառի եւ անկանի ի Խոր Վիրապն
301 Արտաշատ քաղաքի վասն ի Քրիստոս հաւատոցն: Ի Վի-
րապէ անտի ելանէ եւ լուսաւորէ զազգ Հայաստանեայց
թագաւորաւն հանդերձ եւ տեսանէ զայն հրաշալի եւ նո-
րապարգեւ տեսիլ տեսչութեանն Աստուծոյ առ ազգ Հա-
յաստանեայց: Եւ ապա հարկեցուցիչ խնդրանօք արքային
302 Տրդատայ եւ տեսլեամբ հրեշտակի Աստուծոյ գնայ ի Կեսա-
րիա Կապադովկացւոց եւ ձեռնադրեալ յեպիսկոպոս ի Ղե-
ւոնդեայ պատրիարգէ քաղաքին՝ վերադառնայ եւ շինէ
303 զվանս Իննակնեան տեղւոյն ի Տարօն գաւառի: Գայ ի Վա-
ղարշապատ քաղաք եւ շինէ ընդ արքային Տրդատայ զհո-
յակապ մեծ եկեղեցին ի նշանադրեալ տեղւոջն, զոր ի տես-
լեան ետես լուսաձեւ կամարայարկ ի քաղաքամէջ անդր
318 մերձ յապարանս արքունի: Ձեռնադրէ զորդի իւր զԱրիս-
տակէս յեպիսկոպոս փոխանորդ ինքեան խնդրանօք արքա-
332 յին Տրդատայ: Կարգէ զԱրիստակէս զորդի իւր կաթուղի-
կոս ազգին եւ ինքն առանձնանայ ի գաւառն Դարանա-
ղեաց, յայրն Մանեայ սրբոյ կուսին միոյն յընկերացն Հռիփ-
սիմեանց: Կեայր անդէն ի մարդկանէ անտես իբրեւ սերովբէ
երկնաւոր. ուրանօր եւ աւանդէ զհոգին ի դասս վերին
զինուորութեանցն: Եւ մաքուր մարմինն մնայ անթաղ եւ
անապական ի ժամանակս ինչ, մինչեւ հովուաց ոմանց
գտեալ կարկառ քարանց առնեն ի վերայ: Ապա ի նոյն դա-
րու, յորում հանգեաւ եւ ամփոփեցաւ անգիտելի յումեքէ,
յայտնեցաւ ի ձեռն ուրումն ճգնաւորի Գառնիկ անուանե-
լոյ, զոր բարձեալ անտի ամփոփեաց ի Թորդան գիւղ գաւա-
ռին այնորիկ եւ հուսկ յետոյ եբեր անտի ի Վաղարշապատ
քաղաք Արարատայ իշխանն Հայաստանի Գրիգոր Մամիկո-
նեան ամբողջ ամենայն ոսկերօքն, որպէս վկայեն ակնյայտ-
նի ստուգութեանն պատմիչք ազգի Հայոց, որպէս զփոխադ-
րութենէ նշխարացն, նմանապէս եւ զշինութենէ եկեղեց-

ւոյն ի պատճառս այնր փոխադրութեան՝ յառապար անդր Վաղարշապատու, որք են Սեբեոս եպիսկոպոս, Ստեփաննոս Ասողիկ, Զ-րդ Յովհաննէս կաթուղիկոս, Կիրակոս, Վարդան եւ Մովսէս Կաղանկատուացի Աղուանից պատմիչ:

Ըստ մտաց այսոցիկ պատմագրաց քաջայայտ ստուգի, թէ բացի գլխոյն եւ ի պատուական Աջոյն ոչինչ այլ մասունք նշխարաց Մեծին Գրիգորի Լուսաւորչի կան արտաքոյ Հայաստանի կամ սփռեալ եւ տարածեալ ուրեք:

Շնորհաբաշխ Աջն բազում վկայիւք հաստատեալ կայ արդէն աստ յԱթոռ այսր Կաթուղիկէ Էջմիածնի զկնի յոլով տեղափոխութեանց ի զանազան ժամանակս (60): Իսկ պատուական գլուխն, որ պահէր ի նոյն յիշատակեալ եկեղեցւոջ առապարին Վաղարշապատու, զոր շինեալ է Գ-րդ Ներսէսի կաթուղիկոսի Տայեցւոյ, որոյ եւ ծնօտն տուաւ Իսրայէլ եպիսկոպոսին Աղուանից, զկնի կործանման եկեղեցւոյն եւ աւերանաց Հայաստանի տարաւ այն ըստ այցելութեան վերջնոյն Գագկայ արքայի ի վանս Թաթլոյ եւ Վարոսի իբրեւ յանքոյթ ինչ տեղի: Եւ անտի մասն ինչ ի գլխոյն տարաւ Սմբատ Էլիկումեան Օրբէլեանց ի սուրբ ուխտն Նորավանից աշխարհին Սիւնեաց՝ ըստ վկայելոյ պատմութեան Օրբելեանց, զոր հանաք ի նախագահ վանիցն Սիւնեաց. «Գնաց (Սմբատ Էլիկումեան Օրբէլեանց վասն մայր փայտիցն ի Բասենոյ ի պէտս շինուածոցն Հուլաւու խանին) ի վանսն Թաթլոյ եւ բազում ծախիւք եւ մեծաւ ջանիւ էառ մասն ինչ ի գլխոյ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, զի կայր անդ մի կողմ գլխոյն,... զոր բերեալ եւ ժողովեալ էր անդ վերջին Գագիկ Թագաւորն Բագրատունի եւ եդեալ ի պահեստի ի կործանման ժամանակին եւ բերեալ զանպատմելի գանձն աստուածային, զարդարեաց ոսկւով եւ արծաթով եդեալ յաղիւսաձեւ պահարանի եւ բնակեցոյց ի գերահռչակ ուխտին Նորավանից»:

189. Արիստակէս կրտսեր որդի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. այն ինչ էր ստնդեայ մանուկ, կայր առ մօր իւրում յանապատի Կուսանաց. եւ ի զարգանալ հասակին չոգաւ առ միայնակեաց ոմն Նիկոմաքոս անուն եւ վարժեալ առ նմա վարուք սրբութեան եղեւ հոգելից մենաւոր եւ առանձնացաւ յանապատ ուրեք հրամանաւ վարդապետին իւրոյ. եւ ի լուսաւորիլ բովանդակ ազգի Հայոց յաստուածգիտու-

թիւն, ի ստիպմանէ խնդրակաց առաքելոցն ի Մեծէն Տրդատայ եկն ի Հայաստան առ Մեծն Տրդատ, ընդ որ ուրախ
318 *եղեալ արքայի՝ տայ ձեռնադրել սրբոյն Գրիգորի զնա ինքն զԱրիստակէս յեպիսկոպոս:*

Յերկրորդ ամի ձեռնադրութեանն իւր գնայ ընդ հօր իւրում եւ ընդ Մեծին Տրդատայ ի Հռովմ: Եւ զկնի դարձին
325 *գնայ ի ժողովն Նիկիոյ փոխանորդ հօր իւրում սրբոյն Գրի-*
332 *գորի: Յաջորդէ յաթոռ Հայրապետութեան յիսպառ առանձ-նանալն սրբոյն Գրիգորի յանապատս: Հովուեալ զազգն ողջոյն ուղղութեամբ հաւատոց՝ եղեւ օրինակ սրբութեան բազմաց: Շինեաց զեկեղեցիս եւ զմենաստանս կրօնաւորաց եւ զմեծ եկեղեցին ի գիւղաքաղաքին Խոգան, որ յաշխարհին Ծոփաց:*

Յամի 339, այն ինչ դէմ եդեալ գնայր յաշխարհն Ծոփաց յայցելութիւն հօտին յԱրքեղայոս անուն իշխանէ կանխաւ ոխացելոյ ընդ սրբոյն եւ ի դարան մտելոյն զճանապարհայն,
339 *սրով կատարի երանելին, զորոյ զմարմին բարձեալ աշակերտացն՝ հանգուցանեն ի Թիլն աւանի գաւառին Եկեղեաց:*

Աջ սրբոյ հայրապետիս գտանի աստ ի Կաթուղիկէ եկեղեցւոջ Սրբոյ Էջմիածնի (65, 78):

190. Վրթանէս երէց որդի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, որ ի հեռանալ ծնողացն՝ հօրն առ Տրդատ եւ մօրն յանապատս Կուսանաց, մնաց առ դայեակն իւր. եւ ի զարգանալ հասակին ամուսնացաւ անդ ի Կեսարիա Կապադովկացւոց. ուրանօր եւ ծնաւ զերկուս որդիս՝ զԳրիգորիս եւ զՅուսիկ. եւ ապա ընդ եղբօր իւրում Արիստակեայ եկն ընտանեօք ի կոչ արքային յԱրարատ:

Եւ ի կատարիլ նահատակութեամբ եղբօրն յԱրքեղայոս
339 *իշխանէ՝ հարկեցուցիչ խնդրանօք արքային յաջորդէ յԱ-թոռ հայրապետութեանն զկնի կանխաւ հրաժարելոյն յամուսնական պարտուց պարկեշտ ամուսնոյն իւրոյ. եւ գործակցութեամբ մեծի արքային ըստ իմաստութեան հոգւոյն շնորհաց հովուէր զազգն:*

Գրութեամբ իւրով առ Մակարիոս եպիսկոպոսապետ
340 *Երուսաղէմի ընկալաւ զկանոնս ծիսից եւ պաշտամանց խորհրդոց եկեղեցւոյ ի պէտս հօտի Հայաստանեայց: Զկնի այսր խնդրեաց թղթով զինչ ինչ բանս վերաբերեալս առ բանս հաւատոյ եւ առ վարդապետութիւնս ի սրբոյն Յակո-*

բայ Հայրապետէն Մծբին քաղաքի. եւ ընկալաւ զայն ու-
թեւտասան գլխովք, որ արդ անուանի Զգօն մատեան, յա-
նուն սրբոյ Հայրապետին:

Զկնի վախճանի արքային Տրդատայ դրդեալ յոմանց իշ-
խանաց արք արիւնահեղք այն ինչ կամէին պատահիլ սրբոյ
Հայրապետին սրով անդ ի Մատրավանս, կապեցան ձեռք նո-
ցա յաներեւոյթ զօրութենէ՝ մինչեւ երանելւոյն անցեալ անվ-
նաս ընդ մէջ նոցա, գնաց յԵկեղեաց գաւառ ի Թիլն աւան:

Գրութեամբ իւրով ընդ նախարարսն առ Կոստանդ կայսր
343 տայ թագաւորեցուցանել Հայոց զորդին Տրդատայ զԽոսրով
353 Բ: Զկնի վախճանի սորին Խոսրովու անցանէ ի Կոստանդի-
նուպոլիս ընդ ոմանց նախարարաց առ կայսր՝ ուր թագաւո-
րեցուցեալ զՏիրան Խոսրովեան՝ դառնայ ի Հայս: Եւ ապա
355 լցեալ զաւուրս կենաց իւրոց վախճանի, որոյ զմարմին
ամփոփեն ի Թորդան գիւղ գաւառին Դարանաղեաց:

191. Յուսիկ որդի Վրթանիսի որդւոյ սրբոյն Գրիգորի
Լուսաւորչի ծնեալ ի Կեսարիա Կապադովկացւոց եւ զկնի
գալստեան յԱրարատ ընդ ծնօղացն՝ ամուսնացեալ ընդ
դստեր Տիրանայ արքայի՝ ծնանի զերկուս որդիս զՊապ եւ
զԱթանագինէ. եւ յետ այնր հրաժարեալ յաշխարհային
զբաղմանց՝ ընդ հոգեւորսն կրթէր:

356 Ուստի զկնի վախճանի հօր իւրում ընտրեցաւ եւ կարգե-
ցաւ ի կաթուղիկոսութեան Աթոռ եւ հովուէր զժողովուրդն
արթնութեամբ եւ անվեհեր խրատուք առ ամենայն հասակ:

Խորտակէր ընդ ոտիւք զպատկեր Յուլիանոսի կայսեր,
զոր ընկալեալ էր արքայն Հայոց Տիրան եւ կամէր կանգնել
յիւր արքայական եկեղեցւոջ գաւառին Ծոփաց: Ապա ի
հրամանէ նորին Տիրանայ վասն երկիւղին Յուլիանոսի՝
362 երանելին Յուսիկ գանեալ ջայլոտիւք վախճանի յանօրէն
ձեռաց: Եւ զմարմինն բարձեալ սարկաւագաց հանգուցա-
նեն ի Թորդան առ հօր իւրում:

192. Փառներսեհ կամ Փառէն անուն, որ յԱշտիշատ
աւանէ ի վանաց Սրբոյն Յովհաննու Կարապետի, սակս չլի-
նելոյն յայնժամ ոք անդ ի ցեղէ սրբոյն Գրիգորի, հաւանու-
362 թեամբ արքային Տիրանայ եւ նախարարացն կացուցանի
յԱթոռ Հայրապետութեանն, որոյ կացեալ ի նմին զամս իբր
364 երիս՝ վախճանի:

193. Ներսէս Մեծն՝ ըստ շնորհալիից զաւակ բարեզգեաց շառաւիղեալ յարմատոց բարեաց Թոռն Թոռին սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, որ զկնի ծննդեան եւ աճման հասակին առաքեցաւ ի Կեսարիա Կապադովկացւոց ի վարժս հելլէն դպրութեան. եւ առաւել եւս ուսման վասն՝ չոգաւ ի Կոստանդինուպոլիս, ուր եւ ամուսնացաւ ընդ դստեր ուրումն մեծի իշխանի Ասպիոնէս անուն: Ապա զկնի վախճանի Փառներսէհ կաթուղիկոսի ընտրեցաւ ի նախարարաց եւ յարքայէ Հայոց Արշակայ եւ ըստ խորհրդոյ նոցին եկեալ ի
364 *Կեսարիա Կապադովկացւոց՝ ձեռնադրեցաւ եպիսկոպոսապետ Հայոց, յորոյ վերայ ի ձեռնադրութեանն երեւեցաւ եւ շնորհք Հոգւոյն Սրբոյ:*

Եկն անտի ի Հայաստան իբրեւ արփի գունագեղ իմաստութեամբ եւ սրբութեամբ. ընդ որ խնդաց ազգն ողջոյն, զի ետես անդրէն յԱթոռ հայրապետութեան զշառաւիղն սրբոյն Գրիգորի:

Ի յաջորդ ամի հայրապետութեան իւրոյ հաւանութեամբ
356 *Արշակայ արքայի գումարեաց ժողով մեծ յԱշտիշատ քաղաքի յեպիսկոպոսաց եւ ի նախարարաց եւ հաւանութեամբ ամենեցուն եբարձ զմերձաւոր խնամութիւն, արգել զկոծ դնելն ի վերայ մեռելոց հեթանոսաբար, ետ շինել հրամանաւ արքայի ուրկանոցս եւ անկելանոցս ժողովելով յայնս զուրուկս, զկոյրս եւ զանպիտանացեալ անձինս յապրուստ կենաց, որք յառաջն անյարկ աստանդական տառապէին. ըստ այսմ եւս ետ կառուցանել զորբանոցս եւ զայրիանոցս, յորս ետ ժողովել զայնպիսիսն խնամօք. ետ կառուցանել եւ զօտարանոցս, հիւրանոցս ըստ այլոցն յամենայն նահանգս աշխարհիս. եւս եւ զմենաստանս եւ զկուսաստանս եւ ժողովեաց յայնս զթափառիկ շրջող կրօնաւորսն եւ զանխնամ կուսանսն եւ վասն ամենեցուն սոցա կառավարութեան եւ ապրուստի կենաց ետ կարգել յարքունուստ հասոյթս եւ դարմանս եւ հաստատեաց արքունի հրովարտակաւ: Ի վերայ ուրկանոցաց, հիւանդանոցաց եւ անկելանոցաց կացոյց տեսուչ եւ հոգատար զսարկաւագն զԽադ, իսկ ի վերայ կրօնաստանաց զայրն սուրբ զՇաղիտայ, զԵպիփան, զԵփրեմ եւ զԳինդ Սղկունի: Եւ այսու օրինակաւ վայելչացոյց զՀայաստան աշխարհ իբրեւ զբարեկարգեալ գերդաստան մի:*

366 Գնայ ընդառաջ Թէոդոսի սպարապետի եւ հանդարտե-
ցուցանէ զնա յելանելոյ ի Հայս պատերազմաւ եւ անտի
անցեալ առ կայսր, որում եւ հաճոյ գտեալ իմաստութեամբ
եւ առաքինութեամբն՝ մեծարի ի կայսերէ եւ ընկալեալ
զամենայն զպատանդսն՝ զընտանիսն Տրդատայ եղբօր
Արշակայ եւ զայնս, զորս տարեալ էր Յուլիանոսի, վերա-
դառնայ ի լիակատար խնդութիւն աշխարհին:
368 Անէծ զնա ինքն զԱրշակ արքայ վասն սպանանելոյ նորա
զանմեղն զԳնէլ ըստ խրատու չարայոյզ արանց եւ վասն
անդարձ մնալոյն ի չարաչար վարս, եւ տեսեալ եւս եթէ
369 անդարձ է նա ի գործս իւր, առանձնացաւ ի Վաղարշա-
պատ քաղաքէ յանապատ տեղիս:
Ի փախուստ լինելն Արշակայ ի կողմանս Վրաց եւ ի յառ-
նելն նախարարաց ի քակել զԱրշակաւան կոտորմամբ
ընակչացն եւ աւերութեամբ շինուածոցն, փութացեալ առ
374 նախարարսն թափէ ի սրոյ զստնդեայ զմանկունսն, որոց
կարգեալ զսնուցիչս, կարգէ եւ դարման պիտոյից կենաց
նոցա:
Հաշտեցուցանէ զնախարարսն ընդ Արշակ եւ ապա գնայ
միւսանգամ ընդառաջ Թէոդոսի սպարապետին Յունաց եւ
378 զիջուցանէ զնա. եւ ընդ նմա գնայ ի Կոստանդինուպոլիս
առ Վաղէս կայսր: Այլ կայսրն ո՛չ հաճեցաւ ընդ գործ սպա-
րապետին եւ ո՛չ ընկալաւ զմիջնորդութիւն Մեծին Ներսէ-
սի եւ ցասուցեալ եւս ետ աքսորել զսուրբ հայրապետն ի
կղզի ինչ Պատմոս կոչեցեալ ըստ Ասողկայ:
379 Դառնայ յաքսորանացն ի Մեծէն Թէոդոսէ եւ գտանի ի
381 ժողովի հարիւր յիսուն հարց գումարելոց ի Կոստանդնու-
պոլիս եւ թագաւորեցուցեալ Հայոց զորդին Արշակայ
զՊապ՝ վերադառնայ պատանդօքն եւ նորապսակ թագաւո-
րաւն ի փրկութիւն աշխարհին փութալով ի ձեռաց Պար-
սից. որ եւ նոքին իսկ պարսիկք խորտակեցան առաջի
զօրացն Հայոց եւ Յունաց ի Ձիրաւ դաշտի ըստ սաղրելոյ
աղօթից սրբոյն Ներսէսի:
Զկնի այսոցիկ ամենայնի ազգօգուտ վաստակօք եւ
383 ճգանց ի բարեկարգութիւն եւ ի շինութիւն ազգին՝ փոխի
յանցաւորացս ի յաւիտենականն քաղաք վերին գաւառի՝
դեղովք մահու ի Պապայ արքայէ ի 5 տրէ ամսոյն, որ է Ա

օր յուլիսի. որոյ զմաքուր մարմինն մեծաւ ուղարկաւորութեամբ հանգուցանեն ի Թիլն աւանի ի մեծ եկեղեցւոջն:

Զկնի անցանելոյ ժամանակաց քակեցաւ այս եկեղեցի ի թշնամեաց եւ անյայտացաւ տեղի գերեզմանի Մեծին Ներսէսի. եւ մնաց այնպէս անգիտելի յումեքէ մինչեւ ցամ Տեառն 1272. յորում յամի տեսլեամբ յայտնեցաւ յառաջին աւուր փետրվարի եւ զԱՋ նորա պատուեաց Սարգիս եպիսկոպոս գաւառին Երզնկայի յեկեղեցւոջ յիւրմէ կառուցելոյ. իսկ զմիւս բազուկն ետ ի Տիրաշէն, զոր եւս իւր էր շինեալ յայնկոյս գետոյն Եփրատայ:

194. Շահակ յազգէ Ալբիանոսի արքեպիսկոպոսին Հարքայ ի Մանազկերտ քաղաքէ գաւառին Ապահունեաց՝ ընտրութեամբ Պապայ արքայի եւ հաւան խորհրդով մեծամեծաց ազգին նստի կաթուղիկոս եւ կացեալ յայնմ զամս իբրեւ երկու՝ փոխի յաստի կենաց:

195. Զաւէն յազգականութենէ անտի Ալբիանոսի յաջորդէ յաթոռ հայրապետութեանն եւ կացեալ յիշխանութեանն զամ մի վախճանի:

196. Ասպուրակէս. սա եւս ի նոյն ազգէ նստի յաթոռն հայրապետական եւ յետ պաշտելոյն զայն իշխանութիւն զամս երիս՝ վախճանի:

197. Սահակ Ա Պարթեւ Մեծ, հարազատ որդի Մեծին Ներսէսի՝ որդւոյ Աթանագինեայ, որդւոյ Յուսկանն, որդւոյ Վրթանիսի, որդւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, որ ի վախճանիլ հօր իւրոյ կայր ի Կոստանդինուպոլիս եւ պարապէր ի հրահանգս իմաստութեան եկեղեցական եւ արտաքին գրոց. սա լեալ արժանաւոր ժառանգ հայրենի առաքինութեանցն վերակոչեցաւ յԱթոռ հայրապետութեան ազգին եւ հետեւեալ բարեբախտութեան հայրենեաց լուսաւորէ զՀայաստան: Գնայ ի Պարսս առ Արտաշիր ի սակս ինչ ինչ բարեդիպութեանցն ազգին. նորոգէ զտաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ զկործանեալն ի զօրացն Շապհոյ. ձեռնտուութեամբ իւրով ի կազմել սրբոյն Մեսրովպայ մեծի վարդապետի զհայերէն տառս ըստ վերնատուր շնորհացն, լրացուցանէր զթարգմանութիւն Սուրբ Գրոց: Երթայ դարձեալ ի Պարսս առ Յազկերտ եւ դարձուցանէ զԽոսրով ի տէրութիւնս Հայոց. զիջուցանէ զՅազկերտ արքայ Պարսից ի հալածելոյ զքրիստոնեայս. գնայ ի մասն Հայաստա-

384 386 386 387 387 390 390 392 395 411 413 418 420

նի, որ ընդ իշխանութեամբ Յունաց եւ գրեալ թուղթ առ
կայսրն ընդ ձեռն մեծի վարդապետին Մեսրովպայ՝ բանայ
եւ յայնմ բաժնի դպրոցս հայերէն գրոց. դառնայ ի մասն
Պարսից ի Վաղարշապատ քաղաք խորհրդով նախարա-
ցացն եւ թագաւորեցուցանէ զԱրտաշէս որդի Վռամշապ-
հոյ հաճութեամբ Վռամայ արքային Պարսից, որ փոխեալ
425 *զանունն ետ կոչել Արտաշիր յանուն նախնւոյն իւրոյ: Ա-*
ռաքէ զաշակերտսն յայլեւայլ քաղաքս Յունաստանի եւ
426 *Ասորեստանի ի թարգմանութիւնս գրոց մատենից. բարե-*
կարգէ զպաշտամունս եկեղեցական ընթերցուածոց եւ առ-
նէ ժողով ի Վաղարշապատ քաղաքի վասն բարեկարգու-
427 *թեան եկեղեցականաց: Զմիաբանի ընդ նախարարսն ի*
խորհուրդ անկման Արտաշրի արքայի Հայոց. որոյ վասն
գնայ ի Պարսս ի խնդրելն զնա Վռամայ եւ արգելեալ լինի
432 *անդ իբր ի բանտի*[1]*: Դարձ առնէ անտի ի Հայս յաջողու-*
435 *թեամբ: Գրէ թուղթ ուղիղ դաւանութեան հաւատոյ հան-*
դերձ եպիսկոպոսօք իւրովք առ Պրոկղ ընդդէմ գրոցն Թէո-
դորոսի Մոպսուեստացւոյ: Հարկի ի թախանձանաց նախա-
րարացն վերստին ունել զբովանդակ զառաջնորդութիւն
ազգին. թէպէտ ո՛չ առնու յանձն զայն ինչ, բայց եւ այնպէս
ո՛չ դադարէր յամենայն կեանս իւր թողուլ ի ձեռաց զօգուտ
ինչ հայրենեաց եւ եկեղեցւոյ. եւ այսպիսի երկնաշնորհ
440 *առաքինութեամբ փարթամացուցեալ զվաստակս իւր՝ փո-*
խի յաստեացս յանդրանկացն եկեղեցի ի Բագրեւանդ գա-
ւառի, ի գիւղն Բլուր, ի հասակի իննսուն ամաց յամի Տեառն
440, ի վախճան նաւասարդի ամսոյն որ է իններորդ օր
սեպտեմբերի, յորում աւուր եւ ծնեալ իսկ էր: Ապա զսրբաս-
նեալ մարմին գերերջանիկ Պարթեւի հօրս Հայաստանեայց
բարձեալ աշակերտացն եւ նորուն Երեմիա սարկաւագի
փառացի ուղարկաւորութեամբ եւ բազմատխուր սգովք
տարին ի Տարօն, ի գիւղն Աշտիշատ եւ անդ ամփոփեցին,
որոյ գծախսն հանդիսի ուղարկաւորութեանն ջերմեռան-

[1] Ի սոյն միջոցի ի կենդանութեան սրբոյ հայրապետին մեծին Իսահակայ կալան զաթոռն հայրապետութեան անարժան անձինք երեք. առաջին՝ Սուրմակ անուն ի Բզնունեաց, ի գեղջէ Արծկէոյ զամ մի. երկրորդն՝ Բրքիշոյ անուն Ասորի ազգաւ իբր զամս երիս. երրորդն՝ Շմուէլ անուն ի նոյն Ասորի ազգէ զամս հինգ. զորոց զանօրինակ ընթացսն եւ զվատթար գործսն տեսանելով նախարարացն Հայոց մի զկնի միոյ կացուցին եւ անդրէն խստեալ անարգեցին. եւ ի վախճանի ստրջացեալ յարարս իւրեանց գնացին անկան յոտս երանելոյն Իսահակայ եւ խնդրէին զներումն:

դութեամբ արար Դխտիկ անուն տիկինն Մամիկոնէից՝ կինն Վարդանայ Թոռին սրբոյ հայրապետիս. եւ սահմանեցին տօն կատարել ամ ըստ ամէ ի Լ [30]-րդ օր նաւասարդի[1]:

198. Սուրբ Յովսէփ ի Հողացիմ գեղջէ Վայոց ձորոյ աշխարհին Սիւնեաց. յերեւելի աշակերտաց անտի սրբոցն Իսահակայ եւ Մեսրովպայ, որոյ եւ յանձնարարութեամբն
441 իսկ կարգեցաւ ի նախարարացն կաթուղիկոս ազգին. վասն
ինչ ինչ անկարգութեանց նորոգ մտելոց յեկեղեցի ի թուլա-
447 մորթ անձանց արար ժողով ի Շահապիվան Ծաղկոտն գաւա-
450 ռի. դարձեալ ժողով արար յեպիսկոպոսաց եւ ի նախարա-
րաց յԱրտաշատ քաղաքի, յորում եւ պատասխանի արար
Թղթոյն Յազկերտի արքային Պարսից ունայնացուցանելով
զառասպելայօդ բանսն նորին. յայսմ ժողովի խորհրդակցու-
թեամբ ամենեցուն գրէ թուղթ եւ առ կայսրն Յունաց Թէո-
դոս փոքր՝ օգնել ազգին ի վաղահաս վտանգէն ի Պարսից
451 անտի: Ըմբռնի երանելին Յովսէփ չարահար խաբէութեամբ
անօրինին Վասակայ տեառն Սիւնեաց եւ դնի ի կապանս. եւ
454 նոյն կապանօքն տանի ի Պարսս երիւք ընկերօք: Կատարի
վկայական մահուամբ հանդերձ ընկերակցովքն անդ ի Պարս-
կաստան յԱպար աշխարհի, յամի 454, ի քսան եւ հինգե-
րորդ աւուր հրոտից ամսոյն, այն է ի 31 յուլիսի:

199. Մելիտէ յարքեպիսկոպոսութենէն Մանազկերտոյ ընտրութեամբ նախարարացն եւ հաւանութեամբ սրբոյն
453 Յովսէփայ կացուցաւ յԱթոռ կաթուղիկոսութեան. կացեալ
457 սորա յայնմ պաշտաման իբրեւ զամս հինգ, վախճանի:

457 200. Մովսէս Ա, ի նոյն ազգէ Մանազկերտեայց յաջորդէ
յԱթոռ հայրապետութեանն. եւ հովուեալ զազգն իբրեւ
465 զամս ութն՝ վախճանի:

201. Տէր Գիւտ՝ մի յերեւելի աշակերտաց սրբոց թարգ-
մանչացն Իսահակայ եւ Մեսրովպայ, ի գեղջէ Արահեզայ
գաւառին Տայոց՝ այր ընտիր եւ ճոխ քաջավարժ ի գիտու-
465 թիւնս յունական դպրութեան՝ կարգի յԱթոռ հայրապետու-
թեան: Առ ի պաշտպանել ինքեան յանձն եղեալն զհօտ ի
472 կրակապաշտութենէ՝ առաքի ի Պարսս ամբաստանութեամբ

[1] Զկնի փոխման մեծի հայրապետին Իսահակայ Պարթեւի մեծ վարդապետն Մեսրովբ խնամ կալեալ կաթուղիկոսական Աթոռոյն եւ հոգեւոր պահպանութեան ազգին՝ կատարեաց զպաշտօն տեղապահութեանն զամիսս վեց. եւ կնքեաց զարդիւնալից կեանս իւր ի 13 ամսոյն մեհեկանի, այն է ի 19 փետրվարի 441 ամի:

Գաղիշեայ Խորխոռունեոյ Մաղխազեանց: Ըստ հրամանի արքային Պարսից Պերոզայ անկանի յիշխանութենէ. եւ անտի վերադարձեալ երանելւոյն ի Հայաստան՝ առնու զվախճան յաստի կենաց. որոյ եւ զմարմինն ամփոփեն ի գիւղն Ոթմսու գաւառին Վանանդայ ի դիրս հանգստեան հարց նորա:

202. Քրիստափոր Ա, յԱրծրունեաց ազգէ զկնի անկման Գիւտայ ըստ հրամանի արքային Պերոզայ կարգի յաստիճան հայրապետութեանն: Պահպանէ զազգն անարատ ի հերձուածոցն նեստորականին Բարծումայի. եւ այնպէս կացեալ յիշխանութեանն զամս հինգ՝ վախճանի:

203. Յովհան Մանդակունի յաշակերտաց անտի սրբոցն Իսահակայ եւ Մեսրովպայ ընտրութեամբ Վահանայ Մամիկոնէի նստի կաթուղիկոս: Ազգու խրատուք յորդորանաց խրախուսէ զմիաբանեալսն ընդ Վահանայ ընդդէմ Պարսից: Ի պատերազմին որ ընդ զօրս Պարսից մերձ ի Դուին քաղաք խոցի ի զօրաց անտի եւ զերծանի այցելութեամբ Տեառն:

Գնայ ընդառաջ Վահանայ ի խնդակցութիւն, որ գայր ի Պարսից արքայէ ընդ ոմանց նախարարաց բարեդէպ յաջողուածովք:

Ի գալ հասանել հրովարտակի արքային վասն իշխանութեան Վահանայ ի Դուին, խօսի երանելի հայրապետս ի խնդութեանց սրտին զայն յորդորական ճառ առ ուխտապահ նախարարսն:

Յետ վաստակելոյ բազումս յեկեղեցի Աստուծոյ՝ վախճանի եւ զնի մարմինն ի տապանի ի գիւղն Բեռնոս, որ ի Շիրակ գաւառի:

204. Տէր Բաբգէն յաշակերտութենէ Յովհաննու Մանդակունւոյ ի գաւառէն Վանանդայ յՈթմսոյ գեղջէ կարգի կաթուղիկոս: Ժողով արարեալ յեպիսկոպոսաց Հայոց, Վրաց եւ Աղուանից ի Վաղարշապատ քաղաքի ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոջ Էջմիածնի՝ ի բաց հերքէ զժողովն Քաղկեդոնի. եւ կացեալ զկնի ժողովոյն զամ մի՝ վախճանի:

205. Սամուէլ ի գեղջէ Արծկէոյ, գաւառին Բզնունեաց յաջորդեաց յաթոռ հայրապետութեանն. եւ կացեալ ի նմին զամս տասն՝ վախճանի:

206. Մուշէ ի գեղջէ Այլաբերից գաւառին Կոտայից կարգի կաթուղիկոս. եւ կացեալ յայնմ զամս ութն՝ վախճանի:

510 *207. Սահակ Բ, ի Հարք գաւառէ, ի գեղջէ Ուղկայ նստի*
515 *յԱթոռ Հայրապետութեան եւ զկնի հինգ ամաց՝ վախճանի:*

208. Քրիստափոր Բ, ի գաւառէն Բագրեւանդայ, ի Տի-
515 *բառիճ գեղջէ՝ կոչեցաւ յԱթոռ կաթուղիկոսական. եւ եկաց*
521 *յայնմ իշխանութեան զամս վեց եւ վախճանեցաւ:*

209. Ղեւոնդ ի գաւառէն Առբերանւոյ, յԱռեստ գեղջէ
521 *յաջորդեաց ի Հայրապետութեան. եւ եկաց զամս երիս եւ*
524 *վախճանեցաւ:*

210. Ներսէս Բ, ի գաւառէն Բագրեւանդայ, ի գեղջէ
524, 527 *Աշտարակաց յաջորդէ յԱթոռ Հայրապետութեան. արար*
ժողով ի Դուին քաղաքի ի բարեկարգութիւն եկեղեցւոյ. եւ
533 *կացեալ զամս իբր եօթն՝ վախճանի:*

211. Յովհաննէս Բ, ի վանականութենէ վանացն Թաթլոյ,
533 *ի գաւառէ Գաբեղենից, ի գեղջէ Սիւնձեղնոյ նստի կաթու-*
542 *ղիկոս. ընդ մէջ Յունաց եւ Պարսից պատգամաւորութիւն*
նորա յաղագս հաշտութեան. եւ կացեալ յայնմ պաշտաման
551 *մեծի զամս տասն եւ եօթն եւ ամիսս ինչ՝ վախճանի:*

212. Մովսէս Բ, յԱրագածոտն գաւառէ, ի գեղջէ Եղի-
վարդայ սնեալ եւ վարժեալ ի տան կաթուղիկոսարանին,
551 *այր մեծիմաստ եւ հանճարաւոր, կարգեցաւ կաթուղիկոս.*
եւ ի սկզբան առաջին ամի հայրապետութեանն իւրոյ ժողով
արար յեպիսկոպոսաց եւ յիմաստուն արանց եւ ետ ուղղել
եւ նորոգել զտումար Հայոց՝ յորմէ սկսանի հայ թուական եւ
552 *է այժմ՝ ՌՄՂԱ [1842]: Առաքէ հրեշտակս հանդերձ թղթով*
ա *առ Խոսրով արքայ Պարսից, որով եւ մեղմէ զխստութիւն*
մոգուցն ի բռնադատելոյ զքրիստոնեայս վասն հաւատոյ:

578 *Աղաչէ զերեսս Խոսրովու Պարսից արքայի եւ զիջուցանէ*
զնա ի ցասմանէ վնասուցն առ հայազունսն, որ յայնմ ժա-
մանակի եկեալ էր զօրօք ի Հայաստան ընդդէմ Յունաց: Հա-
սեալ ի ծերութիւն եւ անկարացեալ ի կառավարել զազգն՝
581 *կարգէ փոխանորդ ինքեան եւ գործակատար զՎրթանէս*
վարդապետն Քերթող անուանեալ: Եւ ապա խոնարհեալ ի
593 *խորին ծերութիւն վախճանի՝ վարեալ զիշխանութիւնն թէ*
առանձին եւ թէ ընդ Վրթանիսի զամս քառասուն եւ երեք:

213. Աբրահամ Ա, եպիսկոպոս Ռշտունեաց, ի գեղջէ
Աղբաթանից. զկնի վախճանին Մովսէսի Բ, անցեալ ամիսս
594 *ինչ՝ կարգի կաթուղիկոս ընտրութեամբ Սմբատայ Հայազն*
595 *մարզպանի: Գրէ թուղթ առ Կիւրիոն կաթուղիկոս Վրաց*

վասն անիրաւ զրպարտանացն զՄովսէս եպիսկոպոսէ Ցրտաւայ, որպէս առ Ուխտանէսի: Ընկալեալ զպատասխա-
596 *նի ի Կիւրիոնէ՝ առնէ ժողով ի Դուին քաղաքի յերեւելի եպիսկոպոսաց եւ յայլոց նշանաւոր անձանց, ուր ներկայ գտաւ եւ Սմբատ մարզպան Հանդերձ այլ եւս նախարա-բօք ոմամբք եւ քննեալ յայնմ զանմիաբան պառակտումն Վրաց ընդ ձեռն Կիւրիոնի յեկեղեցւոյ Հայոց՝ զգուշացոյց զազգն չխառնիլ ամենեւին ընդ Վիրս ո՛չ խնամութեամբ եւ ո՛չ առեւտրութեամբ վաճառաց. եւ յետ այնր կացեալ այլ*
616 *եւս ամս ընդ ամենայն ԻԳ [23]՝ վախճանի:*

214. Կումիտաս յԱրագածոտն գաւառէ, ի գեղջէ Աղձից,
617 *յեպիսկոպոսութենէ Տարօնոյ Մամիկոնեանց յաջորդէ յԱ-*
618 *թոռ հայրապետութեանն. ձեռնարկեալ տայ նորոգել ի հի-մանց զեկեղեցի սրբուհւոյն Հռիփսիմեայ եւ երգէ զվայելուչ շարականն՝ Անձինք նուիրեալք եւ այլն. տայ շինել եւ զմեծ Կաթուղիկէն տաճարի սրբոյ Էջմիածնի ի կոփածոյ քարանց, որ յառաջն փայտեայ էր (11). կացեալ ի հայրապետութեան*
625 *զամս ութն՝ վախճանի, որոյ եւ մարմին ամփոփի ի մէջ նոյն եկեղեցւոյ սրբոյ կուսին զառաջեաւ բեմին սեղանոյ ուղղա-կի, ուր կայ ցարդ տեղին որոշակի յատկացեալ մեծ վիմաւ հաւասար ընդ սալայատակին, բայց առանց գրոյ:*

215. Քրիստափոր Գ, ի գաւառէ Ապահունեաց, յազատ տանէ՝ յազգականութենէ Աբրահամու կաթուղիկոսի՝ ընտ-
625 *րութեամբ Վարազտիրոցայ եւ այլոց նախարարաց կարգի կաթուղիկոս: Ի պատճառս չփոթութեան ինչ ծագելոյ ընդ*
628 *մէջ նախարարաց, որպէս թէ նա իցէ պատճառ այնմ, հրա-ժարի ինքնին յիշխանութենէ հայրապետութեան եւ գնա-ցեալ յոտն Մասեաց լերին յՈւղեաց գիւղ՝ շինէ անդէն վանս կրօնաւորաց եւ մնացեալ անդ խստակրօն վարուք՝ վախ-ճանի:*

216. Եզր ի Նիգ գաւառէ, ի Փառաժնակերտ գեղջէ, ի
628 *փակակալութենէ Սրբոյն Գրիգորի՝ որ ի Դուին, նստի յա-թոռ կաթուղիկոսութեան: Հրաւիրեալ ի Հերակլ կայսերէ*
629 *գնայ ի Թէոդուպոլիս (Կարին) առ նա եւ հարկեալ ընդու-*
630 *նի զժողովն Քաղկեդոնի: Տայ շինել զեկեղեցի սրբուհւոյն Գայիանեայ. եւ կացեալ ի հայրապետութեանն զամս աւելի*
639 *քան զտասն՝ վախճանի:*

640 *217. Ներսէս Գ, ի գաւառէ Տայոց յԻշխան գեղջէ՝ կարգի*
641 *կաթուղիկոս ընտրութեամբ նախարարացն. ետ շինել ի վե-*
բայ Խոր Վիրապին Արտաշատու եկեղեցի. նորոգ հիմնա-
դրութեամբ եւս տայ շինել եկեղեցի մեծ եւ հոյակապ մերձ
յէջմիածին յարեւելս նորա կէս ժամ հեռաւորութեամբ, յո-
րում տեղւոջ ասեն՝ Տրդատայ արքայի ելանել ընդառաջ
642 *սրբոյն Գրիգորի յելսն ի Վիրապէն. հաշտեցուցանէ զսիրտ*
կայսեր Կոստանդեայ առ Վարազտիրոց ասպետ եւ տայ եւս
645 *կացուցանել զնա կիւրապաղատ Հայոց. գումարէ ի Դուին*
քաղաքի ժողով յեպիսկոպոսաց եւ ի նախարարաց վասն
բարեկարգութեանն եկեղեցւոյ: Գնայ բազմութեամբ ընդա-
ռաջ Կոստանդին կայսեր Յունաց եւ զիջուցանէ զցասումն
647 *սրտի նորա, որ առ ազգն. եւ ընկալնու զնա զկայսրն ի կա-*
648 *թուղիկոսարանի իւրում ի Դուին: Գրէ համաձայնութեամբ*
եպիսկոպոսաց եւ իշխանաց պատասխանի թղթոյ կայսերն
Յունաց եւ ինքն խոյս տայ յաթոռոյ իւրմէ եւ գնայ ի Տայս
յերկիւղէ նախարարացն, մանաւանդ Թէոդորոսի Ռշտուն-
ւոյ: Զկնի վեց ամաց՝ ի վախճանիլ նոյն Թէոդորոսի Ռշտուն-
654 *ւոյ, դառնայ վերստին յաթոռ իւր: Ի բաց վարէ հալածական*
655 *յաշխարհէ Հայոց զաղանդաւորս ձեռնտուութեամբ իշխա-*
նաց ազգին: Եւ կացեալ ի հայրապետութեան զամս քսան՝
661 *վախճանի եւ դնի մարմին նորա ի հիւսիսոյ կողմանէ եկե-*
ղեցւոյ Վիրապին Արտաշատու, զոր իւր էր շինեալ:

218. Անաստաս ի գեղջէ Ակոռոյ, որ յոտին Մասեաց մեծի
648 *լերին, կարգեցաւ վերակացու շինուածոց մեծի եկեղեցւոյն*
հիմնարկելոյ յԳ Ներսէս կաթուղիկոսէ մերձ յէջմիածին՝ ի
661 *փախչել նորա ի Տայս: Յաջորդեաց յԱթոռ հայրապետու-*
թեան, մկրտեաց զՍուրհան պարսիկ, որ անուանեցաւ Դա-
ւիթ: Շինեաց վասն կրօնաւորաց ի հայրենի գեղջ իւրում
յԱկոռի. եւ ի նմա եկեղեցի փառաւոր եւ աղքատանոցս
եւ հիւրանոցս. եւ ետ առնել Անանիա վարդապետի Շիրա-
կացւոյ նորոգութիւնս Հայոց տումարի եւ այն ինչ կամէր
հաստատել զայն ժողովով՝ հասեալ ի կէտ կենաց վախճանի,
667 *կացեալ ի հայրապետութեան զամս վեց:*

645 *219. Իսրայէլ ի Վանանդայ, յՈթմսոյ գեղջէ. գտանի ի ժո-*
667 *ղովն Դունայ առ Գ Ներսէս կաթուղիկոսիւ. յաջորդէ յաթոռ*
677 *կաթուղիկոսական եւ կացեալ յայնմ զամս տասն վախճանի:*

220. Սահակ Գ, ի Ձորափորոյ յԱրքունաշէն գեղջէ յե-
677 *պիսկոպոսութենէ Ռոտկաց կարգի կաթուղիկոս: Կապեալ*
693 *յԱբդլլայ ոստիկանէ շղթայիւք առաքի ի Դամասկոս. լուեալ անդ զյարձակումն Մահմատ Ոգբայ զօրավարի հա-գարացւոց յաշխարհ Հայաստանեայց ի սուր եւ ի գերու-թիւն, գնայ ընդառաջ նորա զիջուցանել ի ցասմանէն. եւ այն ինչ մտանէ ի Խառան՝ անկանի ի մահիճս մահու. այլ նախքան զաւանդումն հոգւոյն զգաստացեալ՝ ազդու բա-*
703 *նիւք գրէ թուղթ առ նոյն զօրավար եւ վախճանի, որով եւ վճարէ զմիջնորդութիւնն, զոր յուսայր անձամբ:*

221. Եղիա յԱղիովտոյ, ի գեղջէ Արճիշոյ յեպիսկոպոսու-
703 *թենէ Բզնունեաց կարգի յԱթոռ հայրապետութեանն. ըստ բողոքական գրութեանց եւ խնդրոց ժողովոյ Աղուանից*
708 *գնայ անդր ի Պարտաւ քաղաք եւ գումարէ ժողով եպիս-կոպոսաց, ուր ընկենու յաթոռոյ զՆերսէս կաթուղիկոս նո-ցա համաձայնութեամբ նոցին. եւ այն ինչ կամէր առնել զնա արտասահման՝ զկնի ութն աւուր վախճանի ի կենաց. կացուցանէ կաթուղիկոս նոցա ձեռնադրութեամբ եւ օծ-մամբ զՍիմէոն սարկաւագապետն. եւ սահմանադրեալ յայն ժողով զինչ ինչ կանոնս բարեկարգութեան՝ դառնայ յա-թոռ իւր. եւ կացեալ ընդ ամենայն զամս տասն եւ չորս եւ*
717 *ամիսս իբր վեց՝ վախճանի:*

222. Յովհաննէս Դ Իմաստասէր անուանեալ, ի գաւա-
718 *ռէ Տաշրաց յՕձուն գեղջէ յայլորդէ յԱթոռ կաթուղիկոսու-թեան. եւ տեսեալ զպղտորումն հօտին յաղանդաւորացն*
719 *Պողիկեանց եւ յայլոց չարագրգիռ արանց՝ գումարեաց ժողով մեծ ի հայրապետական Աթոռի անդ Դուին քաղա-քի եւ հաստատեալ կանոնս բարեկարգութեան եկեղեցւոյ՝ հալածական արար զնոսա յաշխարհէ Հայոց: Հաճեալ ընդ*
726 *թղթագրութիւն Աթանաս պատրիարգի Ասորւոց՝ արար փոքրիկ ժողով յեպիսկոպոսաց Հայոց եւ Ասորւոց. եւ յայնմ հերքեաց նզովիւք զՅուլիանոս Աղիկառնացի գրուածովք նորին: Ըստ հրամայելոյ Օմարայ ամիրապետի հագարաց-*
727 *ւոյ գնայ առ նա փառացի շքով եւ պատուեալ ի նմանէ դառնայ յաթոռ իւր. եւ կացեալ ի հայրապետութեան զամս*
728 *տասն եւ մի՝ փոխեցաւ ի կենաց աստի:*

223. Դաւիթ Ա, ի գաւառէ Կոտայից, ի գեղջէ Արամօնից
729 *կացուցաւ յԱթոռ հայրապետութեան. վշտացեալ ի գործոց*

730 Մահմետայ ոստիկանի եւ նորայոցն՝ գնաց ի Դունայ եւ բնա-
կեցաւ յԱրամօնս գիւղ, ուր չինեաց եկեղեցի եւ տուն բնա-
732 կութեան: Ցղեաց դեսպան առ ամիրապետն եւ ետ փոխել
զՄահմէտ եւ կարգել ի տեղի ոստիկան զԱպղլազիզ, որ էր
այր խաղաղասէր եւ ունէր խնամ ի վերայ Հայոց: Եւ ապա
740 ինքն յետ կալոյ յԱրամօնս իբր ամս ութն՝ դարձաւ անդրէն
741 ի Դուին յԱթոռն կաթուղիկոսական. եւ կացեալ ընդ ամե-
նայն ամս ԺԲ՝ վախճանի. որոյ զմարմին տարեալ հանգու-
ցանեն յԱրամօնս առ եկեղեցեաւն, զոր իւր էր շինեալ:

224. Տրդատ Ա, ի տոհմէ նախարարացն Վանանդ գաւա-
741 ռի՝ յՈթմսոյ գեղջէ, այր բարեկրօն. վերակոչի յԱթոռ հայ-
764 րապետութեան. կացեալ յայնմ զամս ԻԳ՝ վախճանի:

225. Տրդատ Բ, յաշխարհէ Տուրուբերանոյ, ի գաւառէ
764 Դասնաւորից կարգի յաստիճան կաթուղիկոսութեան. եւ
767 կացեալ յայնմ զամս երիս՝ վախճանի:

226. Սիօն յԱրագածոտնէ, ի գեղջէ Բաւոնեաց եւ եպիս-
765 կոպոս Աղձնեաց առնէ զսքանչելիս բղխեցուցանելով զցա-
մաքեալ աղբիւր յստորոտս Սիմ լերին՝ ըստ առաջարկու-
թեան կողմնակալի տեղւոյն Սիւլէյմանայ հագարացւոյ.
767 կարգի յԱթոռ հայրապետութեան ըստ կոչման եւ հարկելոյ
նոյն Սիւլէյմանայ, որ յայնոսիկ աւուրս կարգեալ էր ոս-
տիկան Հայոց. բազմութեամբ եպիսկոպոսաց եւ իշխանաց
768 գնայ ի Պարտաւ քաղաք Աղուանից եւ առնէ ժողով վասն
բարեկարգութեան եկեղեցւոյ. կացեալ ի հայրապետու-
775 թեան ամս ութն՝ վախճանի:

227. Եսայի ի Նիգ գաւառէ, յեղիպատրուշ գեղջէ սնանի
ի հայրապետանոցի եւ յեպիսկոպոսութենէ Գողթան գա-
775 ւառի վերակոչեալ՝ յաջորդի յԱթոռ հայրապետութեան. եւ
788 կացեալ յայնմ պաշտաման զամս տասներեք, վախճանի:

228. Ստեփաննոս Ա Դունեցի, դրան երէց տան կաթու-
ղիկոսարանի՝ մատուցեալ ինչս ոստիկանին եւ հարկահան
788 Իպնդօկլայ՝ կալաւ զԱթոռ կաթուղիկոսութեան. եւ կացեալ
790 յայնմ զամս երկու՝ մեռանի:

229. Յովաբ յոստանէն յԱպարանից կիւրապաղատին,
790 կարգի կաթուղիկոս եւ կացեալ յայնմ ամիսս վեց՝ վախճա-
նի:

230. Սողոմոն այր լի աւուրբք եւ սրբութեամբ, ի գաւառէ
Գեղարքունւոյ, ի գիւղաքաղաքէն Գառնւոյ այն ինչ ընտ-

791 *րեալ ի Հայրապետութիւն՝ գնայր ի Դուին յԱթոռ իւր ըստ Յովհաննու կաթուղիկոսի՝ «Հարցաւ ապա յոմանց ազատաց թէ վասն զի ծեր ես եւ յանհնարին ճգնական վարուց յոյժ անաւագեալ՝ ընդ է՞ր յօժարեալ երթաս ի Հայրապետութիւն. առ որս պատասխանեալ նորա՝ ասէր. Երթամ զի գերապա-*
ճոյճ նկարողաց սեւեալ զիս ընդ այլ Հայրապետսն տամ յորմն եկեղեցւոյ. եւ ըստ սմին այսմիկ գործն կատարէր. զի ո՛չ աւելի քան զմի ամ կեցեալ՝ փոխի յաշխարհէ աստի եւ դնի ընդ հարս իւր եւ կենդանագրի ի քաւարանի սրբում»:

231. Գէորգ Ա, յԱրագածոտն գաւառէ, ի գեղջէ Աշտա-
792 *րակաց յաջորդէ յԱթոռ Հայրապետութեան. եւ զերիս ամս*
795 *կացեալ յայնմ վախճանի:*

232. Յովսէփ Բ Կարիճն կոչեցեալ, յԱրագածոտն գաւա-
795 *ռէ, ի բնակչաց սրբոյն Գրիգորի՝ յաջորդէ յԱթոռ Հայրապե-*
798 *տութեան. նեղի ի Խուզիմայ ոստիկանէ. կալեալ շղթայիւք*
799 *դնի ի բանդի ի պատճառս կալուածոց տան կաթուղիկոսա-*
րանի, զոր յափշտակել ցանկայր ոստիկանն ապօրէն կամօք. կացեալ զամս մետասան ի Հայրապետութեան եւ տարեալ
806 *վշտաց եւ նեղութեանց՝ վախճանի:*

233. Դաւիթ Բ, ի Մազազ գաւառէ, ի գեղջէ Կակաղոյ,
806 *կարգի յԱթոռ կաթուղիկոսական. մտեալ ընդ մէջ հաշտե-*
825 *ցուցանէ զՀոլ ոստիկան եւ զՍմբատ սպարապետ եւ զայլ իշխանս ընդ իրեարս. կացեալ յայնմ պաշտաման զամս*
833 *քսան եւ եօթն՝ վախճանի:*

234. Յովհաննէս Ե, ի Կոտայից գաւառէ, ի գեղջէ Ովա-
833 *յից, նստի յաթոռ Հայրապետութեան: Զրպարտի յոմանց եղելոց ի տան կաթուղիկոսարանի յապիրատ իրս բամբա-*
սանաց եւ տեսեալ թէ մեծամեծք եւս դիւրալուր են այնմ,
840 *խոյս ետ յԱյրի վանս Գառնւոյ եւ եկաց անդ զամիսս ինչ. ըստ վերահաս քննութեան իշխանաց եւ եպիսկոպոսաց*
841 *արդար եւ անմեղ գտեալ յայնմ՝ վերադառնայ յաթոռ իւր հրաւիրմամբ նոցին ժողովելոցն: Եւ պաշտեալ զհօտն իբրեւ*
854 *զամս քսան եւ երկու՝ վախճանի ի Գեղարքունի ի վանսն Մաքենոցաց եւ ամփոփի մարմին նորա անդէն:*

235. Զաքարիա Ա, ի գաւառէ Կոտայից, ի գեղջէ Զագայ
854 *ժողովով եպիսկոպոսաց ընտրի ի կաթուղիկոսութիւն. եւ ի միում աւուր ընկալնու զամենայն աստիճանս ի սարկաւա-*
գութենէ մինչեւ ցկաթուղիկոսութիւն՝ ըստ հրամանի սպա-

բապետին Սմբատայ ի գաւառին Շիրակայ յԵրազգաւորն
862 *քաղաքագեօղ: Առնէ ժողով յեպիսկոպոսաց եւ յիշխանաց*
ի Շիրակաւան ի պատճառս թղթոյ Փոտ պատրիարգի Յու-
նաց ի մասին ժողովոյն Քաղկեդոնի. եւ կառավարեալ
զպաշտօն հայրապետութեան զամս քսան եւ մի եւ ամիսս
876 *իբր ութն՝ վախճանի ի Դուին քաղաքի:*

236. Գէորգ Բ, ի Գառնւոյ, այր զգաստ եւ զուարթ, առա-
876 *քինի, սնեալ ի տան կաթուղիկոսարանի, յաջորդէ զաթոռ*
հայրապետութեան ի 13 յունվարի. յիններորդ ամի հայրա-
885 *պետութեան իւրոյ, այն է յամի 885 օծանէ թագաւոր Հայոց*
890 *զմեծն Աշոտ: Աշխատ եղեւ բազմօք զիջուցանել զխռովու-*
թիւնն ընդ մէջ արքայորդւոյն Սմբատայ եւ Աբասայ նորին
892 *հօրեղբօր: Պսակէ զՍմբատ զորդի Աշոտոյ մեծի ի թագա-*
895 *ւոր Հայոց: Ըմբռնի յոստիկանէն Ափշնէ եւ դնի ի շղթայս.*
բազում դրամովք եւ միջնորդութեամբ Համամ իշխանին
896 *արեւելից ազատի եւ վերադառնայ յաթոռ իւր: Տեսանե-*
897 *լով զբազմադիմի զաղէտս աշխարհին ել, գնաց ի կողմանս*
Վասպուրականի, ուր հիւանդացեալ զկնի սակաւ միջոցի
վախճանեցաւ ի նոյն ամի. եւ զմարմինն տարեալ թաղեցին
ի գերազմանի Զորոյ վանացն Տոսպ գաւառի մերձ յեկեղե-
ցին, ուր եղեալ ասեն սրբոյն Գրիգորի զգաւազան իւր եւ
զսեղանն տէրունական խորհրդոյն, զոր նախքան զկառուց-
մունս եկեղեցեաց ի Հայաստան շրջեցուցանէր ընդ իւր:

237. Մաշտոց Ա[1]*, յԱրագածոտնէ, ի գեղջէ Եղիվարդայ,*
երթեալ ընակի ի Սեւան կղզի եւ բազմացուցեալ զմիան-
891 *ձունս կրօնաւորական կարգօք սրբոյն Բարսղի՝ փայլե-*
ցաւ սրբութեամբ. գրեաց թուղթ մեղադրանաց առ Աբաս
եղբայրն Աշոտոյ յետս կալ ի գրգռութենէ, որ առ Գէորգ Բ
894 *կաթուղիկոս. գրեաց եւ առ ընակիչս Դունայ՝ առ մնացորդս*
ի կոտորածէն երկրաշարժութեան թուղթ մխիթարական.
897 *ընտրի եւ կարգի յարքայէ եւ յիշխանաց յԱթոռ հայրապե-*
տութեան. եւ կացեալ յայնմ ամիսս եօթն՝ փոխի յաստեացս.
եւ զմարմինն ամփոփեն ի Գառնի յարեւմտից կից հովանո-
ցին Տրդատայ, որոյ վերայ շինեցաւ մատուռն փոքրիկ, որ
այժմ խոնարհեալ դնի ընդ շինուածս հովանոցին:

---

[1] [Տպագրում՝ Բ, որ անշուշտ վրիպակ է, քանի որ Շահխաթունյանցն էլ չունի Մաշտոց Ա: Նույն վրիպակը առկա է նաեւ քիչ ավելի ուշ]:

238. Յովհաննէս Զ, ի Դրասխանակերտ աւանէ, աշակերտ
897 *եւ ազգական Մաշտոցայ Ա, յաջորդէ յԱթոռ հայրապետու-*
901 *թեան: Առաքեալ յարքայէ Սմբատայ միջնորդէ առ Աշոտ*
Արծրունի վասն Հասանայ Գնթունւոյ: Ի դիմաց իշխանաց
902 *գնաց առ արքայ Սմբատ եւ սփոփեաց զնա ի դառն տխրու-*
թեանց, որ վասն մահուն եղբօր նորա Դաւթայ իշխանաց
908 *իշխանի: Գնաց առ Յուսուփ ոստիկան ընծայիւք բազմօք ի*
դիմաց արքային եւ իշխանացն յաշխարհ Ատրպատական,
հաշտութիւն խօսել ի միջի. այլ կապեալ ի նմանէ եդաւ ի
910 *բանտի. ելանէ ի բանտէ եւ ժամ դիպուկ գտեալ՝ զերծանի*
փախստեամբ յԱղուանս: Ձանձրացեալ ընդ կատաղի շփո-
թութիւն յուզմանց ի խռովութիւնս ազգին գնաց ի Վիրս
916 *եւ եկաց ընդ խնամովք Ատրներսեհի արքայի. ընկալեալ*
920 *զթուղթ պատրիարգի Յունաց Նիկողայոսի՝ եկեալ անցանէ*
ի Տարօն եւ գրէ թուղթ առ Կոստանդին Պերփեռուժէն կայսր
Յունաց վասն ձեռնտու լինելոյ ազգին ընդդէմ թշնամեաց:
921 *Մտեալ ընդ մէջ հաշտեցուցանէ զերկոսին համանուն Աշոտ*
923 *թագաւորսն: Տառապի աստանդական փախստեամբ ի ձե-*
ռաց ոստիկանին Նսրայ. եւ տեսեալ զպառակտումն ազ-
գին եւ զանհնարին աւերս աշխարհին յոստիկանաց անտի
եւ յիշխանացն եւ ի թագաւորաց յարուցելոց ի վերայ մի-
924 *մեանց՝ գնայ ի Վասպուրական առ Գագիկ արքայ Արծրու-*
նի. ուրանօր յորդորեալ ի նմանէ աւարտէ զպատմութիւն
ազգին եւ ընդարձակ եւս զիւրոյ ժամանակին վայելչահիւս
կազմուածովք բառից եւ շարադրութեանց. եւ կացեալ ի
925 *պաշտամանն զամս քսան եւ եօթն եւ ամիսս ութն՝ վախճա-*
նի անդ ի Վասպուրական աշխարհի:

239. Ստեփաննոս Բ, հաւանութեամբ Աշոտոյ արքայի
925 *եւ Գագկայ Արծրունւոյ կարգի կաթուղիկոս եւ նստի անդ*
926 *յԱղթամար կղզի. եւ կացեալ իբրեւ ամ մի վախճանի:*

926 *240. Թէոդորոս Ա. յաջորդէ զԱթոռ հայրապետութեան*
անդ ի կղզին Աղթամար. եւ կացեալ անդէն զամս տասն եւ
936 *ամիսս իբր չորս՝ վախճանի. եւ ամփոփի մարմինն ի ժամա-*
տան եկեղեցւոյ սուրբ Աստուածածնի անդ յԱղթամար:

936 *241. Եղիշէ Ա, եղբայր նորին Թէոդորոսի Ա, եկաց յԱ-*
թոռ կաթուղիկոսական եւ հինգ ամ տեւեալ յայնմ իշխա-
նութեան՝ բանսարկութեամբ ոմանց խռովայոյզ անձանց

անկանի. եւ երկու ամ եւս կացեալ այնպէս առանց տեղա-
943 կալ յաջորդի վարելով զիշխանութիւնն՝ վախճանի:

242. Անանիա ի Մոկաց, յառաջնորդութենէ ուխտին Վա-
943 րագայ յաջորդէ յԱթոռ հայրապետութեան. լուեալ զաղանդ
Յակոբ եպիսկոպոսի Սիւնեաց էարկ ընդ բանիւ, եւս եւ զտի-
կինն Սիւնեաց, որ ընդ նմա զթոնդրակեցւոցն ախտանայր,
եւ յայնժամ հասեալ մահ կենաց Յակոբ եպիսկոպոսի՝ մե-
ռանի. եւ գնացեալ Անանիայի անդր ի Սիւնիս՝ շինէ զմիտս
իշխանացն եւ ձեռնադրէ նոցա արքեպիսկոպոս զՎահան
որդի Ջուանշիրի իշխանին Բաղաց: Գրգռեցաւ ընդ կրկին
մկրտութիւն Յունաց: Կացեալ ի կաթուղիկոսութեան զամս
քսան եւ երկու՝ հինգ ամ յԱղթամար եւ տասն եւ եօթն ամ ի
965 Վարագ եւ յԱնի՝ վախճանի. որոյ մարմինն դնի ի տապանի
ի գիւղաքաղաքն Արգինա՝ մերձ յԱնի:

243. Վահան որդի Ջուանշիրի իշխանին Բաղաց, որ ի
Սիւնիս, յարքեպիսկոպոսութենէ այնր նահանգի Սիւնեաց՝
965 ըստ յանձնարարութեան Անանիայի Մոկացւոյ վերակոչի
յԱթոռ հայրապետութեան. ի հաճիլ սորա թղթակցութեամբ
առ այլ եկեղեցիս ընդդէմ սովորութեան ազգին եւ ի կամիլն
մուծանել զնորաձեւութիւն յեկեղեցի եւ զգացեալ եւս թէ
ունի յազգէն անկանիլ յայնմ պատուոյ, փախստեայ գնաց
970 ի Վասպուրական աշխարհ առ Ապուսահլ թագաւոր Արծ-
973 րունի: Գրէ թուղթ առ Զմշկիկ կայսր Հայկազն ի Կոստան-
դինուպօլիս խնայել ի քրիստոնեայս. ծանոյց եւ զորպի-
սութիւն անձին իւրոյ: Կացեալ անդ ի կողմանս Վասպու-
րականի ամս տասն եւ ամիսս ինչ յետ փախստեանն՝ ընդ
980 ամենայն աւելի քան զհնգետասան ամ, մեռանի եւ թաղի ի
Ջորոյ վանս:

244. Ստեփաննոս Գ, յազգականութենէ Մաշտոցայ եւ
Յովհաննու պատմաբանի ի վանահայրութենէ Սեւանայ
970 ընտրի ժողովով անդ յԱնի եւ նստի յԱթոռ հայրապետու-
թեան: Զկնի նզովելոյ զիրեարս ընդ Վահանայ, գնայ ի Վաս-
պուրական առ Վահան հանդերձ ոմամբք երեւելի վարդա-
պետօք ի յանդիմանութիւն նմին. այլ յԱպուսահլայ արքայէ
Վասպուրականի կալեալ ի ճանապարհին՝ եդաւ յարգելանս
972 ի բերդն Կոտորոց եւ անդ մնացեալ ամիսս ինչ մեռանի:

245. Խաչիկ Ա, քեռորդի Անանիա կաթուղիկոսի յեպիս-
կոպոսութենէ Արշարունեաց ընտրութեամբ ժողովոյ եպիս-

կոպոսաց յԱնի՝ յաջորդէ զԱթոռ հայրապետութեան. կառոյց զբազում չինուածս ընդ որս եւ զգրատուն փառաւոր, ուր ժողովեաց զբազում մատեանս: Կացեալ յայնմ պաշտաման զամս ԺԹ [19] եւ ամիսս իբր վեց՝ վախճանի. եւ մարմին նորա ամփոփեցաւ ի Հիւսիսոյ կողմանէ եկեղեցւոյն Արգինայի, զոր իւր էր շինեալ:

246. Սարգիս Ա, ի միաբանութենէ վանաց Սեւան կղզւոյ. սա ունէր ի Գագկայ արքայէ ընդ տեսչութեամբ իւրով յառաջագոյն զվանսն Շողագայ. եւ զկնի կարգեալ ի նմանէ հայր վանաց Սեւանայ վասն մարդասէր եւ առաքինի վարուցն. եւ ապա զկնի վախճանին Խաչկայ դարձեալ ի նմանէ ի ժողովի անդ եպիսկոպոսաց յԱնի՝ վերակոչեցաւ ի հայրապետական աթոռն յամի 992, յերկուշաբաթի աւուր մեռելոց սրբոյ Զատկին: Մտանէ ընդ մէջ Գագկայ արքայի եւ եղբօրորդւոյ նորա Դաւթի եւ հաշտեցուցանէ զնոսա: Զինեցաւ ընդդէմ աղանդոյն Թոնդրակեցւոց եւ զՅակոբ եպիսկոպոս սերմանիչ չարութեանն աղուէսադրոշմ խարանօք խայտառակեալ, յամսն իբր 1002, 1003: Ի քսան եւ եօթներորդ ամի հայրապետութեան իւրոյ ձեռնադրեաց զտէր Պետրոս եղբայր Խաչկայ կաթուղիկոսի եւ նստոյց փոխանակ իւր յԱթոռ հայրապետութեան. եւ ինքն կացեալ այլեւս ամս ինչ վախճանի. որոյ եւ մարմին ամփոփի ի վանսն Հոռոմոսի:

247. Պետրոս Ա, Գետադարձ անուանեալ, եղբայր Խաչիկ կաթուղիկոսի, ձեռնադրեալ ի Սարգսէ Ա, նստի յԱթոռ հայրապետութեան: Հանդերձ այլովք երեւելի ազատօք մտեալ ընդ մէջ երկուց եղբարցն՝ Յովհաննու եւ Աշոտոյ որդւոց Գագկայ արքայի հաշտեցուցանէ զնոսա առնլով յերկոցունցն եւս յետկար երդման. ընկալնու յետկար երդման ի Յովհաննէս արքայէ Անւոյ վասն տալոյն զԱնի ի Յոյնս եւ պատուէր, տարեալ զայն մատուսցէ կայսեր Վասլի: Գնաց առ կայսր ի Խաղտիս եւ մատոյց զայն խոստագիր սկզբնապատճառ անկման թագաւորութեանն Բագրատունեաց: Մնացեալ անդ առ կայսր պատուով՝ առնէ զհանդէս աւուր ջրօրհնեաց ըստ ծիսի Հայոց ի ներկայութեան կայսեր ի գետն Ճորոխ. ուր սքանչելեօք գետն զկայ առնու եւ ճառագայթք լուսոյ հատանէին ի ջուրց յընդունել նմին զիւղն օծութեան. մեծարանօք պատուոյ բաժանեալ ի կայսերէ վերադառնայ ի Սեբաստիայ առ Սենեքէրիմ արքայ. եւ անտի

զկնի երկուց ամաց վերադարձաւ յԱնի քաղաք թագաւորա-
կան: Լուեալ զհիւանդութիւն արքային Սենեքերիմայ գնաց
դարձեալ ի Սեբաստիա առ նոյն արքայ. անդէն լսելով զմահ
Աբասայ ել եւ եկն ի Կարս քաղաք եւ անտի յԱնի: Յընդ
ակամբ հայելն ի նա արքայի եւ այլոց ի պատճառս յամելոյ
նորա յայնչափ ժամանակս ի կողմանսն Սեբաստիոյ՝ գնաց
զանխուլ ի Վասպուրական եւ առանձնացաւ անդ ի Ձո-
րոյ վանսն: Դառնայ անդրէն յԱնի ընկալեալ զգիր միամ-
տութեան յարքայէ՝ առնել նմա չար եւ ոչինչ, բայց եղաւ
յարգելանս յամրոցն Բջնւոյ եւ փոխանակ սորա կացուցաւ
կաթուղիկոս Դեոսկորոս հայր վանացն Սանահնի՝ յարքայէ.
որոյ վասն ժողով մեծ եղեալ յԱնի հանդերձ Յովսէփ կա-
թուղիկոսիւն Աղուանից՝ անդրէն յաջորդեաց զաթոռն:

Օծանէ զԳագիկ զորդին Աշոտոյ եղբօր արքային Յով-
հաննու վախճանելոյ՝ ի թագաւոր Հայոց: Գժտեցան ընդ
միմեանս սա եւ արքայն Գագիկ քսութեամբ բանսարկուին
Սարգսի երկրորդ աւերչին աշխարհի Հայոց զկնի Վասա-
կայ Սիւնւոյ: Լինի վկայ ընդ Գագիկ եւ ընդ նախարարսն
ի գնալ նորին Գագկայ առ կայսր պահելով առ ինքն եւ
զգիր երդմանց նոցին եւ իւրն: Զկնի անկման թագաւորու-
թեան վարեցաւ ի գաւառն Կարնոյ յԱրծն քաղաք չարու-
թեամբ Կամենասայ յոյն քաղաքապետին Անւոյ, որպէս զի
բարձցի եւ կաթուղիկոսութիւնն յազգէ Հայոց: Եւ անտի
կալեալ յարանց առաքելոց ի Յոյն քաղաքապետէն Արծնոյ
ըստ հրամանի կայսեր եղաւ ի բերդն Խաղտոյ առիչ: Հրա-
ւիրեալ ի Մոնոմախոս կայսերէ գնաց ի Կոստանդինուպօլիս.
դառնայ անտի ի Սեբաստիա՝ երաշխաւոր լինելով Ատովմայ
Արծրունւոյ որդւոյ Սենեքերիմայ առ կայսր. եւ կացեալ ընդ
ամենայն ամս իբր քառասուն՝ վախճանի անդ ի Սեբաստիա,
ի Սուրբ Նշանի վանսն. ուրանօր ամփոփի եւ մարմինն:

248. Խաչիկ Բ, որ եւ Խաչատուր, քեռորդի վերոյիշեալ
Պետրոս կաթուղիկոսի կարգի տեղապահ յաթոռն յԱնի ի
քեռւոյ իւրմէ ի գնալն նորա յԱրծն. եղաւ իբր յարգելանս ի
բերդն Սեաւ քար կոչեցեալ չարութեամբ Կամենասայ քա-
ղաքապետին Անւոյ: Զկնի վախճանի Պետրոս կաթուղիկո-
սի նստի յԱթոռ հայրապետութեան: Ածաւ ի Կոստանդի-
նուպօլիս ի Տուկիծ կայսերէ սակս ընչից Պետրոս կաթու-
ղիկոսի, քանզի յետ ունելոյ զյայտնի կայս նորին զամե-

նայն, պահանջէր զայլ եւս. եւ այսու թէպէտ ի նեղ արկաւ ի կայսերէ, վստահութեամբ առնէր զպատասխանին: Միջ-նորդութեամբ Գագկայ արքայի եւ Ատովմայ Արծրունւոյ
1063 *արձակեալ անտի գայ ի սահմանս Տարանդայ ի Թաւ բլուր կոչեցեալ աւանն. ուրանօր հիւանդացեալ ի ցաւոց սրտին*
1064 *վասն պէսպէս տառապանաց անձինն եւ ազգին՝ վախճանի, յետ կալոյ անդէն ի Թաւ բլուր ամիսս իբր եօթն:*

249. Գրիգոր Բ, որ յառաջն Վահրամ անուանէր, որդի Գրիգորի Մագիստրոսի, ամուսնացեալ ի կարգ աշխարհի պայազատէր զիշխանութիւն հօր իւրոյ՝ ընկալեալ զայն ի կայսերէ դուքս անուամբ. եւ զկնի այնր թողեալ զաշխարհ գնաց յանապատ եւ եմուտ ի կարգ կրօնաւորութեան՝ կալով ի նմին բարենախանձ քաղաքավարութեամբ: Զկնի անցան-ելոյ իբր ամի միոյ յետ վախճանի Խաչիկ երկրորդ կաթու-ղիկոսի, ստիպեալ ի բազում թախանձանաց ազգային ժողո-
1065 *վոյ գնայ ի Ծամնդաւ եւ օծանի կաթուղիկոս ի թուականին*
1071 *Հայոց ՇԺԴ [1065], յամսեանն ապրիլի: Ձեռնադրէ զ Գէորգ ատենադպիր իւր Լօռեցի համաձայնութեամբ իշխանացն ի կաթուղիկոս. եւ ինքն առանձնացեալ մտանէ յանապատս ի Սեաւ լերին ի Խարամանիա: Տեսեալ զչարութիւն Գէորգ*
1072 *կաթուղիկոսի եւ ստիպեալ յիշխանացն ընկենու զնա յայն*
1073 *պատուոյ*[1]*: Գնայ յակամա կամս առ Թոռնիկ փեսայ իւր որ-դին Մուշեղայ յԱշմուշատ աւան՝ ածել զնա առ Փիլարտոս.*
1074 *կասկածեալ ի նենգութեանց Փիլարտեայ անցանէ յԱնին Շիրակայ. ուր կարգեալ տեղապահ Աթոռոյն զտէր Բարսեղ քեռորդի իւր՝ դառնայ վերստին ի կողմանս Սեաւ լերին.*
1075 *եւ անտի անցեալ գնայ ի Հռովմ, ուր խօսելով ընդ Է-ըդ Գրիգոր պապին զյառաջագոյն գրեցելոցն ի նմանէ ի պա-տասխանին առ ինքն ի վերայ ծիսից Հայոց՝ չինեաց զմիտս*

[1] Յայս միջոց Սարգիս ոմն քեռորդի Պետրոս կաթուղիկոսի Գետադարձ անուանելոյ ապօրինութեամբ ձեռնադրի կաթուղիկոս կամակցութեամբ Փիլարտեայ հայիոռոմ իշխանի՝ թէեւ Գրիգոր Վկայասէր յակամայս առաքեաց առ Փիլարտոս զքօղ եւ զգաւազան կաթուղիկոսական. կացեալ նորին Սարգսի յայնմ պատուի անդ ի Հոնի քաղաք Ջահան գաւառի զամս երեք եւ ամիսս իբր ութ՝ մեռանի յամին 1077: Որում յաջորդեաց փակակալ եկեղեցւոյն Հոնւոյ տէր Թէոդորոս Ալախօսիկ կոչեցեալ մականուամբ, յամին 1085. յոչ գնալ սորա ի կոչ Փիլարտեայ, ետ ձեռնադրել Փիլարտոս զՊօղոս հայր վանացն Վարագայ: Նա ինքն Թէոդորոս անկանի յիշխանութենէ եւ ի պատուոյն ի Բարսեղ կաթուղիկոսէ յամին 1091. մեռանի անդ ի Հոնի քաղաքի յամին 1093: Իսկ Պօղոս զկնի փոքր ժամանակաց հրաժարեցաւ ինքնին ի պատուոյն եւ գնաց անդրէն ի վանս իւր. եւ ապա վախճանեցաւ յԵդեսիա քաղաքի եւ թաղեցաւ մարմին նորա ի դրան եկեղեցւոյն:

1076 նորա: Վերադարձեալ ի Հռովմայ եկն յԵրուսաղէմ եւ անտի չոգաւ ի կողմանս Եգիպտոսի եւ շրջեալ ընդ կրօնաստանսն, եմուտ ի Մեմփիս. եւ ձեռնադրեալ զ Գրիգորիոս
1077 զիւր քեռորդի առաջնորդ Հայոց եղելոց անդր՝ դարձաւ ինքն ի Հայս եւ բնակեցաւ յԱրեգի վանսն ի Սեաւ լեառն: Ի պատճառս շփոթութեան իրիք եւ վտանգաւոր ատե-
1082 լութեան Յունաց ընդ Հայս գնաց ի Կոստանդինուպոլիս առ Ալէքսիոս կայսր եւ անցոյց զայն: Վերստին գնաց յԵրուսաղէմ յուխտ տնօրինական տեղեացն՝ ուրանօր գտաւ
1099 յառման քաղաքին անդրէն ի լատինաց. եւ վերադարձեալ անտի ի սովորական դադար իւր ի Սեաւ լեառն՝ պարապի գրոց սրբոց ընկերակցութեամբ ուսումնական անձանց:

1105 Գնաց ի Ռապան, որ մերձ ի Քեսուն քաղաք, առ իշխանն Գող Վասիլ ըստ բազումս թախանձելոյ նորա եւ տիկնոջն. տարաւ ընդ իւր եւ զերկոսին քեռորդիսն իւր զ Գրիգոր եւ զ Ներսէս. եւ կացեալ անդ ի Կարմիր վանս ամիսս ինչ, կոչեաց առ ինքն զԲարսեղ կաթուղիկոս եւ զիշխանն Գող Վասիլ եւ յանձնեաց նոցա զյիշեալ զերկոսին քեռորդիսն իւր եւ պատուիրեաց, զի զկնի վախճանին Բարսղի զ Գրիգոր կացուսցեն յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց, եւ ապա ի տկարութեան անդ առեալ զյետին թոշակն փրկութեան՝ վախճանեցաւ լի աւուրբք եւ արդիւնաւոր վաստակօք յամի 1105, յամսեան նոյեմբերի ի շաբաթ աւուր. կացեալ ի կաթուղիկոսութեան ընդ ամենայն ամս Խ [40] եւ ամիսս իբր ութ. եւ զմարմին նորա ամփոփեցին ի նոյն Կարմիր վանսն:

250. Բարսեղ Ա, որդի Վասակայ՝ որդւոյ Ապիրատ իշ-
1074 խանի եւ քեռորդի Գրիգորի Վկայասիրի կարգի տեղապահ աթոռոյն Անւոյ ի նոյն Վկայասիրէ: Գրաւոր հրամանաւ
1082 Վկայասիրի ձեռնադրի ի վանս Հաղբատայ ի կաթուղիկոսէն Աղուանից Ստեփաննոսէ եւ յեպիսկոպոսաց Հայոց
1090 յԱթոռ հայրապետութեան: Գնաց ի Պարսս առ Մելիք շահ արքայն բազում ընծայիւք՝ հանդերձ երեւելի արամբք՝ եպիսկոպոսօք եւ ազատօք. եւ պատուով ընկալեալ ի նմանէ՝ ետ թեթեւացուցանել զհարկն արքունի եւ ազատ կացոյց զեկեղեցիսն. եւ ինքն եւս հրովարտակաւ կարգեցաւ հրամանատար այլոց կաթուղիկոսաց՝ ազատ կամօք իւրովք տնօրինել զօգուտն. եւս եւ ընկալաւ իշխանութիւն կրելոյ
1091 զառաջեաւ զխաչ ձողաբարձ եւ այնպէս վերադարձաւ յԱ-

նի: Եւ ի յաջորդ ամին գնաց ի Հոնի քաղաք Ջահան գաւառի եւ էառ զգաւազան, զքօղ եւ զսուրբ նշանն գետարգել ի Թէոդորոս կաթուղիկոսէ եւ ընկէց զնա յիշխանութենէն՝ յետ կալոյ նորա յայնմ աստիճանի զամս ԺԴ [14]. եւ անտի գնաց յԵդեսիա քաղաք եւ ետ բերել անդր զխաչն Վարագայ եւ զհրաշալի պատկերն Աստուածածնի, որ կայր անդ
1093 *ի Վարագ: Եկ յԵդեսիոյ գնալ ի տեսութիւն Գող Վասլի իշխանին. եւ յերթալ իւրում իջեւանեցաւ ի Կարմիր վանսն, որ մերձ էր ի Քեսուն քաղաք: Տեսեալ անդ զՍտեփաննոս քահանայ զուսուցիչն Ներսէսի Շնորհալւոյ եւ ընկերացն՝ ընտիր ի վարս եւ զօրեղ ի բանս վարդապետութեան, ձեռնադրեաց զնա եպիսկոպոս նահանգացն այնց եղելոց ընդ իշխանութեամբ Գող Վասլի եւ գնաց յԱնի: Ո՛չ կարացեալ*
1104 *գտանել հանգիստ անդ յԱնի յերեսաց Պարսից՝ եկ հանդերձ ուխտիւք եկեղեցւոյն եւ գնաց յԵդեսիա, ուր տիրէր լատին իշխան եւ ընկալաւ յարգանօք ի նմանէ: Ընկալեալ զհրեշտակս յԱղուանից եւ ո՛չ անտես արարեալ զխնդիր նոցա՝ գնայ անդ եւ ձեռնադրէ նոցա կաթուղիկոս զեղբայրն նորոգ վախճանելոյն Ստեփանոսի. կոչեցեալ ի Գրիգոր Վկա-*
1105 *յասիրէ գնայ առ նա եւ գտանի առ նմա ի վախճանի նորա: Զգրիգոր եւ զՆերսէս զքեռորդիսն Վկայասիրի ետ յուսումն առ յիշեալ Ստեփաննոս եպիսկոպոսն Կարմիր վա-*
1106 *նաց: Զեռնադրէ զգրիգոր զեղբայր Ներսէսի ի քահանայ: Յաւուր միում այն ինչ կատարէր միաբան ուխտիւք զերեկոյեան աղօթսն ի վերայ տանեաց յաւանին Վարդահերի մերձ ի Պեհեսնի, անկաւ տանիք տանն՝ անկաւ եւ ինքն Բարսեղ հայրապետ եւ դիպեալ ողն նորա զքարի բեկաւ: Ուստի փութացոյց տանել զինքն ի Սեաւ լեառն ի Շուղր անապատ, ուր անդ ի տկարութեանն ժողովեաց զեպիսկոպոսունս եւ զվարդապետս եւ հաւանութեամբ նոցին ետ զքօղ եւ զգաւազանն կաթուղիկոսական ի տէր Գրիգոր քահանայ՝ պատուէր տուեալ ձեռնադրել զնա կաթուղի-*
1113 *կոս: Եւ ինքն յետ աւուրց ինչ վախճանեցաւ ի 13 աւուր ամսեանն նոյեմբերի, կացեալ ի հայրապետութեան ընդ ամենայն զամս երեսուն եւ մի:*

251. Գրիգոր Գ Պահլաւունի, որդի իշխանին Ապիրատայ թոռինն Գրիգորի Մագիստրոսի եւ քեռորդի Վկայասիրի. յետ կրթութեանն առ Վկայասէր եւ առ Ստեփաննոս

1106 *եպիսկոպոս առաջնորդ Կարմիր վանաց ձեռնադրի քահա-*
նայ ի հնգետասանամեայ հասակի ի Բարսղէ Ա, որում էր
մօրաքեռ թոռն: Ըստ յանձնարարութեան նորին Բարսղի
1113 *կաթուղիկոսի՝ օծանի կաթուղիկոս յեպիսկոպոսաց անդ ի*
Կարմիր վանսն, ընկալեալ յառաջագոյն զքօղ եւ զգաւա-
1114 *զանն ի ձեռանէ նորին Բարսղի նախքան զվախճանն: Առ-*
նէ ժողով մեծ ի Սեաւ լեառն յեպիսկոպոսաց, ի վարդապե-
տաց եւ ի վանահարց իբրեւ յերկու հազար հինգ հարիւր
անձանց եւ քննեալ զգործս նորոգ օծեալ Դաւիթ կաթուղի-
կոսի անձնընծայութեամբ ի յԱղթամար, դնէ համաձայնու-
թեամբ ժողովոյն բանադրանս ի վերայ եւ որոց ընդունին
զնա: Զգտեալ ըստ ձախող դիպուածոց ժամանակին զհան-
1125 *գիստ տեղի բնակութեան գնայ ի Ծովք դղեակ ի հայրենի*
կալուած իւր. զոր ամրացեալ հաստատէ ի նմա զԱթոռ հայ-
1141 *րապետութեանն: Հրաւիրեալ ի լատինաց գնայ յԱնտիոք*
ի ժողով նոցա եւ ըստ արժանաւորութեանն պատուեալ ի
նոցանէ՝ էանց յԵրուսաղէմ յուխտ եւ անդ եւս գտաւ ի ժո-
ղովի նոցին եւ ապա դարձաւ յԱթոռ իւր: Տեսեալ զաղէտ
տառապանաց ազգին յասպատակութեանց սկիւթացւոց եւ
1147 *այլոց ազգաց՝ փոխէ զաթոռն ի Հռոմկլայն, որում տիրէր*
տիկինն Ճոսլին կոմսի ընդ իշխանութեամբ լատինացւոց,
զոր եւ զկնի ամաց ինչ յորդւոց նոյն տիկնոջն գնէ գնոց
1165 *դրամոց. օծանէ զեղբայր իւր զՆերսէս ի կաթուղիկոս բազ-*
մութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց եւ վարդապետաց. կա-
ցեալ յետ այնր ամիսս ինչ փոխի յաստեացս, մնալով ընդ
ամենայն ի հայրապետութեան զամս յիսուն եւ երեք. որոյ
զմարմինն ամփոփեն անդէն ի Հռոմկլա ի տապանին յիւրմէ
պատրաստելոյ յառաջագոյն:

252. Ներսէս Դ, անուանեալ Կլայեցի եւ յատուկ վերտա-
ռութեամբ Շնորհալի, էր եղբայր Գ Գրիգոր կաթուղիկոսի.
1095 *սնանէր առ Վկայասէր քեռի իւր յուսումն. յանձնեցաւ ընդ*
1105 *եղբօր իւրում ցԲարսեղ կաթուղիկոս եւ ի նմանէ յանձնե-*
ցան Ստեփաննոսի վարդապետի, որ էր վանահայր Կարմիր
1125 *վանաց, յուսումն աստուածային եւ արտաքին գրոց. ձեռ-*
նադրի յեղբօրէ իւրմէ յԳ Գրիգորէ ի քահանայութիւն: Եւ
1135 *ապա ի նմանէ եւս ձեռնադրեցաւ յեպիսկոպոսութիւն. ընդ*
1143 *եղբօր իւրում գնաց ի ժողովն Անտիոքայ: Ժողովով եպիս-*
1165 *կոպոսաց եւ վանականաց ձեռնադրեցաւ յեղբօրէն կաթու-*

ղիկոս՝ արժանաւոր ժառանգ Աթոռոյ հայրապետութեանն եւ եղեալ արթուն հովիւ պայծառացոյց զեկեղեցին պէսպէս կարգօք բարեվայելչութեանց. եւ թողեալ յետ իւր զարժանաւոր վաստակս՝ կալով ի հայրապատութեան զամս եօթն,
1173 *փոխի յաստեացս յանդրանկացն խորան ի 13 օգոստոսի յաւուր հինգշաբաթի եւ մարմինն ամփոփեցաւ ի տապանի առ եղբօր իւրում ի Հռոմկլա:*

253. Գրիգոր Դ, Տղայ անուանեալ, որդի Վասլի եղբօր Շնորհալւոյն Ներսէսի, սնեալ առ հօրեղբօր իւրում ի
1173 *տան կաթուղիկոսարանի, օծանի կաթուղիկոս հարկադիր*
1176 *խնդրանօք եպիսկոպոսաց եւ ժողովրդոց, ձեռնամուխ լինի յանկատար միաբանութիւնն ընդ Յոյնս ի Շնորհալւոյն. ոյր*
1179 *վասն առնէ ժողով մեծ յեկեղեցականաց ի Հռոմկլայն, այլ ի վախճանիլ Կիւ Մանուէլ կայսեր մնաց անկատար խոր-*
1180 *հուրդ միաբանութեանն: Գրէ թուղթ առ Տուտէորդին Գրիգոր ի Հաղբատ՝ պատասխանի թղթոյն գրեցելոյ ի նմանէ:*
1184 *Գրէ առ Լուսիոս Ե-րդ հայրապետ Հռովմայ վասն ատելութեան եւ ամբաստանութեանն Յունաց զՀայոց՝ թէ սուտ է*
1190 *եւ առ նախանձու. թղթակցի հանդերձ Լեւոն իշխանաւն ընդ Փրիտերիկոս կայսր Ալամանաց, որ ասի եւ Հռովմայ, որ եւ եկեալ իսկ էր յայնոսիկ կողմանս ընդ խաչակիր զօրացն: Կացեալ ի հայրապետութեան բարեյիշատակ գոր-*
1193 *ծովք զամս քսան՝ վախճանի յամսեանն յուլիսի. եւ մարմինն ամփոփի անդէն ի Հռոմկլա առ շիրմի հօրեղբարցն:*

254. Գրիգոր Ե, եղբօրորդի վախճանելոյն Գրիգորի Դ,
1193 *Գահավէժ կամ Քարավէժ անուանեալ, նստի կաթուղիկոս հաւանութեամբ մեծի իշխանին Լեւոնի. ըմբռնեալ ի Լեւոն իշխանէ ամբաստանութեամբ վարդապետաց եւ իշխանաց դնի յարգելանս. եւ ո՛չ կարացեալ տանել վշտացն՝ այն ինչ փախչիլ կամէր անտի հնարիւք եւ պրակաւ կտաւոյ իջանել ընդ պատուար պարսպին, քակեցաւ պրակն, անկաւ ինքն*
1194 *ի վայր եւ հարաւ զքարի եւ անդէն վախճանեցաւ եւ թաղեցաւ ի Դրազարկն, կացեալ յայնմ աստիճանի ամ մի եւ ամիսս հինգ:*

255. Գրիգոր Զ, այն է Ապիրատ, որդի Շահանայ զօրավարի՝ եղբօր Շնորհալւոյն Ներսէսի, հաւանութեամբ մեծի
1195 *իշխանին Լեւոնի եւ համաձայնութեամբ ամենեցուն օծաւ կաթուղիկոս Հայոց: Վասն ատելութեանն Յունաց ընդ*

Հայս ի վերայ ծիսից եւ այլոց իրաց գրեաց թուղթ հանդերձ Լեւոն իշխանաւն հրեշտակութեամբ Ներսէսի Լամբրոնացւոյ առ Ալէքս Անկեղոս կայսր. եւ շահեցան անտի եւ ոչինչ. մեծաշուք հանդիսիւ բազմութեամբ ժողովոյ էօծ զմեծ իշխանն զԼեւոն թագաւոր Հայոց ի Տարսօն քաղաքի յեկեղեցւոջ Սրբոյն Սոփիայ ի վեց յունվարի յաւուր Յայտնութեանն Տեառն: Միջնորդէ առ արքայ Լեւոն եւ տայ արձակել ի կապանաց զՀեթում իշխան Լամբրոն դղեկի զեղբայրն Ներսէսի Լամբրոնացւոյ եւ զորդիս նորա. եւ ապա դադարեալ յայնոսիկ կողմանս՝ զտեղի էառ ի վանս Արքայկաղին կոչեցեալ. եւ ի նմին ամի հիւանդացեալ՝ յետ փոքր միջոցի վախճանեցաւ ի Սիս, կացեալ ի հայրապետութեան ամս եօթն:

256. Յովհաննէս Է, Մեծաբարոյ անուանեալ, յաղագս վեհանձնութեան բարուցն յարքեպիսկոպոսութենէն Սսոյ հաճութեամբ Լեւոն արքայի ընտրեցաւ եւ օծաւ յԱթոռ հայրապետութեան[1]*: Յարհամարհելն զհրամանս Լեւոն արքայի եւ յայլազգ վարիլն ընդ նմա անարգեցաւ. ուստի փոխանակ իւր կացոյց Լեւոն զտէր Դաւիթ երրորդ ի վանացն Արքայկաղնոյ կաթուղիկոս ի Սիս*[2]*: Առաքեաց առ Զաքարիա սպասալար ըստ խնդրոյ նորա զսպաս եկեղեցական եւ զժամերգուս եւ հրաման ետ պատարագել քահանայից ի բանակի նորա ընդ վրանօք: Պատճառաւ իւիք հաշտեցաւ ընդ արքային Լեւոնի եւ անդրէն հաստատեցաւ յԱթոռն հայրապետական. եկաց ի հայրապետութեանն ամս ԺԸ [18] եւ վախճանեցաւ: Եւ թաղեցաւ մարմին նորա ի Հռոմկլա:*

257. Կոստանդին Ա, որդի Վահրամայ ուրումն յաշխարհէն Երրորդ Հայոց, ի քաղաքէն Բարձրբերդոյ, նստի կաթուղիկոս: Եւ ի նոյն ամի հաւանութեամբ իշխանացն եւ հաճութեամբ Զապէլայ թագուհւոյն պսակեաց զՓիլիպպոս, կամ զՖիլիպ զորդի նորոյ կոմսին Անտիոքայ ընդ նա ինքն Զապէլ թագուհի: Օծանէ զՀեթում զորդի Կոստանդ-

[1] Անանիա եպիսկոպոս Սեբաստիոյ եւս ձեռնտուութեամբ կուսակցացն իւրոց ընդդէմ Յովհաննու Է, օծաւ եւ ինքն անձնընծայութեամբ եւ կաշառօք անդ ի Սեբաստիա. եւ կացեալ զամս Դ, մեռաւ [յամին] 1206:

[2] Տէր Դաւիթ ի վանաց Արքայկաղնոյ ի գժտիլ Լեւոն արքայի ընդ Յովհաննու Է, կացուցաւ ի նմանէ կաթուղիկոս ի Սիս, արար ժողով ընդ Լեւոնի ի պատասխանի գրութեան Զաքարիա սպասալարի. մեռաւ յամին 1206:

նի մեծի իշխանին, որ ամուսնացաւն ընդ Զապէլ թագու-
1243 *հի մեծահանդէս փառօք: Արար ժողով յեպիսկոպոսաց եւ*
ի վարդապետաց ի Սիս քաղաքի վասն բարեկարգութեան
1258 *եկեղեցւոյ, ուր կարգեցան կանոնք քսան եւ հինգ: Գնաց*
ընդ Հեթմոյ արքայի բազում պատարագօք առ Հուլաւ[ու]
էլղան՝ նախահոգակ եղեալ վնասուց կողմանցն Կիլիկիոյ:
1267 *Կացեալ ի հայրապետութեան զամս խէ [47] ՝ վախճանի յելս*
քառասնորդական պահոց յաւուր Յարութեանն Ղազարու:

258. Յակոբ Ա, ի Տարսօնայ կամ ի Սսոյ, անուանեալ
1253 *Կլայեցի, վարդապետ կաթուղիկոսարանին, առաքեցաւ առ*
Յովհաննէս Դուկաս կայսր Յունաց ի Նիկիա Բիւթանաց-
ւոց յարքայէ Հեթմոյ եւ ի Կոստանդին կաթուղիկոսէ եւ
եբարձ զկարծիս համարման մտաց նորա եւ ժողովոյ նո-
ցին ի բանս հաւատոյ զՀայոց: Յետ քանի ինչ ամսոց զկնի
1268 *վախճանին Կոստանդեայ ընտրեցաւ ի ժողովոյ եպիսկոպո-*
1270 *սաց եւ ի թագաւորէն եւ օծաւ կաթուղիկոս: Էօծ զԼեւոն Գ,*
որդի Հեթմոյ թագաւոր Հայոց ի Տարսօն քաղաքի: Կացեալ
1287 *ի հայրապետութեան զամս ԺԹ [19], վախճանի յաւուրս*
քառասնորդական պահոց:

259. Կոստանդին Բ, ի Կատուկ կոչեցեալ աւանէ, սնեալ
1287 *յեկեղեցւոջ Սսոյ, մականուամբ Պրոնագործ, օծաւ կաթու-*
ղիկոս մեծաւ հանդիսիւ յաւուր մեծի աւագ շաբաթու:
Անկեալ գժտութիւն ընդ մէջ սորա եւ արքայի, որոյ վասն
1290 *եւ ընկեցեալ յիշխանութենէն, աքսորեցաւ*[1]*: Վերստին հա-*
1307 *ւանութեամբ ազգային ժողովոյ հաստատեցաւ յԱթոռն հայ-*
1322 *րապետութեան. գրեաց թուղթ առ պապն Հռովմայ հան-*
դերձ եպիսկոպոսօք եւ թագաւորաւն եւ խնդրեաց օգնել
հօտին իւրոյ յարշաւանսն անդ ի թաթարաց եւ յայլոց
ազգաց. ի բազում ցաւոց սրտին պատճառելոյ ի տառապա-

---

[1] Տէր Ստեփաննոս յեկեղեաց գաւառէ, ի գեղջէ Խախայ կամ Խախտաց, սնեալ ի կաթուղիկոսարանին ի Հռոմկլա՝ սակս գժտութեանն Լեւոնի ընդ
1290 Կոստանդին Բ, կաթուղիկոս կացուցաւ ի նմանէ փոխանակ Կոստանդնի
1293 յաթոռ հայրապետութեան. վարեցաւ ընդ գերելոցն յեգիպտոս. եւ ի յաջորդ ամին մեռաւ ի ցաւոց սրտին անդ յեգիպտոս:

Զկնի սորին Ստեփաննոսի առ կենդանութեամբ Կոստանդնի Բ, կացուցաւ յաթոռն Գրիգոր Անաւարզեցի՝ Տուրք երիցանց կոչեցեալ. սա հաշտեցոյց զարքայ ընդ իշխանսն. կամակից եղեւ թագաւորութեանն Սմբատայ
1294 եւ էօծ զնա եւ այլն. կամեցաւ նորածեւութիւնս առնել յեկեղեցի ի մասին արարողութեանց. ուստի եւ գրեաց առ եպիսկոպոսս Արեւելից. եւ այն ինչ պատրաստի էր ի գլուխ տանել զայն ժողովով, հասեալ յօր մահուն՝ մեռաւ յամի 1306:

1323 նաց եւ յաղէտից հօտին իւրոյ հիւանդացեալ՝ վախճանե-
ցաւ, կացեալ ընդ ամենայն ի կոչմանն զամս ԼԵ [35]:
1323 260. Կոստանդին Գ Լամբրոնացի, նստի կաթուղիկոս
եւ գնացեալ առ Նասր սուլթան ըստ հրաւիրանաց նորա՝
իմաստալից բանիւք հաճեցոյց զսուլթանն եւ ետ դնել ի
միջի նոցա սուլթանին եւ Լեւոն արքայի դաշն խաղաղու-
թեան ցհնգետասանամեայ ժամանակս. կացեալ ի հայրա-
1327 պետութեանն զամս Դ [4] ՝ վախճանեցաւ:
261. Յակոբ Բ Սսեցի, քեռորդի Գրիգորի Անաւարզեցւոյ,
1327 յաջորդեաց յաթոռ հայրապետութեան ի Սիս: Յընդդիմա-
նալ իւր արքային Լեւոնի սակս չառնելոյ զթղթակցութիւն
ընդ լատինս, որ բերէր վնաս մեծ ազգին հասարակօրէն ի
1341 շրջակայ այլազգեաց, ընկեցաւ յԱթոռոյ հայրապետութեան
1354 յարքայէն Լեւոնէ[1]: Զկնի անկմանն գնաց առ պապն ի Գաղ-
ղիա եւ հաւանեցոյց զնա ի բանս հաւատոյ առ Հայս: Եւ
յետ վերադարձին ի վախճանել Մխիթար կաթուղիկոսի՝
վերստին համահաճութեամբ եպիսկոպոսաց եւ Կոստան-
1355 դեայ արքայի կարգեցաւ յԱթոռ հայրապետութեանն: Եւ
1359 վարեալ զայն գերագոյն պաշտօն այլեւս ամս Դ [4], վախ-
ճանեցաւ:
262. Մեսրոպ յԱրտազ գաւառէ յառաջնորդութենէ վա-
1355 նաց Թադէոսի առաքելոյ յաջորդեաց յԱթոռն կաթուղիկո-
սական: Վասն ազգային խռովութեանցն ծագելոց ի պատ-
1361 ճառս անապակ եւ ջրախառն պատարագելոյ՝ ժողով արար
յեպիսկոպոսաց եւ ի վարդապետաց ի Սիս քաղաքի եւ
արգել զջրախառնութիւնն: Եւ հրատարակեաց ըստ նախ-
նի սովորութեանն անապակ պատարագել: Վարեալ զայն
1372 պաշտօն զամս ԺԷ [17], վախճանեցաւ:
1372 263. Կոստանդին Դ նստաւ յաթոռն եւ յերկրորդ ամին
1373 վախճանեցաւ:
1374 264. Պողոս Ա, յաջորդեաց զԱթոռ հայրապետութեան:
1378 Կացեալ զամս Դ [4], վախճանեցաւ: Յերկրորդ ամի սորա
ըմբռնեցաւ արքայ Լեւոն Զ-րդ, որով եւ վախճան թագաւո-
րութեանն Կիլիկիոյ եւ ընդհանուր ազգին Հայոց:

---

[1] Մխիթար յերնջակ գաւառէ, ի գեղջէ Քռնայ, որ եւ ասի տէր Մխիկ՝ յանկանիլ յԱթոռոյ հայրապետութեան Յակոբայ Բ, յաջորդեաց յաթոռն յարքայէն Լեւոնէ, որոյ եւ հրամանաւն արար ժողով եւ պատասխանեաց բազմահատուած բանիցն պապին Հռոմվայ եւ մեռաւ յամին 1355:

1378 *265. Թէոդորոս Բ նստի կաթուղիկոս եւ գրգռութեամբ*
քրիստոնէից ոմանց ըմբռնեցաւ յումեմնէ Մելիք Օմար կո-
1395 *չեցեալ իշխանէ այլազգեաց եւ սպանաւ, յետ կալոյ յԱթոռն*
Հայրապետութեան զամս ԺԸ [18]:

1396 *266. Կարապետ Ա Բոկիկ անուանեալ յաջորդէ յաթոռն*
եւ եկաց ամս Բ [2]:

1398 *267. Դաւիթ Դ նստի կաթուղիկոս. եւ եկաց ամս Դ [4]:*

1402 *268. Կարապետ Բ նստի կաթուղիկոս. կացեալ յայնմ*
1409 *ամս Է [7] վախճանեցաւ:*

269. Յակոբ Գ էառ Հրաման յայլազգի ամիրայէն Կիլի-
1409 *կիոյ եւ նստաւ կաթուղիկոս. եւ կացեալ զամս Բ [2] վախ-*
1410 *ճանեցաւ դեղով մահու ընկալեալ զայն յոմանց եղելոցն ի*
Հայրապետանոցի անդ:

1411 *270. Գրիգոր Ը Խանձողատ կոչեցեալ նստի կաթուղի-*
1418 *կոս ինքնակամ. յետ կալոյ յԱթոռն ամս եօթն, աքսորեցաւ*
ի Սսեցւոց ի բերդ մի ամուր, ուր եւ մեռաւ իսկ:

271. Պօղոս Բ, առաջնորդ Երուսաղէմի ազդարարու-
թեամբ վարդապետաց Արեւելեայց եկն ի Սիս խրատել
զմիաբանս Հայրապետանոցին առ ի կալ ընդ միմեանս սի-
րով եւ միաբան ընտրել զայր իմաստուն յԱթոռ Հայրապե-
1418 *տութեանն. յայնժամ հարկեալ ի նոցունց ամենեցուն նստի*
ինքն կաթուղիկոս եւ բարեկարգէ փոքր ինչ զԱթոռն. կա-
1430 *ցեալ յիշխանութեանն զամս ԺԲ [12] վախճանեցաւ:*

1430 *272. Կոստանդին Ե ի բերդաքաղաքէն Վահկայ նստի*
1438 *կաթուղիկոս: Առաքէ դեսպանս ի ժողով Ֆլորէնցիոյ. այլ*
1439 *նախքան զդարձ նոցին ի ժողովոյ անտի, վախճանեցաւ՝*
կացեալ յայնմ զամս Թ [9]:

1439 *273. Յովսէփ Գ կարգի ի Սսեցւոց կաթուղիկոս. եւ կա-*
ցեալ ամիսս ինչ վախճանի:

1440 *274. Գրիգոր Թ Մուսաբէկեանց նստի կաթուղիկոս*
առանց հաւանութեան Արեւելեան եպիսկոպոսաց: Սակս
1441 *ինչ ինչ բանաւոր պատճառանաց հրաւիրեցաւ յարեւելեան*
առաջնորդաց գալ եւ նստիլ յէջմիածին եւ այնպէս ունիլ
զայն իշխանութիւն. բայց ո՛չ էառ յանձն:

275. Կիրակոս, ի գաւառէ Քաջբերունւոյ, ի գեղջէ Խառա-
1397 *բաստայ, ձեռնադրեցաւ քահանայ ի Պետրոս եպիսկոպոսէ*
առաջնորդէ վանաց առաքելոյն Թադէոսի եւ գնացեալ կրօ-
նաւորեցաւ ի վանս Խոր Վիրապի յամս ԼԲ [32]: Ապա ի

ժողովի անդ յէջմիածին ընտրեցաւ եւ օծաւ համահաճ հաւանութեամբ բովանդակ ազգին եպիսկոպոս եւ կաթուղիկոս եւ նստաւ յէջմիածին. եւ կացեալ ի հայրապետութեան ամս Բ [2] եւ եղեալ չփոթ տարաձայնութեան, որոյ նախկին
1443 *պատճառ էր Մարկոս ոմն, անկաւ ի կաթուղիկոսութենէն:*

1443 *276. Գրիգոր Ժ Մակուեցի Ջալալբէկեան նստի կաթուղիկոս յէջմիածին զկնի անկմանն Կիրակոսի ի կենդանութեան նորա: Սակս զբաղմանց գործոց կառավարութեան*
1454 *կարգէ գործակից եւ օգնական զԱրիստակէս վարդապետ ոմն աթոռակալ անուամբ եւ յաջորդ զկնի մահուանն*[1]*: Ստացաւ կալուածս գնոց դրամոյ ի սեպհականութիւն կաթուղիկոսարանին (134), (138). եւ կացեալ ի հայրապետու-*
1462 *թեան զամս ԺԹ [19], վախճանեցաւ:*

1455 *277. Արիստակէս Բ կարգի գործակից եւ աթոռակալ*
1462 *Գրիգորի Մակուեցւոյ. զկնի վախճանի նորա վարէ զիշխանութիւն կաթուղիկոսութեանն ունելով ինքեան գործակից եւ աթոռակալ զՍարգիս վարդապետն. կացեալ յայնմ զամս*
1466 *Դ [4], վախճանի:*

1466 *278. Սարգիս Բ, աթոռակալ Արիստակեայ նստի կաթուղիկոս: Յորդորեալ զՎրթանէս եպիսկոպոս ոմն ի վանաց Աստուածածնի գեղջ Օծօպու եւ ի ձեռն նորա հնարիւք ետ*
1477 *փախուցանել զԱջ Լուսաւորչին յԱղթամարայ յէջմիածին. եւ զնոյն զՎրթանէս եպիսկոպոս կարգեաց փակակալ Սրբոյ Էջմիածնի. կացեալ յայնմ մեծի պաշտաման զամս ԻԴ*
1490 *[24] վախճանեցաւ:*

1490 *279. Արիստակէս Գ նստի կաթուղիկոս զկնի Սարգսի Բ*
1498 *եւ կացեալ զամս Ը [8] վախճանեցաւ:*

1498 *280. Թադէոս Ա, փոխանորդ Արիստակեայ նստի կաթու-*
1503 *ղիկոս. կացեալ ամս Ե [5] վախճանեցաւ:*

1503 *281. Եղիշէ Բ նստաւ կաթուղիկոս զկնի Թադէոսի Ա. եւ*
1515 *կացեալ յայնմ զամս ԺԲ [12] վախճանեցաւ:*

1515 *282. Զաքարիա Գ նստի կաթուղիկոս զկնի Եղիշէի Բ.*
1520 *կացեալ յայնմ զամս Ե [5] վախճանեցաւ:*

1461 [1] Զաքարիա կաթուղիկոս Աղթամարայ սիրեցեալ յաչս Զահանշահայ եւ տիկնոջ նորա Բէկումայ, առնու ի նմանէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան էջմիածնի հրովարտակաւ յամի 1461, այլ զմի ամ եւեթ կացեալ աստ յէջմիածին՝ ետես թէ չէ՛ կարող այլեւս մնալ աստ պատճառաւ հարկապահանջութեան Հասանալի որդւոյ Զահանշահայ, խոյս ետ դարձեալ յԱղթամար տանելով ընդ իւր զԱջ Լուսաւորչին եւ զայլ զերեւելի զարդս յէջմիածնէ:

1520 *283. Սարգիս Գ յաջորդէ զԱթոռ կաթուղիկոսական. եւ*
1536 *կացեալ յայնմ ամս ԺԶ [16] վախճանեցաւ:*
1536 *284. Գրիգոր ԺԱ կարգի կաթուղիկոս զկնի Սարգսի Գ.*
1541 *կացեալ զամս Ե [5] վախճանեցաւ:*
285. Ստեփաննոս Ե Սալմաստեցի այր իմաստուն եւ
1541 *գրասէր նստի կաթուղիկոս. վշտացեալ ի դառնութենէ*
1547 *ժամանակաւորաց՝ ձեռնադրեաց զՄիքայէլ Սեբաստացի*
1548 *եւ կարգեաց յԱթոռ հայրապետութեան. եւ ինքն գնաց ի*
Կոստանդինուպոլիս եւ անտի ի Հռովմ. եւ շրջեալ յայնո-
1550 *սիկ կողմանս էանց ի Լեհաստան եւ ի Մոսկովստան եւ եկն*
1551 *յԱրարատ եւ եմուտ յէջմիածին եւ ընկալաւ բազում պա-*
տուով ի Միքայէլ կաթուղիկոսէ. եւ զկնի սակաւ ժամանա-
կաց վախճանեցաւ:
1347 *286. Միքայէլ Սեբաստացի ձեռնադրի ի Ստեփաննոս կա-*
1556 *թուղիկոսէ յԱթոռ հայրապետութեաննն. կարգէ գործակից*
1562 *ինքեան եւ աթոռակալ զԲարսեղ վարդապետ ոմն. գնաց ի*
Սեբաստիա ի վրդովիլ աշխարհին Արարատայ յասպատա-
կաց եւ յղեաց անտի ի Հռովմ առ պապն զպատգամաւոր
1563 *ոմն Աբգար անուն. դարձ առնէ անտի յէջմիածին. կացեալ*
1569 *ի հայրապետութեան ամս ԻԲ [22] վախճանեցաւ:*
1569 *287. Գրիգոր ԺԲ յաջորդէ յԱթոռն հայրապետութեան.*
1573 *կացեալ զամս Դ [4] վախճանեցաւ:*
1573 *288. Ստեփաննոս Զ նստի յԱթոռ կաթուղիկոսական. կա-*
1575 *ցեալ ամս Բ [2] վախճանեցաւ:*
1575 *289. Թադէոս Բ յաջորդէ զԱթոռ հայրապետութեան.*
կարգեաց գործակից ինքեան զԱռաքել վարդապետ. հա-
սեալ ի վախճան կենաց՝ կացոյց յաթոռն փոխանակ իւր
1584 *զնոյն Առաքեալ վարդապետ եւ ինքն վախճանեցաւ:*
290. Առաքեալ ի սահմանացն էջմիածնի կարգի գործա-
1583 *կից եւ աթոռակալ Թադէոսի Բ. եմուտ առ ֆահրատ փաշայ*
Օսմանցւոց եւ միջնորդեալ ո՛չ ետ փակել զեկեղեցին Երկե-
1584 *րեսս կոչեցեալ յԵրեւան: Մերձ ի վախճան Թադէոսի կացու-*
ցաւ ի նմանէ յԱթոռն հայրապետական. զկնի երկու ամաց
1586 *ձեռնադրէ փոխանակ ինքեան յայն պաշտօն զտէր Դաւիթ եւ*
ինքն հրաժարեալ առանձնանայ ի վանս ինչ մինչեւ ցմահ:
1586 *291. Դաւիթ Ե նստի կաթուղիկոս ի կենդանութեան*
Առաքելի, ձեռնադրեալ ի նմանէ: Վշտացեալ ի հարկա-

1593 *պահանջից ձեռնադրեաց աթոռակից ինքեան եւ օգնական*[1]
զՄելքիսէթ եպիսկոպոս Գառնեցի: Վարեցաւ ընդ գերելոցն
1605 *բազմութեան ազգին յԱսպահան քաղաք Պարսից. վերա-*
1611 *դարձաւ յէջմիածին եւ անպատուեալ ի Մելքիսէթէ՝ գնաց*
1612 *առ շահ Աբաս, որ էր յայնժամ ի Վրաստան: Վերադարձաւ*
1614 *հրամանաւ շահ Աբասայ յէջմիածին: Վերստին գնաց առ*
1616 *շահ Աբաս, որ բանակեալ էր ի լերինս Գառնւոյ գաւառին*
Վայոց ձորոյ եւ պատմեաց զանհնարին տառապանաց իւ-
րոց. ընկալնու պարգեւ ի նմանէ զգիւղն Քռդիկան ի Ջղա-
խոռ գաւառին Ասպահանայ ի դարման պիտոյից, ուստի
ըստ խնդրանացն ել գնաց յԱսպահան:

Հարկադրութեամբ հայ ջուղայեցւոց բնակելոց յԱսպա-
1626 *հան գնաց ի Բաղտատ առ շահ Աբաս հաստատիլ անդրէն*

---

[1] Սա ինքն Մելքիսէթ եպիսկոպոս Գառնեցի, ի գեղջէ Աղջոց վանաց, ձեռ-
1593 նադրեցաւ կաթուղիկոս ի Դաւթայ վասն գործակցութեան նմա. նեղի ի
1598 պարտատեարց եւ գնայ ի Կոստանդինուպօլիս գտանել զօգնութիւն ինչ
յազգէն. ուր ի պատճառս բարձման երկուութեան կաթուղիկոսաց եդաւ
յազգէն յաթոռ պատրիարգութեան. եւ չեւ եւս կացեալ յայնմ զամ մի, ան-
կաւ յիշխանութենէ անտի եւ եկն դարձեալ յէջմիածին. եւ դարձեալ մատ-
1603 նեցաւ ի ձեռս պարտատեարց. եւ խորհրդակցութեամբ Դաւթայ գնաց յԱս-
պահան առ ի գտանել նպաստ ինչ պարտուցն՝ յազգէն եւ ի շահ Ապասայ.
1605 ըմբռնի ի Պարսից եւ վարի ընդ գերելոցն, այլ ի կէս ճանապարհէն
փախուցեալ դառնայ յէջմիածին: Ըստ հրամանին շահ Աբասայ բռնու-
1612 թեամբ Թահմազղուլի խանին Երեւանայ եկուլ զմիս մարմնոյ իւրոյ
զհատեալն աքցանաւ ի ծառայից այնր իշխանի եւ ապա կապանօք առա-
քի ի Վրացտուն առ շահ Աբաս: Յաղագս ազատելոյ զանձն ի դառնադառն
1618 կապանաց էարկ զԱթոռն ի ներքոյ տուգանաց հարիւր թումանի, զոր ամ
ըստ ամէ ունէր հասուցանել յարքունիսն Պարսից: Կարի տագնապեալ ի
1624 ծանրութենէ պարտուց եւ ի նեղելոյ հարկապահանջիցն՝ ձեռնադրեաց
զեղբօրորդի իւր զՍահակ եպիսկոպոս յԱթոռ կաթուղիկոսութեան. եւ ինքն
հնարիւք իմն խոյս ետ ի Կոստանդինուպօլիս եւ անտի ի Լեհաստան. ու-
րանօր հակառակ կամաց ժողովրդեան ձեռնադրեաց զՆիկօլ եպիսկոպոս
եւ ետ պատճառ բազմավրդով խռովութանց ի ժողովրդեանն. եւ կացեալ
1628 անդէն ի Կամենից քաղաքի մեռաւ յաւուր տօնի յարութեան Ղազարու:

Սրապիոն վարդապետ, առաջնորդ Ամիդ քաղաքի, այր երեւելի անուամբ
եւ հարստութեամբ ընկալեալ զթուղթ ի Դաւիթ եւ ի Մելքիսէթ կաթուղիկո-
1602 սաց յաղագս պարտուց Աթոռոյն եւ այլն, գայ յԱրարատ. լեալ շփոթ տա-
րաձայնութեան ի մէջ սորա եւ կաթուղիկոսացն, մնայ սա ինքն առ ջուղա-
1603 յեցիսն, յորոց ստիպեալ նոքօք հանդերձ գայ յէջմիածին եւ ձեռնադրի
կաթուղիկոս ի ժողովոյ եպիսկոպոսաց, վարդապետաց եւ իշխանաց ի 14
օգոստոսի եւ անուանի Գրիգոր: Ի գալ զօրացն շահ Ապասայ յԱրարատ
1604 նեղի յՕսմանեանց յաղագս պարտուց Աթոռոյն: Ներկայանայ շահ Ապասայ
յԵրեւան քաղաքի, այլ տեսեալ թէ՝ չեղեւ ընկալեալ ի հաճոյս եւ երկուցեալ
եւս՝ գնաց ի Ջուղայ: Յաղագս պահանջելոյ շահ Ապասայ ի կաթուղիկո-
սացն զպարտս Աթոռոյն՝ մատնեցաւ եւ Սրապիոն. եւ զկնի բազում գանից
եւ վճարման գումարաց՝ հազիւ ուրեմն զերծաւ ի ձեռաց եւ անց գնաց ի
Վան եւ անտի յԱմիդ յառաջին տեղի իւր. ուրանօր սակս տկարութեանց ի
1606 հարուածոց անտի մաշեալ եւ տուայտեալ՝ վախճանեցաւ ի 23 ապրիլի:

յիշխանութեան հայրապետական. իսկ հասեալ անդր եւ տեսեալ եթէ ո՛չ յաջողի այն, էառ վերստին զազատութիւն հարկաց աւանին, զոր յառաջն ունէր ի նմանէ եւ դարձաւ անդրէն. եւ կացեալ անդէն յԱսպահան յազգի անդ զայլ եւս ամս՝ կնքեաց զկեանս իւր յառաջնում ամի անդ կաթուղի-
կոսութեան Փիլիպպոսի Հաղբակեցւոյ՝ այն է յամի 1633, յամսեանն օգոստոսի, ըստ Առաքելի Դաւրիժեցւոյ (յերես 423):

292. Սահակ Դ, եղբօրորդի Մելքիսէթ կաթուղիկոսի
1619 *ձեռնադրի ի նմանէ եպիսկոպոս: Ի լինել բանի կաթուղի-*
կոսութեան Մովսէսի Սիւնեցւոյ եւ ի հրաժեշտ տալն նորա
1624 *յայնմ պատուոյ, սա ինքն անձնընծայ եղեալ ձեռնադրի ի*
հօրեղբօրէ իւրմէ Մելքիսէթէ կաթուղիկոս եւ հաստատի
այն ի շահ Աբասայ՝ դեգերմամբ նորին Սահակայ մինչ ի
Բաղտատ: Դարձեալ անտի յԱսպահան առ ազգն առ ի ժո-
1626 *ղովել զդրամս, ո՛չ ընդունի ի նոցանէ. եւ դարձեալ գնայ*
առ շահ Աբաս, որ էր անդ ի Բաղտատ, եւ վերստին հաս-
1627 *տատեաց զիշխանութիւն իւր: Վերադառնայ եւ գայ յու-*
սով յԵրեւան, այլ մնայ անյոյս եւ խորհի խոյս տալ ի ձե-
ռաց պարտատերց, պատճառաւ գնալոյ յէջմիածին՝ խոյս
1628 *տայ ընտիր երիվարաւն եւ անցանէ ընդ Երասխ եւ զերծա-*
նի ի Վան քաղաք: Հոգայ զհրովարտակ յարքունի դրանէ.
այլ զի առցէ եւ զհրովարտակ յեպարքոսէ, որ էր յայնժամ
յԱմիդ քաղաքի (Տիգրանակերտ) առ ի վարել զիւր իշխա-
1629 *նութիւն ի սահմանի անդ Օսմանեանց, արկաւ ի ներքոյ*
գանից. եւ զերծեալ ի մահուանէ միջնորդութեամբ ոմանց
համազգեաց, վերադառնայ եւ գնայ ի Վրացտուն եւ անտի
յէջմիածին. ուրանօր կացեալ բազում ջերմեռանդութեամբ
1639 *եւ ապաշխարութեամբ վախճանեցաւ:*

293. Մովսէս Գ, յաշխարհէն Սիւնեաց, ի գաւառէ Բա-
ղաց, ի Խոտանան գեղջէ շրջեալ ի բազում տեղիս մինչեւ
1611 *ցԵրուսաղէմ՝ դառնայ անտի յԵրեւան: Ի պատճառս Անդ-*
1617 *րէաս քահանայի նահատակելոյն յԱգուլիս ըմբռնեցաւ*
ընդ Պօղոս վարդապետի գործակցի նորա շղթայիւք ի շահ
1619 *Աբասայ եւ երեք հարիւր թուման տուգանօք զերծաւ: Ձեռ-*
նադրեցաւ ի Մելքիսէթ կաթուղիկոսէ յեպիսկոպոս ի քա-
ղաքին Երեւանայ ի մենաստանին Անանիա առաքելոյ: Ընդ-
1626 *ծայեաց շահ Աբասայ մոմ սպիտակացուցեալ եւ սիրով ըն-*

1627 *կալաւ ի նմանէ: Կատարեաց զհանդէս ջրօրհնեաց ի Վահ-*
րապատ ի ներկայութեան շահ Աբասայ. ընդ որ հաճեալ՝
ետ սմա հրովարտակաւ զփակակալութիւնն Էջմիածնի ըստ
խնդրոյ սորա: Նեղեալ ի պարտատերացն Սահակայ կաթու-
ղիկոսի եւ ի խոյս տալն նորա յայլ հեռաւոր տեղի, տեսեալ
1628 *թէ օր քան զօր առաւելու պարտն յանուն Էջմիածնի, գնաց*
առ շահ Աբաս գտանել զհնար ազատութեան Աթոռոյն ի
պարտուց. այլ անյաջողութեամբ վերադարձաւ անդրէն եւ
զհետ եղեւ նորոգութեան Աթոռոյն: Ըստ թախանձանաց
1629 *ազգին օծաւ կաթուղիկոս յեպիսկոպոսաց ի 13 յունվարի.*
գնաց ընդ երեւելի իշխանաց Հայոց յԱսպահան առ նորոգ
թագաւորեալն Իսմայէլ շահ Սէֆի կոչեցեալ ծանր ընծա-
յիւք եւ ազատեաց զԱթոռն ի ծանր պարտուց եւ ի հարիւր
թուման հարկացն արքունի: Եւ զկնի այնր բոլորովին զհետ
լինի նորոգութեանց եւ շինութեանց տաճարին եւ մենաս-
տանին եւ բարեկարգութեան ի նմա կրօնաւորելոցն[1]*. եւ*
հասեալ ի կէտ կենաց իւրոց իբրեւ ի յիսուն եւ հինգ ամ
հասակի՝ յԵրեւան քաղաքի, ի մենաստանին Անանիա առա-
քելոյ, յորում ժամու եւ հատկացուցեալ յաջորդ ինքեան
1632 *զՓիլիպպոս եպիսկոպոս Հաղբակեցի՝ հանգեաւ ի Քրիս-*
տոս ի 14 մայիսի, կալով ի կաթուղիկոսութեան զամս Գ[3]
եւ ամիսս 4. եւ ամփոփեցաւ մարմին նորին ի Կոզեռն կոչե-
ցեալ գերեզմաննոցի անդ յԵրեւան:

294. Փիլիպպոս, ի Փոքր Աղբակայ, ի գեղջէ Երնկան,
աշակերտ Մովսէսի Գ Սիւնեցւոյ, համաձայնութեամբ ազ-
1633 *գին օծաւ կաթուղիկոս ի 13-րդ աւուր յունվարի եւ ձեռն*
էարկ լրացուցանել զթերի մնացեալ շինուածսն ի Մովսէսէ
1638 *Գ. գնաց յԱսպահան եւ աշխատ եղեալ էառ զԱջ Լուսաւոր-*
1651 *չին եւ եբեր յէջմիածին ի 20 սեպտեմբերի: Գնաց յԵրու-*

[1] Ի վերայ պէսպէս բարեկարգութեանց բազմաշխատ հայրապետիս, գրէ եւ ոմն ի նօտարաց ի վախճանի քաղուածոց շարական երգոց ի ձեռագիր ատենի ժամագիրս թէ՝ սահմանեաց տասն շարական ասել օրհնութիւն. վասն բազում խորհրդոյ տասնեակ թուոյն, այլեւ վկայ ածելով զմեծ փիլիսոփայն եւ զհաւատարիմ քահանայապետն զսուրբ Ստեփաննոս, որ զաւագ օրհնութիւններն տասն տասն շարական արար... ըստ տասն դասուց բանականաց:... Եթէ հաճեսցին կամք եղբայրութեան ձերոյ, Տեառն գոհութիւն. եւ եթէ ո՛չ ախորժիցէք, կամք ձեր եղիցին. իսկ զմեզ ի մեղադրանաց եւ ի բամբասանաց ազատ թողուլ աղաչեմք»: Այս բան յայն սակս ծանուցաւ, զի բացայայտեսցի ժամանակ սահմանելոյն զայն կարգ եւ յումմէ, քանզի նախնի երգիչք վասն օրհնութեան զերկուս շարականս ասացեալ են:

սաղէմ, ուր հանդիպեցաւ եւ կաթուղիկոսն Սսոյ Ներսէս. խորհեցան ի միասին եւ արարին ժողով յեպիսկոպոսաց եւ ի վարդապետաց վասն բարեկարգութեան եկեղեցականաց եւ վասն սիրով կալոյ երկուց աթոռոցն: Անդ յԵրուսաղէմ ետ շինել զսալահատակ եկեղեցւոյ Սրբոյն Յակոբայ գունագոյն
1652 *քարամբք կարի վայելուչ: Դարձաւ անտի ի Կոստանդինուպոլիս եւ եբարձ շփոթ պառակտելոցն եւ սերմանեաց զսէր եւ զխաղաղութիւն. եւ զերծուցեալ զեկեղեցիսն ի պարտուց հաստատեաց եւ զՅովհաննէս Մուղնեցի ի պատրիարգութեան.*
1653 *վերադարձաւ յէջմիածին եւ ձեռնամուխ եղեալ՝*
1654 *հիմն արկանէ մեծի զանգակատանն Սրբոյ Էջմիածնի. այլ չեւ եւս հասեալ շինուածոյն ի միջնայարկն՝ հիւանդացեալ*
1655 *փոխի յաստեացս ի 25 մարտի ի հասակի եօթանասուն եւ երեք ամաց՝ յետ կալոյ ի հայրապետութեանն զամս ԻԲ [22] եւ ամիսս իբր երեք. որոյ զմարմին տարեալ ամփոփեցին յեկեղեցւոջ Սրբուհւոյն Հռիփսիմեայ ի հիւսիսակողմն:*

295. Յակոբ Դ, ի Նոր Ջուղայէ Պարսից. աշակերտեցաւ Խաչատուր վարդապետին Կեսարացւոյ, առաջնորդ կացեալոյն անդ ի Ջուղայ եւ ձեռնադրեցաւ ի նմանէ կուսակրօն քահանայ. ապա զկնի յիշեալ Խաչատուր վարդապետի վախճանելոյ յամի 1646 ելեալ ի վանաց անտի Ասպահանայ, եկն յէջմիածին: Յետ կալոյ ի Սուրբ Էջմիածին երեւելի ծառայութեամբք ձեռնադրեցաւ ի Փիլիպպոս կաթուղիկոսէ եպիսկոպոս եւ առաքեցաւ առաջնորդ վանացն Մաղարթայ լերին. ի ժամանակի անդ առաջնորդութեան իւրոյ քակեաց բոլորովին զմենաստանն փոքրիկ եկեղեցեաւն հանդերձ եւ հիմնարկեալ յամի 1643, աւարտ ետ գործոցն յամին 1655:
1655 *Զկնի վախճանին Փիլիպպոս կաթուղիկոսի ընտրեցաւ եւ օծաւ յԱթոռ հայրապետութեան յ8 ապրիլի ի տօնի ծաղկազարդին. փոյթ կալաւ յառաջացուցանելոյ զտպագրութիւնն ի հայ լեզու. ուստի եւ առաքէ յԵւրոպիա զԾարեցի Մատթէոս սարկաւագ զնօտարն Փիլիպպոս կաթուղիկոսի եւ զկնի գլխաւորելոյն եւս զթերի շինուած զանգակատանն*
1658 *գնաց յԱսպահան եւ էառ զհրովարտակ հաստատութեան կաթուղիկոսութեանն ի շահ արքայէ Պարսից: Լուեալ զինքնակամ կաթուղիկոսանալն Եղիազարու վարդապետի Անթապցւոյ ի Բերիա եւ զպէսպէս տարաձայնութիւնս շփոթից ծագելոց պատճառաւ կաթուղիկոսութեան նորին,*

ել յԱթոռոյ էջմիածնի եւ եհաս ի Զմիւռնիա. եւ անտի ըստ
յորդորելոյ ոմանց գնաց յԵրուսաղէմ. վերադարձեալ ան-
տի գնաց ի Կոստանդինուպոլիս. ուր խոհական իմաստու-
թեամբ իւրով եւ առաքինի քաղաքավարութեամբ յանկոյց
յինքն զսիրտս բազմաց՝ եւս եւ զկացելոցն ի կողմն Եղիա-
զարու եւ ընկալեալ զինչ ինչ խնդիրս յարքունուստ՝ վերա-
դարձաւ յէջմիածին. ուր վշտացեալ յագահութենէ նորոգ
կարգեալ Սաֆի խանին Երեւանայ՝ հազիւ ուրեմն փախս-
տեամբ գնաց յԱսպահան եւ խնդիր մատուցեալ առ նորոգ
շահն՝ ընկալաւ զհրովարտակ կաթուղիկոսութեան իւրոյ եւ
ետ փոխել եւ զխանն Երեւանայ: Զկնի վերադարձին յԱ-
թոռն, ապա թէ ի պատճառս պարտուց եւ թէ ի պատճառս
զանազան տարաձայնութեանց եւ վրդովմանց ազգի Հայոց
եղելոց ի Կոստանդինուպոլիս յաղագս ոմանց վարդապե-
տաց եւ քահանայից իսկ, որք զմիմեանս վարելով ի բաց
կաշառօք ընկալնուին զպատրիարգութիւն քաղաքին, ել
յէջմիածնէ Յակոբ կաթուղիկոս ոչինչ հայեցեալ ի ծերու-
թիւն իւր, գնաց նախ ի Տփխիս եւ անտի ընդ ճանապարհ
ծովու ի Կոստանդինուպոլիս դարման մատուցանել տառա-
պանաց ազգին. հասեալ անդր հրաւիրեաց եւ զԵղիազար
յԵրուսաղէմէ, զի ըստ իմիք էր եւ նա պատճառ այնոցիկ
տարաձայնութեանց, գալ անդր եւ ի միասին խորհրդակ-
ցեալ գտցեն զելս հնարից օգտի ազգին. այլ ի յամենալ
Եղիազարու տկարացեալ հիւանդանայ եւ փոխի յաստեացս
ի Կոստանդինուպոլիս յերկրորդ աւուր ամսեանն օգոստո-
սի ի հասակի ութսուն եւ երկու ամաց՝ կացեալ ի հայրա-
պետութեան ամս ԻԵ [25] եւ ամիսս չորս. զորոյ զմարմինն
տարեալ ամփոփեն ի հասարակաց գերեզմանատան Հայոց
ի Պէյօղլու, արկանելով ի վերայ զվէմ շիրմի, որ ունի արձա-
նագիր ըստ այսմ[1].

«Հանգստարանս այս հրաշափառ եւ պատուելի,
Վայելչադիր յօրինուածովք ի հանդիսի,
Ունի աւանդ զմաքուր մարմին[2] *բազմերջանկի*
Տեառն Յակոբայ Հայոց ընտրեալ հայրապետի,
Որ փոխանորդ հօր մեր սրբոյ Լուսաւորչի,
Կաթուղիկոս օծեալ նորին օրհնեալ գահի,

---

1 [Տապանագիրը *տես* նաեւ ՄՄ 482, էջ 44բ, ՄՄ 737, էջ 180բ]:
2 [ՄՄ 482-ում՝ **յաւանդ մաքուր զմարմին**]:

Եւ արդ տապանս[1] բուժիչ ախտից մարմնականի,
Յուսով ի[2] սա դիմեցելոց հրաշք իւր յայտնի,
Զկազմող սորին յիշել ի Տէր զարմիւք հայցի,
ԶԶաքարիայն, որ խալիֆայ հիւսնականի[3],
Հազար հարիւր քսան եւ ինն Հայոց թուի [1680],
Երկրորդ աւուր ամսոյն Հռոմայ օգոստոսի:

296. Եղիազար Անթապցի այր խրոխտ եւ փարթամ,
1651 *կալնու զիշխանութիւն պատրիարգութեանն Կոստանդի-*
1652 *նուպօլսի: Անկանի ի պատուոյ անտի ի ժամանակի լինե-*
լոյ անդ Փիլիպպոս կաթուղիկոսի: Զկնի բազում նեղու-
1659 *թեանց, տառապանաց եւ բանտից ետ հաստատել արքու-*
նի հրովարտակաւ լինել անդրէն վանաց սրբոյն Յակոբայ
ի ձեռս Հայոց, որպէս էր եւ յառաջն. ի վաղուց երկնէր
ի սրտի նստել առանձին կաթուղիկոս անդ յԵրուսաղէմ ի
վերայ ազգին եղելոյ ընդ տէրութեամբ Օսմանեանց, ուս-
1663 *տի եհան հրովարտակ վասն այնր յեպարքոսէ՝ ընդ նմին*
եւ զհրովարտակ վասն պատրիարգութեանն Երուսաղէմի. ի
փոխարկիլ պատրիարգութեանն անդրէն յանուն Աստուա-
ծատրոյ՝ ջանադրութեամբ Մարտիրոս վարդապետի Կաֆա-
յեցւոյ, վերստին դիմեաց առ եպարքոսն եւ խորհրդակցեալ
1665 *ընդ Աբրոյ Զէլէպիին եւ ձեռնտուութեամբ նորա ընկալաւ*
յեպարքոսէ զհրովարտակ հաստատութեան կաթուղիկո-
սութեանն եւ զնամակ խնամակալութեան Երուսաղէմի.
1666 *ի յաջորդ ամի ի ձեռս եբեր եւ զպատրիարգութիւնն. եւ*
անդ ի Կոստանդինուպօլիս արարեալ զհանդէս կաթուղի-
1667 *կոսութեան եւ ձեռնադրեալ զեպիսկոպոսս եօթն՝ եմուտ ի*
նաւ եւ գնաց յԵրուսաղէմ, եւ օրհնեաց անդ զմեռոն: Ան-
կաւ դարձեալ ի պատրիարգութենէ Երուսաղէմի եւ եղեւ
1670 *աստանդական, ուստի անդրէն դիմեաց առ եպարքոսն եւ*
էառ զիշխանութիւն Երուսաղէմի: Ի վախճանիլ Յակոբայ
կաթուղիկոսի անդ ի Կոստանդինուպօլիս եւ ի հրաւիրել
միաբանից Էջմիածնի զնա ինքն զԵղիազար դեսպանու-
1682 *թեամբ Պետրոս եպիսկոպոսի Գողթան գաւառի, եկ յԵրու-*
սաղէմէ անտի եւ ընդ Կոստանդինուպօլիս ճանապարհոր-

---

[1] [ՄՄ 482-ում՝ **տապան**]:

[2] [ՄՄ 482-ում՝ **է** փխ **ի**]:

[3] [ՄՄ 482-ում եւ 737-ում՝ **զԶաքարիայն նոր խալիֆայն հիւսնականի**]:

դեալ եկն եմուտ յէջմիածին ի 14-րդ աւուր օգոստոսի եւ նստաւ ընդհանուր կաթուղիկոս ազգի Հայոց եւ արար ինչ
1690 *ինչ շինուածս յէջմիածին (18, 19) եւ հասեալ ի կէտ կենաց մահու՝ վախճանեցաւ յ8-րդ աւուր օգոստոսի, կացեալ ի հայրապետութեան յէջմիածին զամս ինն, զորոյ զմարմին հանգուցանեն ի գաւիթ եկեղեցւոյ Սրբուհւոյն Գայիանեայ կառուցելոյն ի նմանէ՝ ի տապանի անդ ի հիւսիսակողմն, զոր նորա էր պատրաստեալ յառաջագոյն:*

297. Նահապետ Եղեսացի ձեռնասուն աշակերտ Եղիա-
1690 *զարու կաթուղիկոսի օծեալ հաստատեցաւ յԱթոռ հայրա-պետութեանն ի 10-րդ աւուր օգոստոսի. յաղագս խստու-թեամբ գնալոյ ընդ եկեղեցականն էջմիածնի եւ այլ տե-*
1695 *ղեաց՝ անկաւ յայնմ պատուոյ*[1] *եւ եդաւ ի կղզին Սեւանայ, ուր յետ կալոյ իբրեւ զամ մի՝ միջնորդութեամբ կուսակցաց իւրոց դարձեալ հաստատեցաւ յԱթոռ հայրապետութեանն. եւ կացեալ ի նմին ընդ ամենայն ամս ԺԴ [14] եւ ամիսս*
1705 *իբր 10, վախճանեցաւ ի 13 յունիսի եւ թաղեցաւ ի գաւթի եկեղեցւոյն Շողակաթ անուանելոյ ի հիւսիսակողման:*

298. Աղէքսանդր Ա, ի Նոր Ջուղայէ, ի միաբանութենէ
1695 *վանաց այնր քաղաքի, ուր զկնի զարգացմանն կարգեցաւ առաջնորդ նոյն վանաց Նոր Ջուղայու եւ վիճակի նորին. եւ ապա զկնի իբր վեց ամսոց վախճանին Նահապետ կա-թուղիկոսի, ազգային հաւանութեամբ եկեալ յէջմիածին*
1706 *օծեալ յեօթն դեկտեմբերի նստաւ յԱթոռ հայրապետու-թեանն. եւ կացեալ յայնմ գերագոյն աստիճանի ամս ութն՝*
1714 *վախճանեցաւ ի 22 նոյեմբերի եւ ամփոփեցաւ մարմին նո-րա ի հիւսիսակողման արեւմտեան մեծի դրան էջմիածնի,*

---

[1] Ընդ խստութեամբ վարիլ Նահապետ կաթուղիկոսի ի կառավարութեանն միաբանք էջմիածնի տան բերել զՍտեփաննոս առաջնորդ Նոր Ջուղայու յէջմիածին եւ օծեալ նստուցանեն յԱթոռ հայրապետութեանն. բայց աշ-խատեալ բարեկամաց եւ կողմնակցաց Նահապետի, մանաւանդ ումեմն Աւետիք անուն հայ իշխանի եւ հաւատափոխ եղելոյն, որով եւ սիրելի յաչս արքային Պարսից, տան բերել ի Սեւանայ զՆահապետ յաթոռն իւր եւ զՍտեփաննոս ըստ հրամանի շահին արկանէ ի բանտ խանն Երեւանայ եւ
1696 պահեալ կարի յանձկութեան անխնամ վախճանի յայնմ տառապել ի դրու-թեան ի 16-երորդ աւուր փետրվարի եւ ըստ յանձնարարութեան նորին ին-քեան հանգուցելոյն տարեալ զմարմինն հանգուցանեն ի մենաստանին Խոր Վիրապայ:

Իսկ ըստ Զաքարիա Սարկաւագի վախճանեցաւ ի 1698, ի 4 յունվարի եւ ամփոփի մարմինն ի գաւթի եկեղեցւոյն Խոր Վիրապայ (Բ հատոր, գլուխ Կե):

որ անկանի ի ներքոյ մեծի զանգակատանն եւ ունի տա-
պանավէմ մարմարոնեայ, յորոյ վերայ եւ արձանագիր ըստ
այսմ. «Հազար հարիւր ԿԳ [1714] թուին վախճանեցաւ տէր
Աղէքսանդր կաթուղիկոս Ամենայն Հայոց եւ եղաւ յայսմ
դամբարանի. միով Տէր ողորմեայիւ յիշել զձեզ աղաչէ ով
հանդիպողք բարի»:

299. Աստուածատուր Ահմատանցի զկնի վեց ամսոց
1715 *վախճանին Աղէքսանդրի Ա օծեալ յութն մայիսի նստաւ*
յԱթոռ կաթուղիկոսական:

Ըստ աղերսալիր խնդրոյ Յովհաննու պատրիարգին եւ
իշխանաց Հայոց Կոստանդինուպոլսոյ՝ հարկեցուցիչ բա-
1717 *նիւք հրամայէ Գրիգոր վարդապետի առաջնորդի վանաց*
Սրբոյ Կարապետի յանձն առնուլ զպատրիարգութիւն
Երուսաղէմի յօգուտ ազգին: Կոչեալ ի շահ Թահմազայ ի
1722 *Նախիջեւան եւ հարկեալ զինչս՝ դարձաւ անդրէն անվնաս.*
այլ յաղագս պէսպէս վրդովմանց աշխարհին ո՛չ համար-
ձակէր միշտ մնալ յէջմիածին, ուստի ելեալ շրջէր աստ
եւ անդ. դէպ եղեւ նմա գնալ ի գիւղն Օշական եւ մնաց
անդ զաւուրս ինչ. եւ ի միում գիշերի պատճառաւ խա-
ւարման լուսնոյ ել ընդ այլոց եւ ինքն ի տանիս տեսանել
զայն եւ գնալով հասեալ ի սպառուած տանեացն՝ անկաւ
1725 *ի վայր գլխիվայր եւ վտանգեալ մեծապէս՝ վախճանեցաւ*
զկնի չորից ժամուց ի 10-րդ աւուր հոկտեմբերի, կացեալ ի
հայրապետութեան ամս Ժ [10] եւ ամիսս 5, որոյ զմարմին
բարձեալ անտի եւ տարեալ թաղեցին ի յաջակողմն գաւթի
տաճարին Սրբուհւոյն Հռիփսիմեայ:

300. Կարապետ Գ Ուլնեցի, այն է Զէյթունցի, յառաջ-
նորդութենէ վիճակին Գաղատիոյ ընտրեցաւ ի Կոստան-
1726 *դինուպոլսեցւոց եւ կոչեալ անդր օծաւ մեծ հանդիսիւ կա-*
թուղիկոս, ի 27 փետրվարի, ի պատրիարգական եկեղեց-
ւոջ Սուրբ Աստուածածնի. ուր զկնի օծութեանն յետ երից
աւուրց ձեռնադրեաց զպատրիարգ քաղաքին զՅովհաննէս
Կոլոտ կոչեցեալն յեպիսկոպոս. ի պատճառս պատերազմաց
Պարսից եւ Օսմանցւոց յաշխարհին Արարատայ մնաց այլ
եւս անդ ի Կոստանդինուպոլիս. բայց տեսեալ թէ երկարի
ժամանակն՝ ելեալ անտի եկն յԵւդոկիա եւ անտի յԱթոռն
1728 *Էջմիածնի. կացեալ ընդ ամենայն յայնմ պաշտաման ամս Գ*
1729 *[3] եւ ամիսս եօթն՝ վախճանեցաւ յերկրորդ աւուր հոկտեմ-*

բերի եւ թաղեցաւ մարմին նորա ի տապանի ի գաւթի տաճարին Սրբուհւոյն Հռիփսիմեայ ի հարաւակողման նորա:

301. Աբրահամ Բ ի Վանայ, ի Խօշաբ գեղջէ, յառաջնորդութենէ վանաց Սրբոյ Կարապետին որ ի Տարոն, ընտրեցաւ յԱթոռ հայրապետութեանն. կացեալ ի հայրապետական Աթոռ զամս Դ [4] եւ ամիսս իբր ինն, վախճանեցաւ ի 11 նոյեմբերի, զորոյ զմարմին ամփոփեցին ի գաւթի եկեղեցւոջ Սրբուհւոյն Գայիանեայ ի հարաւակողման նորա:

302. Աբրահամ Գ Կրետացի, ի քաղաքէն Գանտիոյ, արձակեալ յառաջնորդութենէ վիճակին Թէքիրտաղու, եկն եմուտ յԱթոռ Էջմիածնի, յԳ-րդ աւուր օգոստոսի եւ տեսեալ զԱբրահամ կաթուղիկոս սիրեցաւ ի նմանէ եւ ի միաբանից աթոռոյն. զկնի վախճանի նորա ընտրեցաւ ի միաբանից եւ օծաւ կաթուղիկոս ի նոյն ամի, ի 24 նոյեմբերի: Սա ի ժամանակս կաթուղիկոսութեան ի գալ Թահմազ խանին եւ ի տիրել նորա Երեւան քաղաքի, սիրելի եղեւ յաչս նորա. հրաւիրեցաւ ի նմանէ ի Տփխիս եւ օգնական եղեւ անդ հայրենի ազգին. հրաւիրեցաւ եւ ի Մուղանայ դաշտ ի բանակ նորա յամսեանն դեկտեմբերի եւ ի յունվարի երեք եմուտ ի բանակն. մնացեալ անդ ի բանակին, ետես զհանդէս թագաւորելոյն Նատրի ի 10-րդին մարտի, յորում միջոցի ընկալաւ զհրովարտակս ապահովութեան Աթոռոյն եւ հայրապետութեանն եւ ազատեաց զբազում հայազգի գերիս. եւ ճանապարհորդեալ անդրէն ընդ աշխարհ Սիւնեաց եւ ընդ Նախիջեւան՝ այց առնելով ժողովրդոց եւ մենաստանաց եկն եմուտ յԱթոռ Էջմիածնի ի 12 ամսեան յունիսի. դարձեալ հրաւիրեցաւ եւ ընդ երեւելի անձանց Հայոց եւ Տաճկաց երեւանցւոց, գնաց ի Դավրէժ յամսեանն սեպտեմբերի եւ բազում պատուով ընկալեալ եւ վերադարձեալ եհաս յԱթոռ իւր կաթուղիկոսական յամսեանն դեկտեմբերի ի Իէ [27]. կացեալ ի հայրապետութեանն ամս Բ [2] եւ ամիսս Ե [5], վախճանեցաւ ի 18 ապրիլի, որոյ զմարմին ամփոփեցին ի գաւթի տաճարին Շողակաթ անուանելոյ ի ձախակողման նորա:

303. Ղազար ի Ջահուկ գաւառէ, յառաջնորդութենէ քաղաքին Զմիւռնոյ ընտրեցաւ եւ եկեալ յէջմիածին օծաւ կաթուղիկոս. զկնի որոյ գնացեալ ի Պարսս ընկալաւ ի շահ Թահմազայ զհաստատութիւն կաթուղիկոսութեան իւրոյ

եւ վերադարձաւ. վասն յանցման իւրոյ առ հրաման շահ
1745 *Թահմազայ գանիւք եւ տուգանօք ընկեցաւ յԱթոռոյն եւ*
եղաւ փոխանորդ նմին յԱթոռն ըստ հրամանին Յովհան-
նէս վարդապետ առաջնորդն Գողթան: Զկնի ամսոց վեցից
Շահրուղ թոռն շահ Թահմազայ եկեալ յԵրեւան եւ յԱթոռն
Էջմիածնի, աղերսեն առ նա նոյն յիշեալ Յովհաննէս վար-
դապետ եւ միաբանք Աթոռոյն, որոյ միջնորդութեամբ առ
հաւն նորա՝ անդրէն հաստատի Ղազար յԱթոռն եւ զՅով-
1746 *հաննէսն առաքէ ի նախկին վիճակ իւր ի Գողթն. տուգա-*
նեցաւ ի շահ Թահմազայ: Այլ անկարացեալ ի վճարել զբո-
վանդակն՝ զմասն ինչ հատուցանէ դրամ առ հարկահանն
եւ վասն մնացելոյն պատրաստէ յեկեղեցական զարդուց
վեց բեռն եւ յանձնէ ի ձեռս հարկահանին եւ ինքն ի գիշե-
րի միով սպասաւորաւ խոյս ետ ի Կարին. հարկահանն յետ
նեղելոյ զոմանս ի միաբանից սակս պահանջելոյ զմնացեալ
գումարն՝ առնու զբեռինսն եւ գնայ առ շահն, որում գրեն
եւ միաբանք աղերս խնայել վանացն եւ միաբանից. տեսեալ
շահին զեկեղեցական անօթսն եւ ընկալեալ զաղերս միաբա-
նիցն բարկացաւ ի վերայ հարկահանին եւ ետ բրել զաչսն՝
ասելով. «Ես զդրամս Ղազարու պահանջեմ եւ ո՛չ զանօթս
վանացն»: Եւ ապա նոյնութեամբ զայն ամենայն դարձոյց
յԱթոռն եւ հրամայեաց միաբանից եւս թողուլ զՂազար
եւ նստուցանել զայլ ոք արժանաւոր. յայսմիկ միջոցի ան-
կաւ եւ գժտութիւն ի մէջ Ղազարու եւ միաբանիցն. ուստի
գրեցին յԱթոռոյ աստի ի Կոստանդինուպոլիս եւ միաբա-
նեալ ընդ նոսա ընկեցին զՂազար առաքելով զնա ի կղզին
1748 *Սեւանայ եւ եդին փոխանակ նորա զՊետրոս վարդապետ*
Քիւթիւր կոչեցեալ առաջնորդն Կարնոյ. զկնի տասն ամսոց
տէր Յովսէփ քահանայ եղբայր Ղազարու գնաց ի Դաւրէժ
առ Իբրահիմ շահն եւ գիր եւ մարդ հանեալ ի նմանէ՝ եկն
վերադարձոյց զՂազար յԱթոռն եւ զՊետրոս Քիւթիւր կո-
չեցեալն անարգանօք առաքեցին ի Ջահուկ եւ եդին յար-
գելանս[1]*. եւ կացեալ Ղազար ընդ ամենայն եթէ յԱթոռն եւ*
1751 *եթէ յարգելանս ամս ԺԳ [13] վախճանեցաւ. եւ զմարմինն*
ամփոփեցին ի գաւթին եկեղեցւոյ Սրբուհւոյն Գայեանեայ
ի յաջակողմանն:

[1] Գրէ Յովսէփ քահանայն Ջուղայեցի, թէ հանեալ զՊետրոս Քիւթիւր կոչեցեալն առաքացին ի վանս ուրեք. ուր ելուզակք մտեալ առ ի կողոպտել զայն վանս, խոցեալ եղեւ ի նոցանէ եւ ի նոյն վշտացն վախճանեցաւ:

1749 *304. Մինաս Ակնեցի յառաջնորդութենէ վանաց Սրբոյ Կարապետին Տարօնոյ կարգի պատրիարգ ի Կոստանդի-նուպոլիս. զկնի վախճանին Ղազարու համաձայնութեամբ միաբանից էջմիածնի եւ կոստանդինուպոլսեցւոց ընտրեալ*
1751 *եկն յէջմիածին եւ օծաւ յԱթոռ հայրապետութեանն. եւ կա-*
1753 *ցեալ յայնմ ամ մի եւ ամիսս ութն՝ վախճանեցաւ ի 12-րդ աւուր մայիսի. զորոյ զմարմին ամփոփեն ի գաւթի տաճա-րին Սրբուհւոյն Գայիանեայ ի ձախակողման նորա:*

305. Աղէքսանդր Բ Կոստանդինուպոլսեցի, ընտրեալ ի նոցունց կոստանդինուպոլսեցւոց եւ ընկալեալ ի միաբա-
1754 *նից էջմիածնի եկն յԱթոռ հայրապետութեան եւ օծեալ նստաւ կաթուղիկոս զկնի տասն ամսոց վախճանին Մինա-*
1755 *սայ ի 6-րդ աւուր մարտի, կացեալ ի հայրապետութեան ամ մի եւ ամիսս ինն*[1]*՝ վախճանեցաւ յամսեանն նոյեմբերի ի շաբաթ աւուր տօնի հրեշտակապետաց եւ ամփոփեցաւ մարմինն ընդ մեծ զանգակատամբն ի հարաւակողման մե-ծի դրան տաճարին էջմիածնի, յորոյ վերայ եւ արկաւ վէմ մարմարոնեայ, որ ունի մակագրութիւն ըստ այսմ.*

«Քրիստոս որդի Հօր Միածին,
Դատող բնութեանս մարդկային,
Յորժամ փառօք գայցես կրկին,
Յիշեա՛ ողորմութեամբ քոյին
Զհայրապետն մեր զհոգելին,
Զտէր Աղէքսանդր Բիւզանդացին,
Արժանացո՛ սրբոց գնդին,
Յարքայութիւնդ մո՛յծ երկնային,
Որ արդ հանգեաւ ըստ քում բանին,
Աստէն եդաւ մարմին նորին,
Հազար եւ երկերիւր յամին,
Զորրորդ եւս ընդ սմա բարդին [1755],
1755 *Նոյեմբերի մետասանին»:*

[1] Սահակ Ե, ի նահանգէն Խորձենոյ (Կեղի) ընտրեցաւ ի միաբանից էջմիածնի եւ ի կոստանդինուպոլսեցւոց անդ ի Կոստանդինուպոլիս յամսեանն փետրվարի. մնացեալ անդ ի ժամանակս ինչ, ապա հարկեալ ի բազում անձանց ելանէ ի Կոստանդինուպոլսոյ եւ գայ դադարի ի Կարին, ի Կար-
1759 միր վանսն. եւ տեսեալ միաբանից Աթոռոյն եւ ազգին, թէ ո՛չ գայ նա յԱթոռն յօծումն հայրապետութեան, ընկեցին զնա յիշխանութենէն եւ կացուցին զՅակոբ վարդապետ Շամախեցի. մնացեալ անդ ի վանս Լուսաւորչի Կարմիր կոչեցեալ զկնի ընտրութեանն ամս իբր հինգ վախճանեցաւ տկարութեամբ իջուածոյ եւ թաղեցաւ անդէն ի նոյն վանսն:

306. Յակոբ Ե Շամախեցի ի միաբանութենէ Աթոռոյ Էջմիածնի, ուր վարէր զտեղապահութիւն Աթոռոյն, ընտրեցաւ ի Կոստանդինուպօլիս յամսեանն օգոստոսի հաւանութեամբ յերկուց կողմանց եւ օծաւ յԷջմիածին ի 24 նոյեմբերի: Կացեալ ի հայրապետութեան ամս Գ [3] եւ ամիսս եօթն, վախճանեցաւ ի 21-րդ աւուր մարտի յիններորդ ժամու գիշերին ուրբաթու մեծի Զատկին եւ ի յաջորդ աւուրն թաղեցին զնորուն մարմին ի գաւթի եկեղեցւոյ Սրբուհւոյն Գայիանեայ ի յաջակողմանն:

307. Սիմէոն Երեւանցի, ի միաբանութենէ Աթոռոյ Էջմիածնի ժողովով նոյն միաբանից ընտրի եւ օծանի կաթուղիկոս ի 20-րդ աւուր ապրիլի. ձեռնադրեալ ետ կառուցանել զբազում օգտակար շինուածս, մանաւանդ զտպարան եւ զգործարան թղթաշինութեան, յորս ի կենդանութեան իւրում ետ ի լոյս ընծայել զնորակազմ թուղթ եւ տպագրել այնու զմատեանս: Կացեալ արդիւնաւոր վաստակօք ի հայրապետութեանն ամս ԺԷ [17] եւ ամիսս իբր երկու, վախճանեցաւ ի 26 յուլիսի, ի չորրորդ ժամու աւուրն, որոյ եւ զմարմին ամփոփեցին ի գաւթի եկեղեցւոյ Սրբուհւոյն Գայիանեայ ի հարաւակողման:

308. Ղուկաս Կարնեցի ի միաբանութենէ Աթոռոյ Էջմիածնի զկնի վախճանին Սիմէոնի՝ ընտրեալ ի միաբանից Աթոռոյն եւ ի պատուաւոր անձանց Հայոց եղելոց յԵրեւան, օծանի կաթուղիկոս յերկրորդ աւուր օգոստոսի. լուեալ զայսմանէ Զաքարիա պատրիարգի Կոստանդինուպօլսոյ եւ ոմանց կամակցաց նորա, վրդովին եւ գժտին ընդ այն. ուստի Ղուկաս կաթուղիկոս այր խոհական էջ յԱթոռոյն եւ աւելի քան զամ մի ո՛չ նստաւ յԱթոռն հայրապետական. այլ ի կարգս միաբանից յառաջին տեղւոջ կալով ի մէջ եկեղեցւոյն աղօթէր զմիջոց ժամերգութեանն: Այսու շինեալ զմիտս կոստանդինուպօլսեցւոց՝ ընկալնու զհրովարտակ կաթուղիկոսութեան իւրոյ յարքունի դրանէ Օսմանեանց: Կացեալ ի հայրապետութեան զամս ԺԹ [19] եւ ամիսս Ե [5] վախճանեցաւ ի 28 դեկտեմբերի յութներորդ ժամու գիշերին, զորոյ զմարմին յառաջակայ աւուր տօնի Որդւոցն որոտման հանգուցանեն ի գաւթի եկեղեցւոյ Սրբուհւոյն Գայիանեայ կուսի ի հարաւակողմանն:

309. Դաւիթ յէնէգէթ աւանէ Սօմխէթ գաւառին Վրաց. զկնի վախճանին Ղուկաս կաթուղիկոսի առաքի ի միաբա-
1800 *նից աստի վասն ընտրութեանն Դանիէլի ի Կոստանդինու-պոլիս. ուրանօր ի ժողովոյն, որ ի 28 ապրիլի վասն ընտրու-թեան Դանիէլի ի կաթուղիկոսութիւն, ընտրեցաւ ի պատ-րիարգութիւն Կոստանդինուպոլսի. այլ եղեալ չփոթ տա-ռաձայնութեան անկանին ինքն յընտրութենէ պատրիար-գութեան եւ Դանիէլ յընտրութենէ կաթուղիկոսութեան եւ ի յաջողիլ ընտրութեանն Յովսէփայ*[1]*, ելանէ ի Կոստանդի-նուպոլսոյ յ2 օգոստոսի եւ դառնայ անդրէն յէջմիածին: Զկնի վախճանին Յովսէփայ ի ճանապարհորդութեանն, բռնացեալ ի վերայ միաբանից ձեռնտուութեամբ խանին Երեւանայ օծաւ կաթուղիկոս ի 28 ապրիլի: Ետ բերել կա-*
1801 *պանօք զ Դանիէլ յերեքխորան վանաց Բագրեւանդայ (Իւչ-քիլիսէ) յէջմիածին ի 28 նոյեմբերի եւ եդ իբր ի բանտի*
1802 *ի փոքր կոչեցեալ Ղազարապատի: Ի գալ շահ արքային Պարսից յերեւան ընդդէմ զինուորութեանցն Ռուսաց եւ վերադերձին նոյն զօրացն Պարսից յամսեանն սեպտեմբե-րի, առաքէ ընդ նոսա զտառապեալն Դանիէլ յաքսորս ի*
1804 *կողմանս անդ Մարաղայի: Անկանի յիշխանութենէն ի 14*
1807 *մայիսի յերեւան եւ բերեալ յէջմիածին՝ դնի ի միում սե-նեկի ի կարգս միաբանիցն. կացեալ զկնի անկմանն ի նոյն սենեկի յԱթոռ էջմիածնի բազում ջերմեռանդութեամբ ամս Ժ [10] եւ ամիսս Ե [5], վախճանեցաւ ի 31 հոկտեմբերի եւ*
1817 *եդաւ մարմինն ի տապանի ի գաւիթ տաճարի Սրբուհւոյն Գայիանեայ ի հիւսիսակողման:*

310. Դանիէլ ի Սուրմարի աւանէ, ի գաւառէ Արշարու-նեաց, եպիսկոպոս Աթոռոյ էջմիածնի առաքեալ ի Ղուկաս կաթուղիկոսէ յելլադա գործով նուիրակութեան. ուրանօր աւարտեալ զպաշտօնն՝ դառնայ ի Կոստանդինուպոլիս եւ
1799 *անդ ընտրեալ յազգէն կացուցաւ յաթոռ պատրիարգու-*

[1] Յովսէփ Սանահնեցի ի տոհմէ Արղութեանց, որդի Շիօշբէկի, որ գտանէր ի կողմանս Ռուսաստանեայց, վիճակաւոր արքեպիսկոպոս ժողովրդեանն Հայոց, ձեռնտուութեամբ Թամարայ դեսպանին Ռուսաց որ ի Կոստանդի-
1800 նուպոլիս եւ կուսակցին իւրոյ Յովհաննու պատրիարգի՝ ընտրի ի կաթու-ղիկոսութիւն ի 31 մայիսի եւ ընկալնու ի դրանէ Օսմանեանց զհրովար-տակ կաթուղիկոսութեան յանուն իւր եւ այնպէս ճանապարհորդեալ գայ մտանէ ի Տփխիս, ուր հիւանդացեալ վախճանի յ9 մարտի եւ ըստ յանձնա-
1801 րարութեան նորին հանգուցելոյն բերեն զմարմինն յէջմիածին եւ թաղէն ի գաւթի անդ եկեղեցւոյ Սրբուհւոյն Գայիանեայ ի հարաւակողման:

1800 թեան ի 17 մարտի. ընտրեցաւ ի միաբանից Աթոռոյն եւ ի
կոստանդինուպօլսեցւոց ի կաթուղիկոսութիւն ի 28 ապրի-
լի: Եղեալ չփոթ տարաձայնութեան աքսորեցաւ ի Տենետոս
կղզի (Պօղճայ ատայ) ի 13 մայիսի. զերծանի զաքսորանացն
անարատ միջնորդութեամբ Զէլէպի էֆէնտիին՝ Քեօսէ Քէ-
հեայ կոչեցելոյն ի 17 սեպտեմբերի. եւ այնպէս ճանապար-
1801 հորդեալ եկն եհաս յԵւդոկիա ի 22 յունվարի: Զկնի վախ-
ճանին Յովսէփայ վերստին ժողովեալ միաբանից ի 16 մար-
տի ընտրեն զ Դանիէլ ի կաթուղիկոսութիւն եւ գրութեամբ
հրաւիրեն փութալ գալ յէջմիածին. եւ այնինչ ժամանէ
Դանիէլ ի Բագրեւանդ գաւառ եւ լսէ թէ Դաւիթ օծաւ կա-
թուղիկոս բռնութեամբ այլազգեաց եւ չգտեալ հնար ազա-
տութեան ի Դաւթէ, օծանի եւ ինքն յԵրեքխորան վանսն
(Իւչքիլիսէ կոչեցեալ) ի 25 մայիսի բռնադատեալ յիւրոց
կուսակցաց: Յետ յոլով վշտաց, աքսորանաց եւ տառա-
1807 պանաց՝ յաջորդէ զԱթոռն հայրապետական ի 14 մայիսի
ի գալ զօրացն Ռուսաց յերկիր Երեւանայ, հարկադրու-
թեամբ Պարսից գնացեալ հիւանդ անձամբ եմուտ ի բերդն
1808 Երեւանայ, ուր հասեալ յօր մահուն, վախճանեցաւ յ9 հոկ-
տեմբերի. եւ մարմին նորա զկնի պատերազմին բերեալ յԵ-
րեւանայ յէջմիածին, ամփոփեցաւ առ հիման սեանն մեծի
զանգակատան սրբոյ տաճարիս ի հարաւ կուսէ:

311. Եփրեմ. հայրենեօք ի Մանիսա գիւղաքաղաքէ վիճա-
կին Զմիւռնոյ, ծնեալ յԵրեւան, որդի տէր Յովհաննու քա-
հանայի, ի միաբանութենէ Աթոռոյ Էջմիածնի, որ պարա-
պէր ի գործ նուիրակութեան ի կողմանս Ռուսաստանեայց,
1800 ընտրեցաւ կանխաւ ընդ Դանիէլ պատրիարգի ի կաթու-
ղիկոսութիւն յամսեանն յունվարի ի միաբանից Աթոռոյն.
զկնի վախճանին Դանիէլի վերստին ընտրեցաւ ի կաթուղի-
կոսութիւն եւ եկեալ յարքեպիսկոպոսութենէ Աստրախա-
1810 նայ յԱթոռ Էջմիածնի յամսեանն հոկտեմբերի, օծաւ յԱթոռ
հայրապետութեան յիններորդ աւուր նոյեմբերի: Յաղագս
զանազան պատճառաց դատարկութեան յայնժամ Աթոռոյն
ի նախնի հարստութեանցն, խորամանկ հնարիւք ագահու-
թեանց պարսկային իշխանութեանն, եւս եւ առատաձեռ-
նութեանն իւրոյ, էարկ զԱթոռն ի ներքոյ ծանր պարտուց.
եւ տեսեալ թէ օր քան զօր բազմանայ գումար պարտուց
պարականն տոկոսեօք եւ անկար է այնուհետեւ վճարել

1821 զայն, խոյս ետ ի կողմանս Արցախայ ի սահման տէրու-
թեանն Ռուսաց յսկզբանն նոյեմբերի. եւ գնացեալ յամրոց
Շուշւոյ կոչեաց առ ինքն զմեծանուն Ներսէս արքեպիսկո-
պոսն Հայոց Վրաստանի եւ խորհրդակցեալ ընդ նմա յոչ
սակաւ աւուրս՝ արձակեաց ապա յիւրմէ զյիշեալ արքեպիս-
1822 կոպոսն. եւ ինքն գնացեալ ի վանս Սուրբ Նշանի ի Հաղ-
բատ յամսեանն հոկտեմբերի՝ զտեղի էառ անդէն մինչեւ
ցամն 1826, ցամիսն յուլիս. յորում ժամանակի ի պատճառս
երկիւղի ասպատակութեանցն Պարսից ազդարարութեամբ
արքեպիսկոպոսին Ներսէսի ելեալ անտի ի վանացն գնաց ի
1826 Տփխիս եւ դադարեցաւ անդ:

Այն ինչ խաչակիր զօրք կայսրութեանն Ռուսաց քաջա-
րութեամբ նուաճեցին զպարսիկս եւ զԱթոռն հայրապե-
տական հանդերձ սահմանօք Երեւանայ արկին ընդ քաղցր
հովանաւորութեամբ կայսեր, եկ ապա ի Տփխիսայ եւ եկն
1828 եմուտ յԱթոռ հայրապետութեան իւրոյ ի կաթուղիկէ եկե-
ղեցիս Հայաստանեայց, յետ իբր եօթնամեայ տարագրու-
թեանն իւրոյ, ի 15-րդ աւուր յուլիսի:

Կացեալ յիւրումն հայրապետական Աթոռի այլ եւս ժա-
մանակս եւ օր քան զօր տկարացեալ զգայութեամբք՝ առա-
1830 ւել տեսանելեօք ի պատճառս բազմամեայ հասակին, տայ
զգրաւոր հրաժեշտ ի կաթուղիկոսական կողմանէն յ8-էն
հոկտեմբերի յատեան սիւնհոդոսի Աթոռոյն. եւ տեսեալ
եւս զօծումն յաջորդի իւրոյ յԱթոռ հայրապետութեան
եւ զԱթոռն իսկ թեթեւացեալ ի ծանր պարտուց անտի, եւ
այնպէս կացեալ եւս զկնի հրաժեշտ տալոյն ի բարձրագոյն
աստիճանէն զամս 4, ամիսս ինն եւ զաւուրս ութն ամբողջ
1835 դատողութեամբ՝ կնքեաց զկեանս իւր ի 16-երորդ աւուր
յուլիսի ի տասներորդ ժամուն զկնի կէսօրէի. եւ ապա ի 18-
րդ աւուր նոյն ամսոյն հանդիսաւոր ուղարկաւորութեամբ
ամփոփեցին զմարմինն ի միջին տեղւոջ գերեզմաննոցի
միաբանութեան՝ ըստ յանձնարարութեան իւրոյ, յորոյ վե-
րայ եւ կառուցաւ փոքրիկ շինուած վիմակերտ եւ արկաւ ի
վերայ շիրմին մարմարոնեայ վէմ պատրաստեալ յառաջա-
գոյն, որ ունի գրուած յինքեան ըստ այսմ.

«Եփրեմ առաքինութեամբ սրբասնեալ հայրապետ,
ծնեալ յամի Տեառն 1750. կաթուղիկոսացաւ ի 1810 եւ ըն-
կալեալ ի թագաւոր կայսերէ ամենայն Ռուսաց զասպետու-

թիւն սրբոյն Աննայի Ա, Աղէքսանդրի Նեւացւոյ եւ Անդրէի առաքելոյ, վերափոխեցաւ յաստեացս երջանիկ մահուամբ յանանց կեանսն յաւիտենից. եւ եղաւ յայս շիրիմ ի 1835, ի 16 յուլիսի»:

312. Յովհաննէս Ը-րդ Կարբեցի ի միաբանութենէ Աթոռոյ Էջմիածնի, որ ընտրեցաւ ընդ տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսին ի կոչումն կաթուղիկոսական ի Սիւնհոդոսէն Աթոռոյ Էջմիածնի եւ յարքեպիսկոպոսաց, յեպիսկոպոսաց, վարդապետաց, ի վանահարց եւ յաւագ քահանայից՝ ժողովելոցն յայնժամ բարձրագոյն կամօք ի մերձակայ վիճակաց յայս Աթոռ Արարատեան՝ ըստ ներելոյ միջոցացն
1831 *ի 16-րդ աւուր մարտի, որոշեցաւ ապա ի Սիւնհոդոսէն ի յիշեալ հոգեւորականացն եւ ի պատուաւոր անձանց ազգին յաթոռ պատրիարգութեան. եւ ըստ հրովարտակի բարձրագոյն բարեհաճութեան նորին կայսերական մեծութեան, որ ի 1-էն յուլիսի 1831 ամի՝ ելեալ ի վիճակէ Հայոց Վրացտանի եւ ճանապարհորդեալ ընդ երկուց արքեպիսկոպոսացն առաքեալ յԱթոռոյ Էջմիածնի հրաւիրակացն Գրիգորի եւ Բարսղի եւ ընդ այլ բազմութեան ընդառաջ ելելոցն գայ, մտանէ աստ ի Սուրբ Էջմիածին: Եւ ապա յ8-րդ աւուր ամսեանն նոյեմբերի այնր ամի մեծահանդէս տօնակատարութեամբ բազմութեան ժողովելոցն՝ եկեղեցականաց եւ ժողովրդականաց ազգի Հայոց եւ մեծարու աստիճանաւորաց բարեխնամ տէրութեանն հանդերձ բաւականաչափ զինուորօք ըստ յանձնարարութեանն եղելոյ ի փառաւորութիւն հանդիսին, ընկալաւ զօծումն կաթուղիկոսական ի տաճարի աստ կաթուղիկէ եկեղեցւոյ ի բեմի աւագ սեղանոյ սուրբ Աստուածածնի ձեռնադրութեամբ երկոտասան եպիսկոպոսաց:*

Եւ այն ինչ հեղաւ իւղն սրբութեան ի գագաթն նորին վեհափառութեան եւ արկաւ ոսկեթել քօղն ի վերայ, այն ինչ օծեալն հայրապետ կայր ի ծունկս զառաջեաւ սրբոյ սեղանոյն՝ երես առ ժողովուրդն եւ 12 եպիսկոպոսունք՝ 6 աստի եւ 6 անտի բազմեալ յԱթոռ զգեստուք իւրեանց, ասացաւ անդէն ճառ ըստ պատշաճի խորհրդոյ հանդիսի աւուրն ի Յովհաննէս վարդապետէ Շահխաթունեանց հեղինակէ գրոյս:

Եւ այնուհետեւ անցեալ յԱթոռ Հայրապետութեան Հայաստանեայց՝ ի յաջորդութիւն մեծին Գրիգորի Պարթեւի, զհետ եղեւ օգտի Հայրենի եկեղեցւոյ եւ ժողովրդեան, որոյ
1835 *վասն յամսեանն հոկտեմբերի եկ յԱթոռոյ աստի եւ գնաց ի Տփխիս քաղաք. եւ անդ յինն ամսեայ միջոցի՝ բաց յինչ ինչ շնորհաց օրհնաբանեալ տէրութեանն, ընկալաւ ի նորին կայսերական մեծութենէ զկանոնն կարգադրութեան յաղագս կառավարութեան հոգեւորական գործոց լուսաւորչական եկեղեցւոյ Հայաստանեայց զտուեալն ի 11-էն մարտի 1836 ամի եւ զլիուլի սեպհականութիւն հինգ գիւղօրէիցն (134, 135, 136, 137 եւ 138) հանդերձ հարկօք բնակչաց յանուն Աթոռոյ Էջմիածնի. եւ այնպէս վերադարձեալ անտի եմուտ յԱթոռ այսր Հայրապետական ի 1 հոկտեմբերի:*

313. Ի յաջորդ 1837 ամի, ի 22 փետրվար ամսոյն եբաց զատեանն լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի Սրբոյ Էջմիածնի՝ զսկզբնապատճառն բարօրութեան Հայրենի որդւոց Հայաստանի եւ այսր հին աւուրց նախագահ Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, քանզի Հայաստան աշխարհ, որոյ գլխաւոր եւ առաջին մասն ի վաղ ժամանակաց անտի ճանաչի այս նահանգ Արարատ եւ այս նախագահ Աթոռ կաթուղիկոսական, անկանելով ընդ բազմակերպ անախորժ փոփոխութեանց ի միջոցի իբրեւ չորեքտասան դարու, փոքր միւս եւս խոնարհէր յանկումն անկանգնելի. թէ ո՛չ ըստ նախախնամող տեսչութեանն վերին ի 1827 ամի պահպանեալ էր զգոյութիւն իւր ի վերայ հաստատուն սկզբանց ընդ հովանեաւ բարերար տէրութեան մեծին Ռուսիոյ:

Կարգաւորութիւն մեծահանդէս բացման լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի Սրբոյ Էջմիածնի: Ի նշանակեալ 22-րդ աւուրն փետրվարի, յ9-րդ ժամուն առաւօտուն կաթուղիկոսն Ամենայն Հայոց Յովհաննէս յուղարկաւորեալ յանդամոց Սիւնհոդոսի, ի պրօկուրօրէն ընդ ատենադպրին, ի գլխաւոր կառավարչէ այսր նահանգի Հայոց՝ ի զեներալ մայիօր կնեազ Բարսղէ Յովսէփեան Բէհպուտեանց, ընդ ամենայն զինուորական եւ քաղաքական աստիճանաւորաց՝ ընդ պատուաւոր բնակչաց հասարակութեան Հայոց եւ Տաճկաց եւ ընդ անդամոց դատարանին (չարիաթ) Երեւանու Տաճկաց, ըստ նախընթաց հրաւիրանացն եկելոց յէջմիածին ի միասին ընդ նահանգապետին եբաց զհանդիսա-

ւոր ճանապարհ ի խորհրդարանէ սիւնհոդոսին ի տաճարն Էջմիածնի. ուրանօր առաջի աւագ սեղանոյն առ բեմբիւ ի վերայ յատուկ գրասեղանի եդեալ կային երկու հատորք կարգադրութեանն յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուս եւ ի Հայ լեզու՝ շուրջ զորովք յերկուց կողմանց գրասեղանին կանգնեալ կային երկու եպիսկոպոսունք եւ երկու վարդապետք յանդամոց Սիւնհոդոսին ընդ երկուց օգնականացն ատենադպրի ցաւարտ սրբազնագործութեանն:

Զկնի վճարման սրբոյ պատարագին ի նախամեծար անդամոյն Սիւնհոդոսի յարքեպիսկոպոսէն Բարսղէ ինքնին պատրիարգն Ամենայն Հայոց Յովհաննէս հանդերձ ամենայն միաբանութեամբ կատարեալ զգոհացողական մաղթանս վասն առողջութեան եւ ընդարձակութեան կենաց թագաւոր կայսեր Նիկողայոսի Ա եւ օգոստափառ տան նորա: Յաւարտ մաղթանացն՝ պատրիարգն ընդ ամենայն անդամոցն, ատենադպրի եւ աստիճանաւորացն Սիւնհոդոսի մերձեալ ի սեղանն իջման Որդւոյն Միածնի՝ ըստ սահմանեալ կարգին ընկալան զերդումն յաղագս հաւատարիմ ծառայութեան առ նորին կայսերական մեծութիւնն եւ վասն իսկութեամբ կատարելոյ զպաշտամունս իւրեանց:

Ի վախճան երդմանն, անդամք Սիւնհոդոսի ընկալան զբարձրագոյն կարգադրութիւնն, ունելով զերկոսին զայն առանձին առանձին ի վերայ թաւշեայ բարձից՝ յատկապէս վասն այնց պատրաստելոց եւ առաջընթաց լինելով պատրիարգին, որ գնայր ընդ մեծաշուք հովանոցաւ, վերադարձան առաջին կարգաւն ի խորհրդարանն Սիւնհոդոսի, ուրանօր պատրիարգն ընկալաւ զտեղի ատենադպրի. իսկ պրօկուրօրն Սիւնհոդոսի նատվօրնիյ սովետնիկ Ղօրղանեանն ցուցեալ իւրաքանչիւր ումեք յանդամոցն ըստ աւագութեանն իւրեանց զտեղի՝ ասաց զպատշաճաւոր այսմ հանդիսի զբան (որ զկնի այսմ): Յետ այսորիկ պատրիարգն ընթերցեալ զվայելուչ մաղթանս եւ զօրհնութիւն, ստորագրեաց ի միասին ընդ անդամոցն զառաջին օրագրութիւն յաղագս բացման Սիւնհոդոսին:

Ի վախճան ամենայնի պատրիարգն ելեալ ի տեղւոջէ իւրմէ եւ բացեալ զգլուխն՝ վերառաքեաց զջերմաջերմ աղերս յաղագս բարօրութեան ամենօգոստափառ կայսեր:

Յերկրորդում ժամու զկնի կէսօրէին անդամք Սիւնհոդոսի, նահանգապետն ի միասին ընդ զինուորական եւ քաղաքական աստիճանաւորաց, ընդ պատուաւոր բնակչաց հասարակութեանն Հայոց եւ Տաճկաց պատուասիրացն ի դահլիճն կաթուղիկոսական պալա-

տան համադամ եւ մեծածախ հացկերութիւ, յորում պահպանեցան ճշդիւ ամենայն վաղեմի սովորութիւնք եւ ծէսք Աթոռոյ Էջմիածնի:

Ի ժամ ճաշուն կաթուղիկոսն առաջարկեաց զբաժակ վասն առողջութեան եւ երկարութեան կենաց թագաւոր կայսեր եւ օգոստափառ տան նորա, ընկալան եւ ամենեքեան զայն մեծաւ ջերմեռանդութեամբ կից ընդ վայելուչ տաղերգութեանց. զկնի այնորիկ նահանգապետն առաջարկեաց զբաժակ վասն առողջութեան կաթուղիկոսի եւ բարեյաջողութեան նորաբաց Սիւնհոդոսին: Անդամք Սիւնհոդոսի առաջարկեցին վասն առողջութեան մեծանուն կառավարչին Կավկասեան կողմանցս, զեներալ ատիւտանտի բարոն Գրիգոր Վլադիմիրիչի Ռոզենի, որպէս նախապատճառի այսր ազգաշէն կարգադրութեան. իսկ պրոկուրօրն՝ վասն առողջութեան նահանգապետին:

314. Ասացուած ի հանդիսի բացման լուսաւորչեան Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի ի պրոկուրօրէ սորին ի նատվօրնիյ սովետնիկ Ղօրղանեանէ.

«Ներկայ հանդիսակատարութիւն բարձրագոյն կամօք կայսերն բացումն լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի, է նախասկիզբն մերձաւորութեան Հայոց ընդ ոգւոյն եւ բարեկարգութեան լուսաւորեալն Եւրոպիոյ. սոյն այս մերձաւորութիւն, որում վաղ ուրեմն փափագէաք, որում ի վաղուց անտի ակն ունէաք, որքան խրախ առնէ զմեզ առաւել երեւելի ակնկալութեամբք եւ տենչալի յուսովք առ յապայն՝ այնքան առաւել զուարճացուցանէ եւ մխիթարէ եւ զայնոսիկ ի Հայկազանց, որոց վիճակեցաւ սփիւռ տարածանիլ ընդ երեսս աշխարհաց՝ օտարացելոց ի մերոց եւ որպիսութեամբ մտաց եւ որպիսութեամբ կառավարութեան. նոքա երանելով զփառաւորութիւն մեր, զհնազանդութիւն, զապահովութիւն մեր եւ զպաշտպանութիւն եւ զաղբիւր այսոցիկ ամենայն բարեաց՝ զհոգածութիւն զմէնջ իմաստուն կառավարութեանն, որ հանգոյն արեգական անընդհատ ջեռուցանէ զմեզ. երանեն եւ զժամանակն զայն, յորում նախախնամութիւնն վերին հաճեսցի եւ զնոսա, որպէս երբեմն զիսրայէլացիս ի լծոյն փարաւոնի վերածել ընդ անապատս, լերինս եւ ընդ ծովս՝ յայս նոր երկիրս խոստման՝ ի Ռուսիա:

Ապաքէն եթէ նոքա թերեւս անծանօթք քաղցրութեան անդորր եւ ամենայնիւ անխռով կենաց այնքան զուարճանան, հրճուին ընդ բարօրութիւն մեր, որչափ ուրեմն առաւել մեզ արժան է այսօր խրախանալ եւ տօնախմբել. մե՛զ ասեմ՝ մերձաւորագոյն վկայիցս բարձրագոյն կամօք շնորհեալ արտօնութեանցն անցելոց եւ ականատեսիցս սոյն ներկայից, որովք այսպէս ասել. որդեգրեցաք առ

յաւիտեան բազմախնամ մօր մերում Ռուսիոյ: Ի սոյն յայս միտս Ռուսիայն հանդիսանայ մեզ արդէն իբրեւ ապահով ծննդարան, որ ընկալաւ ի ծոց իւր ո՛չ միայն զմեզ միայնակ, այլեւ զհայրենիս մեր զաշխարհն Արարատ՝ զընդունարանն այսր մենաստանի իմման որդւոյն Միածնի: Սոյնօրինակ հաստատուն եւ ըստ ամենայնի անքակտելի ազգակցութիւն մեր ընդ Ռուսիոյ՝ է հաւատարիմ երաշխաւորութիւն առ ներկայ եւ ապագայ բարեբախտ վիճակ մեր, որպէս ի մասին եկեղեցական, նոյնպէս եւ քաղաքական կենաց մերոց: Բայց աստանօր առաջի կայ մեզ՝ բարեպաշտօն հանդիսակիցք, յայս հասարակական խրախութիւն մեր համեմատելով զդառնաղէտ անցեալ ժամանակս՝ ընդ քաղցր ներկայիս, զանցեալ նեղութիւնս եւ զհալածանս՝ ընդ այժմեան շնորհեալն մեզ ազատութեան եւ անդորրութեան, զառաջին ատելութիւն կրօնի՝ ընդ այժմեան համարձակ կատարման աստուածային պաշտամանց. համեմատելով՝ երկրորդեմ զայս ամենայն. առաջի՛ կայ մեզ պարտաւորութիւն սրբազան՝ պարտաւորութիւն կարգեալ մեզ յԱստուծոյ եւ ի մարդկանէ. զայս վիճակ կացութեան մերոյ նախամեծար եւս դասել քան զվիճակն բազմամեայ կենաց մերոց յարքայական կառավարութեան եւ յանիշխանութեան միջի, այլ սակայն անմոռացն ի ժամանակագրութեան աշխարհի՝ այս հանդէս տօնախմբութեան որքան զուարճացուցանէ զմեզ՝ զհաւատարիմ որդիս եկեղեցւոյ եւ հայրենեաց, եւս քան զեւս ուրախ առնէ զքեզ, ով վեհասքանչանելի հովուապետ, զջերմեռանդ կատարողդ բարձրագոյն կամաց կայսեր, քանզի եթէ կենագործեցաք մեք այսօր ի նոր կեանս, կենագործեցաք քոյին միջնորդութեամբ. եթէ ջեռնումք ջերմութեամբ մերս արեգական, այս ջերմութիւն նախ ի քեզ բորբոքեցաւ եւ ապա ելեալ ի քէն՝ տարածանի եւ ի մեզ. եթէ փառաւորեմք զայժմեան վիճակ մեր բարեբախտութեան եւ մխիթարիմք ընդ ապագայ լաւագոյն կեանս, այս ամենայն պատրաստի մեզ քոյով արթուն հոգացողութեամբ զմէնջ:

Ի վախճանի՝ եթէ խնդաս դու ընդ այս յոգնախումբ բազմութիւն սրբազնագործ հոգեւորականաց եւ ականաւոր աշխարհականաց՝ ծարաւելոց ի կատար ածելոյն ձեր զսրբազնագոյն կամս թագաւորին բարերարի. արդ եւ սոյն այս կամք քեւ վաստակեցաւ մեզ եւ արժանաժառանգ գործակցաւ քով յայս ազգաշէն գործ՝ մեծահռչակ կառավարչաւն կովկասեան կողմանց: Գծագրեսցի՛ ապաքէն յիշատակ այսորիկ գործառնութեան անեղծանելի տառիւք ի վերայ վաղեմի քարանց պարսպիս՝ պաշտպանողի զբնակարանս այս սուրբ. եւ զշնորհակալութիւն յաղագս առատաբուխ շնորհաց զԱստուած

սիրեցելոյն ի մէնջ թագաւորի, որ յաւէտ զգացեալ լինի սրտիւ՝ քան պատմի լեզուաւ: Զայս շնորհակալութիւն դուք երկոքեանքդ ուրեմն յայտնեսջիք եւ հեղջիք առ աթոռով օգոստափառ խաղաղարարի մերոյ ինքնակալին ամենայն Ռուսաց:

Թո՛յլ տուք ինձ աստանօր, իբրեւ երջանկացելոյ բարեհաճութեամբ օգոստափառ թագաւորին իմոյ, կրել զկոչումն պրոկուրորի բացելոյն այսօր լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին էջմիածնի, առաջի առնել ձեզ՝ ողորմած տեարք, հոգեառանդն խրախանօք եւ զայս, թէ իրաւունք եւ արտօնութիւնք շնորհեալք ի կայսերէն բարձրագոյն կամօք հաստատեալ կարգադրութեանն ի մետասանեորդն մարտի 1836 ամի, յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ, են յայտնի նշանակք առանձին բարձրագոյն բարեհաճութեան կայսեր առ գլուխս եկեղեցւոյ մերոյ, առ այս նորոգ բացեալ Սիւնհոդոսս եւ առ հաւատարիմ հպատակս իւր՝ առ ազգս Հայոց:

Ահաւասիկ՝ ողորմած տեարք, ճանապարհք բացեալք մեզ ի հասանել ապագայ փառացն. բայց որքան առաւել տեսանեմք մեք զհանապազօրեայ աճումն հոգացողութեան զմէնջ տէրութեանն, այնու առաւել պարտաւորիմք եւ մեք ջերմեռանդ ընթացիւք յասպարիսի ծառայութեան ջանալ զգործողութիւնս մեր յարմարել բարի խորհրդոց նորին: Եւ որչափ խստիւ առաջիկայ կոչմամբս պարտաւորիմ ես ճշդիւ զհետ գնալ ինձ աւանդեալ կանոնացն, այնչափ եւ ոչի՛նչ իւիք նուազ քան զայն հրաւիրիք եւ դուք սրբազան կարգաւորքդ անընդհատ գործակից լինել ինձ ի գործառնութիւնս եւ ի խորհուրդս՝ յընդհանուրս եւ ի մասնաւորս: Քանզի ի՛ւ առաւել յառաջանայ ամենայն բազմաճիւղն յանձնարարութիւն, եթէ ո՛չ համախոհ գործակցութեամբ անձանց, որոց յանձնեալ է այն: Եւ յիրաւի, եթէ համակամ գործառնութիւնք հանապազ ուղեկից լիցին մեզ, եթէ համակամ խորհրդակցութիւնք միշտ առաջնորդեսցեն մեզ, յայնժամ կատարեսցի, լցցի, պսակեսցի եւ նոյն ինքն յառաջադիմութիւնն ի գործս, որ մի միայն կարէ լինել ի կողմանէ մերմէ հատուցումն ակնկալութեանց տէրութեանն»:

Եւ ապա ըստ այնց կանոնադրութեանց տալով յառաջատութիւն գործառնութեանց ատենի Սիւնհոդոսին եւ խրախոյս քաջալերութեանն անդամոց նորին, տարածեաց զլուսաւոր շառաւիղս յեկեղեցիս Հայոց Ռուսաստանեայց բանալով յիւրաքանչիւր յատկացեալ արքեպիսկոպոսական վիճակս զհոգեւոր ատեանս եւ նոքօք զհոգեւոր կառավարութիւնս այլովք հանդերձ: Եւ այնպէս օր ըստ օրէ

եւ ամ ըստ ամէ սերմանելով յանձնիւր հոգիս եւ ի միտս հայաբարմ որդւոց հայրենի եկեղեցւոյ զսերմանս հիմնաւոր կանոնադրութեանցն այնց՝ ըստ ուղղաշաւիղ հետոց նախնի սրբոց հարցն Հայաստանի, եբաց զդուռն անսպառ գանձուց բարեբախտութեան, կամ լաւ եւս ասել՝ զաղբիւրս զովարար ջուրց յորդութեան, որովք գամ քան զգամ յառաջասցի ազգն բարեխոհ կառավարութեամբ արժանաւոր գլխոյ եւ անդուլ ջանադրութեամբ թէմակալաց եւ դիւրասցի, զովասցի յանցեալ տապախառն տոչորմանց:

315. Ապաքէն յայսպիսի բարեդէպ սկզբանց միջի, ընկալաւ այս վեհափառ հայրապետ եւ զներկայութիւն նորին կայսերական մեծութեան աստ ի գերագահ Աթոռ կաթուղիկոսական՝ ըստ յետագայ ստորագրութեանս:

Ի տասներորդում ժամու հինգերորդ աւուր հոկտեմբերի անցեալ 1837 ամի, օր՝ կարի նշանաւոր վասն բախտաւոր այսր Հայաստանի, ի մերձենալ նորին կայսերական մեծութեան ի վանս Էջմիածնի, կաթուղիկոսն Ամենայն Հայոց ձիաւորեալ ել ընդառաջ բարձրագոյն այցելուին մի վէրստ (մղոն) հեռաւորութեամբ ի պարսպէ աթոռոյս յարեւմուտս ընդ գետն Քասաղ՝ յուղարկաւորեալ ի նախապատիւ եպիսկոպոսաց եւ ի պատուաւոր վարդապետաց՝ նոյնպէս ձիաւորելոց, յերկուց շաթրաց այսինքն սենեկապետաց եւ ի պատուաւոր պահնորդաց կազմելոց ի յիսուն զինուորեալ հայազգի անձանց պատկանելոց Էջմիածնի եւ յերկուց հոգեւորականաց, յորոց մին կրէր զգաւազան կաթուղիկոսական եւ միւսն զխաչվառ ըստ նախնի սովորութեան Աթոռոյս. իսկ ախոռապետք վարէին առաջի բոլոր հանդիսին զերկուս նժոյգ երիվարս զարդարունս վայելչապէս: Ի մերձենալ կաթուղիկոսի առ կայսրն՝ նորին վեհաստիճանութիւն եւ հոգեւորականքն որ ընդ նմա, իջեալ յերիվարաց մատուցին նորին կայսերական մեծութեան զողջոյն ջերմեռանդութեան. եւ ըստ հրաւիրման նորա վերստին ձիաւորեալ՝ շարունակեցին զընթացս իւրեանց առաջի կարգաւն յուղարկաւորելով զկայսրն ի վանս էջմիածնի, որ գոգցե՛ս բազկատարած սպասէր ի պատրաստի ընդունել ի գիրկս զփրկիչն իւր բարձրագոյն: Աստ սկսան հարկանել զզանգական էջմիածնի եւ շրջակայ վանօրէիցն. ուստի թողեալ զկայսրն նորին վեհափառութիւն աճապարեաց ի տաճարն առ ի զգեստաւորիլ:

Բոլոր միաբանութիւնն ուխտի տաճարին առաջնորդեալք ի բարձր սրբազան արքեպիսկոպոսէն Բարսղէ աւագ լուսարարէ Աթոռոյս եւ ասպետէ սրբոյն Աննայի Ա աստիճանի՝ զգեստաւորեալք ամենայն հոգեւոր հանդիսաւորութեամբ սպասէին բարձրագոյն

այցելուին արտաքոյ պարսպի վանացս հեռաւորութեամբ քառորդ մասին միոյ վերստի. եւ ի մերձենալ կայսերն առ նոսա՝ ժամասացք իսկոյն սկսան զհոգեւոր երգս վայելուչս այսմ մեծաշուք եւ քաջաբախտ հանդիսիս: Իսկ երկոքին արքեպիսկոպոսունք յեպիսկոպոսական զգեստս մատուցին կայսերն, մին զհրաշալի պատկեր սրբոյ Աստուածածնին, իսկ միւսն զաղուհաց. եւ այսու կարգաւ ընթացան ի տաճարն Էջմիածնի: Զգիտեմ արժան իցէ արդեօք պատկերացուցանել աստանօր զպայծառութիւն դիմաց ամենեցուն՝ հոգեւորականաց եւ ժողովրդականաց ընդ տեսանելն նոցա ի միջի իւրեանց զանձն, որում պարտական են նոքա եւ բարօրութեամբ կենաց եւ ազատութեամբն հաւատոց, այլ այս ամենայն թողեալ լինի իմաստասիրել ամենայն զգալի հոգւոց ի հայազգեաց մերոց:

Ի մերձենալ կայսերն յեկեղեցին ընթանալով ի վերայ ծաղկանց սփռելոց ընդ ճանապարհն ողջոյն՝ սկսեալ ի տեղւոջէ դասաւորութեանն հոգեւորականաց մինչեւ ցդուռն Տրդատայ եւ անտի մինչեւ ցտաճարն ընդ զանազան ոսկեթել, կերպասեայ սփռոցս (փիանդազ)՝ կաթուղիկոսն զգեստաւորեալ հանդերձ երկու նոյնպէս զգեստաւորեալ եպիսկոպոսօք մատոյց նորին մեծութեան ի համբոյր զսուրբ խաչն եւ ցօղեաց զջուրն օրհնութեան. իսկ ի մտանելն յեկեղեցին ի հրապարակի անդ հանդիսին առ սեղանաւ իջման տեղւոյն ասաց նորին վեհափառութիւնն զբան ինչ առ չնորհաբեր գալուստն բարեմաղթութեամբ հանդերձ, ըստ այսմ.

316. «Վերջապէս կատարեցաւ ակնկալութիւն քեւ փրկեալ Հայաստանի. զցանկութիւն սրտի մերոյ ետ մեզ Տէր[1]: Ահա՛ կաս արդէն առ սեղանաւ տաճարիս, յորում ի դարուց անտի հանդերձեալ է քեզ օրհնութիւնն երկնից: Ահա՛ տեսանեմք զամենասիրելի զթագաւորն մեր եկեալ կատարելագործել զհաստատութիւնն, զոր պարգեւեալ է նա աստուածային տաճարիս: Ապաքէն զի՞նչ արժան է մեզ առնել՝ որդի՛ք Արամեան նորս Ռուսաստանի եւ զի՞նչ բարբառել. մատուցանել նախքան զամենայն զփառս եւ զգոհութիւն բարձրելոյն՝ այնքան բարերարողին մեզ, եւ ապա առաջի սրբազնացեալ երեսաց արքային մերոյ աղաղակել եւ ասել. Եղիցի Տէր Աստուած մեր օրհնեալ, որ հաճեցաւ ընդ քեզ տալ զքեզ յաթոռ թագաւորութեան իւրոյ, զի յաղագս սիրելոյ Տեառն Աստուծոյ քո զնորս Իսրայէլ՝ զՀայաստան եւ կացուցանելոյ զնա յաւիտեան, եղ զքեզ ի վերայ մեր թագաւոր եւ կացոյց ի վերայ մեր առնել զիրաւունս եւ զարդարութիւն[2]:

[1] Սաղմ. 20-3:
[2] Բ Մնացորդ. 9-8:

Եւ արդարեւ Աստուած, նոյն ինքն Տէր Աստուած ընտրեաց եւ կացոյց զքեզ թագաւոր ի վերայ մեր. եւ այսօր, ո՜վ օրհնեալ եղիցի օրս այս ցյաւիտեան. այսօր յայսմ տաճարիս սրբութեան, յայսմ տեղւոջ փառաբանութեան իւրոյ առ սեղանաւ իջման Որդւոյն Միածնի մեծաշուք իմն հանդիսիւ հաստատեաց եւ սուրբ արար զհրճուանս մեր՝ հաւատարիմ որդւոց քոյ: Այլ ամենաբարձրեալն Աստուած յայսմ ներգործութեան նախախնամութեան իւրոյ եցոյց քեզ մեծի արքայիդ զառանձին օրհնութիւնս իւր. զի նա ունելով զամենայն թագաւորութիւնս երկրի ի ձեռին իւրում, պարգեւեաց քեզ յարքայութեանց անտի զթագաւորութիւն զմեծին Ռուսիոյ, որոյ սահմանք տարածութեան ծաւալին յարեւելից յարեւմուտս եւ իշխելով ամենայն ազգաց իբրեւ թագաւոր թագաւորաց, գլուխ կացոյց զքեզ եւ ի վերայ ազինս Արամեան՝ նշանաւորին համայն աշխարհի հաւատարմութեամբ եւ բոլորապտուղ անձնաւորութեամբ առ աթոռ քո սուրբ. ահա՛ նշան աստուածային շնորհացն որ առ քեզ. բայց սոյն սա է միանգամայն եւ առանձին իմն նշան սիրոյ նորա առ աշխարհս Հայաստանի եւ հայրենի խնամոց նորա զբարօրութենէ այնորիկ եւ զորդւոց նորին՝ սփիւռ տարածելոց ընդ ամենայն երեսս երկրի: Եթէ քեւ ազատեալն Հայաստան զհաւատն, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս Փրկիչն աշխարհի, զոր դաւանէ սուրբ եկեղեցի մեր եւ խոստովանի, վարկանի գլխաւոր սկիզբն եւ աղբիւր ամենայն անդորրութեան, խաղաղութեան, զօրութեան եւ փառաց իւրոց, որքա՞ն ուրեմն մեծագոյն է վասն նորա ողորմութիւնս այս Աստուծոյ, զի Տէր շնորհեաց նմա յօգուստափառ անձին կայսերական մեծութեան ձերոյ զհաւատարիմ պաշտպան այսմ մեծագոյն գանձու նորա՝ գանձու հաւատոյ. արքայ պաշտպան սրբութեան հաւատոյ, արքայ ուղղափառ եւ բարեպաշտօն. այս անուն իբրեւ իւղ անոյշ հեղեալ[1]*, վասն ուղղափառն Հայաստանի, եւ ի նոսա միայն ամենայն յոյս նորա եւ ապաւէն. քանզի գիտէ նա՝ թէ բարեպաշտօն թագաւորք միացեալ ընդ իւրեանց ժողովրդոց միով հաւատով եւ միով յուսով ի Քրիստոս, կառավարեն զնոսա իբրեւ հարք հարազատք ոգեւորեալք միայն աստուածային հաւատովքս. թէ նոքա լուսաւորեալք այսու ճշմարտութեամբ՝ թէ արդարութիւնն գործէ աստուածային, արդարապէս եւ անաչառ դատին զփարթամն եւ զաղքատն, զհզօրն եւ զտկարն. ուստի եւ թագաւորեն նոքա վասն ճշմարիտ երջանկութեան հաւատարիմ հպատակացն իւրեանց եւ փառացն Աստուծոյ:*

---

[1] Երգ Երգոց, 1-2:

Հայք ի պատճառս զանազան բերմանց ժամանակին տարամերժ օտարացեալք ընդ զանազան ծագս աշխարհի ի հայրենի աշխարհէ իւրեանց քեւ ազատելոյն, այժմ ակն յանդիման տեսանելով թէ դու արքայ բարեպաշտօն, արդարացուցանես զայսոսիկ մեծագոյն ակնկալութիւնս նոցա. եւ խորագոյնս զգալով թէ՝ արդարեւ սիրեաց Աստուած զՀայաստան եւ կացոյց զնա յաւիտեան թագաւոր կացուցանելով զքեզ ի վերայ նորա, ո՛չ անագանեսցին գալ մտանել ի ծոց նորա, որ այժմ համբուրէ զբարօրութիւն ընդ հովանեաւ բարերար տէրութեան քոյ:

Զայս ուրախութիւն խնդութեան մերոյ ի քեզ կրկնապատկեաց ի մեզ Աստուած եւ այնու, զի արկ ի սիրտ քոյ արքայական զմիտս արժանաւորելոյ զեկեղեցին մեր սուրբ բարձրագոյն այցելութեան քում, քանզի արդարեւ հաւաստի եմք մեք, զի պատիւս այս եւ փառք զորս զգեցուցեր նմա, եղիցի վասն նորա նոր պարտաւորութիւն եւ նոր խրախոյս աղաչելոյ զթագաւորն թագաւորաց եւ զտէրն տերանց քաղցր եւ անդորր առնել զթանկագին կեանս քոյ ծանրաբեռնեալս ի մեծամեծ եւ յանընդհատ վաստակս աշխատանաց հեզութեամբ եւ խոնարհութեամբ ի կատարեալ առողջութեան եւ յաջողութեան միջի:

Յայսմ միաբանական տօնախմբութեան մերում վասն մարդասիրաբար այցելութեան քոյ հին աւուրց տաճարիս այսմիկ սրբոյ, եկեղեցիս մեր սուրբ մատչի առաջի քոյ սխրալիր յարգութեամբ. ի տաճարիս յայսմիկ ընդառաջ ելանէ քեզ՝ իբրեւ անդրանկի քրիստոսեան որդւոց, ընդառաջ ելանէ գրկախառն եւ ինքնին իսկ անկանի առ քեզ անձնընծայութեամբ եւ աղերսանօք, որպէս զի ընկալցիս զնա յարքայական գիրկ քոյ, քանզի ի քեզ միայնում խոստովանի նա զնեցուկ եւ հովանի եւ զպաշտպան ինքեան եւ ուղղափառ հաւատոյն. վասն քոյ կոչէ նա զօրհնութիւնս եւ զշնորհս Հոգւոյն Սրբոյ եւ միանգամայն ի քէն ակն ունի անկասկած պտղոց նոցին առ բարօրութիւն իւր եւ ամենայն Հայոց՝ քոց հաւատարիմ հպատակաց:

Ապաքէն սերկեանս այս հանդէս տօնախմբութեան է տօնախմբութիւն բոլոր հայրենեաց մերոց, ընդ նմին եւ ողջոյն եկեղեցւոյն Քրիստոսի. տօնախմբութիւն յիրաւի մեծապայծառ եւ արդարեւ զուարճալի. մատուսցո՛ւք ուրեմն բարերարողին մեզ Տեառն Աստուծոյ զողջակէզ փառաբանութեան եւ գոհութեան եւ հանդերձ միաբանութեամբ մերով եւ ուխտիւք եկեղեցւոյ միաբերան աղաղակեսցուք ընդ սաղմոսերգու արքային. «Ուրախ եղիցի թագաւորն

ի Տէր. որդիք Սիովնի ցնծասցեն յանուն Տեառն»[1]*. «Եւ ամենեքեան փառաւորեսցեն զԱստուած. օրհնեալն, եկեալ արքայդ յանուն Տեառն»*[2]*: Իսկ ես իբրեւ հովուապետ քոյով բարձրագոյն բարեհաճութեամբ եղեալ ի վերայ ազգին Հայոց՝ քեզ հաւատարմի, մեծաւ ջերմեռանդութեամբ առաջի երեսաց թագաւորին իմոյ՝ առաջի առնեմ յանձնեալ իմումս հովուութեան զքրիստոսեան հօտն բանաւոր քումդ. ո՛վ արքայ մեծ, հայրական գթոյ եւ հովանաւորութեան եւ միանգամայն ի մուտս արեւու կենաց իմոց բազկատարած անկեալ աղաղակեցից. «Օրհնեսցէ (Տէր պահեսցէ) Տէր զմուտ եւ զել քոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան»*[3]*:*

Յաւարտիլ որոյ նորին մեծութիւնն բարեհաճեցաւ զննել զամենայն զգեստս, զսուրբ մասունս եւ զայլ ամենայն եկեղեցական անօթսն, որք ի պատրաստի կային յայնժամ կարգաւ դասաւորեալք ի վերայ գրասեղանաց, զորս ցուցակաւ ի ռուս լեզու մի առ մի ցուցանէր նմա հայազնեայ մեծապատիւ պրօկուրօր սիւնհոդոսին էջմիածնի եւ ասպետ զանազան նշանաց Թովմա Յովսէփեան Ղօրղանեանց՝ բաւարարեալ զամենայն զհետաքրքիր հարցմունս նորին մեծութեան ի մասին եկեղեցւոյ մերոյ շինութեան այնորիկ եւ դաւանութեան մերոյ եւն: Յելանել նորին մեծութեան յեկեղեցւոյն արժանացոյց իւրումն բարձրագոյն այցելութեան զսեղանատունն հասարակաց միաբանութեան, զնորոգ տպարան Աթոռոյս եւ զուսումնարանն նոյնպէս նորոգեալ եւ կարգաւորեալն ի ձեւ եւրոպացի. ապա եւ զՍիւնհոդոսն էջմիածնի, նոյնպէս կարի վայելուչ զարդարեալ ըստ արժանաւորութեան այսր սրբազան ատենի, որով յիրաւի կայսրն կարի բաւական գտաւ յոյժ եւ բարեհաճեցաւ յայտնել զիւրն ամենողորմ հաւանութիւն առ կարգադրութիւնս նախագահ Աթոռոյն մերոյ. յատեան սիւնհոդոսին նորին կայսերական մեծութիւն զգոհունակութիւն իւր յայտնեալ կաթուղիկոսին Ամենայն Հայոց Յովհաննու վասն բարեկարգութեանն, յորում եգիտ զնախագահ աթոռն էջմիածնի անընդմիջական տեսչութեան նորա յանձն եղեալն, բարեհաճեցաւ ցուցանել ամենեցուն, որք ի հանդիսի անդ, զիւրն կայսերական ցանկութիւն, զի ամենեքեան ի մերազանց հետեւեսցին շաւղաց վեհափառ գլխոյն եկեղեցւոյ մերոյ. եւ ապա դարձեալ առ անդամսն սիւնհոդոսին, յայտնեաց նոցա նոյնպէս զկամս իւր բարձրագոյն, զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ աշխատեսցի ըստ մասանցն նոցա յանձն եղելոց ի գործառնութեան

[1] Սաղմ. 149. 2:
[2] Սաղմ. 117. 26:
[3] Սաղմ. 120. 8.

սիւնհոդոսին՝ շարունակել զպաշտօն իւրեանց առ բարին հասարակաց. յարեալ յայն եւ զառաջին բանս իւր թէ՝ եթէ նոքա ջանասցեն միշտ հետեւիլ գլխոյն իւրեանց, անշուշտ յառաջասցին եւ մեծամեծ յառաջադիմութիւնք առ բարին հասարակաց եւ յօգուտն եկեղեցւոյ: Զկնի որոյ առանձնացաւ ի պատրաստեալն վասն նորա սենեակն՝ կոչեցեալ Ծաղկեալ Այվան ի կաթուղիկոսարանի անդ, որ նոյնպէս արժանացաւ բարձրագոյն հաւանութեան նորին կայսերական մեծութեան. ուրանօր կաթուղիկոսն Ամենայն Հայոց մատոյց թագաւոր կայսերն զհարկաւորագոյն վասն ազգի եւ եկեղեցւոյ զհայցուածս՝ բերանով հարազատին աթոռոյս յիշեալ Թովմասու Յովսէփեան Ղօրղանեանց ի ներկայութեան կուսակալին կողմանց ղեներալ օտինֆանտերի ղեներալ ատիւտանտի բարօն Ռոզենի Ա, զորս ընկալաւ կայսրն բարեմիտ յօժարութեամբ՝ խոստացեալ ըստ կարելութեան տալ ամենայնի զկատարումն: Եւ յառաջի առնել կաթուղիկոսին Ամենայն Հայոց խնամոց նորին կայսերական մեծութեան զբոլոր ազգ մեր Հայոց՝ թագաւոր կայսրն բարեհաճեցաւ խոստանալ զխոստումն մեծ ըստ շաւղաց բարեյիշատակ նախորդացն իւրոց ունել զազգ մեր համայն ի շնորհս ողորմութեան իւրոյ անզանազան յազգէ իւրմէ Ռուսաց: Բանք արդարեւ ցանկալի եւ խոստումն գերերջանիկ վասն ազգիս Արամեան: Եւ ի վախճան ճառիս եթող յէջմիածին զկայսերական շնորհս իւր՝ պարգեւատրելով զկաթուղիկոսն Ամենայն Հայոց ասպետական նշանաւ սրբոյն Վլատիմիրի Ա աստիճանի եւ շնորհելով զ1000 ոսկիս Հոլանտիոյ իբրեւ խաչահամբոյր սրբոց մասանց աստանօր հանգուցելոց: Բախտաւորեալ միանգամայն զկաթուղիկոսն Ամենայն Հայոց՝ ընդունելով ի նմանէ ամենահպատակ ջերմեռանդութեան նորա առ Աթոռն նորա մեծ եւ յապացոյց երախտագէտ զգացողութեանց իւրոց առ անհուն բարերարութիւնս կայսերն առ Աթոռս Էջմիածնի եւ առ բոլոր ազգն մեր զփոքրիկ խաչ, յորում ներփակեալ էր մասն սրբոյ կենարար խաչափայտին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. այսու մաղթանօք. «Նշան յաղթութեան խաչն փրկարար առաջնորդեսցէ քեզ եւ բարձրագոյն տոհմի քում ընդդէմ երեւելի եւ աներեւոյթ թշնամեաց յայսմհետէ մինչեւ ցյաւիտեան»: Յառաջին ժամանակս ի գալստեան յայս նախագահ Աթոռ Էջմիածին արքայազնից Պարսից, որք թէպէտ եւ զարդարեալք իբրեւ հարսունք պճնեալք ի զգեստ մարգարտայեռ եւ ոսկեճաճանչ, այլ միաբանութիւնն բոլոր չգիտէր զո՞ր խորշս գտանել ի խցի իւրում առ ի թագչել յահէ երեսաց նոցա, բայց կայսրն բարեպաշտ թէպէտ եւ ի սոսկական հանդերձս

զինուորի, այլ ամենեքեան առհասարակ ոգեւորեալք գողտրական իմն զգացուԹեամբ առ նա, ոչ միայն իբրեւ առ աշխարհակալ ոմն տիրող կիսագնտին բոլոր տիեզերաց, այլ իբրեւ առ հայր գԹառատ, իբրեւ առ սեպհական ազատիչ իւրեանց, ջանային յառաջել քան զմիմեանս ի համբոյր սրբազան աջոյ օծելոյն Աստուծոյ, որ նոյնպէս քաղցր գԹուԹեամբ ընկալեալ զնոսա յիւրմէ կողմանէ, մեկնեցաւ ի նախագահ աԹոռոյս, Թողեալ ի սիրտս ամենեցուն զանեղծ տպաւորուԹիւն մեծանձնուԹեան իւրոյ, քրիստոնէական բարեպաշտուԹեան եւ գերբնական իմն առաքինազարդ խոնարհուԹեան:

Յիշեսցէ, ընդ երկար յիշեսցէ Հայաստան զայս օր ցանկալի. ընդ երկար տօնեսցեն եւ որդիք նորա հարազատք զայս օր սխրալի, յորում արժանացան տեսանել զփրկիչն իւրեանց մեծ, որում եւ պարտական են ազատուԹեամբ հաւատոյ իւրեանց եւ բարօրուԹեամբ կենաց, զորս միշտ համբուրեն ընդ հովանեաւ խնամոց կայսերական մեծուԹեան նորին:

Այսօրինակ յաջողուածք եղեն ի հայրապետուԹեան սորին վեհափառ օծուԹեանն յօգտաբեր նպատակս հայրենի ազգի եւ եկեղեցւոյ. եւ ինքն եւս զգալով, Թէ այն ամենայն են ի խնամոց աներեւոյԹ շնորհաց վերին այցելուԹեանն, որ զամենայն կառավարէ ըստ նախախնամուԹեանն եւ ըստ առանձին շնորհաբաշխուԹեանն, յորդոր եղեւ եւ խոհական տնօրէնուԹեամբ կառավարուԹեանն ազատեաց զԱԹոռն ի պարտուց եւ յիւրմէ սեպհականուԹենէ եւս եդ զգումար ինչ յաճումն ի Ռուսաց կայսերական ատեանն լոմայաշահուԹեան յանուն ԱԹոռոյն. եւ այնուհետեւ ապա տեսեալ Թէ օրըստօրէ նուազի ի բնական կարողուԹեանց անձինն, պատրաստեաց զանձն առ հրաւէր վերին կոչմանն եւ արար արժանապէս կտակագրուԹիւն բովանդակ կայից իւրոց, յորում յատկացոյց ըստ ազատակամ յօժարուԹեան իւրոյ ում զինչ եւ կամեցաւ. յատկացոյց առանձին եւ գումար ինչ ի լրուԹիւն շինուԹեան Թերի մնացեալ եկեղեցւոյ արքեպիսկոպոսարանին յԵրեւան. եւ այնպէս ազատ կացուցեալ զանձն յամենայն երկրաւոր զբաղմանց եւ տկարացեալ՝ անկաւ ի մահիճս յամի 1841, յամսեանն նոյեմբերի եւ եկաց այնպէս տկարուԹեամբ մինչեւ ցմարտ. եւ ապա խոստովանուԹեամբ եւ հաղորդուԹեամբ մարմնոյ եւ արեան Տեառն վճարեաց զերկրաւոր կեանս ի 26 այնր մարտի յեօԹներորդ ժամու զկնի կէսօրէի եւ յետ երից աւուրց ի կիւրակէի ամփոփեցաւ փառաւոր ուղարկաւորուԹեամբ ի դիրս հանգստեան ի հիւսիսակողման անդ մեծի զանգակատանն սրբոյ ԱԹոռոյս:

ՀԱՏՈՒԱԾ Է

Միւս չորք եկեղեցիք Վաղարշապատու, այն է սրբուհեացն Գայիանեայ, Հռիփսիմէի, Շողակաթի եւ սուրբ Գրիգորի[1]

Նահատակութիւն սրբոց Հռիփսիմեանց կուսանացն[2]

317. Յետ մեկնելոյ սրբոց Հռիփսիմեանց կուսանացն ի քաղաքէն Հռովմայ եւ հասանելոյն հարուստ ճանապարհորդութեամբ յԱրարատ նահանգ Հայոց ի հնձանս այգեստանեայց Վաղարշապատ քաղաքի՝ ուր ունէին օթեւանս կալեալ տարաշխարհիկ անծանօթ յումեքէ, եհաս առ Տրդատ արքայ հրովարտակ Դիոկղետիանոս կայսեր վասն չքնաղագեղ կուսին Հռիփսիմեայ, յորում զկնի պէսպէս բարուրանս յօդելոյն ի վերայ հաւատոց քրիստոնէութեան եւ յանցանս դնելոյն ի վերայ քրիստոնէից՝ ասէ. «Նորին դայեկաւն (Գայիանեաւ) ի կողմանս ձերոյ տէրութեանդ փախուցեալ ուղարկեցին: Արդ՝ փո՛յթ լիցի քեզ եղբա՛յր մեր, զի ուր եւ իցեն զկողմամբքդ զայդոքիւք՝ զհետս նոցա գտանել մարթասցիս. եւ որ ընդ նմայն իցեն դայեկաւն հանդերձ վրիժուց մահու արժանի արասցես. եւ զհրապուրեալն զչքնաղագեղն՝ ինձ ի սոյն արձակեսցես: Ապա թէ հաճոյ թուեսցի քեզ տեսիլ գեղոյ նորա՝ առ քեզ պահեսցես, զի ո՛չ երբէք գտաւ նման նմա՝ ի մէջ Յունաց աշխարհիս. ո՛ղջ լեր» (յԱգաթանգեղոս):

Ի խնդիր լինէր յայնժամ Տրդատէս եւ տեղեկացեալ եթէ ահա՛ մերձ ի թագաւորանիստ քաղաք իւր են եւ ստուգեալ եւս վասն չքնաղապանծ կուսին Հռիփսիմեայ՝ հանդէս հարսանեաց հրամայէր յարդարել, գրաւել զնա ի կնութիւն ինքեան. այլ նա ինքն անարատ հարսն փեսային Յիսուսի հաստատուն մնայր յերկնակրօն ողջախոհութեանն սրբութեան. մինչեւ ոչինչ այլ հնարս գտեալ արքա-

---

1 [Շահխաթունյանցն իր ձեռագրի լուսանցքում գրել է՝ «ճաշոցի գրով»]:

2 [Շահխաթունյանցը լուսանցքում գրել է՝ «նօտր գրով», իսկ հաջորդ պարբերության դիմաց՝ «մեծ գլխագիր»]:

յին՝ բռնի ածել յարքունիսն սպառնացաւ. ուրանօր ի միում սենեկի աւելի քան զվեց ժամ մենամարտեալ ընդ սրբուհւոյ կուսին, թերեւս զօրել բռնաբարել զնա կարասցէ, բայց օրիորդն տկար՝ քաջացեալ ի վերին զօրութեանցն՝ զարքայն հսկայ առնէր յուսաբեկ. եւ անդէն զգետնեալ թողոյր այնպէս ի պալատանն վաստակեալ մինչ ի սպառ: Եւ ինքն ելեալ անտի եւ անցեալ ընդ բազմութիւն ամբոխին կուտելոյ, ելանէր ընդ Արեգ դուռն քաղաքին եւ խոտորեալ փոքր ինչ ընդ հիւսիս՝ ուր էր հնձանն տեղի բնակութեան նոցա եւ հասեալ անդր աւետիս մատուցանէր իւրոց տարակուսեալ ընկերացն զմեծամեծացն Աստուծոյ: Եւ անտի եւս յառաջացեալ ուղղակի յարեւելակողմն իբրեւ քարընկէցս երկուս: Ելանէր ի սարաւանդակի ի բարձրաւանդակ աւազին տեղի մի, մօտ ի բուն պողոտային, որ երթայր յԱրտաշատ քաղաք. իբրեւ եհաս յայնմ տեղի, ծունր եդեալ կայր յաղօթս» (յԱգաթանգեղոս, 66 երես):

Հասին անդէն ի վերայ իշխանք արքայի դահճապետօք հանդերձ լցեալ ցասմամբ, որոց խնդրեալ զլեզուն ի հատանել, ինքնին մատուցանէր. եւ ապա ի նմին տեղւոջ հարեալ յերկիր չորս ցիցս քառակուսի եւ պրկեալ յայնս զերանելի կոյսն չքնաղ՝ անշարժ յերկուց ոտիցն եւ յերկուց ձեռացն, լուցանէին ի ներքոյ զբազմաբորբոք ջահս. եւ ողորկ քարինս հոսեալ ի գոգ նորա ի վայր թափէին զաղիսն: Եւ դահճացն յարձակեալ ի վերայ մնացելոցն, որք էին մերձ անդր իբրեւ գառինք անարատք՝ ոմն յաղօթս բազկատարած, ոմն յարտասուս հոգեզուարճ հառաչմամբ կային պատրաստ մտանել ի փարախ երկնաւոր հօտապետին, յառագաստն լուսոյ մշտնջենաւոր պարերգութեանց եւ սուր ի վերայ եդեալ նուիրեցին Տեառն յանգէտս պատարագ ընդունելի, լինել փրկանք աշխարհի իւրեանց, յորոց մին տկար գոլով եւ հիւանդոտ (ըստ աւանդութեանն Մարիանէ անուն) հազիւ քայլափոխս ինչ արարեալ ի հնձանէ անտի ի զննին իւրոց ընկերաց, զնա եւս յերամս նոցին խառնէին նոյնօրինակ մահուամբ:

Այս ամենայն լինէր, բայց տակաւին անծանօթ մնայր ի բանտի սրբուհին Գայիանէ մայրպետ եւ սնուցիչ նոցին՝ երկու ընկերօք հանդերձ, զոր տարեալ էին անդր յարքունիսն յառաջագոյն ի հաճել զմիտս Հռիփսիմեայ առ ի լինել թագուհի Հայոց Մեծաց, բայց նորա զընդդէմն զօրինաւոր բան խրատու աւանդեալ սրբուհի սանին իւրում, եդեալն էր ի բանտի:

Ապա այնինչ տարակուսական ափշութեամբ զգիշերն ի գլուխ հանէր արքայն մեծ Տրդատ եւ լսէր եթէ դեռեւս կենդանի է կորու-

սիչն այնպիսի չքնաղագեղ կուսի, հրաման տայր վասն սրբուհւոյն Գայիանեայ սպանման՝ նախ զլեզուն ընդ ծոծրակն հանել եւ ապա սպանանել. վասն զի իշխեաց, ասէ, վնասակար խրատուն իւրով կորուսանել զայնպիսին, որ զդիցն գեղեցկութիւն ունէր ի մէջ մարդկան:

Արդ՝ ելեալ դահճապետին ետ հանել զնոսա զերեսին շղթայիւք երկաթի ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ ընդ կողմն պողոտային, որ հանէր ի Մեծամօրի կամուրջ՝ ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս՝ ի ճախճախուտ տեղի մի մօտ ի պարկէնփոսն, որ շուրջ գայր զքաղաքաւն. եւ վարսեցին անդէն ընդ երկիր չորս չորս ցիցս միում միում ի նոցանէ: Եւ յետ այնորիկ պատառեցին զհանդերձս նոցա եւ պրկեցին զնոսա ի ցիցսն եւ ծակեցին զմորթս ի պճղունս նոցա եւ եդին փողս եւ փչելով այնպէս կենդանւոյն մորթեցին զերեսին եւս ի ներքուստ ի վեր մինչ ցստինսն. եւ ծակեալ զծոծրակն եւ զլեզուն ընդ այն հանէին Գայիանեայ: Եւ վարեցին զքարինս ընդ գոգս նոցա եւ քանզի դեռ կային կենդանի, բարձին եւ զգլուխս նոցա:

Ապա յետ մնալոյ զիննն տիւ եւ զիննն գիշեր պատուական նշխարաց սրբոց կուսանացն ի բացեայ անարատ ամենեւին եւ անմերձ ի թռչնոց եւ ի գազանաց խնամօք Տեառն, յելանել սրբոյն Գրիգորի ի Վիրապէն եւ ի գալն ի Վաղարշապատ քաղաք, յառաջնում աւուր առաջին հարցումն զնահատակացն առնէր, աներեւոյթ հոգւոյն զօրութեամբն տեղեկացեալ. «Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս՝ թէ ո՞ւր եդիք զմարմինք վկայիցն Աստուծոյ» (յԱգաթան. 76): Զորս ժողովեալ սրբոյն Գրիգորի յիւրաքանչիւր տեղեաց եւ տարեալ ի հնձանն, ուր էին վանք նոցա, ամփոփէր ի պատառատուն հանդերձիկս նոցա. եւ ինքն ի նմին տեղւոջ կալնոյր օթեւանս եւ վարդապետէր բազմութեանն զարարչութենէն Աստուծոյ եւ զմարդանալոյն ծոցածին բանին հօր զաւուրս վաթսուն՝ մինչեւ տեսանէր զտեսիլ զարմանագործութեանցն Աստուծոյ եւ զցոյց մարդասիրական խնամոցն առ մարդիկ, յորում միջոցի զկնի տեսանելոյ զխարիսխն ոսկի ի վերայ նորա սիւնն հրեղէն, ի վերայ նորա թակաղաղն ամպեայ եւ խաչ լուսոյ ի վերայ նորա. տեսանէր զայլ խարիսխս երիս (յԱգաթանգեղոս 272). «Եւ նայեցայ եւ տեսանեմ այլ խարիսխս երիս՝ մի ի տեղւոջ ուր վկայեաց սուրբն Գայիանէ երկու ընկերօքն, եւ մի ի տեղւոջն, ուր վկայեաց Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն եւ մի ի տեղւոջ հնձանին»:

Զկնի այսոցիկ ամենայնի յորդոր մատուցեալ սուրբ Գրիգոր առ նորեկ հաւատընծայ արքայն եւ բազմութիւն մարդկանն ի պատրաստութիւն նիւթոց շինութեանց վկայարանացն սրբուհի օրիորդաց, ի ջերմեռանդ սէր շարժէին ամենեքեան՝ արքայն եւ արքայուհին, իշխանք եւ իշխանուհիք եւ հասարակութիւնն բովանդակ: Եւ փութացեալ ոմն ի քար, ոմն ի փայտ եւ այլք ոմանք յայլ հարկաւոր նիւթս՝ պատրաստէին, բերէին եւ կուտէին ի նշանադրեալ տեղիսն, ուր վկայեցինն եւ շող լուսոյն յերկնից ճառագայթեալ ցուցաւ. իսկ զճարտարապետութեանն պաշտօն ունէր ինքնին սուրբն Գրիգոր. ուստի յԱգաթանգեղոս 279. «Կանգնեալ երիս վկայարանս՝ մի ի հիւսիսոյ յարեւելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանականն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, եւ զմիւսն շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի՝ ուր վկայեաց սուրբն Գայիանէ նորին սնուցիչ երկու ընկերօք, եւ միւսն մօտ ի հնձանն ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա»:

Կազմեցան եւ բեւեռակապ արկեղք ի մայր փայտից ըստ հրամայելոյ սրբոյն վասն իւրաքանչիւր սրբոց վկայիցն, յորս ամփոփեալ սրբոյն Գրիգորի ուրոյն ուրոյն նոցին իսկ պատառատուն հանդերձիւքն՝ կնքէր քրիստոսական կնքովն եւ հանգուցանէր ինքնին միայնակ ի դիրս հանգստեան:

Եկեղեցի եւ փեղի արկեղաց սրբուհւոյն Հռիփսիմեայ եւ ընկերաց նորա

318. Վկայարան կամ տաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ եւ վկայողացն ընդ նմա՝ ի նոյն տեղւոջ արտաքոյ քաղաքին Վաղարշապատու յարեւելից հիւսիսոյ նորա՝ ըստ վկայելոյ Ագաթանգեղոսի ի վեր անդր, հեռի գտանի ի Կաթուղիկէ եկեղեցւոյն աւելի քան զքառորդ ժամ մի. յայնմ իսկ տեղւոջ սուրբն Գրիգոր ըստ խնդրոյ արքային Տրդատայ տայ նմա իսկ արքայի զչափ արկեղացն՝ փոքել, պեղել ինքնին արքայի հանդերձ Աշխէն տիկնաւն եւ Խոսրովիդուխտ քերբն (յԱգաթան. 281). «Եւ նա (սուրբն Գրիգոր) տայր նմա (արքայի) չափ զարկեղաց սրբոցն, զի հատեալ զտեղիսն իւրաքանչիւր բնակութեան՝ յօրինեսցէ ի ներքս մարտիրոսական յարկի հանգստեան Տեառն»:

Այս տեղի, զոր փորեաց արքայն ինքնին, ուրանօր եւ սուրբն Գրիգոր եդ զարկեղսն նշխարաց սրբուհւոյն Հռիփսիմեայ եւ ընկերաց նորուն, անկանի ուղղակի ի ներքոյ բեմին սեղանոյ սրբազան

խորհրդոյն: Առաքել պատմիչ, յերես 178. «Եւ մատուռն գերեզմանին Հռիփսիմէի խոր ի մէջ գետնոյն շինեալ ի ներքոյ աւագ բեմին եւ զբեմն ի վերուստ կողմանէ ի վերայ մատրանն կառուցեալ կազմեալք էին ի տեղւոջ իւրում ի մէջ աւագ խորանին»:

Սոյնօրինակ տեսանի եւ այժմ փոքրիկ մատուռն տեղւոյ արկեղաց սրբոցն կամարակապ օրօրոցաձեւ ի կոփածոյ քարանց, որոյ եւ բարձրութիւնն աւելի քան զչափ հասակի առն, ուղղակի ի ներքոյ բեմին եւ մուտ դրանն ի հիւսիսային աւանդատանէն ի ներքս անդր ի մատուռն ի խոնարհ երեք հարուստ աստիճանօք. այլ իսկ տեղի արկեղացն խորագոյն եւս քան այժմեան յատակ մատրանն գտանի:

319. Զայս տաճար, զոր ետ կանգնել սուրբն Գրիգոր յամի Տեառն 301, կործանեցին զօրք Շապհոյ արքայի Պարսից յամի 380: Այլ վերստին նորոգեաց զայն սուրբն Իսահակ հայրապետ որդի Մեծին Ներսէսի՝ յամի 395, զորմէ գրէ Ստեփաննոս Ասողիկ (հատոր Բ-րդ, գլուխ Ա). «Սա (Իսահակ Պարթեւ) նորոգեաց զտաճար սրբոց կուսանացն զկործանեալն ի Շապհոյ թագաւորէ. եւ անգէտ տեղւոյն ոսկերաց սրբոյն Հռիփսիմեայ, խնդրովք յԱստուծոյ գիտակ եղեւ»:

320. Ապա անցեալ ի վերայ այնր երկրորդ շինութեանն ամք 223, այն է՝ յամի Տեառն 618, Կոմիտաս կաթուղիկոս, որ յառաջագոյն իսկ եռայր հոգւով ունել ժամանակ դիպող վերստին նորոգ հիմնարկութեամբ շքեղազարդել զտաճար սրբուհւոյս, որում եւ փակակալ իսկ էր, ի նստիլ իւր յԱթոռ հայրապետութեանն իսկ եւ իսկ ձեռն ի գործ էարկ եւ քակեալ զայն մթին շինուած հիմամբք հանդերձ, եւ գտեալ եւս զտապան չքնաղ կուսին կնքեալ կրկին կնքով սրբոյն Գրիգորի եւ սրբոյն Իսահակայ նորուն շառաւիղի՝ զոր ո՛չ համարձակեալ բանալ, յաւելու եւ զիւր կնիք եւ դնէ պատուով ի բացեայ. առ որ դիմէին գունդագունդ բազմութիւնք հաւատացելոց եւ գտանէին զառողջութիւն ամենայն ցաւոց: Եւ ինքն երանելի հայրապետն յաւարտ հասուցեալ զշինուած փառացի տաճարին սրբութեան, ամփոփէ ապա անդրէն զայն գանձ տիրապարգեւ ի պատրաստեալն տեղի, զորմէ կանխաւ քան զամենայն պատմաբանս Սեբեոս եպիսկոպոս, որ եւ ժամանակակից իսկ նմին Կոմիտասայ գրեա թէ յայս ձեւ օրինակի.

«Եւ եղեւ յամի ԻԸ, թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու (Պարսից) քակեաց կաթուղիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած եւ մթին էր շինուածն, զոր շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի, որդւոյն սրբոյն Ներսէսի:

Արդ, մինչ քակէին զորմն մատրեանն, յանկարծակի լուսաւոր եւ չքնաղագիւտ արքունական մարգարիտն, այսինքն կուսական մարմնոյ սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի եւ քանզի անդամ անդամ յօշեցին զնա յօշեալ ի միմեանց եւ երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով եւ մատանեաւ երանելոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի զոր նա ո՛չ համարձակեցաւ բանալ. եւ կնքեալ իւրով եւս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայնպիսի մարգարիտ, որ ո՛չ ծովային, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ եւ սնեալ ի գիրկս սրբութեան եւ նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք: Եւ խանդակաթ էր ի սէր երանելին Կումիտաս. չափ հասակի երանելոյն (Հռիփսիմեայ) ինն թիզ եւ չորս մատունս: Եւ դղրդեալ ամենայն կողմն գայր յերկրպագութիւն եւ բազում ախտաժետաց լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց: Շինեաց զեկեղեցին եւ զերանելին եթող ի բացեայ վասն գիճութեան որմոցն մինչեւ ցամաքիլ կրոյն. ապա ամփոփեցաւ ի կայեանս իւր»:

Ի սմանէ առեալ պատմագրին Զ-րդ Յովհաննու կաթուղիկոսի՝ գեղեցիկ տողէ զչինութենէ աստի.

«Զայսու ժամանակաւ (յելանել մեծին Հերակլի Յունաց յԱսորեստան եւ ի գերելն Խոռեմայ զօրավարի Պարսից զԵրուսաղէմ) մեծ պատրիարգն Կումիտաս զվկայարանն սուրբ Հռիփսիմեանց, որ նախ խրթին եւ փոքրատեսակ իմն էր շինեալ, եւս հրաշապէս եւ վայելուչ եւ նազելի եւ պայծառ շինուածով յարդարէր. ուր եւ պատահեալ սուրբ տիկնոջն Հռիփսիմեայ, ո՛չ սակաւ լինէր հոգեւոր մխիթարութիւն ընաւ իսկ Հայաստանեայցս: Եւ էր նա կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի եւ սրբոյն Սահակայ. ապա եւ մեծի հայրապետին եւս Կումիտասայ ո՛չ համարձակեալ բանալ զնա՝եդ եւ զիւր եւս կնիք ի վերայ նորա: Իսկ չափ հասակի սուրբ տիկնոջն՝ ինն թիզ եւ առ չորս մատունս. ապա շինեալ զեկեղեցին սուրբ եւ անդ ամփոփեալ ժողովէ զնշխար սուրբ տիկնոջն ի պատրաստեալ իւր կայանսն»:

Ունի այս տաճար սրբութեան զարձանագրութիւն այսր շինութեան յանուն Կոմիտասայ կաթուղիկոսի ի վերայ սեաւ վիմի մեծի եղելոյ ի գագաթ կամարին արեւմտեան դրան անդր քան զտանիք ներքնայարկի զանգակատանն, բայց առանց թուականի՝ յայս օրինակ[1]*.*

[1] [Սույն արձանագրությունը հրատարակված է նաև «Շողակաթ» հայագիտական ժողովածուում (Վաղարշապատ, 1913, էջ 172): Գարեգին վարդապետի (Գարեգին կաթողիկոս Հովսեփյան) հրատարակությունը կատարված է վիմագրից: Նշում ենք միայն կարևոր տարբերությունները]:

«Ես Կոմիտաս եկեղեցապահ[1] Սրբոյ Հռիփսիմէի, կարգեցայ[2] յԱ-թոռ սրբոյն Գրիգորի եւ շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստո-սի»:

321. Անցեալ եւս ի վերայ շինութեանցն Կոմիտասայ ամք 1035, այն է յամի Տեառն 1653. նորոգութիւնս առնէ ի բազում քայքա-յեալ տեղիս այսր եկեղեցւոյ՝ յորմունսն եւ ի տանիսն Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի եւ տայ կառուցանել գաւիթ փոքրիկ ի վերայ արեւմտեան դրանն չորս սեամբք, որոց երկուքն կից յորմն աստի եւ անտի դրանն, եւ երկուքն հանդէպ նոցին: Յիշատակագ-րութիւն այսց շինութեանց դնի ի վեր քան զարձանն Կոմիտասայ ի պատուանդանի քառաթեւ խաչին եղելոյ անդէն՝ յայս օրինակ.

«Ի թուիս ՌՃԲ (1653) Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթուղի-կոս Ամենայն Հայոց վերստին նորոգեցի զեկեղեցի սրբոց կուսա-նացն Հռիփսիմեայ եւ Գայիանեայ»:

322. Իսկ ի յետին ժամանակս յամի 1790, Ղուկաս կաթուղի-կոս Կարնեցի տայ կառուցանել զանգակատուն վայելուչ ի վերայ այնր յիշատակեալ փոքրիկ գաւթին (321) եղելոյ ի վերայ արեւմ-տեան դրան տաճարիս, արդեամբք Խաչիկ աղայի Ջնթլումեան, որոյ արձան յիշատակագրութեանն կայ ի ներքնայարկի զանգակատանս յորմն հիւսիսակողման դրանն, ըստ այսմ.

«Զանգակատունս այս յիշատակ իւր կանգնեալ,
Ազնիւ աղայ Խաչիկ իշխանն պերճացեալ,
Որ էր տոհմիւ քաջ Ջնթլումեան գովեցեալ,
Որդի պարոն Առաքելի յատկացեալ,
Նոր-Ջուղայու ի Հնդիկս գնացեալ,
Ի Կալկաթա մեծ քաղաքի բնակեալ,
Ուր եւ գործով պարծանք ազգի երեւեալ,
Ի բազում ազգս բարի անուամբ հռչակեալ,
ՅԱնգլիացւոց թագաւորէն օժտեցեալ,
Ոսկեայ մանեակ եւ պատկերաւ պսակեալ,
Իսկ զկնի վախճան բարի ընկալեալ,
Ռայ ընդ Զայի, Ղատն ի վերայ յաւելեալ.
Այսինքն է թիւ Փրկչին ՌՁՂ (1790)»:

323. Քառակուսի պարիսպ մենաստանիս հանդերձ բրգամբքն եւ քարաշէն կամարաւն մեծի դրանն հիւսիսային շինեցաւ ի հի-մանց յամի 1776, արդեամբք Մկրտիչ եպիսկոպոսի՝ միաբանի Սրբոյ

---

1 [«Շողակաթում»՝ **եկեղեցապան**]:
2 [«Շողակաթում»՝ **կոչեցայ**]:

էջմիածնի, որոյ արձան յիշատակարանի եդեալ կայ ի թեւ արեւելեան հարաւոյ կամարի դրան պարսպիս ի ներքին կողմանէ, յայս օրինակ.

«Շնորհիւ Տեառն Աստուծոյ արտաքին պարիսպ սրբոյ վանիցս հանդերձ բրգովքս եւ կամարակապ դրամբս, արդեամբք տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսի սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոսին ի յիշատակ իւր եւ կրկնակի ծնողաց իւրոց հոգեւորաց եւ մարմնաւորաց. ի ՌՄԻԵ [1776], ի յունիսի ելն»:

324. Պատմի եւ գիւտ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ եւ ընկերաց նորուն՝ բացի վերոգրելոցն, ի պատմութեան Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, զոր համառօտակի առաջի առնել ընթերցանելեաց ո՛չ դանդաղեսցուք:

«Ի ժամանակի անդ Մելքիսէթ կաթուղիկոսի Հայոց արք ոմանք միսիոնարք անուանեալք, որոց միոյն անուն Գլէլում (ըստ Զամչեանին՝ Գուլիելմոս) եւ միւսոյն Արքանճէլի, հանդերձ միով սպասաւորաւ գնացեալ շրջագայութեամբ եւ հասեալ յԱրարատ Հայաստանի յամի 1611, ի խնդիր լինէին նշխարաց սրբոց եղելոց ի Հայաստան եւ ըստ գրաւոր տեղեկութեանց իւրեանց իջանեն յէջմիածին եւ ըստ խաբուսիկ բարուց իւրեանց ընտելանան ընդ հոգեւորականսն Էջմիածնի եւ մնան զաւուրս ինչ անդ:

Յայնոսիկ միջոցս երթեւեկեն ի վանս Կուսանացն, որք կային յայնմ ժամանակի յամայութեան. ապա հետախոյզ քննութեամբ հասու եղեալ, թէ նշխարք սրբուհւոյն Հռիփսիմեայ գտանի ի ներքոյ բեմին եւ մուտ նորա ի մէջ հիւսիսային աւանդատանն՝ կարի մեծ վիմաւ ամրացեալ անհնարին ի բանալ զայն. յերթեւեկելն իւրեանց անդր, յաւուր միում քակեն զհիւսիսակողման ծայր աստիճանաց բեմին եւ մեծ աշխատութեամբ բացեալ զայն, մտանեն ի փոքրիկ մատուռն եւ պեղեալ խորագոյն զյատակ նորա՝ գտանեն զարկղն նշխարաց կուսին սրբոյ եւ հանեալ զայն ի մէջ եկեղեցւոյն՝ այնինչ սկսանին ժողովեալ զնշխարսն ի քսակ ինչ, հասանեն ի վերայ եպիսկոպոսք երկու Գրիգոր եւ Վարդան անուն, որք ի պատճառս զբօսանաց ելեալ էին անդր. զգաստացեալ նոցա տեսութեամբն նորոգ դիպելոյ եւ տեղեկացեալ իրացն եղելոց՝ զայրանան առ նոսա եւ յարուցանեն կագ եւ կռիւ՝ մինչեւ հարկանել զմիմեանս եւ վիրաւորիլ եւս գլխոյ եպիսկոպոսին Վարդանայ. եւ այնպէս երկոքին եպիսկոպոսքն զնշխարսն արկեղը հանդերձ կորզեալ ի նոցանէ՝ բարձեալ ածեն յէջմիածին. գնան զկնի պատրիկքն: Ընդ այս նորալուր համբաւ ժողովին ի հրապարակ անդր գիւղականք եւ միաբանք եւ Մել-

քիսէթ կաթուղիկոսն իսկ: Թէպէտ յարուցանէին անդ միաբանք վէճ ընդ պատրիացն, այլ դարձեալ մեղմէին զբանս՝ մնալով վրէժխնդրութեան կաթուղիկոսին. իսկ պատրիկքն տեսին թէ ոչի՛նչ փոյթ է նմա եւ զի յառաջագոյն հաճեալ էին զերեսս նորա, համարձակեցան. եւ այն ինչ առնուին ի նշխարաց անտի ի մոմշոր քսակ իւրեանց աւելորդութեամբ, յարեան եպիսկոպոսքն հանդերձ այլովք եւ ի բաց վարեցին զպատրիսն եւ առեալ եւս զգլուխ սրբուհւոյն ի նոցունց՝ եդին յարկեղ անդ. եւ բարձեալ զայն քրթմնջանօք զկաթուղիկոսէն՝ տարին անդրէն եւ ամփոփեցին ի նոյն իսկ ի տեղւոջն ի մէջ մատրան տաճարին խորագոյն եւս. եւ խճով եւ կրով ամրացուցեալ՝ եդին ի վերայ զվէմն տապանին: Խցին զայն մուտ յաստիճանաց բեմին ի մատուռն, ո՛չ այնքան կարգաւորեալ ամրութեամբ, զոր եւ մեք տեսաք. քանզի ի ներքուստ կողմանէ յարկ կամարի մատրանն յայն տեղի տակաւին կայ անշէն, իսկ ի վերուստ կողմանէ բեմին ամրացեալ ի յետնոց. այլ զբնական մուտ նորա, որ ի հիւսիսային աւանդատանէն, թողին բաց. եւ կայ այնպէս մինչեւ ցայսօր:

Ապա պատրիկքն զվերառեալ նշխարսն ի քսակն մոմշորեայ առեալ գնան յԵրնջակ ի գիւղն Ապարաներ. ուրանօր արարեալ զայն յերիս բաժինս՝ զմին ամփոփեն ի լեառն մերձ յայն գիւղ, զմին առաքեն ընդ հաւատարմաց յԱսպահան քաղաք Պարսից ի վանքն լատինաց Հուսէնիա անուանեալ եւ անդ արկեղբ դնեն ի տան ուրեք. եւ զմնացեալ զերրորդ բաժինն պահեն անդ առ ինքեանս:

Դաւիթ կաթուղիկոս Հայոց, որ անդ յԱսպահան քաղաքի գտանէր յայնժամ, տեղեկացեալ զայսմանէ միջնորդութեամբ Գրիգոր անուն սպասաւորի իւրոյ խորհրդակցեցաւ ընդ պատուաւոր հայազգիս ոմանս եւ նոքօք հանդերձ ծանոյց Միրզայ Մահամատ քաղաքապետին Ասպահանայ, յորմէ առեալ զօրականս՝ գնան եւ բառնան ի տանէ անտի զարկղն նշխարօք հանդերձ, զոր կնքեալ յիշեալ քաղաքապետին՝ աւանդ տայ ցխօջայ Սաֆար հայ իշխանն՝ պահպանել ցգալուստ շահին ի Դավրիժոյ:

Նա ինքն Դաւիթ կաթուղիկոս եւ խօջայ Սաֆարն գրեն զայսմանէ եւ զմնացեալ նշխարացն յԵրնջակ ի Դավրէժ առ Ջուղայեցի հայ իշխանն Նազար՝ եղբայր վերոյիշելոյն Սաֆարայ, որ էր սիրեցեալ յաչս շահին եւ էր առ նմա. եւ նա յայտնէ շահին. եւ առեալ զոմն արքունի պաշտօնատար հայ ազգաւ Աւետիք անուն, առաքէ արքունի հրամանաւ յԵրնջակ ի գիւղն Ապարաներ: Հասեալ անդր Աւետիքայ, կալնու զպատրիսն եւ կարելի միջոցօք պարսկային պատժոց ի յայտ բերէ զնշխարսն, թէ զեղեալն անդ ի տան եւ թէ

զթագուցեալն արտաքոյ, զոր առեալ հանդերձ պատրեօքն՝ հասա-նի յԱստապատ եւ անդ հանդիպի Պօղոս վարդապետի Հայոց, ընդ որում բարեկամացեալ՝ տայ նմա ի նշխարաց անտի զմատնաչափ ոսկր մի. եւ անտի անցեալ՝ ժամանէ ի Դավրէժ առ վերոյիշեալ հայ իշխանն Նազար: Եւ ի տեղեկանալն զայսմանէ շահին, հրամայէ ու-ղարկել զնշխարսն յԱսպահան՝ առ խօջայ Սաֆարն յաւանդ մնալ ցանդրէն դարձիւր անդր եւ զպատրիսն թողուլ յազատ:

Ապա ի վերադառնալ շահին յԱսպահան եւ յայց ելանելն յաւուր միում ի տուն խօջայ Սաֆարին՝ դիպեալ են անդ եւ ոմանք պատ-րիկք յընկերացն վերոյիշելոց: Եւ ի մէջ այլոց առարկութեանց, յի-շատակեալ են եւ զնշխարացն Հռիփսիմեայ եղելոցն անդ ի տան իշ-խանին. ուստի ի հրամայել շահին, բերեալ են զամենայն նշխարսն ի ներկայութիւն հանդիսականացն: Դիպուկ ժամ գտեալ պատրեացն խնդրեալ են ի շահէն՝ պարգեւել նոցա զմասն ինչ անտի: Յայնժամ առնու զմի ոսկր իւրով ձեռամբ եւ բեկեալ զայն դանակաւ, տայ զմասն ցպատրիսն. եւ նոցա առեալ զայն տարան ի Հնդիկս ի սահ-մանս Պումբայու եւ Սուրաթու ի Կուա, որ ընդ տէրութեամբ լիւ-սիտանացւոց եւ եդին անդ ի վանս Կուսանաց, ուր եւ ասի լինել ցայժմ: Իսկ զմիւս մասանց սրբուհւոյն՝ որ անդ ի տան խօջայ Սա-ֆարին Ջուղայեցւոյ, տե՛ս ի Պատմութեան Հայոց հատոր Գ, յերես 573: Եւ յԱռաքել պատմիչ ի ԺԶ գլուխ, յերեսսն 176 ց196:

Դարձեալ յամի 1653, ի նորոգութեան անդ տաճարի սրբուհ-ւոյ կուսին Հռիփսիմեայ ի Փիլիպպոս կաթուղիկոսէ Հաղբակեցւոյ յայտնեցան դարձեալ արկեղք նշխարաց սրբուհեացն, զորմէ գրէ Առաքել Դավրիժեցի՝ ըստ այսմ.

«Աստ եւս յայտ եկեալ գտաւ նշխարք սրբուհի կուսին Հռիփ-սիմեայ, ո՛չ միայն ի միում տեղւոջ, այլ յերիս տեղիս, զոր բաժին բաժին էին արարեալ եւ ամփոփեալ ի զգուշաւոր տեղիս. զերկու տեղաց նշխարքն ի մէջ վիմաց եդեալ էին եւ զմին, որ եւ բազում էր նշխարն, եդեալ էին ի մէջ փայտեայ արկեղ՝ որ է սնտուկ, լի՛ նշխար-ոքք». ի Իե գլուխ, յերես 322:

Ի յայտնութեան այսոցիկ ի խորութեան անդ յորմն մատրան ի վերայ վիմի տեսեալ Առաքել վարդապետի զգրուածս ինչ՝ առնու ի գիր եւ դնէ յիւրումն պատմութեան ի գլուխն Ե եւ է այս, ըստ հա-րազատ ձեռագրին.

«+Ո՛վ հրաշափառ եւ երջանիկ վկա՛յ անբաժանելի ծոցածին հօր եւ համազոյգ հոգւոյն կամողին ընդ ստորինս ասեմ, անոխակալ երկնաւոր փեսային հարսն, զբարեգործակ արքայն ունող. գոլով

գլուխ միշտ եւ անընդհատ յաղագս ծանօթ քեզ սպասաւոր Սուրբ Հոգւոյն: Ո՛վ սրբուհի, աղաչեմ յիշատակողացս անուան քո բարեխօսութեամբ եւ աննուազ աղօթիւք լե՛ր պահապան եւ անդիս, որով հանդիսասցիս ստորնոցս լինել: Սո՛ւրբ կոյս արա՛գ օգնական, որ եւ պատսպարան եղիցիս յամենայնի յաղթող բարեբան:

+Յիշեա՛ եւ զիս, զոր նուիրեցայց իսկապէս ըստ անուանս վերստին աստուածագործողին կամահաճոյ յարկիս. զոհն մասնատի՛պս, որոյ շնորհօքն բաւականացայց աղաչեմ յա՛նձն եւ յարանուն քեզ Հռիփսիմէ:

+Յակոբ քահանայ սուրբ կաթուղիկէ արհի եպիսկոպոսարանին:

+Ես Խոսրովիկ ծառայ սուրբ Հռիփսիմէի:

+Սուրբ Ոլոգին:

+Ստեփաննոս»:

Արդ՝ այսքան բանքս, յորոց սկիզբն նկարեալ եմ նշան խաչի, ուրոյն գրեալք էին յորմն մատուռին, յորում եդեալ էին զսնդուկն եւն:... Եւ սկիզբն եւ կատարումն երկուց վկայարանացս՝ սրբուհւոյն Գայիանեայ եւ սրբուհւոյն Հռիփսիմեայ եղեւ յամս երիս, զի ՌՃ [1651] թվին սկիզբն արարին նորոգութեան եւ ի ՌՃԲ [1653] թվին զերծան ի գործելոյ, բազում ծախիւք եւ յոլով աշխատութեամբ շինեալ կատարեցին ի փառս Քրիստոսի եւ սրբոց վկայից նորա:

325. Ի մէջ այսր տաճարի զառաջեաւ բեմին սրբոյ սեղանոյ, ուր դնի գրակալ ընթերցուածոց, է տապան երանելոյն Կոմիտասայ կաթուղիկոսի վայելչակերտ յարդարողի սրբոյ եկեղեցւոյս ըստ աւանդութեանն հասելոյ առ մեզ եւ վէմն, որ կայ ի վերայ հարթ հաւասար սալայատակին, է մեծ դրութեամբ եւ ձեւով տապանաքարի, որոյ նման ո՛չ գտանի ի բովանդակ սալայատակին անդ. եւ թէ լեալ էցէ յառաջագոյն ի նմա մակագրութիւն անուան, գուցէ ընդ այլ քայքայլեալ սալայատակացն՝ ի քանի նուագս նորոգութեանցն փոփոխեալ եւ անհետացեալ:

Ի մէջ անդ եկեղեցւոյս ի հիւսիսային դասու է տապան Փիլիպպոս կաթուղիկոսի Հաղբակեցւոյ վերջին նորոգողի տաճարիս, որոյ մահարձանն ի ժամանակս պատերազմաց մանրեալ եւ անհետացեալ գոլով, նոր ի նորոյ ետ կազմել Եփրեմ կաթուղիկոս ի թափանցիկ մարմարոնեայ վիմէ, որ ունի օրինակ արձանագրութեանն զայս.

«Հազար հարիւր չորս թուին, մարտի քսան եւ հնգին վախճանեցաւ Հաղբակեցի Փիլիպպոս սքանչելագործ կաթուղիկոս Ամենայն Հայոց եւ եդաւ սուրբ նշխարք նորա յայսմ շիրմի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»:

Շիրիմք երկուց կաթուղիկոսացն Կարապետի Ուլնեցւոյ եւ Աստուածատրոյ Համատանցւոյ գտանին ընդ զանգակատամբ արեւմտեան դրան տաճարիս. ի հիւսիսակողմն է Աստուածատուր կաթուղիկոսի, որ վախճանեցաւ ի 1725 ամի ի 10 հոկտեմբերի. իսկ ի հարաւակողման Կարապետին, որ վախճանեցաւ ի 1729 ամի յ2 հոկտեմբերի: Հասարակ վէմք տապանաց սոցա գտանին եւ արդէն, իսկ մարմարոնեայ ագուցեալքն յայնս անհետացեալ են ի ժամանակս պատերազմաց, որոյ վասն չեղեւ մեզ առնուլ զմակագրութիւն նոցին:

Յարեւելակողմն տաճարիս ի թիկանց սեղանոյ ի մէջ պարսպին են շիրիմք առաջնորդաց վանացս եւ ոմանց վարդապետաց, յորոց միջի է եւ շիրիմն մեծանուն վարդապետին Ստեփաննոսի հայ Լեհացւոյ, որ ի Միքայէլէ Զամչեանց կոչի Լէոպոլսեցի (յԳ-րդ հատոր, ԻԶ գլուխ, յերես 620): Եւ է մակագրութիւն տապանին այս գրուած.

«Յարկ..... եղեալ պահի,
Մարմին մաքուր վարդապետի,
Աստուածաբան Ստեփաննոսի[1]*,*
Որ տեղեաւն իսկ Լեհացի,
Անիւն ի գուբս այս ընկրկի,
Հազար հարիւր ընդ երեսնի,
Կրկին բառիւ Կ՝թիւ հայկազնի,
Որք հանդիպիք տո՛ւք զողորմի,
Աստուած եւ ձեզ ողորմեսցի»:

Ի տապանէն Լեհացւոյ ընդ հարաւ, յուԹերորդումն տապանավիմի գրուած.

«Ողջոյն քեզ շիրիմ,
Ճշմարիտ տուն իմ,
Փախուցեալս ընկալ
Յաշխարհէս մոլեալ.
ԶԱնտօն ըզտրկարս,
Քրիստոսի ծառայս,
Զառաջնորդ ուխտիս,
Հռիփսիմեայ կուսիս.

[1] Սա ինքն Ստեփաննոս վարդապետ Իլովացի կարգեցաւ յէջմիածին աթոռակալ ի 4-րդ Յակոբ կաթուղիկոսէ. եւ ի վախճանիլ նորա ի Կոստանդինուպօլիս, վերստին ի ժողովոյն, որ վասն հրաւիրելոյ զեղիազար յԱթոռ հայրապետութեանն յէջմիածին, կարգեցաւ տեղապահ՝ ըստ ցուցանելոյ յիշատակարանի ատեան ժամագրքի միոյ գրեցելոյ ի Զաքարիա Սարկաւագէ Յոհանավանից ի թուին Հայոց ՌՃԻԹ [1680], նոյեմբերի Ա:

Որ հազար թըվի,
Երկ հարիւր եօթի [1758],
Ըստ հաստչին բանի,
Հողս ի հող դարձցի»:

Զկնի այսը յերկրորդումն տապանի.
«Տապանս այս եւ յարկ շիրմի,
Է Ղազարու վարդապետի,
Որ էր տեղեաւ Աստապատցի,
Մեծի գահոյս յոյժ պիտանի,
Քաջ երաժիշտ եւ ժամասաց,
Յոյժ բանիբուն եւ դասասաց,
Եկեղեցւոյն կարգաւորող,
Ժիր քարոզիչ եւ ժամօրհնող,
Իսկ աստ առեալ զվախճան բարի,
Զուեաց առ Տէրն համայնի.
Արդ, որ ասէ սմա ողորմի,
Ի Քրիստոսէ զնոյն ընկալցի»:

Սամուէլ վանաց երէց մենաստանիս, որ գտաւ ի ժողովն Դունայ վասն ընտրութեան Ա Աբրահամ կաթուղիկոսի:

Վանք սրբուհւոյն Գայիանեայ եւ տեղի պատուական նշխարաց նորա եւ երկուց նահատակակից ընկերացն

326. Ի վեր անդր (317) ցուցաւ տեղի նահատակութեան սրբուհ-ւոյ կուսին Գայիանեայ լինել ի հարաւկոյս քաղաքին արտաքոյ հա-րաւային դրանն՝ ոչինչ այնքան հեռի որպէս միւս երկուքն. եւ զի մին յերից լուսեղէն խարսխաց անտի էջ ի սոյն տեղի նահատա-կութեան սրբուհւոյս (յԱգաթան. յերես 272). «Մի ի տեղւոջ, ուր վկայեաց սուրբն Գայիանէ երկու ընկերօքն»: Եւ վասն շինութեան տաճարիս՝ անդ 279. «Եւ զմիւսն շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց սուրբն Գայիանէ նորին (Հռիփսիմեայ) սնու-ցիչ երկու ընկերօք»:

Յայսմ իսկ տեղւոջ սուրբն Գրիգոր հանդերձ բազմութեամբ հաւատացելոցն շինէ զվկայարանն եւ ի նմա ամփոփէ զնշխարս սրբուհւոյն Գայիանեայ եւ երկուց ընկերաց նորուն՝ յամի 301:

327. Զկնի այսորիկ շինութեան ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ անցեալ ամք 329՝ այն է յամի 630, Եզր կաթուղիկոս զառաջին զայն նսեմ եւ մթին շինուած եկեղեցւոյս քակեալ՝ նոր ի նորոյ ընդարձակ հիմնարկութեամբ տայ կառուցանել վայելչապէս, զորմէ Զ-րդ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ. «Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին եւ մթին էր զնա շինեալ. քակեալ զայն՝ եւս ընդարձակագոյն եւ պայծառագոյն զնա շինեաց կոփածոյ քարամբք եւ կրով ձուլելով եւ յարտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին»:

328. Ապա յետ անցանելոյ հարուստ ժամանակաց ի վերայ շինութեանցն Եզրի եւ քայքայելոյ մեծ մասամբ այսր եկեղեցւոյ, Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի յամի 1652, նախքան զշինութիւն նորոգութեան վանաց սրբուհւոյն Հռիփսիմեայ, նորոգէ զսա գրեա՛թէ ըստ մեծի մասին եւ զկաթուղիկէն գլխովին, որ ի վերայ չորից սեանցն ի միջավայր տանեաց տաճարին. յայս կաթուղիկէ ի բաժնի արեւմտեան հարաւոյ յարտաքին կուսէ գրի թուական շինութեանն, ըստ այսմ.

«ՌՃԱ [1652] թուին նորոգեցաւ եկեղեցիս եւ շինեցաւ Կաթուղիկէս»:

Զնորոգութենէ աստի այսր տաճարի եւ զյայտնութենէ մաքուր նշխարաց երից սրբոց կուսանացս, այսօրինակ ստորագրէ Առաքել վարդապետ Դավրիժեցի, զոր արժա՛ն է ընթեռնուլ.

«Բայց սրբոյն Գայիանեայ կուսին տաճարն առաւել աւերեալ էր, զի տանիքն բովանդակ իջեալ էր. միայն շուրջանակի որմունքն եւ չորեք սիւնքն կային կանգուն, գլուխն ի բաց եւ յատակ որմոցն աստ եւ անդ ծակոտեալ եւ խրամատեալ, որոց արար նորոգման սկիզբն կաթուղիկոսն տէր Փիլիպպոս մեծաիղձ կարօտիւ եւ ջանիւ եւ զբազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկաշէն ի հիմանց մինչեւ ցգագաթ գմբեթին, յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին»:

329. «Եւ ի նորոգել զեկեղեցին սրբուհւոյ կուսին Գայիանեայ, գտեալ եղեւ սուրբ նշխար նորին եւ նորին ընկերացն... վասն զի ամենեքեան խոկային... իցէ արդեօք ի տեղին, թէ ոչ. քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատուռն, որ է դիր հանգստեան նշխարաց սրբոցս, աւերեալ էր բնաւին՝ ո՛չ միայն մատուռն, այլեւ ի վերայ նորին կառուցեալ աւագ բեմն աւերեալ եւ քանդեալ էր մինչեւ ցյատակն...»:

«Եւ յաւուրս նորոգման սորին աբեղայ ոմն տէր Յովհաննէս անուամբ, այր արդիւնաւոր եւ գործօնեայ եւ խորհրդական խորհրդով, զոր եւ տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի կարգեալ էր զսա վերակացու եւ գործավար ի վերայ գործոյս այսորիկ. սա յաւուր միում պատճառանօք իմն յայլուր առաքեալ զամենայն գործող եւ առանձնացուցեալ զտեղին գիշեր եւ ցերեկ մի. եւ ինքն իւրովի միայնակ պեղեաց զտեղին, ուր կարծիք մտաց ազդեալ նշանակէր. եւ այնքան պեղեաց զհողն մինչեւ եհաս ցանշարժ հողն, յորոյ վերայ կառուցեալ էր հիմն եկեղեցւոյն. եւ անդէն եգիտ զերիս տապանս ի ներքոյ հիման եկեղեցւոյն, որոց մին էր ի կողմն հարաւոյ եւ մին ի կողմն հիւսիսոյ եւ երրորդն ի կողմն արեւելից: Եւ ընդ բանալ կափարչաց վիմաց տապանացն, իսկոյն բուրեցաւ հոտ անուշութեան նորաստքանչ եւ զարմանալի... եւ տեսանէ զնշխարս իւրաքանչիւրոցն ի մէջ տապանացն սպիտակ փայլուն որպէս զձիւն եւ բովանդակ նշխարն անպակաս ի մէջ տապանացն...»:

«Եւ ապա առեալ զնշխար մի յոսկերաց սրբոցն առ ի նշան հաստատութեան. եւ ապա խփեալ զկափարիչ վէմսն ի վերայ տապանացն եւ խճով եւ կրով ամրացեալ փակեաց շուրջանակի զտապանսն եւ անհետ արարեալ զնշանսն եւ յարանց գործաւորաց ո՛չ ոք իմացաւ զայն: Եւ յետ կատարմանս այսորիկ զառեալ նշխարն, բերեալ եցոյց վարդապետաց եւ եղբարց ամենեցուն եւ պատմեաց զամենայն որպիսութիւնն...»:

«Եւ եղեւ գիւտ նշխարաց սրբուհւոյ կուսին Գայիանեայ եւ ընկերաց նորա եւ նորոգումն նորին եկեղեցւոյն, հազար եւ հարիւր եւ մէկ թուին եւ հոկտեմբերի ամսոյ տասն եւ ինն, յաւուր երեք շաբաթի» (յամի 1652):

330. Ապա Եղիազար կաթուղիկոս Հռոմկլայեցի յամի 1683 չինէ նորոգ հիմնադրութեամբ գաւիթ վայելուչ կից յարեւմտեան որմն եկեղեցւոյն աւելի երկայնեալ զայն քան զլայնութիւն տաճարին յերկուց կողմանց. եւ յերկոսին ծայրսն գաւթիս յարդարէ զերկուս փոքրիկ սեղանս կից յորմսն յանուն երկուց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ ի վերայ այնց զերկուս փոքրիկ զանգակատունս. էած շուրջ զեկեղեցեաւս եւ զպարիսպ քառակուսի եւ կանգնեաց զայլ եւս չինուածս ի նմա ի բնակութիւն հոգեւորական դասուն. այսց չինութեանցս արձանագիր կայ եղեալ յաջակողմն արեւմտեան դրան տաճարիս ընդ յարկաւ գաւթին, յայս օրինակ.

«Ես տէր Եղիազար կաթուղիկոս սուրբ Էջմիածնի Հռոմկլայեցի գոլով, տեսի զամայութիւն սուրբ վանացս, որ յանուն սրբուհւոյն

Գայիանեայ, շարժեցայ ի գութ հոգեւոր սիրով եւ պարսպեցի զսա սրահօք, յարկօք եւ խցերօք. նաեւ զգաւիթ եկեղեցւոյս կառուցեալ՝ յաջմէ խորան սուրբ առաքելոյն Պետրոսի եւ ի ձախմէ խորան սուրբ առաքելոյն Պօղոսի, յիշատակ հոգւոյ իմոյ. եւ ի Հայոց թուականիս ՌՃԼԷ (1688), ամէն»: Գրէ առ այս եւ Զաքարիա Սարկաւագ Յօհանավանից ժամանակակից այնմ ի հատորն Բ, գլուխ ԾԲ. «Նոյնպէս եւ ի սուրբ մայրն Գայիանէ շրջապատեալ պարսպեաց. եւ յարեւմտեան դրանն (եկեղեցւոյ) արտաքոյ կողմանէ շինեաց խորանս եւ ի նոյն տեղին հիւսիսոյ կողմն շինեաց զգերեզման իւր եւ զտնտեսատունն եւ զխուցսն, հաստատեաց եւ միաբանս» եւ այլն:

331. Ի գաւթի աստ ամփոփեալ կան մարմինք ոմանց կաթուղիկոսաց աթոռոյ Էջմիածնի՝ պատուեալ թափանցիկ մարմարոնեայ վիմօք. ի քարանց աստի եօթն հատ եւեթ գտանին արդէն ի վերայ այնց շիրմաց, իսկ այլքն ի ժամանակս պատերազմաց անհետ եղեն՝ ընդ այնց եւ արձանագրութիւնքն. ուստի զորս եւ գտաք ամբողջ, եդաք աստէն առաջի:

Ի հիւսիսակողման անդ.

Ղազարու Ջահկեցւոյ.

«Զքնաղ տապանս է հրաշալի,
Առն մեծի գիտնականի,
Տեառն Ղազարու հայրապետի,
Հանուրց Հայոց պատրիարգի,
Որ ի մարմնի քաղցրավարի,
Բարւոք մահուամբ վերափոխի,
Դիմեալ առ Տէր ի նա հանգչի,
Որում բաղձան հոգիք բարի.
Ի մին հազար երկ հարիւրի [1751],
Մերս հայկազնեայ թուականի,
Ի ծաղկազարդ յօր վերջ մարտի,
Աստ ամփոփեալ վերապատուի»:

Յակովբայ Շամախեցւոյ.

«Քրիստոս Որդի Հօր Միածին,
Դատող ազգի մեր մարդկային,
Յորժամ գայցես փառօք կրկին,
Առ ի դատել զամենեսին.
Ողորմութեամբ յայնժամ քոյին,
Եւ գթութեամբդ աստուածային,

Յիշեա՛ զհոգի քո ծառային,
Որ է սրբոյ արեանդ քո գին.
Տեառն Յակովբայ հայրապետին,
Շամախեցի զոր կոչէին,
Յարքայութիւնդ մոյծ երկնային,
Դասեա՛ ընդ սուրբս ամենեսին:
Եղեւ թուականս ՌՄԺԲ [1763]
Եւ յամսեանն մարտի 21»:

Ի միջոցի երկուց այսոցիկ կաթուղիկոսաց ամփոփեալ է մարմին Եղիազարու կաթուղիկոսի Հռոմկլայեցւոյ ի ՌՃԼԹ թուականի Հայոց, յամի Տեառն 1690, յ8-րդ օգոստոսի:

Դաւիթ կաթուղիկոսի Էնէգեթեցւոյ.
«Ահա՛ դամբարան եւ յարկ բնակութեան,
Դաւիթ հօրն այն դիոյ հանգստեան,
Կաթուղիկոսի շնորհիւ օծութեան,
Եւ հայրապետի գահիս սրբութեան.
Որոյ դադարեալ ի խռովութենէ,
Զկնի հրաժարման ի վեհութենէ,
Սիրով միշտ գգուեալ ի պետէն մերմէ,
Սրբազան տեառն մեծէն Եփրեմէ.
Հանգեաւ սա յամի Տեառն Փրկչական
Հազար ութն հարիւր տասնեօթ թուական,
Ի նոյեմբերի աւուր միական,
Մեծաշուք փառօք եղաւ յայս տապան»:

Ի հարաւակողման անդ.
Սիմէոն կաթուղիկոսի Երեւանցւոյ.
«Քրիստոս Աստուած իմ Տէր բարի,
Լո՛ւր աղէտից քոյս ծառայի,
Դու կացուցեր զիս յայս կարգի,
Ի մշակել ըզքո այգի,
Իսկ ես անուամբ այս պաշտօնի,
Գտայ ծառայ ամենայնի,
Եւ որպէս թէ զպարտաւոր մի,
Փոխատուաց զիս մատնեցի,
Ոյց ետու եւ ծառայեցի,

Վարձն իմ զսուգ եւ զցաւ առի,
Այսու կենօք ողորմելի,
Ժամանակս իմ վճարեցի,
Այժմ ամօթով կամ առաջի,
Զի ծառայել քեզ չկարացի.
Արդ դու նայեա՛ց յիս քաղցրութեամբ,
Թո՛ղ զյանցանս ներողութեամբ,
Ուրախացո՛ առ քեզ կոչմամբ,
Եւ սփոփեա՛ քո սուրբ տեսլեամբ,
Վասն խաչիդ զոր պաշտեցի,
Եւ սուրբ անուանդ, զոր կրեցի.
Սիմէօն կաթուղիկոս Երեւանցի,
Ի ՌՄԻԹ [1780] թուի եւ յուլիսի 26-ի,
Ի Վարդավառ կիւրակէի»:

Կից յայս տապան ի հիւսիսոյ է շիրիմն Բ Աբրահամ կաթուղիկոսի Մշեցւոյ, որ վախճանեցաւ յամի 1734, ի 11 նոյեմբերի, որոյ մարմարոնեայ վէմ մակագրութեամբն հանդերձ անհետացեալ է. եւ կից սմին ըստ այնմ Մինասայ կաթուղիկոսի Ակնեցւոյ, որ վախճանեցաւ յամի 1753, ի 12 մայիսի, այսր տապանի վէմ գոլով կիսաբեկ եւ այն հատոր վիմին անյայտ, թողաք ի բաց զթերին մակագրութիւն:

Ղուկաս կաթուղիկոսի Կարնեցւոյ.

«Յարկ դամբարանիս է վեհին մեծի,
Տեառն Ղուկասու կաթուղիկոսի,
Բնիկ գաւառաւ էր սա Կարնեցի,
Հանդարտակենցաղ եւ ջանիւք բարի,
Թէպէտ դիպեցաւ դառն [ժ]ամանակի,
Պատեցեալ վշտօք ըստ փողոյն մեծի,
Այլ յօրէ կոչմանն եդ իսկ ի մտի,
Շքեղազարդեալ զգահն հրաշալի,
Որ եւ ետ ծաղկել կարի սխրալի,
Զմէջ տաճարին Միածնաիջի,
Նաեւ նորոգել ետ շուրջանակի,
Շինեալ եւ զայլ շէնս, որք են իսկ յայտնի,
Ապա ընկալեալ զվախճան բարի,
Դիմեաց առ Քրիստոս յոյսն ամենայնի,
Յորմէ ընկալցի զվարձս բարի,
Եւ յարքայութեան նորին հրճուեսցի.

Ամփոփեցաւ յամի Տեառն 1799, ի դեկտեմբերի 29, ի տօնի որդւոցն Որոտման»:

Յովսէփայ կաթուղիկոսի Տփխիսեցւոյ.
«Արդութեան քաջ արհին,
Տէր Յովսէփ պանծալին,
Կայսրընտիր արժանին,
Մեծ գահիս Միածնին,
Այլ տապար ժանտ մահուն,
Ի սա իսկ հար իսկոյն,
Որոյ կամք կալ յաթոռ,
Եմուտ աստ ի տուն խոր,
1801. յ9 մարտի»:

Վանք տկար կուսին Մարիանէի[1] միոյ յընկերացն Հռիփսիմեանց եւ տեղի նահատակութեան նորա

332. Տաճար կամ եկեղեցի Շողակաթ անուանեալ՝ գիտեմք ըստ յայտնութեան գրոց տիրապէս զԿաթուղիկէ մայր եկեղեցին Հայաստանեայց ի Վաղարշապատ եւ ո՛չ զայլ միւս եւս ի Հայս. բայց աւանդութիւն է բնակչաց կողմանցս պիտակաբար անուանել Շողակաթ եւ զայսր սրբոյ կուսի զվկայարան սակս շող լուսոյն ծագելոյ եւ ի վերայ տեղւոյ նահատակութեան սրբոյ կուսին ի տեսլեան անդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի:

Այս տաճար յարեւելեան հիւսիս սրբոյ Կաթուղիկէ եկեղեցւոյ Էջմիածնի՝ հեռի ի նմանէ իբր քառորդ ժամաւ եւ ուղղակի յարեւմուտս տաճարի սրբոյն Հռիփսիմեայ իբրեւ յերկուս քարընկեցս՝ մերձ ի հնձանատեղին, ուր օթեւանս կալեալ էին սրբուհի կուսանքն, չինեցաւ յառաջն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ, զի ի տեսլեան սրբոյն Գրիգորի յիջանել լուսեղէն խարսխացն՝ մին յերից խարսխաց անտի, ասէ ճառն՝ էջ ի տեղւոջ հնձանին (յԱգաթանգեղոս, 272). «Եւ մի ի տեղւոջ հնձանին». իսկ վասն չինութեան եկեղեցւոյս

[1] Մարիանէ անուն լինել սրբոյ կուսիս թէպէտ չունիմք տեղեկութիւն ինչ ի գրոց, զի տկար՝ այն է հիւանդ եւեթ գրեն հեղինակք պատմութեանց. այլ աւանդութիւն բնակչաց կողմանցս հասեալ առ մեզ՝ ստուգէ լինել նոյն, որպէս եւ անուն միոյն ի սրբուհեացն, որ ի մէջ վերի այգի կոչեցելոյն նահատակեալ, կոչի **Թումիան** եւ այժմ:

ասէ լինել մերձ ի հնձանն (յԱգաթանգեղոս, 279). «եւ միւսն մօտ ի հնձանն ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա» (317): Յորմէ յայտ է թէ՝ չեղեւ նահատակութիւն սրբոյ կուսին ի հնձանի անդ՝ թէեւ գրէ Ագաթանգեղոս. «Եւ մինաւորն որ ի հնձանին սպանաւ». այլ փոքր ինչ արտաքոյ քան զհնձանն, զի գոլով ինքն հիւանդոտ եւ տկար, հազիւ ուրեմն դողդոջուն անձամբ ել ի հնձանէն եւ այն ինչ փոքր մի հեռացեալ անտի՝ թերեւս ի տեսանել զկատարումն անմեղ գառանց ընկերաց իւրոց եւ կամ խառնիլ յերամս նոցուն, զի եւ ինքն հաղորդեսցի պսակացն պատրաստելոց, հասին անդէն դահիճք եւ յիւր վերայ, յորոց ընկալեալ զվկայական կատարումն յաստի կենաց, եհաս որում ցանկայրն: Քանզի յայտնի իսկ տեսանին եւ տեղիք երկոցունցն՝ Հնձանին, ուր է այժմ քակեալ փոքրիկ տաճար մի, որոյ որմունք մասնաւոր բարձր յերկրէ կան տակաւին կից հիւսիսակողման ճանապարհին, որ տանի յԵրեւան. եւ աւանդութիւն իսկ բնակչացս ստուգէ լինել նոյն: Իսկ նահատակութեան կուսին, ուր է այժմ եկեղեցին կառուցեալ յանուն սրբուհւոյն, հեռի ի մատրանէ հնձանին յարեւելս հիւսիսոյ դէպ յայգեստանսն իբրեւ յիսուն հասարակ քայլ, վասն զի եւ փախուստ կուսանացն ի հնձանէն ընդ յայգեստանսն եղեւ, որ են յարեւելս հիւսիսոյ նորա:

333. Յայս տեղի նահատակութեան սրբոյ կուսին ի սկզբան անդ ընդ երկուց եկեղեցեացն Հռիփսիմեայ եւ Գայիանեայ ետ կառուցանել սուրբն Գրիգոր զվկայարան յանուն նորա՝ յամի 301, որպէս ասացաւ, այլ զկնի այնր մինչեւ ցամ Տեառն 1694, թէ ո՛յք ոմանք ձեռնարկեալ նորոգեալ իցեն զայս եկեղեցի, որպէս զմիւս երկուսն, չունիմք ինչ ծանօթութիւն: Եւ զի չունի ինչ մնացուած յառաջին շինութեանց անտի, զի թերեւս յարձանագրութեանցն լինէր տեղեկութիւն ըստ միւսոցն. այլ գլխովին նորոգ կառուցեալ է տաճարն ի հիմանց ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսի Ուրհայեցւոյ, արդեամբք Աղամալ իշխանին Շօռութեցւոյ, յամի 1694, ի սրբատաշ քարանց բարեյարմար ձեւակերպութեամբ, միջակ դրութեամբ, եւ է փոքր քան զմիւս եկեղեցիսն եւ անսիւն. ունի եւ կաթուղիկէ ի միջավայր տանեացն եւ գաւիթ վայելուչ, յորոյ վերայ է եւ զանգակատուն փոքրիկ. ունէր եւ կրկին գաւիթ վիմակերտ ըստ տաճարին, այլ այն անկեալ տապալեցաւ ինքնին յամի Տեառն 1807:

Այս սուրբ տաճար ունի արձան յիշատակի շինութեանն ի վերայ արեւմտեան դրան ընդ յարկաւ գաւթին, այս օրինակ.

«Շնորհօքն Աստուծոյ Որդւոյն Միածնի,
Շողակաթ անուամբ տաճարս կանգնի,

Ի թուականիս մեր հայկականի,
Հազար եւ հարիւր քառասներեքի [1694],
Ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնի
Տեառն Նահապետի հօր սրբազանի,
Արդեամբք Աղամալ բարեպաշտօնի,
Գոլով քաղաքէն Նախիջեւանի,
Շինեաց յիշատակ փրկեալ զիւր հոգին,
Հօրն Աղաջանին, մօրն Նանակուլին.
Նաեւ կենակցին իւր Մարիամին,
Եւ որդւոց իւրոց Ալբերդիոսին,
Ագաթանգեղոսին, Աղէքսանդրոսին
Եւ Խարիսիմոս փոքր եղբայր սոցին.
Դստերաց իւրոց Նոյեմզարային,
Այլեւ զԱսանէթ եւ Նանակուլին,
Որք զմեզ յիշեն առ Տէր ի բարին,
Արժանի լիցին տեսութեան նորին»:

Այս մենաստան ունի ինչ ինչ սենեակս միաբանից, յորոց ոմանք են քարաշէն կառուցեալք ընդ եկեղեցւոյն եւ ոմանք ի հողոյ եւ ի փայտէ շինեալք ի յետնոց. ունի եւ պարիսպս ածեալ շուրջանակի ներքին եւ արտաքին հանդերձ բրգամբք. եւ ի բուրգն անկեան արեւմտեան հիւսիսոյ արտաքին պարսպի եղեալ կայ արտաքուստ խաչվէմ մի փոքրիկ բարձր յերկրէ երկկանգնաչափ, ուր ի պատուանդանի խաչին գրի այս ինչ. «Շինեցաւ հնձանեաց մատուռս ի թվին զՃ եւ Գ», որ երեւի լինել արձանն փոքրիկ մատրան եղելոյ ի տեղւոջ հնձանին, որ ցուցաւ ի վերոյ: Թերեւս ի կանգնել զայս բուրգ պարսպօքն հանդերձ առեալ յաւերակաց հնձանատեղւոյն, եղեալ իցեն աստէն, զի երթեւեկք յայգեստանսն, որ առ բրգամբս անցանեն, տացեն զարժանաւորն երկրպագութիւն տէրունական նշանիս, որպէս եւ ստուգէ այն պատմութիւն բնակչացս թէ՝ մինչեւ ի ժամանակս Ղուկաս կաթուղիկոսի Կարնեցւոյ դնէին առ սոյն բրգամբս գրակալ եւ Աւետարան ի վերայ՝ յերկրպագութիւն եւ ի համբուրումն բարեպաշտ անցորդացն ընդ այն. այլ այժմ այս սովորութիւն խափանեալ կայ:

334. Տեղի տապանի սրբոյ կուսիս Մարիանէի ի մէջ եկեղեցւոյս աւանդութեամբ ստուգի լինել ի մէջ աւանդատանն հարաւակողման, ուր որոշակի գտանի եւ տապանավէմ. բայց ճշմարտօրէն չգտանի, թէ արդե՛օք իսկապէս աստ ամփոփեցաւ մարմին սրբոյ կուսին, եթէ հաւաքեալ ընդ այլ կուսանացն զետեղեցաւ ի վկայա-

բանի սրբոյն Հռիփսիմեայ: Այլ զի ըստ հաշուի թուոց նոցին երեւի լինել աստ, քանզի ամփոփեցաւ ի տապանի սուրբն Հռիփսիմէ երեսուներկու ընկերօք, սուրբն Գայիանէ երկու ընկերօք, լինին 36, մին եւս աստ, այն է՝ Մարիանէ, որովք լրանայ թիւ սրբուհեացն երեսուն եւ եօթն՝ ըստ վկայելոյ շարակնոցին յԱնձինք կուսանացն ի տառն Փ. «Փառաց ի փառս բարձրացեալ պարծին երեսուն եւ եօթեանքն, քանզի այս է թիւ երանեալ կուսանացն, որք անթառամ պսակեցան յանվախճան յաւիտեան»: Այլ թերեւս ասասցէ ոք զթիւն 37, լրացուցանեն սուրբ կուսանքն Նունէ առաքելուհին Վրաց եւ Մանի, որ ի Սեպուհ լեառն Դարանաղեաց: Բայց գրուածք Ագաթանգեղոսի եւ Շարակնոցին ճշտօրէն հային առ նահատակեալսն աստէն ի Վաղարշապատ քաղաքի:

Ի գաւթի աստ վանացս եւս ամփոփեալ կան մարմինք կաթուղիկոսաց Հայոց. նախ նորուն Նահապետ կաթուղիկոսի Ուրհայեցւոյ ի հիւսիսակողման անդ, որ ունի մակագրութիւն տապանի ըստ այսմ.

«Այս է տապան դամբարանի,
Տեառն Հայոց հայրապետի,
Սա Նահապետ անուամբ կոչի,
Որ է տեղեաւ Ուրհայեցի,
Ի թուին ՌՃԾԴ» (1705):

Աստ ամփոփեցաւ եւ մարմին Աբրահամ կաթուղիկոսի Կրետացւոյ ի հարաւակողմանն ի թուին Հայոց ՌՃՁԵ (1736): Այլ մարմարոնեայ վէմ տապանին բարձեալ գոլով անտի ընդ նմա անհետացեալ է եւ մակագրութիւն նորա:

Եկեղեցի կոչեցեալ Սուրբ Գրիգոր Առապարի

335. Հռչակաւոր եկեղեցի անուամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի յԱռապարին Վաղարշապատու մերձ յեկեղեցիսն նորա, այն է, որ այժմ ի բնակչացս առհասարակ Հանգուցեալ *կոչի, այսինքն՝* Անկեալ, *ի վայր խոնարհեալ, փլուզեալ բովանդակ շինուածովքն հանդերձ. եւ էր յիրաւի մեծահռչակ եկեղեցի ըստ լայնադիր եւ գեղեցկայարմար շինուածոցն, որպէս եւ վկայեն պատմաբանք ազգիս՝ շինեալ յԳ-րդ Ներսէս կաթուղիկոսէ Շինող անուանելոյ:*

Զայսմանէ յայտնագոյնս գրէ պատմաբանն Սեբէոս եպիսկոպոս Բագրատունեաց ժամանակակից նմին Գ-րդ Ներսէս կաթուղիկոսի, յորոյ աւուրս գտաւ եւ ի ժողովի անդ ի Դուին քաղաքի եւ

կոչէ զեկեղեցին յանուն երկնաւոր Զուարթնոցն. իսկ ի պատճառս ամփոփելոյ անդէն նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, կոչեցաւ **Սուրբ Գրիգոր***:*

«Յայնժամ արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց (Գ Ներսէս) շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին, յորում ասեն՝ ընդառաջ եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի[1]*, շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զօրացն եւ շինեաց եկեղեցին բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեօք արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն. ած ջուր եւ եբեր զգետոյն (Քասաղ) եւ արկ ի գործ զամենայն զվայրն առապար, տնկեաց այգիս եւ ծառատունկս եւ շուրջանակի պատուիրեաց զբնակութեամբն գեղեցկադիր յօրինուածով՝ բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»: Եւս ի վախճան պատմութեանն նա ինքն Սեբէոս եպիսկոպոս գրէ ըստ այսմ. «Իսկ կաթուղիկոսն Հայոց Ներսէս գնաց ընդ թագաւորին (Կոստանդնի) որպէս վերագոյն ասացի եւ չուեաց ընդ նմա ի Կոստանդինուպոլիս:... Եւ ապա յետ Զ ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղի իւր եւ հաստատեցաւ յԱթոռ կաթուղիկոսութեան, փութայր կատարել զշինուածոյն, զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի»:*

Ի ժամանակս իշխանին Աղուանից Վարազտրդատայ եւ կաթուղիկոսի նոցա Եղիազարու առաքի դեսպանութեամբ ի նոցունց անտի ի Հայս Իսրայէլ եպիսկոպոս ոմն առ իշխանն Արարատայ Գրիգոր Մամիկոնեան եւ առ Գ Սահակ կաթուղիկոս Հայոց սակս խորհրդոյ իրիք, որոյ եկեալ եւ տեսեալ աստէն ի Վաղարշապատ քաղաքի զպատուական նշխարս սրբոյն Գրիգորի, հայցէ զմասն ինչ միջնորդութեամբ Հեղինէ դշխոյն տիկնոջ իշխանին Գրիգորի, որ էր դուստր իշխանին Աղուանից եւ առնու զմասն յօրէնսուսոյց ծնօտէն եւ տանի ընդ իւր յԱղուանս, զորմէ տողէ եւ զեկեղեցւոյ աստի Մովսէս Կաղանկատուացի (հատոր Բ, գլուխ 38). «Ի ժամանակս յայ-

[1] Այնինչ սուրբն Գրիգոր ելեալ ի Վիրապէն Արտաշատու գայր ի Վաղարշապատ ընդ Օտայ նախարարին եւ այն ինչ եհաս ճանապարհորդութիւնն յայս տեղի, Տրդատ Մեծ արքայ հարուածեալն յաներեւոյթ զօրութեանց խոզակերպ տեսլեամբն եհաս այսր. եւ անկեալ յոտս երանելոյն, փարէր ներքին զղջական զգացմամբն. վասն այսր պատահման յայն գիշեր մնայ անդէն սուրբն եղելովքն ընդ ինքեան եւ տեսանէ ի տեսլեան զերկնաւոր զօրս հրեշտակաց. եւ այն տեսլեան աւանդութիւն եհաս շարունակեալ ցԳ Ներսէս կաթուղիկոս, որոյ վասն եւ ի պատճառս հասելոյ նշխարաց սրբոյն ի Թորդանայ ի Վաղարշապատ քաղաք, տայ կառուցանել զայս հոյակապ եկեղեցի:

նոսիկ բերեալ էր իշխանն մեծ զաւրավարին Հայոց (Մամիկոնեան Գրիգոր) ի Թորդանա ի Դարանաղեաց գաւառէն զնշխարս սրբոյն Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերաւքն հանդերձ յաշխարհն Հայոց յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք, հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր Մեծին Ներսէսի (Գ Ներսէս) շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի: Ապա մեծաւ աղաչանաւք եկեալ Իսրայէլ եպիսկոպոսն առաջի կաթուղիկոսի եւ զաւրավարին» եւ այլն:

Իսկ Զ-րդ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ զկնի յիշատակելոյ զշինութիւն երկուց եկեղեցեացն ի նոյն Գ Ներսէս կաթուղիկոսէ, առաւել եւս տեղեկութեամբ հանգամանաց յիշատակէ զմիւս զայս եկեղեցի երրորդ, յասելն.

«Դարձեալ յուսացեալ ի Տէր եւ ո՛չ զմտաւ ածեալ զկրթական արշաւանս հինիցն թշնամեաց գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ ապա հիմն մեծ եւ հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ ըստ անուանակոչութեան սրբոյն Գրիգորի, յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Քրիստոսի: Իսկ ի հիմնարկել զաստուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի, ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ գանձոյն երկնաւորի ի գերչաց ապականչաց եւ ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց: Իսկ զքրիստոսադրոշմ եւ զպատուական գլուխն ո՛չ ի խորոջ, այլ արտաքոյ ի գզրոցի եդեալ դնէ ի գանձարանս աստուածութեանն ի յոյս բարեաց փափագողացն նմա եւ ի բժշկութիւն ախտակրելոցն»:

Ստեփանոս Տարօնեցի պատմաբան մականուն Ասողիկ կոչեցեալ, զբացայայտ ծանօթութիւն տեղւոյ եկեղեցւոյս այսորիկ գրէ (հատոր Բ, գլ. 2). «Սա (Գ Ներսէս) շինեաց եւ զմիւս եւս հրաշապայծառ եկեղեցին զՍուրբ Գրիգոր ի Վաղարշապատու Առապարին զանազան յօրինուածով»:

Շուրջ զեկեղեցեաւս ետ կառուցանել նա ինքն Գ Ներսէս կաթուղիկոս եւ զտունս բնակութեան ինքեան եւ հոգեւորական դասուց պաշտօնէից եւ զպարիսպս շուրջանակի զբնակութեամբն. եւ ի մերձակայ աւազուտ վայրսն ետ տնկել այգիս եւ ծառաստանս եւ այնպէս պայծառացուցանէր զվայրն գեղեցիկ արարուածովք զօրէն քաղաքաց:

Յետ պատմելոյ Նորուն Սեբէոս եպիսկոպոսի զայսոցիկ շինարարութեանց որպէս տեսաւ ի վեր անդր, պատմէ եւ Զ Յովհաննէս կաթուղիկոս գեղեցիկ իմն դասաւորութեամբ.

«Բայց Հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն զոր իւր իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք: Այլեւ կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդու մարդաց ըստ պայմանի քաղաքականաց եւ ածեալ ջուր ի Քասաղ գետոյ զամենայն աւազախիր դաշտավայրն ի գործ արկանէր. տնկէր այգիս եւ բուրաստանս ծաղկոցաց»:

Եւ որպէս երեւի ի բանից Մովսէսի Կաղանկատուացւոյ, բովանդակ ծախք շինութեան այսր եկեղեցւոյ շնորհեցան ի Կոստաս կայսերէ Յունաց ըստ պատմելոյ նորին Կաղանկատուացւոյ (հատոր Գ, գլուխ 15). «Իսկ Կոստաս սորին (Հերակլի) որդի ամս ԻԹ:... Նստի կաթուղիկոս Հայոց տէր Ներսէս ամս Ի:... Սա էր հայրագիր նորին Կոստանդնի եւ գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի քաղաքի դաշտի զսուրբն Գրիգոր: Եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, ընդ որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի զնոյնաձեւն յարմարեսցէ ի պաղատանն. եւ ո՛չ ժամանեալ Գաղատոսն՝ ի ճանապարհին վախճանիւր»:

Յայսմ եկեղեցւոջ նստաւ երբեմն եւ Գէորգ կաթուղիկոս Հայոց ըստ առաջ բերելոյ հին Հայաստանի ի Թովմայէ Արծրունւոյ. «Բայց երանելի հայրապետն տէր Գէորգ... թողեալ զբնակելն ի Դուին, ելեալ բնակեցաւ ի Նոր Քաղաքին (ի Վաղարշապատ) ի մեծ եկեղեցւոջն, որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելոյն տեառն Ներսիսի Երկրորդի (երրորդի) Հայոց կաթուղիկոսի»:

Այս հռչակաւոր եկեղեցի եկաց կանգուն ի շինութեան ո՛չ կարի ընդ երկար՝ ըստ ակնարկելոյ բանիցն Ստեփաննոսի Ասողկայ եւ Կիրակոսի Գանձակեցւոյ, զոր յառաջ բերեն ըստ այսմ Ասողկայն. «Գագիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմեծաշէն եկեղեցին որ ի Քաղաքուդաշտի անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ եւ կործանեալ, կամեցաւ նոյնաձեւ չափով եւ յօրինուածով յարդարել ի քաղաքն Անւոյ» (Գ, 47): Եւ Կիրակոսին՝ «Սա (Ներսէս կաթուղիկոս) շինեաց զվկայարան սրբոյն Սարգսի ի Դուին... եւ զսուրբն Գրիգոր զարմացուցիչն տեսողաց, որ յետոյ աւերեցաւ ի տաճկաց»:

Արդարեւ տապալումն եկեղեցւոյս հանդերձ այլովք շինուածովքն երեւի լինել յօտարազգի թշնամեաց, զի բովանդակն գրեա՛թէ ի հիմանց քակեալ կայ. բեկորք որմոց եւ տանեացն, որ անկեալ դնին առ տեղեաւն, գուշակեն զհաստատինտ շինուածոցն, եւ շրջանակ հիմունք նորա. եւ ընդարձակութիւն միջոցաց չորից մեծամեծ սեանցն զմեծութենէ եւն. յայսոցիկ ծանօթութեանց բաւականաչափ ստուգին միտք գրուածոց պատմագրացն ազգի Հայոց, որք խօսին զմեծութենէ եւ զգեղեցկութենէ սորին եւ անուանեն **Զարմացուցիչ տեսողաց**, *ըստ հանգամանաց այնր դարու:*

Աւերակն այսր եկեղեցւոյ եւ շուրջ զնովաւ մենաստանին գտանի մերձ յԱթոռ Էջմիածնի աւելի քան զկէս ժամ հեռաւորութեամբ ուղղակի յարեւելս նորա, ի տեղի արդարեւ բարձրաւանդակ եւ աւազուտ ի հարաւակողման ճանապարհին, որ տանի յԵրեւան քաղաք. կան այժմ եւ երեւին իսկ որպէս հիմունք եկեղեցւոյն եւ աւելի քան զմարդաչափ բարձրութիւնք սեանց զուրկ յարտաքին կոփածոյ քարանց. նմանապէս երեւին եւ հիմունք պարսպի նորա եւ բրգանցն եւ առ նովաւ սենեկացն իսկ, որ եւ ասի հանգած եկեղեցի եւ այժմ եւ անուն նորա Սուրբ Գրիգոր:

Վախճան Ա. հատորոյ



ՍՏՈՐԳՐՈՒԹԻՒՆ

Կաթուղիկէ Էջմիածնի

և հինգ

Գաւառացի Աբրահամ

Աշխատասիրութեամբ Յովհաննու
եպիսկոպոսի շահխաթունեանց շահրի-
արքայի միաբանի սրբոյ Էջմիածնի

Ռուսական նիւթոց հատոր.

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ուղղագրեալ

Հրամանաւ վեհափառ կաթուղիկոսի ամ հայոց
Ը. Յովհաննու կարգելոյ և զանազան նշանակրի
Տէր-Թեռանն Ղուսայ

Ի Ս. Կաթուղիկէ Էջմիածին

1842 = ռմղա.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀԻՆԳ ԳԱՒԱՌԱՅՆ ԱՐԱՐԱՏԱՅ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ոչ՝ ի կարծ ընդոստուցեալ, և ոչ՝ ի
լուր զարթուցեալ, այլ ես ինքնին՝ ի
տեղւոյն պատահեցի և տեսի։

Եզեկ. յԵղանակ Ը։

ԼԵՐԻՆՔ, ԳԵՏՔ ԵՒ ԵՐԿՐԱՇԱՐԺՈՒԹԻՒՆՔ ՅԱՅՍ ՆԱՀԱՆԳ ԵՐԵՒԱՆ

Լերինք

336. Մասիս լեառն Արարատեան կամ Արարատ անուանեալ ի Սուրբ Գիրս և ի մատեանս այլոց ազգաց յանուն Արարատ աշխարհի՝ յորում է. և ըստ տաճկականին Աղր տաղը՝ ծանր, մեծամարմին լեառն. և Ախըռ տաղը՝ յանուն գեղջն Ակոռոյ: Իսկ անունս Մասիս եղաւ յԱմասիա նահապետէ Հայոց յանուն նորին (Խորենացի, ի հատորն Ա, գլ. Բ): Եւ է լեառն բարձրագագաթ անմատչելի ոտից մարդոյ յաղագս դժուարին ելից նորա: Երրորդ մասն բարձրութեան սորա գագաթաւն հանդերձ թաղեալ կայ ընդ թանձր ձեամբ և ի տոթագին աւուրս ամառան:

Ի ձիւնապատ գագաթանէ անտի յարևելից հիւսիսոյ ցԱկոռի գիւղ պատառեալ է մարմին մեծի լերինս: Եւ յայսմ պատառուածի են մեծամեծ ձորք և ծործորք և ի վեր անդր քան զաղբիւր սրբոյն Յակոբայ գտանի վիհ մեծ անհնարին խորութեամբ, զոր ռամիկք կոչեն Սառցատուն: Զայս պատառուածոյ գրէ Խորենացին (ի հատորն Ա, գլուխ 29). «Բայց զնախասացեալ կինն (Աժդահակայ) Անոյշ բնակեցուցանէ (Տիգրան Ա) որդւովք իւրովք յանդորրութեան սպառուածի փլածի լերինն (Մասսեայ), զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն, որք բազմաշրջութեան հրամանաւ Պտղոմեայ ասպարիզօք զբնակութիւնս մարդկան չափեցին»: Զսոյն յիշատակէ և Մխիթար Անեցի ի Ժամանակագրութեանն:

Ստորոտք լերինս ի հիւսիսոյ կողմանէ կարի խոնարհ իջանէ ցդաշտ անդր և ցգետն Երասխ: Մասն արևելակողման գրեա՛թէ են խիճք և աւազք հոսեալք ի վերուստ անտի լերինն ըստ մեծի մասին ի պատառուածէ անտի հանապազորդեանն իջմամբ հեղեղացն, իսկ յայս հիւսիսակողմն են կուտակ կուտակ բլրակք մեծամեծ քարանց՝ սկսեալ յականէ Սեաւ ջրոյն և ի Քարակիթ անուանեալ գեղջէ (Տաշպուռուն) ցԱրհաճի գիւղ և անդր ցաւերակն Արշակաւանի:

Այսր կողման մարմին լերինս ունի առաւել խորաձոր տեղիս և ծործորս բացեալս ի հեղեղաց և ի գետնաշարժութեանց՝ յորոց քարինք անկեալք ի բարձրութեանցն կան այնպէս կուտակեալք. ի կողմանէ աստի առաւել հնարաւոր է ընթացից մարդոյ ի վեր ի լեառն: Իսկ ստորոտքն արևելեան, հարաւային և արևմտեան կցեալք են ընդ երից խոնարհ լերանց աղխելոց ընդ այլ լերինս: Տարածութիւն ստորոտի լերինս դնեն հնգօրեայ ճանապարհ ձիաւոր առն:

Ի բարձրութեան գագաթան սորա անդր քան զսպառուած պատառուածին են երեք ձիւնաթաղ բլրակք: Հիւսիսայինն խոնարհ, իսկ միւս երկուքն արևելեան և արևմտեան սրածայրք և անմատչելիք խսպառ, յորս իսկ նոքին պարոն Բարրօտն և ընկերք իւր չկարացին մատչիլ յամին 1829, յամսեանն սեպտեմբերի, և ի ստորոտի անդ բլրակացն, ուր կարացին ժամանել, կառուցին զփոքրիկ խաչ փայտեայ, յոր պնդեալն էր տախտակ կապարեայ այսու գրուածովք.

«Սոյն սա եղև ապաստարան ամենայն քրիստոնէից ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան ինքնակալի ամենայն Ռուսաց Նիկոլայ Պաւլովիչին քաջայաղթ սպառազէն բազկաւ անպարտելի սպարապետին Պասկևչին Երևանայ. 1829, սեպտեմբերի 17»:

Առաւել ի պատառուածի անդ է հեղեղ՝ հալոցք ձեանց, քան յայլ կողմանս, որ հոսեալ հասարակօրէն ընդ ձորն և անցեալ զհիւսիսային կողմամբ աւազանին աղբեր սրբոյն Յակոբայ և զհարաւային կողմամբ մենաստանին նոյն սրբոյ՝ մտանէ ի գիւղամէջ անդր Ակոռոյ և դարձուցեալ զաղօրիսն իջանէ յոռոգումն արտորէից և այգեստանեայց այնր գեղջ: Եւ երբեմն ի փլուզանիլ և յանկանիլ լեռնանման մեծակուտակ ձեան հիւսոյ ի կատարածէ անտի պատառուածին ընդ զառիվայրն, թնդիւն և արձագանք մեծահնչիւն արձակի՝ մինչև լսելի իսկ լինել ի դաշտամէջ անդր հարուստ հեռաւորութեամբ: Եւ այն յորդահոսան հեղեղ իւրով սրընթացութեամբ երբեմն երբեմն վնաս մեծ գործէր գեղջն և անդաստանացն:

Ի հոսիլ ձեանն ի վայր և ի ցրուիլ մեծամեծ սառուցեալ հատորոցն ելանեն մեծամեծ որդնուկք, այսինքն զիւլալ, զոր խորտակեալ գտանեն ի նմա ամենամաքուր ցուրտ ջուր առողջարար և զովացուցիչ. տայր բերել աստի ի մերում ժամանակի Հիւսէյին խան սարտարն Երևանայ՝ այն ինչ ապահովանայր ի ջերմագին աւուրսն ամառան անդ յԱկոռի յիւրում առանձին պալատան: Այս գիւղ բազմամարդ և այս պալատ խանին և մենաստանն վերոյիշեալ սրբոյ բնակչօք և անասնօք հանդերձ ծածկեցան ընդ քանդուածովք լերինն՝ ընդ ձեամբք, ընդ սառուցօք և ընդ խճովք և մեծամեծ քա-

բամբք հոսելովք ի վերուստ անտի ընդ գառիվայր հեղեղացն ի շարժէն եղելոյ յանցեալ 1840, ի 20 յունիսի:

Ի Նրբաղննին անուանեալ բառարանի Ռուսաց ի տառն Ա և ի բառն Արարատ դնի վասն լերինս թէ՝ է ընդ 39.30 աստիճանօք հիւսիսային լայնութեան և ընդ 42.15 աստիճանօք արևելեան երկայնութեան: Իսկ վասն բարձրութեանն՝ առեալ ի գրուածոց պարոն Բարրոտի, դնէ թէ բարձր է գագաթ լերինս ի վեր քան զմակերևոյթ ծովուն Ովկիանոսի 16,254 ֆուտ փարէժու, որ լինի ըստ Ռուսաց 17,284 ֆուտ: Եւ թէ՝ բարձրութիւնն գագաթան Արարատայ ի վերայ հարթայատակ դաշտի իբր 3 վերստ:

Գրի անդ ևս թէ՝ «Ի ցրուիլն թանձրամած ամպոց ի կատարէ անտի լերինն Արարատայ՝ բարեկրօնքն ի Հայոց անտի անկեալ յերկիր՝ խաչակնքեն և աղօթեն»: Պարոն գրիչն այսմ բարեկրօնութեան Հայոց, որպէս ինձ թուի, չէ՛ ինքնին լեալ ականատես: Եւ գուցէ ընկալեալ իցէ զայն յանխնայ օտարատեաց գրչէ իմեմնէ, քանզի այդօրինակ բարեկրօնութիւն ի Հայս՝ առաւել պարտի լինել յայս նահանգ Արարատայ, յորում իսկ ծնեալ և սնեալ եմ ես ինքն. և ի միջոցս քառասներեքամեայ հասակի իմոյ չի՛ք իմ տեսեալ երբէք զայդ բարեկրօնութիւն ի բնակիչս այսր նահանգի: Ապաքէն պարտ է խոհական մտաց խղճել յայսպիսիս զերևելի ազգէ իբրև զՀայոց:

337. Մասիս փոքր: Ոստ ինչ մեծի լերինն հաւաք սրածայր ի բարձրաւանդակ ստորոտի նորին՝ փոքր ինչ յարևելեան հարաւ. թէպէտ աւազուտ և խճոտ է չորից կողմանց, այլ դիւրագնաց է ի գագաթն: Անդ ի գագաթան ունի տափարակ տեղի՝ ուրանօր գտանին ինչ ինչ կոփածու վէմք դրոշմեալք պարսկական տառիւք ըստ աւանդելոյ ոմանց ականատեսից և չիրիմք ինչ անդէն ամփոփելոց ի վաղուց:

338. Լեառն Մաղարթայ՝ աւելի քան զտասն ժամ հեռաւորութեամբ ուղղակի յարևելս ի մեծ լեռնէ անտի Արարատայ: Եւ է մերձ ի հին Ջուղայ յարևմտից հարաւոյ նորա և յարևելից հարաւոյ աւերակին Խրամ քաղաքի, առ որով է հռչակաւոր մենաստանն յանուն Ստեփաննոսի Նախավկայի ի հիւսիսային ստորոտի նորա՝ կալով ինքեան ի հարաւային եզեր ձորոյն Երասխայ: Եւ այն մենաստան անուանէր ի հնումն յանուն լերինն՝ Մենաստան Մաղարթայ լերին:

339. Լեառն Դարուայ. է յարևելեան ծայրի դաշտին Արարատայ, որ բաժանէ զսահմանս վիճակին Տարեւոյ և գաւառին Գողթան, որոյ ի ծոցաւոր արևմտեան ստորոտի է գիւղաքաղաքն Ագուլիս և ի հարաւային ստորոտի Որդվատ, որ այժմ ասի Օրտուպատ:

Գօտի այսր լերին ի հիւսիսակողմանէ սկսեալ՝ այն է յարևելեան ծայրէ ծովակին Գեղարքունւոյ և յառաջացեալ ուղղակի ընդ հարաւ՝ աւարտի ի մեծ գետն Երասխ առ Որդվատ գիւղիւ: Ի հիւսիսային ծայրէ գօտւոյ այսր լերին երկու այլ ևս գօտիք լերանց յառաջացեալ յարևմուտս յերկուց կողմանց ծովակին Գեղարքունւոյ՝ հարաւայինն գայ աւարտի ի Գառնի հին գիւղաքաղաքին և ի Կոտայս գաւառ, իսկ հիւսիսայինն, որ անուանի այժմ Գիւնէիք (Արեգէմք) աւարտի ի Ծաղկունիս գաւառ և կցի ընդ լերինս Ապարանու, այն է՝ յարևելեան ստորոտս մեծի Արագած լերին: Այս երկու լերինք փակեն յինքեանս զծովակն և զչրջակայ գաւառսն յանուն Գեղարքունւոյ:

340. Լեառն Գեղամայ: Թէպէտ ընդարձակ է այս անուն ի սահմանի աստ Գեղարքունւոյ, այլ այժմ որպէս և նկատի ի հինսն, է այն լեառն բարձր քան զայլսն, որ ի հարաւոյ ունի զմենաստանն Այրիվանաց և զհին գիւղաքաղաքն Գառնի: Յարևմտից զգաւառն Կոտայից (Ղրխբուլաղ) ի հիւսիսոյ զմասն ինչ Ծաղկունեաց (Դարաչիչաք), զ Գաւառ անուանեալ գիւղաքաղաքն բնակեալ այժմ ի գաղթականացն Պայազիտոյ: Իսկ յարևելից՝ ընդ հարաւ զԵղեգնաձոր և ընդ հիւսիս՝ զծովակն և ունի ի բարձրութեան անդ ընդարձակ վայրս արօտից և զլճակս՝ զժողովս ջուրց: Ի տեղիս տեղիս այսր բարձրութեան գտանին ձիւնք և յամառան:

341. Լեառն Շամիրամայ: Ո՛չ այնքան լեառն, որքան մեծ բլրակ, և է ի Կոտայս գաւառի յարևմտեան ստորոտի լերինն Գեղամայ: Յայս անուն անուանեցաւ ըստ հին աւանդութեանն, քանզի ի գալ տիկնոջն Շամիրամայ պատերազմաւ ի վերայ Գեղեցկին Արայի Հայկազնոյ՝ զստորոտի այսր բլրակի բանակեցաւ նա զօրքն Ասորւոց: Եւ երևի ստոյգ աւանդութիւն, զի մերձ յայս բլրակ ի դաշտի անդ Կոտայից գտանին գիւղօրայքն՝ տեղի անկմանն Արայի, Արզնի և Արամուս, այն է Արամօնս և ըստ ոմանց Արախոյզ:

342. Լեառն Արայի է յարևմտից լերին Շամիրամայ հանդիպահայեաց իրերաց, յորոց միջոցի է գաւառն Կոտայից և արևելեան մասն գաւառին Նգայ: Եւ սա ևս ըստ վերնոյն համարի ոստ ինչ մեծի լերինն Արագածու յարևելեան ստորոտի նորա. ի հարաւոյ և յարևելից սորա է ընդարձակ դաշտ մինչև ցգետն Հրազդան: Անուանի այս լեառն ըստ այլազգականին Ղարնը Եառըղ, զի ունի ի գագաթանէ ցստորոտն պատառուած ի հարաւոյ կողմանէ: Յայսմ դաշտի և յստորոտի լեռնաձև ոստոյս այսորիկ ասեն բնակեալ Գեղեցկին

Արայի զօրօք իւրովք ընդդէմ ճակատու զօրացն Շամիրամայ, յոյր անուն կոչի ցարդ լեառն Արայի*:*

343. Արագած լեառն ի հիւսիսային եզեր դաշտին Արարատայ, որ բաժանէ զսահմանս այժմեան Արարատայ և Շիրակ գաւառի, ունելով զայն ի հիւսիսոյ կողմանէ. յարևմտից ունի զԱխուրեան գետ և զԱնի քաղաք: Ըստ բարձրութեանն է կարի լայնանիստ՝ երկայնեալ ստորոտովք, մեծ մասամբ ընդ արևելս և ընդ արևմուտս: Ի գագաթան այսր լերին են սեպացեալ ոստք չորք միմեանց հանդիպահայեաց, որոց միջոց գոլով վայր գոգաւոր ունի զժողով ջուրց: Շրջապատ այսր լճի և ծմակային առապարք սեպացեալ ոստոցն են ձիւնաթաղ և յամարայնի. ի գագաթանէ արևելեան ոստոյ յարևելեան կողմանէ ծորի ծծումբ ամենամաքուր և սառուցեալ կախի ի բարձրութենէ անտի՝ յորմէ երբեմն ի վայր ընկենուն ռմբովք հրացանից:

Ի բարձրութեան անդ յստորոտի արևմտեան ոստոյն է միւս լիճ ընդարձակ՝ ժողովեալ յաղբերց անտի ոստոյն և ի հալոցաց ձեանցն. ի լճէ աստի որպէս ի հնումն, նոյնպէս և ի մերում ժամանակի ետ հանել՝ կամ լաւ ևս ասել, նորոգել զառուակ ջրոյն Հիւսէյին խան սարտարն Երևանայ վասն անդաստանաց գեղջն Բիւրականայ և այլոց: Յերկուց լճաց աստի են բովանդակ ջրաբաշխութիւնք լերինս ի կողմանս իւր չորեսին, և ակունքն իսկ մեծի շամբին Սեաւ ջրոյ (Ղարասու), որ գետակնացեալ անկանի յԵրասխ:

Այս լեառն ըստ ջրաէտութեանն է և խոտաւէտ և ծաղկաբեր և ունի մեղր պատուական յինչ ինչ գիւղօրայս մերձ ի Կարբի: Ուստի և քաղաքանայ յամառան ողջոյն բազմամարդութեամբք վրանաբնակաց՝ քրթաց, տաճկաց և սակաւաթիւ հայոց, որք են ամենեքեան խաշնադարմանք և տավարածք: Զանուանադրութենէ լերինս չէ՛ պարտ երկարել, զի քաջայայտ է ամենեցուն թէ՝ ընկալաւ զայն յանուանէ Արմենակայ նահապետի որդւոյ Հայկայ:

344. Բարդող լեառն: Ըստ այլազգականին՝ Թաքալթու: Անկանի ի Ճակատ գաւառ ի հարաւային եզեր Երասխայ, յարևմտեան սահմանի մեծի դաշտիս այսորիկ: Ունի յարևմտից զԿաղզուան գիւղաքաղաք և ի հարաւոյ զՀովասուն բարձրաւանդակ վայրսն՝ Սինակ կոչեցեալ ի վրանաբնակ քրթաց: Եւ յարևելեան ստորոտի իւրում զաղահանսն և զԿողբ գիւղ: Գոտի այսր Բարդող լերին յառաջացեալ դէպ յարևելս զհարաւ կողմամբ այսր դաշտի միանայ ընդ մեծի լերին Մասսեայ: Ի միութեան աստ է անցք ճանապարհին, որ ընդ Երևան և ընդ Պայազիտ:

345. Լեառն Բամբակի է ի միութեան անդ յարևմտակողման ճանապարհին Պայազիտոյ. կոչեցաւ յայս անուն ի բնակչացս, քանզի երկրագործք սերմանեն զունդ բամբակի մինչև է սպառեալ ձիւն ի գագաթանէ սորին, այլ ի սպառիլն ո՛չ ևս սերմանեն, զի ո՛չ դայ ի հասունութիւն:

346. Այսոքիւք լերամբք և աղխախեալ գօտեօք նոցին ձևացեալ է այս դաշտ Արարատեան երկարաձիգ բոլորակ: Եւ բաժանի ի վեց մասունս. դաշտն Սուրմարւոյ ի միջոցի Երասխայ, Բարդող լերին, Բամբակի լերին, մեծին Մասսեայ և Սեաւ ջրոյն Ակռոյ: Դաշտն Սարտարապատու՝ այն է Արմաւիրայ հնագոյն քաղաքի Հայոց: Եւ է ի միջոցի Երասխայ ունելով զնա ի հարաւոյ Ախուրեան գետոյ, մեծի լերին Արագածու և մեծի շամբին Սեաւ ջրոյ: Դաշտն Վաղարշապատու է ի միջոցի յիշեալ մեծի շամբին Արագած լերին և Արայի, Հրազդան գետոյն և Երասխայ: Դաշտն Դունայ է ի միջոցի Հրազդան գետոյ, լերին Գեղամայ, Շարուրայ և Երասխայ: Դաշտն Շարուրայ բաժանեալ ի դաշտէն Դունայ խիտառխիտ բլրակօք երկայնեալ ի հիւսիսոյ ի լերանց Եղեգնաձորոյ ընդ հարաւ ցգետն Երասխ: Եւ այս աղխախ բլրակաց կոչի ի տաճկաց Դահնա և է ի միջոցի Երասխայ, լերանցն Եղեգնաձորոյ և սահմանին Նախիջևանայ և է փոքր քան զայլսն: Իսկ աստի անդր ընդ յարևելս է դաշտ կամ սահման Նախիջևանայ ընդարձակօրէն առեալ է ի միջոցի Երասխայ, լերանցն Գարուայ և Եղեգնաձորոյ, որ պարունակէ յինքեան և զսահմանս Երնջակայ և Գողթան:

Գետք

347. Երասխ, որ սկզբնաւորի ի լերանցն Կարնոյ (Էրզրումայ) և գայ մտանէ յայս դաշտ յարևմտից առ աւերակօք Երուանդաշատ քաղաքի, որ յստորոտի անդ Բարդող լերին և ընթացեալ ի ձորամիջի և անցեալ ընդ Սուրմարի աւանաւ ցԵրուանդակերտ՝ ելանէ ի դաշտն յընդարձակ ընթացս, զոր ընդ մէջ հատեալ, զմեծ մասն թողլով ի հիւսիսակողմն՝ գնայ մինչև ցՆախիջևան և ցմենաստանն Աստապատու և անդ ևս մտեալ ի խորաձորս՝ ելանէ անդրէն ի դաշտ զառաջեաւ Հին Ջուղայու մինչև ցսահմանս Որդվատ գեղջ: Ապա ևս մտանէ ի խորաձորս և անցեալ այնպէս ընդ սահմանսն արևելեան Սիւնեաց, ի վերջոյ ելեալ յընդարձակ դաշտ՝ գնայ, միանայ ընդ Կուր գետ և անկանի ի ծովն Կասպից:

Այս գետ բաշխէ զջուր յիւրմէ մասնաւորապէս ի փոքրիկ գաւառն Սահաթլու կոչեցեալ այժմ, ի դաշտավայրսն Սուրմարւոյ և Սարտարապատու, որոց բովանդակ գիւղօրայք վասն անդաստանաց իւրեանց առնուն որոշ որոշ առուօք զջուրս:

Հինգ կամրջատեղիք են ի վերայ գետոյս ի սահմանի դաշտիս Արարատայ շինեալք ի հնումն քարամբք և կրովք, այլ անցեալ բազում դարուց ի վերայ՝ քայքայեալ են իսպառ թէ ի յորձանաց գետոյն և թէ յայլ պատճառաց. Ա՝ կամուրջն Երուանդաշատ քաղաքի, Բ՝ Երուանդակերտի, Գ՝ Արտաշատայ, Դ՝ Նախիջևանայ և Ե՝ Հին Ջուղայու, որոց հազիւ նշմարանք հետոցն երևին:

Գետք, որք անկանին յԵրասխ ի հիւսիսոյ կողմանէ:

348. Ախուրեան գետ սկզբնաւորի յերկուց ճիւղից, մին յանտառէն Բասենոյ անցեալ ընդ քաղաքն Կարուց՝ գայ յարևմտից, և միւսն ի հիւսիսոյ կողմանէ ի լճէն անուանեալ Գարւոյ, անցեալ յԱղէքսանդրապոլ քաղաք (Գիւմրի) մերձ նմին յարևմտից նորա և այնպէս յառաջացեալ գան, միանան մերձ ի գիւղորայսն Փիրվալու յարևելից և Աստախան յարևմտից և ուղղեալ զընթացս ուղղակի ընդ հարաւ՝ անցանէ ի ձորամիջի ընդ Անի քաղաք, ընդ ամրոցն Բագարան և գայ խառնի յԵրասխ զառաջեաւ Երուանդաշատի:

349. Մեծամօրի գետ: Ջուր մեծի շամբին ժողովեալ ի բազմակն աղբերց հեռի յէջմիածնէ յարևմտից նորա միջոցաւ երկուց ժամուց: Այս գետ յետ բաշխելոյ յիւրմէ զմասնաւոր ջուր քանի ինչ գիւղօրէից, ընթանայ ընդ յարևելս հարաւոյ Էջմիածնի և յինքն ընկալեալ զՔասաղ գետ՝ անկանի յԵրասխ: Կամուրջ Մեծամօրի կոչեցեալ ի գիրս, գտանի ի վերայ գետոյս յստորև քան զխառնուրդն ընդ Քասաղ: Յայս շամբ անկանի խոզակերպեալ մեծ արքայն Տրդատ զկնի նահատակելոյն զկուսանսն:

350. Քասաղ գետ: Սա սկզբնաւորի յԱրագած լեռնէ յստորոտէ նորա արևելեան հիւսիսոյ ի յորդաբուխ աղբերց առ Պաշ Ապարան կոչեցեալ գիւղիւ: Եւ ի մերձակայից ևս ընկալեալ զջուրս մանունս ի լեռնոտաց անտի Ապարանու՝ ընթանայ փոքր ինչ ընդ յարևելս և ապա ընդարձակ պտոյտ առեալ՝ շրջի ընդ հարաւ կոյս և մտեալ ի խորաձորս ընթանայ այնպէս ցվախճան անդաստանացն Օշականու և ելանէ ի դաշտ: Եւ ընկալեալ յինքն զջուրսն Փարպւոյ և Անբերդայ՝ անցանէ յարևմտից Էջմիածնի և խոտորեալ յարևելեան հարաւ՝ խառնի ի Մեծամօրի գետ և անկանի յԵրասխ:

Բազում գիւղօրայք են առ գետովս. ուստի աւելի քան զերկուս ամիսս յամառնային եղանակի ո՛չ գտանի ջուր յընթացս գետոյն յստորև քան զԷջմիածին: Բայց ի գարնան բազմիցս զայրացեալ յորդութեամբ՝ քակէ զջրաղացսն Աշտարակ և Օշական գիւղից և ողողէ զանդաստանս Էջմիածնի և այլոց, որպէս յամին 1834, հիմնովին խլեալ անհետ արար զեկեղեցի անապատին Յօհանավանաց ի ձորամիջի անդ:

Ջուր սորա կարի առողջարար է յընթացսն իւր մինչև ցմենաստանն Յօհանավանաց: Այլ անդ ի ձորամիջի բղխմունք աղբերց վատ ջուրց վնասեն մաքրութեան նորին, ուստի և մինչ ցանդր գտանին յոլով կարմրախայտ ձկունք, իսկ յստորև այլատեսակք:

351. Հրազդան գետ ունի զերկուս ճիւղս՝ յորոց սկզբնաւորի, մին է ի ձորոյ անտի պղնձահանից յարևմտակողման և միւսն յարևելից՝ յարևմտեան ծայրէ ծովակին Գեղարքունւոյ, որք յառաջացեալ գան, միանան մերձ յՌընտամալ գիւղ Ծաղկունեաց. և անտի ուղղակի ընդ հարաւ՝ յարևմտից եկեղեցեացն Կեչառուաց ընդ զառիվայր ի խորաձորն ընթացեալ՝ գայ, անցանէ ընդ Երևան քաղաք յարևմտից նորա. և մերձ ի Կեօքքիւմբէթ ելանէ ի դաշտ և այնպէս գնայ անկանի յԵրասխ: Պատուական ձկունք են ի սմա՝ կարմրախայտ, կապիտ ախորժաճաշակ, սարիկեօզ, մուրզի և գոճի: Բոլորովին արդիւնաբեր է այս գետ և է մեծ քան զՔասաղ: Ուռդանէ զայգիս, զպարտէզս և զծառաստանս Երևանայ և զանդաստանս գիւղօրէիցն, որք յստորև քան զԵրևան:

352. Ազատ գետ: Է ջուր Գառնւոյ, որ սկզբնաւորի ի լեռնէն Գեղամայ մերձ ի մենաստանն Այրիվանաց և ընդունելով յինքն զմեծամեծ աղբերակունս ի խորաձոր անդր մերձ ի Գառնի՝ գնայ, ելանէ ի դաշտ մօտ ի Դուին յարևմտից նորա, և այնպէս ընթացեալ անկանի յԵրասխ: Յամառնային եղանակի ո՛չ գտանի և յընթացս սորա ջուր յստորև քան զառուագլուխսն գիւղօրէից սակս յոլովութեան անդաստանացն. ջուր սորա առաւել առողջարար է քան Քասաղ և Հրազդան գետոց և ունի զկարմրախայտ ձկունս:

353. Գետ Շարուրայ. թէ յառաջն զի՞նչ անուանակոչութիւն այսմ՝ չի՛ք ինչ յայտնութիւն ի ծանօթ մատենագիրս, այլ այժմ վերաձայնի առհասարակ ի բնակչացս Արփայ չայը յանուն Արփայ գեղջն, որ գտանի յԵղեգնաձոր (Վայոց ձոր) ի հարաւային եզեր այսր գետոյ, հեռաւորութեամբ ի հիւսիսային ծայրէ դաշտին Շարուրայ ի ձորամէջ անդր իբր ժամս երկուս, յորոյ վերայ տեսանի մերձ ի գիւղն և աւերեալ տեղի քարաշէն կամրջոյ, որ թերևս իցէ

չինեալն ի Սարգիս եպիսկոպոսէ Նորավանից հրամանաւ Տարսայիճ իշխանին Սիւնեաց:

Այս գետ ժողովեալ յարևմտեան լերանց Եղեգնաձորոյ և ընթացեալ յարևմուտս կոյս գայ մինչև ցԱրփայ գիւղ և փոքր ինչ ևս այնպէս յառաջացեալ՝ ապա ուղղի ընդ հարաւ և մտեալ ի դաշտ Շարուրայ մերձ առ Նորաշէն գիւղ՝ բաժանի մասամբ արուեստաւորեալ առուակօք և արբուցանէ զբովանդակ անդաստանս գիւղօրէից դաշտին Շարուրայ և անցեալ ընդ մէջ այնր անկանի յԵրասխ: Կարի զայրանայ այս գետ ի գարնան և բազմիցս ո՛չ տայ անցս անցորդացն յորդութեամբ և սրընթացութեամբ իւրով, թէև ի տեղիս տեղիս յընդարձակս տարածի. գտանին և ի սմա կարմրախայտ ձկունք:

354. Ջուր Նախիջևանայ ժողովեալ ի լերանց Եղեգնաձորոյ և անցեալ ընդ Ջահուկ՝ գնայ ի Նախիջևան և արբուցանէ զանդաստանսն և զայգիս և անկանի յԵրասխ:

355. Գետ Երնջակայ նոյնպէս ժողովեալ յարևելեան սահմանաց Եղեգնաձորոյ և անցեալ ընդ Երնջակ և ընդ մենաստանն Սրբոյ Կարապետի յարևելից նորա՝ բաշխի ի գիւղօրայսն. և ընթացք իւր յառաջացեալ անկանի յԵրասխ մերձ յԱստապատ:

356. Ջուր Ազատն Գիրանայ, որ նոյնպէս յարևելեան ծայրէ Եղեգնաձորոյ ելեալ և անցեալ ընդ Ազատն Գիրան և բաշխեալ ի գիւղորայսն՝ յանգի հեղեղատ նորա յԵրասխ յստորև քան զՀին Ջուղայ:

357. Բաց յայսոցիկ վերոյիշեալ ջուրցս, որք ի հիւսիսակողմն Երասխայ՝ սկսեալ յարևմտեան ծայրէ դաշտին աւարտեցաւ աստ յարևելս ցԳողթն գաւառ, են և այլ ջուրք մանունք թէ ի միջոցս այսոցիկ գետոց և թէ յալևայլ կողմանս նոյն նշանակեալ լերանցն, որպիսի են ջուրքն Մաստարայ գիւղի, Թալնայ, Արուճայ, Կուաշայ, Վժանայ, Անբերդայ, Փարպւոյ, Կարբւոյ և Շիրաղալայի գեղջ Ապարանայ: Այսոքիկ յԱրագած լեռնէ անտի. ջուրքն Եղիվարդայ, Կեչառուաց, Կոտայից (Ղրխպուլաղ), Վէտէի կամ Վէթու, Սատարակայ, Խօքայ և աւանին Ագուլիսայ և քսան և չորք ջուրքն, որք բղխեալ ի շրջակայ լերանց ծովակին Գեղարքունւոյ անկանին յայն և բազմօք նպաստեն անդաստանաց և աղօրեաց բնակչացն:

Իսկ ի հարաւային կողմանէ մեծի գետոյն Երասխայ սկսեալ յարևմտից անտի՝ ջուրքն Կողբայ, գեղջն Ջնչաւատից, Մէրկէկուլապայ, Որկովու (Օրկով), Ակոռոյ և գետն Բ Մեծամօրի՝ այն է Եղեգնուտ Սեաւ ջուրն Ակոռոյ. առ որում երևի անյայտ լինելն ի խորափիտս ինչ երիվարաւ իւրով Արտաւազդ Բ որդի Արտաշիսի Բ

պատճառաւ որսոյ. գոն թէպէտ յայսկոյս և այլ հեղեղատ ջուրց, այլ փութով ցամաքին ի բառնալ ձեանցն ի լերանց անտի:

Երկրաշարժութիւնք

358. Ա. Զորմէ գրէ Խորենացին (Ա հատոր, գլուխ 29), որով ըստ նկատելոյ բացաւ այն խորաձոր պատառուած յարևելեան ճակատու մեծի լերին Մասսեայ, յորմէ անտարակոյս երևի լինել և այլ մեծամեծ քանդմանց, աւերանաց և կոտորուածոց բնակչաց ընդ փլատակօք, որք ստուգին ի յետագայ ճառելեաց աստի: Յիշատակէ զսմանէ և Մխիթար Անեցի ի Ժամանակագրութեանն:

359. Բ. Շարժն, որ եղև առաւելապէս յԵղեգից ձոր, յորմէ դիպուածոյ փոխարկեալ անուան գաւառին կոչի Վայոյ ձոր ևս: Ոմանք դնեն զայս շարժ ի պատճառս մահուան ԻԲ եպիսկոպոսի Սիւնեաց Ստեփաննոսի, որ դիպաւ ի սկզբան անդ ութներորդ դարու:

360. Գ. Եղև շարժ սաստիկ ի թուականին Հայոց ՅԺԲ (863), ըստ Ասողկայ. իսկ ըստ պէսպէս հին օրինակաց Սամուէլի միով ամաւ յառաջ. և աւերեաց զբազում չէնս քաղաքաց, գիւղորէից, եկեղեցեաց և զբազմութիւն մարդկան թաղեաց ընդ աւերածովքն՝ առաւել ի Դուին քաղաքի ըստ Յովհաննու կաթուղիկոսի: Այլ Մխիթար Անեցի դնէ զթիւ վտանգեալ մեռելոցն տասներկու հազար (12000):

361. Դ. Շարժ կարի սաստկագոյն քան զայլսն դիպեցաւ յելս անդ Թ դարու, ի գիշերի միում և գլխովին յեղծումն դարձոյց զԴուին քաղաք փլուզանելով յական թօթափել՝ ըստ Յովհաննու կաթուղիկոսի, զպարիսպն հանդերձ բրգամբքն, զտունս, զեկեղեցիսն և զկաթուղիկոսարանն. և զանհամար բազմութիւն մարդկան հեղձամահ արար ընդ փլատակօք, զորոց զթիւ գրեն առաւել քան զեօթանասուն հազար ոգիս. դիպեցաւ այս շարժ ըստ Զամչեան Միքայէլի յամի 894:

362. Ե. Յամի 1319 և ի թուին Հայոց ՉԿԸ, եղև շարժ սաստիկ յաշխարհի աստ Արարատայ և ի Սիւնիս, յորմէ քանի աւանք բնակչօք հանդերձ ընկղմեցան ի Գեղարքունի. կործանեցաւ և մենաստանն Թադէոսի առաքելոյ տաճարաւն հանդերձ, որ յԱրտազ գաւառի, յորում մեռան և ոգիք 75. իսկ աւերութիւն քաղաքին Անւոյ մեծապէս:

363. Զ. Երկրաշարժութիւնն ի Սիւնիս յամի 1622, զոր պատմէ Առաքել Դավրիժեցի ի 21 և ի 22 գլուխսն պատմութեան իւրում:

*364. Է. Շարժ դիպեալ յամի 1679, ի թուին Հայոց ՌՃԻԸ, ի 4 աւուր ամսեան յունիսի, յեօթներորդ ժամու աւուրն՝ աւերեաց զբաղում տեղիս. կործանեաց զամրոցն Երևանայ և զկամուրջն գլխովին, որ առ նովաւ ի վերայ Հրազդան գետոյ, կործանեաց զեկեղեցիս և մզկիթս և զբազում տունս քաղաքին և գիւղօրէից. զեկեղեցիս մենաստանացն՝ Աղջոց վանաց, Այրիվանաց, Հաւուց Թառայ, Խորվիրապայն, զեկեղեցին Ջրվէժ գեղջ, զՋագավանից, զ Նորագաւթին, զ Նորագեղջն, զ Նորքայն, զ Գեամրէզ գեղջ, զսարաւոյթն Տրդատայ, որ ի Գառնի (թերևս զմնացորդս յառաջին աւերանացն): Զայս ամենայն յանուանէ նշանակէ Զաքարիա Սարկաւագ Յօհանավանաց (Բ հատոր, 51 գլուխ) և յարէ ապա. «Այլ ի հայրենի գիւղն իմ ի Քանաքեռ թուեցին զմեռեալսն 1228»: Փլան և չինուածք մենաստանին Յօհանավանաց, խախտեցաւ և եկեղեցին. և եղեն քանդմունք ո՛չ սակաւ յայլ և այլ կողմանս և վտանկ մարդկան, զորոց զթիւ, ասէ Զաքարիա Սարկաւագ, չկարողացայ հաւաքել: Եւ տևեաց այս շարժ գրեա թէ յամենայն աւուր մինչև ցհոկտեմբեր ամիս: Գրեն զայսմանէ երկարօրէն և յիշատակարանն գրչագիր Յայսմաւուրի միոյ, որ ի գրանոց Աթոռոյս, յորում և ասէ. «Ի յաւագ լեառն Մասիսէ մինչև ի բլուրն Շամիրամայ իսպառ քակեաց և մեծ աւերումն եղև». և առանձին գրուածն ի վախճանի ատեան Ժամագրքի իրիք, ըստ այսմ. «Պատառեցան վէմք և լերինք և ի պատառմանէ վիմացն բոց ծիրանացեալ ելանէր յօդս, բարձրացաւ մառախուղն և ծածկեաց զերկիր ի գաւառէն Գառնւոյ մինչև ցլեառն Արագած հանդերձ լերամբք և դաշտօք... Եւ դարձեալ շարժէր շարժն և յիններորդումն աւուր ի հինգշաբաթւոջ... և զոր ինչ խախտեալ մնացեալ էր յառաջին շարժէն, սա իսպառ կորոյս և տապալեաց»: Այս գրուած ասէ, տևեաց շարժն մինչև ի լրութիւն տարւոյն և այլ աւելի:

365. Ը. Յամի 1827, յամսեանն հոկտեմբերի եղև շարժ ոչ այնքան սաստիկ: Անկան միայն խախտեալ եկեղեցի մենաստանին Ուշւոյ, որ յանուն սրբոյն Սարգսի, կաթուղիկէն մեծի եկեղեցւոյն Կեչառուաց և յինչ ինչ տեղիս մասնաւոր հնացեալ չէնք:

366. Թ. Ի 1840 ամի, յամսեանն յունիսի ի 20, յեօթն և կէս ժամու աւուրն ըստ եւրոպացւոց՝ մերձ ի մուտս արևու, շարժեցաւ երկիր լերամբք և դաշտօք հանդերձ և տևեաց այս շարժ միջոց առ միջոց գրեա թէ ցամբողջ ամ: Այլ կարի զգալիքն դղրդմամբ շինուածոցն՝ զկնի առաջնոյն. և ի 14 յուլիսի, ի մէջ գիշերին՝ յորում լուսանայր օրն կիւրակի, երիցս միջոց առ միջոց. ի 28 սեպտեմբերի նոյնպէս ի մէջ գիշերի յառաջին ժամուն ըստ եւրոպացւոց. այլ որ

ինչ վնասք ներգործեցան՝ էին յառաջին նուագի սաստկութեանն և մեծապէս ի լեառն Մասիս եթող զհետս աւերանաց. և ըստ պատմելոյ ականատես ակոռեցւոց՝ յառաջին նուագի անդ ի զնին կացելոց, այն լեառն ահագին իբրև ծառ ինչ բաղխեալ ի սաստիկ հողմոյ դողայր և ահագնագոչ դղրդմունս պակուցանողս հնչեցուցանէր: Եւ ի սաստկագին երերմանէ աստի, ի գագաթանէ մեծի լերինն, ուր ծայրացեալ է մեծ պատառուածն և ի հիւսիսոյ կողմանէ նորին մեծամարմին հատուած ինչ՝ կոչեցեալ ի բնակչացն Կարմիր քարափ, ոստեալ ի լեռնէ անտի հանդերձ բազմամեայ ամենաթանձր հիւսմամբք ձեանց և այլովք քանդուածովք քարանց, ձեանց սառուցից ամենասաստիկ շառաչմամբ անկանի ի Սառցատուն կոչեցեալ մեծ գոգաւոր փոսորակն. և ի նմա ժողովեալ կիտուածովքն հանդերձ իջանէ ընդ զառիվայր ընդ ձորն հեղեղատի մեծի պատառուածին իբրև ահագնատեսիլ թխպագին կուտակ ինչ ամպոյ. և այն ինչ բովանդակ բնակիչք գեղջն Ակոռոյ ի սաստկութենէ շարժին և յաւերանաց տանցն զանձինս իւրեանց՝ ընտանեաց և որդւոց, ճողոպրել փութային արտաքոյ քան զչէնն ի բարձրաւանդակ տեղիս և սոսկացեալ ևս կային ընդ իջումն այնպիսի թխպագին և որոտալից ամպոյ ընդ զառիվայրն յինքեանց վերայ և չև ևս զերծեալ ոմանց յապահովս, այն փլուածք ամենարագ իջմամբ ծածկեալ զմենաստան Սրբոյն Յակոբայ և զեկեղեցին բնակչօք հանդերձ՝ էջ, կալաւ և ծածկեաց զբովանդակ գիւղն Ակոռի և զբնակիչսն՝ բաց յոմանց եղելոց արտաքոյ շինին յանդաստանսն և ի կարի սակաւ զերծելոցն ի գեղջէն. վերջին ծայր այսր փլածի անցեալ ընդ գիւղն՝ եհաս մինչև ցվերջին ստորոտս մեծի լերին ցՄեծամօրի գետ և ցԵրասխ:

Շարժն յառաջին նուագի կարի յընդարձակս տարածեցաւ. ընդ յարևելս՝ ի Սիւնիս մինչև ի վերջին արևելեան սահմանս վիճակին Տաթևու, ընդ հիւսիս՝ մինչև ի Տփխիս քաղաք, ընդ հարաւ՝ մինչև ի Դարունս (Պայազիտ) և ի Մակու և անդր ևս. ընդ յարևմուտս՝ մինչև յարևմտեան ծայր սահմանին Երասխաձորոյ: Այլ առ ի մի ըստ միոջէ նշանակել զվնասսն և զներգործութիւնսն նորին, դիցուք աստէն զթարգմանութիւն գրուածոցն յօրագրութիւնս Ս. Պետերբուրգեան՝ զոր ի յայտ էած ռուս աստիճանաւորն մայեօր Վասկաբօյնիկովն ի կարգէ լեռնային ինժիներաց՝ առաքեալ ի սպարապետէն Կովկասու զեներալ օտինֆանտերի Գոլովինէ յիսկական տեղին առ ի քննել զաւերութիւնսն պատճառեալս ի շարժմանէ աստի:

«Այս շարժումն պատահեցաւ ի 20 յունիսի, ի վախճանի եօթներորդում ժամու, որ զկնի ճաշու. ստորերկրեայ ուժգին որոտմունք

և թնդմունք հանդերձ դղրդմամբք և երերմամբք երկրի տևեցին մինչ ցերկուս բոպէս. առաջին չորեքին որոտմունքն կարի սաստիկք՝ հանդերձ ստորերկրեայ հնչմամբ՝ երթային յԱրարատ լեռնէն յարևելս կոյս և յարևելս հիւսիսոյ, որք ի տեղիս տեղիս թողին զհետս ամենակործան աւերուածեանց. մանաւանդ ի գաւառս Երևանայ և Նախիջևանայ, ի հարթայատակ եզերս Երասխայ և Մեծամօրի, սկսեալ յականց վերջին գետոյս ի ստորոտիցն Արարատայ մինչ ցխառնուրդս Ախուրեան գետոյ յԵրասխ. կազմեցան քանի մի կարգք պատառուածոց ուղղակի ըստ ընթացից այսոցիկ գետոց: Պատառուածքս այսոքիկ յերերմանէ անտի երկրի ի տեղիս տեղիս բացան մինչ ցերկու ձողաչափ (սաժէն) լայնութեամբ, և ապա միացան վերստին: Ի նոցունց և ի ճեղքուածոցս պատահելոց յերբեմնական արտաթորմանց հողոյ երկրի, ելին մեծամեծ շատրուանք ընթացիկ ջրոյ, որք ցնդէին ի վեր կոյս զյոլով գետային աւազս և գայուս ի բարձրութիւն երկու ձողոյ: Ջուրն Երասխայ ի տեղիս տեղիս բարձրացեալ և ծածկեալ ունելով զեզերս իւր, դիզացեալ ի վեր կոյս՝ երևէր բնական յատակ խորութեանն իբրև ծոց... և ի վայրկեանսն ահեղագոյն շարժման՝ խորագոյն տեղին Երասխայ մնայր ամենևին չոր, կամ լնոյր խոխոջմամբ և կարկաջմամբ զօրէն եռացեալ ջուրց բարձր քան զսովորական հորիզոնն: Նաև յելս անդ օգոստոսի ի յատակին Երասխայ երևէին բազում պատառուածք և այլ մեծամեծ վիհք, յորոց խաղային ջուրք:

Աստանօր քաջայայտ է ինքնին, զի այսպիսի ահեղ սասանութիւն պատճառելոց էր զմեծ աւերմունս և քանդմունս. ի պարսկական քաղաքին Մակու կործանեցաւ մեծ մասն շինուածոց. ի Պայազիտ՝ անկան յոլով տունք, դղեակն և մեծակառոյց ապարան փաշայի տեղւոյն, բայց շատ քան զամենեսին հարուածեցան բնակիչք նահանգին Հայոց, ուրանօր ի փլուածոց գագաթան մեծին Արարատայ ի հիւսանց անտի սառուցից և յանհեթեթ կոտորոց քարանց ստորասուզեալ կորեան մենաստանն սրբոյն Յակոբայ և աւանն Ակոռի, յորում գտանէին աւելի քան զհազար բնակիչս: Ի բաժնին Շարուրայ հիմն ի վեր տապալեցան 3135 տուն բնակութեանց և 75 աղօրիք: Ի գաւառին Նախիջևանայ կործանեցան 2 եկեղեցիք Հայոց, 5 մզկիթք, 776 տունք, 25 կրպակք: Ի բաժնին Օրտուպատայ (Որդվատ) 476 տունք: Միանգամայն թիւ աւերելոցն ի սահմանս մեր ի բաց բարձեալ զխախտեալսն, որք յետոյ գուցէ ըստ առաջնոյն կործանեսցին, են 6119 տունք, 92 ջրաղացք, 3 եկեղեցիք, 7 մզկիթք և 25 կրպակք: Թիւ մարդկան կորուսելոցն ի ժամ այսպիսի եղկելի անցից չէ այն-

քան մեծ, որպէս պարտն էր, քանզի այն պատահեցաւ յերեկոյի, ըստ սովորութեան իւրեանց շրջելով ընդ օդ զովարար՝ գտանէին արտաքոյ քան զչէնս: Ի գաւառէն Շարուրայ կորեան արք 33 և ի Նախիջևանայ՝ 16, ի Բիչանակ կոչեցեալ տեղւոջն՝ 5, որոց գումարն է 54 արք: Եւս և 12 անձինք վնասեցան սաստկապէս. սակայն երկրաշարժութիւնն այսու ոչ բաւականացաւ ի բազում տեղիս խցան աղբերակունք և ուրեք ուրեք յաւելան ջուրք: Ի մասնին Շարուրայ յեզերս Երասխայ ի ժամ շարժմանն բացան ի ժայռաւոր տեղիս խոռոջք մեծամեծք և փլուածոյք, ընդ որս կորեան տունկք ինչ և սերմնաւոր անդաստանք. իսկ այլ անդաստանք և սիգավայր դաշտք այնպէս եղծեալ ապականեցան, մինչև ոչ լինել հնար բնակչացն ընդ երկար հերկելոյ զայնս:

Ի պատահիլն առաջին ընդ գետնեայ դղրդմանն... բնակիչք Ղարահասանլու գեղջ այն ինչ ընդարմացեալ լինէին ի սարսափելի կայծակնընկեցութեանց, որ իջանէր ի շրջանիստ լերանցն, չև ևս կորզեալ զանձինս յանհեթեթ կոտորոց անտի քարանց, որք մահասպառ ի վերուստ յերկիր յարձակէին, պատահեցաւ նոցա միւս ևս ահընկէց ստորերկրեայ որոտմունք. ամենայն հողակերտ շինուածք նոցա գոչմամբ և ճայթմամբ դարձան յաւեր և ծածկեցան յաչաց նոցա ի թանձրագոյն փոշիակազմ ամպս. ի սոյն իսկ միջոցի լայնաբերան հերձեալ երկրի՝ ուժգին վիժմամբ և թնդմամբ ի վեր մղէր ի խորոց անտի զվտակս յորդահոս ջուրց, զկոյտս աւազոց և զյոլով ժայռս: Այսու սրտաբեկեալ բնակչաց տեղւոյն՝ ճիչ բարձեալ և ի դուրս վազեալ՝ ճեպէին կորզել զանձինս ի մերձակայ բարձրանիստ դաշտս, սակայն և անդանօր իսկ գոգ յիւրաքանչիւր քայլափոխս հանդիպէին այսպիսի երկեղուկ տեսարանաց, վասն զի ընդ ամենայն տեղիս ոչ այլ ինչ էր տեսանել, եթէ ոչ զհիմն ի վեր կործանումն տանց, զխորաբաց ծոցս երկրի, զբղխումն յորդագնաց ջուրց՝ որք յանդիման աչաց նոցա՝ էր որ կործանէին զմնացեալ մասունս որմոց տանց և էր որ ծովացեալ հեղձուցանէին զմարգագետինս: Եւ յայսմ ամենայնէ կարի շուարեալ և ապշեալ գտանէին յանհնարին իմն վտանգի՝ սպասելով անդարձ վայրկենի կատարածի ողջոյն հողագնդիս: Թո՛ղ զայս՝ կործանումն գեղջն Ակոռոյ և մենաստանի Հայոց Սրբոյն Յակոբայ միահամուռ բնակչօքն հանդերձ առաւել ևս սարսափելի մեզ տեսանի:

Աստանօր ընդ երևիլն առաջին ստորերկրեայ թնդմանց և որոտմանց ի կատարէ անտի մեծին Արարատայ և յապառաժուտ կողիցն պատառուածոց հատուածեալ մեծամեծ վիմաց և հարիւրամենի

ձեանց և յարձակեալ ի վիհ փլուածոյն գոգ 6000 ոտն բարձրութեամբ՝ ահագին ճայթմամբ բեկեալ մանրէին ի մասունս մասունս որք և կայծակնօրէն լցեալ զփոր պատառուածոյն յական թօթափել դաշտացուցին զայն խորխորատ եօթն մղոն երկայնութեամբ՝ ընդ մեծակոտոր հատուածոց սառին և քարանց: Յայնժամ ծածկեալ կայր միանգամայն մենաստանն Սրբոյն Յակոբայ և գիւղն Ակոռի, բայց այն ինչ սակաւ առ սակաւ լուծանիլ, որով և քակտեցաւ ընդհանուր ամբողջութիւն նոցա ի 24 յուլիսի յիններորդ ժամու զկնի գիշերոյն, քանզի մեծահատոր հիւսք ձեանց և քարանց, որ կախեալ կայր ի վերայ հովտին, յանկարծուստ փրձեալ սաստկագոյն սրընթացութեամբ յարձակեցաւ ի խոնարհ կոյս ի դաշտն լայնանիստ, որ զափամբք Սեաւ ջրոյն, մինչ զի յերկուս բոպէս, էանց իբր ընդ քսան վերստ տարածութիւնս: Զկնի որոյ յերևան եկին կորստական և բազմավնաս տղմուտ հեղեղք. արագագոյն սրընթացութիւն այսր տղմահոս վտակի սարսափելի իմն երևի ամենայն հետախուզից. անհեթեթ հատորք քարանիւթ հողոյ, որք յառաջ քան զայս կործանէին զամենայն որ ինչ դիպէր ի ճանապարհի, այսօր այն ինչ հալիլ սկսան պաղինք՝ այնք ամենայն ցնդեալ լուծան ի ցեխոտ վտակս, յորոց մին իսպառ տապալեաց զդարպասս նախնի խանին Երևանայ: Յանցանել վայրկենից ինչ՝ այսոքիկ անհուն հեղեղք ծածկեցին զմեծ մասն դաշտին ի բերանոյ անտի Ակոռեան գոգոյն մինչև ցգետն Մեծամօր և ի տեղիս տեղիս սպառեցին զցանս և զայգիս յերկոտասան վերստ լայնութեան, բաց յայսմանէ՝ մին ի մեծագոյն հեղեղաց անտի իջեալ խառնեցաւ ընդ գետն Մեծամօրի, զորոյ զմակերևոյթ առաջին ընթացից ջրոյն փոխեաց. սմին իրի ի յորդութենէ ջուրց ի բազում տեղիս վնասս մեծամեծս կրեցին բարձրանիստ շէնք և գարդոնեան կացուրդն ղազախաց, որ գտանէր առ Սոլոնովեան կամրջաւն: Տղմահոս հեղեղքս ի 5 յուլիսի սկսան նուազիլ և ի վերջոյ միանգամայն խցան՝ որք և թաւալգլոր ածին ցեզր Սեաւ ջրոյն զայնպիսի ահագին իմն բազմութիւն պատառոտեալ անդամոց հեղձեալ մարդկան և տնային անասնոց մինչև ընդ երկար անհնար լինել ըմպել զջուր գետոյն այնորիկ:

Զև Ակոռեան գոգոյն միանգամայն այլափոխեցաւ: Այժմ բարձրութիւն նորա երկիցս մեծացաւ ի տարածութեան իւրում և յոլով ևս ի բարձրութեան իւրում՝ մանաւանդ յարևելեան կողմանէ: Եւ դարաւոր ձիւնք, որք նախքան զայս չեշտակի ամբարեալ կային ի գմբէթաձև գագաթան մեծին Արարատայ, անկան ի խոնարհ ընդ նորակազմ զառիվայր լերինս: Այլև ի բարձրավանդակ վայրս մարթ

է ցուցանել զտեղիսն, ուրանօր ի բարձրագագաթան ամբարձեալ կային մենաստան և շինուածն աղբեր Սրբոյն Յակոբայ: Ընթանան աղբիւրք երկոքին, որք մղեալ ընդ թանձրագոյն կոյտս խճախառն տղմին, ուր չէ հնար ամենևին գտանել վէմ ինչ, որում մարթ էր լինել ապացոյց ամբողջութեան նոցա: Շինուածքս այսոքիկ բոլորովիմբ կործանեցան, նոյնպէս և դաշտն առ մենաստանաւն, որ մինչ ցայժմ ծածկեալ կայ տղմով յահեկակողմն հեղեղատին, որ անդրէն խաղալ սկսաւ, ուրանօր կորեան մինչ ց30 տունք քրթաց անդանօր թափառելոցն: Ի տարածութեան անդ որ ընդ մէջ մենաստանին և Ակոռոյ, որք և յառաջն էին վարելահողք և այգեստանք տեղաբնակ ժողովրդոցն, այժմ իսկ շեղջեալ կան զանազան գօտիք քարանց և սառուցից, որ և մինչև ցայսօր գտանի ընդ փլուածովն անեղծ և ամբողջ: Ի վերայ բլրոցս այսոցիկ ըստ մակերևութին ի լուծմանէ անտի պաղակաց և փշրելոցն ցեխանիւթ քարանց և մանրելոցն ի մասունս, բացեալ են մեծամեծ պատառուածք և խորխորատք, յորս ուրեք ուրեք ամբարձեալ գտանին արջասպային ջուրք և երևին դէզք բազմակոյտ կոտորոց վիմաց, որոց վասն և անանցանելի միանգամայն երևի և գուցէ ի հպիլն ներքին կամարաց սառուցից յանցանել ժամանակաց բազմասցին անդանօր նորանոր խորոփիկք և վիհք:

Թափառական քուրթք պեղեցին զմեծ մասն բնակարանաց ժողովրդոց գեղջն Ակոռոյ, որոնելով յայնս զմնացորդս հարստութեանց ի խուզարկելն զայնոսիկ վիհս, տեսաւ, զի գերանք որով ծածկեալ կային տունք, գտանին ընդ փլուածովք նոցա և մասունք որմոց ինչ ինչ շինուածոց գտանին ամբողջ՝ յորմէ մարթ է եզրակացուցանել թէ աւանն Ակոռի տապալեցաւ ոչ ի հոսմանց անտի քարանց, այլ ի շեշտակի իջուածոց: Զկնի ահեղ երկրաշարժութեան որ ի 20 յունիսի մինչև ց28 յուլիսի, տևէին երբեմն երբեմն սաստիկ ստորերկրեայ որոտմունք և թնդմունք, բայց յայսոցիկ ժամանակաց մինչ ց1 սեպտեմբերի ի տեղիս տեղիս՝ մանաւանդ ի գաւառին Շարուրայ պատահէին թեթևագոյնք երերք և սուղ ինչ ընդ գետնեայ բոմբիւնք»:

Ջանացեալ մասնակցել ընթերցանելեաց զինչ ինչ տեղեկութիւնս՝ զամենայն արժանաւոր անցից հայրենեաց մերոց, պարտաւորիմք խոստովանել զազնուութիւն դրից աշխարհի մերոյ և սորին վասն կարճել բազմօք զյայտարարութիւնս պարոն Վասկաբոյնիկովին: Խորհուրդ տամք ընթեռնուլ զայս հետազօտելի անցագրութիւն լիովին յառաջնում համարի Ս. Պետերբուրգեան տեղեկութեանց տպելոց յայսմ ամի:

ԳԱՒԱՌ ՍԱՐՏԱՐԱՊԱՏՈՒ

367. Այս գաւառ պարունակէ յինքեան ըստ այժմեան գրուածոց մեր զսահման Թագաւորանիստ հին քաղաքին Արմաւիրայ, զփոքրիկ գաւառն այժմ Սհաթլու *կոչեցեալ, որ է մասն հին Երասխաձոր գաւառի ի ձորի անդ ի հիւսիսակողման գետոյն Երասխայ և զԱրագածոտն՝ սկսեալ յԱխուրեան գետոյ՝ յարևմտեան ստորոտէ մեծի Արագած լերին ընդ հարաւակողմն ընդ Արեգդէմ մինչև ցձոր գետակին Անբերդայ ցարևելեան սպառուած բլրակացն ականց գետոյն Մեծամօրի, այն է՝ ցարևմտեան եզր դաշտին Վաղարշապատու, որ և բաժանի յերկուս փոքրիկ գաւառս յանուն Թալնայ և Թալիշոյ (Արուճ):*

Արմաւիր քաղաք

368. Արմենակ որդի Հայկայ զկնի մահուան հօր իւրոյ տիրապետեալ Հայկազանց իբրև հայրենի ժառանգութեան՝ ելանէ անտի ի Հարք գաւառէ յարևմտեան հարաւոյ Արարատայ՝ ուր վախճան էառ Հայկ, և գայ ընդ յարևելս հիւսիսոյ և ժամանէ ի դաշտ մի ընդարձակ պատեալ բարձրաբերձ լերամբք՝ զոր ընդ մէջ հատեալ անցանէր գետ յարևմտից յարևելս ուղղակի ընդ երկայնութիւն դաշտին: Եւ անցեալ ընդ գետն ընդ այն ի կողմն հիւսիսային, առ ստորոտով լայնանիստ լերին միոյ՝ յորմէ բղխէին կարկաջասահ ջուրք աղբերց ոչ սակաւ՝ ընդ զառիվայրն, և կալեալ անդէն վայր բնակութեան՝ անուանէ զնոյն զայն լեառն լայնանիստ՝ Արագած*, այսինքն՝ ագած տեղի Արմենակայ և զստորոտս նորա, որ ձգի յարևելից յարևմուտս Արեգդէմ և ընդ հարաւ՝* Արագածոտն*: Եւ ապա զպայազատութիւն ազգին յանձն արարեալ որդւոյ իւրում Արամայիսայ՝ վախճանի:*

Իսկ Արամայիս ի ժամանակի տիրապետութեան իւրոյ հիմնարկեալ կառուցանէ ինքեան տուն բնակութեան ի վերայ բլրակի միոյ ի դաշտի անդ առ եզերբ գետոյն ի հիւսիսոյ կողմանէ, զորմէ Խորենացին (Հատոր Ա, գլուխ 11). «Իսկ որդի նորա (Արմենակայ) Արամայիս շինէ տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր[1] *և զանուն գետոյն յանուն*

[1] Ստորագրութիւն հին Հայաստանի, յերես 498, ի ծանօթութեան յերրորդ համարն՝ յանգագոյն իմն ստուգաբանէ ընդ Շրօտերայ զանունս Արմաւիր՝ Արմայիսի իր, այսինքն գործ, շինուածք Արմայիսի, քանզի և Սեբեոս եպիսկոպոս պատմիչ զնոյն հաստատէ. «Զկնի Արամենակայ որդի նորա Արամայիս շինէ իւր ի վերայ գետեզերն տուն բնակութեան և անուանէ զանուն նորա Արամայիր, այսինքն՝ Արամայ իր:

թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ»: Եւ եղև այնուհետև այս քաղաք յատկացեալ տեղի բնակութեան հայկազուն նահապետաց: Եւ է մի ի հնագոյն քաղաքաց աշխարհի զկնի ջրհեղեղին և առաջին շինուած յԱրարատեան դաշտին՝ զոր զկնի իբր հարիւր յիսուն ամաց, այն է յամի աշխարհի 2142 ըստ ժամանակագրաց, Յարմա որդին Գեղամայ չորրորդ ծնունդ յԱրամայիսայ, կրկին նորոգեալ մեծացոյց՝ պատեալ կոփածու որձաքար վիմօք և հաստատեաց զարքունիս իւր ի նմա ըստ յառաջ բերելոյ հայր Միքայէլի Զամչեան (հատոր Ա, յերես 72):

Այս քաղաք, որպէս և ասացաւ, եղև բնիկ տեղի ապարանից հայկազն նահապետաց մինչև ցվախճան իշխանութեան նոյն ցեղապետութեան: Նստան աստէն և Արշակունի թագաւորք ոմանք մինչև ցԵրուանդ Բ, որոյ տեսեալ թէ գետն Երասխ օր քան զօր հեռանայ ի քաղաքէ անտի ընդ հարաւ, յորմէ և դժուարին լինի բնակչացն առնուլ զջուր ի ձմեռնային սառնասառոյց եղանակի, մանաւանդ թէ դիւրին է առնուլ զայն թշնամեաց, վասն որոյ լքեալ զայն՝ երթայ ընդ յարևմուտս իբրև եօթն ժամ հեռաւորութեամբ և շինէ անդ ի խառնուրդս Երասխ և Ախուրեան գետոց ի քարակտուր ինչ բլրի քաղաք և անուանէ զայն յիւր անուն Երուանդաշատ, յամի Տեառն իբր 77:

Եւ ապա զկնի այնր լքեալ ի նորոգութեանց և զրկեալ ի բնակչաց մնայ յամայութեան: Եւ ի յետագայից իսկ Լքեալ արքունիք անուամբ յիշատակի ըստ Խորենացւոյն (Գ, 31), յորում ժամանակի ըստ մտաց պատմութեանն եղեալ են անդէն ինչ ինչ շինուածք արքունի ապարանից, իսկ այժմ ամենևին անհետացեալ, բայց միայն այնց հնութեանց շինուածոց հիմունք յատորոտս և յայլ տեղիս բլրակին երևին: Եւ ի գագաթան նորուն գտանի դիտանոցաձև բարձր ինչ շինուած աւելի քան զութն կանգուն որձաքար վիմօք ընդ իրեարս ագուցելովք և կրովք ձուլեալ՝ յորոյ վերայ ելեալ մարդոյ համարձակ տեսանէ զդիրս դաշտին, յոր կողմն և հայեսցի և զհին անցս Երասխայ որ առ նովաւ, յայտնագոյն ևս, որ ի բնակչացս Ղուռու Արազ՝ Ցամաք Երասխ անուանի: Ի սոյն յայս շինուածոց յորձաքար խարտեալ վիմաց ի մերումս ժամանակի ետ քակել Հիւսէյին Ղուլի խան սարտարն Երևանայ և տանել ի պէտս շինութեանց դրանցն ամրոցին Սարտարապատ յիւրմէ կառուցելոյ:

Տեղի սոյն քաղաքիս Արմաւիրայ ճշտօրէն հայեցեալ ըստ դրութեան դաշտին և ըստ լինելոյն առ եզերբ Երասխայ ի հիւսիսոյ կողմանէ՝ երևի լինել այն ապառաժուտ բլուր՝ որ ունի յարևելից զակունս շամբին Սեաւ ջրոյ, այսինքն Մեծամօր գետոյ, հեռաւորութեամբ Բ ժամուց, յարևմտեան հիւսիս զամրոցն Սարտարապատ

միով ժամաւ, ընդ հարաւ զԵրասխ գետ հեռացեալ յիւրմէ իբրև ժամ մի, իսկ յարևմտից զդաստակերտն Երուանդայ Բ, իբրև երեք ժամ, որ այժմ ի բնակչաց անուանի **Ղարաղալայ՝ Սեաւ բերդ**, *որոյ և ստուգութեանն ապացոյց դաշտն, որ կայ ի հիւսիսոյ բլրոյն ձգեալ դէպ յարևմուտս ցքարափ ձորոցն Երասխայ և Ախուրեան գետոյ, կոչի ցարդ ի ծերագունից* **Արմաւու դիւզ՝ Դաշտ Արմաւիրայ**:*

Վասն տեղւոյ սորին Արմաւիրայ ստորագրութիւնք հին և նոր Հայաստանի ցուցանեն լինել Սուրմարի, որ օտար է ամենևին, զի Սուրմարի աւան գտանի ի ճակատ գաւառի ըստ նորուն հին Հայաստանի: Իսկ Արմաւիր ըստ իմիք յստորոտս Արագածու՝ թէև փոքր ինչ ի բացեայ ելեալ և դրութիւն տեղեաց երկոցունցն իսկ բացեայ ի միմեանց իբրև յերից ժամուց, քանզի Սուրմարի նովին հնչմամբ անուանն յորջորջի մինչև ցայսօր և տեղին ծանօթ ամենեցուն, մինչ զի և կառավարութիւն տէրութեանն Պարսից զմասն Երասխաձոր գաւառի, որ անկանէր ընդ իշխանութեամբ իւրեանց նովին անուամբ յիշատակէր ի գրուածս իւր **Սուրմարի մահալ** *(գաւառ), զոր ի գործ դնէ և այժմ կառավարութիւն տէրութեանն Ռուսաց, թէև ի վաղուց հետէ այն է ի վերջին ասպատակութենէ կովկասեան լէզկեաց մնայ դատարկ ի բնակչաց և յաւերութեան, մանաւանդ տեղին Սուրմարւոյ է դաշտ փոքրիկ յարևմուտս դաստակերտին Երուանդայ Բ ի վերայ քարաբաշի ձորոյն Երասխայ ի հարաւոյ կողմանէ: Իսկ Արմաւիր ի վերայ բլրակին ըստ գրեցելումն ի մեծի դաշտին առ եզերբ գետոյն Երասխայ ի հիւսիսոյ կողմանէ, և թէ՝ գետն օր քան զօր հեռանայր յԱրմաւիրայ ըստ Խորենացւոյն (Բ, 36). այլ անցք Երասխայ ի Սուրմարի է ի ձորամիջի և յերկուց կողմանց քարակտուր ապառաժուտք, որոյ վասն անդ ի Սուրմարի չկարէ ամենևին խոտորիլ Երասխ՝ ո՛չ յաջ և ո՛չ յահեակ:*

Մերձ յայս քաղաք Արմաւիր էր անտառ մեծ սօսեաց (չնարի) տնկեալ յԱրմենակայ հօրէ հիմնադրի քաղաքիս և ի շարժիլ տեւեւոց ծառոց անտառին ի շնչմանէ հեզիկ հողմոց հմայէին պէսպէս առասպելս, ուստի և համարեալ էր այն անտառ՝ սրբազան տեղի դիցն, որում և ձօնէին զորդիս և անուանէր այնուհետև Սօսանուէր, այն է՝ Դիւցազն, ըստ Խորենացւոյն (Ա, 19). «Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արմենակայ, որ յԱրմաւիր (**Անուշաւանն Սօսանուէր***), զորոց զսաղարթուցն սօսաւին հանդարտ և սաստիկ շնչելոյ օդոյն ևեթ՝ ոստոց շարժումն, սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց և այս ցքազում ժամանակս»:*

Բայց հաւաստեաւ չլինի գտանել, թէ յոր կողմն քաղաքին լեալ իցէ անտառն, այլ եթէ ընդ յարմարութիւն դրից քաղաքին, դաշտին և Երասխայ հայեսցուք, հաւանական երևի լինել յարևմտեան կողմն քաղաքին ընդ մէջ Երասխայ և երկարաձիգ առապարին մերձ եղելոյ անդր՝ պատշաճեալ սօսեացն յարբու�ի ջուրց անտի Երասխայ, ըստ որում և ծերունիք ընկալեալ աւանդութեամբ ի միմեանց, պատմեն թէ գտանէին ի սոյն յայս ասացեալ տեղւոջ ստուար արմատք ծառոց, որք ի հերկելն անդ երկրագործաց ի յայտ գային:

Գիւղօրայք դաշտին Արմաւիրայ կամ գաւառին Սարտարապատու

369. Սարտարապատ ամրոց ի հիւսիսային դաշտի Արմաւիրայ, հեռի ի նմանէ յարևմտեան հիւսիս իբրև ժամաւ միով, շինեալ ի Հիւսէյին ղուլի խան սարտարէ Երևանայ, որոյ հիմնարկութիւնն եղև յամի 1819: Տեղին այսր ամրոցի նախքան զայս շինութիւն անուանէր Քեալակեարխ յանուն մեծի առուի նորին, որ սկզբնաւորէր յԵրասխայ անդր քան զԵրուանդակերտ և էր յաւերութեան որպէս և տեղի ամրոցին: Իսկ թէ ի հնումն զինչ անուն ունէր, չունիմք ինչ ծանօթութիւն ի գրոց և ո՛չ յաւանդութեանց: Ի շինութեան այսր ամրոցի և առուի նորին, որոյ ընթացք տևէ յԵրասխայ ցայս ամրոց իբրև չորս ժամ, աշխատեցոյց կարի անգթութեամբ գրեա թէ զբովանդակ բնակիչս այսր նահանգի: Եւ պատեաց զամրոց կրկին պարսպաւ բարձր և հաստատուն հանդերձ մեծամեծ բրգամբք և զմէջ նորին լարաչափ բաժանեաց ընդարձակ փողոցաւ ի թաղս թաղս այնպէս, զի չորեքին դրունք ամրոցին յընդարձակ փողոցսն հանդիպահայեաց էին առ միմեանս: Եւ բնակեցոյց ի թաղսն զգաղթական հայս՝ զորս ածեալ էր ասպատակութեամբ ի սահմանացն Պայազիտոյ և Արճիշոյ և զսակաւաթիւ մահմէտականս, որոց գումար եհաս ց355 գերդաստան. կառոյց ի նմա ընդ հարաւակողմն առ պարսպաւ և տուն բնակութեան ինքեան. յայն կողմն արտաքոյ պարսպին ետ ձգել այգի խաղողոյ և ծառաստանս կարի ընդարձակ տարածութեամբ և հասոյց ի բերս պտղոց: Ստանայր և զմեծ արդիւնս յերկրագործ բնակչաց ամրոցիս, որք վաստակէին յընդարձակ արդիւնաբեր դաշտն չորեքկուսի շուրջ զամրոցաւն: Բայց այսու ամենայնիւ տակաւին թերի էր շինութիւն ամրոցին ի խրամն (խանդակ) նորա և յինչ ինչ մասնաւոր տեղիս, այն ինչ զինուորութիւն Ռուսաց պաշարեաց զայն յամի 1827 և ի միջոցի վեց աւուրց գրաւեաց զայն ընդ իշխանութեամբ ի 20 սեպտեմբեր ամսոյ:

Ապա զկնի փոխարկութեան աշխարհական իշխանութեանն ելին մեծ մասամբ բնակիչք յամրոցէ աստի՝ թէ յաղագս ակամայ բնակութեանն անդէն և թէ յաղագս առանց նորոգութեան մնալոյ մեծի առուին ամ ըստ ամէ ի մերձակայ գիւղորայս այսր գաւառի: Իսկ որք մնացինն են այժմ տունք 65 յազգէ Հայոց և ունին եկեղեցի յամրոցի անդ շինեալ յառաջագոյն՝ յանուն սուրբ Աստուածածնի:

370. Շահրիար, Շէհրիեար կամ Շահինշահ, որ թարգմանի **Թագաւոր մեծաշուք** *(***Ուլու Փատիշահ***): Այս գիւղ մերձ յԱրմաւիր յարևմտից նորա հեռի իբրև կէս ժամ: Ունէր յառաջագոյն շուրջանակի պարիսպ ի հողոյ, որպէս այլ բազում գիւղորայք ի դաշտի աստ Արարատայ ի պատճառս ասպատակութեան լէզկեաց և այլ մերձակայ սահմանակից թշնամեաց: Այլ ի նուազիլ ինքնագլուխ բռնաւորաց և ի տարածիլ օրինաւոր իշխանութեան՝ անխնամ մնացեալ քակտեցան հետզհետէ այնպիսի պարիսպք գիւղորէիցն և ընդարձակեցան բնակութիւնք բնակչացն: Ուստի բնակիչք այսր գեղջ՝ տունք 83, որք ունէին յառաջն զեկեղեցի ի պարսպի անդ յանուն Սուրբ Աստուածածնի, շինեալ ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ: Ելին ի քայքայեալ պարսպէ անտի արտաքոյ և շինեցին ինքեանց բնակութիւնս ընդարձակ: Մնաց եկեղեցին ի բացեայ ի նորոգ բնակութեանցն: Եւ գրեա թէ խախտեալ ևս էր, վասն որոյ յամին 1836 պատուաւոր բնակիչ այսր գեղջ Յոհան Սուլթան Գէորգեան Շահխաթունեանց հարազատն մեր ետ նորոգ հիմնարկութեամբ կառուցանել եկեղեցի սեպհական արդեամբ իւրով ի յարմար տեղւոջ նորոգ բնակութեանցն: Հիմունք որմոցն յորձաքար վիմաց աւերակացն Արմաւիրայ և ի կրոյ բարձրացան յերկրէ աւելի քան զկանգուն մի և անտի ցկատար որմոյն ի հասարակ աղիւսոյ: Իսկ կամար սեղանոյն ևս ի քարանց և ի կրոյ և ծածք նորա փայտեայ հիւսնաշէն կամարաձև հանդերձ վեց սեամբք և տանիք նորին ծածկեցաւ կիսախողովակ կղմնտերբք: Իսկ հանդէս օծութեանն կատարեցաւ ի յաջորդ ամի 1837, յամսեանն հոկտեմբերի ի 24, ներկայութեամբ Յովհաննու Ը սրբազնակատար կաթուղիկոսի և ոմանց արքեպիսկոպոսաց և վարդապետաց: Օծաւ սեղան խորհրդոյն յանուն Գիւտ խաչի, որոյ իսկ տօն էր յաւուրն: Եւ եկեղեցին յանուն սրբոյն Գէորգեայ զինաւորի յատկացեալ պաշտպանին այսր գեղջ:*

Գրեցաւ ի վերայ վիմեայ վերին բարաւորի արևմտեան դրան արձանագիր ըստ այսմ.

«Ի կայսրութեան Ռուսաց Նիկողայոսի Ա և ի կաթուղիկոսութեան Հայոց Ը–րդ Յովհաննու Կարբեցւոյ և ի նահանգապետու-

թեան Հայաստանի կնեազ Վասլի Բէհպուտեանց կառուցաւ եկեղեցիս ի Շահրիար գիւղ ինքնայօժար արդեամբք Սուլթան Յոհաննու Գէորգեան Շահխաթունեանց յամի Տեառն 1837, իսկ Հայոց ՌՄՁԶ, սեպտեմբերի ԺԶ»:

Մերձ յայս գիւղ ի հիւսիսոյ է երկարաձիգ առապարն Արմաւիր քաղաքի՝ որոյ ի բարձրութեանն գտանին տակաւին հիմունք շինուածոց մնացեալ ի հին շինութեանցն Արմաւիրայ, ուրանօր ի միջին տեղւոջ գոյ ուխտատեղի յանուն Սուրբ Դաւթայ, ուր գնան մերձակայ բնակիչք յուխտ յառաջակայ կիւրակէի սրբոյ Զատկին: Այս տեղի որպէս նկատի լեալ է յառաջագոյն ի հեթանոսութեան յանուն կռոց, այլ ի քրիստոնէութեան վարդապետք առ ի չկարող լինելոյ արգելուլ զժողովուրդն ի նախնի սովորութեանց անտի հեթանոսութեան, անուանադրեալ են զտեղին յանուն այնր սրբոյ, այլ թէ որ Դաւիթ իցէ՝ չգիտեն: Եւ զի զտեղին սոսկ հասարակ քարամբք հիւսեալ են և ունի փոքր տեղի դրան կարի խոնարհ, ընդ որ ի ծունկս մտանեն ի ներքս և ի միջին տեղւոջ ամրացեալ կայ սիւնաձև վէմ մի իբրև երկու կանգուն: Այսօրինակ տեղի կռոց թերևս իցէ և այն, որ է ի ձորամիջի անդ Երուանդակերտի ի հարաւային եզեր Երասխայ, զոր անուանեն **Ոբայ Սուրբ Նշան**, *իսկ ռամիկք՝* **Փասմիշան**: *Զի՛ք անդ նշան ինչ հնութեան, այլ հասարակ շարաքար գերեզմանաձև, որում մերձ ելանէ և յորդ աղբիւր սառնորակ ջրոյ: Յանուն այնր գնան մերձակայ բնակիչք ի Վարդավառ կիւրակէի:*

371. **Քեալակեարխ**. *տունք 14, եկեղեցի նոցա յանուն Սուրբ Աստուածածնի: Անուանակոչութիւն գեղջս առեալ է յանուանէ մեծի առուին Սարտարապատու, որ անցանէ զհիւսիսային կողմամբ գեղջս: Յարևմտից այսր գեղջ մերձ յեզերս Երասխայ աւանդեն լինել տեղի մեծի շինու՝ թէև չերևին նշմարանք շինուածոց արտաքուստ յաղագս կարի հնութեան ժամանակին: Բայց անդր ի տեղիս տեղիս մերձ յիրեարս երևէին փոքր ինչ բարձր տեղիք յերեսաց երկրին, զորոց զմիոյն զհողն պեղեալ բնակչաց գեղջս, բացաւ հաստատուն շէնք իբրև փոքրիկ մատուռն ի կոփածոյ քարանց կամարայարկ բոլորովին ամբողջ՝ առանց մտից, զոր քակեալ ի բաց առին ի քարանց անտի ի պէտս իւրեանց և գտաւ այն ըստ ամենայնի դատարկ: Այլ թէ ի յատակի նորա գտանին չիրիմք և կամ այլ ինչ, չեղև ոք հետախոյզ և գուցէ թէ միւս տեղիքն ևս իցեն այսօրինակ:*

372. **Զաֆարապատ**. *տունք 35: Եկեղեցի սոցա յանուն Սուրբ Յարութեան:* **Մօլլապայազիտ**. *տունք 55, եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* **Թափատիպի**. *յաղագս լինելոյ այսր գեղջ յարևե-*

լեան ստորոտի բլրակին Արմաւիրայ. տունք 20, եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Ղուրտուղուլի. *տունք 35. եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Ղուզուկիւտան. *տունք 20. եկեղեցին յանուն Սուրբ Գէորգայ:* Կէչիլու. *տունք 52. եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Արմուտլու. *տունք Հայոց 16, տաճկաց՝ 9. եկեղեցին Հայոց յանուն Սրբոյն Սահակայ:* Ուզունօպայ. *տունք 22, եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Էվճիլար. *տունք 18. եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Չիպուխճի. *տունք 38. եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Մարգարի գիւղ. *տունք 20. եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

Իսկ տաճկաբնակ գիւղօրայքն և տունք նոցին. Ջանֆիտայ. *տունք 52:* Խօճաեարալու՝ *12:* Իկտալու՝ *31:* Քեարիմարխ՝ *49:* Աղճաարխ՝ *26:* Մոտէկալօ՝ *5:* Ղարխին՝ *49:* Թիւրքմանլու՝ *13:*

Սհաթլը կոչեցեալ Փոքրիկ գաւառ

373. Սհաթլը *կոչեցեալ ըստ այլազգականին՝ Թերևս յանուանէ այլազգի իշխանին այնորիկ Սահաթ կոչեցելոյ, որ յամի 1387 կալեալ յանիրաւի զերևելի այրն Մարտիրոս անուն՝ յազգէ Հայոց ի բնակչացն Կողբ գեղջ՝ նահատակեաց վասն հաւատոյ հեղձուցեալ ի գետն Երասխ (Միքայէլ Չամչեան, հատոր Գ, համար 422), քանզի ի հնումն անկանէր այս փոքրիկ գաւառ յԱրշարունիս և այժմ կոչի Սհաթլը և բաղկանայ յութն գիւղօրէից հանդերձ բնակչօք այլազգի մահմետականաց, որպէս ասացաւ ի ձորամիջի անդ ի հիւսիսակողման Երասխայ, ընդ մէջ որոյ անցեալ Ախուրեան գետ խառնի յԵրասխ: Ունի ի հանդիպոյ ընդ հարաւ զաւերակն Երուանդաշատ քաղաքի, զլեառն Բարդող, զաղահանսն և զԿողբ գիւղ, որոյ գիւղօրայք են. 1.* Ճռըխլու՝ *տունք 5, ուր է իջևան հեծեալ ղազախաց: 2.* Հիւսէին քեանտ՝ *տունք 3. աստ ևս իջևան ղազախաց: 3.* Հէլիմջան, *յարևմտեան եզեր Ախուրեան գետոյ: 4.* Հաճիբայրամ. *տունք 50. յարևելեան եզեր նոյն գետոյ: Սա ունի ամրոց քարակերտ հիւսեալ ի յետնոց: Այլ որպէս երևի՝ է տեղի հնագոյն և մի յարուարձանացն Երուանդաշատ քաղաքի, քանզի յստորև քան զգիւղն ի վերայ գետոյն է և տեղի հնագոյն քարաշէն կամրջոյ. քարինք ամրոցին ևս ցուցանեն՝ քակեալ և անդրէն հիւսեալ: Աստ ևս գոյ իջևան ղազախաց, ուր նստի և մասնաւոր աստիճանաւոր կառավարիչ նոցին և հրամայող:*

Ի Հաճիբայրամայ ընդ արևելս հարաւոյ ցհանդէպ աւերեալ ամրոցին Սուրմարւոյ իբրև երկու ժամ և կէս առ հիւսիսային եզերբ մեծի գետոյն, են և միւս երեք գիւղօրեայքն՝ 5. Խէրպէքլը՝ *տունք 21: 6.* Հիսար՝ *տունք 11 և 7.* Շահվարդըտ՝ *տունք 4: Ի ձորամիջի աստ յանդաստանսն բնակչաց լինին պատուական որիզ, բամբակ և պտղատու ծառք ծիրանի և ընկուզենի և այլն, մանաւանդ ի Հաճիբայրամ:*

Ի Հաճիբայրամ գեղջէ ընդ գետն ի վեր իբրև քառորդ մի ժամու ի ձորամիջի անդ է աւերեալ տեղի բազում տանց, ուր է և փոքրիկ ամրոց աւերեալ, այլ արևմտեան բուրգն նորա մեծ մասամբ կայ կանգուն և յարևմտեան ճակատի այնր բրգան գտանի արձանագրութիւն հայկական տառիւք, այլ վասն բարձրութեանն և ի տեղիս տեղիս եղծեալ գոլոյն՝ չկարողացաք առնուլ ի գիր: Յարևելից այսր ամրոցի իբրև քարընկեց մի է մատուռն փոքրիկ ի կոփածոյ կարմրագոյն քարանց: Հիւսիսային որմն մատրան կայ ամբողջ, յորոյ ներքին կողմանէ դնի սոյն արձանագիր չինութեանն՝ ըստ այսմ.

«Թվ. ՈԿԷ (1218). շնորհիւն ամենակալին Քրիստոսի... յիշատակ է վասն երկարութեան և մեծ պարոնութեան մերոյ Շահանշահի, ես Սարգիս որդի աւագերէց Գրիգոր քահանայի, չինեցի զիմ հայրենի զՍուրբ Աստուածածին եկեղեցի...» և այլն:

Հանդէպ այսր տեղւոյ յայնկոյս գետոյն երևին բազում աւերակք տանց և փոքրիկ ամրոցի միոյ և մատրան:

Ընդ գետն ի վեր աւելի քան զմի ժամ է գիւղն Այրիսըվատ *կոչեցեալ, տուն 1: Սակս կրկնակ ունելոյ անդ ձորոյն և գետոյն, զի հոսեալ ի հիւսիսոյ՝ աստ խոտորի ընդ արևմտեան հարաւ և ի Հաճիբայրամ խոտորեալ ևս ընդ հարաւ՝ խառնի յԵրասխ: Աստ ևս իջևան ղազախաց:*

Աստի ևս ընդ գետն ի վեր դէպի հիւսիս իբրև երկուս ժամս՝ է Միրզախան կոչեցեալ տեղին: Աստ է հուն Կեչիտ գետոյն, ընդ որ անցեալ գնան ի Բագարան, որ երևի ի վեր անդր ի ձորամիջի: Եւ է հնագոյն տեղին՝ ուր նստէր Երուազ քրմապետ եղբայրն Երուանդայ Բ արքայի Հայոց: Աստ ի Միրզախան ևս իջևան ղազախաց: Ի Հաճիբայրամայ մինչև ցաստ ճանապարհն է ի ձորամիջի և կարի դժուարագնաց սակս քարալից գոլոյն: Աստ վերջանայ սահման Սհաթլը գաւառի:

374. Ճանապարհն չունելով զայլ ևս անցս ընդ ձորամէջն ի վեր, ելանէ յիջևանէ աստի ի սարահարթն և գնայ ժամ և կէս և հասանի ի քարվանսարայն՝ ուր է ևս իջևան ղազախաց: Յայսմիկ տեղւոջ է պանդոկ մեծ կիսաւեր, զի զմեծամեծ խարտեալ քարինսն քակեալ ի

շինուածոց անտի՝ տարեալ են այլուր ի պէտս այլ շինութեանց, որոյ և կամար դրանն իսպառ քանդեալ՝ վասն որոյ և չգտաւ նշմարանք ինչ գրուածոց: Տարածութիւն տեղւոյ պանդոկին աւելի գտանէր քան զհազար քառակուսի գազ պարսից, բավանդակն տեղիք սենեկաց կից առ միմեանս՝ յորոց երեք կամ չորք հազիւ կային ամբողջ:

Ի պանդոկէ աստի իբրև քսան քայլ ընդ հարաւակողմն են երկու որոշ տեղիք աւերածոյ մեծի շինուածոց ի խարտեալ քարանց, այլ որպէս երևէրն՝ դարձեալ շէնք պանդոկաց, զի քայքայեալ քարինք և հիմունք նոցա զնոյն ստուգէին: Եւ որպէս թուէր, լեալ է անդէն և բնակութիւն հիմնաւոր գերդաստանաց, թերևս սակս նոցին երթևեկք կարավանացն ի հնումն, քանզի յարևելակողմն պանդոկին էր և գերեզմանուտ և կային տակաւին յինչ ինչ շիրիմս և տապանավէմք, այլ առանց գրչութեան: Աստ ևս որպէս ի Միրզախան՝ ունի հուն ընդարձակ՝ գետն և ձորն:

Յարևմտակողմն յայնկոյս գետոյն ի բաւականաչափ դաշտաձև տեղւոջ է մեծ աւերակն Մրենայ, ուր երևին ի կանգուն ինչ ինչ խաչքարինք և մատրունք և մեծ կաթուղիկէ եկեղեցին՝ զորմէ աւանդեն պատմիչք, շինեալ ի Դաւթայ Սահառունւոյ: Զայս տեղի այլազգի մահմէտականք անուանեն Ղարաբաղ, իսկ հայք՝ պարզ կոչմամբ Մրէն, մանաւանդ բնակիչքն Բագարանայ, որ ի Մրենայ ընդ հարաւ է իբրև մի ժամ հեռի:

Ի քարվանսարայէ աստի ցմիւս իջևանն ղազախաց երկու ժամ հեռաւորութեամբ, որոյ տեղին կոչի Ուզուն Քեանտ*, քանզի ի ձորամիջի անդ ի միջոցս գետոյն և քարատակին երկայնեալ կարգաւ են ձմեռնային բնակարանք քրթաց, որոյ վասն և կոչի յայն անուն: Զիք աստ շինուած ինչ ի հնոց կամ ի նորոց բաց յիջևանէն ղազախաց, որ ի ձորամիջի անդ:*

Աստի ևս ցմիւս իջևանն ղազախաց մի ժամ հեռաւորութեամբ, իջևանն ի վերայ սարահարթի ձորոյն յարևելից նորա և կոչի այս տեղի ի բնակչաց կողմանցս Քիմպէզ*, քանզի յանցս անդ ճանապարհին, որ մտանէ ի ձորն, է մատուռն մի բոլորակաձև վեցանկիւնի կառուցեալ ի կարմրագոյն խարտեալ քարանց: Շրջապատ մատրանս արտաքուստ որմովն հանդերձ է երեսուն գազ պարսից, իսկ բարձրութիւնն իբրև երեք գիրկ: Վերին բաժին շէնքն, որ է գմբէթն, ծածկեալ է ընտիր տեսակ իմն կղմնտերբք: Ունի զերիս լուսամուտս յարևելից, յարևմտից և ի հարաւոյ: Իսկ գմբէթն ի չորից կողմանց ևս: Զգտաւ արձանագրութիւն ինչ՝ թերևս եղեալ ի վերայ վիմին ի կամարի անդ դրանն հարաւակողման, ընդ վիմին անհետացեալ*

է չարութեամբ այլազգեաց, զի բացի կամարէ և ի սեմոց դրանցն, ամբողջ են միւս կողմունքն և գմբէթն: Զիք աստ այլ նշմարանք ինչ հին շինուածոց, այլ գուցէ եղեալ են երբեմն ոմանք կրօնաւորք: Աստ ևս ի ձմրան բնակին քուրթք: Հանդէպ այսր մատրան յայնկոյս գետոյն յարևմտից հարաւոյ ի սարահարթի անդ ձորոյն է կիսաւէր բրգաձև բարձր շինուած ինչ քառակուսի:

Աստի ևս հեռաւորութեամբ կէս ժամու յայսկոյս գետոյն յարևելակողմն անմիջապէս յեզեր քարափան ձորոյն է հին շինուած ինչ քառակուսի ի սևագոյն խարտեալ քարանց: Հարաւային կողմն իսպառ քանդեալ, իսկ հիւսիսային ճակատն, որ յերկոսին անկիւնսն ունի զերկուս կիսաբոլորակ բրգունս, կայ ամբողջ և որպէս նկատի՝ է և սա կառուցեալ ի հնոց սակս երթևեկաց և կարավանաց ի ձմեռնային եղանակսն:

375. Կէս ժամ ևս աստի ի վեր ընդ սարահարթն ձորոյն է վերջին իջևանն ղազախաց արևմտեան հիւսիսոյ անկեան այժմեան սահմանին Երևանայ և կոչի ի բնակչաց անուամբ Ղզըլղուլայի*: Այս Ղզըլղուլայ (Կարմիր բուրգ) երևի յիջևանէ աստի ղազախաց ի հիւսիսակողմն անդր ի լանջս դիւր առապարի, ուր յառաջացեալ մեր իբրև կէս ժամ ի զննութիւն այնմ, հասաք և տեսաք զայն՝ ամենապայծառ հոյակապ եկեղեցի, կառուցեալ կարմրերանգ սրբատաշ քարամբք: Տարածութիւն ամբողջ շինուածոյն՝ ընդ երկայնութիւն 36 գազ պարսից, իսկ ընդ լայնութիւն 22 գազ և կէս: Յայսմ ընդարձակութեան ունի յերեսին կողմանս ևս՝ բաց յարևելից, զգաւիթս սիւնազարդ և ի չորեսին անկիւնսն ի նոյն ընդարձակութեան սենեակս, կամ լաւ ևս ասել՝ աւանդատունս: Միջին ծածք տաճարին օրոցաձև և անսիւն, այլ խոնարհեալ բոլորովին: Լայնութիւն տաճարին իբրև տասն գազ, նոյնպէս խոնարհեալ են ծածք գաւթացն և սիւնքն անկեալք և ծածք երկուց արևմտեան աւանդատանցն: Իսկ միւս երկուքն և կիսաբոլորակ կամարայարկն սրբոյ սեղանոյն կան յամբողջութեան: Մեծամեծ լուսամուտքն յարևմտից և ի հարաւոյ տասն, զի չի՛ք ի հիւսիսակողմն լուսամուտ՝ թերևս սակս ձմեռնային հոսանաց ձեանն և բքաբեր հիւսիսային հողմոցն: Ունի և երեք դրունս՝ երկուքն ընդ հարաւ և մին ընդ արևմուտս ի մէջ գաւթացն: Զգտաւ այլ գրուած ինչ բացի միոյ, որ յորմն անդ հարաւային արտաքուստ ի մէջ գաւթին յարևմտակողմն առաջին դրանն հարաւոյ և այն փոքր ինչ անհարթ գրչութեամբ և ունէր օրինակ ըստ այսմ.*

«Յանուն Աստուծոյ, ի թվականիս ՆՁԷ (1038) ես, բարեպաշտ Թագուիս, դուստր Ապասա, Սմբատ Շահանշահի կինս և մարս, որ

ազատեցի զԵրերվայց Թաստակաս յորդեց յորդիս Սմբատ շահանշահի հզաւրի և արքայի արևշատութեան, և անուոյ իմ Հայոց... աս գրոցս հակառ կամ ի մեծաց կամ ի փոքրաց՝ ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի»:

Միջոց տաճարիս և ձորոյն գետոյ է ընդարձակ տեղի աւերակաց տանց բնակութեան. շինութիւնք տանց եղեալ են մեծ մասամբք ի կոփածոյ քարանց: Աստ անդ յեզերս աւերակին են գերեզմանուտք և կան անկեալ խաչքարինք և ի շինամէջսն: Աստ ևս բնակին ի ձմրան ի նոյն վրանաբնակ քրթաց: Եւ որպէս երևի յարձանագրութենէ անտի՝ կոչէր յառաջագոյն անուն տեղւոյս Երերվաց դաստակ*:*

376. Յեկեղեցւոյ աստի ընդ արևելեան հիւսիս իբրև հինգ ժամ հեռաւորութեամբ է Մաստարա գիւղն բնակեալ ի Հայոց. ի միջին տեղւոջ երկարութեան այսր ճանապարհի ի հիւսիսային կողմն Բուղուլու *կոչեցեալ մեծի բլրոյն, ի վերայ հարաւային եզեր հեղեղատին ջրոյ Մաստարա գեղջ՝ է քառակուսի բարձր շինուած ինչ ամրոցի, ունի զչորս բրգունս յանկիւնսն չորեսին ի կարմրագոյն կոփածոյ քարանց, որպէս և չորեքին որմունքն: Եւ իբրև քարընկեց մի ի հարաւակողմն այսր շինուածոյ է այլ շինուած ինչ քայքայեալ: Եւ գիւղատեղին աւերակ յարևելից ամրոցին: Այժմ այս ամրոց կոչի* Քեալաշբէկի Ղուլայ*: Այս Քեալաշ բէկ, որպէս պատմեն բնակիչք կողմանցս, լեալ է իբր հարիւր ամօք յառաջ և ինքն յազգէ քրթաց, որում խանն Երևանայ յանձնէ զերեսնիւ չափ հայազգի գերդաստան առ ի բնակել անդ ընդ նոսա, այլ զկնի անցման փոքր միջոցի սակս պակասութեան ջուրցն ելանէ անտի Քեալաշ բէկ այլուր և հայք ևս գաղթեալ բնակին ընդ բնիկ մաստարացիսն:*

Յամրոցէ աստի ընդ հիւսիս է ընդարձակ դաշտավայր, զոր բնակիչք կոչեն Գեն Ղօպի *և ի սպառուածի դաշտիս այսորիկ և յարևմտից Մաստարայ գեղջ են քանի ինչ խանգարեալ քարաշէն եկեղեցիք, զոր անուանեն բնակիչք* Ղարընճի *կամ* Ղզլքիլիսայք*:*

Այն ընդարձակ խոտաւէտ միջոց, յորում իբր ի կեդրոնի բարձրացեալ կայ հանդերձ այլովք փոքր բլրակօք Բուղուլու *կոչեցեալ մեծ բլրակն, ունի յարևելից զսահմանս նորակառոյց ամրոցին Սարտարապատու և Թալնա, յարևմտից զգետն Ախուրեան, ի հարաւոյ գրեա թէ զԵրասխ: Իսկ ի հիւսիսոյ զերկայնաձիգ առապարն Մաստարայ գեղջ, որ կոչի* Գիւնէիք *(Արեգդէմք) և զաւերակս վերոյիշեալ եկեղեցեացն: Աստ են տեղիք վրանաբնակ քրթաց ի միջոցս աւուրց ապրիլ և մայիս ամսոց, այնինչ դեռ մատաղ են գառինք հօտից նոցա:*

ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՒԱՌ

377. Այս սահման պարունակէ յինքեան և զստորագրութիւնսն ի վերոյ՝ սկսեալ ի Միրզախան կոչեցեալ տեղւոյ և այսր: Իսկ աստի ընդ արեգդէմ լերին Արագածու մինչև ցարևելեան ստորոտ նորա՝ ցսահմանս գաւառին Նգայ. իսկ ըստ այժմեան որոշողութեան յանուն փոքրիկ սահմանավայրացն՝ զգաւառսն Թալնայ, Թալիշայ (Արուճ), Բիւրականայ (Անբերդոյ), Կարբւոյ և Ապարանու (Նիգ):

Գաւառ Թալնայ եւ գիւղօրայքն

378. **Մաստարա գիւղ**. *բնակեալ ի Հայոց տունք 85, յստորոտի արևմտեան հարաւոյ Արագածու ի վերայ արքունի ճանապարհին, յորում է և իջևան արքունի ի սակս անցորդացն ընդ Ալէքսանդրապոլ (Կիւմրի) և ընդ Երևան: Ունի հին եկեղեցի բոլորակաշէն ութն անկեամբք և բաւականաչափ մեծ առանց սեան: Ունի և կաթուղիկէ ի միջավայրին, զմի սեղան և զերկուս փոքրիկ աւանդատունս յերկոսին կողմանս սեղանոյն և է յանուն Յովհաննու Կարապետի, բայց յարձանագիրս՝ Աստուածածնի: Շէնք սորա կարի հնագոյն և որպէս նկատի՝ յեօթներորդ դարու անդ, և այն՝ թերևս ի Գրիգորէ Մամիկոնեան յիշխանէն Հայաստանի, քանզի այս անուն տեսանի յարձանագրութիւնս այսր եկեղեցւոյ: Ունի զարձանագիր չինութեան առանց թուականի ի վերայ կամարի լուսամտին, որ յարևելից հարաւային դրանն ըստ այսմ.*

«Յամս տեառն Թէոդորոսի Գնունեաց եպիսկոպոսի չինեցաւ Աստուածածին տունս քաւել զ Գրիգորս անարժան»:

Գոյր ևս մի կարգ գիր ի ներքոյ կամարի նոյն լուսամտին, այլ մեծ մասամբ եղծեալ գոլով մնաց անվերծանելի: Թերևս սոյն Թէոդորոս Գնունեաց եպիսկոպոսն իցէ, որ յիշատակի (ըստ ընտիր ձեռագրաց) ի ժողովն Դվնայ ի ԺԵ–դում կարգի եպիսկոպոսաց ստորագրողաց զայն սահմանադրութիւն, որ առ Գ Ներսէս կաթուղիկոսիւ և Կոստանդին կայսերբ Յունաց: Զսոյն Թէոդորոս եպիսկոպոս դնէ Միքայէլ Զամչեան յերեքտասաներորդ կարգի և անուանէ Թադէոս յ345 համար Բ հատորոյ:

Գտանին և այլ ինչ ինչ արձանագրութիւնք յորմունս եկեղեցւոյս այսորիկ, այլ վասն կարի հնութեանցն չեղև առնուլ ի գիր լիովին, յորոց մին ի հարաւային բաժնի՝ յարևմտեան կողմն ի բարձ-

րութեան անդ քան զլուսամուտն յարտաքին կուսէ որմոյն, որ ըստ նկատողութեան է յանուն նորին Մամիկոնեան Գրիգորի՝ ըստ յայտնութեան ամբողջ սակաւաթիւ բառիցն, որք են այսոքիկ.

«Գոհանամ զԱստուծոյ, որ ետ ինձ Գրիգոր... ըղձացելոյ որդւոյ եղբաւր Գրիգոր իշխանի... առայ եւ սովաւ... սա է աղաւ... ազգա... մեղաւորաց յիշատակարան ինձ եւ... յիշեցէք...»:

Իսկ երկրորդն՝ յորմն հարաւային յարևմուտս դրանն այնր կողման, ըստ այսմ.

«Ի ՆԿԴ (1015) թուականութեանս Թորգոմեան ես Աահոամ (թերևս Վահրամ) իշխանաց իշխան, որդի Համազէի, թոռի զՄաստարաի շարիատսն վասն Գագկայ շահանշահի կենդանութեան եւ որդւոց իւրոց և վասն հոգւոյ իմոյ փրկութեան: Արդ այսմ գրոյս չունի ոք իշխանութիւն՝ ոչ ես սա Համզէ և ոչ ի մերոց ոք և ոչ յիշխանաց... հակառակի» և այլն:

Շուրջ զեկեղեցեաւս անմիջոց ընդ որմն եկեղեցւոյն քարամբք և կրովք բարձրացեալ են յետինք զորմն նոր անդր քան զտանիք եկեղեցւոյն և արարեալ են զեկեղեցին իբրև բուրգ և ամրոց իմն առ ի պահպանութիւն բնակչաց գեղջն ի ժամանակսն ասպատակութեանց թշնամեաց, ընդ որով ծածկեալ կայ և այժմ արևմտեան դուռն եկեղեցւոյս: Այս կրկին չինուած ի չորից կողմանց եկեղեցւոյս քակեալ անկեալ կայ, բայց միայն ի հիւսիսակողմն իբրև չորս գազ լայնութեամբ մինչ ցկատար չինուածոյն տակաւին ամբողջ գտանի և ինչ ինչ սալքարինք տանեաց և կաթուղիկէին քայքայեալ:

Ի մէջ գեղջս ի հարաւակողմն եկեղեցւոյն իբրև քարընկեց մի է աւերակ ինչ փոքրիկ մատրան, զոր անուանեն բնակիչքն **Թուխ Մանուկ***:*

Յարևմտից հիւսիսոյ գեղջս ի բարձրաւանդակի է աւերակ ինչ տեղի չինուածոց, յորում տեսանի և տեղի փոքրիկ եկեղեցւոյ, զայսր տեղւոյ ասեն՝ բնակեալ երբեմն աբեղայից ոմանց և զանուն եկեղեցւոյն կոչեն **Սուրբ Ստեփաննոս Նախավկայ***:*

Յարևելից հիւսիսոյ է փոքրիկ ձորակ և կոչեն նմա անուն **Պոչիկ ձոր***, զի երկարութիւն նորա է կարի կարճ: Ի մէջ այսր ձորակի ի հարաւակողման է փոքրիկ մատուռն աւերեալ և տեղի երկուց սենեկաց, ուր ասեն բնակէր երբեմն վարդապետ ոմն ազգային կամ եղբայր տեառն գեղջս, որում տուեալ ըստ հայրենի ժառանգութեանն զփոքրիկ սահման արտօրէից յարևելակողմն գեղջս, ի պէտս նշխարի սուրբ խորհրդոյն և ապրուստի նորա՝ կոչեն զձորակն և* **Նշխարաձոր***:*

Ի չորեսին կողմանս այսր գեղջ են յոլով գերեզմաննոց՝ մանաւանդ յարևելակողմն, ուր գոյ և մատուռն կիսաւեր, որոյ յարևելեան ճակատի դնի հայ թուական ՆԿԶ (1017). գտանին և խաչքարինք ի շիրիմսն անդ, յորոց միջի մին ունի զգրուած ինչ այսպիսի.

«Ի թուին ՈԿԲ (1223) ես... քահանայ և եղբարք իմ կանգնեցաք զսուրբ նշանս բարեխաւս յահեղ աւուրն մեր ծնողի» և այլն:

Անդր քան զայսր կողման զգերեզմաննոցսն ի բարձրաւանդակի ի վերայ մեծամեծ սալացեալ քարանց կառուցեալ կայ ամենընտիր փորածու խաչվէմ՝ երեք գազ բարձրութեամբ, գազ և կէս թանձրութեամբ. ի գլուխ այսր խաչվիմի եղեալ կայ միւս այլ վէմ քանդակագործ իբրև պսակ նմին և է մի քառակուսի գազ թանձրութեամբ. ի հիւսիսային ճակատի այսր վիմի է գրուած յանուն կառուցանողի այնմ Խաչատուր վարդապետի վասն հոգւոյ ծնողաց և եղբարց իւրոց, բայց որպէս երևէր՝ թուական նորա ի սկսուածի անդ, եղծեալ էր: Այս խաչվէմ ի բարձրաւանդակէ անտի հայի ընդ արևմուտս ընդ բովանդակ սահմանս անդաստանաց և արտօրէից այսր գեղջ: Եւ գուցէ այս վարդապետ իցէ բնակեալն ի վերոյիշեալ Նշխարաձորի:

*Ջուր այսր գեղջ իջանէ ի բարձրութեանց անտի Արագած լերին կիսով չափ յաղբերականց և կիսով ի հալոցաց ձեանց: Ուստի մինչև ցյունիս ամիս առատ է, այլ զկնի այնր սակաւացեալ՝ հազիւ բաւական լինի գեղջս և այլ մերձաւոր տեղեաց: Իսկ յառատութեանն՝ աւերէ երբեմն զհիւսիսակողման արտօրայսն սահմանին Սարտարապատու, ընդ որ անցեալ՝ անկանի ի Մեծամօրի (*Սեաւ ջուր*):*

379. Թալին *անուամբ կրկին տեղիք՝ առաջինն հեռաւորութեամբ ի Մաստարա գեղջէ ընդ հարաւ իբրև ժամ մի, իսկ երկրորդն՝ իբրև ժամ երկու: Ի յետնոց անուանեցաւ հին և նոր, յորոշումն ի միմեանց: Հինն ունի զիսկական անուն իւր զԹալին յարձանագրութեան անդ ի հին շինուածսն: Իսկ անուն նորոյն չգտաւ ուրեք յարձանագրութիւնս իւր: Եւ գուցէ է Քաղեն անուանեալ տեղին՝ զոր ընդ Թալնայ յիշատակէ Սամուէլ երէց ի 773 թիւ Փրկչին. «Յաւուրս յայս եղև կոտորումն Քաղիւնոյ (Քաղենոյ), Արենոյ, Թալնայ, ուր սպանան ոգիք 700 և գերեցան 1200»:*

Այս տեղի հին Թալին կոչեցեալ ի լեռնոտի անդ ի տափարակ տեղւոջ. բնակիչքն հայազգիք ի գաղթականաց սահմանին Ղարսայ՝ տունք 43: Ի հնումն կարի բազմամարդ է եղեալ այս տեղի՝ որպէս ցուցանեն աւերակքն և մեծ եկեղեցին կաթուղիկէ: Եւ աւանդութիւն կողմանցս թէ՝ ի հին Թալին 360 նորապսակ հարսունք ի մեծ

տօնի Աստուածայայտնութեանն և Զատկի արծաթապայտ մուճակաւ գնային յեկեղեցի:

Ի հիւսիսակողմն գեղջս է փոքրիկ տաճար անսիւն ի կարմրագոյն խարտեալ քարանց հաստատ շինուածովք: Ունի զմի դուռն ի հարաւոյ և փոքրիկ կաթուղիկէ և զմի սեղան տեղի պատարագելոյ, կառուցեալ ի Ներսեհէ Կամսարական իշխանէ Արշարունեաց, որոյ յիշատակագրութեանն արձան փորագրեալ արտաքուստ յորմն արևմտեան յերկուս կողմանս քակեալ լուսամտին՝ ըստ այսմ.

«Ես Ներսեհ Ապոհիպատ պա... ակայ եւ Արշարունեաց տէր, շինեցի զեկեղեցիս յանուն սրբ... Աստուածածնին ի բարեխաւսութիւն ինձ եւ Շուշանա... յամուսնոյ իմոյ եւ Հրահատայ որդւոյ մերոյ»:

Զունէր թուական. այլ որպէս կարծի, է այս Ներսեհ որդի ծերունւոյն Վահանայ Կամսարականի, որ յամի 690 կարգեցաւ ի Բ Յուստիանոս կայսերէ կիւրապաղատ ի վերայ Հայոց՝ հիւպատոս և պատրիկ անուամբ. աստ այժմ աղօթեն բնակիչքն:

Կարի մերձ յայս տաճար յարևմտից՝ լեալ է միւս եկեղեցի մեծ, այլ բոլորովին խոնարհեալ անկեալ դնի առ տեղեաւն:

Հեռի աստի իբրև քարընկեց մի ընդ հիւսիս է մեծ կաթուղիկէ եկեղեցի կառուցեալ ի վերայ չորից հաստատուն սեանց: Ունի ի չորեսին կողմանս զկիսաբոլորակ բրգաձև կամարայարկս, ըստ չորից թևոցն մեծի կաթուղիկէ եկեղեցւոյն Վաղարշապատու: Միջին ընդարձակութիւնն՝ յերկայնութեան թևէ ի թև 33 գազ պարսից, ի լայնութեան 23. ընդ հարաւ և ընդ հիւսիս ինն ինն մեծամեծ լուսամուտք, 5 դրունք՝ 2 ընդ հարաւ, 2 ընդ հիւսիս և 1 ընդ արևմուտս: Կաթուղիկէն որ ի վերայ չորից սեանցն՝ մեծ մասամբ խոնարհեալ է. մասն արևմտեան հարաւոյ հանդերձ այնր բաժնի շինուածովք յարկին, յամին 1830, անկեալ ծածկեաց զ25 բեռնակիր եզինս ի ներքոյ, որոց տեարք յայլազգի մահմէտական յանձրևոտ եղանակի խոտորեալ յարքունի պողոտայէն անդր ի պատսպարիլ՝ պատահեալ են այդմ դիպուածոյ, այլ ինքեանք անդր գոլով քան զփլուածն՝ ազատ մնացեալ են:

Զգտաւ արձանագիր շինութեան եկեղեցւոյս, այլ թէ ընդ փլածովքն անյայտացեալ՝ չգիտէ ոք: Գտանին քանի ինչ արձանագրութիւնք նուիրանաց. մին յարևմտեան ճակատի սեան արևելեան հարաւոյ, որոյ եղծուածն շատ գոլով չեղև առնուլ ի գիր: Բայց ի սկսուած անդր ունէր զթուական Հայոց ամբողջ ՄԼԲ. նոյնպէս մերձ ի դուռն արևելեան հարաւոյ եղեալ արձանագրութեան մեծ մասն վիմովն հանդերձ բեկեալ անհետացեալ էր և ունէր յսկսուածին թիւ

Հայոց Յ (851), իսկ երրորդն ի հարաւային ճակատի սեանն արևմտեան հարաւոյ գտանելով ըստ մեծի մասին յամբողջութեան, յառաջ բերաք աստէն՝ ըստ այսմ օրինակի.

«Ի Ն եւ ՁԹ (1040) թուականութեանս Հայոց, ի հայրապետութեան տեառն Թէոսկորոսի Հայոց կաթողիկոսի կամ եղեւ իմ Մնբատա շահանշահի որդո Գա[գ]կա, որ ետու ի Սուրբ Կաթողիկէ ի թա ա ընծա... յաւիտենից զկոստանդեանց այգին յառաջնորդուծեան հաւր Ստեփաննոսի. ես արարի արձանագիր անջնջելի ի Սուրբ Կաթողիկէս. եթէ ոք այս գրոցս հակառակ լինի յիմոց կամ յաւտարաց, ի մեծաց կամ ի փոքանց պարտական լիցի... Տեառն...»:

Մերձ յայս եկեղեցի և ի փոքր տաճարն են աւերակք տանց եղելոց ի կոփածոյ քարանց ներքնատամբք հանդերձ:

Ի միջոցս ճանապարհին այսր տեղւոյ և Նոր Թալին կոչեցելոյ է պանդոկ մեծակառոյց բազմասենեակ, որոյ մեծ մասն կայ յամբողջութեան: Իսկ միւս մասն ոչ այնքան ի հնութենէ քայքայեալ, որչափ խարտեալ քարինք նորա հանեալ յամրութենէ որմոց նորա բարձեալ են յայլուր ի պէտս նորոգ շինութեանց. և անուանի առհասարակ ի բնակչացս Քէրվանսարայ Թալնայ:

380. Թալին Նոր կոչեցեալ հեռի ի Մաստարայ գեղջէ, որպէս գրեցաք ի վերոյ, երկու ժամաւ՝ ուղղակի ընդ հարաւ ի վերայ արքունի պողոտային ի բարձրաւանդակ տափարակ տեղւոջ վերջին սպառուածի ստորոտի մեծի Արագած լերին. լեալ է և սա ի հնումն մեծ շինանիստ, ըստ ցուցանելոյ աւերակացն և տեղւոյ այգեաց և ծառաստանացն: Ի հնութեանց նշանք գտանին այսոքիկ. ի միջին բարձրաւանդակ տեղւոջն կառուցեալ կայ ի հնոց անտի կոփածու քարամբք և կրովք բրգաձև շինուած ինչ լայնանիստ և եռայարկ. ներքնայարկ նորա է ընդարձակ սենեակ մի բարձրակամար հաստատուն շինուած ի խարտեալ մեծամեծ քարանց առանց ինչ լուսամտի: Եւ ունի տեղի դրան միոյ յանկեան արևմտեան հարաւոյ և դուռն նորա միաստանի կոփեալ ի վիմէ՝ որ անկեալ դնի անդէն ամբողջ: Զորք կիսաբոլորակ բրգունք են ի չորեսին կողմանս այնր մեծի կամարայարկին անմիջապէս կից շինեալք ընդ նմա և փոքրիկ ելանելիք նոցա ի ներքուստ ի մեծ կամարայարկէ անտի, այլ որովհետև ծածք վերնայարկացն խախտեալ և քայքայեալ են, բացեալ է և լուսամտաձև տեղի ինչ յառաստաղն մեծի ներքնայարկին. մեծ մասամբք կրաշաղախ որմունք այսր շինուածոյ ցկատար անդր կան յամբողջութեան. ի միջոցս չորից բրգանցն կից յորմունս մեծի կամարայարկին շինեալ են այլ ևս չորք բրգունք ի չափ մե-

ծութեան և բարձրութեան միւսոցն՝ թերևս յօսմանեանց ի ժամանակի տիրապետութեան նոցին յայսոսիկ կողմանս, քանզի ի բուրգն արևմտեան ընդ հարաւակողմն ի բարձրութեան անդ արտաքուստ ի վէմ մի՝ գտանի քանի կարգ գրուած մեծամեծ տառիւք նոցին և ի վերն անդ ի հաւաքեալ եռանկեան անուն ինչ փակատառ (թուրայ) անուանեալ ի նոցունց յօսմանեանց, այլ ըստ մեծի մասին եղծեալ են տառքն ի կարկտաբեր հողմոց:

Հանդէպ այսր արձանագրի ի հին բուրգն անկեան արևմտեան հարաւոյ գտանի արձանագիր հայացի տառիւք՝ յայս օրինակ.

«Թվին ՉԺԶ (1267):

Շնորհիւ ողորմածին յԱստուծոյ այս իմ գիր է պարոն Աղպուղայիս թոռն մեծին Շահանշահի, որդի Իվանէի, որ կամ եղեւ ինձ յԱստուծոյ եւ թողի զիմ հայրենիք գեղիս զԹալնայ գինոյ խալէն վասն արևշատութեան ամիրսպասալար Շահանշահի եղբաւր իմոյ և ինձ Աղպուղայիս, և Սիթի–Խաթունիս և զաւակաց մերոց և վասն մեր պատրոն նախնեացն յիշատակութեան: Եթէ ոք այս գրիս հակառակ կայ յիմոց կամ յաւտարաց, մարդն այն դատի յԱստուծոյ և մեր և մեր... նախն... յանցանացն պարտական լիցին առաջի Քրիստոսի յահեղ ատենին. կատարողքն աւրհնին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց, ամէն»:

Ի հարաւակողման ի բարձրութեան անդ որմոյ բրգանն տեսանի ի վիմի քանդակեալ պալարուն արձան մարդոյ փոքրահասակ, որոյ զգլուխն ձեռնաձիգ քարամբք կամ ռմբաւ խորտակեալ արկեալ են ի վայր. ևս մերձ յայս արձան մարդոյ՝ քանդակեալ կան երկու արծուիք:

Որպէս գրեցաւ ի վեր անդր՝ ըստ մեծի մասին ամբողջ կան որմունք այսր բրգաձև մեծի շինուածոյս: Եւ ընդարձակութիւն սորին հանդերձ բրգամբքն երկպատիկ լայն է քան զդիտանոցն (ղուլայն) Պէրայի, որ ի Կոստանդինուպոլիս, այլ ո՛չ նովին չափ բարձր. արևելեան հարաւոյ բուրգն ևեթ կիսով աւելի վերուստ ի վայր խոնարհեալ է. ընդ որ կարող է ոք անարգել ելանել ի վեր. ուր ելեալ և մեր ի կատար որմոցն՝ համարձակ տեսաք զկէս բաժին մեծի դաշտին մինչև ցսահմանս Մեծամօր գետոյն:

Այս բուրգ՝ միջնաբերդ (իչղալայ) ունի չուրջ զիւրև քառակուսի պարիսպ հանդերձ ութն աշտարակօք. չորքն ի չորեսին անկիւնսն և չորքն ի միջոցս նոցին ի կոփածոյ կարմրագոյն քարանց՝ որպէս և պարիսպն, իբրև երից գրկաց բարձրութեամբ: Միջոց միջնաբերդին և այսր պարսպի իբրև քսան գազ պարսից՝ ընդ չորեսին կողմանսն

ևս: Այս պարիսպ ունի զմի տեղի դրան ևեթ հանդէպ դրանն միջնաբերդին և կրկին մեծ քան զայն. դուռն սորա ևս է միապաղաղ վէմ կոփածու՝ անկեալ անդէն առ տեղեաւն ամբողջ:

Ի մէջ այսր պարսպի յանկեաննն արևելեան հիւսիսոյ է փոքրիկ տաճար ի խարտեալ քարանց, օրոցաձև. կամար նորա խոնարհեալ. չգտաւ արձանագիր չինութեանն, որպէս և աշտարակին և պարսպին:

Գոյ ի մէջ այսր պարսպի և վիրապ մի խորագոյն՝ յատակ նորա լայն և բերանն նեղ, փորեալ ի վիմի. թերևս էր յառաջագոյն ի հնումն տեղի մահապարտաց՝ որոյ նմանն տեսանի և ի հին քաղաքս:

Ի մերում ժամանակի, յամի 1812, Հիւսէյին խան սարտարն Երևանայ աշխատեցուցեալ զբնակիչսն նահանգիս ետ կառուցանել շուրջ զհին չինուածովքն ընդարձակագոյն պարիսպ ութնանկիւնի հանդերձ ութն մեծամեծ բրգամբք ի հասարակ քարանց՝ բարձր և ստուար. և ունի զմի դուռն մեծ ի հիւսիսակողմն. արար ի սմա և զայլ չինուածս և համբարանոցս. և կացոյց ի սմա Բէկ անուամբ զայլազգի ոմն հանդերձ սակաւաթիւ գերդաստանօք ի պահպանութիւն երթևեկացն ի Ղարս և ի Շիրակ գաւառ: Իսկ ի տիրապետութեան Ռուսաց՝ գաղթականք ի Ղարսայ իբրև յիսուն տունք յազգէ Հայոց բնակեցան աստէն: Այլ զկնի քանի ամաց անդրէն ելեալ ոմանք անցին ի Շիրակ և ոմանք ի հին Թալին. և այժմ է իսպառ անբնակ:

Ի մէջ այսր վերջին պարսպի գտանին տեղիք երկուց տաճարաց ևս, մին կարի փոքր և իսպառ աւերակ, իսկ միւսն յարևելից միջնաբերդին և պարսպի նորա, միջակ մեծութեամբ ի հնագոյն չինուածոց անտի. որմն հիւսիսային և արևելեան կան կիսով չափ ի կանգուն և ի չորից միափերթ սեանց՝ երկուք. իսկ միւս չէնքն քակեալ իսպառ. ի հիւսիսային հիման կամարի սեղանոյն տեսաւ այս արձանագիր.

«ՆԿԷ թուականիս (1018) ես՝ Մարիամ, որ ետու զիմ գիրքս ի Սուրբ Սարգիսս աս... իմ հոգւոյնս պարտական է տարոյն Բ աւուր ժ...»:

Արտաքոյ մեծի պարսպին շուրջանակի են աւերակք չինուածոց. ի հիւսիսակողմն են չիրիմք այլազգի մահմէտականաց յօսմանեանց և ի նմա քանի թիւլպէք գմբեթաձևք ի վերայ չիրմաց: Յարևելից՝ ի վերայ հաստատուն սալքարուտ բարձր տեղւոջ է փոքրիկ մատուռն ի յղկեալ կարմիր քարանց. յորմն հարաւոյ արտաքուստ գտանի արձանագիր անուան չինողի այնր մատրան՝ Ջուրջուր անուանելոյ:

Ի հարաւակողմն ամրոցին իբրև քառորդ ժամու ի լանջի անդ է տաճար միջակ մեծութեամբ առանց սեան ի խարտեալ սևագոյն քարանց. անկեալ է կաթուղիկէն և կիսով չափ որմն հարաւոյ խո-

նարհեալ ծածկեալ է արտաքուստ զներքին մասն այնր որմոյ՝ որով և զինչ ինչ արձանագրութիւնս, որք նշմարին ի սկսուածսն:

Արձանագրութիւն մի յարևմտեան ճակատի որմոյն արտաքուստ ի հարաւակողմն դրան՝ ըստ այսմ.

«Յանուն Աստուծոյ, ի Ն եւ Լ թուականութեան Հայոց (981), ի հայրապետութեան Անանէի և ի թագաւորութեան Աշոտոյ՝ որդ... ա կամ եղեւ յԱստուծոյ ես Խոսրոա... Հայոց թագուհի, որ կարգեցի...»:

Շուրջ այսր տաճարաւ եղեալ են սենեակք, որոց աւերակացն հիմունք կան տակաւին. եւ որպէս երևի՝ լեալ է այս տեղի մենաստան կուսակրօնից. շուրջ զմենաստանաւս յընդարձակութեան անդ են վայրք այգեստանեայց և ծառաստանաց մինչև ցստորոտն առապարին ցդաշտ անդր. և գրեա՛ թէ յիւրաքանչիւր բաժինս այգեացն գտանին մի մի ընդարձակ քարայրք (մազարայ) տեղիք հնձանաց:

Վերջին աւերութիւն այսր այգեաց և ծառաստանաց՝ որպէս պատմեն ականատեսքն, եղև յամին 1804. քանզի ի գալ զինուորութեանցն Ռուսաց պատերազմաւ ի վերայ Երևանայ յայնմ ամի և ի գաղթիլ բովանդակ բնակչաց նահանգիս յայլևայլ ամուր տեղիս լերանց և ձորոց և ի հեռաւոր սահմանս, Ջաֆար խան անուն ոմն յայլազգի մահմէտականաց իբրև եօթն հարիւր գերդաստանօք ամրացեալ գոլով ի լեառն Բարդող, իջանէ անտի այնու բազմութեամբ և անցեալ ընդ Երասխ՝ գայ բնակի աստ յամսաչափ միջոցս և յապականութիւն դարձուցանէ զամենայն: Եւ զկնի առանց բնակչաց մնացեալ խսպառ չորանան տունկքն և անհետանան: Իսկ նա ինքն Ջաֆար խան որոշեալ ի Պարսից և անցեալ ընդ հիւսիսային ստորոտով Արագած լերին ի վանսն Հառիճոյ և անտի ընդ Ապարան և ընդ Եղիվարդ գիւղ՝ գնայ, միանայ ընդ զօրսն Ռուսաց և հպատակի իշխանութեան նոցին:

381. Աշնակ՝ աւան ի հնումն, այլ ի նորումս գիւղ փոքրիկ նովին հնչմամբ անուան ի Հայոց և յայլազգեաց. և է յարևելակողմն Թալնայ իբրև մի ժամ հեռաւորութեամբ ի տափարակ, ընդարձակ դաշտավայր տեղւոջ, յստորոտի անդ Արագած լերին, ուր բնակին այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 15: Գտանի ի սմա աւերակ հին եկեղեցւոյ ի տաշածու քարանց: Այս աւան յիշատակի ի պատմութեանս սովին անուամբ և դասի ի կարգս ձմերոցաց զօրացն Հայոց:

Զայս աւան աւերեաց յառաջն յամի 450 ուրացեալն Վասակ Սիւնի ընդ այլ երևելի աւանաց և քաղաքաց. և յերկրորդումն այրեաց չարագլուխն Ելտկուզ, զորմէ Սամուէլ Անեցի ի Թիւն Փրկչական

1163. «Զմեծ աւանն Աշնակ այրեաց չարագլուխ Ելտկուզ, զոր Ռ (5000) այրեցածսն ասեն»:

382. Եւ որովհետև յիշատակեցաւ ամերոց զօրաց Հայոց, կարևոր է գիտել հայրենասէր անձանց և զանմեռ մշտապատրաստ զօրացն զթիւ՝ ի ժամանակի անդ թագաւորացն Հայոց: Զայս ծանօթութիւն ոչ ոք ի պատմագրաց եթող ի գրուածս իւր յաղագս ապագայից, այլ ի խուզարկութեան մերում ի մատեանս հնոց՝ գտաք զայն աշխատասիրեալ յԱնանիայ Շիրակունւոյ ի վախճանի ժամանակագրութեան նորին, զոր ձևացուցեալ էր ի քառաբաժին բոլորակ աղիւսակի միում և զբաժինսն որոշեալ անուամբ դրանց՝ այսինքն դրունք հիւսիսային, հարաւային, արևելեան և արևմտեան: Եւ յիւրաքանչիւր բաժինսն դասաւորութեամբ շարակարգեալ զնախարարս կամ զազնուականս և զաշխարհսն և զթիւ յատկացեալ զօրացն նոցին, որոց ամենեցուն գումար թէպէտ ոչ համեմատի ամբողջ թուոյն, որ ի լուսանցի անդ աղիւսակին նշանակի և այն թերևս ի սխալմանց գրչաց մատենին, բայց այնու ամենայնիւ դարձեալ հարկաւոր դատեցաւ ի մէնջ դնել աստ զօրինակն այնր աղիւսակի, զոր հազիւ ուրեմն ի հնութեանց անտի թղթոցն կարողացաք կենդանացուցանել:

383. Տաշ Ղալայ՝ *տունք 38, եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Մազարճուղ՝ *տունք 10, եկեղեցին անուամբ Սուրբ Սարգսի:* Ատիեաման՝ *տուն 1, եկեղեցին քարաշէն ի հնոց:* Ղուլդարվիշ՝ *տունք 9, եկեղեցի չէ օծեալ տակաւին:* Ղրմզլու՝ *տունք 11, եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Տատալու՝ *տունք 14, եկեղեցին անուամբ Սրբոյն Յովհաննու:* Կեօզլու՝ *տունք 12, եկեղեցին յանուն Սրբոյն Ստեփաննոսի:*

Տաճկաբնակ գիւղօրայքն: Ահակճի՝ *տունք 9:* Իրինթ՝ *տունք 8:* Մէհրիպան՝ *տունք 14:* Ղարղազօնմազ՝ *տունք 11:* Արալըղ՝ *տունք 4:* Շխահաճի՝ *տունք 7:* Եաշիլ՝ *տունք 5:* Պազճաճուղ՝ *տունք 5:*

ԳԱՒԱՌ ԹԱԼԻՇԱՅ ԵՒ ԳԻՒՂՕՐԱՅՔՆ

384. Արուճ *աւան: Քաղաքագեօղ կամ դաստակերտ անուանեալ ի պատմագիրս, իսկ այժմ ըստ այլազգականին՝ Թալիշ վերակոչի և է հեռի ի Թալնայ ուղղակի ընդ արևելս իբր չորս ժամաւ, ի լեռնոտի անդ Արագածու ի դաշտավայր տեղւոջ: Ունի յարևելակողմն իւր զկրկին ձորակս. մին՝ որ փոքր ինչ հեռի գտանի, սկսանի ի վերին ստորոտէ բարձրութեան լերինն և անցեալ ընդ շէնն հարուստ մի-*

ջոցաւ աւարտի ի հիւսիսային եզր անդ դաշտին Արմաւիրայ: Իսկ միւսն՝ կարի փոքր և մերձ յաւերակն պալատան Գրիգոր իշխանի Մամիկոնեան: Հին աւերակն տեղւոյս ընդարձակ, այլ այժմ բնակին սակաւաթիւ գերդաստանք ի մահմէտականաց՝ տունք 13:

Հին եկեղեցի սորա կառուցեալն ի Գրիգոր իշխանէ Մամիկոնեան ի մէջ անդ Է–րդ դարու՝ կարի ընդարձակ մեծութեամբ առանց սեան, երկար քառակուսի՝ բոլորովին ի սրբատաշ քարանց. յերկոսին կողմանս՝ ընդ հիւսիս և ընդ հարաւ են եօթն եօթն մեծամեծ լուսամուտք կարի ցած դրութեամբ՝ այնպէս, զի աղօթաւորք համարձակ տեսանեն ընդ լուսամուտս զհանդիպակացսն և որպէս ինձ թուի՝ այս առաջին շինուած յԱյրարատ նահանգի ի մասին պայծառութեան ընդարձակ լուսամտից. ծածք սորա օրոցաձև. կաթուղիկէն որ ի միջավայր տանեացն, քակեալ անկեալ է իսպառ. սալայատակն տանեաց քայքայեալ, այլ որմունքն և մասամբ ինչ ծածք առաստաղին կան յամբողջութեան, ունի զմի ևեթ տեղի պատարագելոյ, յորոյ յերկոսին կողմանսն են երկու աւանդատունք կրկնայարկք: Ունի և զերկուս դրունս յարևմտակողմն և ընդ հարաւ:

Աւերակն պալատան բնակութեան նորուն Գրիգորի Մամիկոնեան յարևելից հարաւոյ եկեղեցւոյն հեռի իբրև յիսուն քայլ յարևմտեան եզեր անդ փոքրիկ ձորակին: Եղեալ է համակ ի կոփածոյ քարանց, այլ համակ ևս աւերեալ անկեալ՝ դնին վէմք շինուածոյն առ տեղեաւն:

Զեկեղեցւոյ աստի և զապարանից նորուն Գրիգոր իշխանի գրէ Զ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ՝ ըստ այսմ.

«Զայսու ժամանակաւ (ի կաթուղիկոսութեան Անաստասայ) բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին, որ ի մեծ դաստակերտին Արուճ, շինէ զնա ստիպով երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիսն իւր յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիտ[1] աղբիւր պղպջակեալ ընդ քարածէրպս վիմարդ քարանցն՝ որ զեզերս ունի իբրև զպսակ պատուարի: Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ»:

Վասն այսր եկեղեցւոյ գրէ և Ղևոնդ պատմիչ ի գլուխն Գ–րդ. «Եւ շինեաց նա (Գրիգոր Մամիկոնեան) տուն աղօթից ի գաւառն

[1] Այս ականակիտ աղբիւր ո՛չ բղխի զամն ողջոյն, քանզի այնինչ տիրէ ամառնային երաշտն և սպառին հեղեղք անձրևաց և հալոցք ձեանց ի բարձանց անտի, դադարի և աղբիւրն, որպէս և տեսաք յամսեանն օգոստոսի և զնոյն պատմեցին բնակիչքն:

Արագածոյ ոտին, ի յաւանն Արուճ տաճար փառաց անուան Տեառն՝ գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ ի յիշատակ անուան իւրոյ»: Իսկ Սամուէլ Անեցի որոշէ և զթուական շինութեանն ի 671 ամ Տեառն և ի ՃԺԸ թիւն Հայոց՝ յորում ասէ. «Շինուած կաթուղիկէին յԱրուճ, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դաւիթ» և այլն:

Զգտաւ յանուն նորուն Գրիգոր իշխանի գրուած ինչ յորմունսն: Եւ թէ գոյր ի վերայ դրանն արևմտեան, չեղաք կարող նկատել, զի կից դրանն արտաքուստ հաւասար որմոյն բրգաձև շինուածն ի հասարակ քարանց յարդի այլազգեաց արգել գտաւ:

Գտան ինչ ինչ արձանագրութիւնք յայլ նիւթս ներքոյ և արտաքոյ յորմունսն անդ եկեղեցւոյն, յորոց առաջինն ի ներքս անդր յորմն հարաւային.

«ՅԺԸ (869) թուականին Հայոց, յիշխանութեան Աշոտոյ և ի տէրութեան Սմբատայ Հայոց սպարապետի Բագրատունւոյ և ի կաթուղիկոսութեան Զաքարիայի եղեւ կռիւ ընդ յԱրուճ և ընդ Կոչ և ընդ Գաւառն է... Ճ. ար Արուճ զԿոչ և զԳաւարին և կամաւ զԿոչա վանականն և ի քրթավաքին ընդ անկին մին թանիվաճ առեցին: Ես Գրիգոր որդի Վառամա ծառա Սմբատա եկի հրամանաւ Սմբատա և ես հաւասարեցի զջուրն ընդ Կոչ և ընդ յԱրուճ զինչ իւրեանց...»:

Եւս ի ներքս անդր. «Յանուն Աստուծոյ ի... թուականին ՆԼԶ (987) ես՝ Սմբատայ շահան որդի Աշոտոյ շահանշահի, ազատեցի վասն իմ հօրն հաւգոյն և իմ արևշատութեան և մեղաց թողութեան զշալակաւոր բաժնէ շնորհիւն Աստուծոյ: Եւ եթէ ոք իմ վճռիս դիմադարձ լինի, նզովեսցի յԱստուծոյ, ՅԺԸ հայրապետացն»:

Եւս ի ներքս անդր.

«Ի թուիս Հայոց ՁԼԴ (1385), ի փաշայութեան Արղուն խանին, ի թագաւորութեան Դեմետրէի, պարոնութեան սպասալար Խարկրծեալին՝ եղբօրն Իվանէի՝ որդւոյն մեծին Շահնշահի, ես՝ Մակլիխուսան աղայիս որդիս եկի Արուճ, իմ հօրս գանձագին գեղս և թողի զհացին շարիատն հաստից...»:

Աստ ի շինամէջսն տանց այլազգեաց բացակայ յեկեղեցւոյ և յաւերակէ յիշեալ արքունեացն ի հարաւոյ՝ է քարամբք և կրով շինուած ինչ իբրև ամրոց, զորմէ ասեն բնակիչքն՝ ի ժամանակէ անտի իշխանութեանն Օսմանեանց մնացեալ:

Ի վեր անդր ի հիւսիսոյ կողմանէ տեսանի աւերակ շինութեանց, զորմէ ասեն յառաջն լինել պանդոկ և տեղի վաճառաց, քանզի է և յանցս ճանապարհին՝ որ գնայ յԱշնակ, ի Թալին և ի Մաստարա գիւղ: Գտանին և բազում տեղիք անդաստանաց մաքրեալք ի քա-

բանց և ի խճոյ և աւեր տեղիք այգեաց և ծառաստանաց՝ որպէս պատմեն աւանդութեամբ ծերունիք, թէ զտեղւոյ վաճառին և պանդոկին և թէ զայգեաց և զծառաստանացն. սահման անդաստանաց սորա կից է ընդ սահմանս Կոշայ յարևելից և հիւսիսոյ:

385. Կոշ *գիւղ բնակեալ ի Հայոց՝ տունք 15, և ի տաճկաց՝ 11: Եւ է հեռի ի նմանէ իբրև ժամ և կէս: Այլ բարձրանիստ դրութեամբ քան զայն, զի է ի լանջի անդ Արագածու ի վայելուչ դիրս, որ ուղղակի ընդ հարաւ ունի զակունս Մեծամօրի գետոյն իբրև միով ժամաւ՝ որոց միջոցն է ընդարձակ դաշտավայր՝ տեղի սերմանց և ցանից բնակչաց գեղջս: Ջուր սորա իջանէ ի բարձանց լերին մեծի, և մերձ գեղջս յարևմտից անկանի զառընթափ արծաթափայլ և դարձուցանէ զաղօրիս: Է և ջուր յորդ աղբեր միոյ յարևելեան եզեր տանցն ի փոսորակ տեղւոջ, յորոյ ական վերայ գոյ չէնք կամարաձև ի հնոց ի կոփածու խարտեալ քարանց:*

Եկեղեցիք սորա. մեծն ի սրբատաշ քարանց ի հնոց անտի՝ փլուզեալ անկեալ կայ իսպառ առ տեղեաւն: Փոքրն քան զայն՝ ուր աղօթեն այժմ հայազգի բնակիչքն. սեղան նորա կամարաւն հանդերձ ի խարտեալ քարանց նովին հին շինութեամբն, իսկ երեք որմունքն և փայտեայ ծածք նորա ի նորոյ շինեցան: Եւ անուանի յանուն Սրբոյն Գէորգեայ: Յաճախեն աստ ուխտաւորք. և աւանդութիւն է՝ թէ ի բերելն զնշխարս սրբոյն յարևմտից ի Հայաստան՝ աստ հանգուցեալ են գիշեր մի. և է ի մէջ եկեղեցւոյս զառաջեաւ բեմին սեղանոյ տապանավէմ մի յանուն նորին սրբոյ: Յարևմտից գեղջս է գերեզմանուտ՝ յորում է մատուռն տեղի պատարագելոյ ի կոփածու քարանց յարդարեալ:

Մերձ գեղջս յարևմտից հիւսիսոյ է շինուած ինչ անկատար ի քառակուսի դրութեան բարձրադիտակ տեղւոջ ի մեծամեծ կոփածու քարանց. և հազիւ բարձրացեալ շինուածոյն երկկանգնաչափ ի հարաւոյ կողմանէ. և այն համարեալ նմա ի տեղի հիմանց, կայ այնպէս. և որպէս երևի՝ է ի նորոց, թերևս յօսմանեանց:

Յստորև տանց գեղջս ի հարաւոյ է փոքրիկ քարայր, ուր մտեալ և ունկնդիր եղեալ՝ լսեն զբազմահնչիւն խոխոջս ջուրց ի յատակէ քարայրին, ուր մտեալ և մեր՝ ստուգեցաք: Անդ՝ ուր հնչի ձայնն, աշխատեալ՝ փոքր ինչ քակեալ էին բնակիչք գեղջս, թերևս կարասցեն գտանել զջուրն և հանել արտաքս յօգուտ անդաստանաց իւրեանց: Այս ջրանցք ընդ երկրաւ՝ թերևս են սկզբնաւորողք Մեծամօրի գետոյն: Ջուրք այսր լերին են մաքուր և առողջարար, այլ ջուր Մեծամօրի գետոյն սեաւ, ծանր և անախորժ յարբումն՝ պատճառեալ

յաղտաղտուկ հողոյ և ի հանքային քարանց և խճից ջրանցից նորա, որ ի միջոցս այսր գեղջ և ականց գետոյն:

Թերևս այս գիւղ իցէ Կուաշ անուանեալ աւանն յստորոտի աստ Արագած լերինս՝ զորմէ գրեն պատմիչք: Մովսէս Խորենացի (Հատոր Գ, գլ. 22). «Իսկ Գնէլ եկեալ յաւանն Կուաշ՝ որ յոտին Արագածն կոչեցեալ լերին, առ կուրացեալ հաւն իւր Տիրան: ... վասն որոյ հեղ-ձամահ եղեալ յիւրոց սենեկապետաց (Տիրան) ի հրամանէ արքայի ի գաղտնի. և ի նմին աւանի Կուաշ թաղեցաւ»: Կոչէ և զայս տեղի Կուաշ անուամբ Զաքարիա Սարկաւագ Յօհանավանից, կից այսմ և զՎժան՝ որ է յարևելից այսր գեղջ (Ա, գլ. 34):

Բազում այգեստանք եղեալ են յառաջագոյն աստ՝ յորս գոն տա-կաւին հնձանք փորեալք ի վիմին և յարդարեալք ի բնական քա-րայրսն: Եւ արդէն իսկ տեսանին ի տեղիս տեղիս որթք խաղողոյ և արմատք թզենւոյ:

386. Մենաստան այսր Կուաշ աւանի յանուն Սրբոյն Ստեփան-նոսի Նախավկայի յարևմտեան եզեր փոքրիկ ձորոյն, որ մերձ յայս գիւղ հեռի իբրև քառորդ մի ժամու՝ յարևմտից նորա. եկեղեցին փոքր, խաչաձև, գմբեթաւոր. այլ սակս ի վաղուց անբնակ գոլոյն, քայքայեալ, աւերեալ կայ: Գմբեթն անկեալ և որմունքն փոքր մա-սամբ վնասեալ և պատառեալ և զրկեալ յինչ ինչ քարանցն, ուստի խոշորատառ արձան շինութեանն յարևմտեան որմն նորա արտա-քուստ՝ ի պատճառս անկեալ քարանցն ի միջոցաց կարգի գրոցն չեղև յարմար առնուլ ի գիրս այս, այլ ի քայքայեալ կարգի անդ գրոցն պարզապէս տեսանէր՝ եկեղեցին գոլ յանուն յիշեալ սրբոյ Նախավկային: Նշմարին հետք նկարուց և տէրունի պատկերաց և սրբոց յորմունս այսր տաճարի ի ներքուստ. որպէս ի կաթուղիկէ եկեղեցին հին Թալնայ և յեկեղեցին Երերվաց դաստակի և յայլս:

Գտանի արձանագրութիւն ինչ նուիրանաց մերձ ի դուռն տա-ճարիս յորմն հարաւոյ՝ ըստ այսմ.

«ՆԼ (981) թուականին, ի կաթուղիկոսութեան տեառն Խաչկա և ի թագաւորութեանն Սմբատա և ի յասպարապետութեանն Գրի-գաւրո, յիշխանութեան Աշոտո՝ որ երետ Աշոտ յաւանէ զՋաղացսն և զէգին և զհողն կովեղձ ի սուրբ եկեղեցիս վասն շահանշահի արև-շատութեան և մեղաց թողութեան և որ ոք սպասաւորեցան ի սուրբ եկեղեցիս, Աստուած յիւր ի միւսանգամ գալստ...»:

Կացարանք կամ խրճիթք վանականացն մերձ յեկեղեցին խսպառ աւերեալ և խանգարեալ կան. գտանին և ի կոփածոյ քարանց յարկք ի լանջի անդ՝ կիսով թաղեալ ի հող: Որպէս և մին՝ յարևմտից տա-

ճարին, կամարայարկ ծածք նորա կիսով չափ իջեալ է, այլ միւս շէնքն կայ ամբողջ առանց դրան և լուսամտից և թերևս եղեալ է ջրշիղջ (սառնիճ). զի ո՛չ գոյ ջուր ի ձորակի աստ, այլ եթէ ի ժամանակս անձրևաց և հալոցաց ձեանց:

387. **Վժան** *գիւղ. այժմ անուանեալ յայլազգեաց* **Ուջան**, *հեռի ի Կոշայ ուղղակի յարևելս իբրև ժամ մի: Գոյ ի սմա սրբատաշ քարամբք եկեղեցի քայքայեալ: Բնակին աստ այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 7: Այս գիւղ է ի լանջի անդ մեծի լերին. և թերևս անունս Վժան ընկալաւ ի ձայնէ ջուրց սորին՝ որ իջանէ ի վերուստ անտի զառընթափ զգլխով վիմաց ընդ քարուտ առուակս վժալով կարի սրընթաց:*

Ստորոտ գեղջս ընդ հարաւ է բաւականաչափ ընդարձակ դաշտավայր արդիւնաբեր հողոյ: Ի դաշտի աստ ժողովեալ բանակեցան զօրք Հայոց առ արքայ Սմբատ յամի 895, ըստ Զ Յովհաննու կաթուղիկոսի՝ ընդդէմ հագարացի ոստիկանին Ափշնի բանակելոյն զօրօք ի Դողս գիւղ՝ որ յարևելից այսր գեղջ հեռաւորութեամբ աւելի քան զմի ժամ ի հիւսիսային եզեր դաշտին Վաղարշապատու՝ որ տակաւին կայ նովին անուանակոչութեամբ: Ի գեղջէ աստի էր երևելի վարժապետ վարդապետն Մելքիսէթ յաւուրս կաթուղիկոսութեան Մովսիսի Սիւնեցւոյ:

388. **Աղցք** *գիւղ: Հեռի ի Վժանայ իբրև ժամ մի ուղղակի յարևելակողմն, ի վերայ յարևմտեան քարափան ձորոյն Անբերդոյ, ուր բնակին այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 9 և անուանեն զանուն գեղջս* **Աղս**:

Զգեղջէ աստի Մովսէս Խորենացի (հատոր Գ, գլուխ 27). «Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս՝ ի ձեռնտու լինելոյ նախարարացն, առնու զամուրն Անի (Կամախ) և գերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլև զոսկերս թագաւորացն, ո՛չ գիտեմ թէ վասն նախատինս առնելոյ Արշակայ և եթէ վասն հմայից ինչ հեթանոսականաց, զոր ապա մաղթեալ նախարարացն՝ թափեալ թաղեցին յաւանին յԱղցս՝ որ յոտին Արագած կոչեցեալ լերինն. քանզի ո՛չ գիտացին ընտրել զոսկերս հեթանոսաց և հաւատացելոց, զի ընդ միմեանս էր խառնակեալ գերողացն: Յաղագս այնր ո՛չ արժանի համարեցան ի դիրս սրբոցն թաղել ի Վաղարշապատ քաղաքի»: Զայս գիտելով մեր զննեցաք ի շինամէջ գեղջս և ապա ի վերջոյ տեսաք զաւերակ մեծի եկեղեցւոյ յարևելեան եզեր գեղջս ի վերայ քարափան ձորոյն, ի վերայ ճանապարհին, որ իջանէ ի խորաձոր անդր. և մերձ այնմ ի հիւսիսոյ անմիջապէս ի վերայ նոյն քարափան է գետնափոր

մատուռն մի կամարայարկ ի հիւսածոյ խարտեալ քարանց և տանիք մատրանն հարթ, հաւասար գետնոյն և դուռն նորա փոքրիկ յարևմտից ի խոնարհ դիրս, ընդ որ մտեալ մեր՝ զննեցաք. երկայնութիւն մատրանն 5 գազ և կէս, լայնութիւնն 2 գազ, երեք չարէք, իսկ բարձրութիւնն 2 գազ և կէս. չէնքն արևելեան կողման կիսաբոլորակ և յատակ նորա բարձր քան զմիւս յատակն չորս մատնաչափ և էր իբրև տեղի բեմբի սեղանոյ և ի միջին տեղւոջ կանգնեալ քարեայ սիւն մի զօրէն սեան սեղանոյ. յերկոսին կողմանս յորմունսն հիւսիսոյ և հարաւոյ ծոցաւոր կիսաբոլորակ կամարօք տեղիք և զառաջեաւ ծոցաւոր տեղեացն վանդակք քարեայ՝ թզաւ լայնութեամբ և 3 չարէք բարձրութեամբ ի յատակէն. իսկ երկայնութիւնքն 7 ոտն և կէս՝ հաւասար որմոցն. յերկոսին վանդակսն անդ արտաքուստ էին քանդուածք երկաթի գործեաց. ի հիւսիսայինն՝ էր բազկատարած այր մի և երկու առիւծք յերկուց կողմանց յարձակեալ ի վերայ և այլ գիձք ինչ փաթոյթք՝ երկկարդ. իսկ ի հարաւայինն՝ յերիս բաժանեալ քանդակքն. Ա՝ բոլորակն բաժանեալ քառաբաժին, ի վերին երկու բաժնի՝ երկու թռչունք կտցահարեն զթերթ ծաղկանց, իսկ ի ստորին բաժինսն են մի մի վարդաձև քանդուածոյք. ի միջին բաժնի են երկու որթք խաղողոյ փաթութեալ ընդ իրեարս, աղուէս մի ի ստորև. և թռչուն մի կացեալ ի վերայ որթոյն՝ ուտեն զխաղողն. իսկ յերրորդ բաժնի արևմտեան՝ որսական այր մի ի ձեռին նիզակ հարեալ ընդ ծամելիսն գազանի իմիք և շուն որսական առ նմին:

Զունէր բնաւին լուսամուտ ինչ այս մատուռն, այլ զկնի այլազգիք յերկուս տեղիս քակեալ մրճովք բացեալ էին զփոքրիկ լուսանցոյցս՝ յարևելից և ի տանեացն. և ի կարևոր մաքրութեան պահէին նոքին այլազգի բնակիչքն. յորոց ի հարցանել մեր զտեղւոյս, պատասխանէին. **Պիզիմ փիրիմիզ տիր, զիարէթ երի**: Եւ երբեմն լոյս ևս վառեն անդ՝ բայց չգիտեն զինչ լինելն: Եւ ի հարցանել զմերձակայ հայ բնակիչս, թէպէտ ոչինչ ասեն զտեղւոյս, այլ աւանդութեամբ լուեալ ի միմեանց՝ պատմեն, թէ երբեմն 24 ուղտու բեռն մասունք բերեալ ամփոփեալ են աստ ի սմին գեղջ:

Կից այսմ մատրան են և այլ շինուածք թաղեալք ընդ հողովք և փլատակօք. և ի պեղել զհողսն ի յայտ գան ընտիր տաշածու քարամբք որմունք շինուածոց. յայսոսիկ շինուածս և մերձ այնց՝ անկեալ և փշրեալ՝ ցանեցիր կան խաչվէմք և պատուանդանք նոցին և սալայատակեալ ճանապարհք՝ որք ցուցանեն լինել տեղի ինչ նշանաւոր, և ըստ նկատման մերում՝ հաւանական թուի լինել այնմ մատրան ամփոփիչ ոսկերց հաւատացեալ և հեթանոս թագաւորացն

Հայոց, թէև բազումս որոնեալ՝ չկարացաք գտանել զնշմարարնս ինչ գրուածոց յաւերանսն անդ:

Ընդարձակ գերեզմանուտ այսր աւանի գտանի յարևմտակողմն բացակայ ի շինէս, որոց խաչվէմք զարդարեն զայն տեղի: Կան և յոլովք ի նոցունց տակաւին ի կանգուն ի վերայ պատուանդանաց իւրեանց:

389. **Տեղեր**. *կոչեցեալ ի բնակչացս և յարձանագրութիւնս այլ մենաստանաց յայս անուն: Հեռի է ի վերոյիշեալ Աղցք գեղջէ դէպի վեր ի լեառն ընդ հիւսիս իբրև ժամ մի ի բարձրաւանդակ դրութեան յարևմտեան եզեր փոքրիկ ձորակի՝ որ փոքր ինչ յստորև խառնի ի մեծ ձորն Անբերդայ: Այս անուանակոչութիւն անծանօթ ի պատմագիրս Հայոց՝ այլ կարի յաճախեալ ի բնակիչս այսց կողմանց, զոր և այլազգի մահմէտականք յորջորջեն* **Դըղըր** *առ ի չկարող լինել արտաբերել զհայացի անունս Տեղեր: Եւ թերևս անուանի գտաւ ի սկիզբն անդ ԺԳ–րդ դարու ի պատճառս մեծակառոյց եկեղեցւոյն որ ի նմա՝ զոր ետ կառուցանել բարեպաշտ տիկինն Մամախաթուն՝ ամուսին Վաչէ իշխանի, որոյ շինութեանն արձանագիր դնի ի վերայ արևմտեան դրան գաւթի տաճարին յայս օրինակ.*

«ՈՁԱ (1232):

Շնորհօքն Աստուծոյ ես՝ Մամախաթունս, շինեցի զեկեղեցիքս զմեծ և զփոքր և զժամատունս յիշատակ ինձ և առն իմոյ Վաչէի: Իսկ բնակիչք սուրբ ուխտիս հաստատեցին մինչ ի տարին պատարագ ի տօնի Վարագայ սուրբ Խաչին զամենայն եկեղեցիքս մատաղով և սիրով: Իսկ որ զգրեալս խափանէ՝ Աստուծոյ տայ պատասխանի առաջի Յիսուսի Քրիստոսի: Մխիթար գրիչ»:

Միջին տաճարն առանց սեան. և ընդարձակ գաւիթ նորա ի վերայ չորից միաստանի սեանց. հանդերձ մատրամբքն են վայելչաշէնք, բարձրակամարք յամրակուռ սրբատաշ քարանց: Երեք փոքրիկ կաթուղիկէք են ի նմա մին ի վերայ տաճարին և երկուքն ի վերայ գաւթին: Այս երկու կաթուղիկէք ի ներքոյ իւրեանց ունին զերկուս փոքր այլ մատրունս ի միջոցի անդ առաստաղի և տանեացն և փոքրիկ դրունք նոցա ի վերուստ անտի տանեացն:

Այս մեծագործ եկեղեցի, որ յամենահովասուն վայրի, ի վայելուչ բարձրադիտակ տեղւոջ, դիտող յընդարձակ դաշտ Արարատայ՝ կայ այնպէս լքեալ և ամայի և բնակիչք անդէն այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 6: Եւ որպէս երևի չեն եղեալ աստ յառաջագոյն ամուսնաւոր գերդաստանք, զի կարի սակաւք են անդաստանք սերմանց: Այլ միայն եղեալ է մենաստան կուսակրօնից և թէ եղեալ իցէ

աստ նախքան զչինութիւնն այսր տաճարի բնակութիւն կուսակրօնից և եկեղեցի նոցա, հաւանական երևի:

Կացարանք կամ տունք նոցին կուսակրօնիցն չունին ինչ հետս չինութեանց, քանզի միշտ փոփոխ բնակութեամբ այլազգի մահմէտականաց՝ քակեալ և անհետացեալ են: Նախքան զամս իբրև յիսուն այլազգի բնակիչք շուրջ զգերդաստանօք իւրեանց և զեկեղեցեաւն ածեալ կառուցեալ են պարիսպ ի հասարակ քարանց և ի հողոյ ի պատճառս ասպատակութեանց, այլ այն պարիսպ ևս քայքայեալ՝ կայ մասամբ ինչ ի կանգուն:

Եկեղեցին ի տեղիս տեղիս ունի աւերմունս քարանց և պատառուածս ի գետնաշարժից, այլ մեծ մասամբ կայ յամբողջութեան: Եւ անուանակոչութիւն իւր յայլոց մեծ մասամբ եղծեալ արձանագրութեանց՝ յիշատակի Աստուածածին:

390. Յստորև քան զայս տեղի, ի լեզուակի անդ երկուց ձորոց՝ որ անկանի ընդ մէջ այսր Տեղերոյ և Բիւրականայ, աւանդեն լինել Սուրբ Խաչ վանից՝ զոր Վարդան աշխարհագիր թուէ ընդ միւս երևելի մենաստանս. այլ եկեղեցի նորա և կացարանք կրօնաւորացն իսպառ աւերեալ հաւասարեալ են երկրի:

391. Միւս տաճկաբնակ գիւղօրայքն: Էրկով՝ տունք 9: Մաղտայ՝ տունք 6: Աւան՝ տունք 12: Ղարաճալար՝ տունք 8: Դիեան՝ տունք 6:

ԳԱՒԱՌ ԱՆԲԵՐԴԱՅ ԿԱՄ ԲԻՒՐԱԿԱՆԱՅ

392. **Անբերդ** *ամրոց. հեռի ի Բիւրականայ ընդ հիւսիս ի վեր անդր ի լեառն մեծ իբրև երկուց ժամուց՝ յորմէ ի վեր անդր չի՛ք այլ տեղիք ինչ գիւղից կամ աւանաց, է կառուցեալ ի վերայ հատածի միջոցաց խառնուրդի երկուց ձորոց: Ի հարաւոյ՝ նոյն խառնուրդ ձորոցն և ջուրց նոցին, յարևելից և յարևմտից՝ նոյն խորաձորք: Երեքեանն ևս զառիթափք և անմատչելիք: Այս հատած լեզուակ ի հիւսիսոյ կողմանէ որոշեալ է հաստատուն բարձր պարսպաւ՝ որ-ձաքար մեծամեծ տաշածու վիմօք: Եւ է միջոցն բաւական ընդարձակ տարածութիւն եռանկիւնաձև, ուրանօր տեսանին հետք կիսաւեր չինութեանց՝ բնակարանաց, դիտանոցաց և ջրշղջի (սառիջ): Եւ ի սպառուածի անդ հատածի հարաւակողման է տաճար գեղեցիկ միջակ մեծութեամբ՝ կառուցեալ առանց սեան յորձաքար տաշածու վիմաց. ունի զմի ևեթ սեղան և զերկուս փոքրիկ աւանդատունս և*

զկաթուղիկէ ի միջավայր տանեացն և զմի դուռն ի հարաւոյ: Թէ-պէտ յամբողջութեան կայ տաճարն, այլ ինչ ինչ քարինք ի ծայրէ որմոցն, ի տանեացն և ի կաթուղիկէէն անկեալ կան շուրջ զեկեղե-ցեաւն. ունէր արձանագիր՝ թերևս չինութեանն, ի վերայ դրան. այլ ի կարկտաբեր հողմոց և յանձրևաց հարթեալ գրոցն՝ չեղև հնար ըն-թեռնուլ, քանզի հազիւ նշմարէին ստուերք ինչ ինչ տառից: Գտաւ ի մէջ եկեղեցւոյն յորմն նորա այս արձանագիր նուիրանաց առանց թուականի՝ թէև յայտ իսկ է ժամանակն յիշատակեալ ի նմին իշխա-նաւորաց:

«Ի ժամանակի տէրութեան Իվանէի և Շահնշահի, վերակացու-թեան գաւառիս Վաչէի մեք ամեն... տուաք... առուին կէսն Տեղե-րու: Եւ սոքա հաստատեցին զխաչին շաբաթն և կիրակէ պատարագ մեր ննջեցելոց»:

Անուանակոչութիւն տեղւոյս նշանակի ի պատմագիրս Անբերդ և Ամբերդ. այլ առաջինն ուղղագոյն երևի, քանզի բացասական մասնիկն՝ **ան**, *ի բաց բառնայ զիրական նշանակութիւն բերդի՝ որ կայանայ շրջապատ պարսպօք և աշտարակօք: Այլ զայն չունի տե-ղիդ այդ բացի հիւսիսային միակ պարսպէն՝ որ ձգի ուղղագիծ բաշէ ի բաշ երկուց ձորոյն, վասն որոյ անուանիլ պարտի Անբերդ, իսկ Ամբերդն նշանակէ կից ընդ այլում. որպէս ամուսին՝ այն է, համուս. ուսակից (օմուզտաշ):*

393. **Բիւրական**. *գիւղ այժմ բնակեալ ի հայոց: Է ի վերայ արևե-լեան եզեր մեծի ձորոյն Անբերդայ ի տափարակ դիւր տեղւոջ որ անկանի հանդէպ մեծի եկեղեցւոյն Տեղերայ ունելով զայն յարևմտից յայնկոյս ձորոյն, զորմէ Զ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ. «Եւ դարձեալ չու յուղի անկեալ չոգաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ գանձի գնոյ, ուր և չինեալ յար-դարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք, պեր-ճապաճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով, և վանս կուսակրօն միանձնացելոց զնա հաստատեալ: ... Եւ մարտամբոխ բազմութեան զօրաց հորդան տուեալ, զի գոնեա ի գաղտնիս իմն ծածկաբար ի վերայ ամրոցկանն Բիւրականու հասեալ (զօրք Նս-րայ ոստիկանի) ի կապանս կալեալ տարցին զիս, և որ ընդ իսն էին կղերիկոսք: ... Իսկ բնակիչք Բիւրականու ծանուցեալք զանբժշկելի միտս հեթանոսացն... փակեցին զդրունս առաջի իւրեանց: ... Էին ոմանք և հեթանոսք ի բնակչաց տեղւոյն հողագործ մշակութեան պարապեալ, և հարկս մեզ հարկանէին»:*

Ի պատմութենէ աստի երևի թէ եղեալ է աստ յառաջագոյն և ամրոց փոքրիկ՝ որոյ չիք նշմարանք այժմ: Եւ գուցէ հնութիւն ժամանակին ծախեալ զայն՝ անհետացուցեալ է: Գտանի տակաւին որմունք եկեղեցւոյն կառուցելոյ ի յիշեալ կաթուղիկոսէ յամբողջութեան, այլ կամարայարկ ծածկոյթ նորա խսպառ խոնարհեալ է. և լեալ է առանց սեան և բաւականին ընդարձակ: Ունի զմի սեղան տեղի պատարագելոյ և զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ սեղանոյն: Շուրջ զեկեղեցեաւս են բնակութիւնք ժողովրդոցն՝ տունք 33, և ժողովուրդքն կատարէին զաղօթս իւրեանց ի սմին եկեղեցւոջ: Իսկ պատարագն և այլ սրբազան խորհուրդք մատչէին ի միում յաւանդատանցն, մինչև յանցեալ թիւ 1841, փայտայարկ արարեալ զեկեղեցին՝ յարդարեցին բաւականաչափ հարկաւոր պիտոյիւք և կոչի եկեղեցին անուամբ Սուրբ Յովհաննէս:

Այս գիւղ ունի զբաւական արտորայս սերմանց, որոց ջուրն իջանէ ի գագաթանէ անտի լերինն ի մեծ լճակէն (343) հեռաւորութեամբ իբրև հնգից ժամուց: Ունի և զայգիս խաղողոյ և ծառաստանս: Ունի և կարմրախայտ ձկունս ի ձորամիջի անդ ի ջուրն Անբերդայ:

Ի վեր անդր դէպի լեառն ի գեղջէ աստի և յարևելակողմն Անբերդայ և ձորոյն է ցածուն անտառ կաղնի փայտից՝ ուստի ամ յամէ հատեալ բնակչաց այսոցիկ կողմանց վճարեն այնու արքունի հարկն փայտից, և իջուցեալ ևս ի դաշտ՝ ի Վաղարշապատ և յայլս վաճառեն ի պէտս վառելեաց. առնեն անտի և ածուխ (քեօմիւր):

Առողջարար է օդ տեղւոյս և ջուրն. վասն որոյ յանցեալ թիւ 1835 շինեցան աստէն յարևելեան եզեր գեղջս ամառնային կացարանք կառավարչի կողմանցս և պարագայից նորին. իսկ ձմեռնային կացարանք են ի Զէյվա գեղջ Հայոց:

394. **Արդ աւասիկ**. *կոչի մատուռն փոքրիկ սրածայր կաթուղիկէիւ և է յարևելակողմն Բիւրականայ ի մէջ փոքրիկ ձորոյն՝ յարևմտեան եզեր փոքր ջրոյ ձորակին: Այս մատուռն կայր ի կանգուն ցամն 1840, այլ ի գարնան այնր ամի անկեալ խոնարհեցաւ ի հեղեղաց ջուրց ձորոյն: Վասն անուանակոչութեան և շինութեան այսր մատրան աւանդեն բնակիչք թէ ի հնումն սրբակեաց այր ոմն ի ճգնող արանց վախճանեալ աստէն՝ մնայ անթաղ: Եւ ապա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեալ քահանայի ուրումն և բերեալ հանդէպ այնմ տեղւոջ ի բարձրաւանդակ ինչ վայր՝ որ է ի մատրանէն յարևմտեան հիւսիս՝ յարևմտեան եզեր ձորակին, ցուցանէ զմարմինն վախճանեալ ճգնաւորի, ասելով. «**Արդ աւասիկ**, *ե՛րթ և ամփոփեա՛ զայն*»: Զարթուցեալ նորա ի քնոյ՝ գնայ անդր և որոնեալ գտանէ զմարմինն*

յարևելեան եզեր ջրոյ ձորակին և անդ ամփոփէ ի շիրմի: Յորոյ վերայ կառուցանեն ապա խաչվէմ մեծ, որ կայ և ցարդ: Եւ զմատուռն սրածայր կաթուղիկէիւ հանդէպ այնմ յարևմտեան եզեր այնր ջրոյ:

Ի գեղջէ աստի Բիւրականայ ուղղակի դէպ յարևելս յառաջացեալ իբրև կէս ժամ իջանի ի խոնարհ ի գոգաւոր դաշտավայր ինչ տեղի՝ պատեալ յերից կողմանց դիւրագնաց առապարօք ի հիւսիսոյ, յարևելից և յարևմտից: Ուրանօր են գիւղօրայք երեք՝ Լազրեվան, Թէքքէ և Փարպի:

395. **Լազրեվան***: Թերևս Լազարու վան, կամ լաւ ևս ասել՝ Ղազարու վանք: Հին եկեղեցի գեղջս ի հարաւակողմն. կան որմունքն ևեթ, զի կամարայարկ նորին խոնարհեալ է բոլորովին և եղեալ է առանց սեան: Ունի զմի սեղանատեղի, զերկուս աւանդատունս և զմի դուռն: Աւանդեն բնակիչք կողմանցս զայս եկեղեցի յանուն Ղազարայ Փարպեցւոյ պատմագրի և զգերեզման նորին ցուցանեն ի հարաւային աւանդատան եկեղեցւոյս, որպէս և աւերակն տեղւոյն ցուցանէ ի խոնարհ անդ զփոքրիկ ցածուն կամարայարկ ինչ: Որմունք աւերակ եկեղեցւոյս երևէր կրկնաշէն, քանզի յաւերակէ անտի առաջին շինութեանցն առեալ զքարինս այլևայլ դրութեամբ հիւսեալ էին յորմունսն: Եւս և յառաջին շինութեանց անտի զհատուածեալ վէմսն արձանագրութեանց խառն ընդ այլ քարանց եղեալ էին ի շարի անդ, որք թերի գոլով ի շարակարգութեանցն՝ յայտնէին և ոչինչ: Բնակին աստ այժմ այլազգի մահմէտականք՝ տունք 21:*

Յարևմտից և ի հարաւոյ տանց գեղջս և յստորոտէ եկեղեցւոյս բղխին ականակիտ աղբիւրք առողջարար ջուրց, և սկզբնաւորեն զփոքրիկ գետակն **Շաղվերտ** *կոչեցեալ՝ կամ այն է ջուր Փարպւոյ, որ յառաջացեալ իբրև ժամ մի՝ անկանի ի գետն Քասախ յստորև քան զՕշական. գոն ի սմա ախորժահամ կարմրախայտ ձկունք:*

Ի հարաւային ստորոտէ տեղւոյ եկեղեցւոյն բղխեալ ջուրն յեօթն աղբերականց՝ անկանի յառուակ ինչ և ընթացեալ ընդ լանջս առապարին և անցեալ ընդ Փարպի յարևելից՝ ոռոգանէ զարտորայսն և անուանի ի բնակչացն՝ **Օխնակայ ջուր***, այսինքն՝* **եօթն ականց ջուր***:*

396. **Փարպի***. Գիւղ հռչակաւոր ի պատմագիրս յանուանէ Ղազարայ պատմագրի, և յայսոսիկ կողմանս ի յիշատակութենէ մենաստանին, որ ի նմա յանուն սրբոյն Գրիգորի: Այս գիւղ հեռի է ի Լազրեվանայ աւելի քան զքառորդ միոյ ժամու՝ յարևելեան եզեր փոքրիկ գետակին: Բնակիչք սորին հայազգիք՝ տունք 28: Գոն և քանի մի գերդաստանք ի մահմէտականաց: Նիստ գեղջս տափարակաձև: Եկեղեցին կարի փոքր անմիջաբար յեզեր անդ գետակին*

ի բարձր դրութեան՝ կառուցեալ ի սրբատաշ քարանց ի վաղ ժամանակաց և է խրթին և մթին: Եւ զկնի՝ իբրև յԺԳ–րդ դարու ի պատճառս երկիւղի ասպատակութեանց ի չորից կողմանց կարի ստուար կրաշաղախ մեծամեծ վիմօք հիւսեալ են զայլ որմն կից ընդ որմունս եկեղեցւոյն: Եւ այնպէս բարձրացուցեալ անդր քան զտանիքն՝ արարեալ են իբրև աշտարակ հզօր ընդդէմ հինից և ասպատակողաց: Եւ արդէն կան տեղիքն նետաձգութեանց կամ հրացանից ի բարձանց անտի՝ կոչեցեալ ռամկօրէն յայլազգի լեզուս Տօնղուզպուռնի*: Ունի փոքրիկ անցս դրան միոյ յարևմտից և դուռն ի վերայ նորա միաստանի ամրակուռ սեաւ վէմ: Ի միջոյ այրս դրան՝ ասեն, էր գետնափոր ճանապարհ ի խոնարհ ցգետակն վասն առնլոյ անտի զջուր ի ժամանակի պաշարման:*

397. Մենաստան*. Յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի է ի մէջ այգեստանեացն յարևելից գեղջս: Կացարանք և պարիսպ նորա շուրջանակի իսպառ քայքայեալ աւեր կան: Իսկ տաճարն խանգարեալ յառաջի չինութեանց անտի՝ կան որմունք նորա և է ի փոքր դրութեան, զոր ծածկեալ փայտիւք ընակչացն գեղջս՝ տան անդէն կատարեալ զսրբազան խորհուրդ պատարագին: Իսկ զհասարակ ժամերգութիւնն ի միւսումն որ առ գետակաւն:*

Գտանի արձանագրութիւն այսպիսի ի վերայ դրան եկեղեցւոյս արտաքուստ.

«Յանուն Հաւր ամենակալի, կամաւ որդւոյ Միածնի և միջնորդութեամբ Սուրբ Հոգւոյն ես Աղբուղայ որդի Իվանէի որդւոյն մեծի Շահանշահի. ես Աղբուղայ թողի զԲարպոյ այգեաց չարիատն և արարի յիշատակ ազգէ յազգ: Արդ ամենայն ոք ի մերոց կամ յօտարաց խափանել կարէ և որ խափանէ, ՅԺԸ Հայրապետաց նզոված և յամէն ազգէ նալաթ: ՁԺԳ (1264)»:

Ի հնումն կրօնաւորէին աստ բազմութիւնք կուսակրօն միանձնացելոց, յորոց մի էր և Յովսէփ՝ որ ի վախճան ութներորդ դարու կացուցաւ յԱթոռ Հայրապետութեան:

Յարևելից այսր մենաստանի ի բարձրաւանդակի առապարին ի վայելուչ դիրս՝ է աւերակ տանց և փոքրիկ խաչաձև մատրան՝ զոր բնակիչքն անուանեն Սուրբ Թարգմանիչք*: Եւ ի հարցանել զզիարդն, ասեն. «Աստ թարգմանեցին սուրբ վարդապետքն մեր զհոգևոր օրէնքն»:*

Միւս գիւղօրայք Անբերդայ տաճկաբնակք. Ագարակ՝ տունք 29: Բաթրինճ՝ տունք 11: Թաքեայ՝ տունք 26: Փէրսի՝ տունք 9: Անզրսաղ՝ տունք 7: Քեօթակլու՝ տունք 11: Ղօշապուլաղ՝ տունք 4:

ԳԻՒՂՕՐԱՅՔ ԿԱՐԲԻՈՅ ԵՒ ԴԱՇՏԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒ

398. **Օշական** *գիւղ հեռի յէջմիածնէ ընդ հիւսիս իբրև երկու ժամ ի վերայ հիւսիսային եզեր ի կրկնակի անդ ձորոյն Քասաղ գետոյ, սեպհական կալուած աթոռոյ էջմիածնի և այժմ հանդերձ բնակչօք (139). զայս գիւղ պարգևեաց Խոսրով արքայ Հայոց Վահանայ Ամատունւոյ՝ ի պատճառս քաջութեան նորա ի խորտակելն զասպատակիչ զօրսն հիւսիսական և ի հարկանելն ի մահ զզօրագլուխ նոցին զհսկայն վիթխարի յամի 351, ըստ Խորենացւոյն (հատոր Գ, գլուխ9):*

Յայս գիւղ ամփոփեցաւ մարմին արդիւնաշատ սուրբ վարդապետին Մեսրովպայ և է գերեզման նորա ի ներքոյ բեմին սեղանոյ և մուտ նորա ընդ ճակատ բեմին՝ ուր դնի գրակալն ընթերցուածոց: Զայս եկեղեցի ետ կառուցանել նա ինքն Վահան Ամատունի հազարապետ ի պատիւ մաքուր մարմնոյ սրբոյ վարդապետին, զոր և զկնի նորոգեաց Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի յամի 1639: Այլ կամարայարկ նորա խոնարհեալ՝ փայտիւք ետուն ծածկել ի ժամանակս մեր: Եւ են ամբողջ որմունք նորա կարևոր բարձրութեամբ, և միջոց նորա բաւական ընդարձակ՝ լեալ յառաջագոյն առանց սեան: Ունի զմի ևեթ սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս, յորմն հիւսիսոյ արտաքուստ զբրգունս՝ որք կիսով չափ խոնարհեալ են:

Զգտաւ արձանագիր չինութեանն և գուցէ ընդ աւերանս հարաւային որմոյն անհետացեալ է, քանզի այս որմոյն արտաքին երես գրեա՛թէ ի հիմանց նորոգեալ են և թերևս ի նորոգութեանց, որ յամի 1639. այլ գտանին գրուածք ինչ առ այլ նպատակ՝ որք են.

Յորմն հարաւային աւանդատան ի ներքուստ.

«Ես իշխան Յօհան Ամատունի յազգէն Հայոց եդի սահման գաւառիս իմոյ յՕշականայ հասանի մինչ ի բլուրն[1] *էջմիածնի. և անտի վայր մինչ ի Քասախ գետ. հիւսիսոյ կուսէ գետն Փարպու մինչ ի Քսոսպն համակ պողոտայն և անտի վեր Կարբու դարերն (ստորոտք առապարացն): Յարևելից կուսէ ճանապարհն Եղէվարդայ. աստի մինչ ի էջմիածին: Ով ոք այս ցանկս պատառէ, սևերես լինի առաջի Աստուծոյ, ամէն»:*

[1] Ի միջոցս Օշականայ և էջմիածնի՝ ի բաց առեալ զքարուտ առապարն ուր Վահան Ամատունի վանեաց զԿովկասեան զօրս, չի՛ք այլ բլուր ի դաշտի անդ բացի ի միոյն. տե՛ս ի ծանօթութեան 84 հատուածոյ:

Ի հիման կամարի հարաւակողման ներքին դասուն.

«Ի թուին ՉԽԴ (1295), ի թագաւորութեանն աստուածասէր արքայ Քեաղաթու ղանին և ի հայրապետութեանն տէր Համազասպայ, ես՝ Բէսութայս, որդի պարոն Ամիրբէկին՝ որդոյ պարոն Սահմարինին, թողի զյՕշականու զղեսարայ զհարկն, զգեղիս և զվանորայից վասն արևշատութեան հօր իմոյ և ինձ Բէսութայիս և ի փրկութեան հոգոյ Ամիրի իմոյ: Արդ՝ յետ ժամանակաց ի թագաւորաց կամ յիշխանաց զընծայս մեր խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզոված է և վարձ զՈւդայի և զԿայենին առցէ. և ի լոյս փրկչական մի՛ հայեսցի, և մեր մեղացն պարտական է. կատարիչք գրոյս օրհնին յԱստուծոյ, ամէն»:

Ի միջոցս վերոյգրեալ երկուց արձանագրացն.

«Ի թուին ՉԼԷ (1288): Շնորհիւ բարերարին Աստուծոյ յամի թագաւորութեան աստուածասէր արքայ Արղուն ղանին, ես՝ պարոն Սահմատինս, որդի պարոն Աւետեացն, թողի զյՕշականո զհացի և զդարմանի զշարիատն, զվերի և զներքի զամէն հանդի վասն փրկութեան հոգոյ իմոյ և ծնողաց իմոց և յարևշատութեան որդոց իմոց Ամիրբէկին, Հազարբէկին և այլոցն: Արդ՝ յետ ժամանակաց և թէ ի թագաւորաց կամ յիշխանաց զընծայս մեր խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզոված է. վարձ զՈւդայի զաստուածավաճառի և զԿայենին առցէ և մեր մեղացն պարտական է»:

Ի հիւսիսային հիման կամարին սեղանոյ յարևմտեան ճակատու.

«Ի թուին եօթն հարիւր երեսուն և հնգին (1286), ողորմութեամբն Աստուծոյ և հրամանաւ պարոն Սահմարինին ես՝ Ստեփաննոս ձեռնաւորս և Վարhամ Քեթոբարս... թողաք զյՕշականու քահանայից զինչ որ հարկ կայր այգւոյ, բամբակի... և ժամահարին՝ յիշատակ հոգոց մերոց և ամուսնաց: Եւ սոքա խոստացան ի տարւոջն Գ ժամ յաւուր ծննդեանն. Բ՝ Ստեփաննոսա, Ա՝ Վարhամայ. ով որ ժամանակաց խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզոված է և մեր մեղացն պարտական է»:

Ի հիման կամարի հիւսիսային որմոյ վերին դասու.

«Ի թուականին ՉԼԷ (1288), յառաջնորդութեան տէր Համազասպայ և ի պարոնութեանն Սահմադնին և իւր որդւոցն՝ Ամիրբէկին, Հազարբէկին, ես՝ Գէշ մարդս էյի ամիրայ և հաւիկս ձեռնաւոր՝ թողաք զսուրբ Կարապետին այգեացն զյՕշականու, զՄիրինու (թերևս

Մրանայ) գՀեռնաւուրին գյարկն՝ զինչ որ կայր, վասն փրկութեան հոգոց մերոց և յարևշատութեան պարոնացն: Արդ՝ յետ ժամանակաց զընծայս մեր խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզոված է և վարՀ զՅուդայի առցէ և հող օրհնութեան զնա մի ծածկեսցէ: Կատարիչք գրոյս օրհնին յԱստուծոյ, ամէն»:

ՄերՀ յեկեղեցին ի հարաւոյ իբրև քառասուն կանգուն հեռի է բուրգ մի հնագոյն շինուածովք ի կոփածոյ քարանց, և կից նմին յարևելից փոքրիկ կամարայարկ տեղի ցածագոյն՝ յորոց տանեաց վերայ կանգնեալ խաչվէմն անկեալ՝ կայ միայն սիւնաձև պատուանդանն. յայսմ տեղւոջ աւանդեն բնակիչքն լինել գերեզմանի մեծի իշխանին Վահանայ Ամատունւոյ:

Ի մէջ գեղջս, որ ունի շուրջ զբնակութեամբն պարիսպ ի հասարակ քարանց և ի հողոյ հոգացեալ ի Սիմէոն կաթուղիկոսէ Երևանցւոյ. յարևմտից եկեղեցւոյն է սիւն մի քարեայ միաստանի կանգնեալ ի վերայ բազմաստիճան քառակուսի պատուանդանի, և բարձրութիւն նորին իբրև գիրկս երկուս. եղեալ է յառաջագոյն ի գլուխ այսր սեան յիւրմէ և խաչաձև կերտուած, այլ մաշեալ և փշրեալ ի հողմալից անձրևոյ՝ անհետացեալ է. և թէ առ զի՞նչ վախճան այս սիւն՝ չի՛ք ինչ ծանօթութիւն. թէև զինչ ինչ նպատակէ աւանդեն բնակիչքն, բայց և ոչ մին տեսանի յարմարութեամբ:

Յարևելից հիւսիսոյ գեղջս է բարձրաւանդակ քարուտ բլրակ, յորում են բազում բնական և արհեստական քարայրք և գագաթ նորին է իբրև դիտանոց, յոր անուն յորջորջեն և բնակիչքն զայն բլրակ՝ Դիտի Կոնդ, *յստորոտս այսր բլրակի՝ մանաւանդ յարևմտեանն և ի հարաւայինն են ընդարձակ շիրիմք հայազգեաց, յորս գոն և դամբարանք խաչվիմօք զարդարեալք. յարևմտեան ստորոտի է փոքրիկ մատուռն անուանեալ յանուն սրբոյն Գրիգորի՝ տեղի պատարագելոյ յաւուրս յիշատակութեան ննջեցելոց. և մերՀ յայս մատուռն ի հիւսիսոյ կայ բարձր աւելի քան զմի գիրկ խաչվէմ փորածու՝ ամրացեալ յերից կողմանց ի կրամած տաշեալ քարանց. յարևմտից է փորուած խաչին. ի պատուանդանի նորին գրի այս ինչ.*

«Թվ. ՉԺԴ (1265) ես՝ Գաւազանս Դվնացի, կանկնեցի սուրբ նշանս բարեխաւս դստեր իմոյ Նաւռուզին, որ փոխեցաւ ի Քրիստոս»:

Յարևելից գեղջս յեզր ձորոյն Քասաղ գետոյ ի սարահարթի անդ է տափարակ ինչ տեղի ընդարձակ՝ յորում են կարի լայնադիր հիմունք որմոց ի մեծամեծ վիմաց. և զսմանէ ասեն լինել տեղի պալատան նորին Վահանայ Ամատունւոյ:

Փոքր ինչ հեռի աստի դէպ յարևելս իբրև քարընկեց մի ի քարի անդ ձորոյն է ծոցաւոր ինչ տեղի՝ նոր տաշածու քարամբք կազմեալ՝ արարեալ են մատուռն մի փոքրիկ՝ յորում գոյ և տեղի սեղանոյ և անուանեն զայն Սուրբ Աստուածածին:

Ի սկիզբն անդ այգեստանեայց յարևմտից գեղջս է և այլ մատուռն գերեզմանոցաց՝ լքեալ այժմ. է և Դ–րդ մատուռն ի հարաւոյ գեղջս յայնկոյս գետոյն ի կուրծս անդ հանդիպակաց քարափան ձորոյն և դժուարելանելի ընդ բնական սանդղաձև քարուտն, ուր ասեն երբեմն ճգնեալ ոմն ի թարգմանիչ վարդապետացն մերոց և ամփոփեալ անդէն ի վիմի. ի հարաւոյ և յարևմտից է նոյն քարն ուղղաբերձ. իսկ ի հիւսիսոյ և յարևելից որմունքն են ի տաշածու քարանց. ունի տեղի սեղանոյ և զփոքրիկ դռնակ: Արձանագիր վիմին՝ որ ի վերայ դրանն, եղծեալ գոլով և մանաւանդ տեղին վտանգաւոր կալոյ ընդ երկար՝ մնաց անվերծանելի. ի վեր անդր քան զայդ արձան գոյր և համառօտութիւն ինչ գրուածոյ, այլ այն ևս դժուարընթերց, բայց ունէր թուական Հայոց ՌՀԴ. անուանեն զայս մատուռն Սրբոյն Սարգսի:

399. Ի ձորամիջի աստ ի վերայ գետոյն ձգեալ է կամուրջ բազմածախ ի տաշածու քարանց. և է հնգակամար՝ կառուցեալ ի Նահապետ կաթուղիկոսէ Աթոռոյ Էջմիածնի, որոյ արձանագիր միևնոյն վերտառութեամբ և թուականաւ դնի յերկոսին կողմանս կամրջոյն՝ ըստ այսմ.

«Յիշատակ է կամուրջս տեառն Նահապետ կաթուղիկոսին սուրբ Էջմիածնի. ՌՃԾԵ (1706) թվին»:

Յայս կամուրջ արար նորոգութիւնս ինչ և Սիմէոն կաթուղիկոս Երևանցի՝ որոյ արձանագիր նորոգութեանն դնի ի հարաւոյ՝ յարևելից արձանագրի Նահապետ կաթուղիկոսի, ըստ այսմ.

«Նորոգեցաւ կամուրջս ի ձեռն տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին սրբոյ Էջմիածնի Երևանցւոյ, ի ՌՄԻԷ (1778) թուին մերոյ»:

400. Ի հիւսիսակողմն գեղջս Օշականայ ի մէջ անդաստանացն՝ յարևելեան կողմն գետակին Փարպւոյ է փոքրիկ տաճար մի, շուրջ զորով են աւերակք տանց, և կոչեն զանուն նմա Մանկանոց[1]*, այլ անուն տաճարին ըստ արձանագրոցն է Սիօն. չունէր արձանագիր շինութեանն, բայց գոն երկուք յանուն նուիրատուաց ոմանց՝ որք են.*

[1] Այսր անուանակոչութեան վասն աւանդեն բնակիչքն թէ եղեալ երբեմն աստ յՕշական եղբարք երեք և բաժանեալք ի միմեանց, մին ի նոցունց որոյ անուն Մանուկ, եկեալ աստ արկանէ բնակութիւն, և յօրէ անտի ցայսր անուանի տեղիդ յանուն նորա **Մանկանոց**:

«Ի թ. հա. ՈԽ եւ Թ [1200], ես՝ Ապաս որդի Արտաշրի մինչդեռ հնգետասան ամեայ, եւ սրախողխող... սրովն ի սմա վրացւոց. յորժամ հասաւ հարուածն Աւշականս ետու զՍեւս հողն ի սուրբ Սիոն յեկեղեցիս և վանական ամենից ի ձեռն հաւր Վարդանայ և սպասաւորք սորա խոստացան յամենայն ամի յանուն իմ պատարագել զՔրիստոս յեկեղեցիս, զտօն Վարդավառին, եթէ ոք խափանէ դատի ի Քրիստոսէ յաւուր գալստեան»:

«Ի թվ. ՈՀ [1221], ես՝ ... շահ... հայրենի այգին յերև ... զիմ ի սուրբ Սիոն առաջնորդութեամբ հաւր Մարգարէի. և սպասաւորք սորա հաստատեցին յամէն ամի պատարագել զՔրիստոս յաւուր տօնի Դաւթի և Յակ. Գ աւր. Բ ինձ, և Ա...»:

Յարձանագրութեանց աստի քաջայայտ երևի թէ էր տեղիս այս մենաստան կուսակրօն անձանց: Այլ թէ երբ վերջացեալ իցէ անտի այն կրօնաւորական միաբանութիւն՝ չի՛ք ինչ ծանօթութիւն: Եւ որպէս երևէր, կայ այնպէս աւերակ ի վաղ ժամանակաց, որպէս և այլ այսպիսիք յոլովք:

401. **Աշտարակ** *գիւղ յարևելից հիւսիսոյ Օշականայ հեռի ի նմանէ իբրև ժամ մի և յարևելից հարաւոյ Փարպւոյ ի վերայ հիւսիսային եզեր Քասաղ գետոյ ի սարահարթի ի կրկնակ տեղի վայելուչ և այգաւէտ, որոյ գինին առաւել օգտակար և առողջարար քան այլ տեղեաց Արարատայ. առողջարար և ջուր սորա, քանզի առուակ սորին սկզբնաւորի ի վեր անդր քան զՄօղնի գիւղ, յորմէ յստորև սեաւ ջուրք աղբերց և խառնին ի գետն. և այն առուակ յորդ մտանէ ի գիւղամէջ անդր և անցեալ բաշխի յայգեստանսն:*

Յարևելից գեղջս ի ձորամիջի անդ ձգեալ է ի վերայ գետոյն կամուրջ եռակամար ի կոփածոյ խարտեալ քարանց: Եղեալ է արձանագիր շինութեանն յարևմտակողմն ի միջոցի երկուց կամարացն, այլ եղծեալ է բոլորովին: Բայց բնակիչքն աւանդութեամբ ասեն՝ շինեալ է այն ծախուք Քանաքեռցի խօջայ Փլաւ անուանեալ հայազգի մեծատան ուրումն:

Ի կրկնակի անդ երկայնեալ սարահարթի լեալ է յառաջագոյն ամրոց, որոյ պարիսպն յարևմտից կայ տակաւին կիսաւեր. իսկ միւս կողմունքն են զառընթափ ձոր խորին ցգետն. ի մէջ ամրոցիս և արտաքոյ են բնակարանք ժողովրդոց՝ որք ամենեքեան են յազգէ Հայոց: Յառաջագոյն ի ժամանակս իշխանութեան օսմանեանց էին ի սմա գերդաստանք իբրև եօթն հարիւր: Այլ այժմ գտանին տունք 153: Ի հինգ եկեղեցեաց սորա Բ են յամրոցի անդ: Ա՝ Ծիրանաւոր կոչեցեալ յանուն Սուրբ Աստուածածնի ի կոփածոյ քարանց: Անմի-

ջապէս շուրջ զորմովք նորին բարձրացուցեալ զորմն կրկին՝ որպէս զեկեղեցիսն Մաստարայի և Փարպւոյ, արարեալ են արդարև աշտարակ անմատչելի յամրոցի անդ. նախքան զամս ինչ ասա կատարէին բնակիչքն զժամերգութիւնս իւրեանց, այլ ի խոնարհիլ կամարայարկի տանեաց նորա յամի 1815 կատարեն զայն յԱմենափրկիչ եկեղեցին: Բ՝ կոչեցեալ Սպիտակաւոր և կայ յանգործածութեան: Գ՝ ի գիւղամիջի, Ամենափրկիչ անուամբ, որոյ սեղանն տեղի պատարագելոյ է բոլորովին ի սրբատաշ քարանց ի հին ժամանակաց: Իսկ ժողովրդանոց նորա զկնի ի մերձ ժամանակի չինեալ՝ որմունքն ի հասարակ քարանց և ի հողոյ և ծածկոյթն ի հասարակ փայտից: Դ՝ Սուրբ Մարիանէ. տաճար փոքրիկ վայելչաձև սրածայր կաթուղիկէիւ և է յարևմտեան եզեր գեղջս: Եւ ունի շուրջանակի պարիսպ հանդերձ բրգամբք ի մեծամեծ հասարակ որձաքար վիմաց: Զեկեղեցւոյ աստի և զպարսպէ սորին աւանդեն բնակիչքն թէ երիտասարդ քահանայի ուրումն վախճանեցաւ կին. և այն ինչ յայտնեցաւ նա յընկալնուլ զերկրորդ ամուսնութիւն, կաթուղիկոսն Աթոռոյ Էջմիածնի եդ ի վերայ նորա այսօրինակ ապաշխարութիւն. նախ չինել զեկեղեցի մի ի սրբատաշ քարանց և այնպէս ընկալնուլ զհրաման Բ ամուսնութեան: Աշխատեալ նորա ո՛չ սակաւ ամս՝ եհան ի կատար զայս փոքրիկ տաճար: Տեսեալ կաթուղիկոսին զերկարատև զանխոնջ աշխատանս նորին, յաւել և զայս, թէ ածցես շուրջ զդռվաւ պարիսպ քարեայ՝ յայնժամ ունիս հասանիլ բաղձանաց քոց. յանձն առեալ և զայն՝ կատարեաց թէպէտ և եհաս յամբոկ գործոյն, այլ երկարատև միջոց գործառնութեանցն խոնարհեցոյց զհասակ նորա յալիս ծերութեան և գործն բազմածախ թափեաց ի նմանէ զինչս և զհարստութիւնս: Ապա ի հրամայել կաթուղիկոսին մտանել նմա յԲ ամուսնութիւն, ետ հրաժեշտ քահանայն ի հրամանէ անտի և թողեալ զառաջին դիտաւորութիւն իւր՝ եկաց բարեկրօնութեամբ ցմահ իւր:

Արձանագրութիւնք յորմունս այսր տաճարի յանուն նուիրատուացն, որ գտանին ի ներքս և յարտաքս եկեղեցւոյն.

Ա. Ի վերայ դրան հարաւային աւանդատան.

«Յառաջնորդութեան Գրի[գոր] վարդապետին, ի չինութեան սուրբ եկեղեցւոյս, ես՝ Թագուհի, դուստր Սահակ երեցո, ետու զիմ հայրենի տունն և զքարահանացն այգին ի Սուրբ Մարիանէս. և խոստացան ի տարին Գ պատարագ ինձ առնեն ի նոր կիրակէն անխափան. ի թվ. ՉԼ (1281)»:

Բ. Մերձ այսմ ի հարաւոյ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես՝ Ասնաւորս, և ամուսին իմ Ղուտալչաք և զաւակ մեր Զաքարիա միաբանեցաք Սուրբ Մարիանէիս, գնեցի զՔարգործենց հողն ի հալալ ընչից մերոց, որ ի Տեառնն... Ի թվ. ՉՀԵ (1326)»:

Ի մէջ եկեղեցւոյս են և այլ երկու արձանագիրք՝ մին այգւոյ ի ՉԿԱ [1312] թուին և միւսն ջրոյ ի ՉԼԴ [1285] թուին:

Ե. Յորմն հարաւային արտաքուստ յարևելս դրանն.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Աղբուղային և Սիթի–Խաթունին, ես՝ Յակոբ երէց, ի վանքս շինեցի հոյրատուն (հիւրատուն), Գ [3] դուռն ի պարսպին ևն. ի թվ. ՉԿՉ (1317)»:

Զ. Յարևելս այսր արձանի.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես՝ Տիկնաց–Տիկին, ամուսին Արջուկին, միաբանեցա Սուրբ Մարիանէիս և ետու զՓարասանց այգոյն կէսն, ի յ. գ. որպէս գնեցի և տվի. սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին Բ պատարագ ի տաւնին Ղազարու. կատարիչք աւրհնին յԱստուծոյ, ամէն»:



Այսպիսի քանդակք ժամացուցի արեգական ի հարաւային որմունս արտաքուստ գտանին և ցայլ բազում եկեղեցիս մենաստանաց, քաղաքաց և գիւղօրէից ի Հայաստան, որպէս և այս ի սմին եկեղեցւոջ:

Է. Յորմն արևելեան արտաքուստ.

«Ի յոյսն ամենեցուն ի Քրիստոս ապաւինեալ ես՝ Սիթի–Խաթուն, ամուսին Աղպուղային, ետու ի Սուրբ Մարիանէ ի միաբանայտունն զՓարպւոյ հողին կէսն՝ որ Այծամանց երկիրն, որ զկենսակու Ապաղարի Փիր որդին գնեալ Բ ի Թուրաննէ ի խոմովէ... Մարիանէիս տվել որ զԱ էլկիանէս տվի ու յՄ ազատեցի... ո՛չ շարիաթ, ոչ էլ մեծ կամ փոքր խարճող զմեր հաւատարմայիշատակ խափանել ջանայ ի մերոց կամ աւտարաց դատի յԱստուծոյ և անէծս առցէ և մեր մեղացն պարտական է. ի թվ. ՉՀԲ [1323]:

Ես Յակոբ Ապղարի Փիր որդի աւել տվի հետ իմ գնած Փարպոյ հողին զիմ գնած խուպանն, որ Աւշականայ հանդին» ևն:

Այս եկեղեցի ի վաղուց կայր լքեալ՝ որոյ և ժողովրդանոցն հասարակ շինուածովք աւերեալ՝ բաց յորմոցն, այլ յամին 1839 զարդարեալ հարկաւոր սպասուք՝ սկսան և ի սմա առնել աղօթս և կատարել զամենայն պաշտամունս, որովհետև Ամենափրկիչ եկեղե-

ցին չէ՛ր բաւական ժողովրդոցն. փայտայարկ առնեն և այժմ ահա զժողովրդանոցն: Ի վերայ տանեաց եկեղեցւոյս ի թեւի անդ արևմտեան հարաւոյ ետ կառուցանել զանգակատուն փոքրիկ ի յղկեալ քարանց բնակիչ գեղջս Գէորգ Փարվանեանց իւրով արդեամբ:

Ե. **Կարմրաւոր** *կոչեցեալ եկեղեցի յեզեր գեղջս յարևելեան հիւսիս ի բարձրաւանդակի. է փոքրիկ տաճար խաչաձև և ունի փոքրիկ կաթուղիկէ կղմնտերբք ծածկեալ. ունի և շուրջանակի պարիսպ. այլ է այժմ անբնակ և ասեն երբեմն բնակէին աստ կուսանք և յաշխարհէ հրաժարեալ կանայք: Ուստի և կուսանոց: Արձանագիր շինութեան եկեղեցւոյս սկսեալ միակարգ ի ծայրէ հարաւային որմոյն և անցեալ զթիկամբ սեղանոյն աւարտի ի ծայրն արևմտեան որմոյն հիւսիսոյ, այլ եղծեալ յինչ ինչ տեղիս՝ յայս օրինակ.*

«Ես Դաւիթ մեղաւոր... գիւղաքաղաքէս յերեցունեաց Գրիգորի քահանայի և Մանաս և որդիք տուաք շինել զեկ... Աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհիս, շինութեան աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ... և վասն... հոգոց... ազգի մերոյ...»:

Ի ներքոյ սկսուածոյ այդր արձանագրի գտանի և այս արձանագիր յորմն անդր.

«Շնորհիւն Աստուծոյ, ես՝ Յակոբ էրէցս, ըստ կարի մերոյ նորոգեցի զմեծ առու տեղւոյս բազում աշխատութեամբ, որ խախտ էր ի հիմանց յիշատակ հոգւոյ իմոյ և որք աւգնական եղեն տրաւք և աւանդ գրեցի որ շինած տուն էկէլ տնանգաց աւթեան (օթևան) լինի: Որ ի գրոց սորին... ետն ի ձեռն յիշատակ իմո: Եւ ի տարին Ժ աւր. յորո յանուն ի տաւնի քառասնիցն. ով խափանէ, դատի յԱստուծոյ. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. թվ. ՉԽԱ (1292)»:

Ի վերայ հարաւային դրան պարսպին գրի այս արձանագիր.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Աղպուղային և Սիթի–Խաթունին, ես՝ Ասնաւորս և Ղուտալչաքս միաբանեցաք Սուրբ Աստուածածնիս և շինեցաք զպարիսպս զշրջայ... և զդուրն յիշատակ մեզ և զաւակի մեր Զաքարի և տվի տարենն Ժ... յայգոյն: Ով որ զայգին ուտի, բաժակ տա և սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին Բ աւր պատարագ. Ա՝ Ասնաւորին, Ա՝ Ղուտալչաքին. ի տաւնի Աստուածածնին կատարեն: Թվ. ՉԴ (1254)»,

Գոյ միւս ևս տեղի աւերեալ եկեղեցւոյ ի հարաւային եզեր գեղջս ի մէջ այգւոյն կոչեցելոյ յանուն Շուխեանց և կոչեն զտեղին Սուրբ Կիրակի. ուր անկեալ դնի և պսակ գմբեթին:

Ի մէջ պարսպի այսր փոքրիկ տաճարի կուսանաց և ի շրջակայս սորին, մանաւանդ ի հիւսիսային և յարևելեան կողմունսն են գերեզմանք բազումք, յորս և երևելի շիրիմք խաչվիմօք հանդերձ պատուանդանօք ի հիւսիսակողմն ի բարձրաւանդակի յարևելից ճանապարհին վանաց Սուրբ Գէորգայ է խաչվէմ բարձր հրաշալի քանդուածովք. և պատուանդան նորին կազմեալ իբրև մատուռն ի մեծամեծ վիմաց առանց կրոյ. և գոյ տեղի սկհւոյ, զոր և անուանեն բնակիչքն՝ Ցագ խաչ: Եւ կառուցեալ է այն վասն արևշատութեան Սադուն իշխանի յազգէ Արծրունեաց, ի Թովմաս քահանայէ. և ունի արձանագիր ի կատար պատուանդանին յարևմտից ըստ այսմ.

«Ի թվ. ՉԺԷ (1268), ի թագաւորութեան... ըհիւն Աստուծոյ, ես՝ տէր Թումաս, կանգնեցի զսուրբ նշանս վասն յերկար կենաց պարոն Սադունին և զաւակաց իւրոց»:

Կառուցեալ է սոյն արձան յաւուրս կենդանութեան նոյն իշխանի և թերևս կառուցանող քահանայն յազգականաց նորին. ի շրջապատ եզերս մեծի խաչվիմին յարևմտից՝ էր միակարգ գրչութիւն, այլ ըստ առաւել մասին եղծեալ գոլոյ՝ չեղև հնար առնուլ ի գիր կամ հասկանալ ինչ:

Այս գիւղ ըստ յատկութեանցն է մի ի հնագոյն գիւղօրէից Արագածոտն գաւառի, զորմէ Ստեփաննոս Ասողիկ յԲ գլուխ.

«Եւ ապա տէր Գէորգ (կաթուղիկոս Հայոց ի վախճան Թ–րդ դարու) ի յԱրագածոտնէ, ի գեղջէ Աշտարակաց ամս Գ»: Զայս գիւղ ստորագրութիւնն հին Հայաստանի շփոթեալ միացուցանէ ընդ միւս Աշտարակաց գիւղի Բագրևանդ գաւառի (յերես 412):

402. **Մօղնի** *անուանեալ գիւղ՝ սեպհական կալուած Աթոռոյ Էջմիածնի և արդէն է հեռի յԱշտարակ գեղջէ ընդ հիւսիս իբրև կէս ժամաւ ի վերայ սարահարթի արևմտեան եզեր Քասաղ գետոյ: Յառաջագոյն լեալ են աստ բազմութիւն բնակչաց, որպէս ցուցանեն աւերակքն տանց և եկեղեցւոյն, որ ի ձորաբաշի անդ. այժմ գտանին սակաւաթիւ գերդաստանք յազգէ Հայոց (139):*

403. **Մենաստան** *յանուն Սուրբ Գէորգայ յարևմտեան եզեր այսր Մօղնի գեղջ: Զսկզբնաւորութենէ այսր մենաստանի ճառէ Զաքարիա Սարկաւագ Յովհաննավանից, յորմէ համառօտեցաւ ըստ այսմ: Եբեր ի Հայս Մեծն Ներսէս զմարմին սրբոյն Գէորգայ և եդ ի Յովհաննու վանս՝ որ մերձ ի Կարբի և ժողովեաց զուրուկս և զգոթիսն անդէն: Եւ հետզհետէ ի բազմանալ ուխտաւորաց յայն վանս ի պատիւ նշխարաց սրբոյն, վտանգէին երբեմն նորատի մանկունք ուխտաւորացն գահավէժ խորտակմամբ ընդ զառիվայր խորաձորն*

գետոյն, որոյ վասն կալեալ լինէին վանականք վանացն յայլազգի իշխանաւորաց, և ո՛չ զերծանէին առանց մեծի տուգանաց: Ուստի առաջնորդք վանացն առ ի անվտանգ պահել զնոսին և զանձինս, յաւուրս տօնից սրբոյն յամի ամի տանէին զնշխարսն ի Կարբի. ուրանօր ժողովեալ ուխտականացն՝ կատարէին զջերմեռանդական պաշտամունս իւրեանց: Ապաքէն անտանելի լեալ բազմութեան ժողովելոցն և կարբեցւոցն, շինեցին մատուռն մի փոքրիկ և փայտեայ գաւիթ առ նմին մերձ ի գիւղն Մօղնի և անդ ետուն փոխադրել զնշխարսն յաւուրս տօնից. ուր ի տանել և ի վերադարձուցանել ի Յօհանավանս վշտանային վանականքն. վասն որոյ խորհուրդ արարեալ՝ խպառ թողին անդէն և կացուցին սպասաւոր զոմն վանական. և զարդիւնս ուխտականացն ստանային ի վանսն Յօհաննու ցբազում ամս. և այնպէս օրըստօրէ անուանի եղև տեղին. և գոթիքն ևս փոխադրեցան անդ ի վանացն Յօհաննու. և այնուհետև արդիւնք եղև երկու բաժին, մին՝ վանականացն Յօհաննու և մին անդ սպասաւոր կացելոցն վերահասութեամբ միումն ի վանականացն Յօհաննու. այլ որովհետև երթևեկք ծանրանային ծախուք այսր վանաց, տնօրէնութեամբ մեծամեծացն կարբեցւոց սահմանեցաւ, զի միայն զկէս բաժին արդեանց յատկացեալ աշնանային ուխտին առցեն վանականք Յօհանավանից առանց վճարելոյ զմասն ինչ ծախուց: Եւ այսօրինակ տևեաց մինչև ի ժամանակս նորին Զաքարիա Սարկաւագի: Եւ ապա ասէ նա ինքն. «Իսկ ի մերում ժամանակի եպիսկոպոս ոմն Մարտիրոս անուն քակեաց զմատուռն և զգաւիթն (զշինեալն ի կարբեցւոց) և շինեաց կոպիտ քարիւ հոյակապ եկեղեցի և շուրջանակի պարսպեաց: Եւ յետոյ եղբօրորդի նորա Յովհաննէս[1] վարդապետ քակեաց զայն և շինեաց կոփածու քարամբք եկեղեցի զարմանալի: Եւ յարևմտեան դրանն զանգակատուն և չև ևս էր կատարեալ զսակք տանեացն՝ վախճանեցաւ. և եղբօրորդին իւր Դաւիթ վարդապետ կատարեաց զայն: Եւ է այժմ հրաշափառ եկեղեցի և Դաւիթ վարդապետ առաջնորդ նորին»: Եւ աւարտէ զայս գրուած իւր ի թուականի Հայոց ՌՃԼԶ (1683):

Այժմ այս տաճար սրբութեան կառուցեալ ի սրբատաշ քարանց ի վերայ չորից սեանց բաւականաչափ մեծութեամբ, բարձրակամար, ունի զմի կաթուղիկէ ի միջավայր տանեացն, զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս: Ի հիւսիսայինն գտանի

[1] Այս Յովհաննէս վարդապետ յառաջագոյն հոգացեալ հանեալ էր զհրովարտակ շինութեան տաճարիս և այնպէս ձեռնարկեալ ի շինութեանն. և այն հրովարտակ ի շահ Սուլէյման արքայէ Պարսից կայ ընդ այլ հին հրովարտակաց յԱթոռ Էջմիածնի:

կազմեալ դամբարան հանդերձ տապանավիմաւ յանուն մնացեալ[1] *նշխարաց սրբոյն Գէորգայ զօրավարի նահատակելոյն ի Նիկոմիդա քաղաքի Բիւթանացւոց. ունի և զերկուս դրունս՝ մի ի հարաւոյ և միւսն մեծ յարևմտից: Եւ զգաւիթ վայելուչ ի վերայ այսր դրան նոյնպէս ի սրբատաշ քարանց հաւասար ընդ լայնութիւն տաճարին, յորում ի միջին բաժնի, որ անկանի ուղղակի ի վերայ դրանն, է զանգակատուն վայելչակերտ:*

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս գտանի յարևմտեան որմն տաճարին ընդ յարկաւ գաւթին ի հիւսիսային բաժնի ի ծոցաւոր տեղւոջ՝ յայս օրինակ.

«Շնորհօք Ամենակալի, ի թվին ՌՃԺԳ (1664), ի թագաւորութեանն Պարսից փոքր շահ Ապազին և ի բռնակալութեան երկրիս Ապազ ղուլի խանին և ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ սրբազան կաթուղիկոսի սուրբ Էջմիածնի, որոյ հրամանաւ և օժանդակութեամբ, թղթով, բանիւ և արդեամբք, ընդհանուր քրիստոնէից տրիւք. ընդ նմին և զամենայն ինչս և ստացուած հոգւոյս և մարմնոյս վատնեցաք. ես՝ Յովհաննէս վարդապետս Մօղնեցի, որդի Յակոբայ, եղբօրորդի Մարտիրոսի եպիսկոպոսին քակեալ ի հիմանց Սուրբ Գէորգայ եկեղեցիս և շինեցի զսա հանդերձ գավթովս հրաշակերտ յօրինուածօք ներքուստ և արտաքուստ կոփածու քարօք ի թվին ՌՃԺԸ [1669], ի թագաւորութեան Պարսից շահ Սուլէյմանին և ի բռնակալութեանն երկրիս Սէֆիլի խանին աւարտեցի: Եւ ես ընդ նմա աւարտեցայ ի կենցաղոյս և փոխեցայ առ Տէրն ամենից. մնաց միայն գլխի սալքն և ներքին տօշամէն եկեղեցւոյս և գաւթիս՝ զորս կտակաւ յանձն արարի եղբօրորդւոյ իմոյ Դաւիթ վարդապետին փոխանորդ լինել ինձ և կատարել զպակասութիւն եկեղեցւոյս և գաւթիս: Որք տեսանէք զյիշատակս իմ, Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց. Տէր Աստուածն ձեզ ողորմեսցի, ամէն: Ալէքսան քարտուղար Հայոց յիշեցէք ի Քրիստոս»:

Ի վերայ արևմտեան ճակատու սեանն արևելեան հարաւոյ ի մէջ եկեղեցւոյս գտանի այս արձանագիր.

---

[1] Ի պատճառս գոթութեան ախտիւք վարակելոյ որդւոյ թագաւորին Վրաց Դաւիթ անուանելոյ տարան նշխարք սրբոյն մեծ մասամբ անդր ի Տփխիս (որ եդաւ ի Չխար անուանեալ տեղւոջ նահանգին Կածարէթոյ) պայմանաւ անդրէն վերադարձուցանելոյ զնշխարսն, որոյ վասն և յառաջագոյն յղեալ էր թագաւորն պատանդ զԺԲ [12] որդիս յազատացն Վրաց. նախքան զմտանել մասանցն ի Տփխիս վախճանի որդի թագաւորին, չդարձուցանեն զնշխարսն. և որդիք ազատացն մնան առ Հայս անդառնալի, զորմէ ևս նոյն Զաքարիա Սարկաւագ:

«Յիշեցէք ի Քրիստոս զպարոն Վարդանն, որ է եղբօրորդին Յովհաննէս վարդապետի շինողի սուրբ եկեղեցւոյս և գաւթիս և եղբայր Դաւիթ վարդապետին փոխանորդի նորին՝ որ ի հալալ ընչից իւրոց ետ զխարճն շինութեան այս սեանս և Ա կամարին յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Կարապետին և մօրն Թուրվանտին, եղբարցն Զաքարիային և Մարգարէին և կենակցաց նոցին, զարմից և զաւակաց, կենդանեաց և հանգուցելոց. որք ողորմի ասէք, Տէր Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն: Գրեցաւ ի թվին ՌՃԺԹ (1670), ձեռամբ Ալէքսանին»:

Ի միջոցի բարաւորի մեծի դրանն արևմտեան և քանդակագործ կամարի նորին դնի սոյն արձանագիր.

«Շնորհօքն Աստուծոյ, ես՝ Պետրոս վարդապետ, որ յԱգուլեաց, անձամբ և ժողովրդեամբ իմով օժանդակ եղէ շինութեան սուրբ եկեղեցւոյս, և շինեցի զդուռն Սրբոյն Գէորգայ զօրավարի երկնաքաշտակ կամարօք և կանգնեցի ի վերայ զսուրբ խաչս ի բարեխօսութիւն հօրեղբօր իմոյ տեառն Խաչատրոյ արհի եպիսկոպոսին Գողթան գաւառի և բեմբասաց վարդապետի. յիշեցէք ի Քրիստոս. ի թուին ՌՃԺԸ (1669), ամէն»:

Ճարտարապետ և քարահատ շինութեան այսր եկեղեցւոյ եղեալ է Սահակ անուն Հիզանեցի ոմն, որ հասուցեալ զշինութիւնն մինչև ցամն 1666, վախճանի և գերեզման նորին գտանի ի շիրիմսն անդ յարևելեան հիւսիս եկեղեցւոյս արտաքոյ պարսպին մեծ վիմաւ և արձանագրով, որոյ փեսայ և աշակերտ Մուրատն անուանեալ՝ յետ վախճանի նորին լրացուցանէ զբովանդակ շինուածն:

Կայ այժմ այս եկեղեցի յամբողջութեան, պատուեալ ուխտական այցելութեամբ ի բնակչաց Արարատայ և ի մերձակայ գաւառաց նորին, առաւել յեօթն կիւրակէսն՝ սկսեալ յօրէ անտի յատկացեալ տօնի սրբոյն յաշնանային ժամանակի, և կայ ի շինութեան բնակեալ ոմանց վարդապետաց ընդ անմիջական տեսչութեամբ լուսաւորչեան Հայոց Սիւնհոդոսի Սրբոյ Էջմիածնի:

Զսալ քարինս տանեաց սրբոյ եկեղեցւոյս զխախտեալսն և զփշրեալսն ետ նորոգել առաջնորդ վանացս Թէլաւեցի գիտնական Ստեփաննոս արքեպիսկոպոսն սրբոյ Էջմիածնի, յամի 1830:

Զծայր կաթուղիկէին, որ ի միջավայր տանեացն, յամի 1839, փշրեալ խորտակեաց կայծակն, զոր ի նոյն իսկ ամի անդրէն նորոգեալ հաստատեցին՝ պնդելով ի նմին և զերկաթի խաչն, որ խախտեալ կախեալ էր յաւերածոյ անտի:

Շուրջ զեկեղեցեաւս ածեալ է և պարիսպ քառակուսի բաւակա-նաչափ բարձր ի հասարակ քարանց և ի հողոյ և դուռն մի մեծ ընդ հիւսիս և դուռն մի փոքր ընդ արևմուտս ի ծառատունկ պարտէզն, յորում գտանին և որթք խաղողոյ ի մէջ առաջին քառանկեան պարս-պի՝ յերից կողմանց, յարևելից, ի հիւսիսոյ և ի հարաւոյ. առ որմովք պարսպին են քարայարկ սենեակ հոգևորականաց և այլ հարկաւոր պիտոյից՝ կառուցեալք ընդ եկեղեցւոյն, յորս արար ինչ ինչ նորո-գութիւնս Մարտիրոս արքեպիսկոպոս Կեսարացի տեղապահ Եփրե-մայ կաթուղիկոսի՝ ընդ որոյ տեսչութեամբ էր այս մենաստան: Այս մենաստան ունի կալուած զայգի մի յԱշտարակ գիւղ և արդիւնք ծախուց նորա գոյանայ ի նուիրանաց ուխտաւորացն, յորմէ և աւե-լորդ դրամն մտանէ ի գանձարանն Աթոռոյ Էջմիածնի: Զեկամուտ արդիւնս յանդաստանաց այսր գեղջ Մողնւոյ, որ յանուն Աթոռոյն Էջմիածնի՝ բազմիցս չնորհեալ լինի կառավարութեան մենաստանիս:

ՄԵՆԱՍՏԱՆ ՅՕՀԱՆԱՎԱՆԱՅ[1]

404. Այս տեղի ի Մողնւոյ կէս ժամ հեռաւորութեամբ ուղղակի ընդ հիւսիս, անմիջապէս ի վերայ սարահարթի քարափան ձորոյն նոյն Քասաղ գետոյ և յարևելից գիւղաքաղաքին Կարբւոյ իբրև քառորդ մի ժամու. չինեալ եկեղեցին որ ի նմա ի սկզբանն՝ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և ի Մեծէն Տրդատայ արքայէ Հայոց՝ ամփո-փելով ի նմին և զմասն ինչ ի նշխարաց Յոհաննու Կարապետի՝ զորոյ զվկայութիւնսն յառաջ բերեալ՝ հաստատէ Զաքարիա Սարկաւագն Քանաքեռցի ի հոգևորականացն այսր վանաց յառանձին գրուածի իւրում՝ որ անուանի Կոնդակ Յոհանավանից, ուրանօր շարակարգէ ի հաստատութիւն զաւանդութիւնս հնոց, զարձանագրութիւնս և զյիշատակարանս մատենից և այլն:

---

[1] Առհասարակ՝ թէ պատմիչք և թէ աւանդութիւն ազգի Հայոց կոչեն զայս եկեղեցի Յոհանավանք մինչև ռամկաց կրճատեալ կոչեն Հանաւանք, այլ ըստ բացա-տրութեան նոյն Զաքարիա Սարկաւագի՝ կոչէր յառաջն Սիւղի վանք յանուն ուրումն վանահօր կարգելոյ անդէն ի Լուսաւորչէ. զկնի այնր Յոհանավանք յանուն այլում վանահօր: Ապա ի ժամանակի անդ Մեծին Ներսէսի, որ բնակեցոյց անդէն զանտերունջ զուրուկսն և զգոթիս, որք ի սովոյ նքողեալք լինէին, յանուն նոցա կոչէր և երբեմն Սովի վանք, ըստ վկայելոյ և վարուց սրբոց (հատոր Ա, երես 199 և 213)՝ յերկուս տեղիս. այլ երկրորդն անուանադրութիւն շարունակեալ տևէ ցարդ, և այն թերևս ի պատճառս ամփոփելոյն անդ ի ժամանակի հիմնարկութեանն զնշխարս ինչ Յոհաննու Կարապետի:

Զկնի շինութեանց անտի Մեծին Գրիգորի Լուսաւորչի՝ այն է, յամի 553, կարգեալն ի վանահայրութիւն յայսմ մենաստանի Աշոտ Դունեցի, ի ժամանակի եղբայրակցութեանն իւրոյ աստէն, ետ կառուցանել կոփածու քարամբք զծածք յարկի այնր եկեղեցւոյ, զի յառաջագոյն փայտիւք էր ծածկեալ՝ ըստ յառաջ բերելոյ յիշատակարանի Աստուածաշունչ մատենի իրիք որ ի Կոնդակի անդ:

Վաչէ կարգեալ ի Զաքարիա Սպասալարէ իշխանաց իշխան ի վերայ գաւառացն՝ որ շուրջ զԱրագած լերամբ և Երասխաձորոյ, ետ քակել զփայտեայ շինուած գաւթին, որ ի հարաւոյ եկեղեցւոյն և կառուցանել կոփածոյ քարամբք պէսպէս դրուագօք, զորոց լիովին ճառէ յիշեալ Սարկաւագն և աւարտի բովանդակ շինուածն յամի 1217. և ինքն Վաչէ իշխան վախճանեալ՝ ամփոփի ի մէջ եկեղեցւոյն ի հարաւակողմն առ դրան աւանդատան:

Քուրդ[1], որդի վերոյիշեալ Վաչէ իշխանի կարգեալ ի տեղի իշխանութեան հօր իւրոյ ի Շահնշահէ որդւոյ Զաքարիա Սպասալարի և ըստ հրամանի նորա առ ի կանգնել զգաւիթս եկեղեցեացն կառուցելոյ ի Վաչէէ, տայ կանգնել զայնպիսի գաւիթ յարևմտակողմն կաթուղիկէ եկեղեցւոյ մենաստանիս ի խարտեալ քարանց ի վերայ չորից միաստանի սեանց և փութացեալ տայ գլխաւորել զայն ի միջոցի միոյ ամի, այսինքն յամի 1251. ետ կառուցանել և ի վերայ տանեաց այսր գաւթի զանգակատուն սիւնազարդ և կախել ի նմա զանգակ զարթուցիչ ամենեցուն ի փառաբանութիւն Աստուծոյ և ի հոգևոր պաշտօնակատարութիւն:

Զկնի գերելոյն շահ Ապասայ զԱրարատեան աշխարհ և զմերձակայս նորին և ի դատարկանալ այնց գաւառաց ի բազմամբոխ բնակչացն՝ յարեան ելուզակք ջալալի կոչեցեալք գունդք գունդք և խսպառ ճռաքաղ արարին զփախստեայ մնացորդ բնակիչսն. ոմանք յելուզակաց անտի ի գնտէ Թօթալ Օսմանին մտեալ յայս մենաստան՝ գտին զոմն հիւանդ աբեղայ և զայլսն փախստեամբ զերծեալ: Զնա յերիս աւուրս գանալից չարչարանօք տագնապեցին ցուցանել զգա-

[1] Թէպէտ զսա զՔուրդ անուն իշխան նոյնացուցանէ Զաքարիա Սարկաւագ ընդ այլում Քուրդ անուանելոյ՝ որ գտանի յարձանագրութիւնս Սևան կղզւոյ, այլ որպէս մեք քննեցաք յարձանագրութեանցն, են այլ և այլ անձինք նովին անուանակոչութեամբ, քանզի թուական շինութեան գաւթիս ի սմանէ ո՛չ համեմատի թուականին եղելոյ յընկուզենի դրանն եկեղեցւոյն սրբոց առաքելոցն, որ ի Սևան, զի սորայն ՈՂԹ [1250] և նորայն ՈԻԵ [1176], զանազանութիւն ի միջի 74 ամաց, ապաքէն այլ ոք սա որդի Վաչէի և այլ ոք նա, որպէս այլ ոմն ևս Քուրդ անուամբ յարձանագրութիւնս մեծի եկեղեցւոյն Կեչառուաց, յորում կոչէ զինքն որդի Կախայբերի և կրօնաւորեալ անդէն՝ անուանեցաւ Յօհաննէս, ի թիւ Հայոց ՈՂԳ [1247]:

բան վանացն, այլ նա ոչինչ խոստանայր: Ապա կախեալ զնա յամորձեացն և խոշտանգեալ դառնապէս՝ եցոյց նոցա զտեղին. յայնժամ սպանեալ զաբեղայն՝ կողոպտեցին ի դարանէ անտի զբազում արծաթեղէնս և զայլ ինչս, ընդ որս և զյոլով մատեանս ամբարեալս յառաջնորդաց մենաստանիս, զորոց ասէ Առաքել Դավրիժեցի ի գլուխ Է–րդ. «Որք էին ամենեքեան պատուական գրեանք վարդապետականք... զորս առեալ զամենեսեան ջալալիքն և տարեալ կորուսին»:

Յակոբ վարդապետ առաջնորդ այսր մենաստանի տեսանելով զաւերումն փոքրիկ մատրանն՝ որ ի Լուսաւորչէ անտի կառուցեալ, հոգ տարեալ նորոգէ զայն ի թուականին Հայոց ՌՃՁԳ, այն է՝ յամի 1734 և վասն օծման այսր մատրան և սեղանոյ նորին հրաւիրէ զԱբրահամ կաթուղիկոս Մշեցի յԱթոռոյ Էջմիածնի, որոյ գնացեալ անդր օծանէ զայն յամսեանն օգոստոսի. ընդ կաթուղիկոսին էր յայնժամ և Աբրահամ արքեպիսկոպոս Թրակիոյ նորոգ եկեալ յԱթոռ այսր՝ որ և պատմէ զայսմանէ յԳ–րդ գլուխ գրուածոցն իւրոց:

Այս եկեղեցի հանդերձ մենաստանաւն կայր ի չինութեան ի բազում ժամանակս շարունակաբար մինչև ի թուականն Հայոց ՌՃԼԱ [1682], յորում ժամանակի վարէր զառաջնորդութիւնն վանահայրութեան Սարգիս վարդապետն՝ եպիսկոպոսացեալ յԵղիազար կաթուղիկոսէ Էջմիածնի. և նա ինքն Սարկաւագն Զաքարիա վախճան տայ գրուածոցն իւրոց ի սոյն յայս թուական. և անտի և այսր որպէս աւանդեն՝ տևեր անդ միաբանութիւն եղբարց հանդերձ առաջնորդաւ և մինչև ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ և յաջորդի նորին Ղուկասու. այլ զկնի այնորիկ անբնակ մնացեալ՝ փութով աւերեցաւ և քայքայեցաւ որպէս պարիսպ նորա և սենեակքն, նոյնպէս և եկեղեցին, որ թէպէտ կայ ի կանգուն, այլ խախտեալ է մեծ մասամբ և վէմք տանեացն և որմոցն անկեալ և խորտակեալ և օրըստօրէ քայքայի և այժմ գիւղ անուամբ յիշատակի, զի ի նմա բնակէին յառաջագոյն այլազգի մահմէտականք և այժմ հայազգիք՝ տունք 25:

405. Զարձանագրութիւնս չինութեանց և նուիրանաց յայս մենաստան գրեալ յորմունս եկեղեցւոյն յառաջ բերցուք աստէն ըստ գրուածոցն նորին Զաքարիա Սարկաւագի, որք են.

Ի տաճարի անդ ի գլուխ աւանդատանն.

«ՈԿԵ (1216) թուին:

Շնորհօք բարերարին Աստուծոյ, ես՝ Վահրամ, որդի Եղբայրական և զուգակից իմ Թայիկ, ի սկիզբն չինութեան եկեղեցւոյս տուաք

զամենայն զստացուածս մեր ի ծախս սորա և զ Դպրավանաց այգին: Եւ առաջնորդք սուրբ ուխտիս սահմանեցին յամենայն ամի շրջա-գայութեան Գ օր ժամ. զնոր եկեղեցիքս՝ զՃրագալոյցն, զՋատիկն և զ Գալուստ Հոգւոյն Սրբոյ՝ յանուն մեր պատարագել զ Քրիստոս՝ Ա օր ինձ, Ա օր Թայիկանն, Ա օր բոլոր ազգին մերոյ. կատարիչք գրոյս օրհնին ի Քրիստոսէ և որք խափանեն՝ ընդ զինն յեկեղեցիսն դատին յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա, ամէն»:

Ի տաճարի անդ ի կողմն հիւսիսոյ.

«ՈԿԶ [1217] Ի ծագմանէ շնորհացն Աստուծոյ և հիմնարկել և ի լուսաւորել եկեղեցեացս գաւառիս Արարատու, ի ձեռն երկուց եղբարց հարազատաց՝ Զաքարիայի և Իվանէի և արդարածնունդ զաւակաց նոցա Շահանշահի և Աւագի. ես՝ Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի Վաչուտեանց, սիրեցեալ ի սոցանէ մեծաւ պատուով վասն հաւատարիմ ծառայութեան իմոյ, կոչեցայ ի վերակացութեան գաւառիս, միաբանեցայ հանդերձ զուգակցաւ իմով Մամախաթու-նաւ սուրբ ուխտիս վանացս Յօհաննու, բազում տրօք և ընծայիւք օգնական եղաք ի շինութեան մեծափառ նորակերտիս: Եւ առաջ-նորդք սուրբ ուխտիս հաստատեցին յամենայն ամի պատարագել զ Քրիստոս յանուն իմ զտօն Ղազարու զամենայն եկեղեցիքս՝ զհին և զնոր և զօր Խաչգիւտին Մամախաթունին պատարագել զ Քրիս-տոս՝ զհին և զնոր եկեղեցիքս անխափան մինչև ի Գալուստ Որդւոյն Աստուծոյ: Եւ որք չառնեն, դատին ի Քրիստոսէ»:

Արտաքոյ տաճարին ի վերայ դրանն արևմտեան.

«Շնորհօք բարերարին Աստուծոյ, տէր Կոստանդին կաթուղիկոս Հայոց, ի թուին ՈՂԲ (1243), յիշխանութեան Շահանշահի՝ որդւոյ Զաքարիայի, և մերում նահանգիս Քրդին՝ որդւոյ Վաչէի, միաբանե-ցայ սուրբ ուխտիս Յօհաննու և ետու Անբերդու երկիրս սեպհական վիճակ Սուրբ Կարապետիս, ի յԱպարանուց ընդ որ բաժանի գետն Քասախ, մինչև յԱշնակ. և սպասաւորք սորա Մկրտիչ եպիսկոպոս և եղբարքս խոստացան կատարել զյիշատակս մեր յետ ելից մեր՝ Բ քա-ռասունք, զամենայն ի կարգին. և սուրբ կաթուղիկէն Թ խորանաւ յամենայն ամի պատարագել զ Քրիստոս՝ ի տօնի Տեառնընդառաջին: Եւ թէ ոք յազատաց կամ յիշխանաց հանել ջանայ զվիճակս ի սուրբ Կարապետէս, անէծս առցեն յԱստուծոյ և յերից սուրբ ժողովոյն և ի սուրբ Գրիգորի Լուսաւորչի Աջէս, և ի մէնջ, ամէն»:

Ի գաւթին՝ ի կողմն հիւսիսոյ.

«Յամի ՈՂԹ (1250), ի տէրութեան Շահանշահի՝ որդւոյ մեծին Զաքարիայի, ես՝ Քուրդ, որդի Վաչէի, և ամուսին իմ Խորիշահ՝ դուստր Մարծպանայ և Մամքանայ, խնամօքն Աստուծոյ հաճոյ եղեալ այլազգի զօրացն նետողաց՝ զանձն իմ եդի ի վերայ եկեղեցեացն Հայոց. և վասն առ Աստուած սիրոյն կրկին հաստատեցաք զմիաբանութիւն մեր առ Սուրբ Կարապետս և եղաք սկիզբն մեծափառ տանս և բազում արդեամբք հասուցաք ի կատար: Եւ սպասաւորք սրբոյս հաստատեցին ի տարւոջն Ի [20] օր ժամ. Ժ [10] ինձ՝ Քրտիս և Ժ [10] Խորիշահին, որչափ կենդանի եմք. Ժ [10]՝ Վաչէի և Ժ [10]՝ Մամախաթունին. եւ յետ ելից մերոց՝ մեզ ի նոր կիրակէին սկսանին և անպակաս առնեն: Որ խափանէ, մեր մեղացն պարտական է. կատարիչք գրոյս օրհնին յԱստուծոյ, ամէն»:

Արտաքոյ գաւթին ի գլուխ դրանն.

«Ի թուին ՉԷ (1258):

Ի կամս Աստուծոյ հզօրին. այս իմ հրաման և արձան սահմանի Շահանշահի մանաւանդ որթախուցէսի որդւոյ Զաքարիայի Ամիրսպասալարի Հայոց Մեծաց և Վրաց՝ զոր գրեցի իմ չինած ժամատանն. տուի զգեղն Շալուաչէն ի Սուրբ Կարապետս՝ յիշատակ հոգւոյ իմոյ և Խոշաքին և յարևշատութիւն որդւոց մերոց: Եւ կրկին հաստատեցի զիմ հօրն հրամանքն, գիրն որ գրած են: Ես ի ժամատունս, որ տուեալ էր զգեղն Որդկան, և զՏաճկամարգն, և ազատ էր արարեալ զամենայն հայրենիք սոցա՝ որ ի գաւառիս. եւ հաստատեցի՝ որ այրօղ լինի և աղմուկ անէ, գիշերօթ չտան առնել. ստացուածն տէրունի լիցի: Արդ՝ եթէ ոք ի թագաւորաց կամ յիշխանաց հանել ջանայ, մեր մեղացն պարտական եղիցի, ամէն»:

Ի գաւթի անդ յորմն հարաւային.

«Ի թուին ՉԻԸ (1279):

Շնորհօք բարերարին Աստուծոյ, ի տէրութեանն Հասանայ, մեք՝ Վարդան վարդապետ և Մխիթարիչ ծառայք Քրիստոսի, արարաք արդիւնս բազումս ի փրկութիւն հոգւոց մերոց. տուաք եկեղեցւոյս զԿոնթեղուտն, որ էր հայրենիք Սուրբ Կարապետիս. չինեցաք հնձանս մեծածախս, արարաք քշոցս արծաթիս պատեալ ոսկւով: Եւ սպասաւորք սրբոյս՝ տէր Համազասպ և այլ եղբարք խոստացան ի տարին ԺԲ ժամ ի տօնի Անդրէի առաքելոյն. վեց ինձ վարդապետիս, Զ օր Մխիթարչին: Արդ եթէ ոք յառաջնորդաց կամ պարոնաց

հանել ջանայ զընծայս մեր յեկեղեցւոյս, նզովեսցի մարդն այն յԱստուծոյ և յերից սուրբ ժողովոյն. և մեր և բովանդակ ազգի մերոյ մեղացն պարտական եղիցի յահեղ հրապարակին, կատարիչք գրոյս օրհնին յԱստուծոյ. և որ խափանէ, դատի ի Տեառնէ»:

Ի տաճարի անդ յորմն հարաւային.

«Թուին ՉԼԲ (1283):

Կամաւ բարերարին Աստուծոյ ես՝ Հասան իշխան՝ որդի Քրդին իշխանաց իշխանի և մօր Խորիշահի՝ յազգէ Մամիկոնեանց, թոռն մեծին Վաչէի և բարեպաշտ ամուսին իմ Արուս–Խաթուն՝ յազգէ Ուքանանց, տարաժամ և կէս աւուրց ելաք յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր և զամէն հայրենիսն և զզաւակսն մեր Դաւթի եղբօր մեր հարազատի և աստուածասիրի: Վասն սիրոյն Աստուծոյ և փրկութեան հոգւոց մեր տուաք ի Սուրբ Կարապետս՝ ես և եղբայր իմ Դաւիթ զմեր գանձագին գեղն՝ զՎահրամագեղ և զՂամազանցն իւրեանց ամէն հող ու ջրով և ընորդի մարդկօք. Կարբի զմեր գնած և զմեր ձեռատունկ այգին և զՔարկենց փոսն և զՈրդկան, որ սեպհական հայրենիք էր եկեղեցւոյս. և ի չար և ի դառն բերմանց ժամանակիս ելեալ էր ի վանացս, բազում աշխատութեամբ և յոլով ծախիւք դարձուցաք ի սուրբ ուխտս. ընծայեցաք և պահարան զարդարեալ ոսկւով և արծաթով: Եւ առաջնորդ սուրբ ուխտիս տէր Համազասպ և եղբարքս սահմանեցին կատարել զյիշատակս մեր՝ մին քառասուն պատարագել զՔրիստոս, յանուն մեր. Ի՝ Հասանայ, Ի՝ Արուս–Խաթունին: Արդ՝ եթէ ոք թագաւորաց կամ յիշխանաց, ի մերոց կամ յօտարաց՝ զինչ և իցէ պատճառանօք հանել ջանայ զմեր յիշատակն ի Սուրբ Կարապետէս՝ զվերոյ գրեալ բովանդակն, մարդն այն նզովեսցի յամենասուրբ Երրորդութենէն, յերից սուրբ ժողովոյն և յամենայն սրբոց»:

Ի տաճարի անդ ի վերայ աւազանին.

«Թուին ՉԽԹ (1300):

Շնորհիւ բարերարին Աստուծոյ, ես՝ Հէճուպ Դաւիթ, որդի Հոնային, թոռն Ալուեցւոյն և ամուսին իմ Նանա՝ դուստր Տուտկան, վասն առ Աստուած սիրոյն վերստին հաստատեցաք զմիաբանութիւն հարցն մեր ի Սուրբ Կարապետս վասն փրկութեան հոգւոց մեր, տուաք չինական ի չինութիւն Ջորագեղին զԱւետիս՝ մականուն Կոնկիկ, արարաք և այլ արդիւնս: Առաջնորդ վանացս տէր Համազասպ և այլ եղբարքս խոստացան պատարագել յանուն մեր՝ ի

տարին Զ պատարագ, ի տօնի Կոստանդիանոսի թագաւորի. Դ՝ Հեճուպին, Բ՝ Նանային: Որչափ կենդանի եմք մեր հարցն առնեն՝ Խոնային և Գէլին և յետ ելից մեր յաշխարհէ, ի մեր անուն կատարեն անխափան: Կատարիչք գրոյս օրհնին յԱստուծոյ և խափանողքն դատին ի Քրիստոսէ, ամէն»:

Ի գաւթի անդ յորմն հիւսիսային.

«Թուին ՊՀԴ (1425):

Կամաւն անմահին Աստուծոյ ես՝ Զաքարիա թոռն Գամրկէլին և որդւոյ պարոն Ազիզբէկին, գնեցի զգեղն Մօղնի հալալ արդեանց իմոց. Սուրբ Գէորգայ մուտքն Սուրբ Կարապետիս էր, զիմ բաժինն էլ Սուրբ Կարապետիս տուի՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց. եթէ ոք խափանել ջանայ, մեր մեղացն պարտական լինի»:

Ի տաճարի անդ յորմն աւագ խորանի.

«Թուին ՊՀԶ (1427):

Շնորհօք բարերարին Աստուծոյ ես՝ պիտակ վարդապետ Սիմէոն, ընծայեցի զայս նորընծայ Յայսմաւուրք Սուրբ Կարապետիս վասն փրկութեան հոգւոյ իմոյ և քաւութիւն յանցանաց իմոց, որքան իմ գիրքս կայ, հանապազ զայս կարդան ի յատենիս, զմեզ յիշեն ի Քրիստոս ի յոյսն իմ ի սուրբ աղօթս իւրեանց»:

Ի գաւթին յորմն հարաւային.

«Յամի ՌԼԴ (1584) թուին, ես՝ Դօլվաթբէկ, թոռն Մալխութին, գնեցի հալալ արդեանց իմոց Սոկովհոդ, տուի ի դուռն Սուրբ Կարապետին յիշատակ ինձ: Եւ սպասաւորքն խոստացան ի տարին Ա պատարագ՝ Կարմիր կիրակի օրն»:

Ի տաճարի անդ յորմն արևմտեան.

«Թուին ՌՁԸ (1639):

Զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ, ես՝ Երևանցի Աւագս, որդի Աղաբաբին և ամուսին իմ Դաստագուլ, միաբանեցաք և գնեցաք Ա ստակ մուլք ի Փարպի, և տուաք ի դուռն Սուրբ Կարապետիս, յիշատակ հոգւոց մերոց և փրկութիւն յանցանաց և յարևշատութիւն զաւակաց մերոց: Եւ առաջնորդ սորա Զաքարիա վարդապետ հանդերձ Կ [60] միաբանօք խոստացան պատարագել զՔրիստոս վասն մեր զտօն Մեծահրաշին յամենայն ամի: Արդ՝ եթէ ոք ի մերոց կամ յօտարաց, որդւոց կամ դստերաց հանել ջանայ զմեր տուեալ տա-

սանորդն՝ դատի յԱստուծոյ և ընտրելոց նորա. որք հակառակին Ճ [100] ոսկի տուգանս տացեն, իսկ կատարողքն օրհնին ի Տեառնէ, ամէն»:

Ի յիշատակարանէ Աւետարանի.

Մեք Հանավանցիք, ես՝ Շահվէլիս, ես՝ Զաքարէս, Միրզէս, ես՝ Ամրումս, ես՝ Քիչիս, ես՝ Զաքարի տղայ Միրզէս, ես՝ Աւետիս, ես՝ Հուրու տղայ Հանէս, ես՝ Ղօչէս, ես՝ Մկրտիչս, միաբանեցաք, Դիլանջու Ամրումի այգին տուինք յիշատակ ի դուռն Սուրբ Կարապետիս: Ինչ մարդ էս բանիս միջումն, այլևայլ իրօք, յետ և յառաջ բան ասա ու կտրայ՝ սուրբ Կարապետն իւր յիշատակն կտրայ: Մեք սպասաւորք խոստացաք ի տարւոջն Բ ժամ ի տօնի Վարդավառին, Սուրբ Խաչին. կատարողք աղաչանաց գրոյս օրհնին ի յԱստուծոյ և ամենայն սրբոց, յաւիտեանս յաւիտենից, ամէն: Հայր մեր որ: Ի թուին ՌԾԸ (1609)»:

Արձանագրութիւնք առանց թուականաց.

Ի գաւթի անդ յորմն հիւսիսային.

«Շնորհիւն Աստուծոյ, ի տէրութեան պարոն Դղօփալ Թամարի, իր թագաւորաց որդի մեծին Մելքիսեդեկի Գօրգէ, ես՝ Ամսաջան, որդի Գրիգորին, և ամուսին իմ Բէսուճ, հէնց էլաւ պարոնաց ձեռնէ զերկիրս առին. ես չբաժնեցայ ի ծառայութենէ: Աստուած պարոնաց աջողումն երետ երկիրս երեկ, Ոհանավանք ինձ տվին հէրէնիք, հասարակաց տունս խլած էր. էգոց, հողի շարատ էր գրած, մեք էլ հասարակ ի սուրբ Կարապետս ապսպարեցաք, վանաց էգոյ հողի շարինատ վերկալաք, վասն արևշատութեան պարոնաց մերոց. և պարոն աթաբակ Շահանշահի և Շրվանշահի հոգւոյն համար, և արձան գրեցաք յաւիտենական: Ես Ամսաջանս վերկալայ և հաստատեցի պարոնացն հրամանաւ. ով որ զայս արձանս խափանել ջանայ, պարոնաց և մեր մեղաց պարտական էլնի, դատի յԱստուծոյ. վարձս Յուդայի և Կայենի առցէ, և երից սուրբ ժողովոյն նզոված եղիցի: Եւ սպասաւորք սուրբ ուխտիս խոստացան ի տարւոջն ԺԲ պատարագ ի տօնի Հոգւոյ Գալստեանն. Գ՝ Շահանշահի, Գ՝ Շրվանշահի, Բ՝ Ջանէ, Բ՝ Ամսաջանի, Բ՝ Բէսուճէ. կատարողք գրոյս օրհնին յԱստուծոյ, ամէն»:

Ի վերայ մատուռի խաչին.

«Զաստուածաբնակս զայս խորանս և զխաչս տէրունական, ես՝ Նանայս, դուստր մեծ հազարապետին Սարգսի՝ որդւոյ Զաքարէի՝

որդւոյ աւագ Սարգսի, կանգնեցի ի վերայ նորակերտ վարդապետիս Մարգարէի, որ սկիզբն յաշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ և առաւել եղև քան զծնունդ յորովայնի: Եւ հոգայր զօգուտն հոգւոյ իմոյ. եւ իմ տեսեալ զյօժարութիւն սրտի նորա, անկայ ի շինութիւն պարսպին՝ նորա առաջնորդութեամբ: Եւ մինչ նա յայս բարւոյ գործոյս վերակացութեան էր, մերձեցաւ կատարած կենաց նորա և ի հող էջ մանկահասակ: Եւ մեզ սուգ անմխիթար եղև փոխումն նորա: Եւ ես՝ Նանայս աղէխարշեալ ի գթոյ նորա, զայս գտի հնար սփոփանաց անձին իմոյ՝ զփոքր յիշատակս զայս ի դիրս նորա հաստատել, զի անմոռանալի լիցի առաջի Աստուծոյ յիշատակ նորա և անվախճան առ ի սէր որդիութեան նորա: Արդ, ով մանկունք Նոր Սիօնի, սիրով ցաւակցութեամբ յիշեսջիք զտարաժամ փոխեցեալն զամենաշնորհն զՄարգարէ, զի պայծառ և զուարթ երեսօք տեսցէ զՔրիստոս և մերս անշարժ մնասցէ միաբանութիւն ի դուռն Սուրբ Կարապետի և ի հանդերձեալն առաջի Աստուծոյ, ամէն»:

Ի տաճարի անդ, յորմն հարաւային.

«Կամաւ բարերարին Աստուծոյ՝ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, ես՝ Թէոդոս, մականուն Զրքին, իշխանաց իշխան, որդի Անբերդեցի Քրդին՝ իշխանաց իշխանին՝ որդւոյ Տայիրին՝ թոռն մեծ Քրտին, որդի արի և քաջին Վաչէի. զայս հաստատ արձան գրեցաք և տուաք ի մեր պապանց հալալ գանձագին հայրենիք՝ ի հանդէն Սերկևիլւոյ ի Սուրբ Կարապետս և ի սուրբ կաթուղիկէն, որ եղեալ է շիրիմ պարոն հայրն իմ, այր Ամատունի՝ տէրն. խոռն կայծանովէն գութանաւի գլխովն, որ ճանապարհն Գուբթայիս Սերկևլւոյ ծովն, Ուչնայի ըղեղ և Կաւանոցն հայրենիք է Սուրբ Կարապետիս: Այս իմ տուած հանդս ի Սերկևլւոյ հանդեն էլ հէնց հաստատ հայրենիք է Սուրբ Կարապետիս: Եւ ես Խուանդ-Խաթուն, ամուսին Անբերդեցի Քրդին, մայր Զրքնին և Թայիկին կրկին հաստատեցի զվերոյ գրեալս: Եւ եղբարքս խոստացան. Ա՝ Խ [40] պատարագել զՔրիստոս ամէն ամի: Արդ՝ եթէ ոք յիմոց կամ յօտարաց հանել ջանայ զմեր ընծայն ի Սուրբ Կարապետէս, մարդն նզովեսցի յԱստուծոյ և երից սուրբ ժողովոյն, մասն Յուդայի և Կայենի առցէ և մեր մեղացն պարտական եղիցի. կատարողք գրոյս օրհնին յԱստուծոյ և ի սրբոց»:

Ի գաւթի անդ յորմն արևելեան.

«Ողորմութեամբն Աստուծոյ ես՝ Զաքարիա, որդի Վաղթանկայ, եղբայր Զալալին և ամուսին իմ Խորիշահ՝ դուստր Վասակայ, միա-

բանեցաք սուրբ ուխտիս և գնեցաք զԱշտարակոյ նորքն և տուաք ի սուրբքս. և սոքա խոստացան Զ օր ժամ ի տօնի Թէոդոսի Թագաւորին. ով խափանէ, դատի ի Տեառնէ»:

Ի գաւթի անդ յորմն արևմտեան.

«Յանուն Աստուծոյ, ես՝ տէր Յուսիկ Երևանայ և ամուսին իմ Սօլթան–Խանում միաբանեցաք տուինք մեր հալալ գանձագին հայրենի այգին ի դուռն Սուրբ Կարապետին. և սպասաւորքն խոստացան ի տարւոջն Դ [4] պատարագ, Բ [2]՝ ինձ, Բ [2]՝ կողակցին իմոյ. ով խափանէ, վարձս Կայենի առցէ, ամէն»:

Ի տաճարի անդ յորմն հիւսիսային.

«Օգնութեամբն Աստուծոյ, ես՝ Մխիթար քահանայ, աշակերտ մեծին Ռուփինայ քահանայի, ետու զիմ այգին ի սուրբ ուխտս, որ է Տանձուտ և սպասաւորք սոցա սահմանեցին ի տարին Դ [4] օր ժամ, ի տօնի սրբոյն Յակոբայ. Ա՝ ինձ, Ա՝ Խաչկայ, Ա՝ Ռատինկայ, Ա՝ Գինէվարդին. որ չառնէ, ՅԺԸ [318] հայրապետացն նզովի»:

Ի տաճարի անդ յորմն հարաւային.

«Յուսով անմահին Աստուծոյ, ես՝ Զանխաթունս, դուստր Աւագ պարոնին և Թաքան-խաթունին, միաբանեցայ Սուրբ Կարապետիս, ետու զիմ կէս այգին, որ Խութուխթ է գնել ի Զուսփանց փոխ: Եւ տէր Համազասպ և եղբարքս խոստացան տարին Դ օր ժամ, ի տօնի Թեկղի: Որչափ կենդանի ենք, իմ մօրն առնեն և յետ ելից իմ՝ ինձ: Որ խափանէ՝ դատի ի Տեառնէ»:

Ի տաճարի անդ հարաւային յորմն.

«Կամաւն անմահին Աստուծոյ, ես՝ Մխիթար և Պետրոս քահանայքս, միաբանեցաք սուրբ ուխտիս և տուաք կորնկանին մեր բաժին և այլ արդիւնք ի չինութիւն եկեղեցւոյս: Եւ սոքա հաստատեցին Գ օր ժամ. Բ՝ մեզ, և Ա՝ Յովաննէս սարկաւագին կենդանութեան ի տօնի Դաւթի և Յակոբայ. ով չառնէ, նզովի ի Քրիստոսէ»:

Ի տապանատան յորմն հարաւային.

«Ես՝ Աշոտ, որդի Երկաթայ, տարաժամ ելայ յաշխարհէ, տուի զիմ այգին ի Սուրբ Կարապետս: Եւ սոքա խոստացան ի տարին Դ պատարագ. Բ՝ ինձ, մէկ՝ իմ հօրն, մէկ՝ իմ մօրն. և ես Ռուզուքան

մայր Աշոտոյ, իմ հայրենիք, թէ ինչք տուի Սուրբ Կարապետիս յետ ելից իմոց: Կատարողքն օրհնին յԱստուծոյ»:

Արտաքոյ տաճարին յորմն հարաւային.

«Շնորհօքն Քրիստոսի, ես՝ Աղաղոն էրէց յԱրենւոյ, որդի Մնդարայ, միաբանեցայ սուրբ ուխտիս, գնեցի զայգին Խառաբէլանց և ետու ի սուրբքս. և սպասաւորք սոցա սահմանեցին ի տարին Դ ժամ, ի տօնի Կիւրղի: Ով չառնէ, նզովեսցի ի Քրիստոսէ»:

Բաց յայսոցիկ նշանակեալ կալուածոց վանացս յարձանագրութիւնսն անդ, էին և այլ յոլով անշարժ կալուածք նուիրեալք ի բարեպաշտ ժողովրդոց, որք նշանակին մի առ մի ի կոնդակի գրեցելոյ ի Զաքարիա Սարկաւագէ, այլ յաղագս չձանձրացուցանելոյ զընթերցողսն թողաք ի բաց զայն ամենայն:

405 [ա]. Վանահարք կամ առաջնորդք վանացս ըստ ցուցանելոյ նոյն կոնդակի և այլ գրուածոց. բայց որոց գոն թուականք՝ այնք ոչ են սկզբնաւորութեան պաշտաման նոցին, այլ յորում ամի և դիպողութիւն ժամանակի եղեալ է ըստ բացայայտութեան արձանագրաց, յիշատակարանաց մատենից և այլոց ծանօթութեանց նորուն Սարկաւագի և մեր:

Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մեծն Պարթև նախկին հիմնադիր և կառուցող մենաստանիս, և որպէս ընդհանուր կաթուղիկոս ազգի Հայոց, համարի և տեսուչ կամ նախկին վանահայր այսր մենաստանի, որպէս և ամենայն կրօնաստանաց ի նմանէ կառուցելոց, քանզի և յայս տեղի երբեմն երբեմն յամառնային ժամանակի պարապէր յերկնասլաց աղօթս և խրախոյս մատուցանէր քաջալերութեան, որպէս ի սմա կացելոցն բոլորովիմբ հրաժարելոցն յաշխարհէ, նոյնպէս և ժողովրդականաց ինքեան յանձնեցելոյ հօտին:

Բ. Սիւղոս ոմն կարգեալ ի Լուսաւորչէ անտի տեսուչ և վանահայր յայսմ. ուստի և կոչեցաւ երբեմն այս մենաստան Սիւղի վանք, որպէս յիշատակի ի Մարտիրոսոք Ճառընտրի:

Գ. Ղազար Փարպեցի՝ ի ժամանակի անդ կաթուղիկոսութեանն Յովհաննու Մանդակունւոյ, զի որպէս էր վանահայր և տեսուչ Կաթուղիկէ եկեղեցւոյն Վաղարշապատու ըստ Ասողկայ պատմագրի, նոյնպէս և այսր վանաց:

Դ. Յովհան անուն ոմն ի կենդանութեան Ղազարայ Փարպեցւոյ, յոր անուն և մենաստանն կոչեցաւ Յօհանու վանք և կոչի ցարդ ևս:

Ե. Աշոտ Դունեցի յերկրորդում ամի թուականութեանն Հայոց. այն է, յամի Տեառն 553. և սա ինքն քակեալ զփայտայարկ եկե-

ղեցւոյ մենաստանիս՝ ետ կառուցանել կոփածոյ քարամբք, այն ինչ տակաւին չունէր զպաշտօն վանահայրութեան:

Զ. Բաբեղաս, որ մարդասիրութեամբ հիւրընկալեաց զՄովսէս եպիսկոպոս Յուրտաւայ և գտաւ ի ժողովն Դվնայ վասն ընտրութեան Ա Աբրահամ կաթուղիկոսի. յիշատակի սա յինչ ինչ գլուխս Բ հատորոյ Պատմութեան Ուխտանէս եպիսկոպոսի:

Է. Յօհան ի թուականին Հայոց ՃԾԲ, այն է յամի 703. և ըստ վարուց սրբոց՝ Յովհաննէս, ի ՃՁՁ կամ ՃՁԷ թուին (թէ չիցէ այլ ոք) որ ընկալաւ սիրով զՎահան Գողթնացի և յուղի էարկ ընդ նմա դնելով և զոմանս ի կրօնաւորացն իւրոց վանաց (Վարք սրբոց, հատոր Ա, երես 199 և 213):

Ը. Մխիթար ի թուին Հայոց ՆՁԲ, յամի 1033. յաւուրս սորա եկն Երեմիա հայրն Մարմաշինու յայս մենաստան և աստ վախճանեցաւ. և կայ գերեզման նորա անդ՝ որոյ և զարձանագիրս չիրմի և զանցսն նորին ի հնագոյն մատենէ եղելոյ ի վանս Սանահնի՝ յառաջ բերէ նոյն Զաքարիա Սարկաւագ:

Թ. Խաչիկ ի թուին ՈԻ, յամի 1171. ստուգէ զայս արձանագրօք խաչի եղելոյ ի գերեզմանոցի մենաստանիս:

Ժ. Մկրտիչ ի թուին ՈՂԲ, յամի 1243. յաւուրս Կոստանդին կաթուղիկոսի ըստ յայտարարութեան արձանագրի նորուն իսկ կաթուղիկոսի՝ որ ի վեր անդր (406):

ԺԱ. Համազասպ ի թուին ՁԻԸ, յամի 1279. յազգի Մամիկոնէից՝ այր փառահեղ և ահարկու, որ ի ժամանակի առաջնորդութեան իւրոյ փարթամացոյց զմենաստանն և ստացաւ զբազում գրեանս և յաւել ի գրանոց մենաստանիս՝ յորոց արդէն քանիք գտանին աստ ի գրանոց Աթոռոյս Էջմիածնի, որպիսի են մի հատ ճառընտիր մեծ դրութեամբ և Պատմութիւն Աղուանից հանդերձ Պատմութեամբն Սոկրատայ յունի և ընդարձակ պատմութեամբն Սեղբեստրոսի հայրապետի՝ թարգմանեալ ի Գրիգորէ Ձորափորեցւոյ: Անուն սորին յիշատակի ի վեր անդր և յարձանագրութիւնսն եկեղեցւոյ մենաստանիս:

ԺԲ. Վասիլ ի թուին ՁԿ, յամի 1311. զայս ուսաք՝ ասէ Սարկաւագն, յարձանաց խաչին, յորում գրեալ էր. «Զհայր Յօհաննու վանից, առաջնորդ Շիրակայ և ամենայն Անբերդու յիշեցէք ի Քրիստոս. թուին ՁԿ»:

ԺԳ. Ներսէս ի թուին ՁԿԷ, յամի 1318. յազգականաց վերոյիշեալ Համազասպայ, զոր յառաջ բերէ Սարկաւագն ի յիշատակա-

բանաց գրոց. յիշատակի և ի յետնագրութեան Աւետարանի ի ՉԾԹ [1310] թուի:

ԺԴ. Աբրահամ, ի թուին ՊԱ, յամի 1352. զոր ստուգէ յարձանագրաց եկեղեցւոյ և ասէ. «Յաւուրս սորա ամենայն ինչ հասարակաց էր և ո՛չ ոք ստանայր առանձին ինչ»:

ԺԵ. Կարապետ, ի թուին ՊՂ, յամի 1441. յաւուրս Նորոգութեան Աթոռոյ կաթուղիկոսութեան յէջմիածին. և էր սա մի յանդամակցաց ժողովոյն, որ վասն Կիրակոսի Վիրապեցւոյ և էր ինքն եպիսկոպոս:

ԺԶ. Գաբրիէլ եպիսկոպոս. սա էր, ասէ Սարկաւագն Զաքարիա, աթոռակալ յէջմիածին յաւուրս Կիրակոսի Վիրապեցւոյ, որ ի վախճանի պատմութեան Մեծոբեցւոյն յիշատակի ընդ Կիրակոսի վարդապետի ուրումն. և ապա եղև առաջնորդ այսր մենաստանի. և գոլով աշխատասէր ի գրչութեան, գրեաց զբազում գրեանս, որ ի նախնեաց, յորոց յիշատակարանաց ստուգի առաջնորդութիւն սորին ըստ Նորուն Զաքարիայի:

ԺԷ. Գրիգոր, միանգամայն և առաջնորդ վանաց Բջնւոյ. և ինքն ի բնակչաց նոյն Բջնի գեղջ. սա յաւելու զբազում գրեանս ի գրանոց մենաստանիս, որոց և յիշատակարանք յայտնեն զսմանէ, ասէ Զաքարիա Սարկաւագն:

ԺԸ. Խաչատուր՝ մականուն Ալթիղօլաճ, որ ետ չինել վասն վանացն զմի ձիթիհանք և զմի ջրաղաց:

ԺԹ. Նահապետ, միանգամայն և առաջնորդ վանաց Սրբոյն Սարգսի, որ յՈւշի գիւղ: Եւ սա յաւել զբազում գրեանս ի Սաղմոսավանք:

Ի. Միքայէլ, զոր ստուգէ Սարկաւագն Զաքարիա ի բանադրանաց Թղթոյ միոյ:

ԻԱ. Գրիգոր վարդապետ Կարբեցի, ի թուին ՌԺԹ, յամի 1570, զոր ստուգէ նոյն Սարկաւագ պատմութեամբ ծերունեաց:

ԻԲ. Մատթէոս, այր խոհեմ և երկիւղած, ի թուին ՌԽԲ, յամի 1593, ըստ բացայայտելոյ յիշատակարանի Աւետարանի միոյ:

ԻԳ. Ղուկաս, ի թուին ՌԽԸ, յամի 1599. միանգամայն և առաջնորդ Տեղերոյ վանաց. սա տայ գրել զԱւետարան մի:

ԻԴ. Յովասափ ի նոյն գեղջէ վանացս, յազգէ Սէթեանց, ի թուին ՌԿԷ, յամի 1618. ստուգի ի կազմել տալոյն նորա զՃաշոց մի:

ԻԵ. Յովհաննէս Կարբեցի, ի թուին ՌՀԸ, յամի 1629. յաւուրս սորա յաւար առաւ մենաստանն և դարան նորա յելուզակաց՝ ջալալի կոչեցելոց (404):

ԻԶ. Ղուկաս բազմահանճար վարդապետ, առաջնորդ և դպրապետ, ի թուին ՌԶ, յամի 1631. կարգեալ ի Մովսէս կաթուղիկոսէ Սիւնեցւոյ, յորոյ աշակերտաց տեղեկանայ նոյն Սարկաւագ:

ԻԷ. Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցի, այր սուրբ և գիտուն, ի ՌԶԳ, յամի 1634:

ԻԸ. Առաքել վարդապետ Դավրիժեցի պատմագիր, ի թուին ՌԶԵ, յամի 1636. կացեալ ամ մի յառաջնորդութեան՝ հրաժարի և գայ յէջմիածին:

ԻԹ. Զաքարիա եպիսկոպոս Վաղարշապատեցի, ի թուին ՌԶԶ, յամի 1637. այր ժիր և հանճարեղ: Սա է որ յիշատակի յարձանագրութիւնս էջմիածնի ի համարն 17, զորմէ և Զամչեան Միքայէլ (յԳ հատոր, երես 648):

Լ. Յովհաննէս վարդապետ Կարբեցի ի թուին ՌՃ, յամի 1651, յորում ամի վախճանեալ՝ ամփոփեցաւ մարմինն ի միջին տաճարի անդ առ որմով հիւսիսային դասուն՝ մերձ ի դուռն մատրան, որ ի Լուսաւորչէ, և տակաւին գտանի տապանավէմն ի վերայ և ամբողջ գրուագ նորին ըստ այսմ.

«Այս է տապան գերեզմանի,

Կարբեցի Օվաս սուրբ վարդապետին,

Որ վախճանեցաւ ՌՃ թուին»:

ԼԱ. Սարգիս վարդապետ Կարբեցի, ի թուին ՌՃԻԸ, յամի 1679. ի սորա ժամանակի էր նա ինքն Զաքարիա Սարկաւագ այսր մենաստանի և գրիչ ստորագրութեանս այսորիկ, որ և գրեաց զ Պատմութիւն յերկուս հատորս՝ առեալ ինչ ինչ ի հնոց և ի մնացորդացն յԱռաքելէ Դավրիժեցւոյ և ի գործելոցն յիւրումն ժամանակի. և աւարտէ զայն ի թուին Հայոց ՌՃԽԸ [1699]:

ԼԲ. Յակոբ վարդապետ, ի ՌՃԶԳ թուին, յամի 1734. նորոգող հնացեալ մատրանն, որ ի Լուսաւորչէ անտի (404):

406. **Սերկևլի**. *հին գիւղ յիշատակեալ ի պատմագիրս վասն մահուն Վասակայ Պահլաւունւոյ՝ հօր Գրիգորի Մագիստրոսի: Եւ է ի սարահարթի ձորոյն Քասաղ գետոյ մերձ ի Յօհանավանք ի հիւսիսոյ նորա իբրև քառորդ ժամու և է անբնակ այժմ. զի ի մասնաւոր անդաստանս սորին սերմանեն բնակիչքն ի Յօհանավանք: Ի գրուածս կալուածոց Յօհանավանաց յիշատակի վասն անդաստանի միոյ ի սահմանս այսր գեղջ յանուն Վասակայ Պահլաւունւոյ՝ Վասակամուտ, ի յիշատակ մահուան նորա յանգէտս:*

Եկեղեցի գեղջս ի կոփածոյ քարանց փոքր դրութեամբ առանց սեան. սալ քարինք տանեացն անկեալ են իսպառ, այլ որմունք նո-

բա և ներքին առաստաղ կամարին յամբողջութեան կան. չգտաւ ինչ գրուած յորմունսն. ուստի և անուն եկեղեցւոյն անյայտ:

407. **Կարբի**. *գիւղաքաղաք յարևմտից վերոյիշեալ վանաց Յոհաննու՝ հեռի ի նմանէ իբրև քառորդ մի ժամու. աւերակ նորա ընդարձակ ի դիւր տեղւոջ, յառաջ քան զտիրել երկրիս մեծի կայսերութեանն Ռուսաց ո՛չ գոյր ի սմա բնակիչ, այլ ի գաղթիլ պայազիտցւոց յՕսմանեան իշխանութենէ յայս երկիր յամին 1829, բնակեցան և բնակին ի նոցունց անտի ի հայազգեաց և են տունք 84:*

Շէնք տանց առաջին բնակչացն թէպէտ բոլորովիմբ քայքայեալ էին, բայց յարդեան նորոգութեան գտան յոլով ներքնայարկք ի կոփածոյ քարանց ընդ փլատակօք, որպէս և յայլ բազում տեղիս այսր նահանգի:

Գտանին յայսմ ընդարձակ տարածութեան աւերակաց տանց գիւղաքաղաքիս հինգ եկեղեցիք գլխովին աւերեալք, բայց վեցերորդն մեծ դրութեամբ կայ ի կանգուն յամբողջութեան ի միջավայր տեղւոջ գերդաստանացն կառուցեալ օրոցաձև ի վերայ չորից սեանց ի սրբատաշ քարանց. ունի զմի ևեթ սեղան տեղի պատարագելոյ և զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ սեղանոյն և զերկուս դրունս. արևմտեանն կայ հիւսեալ քարամբք:

Զայս եկեղեցի ետ կառուցանել արդեամբք իւրով խօջայ պարոն Այվազն բնակիչ տեղւոյս ի թուին Հայոց ՌՃԽ (1691). և արձանագիր յիշատակի նորին գտանի յորմն հարաւային արտաքուստ՝ յարևմտից դրան այնր կողման՝ ըստ այսմ օրինակի.

«Կամօքն մարդացեալ բանին Աստուծոյ և բարեխօսութեամբ և օժանդակութեամբ մաքուր ծնողի իւրոյ կուսին Մարիամու, սկիզբն եղև շինութեան սրբոյ եկեղեցւոյս, որ յանուն Սուրբ Աստուածածնի, ի գիւղաքաղաքին ի Կարբի, արդեամբք և գոյիւք խօջազատայ պարոն Այվազի, ի թուականին Հայոց ՌՃԽ [1691] ամին, ի թագաւորութեանն Պարսից շահ Աւտուլլային և ի բռնակալութեան երկրիս Արարատեան Զօհրայ խանին և ի հայրապետութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի տեառն Նահապետ կաթուղիկոսին և խրոխտի և պերճի, յառաջին յառաջնորդութեան սրբոյ ուխտին մերոյ Յոհաննու վանք տեառն Սարգսի հեզահոգի վարդապետին: Իսկ կատարումն սորին եղև ՌՃԽԲ [1693] թուին, յաւուրս նոյն հայրապետի և նոյն առաջնորդի, բայց ո՛չ նոյն թագաւորին և իշխանին: Որք պատահիք այսմ արձանի կարդալով կամ լսելով, յիշեսջիք միով ողորմեայիւ զպարոն Այվազն հանդերձ ծնողօք իւրովք և ամենայն արեանառու մերձա-

ւորօք, զի և դուք յիշեալ լիջիք յառաջի անմահ գառինն Աստուծոյ: Զ Մարկոս յիշեսջիք»:

Զշինողէ եկեղեցւոյս զպարոն Այվազէ գրէ Զաքարիա Սարկաւագ զբազում գովութիւնս. և զկնի բազմապատիկ ջերմեռանդութեանց և բարեպաշտութեանցն յարէ և զշինութենէ սորին, յորում ժամանակի էր և ինքն Զաքարիա. «Եւ ի վերայ այսր ամենայնի յաւել ևս մեծ բարութիւն, զի շինեաց ի մէջ գեղջին (Կարբւոյ) եկեղեցի մեծ, հոյակապ կոփածու քարամբք, չորիւք սեամբք, կաթուղիկէ. և բազմացոյց զանօթն և զգեստն և շուրջանակի պարսպեաց ապառաժ քարամբք. այլև եբեր ջուր յՈրդկան գեղջէ փողրակաւ և քնկաւ մինչև ի դուռն եկեղեցւոյն, զի ի ձմռան եղանակի մի՛ պակասեսցի ջուր ի գեղջէն» (Հատոր Բ, գլուխ ԿԳ):

Պարիսպ եկեղեցւոյս իսպառ քայքայեալ և անհետացեալ է, միայն նշմարին հիմունքն. ջուրն որ յՈրդկան գեղջէ, յաղագս աւերման ջրանցիցն չի՛ք ի միջի, ի վերայ տանեաց եկեղեցւոյն ո՛չ գոյ այժմ կաթուղիկէ և ո՛չ յառաջագոյն եղեալ է. այլ բաժան յեկեղեցւոյն յարևելից նորա գոյ կրկնայարկ քառակուսի շինուած ի խարտեալ քարանց. ներքնայարկն նորա քառակուսի կամարայարկ, իսկ վերնայարկն սիւնազարդ զանգակատուն. թերևս զսա յիշէ Զաքարիա Սարկաւագ (Կաթուղիկէ):

ՄԵՆԱՍՏԱՆ ՈՒՇԻ ԳԵՂՋ

408. Այս մենաստան յարևմտից գեղջն Ուշւոյ իբրև քառորդ մի ժամու ի վերայ բարձրաւանդակ բլրակաձև վայրի՝ յստորոտի անդ Արագած լերին հեռի ի Կարբւոյ յարևմտից նորա աւելի քան զկէս ժամ: Կառուցաւ սա յառաջն ի սրբոյն Մեսրովպայ մեծ վարդապետէ յանուն սրբոյն Սարգսի զօրավարի, զորոյ զնշխարսն բերեալ նորին մեծ վարդապետի ի Պարսից ի Հայաստան՝ ամփոփեաց աստէն: Եւ արար զտեղին վանք միաբանակեցաց ի սկզբան Ե–րդ դարու, որպէս աւանդի Յայսմաւուրս յ31 յունվարի և կոչի Ուշւոյ Սուրբ Սարգիս:

Պարսպապատ է այս մենաստան և է պարիսպ նորա երկար քառանկիւնի ի հիւսիսոյ ընդ հարաւ՝ կառուցեալ ի հասարակ քարանց: Ի միջին տեղւոջ պարսպի են տաճարքն՝ եկեղեցիք երեք կիցք իրերաց: Հիւսիսայինն փոքր ի հին աւուրց և ունի փոքրիկ դուռն մի յարևմտից: Եւ գտաւ թէպէտ արձանագիր ինչ ի վիմին եղելոյ ի վե-

բայ դրանն, այլ գոլով կարի հնացեալ՝ մնաց անվերծանելի: Միջին տաճարն միջակ մեծութեամբ առանց սեան՝ ունէր կաթուղիկէ վայելչաձև, այլ յամին 1827 անկաւ կործանեցաւ յերկրաշարժութենէ, որպէս կաթուղիկէն, նոյնպէս և տանիքն հանդերձ արևմտեան որմովն բոլորովիմբ: Եւ աւանդեն ականատեսքն, թէ գերեզման սրբոյն Սարգսի էր յայսմիկ տաճարի և այժմ ծածկեալ ընդ փլուածովքն կայ յանյայտութեան: Կամարայարկն միակ սեղանոյ այսր տաճարի հանդերձ արևելեան որմովն գտանի ի կանգուն: Երրորդ տաճարն՝ այն է գաւիթն միջին տաճարի կառուցեալ ի հարաւոյ նորա անմիջապէս կից ընդ այն ի վերայ չորից միաստանի սեանց վայելչաձև կամարակապ: Ի կամարաց սորին և ի տանեացն խախտեալ աւերեալ կան կիսով չափ: Ի վերայ հարաւային դրան միջին տաճարի, որ ընդ գաւթաւս, դնի այս թերի մնացեալ արձանագիր.

«Թվ. ՉՀԸ (1329) կամաւ անմահին Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Քրդին, խու՞»:

Ի ներքուստ յորմն հարաւային այսր գաւթի դնի այս արձանագիր.

«Թվ. ՉՀԸ [1329], կամաւ անմահին Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Քուրդին և Խուտ–Խաթունին, ես՝ Հոռոմ էրէց, որդի Մաւր և Համայ և ամուսին իմ Ուլու–Խաթուն, միաբանեցաք սուրբ զաւրայվարիս՝ տուաք մեր հազար մանին այգին...»:

Իսկ արձանագիր չինութեան այսր տաճարայարկի գտանի ի վերայ արևմտեան միակ դրան սորին արտաքուստ ի միակ վէմն մեծ յայս օրինակ.

«Աստուծոյ ողորմութեամբն, սուրբ Սարգսի զաւրավարիս աւգնութեամբն, աշխարհայկալութեանն այլ ղանացն, տէրութեան տեղւոյս աւագ Սարգսի չինեցաւ հատած մեծ տաճարս Աստուծոյ ի կանգնումն խախտեալ եկեղեցւոյս՝ զոր էր շարժեալ ի հիմանց, ի տէր Յոհանիսէ ի հալալ ընչից իւրոց, որում ողորմեսցի նմա Քրիստոս, տացէ ի լուսեղէն յարկացն հոգոյ նորայ: Եւ տէր Համազաս... որք աշխատեալք են ի սմա, զհամայն միայբանք սուրբ ուխտիս յիշեցէ՛ք ի Տէր: Ի թուիս ՉԺԳ (1264)»:

Կացարանք հոգևորական ուխտի սորին խսպառ յաւերութեան կան. գտանի ի մէջ պարսպի մենաստանիս ի հարաւոյ գաւթին բնական քարայր մի:

Յիշատակին ի գիրս քանի առաջնորդք այսր մենաստանի: Ոսկան վարդապետ, որ և եպիսկոպոս, որ եկաց աստ աշակերտօքն իւ-

բովք յամի իբր 1654 և պարսպեաց զայս տեղի և չինեաց զտունս բնակութեան: Բարսեղ վարդապետ յամի 1443, ըստ յիշատակարանի Աւետարանին նուիրելոյ յայս մենաստան: Միքայէլ եպիսկոպոս ի Քանաքեռ գեղջէ յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսի Հաղբակեցւոյ:

409. Ուշի *գիւղ մերձ յայս մենաստան յարևելից՝ բնակեալ այժմ յայլազգի մահմէտականաց՝ տունք 29: Եկեղեցի գեղջս ի հնոց ի սրբատաշ քարանց կայ աւերակ և միայն մասն ինչ որմոյ նորա կայ ի կանգուն:*

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ, ԱՅՆ Է ՍՈՒՐԲ ՍԻՕՆ ԵԿԵՂԵՑԻ

410. Այս մենաստան յԱրագածոտն գաւառի, յարևելից նոյն Արագած լերին և յարևմտից Արայի՝ ի վերայ բարձրադիտակ սարահարթի ձորոյն Քասաղ գետոյ յեզեր նորին արևմտեան և ձորն որ առաջի՝ զարհուրելի իմն խորութեամբ: Հեռի գտանի ուղղակի ընդ հիւսիս ի Յօհանավանաց իբրև ժամ մի: Հիմնարկութիւն մենաստանիս ըստ ազգային աւանդութեանն լեալ է ի ժամանակէ անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, որպէս և ցուցանէ առանձին կոնդակն յանուն այսր վանաց՝ նորոգեալ ի մագաղաթի ի թուականին Հայոց ՌՀԲ, այսինքն յամի 1623, յաւուրս վարդապետութեանն Մովսէսի Սիւնեցւոյ՝ որոյ կնիք տեսանի դրոշմեալ անդէն ի կոնդակի յերկուս տեղիս սևերանգ դեղով: Տեսակ կնքոյն ի միջին տեղւոջ կիսով ի վեր պատկեր Փրկչին, յերկուս կողմանս և կիսով ի վայր վերտառութիւն այսպիսի. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Մովսէս վարդապետ ի վիճակ Ստաթէի», յորում նշանակի բաց յայս մենաստանէս և անապատ անուանեալ տեղի ի խորաձորի անդ: Գտանին ի խորաձորի աստ ինչ ինչ մասնաւոր տեղիք աղօթից և խրճթաց՝ կոչեցեալ ի բնակչաց ևս Անապատ՝ յանուն Սաղմոսավանաց, Յովհանավանաց և այլն, յորոց մին հանդէպ Մօղնի գեղջ ի ձորի անդ ունէր տաճար ի խարտեալ քարանց և պարիսպս և խրճիթս աղօթաւորաց, այլ յամին 1834, ի գարնանն կարի առատացեալ ջուրց գետոյն ի հալոցաց ձեանց յաւուրս քառասնորդաց պահոց, հիմնովին խլեալ զայն իսպառ անհետ արար: Օդ և ջուր մենաստանիս առողջարար և տեղին՝ հովասուն: Հայեցուածն կարի ընդարձակ և գրեա թէ ընդ բովանդակ դաշտն Արարատեան:

Շէնք մենաստանիս և եկեղեցւոյ նորա ի ժամանակէ անտի Լուսաւորչին մինչև ցամն 1215, թէ յորպիսի դրութեան եղեալ է և

ո՛յք ոմանք շինութիւն և նորոգութիւն արարեալ իցեն՝ չի՛ք ինչ ծանօթութիւն: Ո՛չ նշանակին և ի յիշատակեալ կոնդակին: Ապա ի նոյն յիշեալ թիւ Վաչէ իշխանաց իշխան տայ կառուցանել տաճար վայելուչ ի կոփածոյ քարանց և է կրկին: Առաջինն՝ փոքր և անսիւն և ունի զմի սեղան խորհրդոյ պատարագի, իսկ երկրորդն՝ որ համա-ըի գաւիթ նորա, մեծ քան զայն կառուցեալ ի վերայ չորից սեանց: Երկոքին ևս ունին զփոքրիկ կաթուղիկէս ի միջավայր տանեացն: Այլ չէնք նոցա խախտեալ՝ և յինչ ինչ տեղեաց որմոց և տանեացն անկեալ են քարինք և լքեալ կայ ի պահպանութենէ: Ուրանօր բնա-կին այժմ յազգէ Հայոց՝ տունք 4 և աղօթատեղի է նոցա այդ եկեղե-ցի. և ի մահմետականաց՝ տունք 6:

Ի վերայ դրան միջին տաճարի դնի սոյն արձանագիր շինու-թեանն՝ ըստ այսմ.

«Թվ. ՈԿԴ (1215):

Ի ճշմարիտ սիրոյն Քրիստոսի յորդորեալք և ի սէր Արարչին վստահացեալք՝ ես, Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի և ամու-սին իմ Մամախաթուն ծանեաք զաւրութիւն Տեառն մերոյ և շինեցի զեկեղեցիս Սուրբ Սիօն ի փրկութիւն հոգւոց մերոց և յիշատակ ամիրսպասալար Զաքարէի և ի պահպանութիւն կենաց որդւոն նորին Շահնշահի, որ է լոյս աչաց և ապաւէն կենաց մերոց: Եւ ողորմու-թեամբ պատրոնին տվաք զգեղն Աղկունծ ի Սուրբ Սիօն Սաղմո-սավանացս և հաստատեցաք զաւագ բեմն ամէն շաբաթ աւր պա-տարագ Զաքարիայի, որ կատարի անխափան մինչև ի հաստատու-թեան է սուրբ ուխտս: Եւ զՏանծագաւիթ այգին յիւր եկեղեցիս, ի Նորագեղ քարափաւն և գետաւն և ի նորաշինիկ զաղբոյրատնիսն դռնաբացէք եկեղեցւոյս»:

Ի վեր քան զվերոյգրեալ արձանագիր ի վերայ նոյն իսկ դրան գրի և այս ինչ.

«Շնորհաւք բարերարին Աստուծոյ, ես՝ Վաչէ, որդի Քրդին՝ որ-դւոն Վաչէի և Տաւրխուշահի՝ դստեր Մարգպանա Մամիկոնէից, գնեցի զԵրերունս ի մեծ պարոնէն Շահնշահէ և ետու ի վանս Սաղմոսի և զկէսն իմ եղբաւրն Հասանա, որ չէն պահէ վանիցս համար: Եւ յոր-ժամ եհաս ինձ փոխիլ ի կենցաղոյս տարաժամ և կէս աւուրց, յանձ-նեցի զհոգիս իմ և զգոյս հաւր և մաւր իմո և գնեցին յընչից իմոց ԺՌ (10000) սպիտակի զԱղկունծ յիւանէէ յորդւոն Շահնշահի, որ է սեպհական տէր գաւառիս Անբերդւոյ, զոր յառաջ պապն իմ Վաչէ գնել էր ի մեծ սպարապետէն Զաքարէէ և գրել ի դուռն եկեղեցւոյս,

զոր խափանել էր ի չար պատահմանց եկեալ ի վերա աշխարհիս: Դարձեալ վերստին գնեցաք և գրեցաք, զի որ գանձայգին յԱւշական և զտունն Տորոզոնոնց ի Կարբի իւր հայրենիքն ետուն յիմքն արնասեւ գրեցին զհամբարձումն և զգալուստ հոգոյն պատարագել զՔրիստոս յանուն Եւթաղի: Որք խափանէ յիմոց կամ յաւտարաց, անէծս առցէ յերից սուրբ ժողովոյն և պատասխանի տայ առաջի Աստուծոյ և կատարիչքն աւրհնին ի Քրիստոսէ, ամէն»:

Կից ընդ հարաւային որմն գաւթի տաճարին է և եկեղեցի մի անսիւն և ունի զմի ևեթ սեղան և կամար սեղանոյն ձգեալ ի խոնարհ՝ ունելով ի վերայ զփոքրիկ սենեակ իբրև մատուռն և դռնակ նորա ընդ հիւսիս՝ ընդ որ հնար է սանդղովք ելանել, ուր ըստ վկայելոյ արձանագրութեանն, որ զկնի պահէին զմատեանս այսր մենաստանի: Միակ դուռն տաճարիս ի հիւսիսոյ ի մէջ յիշատակեալ գաւթին:

Արձանագրութիւն չինութեան եկեղեցւոյս դնի ի ներքուստ յորմն ներքին դասուն յայս օրինակ.

«Ի թվ. ... [Ո]ՁԴ [1235], ես՝ Քուրդս և ամուսին իմ Խորիշահ չինեցաք զգրատունս և հաստատեցաք զմատուռս յանուն դստեր մերո Մամախաթունին, որ տարաժամ փոխեցաւ ի Քրիստոս: Եւ մեք զարդիւնք նորա արարէք խաչ ոսկի և Աւետարան ոսկետուփ, է նափորտ և վառ և զարդք եկեղեցո և սահմանեցաք զՅայտնութիւն և զՁատիկն ճրագալուցովն, զԱստուածածինն և զսուրբ Խաչն նաւակատովն յայսմ խորանի պատարագել զՔրիստոս յանուն Մամախաթունին: Կատարիչ գրոյս աւրհնին յԱստուծոյ: Ով խափանէ, դատի Տեառնէ, ամէն»:

Տանիք եկեղեցւոյս ի միջակիտին ունի ըստ միւսոցն զփոքրիկ կաթուղիկէ յորոյ միջին կողմն գտանի երկկարգ արձանագրութիւն զբոլորակութեամբն յայս օրինակ.

«Թվ. ՌՃԺԸ (1669) նորոգեցաւ սուրբ Աստուածածինս... հոգաբարձութեամբ Գաբրիէլ վարդապետի, աւժանդակութեամբ...»:

Կացարանք հոգևորական ուխտի վանացս խպառ անհետացեալ՝ մինչև չնշմարիլ և տեղւոյ այնց: Յիշատակին յինչ ինչ գրուածս վանահարք այսր մենաստանի: Գրիգոր վարդապետ ականատես կոչեցեալ յաւուրս չինութեան եկեղեցւոյս ի Վաչէ իշխանէ՝ ըստ աւանդելոյ վերոյիշեալ մագաղաթեայ կոնդակին: Սարգիս եպիսկոպոս, որ ամփոփեաց ի շիրմի զանապական մարմին ուրումն կրօնաւորի վախճանելոյ յանծանօթս յայրի միում՝ յԱրագած լերին, յամի 1609: Գրիգոր վարդապետ նորոգող մագաղաթեայ կոնդակին յամի 1623:

Մանուէլ եպիսկոպոս յամի 1636: Յովհաննէս Պարոնտէր յամի 1651: Սա ինքնին հրաժեշտ տուեալ կարգէ փոխանակ իւր զ Գաբրիէլ վարդապետ զեղբօրորդի իւր ըստ Զաքարիա Սարկաւագի (հատոր Բ, գլուխ 29): Ոսկան վարդապետ Երևանցի, յիշատակեալ ի Սիմէոն կաթուղիկոսէ, յամի 1661: Գաբրիէլ վարդապետ ի վեր անդր յարձանագիրն փոքրիկ յամի 1669: Աւետիք վարդապետ յամի 1736՝ յիշատակեալ ի Սիմէոն կաթուղիկոսէ:

411. Որդկան գիւղ: Մերձ ի Սաղմոսավանք յարևմտից հարաւոյ նորա: Յիշատակի այսու անուամբ ուրեք ուրեք յարձանագրութիւնս և ի գրուածս Զաքարիա Սարկաւագի (409): Այժմ կոչի այս գիւղ Իլանչալան անուամբ ի բնակչացս, ուր բնակին արդէն հայազգիք՝ տունք 11:

412. Եղիվարդ գիւղ: Որպէս ի հինսն, նովին անուանակոչութեամբ և այժմ յԱրագածոտն գաւառի՝ ի հարաւային ստորոտի լերինն Արայի ի տափարակ դաշտավայր տեղւոջ, ուղղակի յարևելից Կարբւոյ ի միջոցի Քասաղ և Հրազդան գետոց: Բնակիչք նորա ի վաղուց անտի որպէս և այժմ յազգէ Հայոց: Դաշտավայրն անդաստանաց այսր գեղջ բերէ սպիտակահատ ցորեան ընտիր: Ի գեղջէ աստի էր Բ Մովսէս կաթուղիկոս, որ եկաց յԱթոռ հայրապետութեանն յամի 551: Յառաջագոյն բազում բնակիչք եղեալ են ի սմա, որպէս ցուցանեն աւերակքն, այլ այժմ գտանին գերդաստանք (139):

Եկեղեցի գեղջս յանուն Սուրբ Աստուածածնի, որ է փոքր դրութեամբ ըստ տարածութեան, այլ եռայարկ կարի բարձր նման մեծի զանգակատանն Կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի՝ համակ ի սրբատաշ կարմրերանգ քարանց: Ներքնայարկ նորա ունի զմի սեղան տեղի պատարագելոյ հանդերձ բարձր բեմբիւ: Միջնայարկ նորա ևս ունի սեղան սրբազան խորհրդոյն, իսկ եռայարկն է սիւնազարդ կաթուղիկէ զանգակատուն, այլ զի որովհետև փոքր է այս տեղի յաղագս աղօթից ժողովրդեանն, չինեալ են յարևմտից կից այնմ ժողովրդանոց ընդարձակ ի հասարակ քարանց և ի փայտէ:

Զգտաւ յորմունս այսր չինութեան արձանագիր կառուցանողի այնմ, այլ միայն թուական չինութեանն գտանի յերկոսին կողմանս միակ մեծի դրան նորա, որ ընդ յարկաւ ժողովրդանոցին, ի գլուխս երկուց վիմարդեայ սեմոցն. «Ի թվ. ՉՀ (1321) չինեցաւ եկեղեցիս»: Եւ ի վերնայարկի ի մէջ սիւնազարդ կաթուղիկէին սպիտակ դեղով գրեալ են այս ինչ. «Ի թվին ՉՀԷ [1328] չինեցաւ»:

Յարևմտից ի հիւսիսակողմն դրան միջնայարկին յորմն անդր դնի այս արձանագիր.

19 - Յովհաննէս եպս. Շահխաթունեանց

«Ես Մանուէլ եպիսկոպոս, որդի պարոն Աւագին, թոռն պարոն Ազբեկի, ետու զիմ այգին Աշտարակ, որ է Ազիզեան, և ջաղաց իմ որ է տեղն բնական վանիցս, և հաստատեցի Սուրբ Աստուածածինս: Ով որ ... իմոց կամ աւտարաց, ԳՃԺԸ հայրապետաց անիծած եղիցի: Թվ. ՋԻ (1471)»:

413. Ընդ հարաւային որմով եկեղեցւոյս ամփոփեալ կայ մարմին նահատակ կուսին Թամամ անուանելոյ՝ դստեր Մալխաս անուն առն Շաղկերտցւոյ ի Գողթն գաւառէ, որ չարութեամբ անզգամ հօր իւր տուաւ ի հարսնութիւն Մուրթուզաղուլի խանին Երևանայ՝ որդւոյ Մահմատ Ըռզա խանին Նախիջևանայ, այլ չև ևս եղեալ հարսանեացն՝ օրիորդն Թամամ՝ այն է Կատարեալ, յառանձին պահու տեառնագրեալ զանձն՝ անկաւ ի պալատէ խանին ի ձորն Հրազդան գետոյ և անվնաս մնացեալ՝ փախուստ առնէ անտի և անցեալ ընդ այգեստանսն գայ հասանէ յայս գիւղ Եղիվարդ: Եւ ի պատճառս այսր փախստեան՝ մերձ յայս գիւղ հեղձամահ լինի ընդ խեղդ առասանաւ յանօրէն ձեռաց և ապա քահանայական պաշտամամբ ամփոփի անդէն յամի 1691 (Բ, գլ. 62, Զաքարիա Սարկաւագ):

Այս գիւղ ունի ի հիւսիսոյ գլեառն Արայի և յարևմտից զՔասաղ գետ իբրև միով ժամաւ, յարևելից զՀրազդան գետ իբրև երկու ժամ հեռաւորութեամբ, ի հարաւոյ դաշտ ընդարձակ, որպէս գրեցաք ի վերոյ: Յայս ընդարձակութեան դաշտավայրիս եհար Թահմազ Ղուլի խան (Նատր) զզօրս օսմանեանց յամի 1735, յ8–որդում աւուր յունիսի՝ կրկնակրկին հատուցանելով զվրէժն, քանզի ի սոյն դաշտավայրի ԺԵ ամաւ յառաջ քան զայս պատերազմ զԺԲ հազար պարսիկս կոտորեցին օսմանեանք: Իսկ պարսիկք յայս նուագ՝ զԽ հազարս յօսմանեանց:

Ի յարևելեան հարաւ դաշտիս են ինչ ինչ բլրակք յորոց ի միոյն վերայ հարեալ էր Թահմազ խան զվրան իւր. և այն բլրակ անուանէր յառաջն Ախի Թափէսի, այլ զկնի այնօրինակ յաղթութեանն ետ անուանել Մուպարէք Թափէսի: Եւ հրամայեաց Գ Աբրահամ կաթուղիկոսի, զոր առ իւր ունէր քաղցրութեամբ, տալ չինել ի բլրակի անդ կոթող մի ի ձև վրանին իւրոյ, որ և կատարեցաւ զկնի քառասուն աւուր ի կոփածոյ քարանց, այլ այժմ կայ աւերեալ այն կոթող: Զայս ամենայն պատմէ նա ինքն Գ Աբրահամ կաթուղիկոս ի գիրս իւր, ի գլուխսն 14, 16 և 17:

ՄԵՆԱՍՏԱՆ ԵՂԻՎԱՐԴԱՅ

414. Այս մենաստան յարևելից լերին Արայի յստորոտի անդ նորա, հեռի ի գեղջէն յարևելից հիւսիսոյ իբրև կէս ժամաւ, շինեցաւ ի մէջն անդ Է–րդ դարու ի Գրիգոր Մամիկոնեան իշխանէ Հայաստանի, զորմէ Զ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ. «Շինէ նաև (զկնի եկեղեցւոյն որ յԱրուճ) նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ի նմա յարդարեալ, ըստ արևելից կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից զնա հաստատէ ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»:

Այս եկեղեցի որպէս նկատի ըստ շինուածոյն է նոյն իսկ առաջին շէնքն ի յիշեալ իշխանէն և է բոլորակաձև ուրթն անկեամբք և նոյն անկիւնքն ի ներքուստ բոլորակք և ընդհակառակն՝ արտաքուստ սրանկիւն, վայելուչ և չքնաղ դրութեամբ առանց սեան: Ունի ի միջավայրին գմբէթ կիսաւէր և զերկուս դրունս՝ յարևմտից և ի հարաւոյ:

Անուանակոչութիւն եկեղեցւոյս յարձանագրութիւնս նուիրատուաց կոչի Զօրավար. չգտաւ արձանագիր շինութեանն, բայց զմի ևեթ յեղելոցն յանուն նուիրատուաց՝ որ յորմունս եկեղեցւոյս դիցուք աստէն.

«Այս արձանագիր է Արտաշրի որդի Վարշրաա[1] որդւոյ Ապլ Վարդա. ի թվ. ՈԽ (1191): Կամաւն Աստուծոյ ես Արտաշիր անարժան ծառայ Քրիստոսի ետու զիմ գանձագին այգին ի սուրբ տաճարս զմատնիկ՝ վասն փրկութեան հոգւո իմո և առաջնորդք սորա հաստատեցին ի տարւոջն ժամ ԺԷ [17] աւր. զԺԲ [12] ինձ և զԵ [5] Սսին: Եթէ ոք խափանէ, զանէծս զՅուդայի առցէ»:

Սենեակք կուսակրօնիցն քայքայեալ աւերակ կան՝ սակս ընդ երկար անբնակ լինելոյ տեղւոյս: Գտանին մնացուածք ինչ հին շինութեանցն սենեկաց ի կոփածոյ քարանց՝ յարևմտից հարաւոյ եկեղեցւոյն կարի մերձ նմին: Ի հիւսիսակողմն եկեղեցւոյն հեռի իբրև քարընկեց մի է գերեզմաննոցն և օրոցաձև մատուռն փոքրիկ ի նմին:

Զայսր եկեղեցւոյ ի հարցանել ցբնակիչս Եղիվարդայ, տան զանուն Վարժադրան, այն է՝ Վարժատուն, տեղի ուսման, քանզի ի Հայաստան ի բազում ժամանակս որդիք բնակչաց գաւառի կամ գեղջ՝

---

[1] [Իմա՝ **Վարշիրա**]:

ուրանօր գտանէր մենաստան, անդ ուսանէին զուսումն, մանաւանդ ի վերջին ժամանակս անիշխանութեան Հայոց, որ վասն և գրեա թէ՝ չգտանի ուրեք շինուած ինչ առանձին յանուն ուսումնարանի, որովհետև ուսմունք հայ լեզուի և այլ բարձրագոյն գիտութիւնք ի հոգևոր մասին լինէին ի վանորայս մենաստանաց, որպէս ի մենաստանին Տաթևոյ, Ագուլեաց, Հառիճոյ և այլն: Եւ յայն սակս հայազգի ժողովուրդք ջերմացեալ էին ի տուրս և ի նուէրս մենաստանաց առ ի սնունդ և զաւակաց իւրեանց վարժելոցն անդէն:

Զուր Եղիվարդ գեղջս ըստ ընդարձակութեան անդաստանացն է սակաւ և գայ ի հիւսիսոյ՝ յարևելից լերինն Արայի ի Նիգ գաւառէ և անցեալ ընդ ստորոտ մենաստանիս՝ հասանէ յանդաստանսն և ի գիւղն: Ի հին ժամանակաց գտանի և տեղի առուի միոյ սկզբնաւորելոյ դարձեալ ի Նիգ գաւառէ ի Քասաղ գետոյ մերձ յԱստուածընկալ մենաստանն, որ յարևմտից լերինն Արայի և այնպէս ընդ առապար խորաձորոյն յիշեալ գետոյ ամենադժուար ճանապարհաւ մինչև ցհանդիպահայեացսն Յօհանավանից, ուրանօր ելեալ ի դաշտ՝ գայ մտանէ ի սահման Եղիվարդայ: Ի սկիզբն ԺԴ–րդ դարու նորոգեաց զայս առու զԵղիվարդ և զմենաստանն Ազիզբէկ հայազգի ոմն յազատ տանէ հանդերձ Վախախ անուն ամուսնաւ իւրով, զորմէ ծանուցանէ երկարաձիգ յիշատակարան Աւետարանի միոյ եղելոյ ի Թուականի Հայոց ՉԿԷ, յամի 1318. «Արդ գրեցաւ սա ի Թուաբերութեանս Հայկազեան տումարիս եաւթն հարիւր վաթսուն և եաւթն ի խնդրոյ հրաշափառ և հաւատարիմ ծառայիցն Քրիստոսի պարոն Ազիզբէկին և ամուսնոյ իւրոյ պարոն Վախախին: Սոքա էին բարեպաշտ ծնողաց զաւակ և յազնուական ազգաց և տոհմից... եկեալ տեսին զբնակութիւն նոցա (մենաստանին) աւերեալ և կործանեալ և զաւանս իւրեանց զԵղիվարդ բնակութիւն աւազակաց և կամակցութեամբ ամենակալին Աստուծոյ զամենայն զպարտսն հատուցին և վերստին նորոգեցին զսա բազում տքնութեամբ և չարաչար վտանգաւք մի մի ժողովել զցրուեալսն, բազում և յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց մեծին Շահինշահի և Խոյանդզային... և ամենայն դիմաւք հաստատեցին զմեծ մենաստանս զԵղիվարդ, չինեալ զամենայն քանդեալս: ... սկսան չինել վանս ի կորդոյ զուխտն Սրբոյն Յակոբայ յանուն սուրբ առաքելոցն[1] *և զարդարեցին զնա մեծամեծ վայելչութեամբ.*

[1] Մենաստան Եղիվարդայ ի մէջ է-րդ դարու և անուն նորա Զօրավար: Իսկ աստ ասէ շինել վանս ի կորդոյ, այսինքն նոր ի նորոյ ըստ տեղւոյն, ըստ հիմնարկութեանն և ըստ ձևոյն՝ որպէս թէ չէր լեալ յառաջագոյն, այլ ի նորոյ շինեցաւ, և թէ՝ զուխտն Սրբոյն Յակոբայ յանուն առաքելոց. իսպառ օտարացուցանէ ի վերոյի-

ստացան բազում այգիս շուրջ զբնակութեամբն ուխտին և զներքս եկեղեցին զարդարեցին քանդակով նաղաշութեամբ, ձևացուցին զպատկեր Ամենափրկչին և զմաւրն իւրոյ Աստուածածնին և զառաքելոց և զմարգարէից... և զմեծագին գրեանս ազգի ազգի. և մեծագին զգեստիւք զարդարեցին զնա և արարին բնակութիւն կուսանաց և ետուն զամենայն ուխտս զգեստից և կերակրոց և ոչինչ կարաւտք եղեն յամենայնէ՝ զոր ինչ պէտս էր հոգևոր և մարմնաւոր: Եւ աստուածասէր տիկինն մեր ուրախութիւն և ցնծութիւն մեծ արար բազում գաւառաց և մեծ մենաստանիս Եղիվարդայ: Գնացեալ ի սուրբ ուխտն Աստուածընկալ և տեսեալ զգնացս ջրոյն Եղիվարդայ աւերեալս և խոպանացեալ, որպէս զի թերևս երևէին հետք նորա: Եւ աստուածային նախախնամութեամբն վառեալ սիրտ նոցա և աջովն ապէնիազ թագաւորին Քրիստոսի զօրացան և պնդեցին իբր այր զմէջ... արիացան՝ ո՛չ հաշվելով զծախսն որպէս զուարդուն հրեղէն տագնապէին՝ ո՛չ ունելով զհանգիստ և զքուն ի տուէ և ի գիշերի և շրջապատեալ զլեառն Արարատեան (Արայի) հասուցին զջուրն յորդառատ վտակաւք փոյթընթաց յԵղիվարդ: Եւ զդժվարութիւն սահմանացն և զյոլով աշխատութիւնս և զտուրս արվեստաւորացն և զամենայն ծախսն ո՛վ կարէ ընդ գրով արկանել, և զանհասանելի երկրաչափ զհեռաւորութիւն տեղւոյ... որ ի քաղաքէն Բջնոյ մինչև Կարբի ո՛չ գտանէին ջուր յարբումն մարդկան և պապակէին անցորդք ճանապարհաց ի տապոյ՝ յաւուրս ամարայնոյ» և այլն, և այլն:

415. Միւս գիւղօրայքն հայաբնակք. Ղզլթամիր՝ տունք 46. եկեղեցին անուամբ Սուրբ Յովհաննու: Ֆռանկանոց՝ տունք 17. եկեղեցին յանուն Սրբոյն Թովմայի: Աղաւնատուն՝ տունք 19. եկեղեցի նոցա յանուն Սուրբ Գէորգայ: Խզնաւուզ՝ տունք 19. եկեղեցին յանուն Սուրբ Ստեփաննոսի: Աղջաղալայ՝ ի հայոց տունք 11. եկեղեցին անուամբ Սուրբ Գէորգայ. ի տաճկաց տունք 3: **Դողս** *(387) ՝ ի Հայոց տունք 6: Եկեղեցին տակաւին չէ՛ օծեալ: Ի տաճկաց՝ 15:* **Քեօրփալու՝** *տունք 34: Եկեղեցին անուամբ Սուրբ Աստուածածնի:*

շեալ մենաստանէ՝ թէև մասամբ իւիք մերձեցուցանէ այնմ, քանզի ասէ և զներքս եկեղեցւոյն զարդարեցին քանդակով նաղաշութեամբ, ձևացուցին զպատկեր Ամենափրկչին և այլն: Երևին արդէն հետք դեռանկար յիշատակեալ պատկերացդ ի մենաստանի անդ Գրիգոր իշխանի յորմունսն տաճարին ի ներքուստ, այլ ո՛չ քանդակք: Իսկ թուական յիշատակարանին փոքր ինչ համեմատի թուոյ շինութեան եռայարկ զանգակատանն կամ եկեղեցւոյն, որ ի գիւղամէջ անդր Եղիվարդայ: Եւ ահա այսօրինակ խառն տեսանի միտք գրուածոց յիշատակարանին. այլ զիարդ և է յաղագս ծանօթութեան ընդհանրապէս՝ յառաջ բերաք զայս բան յիշատակարանին:

Հայթաղ՝ *տունք 40: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Սամաղար՝ *տունք 38: Եկեղեցին անուամբ Սուրբ Յարութեան:* Մուզանճուղ՝ *տունք 21: Եկեղեցին յանուն Սուրբ Սարգսի:* Գրամբայ՝ *տունք 18: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Ի տաճկաց ևս 18:* Հաճիլար՝ *տունք 6: Եկեղեցի տակաւին ո՛չ գոյ: Ի տաճկաց՝ 12:* Վերին Ակլանլու՝ *տունք 14: Եկեղեցին անուամբ Սուրբ Աստուածածնի:* Ալիբէկլու՝ *տունք 34: Եկեղեցին անուամբ Սուրբ Լուսաւորչի:* Ներքին Ակլանլու՝ *տունք 30: Եկեղեցին յանուն Սուրբ Սարգսի:* Զէյվա՝ *տունք 60: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Վերին Խաթունարխ՝ *տունք 21: Եկեղեցին անուամբ Բարդուղիմէոսի առաքելոյ:* Ներքին Խաթունարխ՝ *տունք 67: Եկեղեցին յանուն Սուրբ Սարգսի:* Ղամարլու՝ *տունք 13: Եկեղեցի տակաւին ո՛չ գոյ: Ի տաճկաց՝ 17: Յարևելեան կողմն գետոյն՝* Վաղարշապատ, *տունք՝ 139: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Խաչի գիւղ *(*Մօլլատուրսուն*)՝ տունք 11: Եկեղեցին անուամբ Սուրբ Խաչի: Ի տաճկաց՝ 13:* Հաճիզարայ՝ *տունք 13: Եկեղեցին յանուն Աստուածածնի: Ի տաճկաց՝ 4:*

Տաճկաբնակք. Քիչիկքեանտ՝ *հարկատուքն ևեթ, տունք 2:* Այեարլու՝ *տունք 11:* Եասախլու՝ *31:* Հարամլու՝ *3:* Քիւրաքեանլու՝ *9:* Զէյվա՝ *46:* Քեօլանի և Արալըղ՝ *47:* Սէֆիապատ՝ *12:* Ղարղապազար, Շօրլու և Մէհմանտար՝ *290:*

416. Բացի վերոյիշեալ գերդաստանաց գիւղօրէիցն գտանին ի սոյն Արագածոտն գաւառի և վրանաբնակ գերդաստանք, որք չեն ի հաշուոյ երկրագործացն, այլ են խաշնադարմանք և տավարածք և են ի մահմէտական Տաճկաց և ի Քրիստոս՝ որոց կոչմունք և թիւք գերդաստանացն ըստ այսց.

Զօպանքեարա կոչեցեալ տաճիկք տունք 170

Ի Մարաց (Քուրթք)

Տավշանլու կոչեցեալ.....18:

Դրխէրլի 70:

Միլանլի.....53:

Ռատրքցի.....22:

Հասնցի 7:

Բէզիկցի.....7:

Բուռուկցի.....3:

Կեալթուրցի 2:

ԿՈՏԱՅՔ ԳԱՒԱՌ (ՂՐԽՊՈՒԼԱԽ)

417. Այս գաւառ անուանի է ի հնոց անտի և է մի ի գաւառացն Արարատայ. անուանի գտաւ և ի յետնոց, քանզի երևելի քաղաքագեօղ նորա զկնի եղև իշխանանիստ տեղի դաշտին Արարատայ և ինչ ինչ մերձաւոր գաւառացն:

Այս գաւառ անկանի ի հիւսիսակողմն մեծի դաշտին, որ ունի յարևելից զլեառն Գեղամայ, ի հիւսիսոյ զլեառն Շամիրամայ և զսահման Վարաժնունեաց կամ Ծաղկունեաց (Դարաչիչակ), յարևմտից զՀրազդան գետ և ի հարաւոյ զդաշտն Դունայ: Այս սահման ունի երկուս նիստս: Հարաւայինն՝ քաղաքաւն հանդերձ ստոր է քան զմիւսն քանակութեամբ և դրիւք և սակս մերձ գոլոյ դաշտին՝ վատանայ օդն յամառնային եղանակի: Իսկ վերին նիստն ընդ հիւսիս բաղկացեալ յինչ ինչ փոքր բլրակաց. և գուցէ ի բլրակաց աստի ընկալեալ իցէ զանուանադրութիւն իւր այս գաւառ, զի բլրակն յայսոսիկ կողմանս հասարակօրէն անուանի և Կոնտ: Եւ ի Կոնտից այնց անուանեալ իցէ Կոտայք: Օդ սորա միջակ է և առողջ, ջուր սորա առողջարար՝ բղխեալ յարևմտեան ստորոտէ լերին Գեղամայ բազմակն և յորդառատ, որ գետակնացեալ բաշխի ի գիւղօրայսն և մասն ինչ անցեալ ընդ Աւան գիւղ և մտեալ ի փոքր ձորակ իջանէ յԵրևան քաղաք: Ի պատճառս այսր աղբերց անուանեցաւ այս գաւառ ի Տաճկաց Ղրխպուլաղ: Յայս ջուր գտանին բազում կարմրախայտ ձկունք ախորժաճաշակք:

418. **Երևան**. *ի տափարակ գոգաւոր տեղւոջ, յարևելից և ի հիւսիսոյ պատեալ դիւրառապարօք և յարևմտից ի Հրազդան գետոյ: Այս քաղաք յառաջագոյն չէ՛ր այնքան ինչ նշանաւոր տեղի և անուանէր քաղաքագեօղ այսր գաւառի ըստ գրելոյ Զ Յովհաննու կաթուղիկոսի. «Յայնմ ժամանակի (այսինքն յաւուրս հաւատալոյն Դաւթի Դունեցւոյ և նահատակելոյն մարտիրոսական վկայութեամբ) ասեն լինել զկռիւն, որ ի քաղաքագիւղն Երևանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս, որ նախքան զմեզ զնա պատմագրեցին»: Արդ՝ պատմիչ նախքան զՅովհաննէս կաթուղիկոս և քան զայլ ժամանակակիցսն նորա՝ է Սեբէոս եպիսկոպոս Բագրատունեաց, յորմէ որպէս առնու Յովհաննէս կաթուղիկոս, նոյնպէս և Ղևոնդ և Ասողիկ և Սամուէլ, այլ ոչ ոք ի սոցանէ բացայայտ գրեաց զկռիւն Երևանայ, որպէս նա ինքն Սեբէոս— թէ չգուցէ այլ Երևան անուամբ բերդ կամ ամրոց ի Կո-*

գովիտ գաւառի կամ ի մօտակայս նորա. քանզի գրէ նա ինքն Սեբէոս եպիսկոպոս վասն երկրորդ յարձակման իսմայելացւոց ի Հայս և դնէ զերիս բաժանեալ զօրաց նոցա՝ որոց մի մասն յարձակեալ ի կողմանս Սեպհական գնդին, թերևս ի վերայ զօրացն Յունաց, որ ի Կոգովիտ: Ասէ. «Եւ հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի՝ առին զաւար և զգերութիւն և եկին ժողովեցան ի յԵրևան: Եւ մարտեան ընդ բերդին և ո՛չ կարացին առնուլ: Եկին ի Յորդսպու և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բնակեցան յԱրծափս հանդէպ բերդին առ ջրովն»: Եւ թէ՝ զկնի առման Արծափայ յիսմայելացւոցն և յանհոգ մնալն նոցին, յարձակեցաւ ի վերայ Թէոդորոս Ռշտունի վեց հարիւր արամբ և կոտորեալ զբազումս՝ թափեաց զաւար և զգերութիւնն: Եւ եղև այս յերկրորդ ամի Կոստանդնի կայսեր Յունաց, ի 23 ամսոյն Հոռի յաւուր կիւրակէի, ըստ նորուն Սեբէոսի: Զայս պատերազմ դնէ Սամուէլ էրէց ի ձէ թուականին Հայոց (658):

Անուանադրութիւն այրս քաղաքի տակաւին չգտանի թէ արդեօք յումմէ՞, յի՞նչ պատճառս և ե՞րբ եղաւ: Թէպէտ և երևոյթ հնչմանն ո՛չ այնքան անծանօթ, յորմէ մակաբերէ Ղազար կաթուղիկոս Զահկեցի և դնէ չինեալ յԵրուանդայ Ա արքայի Հայոց, այլ թէ ուստի՞ իցէ առեալ զայս տեղեկութիւն՝ չէ՛ յայտնի և ո՛չ գտանի իսկ յայժմեան ծանօթ եղեալ պատմագրութիւնս Հայոց:

Զայսր տեղւոյ գրէ Զամչեան հայր Միքայէլ՝ թէ է տեղին, ուր վանեցաւ Երուանդ Բ յԱրտաշիսի և կոչեցաւ Երուանդավան, և զկնի՝ Երևան: Բայց այս բան նորա ո՛չ ստուգի, զի պատերազմն Արտաշիսի ընդ Երուանդայ եղև ի Շիրակ գաւառի՝ ի մերձակայսն Ալէքսանդրապօլոյ (Գիւմրի) և անտի վանեալ զԵրուանդ՝ տարեալ եմոյծ ի քաղաքն նորա Երուանդաշատ՝ որ էր չինեալ ի նմանէ ի խառնուրդս Երասխայ և Ախուրեան գետոց և այժմ քաջածանօթ տեղին ի սահմանին Կողբ գեղջ և կոչի Կարմիր քարափ: Փախուստն Երուանդայ ի Կողբ կամ ի խառնուրդս անդ գետոցն՝ ընդ ճանապարհն արևմտից Արագած լերին. իսկ տեղին Երևանայ ըստ հին և ըստ այժմեան դրութեանն գտանի կարի բացեայ յԱրագած լեռնէ ընդ արևելս:

Իսկ ստորագրութիւնն հին Հայաստանի անյոյս եղեալ ի պատմութեանց՝ յառաջ բերէ զաւանդութիւնս բնակչացն: Եւ այնպէս զանուանադրութիւն քաղաքիս տարեալ հասուցանէ ցՆոյ նահապետ՝ իբր ի նմանէ անուանադրեալ, քանզի, ասէ, ցամաք այսր կողման նախ և յառաջ ել յերևան ի նուազիլ ջուրցն յետ ջրհեղեղի, վասն այնորիկ ի նմանէ կոչեցաւ Երևան:

Ըստ այսոցիկ՝ անուանադրութիւն քաղաքիս տակաւին մնայ անծանօթ, թէ ե՞րբ կամ յումմէ՞:

Այս քաղաք, որպէս գրեցաք, չէ՛ր յառաջագոյն այնպէս հռչակեալ և անուանի, որպէս այժմ, քանզի զկնի բարձման թագաւորութեանն Հայոց յԱրարատայ և աւերելոյ թագաւորաբնակ քաղաքացն Արտաշատայ, Վաղարշապատայ և Դունայ և նուազելոյ նախարարազուն իշխանացն Հայոց՝ տիրեցին երկրիս օտարազգի թագաւորք՝ Պարսից և Հագարացւոց և ի նոցունց առաքեալ իշխողք երկրիս տեսանելով զյարմարութիւն դրից սորին և զամրութիւնն ընդդէմ յարձակման թշնամեաց՝ աստ նստան և հետզհետէ շինութեամբ և նորոգութեամբ կացուցին իշխանանիստ քաղաք նահանգիս Արարատայ: Եւ այնպէս զայս քաղաք հանդերձ նահանգաւն տիրեցին Պարսիկք և Հագարացիք փոխանակելով զմիմեանս բուռն իշխանութեամբ աւերանաց և գերութեանց:

419. Արդ՝ զփոփոխութիւնսն զայնոսիկ և զիշխանաւորսն հանդերձ ժամանակագրութեամբք նոցին յամէ 1441 ցամն 1827 և անտի ցայսր հաւաքեալ յինչ ինչ հաւատարիմ գրուածոց՝ դիցուք առաջի ի ծանօթութիւն ընթերցանելեաց:

1. Աղուպ կամ Եաղուպ բէկ հրամանաւ Ջահանշահայ յամի Տեառն.	*1441*
2. Հասան խան՝ Ուզուն կոչեցեալ.	*1471*
3. Հասան բէկ թոռն Բայընտրոյ.	*1475*
Տիրեցին Օսմանեանք յարձակմամբ սուլթան Սէլիմայ՝ Եաւուզն կոչեցելոյ.	*1513*
Անդրէն առին Պարսիկք յարձակմամբ շահ Թահմազայ Ա.	*1521*
Վերստին ձգեցին յինքեանս Օսմանեանք.	*1534*
Յայսոսիկ միջոցս դարձեալ էառ շահ Թահմազ, յորմէ կրկին յինքն կորզեաց սուլթան Սուլէյման: Վերստին էառ շահ Թահմազ.	*1550*
4. Եաղուպ բէկ, որ եկաց խան յամի իբր 1557, յորում ամի յիշատակի յարձանագիրն ճարտարարուեստ դրան եկեղեցւոյն Սրբոց Առաքելոց, որ ի Սևան:	

Անդրէն առին Օսմանեանք յաւուրս սուլթան Մուրատայ՝ զօրութեամբ Լալայ փաշայի, Ղարա Մուստաֆայ կոչեցելոյ.	*1577*
Վերստին Պարսիկք՝ յաւուրս շահ Խուտաբանտայի, յորում ժամանակի եկաց իշխող	*1578*
5. Մահմատ խան՝ Թոխմախ կոչեցեալ. *Անդրէն առին Օսմանեանք զօրավարութեամբ Ֆահրատ փաշայի, որ շինեաց զբերդն Երևանայ յաւուրս սուլթան Մուրատայ.*	*1583*
Վերստին Պարսիկք, յաւուրս շահ Ապասայ Ա, յորում միջոցի եկաց իշխող՝	*1605*
6. Ամիրգիւնա նախարար. *Զկնի Ամիրգիւնայ նախարարին եկաց իշխող որդի նորա՝*	
7. Թահմազ Ղուլի ցթիւն.	*1635*
Անդրէն Օսմանեանք՝ յարձակմամբ սուլթան Մուրատայ Դ, որ յառման անդ քաղաքին առաքեաց զԹահմազ Ղուլին ի Կոստանդինուպոլիս և զքեռայրն իւր	*1635*
8. Զ Մուրթուզայ փաշայ եդ յԵրևան 15 հազար զօրք	*1635*
Վերստին էառ շահ Իսմայէլ Սէֆի և յառնուլ բերդին Մուրթուզայ փաշայ ինքնին դեղակուր եղեալ՝ մեռանի և յառման բերդին կացուցաւ ի շահէն խան Երևանայ՝ *9. Քեալպալի անուն*	*1636*
10. Մահմատ խան՝ Զաղաթայ Քեօթիւկ կոչեցեալ.	*1640*
11. Քէյ Խոսրով խան յազգէ Վրաց անմիջապէս զկնի նախորդին.	*1648*
12. Մահմատ Ղուլի խան որդի Լալայ բէկի, որ արգել զշինութիւն մեծի զանգակատանն Էջմիածնի.	*1654*
13. Նաջաֆ Ղուլի խան.	*1660*

14. Ապաս Ղուլի խան, որդի Ամիրգիւնայ նախարարի, այր ծերունի.	1663
15. Սաֆի խան ազգաւ Լեկզի.	1667
16. Սարուխան բէկ՝ տեղակալ Բ ամս.	
17. Սաֆի Ղուլի խան, որդի Ռուստամ խանին Դաւրիժոյ, միջնորդութեամբ Դ Յակոբ կաթուղիկոսի.	1670
18. Զալ խան յազգէ Վրաց, յորոյ աւուրս, այսինքն յամի 1679 եղև շարժն սաստկութեամբ.	1679
19. Մուրթուզայ Ղուլի՝ որդի Մահմատ Ռզայ խանին Նախիջևանայ. տեղակալ Բ ամ և կէս.	
20. Մահմատ Ղուլի. տեղակալ եկաց Գ ամ և կէս ամենայն բարելաւութեամբ.	
21. Զօհրայ խան.	1691
22. Ֆարզալի խան ի Թոռանց Ամիրգիւնայ նախարարին. այր գերփիչ և կաշառառու.	1699
23. Մէհրալի խան.	1709
24. Ալլահղուլի խան.	1719
Անդրէն առին Օսմանեանք յաւուրս սուլթան Ահմէտայ, յամի	1722
25. Ռաջաբ փաշայ.	1725
26. Իբրահիմ և Մուստաֆայ փաշայք.	1728
27. Ալի փաշայ. սա մեռանի ի 12 նոյեմբերի.	1734
28. Հաճի Հիւսէյին փաշայ տեղակալող նմին և էր տեղեաւ Տէրէնտէցի.	
Վերստին տիրեցին Պարսիկք ի 22–էն սեպտեմբերի յամի	1735
29. Մահմատ Ղուլի խան յազգէ Մուսաբէկեան Սիւնեցւոյ կացուցաւ յառման անդ բերդին.	

30. Փիրմահմատ խան.	*1736*
31. Խալիլ խան Օզբէկ՝ հրամանաւ Աղուան Ազատ խանին.	*1752*
32. Հասան Ալի խան Ղաջար.	*1755*
33. Հիւսէյին Ալի խան՝ եղբայր վերնոյն.	*1764*
34. Ղուլամալի խան, որդի վերնոյն, որ ի նոյն ամի սրախողխող լինի.	*1778*
35. Մահմատ խան փոքր հասակաւ. եղբայր յիշեալ Ղուլումալի խանին յայլմէ մօրէ.	*1779*
Այսոքիկ վերոյիշեալ չորեքին խանք ի չփոթիլ իշխանութեան աթոռոյ Պարսից և գոլով ինքեանք ինքնագլուխք, երբեմն նուաճեալք ընդ իշխանութեամբ Վրաց՝ հարկս նոցա հարկանէին.	
36. Մէհտի Ղուլի խան.	*1805*
37. Ահմատ խան Մարաղացի.	*1806*
38. Հիւսէյին խան Ղաջար եկն յԵրևան յամի 1807, հանդերձ եղբարբ իւրով Հասանաւ ընդ իշխանութեամբ շահին Պարսից. և ապա ի տիրել զինուորութեանցն Ռուսաց՝ անց, գնաց անդրէն ի Պարսս.	
39. Ի տիրել զինուորութեանցն Ռուսաց յամի 1827, կացուցաւ նահանգապետ զեներալ լէյտենանտ Կրասովսկին.	*1827*
40. Զեներալ մայիոր կնեազ (իշխանազն) Ալէքսանդր Գարսեվանեան Ճավճավաձէ.	*1828*
41. Արտիլերիի պոլկովնիկ Կանտիբօ՝ տեղակալ. *42. Պոլկովնիկ կնեազ Մովսէս Զաքարեան Երկայնաբազուկ Արղութեանց՝ տեղակալ.*	*1829*
43. Զեներալ կնեազ Բարսեղ Յովսէփեան Բէհպուտեանց.	*1830*
44. Զեներալ մայիոր Պացովսկի.	*1838*

45. Պօլկովնիկ Գէորգ Ստեփաննոսեան Սմբատեանց. յամի 1841, փոխարկեցաւ անուանադրութիւն երկրիս Արարատայ և կոչեցաւ գաւառ Երևանայ: Ուստի և իշխողքն՝ գաւառապետ	1839
46. Կոլլեժսկի սովետնիկ Զինովի Կանդրատիչ Կրասիլևսկի.	
47. Կոլլեժսկի ասսեսօր Պոպով.	
48. Սիմոն Թէօդորովիչ Կալաչևսկի, որ կայ այժմ ի պաշտամանն:	

420. Երևան քաղաք բաժանի ի վեց թաղս. Ա՝ կոչի ըստ այլազգականին Շհար, ուր բնակին հայք և այլազգիք խառն և բազում գերդաստանք ունին զպարտէզս զառաջեաւ տանց. երկու եկեղեցիք են Հայոց ի սմա ի կոփածոյ քարանց. մին անուանեալ Կաթուղիկէ եկեղեցի, կառուցեալ ի վերայ չորից հիւսածու սեանց օրոցաձև. ունի զմի ևեթ սեղան յանուն սրբուհւոյ Աստուածածնի, որոյ կամարայարկն փոքր ինչ խորագոյն երկայնեալ ընդ արևելս և քարակերտ Կաթուղիկէ կրկին ի վերայ սեղանոյն և ի վերայ տանեաց նորին և զերկուս աւանդատունս և զերկուս դրունս ընդ արևմուտս և ընդ հարաւ: Են և երկու փոքրիկ սեղանք հանդերձ քարակերտ կաթուղիկէիւք ի միջոցի աստիճանաց բեմի սեղանոյն և դրանց աւանդատանցն յանուն սրբոցն Յովհաննու Մկրտչի և Ստեփաննոսի Նախավկայի: Ունի և շրջապատ պարիսպ և ցսենեակս քահանայից: Այս եկեղեցի չունէր արձանագրութիւն շինութեանն որպէս և միւս եկեղեցիք քաղաքիս, այլ գտանի ի ճակատ արևմտեան որմոյն արտաքուստ թուական Հայոց ՌՃԽԲ (1693). ո՛չ միայն սա, այլև միւս եկեղեցիք և այլ շէնք մզկթաց և պանդոկաց և այլն: Շինեցան զկնի մեծի երկրաշարժութեանն դիպելոյ յամի 1679, յորում միջոցի որ ինչ շինուածք էին յառաջնոց կործանեցան իսպառ: Իսկ միւսն՝ յանուն առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, մեծ դրութեամբ քան զկաթուղիկէ եկեղեցին և քան զմիւսսն՝ նոյնպէս ի վերայ չորից հիւսածու սեանց: Ունի զերիս սեղանս. մին ի միջին տեղւոջ ի կիսաբոլորակ կամարայարկի և երկուքն ի միջոցս դրանց աւանդատանց և աստիճանաց բեմին՝ նոյնպէս ի խարտեալ քարանց՝ յանուն Ստեփաննոսի Նախավկայի և Յովհաննու Մկրտչի: Այսոքիկ Բ սեղանք հանդերձ կաթուղիկէիւքն ի նորոյ կառուցան արդեամբք պարոն

Ստեփաննոսի Ջալալեանց և Վարդանայ Կարապետեան բնակչաց Երևանայ: Ունի և զերկուս դրունս՝ յարևմտից և ի հարաւոյ և շրջապատ պարիսպ: Յայս եկեղեցի ի տանիսն և յորմունսն եղեալ են ինչ ինչ նորոգութիւնք՝ ի թիւսն Հայոց ՌՄԻԷ, ՌՄԿԹ և այլն: Իսկ այժմ լաւապէս նորոգեալ պատեհ ահա զտանիքն տախտակօք ժեշտից, Գ մզկիթք են այլազգեաց յայսմ մասին քաղաքիս. Ա՝ շինեալ ի Ջալ խանէն, Բ՝ ի հաճի Նաւրուզալի բէկէ, Գ՝ կարի փոքր ի Մահմատ խան Սարթիպէ:

421. Բ. **Նոր թաղ**՝ *կոչեցեալ յանուն խանլըզ այգւոյ, քանզի ի միջոցս առաջին թաղի, շուկայի, կոնդի և եկեղեցւոյն Զօրավարի էր ընդարձակ տարածութեամբ մեծ այգի խանիցն Երևանայ, որ աւելի քան 30 ամ կայր յաւերութեան: Այլ ի գաղթիլ հայազգեաց յԱտրպատականէ յայս նահանգ և ի քաղաքս Երևան յամի 1828, կառավարութիւն իշխանութեանն զայն տեղի ձևեալ ըստ յարմարութեանն ետ նորեկ գաղթական հայազգեաց՝ յորս կառուցեալ զտունս և տնկեալ զպարտէզս բնակեցան ի նոյնս. ուստի և կոչի* **Նոր թաղ**, *ի ձևացութեան անդ գերդաստանացն թողին և զտեղի եկեղեցւոյ միոյ՝ որ կայ ցարդ անձեռնարկելի: Ուստի յաղագս անկարութեան ժողովրդոցն ի շինութիւն եկեղեցւոյ յայսմ տեղւոջ, սրբազնագոյն կաթուղիկոսն Յովհաննէս վերակոչեալ զվանահայր վարդապետն յանապատէ եկեղեցւոյն Անանիա առաքելոյ՝ յանձնեաց զայն եկեղեցի միոյ մասին ժողովրդեան մարաղացի նորեկ գաղթականացն ըստ յարմար մերձաւորութեան գերդաստանաց նոցին յայն եկեղեցի, որ է ի հիւսիսակողմն քաղաքին ի ստորոտս այնր կողման առապարի: Յայս տեղի եղեալ է յառաջագոյն փոքրիկ մատուռն մի քայքայեալ յանուն Անանիա առաքելոյ միոյն յեօթանասնից. և ապա այն ինչ Մովսէս վարդապետ Սիւնեցի (որ զկնի կաթուղիկոս) ելեալ ի Սիւնեաց անտի կամէր անցանել ընդ այս քաղաք և գնալ ի Կարին, արգելաւ յԱմիրգիւնայ խանէ և ի հայ ժողովրդոց քաղաքիս՝ յաղագս անարատ վարուցն և յորդառատ քարոզութեանն, որոյ կալեալ բնակութիւն աստէն և ձեռնտուութեամբ հայազգի վաճառականացն նորոգեալ զայս տեղի՝ պարսպէ շուրջանակի և կառուցանէ բնակարանս և տուն աղօթից և ժողովեալ զմանկունս կրթեաց զնոսա ի հոգևորական մաքուր վարս և յուսումն և արար զտեղին կրօնաստան, որպէս պատմէ Առաքել Դավրիժեցի (ի գլ. ԻԴ, յերես 289): Այլ ի գալ զօրաց երկուց թագաւորացն՝ սուլթան Մուրատայ Օսմանեանց և շահ Սէֆիի Պարսից ի վերայ քաղաքիս, աւերեցան բովանդակ շէնք մենաստանիս բաց յեկեղեցւոյն՝ որ էր քարաշէն մա-*

տուռն փոքրիկ, զորս անդրէն Նորոգեաց Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի քարամբք և կրով՝ ըստ նորուն Առաքելի (յերես 312). իսկ ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսի Ուրհայեցւոյ խօջայ Փանոս անուն ոմն հայ ազգաւ քակեալ զայն փոքրիկ մատուռն՝ տայ կառուցանել տաճար գեղեցիկ միջակ մեծութեամբ ի վերայ չորից սեանց ի խարտեալ քարանց, որ ունի զմի սեղան և զերկուս աւանդատունս և զմի դուռն ընդ արևմուտս և գաւիթ վայելուչ ի վերայ այսր դրան ընդ լայնութիւն տաճարին երկայնեալ՝ սիւնազարդ, որ ունի զանգակատուն ի միջին բաժնի որ ի վերայ դրանն և անուն եկեղեցւոյն ըստ արձանագրութեանն Սուրբ Աստուածածին:

Արձանագիր շինութեան տաճարիս յորմն արևմտեան արտաքուստ ընդ յարկաւ գաւթին ի հիւսիսակողմն դրան՝ յայս օրինակ.

«Ի թուականիս Հայկազունի,
... որ աստ շարագրի,
Ի քառեակ Ժ երորդի
Երկեակ թուով յարաբարդի,
Ի հայրապետութեան սրբազանի
Տեառն Նահապետ կաթուղիկոսի
Արի և քաջ հովուապետի,
Լուսաւորիչ Հայոց ազգի,
Մեծ և ազնիւ բարեպաշտի,
Աստուածասէր երկուղածի,
Խոջայ Փանոս վերաձայնի,
Սուրբ Աստուածածինս շինողի,
Յիշատակ ուրն և նախնի,
Ծնողաց ուրոց հարցն առաջի,
Որդոց ուրոցն Էլիազի,
Եւ Մովսէսի քաղցր ողկուզի,
Թոռան ուրոյ Ահարոնի,
Զանգակատնօք սա զարդարի,
Սուրբ անապատս Անանիայի,
Մեսրոբ առ սուրբ հեզահոգի,
Որ և յաջորդ է սուրբ տեղիս,
Վերակացու համագործի,
Դաւիթ անուամբ վերաձայնի»:

Ապա յամի 1793, Գաբրիէլ հարիւրապետ այր երևելի ի ընակչաց քաղաքիս ետ նորոգել զբովանդակ տանիք տաճարիս ի նոյն խարտեալ քարանց. և ունի արձանագիր այս նորոգութիւն յորմն

արևմտեան արտաքուստ ընդ յարկաւ գաւթին ի հարաւակողմն դրան՝ ըստ այսմ.

«Թիւ մեր է հազար երկերիւր հասեալ,
ԽԲ ընդ նոյն համաթուեալ [1793],
Սուրբ Էջմիածնի մինչ էր գահակալ,
Ղուկաս սրբազան հայրապետն ընտրեալ,
Յաջողմունք շնորհաց Տեառն ժամանեալ,
Տանիք տաճարիս եղև նորոգեալ,
Ծախիւք բարեպաշտ անձին գովելի
Պարոն Գաբրիէլ հարիւրապետի,
Ի պատճառ անեղծ յիշեցման բարի,
Իւրն և իւրայնոցն առ հասարակի,
Հօրն Ալլահվերդի Իւզբաշոյ մեծի,
Եւ մօրն երկիւղած Եփրոսինէի.
Եւ եղբարցն իւրոց պարոն Ստեփանի,
Եւ Յոհաննիսի քաջ զինաւորի,
Իսկ և կրտսերի պարոն Գրիգորի,
Սոյն գործառնութեան ժիր վերակացուի.
Նաև որդեկացն ազնուականի,
Պարոն Բարսեղի և Աստուածատրի,
Որոց յիշատակն օրհնութեամբ լիցի,
Այժմ և ի գալուստ Տեառն կրկնակի»:

Մուտ գետնափոր դամբարանի հոչակելոյ յանուն Անանիա առաքելոյ է ի մէջ եկեղեցւոյն մերձ ի սիւնն արևմտեան հիւսիսոյ, ընդ որ մտեալ և իջեալ ընդ աստիճանս ինչ յարևմուտս կոյս. և ապա իբրև քայլս հինգ՝ է փոքրիկ կամարայարկ և ի նմա դամբարանն սրբոյն, որ անկանի ուղղակի ի ներքոյ հիւսիսային բաժնի գաւթին. յանուն այսր սրբոյ յաճախեն ուխտաւորք ի բնակչաց քաղաքիս յայս եկեղեցի և յանուն հրաշագործ Աւետարանի միոյ՝ յորոյ անուն կոչի երբեմն այս եկեղեցի և Զօրաւոր: Ի մենաստանի աստ սկսեալ ի Մովսէսէ Սիւնեցւոյ նստէին յաջորդաբար վանահայր վարդապետք մինչև ցամն 1835. և ի սնունդ այսց վանահարց տուեալ էր արդիւնք յուխտաւորացն յայս եկեղեցի և բերքն այգւոյն որ առ մենաստանաւս և հասոյթքն ըստ հոգևոր մասին յորոշեալ առանձին ինչ ժողովրդոց յանուն այսր մենաստանի՝ բնակելոցն ի թաղն Կոնդի: Ապա այն ինչ ի յիշեալ 1835 ամի յանձնեցաւ այս եկեղեցի (որ ունի շրջապատ պարիսպ և քարաշէն սենեակս) հայազգի գաղթականացն մարաղեցւոց, վերակոչեցաւ վանահայրն յէջմիածին, այն

որոշեալ առանձին ժողովուրդ համաթուեցաւ ընդ ժողովրդեան վիճակին. այդին մնաց ընդ իշխանութեամբ Աթոռոյ Էջմիածնի և արդիւնք ուխտաւորացն յանուն նոյն եկեղեցւոյ:

422. Գ թաղ քաղաքիս է **Կոնդ** *անուանեալն՝ զոր այլազգիք կոչեն* **Թէփէպաշի**, *որ է մեծ քարուտ բլրակ լայնեալ ստորոտովք յարևելից և ի հարաւոյ. իսկ ի հիւսիսոյ՝* **Կոզեռն** *կոչեցեալ բլրակ և յարևմտից արդիւնաբեր խորաձորն Հրազդան գետոյ: Բնակիչք այսր թաղի նոյնպէս հայք և մահմէտականք. եկեղեցի Հայոց ի հիւսիսակողմն բաժնի այսր թաղի կառուցեալ ի տաշածոյ քարանց: Եւ ըստ մասին յանհարթ որձաքար վիմաց ի թուին Հայոց ՌՃԾԷ (1708) ի վերայ չորից սեանց օրոցաձև բաւականաչափ մեծութեամբ և է յանուն Յովհաննու Մկրտչի. ունի զերիս սեղանս, զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ և զերկուս դրունս յարևմտից և ի հարաւոյ. ունի և պարիսպս շուրջանակի և սենեակս քահանայից: Եւ ի հարաւային բաժնի է մզկիթն մահմէտականաց ի թրծեալ աղիւսոյ՝ մերձ ի բաղանիսն որ անդր:*

423. Դ թաղն կոչեցեալ **Ձորագիւղ**, *որ ի Զաքարիա Սարկաւագէ յիշատակի և* **Խնկելոյ ձոր**. *բնակիչք սորա կիսով են ի ձորի անդ գետոյն, և կիսով ի սարահարթի նորուն՝ նոյնպէս խառն ի Հայոց և ի մահմէտականաց. ի սարահարթի աստ է* **Ձորագիւղ Անապատ** *կոչեցեալ տեղին՝ որ է իջևան կաթուղիկոսաց Աթոռոյ Էջմիածնի. և տեղին բովանդակ սեպհականութիւն նոյն կաթուղիկոսական Աթոռոյն Էջմիածնի և որոշեալ է ընդարձակ պարսպաւ յայլոց գերդաստանաց. և նոյնն բաժանեալ է ի չորս մասն. Ա մասն շինուածք կաթուղիկոսարանին՝ շրջապատեալ յերից կողմանց այլով պարսպաւ անմիջապէս ի վերայ քարափան ձորոյն, յորում էր և փոքրիկ եկեղեցի կաթուղիկոսական, զոր ի 1837 ամի յարդարեցին տեղի հոգևոր ատենի վիճակին Երևանայ՝ բաժանեալ յերկուս սենեակս՝ մին խորհրդարան և միւսն գրագրանոց (դիւանատուն): Այս եկեղեցի փոքրիկ յանուն սրբոյն Գէորգայ գոյր շինեալ յառաջագոյն՝ Թերևս յԵղիազար կաթուղիկոսէ, զոր զկնի ի մերում ժամանակի Դաւիթ կաթուղիկոս Էնէկեթեցի նորոգ հիմնարկութեամբ ետ կառուցանել հանդերձ ներքնատամբ ի վիմի անդ. իսկ իջևան կամ տունն կաթուղիկոսական յառաջագոյն շինեալ ի Նահապետ կաթուղիկոսէ, զկնի ապա նորոգ ի հիմանէ ետ կառուցանել Յակոբ կաթուղիկոս Շամախեցի յամի 1779, յանեփ աղիւսոյ և ի փայտէ և այն շինութիւն է որ տեսէ ցարդ: Ուրանօր նստի այժմ արքեպիսկոպոս փոխանորդն Թէմական. Բ մասն ի հիւսիսակողմն վերնոյն՝ նոյնպէս ի վերայ նոյն*

քարափան ձորոյն, յորում է եկեղեցի յանուն սրբոյն Յակոբայ հայրապետի կառուցեալ ի վերայ չորից սեանց՝ որմունքն ի հասարակ քարանց և ի հողոյ, իսկ սիւնքն և կամարքն հանդերձ առաստաղօք ի թրծեալ աղիւսոյ. այժմ հայազգի բնակիչք այսր Զորագեղջ աստ աղօթեն. յայսմ բաժնի կային յառաջագոյն բազում սենեակք և փուռն հացի՝ ուր յաճախէին երթևեկք հայազգի վաճառականաց յորոց և շինեալ ասի այս եկեղեցի ըստ աւանդութեանն. այլ այն սենեակք և փուռն հացի յաւերութեան եղեալ, վերջացեալ են երթևեկք վաճառականաց: Դ մասն յարևելից սորա է ծառատունկ և պարտեզ բանջարոյ: Դ մասն ի հարաւոյ տան կաթուղիկոսարանին, յորում էր իսկական եկեղեցի ժողովրդոցն յանուն սրբոյն Սարգսի զօրավարի՝ շինեալ ի Նահապետ կաթուղիկոսէ, այլ յաղագս կարի հնութեանն և վտանգաւոր գոլոյն աղօթաւորացն ի նմա ժողովրդոց ըստ խարխուլ շինուածոյն՝ յամի 1835, ի ժամանակի պաշտաման մերում հոգևոր այցելութեամբ՝ տուաք քակել զայն բոլորովին ի հիմանց՝ հրամանաւ վեհափառ կաթուղիկոսին և նոր ի նորոյ ի նոյն տեղւոջ ընդարձակ ևս հիմնադրութեամբ տուաք կառուցանել զորմունսն, որոյ չէնք հանդերձ չորս սեամբքն ի տաշածոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ հասանի գրեա թէ ի կատար յայս ամ:

Յայսմ անապատ անուանեալ տեղւոջ նստէր առանձին վարդապետ ոմն առաքեալ յԱթոռոյ Էջմիածնի, յաղագս պահպանութեան տան կաթուղիկոսարանին և վերահասութեանն այլոց կալուածոց Աթոռոյն՝ այգեաց և ջրաղացից եղելոց յայս քաղաք Երևան և տուեալ էր նմա և երթևեկացն յԱթոռոյն ի սնունդ՝ վարձք յառաջագոյն աստէն եղեալ կրպակացն, արդիւնք ջրաղացիցն որ ի ձորամիջի աստ, և յատկացեալ առանձին այգւոյ միոյ, և նուէրքն ըստ հոգևոր մասին ի ժողովրդոց այսր թաղի: Այլ ի փոխարկութեան իշխանութեանն նահանգիս ի 1827 ամի վերջացաւ և այն յաջորդութիւն վարդապետաց աստի:

Հայր Ղուկաս վարդապետ Ինճիճեան յառաջին հատոր Աշխարհագրութեան Ասիոյ, ի ստորագրութիւն Երևանայ՝ յերես 254, առեալ ի Շարտինէ՝ դնէ մերձ յառաջնորդարանն Երևանայ Աշտարակ ինչ հնագոյն շինուածովք և այլն: Յերևան քաղաքի բացի մենաստանէն Անանիա առաքելոյ և յԱնապատէն Զորագեղջ չի՛ք այլ այնպիսի առաջնորդարան կամ արքեպիսկոպոսարան: Անապատն Անանիայի չունի մերձ իւր այնպիսի շինուած աշտարակի և ո՛չ եղեալ է յառաջագոյն, իսկ Անապատն Զորագեղջ ևս չունի այժմ առ ինքն զայնպիսի ինչ. այլ մեր չբաւականացեալ այսու տեսութեամբ մերով և ո՛չ

հաւանելի դատեալ զմակաբերութիւն նորին Ինճիճեանի յաղագս պալատանն Խոսրովիդխտոյ ի Գառնի, որ բացակայ է յԵրևանայ ընդ արևելս իբրև երից ժամուց: Հետաքրքիր եղաք և ստուգեցաք այսպիսի ինչ: Հանդէպ Անապատին Զորագեղջ յայնկոյս գետոյն և ձորոյն ի վերայ քարափանն եղեալ է արդարև շինուած ինչ այնպի-սի, այլ իբրև նախքան զամս 30 և աւելի ևս, այլազգի ոմն մահմէ-տական գնեալ զայն տեղի շրջակայիւք հանդերձ առ ի տնկել զորթս անդէն՝ զայն շինուած հիմնովին քակեալ ամացեալ է ի ձորն առա-ջակայ: Եւ աւանդեն ևս թէ՝ գտեալ է անտի և ինչ ինչ հնութիւնս ի հիմանց կամ ի ներքնայարկ դարանաց նորա: Գոն արդարև մերձ նմին փոքր ինչ բարձր քան զայն՝ անդր քան զայգին աւերակք ինչ. և զառաջեաւ նորա ի վերայ գետոյն ձգեալ յառաջագոյն կամուրջ, որոյ հետք աւերանացն երևին տակաւին: Զայն այգի գնեալ են այժմ հայք և ի տեղին այնր աշտարակի շինեալ են հնձան. և է հանդէպ Անապատին Զորագեղջ:

424. Ե. Թաղն Տէմիրպուլաղ*. զի ելանեն անտի սևորակ աղբիւրք ջուրց: Կոչի և ի Հայոց* Քարահանքի *թաղ, զի գտանի մերձ անդր և հանք հասարակ քարանց: Այս թաղ է ի ստորոտի անդ առապարին այգեացն նորքեցւոց, ի հարաւոյ կողմանէ Ա թաղին Շհար կոչեցե-լոյ և յարևելից ամրոցին, բնակեալ ի մահմէտականաց, որք ունին մզկիթ և ի սակաւաթիւ գերդաստանաց Հայոց՝ որք չունելով յա-տուկ եկեղեցի՝ գնան յեկեղեցի սրբոցն Պետրոսի և Պօղոսի:*

425. Զ. Թաղն Նորք *կոչեցեալ գիւղն, ըստ այժմեան կառավա-րութեան, քանզի ի ժամանակս Պարսից էր ի հաշուի գիւղօրէիցն և է յարևելից քաղաքիս ընդ զառիվեր ի բարձրավանդակի, որոյ այգիք խառն են ընդ այգեաց բուն քաղաքացեացն՝ ի դարէ անտի մինչև ցքաղաքն: Եւ այս տեղի կոչի յայլազգեաց* Չեօմշէկճի*, զի գոն անդ կաւագործ բրուտք, որք կազմեն զխեցեղէն անօթս և են բնակիչքն յազգէ Հայոց ևեթ. և ունին եկեղեցի քարաշէն ի հին աւուրց՝ յանուն Սիմէոնի ծերունւոյ. այլ ի ժամանակի անդ մեծի երկրաշարժութեանն դիպելոյ յամին 1679, զրկեալ է ի գմբեթէն և խախտեալ մեծ մասամբ, թէև մինչև ցայժմ տևէ և կարի երկիւղիւ աղօթեն ի նմա:*

426. Վաճառանոց քաղաքիս կամ շուկայն առևտրութեան է ի միջոցի Նոր թաղին, արևելեան ստորոտի Կոնդի, վերին թաղի Զորա-գեղջ և Տէմիրպուլաղայ. մեծ մասամբ կրպակքն վաճառականաց են ի ներքոյ երկայնեալ կամարայարկաց ի թրծեալ աղիւսոյ և ի կրոյ՝ որպիսի է Մսըր չարսըն *ի Կոստանդինուպոլիս: Իսկ միւսքն հասա-րակ շինուածովք, գոյ ի սմա և պանդոկ մեծ՝ կոչեցեալ* Գիւրճի քեար-

վանսարայ և քանի ևս փոքր պանդոկք: Է ի սմա և մեծաշէն մզկիթ մահմէտականաց ըստ ձևոյ Պարսից՝ ի թրծեալ աղիւսոյ և ի կրոյ. դմբէթ մզկթին և ծայր մինարէյին պատեալ են յախճապակեօք. և ունի ի հիւսիսակողմն բակ ընդարձակ և շուրջանակի պարսպապատ օթևանս՝ յորս ուսանին մանկունք նոցին մահմէտականաց: Եւ ի միջին տեղւոջ նորա մեծ աւազան ջրոյ. ունի և գերիս դրունս՝ մին փոքր ընդ արևելս, միւսն մեծ ի կողմն շուկայի ընդ հարաւ և երրորդն նոյնպէս մեծ՝ յարևմտից. զայս մզկիթ հանդերձ այսու շինուածովք ետ կառուցանել Հիւսէին Ալի խան քաղաքիս ի հիճրէթին 1186:

Յարևելից շուկային յընդարձակ հրապարակի ի նորոյ կառուցաւ յարքունեաց նահանգական ուսումնարան բազմասենեակ՝ ուրանօր ուսանին մանկունք հպատակաց յիւրաքանչիւր ազգէ յերիս լեզուս՝ ի ռուս, ի հայ և ի տաճիկ:

427. Ամրոց կամ բերդ քաղաքիս ի հարաւոյ կողմանէ բաժանեալ ի նոյն իսկ ի քաղաքէն մեծ հրապարակաւ. կառուցեալ է ի տափարակ դիրս ի վերայ արևելեան սարահարթի քարակտուր ձորոյն Հրազդան գետոյ. յերից կողմանց՝ յարևելից, ի հարաւոյ և ի հիւսիսոյ պատեալ է կրկին պարսպաւ հանդերձ հաստատուն մեծամեծ բրգամբք, այլ ի հողոյ որպէս պարիսպն նոյնպէս և յիսուն բրգունք նորին, թէպէտ և ի հիմունս և յայլ ինչ տեղիս ի գործ եդան և քարինք յաւերակաց անտի եկեղեցեաց և բնակութեանց քաղաքացեացն ի շինութեանն ամրոցիս, որ իսպառ քայքայեալ էր ի վերոյիշեալ երկրաշարժութենէն: Իսկ յարևմտից ի վերայ քարափան ձորոյն կարգաւ կառուցեալ են ապարանք և բնակարանք մեծամեծ անձանց: Ապարանք խանիցն սկսեալ ի հիւսիսոյ կողմանէ է ընդարձակ և մեծանիստ բաժանեալ ի զանազան դիրս՝ որոշ խանիցն և որոշ տիկնանց նոցին. ի պալատի անդ խանիցն անուանի է այն որոշ շինուած, որ կոչի ըստ տաճկականին **Շուշապանտ այվան**, անմիջապէս ի վերայ քարափանն: Բովանդակ առաստաղ նորա և սիւնքն, որ փոխանակ հիւսիսային որմոյ, և կիսով որմունքն պատեալ են մեծ և մանր ապակի հայելեօք և զարդարեալ է նկարուք և պատկերօք ոմանց շահ արքայից նոցին և խանից. և զայս ետ կառուցանել Մահմատ խան՝ որդի Հիւսէյին Ալի խանին ի հիճրէթին 1208, իսկ պալատն տիկնանց նոյնպէս ի վերայ քարափան՝ է կարի մեծանիստ երկար քառանկիւնի բազմասենեակ՝ կրկնայարկք և եռայարկք, այս տեղի նորոգեալ վայելչապէս յայժմեան իշխանութենէ՝ պատրաստեցաւ հիւանդանոց՝ բաժանեալ յինչ ինչ մասունս ըստ ցաւոց ախտակրացն:

Բ մզկիթք էին յամրոցի աստ՝ մին շինեալ յիշխանութեան անդ Օսմանեանց ի Ռաջաբ փաշայէ ի հիճրէթին 1135 (1725) և է քառակուսի ի վերայ չորից սեանց բաւական մեծութեամբ ընդարձակ կամարօք. զայս մզկիթ յառման անդ ամրոցիս յամին 1827, իշխանութիւնն ետ յարդարել և օծանել եկեղեցի յանուն հովանաւորութեան Տիրամօր կուսին. և զաղիւսակերտ մինարէ նորին որ մերձ յորմն արևմտեան, խոնարհեցուցին ցյատակն, իսկ միւսն շինեալ ի մերում ժամանակի ի Հիւսէյին խան սարտարէ ի թրծեալ աղիւսոյ՝ ըստ ձևոյ նոցին պարսից հանդերձ սրահօք և սենեկօք. զգմբէթն և զճակատն հիւսիսային ետ պատել կապոյտ և կանաչ յախճապակեօք. այս տեղի է այժմ զինարան իշխանութեանն:

Յոլով բնակութիւնք էին յամրոցի աստ՝ նոցին պարսից, այլ այն ամենայն քանդեալ հարթեցան բացի սակաւուց և եղելոցն ի վերայ սարահարթի ձորոյն. նոյնպէս կան և մեծամեծ համբարանոցքն և այլ ինչ ինչ հարկաւոր շէնք:

Ածեալ է յերից կողմանց շուրջ զպարսպօքն և խրամ (խանդակ) խոր և լայն. ունի այս ամրոց զերիս դրունս, զմեծն ի հիւսիսոյ՝ կոչեցեալ Բաբի շիրվան *և զերկրորդն ի հարաւոյ՝ կոչեցեալ* Թէվրիզ գաբուսի. *իսկ զերրորդն ի թագնութեան ի պալատի անդ խանին՝ որ ընդ երկրաւ իջանէ ի գետն Հրազդան և ի գործ ածի յաւուրս պաշարման:*

Այս ամրոց, որպէս պատմեցաւ, գոյր յառաջագոյն ի ժամանակս իշխանութեան Հայոց և անուանէր Բերդ Երևանայ ըստ Սեբէոսի. այլ թէ յումմէ կառուցեալ և զինչ նորոգութիւն ընկալեալ մինչև ցամ Տեառն 1583, չի՛ք ինչ յայտնութիւն ի գիրս. իսկ ի նոյն ամի այն ինչ առին Օսմանեանք պատերազմաւ ի ձեռաց Պարսից և կացուցաւ իշխող երկրիս Ֆահրատ փաշայն, նորոգեաց բոլորովին զպարիսպ բերդիս. և՛ զկնի այնր ի ժամանակս իշխանութեան Պարսից յամին 1679 եղեալ մեծ երկրաշարժութիւն՝ կործանեաց զբազում տեղիս ընդ որս և զպարիսպ բերդիս և զկամուրջն որ առ նովաւ ի վերայ գետոյն. իշխողն երկրիս յայնմ ժամանակի Զալ անուն խան ծանոյց շահ արքային Պարսից և ընկալեալ զհրաման ընդ ձեռն Միրզայ Իբրահիմ Հատրպէջան վէզիրի անուանելոյ՝ կառոյց անդրէն զպարիսպն և զկամուրջն. և զորդոր եղեալ բովանդակ բնակչաց երկրիս՝ ետ նորոգել զաւերեալ տեղիսն ըստ կարելոյն՝ մանաւանդ զեկեղեցիս Հայոց և զմզկիթս նոցին մահմէտականաց. և ահա այն նորոգութիւն է, որ տեսէ ցարդ:

428. Կամուրջն քարաշէն ձգեալ ի վերայ Հրազդան գետոյ մերձ առ անկիւնն ամրոցիս արևմտեան հիւսիսոյ՝ ուր է պալատ խանին,

չինեալ կայր յառաջնոց անտի, այլ ի շարժէն 1679 ամի քակեալ իսպառ՝ չինեցաւ անդրէն ընդ ամրոցին ի խարտեալ քարանց և է քառակամար, մին ի միջին կամարաց կարի բարձր և ընդարձակ՝ ընդ որ ևեթ հոսի գետն: Իսկ միւս կամարքն են փոքր, ընդ որս անցանեն ջուրք առուացն ստորին գիւղօրէից և այգեաց. գտանի հետք կամրջոյ միոյ փոքր ինչ ի վեր ի Թաղի անդ Զորագեղջ:

429. Այս քաղաք առատ է ի մասին ջրոց, զի ունի զերկուս առուս ընկալեալ ի Հրազդան գետոյ անտի անդր քան զՔանաքեռ գիւղ. մեծն՝ որ կոչի **Մամռի**, *է ի հնոց անտի և է թերևս այն՝ զոր ետ հանել Ապիրատ մեծ իշխանն Հայոց ըստ Այրիվանեցւոյ ի միջոցս թուոցն ՆՁ–ՆՂ. «Ապիրատ իշխան ԲԺՌ հեծելի. սա չինեաց զԿեչառուս և եհան զառուն Երևանայ». իսկ երկրորդն կոչեցեալ Ապուհայեաթ, որ նախ մտեալ ի Թաղն Կոնդի, մասամբ ինչ գնայ ի Թաղն Զորագեղջ և անտի ևս փոքր մասամբ գնայ ընդ երկրաւ յամրոցն. իսկ միւս մասամբ իջանէ ի Նոր Թաղն. ունի և զվերջացեալ գետակն այսր գաւառի (*ջուր Ղրխպուլաղայ*) և զսևորակ ջուրն որ ելանէ ի Թաղի անդ* **Տէմիրպուլաղայ**: *Այսոքիկ ջուրք բաշխին ըստ մեծի մասին յամենայն պարտէզս և յայգիս և ապա աւելորդացն իջեալ ընդ հարաւ՝ ոռոգէ զբացակայ պարտէզսն և զինչ ինչ արտօրայս քաղաքին: Այլ է և առուն Նորք կոչեցեալ Զ Թաղի՝ որ ընկալեալ ի գետակէն յստորև քան զԱւան գիւղ՝ գայ յարևելից չինին և բաշխի յայգեստանսն:*

430. Են քաղաքիս այսորիկ բազում այգիք խաղողոյ և ծառաստանք զանազան մրգեղինաց և կոչին յանուն վայրացն Շհարի, Նորքայ, Զորագեղջ ընդ գետն ի վեր ի ձորամէջսն ցՔանաքեռ, Նորագեղջ[1] *և Տալմայի. այգիք այսր վերջին տեղւոյ նորոգեցան ի մերում ժամանակի, քանզի առու ջրոյ նորա կայր ի վաղ ժամանակաց յաւերուածեան՝ զոր ետ նորոգել Հիւսէյին խան սարտարն և զընդերկրեայ ճանապարհ նորին մաքրել և զջուրն յորդութեամբ հասուցեալ ի տեղին ի Հրազդան գետոյ անտի բաժանեաց և զվայրն ի վերայ բնակչաց քաղաքին. ուրանօր տնկեալ այգիս՝ հասուցին ի բերս. և անկանի տեղին յարևմտակողմն Զորագեղի:*

431. Ի մէջ այգեստանեայց Շհարի ի հիւսիսակողմն անդր է աւերակ մատրան միոյ **Գէթսէմանի** *անուանելոյ, շուրջ զորով են բազմութիւնք շիրմաց: Այգին՝ յորում գտանի աւերակն մատրան, էր սեպհական կալուած Աթոռոյ Էջմիածնի և վաճառեցաւ ումեմն Հայազգւոյ բնակչի Երևանայ:*

[1] Աւերակն այսր գեղջ և եկեղեցւոյն, որ ի նմանէ ի հանդիպոյ ամրոցին յարևմտակողմն յայնկոյս գետոյն առ բլրակաւն, որ կոչի Բօրքճի Թէպէ, շուրջ զորով են բազմութիւնք այգեաց, որոյ գիտին ընտիր քան այլ տեղեացն:

Կոզեռն *կոչեցեալ բլրակ ի հիւսիսակողմն քաղաքիս է գերեզ-մանուտ հայազգի բնակչացն. ուրանօր ի միջին տեղւոջ ի բարձ-բաւանդակի է մատուռն տեղի պատարագելոյ ի վերայ գերեզմանի Յովհաննու վարդապետի Կոզեռն անուանելոյ, յոր անուն կոչի և բլրակն. առընթեր գերեզմանի յիշեալ վարդապետին ամփոփեցաւ և մարմին Մովսէս կաթուղիկոսի Սիւնեցւոյ, որոյ և տապանավիմին գրուած ունէր օրինակ զայս.*

«Այս է տապան դամբարանի
Եղեալ շիրմի[1] ճանապարհի,
Տեառն Մովսէսի վարդապետի,
Ընտրեալ սուրբ հայրապետի,
Որ է տեղեաւ Տաթևացի,
Նորոգող Սուրբ Էջմիածնի,
Բացող և շինող գմբէթի,
Թուին ՌՁԲ (1633)-ին»:

Այս մատուռն յաւերութեան կայր ի վաղուց անտի, զոր նորոգ ետ կառուցանել մէլիք Սահակ Մէլիք-Աղամալեանց այրն մեծա-տոհմ՝ քարամբք և կրով յամին 1829: Եւ ինքն ևս յամին 1834 վախ-ճանեալ՝ եդաւ ի շիրմի ի մէջ մատրանս: Գոյ և մատուռն մի ի մէջ այգեստանեայց թաղին Նորքայ յանուն Սուրբ Աստուածածնի, ուր յաճախեն ուխտաւորք ի բնակչաց քաղաքիս ի կիւրակէս յինանցն զկնի սրբոյ Զատկին:

432. Հաշիւ բովանդակ գերդաստանաց և շնչոց նոցին բնակչաց Երևան քաղաքի.

Ի Շհար և ի Նոր թաղն ի միասին.

համար տանց		համար շնչոց	
		արուաց	իգաց
742	*մահմէտականք*	*1552*	*1513*
191	*բնիկ հայք*	*453*	*410*
352	*գաղթական հայք*	*890*	*794*
Ի թաղն Տէմիրպուլաղ.			
409	*մահմէտականք*	*868*	*837*
50	*գաղթական հայք*	*132*	*110*

[1] Արքունի ճանապարհն, զոր ընդարձակ և դիւր ետուն մաքրել յամին 1836, անցանէր և անցանէ ընդ այս բլուր յարևելից նորա՝ թողլով զփոքր մասն գերեզ-մանոցին յստորև. վասն այնորիկ ասի՝ «Եդեալ շիրմի ճանապարհի»:

Ի Կոնդն և ի Ջորագիւղն.			
517	*մահմէտականք*	*1179*	*1111*
243	*ընիկ հայք*	*632*	*522*
11	*գաղթական հայք*	*23*	*17*
Ի թաղն Նորք կոչեցեալ.			
84	*ընիկ հայք*	*287*	*241*
19	*գաղթական հայք*	*58*	*47*
1668	*մահմէտականք միանգամայն*	*3599*	*3461*
950	*ընիկ և գաղթական հայք միանգամայն*	*2474*	*2141:*

ԳԻՒՂՈՐԱՅՔ Ի ԳԱՒԱՌԻՆ ԿՈՏԱՅԻՑ՝ ՀԱՅԱԲՆԱԿՔ[1]

433. **Քանաքեռ** *գիւղ՝ տունք 57: Հեռի է յԵրևան քաղաքէ իբրև ժամ մի ընդ հիւսիս ի բարձրաւանդակ վայելուչ տեղւոջ յարևելեան եզեր Հրազդան գետոյ: Այս գիւղ յառաջագոյն եղեալ է բազմամարդ, որպէս ցուցանեն աւերակքն տանց: Զանուանադրութենէ այսր գեղջ աւանդեն ծերունիք թէ՝ երբեմն Քանան անուն կամ Քանանիդ ոմն թագաւոր (թերևս իշխանազն) բնակէր աստ՝ որոյ և զտեղի պալատանն ցուցանեն մերձ յայս գիւղ յարևելակողմն և գտանին իսկ հիմունք չինուածոցն: Իսկ քոյր նորա աստէն ի բուն տեղւոջ գեղջս. և յաճախակի ի գործ ածելոյ զանունս Քանանաքոյր կամ Քանանաքեռ՝ կոչեցաւ* **Քանաքեռ** *և եհաս ցմեզ:*

Կրկին եկեղեցիք են ի սմա կառուցեալք ի կոփածոյ խարտեալ քարանց: Մեծ եկեղեցին յանուն սրբոյն Յակոբայ հայրապետի Մծբին քաղաքի՝ օրոցաձև ի վերայ չորից սեանց: Ունի զմի սեղան, զերկուս աւանդատունս և զերկուս դրունս արևմտեան և հարաւային: Ի վերայ արևմտեան դրանն եղեալ է գաւիթ փոքրիկ, որ այժմ կայ խոնարհեալ: Իսկ եկեղեցին յամբողջութեան է՝ ուր աղօթեն բնակիչք գեղջս: Զունէր արձանագիր չինութեանն, այլ թուական միայն գտանէր ի ճակատի անդ արևմտեան որմոյն արտաքուստ. ՌՃԽԴ

[1] Որովհետև յերկուս դիրս բաժանեցաք զգաւառ Կոտայից, ստորին դիրք նորա, յորում գտանի և քաղաքն, է կարի փոքր. և այն ըստ կիսոյն են տեղիք անդաստանաց քաղաքացեացն և ըստ կիսոյն են կալուածք մասնաւոր գիւղորէից, որք այժմ պատկանին դաշտին Դունայ, որ վերակոչի գաւառ յանուն Գառնւոյ:

(1695), զորմէ ասեն լինել շինութեանն: Իսկ նորոգութիւն տանեացն և խաչկալին սեղանոյ յամին 1793, որ հանդերձ այլ գրուածովք ի վերայ դրանն հարաւային:

Իսկ միւսն փոքր քան զայն նմանապէս օրոցաձև և է հեռի ի նմանէ իբրև երկուս քարընկեցս ընդ հարաւակողմն ի բարձր տեղ-ւոջ, ունի զմի սեղան, զերկուս աւանդատունս և զերկուս դրունս արևմտեան և հարաւային. ի վերայ արևմտեան դրանն լեալ է գա-ւիթ, այլ անկեալ խոնարհեալ կայ առ տեղեաւն. ունի արձանագիր շինութեանն ի վերայ արևմտեան դրան ըստ այսմ.

«Աստուածածին շնորհաց հոգւոյն արքաեարան, որ և կոչի Աս-տուածածին կոյս Մարիամ, գեղեցկաշէն և բարձրաբերձ յոյժ անն-ման. և անմարմնոց լուսեղինաց է բնակարան, քրիստոնէից մեղաց սրբիչ և քաւարան, վաճառականքն ամենեքեան ժողովեցան, հալալ ընչից և մթերից յօժար տ... վանս, կանգնեցուցին պայծառ դիմօք ազնվական, գլուխ կանգնեալ վերակացու խօջայ Աղաջան, թվին Հայոց որ է Ռ երկ ոբելին ԽԴ (1695)»:

Ունի շուրջանակի պարիսպ և սենեակս առ պարսպօքն, ուս-տի երևի լինել մենաստան կուսակրօն աբեղայից: Զաքարիա Սար-կաւագ դնէ յայս գիւղ զմենաստան ինչ՝ յորոյ ի բնակչացն յիշ-տակէ զերկուս՝ զՓիլիպպոս եպիսկոպոս և յՄիքայէլ աբեղայ, ի ժա-մանակս անդ իշխանութեան Ամիրգիւնայ խանին (հատոր Ա, գլուխ 29): Ապաքէն բաց յերկուց եկեղեցեաց աստի չի՛ք այլ եկեղեցի կամ տեղի մենաստանի ի գիւղամէջ այսր կամ ի շրջակայսն. ուստի յիշ-տակեալ մենաստանն ի Զաքարիա Սարկաւագէ՝ է սոյն այս եկեղեցի. և եղեալ իսկ է նախքան զայս վերջին չէնք՝ միւս հնագոյն շինուած մենաստանի ըստ մտաց նորին Սարկաւագի գրութեանն:

Ի մեծի շարժին եղելոյ աստ ի նահանգիս Երևանայ յամին 1679, մեռան ի բնակչաց գեղջս ընդ փլատակաւ շինուածոց 1228 անձինք, զորմէ յիշէ նոյն Զաքարիա Սարկաւագ (հատոր Բ, գլուխ 51):

Այս գիւղ ունի շուրջ զայգիս խաղողոյ զծառաստանս պէսպէս պտղոց՝ յորս ընտիր են տանձ և խնձոր և պահպանին ցնորն: Նոյն-պէս և ի ձորամիջի անդ յերկուս կողմանս գետոյն են ծառաստանք պտղոց, յորս ընտիր է սպիտակ թութն և տևէ մինչև ցամիսն օգոս-տոս:

Արձան քառակուսի հիւսեալ կոփածոյ քարամբք, յոր ագուցեալ կայ յարևմտեան ճակատի անդ խաչվէմ մեծ ընտիր փորածու: Եւ է մերձ գեղջս Քանաքեռայ յարևելեան հարաւ՝ ի վերայ ճանապարհին որ տանի ի Գեղարքունի և ի Ծաղկունիս, կից յայգեստանսն այնր

կողման և շուրջ զորով են շիրիմք. ունի արձանագրութիւն յարևմտեան ճակատի անդ ի շրջանակս փորածու խաչվիմին ի վերայ հիւսեալ քարանցն՝ ըստ այսմ. «Ահաւոր անուամբն Աստուծոյ, ես՝ Պետեին և կենակից իմ Աւագ-Տիկին, կանգնեցաք զխաչս բարեխաւս մեզ և յիշատակ հոգոց մերոց և զաւակաց մերոց. և հայրենիք այգիս զաւակաց մերոց՝ Տաւղասլանին և այլ տղոցն. և սահմանեցաք զտեղիս հանգստարան մեզ. և խաչս գերեզմանաց մերոց պահապան: Գրողս զՄխիթարիչս յիշէք: Ի թիւ ՉԺԴ (1265)»:

Գրուած ի հարաւակողմն անդր ի վերայ հիւսեալ քարանց արձանին.

«Յանուն Աստուծոյ, ես՝ Պարա... գի իմ ճաճնա և մայր իմ և քվերք իմ Մաթուխ, Նասխաթունս, ծախեցաք մեր սրտայաւժարութեամբ զմեր հարենիք այգիս Պետեանին: ԳՌ:ԲՃ: ՍՊ: Անպակաս առաք: Աստուած շնորհաւոր առնէ հալալ հայրենիք յորդեցէ յորդիք. ոչում դաւի չկա՝ ո՛չ մերոց, ո՛չ աւտարաց: Ով դաւի անէ, ՅԺԸ–ից նզոված. տուգանք տայ Ծ դեկ. թվիս ՉԺԵ (1266): Վկա Աստուած և Աղուչափն, Կուլալն, Տիրերն, Վահրամ, Մանթն, Դաւիթ, Առաքելն, Կարապետն, Ստեփաննոս, Մխիթար վդ, Խոցադեղ, Դեղ Յակոբ, Աշրափն, Խաչենեցի Վահրամ գրգ, Մնպատ, Բարսեղ էրէց, Ամիրդատն Բճնեցի և Մխիթարիչ էրէց, որ զգիրս գրեցի: Դահիակն Յիսուսի պ. ի պարտն և Ծ: Պ: Շահնային և Մեղունային»:

434. **Առինջ**. *բնակեալ ի Հայոց՝ տունք 30: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Գոյ մատուռն գերեզմանոցաց ի տաշածոյ քարանց յարևելից գեղջն՝ կիսաւէր. յոլով գերեզմանատունք են յեզերս այսր գեղջ և խաչվէմք ի շիրիմսն անդ:*

435. **Աւան**. *թերևս Ովայից գիւղ՝ յորմէ էր Ե Յովհաննէս կաթուղիկոս: Տունք՝ 18: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Հին եկեղեցի գեղջս ի կոփածոյ քարանց յաւերութեան կայ, որոյ յորմն արտաքուստ արևմտեան հիւսիսոյ գրի այս ինչ. «Ի թուիս ՉԼԴ (1285), յաշխարհակալութեան արքայից արքային Արղութեան, ի թագաւորութեան Վրաց և Հայոց Դիմէտրէի, ես Դաւիթ, որդի Դէմէտրէ թագաւորին, թողի զԱւանայ զայգեաց շարէտն վասն միամտութեան սոցա և երկարութեան կենաց մերոց և թողութեան մեղաց մերոց: Արդ՝ որք ի մերոց կամ յօտարաց տէր լինի Աւանայ և զհաստատեալ գիրս մեր խափանել ջանայ և շարէտ առնու կամ... նզովեալ լիցի ի սրբոց առաքելոցն և ի սրբոց հայրապետաց. ընդ Յուդայի դատապարտի և ընդ այլ խաչահանուացն, ամէն»:*

436. **Զրվէժ**. *գիւղ ի հարաւակողմն գաւառիս ի վերայ բարձր լեռնաձև առապարի, որ հայի հանդէպ դաշտին Դուինայ. թերևս այս լեռնաձև առապար իցէ յիշատակեալ ի Ղազարայ Փարպեցւոյ յանուն Զրվէժ լերին, զոր և դնէ Ստորագրութիւնն Հին Հայաստանի (թղթ. 470) ի սահմանի դաշտին Դուինայ. հին եկեղեցի սորա ի տաշածու քարանց կործանեալ յերկրաշարժութենէն դիպելոյ յամի 1679, ըստ Զաքարիա Սարկաւագի. և կայ տակաւին աւերակն: Այժմեան եկեղեցին հասարակ չէնք՝ Կաթուղիկէ անուամբ և բնակիչքն յազգէ Հայոց՝ տունք 22:*

437. **Տաճարաբակ**. *այժմ՝* **Դժրաբակ**. *տունք՝ 21: Եկեղեցին անուամբ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. հին եկեղեցի սոցա ևս ի խարտեալ քարանց յաւերութեան կայ:*

438. **Կեամրիս**. *տունք՝ 41: Եկեղեցին անուամբ Սրբոյն Յովհաննու Մկրտչի: Եւ է ի կոփածու խարտեալ քարանց ի վերայ երկուց սեանց օրոցաձև և ունի զմի սեղան պատարագի. չէ՛ յայտ թէ ե՛րբ է կառուցեալ և յումմէ. այլ որպէս նկատի՝ զկնի երկրաշարժութեանն եղելոյ յամին 1679: Այս գիւղ ունի զմեծ ակն աղբեր առատ ջրոյ ի հիւսիսային ստորոտէ (յորում և ինքն) մեծի առապարին, որ բաժանէ զԿոտայս ի սահմանէն Գառնւոյ: Զկնի Ալափարս գիւղի՝ հաւանական երևի թէ այս գիւղ է, որ ի հնումն կոչէր* **Այլաբերից** *կամ* **Աղբիւրից** *գիւղ ի Կոտայս գաւառի:*

439. **Ճաթղռան**. *տունք՝ 39: Եկեղեցին յանուն Սրբոյն Գէորգայ. և է այս գիւղ յարևելից Կեամրիս գեղջ ի ստորոտի վերոյիշեալ առապարին:*

440. **Աղասօր** *կամ* **Աղազօռ**: *Տունք՝ 7:* **Բաշգիւղ**՝ *տունք 29: Մերձ յայս գիւղ բղխին աղբերակունքն ջրոյ այսր գաւառի: Եւ ընդ հիւսիս իբրև քառորդ մի ժամու ի հարաւային ստորոտի լերին Շամիրամայ ի ծոցաւոր ինչ տեղւոջ է գերեզմանուտ և կիսաւեր մատրունք Բ ի նմա:*

441. **Արամուս**. *ի հնումն՝* **Արամօնս** *և ըստ ոմանց թերևս* **Արախոյզ** *(341): Տունք՝ 45: Եկեղեցին անուամբ Սրբոյն Յակոբայ: Դաւիթ Ա կաթուղիկոս, որ ի գեղջէ աստի էր, շինեաց աստ եկեղեցի փառազարդ և տուն բնակութեան ինքեան, որ արդ յաւերութեան կայ: Եւ գտանին մասնաւոր որմունք եկեղեցւոյն ի սրբատաշ քարանց և ի կրոյ և անյայտ գերեզման նորին Դաւթայ Ա, որ առ եկեղեցեաւս ամփոփեցաւ: Սուրբ Աստուածածին մատուռն ինչ կիսաւեր ի վերայ բլրոյն եղելոյ մերձ յայս գիւղ Արամուս, յորում գտանի եղծուած արձանագիր այսպիսի.*

«ՅԾԶ (907) թուականութեանս Թորգոմեան, ես՝ Գրիգոր Սիւ-նեաց տէր, որդի Վասակայ, շատածախ գանձիւք գնեցի ի Հագարա-ցեաց... ընդ նմին և նորոգեցի զսոր...»:

442. Շահապ. *տունք՝ 28: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Պտղնի. *տունք՝ 13: Յայս գիւղ գտանի աւերակ մեծի ընդարձակ եկեղեցւոյ ի կոփածու քարանց:* Մէհուպ. *տունք՝ 4:* Էլառ. *տունք՝ 26: Եկեղեցին անուամբ Սրբոյն Ստեփաննոսի: Աստ է ճանապարհ արքունի անցորդաց:* Նորգիւղ. *տունք՝ 16: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:* Բարցաբի. *տունք՝ 29: Եկեղեցին անուամբ Սրբոյն Յովհաննու:* Կեօք Քիլիսէ. *տունք՝ 6: Եկեղեցին յանուն Սուրբ Յով-հաննու: Մերձ յայս գիւղ յարևմտից ի վերայ բլրակաձև առապարի՝ յստորոտի անդ լերինն Շամիրամայ է փոքրիկ տաճար գեղեցկա-շէն սրածայր կաթուղիկէիւք, այլ չունի գրուած ինչ հայացի կամ անուանակոչութիւն: Ուստի ի տաճկական լեզու վերաձայնի յայն անուն:*

443. Զագ. *գիւղ ի հնումն ի պատմագիրս. և է յայսմ գաւա-ռի յարևելից Առինջ գեղջ: Զի՛ք այժմ աստ բնակիչ հարկատու գերդաստանաց. յորում ըստ հրամանի իշխանութեանն կառուցին յարքունեաց զմեծամեծ բնակարանս դասաւորեալ կարգաւ վասն զօրաց, որք և գտանին այժմ աստէն և ըստ յատկացեալ ժամանա-կին փոփոխին այլուր և անդրէն դառնան: Եւ է տեղին ի վայելուչ դիրս յարևմտեան ստորոտի բլրակի միոյ, ուր գտանի և հին եկեղե-ցի գեղջս ի կոփածոյ քարանց, այլ մեծ մասամբ յաւերութեան:*

444. Զագավանք. *ևս՝ վանք* Գետարգել Սուրբ Նշանի*: Է յարևմ-տից հարաւոյ Զագայ ի հարաւային ստորոտի այլ բլրակի, յորում են Բ շէնք տաճարաց: Մին փոքր իբրև մատուռն արտաքոյ աւե-րակաց տանցն, որոյ և փոքրիկ գմբէթն՝ թերևս յերկրաշարժու-թեանց, անկեալ դնի անդէն ամբողջ: Եւ սա է որ անուանի մատուռն Գետարգել Սուրբ Նշանի, քանզի պահէր այն սուրբ նշան երբեմն աստ. և այժմ իսկ թէպէտ և յաւերութեան՝ գնան յուխտս մերձակայ բնակիչք յաւուրս յինանց յանուն այնր սուրբ նշանի:*

Յարևմտեան որմն նորա ի հարաւակողմն դրան դնի սոյն արձա-նագիր.

«Թվ. ՉՀԴ (1325):

Ի պարոնութեան Զաքարիա, թոռն Աւագին, մեք՝ Դաւիթ և Վա-հապ Եփաթա և որդիք մեր Բահադնին և որդիք մեր Սատրիկ և Բահադին և Աւդուլավայու սոյն որ առ Աստուած և մեր արևուս համար թողաք զվանաց կոռս՝ զմարդս, եզին, իշս. զամենայն ցեղ

կոռ և զհասարա... քո միացուցաք. թէ ոք ի տերանց կամ աւտարաց կամ աւագաց խափանել ջանայ՝ մեր ազգի մեղացն պարտական է և յերից սուրբ ժողովոյն նզոված. զԿայենին և զՈւդային ժառանգէ և ամենայն ազգաց նալաթ լինի. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»:

Ի հարաւային որմն արտաքուստ.

«Թվ. ... կամաւն Աստուծոյ, ես՝ Գրիգոր կաթուղիկոս Ամենայն Հայոց, ամենայն վարդապետօք եւ եպիսկոպոսօք շնորհեցաք զՁագ ընծայ Գետադարձ Սուրբ Նշանիս: Մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ հրամանաց մերոց»:

Ի հիւսիսային որմն արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Մոծակենց Մկրտիչս Ձագավանաց հանդն (սերմնատեղիքն) գնեցի և ետու վախմ Գետարգել Սուրբ Նշանիս. ով ոք ետ և առաջ տանէ ԳՃԺՐ հայրապետացն նզոված լինի. Թվին ՌՄԷ (1758)»:

Իսկ միւս տաճարն նոյնպէս ի խարտեալ քարանց և մեծ դրուԹեամբ՝ փոքր ինչ հեռի ընդ արևմուտս հարաւոյ մատրանն իբրև տասն քայլ հանդերձ տամբք բնակութեանցն և պարսպաւն իսպառ յաւերուԹեան գտանի, որոյ հիմունքն ևեթ տեսանին: Զքարինս յաւերակաց աստի վերածին ի Ձագ յաղագս նորոգ շինուԹեանց անդէն:

Անդաստանք այսր վանաց՝ Թէ ջրարբիք և Թէ ոստին տեղիք (տէմի) են սեպհական կալուած այժմ Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի (147):

445. **Արգնի**, *զորմէ յիշեցաք (341). աւերակն այսր գիւղաքաղաքի գտանի յարևելեան եզեր Հրազդան գետոյ հեռի յԵրևանայ ընդ հիւսիս իբրև ժամս երկուս, ի սարահարթի անդ ձորոյն և ունի պարիսպ ի հասարակ քարանց. տունքն իսպառ և պարիսպն մեծ մասամբ յաւերուԹեան կան. ի պարսպի անդ է աւերակ եկեղեցւոյ. գոն արտաքոյ պարսպին ի հիւսիսակողմն մատրունք երկու ի սրբատաշ քարանց՝ ուր է և գերեզմանուտն, յորս գոն և խաչվիմօք շիրիմք: Նախքան զամս ինչ իբր ութսուն գտանէին աստէն հայազգի բնակիչք, որք գաղթեալ յայլևայլ տեղիս բնակեցան, յորոց ոմանք արդ ևս կոչին արգնեցիք:*

446. Գտանին և տաճկաբնակ գիւղորայք յայսմ գաւառի.

Քեանքան՝ *տունք 16:* **Զար**՝ *տունք 41:* **Ղարաղալայ**՝ *տունք 11:* **Թութիա**՝ *տունք 19:* **Դամագիրմազ**՝ *տունք 14:* **Գիւլիւճայ**՝ *տունք 19:* **Թեզխարապ**՝ *տունք 2:* **Ագարակ**՝ *տունք 6:* **Ողջաբերդ**՝ *տունք 17:* **Քիւզաճիք**՝ *տունք 3:* **Մանգիւս**՝ *տունք 16:* **Դալակլու**՝ *տունք 8:* **Քեամալ**՝ *տունք 6:*

ՆԻԳ ԳԱՒԱՌ ԿԱՄ ՆԳԱՏՈՒՆ

447. Այս գաւառ ունի ի հարաւոյ զԱրագածոտն, յարևմտից զնոյն լեառն Արագած, յարևելից զՎարաժնունիս և ի հիւսիսոյ զԲամբակաձոր (թերևս իցէ Զորն Աշոցաց) և է արգաւանդահող և ջրաւէտ՝ մեծ մասամբ յաղբերականց, որոյ օդն և ջուր առողջարար. և են տեղիք հովասուն, խոտաւէտ և ծաղկաբեր: Եւ ունի անտառ ցածուն ի լերինսն և ի ծորձորսն արևելեան և հիւսիսոյ. ուրանօր և հանքս պղնձոյ և կապարոյ. և ծծումբ ի սահմանի իւրում յարևելեան գագաթի անդ Արագած լերին (343): Արևմտեան մասն սորին, որ անկանի առ ստորոտով լերին Արագածու, է դաշտաձև. իսկ արևելեանն և հիւսիսայինն են գրեա՛ թէ լերինք և ձորք. դիրք սորին ընդհանրապէս առեալ բարձր է քան զսահմանս շրջակայ գաւառաց:

Որոշմունք գաւառաց ըստ իմիք բացայայտ են և է դիւրին որոշել զայնս՝ ըստ որում նախնի հարք աւանդեցին ի գրուածս իւրեանց, այլ որոշումն սահմանեզերաց նոցին գիւղօրէիւքն հանդերձ է կնճիռ անլուծանելի գրեա թէ. և չլինի ճշտօրէն որոշել, զի թէ առնումք զգետս որոշող այնց, գիւղ, որ ի մի կողմն գետոյն, ըստ մտաց գրուածոց նախնեացն անկանի ի միւսն. իսկ թէ առնումք զկատարս լերանց, դարձեալ նոյն դժուարութիւնք ելանեն ընդառաջ, որպիսի է ընդ այս սահման և ընդ Վարաժնունիս: Ապաքէն յայսմ վայրի ոչինչ հայեցեալ ընդ այժմեան որոշմունս ի յետին և ի ներկայ իշխանութեանց, դնեմք պարզապէս միջոց այսց երկուց գաւառաց զգետն Հրազդան՝ որոյ յարևմտեան կողմն և սոյն Նիգ գաւառ:

Գիւղօրայք, որք անկանին յարևմտեան կողմն Քասաղ գետոյ

448. Աւերակն Ջանղու *կոչեցեալ Քարվանսարայի, որ է յեզեր այսր գաւառի յարևմտեան հիւսիսոյ ի վերայ ճանապարհին, որ տանի ի Շիրակ:*

449. Մէլիքի *գիւղ. ընակեալ ի Հայոց՝ տունք 41: Եկեղեցին յանուն Սրբոյն Յովհաննու:*

450. Տամակիրմազ*. տունք՝ 7: Եկեղեցին անուամբ Սրբոյն Սահակայ Պարթևի: Վասն անուանակոչութեան գեղջս ասեն թէ այնքան գիրանան անասունք մինչև չկարիլ մտանել ընդ դրունս տանցն, վասն այնորիկ ասեն ևս* Տանա Տամակիրմազ*:*

451. **Քասաղ**. *գիւղ ի գլուխ անդ գետոյն, որ յանուն գեղջս անուանի նոյնպէս Քասաղ, զոր ի քանի տեղիս յառաջ բերէ Զաքարիա Սարկաւագ ի Պատմութեան իւրում և յարձանագրութիւնս Յօհանավանաց. այլ այժմ կոչի* **Պաշ Ապարան** *ըստ այլազգականին: Տունք՝ 39: Եկեղեցին յանուն Սրբոյ Խաչի և է կառուցեալ ի հին ժամանակաց բաւականաչափ մեծութեամբ ի խարտեալ մեծամեծ վիմաց առանց սեան. և է թերևս գործ ճարտարապետին, որ չինեաց զեկեղեցիսն Նորատուաց և Գանձակայ ի Գեղարքունի, զի է ըստ ձևոյ նոցին. խոնարհեալ է կամարայարկ նորա՝ զոր ի նորոյ փայտայարկ արարին բնակիչքն:*

452. **Մուլքի** *գիւղ: Տունք՝ 14: Եկեղեցին անուամբ Սրբուհւոյ Աստուածածնի:*

453. **Քիւլլուճայ**. *տունք՝ 33: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

454. **Չամրլու**. *տունք՝ 46: Եկեղեցին անուամբ Սրբոյն Գէորգայ: Յարևմտից գեղջս ի վերայ քարուտ բլրակի միոյ գտանի բոլորակ շարաքար ինչ և ունի տեղի մտից. յարևմտից շարաքարին արևելեան եղեալ կայ հատուած սիւնաձև արձանի, յորոյ երկու կողմանն են քանդակք կռանի. ի մին ձևացուցեալ է թևատարած այր մանկահասակ արևելեան հանդերձիւք և հասակ նորա երկթզաչափ. ի ներքոյ ոտից այսր այրարձանի երկու տեղիք փորածոյք դաշխուրանաձեւ, իսկ ի միւսումն նոյնպէս երկու դաշխուրանաձև փոսորակեալ տեղիք և ի միջոցս նոցին փաթոյթք դրուագեալ գծից. և միւս երկոքին կողմանքն անհարթ. եթէ լինէր ամբողջ այս սիւնաձև արձան՝ որոյ մեծ մասն չգտաւ անդէն, կարելի էր ասել ինչ. այլ այնու ամենայնիւ երևի մնացեալ ի վաղ ժամանակաց անտի հեթանոսութեան:*

455. **Ալիքուչակ**. *տունք՝ 62: Եկեղեցին յանուն Սուրբ Խաչի: Այս գիւղ գտանի ի հարաւային ստորոտի փոքրիկ առապարին, որ բաղկացեալ է յինչ ինչ քարուտ բլրակաց աղխախելոց ընդ իրեարս ի վերուստ անտի ընդ արևելս երկայնեալ. յստորոտէ անտի բղխին ականակիտ ջուրք յորդահոս սառնորակ աղբերց:*

456. **Թէքէրլու**. *տունք՝ 18: Եկեղեցին անուամբ Սրբուհւոյ Աստուածածնի:*

457. **Ղանզաֆար**. *տունք՝ 50: Եկեղեցին յանուն Սրբուհւոյ Աստուածածնի: Աստ բնակի Մէլիք կոչմամբ պատուաւոր բնակիչն այսր գաւառի:*

458. **Շիրաղալայ**. *տունք՝ 38: Եկեղեցին անուամբ Սրբոյն Մեռկեռիոսի, որ է փոքրիկ մատուռն ի կոփածոյ քարանց և կարի անձուկ*

վասն ժողովրդեանն: Ուստի մտադրեալ են ընակիչքն շինել ի նորոյ աղօթատեղի ի մէջ տանց գեղջն: Անդր ևս քան զայս մատուռն ի բարձր տեղւոջ է ամրոցիկ ինչ յորձաքար կռանակոփ վիմաց և ի չորեսին անկիւնսն չորք հաստատուն բրգունք կրաձոյլք: Եւ որպէս նկատի, է գործ հին նախնի Հայոց ի ժամանակի անդ հեթանոսութեան և տեղի ապահովութեան նախնի թագաւորացն յամարայնի, զի ո՛չ այնքան ասի ամրոց, որքան պալատ կամ ապարան իշխանաւորի ուրումն, քանզի չորեքկուսի ընդարձակութիւն նորա չէ՛ աւելի քան ինն հարիւր քառակուսի գազ պարսից և բացի չորից բրգանցն՝ տարածութիւն միջին տեղւոյ նորա լեալ է յառաջագոյն կամարայարկ երկբաժին: Եւ գտանին տակաւին հիմունք սալաթոռոցն կամարաց ընտիր տաշածու ի նոյն յորձաքար վիմացն և սեամբքն մտից դրան ընդ արևելս: Ուստի և չէ՛ օտար ասել՝ ընկալաւ այս գաւառ երկրորդաբար զանուն իւր ի շինուածոյ աստի ապարանից՝ Ապարան*:*

459. Պազարճուղ*. տունք՝ 21: Եկեղեցին յանուն Սրբուհւոյ Աստուածածնի:*

460. Ղալայճի*. տունք՝ 7: Աստ տակաւին ո՛չ գոյ եկեղեցի: Ի միջոցս այսց երկուց գիւղօրէից է աւերակ կոփածոյ քարամբք պանդոկի, որոյ կամարայարկքն իսպառ իջեալ են: Կան մեծ մասամբ չորեքկուսի որմունքն և յամբողջութեան: Դուռն նորա ի հարաւոյ կամարակապ: Ի վերայ դրանս ի տաշածու շարաքարի անդ ունէր արձանագիր ընդարձակ հայացի տառիւք, այլ ոմանք ի քարանց անտի անկեալ և անհետացեալ: Եւ մնացեալ քարանցն գրուած ևս եղծեալ ի թշնամեաց հնութեան. ուստի բացի թուականէն՝ որ ի սկսուածի անդ, չեղև ընթեռնուլ զայլ ինչ: Եւ էր՝ «ՈԿԲ (1213)»: Եւ որպէս ցուցանէ թուականն՝ կառուցեալ է այս պանդոկ յաւուրս իշխանութեան այսոցիկ կողմանց Վաչէի իշխանաց իշխանի՝ որդւոյ Սարգսի, ի ժամանակի անդ Զաքարիա Սպասալարի և կոչի այժմ այս պանդոկ յանուն գեղջս՝* Ղալայճու Քեարվանսարայ*:*

461. Պլխէր*. տունք՝ 30: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

462. Ղարաքիլիսայ*. տունք՝ 30: Եկեղեցին անուամբ սրբուհւոյ Աստուածածնի: Աստ եղեալ է յառաջագոյն ի կոփածու խարտեալ քարանց եկեղեցի՝ որ այժմ իսպառ աւերեալ կայ. և քարինք շինուածոյ նորին գոլով սեաւ՝ կոչեցեալ է այս գիւղ յայն յանուն, զի կան մասնաւոր որմունք:*

463. Ղուշճի*. տունք՝ 14: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

464. **Աստուածընկալ**[1]*. Տունք՝ 22: Այսպէս կոչի ի վաղուց անտի յանուն մենաստանին եղելոյ անդէն և է ի ձորամիջի յարևելեան եզեր Քասաղ գետոյ: Բնակութիւնք տանցն երկայնեալ են առ քարատակաւն և եկեղեցին մենաստանաւն հանդերձ անմիջոց յեզեր գետոյն ի բարձր դրութեան և անկանի յարևմտեան հիւսիս լերինն Արայի: Տաճարն, որ անուանի Կաթուղիկէ ըստ արձանագրին, է անսիւն, փոքր դրութեամբ և ունի զմի սեղան տեղի պատարագելոյ, զերկուս փոքրիկ աւանդատունս, զերկուս դրունս՝ արևմտեանն ընդ մէջ գաւթին, իսկ հարաւայինն, որ վասն այնր կողման փոքրիկ մատրանց, հիւսեալ է ի յետնոց տաշածու քարամբք: Այս տաճար փոքր Կաթուղիկէիւ շինեցաւ ի Քուրդ անուն իշխանաց իշխանէ՝ որդւոյ Վաչէի, որոյ և շինութեանն արձանագիր գտանի յորմն հարաւային աւանդատան անդր քան զբարաւոր դրանն՝ յայս օրինակ.*

«Շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ, ես՝ Քուրդ իշխանաց իշխան, որդի Մեծին Վաչէի և կենակից իմ Խորիշահ՝ դուստր Մարզպանա, շինեցաք զսուրբ Կաթուղիկէս յիշատակ հոգոց մերոց, ամենայն զարդուք զարդարեցաք. տուաք ընծայ զմեր գնած այգին ի Փարպի. Ա՝ Խուպան Աւշական, Ա այգի ի Կարբի, Ա՝ Շինական, Գ՝ Ողջատուն... ՈՂԳ (1244) թուիս»:

Գաւիթ սորա՝ այն է դրսին տաճարն, կառուցեալ է ի վերայ չորից մենաստանի սեանց և է վայելչաձև, այլ այժմ կայ իբր կիսաւեր: Զունի առանձին արձանագրութիւն ինչ շինութեան. և թերևս շինեաց զսա նոյն իշխանաց իշխանն Քուրդ ընդ ներսին տաճարին, զի յայն ժամանակսն առաւելապէս տեսանի շինութիւն գաւթաց կամ տաճարաց կից ընդ իսկական եկեղեցիսն, որպէս ի մենաստանսն Յոհանավանաց, Սաղմոսավանաց, Հառիճոյ վանաց և այլն, որք յայնմ դարու կառուցան:

Կից ի ներսին տաճարն ի հարաւոյ են փոքրիկ մատռունք կամ խրճիթք ի խարտեալ քարանց. ի վերայ դրան միոյ ի նոցանէ գտանի գրուած նորոգութեանն՝ ըստ այսմ.

---

[1] Աւանդութիւն է, թէ ի կառուցանել զայս տաճար ամփոփեցին ի հիման սեղանոյն սրբոյ զկող սրբոյն Յակոբայ առաքելոյ. ևս և զմասն ինչ յԱստուածընկալ խաչէն Քրիստոսի: Եւ վասն այնորիկ եկեղեցին՝ Աստուածընկալ Սուրբ Նշան, զոր այժմ անուանեն բնակիչքն Սուրբ Աստուածածին:

Եւս աւանդի, թէ երբեմն ոմն ի հայազգի բնակչաց տեղւոյս պատահեալ ումեմն այլազգւոյ ի ճանապարհի, հարցեալ եղև թէ ուստի գաս. տայ պատասխանի՝ **Ալլահ տիւշտիտէն**: Բարկանայ այլազգին ընդ նորալուր պատասխանին և հարկանէ զնա և խոժոռեալ դիմօք ստիպէ ասել զստոյգն. այլ նորա խորհրդածեալ ընդ միտս, թէ՝ Աստուածընկալ, Աստուած ընկաւ կամ անկաւ՝ նոյն է ասել. **Ալլահ տիւշտիւ**: Դարձեալ զնոյնն պատասխանէ. և այլազգւոյն ոչ ինչ հասկացեալ՝ թողու զնա ի բաց: Զի որպէս յայնժամ և այժմ ևս ոմանք ի ռամկաց ասեն՝ Աստուածընկել:

«Ի ՈԾԶ (1207) թվիս նորոգեցաւ Աստուածածինս և հաստատեցաք առաջնորդ սուրբ ուխտիս տէր Գրիգոր, Եղիազար, Վարդա., Յոհան, Հար. Ծերթա. Աստուածատ. Ըռստակ. Սարգ. Փա. և այլ միաբանացս, որ հաստատեցաք զուխտ միաբանութեան հոգոց մերոց... սուրբ եկե...»:

Ի թուականէ այսր գրուածոյ երևի թէ նախքան զշինութիւնն ի Քուրդ իշխանէ գոյր աստ եկեղեցի և միաբանութիւն կուսակրօն եղբարց: Ուստի և այն շինուած եղեալ է կրկին կառուցումն և ո՛չ նորապէս և առաջին հիմնարկութիւն:

Ի շրջակայս այսր տաճարի են աւերակք տանց և մեծամեծ խաչվիմօք շիրիմք, յորոց ոմանք անկեալք և բեկեալք և ոմանք կան տակաւին ի կանգուն. և միոյն կիսաբեկ վիմին գրուած՝ ըստ այսմ.

«Ի թվ. ՈԿԹ [1220], ի կամս Աստուծոյ, ես՝ Յոհանէս, որ ետո կանկնել սուրբ նշանս Աստուածատրո քահանա...»:

465. **Ափնագեղ**. *յաղագս ունելոյ սորա յերկուց կողմանց զերկուս փոքրիկ ձորակս բացեալս ի հեղեղաց. տունք՝ 44: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

Գիւղօրայք, որք անկանին յարևելեան կողմն գետոյն

466. **Ղարանլըղ** *գիւղ. հանդէպ Քասաղ գեղջ: Տունք՝ 19: Եկեղեցին յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի:*

467. **Հաճիպաղր**. *Տունք՝ 10: Եկեղեցի ո՛չ գոյ տակաւին:*

468. **Սամադարվիշ**. *Տունք՝ 14: Եկեղեցին անուամբ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի:*

469. **Իմրլու**. *Տունք՝ 18: Եկեղեցին յանուն Սրբոյն Յարութեան:*

470. **Գիւլապլի**. *Տունք՝ 24: Եկեղեցին անուամբ Սրբոյն Յոհաննու:*

471. **Տամճլու**. *Տունք՝ 29: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Այս գիւղ գտանի յարևելեան կողմն այսր դաշտի, յարևմտեան ստորոտի լերին, որ երկայնեալ ի հիւսիսոյ ընդ հարաւ, բաժանէ զայս գաւառ յերկուս մասունս. և է ի ծոցաւոր տեղւոջ, զի ի հիւսիսոյ և ի հարաւոյ են դիւրագնաց առապարք:*

Եկեղեցի այսր գեղջ ի սրբատաշ քարանց և է կրկին. միջին տաճարն բարձրակամար և անսիւն. ունի զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս հանդերձ վերնայարկօք, հանդէպ որոց յանկիւնսն արևմտեան են նոյնպէս աւանդատունք համակ ի կոփածոյ քարանց: Ունի և կաթուղիկէ, բայց քայքայեալ. տաճարն ի

ներքուստ յամբողջութեան, այլ արտաքուստ յորմոց նորա անկեալ կան ինչ ինչ քարինք, իսկ կաթուղիկէն փայտայարկ արարաւ ի նորոյ. ունի և տաճար արտաքին, այսինքն գաւիթ ի վերայ չորից միաստանի սեանց մեծ դրութեամբ քան զմիջինն, բայց կամարայարկն որ ի վերայ չորից սեանց իսպառ խոնարհեալ դնի առ տեղեաւն և ինչ ինչ տեղիք որմոց նորա. արձանագրութիւն չինութեան մեծագործ տաճարիս լեալ է ի վերայ մեծավէմ վերին բարաւորի դրան միջին տաճարի արտաքուստ, այլ յաղագս անպիտանութեան վիմին իսպառ անհետացեալ են տառքն բազմատող՝ յանձրևաց և հազիւ գտանին Ե կամ Զ տառք յամբողջութեան և միւսքն հիմնովին ոչնչացեալք. ուստի չեղև ընկալնուլ զծանօթութիւն ինչ՝ թէ ե՛րբ կամ յումմէ՛ ձեռնարկեալ, թէև ձևն կառուցման ցուցանէ լինել ի սկիզբն անդ ԺԳ-րդ դարու. գտանին երկու ևեթ դժուարընթերց արձանագիրք ի հարաւոյ կողմանէ արտաքուստ յորմն միջին տաճարի, որք են.

«Ի թուիս ՈԾԷ (1208): Կամաւ բարերարին Աստուծոյ, ես՝ Մխիթար ծառայ Քրիստոսի, միաբանեցա եկեղեցւոյս և զիմ հոգեպահուստ ետու սոցա և սպասաւորք սորա խոստացան պատարագել զՔրիստոս ի տարին՝ եղիականն շաբաթ աւրն. կատարիչք հրամանաց մերոց աւրհնեալ եղիցին. և խափանեն, մեղացն պարտական է առաջի Աստուծոյ, ամէն»:

Յարևելս այնր արձանագրի.

«Կամաւ Աստուծոյ, ես՝ Սոզկ Աշտարակեցի, ետու զիմ այգիս յԱստուածածինս. և սպասաւորք սորին հաստատեցին ի տարէն Ե [5] աւր պատարագել զՔրիստոս զԱստուածածնին շաբաթ աւր...»:

Ըստ մտաց արձանագրացս երևի թէ էր այս տեղի հռչակաւոր մենաստան ինչ. զի և շուրջ զտաճարաւն գտանին ընդարձակ հիմունք պարսպի նորա ի կրոյ և ի քարանց, որք վասն վաղեմնի աւերանացն անկեալ են ընդ չինուածովք տանցն բնակչաց. նոյնպէս և տեղիք սենեկացն կրօնաւորաց. և ըստ որում բնակիչքն ի նոր գաղթականաց՝ չունին զաւանդութիւն ինչ ի մասին այսր տաճարի և յատկացեալ անուանակոչութեան նորա կամ գեղջն:

Ունի այս մենաստան յարևելից զգերեզմանուտ հին աւուրց, որոյ մատուռն ի կոփածոյ քարանց աւերեալ կայ և միայն հիւսիսային որմն նորա գտանի ի կանգուն առանց ինչ գրուածոյ, նոյնպէս և տապանավէմքն: Մերձ յայս որմն ի հիւսիսոյ կառուցեալ կայ մեծ խաչվէմ ընտիր փորածու. շուրջ զորով և հիւսուած տաշածու քա-

բանց հանդերձ կրով. յարևմտեան ճակատի անդ՝ անդր քան զկատար փորածու խաչվիմին ի վերայ հիւսածու քարանցն գրի այս ինչ.

«ԶՄխիթարիչս Աւշականցի որթեվա... իշե»:

Յարևելից հարաւոյ գեղջս է ձորակ ինչ անտառուտ, զորմէ այլազգիք ասեն Մահրասա տէրէսի *(*Վարդապետի ձոր*):*

472. Մօլլաղասմ*. Տունք՝ 24: Եկեղեցին յանուն Սրբոցն Պետրոսի և Պողոսի:*

473. Ղարապուլաղ*. Տունք՝ 23: Եկեղեցին անուամբ Սրբուհւոյ Աստուածածնի: Եւ է այս գիւղ ի հիւսիսային ստորոտի լերինն Արայի:*

474. Սաչլու*. Տունք՝ 25: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

475. Ղարաջավէրան *կամ* Ղարաջօրան*. յստորոտի արևելեան հիւսիսոյ լերինն Արայի: Տունք ի Հայոց՝ 9: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Տունք ի տաճկաց՝ 29:*

476. Համամլու *և* էյվազ ալը*: Կրկին գիւղօրայք յարևմտեան ստորոտի լերին Արայի: Յառաջինն 9 տունք և յերկրորդին՝ 8: Երկոցունցն բնակիչք ևս ի տաճկաց:*

477. Բաբաքիշի*. Տունք՝ 9:* Քիրաճլու*. Տունք՝ 28:* Քեալաշ Քեանտ*. Տունք՝ 11:* Թղուտ*. Տունք՝ 11:* Քեալաշան *կամ* Քարաշամ*: Յարևմտեան եզեր ի քարափան ձորոյն Հրազդան գետոյ: Տունք՝ 7:*

478. Ի վեր անդր քան զԲաբաքիշի գիւղ հեռի իբրև կէս ժամ ի ծործորս լերինն է սիւնազարդ փառացի տաճար. շուրջ զորով և սենեակք կրօնաւորաց. այլ որպէս տաճարն մեծ մասամբ, նոյնպէս և սենեակքն խսպառ յաւերումեան կան. լեալ է և այս տեղի մենաստան հռչակաւոր և անուանի. և կոչեն այժմ այլազգիք զանուն տեղւոյս Ասլը-Քիլիսէ*, ևս՝* Այըլը*, զի գոլով տեղւոյն անտառուտ՝ գտանին և արջք:*

Արձանագիր շինութեան տաճարիս գտաւ յորմն նորա հիւսիսային ի ներքուստ ի բարձրութեան անդ և էր բազմատող, այլ գրեա՛թէ բոլորովին եղծեալ էր յայլազգի ձեռաց և հազիւ նշմարեցաւ ի սկսուածի անդ թուականն և անուն կառուցանողի այնր. «Թվ. ՈԿ (1211). ես՝ Մամախաթուն, ամուսին Վաչէի, դուստր...»: Գտան և ինչ ինչ արձանագիրք նուիրատուաց յորմունսն և ի կամարսն, որք ո՛չ յայտնէին զհարկաւոր ինչ պարագայս, յորոց մին ահա ըստ այսմ. «Կամաւն Աստուծոյ, ես՝ Ինկիկս, միաբանեցա Սուրբ Աստուածածնիս և տվի սուրբ նշան և այլ արդիւն. և սպասաւորք սրբոցս հաստատեցին ի տարին Բ աւր ժամ...»:

479. Մենաստան մի ևս գտանի յարևելեան լանջի անդ լերին՝ յորոյ ստորոտի է գիւղն **Թղուտ** *անուանեալ և խորաձորն Հրազդան գետոյ. և հեռի է ի գեղջէ անտի ի վեր ընդ լեառն աւելի քան զքառորդ մի ժամու. տաճարն փոքրիկ խաչաձև ի կարմրերանգ կակուղ քարանց՝ որոյ հիւսիսային որմն ևեթ գտանի ի կանգուն, քանզի միւս փլուածքն ասեն եղեալ ի շարժէն դիպելոյ յամին 1827:*

Զգտաւ ամենևին նշմարանք ինչ արձանագրութեան ո՛չ յամբողջ որմն նորա և ո՛չ յաւերածսն. գտանին և քանի ինչ աւերակք տանց ի հարաւոյ և յարևմտից տաճարին և անհեթեթ վէմ մի մեծ ի հիւսիսոյ մերձ յայն: Հայեցեալ յանուանակոչութիւն գեղջն **Թղուտ** *կամ լաւ ևս ասել ըստ պատմագրաց* **Թեղենիս**, *վասն որոյ կարելի է ասել վասն տեղւոյս թէ է մենաստանն Թեղենեաց, զորմէ յիշատակեն պատմիչք և գնեն ի Նիգ գաւառի, զի յանուանէ գեղջն կոչի և մենաստանն: Ի մենաստանէ աստի էր և Կիրակոս գծծակերպ գիտնականն, որ վարուք առաւել քան թէ բանիւք վարդապետէր, որ բնակէր յոլովակի յանապատին, որ Թեղենիսն կոչի ի Նիգ գաւառի, առ հօր Երեմիայի ճգնաւորի Քրիստոսի և ընկերակցի իմոյ» (Ասողիկ, Գ, Թ գլ., ի Ժ–րդ դարուն): Վանահայր տեղւոյս Տուրքիկ անուն ըստ Կիրակոսի Գանձակեցւոյ ի ԺԲ–րդ դարուն. «Որ բարիոք կարգաւորեաց զվանքն (Թեղենիս)՝ զամենայն ինչ հասարակաց լինել և առանձին ո՛չ ինչ ստանալ»:*

480. **Արզաքան** *գիւղ, որ գտանի ի ծոցաւոր վայրի յարևելեան ստորոտի լերին բնակեալ ի Հայոց և ի տաճկաց. տունք Հայոց՝ 34: Եկեղեցի նոցա է կրկին՝ մին ի հիւսիսոյ արևելից յեզեր բնակութեանց, որ լեալ է յառաջագոյն թերևս մատուռն գերեզմանոցաց, այլ զկնի աւերութեան խարտեալ քարամբ շինուածոյ նորին՝ հասարակ քարամբք և փայտիւք ծածկեալ զայն բնակչացն՝ աղօթէին ի նմա և կոչի յանուն սրբոյն Գէորգայ, շուրջ զորով է և գերեզմանուտ. իսկ միւսն ի գիւղամէջ անդր՝ զոր նորոգ շինեցին բնակիչքն սակս փոքրկութեան առաջնոյն և է յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի. տունք տաճկաց յայս գիւղ 15:*

481. **Վանք Արզաքանայ***: Այսպէս անուանի այժմ, այլ հին աւանդութիւն բնակչացն կոչէ զայն* **Սուրբ Աստուածածին Նեղուսի**, *զի ընդ մէջ մենաստանին և գեղջն գտանին աւերակք տանց և անուանեն զայն* **Նեղուս**. *և ասեն՝ լեալ է անդ յառաջն բնակութիւն ամուսնաւոր գերդաստանաց և գիւղ իսկ յայն անուն. յոր անուն կոչի և այն մենաստան. և է հեռի յԱրզաքանայ ի վեր ընդ ծործոր լերինն աւելի քան զքառորդ մի ժամու, որոյ եկեղեցին է կրկին՝ մի-*

ջին և արտաքին. միջին տաճարն փոքր և անսիւն. ունի զմի սեղան սրբազան խորհրդոյն, զերկուս փոքրիկ աւանդատունս և զմի դուռն յարևմտից ընդ արտաքին տաճարաւն և է ի միջավայր տանեացն կաթուղիկէ փոքրիկ. իսկ արտաքին տաճարն կառուցեալ ի վերայ չորից միաստանի սեանց վայելչաձև կամարայարկ՝ ընդարձակ քան զմիջին տաճարն: Յերկոսին անկիւնսն արևելեան՝ յաւելորդսն անդ քան զմիջին տաճարին շինուած են կրկնայարկ փոքրիկ մատրունք տեղիք պատարագելոյ. միակ դուռն այսր արտաքին տաճարի յանկեան արևմտեան հարաւոյ. և արտաքին կամար նորա անկիւնաւոր պալարուն ընդ որմն ի ներքս կարի չքնաղակոփ կերտուած, յորոյ վերայ ընդ անկիւնաւոր կորնթարթսն գտանի քանի ինչ բառ միատող ամենամեծ տառիւք՝ ըստ այսմ.

«Աստուածային շնորհիւն ի յաշխա... ակա ի որ թէ». վերջին երկու բառքն, որպէս նկատէր, վնասեալ ի շարժէ՝ յայտնէր և ոչինչ:

Գտան թէպէտ ինչ ինչ գրուածք յորմունսն արտաքին տաճարի, այլ այն ամենայն յանուն նուիրատուաց. և ո՛չ յանուն կառուցանողի զայս և այնք ևս դժուարընթերց. յորոց մին ի վերայ վերին բարաւորի դրան միջին տաճարի՝ ըստ այսմ.

«Յուսովն Աստուծոյ, ես՝ Հայրապետ, միաբանեցայ սուրբ ուխտիս և ետու ճ... գինն սոքա շնորհեցին Ի աւր. Ա ժամ ինձ Գորգ... թվ. ՉԻ (1271)»:

Բնակութիւնք կամ խրճիթք կրօնաւորացն իսպառ աւերեալք. յարևմտից տաճարիս իբրև քարընկեց մի ի բարձր դիրս է աւերակ գեղեցկաշէն մատրան միոյ, որոյ ի շրջակայս են շիրիմք ի վաղ ժամանակաց, որոց խաչվէմք անկեալ դնին առ տեղեաւն: Ի վերայ միոյն գտաւ գրուած այսպիսի. «Կամակցութեամբ սուրբ և արժանաւոր վարդապետի Մարգարէի կանկնեցի...»:

482. Տելիչէր*: Գիւղօրայք կրկին նովին անուամբ՝ Վերին և Ներքին անուանեալք, յորս տունք բնակեալք ի տաճկաց են 17: Քանզի այս ձոր՝ որոյ յստորին ծործորի է գիւղն Արզաքան և մենաստան նորա, երկայնեալ է ընդ հիւսիս իբրև ժամս երկուս և երկոքին կողմանքն են անտառուտ առապարք. ի վերին ծայրի ձորոյն ի բարձրաւանդակի երևի հանքն կապարոյ, ուր ասեն բնակիչքն թէ ի ժամանակս խանութեան Հիւսէյին Սարտարի աշխատեցան ոմանք յոյնք ի Վրացտանէ: Յարևմտից այսր հանքի ի միւս անտառուտ առապարի ասեն լինել միւս ևս տեղւոյ մենաստանի, այլ սակս դժուարութեան ճանապարհին չկարողացաք հասանել անդր և ստորագրել:*

483. Յարևելից հիւսիսոյ **Ներքին Տէլիէէր** *գեղջ է ծործոր ինչ, զոր անուանեն* **Չորուտ**, *յորում ի բարձրութեան անդ ի կուրծս հարաւային առապարի ձորակին է աւերակ տեղի մենաստանի ի վայելուչ դրութեան շրջապատեալ անտառօք, որոյ և ջուրն ի վերուստ անտի յաղբերց՝ մաքուր, մարսողական և ընթանայ խոխոջանօք ընդ առուակ ինչ առ մենաստանաւն. են անդէն և պտղատու ծառք՝ յորոց և քաղեցաք զսալոր ի վերջին աւուրս օգոստոսի այսր ամի 1842:*

Եկեղեցի մենաստանին մեծ մասամբ կործանեալ է՝ և գուցէ յերկրաշարժութենէ. և կայ ի կանգուն միայն որմն հիւսիսային. լեալ է միջակ մեծութեամբ միով սեղանաւ և երկու փոքր աւանդատամբք: Յորմն այն ի ներքուստ մերձ ի դուռն աւանդատան այնր կողման գտան սոյն արձանագիրք.

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Մեսրոբ երէց, գնեցի զՇատլոյսենց այգոյն չարէքն զանձրեւին բաժինն ի Խ դահեկան և ետու Սուրբ Աստուածածնիս. և սպասաւորքս ետուն Բ պատարագ ի տարւոջն. ով խափանէ, իմ մեղացն պարտա...»:

Ի ներքոյ նորին.

«Կամաւն Աստուծոյ ես՝ Քահանայապետս և Դասապետս միաբանեցաք սուրբ ուխտիս... Աշտարա... ու այուն դրաւք գնծանս չինեցաք և այլ ինչս տվաք. և միաբանքս հաստատեցին ի տարին Բ պատարագ մեզ. ի թուիս ՈԾԶ (1207)»:

Ի ներքոյ նորին.

«Կամաւն Աստուծոյ մեղաւորս Սարգիս վարդապետ, որ առաջնորդ եղէ և չինեցի զՍուրբ Աստուածածինս և ետու զդրած այգին և հնձան ի Շէնգաւիթ և յէր. և զիմ բաժին այգին ի ձիթէնիա և հնձան... չալ...ն զիմ բաժինն. հայրս և եղբարքս հաստատեցին ի տարին Ժ աւր ժամ. ով խափանէ...»:

Յարձանագրութեան աստ նշանակի թէ՝ «Չինեցի զՍուրբ Աստուածածինս»: Այն չինութիւն ո՛չ նշանակէ զայն ի հիմանէ, այլ զնորոգութիւն ինչ: Ի փլեալ քարինսն որմոց բազումս աշխատեցաք գտանել զայլ ինչ գրուած յայտարար անուան կառուցանողի սորին և կամ մենաստանին, չեղև հնար:

Այս ձոր իցէ թերևս անուանեալն **Ղորաձոր** *ի նահանգին Բջնոյ ըստ յառաջ բերելոյ Հին Հայաստանի (թղթա. 453). և յիրաւի գտանի մերձ ի Բջնի յարևմտից նորա. և ունի ջուր առատ ժողովեալ յաղբերականց ի ծործորաց եղելոց յինքեանս, որ ընթացեալ ընդ ձորն յարևելս հարաւոյ և անցեալ զառաջեաւ Արզաքան գեղջ՝ անկանի ի Հրազդան գետ. ուր է կամուրջ փայտեայ ի վերայ գետոյն: Յայսմ*

ձորի գտանին օգտակար բոյսք և ընտիր ծաղիկք, յորս կարի հոտաւէտ ծաղիկն **բրաբիոն**, *զոր կոչեն* **Ծաղիկ Մարիամու**: *Եւ բոյսն երկարացօղուն իբրև երկու կանգուն՝ որ տայ ի ծայրսն գնդակաձև ծաղիկ: Կոչեն սմա այլազգական անուն* **Ղանթափ**: *Եւ է ասեն փորձեալ զեղ սաթլճամ կոչեցեալ տկարութեանն, զի ի ծաղկանց անտի առեալ և եռացուցեալ ի ջուր՝ տան ըմպել հիւանդին, որ զկնի քրտնաբեր լինելոյն մաքրէ և զկիտուածս մեռեալ արեանն և առողջացուցանէ զախտակիրն փութով:*

484. **Բջնի**: *Ի վեր անդր ընդ ձորն Հրազդան գետոյ հեռի յԱրզաքանայ իբրև ժամ մի ի մէջ ձորոյն, յարևմտեան եզեր գետոյն հնագոյն ամրոց նորա կամ բերդն է ոստ ինչ բնական դրութեամբ, ի հարաւոյ և յարևելից ուղղաբերձ քարակտուր անմատչելի: Յարևմտից և ի հիւսիսոյ փոքր ինչ ստորոտովք և հնարաւոր ընթացից մարդոյ, այլ այնք ևս ամրացեալ բարձրաբերձ պարսպօք և աշտարակօք յորձաքար վիմաց և ի կրոյ և մուտ ելից նորա յարևմտից. ինչ ինչ տեղիք այսց պարսպաց քայքայեալ են յաղագս հին աւուրց գոլոյ շինութեանն: Գլուխ կամ կատար նորա տափարակ և բաւականաչափ ընդարձակ. ուր տեսանին աւերակք հին շինուածոց՝ յորոց երկուք ի կոփածոյ քարանց և ի կրոյ, թերևս տաճարք՝ տեղիք աղօթից փոքր դրութեամբ. յաղագս աւերանացն չգտաւ ի նոսա գրուած ինչ:*

Քաղաք ըստ հնոց, կամ գիւղն ըստ արդեանս անմիջապէս յարևմտից ամրոցին և ի հիւսիսոյ գետոյն՝ է բաւականաչափ տարածութիւն ի խորաձորի անդ երկայնեալ ընդ գետն և ծոցաւորեալ յստորոտի անդ լերինն. ի վաղեմնի շինուածոց սորա գտանին քանի փոքրիկ տաճարք խոնարհեալք. իսկ աւագ եկեղեցին աւելի ընդ հիւսիսակողմն շինուց տանց կայ յամբողջութեան և է կառուցումն նորա հաստատուն ի սրբատաշ մեծամեծ քարանց. միջին երկարութիւն նորա ի ճակատէ բեմին ցդուռն արևմտեան 21 քայլ հասարակ և լայնութիւնն 17. և է առանց սեան. բայց յերկուց կողմանց կից ընդ որմունսն հարաւային և հիւսիսոյ՝ թողլով զմեծ բաժին ընդ սեղանն, բարձրացուցեալ են իբրև դաղ և կէս լայնութեամբ ի մեծամեծ վիմաց ցսալաթոռսն՝ յորոց վերայ ձգեալ բարձր հաստատուն կամար, կառուցեալ են զկաթուղիկէն ի միջավայր տանեաց այրս արևելեան բաժնի և է ընտիր տաճար փառացի. միակ սեղան նորա ընդարձակակամար, ունի և յերկուս կողմանս զերկուս աւանդատունս և զերկուս դրունս. արևմտեանն հիւսեալ է այժմ հասարակ քարամբք և ընդ հարաւայինն մուտևել առնեն: Սալքարինք տա-

նեացն մեծ մասամբ խախտեալ են, բայց հոգևոր ատեանն Երևանայ մտադրեալ է տալ նորոգել զայն:

Արձանագրութիւնք յորմունս այսր տաճարի են յետագայքդ. յորմն հարաւային արտաքուստ:

Առաջին արձանագիր համարեալ չինութեանն գտանի յարևելս դրանն երկարատող՝ ըստ այսմ.

«Թ. ՆԶ (1031): Շնորհիւն Աստուծոյ այս հրամանք է իմ տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի և Սմբատա Շահանշահի, որ հաստատեաց... ոպոսարան ի Բջնի քաղաք զՍուրբ Աստուածածինս. հիմնարկել կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան՝ որդի Վասակա, և տուաւ վիճակ ի սուրբ Աստուածածինս ի Փոշեհանից մինչև ի Նիգ (գաւառ) և դիւա... ուն... զաւակս և յԱղստեւ. և տվաք գաւազան և սուրբ նշան և աթոռ: Արդ՝ եթէ ոք խափանել ջանա զաթոռս կամ յայլ տեղիս փոխել կամ զհողն յապիշտակել կամ զաւանդ եկեղեցոյս գողանալ՝ թէ յեպիսկոպոսաց կամ յիշխանաց կամ ով որ հակառակի նզովեսցի յԱստուծոյ և ի մէնջ և ի ՅԺԸ հայրա... ատաքի ջնջեսցի յիշատակ նորա յերկրէ և անլոյծ կապեսցի: Եւ արդ՝ այս է ընական և առաջին սահմանահատ վիճակ և աթ... հաստատեցաք արձանագրով և շրջաբերականով զսահմանահատ վիճակի սորայ. որ է արեւելից ի Ծար գետո մինչև ի գետն Ախուբան (թերևս Ախուրեան), յԱնւոյ և ի հիւսիսային պետս խո... և հատանել ջանա յայսմանէ ի միջոց կամ յեզերաց, աւելի կամ մասն ինչ զվերասացեալ զանէծս և զպատիժս կրեսցէ աստ և ի հանդերձելումն, ամէն»:

Ի վերայ մեծավէմ բարաւորի դրանն հարաւային գտանի սոյն արձանագիր.

«Թվ. ՈԾԸ (1209):

Յաշխարհակալութեան քաջաց և յաղթողաց, մեծ շահանշահաց Զաքարէի և Իւանէի՝ որդւոց Սարգսի, յեպիսկոպոսութեան Վրթանեսի, ես՝ մեղուցեալ ծառայ Աստուծոյ Վահանս... չինեցի Իշխանավանից մեծ եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնին: Եւ զայս Աստուածածինս նորոգեցի սալով, որ ի ընէ չէր սալած: Եւ հաստատեցին ի տարին Ե աւր ժամ ի տաւնի սուրբ Ծննդեանն վասն փրկութեան հոգոյ իմոյ. ով խափանէ զպատարագն... մեղացն պարտական է առաջի Քրիստոսի»:

Ի վեր քան զկամար սոյն հարաւային դրան գրի այս ինչ.

«Թվիս Հայոց Զ (1251): Ազդմամբ և հրամանաւ Հոգոյն Սրբոյ և Կոստանդեայ կաթուղիկոսի հաստատեցաք զխախտեալ կանոնքս ե... ստ ծառայքս Քրիստոսի տէր Վանական և տէր Գրիգոր ողորմութեամբն սր... ոսք Բջնոյ և ոստ. յիշխանութեան մեծին Շահնշահի և որոյ... զի յայսմհետէ մինչև ի կատարած չունի կաշառաւք ձեռնադր... իչք հրամանացս աւրհնի յԱստուծոյ»:

Ի վեր անդր քան զվերոյգրեալն.

«Յուսովն անմահին Աստուծոյ ես՝ Զաքարէ որդի Սահիպ Դիվանին և պարոն Խօշաքին, թոռն աթաբակ Ավագին՝ որդոյ աթաբակ Իվանէի վասն մեր յերկար կենդանութեան և փրկութեան հոգոյ իմոյ ի վեր կալայ որ ի Բջնի այլ մարդոյ տիրութիւն չէլնի և թողի զամէն հարկ՝ զամիրայ հակն, զհարսանէ հակ. զկովայ համարն, զկալաթաղարն, զսայլիսապն, զմահկանէն և աւտարականն քան զդաղմէն այլ իրք չտա. յաղման չանեն, որ յայսմհետէ մինչև յաւիտեան հաստատուն կացէ արձանս իմ. եթէ ոք խափանել ջանայ յիմոց կամ յիմ զաւակաց կամ յաւտարաց, իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ»:

Ի վեր անդր քան զդոյն վերոգրեալ ի ներքոյ լուսանցոյց պատուհանին.

«Թվ. ՊԷ (1358):

Ի զարմէ երկուց հարազատաց քաջաց և յաղթողաց ամիրսպասալար Զաքարիայի և աթաբակ Իվանէի, ես՝ աթաբակ Շահինշահ որդի աթաբակ Զազայն ի ժամանակս բռնակալութեան մէլիք Աշրաֆին զմեր հայրենիքս զԲջնի քաղաք յիսնէ հուքմով խլեր էր՝ զիր ճորտերին էսիր կացուցեր և Հաճիբէկ նիաղեցավ ու զքաղաքս ի հիմանց քակեց ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զեկեղեցիքս տապալեց ու զերկիրս ի չորս դիաց անբնակ արար ու զքրիստոնէք անխնայ կոտորեաց. մեք յԱստուած ապաւինելով զմեր սալահրի... հեծելին գլուխ կացուցաք, որ ի վերա նստաւ բազում աշխատութեամբ: Զիր ապրանքն նախ նա բաշխէր, որ Աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր ձեռս բերեց վասն փրկութեան հոգւոյ և յերկար կենդանութեանս մերոյ կրկին նորոգեցաք զեկեղեցիս և զբունիաթ (բնական) արձանս վերստին հաստատեցաք զվիճակ, զվանք, զգեղ, զսարի, զդաշտի հայրենիք բէց ու չինական ու գործաւոր զինչ եծ... Աստուածածնա ծառ... ազատ և թարխան արարին հարկէ և ի ծառայութենէ. տէր Վանական և սպասաւորքս

խոստացան մեզ Յակոբա տի (տաւնի) գիշերապաշտաւն առնեն. ով ոք զմեր հաստատած արձանս խափանել ջանայ դատի յԱստուծոյ և մեր մեղացն պարտական եղիցի»:

Ի ներքս եկեղեցւոյն յորմն հարաւային յարևմուտս դրանն այնր կողման.

«Շնորհաւք նախախնամող Սուրբ Հոգոյն, ես՝ Քոչաքշեր և ամուսին իմ Խորիշահ միաբանեցաք Սուրբ Աստուածածնիս և տուաք արդիւնք ի հալալ յընչից մերոց. և սպասաւորք սորա տէր յվե, տէր սգ, կարգեցին ի տարին Դ աւր պատարագել զՔրիստոս ի տաւնի Ծննդեանն. Բ՝ Քոչաքշերին առնեն և Բ՝ Խորիշահին, ամէն: ՉԾԵ (1306)»:

Յարևմտակողմն դրան ի ներքս կարի դժուարընթերց.

«ՉԾԲ [1303]:

Կամաւն ամենակալին Աստուծոյ, ես՝ Գրիգոր իշխան, որդի ... թոռն Դուփին...»:

Գտանի և բազմատող արձանագիր մի յորմն հիւսիսային ի ներքս հանդէպ դրանն հարաւային. այլ է ըստ միևնոյն մտաց հան-դերձ նոյն թուականաւ մեծի արձանագրութեանն եղելոյ ի ներքոյ լուսանցոյց պատուհանին յորմն հարաւային արտաքուստ զոր ի վեր անդր օրինակեցաք. վասն որոյ երկրորդել աստէն զնոյն աւելորդ համարեցաք: Եւ էր սկսուած նորա ըստ այսմ. «Կամաւ անմահին Աստուծոյ և ողորմութեամբ իմ պարոն Շահանշահի, ես՝ Ամիրզէսի, ի ժամանակիս բռնակալութեան մէլիք Աշրափին և Հաճիպէկին ևն: Երեմիա գրիչ»:

Ի հարաւոյ փառացի տաճարիս կից ընդ որմն յարևելս դրան կառուցեալ են յետինք զմատուռն մի փոքրիկ. ուստի երրորդ մասն արձանագրութեան շինութեան մեծի տաճարիս, զոր ի վերոյ օրի-նակեցաք, մնացեալ է ընդ որմով մատրանն. բայց կառուցանողն այնր ի վեր առեալ զայն մասն արձանագրին՝ ըստ յարմարութեան տողիցն փորագրել տուեալ էր ի վերայ արևմտեան որմոյ մատրանն, յորմէ օրինակեցաք մեք ամբողջապէս բացի մասնաւոր եղծուածոցն: Համառօտ արձանագիր շինութեան մատրանս գոլով ի քուէս (սա-չախ) անդ շինուածոյն և անկեալ ինչ ինչ քարանց և անհետացեալ՝ զթուականն ևեթ ունէր ամբողջ, որ է ՉԻԱ (1272):

Այս փառացի տաճար ունի շուրջ զիւրև պարիսպ ընդարձակ ի հասարակ կոփածոյ քարանց. արքեպիսկոպոսարանն, որ կայ արդէն

յաւերութեան, է յարևելից եկեղեցւոյն առ պարսպաւն, իսկ խոհանոցն և շտեմարանք յարևմտից եկեղեցւոյն, ուր գտանին տակաւին քանի ինչ քարայարկ շինուածք. և մեծ դուռն պարսպին ի հարաւոյ հանդէպ այնր կողման դրան տաճարին, որոյ սեամբքն և վերին բարաւորն ի մեծահատոր սրբատաշ քարանց. յարևելս տաճարին ի մէջ պարսպին են չորս մեծամեծ խաչքարինք հանդերձ պատուանդանօք, յորս ի պատուանդանի միոյն գրուած քանի տող, բայց առաջին տողն ևեթ ամբողջ ըստ այսմ. «Ի թուիս ի ՈԿԸ (1219). մեք աւշիրա... ջիք ի Քրիստոս»: Յայսմ տաճարի աղօթեն հայազգի բնակիչք տեղւոյս, որք են տունք 29. և տունք այլազգի մահմէտականաց 30: Է և աստ փայտեայ կամուրջ ի վերայ գետոյն ընդ որ անցեալ բնակչացն հերկեն զերկիր և սերմանեն ի սահմանին Վարաժնունեաց, ուր լինի ցորեան ընտիր:

Յարևելից ամրոցին փոքր ինչ բացակայ է լեզուակ իմն առապարի, յորոյ վերայ է գերեզմանուտ և ի ծայրացեալ վիմուտ սպառուածի նորա կառուցեալ է մատուռն փոքրիկ հանդերձ կաթուղիկէիւ, այլ չգտանի գրուած ինչ ոչ յորմունս և ոչ ի տապանավէմսն:

Արքեպիսկոպոսունք առաջնորդարանին[1] *Բջնոյ, որք գտանին յինչ ինչ գրուածս.*

485. Եփրեմ եպիսկոպոս. առ որ գրեաց թուղթ Գրիգոր Մագիստրոս Վասակեան բանասիրելով վասն նռանց:

Վրթանէս եպիսկոպոս, որ գտաւ ի ժողովն Լօռւոյ առ Զաքարիա Սպասալարիւ յամի 1205 և յիշատակի յարձանագիրն ի վերոյ յամի 1209:

Գրիգոր եպիսկոպոս, որ եղև մի յայնց, որք ընկալան զկանոնադրութիւն և զկոնդակ Կոստանդին կաթուղիկոսի Սսոյ, յամի 1246, ըստ Զամչեան հայր Միքայէլի (հատոր Գ, համար 229). սա յիշատակի ի վերոյ յարձանագիրն ընդ տէր Վանականայ յամի 1251. և այն արձանագիր է վասն կանոնադրութեանն յիշեալ կաթուղիկոսի:

Յովհաննէս եպիսկոպոս, զոր յիշատակէ հայր Միքայէլ Զամչեան (հատոր Գ, համար 291):

Տէր Յովհաննէս և տէր Սարգիս. ի վեր անդր յարձանագիրն յամին 1306:

---

[1] Այս մենաստան զկնի լինելոյն արքեպիսկոպոսարան ինքեան յատկացեալ վիճակին, եղև և մի ի չորից մեծամեծ աթոռոցն. առանց որոց արքեպիսկոպոսացն չլինէր ընտրութիւն կամ օծումն կաթուղիկոսի ըստ կանոնադրութեանն եղելոյ յԲ ժողովն ի Սեաւ լերին յաւուրս Գրիգորի Պահլաւունւոյ՝ յամի 1114 (Պատ. Հայոց, հատոր Գ, թղթ. 37):

Տէր Վանական. ևս ի վերոյ յարձանագիրն յամին 1358: Զսմանէ ասէ թերևս Թովմա Մեծոփեցի, թէ յառնուլ Բջնոյ ի թագաւորէն Ազախու թաթարաց, սպանաւ եպիսկոպոս գաւառին տէր Վանական:

Վանակ եպիսկոպոս, զոր սպանին զօրք Լանկթամուրայ առնլով զԲջնի և կոտորելով չարաչար զբնակիչսն յամին 1387:

Յովհաննէս եպիսկոպոս, որ գտաւ ի ժողովն ընտրութեան Կիրակոսի Վիրապեցւոյ յէջմիածին յամին 1441:

Փիլիպպոս ի Քանաքեռ գեղջէ յաշակերտաց Մովսէսի Սիւնեցւոյ, ձեռնադրեալ ի նմանէ յեպիսկոպոսութիւն՝ գայ այսր և առնէ զբազում նորոգութիւնս:

Մովսէս վարդապետ փիլիսոփայ կոչեցեալ, առաքի յառաջնորդութիւն տեղւոյս ի Փիլիպպոսէ Հաղբակեցւոյ. երկոքին սոքա յիշատակին ի գիրս Զաքարիա Սարկաւագի:

Մեսրովբ վարդապետ:

Դաւիթ վարդապետ:

Յովհաննէս վարդապետ:

Սիմէոն վարդապետ:

Կարապետ վարդապետ: Հնգեքին այսոքիկ ևս յիշատակեալք ի Սիմէոն կաթուղիկոսէ Երևանցւոյ ի Ջամբռ անուանեալ մատենին:

486. Ի Բջնոյ աստի ի վեր ընդ գետն իբրև ժամ մի է գիւղն Սօլակ կոչեցեալ յարևելեան սարահարթի անդ ձորոյն. և ձորամիջի անդ է ևս կամուրջ փայտեայ. հանդէպ այսր գեղջ յարևմտեան կողմն գետոյն ի բարձրութեան անդ ի ծործորս լերինն կարի դժուարին ելիւք ի տափարակ դիրս է տաճար փոքրիկ ի սրբատաշ ամրակուռ քարանց և շուրջ զնովաւ աւերակք սենեկաց. չգտաւ թուական շինութեանն, այլ երկու արձանագիրք յանուն նուիրատուաց:

Առաջին արձանն ի հիւսիսային հիման կամարի միակ փոքրիկ սեղանոյն, ըստ այսմ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես՝ Աստուածատուր, ի հալալ արդեանց ստացայ զմեն... ատուռն եկեղեցւոյս և առաջնորդ ուխտ բան... հաստատեցին ի տարին Բ պատարագ զտաւն սուրբ Յակոբայ. ով չառնէ, դատի յԱստուծոյ»:

Երկրորդ արձանն յորմն արևմտեան ի ներքուստ ի հիւսիսակողմն դրան.

«Ես Յովանէս ծառա Քրիստոսի, ետու զիմ հոգոյ արդիւնս քան զոր ստա... ի յարդար վաստակոց ի Սուրբ Աստուածածինս ի տափակ մայրոյ և սպասաւորք սուրբ եկեղեցւոյս խոստացան ի տար-

ւոջն Բ... Ա. Աստուածածնին տաւնին և Ա սուրբ Սարգսին: Որ խա-փանէ դատի յԱստուծոյ և իմ մեղացն պարտական է: Ա մատուռն Յովհանիսի է: Ի Թ. ՈՀԳ (1224):

Այս տեղի է Մայրոյ *վանք կոչեցեալն ի գիրս, զորմէ գրեն պատ-միչք՝ մերձ ի Բջնի ի ծործորս լերինն ըստ Զ Յովհաննու կաթուղիկո-սի, յոր և բնակեցաւ ծերունին Յոհան յաւուրս կաթուղիկոսութեանն Եզրի. և նա ինքն Եզր յաղագս ատելութեանն առ Յոհան՝ փոխեաց զանուն այսր մենաստանի և կոչեաց* Մայրոգոմ *և զՅոհան Մայրոգո-մեցի: Այս ծործոր և առապարքն շրջապատեալ զմենաստանաւն են անտառուտ. չգտաւ ջուր ի մենաստանի աստ, զի հեղեղատն ցամա-քեալ էր և էին աւուրք օգոստոսի այնինչ եղաք անդր և չէ՛ր աղբիւր անդէն. և գուցէ յառաջագոյն եղեալ և պատճառաւ իւիք ցամաքեալ. և էր տեղին թէպէտ դժուարաելք, բայց յաղագս բարձրութեանն ու-նէր զվայելչանկատ հայեցուածս ընդ լերինսն Գեղամայ, ընդ բովան-դակ գաւառն Կոտայից և կիսով աւելի ընդ Վարաժնունիսն:*

Զգտաւ յատկացեալ ինչ նշանօք մենաստանն յանուն գեղջն կո-չեցեալ Եղիպատրուշ*. և թերևս իցէ մին ի մենաստանացն վերոյիշե-լոց եղելոցն ի գիւղօրայս (471, 478, 483):*

487. Քաղսի *գիւղ՝ տունք 51: Եկեղեցին անուամբ Սուրբ Աստուա-ծածնի: Հեռի է ի Մայրոյ վանաց ընդ գետն ի վեր իբրև ժամ մի՝ ի ձորամիջի անդ գետոյն յարևմտակողմն նորա. եկեղեցին չինեալ ի վաղ ժամանակաց ի տաշածու քարանց, այլ տանիք նորա և մասնա-ւորապէս որմունքն աւերեալ գոլով՝ ծածկեալ են փայտիւք: Փոքր ինչ ի վեր քան զգիւղն է կամուրջ փայտեայ ի վերայ գետոյն՝ ընդ որ անց և դարձ առնեն բնակիչքն, մանաւանդ ի ժամանակս ամառան՝ յորում միջոցի գտանի նահանգական ատեանն ի Կեչառուս:*

488. Աղփարայ *գիւղ՝ տունք 29: Եկեղեցին յանուն սրբոյն Ստե-փաննոսի: Անկանի այս գիւղ յարևմտեան կողմն գետոյն յարևելեան լանջի անդ լերին՝ հեռի ի Քաղսի գեղջէ ընդ հիւսիս իբրև ժամ մի:*

489. Մաքրավանք*. գիւղ, յորում բնակին յազգէ Հայոց՝ տունք 28: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Կոչումն գեղջս է յա-նուանէ եկեղեցւոյն, որ կառուցեալ է յորձաքար վիմաց բարձրակա-մար և անսիւն, որոյ և զտեղի կործանեալ կաթուղիկէին ծածկեալ են փայտիւք: Իսկ այլազգիք տան զանուն գեղջս և եկեղեցւոյն* Էշէք Ղուտուրան*, քանզի աւանդութիւն է թէ երբեմն դիպեալ աստ ու-րումն շահ արքայի Պարսից և այն ինչ կամեցեալ նորա տալ քակել զայս եկեղեցի և քարամբք նորա կառուցեալ ի վերայ Հրազդան գե-տոյն զկամուրջ, պատահի կատաղութեան իմիք և այնու արգելեալ*

լինի քակտումն եկեղեցւոյն, որոյ աղագաւ անուանի յայնժամ **Շահ Ղուտուրան**. *իսկ մահմէտականք վասն բառնալոյ յինքեանց զայս նախատինս՝ փոխեն զայն և անուանեն մինչև ցայժմ* **Էշէք Ղուտուրան**, *որ ըստ իմիք աւելի ևս նախատինք է: Տեղի եկեղեցւոյս և գեղջս հեռի յեկեղեցեացն Կեչառուաց աւելի քան զկէս ժամ ընդ հարաւ ի վայելուչ վայրի յարևմտակողմն գետոյն:*

Եկեղեցիք կամ մենաստան Կեչառուաց

490. Այս մենաստան կոչեցեալ **Կեչառուս** *կամ* **Կեչառուաց**՝ *հեռի ի Մաքրավանքայ ընդ հիւսիս իբրև կէս ժամ՝ բաժանեալ յիրերաց յառապարէ անտի եղելոյ ի մէջ երկոցունցն. և է հանդէպ Ռնտամալ գեղջն Վարաժնունեաց յարևմտակողմն գետոյն հեռի իբրև քառորդ ժամու՝ ունելով զՍևան կղզի ուղղակի ընդ արևելս հեռաւորութեամբ չորից ժամուց և զԵրևան քաղաք ութն ժամուց՝ ընդ հարաւ: Եւ է վայելուչ վայրի շրջապատեալ անտառախիտ լերամբք յերից կողմանց ի հիւսիսոյ, ի հարաւոյ և յարևմտից. տեղին կամ վայրն՝ ուր կան կառուցեալ տաճարքն չորեքին, տեսանի արդարև իբրև լանջ կամ կուրծք առն և լերինքն յերկուց կողմանց զօրէն բազկաց ի վերուստ անտի խոնարհեալ ընդ յարևելս՝ աւարտին ի գետն Հրազդան:*

Աստ չինեալ ասի յառաջագոյն եկեղեցի յԱպիրատայ մեծ իշխանէ Հայոց ըստ Մխիթարայ Այրիվանեցւոյ ի թիւն ՆՁ (1031). և ըստ Միքայէլի Չամչեան (հատոր Բ, թղթա. 897):

Զկնի նորա ապա ետ կառուցանել ի սմա զաւագ եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ Գրիգոր Մագիստրոսն Վասակեան Պահլաւունի. առ Մխիթարայ Այրիվանեցւոյ ի թիւն ՆՂԳ (1044). «Իսկ Մաւնամախն (կայսր Յունաց), որ կալաւ զԳագիկ թագաւորն, ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի, որ շինեաց զեկեղեցին Կեչառուաց. սա է որդին Հոլում Վասակայ շինողին Բջնոյ և Կայենոյ և Կայծոնոյ, զոր յանգէտս սպանին ի Սերկևլէ»: Զև կառուցման այսր տաճարի է արդարև գործ մտաց այնպիսի խոհական և ուսումնական առն, որ աքանչացուցանէ զտեսողս. անսիւն է և կամարակապ՝ հաւաք գործեալ. ունէր ի միջին տեղւոջ տանեացն և կաթուղիկէ վայելչաձև, այլ ի շարժէն դիպելոյ յամի 1827, անկեալ կործանեցաւ: Ունի և գաւիթ վայելուչ ի վերայ չորից միաստանի սեանց հանգոյն գաւթի եկեղեցւոյն Այրիվանաց, և զերկուս դրունսն՝ արևմտեան և հարաւային:

Ի վերայ հարաւային դրանն արտաքուստ դնի արձանագիր շի-նութեան ըստ այսմ.

«ՆՁԲ (1033) թ. հ., ի թագաւորութեան Գագկայ և ի հայրապե-տութեան տեառն Սարգսի, ես՝ Գրիգոր Մագիստռոս, որդի Հասա-նայ, շինեցի զեկեղեցիս ինձ ի բարեխաւսութիւն և իմ պատրոնին և իմ որդեացն. որք ընթեռնոյք զիս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ»:

Ի վերայ արևմտեան դրան գաւթին արտաքուստ դնի սոյն արձանագրութիւն՝ այս օրինակ.

«Ի թու. ՈՂԳ (1244):

Կամաւն Աստուծոյ, ես՝ Քուրդս, որդի Կախայբերին, զմտաւ ածի ի սէրն Աստուծոյ և եկի ի սուրբ ուխտս ի Կեչառուս և կրաւ-նաւորեցայ ի դրան Սուրբ Լուսաւորչիս և անուանեցայ Յօհաննէս և արարի պահարան սուրբ Յօհաննիսի... անիս. որք ընթեռնոյք, յի-շեցէք յաղաւթս»:

Ի ներքոյ սոյն արձանագրութեան դնի և այս.

«Աւգնութեամբն Աստուծոյ մեք [Ա]մարասայ եպիսկոպոսներս՝ տէր Սարգիս և տէր Վրթանէս, միաբանեցաք Կեչառուաց Սուրբ Լուսաւորչիս և տվաք ի մեր հալալ արդեանց Մ [200] դահեկան յա-ռաջնորդութեան Մխ[իթար], վ[ար]դ[ապետին]. վ[ար]դ[ապետ]երս և միաբանքս ընկալաք ՃԻ [120] ջաղացն անցուցաք. Ճ [100] ժամա-տուն. սահմանեցաք ամէն ամի Զ [6] աւր պատարագ ի տաւնի Ռըս-տակիսի և վթի գոգգ վթ. որ խափանէ նոցա մեղացն պարտական է. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»:

Ի հարաւային կողմն գաւթիս արտաքուստ ի վեր քան զլուսան-ցոյց պատուհանն գրի սոյն արձանագիր.

«Ի ՈԿԲ (1213) թու[ին], կամաւն Աստուծոյ, ես՝ Վաչէ որդի Սարգսի՝ որդւս Վաչուտի և ամուսին իմ Մամախաթուն և որդիք իմ Քո[ւ]րդս և Վաչուտ միաբանեցաք ի սուրբ ուխտս Կեչառուս և տուաք ի գանձագին գեղն մեր Շէնգաւիթ այգի... սպասք եկեղե-ցո և տէր Գրիգորին. և Գրիգոր վարդապետս զԾառզարդարն ինձ Վաչէի. և զ Ղազարոյն Մամախաթունին և զ Նոր Կիւրակէն Քրդին, ամէն եկեղեցիքս. և ով առաջնորդ անի զսէրն, առնէ Նոր Կիրակէին անխափան»:

Ի ներքոյ սոյն արձանագրութեան գրի և այս.

«Թուիս մերոյ ՉԻԱ (1272), կամաւն Աստուծոյ, ես՝ Վիրապչահ միաբանեցայ սրբոյ նշանիս յառաջնորդութեան տեառն Աթանասի. և տվի իմ հալալ արդեանց իմոց. և ետուն ինձ Դ աւր ժամ ի տաւնի Ատոմեանց. կատարիչ աւրհնին ի Քրիստոսէ»:

Ուղղակի ընդ արևելս այսր արձանի ի վերայ որմոյ մեծի տաճարին դնի այս արձանագիր՝ որոյ թուական ի սկսուածի անդ եղծեալ էր.

«... թուականութեանս Հայոց, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի և ի թագաւորութեանն Վրաց Գեորգէ և մերոյ իշխանին, ես՝ հայր Պետրոս և եղբայր իմ տէր Յովսէփ և Սարգիս կրօնաւոր և միաբան ուխտիս հաստատեցաք Ստեփաննոսի Աղուանից կաթուղիկոսի ի տարին զՔրիստոս ի տօնի առաքելոցն, Դաւթի, Պետրոսի, Յովհաննու ամէն եկեղեցիքս. եթէ ոք խափանէ ՅԺԸ–ցն նզովեալ եղիցի: Ես Սիմէօն քահանայ գնեցի յեկեղեցիս, որ առնեն ինձ ի տարին Բ աւուր ժամ. որ խափանէ դատի յԱստուծոյ»:

Ի վեր քան զվերոյգրեալ արձանն ի ներքոյ լուսանցոյց պատուհանացն ի նոյն հարաւային որմն արտաքուստ ծայրէ ի ծայր ընդ երկայնութիւն գրի սոյն յիշատակագրութիւն.

«Ի հինգ հարիւր երորդի (1051) ամի թուականութեանս Թորգոմեան, ի թագաւորութեանն սուրբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեա Մաւնումախին, բերաւ ոսկի մատանիս, զոր հզաւրին և առաքինոյն բարեպաշտին Գրիգորո Մագիստռոսին Կիտաւնտին, և Տուկին Վասպուրականի և Տարաւնո Արշակունւոյն և Հայկազնոյն. մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ և հռչակաւոր եկեղեցիքս իւր. և ո՛չ այլ ինչ հայցէ, բայց միայն աղաւթս առնել սուրբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեայ. ընդ նմին ծառային Քրիստոսի Գրիգորոյ և որդւոց իւրոց և յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կեչառուաց՝ ուր Մագիստռոս կենդանի է. ամենայն շաբաթ աւր զժամն Հասանայ արասցէ անխափան. և յետ ելիցն Մագիստռոսին արասցեն անխափան: Արդ՝ որ ոք այսմ վճռի հաստատնո խափանել ջանա՝ թէ յառաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանայից, այնպիսին Յ և ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի և բաժինն ընդ Յուդայի եղիցի և ընդ տիրասպան քահանայիցն. և այս գիր մեր է Յովանիսի շնորհիւն Աստուծոյ Բջնո եպիսկոպոսիս և սուրբ և մեծի հաւր Բարսղիս է. թէ ոք այս գրոյս խափանել ջանա, այնպիսին

նզովս չարաչարս ընկալցի ի սրբո Լուսաւորչէն Գրիգորո և յամենայն սրբոց և ի մէնջ. կատարիչք գրոյս աւրհնեալ եղիցի»:

Ի մէջ գաւթի եկեղեցւոյս ի հարաւային ճակատ հիւսիսային կամարի գրի այս ինչ.

«Աւգնութեամբն ամենասուրբ Երրորդութեան... Հասան որդի Վախթանգայ՝ որդւոյ մեծին Հասանայ, տէր Խոյախանբերդոյ, Խաչենոյ և ամուսին իմ Սամֆան... [դու]ստր Բաղաց Թագաւորին, միաբանեցաք մեծ և հռչակաւոր սուրբ ուխտիս Կեչառուաց և... յաւերման նետողաց բազում գանձիւք... նորոգեցաք» և այլն:

Ի ներքոյ այնր ի նոյն իսկ կամարի.

«Թվին ՈՂԷ (1248), յառաջնորդութեան Մխիթար Վ[ա]րդ[ան], Գէ[որգ] վարդապետերս և այլ միաբանքս ընկալան և սահմանեցին մեզ Բ [2] աւր պատարագ ամէն եկեղեցիքս՝ զաւագ Զատիկն ինձ, և Գ [3] շաբաթ աւրն Մամաքանայ. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. իսկ որ խափանէ ի մերոց կամ յաւտարաց կամ յիշխանաց և յառաջնորդաց՝ մեր մեղացս պարտական է և ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է. կատարիչքն աւրհ.»:

Ի վերայ սեան արևելեան հիւսիսոյ գրի արձանագիր յանուն Սարգսի ուրումն և յիշատակի անդէն Ներսէս անուն առաջնորդ մենաստանիս ևն: են և այլ յոլով արձանագրութիւնք երկարաձիգ ի ներքս անդ գաւթին յորմունս նորա, այլ գոլով դժուարընթերց և եղծուած ի տեղիս տեղիս և կարօտ ընդարձակ միջոցաց՝ վասն որոյ մնացին անձեռնարկելի ի մէնջ:

Կարի մերձ յորմն հարաւային աւանդատան մեծի եկեղեցւոյս է տաճար փոքրիկ գմբէթաւոր, յորոյ արևմտեան դրան վերայ գրի սոյն արձանագրութիւն.

«Յիշեսջիք յաղաւթս զաստուածասէր պատրոն զՎաչէ՝ որ նորոգեաց վերստին զեկեղեցիս, թիւն ՈՀԲ (1223) էր»: Կից այսմ. «Կամաւն Աստուծոյ ես՝ պատրոն Վարդ Երևանո ետու զիմ հայրենի այգին, որ Զմշկա կոչի ի հայր Պետրոս, և արարի ինձ որդի: Եւ ես հայր Պետրոս ետու ի սուրբ Լուսաւորիչս, որ առնեն ի տարին Ը ժամ. Դ Վարդին, Դ Անիարին, որ հակառ կա կամ այգոյն կամ ժամին ՅԺԸ–ից և յայս սրբոցս նզովեալ եղիցի»:

Ի վեր քան զսոյն ի հարաւային կողմն լուսանցոյց պատուհանին գրի այս ինչ.

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Մխիթարիչ որդի Գրիգորի, ետու զիմ ախ... այգին յերանելի սուրբ ուխտս Կեչառուս հրամանաւ տեառն Գրիգորիսի և Գրիգոր վարդապետաց և յառաջնորդութեան Համազասպայ գրեցաւն ժամանակն և ինձ Մխիթարչիս, Գ՝ Տիկնակոկորին և տեառն Գրիգորոյ, Մամկայ. հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ. ով խափանէ է մեցաղս տէր առաջի Քրիստոսի»:

Ի հիւսիսակողմն սոյն փոքրիկ տաճարիս դնի այս արձանագիր.

«Ի ՈԾԳ (1204). կամաւ բարերարին Աստուծոյ, ես՝ Վարդըմբել, որ նորոգեցի ի յԵրևան զՄեղիտոնոյ էգոյն չարէքն և ետու ի սուրբ Գրիգորս. սպասաւորք սորա աւանդեցին տարին Բ ժամ. որ խափանէ իմ մեղացս տէր է առաջի Աստուծոյ, ամէն»:

Ի հարաւոյ կողմանէ այսր փոքրիկ տաճարի իբրև քայլս տասն է երրորդ եկեղեցին. և է գմբէթաւոր և անսիւն՝ չքնաղ տեսլեամբ զօրէն պճնազարդ հարսի. շինեալ ի Վասակայ որդւոյ Խաղբակայ, որ ունի արձանագիր շինութեանն ի վերայ արևմտեան դրանն ըստ այսմ.

«Ես Վասակ որդի Խաղբակա շինեցի զսուրբ Կաթուղիկէս յաւգնութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ Աթաբակի և արեան հարազատի իւրոյ Շահանշահի և Աւագին և իւր մաւրն պատրոն Խոշաքին և իմ եղբարցն և որդեացն յարևշատութիւն. ինձ և ամուսնոյ իմոյ Մամային մեղաց թողութիւն. որք երկրպագէք յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմ: Գրիս ընծա Ա լաւ շինակն. Ա տուն ի Նորաշէնքն. երետ և Ա ի Կարենիսն»:

Ունէր սոյն այս Կաթուղիկէ եկեղեցի ի հարաւակողման յորմն անդր արտաքուստ զայլ միւս արձանագրութիւն երկարաձիգ բանիւք, այլ ինչ ինչ քարինք ի շարակարգէ անտի գրուածոցն անկեալ և անհետացեալ գոլով՝ թողաք ի բաց և զմնացորդն:

Յարևմուտս այսոցիկ երից եկեղեցեաց հեռի իբրև քարընկեց մի է տաճար փոքրիկ՝ որ ունի գաւիթ և գմբէթ սրածայր. կառուցեալ գոլով սա յանուն սրբոյ Յարութեան է իբրև մատուռն գերեզմաննոցի, զի ի շրջապատսն են շիրիմք ըստ կարգի. շինուածք տաճարիս ըստ փոքրկութեանն է կարի հաստատուն և այժմ և է ամբողջ բոլորովիմբ:

Արձան յիշատակագրութեանն գտանի ի ներքս ի մէջ գաւթին ի վերայ դրան տաճարին ըստ այսմ.

«Թիւ ՈԿԹ (1220). շինեցաւ Սուրբ Յարութիւնս առ ի յիշատակ համաւրէն ննջեցելոց ի Քրիստոս և ծնողաց իւրոց Հասանայ և Ռուզուքանայ և զաւակաց... արձանս աւրհնութեան սիրոյն որ առ Աստուած և առ սուրբս նորա, ամէն»:

Բացի շինութեանց եկեղեցեաց աստի գտանին և աւերակք և տեղիք պէսպէս յոլով շինուածոց՝ է զի կոփածոյ քարամբք և է զի հասարակօք. և որպէս տեսանին ըստ դրութեանն՝ են կացարանք առաջնորդաց և կրօնաւորաց. նկատին և հիմունք պարսպի կամ արտաքին որմոյ կացարանացն յարևելակողմն ստորագրեալ երից եկեղեցեաց և երկոքին ծայրքն հիւսիսային և հարաւային, որք ունին գնչան հիմանց ընդ արևմուտս, երևին յայտնապէս և ընդհանրապէս նկատեալ՝ եղեալ է արդարև մեծահռչակ մենաստան ճոխացեալ բաւականաչափ կրօնաւորօք. շիրիմք շուրջ զտաճարօքն ցուցանեն զբազմամարդութենէ բնակչացն: Որպէս ասացաւն՝ գտանին յոլով շիրիմք և դամբարանք, յորոց ոմանք պատուեալ են մեծամեծ խաչվիմօք, այլ սակս ի վաղ ժամանակաց անբնակ լինելոյ մենաստանիս՝ են որ անկեալ յերկիր ընդ հողով և ընդ փլատակաւ ծածկեալ կան և են որ բեկեալ՝ այսր անդր ցանեցիր ձգեալ կան քարինքն արձանունակ. և են ևս որ պատեալ գոլով ի կարծրացեալ մամռոյ՝ մնան անվերծանելի: Յարևելս մեծի եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի՝ ի թիկանց կողմանէ սեղանոյն գտանին դամբարանք երևելի անձանց՝ յորոց մին յանուն Վեցիկ վարդապետի. կանգուն կայ սեղան քառակուսի և ի նմա հաստատեալ խաչվէմ բարձր և տապան առաջի նորա առանց գրչութեան. իսկ ի հիման անդ խաչվիմին գրի այս. «Զ Վեցիկ վարդապետ յաղաւթս յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմք»: Եւ յարևելս խաչվիմին գոյ երկարաձիգ գրուած, այլ անվերծանելի սակս մամռապատ լինելոյն: Ի հարաւոյ նորին է և միւս դամբարան նման նմին բարձրացեալ խաչվիմաւ՝ որոյ մակագրութիւնն ևս գոլով դժուարընթերց, թիւ նորա դնի ի ճակատն արևմտեան՝ որ է այս. «Թիւ ՈԿԹ (1220)»:

Յայս մենաստան բերեալ մեծահանդէս ուղարկաւորութեամբ յերկրէ Գաբեղեանց մարմին Գրիգոր իշխանի, եղբօր Բարսղի կաթուղէիկոսի՝ ամփոփեցաւ յամի 1099:

Ջուր մենաստանիս իջանէ ի բարձանց անտի լերինն՝ որ յարևելեան հիւսիս այսր գաւառի, և գնայ ընդ փոքր ձորակն որ ի հիւ-

սիսոյ և է մաքուր և առողջարար. յառաջագոյն ի չինութեան մենաստանիս բերեալ են ի վերուստ այլով ճանապարհաւ գայն ջուր ի մէջ պարսպին՝ ուր կայ տակաւին կիսաւեր աւազանն կամ աղբիւրն. այժմ ևս նոյն ջուր գայ անցանէ ընդ նոյն ճանապարհ ի պէտս բազմութեան բնակչացն արքունի գործակատարաց, որք յամառան ելեալ յԵրևանայ գան այսր և անցուցանեն աստ զամառնային տօթաւոր աւուրսն՝ սկսեալ ի 10–էն յունիսի ց10 սեպտեմբերի:

491. Մերձակայ վայրքն՝ լերինք և առապարք, զարդարին ի գարնան և յամառն բազմատեսակ գոյնզգոյն ծաղկամբք. յորս գտանի **Ջատվար** *կոչեցեալ արմատն. և տեսակ իմն խոտոյ, որ բարձրանայ իբրև կանգուն մի՝ միացօղուն. և է չիկագոյն, թաւամազ և ի ծայրն բանայ ծաղիկ դեղնագոյն ողկուզաձև. տերևք նորա չարակարգին ընդ ցօղունն ի ներքուստ մինչև ցվեր և նման են տերևոյ ուռենոյ կամ ձիթենւոյ (զէյթունի), զոր և ի գործ դնեն զօրէն թէյի (չայ), քանզի եթէ արկցի ըստ այնմ ի ջուր եռացեալ և ըմպեսցի շաքարաւ, լինի դեղ քրտնաբեր և օգտակար, որպէս ատաչային: Գտանի և մորի անուանեալ պտուղ մի յանտառսն անդ. բոյս նորա հազիւ բարձրանայ յերկրէ ցքիլ մի և տայ զպտուղ քաղցրահամ իբրև թութ՝ մի կողմն կարմիր և միւսն սպիտակ. համեղութեամբն, գունովն և այլ յատկութեամբն նմանի չիլէկ անուանեալ պտղոյն՝ որ յաճախ գտանի ի Կոստանդինուպոլիս. ի մերձակայ անտառս այսր մենաստանի բազում են և պտղատու ծառք՝ ընկուզենի, տանձենի և այլն, որք որպէս նկատին՝ սկզբնաւորեալ են կամ պատուաստեալ ի ժամանակէ անտի չինութեան մենաստանիս:*

Զի՛ք նշան մերձաւորութեան Կեչրոր անուանեալ քաղաքին ընդ այս տեղի, քանզի ըստ յառաջ բերեալ բանից հին Հայաստանին (թղթա. 504) Կեչրոր անկանի ի սահմանս Երասխաձոր գաւառի. իսկ տեղի եկեղեցեացս Կեչառուաց ի սահմանէ անտի ընդ արևելս հիւսիսոյ հեռաւորութեամբ երկուց աւուրց ճանապարհի և աւելի ևս. որոց ընդ մէջ անկանի լայնանիստ լեառն Արագած:

Առաջնորդք մենաստանիս

492. Բարսեղ, որ յիշատակի յարձանագրութիւն այսր վանաց յամի 1051:

Մոնոնիկ Գրիգոր. թերևս ի միաբանից կամ վանահայր վանացս, որ գտաւ ի ժողովն Լօռւոյ առ Զաքարիա Սպասալարիւ յամի 1205:

Գրիգոր վարդապետ, որ աստ յարձանագրութեան Վաչէ իշխանի յամի 1213:

Պետրոս, որ յիշատակի ի վերոյ յերկուս արձանագիրս յամի 1223:

Աթանաս, որ աստ յարձանագրութեան Վիրապշահի յամի 1272:

Մխիթար. յիշատակի սա ի վերոյ յարձանագրութեան:

Ներսէս. յիշատակի և սա յարձանագրութեան մենաստանիս:

Համազասպ, որ ի վերոյ յարձանագիրն Մխիթարչի:

Փիլիպպոս Պարոնտէր կոչեցեալ, որ ի յիշատակարանի Մաշտոց գրոց յաւուրս Թադէոս կաթուղիկոսի, այլ յառաջնոյն թէ երկրորդին՝ չէ յայտ: Ուստի ասել իբր յամսն 1498. 1575:

493. **Մենաստան**. *հեռի յեկեղեցեացն Կեչառուաց ընդ արևմտեան հիւսիս աւելի քան զմի ժամ՝ հանդէպ Թայչարուխ գեղջ ի հարաւակողմն գետակին՝ ի հիւսիսային լանջի անդ անտառախիտ առապարին ի տափարակ դիրս. է եկեղեցի բարձրակամար և անսիւն օրոցաձև կառուցեալ՝ միջակ մեծութեամբ, ուր հետախոյզ եղեալ մեր չգտաք զարժանաւոր գրուած ինչ հայացի, այլ ի բարձրութեան անդ եկեղեցւոյն արտաքուստ յատորև քան զքուէսն տանեաց տեսանէր միակարգ գրուած շրջապատեալ զեկեղեցեաւն վրացի տառիւք. ունէր տաճարն շուրջ զիւրև զաւերակս քառակուսի պարսպի և առ նովաւ սենեկաց թաղեալ ի մացառուտս և ի թուփս: Ուստի և եղեալ է յառաջագոյն մենաստան՝ թերևս յիշխանութեան Վրաց ի ժամանակս Զաքարիա մեծանուն Սպասալարի հայազգւոյ: Աստի ի վեր անդր ի ձորամիջի, ուր փոքր ինչ հեռի յարևմուտս, է* **Պղնձահանքն**, *որ այժմ կայ անգործ և առ նովաւ աւերակք շինուածոց՝ թերևս գործաւորաց նորին: Ի ձորամիջի աստ ընթանայ ջուր փոքր և մինչև ցՌնտամալ գիւղ (507) Վարաժնունեաց աճի բաւականաչափ և է առաջին ճիւղ սկզբնաւորող զՀրազդան գետ:*

Վարաժնունիք՝ այժմ Ծաղկունիք

494. Գաւառ Վարաժնունեաց. այսպէս անուանեալ ի հնումն՝ յաւուրս Ա Արտաշէսի արքայի Հայոց յանուանէ Վարաժ անուն առն միոյ քաջի՝ որ ի ծննդոցն Գեղամայ. զսա կարգեալ նոյն Արտաշէսի վարժիչ որդւոյ իւրում Տիգրանայ ի նետաձգութիւնս՝ պարգևէ նմա զշէնսն առ եզերբ Հրազդան գետոյն (Խորենացի, Ա 11, Բ 10): Իսկ ի յետագայից անուանեցաւ **Ծաղկունիք** *և յայլազգեաց՝* **Դարաչիչակ**. *ընկալեալ զայս կոչումն ի համանուն գեղջէ, որ արդ ևս կոչի* **Ծաղկունք** *(501): Հասարակօրէն զայս յետին անուանակո-*

չութիւն էառ ի գործս կառավարութիւն իշխանութեանն և առնու. և ունի սահման ըստ այժմեան առմանն, յարևելից՝ զարևմտեան եզր ծովակին Գեղարքունւոյ, ի հիւսիսոյ՝ զհարաւային ինչ լերինս Գուգարաց, յարևմտից՝ զարևելեան եզր Նգայ և ի հարաւոյ՝ զԿոտայս, որոյ գիւղօրայք են յետագայքդ.

495. **Չիպուխլու**. *յեզր ծովակին յարևմտեանն հիւսիս՝ յարեգդէմ լանջս լերինն ի վերայ արքունի պողոտային, յորում է և իջևան անցորդաց. բնակիչքն գաղթականք յԱրծափ գեղջէ Պայազիտոյ՝ տունք 63: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի:*

496. **Ցամաքաբերդ**. *անմիջոց յեզր ծովակին հանդէպ Սևան կղզւոյ՝ տունք 15: Եկեղեցին անուամբ սրբոյն Գէորգայ: Գիւղն է ի տափարակ տեղւոջ, իսկ Ցամաքաբերդ կոչեցեալն է բլրակ ինչ ի հարաւոյ գեղջն՝ յերից կողմանց պատեալ ջուրքք ծովակին:*

497. **Գոմաձոր**. *հեռի ի Ցամաքաբերդէ յարևմուտս իբրև կէս ժամ՝ յարգաւանդահող ձորակի ի հարաւային լանջի փոքր լերին՝ որ յարևմտից յառաջացեալ յանգի ի ծովակն: Տունք՝ 15: Եկեղեցին յանուն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի:*

498. **Պորտակ**. *այժմ՝* **Օրդակլու**: *Հեռի ի Ցամաքաբերդէն ընդ հարաւ անմիջոց յեզեր ծովակին: Տունք՝ 44: Եկեղեցին շինեալ ի նախնեաց թէպէտ, այլ գոլով քայքայեալ՝ մնան հետք ի հին շինուածոցն որմունք ինչ սեղանոյն, որոյ զփլեալսն հիւսեալ ի թափեալ քարանց անտի՝ ծածկեալ են փայտիւք և անուանեն Սուրբ Յովհաննէս:*

499. **Վարսեր**. *այժմ* **Չոչըռ** *կոչեցեալ: Յիշատակի այս գիւղ նախադաս անուամբն յինչ ինչ արձանագրութիւնս մենաստանաց և են բնակիչքն՝ տունք 27: Եկեղեցին յանուն սրբոյն Ստեփաննոսի:*

500. **Շահրիզ**. *տունք՝ 45: Եկեղեցին անուամբ սրբոյն Յովհաննու:*

501. **Ծաղկունք**. *յանուն սորա կոչի և գաւառն՝* **Ծաղկունիք**: *Տունք՝ 42: Եկեղեցին յանուն Սուրբ Յարութեան:*

502. **Դթմաշէն**. *տունք՝ 61: Ի սմա հին շինուած եկեղեցւոյ ի խարտեալ քարանց, այլ կամարայարկ նորին ի վաղուց իջեալ՝ ծածկեցին ի նորոյ փայտիւք և անուանեցաւ յանուն Թադէոսի առաքելոյ:*

503. **Եայճի**. *տունք՝ 29: Եկեղեցին անուամբ սրբոյն Ստեփաննոսի:*

504. **Բաբաքիշի**. *տունք՝ 18: Եկեղեցին յանուն սրբոյն Յովհաննու:*

505. **Ֆարուխ**. *տունք՝ 27: Եկեղեցին անուամբ սրբոյն Ստեփաննոսի:*

506. **Թայչարուխ**. *ի ձորամիջի ի հիւսիսային եզեր. տունք՝ 44: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Բնակիչք սորին ևս գաղթեալք յԱրծափ գեղջէ Պայազիտոյ:*

507. **Ռնտամալ**. *տունք՝ 115: Եկեղեցին յանուն սրբոյ Կարապետի: Զառաջեաւ այսր գեղջ միւս երկրորդ ճիւղ Հրազդան գետոյ, որ ի ծովակէն, խառնի ընդ ջուր Պղնձահանքի (493) և երկոքին ի միասին հանդերձ այլ առատ ջուրքք աղբերց յստորև քան զխառնուրդն՝ սկզբնաւորեն զՀրազդան գետ:*

508. Այս երկրորդ ճիւղ որ ի ծովակէ՝ ունի ելք իւր ի միջոցի անդ երկուց գիւղօրէիցն՝ Ցամաքաբերդայ և Օրդակլուայ: Ի տեղւոջն անդ ելից ջրոյն տեսանին կուտակ կուտակ բլրակք աւազոց և խճից քարանց, քանզի ի նուազիլ ջուրց ծովակին նուազի և գետակն և վասն այնորիկ ի պէտս անդաստանաց գիւղօրէից այսր գաւառի և այգեստանեացն Երևանայ՝ իշխողք այսր նահանգի աշխատեցուցեալ զմշակս՝ ընդարձակեալ են զանցս ջրոյն, զի որպես իշխողք Երևանայ, նմանապէս և կաթուղիկոսունք Աթոռոյ Էջմիածնի երբեմն երբեմն ծախուք իւրեանց ընդլայնելով և խորացուցանելով զբերան ելից ջրոյն՝ առատացուցեալ են զայն վասն կալուածոց Աթոռոյն, որ առ գետովս, որպէս Փիլիպպոս կաթուղիկոս Հաղբակեցի՝ ըստ յիշատակութեանն ի Ջամբռ անուանեալ գիրս կալուածոցն ի Սիմէոն կաթուղիկոսէ Երևանցւոյ. և յայն սակս եղեալ են այն կուտակք աւազոց և խճից: Եւ ընդհակառակն՝ երբեմն երբեմն ի յորդել և յառատանալ ջուրց ծովակին առատանայ և գետն և վնաս մեծ գործէ անդաստանաց գաւառիս և կալուածոցն որ ի ձորամիջի անդ Երևանայ, որպէս յայս ներկայ ամ ի վերջին աւուրս յուլիսի, վասն որոյ անդրէն աշխատեցուցանելով զմշակս առնուն զառաջս նորա դժուարութեամբ քան զառաջինն:

509. **Քարվանսարայ**. *տունք՝ 50: Եկեղեցին անուամբ Սուրբ Աստուածածնի: Եւ է հանդէպ Մաքրավանք գեղջ՝ յարևելակողմն գետոյն ի տափարակ դիրս:* **Պանդոկն**՝ *յանուն որոյ կոչի այս գիւղ, է ի հարաւոյ և կառուցեալ է վասն երթևեկացն յԵրևանայ և ի Տփխիսոյ, այլ թէ երբ և յումմէ, չէ՛ յայտ:*

510. **Սուտէկէն**. *Ջրառ կամ ջուր հարկանող: Է առապար ինչ անմիջոց յեզեր գետոյն յարևելից նորա՝ մերձ գեղջն Քարվանսարայի ի հարաւոյ. զճանապարհն որ ընդ մէջ գետոյն և առապարին, ծածկէ երբեմն յորդութիւնն ջուրց գետոյն և արգելու զանցորդսն: Վասն որոյ կոչեցաւ ի բարբառ այլազգեաց յայն անուն:*

Յարևելից առապարին և յարևմտից Պորտակ գեղջ երկու համանուն գիւղորայք:

511. **Ներքին Ախտայ**. *տունք՝ 65: Եկեղեցին յանուն Սուրբ Խաչի: Աստ է իջևան անցորդաց յարքունի ճանապարհին:*

512. **Վերին Ախտայ**. *տունք՝ 58: Եկեղեցին անուամբ Սուրբ Աստուածածնի:*

513. **Սօլակ** *գիւղ. տունք՝ 44: Եկեղեցին յանուն սրբոյն Յովհաննու: Հեռի է այս գիւղ ի Քարվանսարայ գեղջէ ընդ հարաւ իբրև ժամ և կէս՝ յարևելեան եզեր գետոյն ի սարահարթի անդ ձորոյն: Բնակիչքն ըմպեն զջուր ի գետոյ անտի նեղութեամբ, զի է խորաձոր:*

514. **Այլաբերից** *գիւղ կամ* **Աղբերից**: *Այլ այժմ ի տաճկաց բարբառ կոչի* **Ալափարս**: *Բնակիչքն ի գաղթելոց անտի Մակուայ՝ տունք 79: Եկեղեցին, զոր նորոգ կառուցին և զճակատ բեմին և զկամար սեղանոյն ի տաշածոյ քարանց, որոյ գծախսն մեծ մասամբ ետ մէլիք Աւետիք Բատալեան պատուաւոր բնակիչն տեղւոյս: Է յանուն սրբոյ մեծին Վարդանայ Մամիկոնեան: Այս գիւղ որպէս ինձ թուի է նոյն իսկ գիւղն Այլաբերից, զի տաճիկք ո՛չ կարելով ուղղակի արտաբերել զայն հնչումն, սովորեցան յերկրորդն. և զի կոչի գիւղ* **Աղբերից** *կամ* **Աղբիւրից**. *ունի արդարև յարևելակողմն իւր յստորոտի անդ առապարին երկակն աղբիւր յորդ ականակիտ մաքուր ջրոյ, որ ելեալ ի քարուտի անդ՝ մերձ յինքն դարձուցանէ զջրաղաց մի և արբուցանէ զջրարբի արտորայսն. այսոքիւք յատկութեամբք և ըստ գրուածոց պատմաբանիցն՝ զորս յառաջ բերէ Ստորագրութիւնն Հին Հայաստանի, չի՛ք այնպիսի գիւղ ի Կոտայս գաւառի բացի ի Կեամրիս գեղջէ (438): Այս գիւղ գտանի յարևելեան եզեր Հրազդան գետոյ՝ հեռի ի Սօլակայ ընդ արևմուտս իբրև ժամ մի և գրեա թէ մերձ ի սահմանակցութեան Կոտայից: Ի մէջ գեղջս գտանի աւերակ հին եկեղեցւոյ ի սրբատաշ քարանց՝ միջակ մեծութեամբ խաչաձև. լեալ է արձանագիր շինութեանն երկտող ի վերայ հիւսիսային որմոյն արտաքուստ ընդ երկարութիւն որմոյն, այլ յաղագս աւերանացն անկեալ են քարինքն արձանագրութեանց. ի սկսուածին անդ տեսաւ թիւ հայկական «ՅԾ (901)». և մերձ ի դուռն արևմտեան յորմն անդ հիւսիսային ի կարգի անդ երկտող գրչութեան՝ անունս Գրիգոր հանդերձ քանի ինչ այլ բառիւք. ըստ ամբողջ թուականին հաստատի թէ շինեցաւ և այս եկեղեցի ի հրամանէ Գրիգոր իշխանի Սիւնեաց՝ որդւոյ Գաբուռն Վասակայ:*

515. **Քեօթան տաղը**. *է լայնանիստ ստորոտովք բլրակ ինչ յարևելից Ալափարս գեղջ և յարևմտից լերին Շամիրամայ (341)՝ փոքր*

քան զայն. և երկոքին ևս խոտաւէտ տեղիք, բայց առանց գնա-ցիկ ջրոյ. և ի միասին բաժանեն ստորոտովք իւրեանց զսահմանսն երկուց գաւառաց՝ զԿոտայիցն թողլով ընդ հարաւ և զՎարաժնու-նեացն ընդ հիւսիս: Յարևմտից հիւսիսոյ յիշեալ բլրակիդ ի վերայ արքունի պողոտային է Տամճլու *կոչեցեալ տեղին և է փոսորակ ինչ վայր բացեալ ի ջուրց հեղեղաց. յարևելից փոսորակին է ծոցաւոր ինչ վիմուտ տեղի՝ ուր կաթիլ կաթիլ ժողովեալ ջրոյն՝ բաւականա-նայ յարբումն անցորդաց՝ մարդոց և անասնոց:*

516. Կարենիս. *գիւղ յիշատակեալ յԱռաքել վարդապետէ Դավ-րիժեցւոյ (գլ. ԺԶ, թղթա. 176, 177), յաղագս նշխարաց Անդրէի առաքելոյ և Մատթէոսի Աւետարանչի: Այս գիւղ ևս ի վերայ Հրազ-դան գետոյ յարևելեան եզեր նորին՝ ի հարաւոյ Ալափարս գեղջ. եկեղեցի գեղջս յաւերութեան կայ և լեալ է ի կոփածոյ քարանց. բնակին այժմ աստ տաճիկք մահմէտականք՝ տունք 14: Ուստի և կո-չի անուն գեղջս ի տաճկաց* Կիւմիւշ:

Մենաստանն *յանուն վերոյիշեալ առաքելոց է ի ձորամիջի անդ և ճանապարհն ի գեղջէ անտի. կացարանք միաբանից իսպառ կոր-ծանեալ. տաճարն մեծ մասամբ յամբողջութեան կայ և է օրոցաձև միջակ մեծութեամբ. դարան տաճարիս՝ ուստի հանին պատրիքն զնշխարսն, եղեալ է զառաջեաւ բեմին սեղանոյ և է բաւականաչափ ընդարձակ: Վերին ծածկք նորա ի կոփածոյ քարանց՝ թերևս ի ժա-մանակէ անտի այնպէս աւեր կայ:*

Ընդ այդր տաճկաբնակ գեղջ գտանին և այսոքիկ.

517. Օզանլար. *տունք՝ 14:* Ղօռուղ գիւնէի՝ *տունք 7:* Ուլաշիկ՝ *տունք 10:* Ղարաղալայ՝ *տունք 4:* Թաքեարլու՝ *տունք 20:* Դատա-ղըշլաղ՝ *տունք 15:* Ղօրչալու՝ *տունք 10:* Ալիչօփուր՝ *տունք 8:* Նուր-նուս՝ *տունք 15:* Ախվէրան՝ *տունք 15:* Փաշաքեանտ՝ *տունք 17:*

ԾՈՎԱԿ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՈՅ

518. Այս ծովակ շրջապատեալ ի լերանց՝ երկայնեալ է յարևելից յարևմուտս. և շրջապատ նորա իբրև չորից աւուրց ճանապարհի հետևակ առն. ընդունի յինքն ի շրջապատ լերանց՝ յերից կողմանց զքսան և չորս ընդ մեծ և ընդ փոքր գետակս ջուրց, և գրեա թէ մեծ մասամբ ի յորդայորդ աղբերականց և մասնաւորապէս ի հալոցաց ձեանց լերանցն և արձակէ յիւրմէ զմի ևեթ զայն ջուր (507)՝ որ հա-

մարի երկրորդ ճիւղ Հրազդան գետոյ, և հազիւ համեմատի քսանեորորդ բաժնի ջուրցն մտելոց ի ծովակ անդր. իսկ զմիւս զաւելորդսն ընդ երկրաւ ընդ ներքոյս շրջապատ լերանց և գրեա թէ ընդ հորեսին կողմանսն թորէ զմեծ և զփոքր աղբերակունս՝ ընդ արևմուտս ի ձորամէջսն Հրազդան գետոյ և ի սահմանսն Կոտայից, ընդ հարաւային ի ձորամէջսն Ազատ գետոյ, Վէտոյ և գետոյն Շարուրայ, ընդ արևելս ի սահմանն Արձախայ, ընդ հիւսիս յաշխարհն Գուգարացւոց, զի թէպէտ ծովակն ունի ի շրջապատս իւր զբարձր լերինս, այլ զդրութիւն իւր ևս ունի կարի բարձր ի յիշատակեալ սահմանացն: Համեղ է ջուր ծովակիս և մարսողական և սնուցանէ յինքեան զերկոտասան տեսակ համեղաճաշակ ձկունս, որք են՝ 1. իշխան, 2. ամար, 3. գեղաքունի, 4. կարմրախայտ, 5. կողակ, 6. բախտակ, 7. բօժակ, 8. ծուար, 9. բեղլու, 10. կռակտուց, 11. չալի, 12. աղնջան: Այսոքիկ ձկունք առատութեամբ իւրեանց լիացուցանեն զմերձաւոր և զհեռաւոր բնակիչս շրջակայ սահմանաց՝ մանաւանդ Երևանայ և Տփխեաց, քանզի ի սահմանեալ ժամանակսն երթևեկելն ձկանց երամովին ի շրջակայ գետակսն՝ կալնուն զայնս դիւրին եղանակաւ և դիւրագին վաճառեալ բեռն՝ արձակեն զմեծամեծ կարավանս ի Տփխիս և յԵրևան. ի նոսա միայն զկողակ անուանեալ ձուկն դնեն յաղաջուր, զի առանց այնր ո՛չ ուտի նման փաշամուտ ձկան Կոստանդինուպօլսոյ:

519. **Սևան** *կղզի ի մէջ ծովակին Գեղարքունւոյ յարևմտեան սպառուածի նորա՝ հեռի ի ցամաքէն այնքան, մինչև ի ձայնել ուրուք ի լաստադադար տեղւոջէ լսեն բնակիչք կղզւոյն. ցամաք նորին երկայնեալ յարևելից յարևմուտս նման ծովակին, իսկ ստորոտն արևմտեան հիւսիսոյ ընդարձակեալ փոքր ինչ դիւր դրութեամբ՝ կացուցանէ զկղզեակն ըստ իմիք եռանկիւնի. յարևելից և ի հարաւոյ է վիմուտ և ի տեղիս տեղիս զառընթափ առանց ստորոտի. շրջապատ տարածութիւն կղզւոյս ըստ գրուածով Զաքարիա արքեպիսկոպոսի Գուլասպեանց Տփխիսեցւոյ աւելի է քան զերկու հազար կանգուն կամ գազ պարսկային և կամ զերկու վերստ ռուսաց: Խոտաւէտ և ծաղկաւէտ է այս կղզեակ որպէս և շրջակայ վայրք և լերինք Գեղարքունւոյ և ի գարնան վայելչանայ բուսովք և հոտարձակ ծաղկամբք՝ յորս գտանի ծաղիկն մեխակ անուանեալ և վարդ վայրենի. գտանին ի սմա և սակաւ ծառք պտղատուք՝ շլորենի, ալոճի և ուռենի. ևս և պարտէզ բանջարոյ:*

520. Աւանդութիւն բնակչացն և միտք գրուածոց հայ հեղինակաց և հետք աւերանացն թաղելոց ի ջուրս հաստատեն լինել աստ շինուածոց ամրոցի՝ և թերևս սկզբնաւորեալ ի Գեղամայ անտի. և

յետ ժամանակաց կանգնեալ և բագին, յորում տեղւոջ ի բարձրութեան անդ ի ժամանակի լուսաւորութեան քրիստոնէական հաւատովք ողջոյն ազգի Հայոց կառոյց մեծն Գրիգոր Պարթև տաճար փոքրիկ յանուն սրբոյ Յարութեան յամի 305՝ զոր յիշատակէ կոնդակ վանացս և զայսոսիկ. ի կառուցանել մեծին Գրիգորի զայս եկեղեցի՝ կոչեաց և անուն տեղւոյս Այս է վան, *որ հոլովեալ աղաւաղանօք ի լեզուս՝ եհաս առ յետագայսն և առ մեզ անուամբս* Սևան. *և եթող աստ սուրբն Գրիգոր Պարթև և զոմանս ի կրօնաւորացն եղելոց ընդ ինքեան ի փառաբանութիւն անուանն Աստուծոյ ի տաճարի անդ. այս եկեղեցի ի բազում դարուց անցելոց ի վերայ փլեալ կայ իսպառ, որոյ մասնաւոր որմունք ցարդ ևս երևին. և կայ տակաւին վիմեայ խաչն մեծ առընթեր աւերակի եկեղեցւոյս յարևմտից, զոր ասեն օծեալ իւրով ձեռամբ նորուն մեծին Գրիգորի:*

Երկիցս առաւ այս ամրոց ի հագարացի թշնամեաց. յառաջնումն՝ ի Մահմէտայ. ըստ Մխիթարայ Այրիվանեցւոյ՝ ի միջոցս թուոցն ՃԾ-ՃԿ էառ Մահմէտ զՍևան, այսինքն յամի իբր 706, յերկրորդումն՝ ի Մրուանայ ոստիկանէ ի մէջն անդ Ը դարուն՝ ըստ Զ Յովհաննու կաթուղիկոսի. «Իսկ Սևան կղզի որ ի ծովակին Գեղամայ՝ թէպէտ և յիսկզբան նուագի անդ ո՛չ ըմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ի ձեռս նորա. և որք միանգամ բնակեալք կային յամրոցի անդ՝ գերի առեալ տանէր. և զկապուտ կողպուտն յաւարի առեալ՝ սպառսպուռ քանդէր, աւերէր զամրոցն»:

Աստ ամրացաւ և Աշոտ Թագաւոր Բագրատունի հարիւր արամբք ևեթ, յամի 923. այլ ի յարձակիլ ի վերայ՝ թշնամւոյն իւրոյ Բշրայ վերակացուին Դունայ բազմութեամբ զօրաց, ել արքայ ինքնին ի կղզւոյ աստի եօթանասուն արամբք կորովեօք ի տասն լաստս և այնպէս յարձակեալ յեզր կոյս ի վերայ թշնամեացն՝ հալածական արար անտի՝ ըստ նորուն Յովհաննու կաթուղիկոսի:

521. Զկնի Յարութեան տաճարին կառուցելոյ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ կառուցան և այլ երեքին տաճարք ի կոփածոյ քարանց ի սոյն կղզեակ. յերից անտի երկուքն կառուցան ջերմեռանդ արդեամբք ի Մարիամ թագուհւոյ դստերէ Աշոտոյ թագաւորի Հայոց՝ որ էր կին Գաբուռն Վասակայ Սիւնւոյ, ի յիշատակ հոգւոյ առն իւրոյ յամի 874, յաւուրս վանահայրութեան Մաշտոցայ Բ, նախքան զկաթուղիկոսանալն. և պատմի ըստ այսմ՝ ի գրուածս հեղինակաց և յաւանդութիւնս կրօնաւորաց կղզւոյս:

Վերոյիշեալդ Մարիամ թագուհի ընկալնու պատուէր յառնէ իւրմէ ի Գաբուռն Վասակայ ի վախճանի նորուն՝ տալ կառուցա-

նել զեկեղեցի թուով քառասուն. զկնի շինութեան միւսոցն յայլևայլ տեղիս ի Գեղարքունի՝ գայ ի վերջոյ և ի կղզիս այս յայցելութիւն կրօնաւորելոցն անդէն և ի յիշատակութիւն հոգւոյ առն իւրոյ յաղօթս նոցին և ի լրումն կտակի առն վասն շինութեան եկեղեցւոյ և աստ. այլ արգելեալ լինի մտանել ի կղզին ի Մաշտոցայ սրբոյ հօրէ՝ թէ ո՛չ երբէք մտեալ է այսր կին մինչև ցայժմ, և արդ ևս չէ՛ կարելի: Բայց ի թախանձանաց ջերմեռանդ տիկնոջն ստիպեալ՝ յդէ պատգամ առ նա, թէ դու այդր ի Ցամաքաբերդ տեղւոջդ աղօթեա՛ առ Աստուած և ընկալջիր զհայցուածս քո. և ինքն ևս երանելին Մաշտոց յոտնկացութեան աղօթելով առ Տէր անցուցանէ զայն գիշեր և խնդրէ յԱստուծոյ, զի թէ հաճոյ իցէ ինքեան՝ գալ, մտանել տիկնոջն՝ յայտնեալ ցուցցէ վերնական տեսլեամբ. և այնինչ երկոքեան՝ սուրբն Մաշտոց ի կղզւոջ և Մարիամ թագուհին ի Ցամաքաբերդ ջերմեռանդ խնդրուածովք յաղօթս կային յայն գիշեր, ի մերձիլ ծագման լուսոյ՝ տեսանէին զտեսիլ միօրինակ. զի ահա՛ բացեալ հաստատութիւն երկնից և ցոլացեալ լոյս իջանէր ի վերայ ծովուն. և ընդ լուսոյն ի չորից կողմանց առաքեալքն երկոտասան ընթանալով ի վերայ ջրոյն ելանէին ի ցամաք անդր կղզւոյն և մերձ ի տաճարն սրբոյ Յարութեան ի հարաւոյ կողմանէ ի տեղի ինչ տափարակ թափօր արարեալ՝ օրհնէին զտեղին և ցսուրբն Մաշտոց ասէին. Աստ կառուցէ՛ք զեկեղեցի յանուն մեր: Եւ ապա վերանային յերկինս, որոյ վասն ըստ հրամանի սրբոյ հօրն ի կղզին մտանէր տիկինն ջերմեռանդ և պատմելով իրերաց զցոյց յայտնութեանն և նկատելով իսկ ի տեղւոջն զհետս ոտից առաքելոցն և զցող լուսափայլ ի դալարիսն անդ՝ հիմնարկեալ տային կատարել զշինուած տաճարին ի թիւ Հայոց ՅԻԹ (880), ըստ կոնդակին. իսկ ըստ գրուածոց Ստեփաննոսի Օրբէլեան ի հայ թիւ ՅԻԳ (874), առ հայր Ղուկասու Ինճիճեան ի Հին Հայաստան (թղթ. 276): Եկեղեցին է կատարեալ խաչաձև առանց սեան. ունի կաթուղիկէ ի միջավայր տանեացն, զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ. դուռն հիւսիսային աւանդատան է արտաքուստ և ի ներքս եկեղեցւոյն ընդ դասն ունի լուսամտաձև պատուհան մի՝ զորմէ ունին աւանդութեամբ կրօնաւորքն թէ՝ գիտութեամբ ետ այնպէս առնել տիկինն[1] Մարիամ ի ժամանակի անդ շինութեանն սակս ինքեան առանձին աղօթելոյ անդէն ի պահու ժամերգութեան:

[1] Աւանդեն բնակիչք կղզւոյս թէ՝ սոյն Մարիամ տիկին իսպառ առանձնացեալ յաշխարհէ եկաց բարեկրօնութեամբ վարուց մինչև ցմահ իւր աստէն և թաղեցաւ ի սրբոյն Մաշտոցայ յայս կղզի՝ յարևելից հիւսիսոյ տաճարի սրբոց առաքելոցն, ուր և ցուցանեն շիրիմ յանուն նորին՝ յորոյ վերայ և գտանի տապանավէմ

Այս տաճար ունի և զերկուս դրունս՝ արևմտեանն ընդ փոքր փայտաշէն գաւթաւ և է միափերտ փայտ ընկուզենի կարի կարծ-բացեալ ի հնութեանց ժամանակին (զոր ընդ միւս դրանն դնէ յա-բանոզ փայտէ Զաքարիա արքեպիսկոպոս Տփխիսեցի). յորում գոյ մակագրութիւն յանուն ընծայողի զայն՝ յայս օրինակ. «Ի թվ. Հայոց ՈԻԵ (1176) նորոգեցաւ դուռն սուրբ եկեղեցւոյս հրամանաւ իշխա-նաց իշխան Քրդին և ձեռամբ Յոհաննիսի հիւսան, որք ընթեռնոյք յիշեսջիք»: Հարաւային դուռն ևս միափերթ ի նոյն փայտէ, այլ յա-ւէտ ընտիր ճարտարարուեստ գործուած՝ փորուածոյ բոլորովին և պէսպէս դրուակք պատկերաց և ծաղկանց նման արդարև շնորհաց եւրոպեան ձեռին. ունի և սա յիշատակագրութիւն և թուականի բաժանմունսն անդ քանդակացն և ի շրջապատսն՝ ըստ այսմ.

«ՋՀԱ թուականի, ԼԵ թիւ աւելի (1557), յաթոռակալութեան տեառն Սարգսի, ի խանութեան Յաղուպ բէկի ծաղկեցաւ (քանդա-կեցաւ) դուռն տաճարիս առաքելոցն Քրիստոսի, հրամանաւ վար-դապետի եռամեծիս Դանիէլի և սիրելի որդւոյ սորին եպիսկոպոսիս տէր Ներսէսի, ձեռամբ սորին աշակերտի անարժանիս Աբրահամի: Նաև եղբաւր մեր սիրելի շնորհաւք ի լի Գրիգորիսի: Ոտս անկանի յամենայնի, հայցել Տեառնէ պարգև ձրի, ըաբունապետիս համայն ազգի և ծնողացն իրոց բարի Կարապետ քահանայի և մաւրն...»:

Զունի այս տաճար արձանագիր շինութեանն առաջնոյ. և գուցէ լեալ և ի նորոգութեանն անհետացեալ. բայց նորոգութեանն գտա-նի արձանագրութիւն արտաքուստ յորմն հարաւային աւանդա-տան՝ ըստ այսմ.

«Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ մեք՝ երեք հարազատ եղբարքս՝ Սուլխան, Զալ և Զօրապ, տվաք նորոգել սուրբ եկեղեցիս յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն՝ հօր Թաղին և մօրն Բէ-կի–Սուլթանին, հանգուցեալ եղբօրն Պապին և ամենայն ազգայնոց: Այլև խոստացաք շահ ստացուածոց ընդ սմայ տասանորդեսցուք. և միաբան սուրբ ուխտիս խոստացան յետ ութօրէիցն աւուր տօնի սուրբ Կարապետին պատարագ մատուցանել վասն մեր: Նորոգեցաւ ի թուականիս Հայոց ՌՃԳ (1654), ի հայրապետութեանն տեառն Փիլիպպոսի, առաջնորդի Մխիթար»:

հասարակ, այլ մակագրութիւն նորին յանձրևաց և ի մամռոյ խանգարեալ՝ մնաց անվերծանելի: Այս աւանդութիւն ընդդէմ ելանէ գրուածոց Զ Յովհաննու կաթուղիկոսի՝ որ զթաղումն յիշեալ տիկնոջդ դնէ ի վանսն Շողագայ. «Տարեալ հանգուցանեն զմարմին նորա (Մարիամ թագուհւոյ) ի քնարանի իւրում՝ մերձ ի ձեռակերտ եկեղեցին իւր ի Շողագայ»:

Զկնի շինութեան այսր տաճարի յանուն առաքելոցն երկոտասանից տայ կառուցանել նոյն տիկինն Մարիամ և զերկրորդ եկեղեցի ի լայնեալ ստորոտի անդ արևմտեան հիւսիսոյ յանուն Մարիամայ մօր Տեառն ի կոփածոյ խարտեալ քարանց՝ որ ունի զմի սեղան պատարագի, զերկուս աւանդատունս, զերկուս սիւնս և զերկուս դրունս. և է օրոցաձև առանց կաթուղիկէի, մեծ դրութեամբ քան զմիւսն. չունի և սա թուական կամ արձանագիր նոյն առաջին շինութեան, այլ նորոգութեանն միայն դարձեալ ի նոյն արանց երից եղբարցն տփխիսեցւոց գրեալ ի մէջ տաճարին յարևմտեան ճակատի հարաւային սեանն ըստ այսմ.

«Յամի Ռ-երորդի ՃԳԺ-աներորդի [1664] շնորհօք Աստուծոյ մեք՝ հարազատ եղբարք խօճայ Սուլխանս և Զալս ի քաղաքէն Տփխեաց, ասքէն Զիթղենց, որդիք Թաղայի, եկեալ ի սուրբ անապատս ի Սևան ծովապատ, զոր ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացա... մեր ապրանաց շահն տասանորդի տանք Սևանայ, ամէն: Զոր շինեցաք Սուրբ Աստուածածինս եկեղեցիս յիշատակ՝ մի արծաթի կանթեղ, խաչ, բուրվառ, սկի հոգոցն հօր մերոյ Թաղային, մօր՝ Բէկի–Սուլթանին, եղբաւրն Պապին, Զօրապին, քվերանց որդոց բաժինին. նաև միաբանքս խոստացաք տարին Գ [3] ժամ մատուցանել. կատարողք վարձս առցեն. ի հայրապետութեան տեառն Յակոբայ»:

Ըստ մտաց սոյն արձանագրութեանս գտանի և այլ գրուած յարևմտեան ճակատ եկեղեցւոյս արտաքուստ ի ներքոյ լուսամտի՝ ըստ այսմ.

«Յամի ՌՃԳԺ-անիերորդի [1664], շնորհօք Աստուծոյ մեք հարազատ եղբարք Սուլխան, Զալս ի քաղաքէն Տփխաց, ասքն Զթաղենց, որդի Թաղայի՝ որդւոյ Միրվէլու, եկեալ ի սուրբ անապատ Սևան՝ տեսեալ Սուրբ Աստուածածնի եկեղեցիս շինեալ յիշատակ մեր ապրանաց շահի Ժ–սաներորդ տալ զտեղի բնակողաց. և միաբանքս խոստացաք տարին Գ ժամ մատուցանել սուրբ Զատկին, Վարդավառին, Ջրօրհնեաց տօնից: Այս եղև հայրապետութիւն տեառն Յակոբայ. առաջնորդ Մխիթար եպիսկոպոս, Բարսեղ վարդապետ հանգուցելոյ»:

Ի հարաւակողմն սոյն վերոյիշեալ արձանիս գրի և այս.

«Շնորհ[օքն] Քրիստոսի և ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր կնածովն ի թուին ՌՃՁԹ (1740), ի հայրապետութեան տեառն Ղազարի և առաջնորդ Մարտիրոս վարդապետի.

Աստուած ողորմի ասացէք տուրք և ողորմութիւն տվողացն սուրբ տանս և աշխատողաց. ևս Մարտիրոս վարդապետի՝ որդի Աթաբէկի, որ տվաւ Բ թուման ողորմութիւն»:

Ի վերայ արևմտեան դրան եկեղեցւոյս է փայտաշէն գաւիթ, յորում կան հանգուցեալ մարմինք ոմանց վանահարց մենաստանիս և կրօնաւորաց, որոց տապանավէմք կան առանց գրուածոյ:

Յայս եկեղեցի աղօթեն սովորաբար կրօնաւորք մենաստանիս. և շէնք կացարանաց նոցա ևս կից են ընդ եկեղեցւոյն յարևելից և ի հարաւոյ, այնպէս, զի ի մտանելն յեկեղեցի և յելանելն ընդ յարկաւ ճանապարհի սենեկացն երթևեկեն. այսմ անվայելչութեան պատճառ է արդարև սաստկասառոյց ցրտութիւնն ձմեռնային, որ տիրէ անդ իբրև ամիսս վեց. շինուածք կացարանացն են ի հասարակ քարանց և ի հողոյ և ի փայտէ. և կարի փոքր են սենեակքն, յորում հազիւ արկանին մահիճք միոյ անձին. և են ըստ առաւել մասին կրկին՝ ի մէջ իրերաց: Այս անձկութիւն սենեկացն և խոնաւութիւն նոցին՝ մանաւանդ ծուխ ճրագացն ի գիշերային ժամանակի վշտացուցանէին զկրօնաւորսն. ուստի միաբանութեամբ հանդերձ խնդրամատոյց եղև վանահայրն Յովհաննէս վարդապետ առ տէր Յովհաննէս ներկայ կաթուղիկոս յամի 1834, կամ քակել զայնոսիկ կացարանսն և նոր ի նորոյ փոքր ինչ ընդարձակել և կամ առանց ձեռնամուխ լինելոյ յայնս, կառուցանել նորոգ սենեակս ըստ յարմարութեանն. ընկալեալ վանահօրն զհրաման վասն վերջնոյս՝ հոգացաւ, ետ կառուցանել յարևմտեան կողմն եկեղեցւոյն և առաջին սենեկացն զնոր սենեակս ընդարձակ և բարձր դրութեամբ՝ թուով քսան և հինգ. որոց միջին ճանապարհ դարձեալ ընդ յարկաւ մտանէ յառաջին ճանապարհ առաջին սենեկացն և այնպէս յեկեղեցին ցամաք ոտիւք:

Մատուռն փոքրիկ յանուն սրբոյն Մինասայ է մերձ յայս եկեղեցի սրբուհւոյ Աստուածամօր կուսի ի հիւսիսոյ կողմանէ. և է խարխուլ և խոնարհեալ յաւեր: Այլ թէ երբ և յորում ժամանակի՝ չի՛ք ինչ գրուած մակագրութիւն և ոչ աւանդութիւն:

Եկեղեցի հինգերորդ յայս կղզի Սևան մերձ յարևմտից եկեղեցւոյ սրբոց առաքելոցն ի բարձրութեան անդ. և է յանուն սրբոյն Յովհաննու Մկրտչի, զորմէ աւանդեն բնակիչք կղզւոյս՝ կառուցեալ արդեամբք տանուտեարց գիւղօրէից Գեղարքունւոյ. և է փոքր դրութեամբ քան զեկեղեցի առաքելոցն, նոյնպէս առանց սեան և ունի կաթուղիկէ փոքրիկ, յորոյ հարաւային կողման դնի թուական ըստ այսմ. «Թվին ՌՃԿԳ (1714). նորոգեցաւ Սուրբ Կարապետ»:

Ունի և սա գաւիթ փոքրիկ փայտաշէն և ինչ ինչ խուղս կրօնաւորաց, այլ խարխուլ և կիսաւէր, որպէս և եկեղեցին սրբոց առանքելոց:

522. Կրօնաւորական միաբանութիւն ի մենաստանի աստ՝ ըստ յառաջ բերելոյ կոնդակին և աւանդութեան միաբանիցն, սկսեալ է ի ժամանակէ անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ այնինչ եկեալ աստ կառոյց զտաճարն սրբոյ Յարութեան և եթող յեղելոցն առ իւր զոմանս ի փառաբանութիւն ամենաբարձրելոյն յայնմիկ տաճարի. իսկ պատմիչք դնեն ի մէջն Թ դարուն առ ժամանակօք սրբոյն Մաշտոցայ՝ յորոյ աւուրս չինեցան վերոյիշեալ երկու եկեղեցիքն և բազմացան կրօնաւոր անձինք անդէն ըստ կանոնի սրբոյն Բարսղի[1]

[1] Կանոն սրբոյն Բարսղի մեծի հայրապետին Կեսարու Կապադովկացւոց յաղագս կրօնաւորաց գտանի թէպէտ և յազգի Հայոց թարգմանեալ յերանելի նախնեացն առաջնոց, այլ որպէս կարծի անծանօթ է այն ի բազմաց՝ ևս և պատճառն այնմ, մանաւանդ յուսումնականաց ևս. յորմէ երեք լիակատար օրինակք գտանին ի գրանոցի Աթոռոյս էջմիածնի, որ պարունակէ յինքեան զերեք հարիւր և զվաթսուն և մի պատասխանիս հարցմանցն. և մակագրութիւն մատենին իսկ է. «Յաղագս հարցողաց սրբոյն Բարսղի»: Ուստի զպատճառն այնմ արժան դատեցաք յառաջ բերել աստէն ամբողջապէս՝ զարարեալն ի Դաւիթ վարդապետէ ումեմնէ, որոյ վաստակոցն մատեան ընդ այլ արդեանց ոմանց երևելի վարդապետաց Հայոց վերակոչի Պատճառ ճառից. «Այսպէս լուաք ի գրոց և յուսուցչացն մերոց, թէ ի ժամանակին յորում էր Գրիգոր Աստուածաբան վերադիտող եկեղեցւոյ Քրիստոսի ի Կոստանդինուպօլիս, եկին յամենայն անապատական վանորացն Եգիպտոսի առնուլ կարգս որպէս և վայել էր նոցին. իսկ նա անպարապ լեալ վասն հերձուածոյն, որ յարիանոսացն և յայլոցն՝ առաքեաց զնոսին ի Կեսարիա առ մեծն Բասիլիոս. և նորա տեսեալ զնոսա և զթղթով յանձնելն Աստուածաբանի լուեալ՝ ուրախութեամբ մեծաւ ընկալաւ զնոսա և պահեաց առ իւր մինչև յաւուրս աղուհացիցն. և ի մուտս քառասնորդին առեալ զնոսին գնաց յանապատ, զի անգբաղ լիցի յամենայն հոգւոց և այնպէս կարասցէ հատուցանել զխնդիրս նոցա յաւժարական սրտիւ: Բայց նախ պարտ է գիտել թէ ով և ուստի էին այնոքիկ որ յանապատն եգիպտացւոց: Տէր մեր որ եկն խնդրել զկորուսեալ ազգ մարդկան, այսպէս ասէր առ իսրայէլացիսն. Ո՛չ եկի զայլ ոք խնդրել, բայց միայն զոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ իբրև կամեցան ճանաչել զնա՝ ելաց ի վերայ երուսաղէմի ասելով. Եկեսցեն աւուրք յորս երանի տայցէք ո՛չ ծնիցելոցն: Եւ վասն տաճարին թէ՝ Ո՛չ մնասցէ այդր քար ի քարի վերայ՝ որ ո՛չ քակտեսցի: Իսկ յետ համբառնալոյ Տեառն մերոյ և յիշանել Հոգւոյն Սրբոյ ի դասս առաքելոցն բազումք հաւատացին ի Տէր, որպէս գրեալ է ի Գործս Առաքելոցն, թէ որպէս հարցանէին զառաքեալսն յասելն. Ա՛րք եղբարք զինչ գործեսցուք: Եւ նոքա հրաման ետուն մկրտիլ և ապաշաւել: Եւ ահա այնպէս բազմանայր թիւ աշակերտելոցն ի հաւատսն. և զայնպիսիսն ազգականքն հալածէին ի տանց և ի հայրենեաց, բայց առաքեալքն խնամ ածէին ամենեցուն նոցա, որով և զՍտեփաննոս, որ լի էր Հոգւով Սրբով՝ վեցեսին ընկերօքն նոցին տեսուչ եդին առաքեալքն: Եւ այնպէս միաբան էին, զի ամենայն ինչ նոցա հասարակաց էր: Եւ Պաւղոս զնոսին սուրբս անուանէ յասելն. Երթամ պաշտաւն տանել սրբոցն, որ յերուսաղէմ: Իսկ որք ոչն հաւատացին, նոքա զառաքեալսն հալածեցին և զՍտեփաննոս քարկոծեցին և զՅակոբոս ի վայր արկին յաշտարակէ տաճարին: Արդ՝ իբրև լցաւ քառասնամեայ ժամանակ յետ համբարձման Տեառն մերոյ և մերձեցան աւուրքն՝ զոր ասաց Տէրն

ի վերայ Երուսաղէմի, յայնժամ հրեշտակի առաջնորդութեամբ գնացին ամենայն հաւատացեալքն, որք միանգամայն և կանայք յԵգիպտոսի անապատսն և շինեցին վանորայս կրաւնաւորաց և կուսանաց և բուռն հարին զհրեշտակական վարուց: Եւ յետ ելանելոյն սոցա յԵրուսաղէմէ, եկին Տիտոս և Վեսպիանոս և կատարեցին զամենայն Հրէաստան և զԵրուսաղէմ ի Զատկի տաւնին: Արդ՝ այնքիկ էին որ մինչ ի ժամանակս սրբոց հայրապետացն Գրիգորի և Բարսղի կացեալք, ի նոցանէ զկարգաց իրաւունս խնդրէին, զի կրկին վարս ունիցին յանձինս իւրեանց», զորոց և զսկիզբն վարուց այնպիսեացն գովէ սքանչելին Փիլոն՝ անմարմնոցն նմանեցուցանելով և հեսեայք զնոսա, ասէ, որ է անմարմինք: Բայց ասի թէ՝ Յայնժամ եկին միանձունք յորժամ և այլ հարքն հայրապետք ընդ ցորենատարսն երթային հանել զաստուածաբան յաթոռոյն՝ զոր ասէ յիւրում տեղւոջն, թէ որք յԵգիպտոսէ եկին՝ ողջունեմ: Բայց զեկաւորութիւն միանձանցն այսպէս դնեն. վասն զի հարցուածքն՝ երեք հարիւր վաթսուն և մի, յայնքան և զթիւ եկելոցն դնեն. որպէս թէ իւրաքանչիւր ոք մի հարցումն ունէր վասն կարգի իրիք, սակայն աննման է այս և անդէպ՝ երեք հարիւր վաթսուն և մի առն այնքան ժամանակ առ Բասիլիոս գոլ յանապատի. և կամ ուր այնքան գոյր բազմութիւն, զիա՞րդ իցէ անապատ. և դարձեալ աննման է ասել թէ՝ Առանց գրոյ առնէին ի միտս ի հարանցն զհարցուածսն, զի որպէս կարէին առնել զայս՝ մարդիկք գոլով մոռացամիտք, որպէս յամենայն մարդկանէ յայտ է: Այլ է այսպէս. Եկին եկեալքն թուով երեսուն և գլխաւորք նոցա և կատարելագոյնք երեք՝ որոց անուանք են Պետրոս, Սահակ և Յովսէփ և բերին զհարցուածսն այսպէս: Ժողովեցան նախ յամենայն մենաստանացն ի մի վայր արք առաքինիք և կատարեալք և խորհելով ի բազում աւուրս յաղաւթս հանապազորդեալք. և ըստ տուելոյ նոցա ի Հոգւոյն Սրբոյ զհարցուածսն որ ինչ պատշաճ էր միաբանակեցացն և առանձնեացն, գրեցին և բերին առ Գրիգոր Աստուածաբան և ի նմանէ առ Մեծն Բասիլիոս. իսկ նորա առանձնացեալ զնոսին ընդ իւր ունելով. և ահա այնպէս նոքա՝ էր որ ի գրելոցն և էր որ յինքեանց՝ հարցանէին. և նա ըստ առատաբուխ հոգւոյն շնորհաց որ ի նմա, լնոյր զհարցուածս նոցա յԱւետարանէն, յառաքելոց, յԱւրինացն, ի Սաղմոսէն, յԱրարածոցն և յայլոց մարգարէիցն մարգարէութեանցն. յորս սկսանի ի նախաշաւիղ իւրոյ վարդապետութեանն այսպէս. Եթէ զգուշական կենցաղս քրիստոնէից մի դիտաւորութիւն ունի զոգւոցն փրկութիւն և այլն, որոց առեալ զայսպիսի կանոնական Սահմանս դարձան անդրէն ի Կոստանդինուպօլիս յաւուր Պենտակոստէին առ Գրիգոր Աստուածաբան, զի այնպէս պատուիրեաց նոցա Աստուածաբան՝ թէ զոր ինչ առնէ մեկնութիւն հարցուածոցդ, առ իս բերէք. զոր առեալ ընթերցաւ և լի եղև ուրախութեամբ. և ապա սիրական համբուրիւ յուղարկեաց զնոսա փառաւորելով զամենասուրբ զերրորդութիւնն յաւիտեանս:

Փոքր ի շատէ բացերև յայտնեցաւ թէ՝ սկզբնաւորութիւն միակեցական վարուց, կամ կուսակրօն հոգևորականութեան յանապատս պատճառ էառ ի սկզբանն ի հալածանաց, զոր բացայայտ նշանակեաց ի վեր անդր Դաւիթ վարդապետ. այլ ո՛չ անդէպ համարիմ ածել ի մէջ և զմիւս գրուած նոյն վարդապետի՝ այն է, զպատճառ ճառին Փիլոնի Եբրայեցւոյ մեծի իմաստասիրի, որ դարձեալ յաղագս քրիստոնեայ կրօնաւորաց առ ի դիւրել զիղձ հետախոյզ քննչաց ի հնութիւնս յայս նիւթ:

«Տեսութիւն գրոցն Փիլոնի, որ տեսական անուանի, այսինքն միակեցաց:

Արդ՝ այս եօթներորդ շարագրութիւն ի Փիլոնէ արարաւ, որ է վերջին ըստ կարգի այլոցն, ո՛չ առնու զսա ի հին պատմութեանցն Մովսէսի կամ յայլոցն, այլ յարանցն անմարմնապէս վարուցն առնու պատճառս գովելոյ զվարուց մաքրութիւն և բնախաւսութիւն առնէ յոլով յարժանաւոր կեանս նոցին. բայց գիտելի է թէ՝ ոյք էին սոքա կամ ո՛ւր ետես զնոսա սքանչելին Փիլոն: Զկնի համբառնալոյ Տեառն մերոյ յորժամ սկսան առաքեալքն քարոզել զբանն կենաց, սկսան բազումք ի հրէիցն ապաշաւել և մկրտիլ յառաքելոցն. և վասն այնորիկ ելանէին ի տանց և ի հայրե-

միակրօնք ի տան Աստուծոյ եղեալ յամենայն դէպս ընկերութեան. և յօրէ անտի և այսր տեւեաց այն հաւասարութիւն ուխտի կրօնաւորական կենաց յայս կղզի և յայլ ինչ ինչ մենաստանս Հայաստան աշխարհի, յոր միտ գրէ Առաքել վարդապետ Սիւնեցի ի Լուծմունս սահմանացն՝ յասելն. «Հարց. Զի՞նչ է արդարութիւն... Պատասխանի. Արդարութիւն կրկին է՝ այսինքն կշռողապէս և արժանապէս. արդ կշռողապէս արդարութիւն ի վանորայս լինի ի միաբանատանն՝ որք ըստ Բարսղի կանոնացն միաբան լինին, զի անդ կշռողապէս և հաւասարապէս լինին ամենայն ինչ. այսինքն՝ կերակուր և հանդերձ

նեաց հալածեալք յազգականաց իւրեանց, որպէս և Գործ Առաքելոցն ցուցանէ: Նոցա և ամենայն ինչքն հասարակաց էր՝ ո՛ւմ զիա՛րդ պիտոյ ինչ լինէր: Սոցա զստեփաննոսեանքն սպասաւորս կացուցին առաքեալքն. զսոսա սուրբս կոչէր Պաւղոս յասելն. Երթամ պաշտաւն տանել սրբոցն որ յերուսաղէմ, զի յորժամ գնացին առաքեալքն ի ծագս տիեզերաց հրամանաւ Տեառն՝ ուր և հոգին առաջնորդէր: Զկնի այնորիկ ի վերայ յարուցեալ հրէիցն՝ զարդարն Յակոբ յանուանեալ եղբայր Տեառն և առաջին կաթուղիկոս Երուսաղէմի սպանին, և զՍտեփաննոս քարկոծեցին. և որ այլ հաւատացեալք և մկրտեալք էին յառաքելոցն՝ հալածականս արարին զնոսին ի Հրէաստանէ: Եւ նոքին գնացեալ ի կողմանս եգիպտացւոց՝ բնակեցան ի Սինէա լեառն և յանապատն և կէսք ի Թեբայիթ լերինն. և անդ կային այնպիսի վարուք՝ զոր պատմէ սքանչելին Փիլոն, զորս և հրեշտակաց համեմատ ցուցանէ ի մաքրութեանն յասելն. Տուն էր նոցա երկիրս և ձեղունք երկինքն և ջահ և ճրագ՝ արեգակն, լուսին և աստեղք և կակուղ անկողինք՝ երկիրս. քնոյ ժամանակ և ո՛չ երբէք, այլ անդադար կային զտիւ և զգիշեր ի հսկումն փառաբանութեանն Աստուծոյ և այսպիսիս համբաւել անուն նոցա յամենայն Աղէքսանդրիա: Եւ յաղագս այնորիկ չոգաւ մեծն Փիլոն տեսանել զնոսա. այլև ո՛չ բնաւին արգելեալք էին նոցա յաւրինացն, զի մի՛ խրտնուցուն. նաև զի զաւրինացն ուսումն հմտութեամբ գիտէին. էր որ թողեալ էին և էր որ դեռ կրէին զո՛չ վնասարարսն ի հաւատարմութիւն Աւետարանին: Իսկ իբրև ետես զնոսա յայնպիսի խստամբերութեան մեծն Փիլոն, Հեսեայք եդ անուն նոցա. այսինքն որոշեալք յաշխարհէ: Եւ դարձեալ ասի բան՝ Եթէ ի գնալն Պետրոսի Վիմի քարոզել զբանն կենաց հռոմայեցւոցն աշխարհի, եմուտ նա յԱղէքսանդր քաղաք. ետես զՓիլոն, խաւսեցաւ ընդ նմա և ասաց մկրտիլ յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. և ո՛չ առ յանձն ասելով՝ ի ծերութիւն հասեալ կամ, ունելով ժամանակ զութսուն ամ. չէ՛ ի դէպ այժմ ինձ աւրինափոփոխ լինել. այլ զոր ինչ առնէ Աստուած Մովսէսի աւրինադրի, արասցէ և ինձ աշակերտի նորա ըստ իմում չափու. իսկ Պետրոս վասն զի շինականագոյն էր բանիւք՝ ո՛չ հոգացեալ զշրջանս փիլիսոփայական ուսմանց. և յաղագս այսորիկ ասաց առ նա Փիլոն՝ այդպէս շինականագոյն են և այլ աշակերտքն նազաւրացոյն. և լուաւ պատասխանի՝ սքանչելիս գործել ուսաք և ո՛չ պաճուճեալ բանս անաւգուտս: Եւ գնաց ի Հռոմ: Իսկ յորժամ շրջէր Յովհաննէս Աւետարանիչ յԱսիական աշխարհին, եկն յԱղէքսանդր և մկրտեաց զՓիլոն՝ արարեալ առաջի նորա սքանչելիս: Եւ յետ այնորիկ գնաց Փիլոն առ միանձունսն վասն միաբանութեան նորոգ հաւատոյն իւր առ նոսա և գովեաց զնոսա ըստ վարուց նոցին արժանաւորութեան: Այլ թէ մկրտեցաւ նա յառաքելոցն և կամ ոչ, չունիմք ասել հաստատութեամբ: Սակայն յաղագս միակեցաց գրոցն զայդ գիտացաք պատճառ և սկիզբն: Կոչէ սա զնահապետսն՝ տեսականս, որպէս թէ բնութեամբ տեսողք եղեն Աստուծոյ. նոյնպէս և զՀեսեայքս՝ տեսականս և նահապետս հաւատոյ անուանէ՝ վասն ստոյգ տեսող լինելոյն Աստուծոյ, որ է աւրինեալ յաւիտեան»:

միապէս տան ամենեցուն. կշռողապէս, միաչափ մեծի և փոքու՝ հանդերձ և կերակուր և ամենայն ինչ: Իսկ արժանապէս և այլն»:

Ի բուն արևելեան ծայրի կղզւոյս փոքր ինչ ընդ հարաւակողմն յեզեր անդ ծովուն են երկու փոքրիկ խրճիթք՝ տեղի ճգնութեան սիրողի զառանձնութիւն իսպառ. ունին մի մի կարի փոքրիկ դրունս և լուսամուտս ընդ արևելս. թէպէտ չէնք սոցա ի նորոյ են՝ ի հասարակ քարանց, ի հողոյ և ի փայտէ, բայց աւանդութեամբ ասեն՝ լինել տեղւոյն ի ժամանակէ անտի սրբոյն Մաշտոցայ և տեղի առանձին ճգնութեան նորա. ուր երբեմն առանձնացեալ ի միաբանութենց անտի՝ աղօթից և խնդրուածոց պարապէր և հազիւ ուրեմն երևէր յետ քանի ինչ աւուրց. և խրճիթքն այնք իսկ անուանին ցարդ **Մաշտոցներ***: Ճանապարհ սորին կարի դժուարին է՝ գոլով ընդ զառիվայր, թէև դիւր. ուստի բազումք իջանեն և ելանեն յափսիթերս:*

523. Գտանէին արդարև յայսմիկ մենաստանի և արք գրագէտք եկեղեցական և վարդապետական մատենից՝ թերևս և ի ժամանակէ իսկ անտի սրբոյն Մաշտոցայ. ոյր վասն և յոլով մատեանք Սուրբ Գրոց հաւաքեցան անդէն ըստ պատմելոյ Ասողկայ: Քաջայա՛յտ է թէ անձինքն այնոքիկ չկարէին հասանել ցմեզ, այլ հեղինակութիւնք նոցին և այլ զանազան հազուագիւտ մատեանք հոգացեալք ի նոցունց մնային և ցարդ և յաւիտեանս ժամանակաց ի ձեռս յարգողաց զայնպիսիս, այլ չի՛ք ինչ նշմարանք այնօրինակ թանկագին հնութեանց այժմ անդէն. քանզի որպէս լսեմք, ի ժամանակի անդ կաթուղիկոսութեան Սիմէոնի Երևանցւոյ՝ այն ինչ յաւուր միում լսեն կրօնաւորք այսր մենաստանի թէ կաթուղիկոսն ունի յայց ելանել յայնոսիկ կողմանս և ի մենաստանն իսկ, աճապարեն, փութան մաքրել զմենաստանն վայելուչ դրութեամբ և զկնի աւարտելոյ զամենայնն՝ փութան իբրև ի յետին գործ և ի մատենադարան վանացն և տեսեալ թէ չի՛ք հնար մաքրելոյ զայն ի փտութեանցն և ի մկնակեր և ի ցեցակեր խեշերանաց թղթոց մատենիցն յայնմիկ համառօտ միջոցի, և զի ջուրք անձրևաց ևս իջեալ ի ծակտեաց տանեացն միջոց առ միջոց իսպառ փչացուցեալ են զմատեանսն և թէ՝ եկեալ կաթուղիկոսն տեսանէ յայնպիսի դրութեան զգրանոցն, ունի անպատուեալ զնոսա և պատժել խստապէս, միաբանութեամբ հանդերձ ժողովեալ ի մի և զաշխատութիւն մեծ ստանձնեալ ի բախտաւորութիւն ինքեանց և յանբախտութիւն ազգի՝ զամենայն ի միասին զոչնչացեալսն և զամբողջն զբովանդակ մատենադարանին զպահեստն հնութեան տան կերակուր ալեաց ծովուն. աւաղ յետին թշուառ տգիտութեանն երանի թէ նոքին իսկ անոպայքն էին լեալ

խորասոյզ ի ծով անդր, քան այնպիսի անձնամաչ ճգամբք բազմա-ժամանակեայ դարուց ժողովեալ պահեստն նախնեաց՝ յորոց միջի անտարակոյս եմք թէ էին այնպիսի մատեանք, որք տակաւին անծա-նօթ են հասարակութեան ազգի:

Առաջնորդք կամ վանահարք մենաստանիս

524. Մաշտոց սուրբ հայրապետն յամի 874. այլ թէ որչափ ժա-մանակ եկաց աստէն նախքան զկաթուղիկոսանալն, չէ յայտ:

Ստեփաննոս. որ և զկնի կաթուղիկոս՝ իբր յամի 965:

Սարգիս. որ և զկնի կաթուղիկոս՝ իբր յամի 985:

Սարգիս Բ, այր գիտնական և լեզուագէտ, որ և թարգմանեաց զինչ ինչ գիրս և արար ճառս և մեկնութիւնս. և էր անդ ի մէջ ԺԱ–դդ դարու, առ որ գրեաց և Գրիգոր Մագիստրոս զԹուղթ:

Սարգիս Գ, թերևս վանահայր, որ գտաւ ի Լոռի ի ժողովն առ Զաքարիա Սպասալարիւ յամի 1205:

Դանիէլ, որ յիշատակի յարձանագրութեանն եղելոյ ի վերայ փորածոյ գրան եկեղեցւոյն Սրբոց Առաքելոց յամի 1557:

Կարապետ եպիսկոպոս Սրբոյ Էջմիածնի, զոր Առաքել վարդա-պետ Դավրիժեցի յիշատակէ (թղթ. 250): Սա թերևս զկնի աւերա-նացն շահ Ապասի եկեալ աստ անդրէն նորոգեաց զմենաստանն:

Մխիթար եպիսկոպոս. սա էր յառաջն քահանայ ի Դալիղարտաշ գիւղ Գեղարքունւոյ, զկնի վախճանի ամուսնոյն մտանէ ի Սևան. և ապա ի Փիլիպպոս կաթուղիկոսէ ձեռնադրեալ եպիսկոպոս կարգի վանահայր, յոր պաշտաման և առնու զվախճան կենաց յամի 1662 ըստ Զաքարիա Սարկաւագի (հատոր Ա, գլ. 45):

Օնոփրիոս յաւուրս Յակոբ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ առ ժա-մանակ ինչ. զորմէ Զաքարիա Սարկաւագ (Բ գլ. 38):

Բարսեղ վարդապետ, որ վտանգեալ ի սառուցէ ծովակին սու-զաւ ի ջուր անդր ընդ իւր եղելովքն, յորոց Բ անձինք ևեթ զերծան յամի 1660 (յԱռաքել վարդապետ Դավրիժեցի, թղթ. 619):

Մխիթար եպիսկոպոս, յորոյ աւուրս նորոգեցան երկու եկեղե-ցիք վանացս յերից եղբարց անտի Տփխիսեցւոց յամի 1664, ըստ արձանագրութեանցն. վախճանեցաւ ըստ գրելոյ Զաքարիա արքե-պիսկոպոսի յամի 1695:

Մարտիրոս եպիսկոպոս Զէրքէզեանց ի Շահրիզ գեղջէ Ծաղկու-նեաց. յաւուրս սորա ևս նորոգեցաւ տանիք եկեղեցւոյ սրբուհւոյ Աստուածածնի ըստ արձանագրութեանն եղելոյ անդէն՝ յամի 1740:

Յովհան վարդապետ ի Նորատուաց գեղջէ Գեղարքունւոյ. յաւուրս սորա յերկրորդ յարձակման լէզկեաց ի Գեղարքունի, ժողովին շրջակայ բնակիչք ծովակիս յայս կղզի իբր յանքոյթ տեղի՝ յորս էին յերևելեաց անտի մէլիք Սարգիսջանն և Ալլահվէրդի իւզբաշին (421) ի 5 յունվարի իբր ամի 1755, այնինչ տեսանեն լէզկիք թափուր զ Գեղարքունի և լի ժողովրդեամբ զկղզին՝ աճապարեն ընդ սառուցեալ ծովակն ի կղզի անդր. յորում միջոցի սոյն վանահայր վարդապետ կատարէր զսրբազան խորհուրդ պատարագին յայնմ երեկոյի ճրագալուցին յեկեղեցւոջ Սրբոց Առաքելոց. և այն ինչ ազդեն սրբազան պատարագչին՝ ասէ ցնոսա. Յաղօթս կացէք և պատրաստեցէք զանձինս ի հաղորդութիւն սուրբ խորհրդոյն. և ահա նոր հանդէս պատժոյն փարաւոնի, զի այն ինչ սուր ի ձեռին մերձ էին լէզկիք մտանել ի կղզին ի սպանումն և ի գերութիւն, ահագնագոչ դղրդմամբ բեկեալ սառին՝ ընկղմեաց զբազմութիւն նոցին ի խորս ջրոյն, որոց սակաւք զերծեալ փախեան ուստի եկինն: Ապա զկնի ամաց ինչ վախճանեցաւ յիշեալդ Յովհան վարդապետ ի դոյն պաշտաման:

Աթանաս վարդապետ Մակուեցի յԱրտազ գաւառէ, որոյ կացեալ ի վանահայրութեանն ամս 5, վախճանեցաւ:

Ազարիա Գանձակեցի եպիսկոպոս յԱղուանից անտի ամիսս ինն: Յաւուրս սորին գայ ի Լիմն անապատէ այսր Գրիգոր վարդապետ ոմն այր ճգնասէր և յաւուր միում առեալ ընդ իւր զմի սարկաւագ և զերկուս կրօնաւորս մահտեսիս՝ գնայ լաստիւն յաղագս հարկաւոր ինչ գործոյ արտաքոյ ծովակին. և զի նորոգ սառիլ սկսանէր ջուր ծովակին՝ կոտորելով զսառն ընթանային դժուարութեամբ: Ապա ծանրացեալ լաստին ի սառուցից անտի՝ ընկղմի յիշեալ վարդապետն և մին ի մահտեսեաց և միւս երկուքն զերծանին կիսահեղձ:

Եղիազար եպիսկոպոս ի Գանձասարայ՝ յերիս ամս կացեալ վախճանի ի կենաց աստի:

Գրիգոր վարդապետ Գանձակեցի, ամս 8: Սա գնացեալ ի Ղզլար սակս ժողովարարութեան մենաստանին՝ անդ առնու զվախճան կենաց:

Սարգիս վարդապետ յՈսկանապատ գեղջէ Գանձակայ. սա վախճանեցաւ ի մերում ժամանակի:

Յովհաննէս վարդապետ ի գաւառէ Գուգարաց առ կենդանութեամբ նորին Սարգսի: Սա ևս կացեալ ամս ինչ և զկնի կառուցանելոյն զնորոգ կացարանսն կրօնաւորաց՝ ետ հրաժեշտ ի վանահայրութենէ և գնաց յԵրուսաղէմ յերկրպագութիւն սուրբ տեղեացն.

և անտի վերադարձեալ ի կարանթին Ալէքսանդրապոլսոյ և անդ հիւանդացեալ՝ վախճանի զմահկանացու կեանս յամի 1840, յամսեանն յունիսի:

Մինաս վարդապետ ի Ճաթղռան գեղջէ Կոտայից իբր ամ մի:

Յարութիւն եպիսկոպոս Գանձակեցի յէջմիածին ձեռնադրեալ. յորում պաշտման կացեալ ամիսս ինչ՝ առաքի ի յաջորդութիւն վիճակին հին Նախիջևանայ և կայ այժմ անդէն:

Յովհաննէս վարդապետ Տփխիսեցի Անտոնեան, որ վարէ այժմ զպաշտօն վանահայրութեանն:

Ապրուստ կենաց կրօնաւորելոցն յայս մենաստան

525. Յառաջ ժամանակաւ յաւուրս իշխանաւորութեան Հայոց ելանէր ապրուստ կենաց ի սնունդ և ի զգեստ կրօնաւորաց մենաստանիս ի սեպհական կալուածոց գիւղորէիցն՝ ընծայելոց յիշխանաւորաց անտի հոգեկան նուիրմամբ, զորս և յառաջ բերէ հայր Ղուկաս Ինճիճեան ի գրուածոց յՕրբէլեան Ստեփաննոսէ. և յայլոց ևս գիւղորէից պատկանելոց մենաստանիս՝ զորս աւանդեն կրօնաւորքն լինել քսան և չորս: Եւս և յաւուրս Մխիթարայ Բ առաջնորդի վանացս պարգևեցան ի ջերմեռանդ հայազգեաց բնակչաց Տփխիս քաղաքի հինգ կրպակք՝ յորոց մին ի խոջայ Բեհպուտէ իշխանապետէ Հայոց Վրաստանի հանդերձ միով մեծ զանգակաւ. և հետզհետէ ստացան յանուն մենաստանիս ջրաղացք չորք. այգի մի ի Նորք թաղի անդ Երևանայ և կրպակ մի ի գաւառի Գեղարքունւոյ:

Եւ այնինչ լի էր բնակչօք և ժողովրդեամբ Գեղարքունի գաւառ, ելանէր հարկաւոր պիտոյքն ի կալուածոց անտի գիւղորէից. ապա զկնի աւարանաց յիշեալ գաւառին և տարագրութեան բնակչացն յայլևայլ հեռաւոր սահմանս օտար իշխանութեանց, մնացին միայն արդիւնքն վերոյգրեալ կրպակաց և կամաւոր նուէրքն հայազգեաց բնակչացն Երևանայ, Արշարունեաց (Սիւրմարի), Գուգարաց (Ղազախու) նուիրմամբ յաղքատին ձեռս միումն ի կրօնաւորաց առաքելոցն ի մենաստանէն յայն սակս. իսկ ի վերջին ժամանակս այնինչ սակաւ առ սակաւ սկսան նորոգիլ գիւղորայք ինչ ի Գեղարքունի, ի Պարսից անտի վերադարձան ի սեպհականութիւն մենաստանին երկու գիւղորայքն ևեթ Յամաքաբերդ և Գոմաձոր, զոր և ունին այժմ. և ի հոգևոր իշխանութենէ յատկացան ինչ ինչ գիւղորայք յանուն մենաստանին յաղագս արդեանցն ի հոգևոր մասին մինչև ցբացումն լուսաւորչեան Հայոց Սիւնհոդոսի և ի կարգաւորումն յատկացեալ

վիճակաց. ապա այն գիւղորայք անդրէն հաշուեցան ընդ վիճակաւորելոցն արքեպիսկոպոսութեանն Երևանայ: Եւ յայնժամ ապա ի կարգի եդաւ այս մենաստան ի հոգևոր ատենէ վիճակին Երևանայ ընդ միւս վանորէիցն. և տուաւ նմա տումար, զի յիւրաքանչիւր ամի զբնական արդիւնս ի կալուածոց անտի վերոյիշատակելոց ցուցցեն ի տումարի անդ, նոյնպէս և զհարկաւոր ծախսն մենաստանին: Եւ այնպէս ի լրութիւն ամին ներկայացուսցէ զայն տումար՝ ում հարկն է, յատեան վիճակին Երևանայ ի վերազննութիւն. զի թէ մուտք բնական կալուածոցն բաւական լիցի ծախուցն և յաւելցի ևս ինչ, յաւելուած մնասցէ ի սեպհականութիւն մենաստանին. իսկ թէ ոչ՝ յայնժամ վասն պակասորդին տնօրինեսցէ այն հոգևոր ատեան ըստ կանխագոյն յայտարարութեան իւրում առ ծայրագոյն հոգևոր իշխանութիւնն:

Իսկ վասն եկեղեցական պաշտամանցն և վասն բարուց և վարուց նոցին կրօնաւորելոցն ասացէն, դիցուք առաջի զգրուածս նորին Զաքարիա արքեպիսկոպոսի Տփխիսեցւոյ՝ որ եկաց առ նոսա յամին 1825:

Եկեղեցական պաշտամունքն

526. «Զօր հանապազ ի մէջ գիշերի վաղայարոյց լեալ՝ հնչեցուցանեն զզանգակս և երամովին գան ժողովին յեկեղեցւոջ, իբրև ձայնիւ փողոյ ի հոգևոր մարտ. և սկսանին ասել զմի կանոն Սաղմոս և զգիշերային ժամերգութիւնն ըստ պատշաճին, մինչև ցզքէն գոհանամք: Ապա զերկու կանոն ևս ասեն հանդերձ կանոնագլխով՝ ըստ հասարակ աւանդութեան մեծի Աթոռոյն: Յետ որոց անընդմիջաբար զմնացեալ ժամերգութիւնն արևագալի երգօքն հանդերձ ի պահոց աւուրս. և կատարեալ զայնոսիկ՝ գնան իւրաքանչիւրքն ի սենեակս իւրեանց, ուր զառանձնականն առնեն աղօթս ըստ կամաց: Գումարին յերրորդ ժամուն և ասեն զճաշուն երգօք և մեծ աղօթիւք պահոց: Ապա գնան ի ճաշել, ուր ընթեռնու ոմն զվարս հարանց սրբոց, որում ունկնդիր լինին լռելեան ճաշակելով զպարգևսն Աստուծոյ: Եւ զկնի քանի ժամուց անցանելոյ, զերեկոյեանն սկսանին նախ զի նեղութեանն ասելով, և զհետևեալսն: Քանի ինչ ըօպէ մնացեալ, զեկեսցեն ասեն, զոր և պսակեալ՝ գնան ի սենեակս առանց ինչ ճաշելոյ: Են ոմանք ի նոցանէ, որք և իսկ ննջեն և են որք ի վերայ այնոցիկ երկար աղօթից ի ժամս ձիգս առանձնականաց պարապին մաղթանաց: Եւ որ մեծն է՝ գրեթէ ի մեծի պահոց

զսակաւ ժամս գտանեն ննջելոյ առ աղօթից երկար լինելոյն, յորում են ոմանք, որ զօր ամենայն զուլթն կանոնն լրացուցանեն ի ծածուկ: Հանդերձեալ ժամարարն նոցին հսկէ զգիշերն ողջոյն պաշտօնէիւք հանդերձելովք ի սպասաւորել սրբոյ պատարագին. իսկ ի տարւոջ տասն գիշեր խմբովին հսկեն: Հինգ աւուրս նաւակատեաց, հնգիք՝ Տեառնընդառաջի, Ծաղկազարդի, Մեծի Ուրբաթու, Նոր Կիւրակէի և Հոգւոյ Գալստեան, յորս ամենեքեան գրեթէ ի բերան սաղմոսեն և այնպէս զգիշերս զայնոսիկ անքուն անցուցանեն ի պատիւ և ի փառս անքուն ակամբ պահպանողին Իսրայէլի Աստուծոյ»:

Վարք և բարք նոցին

527. «Կրթութեամբ ունին զբարս հեզս և խոնարհս ամենայն հլութեամբ և հպատակութեամբ. ո՛չ երբէք լսելի լինի ի նոցին բերանոց բան տգեղ տաղտկացուցիչ լսելեաց պատուականաց, զորս ծանեայ արդարև կատարող բանից քրիստոսեան...: Եւ եթէ կարի վշտանան յիրերաց, զայս միայն ասեն՝ թէ քո հայրն օրհնեմ. բայց դու մի՛ զճարտասանականն իմանար զհեգնութիւն, այն զի նոցա բանն է անպատրուակ՝ այոն այո, և ոչն՝ ոչ: Ո՛չ բնաւ ննջեն ոխս ի սրտի ունելով՝ ըստ առաքելական պատգամաց, այլ նոյն ժամայն փոքրն, եթէ յանդգնեալ իցէ մեծին անհնազանդութեամբ իւիք, համբուրմամբ ձեռացն ասէ զմեղայն կատարեալ զղջման. յորմէ զթողութիւնն գտանէ առանց նենգութեան: Իսկ վարուք են գոգցես հանգէտ նախնի սրբոց հարց, մաքուր յարատոց ի մարդկային ընութեանց և կարելեաց: Հասարակաբար յաւուրն միանգամ ուտեն զկերակուր՝ կազմեալ ի լոբիայէ, յոսպէ և յայլ ընդեղինաց. և գրեթէ զամն ողջոյն պահեն՝ բացի շաբաթէ և ի կիրակէէ, յորս նաւակատեաց կերակրով շատանան: Եւ ի վերայ այսոցիկ ամենայնի, են ոմանք՝ որ զջերմն կերակուր ո՛չ ուտեն, այլ լոկ հացիւ և ջրով բաւականանան. են և ոմանք որք երբեմն զաւուրս հինգ անսուաղ անցուցանեն, բայց որքան կարելին է գաղտաբար. սակայն ի յայտ ելանէ գործն բարութեան. ո՛չ ապաքէն աստուածային է հրամանն, որ ոչ անցանէ, ոչինչ է ի ծածուկ, որ ո՛չ յայտնեսցէ և այլն: Եւ որպէս զմարմնաւորն պահեն պահս հրաժարմամբ ի կերակրոց, ըստ այնմ և զհոգևորն պահեն՝ հրաժարմամբ ի մեղաց ըստ կարի՝ զոր տեսեալ եմ: Ապա ցուցանել յօժարեցայ. ի սաստիկ ձմեռան ո՛չ վառեն զհուր ի սենեակս իւրեանց, այլ աստուածեղէն վառեալ հրով ջերմանան: Եւ են յիրաւի ըստ ամենայնի անկեղծ ի վարս, զի որով

օրինակաւ կեան ի մենաստանիս, նովիմբ վարին յաշխարհի: Զգեստ մարմնոց նոցին են խարազն յոյժ մեկին (այսինքն անզարդ)՝ սկսեալ ի վանահօրէն մինչև ցյետինն միօրինակ, որպէս տեսանէք: Վանահայրն ո՛չ կարէ առանձին վասն իւր տալ եփել ինչ առանց հաճութեան հասարակութեան. ամենայն ինչ հասարակաց է. ո՛չ ոք ի նոցանէ ունի մինչ ցմի դրամ, այլ զոր ինչ ունին՝ պահէ արկեղապահն, որ հաշուիւ զայնոսիկ ծախէ ի պէտս մենաստանիս: Ահա քեզ իսկապէս կրօնաւորութեան ուղիղ սահման պայմանի, որք չեն և այլն:

Թիւք կրօնաւորացն

528. Զաքարիա արքեպիսկոպոս դնէ հանդերձ վանահարքն զանձինս քսան և մի, յորոց եօթն աբեղայք, եօթն սարկաւագունք, երեք դպիրք և չորս մահտեսիք, այսինքն՝ առանց աստիճանի կրօնաւորք:

Այժմ գտանին հանդերձ վանահարքն երեքտասան անձինք. հինգ աբեղայք, մի սարկաւագ, երկու դպիրք և հինգ մահտեսիք. թէպէտ աբեղայքն մետասան էին, բայց ամօք ինչ յառաջ ըստ տնօրէնութեան հոգևոր ատենին Երևանայ Գ ի նոցանէ փոխադրեցան ի մենաստանն Այրիվանաց (Սուրբ Գեղարդայ), Գ ևս առաքեցան՝ մին, այսինքն Անտոն Տփխիսեցի ի մենաստանն Ագուլեաց, երկրորդն՝ Յովսէփ, ի Գեղարքունի ի նոյն գաւառ յաղագս վիճակային գործակալութեան, երրորդն՝ Թադէոս յԱտրպատականէ՝ յԱրագածոտն գաւառ նոյնպէս յաղագս վիճակային գործակալութեան. գտանին այժմ անդէն և վարձաւոր ծառայք վեց. Դ ծառայող լաստին և Բ ի պաշտաման հաց և կերակուր եփելոյ:

Լաստ մենաստանիս

529. Այս լաստ կազմեալ է յեօթն մեծամեծ գերանաց ի մայր փայտից և ամրացեալ ընդ իրեարս դարձեալ փայտեայ ստուար գօտեօք բևեռակապ և է առանց առագաստի. այլ վարեն զայն երկու մեծամեծ թիակօք՝ ի մի թի երկու անձինք. յերկոսին կողմանս ի վերայ լաստին են երկու տախտակամած անշուք վանդակք, յորոց վերայ զծանրոցս և զմարդիկ առեալ՝ տարուբերեն ընդ կղզին և ընդ ցամաքակողմն. զայս պաշտօն վարէին յառաջագոյն կրօնաւորքն, այլ այժմ վարձաւոր ծառայք. կարի տարժանմամբ վարեն զայս լաստ ի ծովակին յաղագս ծանրութեան և անհեթեթ գոլոյ այնր և յա-

ղագս բուռն լինելոյ երբեմն ալեաց և հողմոյն, մանաւանդ երբ հնչէ արևելեանն հողմ՝ անուանեալ առ նոսա յանուն Սօթայ. ուստի ի դադարելն ի վարելոյ՝ թէ ի կղզի անդ և թէ ի Կեամադուռն կոչեցեալ տեղւոջ, որ է հանդէպ կղզւոյն ի ցամաքի, հաստագոյն շղթայիւք պրկագոյն կապեն ի պրկոցի, զի մի՛ կորզեալ ի բռնութենէ հողմոց վարեսցի տարադէպ: Ունէին կանխաւ զհարկաւոր պարագայս առ ի նիւթ օրինաւոր նաւակի՝ պատրաստեալ զայն ի Տփխիսայ, այլ չգտանելոյ վասն նաւակաշէն հիւսան՝ մնայր այնպէս. և զկնի ևս շինեցաւ թէպէտ ի ռուս արհեստաւորի, այլ յաղագս անհմուտ գոլոյ ծառայողացն մնայ այնպէս անգործ. և ի գործ դնեն դարձեալ զնոյն լաստ տարժանակիր:

Եւս ի գրուածոց Զաքարիա արքեպիսկոպոսի Տփխիսեցւոյ յաղագս ոմանց հանգուցեալ վարդապետաց միաբանից տեղւոյս

530. «Առ առաջնորդութեամբ Սարգիս վարդապետի (Ոսկանապատեցւոյ) փայլէին աստուածահաճոյ վարուք երեք վարդապետք, որոց անուանքն էին Ռափայէլ, Մխիթար և Մակար. նախայիշատակեալ Ռափայէլ վարդապետն ծնեալ էր ի Գանձակ, ի թուականի Հայոց ՌՄԺ (1761), ի 5 նոյեմբերի, որոյ գնացեալ ի մեծ անապատն Տաթևու կրօնաւորեալ էր անդանօր: Ապա տենչալով հասանել ևս գերազանց կրօնից, եկեալ այսր ՌՄԽԲ (1793), որ ի նմին ամի ձեռնադրեալ աբեղայ, անցուցանէր զկեանս ճշմարիտ և անկեղծ կրօնաւորութեամբ, որ էր խոստովանահայր և միանգամայն վարժապետ կրօնաւորացն: Ասեն զնմանէ թէ զամենայն աւուրս իւր կենայ հացիւ և ջրով շատանայր. և թէ՝ ո՛չ վայրկեան ինչ անցուցանէր առանց ծնրադրութեան և աղօթից, զի զաւուրն հազար ծունր կրկնէր այնմ, որում կրկնի ծունր յամենայն արարածոց: Երանելին այն փոխեցաւ առ Տէր ՌՄԿԶ (1817), Է (7) հոկտեմբերի, գոլով յիսուն և վեց ամաց և թաղեցաւ փառաւորապէս ի կողմն հիւսիսոյ եկեղեցւոյ Սուրբ Աստուածածնի, որոյ հռչակեալ անունն սրբութեան քարոզի շուրջ զգաւառաւս և այլուր:

Ո՛չ պակաս քան զնա համբաւեալ էր յառաքինական ներգործութիւնս և աշակերտ նորին Մխիթար վարդապետն Շամքորցի, նմանօղ ըստ ամենայնի լինելով նմա, որպէս և նայն Քրիստոսի, որ հանգեաւ պատուական մահուամբ ՌՄԿԷ (1818), ԻԱ (21) մարտի և թաղեցաւ հանդիսութեամբ ի գաւթի եկեղեցւոյ Սուրբ Աստուածածնի:

Իսկ Մակար վարդապետն Շամշադինեցի (Շամշոյլտէ) համանմանն Ռափայէլի և Մխիթարայ՝ պատահական դառն մահուամբ ել յաշխարհէ, սովին օրինակաւ. ի սոյն ամի (որ է 1825) ի 1 մարտի՝ որ էր կիւրակէն տնտեսի, պատարագեալ էր զՔրիստոս. և ի 2 յաւուր երկու շաբաթի մինչ կամեցեալ նորա գնալ յայցելութիւն Պօղոս վարդապետին, արտաքս կան զկղզեակս եղելոյ և այն ի վերայ սառին թուլացելոյ և մերձ էր ի ցամաք կոյս, բեկեալ սառին հեղձոյց զնա. զորոյ զմարմին որոնեցին այսր անդր թէպէտ կրօնաւորքն կարի հետազօտութեամբ զաւուրս բազումս, բայց ո՛չ գտին: Եւ այնպէս մնաց զամիսս ութն ի յատակ ծովակին. այն զի չև էր փթեցուցեալ ջուր զհանդերձս, զոր զգեցեալ ունէր, որ գտաւ սքանչելեօք այսպէս: Երևեալ երկիցս նորա՝ վարդապետի ումեմն ինքեանց միաբանակցի ի տեսլեան քնոյ, ասացեալ էր, թէ՝ Է՞ր զիս ո՛չ բերեալ թաղէք, զի ես ելեալ եմ առ եկեղեցին, բայց առանց յատկացուցանելոյ, թէ որո՛յ եկեղեցի է այն: Եւ կրօնաւորքն կարծելով զմին յեկեղեցեաց կղզւոյս, մանաւանդ զՍուրբ Աստուածածնին, որ մերձ է առ ծովեզրն. ստիպաւ որոնեցին զժամս բազումս յեզր ծովակին յայսկոյս և յայնկոյս, սակայն ո՛չ գտին: Այնինչ տրտմեալ էին կրօնաւորքն մինչև յոյժ առ ոչ գտանելոյ զնա, ահա եկն տաճիկ մի և պատմեաց կրօնաւորաց արտաքոյ կղզւոյս եղելոց, ընդ որս էի և ես (Զաքարիա արքեպիսկոպոս), թէ՝ գտի զմարմին Մակար վարդապետին առ ծովափն հանդէպ եկեղեցւոյ Գանձավանից՝ որ ի գիւղն Պորտակ, և ծանեայ զնա ի կտորոյ գօտւոյ նորին: Զայս լուեալ կրօնաւորացն՝ առ խնդութենէն յարտասուս հարեալ՝ ետուն պարգևս տաճկին և առաքեցին ընդ նմա զոմն յինքեանց բերել զմարմին նորա, զոր բերեալ թաղեցին մերձ ի գերեզման Ռափայէլ վարդապետին մեծաւ յուղարկաւորութեամբ և ցօղով արտասուաց ի 22 նոյեմբերի 1825»:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԳԱՒԱՌ

531. Այս գաւառ ըստ յառաջ բերեալ բանիցն Հին Հայաստանի պարունակէ յինքեան զչորեսին կողմանսն շուրջ զծովակաւն, բայց գտանին դարձեալ յայնմ մասնաւոր գաւառք՝ Մազազ, որ որպէս նկատի ի գրուածոցն Զ Յովհաննու կաթուղիկոսի, անկանի յարևմտեան եզր ծովակին՝ ի միջոցս Սևանայ, Վարաժնունեաց և Կոտայից, քանզի յարձակումն Բշրայ ոստիկանի ի վերայ կղզւոյն Սևանայ անցանելոց է ընդ Կոտայս գաւառ և ընդ արևելեան սահմանս Վա-

բաժնունեաց և այնպէս հասանել ի Սևան, զի չի՛ք այնպիսի յարմար ճանապարհ զօրաց ի Դունայ ցկղզին Սևան յայլ մերձակայ տեղիսն. ուստի այժմ պարունակի այն ի Վարաժնունիս. և Սոթք՝ որ անկանի յարևելեան վայրսն ծովակին, ունի ի հիւսիսոյ զլերինս Գուգարաց-ւոց, յարևելից զլերինս Արցախայ և ի հարաւոյ զՎայոյ ձորոյ. և զի զհողմն, որ յարևելից աստի ի լերանցս հնչէ ի ծովակն, անուանեն և այժմ յանուն այդր գաւառի. և այս գաւառ ևս պարունակի այժմ ի Գեղարքունի. ուստի Գեղարքունին սկսեալ ըստ այժմեան առման ի հարաւային եզերէ ծովակին գնայ մինչև ցարևելեան սահմանսն և անտի պտոյտ առեալ ընդ կէս սահման հիւսիսային եզեր դադարի անդէն. իսկ միւս մասն հանդերձ արևմտեան սահմանաւն ծովակին միացեալ է այժմ ընդ Վարաժնունիսն:

Այս գաւառ դարձեալ ըստ այժմեան առման բաժանի ի չորս մասն ըստ չորից երևելի գիւղորէիցն ի նոսին՝ Գաւառայ, Կոթայ (Ներքին Ատիեաման), Ղարանլըղայ և Սոթայ (Մազրայ):

Ա մասն

532. **Գաւառ**. *այսպէս անուանեալ ըստ ցուցանելոյ գրուածոցն ի տապանավէմսն չիրմաց անդէն և ի յիշատակագիրս մասանց (69). տունք՝ 500: Եկեղեցին, զոր յառաջագոյն փայտայարկ արարին, անուանեցաւ յանուն Սուրբ Կարապետի, ի յիշատակ անուան եկե-ղեցւոյն, որ ի Պայազիտ. իսկ երկրորդն չէ օծեալ տակաւին ի պատ-ճառս մասնաւոր թերութեանցն, յորում և վարձաւոր աշխատաւո-րացն զծախսն վճարէ ջերմեռանդութեամբ աղայ Բարսեղն Արծրու-նի, ըստ մտադրութեան ժողովրդոցն պարտի անուանիլ Ծիրանա-ւոր՝ այն է յանուն սրբուհւոյ Աստուածածնի՝ դարձեալ ի յիշատակ անուան միւս եկեղեցւոյն, որ ի Պայազիտ: Եւ է այս գիւղաքաղաք հեռի յարևմտեան ծայրէ ծովակին, այն է Յօրդակլու գեղջէ ընդ արևելս իբրև երկուց ժամուց յարևմտեան եզեր շատաջուր գետա-կին Կեօքչայ անուանելոյ. յառաջն կարի ջերմաջերմ եռանդեամբ քաղաքացի գաղթականք ի Պայազիտոյ բնակեցան աստէն յուսով օր քան զօր բազմանալոյ բնակչաց և լինելոյ քաղաքագեօղ վաճառօք, չինեցին տունս և կրպակս, այլ ամ ըստ ամէ տեսեալ թէ ո՛չ այն-քան աճի առևտրութիւն, որքան խաչինք և արջառք բազմանան, ի վաճառականաց անտի փոխադրեցան ոմանք յԵրևան և ոմանք յԱ-լէքսանդրապոլ Շիրակայ. իսկ մնացեալքն ըստ առաւել մասին պա-րապին յերկրագործութիւնս և են ի հաշուի քաղաքացեաց առանց*

վճարելոյ զհարկ այնպիսի, զոր պարտաւորին գիւղականք. ի սոյն հաշուի են և բնակիչքն Ղուլալուայ և Փաշաքեանտի:

Յարևելից գիւղաքաղաքիս է լեզուակ ինչ առապարի, գլուխ նորա ընդարձակ տափարակ. յերից կողմանց է փոքր ինչ զառընդթափ, իսկ ի միւս կողմանէ եղեալ է յառաջագոյն որմն կամ պարիսպ. և որպէս նկատի եղեալ է այս տեղի փոխանակ ամրոցի ի պաշտպանութիւն բնակչացն. յոլով շիրիմք են ի սմա խաչվիմօք զարդարեալ:

533. **Նորատուաց** *գիւղ ըստ արձանագրացն եղելոց ի սմա. իսկ ըստ Յովհաննու կաթուղիկոսի՝* **Նորատունս***: Եւ ըստ Օրբէլեան Ստեփաննոսի՝* **Նորատուս** *և* **Նորատու***, զորս յառաջ բերէ Ստորագրութիւնն Հին Հայաստանի. այլ այժմ կոչի Նորատուզ. և է հեռի ի Գաւառայ իբրև միով ժամաւ ընդ արևելեան հիւսիս յեզեր անդ ծովակին. ուր և յարևմտից գեղջս անկանի գետակն Կեօքչայ անուանեալ ի ծովակն: Բնակին ի սմա տունք 96: Եկեղեցի գեղջս յանուն Սուրբ Աստուածածնի, զոր շինեաց Սահակ Սիւնի եղբայրն Գրիգորի Սուփանայ ըստ պատմելոյ Յովհաննու կաթուղիկոսի: Եւ նա ինքն Սահակ վախճանեալ թաղի ի դրան այսր եկեղեցւոյ: Եւ է այս տաճար ի կոփածոյ խարտեալ մեծամեծ քարանց՝ բաւականաչափ մեծութեամբ առանց սեան: Կամարայարկ նորա օրոցաձև խոնարհեալ կայ, իսկ որմունքն ամբողջ: Աւանդի վասն այսր եկեղեցւոյ թէ երբեմն ի գալ լեզկեաց ի Գեղարքունի՝ ժողովին բովանդակ բնակիչք գեղջս յայս եկեղեցի ի ներքս և ի տանիսն, զոր պաշարեն լէզկիք և հուր հարեալ՝ այրեն զեկեղեցին բնակչօքն հանդերձ: Եւ ի պատճառէ աստի խոնարհեալ ասի կամարայարկ նորա. քանզի ի գալ յայս գիւղ նորոգ բնակչացս և ի մաքրելն զայս եկեղեցի յաւերանաց, լի էին ի մէջն հողոյն ոսկերք մարդոյ՝ մեծաց և փոքունց և այրածք կանացի զարդուց յայտնի ապացոյց պատահմանն այնորիկ: Արտաքոյ եկեղեցւոյ ի հարաւոյ են քանի ինչ շիրիմք մեծամեծ որձաքար վիմօք. մին ի նոսա ունի զկարի մեծ և ստուար տապանավէմ և թերևս իցէ շիրիմն նորին Սահակայ Սիւնւոյ կառուցանողի տաճարիս:*

Գերեզմաննոց գեղջս յարևելից նորա կարի արձակ տարածութեամբ զարդարեալ մեծամեծ փորածու խաչվիմօք, յորում են երկու մատրունք տեղիք պատարագելոյ յաւուրս յիշատակի ննջեցելոց: Մատուռն փոքրիկ յորմն իւր հիւսիսակողմն ունէր արձանագիր շինութեանն, այլ սկսուած նորա եղծեալ՝ ըստ այսմ.

«..... գաւորութեան

..... որդի Մխիթարս[1]*,*

---

1 [ԴՀՎ–ում (հտ. Դ, էջ 25)՝ **Մխիթարա]**:

որ եղէ առաջնորդ մեծահռչակ գեղիս Նորադվաց[1] *կամ եղև ինձ և կանգնեցի զխորանս և զնշանքս տէրունական յիշատակ հոգւոյ իմոյ և Զուգայիին և հաւր իմոյ Մխիթարայ և համաւրէն ննջեցելոց*[2] *իմոց: Որք երկրպագէք սմա զմեզ յաղաւթս յիշեցէք»:*

Կից հիւսակողման մատրանս լայնադիր պատուանդանաւ կառուցեալ էր խաչվէմ մի մեծ, որ անկեալ դնիւր զառաջեաւ պատուանդանին. և ի ճակատ այնր պատուանդանի էր արձանագիր ըստ այսմ.

«Ի ՈԿ (1211) թվ., ի ժամանակս բարեպաշտ իշխանաց մերոց Զաքէի[3] *և Իւանէի*[4] *ես Մխիթար Փէճարենց*[5]*, որդի Դաւթի, շնորհիւն Աստուծոյ և հրամանաւ մեծին Իւանէի եղէ առաջնորդ մեծահռչակ գեաւղիս Նորատուաց, կամ եղև ինձ կանգնեալ զխաչս ի փրկութիւն*[6] *ննջեցելոց իմոց: Որք երկրպագէք, յիշեցէք ի Տէր»:*

Իսկ միւս մատուռն ի հիւսիսակողմն գերեզմաննոցի, որոյ յորմն արևմտեան յերկուս կողմանս դրանն գտանի արձանագիր այս ինչ.

«Ես Ալէքսանս, որ եկեղեցիս չինեցի խիստ դառն դժար ժամանակ էր»:

Ի հիւսիսակողմն դրան.

«Ես Սարգսի թոռ Միրզատի որդի Ալէքսանս չինեցի սուրբ եկեղեցիս: Թվ. ՌՃԿԳ (1714) էր: Ես Ատիս գրեցի անարժան»:

534. Ի հարաւակողմն գեղջս, ի մէջ անդաստանաց է փոքրիկ տաճար սրածայր կաթուղիկէիւ՝ զոր անուանեն յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Շուրջ զորով են քանի ինչ աւերակ տանց. և որպէս երևի՝ լեալ է սա յառաջագոյն մենաստան կուսան կանանց: Սիմէոն կաթուղիկոս Երևանցի կոչէ զայս տաճար **Դափուց վանք***: Զունէր գրուած ինչ յորմունսն:*

535. **Ղշլաղ** *գիւղ՝ տունք 46: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Եւ է ի միջոցի անդ Գաւառայ և Նորատուաց գեղջ ի ձորամիջի անդ գետակին յարևելեան եզեր նորա:*

536. **Առնեղ***. և այժմ կոչեցեալ* **Փաշաքեանտ***, մերձ ի Գաւառ յարևմտից հարաւոյ նորա առ ստորոտով երկարաձիգ ինչ առապարի, ուր բղխին յոլով աղբիւրք՝ յորոց մին կարի ստուար յորդութեամբ*

---

1 [ԴՀՎ–ում՝ **Նորատվաց]**:
2 [ԴՀՎ–ում՝ **ամենայն ննջեցելոց]:**
3 [ԴՀՎ–ում (հտ. Դ, էջ 25)՝ **Զաքարէի]**:
4 [Երկու դեպքում էլ Շահխաթունեանցի մոտ **Իվանէի** է, որ վրիպակ է]:
5 [ԴՀՎ–ում՝ **Փեճուրանց]**:
6 [ԴՀՎ–ում՝ **փրկութեան**: Սակայն ըստ լուսանկարի կարելի է կարդալ նաև **փրկութիւն]**:

և սկզբնաւորեն զգետակն **Կեօքչայ** *անուանեալ. բնակիչք սորա ի հաշիւ բնակչաց Գաւառայ են և են տունք 113: Կրկին եկեղեցիք են աստ՝ մին իսպառ աւերեալ և միւսն կայ ի կանգուն ի կոփածոյ քարանց և է փոքր դրութեամբ և անսիւն և ունի կաթուղիկէ փոքրիկ. ի զննութեան իմ աստ չգտի գրուած ինչ յորմունսն. և չգիտէին ևս բնակիչքն զանուանակոչութիւն եկեղեցւոյս՝ թէև բարեպէս մաքրեալ աղօթէին ի նմա և կատարէին զխորհուրդ սրբազնագործութեանց. հետախոյզ եղեալ ի շրջակայս նորա՝ տեսի զվէմ մի մեծ կոփածու անկեալ անդ և ծածկեալ ի թփոց: Եւ ետու շրջել զայն ընդ միւս կողմն և ահա գրուած ի նմա այսպիսի.*

«Կամաւն Աստուծոյ Տատլուղանս, դու[ստր][1] *պարոն Դաւթին կենաց կից*[2] *Փիրհամզայ աղին, որ նորոգեցի շրջապատ սուրբ Գրիգորիս յիշատակ հոգւոյ իմոյ. ՋՂԸ*[3] *(1549)»:*

537. **Ղուլալի**. *տունք 130: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Այս գիւղ անկանի ի հարաւակողմն Գաւառայ, հանդէպ Փաշաքեանտի յարևելից նորա առ հիւսիսային ստորոտով այլում առապարի: Եկեղեցի գեղջս՝ զոր անուանեն Սուրբ Աստուածածին, եղեալ է յառաջագոյն կամարայարկ, այլ այժմ միայն սեղանն և կամարայարկ նորա կայ առաջին շինուածովքն. իսկ միւսն նորոգ ծածկեցաւ փայտիւք ի բնակչաց: Ի հարաւակողմն ի հիման անդ կամարին սեղանոյ էր գրուած այսպիսի.*

«Շնորհօքն Քրիստոսի շինեցաւ սուրբ տաճարս թվին ՌՃԻ և Գ (1674), ես տանուտէր Գասպարս և քահանայքս և ժողովուրդս միաբան շինեցաք սուրբ տաճարս յիշատակ հոգւոց մերոց»:

Յարևելակողմն եկեղեցւոյն է գերեզմաննոց՝ յորում ի շիրիմսն անդ են խաչվէմք փորածոյք, յորոց մին կարի նուրբ և ճարտարարուեստ քանդակեալ և ունէր գիր ըստ այսմ.

«... ԾԴ. Փիրհամզես, որ ուխտանիս ոսկոդ տանս Գեղամայ ետու կազմել տապանս և նկարել զխաչս, որք կարդաք յի՛՛»:

Ի հարաւակոյս խաչվիմին անուն քանդակագործին. «Ես Գրիգոր եպիսկոպոս նկարեցի զխաչս ի խնդրոյ Փիրհամզին ի փրկութիւն հոգւոյ իւրոյ Զաւրհապին»:

---

[1] [Շահխաթունյանցի մոտ՝ «Տատլուղանսդու»: ԴՀՎ–ում (հտ. Դ, էջ 95)՝ «**ես Տատլուղանս, դուստր**». Արձանագրությունը հրատարակել են նաև Ալիշանը, Սմբատյանցը, Լալայանը: Բարխուդարյանը գրում է. «Արձանագրությունը տեսել է միայն Շահխաթունյանցը, որից արտագրել են մյուսները»: Ուստի և՛ **ես**-*ը* և՛ **դուստրի ստր**–ը պիտի համարել հավելում, քանի որ Շահխաթունյանցը չունի]:

[2] [ԴՀՎ՝ում՝ **կենակից]**:

[3] [ԴՀՎ–ում՝ **թվ. ՋՂԸ]**:

538. **Գանձակ** *գիւղ՝ ըստ գրուածոյ տապանավիմին եղելոյ ի մէջ եկեղեցւոյ գեղջս: Եւ այժմ անուանի* **Քեօսամահմատ***: Հեռի է ի Փաշատեանտ գեղջէ ընդ հարաւ միով ժամաւ: Բնակիչքն՝ տունք 86: Եկեղեցին յանուն սուրբ Գէորգայ՝ կառուցեալ ըստ ձևոյ և ըստ մեծութեան եկեղեցւոյն Նորատուաց, և գրեա թէ միոյ ճարտարապետի գործ երկոքին ևս և ի միում դարու: Այլ ըստ նմանութեան այնմ խոնարհեալ է և կամարայարկ սորա՝ զոր փայտածածք արարին բնակիչքն: Ի մէջ եկեղեցւոյս ի հարաւակողման է տապան մեծադիր և ունի գրչութիւն ի վերայ՝ ըստ այսմ.*

«Թվ. ՉԿԲ (1513): Այս է հանգիստ Ազարիին[1]*, որ էր առաջնորդ Գանձակիս: Յիշեցէք ի Քրիստոս: Ես Գունազս*[2] *կանգնեցի զտապանս»:*

539. **Տէլիղարտաշ***. տունք՝ 118: Եկեղեցին անուամբ Սուրբ Խաչի: Եւ է ի հարաւակողմն Գանձակ գեղջ հեռի ի նմանէ իբր ժամ մի: Բազում աղբերակունք են զառաջեաւ գեղջս, որոց ջուր ժողովեալ ի լճակ՝ գնայ ի վայր և անցեալ առ արևմտեան եզերք Ղուլաղի գեղջ՝ խառնի ի Կեօքչայ անուանեալ գետակն մերձ ի Գաւառ:*

540. **Քիւզաճի***. տունք՝ 41: Եկեղեցին յանուն Սուրբ Խաչի: Հեռի է այս գիւղ ի Տէլիղարտաշ գեղջէ ընդ արևելս իբրև միով ժամաւ և է յարևմտեան ստորոտի առապարին, որ բաժանէ զայս մասն ի միւս մասնէն որ յանուն Կոթայ:*

541. **Հայր Ոհանավանք***. այսպէս անուանեալ ի բնակչացս. և է յարևմտից հիւսիսոյ Գաւառայ հեռի ի նմանէ իբրև ժամ և կէս առ ծովեզերն կառուցեալ ի վերայ ուղղաբերձ ժայռի: Տաճար նորա փոքր և անսիւն ի կոփածոյ քարանց: Արևելեան և հարաւային որմունքն են ի քարաբաշի: Բարձրութիւն ժայռին յերեսաց ջուրցն իբրև գիրկ երեք. ի հիւսիսոյ և յարևմտից են աւերակք տանց: Եկեղեցին գտանի յամբողջութեան: Բազումս հետախոյզ եղէ, այլ չգտի գրուած ինչ յայտարար հնութեան կամ նորութեանն, տեսիլ նորա որպէս կարծիւր՝ ի հին ժամանակաց: Եւ առ նմա փոքր ինչ հեռագոյն ի հիւսիսակողմն է տեղի մեծի աւերակի մինչև կարծել իսկ քաղաքի, զի աւելի ընդարձակ էր տեղին՝ մինչև բաւական լինել աւելի քան երկու հազար գերդաստանաց: Ի միջին տեղւոջ այսր աւերածի ի փոքր ինչ բարձր դիրս կային կանգուն ուղղաբերձ որմունք քարամբք և կրով ձուլեալք. անմիջոց յեզերս ջուրց ծովակին հիմունք տանց և հովանոցաց և չէնք նոցին բոլորովին խոնարհեալ*

[1] [ԴՀՎ–ում (հտ. Դ, էջ 84)՝ **Ազարիիա]**:
[2] [ԴՀՎ–ում՝ **Գունդուզս]**:

և քայքայեալ՝ որոց տեսիլ ևեթ գրաւէ զոյչ մարդոյ ի զարմանս և զոգի հայրենասէր ի հառաչանս հոգւոց ի խորոց սրտէ:

Բ ՄԱՄՆ

542. Կոթ. *այժմ անուանեալ ի բնակչաց* Ատիեաման*: Տունք՝ 64: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Սա ի հնոց գիւղաքաղաք անուամբ ևս վերակոչի եւ էր կացուրդ իշխանաց նախնեացն Գրիգորի որդւոյ Գաբուռն Վասակայ՝ Սուփան անուանելոյ, ըստ յառաջ բերելոյ Ստորագրութիւն հին Հայաստանի ի գրուածոցն Ստեփաննոսի Օրբէլեան: Դնէ և Գրիգոր Մագիստրոս զ Կոթ գաւառ անուամբ ի Գեղարքունի՝ առ Հին Հայաստանի: Թերևս զայն մասն զոր մեք բաժանեցաք ի վերոյ (531): Այս գիւղ յատկացեալ ինքեան գիւղորէիւքն սահմանակից է Գաւառայ՝ ունելով զնա յարևմտից և Ղարանլըղայ՝ յարևելից: Եւ է յարևելեան եզեր շատաջուր գետակին այժմ Իշխանագետ (544) անուանելոյ և է մերձ ի ծովակն աւելի քան զքառորդ մի ժամու:*

Բաց յեկեղեցւոյն որ ի գիւղամէջ անդր, է և աւերակն մեծի եկեղեցւոյն կառուցելոյ ի վերոյիշեալ Գրիգոր իշխանէ Սուփան անուանելոյ: Եւ եղեալ է բոլորովին ի կոփածոյ քարանց և է յարևմտից գեղջն ի բարձրավանդակի ի վերայ սարահարթի փոքր քարափան ձորոյ գետակին: Մեծ մասամբ յաւերութեան կայ: Կամարայարկ նորա գլխովին խոնարհեալ է և մասնաւոր տեղիք յորմունս նորա: Նոյնպէս յաւերութեան կան և շուրջ զնովաւ շէնք բնակութեանցն և պարսպին:

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս առ հին Հայաստանի՝ ըստ յառաջ բերելոյ Ստեփաննոսի Օրբէլեան, է այս.

«Ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգևոր ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ ի կացուածի իմոյ նախնեացն, զոր նախքան զայս պարսպափակ շրջապատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ. յետ այսր ապա յիմոց խորհրդակցեալ կամօքն Աստուծոյ՝ շինեցի տուն Տեառն և յարկն Աստուծոյն Յակոբայ անուանակոչութեամբ սրբուհւոյ Տիրամօր Աստուածածնի՝ վիմատաշ կոփածոյ քարամբք և ի սմա սենեակս Ը ի վերոյ և ի ներքոյ. և ապա ի սմին սուրբ քաւարանիս կարգեցի քահանայս և զարդարեցի զատենաքահանայ ի նախնեաց իմոց, և այլ սպասաւորս բազումս. և ազատ արարի յարքունական ծանրութենէ և ի բեկարէ

և սահմանեցի հողս և ջուրս. և ետու միոյ միոյ քահանայի Ծ դրամ ի տարւոջ, որ լինի հնկեցիկս և սահմանեցի չորիցս քառասունս և սաղմոս՝ ընեղութեան կանոն և զառաւօտուն սաղմոսն: Զսոյն ետ գրել և ի յիշատակագրին որ ի Մաքենիս»:

Աստ ի սմին եկեղեցւոջ պահիւր երբեմն երկաթեայ քառաթև սուրբ խաչ մի, որ անուանի Կոթայ Սուրբ Նշան, և աւանդութիւն է լինել այնմ ձեռագործ սրբազան առաքելոյն Թադէոսի. և պահպանի այժմ այն ի Սևան կղզի յեկեղեցւոջ Սուրբ Աստուածածնի:

543. **Ատիեաման Վերին**. *այսպէս անուանեալ յորոշումն ի ներքին Ատիեամանայ՝* **Կոթ**. *տունք՝ 34: Եկեղեցին անուամբ Սրբոյն Գէորգայ: Այս գիւղ հեռի ի Կոթայ իբրև կէս ժամ ընդ գետակն ի վեր՝ յարևմտեան եզեր նորա ի բարձրութեան անդ ձորակին:*

544. Այս գետ բղխեալ ի բարձրութենէ անտի լերին Գեղամայ յարևելեան կուսէ յորդ աղբերականց և իջեալ այնպէս իբրև ժամս երկուս և անցեալ ընդ այս գիւղ յարևելից և ընդ Կոթ յարևմտից՝ անկանի ի ծովակն: Ի ծովակէն մինչև ցԿոթ են տեղիք որսալոյ զկողակ և զայլ ձկունս ըստ իւրաքանչիւրոցն յատկացեալ ժամանակի. քանզի ի վերջին աւուրս յունիսի և յըսկզբանն յուլիսի է ժամանակն որսալոյ զկողակ անուանեալ ձուկն՝ որպէս յայս գետակ, նոյնպէս և յայլսն: Յայս գետակ մերձ ի գիւղն բաժանեալ են յերկուս զջուր նորա և այն ինչ ելանէ ձուկն ի ծովակէն երամ երամ բազմութեամբ կարի յոյժ և դիմէ ի գետակն, առնուն յառաջս միոյ բաժին ջրոյն և արկանեն ի միւսն: Եւ որքան նուազի ջուրն յանցսն անդ, այնքան շտապաւ աճապարեն, լուղան ընդ անցսն ի վեր այնքան, մինչև լի իսկ լինել ձկամբք անցիցն այնորիկ և բազում անգամ չկարօտիլ իսկ ուռկանի և այլ գործեաց, այլ մտեալ արանցն կալնուն ձեռամբ և արկանեն արտաքս և այնպէս զեզերսն անդ գետակին ի փոքր միջոցի բազմանան կուտակք ձկանց իբրև շեղջք ցորենոյ ի կալի, որոյ ի զննին կացելոցն է տեսարան մեծ ի զանազան նպատակս:

Այս ջուր անուանի և **Իշխանագետ** *յանուն ձկանն իշխան կոչեցելոյ. և ձուկն այն յանուն իշխանի ուրումն, քանզի աւանդեն թէ դէպ լինի երբեմն ելանել փոխանակ ձկան՝ բազմութեան օձից ի ծովակէ անտի ընդ գետն, յորոյ տեսլենէ զարհուրեալ հասարակութեան՝ տարակուսին, այլ իշխան ոմն բարեպաշտօն ժողովեալ զհասարակութիւնն դիմէ առ Աստուած աղօթիւք և տրովք առ տնանկս. և հայցէ խնայել ի սնունդս նոցա՝ զոր առատացուցեալ է նախախնամութեամբն. ապա թէ զայն կամի, եղիցին կամք բարձրելոյն. ի ջերմեռանդութենէ աստի ըստ խնամոց Տեառն դառնան օձք*

անդրէն ի ծովակն և ելանէ ձուկն առատութեամբ ըստ անցելոցն. ապա հասարակութիւնն ի տրիտուր ջերմեռանդութեան իշխանին, անուանէ զձուկն մի ի տեսակաց անտի իշխանաձուկ յանուն նորա. և է իւղալից և համեղամիս. և այն իշխան բարեպաշտութեամբ վախճանեալ՝ ամփոփի յեզեր այսր գետակի ի ձորամիջի անդ յարևելակողմն հանդէպ վերոյիշեալ գեղջս՝ յորոյ շիրմի վերայ արարեալ են և մեծամեծ վիմօք ծածկոյթ, զոր և անուանեն Գերեզման իշխանի: Ի հանդիպմունս այնօրինակ պատահմանց՝ ըստ անցելոյն դարձեալ հասարակութիւնն դիմէ աղօթիւք առ Աստուած և այլն:

545. **Նորագիւղ**. *տեղին թէպէտ ի վաղուց կայր և անունն անյայտ, այլ որովհետև նորոգութիւն սորին զկնի եղև քան զմիւս գիւղորէիցն, վասն որոյ յայս անուն անուանեցաւ: Տունք՝ 15: Եկեղեցի ո՛չ գոյ տակաւին:*

546. **Շողագայ** *գիւղ, որոյ անուանակոչութիւն յեկեղեցւոյ անտի ընկալեալ. և եկեղեցին կամ մենաստանն, որ ի նմա, ըստ Ասողկայ (Գ գլ., 32). «Իսկ Գագիկ յաւուրս մանկութեանն իւրոյ յորժամ շրջէր նա ի գաւառին Գեղամայ, տայ նմա (Ա Սարգսի կաթուղիկոսի, որ ի վերջն անդ Ժ դարու), տեղի և վանս բնակութեան զվանսն, որ յաղագս ծագման իրիք լուսոյ Աստուածայնոյ՝ Շողագայ անուանի». և է ի ծոցաւոր վայրի ի մէջ երկուց առապարաց՝ յարևմտից Կոթայ աւելի քան զմի ժամ և կէս հեռաւորութեամբ. և այժմ անուանի* **Վալի աղի** *գիւղ՝ սակս երբեմն բնակելոյ աստ այլազգւոյն այնմիկ. տունք 46: Եկեղեցին որ ի հասարակ քարանց յանուն սուրբ Աստուածածնի: Եկեղեցին կամ մենաստանն Շողագայ անուանեալ ի պատմագիրս գտանի յայս գիւղ, քանզի յարևմտից գեղջս ի մէջ երկուց առապարացն երկայնեալ է հարթ դրութեամբ լեզուակ ինչ. յարևելեան ծայրի անդ լեզուակին՝ որ հայի ի վերայ գեղջն, կառուցեալ է տաճարն ի սրբատաշ քարանց առանց սեան և գուցէ յերկրաշարժութենէ կործանեալ կայ. և կայ կանգուն միայն հիւսիսային որմն նորա. եղեալ է արձանագիր շինութեան այսր եկեղեցւոյ միակարգ՝ սկսեալ յարևմտեան ծայրէ հարաւային որմոյն. և այնպէս շրջապատեալ զթիկամբ սեղանոյն և յորմն հիւսիսային՝ նկատին անդէն յորմն հիւսիսոյ քանի ինչ բառք՝ յորս և ի յայտ եկն շինութիւն տաճարին յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի. այլ որովհետև հարաւային և արևելեան որմունքն խոնարհեալ էին և ընդ նոսին մեծ մասն արձանագրութեան և մնացեալն ևս կիսեղծ, վասն որոյ թողաք ի բաց:*

Զայս եկեղեցի ևս ետ կառուցանել նա ինքն Մարիամ տիկին ամուսին Գամբուռն Վասակայ տեառն Սիւնեաց, զորմէ գրէ Ստեփաննոս Օրբէլեան՝ առ Հին Հայաստանի. «Սոյն Մարիամ չինէ զմեծապայծառ եկեղեցին ի Շողուագայ յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի և կարգէ ի նմա կրօնաւորանոցս, դասս բազմահոյլ քահանայից վասն հոգեաց տեառն իւրոյ Վասակայ իշխանի Սիւնեաց. և գնեալ ի հագարացի մարդկանէ զգեօղն Շաղուագայ ընդ ԿՌ [60000] դրամի, ազատ յամենայն աշխարհական հարկաց ընծայէ սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապէս և գիւղ մի ի Մազազ գաւառի ընդ ԴՌ [4000] դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցի, որոյ անունն գեղջն դնէր և հաստատէ արձան անջինջ յիշատակի առաջի Գէորգայ կաթուղիկոսի (որ է Գէորգ Բ) և Յովանիսի Սիւնեաց եպիսկոպոսի և Գագկայ Սիւնեաց տեառն»:

Յարևմտից այսր տաճարի են պէսպէս խաչվիմօք շիրիմք և յոլով գերեզմանք. մերձ եկեղեցին ի հարաւոյ ևս հանդերձ պատուանդանաւ խաչվէմք. յայսոսիկ շիրիմս բազմօք հետաքրքիր էղէ չկարացի գտանել զշիրիմ յիշեալ Մարիամայ տիկնոջ. և գուցէ կարի մերձ լեալ եկեղեցւոյն՝ ընդ փլածովքն անյայտացեալ. տե՛ս 521, ի ծանօթութեան:

Յստորև քան զՇողագայ գիւղ յարևելս հարաւոյ իբր կէս ժամ է տաճար փոքրիկ ի կոփածոյ քարանց և աւերակք տանց շուրջ զնովաւ. այլ թէ մենաստան իցէ լեալ կամ գիւղ՝ չունիմք ինչ ասել. զի ո՛չ գտաւ ի նմա գրուած ինչ:

547. **Ադամ խան**. *գիւղ յստորև քան զՇողագայ: Տունք՝ 31: Եկեղեցին անուամբ Սրբուհւոյ Աստուածածնի:*

548. **Ջագ**. *այժմ անուանեալ* **Երանոս**: *Տունք 56: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Այս ևս յստորև քան զԱդամխան մերձ ի ծովակն:*

549. **Ծակքար**. *գիւղ յարևելից Ջագայ: Տունք 22: Եկեղեցին անուամբ Սուրբ Ստեփանոսի: Յարևմտից գեղջս անցանէ գետակ և մերձ գեղջն ջուր գետակիս անցանէ ի բնական դիրս ընդ վիմաւ միով իբր ընդ կամրջաւ՝ բացեալ այն անցք ի ջրոյ անտի. յանուն այսր բնական կամրջի անուանի և գիւղն:*

550. **Գեօլ** *գիւղ: Տունք 52: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի. առ գեղջս ի հիւսիսոյ ելանեն աղբերակունք. և անտի ժողովեալ ջուրցն՝ գտանի լճակ ինչ եղեգնուտ եզերօք և է ի միջոցս ծովակին և գեղջն: Եկեղեցի գեղջս է արտաքոյ քան զշէնսն ի բարձրավանդակի, որոյ շրջապատն է գերեզմանուտ խաչվիմօք. և անդ*

նշանաւոր տեղի ինչ՝ յորում և երկու մեծ քաչվէմք կանգնեալ ի վերայ պատուանդանաց և ունէին այսպիսի գրուած անհարթ. «Ի թվ. ՉԼԳ (1284) ի հապ. տէր Գրի[գոր] մեք և եղբայր Աբրահամ քահանայ անարժան Հայրաձայն և այլքս կանկնեցինք զխաչ հաւրեղբաւր մերոյ Հայրապետին կուսակրաւն քահանայ բազմաչարչար սնուցողի և ծնողաց մերոց Հայրուտին և Խաթունին և քվեր մե... յաղաւթս յիշ[եցէք[: Եւ էր մեր Բ ականի ջաղացաքար ինխա... օշէնած պահող էաք դարապիս գանձին արքունեաց»:

551. Ընդ մէջ վերոյիշեալ երկուց գիւղորէիցն՝ Ծակքարայ և Գեօլայ է ձորակ ինչ սակաւաջուր, ուր որսան առատութեամբ զկողակ ձուկն. ուստի և անուանի՝ **Կողակագետ***:*

Գ ՄԱՄՆ

552. **Ղարանլըղ Ներքին***. տունք՝ 67: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի: Այս գիւղ հանդերձ ինքեան յատկացեալ գիւղորէիւքն անկանի յարևելս սահմանին Կոթայ և ընդ մէջ այսր գեղջ և Կոթայ հեռաւորութիւն իբրև կէս ժամու:*

553. **Ղարանլըղ Վերին***. տունք՝ 58: Եկեղեցին անուամբ Սրբոյն Գէորգայ: Այս գիւղ հեռի է ի վերնոյն ընդ հարաւ իբրև ժամ մի ի հատածս փոքրաջուր ձորոյն յարևմտեան ստորոտի լերին ի ձորի անդ յարևմտից ջրոյն:*

554. **Աւդալ Աղալը***. գիւղ յարևելս Ներքին Ղարանլղայ: Տունք՝ 22: Եկեղեցին վերակոչի յանուն Սուրբ Աստուածածնի:*

555. **Ալի Ղըռըխ** *գիւղ: Նոյնպէս յարևելս նորին: Տունք՝ 33: Եկեղեցին անուամբ սրբոյն Պետրոսի և Պօղոսի:*

556. **Զօրախաչ** *գիւղ: Անուանեալ յանուանէ մեծի խաչվիմին կառուցելոյ ի մէջ գեղջն. և է գիրկ և կէս բարձր միաստանի և նկար քառաթև խաչին ի նմա, զոր և այլազգիք անուանեն* **Զօլախաչ***: Տունք՝ 61: Եկեղեցին յարևմտից գեղջս ի բարձրավանդակի յանուն սրբոյն Գէորգայ, ուր է և գերեզմանուտ ի հնոց անտի՝ յորում է շիրիմ ինչ երևելի, ձգեալ ի վերայ սեաւ տապանավէմ և ձևացուցեալ ի նմա ձև գաւազանի և գրուած թերի՝ ըստ այսմ. «Դաւիթ յաղթ յիշէք ի Քրիստոս»: Յարևելից տապանավիմին կանգնեալ կայ խաչվէմ մեծ և ունի գիր բարձրութեան անդ ըստ այսմ. «Յանուն Աստուծոյ, ես Դաւիթ երէց կանկեցի զխաչս յիշատակ հոգոյ իմ ծնողաց իմ*[1]*»:*

[1] [ԴՀՎ–ում (հտ. Դ, էջ 190) շարունակվում է՝ **Թվ. ՉՂԱ (1342)]**:

557. **Գեօզալդարայ***: Տունք՝ 108: Եկեղեցին յանուն Սրբուհ-ւոյ Աստուածածնի: Այս գիւղ է յարևմտեան սարահարթի ձորակի գետակին անուանելոյ յանուն գեղջս: Յարևելեան եզեր գետակին հանդէպ գեղջս է գերեզմաննոց ի վաղ ժամանակաց և ի նմա աւե-րակ մատրան. ի հարաւոյ գեղջս փոքր ինչ հեռի յստորոտի անդ առապարին ելանէ աղբիւր բարեհամ յարբումն բնակչաց գեղջս՝ թէև ըմպեն և ի գետակէն:*

558. **Քեօլաղռան***. և երբեմն* **Քեօլանի ղռան** *սակս այնպիսի ինչ անցից երբեմն աստէն. և է մերձ յեզր ծովակին առ փոքր քարուտ բլրակաւ: Տունք՝ 28: Եկեղեցին յանուն Սրբոյն Գէորգայ:*

559. **Ալիչալու***. գիւղ յարևմտեան եզեր փոքրիկ գետակի՝ որ և կոչի յանուն գեղջս: Տունք՝ 34: Եկեղեցին անուամբ Սուրբ Աստուա-ծածնի:*

560. **Վանավանու** *մենաստան: Է հանդէպ յիշեալ Ալիչալու գեղջն յարևելեան եզեր գետակին ի հատածս անդ ձորոյ գետակին առ քարատակաւն հեռի ի ծովակէն ընդ հարաւ իբրև կէս ժամ: Եւ է տաճար փոքր առանց սեան և ունի գմբէթ և քարինք չինուա-ծոցն ո՛չ այնքան հարթ յղկեալ. կառուցեալ է այս տաճար յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ըստ յառաջ բերելոյ Հին Հայաստա-նի ի գրուածոցն Ստեփաննոսի Օրբէլեան (թղթ. 277): Այս տաճար ունի զմի սեղանատեղի սրբազան խորհրդոյն և զմի դուռն յարևմ-տից և ետ կառուցանել զսա յսկզբան անդ Ժ–րդ դարուն Շապուհ Բագրատունի որդի Աշոտոյ Թագաւորի Հայոց վերակացութեամբ քեռն իւրոյ Մարիամայ ամուսնոյն Գաբուռն Վասակայ տեառն Սիւ-նեաց. և ունի արձանագիր յիշատակագրութեանն արտաքուստ ի գմբէթի անդ եկեղեցւոյն յարևմտից և ի հարաւոյ հանդերձ թուա-կանաւ, ըստ այսմ.*

«Յանուն Աստուծոյ, ես՝ Շապուհ Բագրատունի Հայոց սպարա-պետ տէրանց տէր, որդի Աշոտի Հայոց թագաւորի, ի ժամանակս Հայոց թագաւորի մեծի Սմպատայ[1] *հարազատ եղբաւր իմոյ, և վե-րադիտողի Հայոց հայրապետի տեառն Յեւանիսի, իմացայ և ծա-նեայ, թէ ամենայն փառք և մեծութիւն սպառելոց են ի*[2] *վաղիւն և կորնչելոց. և մեծափափագ տենչանովք վերակացու և տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին յիւրում իշխանութեան ի Վանավանս*[3] *տուն Աստուծոյ, կանգնել վիմատաշս կոփածովք, շա-*

---

[1] [ԴՀՎ–ում (հտ. Դ, էջ 121)՝ **Սընպատայ]**:
[2] [ԴՀՎ–ում **եւ** փխ **ի]**:
[3] [ԴՀՎ–ում՝ **Վանեվանի վանս]**:

տածախ գանձիւք և մեծաջան վաստակովք կատարել, թերևս լիցի[1] *ողորմութիւն յայնմ*[2] *աւուրն՝ յորժամ բանք*[3] *սպառին և գործք թա-գաւորեն: Եւ տուաք ի քեզ Վանավանու վանական հայր Աբրահամ աղաւթել և վայելել, և որ այլ յետ քո այլ յաջորդին և պաշտոնեայք խորանիդ յորժամ ժողովիք միաբան յաղաւթս և կերակրիք անմա-հական կերակրոյն, յիշեսջիք զիս և զիմսն, զի արասցէ ողորմութիւն ողորմածն Աստուած: Դ գեղո սահման*[4]*՝ դրամք*[5] *ի Կոթաքար, ՇԼ ի Բ տէլեացն*[6]*. ՈԿ յԱղիբողանաց. ՋՂ ի Կարբին գետերէն և նաւերէն: Տէր ողոմ*[7]*. տէր Աթանաս. Սմպատ... Աստուծով բերաւ ջուր յոն-ճոռ... են: Ի թուիս Հայոց ՅԾԲ (903)»:*

Զայս յիշատակարան ես ինքնին ներկայ լինելով անդէն՝ վերառի ի գիր ամենայն զգուշութեամբ, զոր համեմատեալ ընդ գրուածոյն յՕրբէլեան Ստեփաննոսէ, որ առ Հին Հայաստանի, գտաւ զանազա-նութիւն ի միջի, մանաւանդ ի կալուածսն նուիրանաց. ուստի և մեք եդաք ըստ վերահասութեանն մերում:

561. **Մաքենոցաց** *մենաստան: Հեռի գտանի ի վերոյիշեալ մե-նաստանէն ընդ հարաւ ի բարձրութեան անդ ի լանջս լերին աւե-լի քան զժամ և կէս ի վայելուչ վայրի ի վերայ նոյն գետակին. տաճարն խաչաձև կառուցեալ կայ ի միջին տեղւոջ պարսպին յա-նուն սրբուհւոյ Աստուածածնի, որ և կոչի Սուրբ Աստուածածին Գեղամայ եւ է առանց սեան միջակ մեծութեամբ, բարձրակամար. և ունի կաթուղիկէ նոյնպէս քարաշէն, զմի սեղանատեղի սրբազան խորհրդոյն և զմի դուռն ի հարաւոյ. քարինք շինուածոց տաճա-րիս հանգոյն եկեղեցւոյն Վանավանու ո՛չ այնքան հարթ յղկեալ: Զեղև հնար մեզ գտանել զարձանագրութիւնն ի Գրիգոր Սուփանն իշխանէ Սիւնեաց՝ զոր յառաջ բերէ հայր Ղուկաս Ինճիճեան ի Ստո-րագրութեան հին Հայաստանի՝ թէև այն ևս թերի ըստ գրուածոցն Ստեփաննոսի Օրբէլեան և գուցէ ծածկեալ էր այն ընդ որմովքն՝ որք կից են որմոց տաճարին ի չորից կողմանց:*

Բայց գտան երկու արձանագիրք անդէն, և այնք ևս առանց թուականի. Ա՝ ի հարաւոյ տաճարին յարտաքին կողմանէ յորմն ինչ

---

1 [ԴՀՎ–ում՝ **լիցի ինձ]**:
2 [ԴՀՎ–ում՝ **յայսմ**. սակայն նույն գրքի գծանկարում ևս **յայնմ** է]:
3 [ԴՀՎ–ում՝ **բանքն]**:
4 [Շահխաթունյանցի մոտ բացակայում է արձանագրության մի տող. «Կոթաքար, Շաւառինպոլն, Գետամէջն, կթանոց, Գետավանաց ծովն: ՄԿ (260)»]:
5 [ԴՀՎ–ում՝ **դրամ]**:
6 [ԴՀՎ–ում **բոտելեյն** փխ **Բ տէլեացն]**:
7 [ԴՀՎ–ում՝ **[Աբի]սողոմ]**:

մերձ անդր, յայս օրինակ. «Կամաւն Աստուծոյ, որ Սիւնեաց Սուփան իշխան շինեաց Մաքենուց եկեղեցիս ի Գձ [851] թվին (Հայոց), ես՝ առաջնորդ սուրբ ուխտիս Ջուղայեցի Խաչատուր վարդապետս, որդի գոլով Յակոբա վերստին նորոգեցի և պայծառացուցի ի ժամանակս սրբազան հայրապետութեան Յակոբա. և միաբան սուրբ վանացս՝ զտէր Պարսամն, զտէր Գրիգորն և զսարկաւագունս՝ զ Գրիգորն, Ղազարն և Ստեփաննոսն, տնտես Սարուխան յիշեցէք ի Քրիստոս Աստուած. և որք յիշատակէ զմեզ, յիշատակ նոցա խաղաղութեամբ պահեսցի, ամէն: Հայր»: Իսկ Բ՝ յարևմտեան ճակատի անդ տաճարին. «Շնորհօքն Աստուծոյ ես Մէլիք Մէլիքբէկեան, որդի մեծի պարուն Աստուածապուին և շինող տանս Գեղամա, վերստին նորոգեցաք սուրբ եկեղեցիս իշատակ իմ և իմոցն, ամէն: Յիշեցէք Նիազ վերակացու»:

Պարիսպ մենաստանիս բաւական բարձրութեամբ հիւսեալ ի հասարակ քարանց. հարաւակողմանն կառուցեալ կայ ի վերայ քարափան փոքր ձորակի ջրոյն. իսկ միւս երեք կողմանն ի դիւր գետնի. և ունի զմի ևեթ տեղի դրան մերձ յանկիւնն արևմտեան հարաւոյ. բազում որմունք են ի պարսպի աստ շուրջ զտաճարաւն՝ տանց, բնակութեանց և այլ հարկաւոր շինուածոց. և են հիւսուածք ի հասարակ քարանց անհաստատ. և որպէս երևի՝ սակս անբնակ մնալոյ յեկեղեցականաց ի չուական այլազգեաց անտի են հիւսեալ այն որմունք և կցեալ իսկ ընդ տաճարն ուստի և չկարողացաք գտանել զերևելի ինչ շիրիմ կամ զնոյն իսկ զշիրիմն Ե–րդ Յովհաննու կաթուղիկոսի Հայոց՝ ուր վախճանեալ թաղեցաւ յամի 854. այլ միայն մերձ յեկեղեցին յարևմտից նորա են երկու մեծ շէնք սենեկաց բարձրորմն կրով և քարամբք, որոց կամարայարկքն խոնարհեալ կան:

Ի մէջ անդ պարսպին յարևելակողմն տաճարին կայր առանձին շինուած ինչ ի բարւոք յղկեալ քարանց, որոյ որմունք ամբողջ, ծածկոյթ կամարին կիսով չափ խոնարհեալ. և էր իբրև մատուռն, այլ որովհետև բնակէին անդ այլազգի գերդաստանք և գերդաստան մի ևս ի նմա ի փոքրկութեան անդ ամենայն աղխիւքն, չեղև հնար լաւապէս զննել և զներքին կողմն շինուածոյն առ ի գտանել թերևս զգրուած ինչ:

Ընդ մէջ այսր մատրան և տաճարին գտանէր ճանապարհ ջրոյ յարդարեալ ի կոփածոյ մեծամեծ քարանց՝ զօրէն ճանապարհին ջրոյ ի պարտիզի անդ կաթուղիկոսարանին աթոռոյ Էջմիածնի. թերևս երբեմն ընդ այս ճանապարհ խոտորեցուցեալ զջուր գետակին փոք-

ըիկ, և անդրէն հանեալ ընդ պարիսպն՝ վեսրտին արկեալ են ի ձորակ անդր, որպէս տեսանի և անցք ջրոյ ի պարսպի անդ և արտաքոյ:

Իսկ զմիւս ծանօթութիւնս աւերութեանց և նորոգութեանց և այլ հարկաւոր պարագայից յայս մենաստան՝ տեսցես ի Հին Հայաստան (թղթ. 270 ց273): Այս տեղի այժմ ըստ այլազգականին կոչի **Ղըզըլքիլիսա***:*

Դ ՄԱՄՆ

562. Այս մասն Գեղարքունւոյ, որ և գաւառ Սօթից կամ Սօտից կոչեցեալ առ Խորենացւոյն և առ Ստեփաննոսի Օրբէլեան, անկանի յարևելեան կողմն ծովակին՝ յերից կողմանց պատեալ դիւրագնաց լերամբք. և է դաշտավայր նորա փոքր ինչ ընդարձակ արգաւանդահող և խոտաւէտ, յորում են երկու գիւղք բնակեալք ի Հայոց:

563. **Վասակաշէն** *գիւղ՝ կոչեցեալ այժմ* **Պասարկէչար***. և է ի մէջ դաշտին. բնակիչքն՝ տունք 63: Եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնի և է ի նոյն առաջին տեղւոջն՝ զորմէ գրէ Առաքել վարդապետ Դավրիժեցի վասն մահուան Յովհաննու վարդապետի Ծարեցւոյ թէ՝ «որոյ պատուական մարմինն եղեալ կայ ի յերկիրն Գեղամայ ի գիւղն Վասակաշէն հուպ դամբարանի վարդապետին Սարգսի» (թղթ. 581): Երկոցունցն ևս չիրիմք առ միմեանս են ի մէջ այսր եկեղեցւոյ ի միջին տեղւոջ զառաջեաւ միջին դասուն՝ ուր ի պատրագի դասաւորին դպիրք. և անուանք նոցին ևս գրեալք ի տապանավէմսն անդ. կիսով չափ աւելի որմունք եկեղեցւոյս էին ի վաղուց անտի, իսկ միւս մասն հանդերձ փայտեայ ծածկովքն ի նորոյ շինեցան յայժմեան բնակչաց:*

564. **Ղարապուլաղ** *կամ* **Ղրխպուլաղ***. գիւղ բազմաղբիւր. հեռի ի Վասակաշէն գեղջէ ընդ հարաւ իբրև ժամ և կէս՝ յարևմտեան ստորոտի առապարին. տունք 34: Էր ի սմա եկեղեցի հիմնարկեալ ի վաղ ժամանակաց, զոր մաքրեալ բնակչացն յաւերանաց անտի՝ արարին փայտածածք, որ և օծաւ ի մէնջ յամին 1834 և անուանեցաւ յանուն Սրբոյն Գէորգեայ. բազում աղբերակունք են յստորոտս այսր առապարի մերձ ի շէնս տանցն, այլ մին ի հարաւոյ գեղջս կարի մերձ յայն՝ ելանէ առատութեամբ յոյժ մինչև բաւական լինել երկուց ջրաղացաց, որոց ամենեցուն ժողովեալ ի մի և գետակնացեալ գնայ, անկանի ի ծովակն:*

565. Զկնի այսոցիկ հայաբնակ գիւղորէից պարունակելոց ի չորեսին մասունսն բաժանման Գեղարքունւոյ, գտանին ո՛չ սակաւ և

գիւղորայք բնակեալ յայլազգի մահմէտականաց և յամենեսին ի նոսա գրեա թէ գտանին աւերակք տաճարաց և եկեղեցեաց և գերեզմանուտք զարդարեալ խաչվիմօք և մատրամբք՝ մնացեալք ի վաղ ժամանակաց անտի Հայոց, որպէս և ի վերոյ ստորագրեալ գաւառսն. և են ի ներքոյ գրեալքդ:

Սարաչլու, *որ և ասի* Բեղլի Հիւսէյին քեանդ. *տունք՝ 6:* Սարաչ-լու. *ասի և* Զէյինալ *յորոշումն ի վերնոյն. տունք՝ 5:* Ռահման քեանդ. *տունք՝ 2:* Հաճի մուղան. *տունք՝ 14:* Ախճիբեր. *տունք՝ 18:* Աղ դալայ. *տունք՝ 6:* Հայրուանք *կամ* Հայր Ոհանավանք, *զորմէ (541) տունք՝ 15:* Բաշքեանդ. *տունք՝ 17:* Չախրլու. *տունք՝ 16: Ցայս գիւղ գտանի հին եկեղեցի փոքրիկ, և կամարայարկ նորա խոնարհեալ. յարձանագրաց անտի որոշեցաւ անուանակոչութիւն եկեղեցւոյն* Սուրբ Բեթղէհէմ, *որոյ ի ներքոյ բեմին ելանէ աղբիւր յորդառատ իբրև ջուր միոյ ջրաղացի:* Կեօտակ պուլաղ. *տունք՝ 12:* Ղըզըլ վանք *կամ* Ղըզըլ-քիլիսա՝ Մաքենիս *(561). տունք՝ 8:* Եարփուզլու. *տունք 12:* Զաղա-լու. *տունք՝ 26:* Քեարքիբաշ. *տունք՝ 7:* Ղանլը Ալլահվէրտի. *տունք՝ 18:* Ղըզըլ Պուլաղ. *տունք՝ 48:* Ղօշապուլաղ. *տունք՝ 19:* Տաշքէթի, *որ և ասի* Հիւսէյին Ղուլի աղայ. *տունք՝ 22:* Տաշքէթի, *որ և ասի* Սա-րիեաղուպ *յորոշումն ի վերնոյն. տունք՝ 24:* Չարչիբիլ.*տունք՝ 20:* Զօդ, Սոտք *գիւղաքաղաք տեղի համանուն գաւառին (562). և է ի Վասակաշէն գեղջէ ընդ արևելեան հիւսիս հեռի իբրև ժամ մի ի խոնարհ ստորոտի լերին. և է արդարև վայր մեծի աւերակի և գտանի ի նմա եկեղեցի մեծակառոյց երկար քառանկիւնի օրոցաձև ի կոփածոյ քարանց. և ունի զմի սեղանատեղի սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս. յամբողջութեան կայ եկեղեցին, այլ սալ-քարինք տանեացն քայքայեալ և մասնաւորապէս խախտեալ կամարայարկ նորա. չգտաւ ամենևին գրուած ինչ ո՛չ ի ներքս և ո՛չ արտաքս՝ յորմունս նորա. և որպէս տեսանէր ի դասաւորութենէ քարանց շինուածոյն, էր այն կրկին շինութիւն յառաջին աւերանացն և կոչի ցարդ այս տաճար եկեղեցի* Սօթայ *և երբեմն* Մազրայի: *Թերևս բնակելոյն աստէն չուական այլազգեաց (*Քեօչարէվլի*), յորոց բնակին այժմ աստ տունք 44: Ի ձմռան և յամառանն լերնանան: Գուցէ վասն այսր գեղջ իցէ գրեալն յԱռաքել վարդապետէ Դավրիժեցւոյ (թղթ. 94), յորում ի վերադարձին իւրում ի Վրաց աշխարհէ նա ինքն շահ Ապաս արքայ Պարսից իջևանեցաւ ի տան հայազգի մէլիք Շահնազարին. և անդէն կոչի անուն գեղջս* Մազրայ:

Ցարևմտից գեղջն է գերեզմանուտ ընդարձակ, յորում է և մատուռն տեղի պատարագելոյ ի խարտեալ քարանց, այլ կիսաւեր.

ի մէջ խաչքարանց չիրիմացն երկոքին են ականաւոր, որք գոլով միաստանի՝ կանգնեալ կան ի վերայ պատուանդանաց քառակուսի ձևացութեամբ. բարձրութիւն նոցա իբրև գիրկ երկու և թանձրութիւնն մի քառակուսի գազ Պարսից. և են ընտիր փորածոյք գլխովին և փոքրիկ կաթուղիկէք քանդուածոյք ի ծայրսն ի նոյն վիմացն. այլ գրուածք նոցին դժուարընթերց չեղև առնուլ ի գիր:

Յարևելեան լերանց իջանէ ջուր փոքրիկ և անցեալ զառաջեաւ այսր չինու՝ անկանի ի լճակն եղեգնուտ, որ է ընդ մէջ ծովակին և սահմանի այսր գեղջ:

Յարևելից և ի հարաւոյ այսր գեղջ երևին երկու տաճարք կաթուղիկէիւք հանդերձ անդ ի ստորոտս լերանցն, զորոց ասեն լինել եկեղեցիք այնց գիւղատեղեաց:

566. **Մեծ Մազրայ**. *տունք՝ 37:* **Փոքր Մազրայ**. *տունք՝ 25:* **Սուլթան Ալիոշլաղ**. *տունք՝ 11:* **Օզրուճայ**. *տունք՝ 17:* **Շիշզայեայ**. *տունք՝ 46:* **Ջիլ**. *տունք՝ 18:* **Օրդանիչ**. *տունք՝ 19:* **Շօրջալի**. *տունք՝ 25:* **Աղպուլաղ**. *տունք՝ 20:* **Դրախտիկ**. *որ այժմ ասի* **Թօխլուճայ**. *տունք՝ 41:* **Եայիջի**. *Ղարաղոյունլու կոչին բնակիչքն. տունք՝ 4:* **Մադինայ**. *տունք՝ 11:* **Տաշքէթի**. *տունք՝ 6:* **Ալիչալու Վերին**՝ *մերձ ի մենաստանն Վանավանու. տունք՝ 18:*

567. Ի վախճան Ստորագրութեան գաւառիս Գեղարքունւոյ արժան համարեցաք յիշատակել աստէն զգրուածս ի Քեօթուկ անուանեալ մատենին Սիւնեաց արքեպիսկոպոսարանի ի տանուտեարց անտի գիւղորէիցն Գեղարքունւոյ ի թիւ Հայոց ՋԿԲ (1513) յաղագս ծանօթութեան անուանց գիւղորէիցն յայնմ ժամանակի, զոր անագան ուրեմն ի ձեռս բերաք: Ապա թէ ոչ՝ հարցմամբ ցոմանս ի հին բնակչաց, բացայայտէին արդեօք թէ ո՞ր գիւղ այն, որ այժմ այնու այլազգական անուամբ յիշատակի.

«Ի թուին Հայոց ՋԿԲ [1513]-ին, մեք՝ Գիւղարքունու մելիք ու տանուտեարքս եկաք ի սուրբ աթոռս Ստեփանու Սիւնեաց՝ երկոտասան գաւառ, ևս առավել երկիրն մեր Գեղամայ, որ ճշմարիտ երկիրն մեր Գեղարքունի թեմ և վիճակ է սուրբ առաքելոցս Ստեփէի սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի հաստատած մինչև Լուսաւորիչն. Լուսաւորչէն մինչև ցթոռունսն Սահակայ և Մեսրովպայ, մինչև այս ժամանակս հաստատ և անխախտ մեք տեսեալ մեր հօրէ և պապէ լսեալ. զամենայն հաս և իրաւունք տայինք և հնազանդ ժողովուրդք: Ապա գալս մեր յուխտ սուրբ աթոռս զկոնդակս տեսաք, մեր բերանովս կարթացաք և ականջով մերով լսեցաք. և կրկին հաստատեցաք այս բանս՝ որ ճշմարիտ էր. յուխտ և դաշինք դրինք դրանց սուրբ

առաքելոցս և առաջի եպիսկոպոսացս՝ Շմաւոն եպիսկոպոսի և տէր Ստեփաննոսի, Մարտիրոս փակակալի և տէր Ղուկաս հայրապետի և այլ միաբանից մեծի և փոքու: Ես Փիրհամզէս որդի Եղիշէին և թոռն մելիք Միրզին. ես՝ Թանգրիզուլիս, որդի մէլիք Ղուկասին և թոռն Պուղիկին. ես՝ Էհիէս, որդի Բուղաղին, թոռն Դէլուղարդաշին. ես՝ Թարխանս Քիթաշինեցի. ես՝ Շահղուբաթս Գավառնեցի, որդի Աստուածատուրին, թոռն Մերանչին: Ես՝ Բաշարաթս Կոթեցի: Ես՝ Մաթէոսս Կածեցի: Ես՝ Գիւլս Կնձուտեցի: Ես՝ Փիրի որդի Ղուբաթին թոռն Բէհրամին: Ես՝ Կունզուտս Գանձակեցի և ամէնքն ամենայնի ուշտեցաք, որ ո՛չ մերմէ, ո՛չ մեր ընտանեաց, ո՛չ զավակաց, ո՛չ այլոց Գիւղարքունեցեաց, որ այս բանիս հակառակ չլինի. կամ հետ խաչենեցեաց կամ երկրիս եպիսկոպոսացն կամ հետ կաթուղիկոսացն միաբանին, հակառակութիւն անեն հետ աթոռիս, սևերես լինին առաջի Աստուծոյ և ի մարդկանէ և ի սուրբ աթոռոյս անիծեալ. մեր և մեր նախնեաց մեղացն պարտական լիցին և հազար հազար նահլաթ լիցին:

Մեք՝ Գիւղարքունու սարկաւագունքս, որ եկինք սուրբ աթոռս կարդալու, այս բանիս վկայենք: Ես՝ Մուսէս սարկաւագ, որդի և թոռն Աւագերիցի: Եւ Քրիստափոր սարկաւագ որդի Ամիրին, թոռն Միրզին Կաթնուց գիւղէն: Ես՝ Եղիշէ սարկաւագ Դարանակուց, վկայենք, որ Գեղարքունու տանուտերքն որ զայս բանս գրեցին՝ ճշմարիտ է Աստուծով»:

Գիւղարքունի նահանգ	Արդից գաւառն, որ է Սոթք ի յարևելս կողմն.
1. Կոթի	1. Սոթք
2. Կտկոյք	2. Ծափաթաղք
3. Կոճոճոր	3. Ունջի ձոր
4. Ըսկերտ	4. Հովուաթափք
5. Ցցնի	5. Ավազան
6. Խնձի թաղք	6. Համամաբակք
7. Յոփեաց ձոր	7. Արավիսաբակք
8. Նորաշէն	8. Գուգառինջ
9. Յևնակաց հուն	9. Բետուք
10. Յողնի	10. Սափչի անապատ
11. Գանձաղան	11. Խորթագետ
12. Գողտառ ձոր	12. Վարդանաբակ
13. Երիսկոյկ	13. Նորաբակ

14. Դաստակերտ
15. Վասակաշէն
16. Զառանագարակ
17. Ամասրիայ
18. Վաժոց
19. Կամբրիւն
20. Հոգգ
21. Խոկոռին
22. Խորոտն
23. Արգաճին
24. Թմոգ
25. Մէհոգաց
26. Հովուաց ագարակ
27. Զագ
28. Կածիկ
29. Ութբրուն
30. Յուլաբերէք
31. Վարդենիկ
32. Ներքին Վարդենիկ
33. Թամբարարք
34. Երերուք
35. Առնջոյհուն
36. Գոմք
37. Զահավանք
38. Կուտրակի գոմք
39. Վանավան
40. Փառականք
41. Բերան
42. Ղիղք
43. Բրդի այրք
44. Շիկակարբն
45. Գերափու
46. Ծախկայ
47. Ախայիւնք

14. Վասակաշէն
15. Կութն
16. Անապատ
17. Արփունջն
18. Շատջրէք
19. Կուչկունիք
20. Բարկոյք
21. Վաղավեր
22. Ուռակարպ
23. Ամեռնափոր
24. Շատվան
25. Շինիք
26. Աստուածածին
27. Էրէզ
28. Բակափոր
29. Մագենոց
30. Ետեցիք
31. Զերիշատ
32. Ասխոզ
33. Աղբերաձոր
34. Արմնայ
35. Անապատ
36. Շապուհաթաղ
37. Կատակ
38. Վաչէի բակ
39. Զաղացաձոր
40. Զաջուրաբակ
41. Պաշուք
42. Տեռնատեան
43. Բերդաձոր
44. Տրունք
45. Որդնիք
46. Դարանք
47. Դարանակ
48. Ախոռատուն
49. Ողմունք
50. Պաշոյ
51. Զահոյ

52. Խորասանաբակ
53. Որոկիք
54. Ականք
55. Գողոց ագարակ
56. Այրք
57. Գեղամաբակ
58. Կախանաղբիւր
59. Սահակաբակ
60. Խոնթանբակ
61. Ջաղացաձոր
62. Որբուց
63. Դպրաբակ
64. Դգոլաբակ
65. Ատրմղինաբակ
66. Խորժայ
67. Մնձաձոր
68. Ծար
69. Գետաբակ
70. Երերի
71. Վարժանկայ աղբիւր
72. Հոնջէնք
73. Յեղջերվինիկ
74. Անապատ
75. Օձի գետ
76. Քթաչէն
77. Դէլիղարտաշ
78. Գավառնի
79. Կնձուտ
80. Դարանակ
81. Կաթունք:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բացի վերոյգրեալ Ստորագրութեանց գաւառացն Արագածոտան, Կոտայից, Նգայ, Վարաժնունեաց և Գեղարքունւոյ, զորս մի մի ներկայութեամբ մերով ի տեղւոջն պատահեալ՝ զննեալ քննեցաք, դէպ եղև մեզ անցանել և յինչ ինչ մերձաւոր տեղիս այլոց գաւառաց. և ուր ընդառաջ եղեն մեզ հռչակաւոր մենաստանք, զայնս ևս մի ըստ միոջէ ստորագրեմք յայս յաւելուած: Եւս և դիցուք զկնի զշարակարգութիւնս կաթուղիկոսացն Աղուանից և զինչ ինչ առանձին արձանագրութիւնս մենաստանաց այնր աշխարհի, զորս էր որ մերով ներկայութեամբ, և էր որ միջնորդութեամբ բարեկամաց ի ձեռս բերաք:

Մենաստան Հառիճայ Սուրբ Աստուածածնի ի Շիրակ գաւառի

568. Այս մենաստան ի ստորոտի անդ Արագած լերին ի հիւսիսոյ նորա ի սահմանին Շիրակ գաւառի ի գիւղ անդր՝ որ այժմ Ղբչաղ անուանի. ունի զնիստ իւր ի բարձր ստորոտի անդ ի վայելուչ վայրի, ի հարաւոյ և յարևմտից է ձորն փոքրիկ զառընթափ և հայեցուած իւր ընդ արևմուտս և ընդ հիւսիս ընդ բովանդակ սահմանս գաւառին. ջուրն մաքուր և օդն առողջարար:

Եկեղեցին, որ զկնի շինեցաւ ի Զաքարիա Ամիրսպասալարէ, է կրկին. ներսինն և գաւիթ նորա բարձր շինուածովք ի մաքուր կոփածոյ քարանց. ներսին տաճարն է անսիւն և հաւաք գործեալ կամարացն: Ունի ի միջավայր տանեացն զկաթուղիկէ բարձր և սրածայր: Եւ ի ներքուստ յերկոսին կողմանս արևմտեան դրան՝ այն է յերկոսին անկիւնս տաճարին, են երկու փոքրիկ մատրունք և ի վերայ նոցա ևս որոշ որոշ սիւնազարդ վերնատունք, որոց քարեայ սանդուղքն վերելից հիւսեալք ընդ որմունս մատրանցն. թերևս այնք առանձին տեղիք աղօթից իշխանին և իշխանուհւոյն: Ունի զմի սեղան և զերկուս աւանդատունս:

Դրսին տաճար այն է գաւիթ նորա, գործ զարմանալի, շնորհ ճարտարարուեստ քարակոփի կառուցեալ ի վերայ չորից սեանց միահատորից ըստ բաւականին ընդարձակ մեծութեամբ: Միջավայր առաստաղն ձգեալ ի վերայ չորից կամարաց սեանցն հաւաք գոր-ծեալ է բոլորովին փորածու մինչև ցբուն միջակէտն, ուր է մեծ լու-սամուտ բոլորակաձև իբրև երկուց գրկաց:

Գտանին ինչ ինչ արձանագրութիւնք ի գաւթի աստ յորմունսն ներքուստ և արտաքուստ՝ զորս մեծ մասամբ առեալ դիցուք առաջի:

Ի վերայ դրան տաճարին՝ որ ընդ յարկաւ գաւթին, ի կիսաշրջա-նակ կամարի նորուն դնի սոյն արձանագիր.

«Շնորհիւն Աստուծոյ, ես՝ Զաքարէ Ամիրսպասալար, շինեցի զկաթուղիկէ»:

Ի ներքոյ սոյն արձանագրութեանս ի վերայ նոյն դրանն դնի և այս արձանագիր.

«Ի թիւ ՈԿԳ (1214):

Կամաւն Աստուծոյ մեք հառիճեցիք հայր Պետրոս և այլ միա-բան եղբարքս հաստատեցաք յաւիտենից կտակ անջնջելի մինչ ի գալուստն Քրիստոսի և եդաք սահման անխափան. եթէ հայր ոք փոխի առ Քրիստոս, գիշերապաշտաւն և Գ քառասունք. և թէ էրէց կամ կուսակրաւն՝ Գ քառասունք, ապաշխարողի Բ. ի մարդն Ա աւր ժամ՝ հաւր և ամէն եղբարց: Որք հաստատ պահեն աւրհնին ի Քրիս-տոսէ: Որք հակառակին դատին ի յԱստուծոյ»:

Յաջ կողմն այսր արձանի գրի և այս.

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Պուտիկս, մեծ յուսով միաբանեցայ ի սուրբ ուխտս և ըստ իմ կարողութեանս ետու ընծայք սրբոյ Աստուածածնիս. հայր Յովհաննէս և միաբանքս հաստատեցին վկա-յութեամբ տէր Համազասպայ ի տաւնի Վարդավառին զամենայն եկեղեցիքս յիմ անուն պատարագել զՔրիստոս. ով խափանէ իմ մե-ղացն տէր է. և կատարիչքն աւրհնեալ եղիցին, ամէն»:

Ի ներքոյ վերոյգրեալ արձանին.

«Կամաւն Աստուծոյ և յաշխարհակալութեան Եվղանայ զան Ղազանին ես Եւոլխութլու որդի Զազանին և իմ որդի Սբաշէս և իմ խաթունս Խոդլու միաբանեցաք ի սուրբ Աստուածածնիս և զմեր բաժին գանձով շինած ձիթահանքն տուաք եկեղեցուս՝ լոյս ընի. ո՛չ

իմ որդու, ո՛չ աղբաւր, ո՛չ իմ ազգի մարդոյ դաւի չկայ. ով դաւի արնէ, յԱստուծոյ և ի փեղամպարաց նալաթ է. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. ի թվ. ՉՁԳ (1334)»:

Փոքր ինչ հեռի ի վերոյգրելոյն.

«Ի ՈՀ (1221).

Ես Վաչէ որդի Սարգսի և ամուսին իմ Մամախաթուն տուաք երկու այգի ի սուրբ... ի Փարպի և ի Տաճարագեղ մեծ յուսով. և յառաջնորդութեան Գրիգոր վարդապետի հաստատեցին կամաւն Աստուծոյ. ընկալաք և գայս... զԾառզարդարի Վաչէի և Ղազարու տաւնն Մամախաթունին՝ ամէն եկեղեցիքս անխափան. եթէ ոք խափանէ պարտական է մեղացն...»:

Ի մէջ գաւթիս յորմն հարաւային.

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Մխիթար գնեցի յԵրեւան զԵւագրի որդւոյն այգին յարդեանց իմոց և ետու ի Հառիճայու ուխտիս. և տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցին ի տարին Գ աւր պատարագ. Ա... և Բ աւր ինձ առնեն անխափան. կատարիչք աւրհնին յԱստուծոյ. որք խափանեն դատին ի Քրիստոսէ. ի թու. ՈՀԳ (1224)»:

Ի մէջ գաւթիս յորմն հիւսիսային.

«Կամաւն Աստուծոյ ես՝ Սանասար և Պաղտասար որդիք Խուպասարին ի յառաջնորդութեան հաւր Համազասպայ ընծայեցաք սուրբ ուխտիս զմեր հայրենի դրամագին այգին որ ի Նորաշին... ով հակառակ կայ կամ խըսմի մերոյ կամ աւտարաց, նզովս առցէ ի Տեառնէ Յիսուսէ. և հայրս և միաբանքս սահմանեցին որ յետ Աստուածածնին Ժ աւր պատարագ. Բ–ն Խուպասարին, Բ–ն Կիմայթին, Բ–ն Յովհաննէսին, Դ–ն Սանասարին. ո՛վ զյիշատակս խափանէ դատի ի Քրիստոսէ, ամէն: Հաստատեցաւ կտակս ի կամս Աստուծոյ. ի թվիս ՈՁԴ (1235)»:

Ընդարձակ արձանագիր շինութեան տաճարիս յանուն նոյն Զաքարիա սպասալարի և նուիրանացն ի նմանէ յայս մենաստան, դնի յորմն հիւսիսային սոյն տաճարի արտաքուստ՝ յայս օրինակ.

«Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ մարդասիրին ես Զաքարէ մանդատորթախուցէս[1] Ամիրսպասալար Հայոց և Վրաց, որդի մեծին Սարգսի, գանձագին արարի զհռչակաւոր սուրբ ուխտս Հառիճոյ յիւր ընական հայրենատիրացն՝ յաղագս կենդանութեան

[1] Այդ բառ Վրաց՝ մանդատորթախուցէս, թարգմանի ի հայ լեզու՝ արքունի տակառապետ:

տեառն իմոյ Թամար Թագուհոյ և փրկութեան ինձ և հարազատ եղբօրն իմոյ Իւանէի և զաւակաց մերոց Շահնշահի և Աւագին և ծնողաց մերոց. չինեցի զամրոց և զկաթուղիկէս բազում ծախիւք և զարդարեցի ամենայն սպասիւք սրբութեամբ և զիմ գեղն՝ որ էր մերձ ի սուրբ ուխտս Մողորիոն՝ ընծայեցի սուրբ Աստուածածնիս, որ բոլոր իւր ամէն հաղահատով սարովն և ջրովն, զոր բնական լեալ է և ետու ջաղաց ի գետուկ՝ որ Դիւաղաց կոչի. ջաղաց մի ի յԱնի Գլիձորին և պարտէզ մի ի Ծաղկոցաձորին, յայգի մի յԵրևան և յայգի մի ի Թալին. և զառաջին սահմանքն որ բուն լեալ էր հաստատեցի ի սահմանախաչ և հաճոյ գետն կոռմարգով գբերովն, ցամաք ձորովն՝ ճինարին հարով, գոսցեց ձորովն, արեան աղբերովն, հին Հառիճովն. եւ եդի սահման զայս՝ որ յաւագ խորանն պատարագել զՔրիստոս յիմ անուն հանապազ: Արդ, որք հաստատուն պահեն զյիշատակս մեր աւրհնին յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա. իսկ որք հակառակին և հանել ջանան փոքր ինչ կամ մեծ, զանէծս Կայենի և զՅուդայի ժառանգեսցեն և կրկին նզովեսցին յԱստուծոյ. թէ ոք բռնութեամբ և յուժով տանի՝ երեք հարիւր տասնութ հայրապետացն և յամենայն սրբոց եղիցի նզովեալ: Նաև գրեցաւ կտակս հաստատ. թիւ ՈԾ (1201)»:

Գտանին երկու առնաձև պատկերք կոփեալք ի վիմի յարևելեան ճակատ եկեղեցւոյս արտաքուստ յերկոսին կողմանս լուսամտին, որ անդր քան զտանիք տաճարին՝ որոյ հարաւայինն երևի յայտնապէս լինել արձան Զաքարիայ սպասալարի, զի և արձան առիւծոյ դրոշակի իշխանութեան նորա գտանի յետուստ կողմանէ նորա քանդակեալ ի վէմ անդր. իսկ հիւսիսայինն պատկեր Իւանէի նորին հարազատի:

Շինուածք այսր տաճարի բոլորովին համեմատ է շինուածոց հիւսածու տաճարին Այրիվանաց կամ Գեղարդայ. և ըստ որում երկոքին ևս ի հրամանէ նորին Զաքարիա սպասալարի կառուցան, գուցէ և ճարտարապետ նոցա էր միևնոյն այր: Յարևմտից հարաւոյ տաճարիս ի ձորի անդ է ուղղաբերձ ստուար վէմ մի իբրև սիւն, ի գլուխ որոյ կառուցեալ է կոփածոյ քարամբք փոքրիկ մատուռն և դռնակ ի վերայ զորմէ աւանդեն լինել տեղի շիրմի քարակոփ ճարտարապետի այսր տաճարի:

Հին եկեղեցի մենաստանիս փոքր և խրթին կից ի հարաւային որմն գաւթի տաճարին ի կոփածոյ քարանց առանց սեան. ունի զերկուս փոքրիկ սենեակս կամ աւանդատունս՝ որոց մին յանկեան արևելեան հարաւոյ և միւսն յարևմտեան և զմի սեղան և զդուռն արտաքոյ գաւթին յարևմտից:

Է և սորա արձանագիր յիշատակի շինութեանն ի վերայ արևմտեան միակ դրանն, այլ առանց թուականի՝ ըստ այսմ.

«Ես Սարգիս Ճոն շինեցի զեկեղեցիս և ի քրտանց իմ ետու զայլ ընծայ ի սուրբ ուխտս. և հայր Համազասպ սահմանեաց, որ ի Սարգսի և ի Բագոսի տօնին Բ աւր պատարագեն զՔրիստոս յիմ անուն»:

Ի կողմն արևելեան հարաւոյ յորմն հարաւային արտաքուստ.

«Ես Սարգիս առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճայ շինեցի զտեղի սննդեան իմոյ ի հարիւրամեայ կործանմանէն. և կարգեցի ի սմա արս ընտրեալս և խրատեալս աւրինաւքն Աստուծոյ. և հաստատեցի կամակցութեամբ մեր եղբարց՝ եթէ ոք առաջնորդաց ի ընծայից եկեղեցւոյս խորհէ և զվաստակս բազմաց և զտուրս հոգւոց իւրն համարի՝ որչափ Աստուած աւրհնած, (նա) այնչափ նզոված. և որ կաշառաւք հայի կրկին նզոված է»:

Ի ներքոյ վերոյ գրելոյն.

«Կամաւն Աստուծոյ մեք հառիճեցիքս հայր Պետրոս և այլ եղբարքս սահմանեցաք ի տաւնի տապանակին իմ մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ փոխանակ արդեանց իւրոց. որք կատարեն աւրհնեալ եղիցին և որք ոչ՝ նզո՛վս ժառանգեսցեն. թիւ ՈԽԱ (1192)»:

Ի ներքոյ վերոյգրեալ արձանին.

«Ի թուին ՈԽԵ (1196). և յառաջնորդութեան հաւր Պետրոսի, կամաւն Աստուծոյ ես Աստուածատուր ետու զիմ հայրագին սորա Արուճի վերի քաչկանց այգի և զընծայս ետու սուրբ Գրիգորիս և սուրբ Աստուածածնիս. և հայր առաջնորդ սուրբ ուխտիս խոստացան ինձ ի տարւոջն Բ աւր ժամ. Ա աւրն իմ հայր Նշիկին և տեառն իմ մայր Նվարթին. և թէ ոք զլանայ և չառնեն ի տաւնի սրբոյն Սարգսի, նզովեսցին յԱստուծոյ. և որք կատարեն աւրհնին յԱստուծոյ»:

Եւս յայն կողմն սոյն արձանագիր.

«Ես Գրիգոր վարդապետս՝ որդի Տուտայ, ետու զսուրբ նշանս լուսոյ կրկին պահարանով երիս մասն զգրաւականս ոգւոյ իմոյ ի սուրբ Աստուածածինս Հառիճայու. պարտական են ինձ զմիաբանութեան Գ քառասուն և զՁատկի ճրագալուցին Ա ժամարար՝ որչափ ուխտս ի հաստատութեան է. և որ հանէ զսա ի սուրբ ուխ-

տէս զինչ և իցէ պատճառանաւք, նզոված է յԱստուծոյ և յամենայն սրբոց, ամէն:

Տուաւ ի ձեռն հաւր Պետրոսի. որք ընակէք ի սուրբ տեղիս և կարդայք զգիրս, Պետրոսի և հոգւոյ և մարմնոյ ծնողաց իւրոց և եղբարց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ աղաչեմ»:

Ի գաւթին՝ յորմն արևելեան.

«Աստուածասէր և արդիւնաւոր պատրոնն Հիջուպ Վահրամ շինեաց զվայելուչ ժամատունս և էբեր զմիւս ջուրս յիշատակ հոգւոյ իւրոյ և զաւակաց իւրոց և ամուսնոյ իւրոյ Թամարին. և տէր Համազասպ և հայր Յովհաննէս միաբանաւքս ի խնդրո դստերն իւրոյ Խաթունին հաստատեցին ի տաւնի Թէոթոս թագաւորին զմիայն եկեղեցիքս յանուն Թամարին պատարագել զՔրիստոս անխափան: Կատարիչքն աւրհնին Աստուծոյ: Թվ...»:

Ի հարաւակողմն եկեղեցւոյս մինչև ցգառընթափ ձորն լեալ է կոփածոյ քարամբք շինուած ինչ մեծանիստ և սիւնազարդ, որոյ արևմտեան և հիւսիսային որմունք կան ի կանգուն և կամարք ինչ հանդերձ սեամբքն. իսկ այլն ամենայն խոնարհեալ անկեալ դնին առ տեղեաւն, որ թուի լինել կամ առաջնորդարանն և կամ ուսումնարան իսկ: Որովհետև ի ժամանակս ինչ ի վանորայս Շիրակայ ծաղկեցաւ արհեստն ուսումնականութեան: Եւ որպէս նկատի ի ծանօթութեանց ինձ պատահելոց՝ աստ ուսուցանէր և հռչակաւոր Թէոդորոս վարդապետն Քութենաւորն կոչեցեալ. առ որ ուսաւ սուրբ հայրապետն Յօհան Ուձնեցի ի Տաշրաց՝ ըստ Վարդանայ Բարձրբերդցւոյ ի գովեստն սրբոյ հայրապետիս:

Յընդարձակ արձանագրութեան անդ յիշատակի և անուն ամրոցի. այլ ըստ օրինի ամրոցաց հաստատուն պարիսպ շուրջ զեկեղեցեաւս ոչ տեսանի, բայց եթէ հասարակ պարիսպ ինչ ըստ այլոց մենաստանաց՝ որոց հետք երևին արդէն. այլ գուցէ թէ զայն ասէ զտանեաց տաճարին և գաւթին. քանզի կատար չորեքկուսի որմոց նոցա բարձր է լեալ քան զտանիքն իբրև գիրկ մի ի նոյն կոփածոյ քարանցն, այլ այժմ այն մեծ մասամբ քակեալ՝ կայ միայն արևելեան մասն. ուստի և յիշատակեցաւ ի վերոյ լուսամուտ մի անդր քան զտանիք տաճարին: Այժմ այս մենաստան է ի շինութեան:

ՄԱՐՄԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻ Ի ՇԻՐԱԿ ԳԱՒԱՌԻ

569. Այս եկեղեցի կամ մենաստան՝ յորում էին շիրիմք հանգստեան նախնեաց Վահրամայ Պահլաւունւոյ իշխանաց իշխանի հօրեղբօր Գրիգորի Մագիստրոսի, է արդարև ի Շիրակ գաւառի, բայց ո՛չ առ ափն Կարուց գետոյ՝ որպէս յիշատակի ի ճանապարհորդութեան Լեհաստանի համար 116, այլ ի վերայ միւս վտակին Ախուրեան գետոյ՝ յարևելեան եզեր ի ձորամիջի անդ ի դիւր տեղւոջ. և գիւղն որ առ սովաւ, կոչի այժմ ի բարբառ այլազգեաց Ղանլճայ. *և բնակիչքն են ի հայ գաղթականաց ի սահմանէն Կարուց. հեռի է այս տեղի յարևմուտս հիւսիսոյ յԱլէքսանդրապոլսոյ (Կիւմրի) ժամ և կէս: Եկեղեցին է կառուցեալ հաստատ շինուածովք ի սրբատաշ քարանց՝ բաւականաչափ բարձր և միջակ մեծութեամբ առանց սեան. ունի կաթուղիկէ ի միջավայր տանեացն վայելչաշուք և զմի սեղան և զերկուս աւանդատունս և զմի դուռն ընդ արևմուտս. կայ եկեղեցին յամբողջութեան, այլ գաւիթ նորա խոնարհեալ իջեալ է բոլորովին. աստ աղօթեն գաղթական բնակիչքն:*

Արձանագրութիւն շինութեան եկեղեցւոյս գտանի ի հարաւային որմն նորա արտաքուստ յայս ձև օրինակի.

«Շնորհիւն Աստուծոյ ես՝ Վահրամ իշխանաց իշխան և անթիպատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղէն Պահլաւունի և ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ և զտիեզերական ուխտս Մարմաշէն՝ սկսեալ ի ՆԼԷ (988) թուականին Հայոց, յաւուրս Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ Հայոց թագաւորի մինչև ի ժամանակս Յոհաննիսի որդւոյ Գագկայ Հայոց շահանշահի առն իմաստնոյ շինողի և խաղաղարարի. և ի թուականիս Հայոց ՆՀԸ [1029]. և կատարեցաք մեծաւ ջանիւ և բազում ծախիւք ես և մայր իմ Շուշիկ Հայոց տիկնաց տիկին և եղբարք իմ Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի Թուրքաց պատերազմի, և Ապլխարիպ Հայոց մարզպան և մանուկն Համզէ: Որք էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց և նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մերով և որդւոց մերոց և գանձուց առատութեամբ և ամենայն հնարիւք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհիս և զհաստատութիւն եկեղեցեաց. շինեցաք և այլ բազում եկեղեցիս և վանորայս. բայց զտեղի հանգստեան մերոյ առաւել պատուով մե-

ծացուցաք և լիացուցաք ամենայն գոյիւք՝ լերամբք և դաշտաւք. աւանդեցաք ի սա գեղս և ագարակս գանձագինս՝ զԲագարանի գեղ և զիւր ագարակն, զԳոդիսն և զՊորտանգն, զԱրագէճ և զԱզատաքասմանէն և զԵզնկայն, ի յԱւշականի այգիք և Գ ջրաղաց և Բ ջրաղաց ի Դողս, ի յԱշտարակի այգի, ի Կարբոյ դաշտի այգի, ի Սերկեւլի այգի, ի Վժան այգի, ի Մրենի այգիք, ի յԱնի տներ և կղզականի. և զարդարեցաք զսա ամենայն կազմութեամբ ի յիշատակ յաւիտենից մեզ և որդւոց մերոց. և կարգեցաք ի ձեռն սուրբ հաւր Երեմիայի և որ զկնի յաջորդեցաւ Սոսթենէս նորին որդիացեալ, և փոխարէն հատուցման ընկալեալ մեր ի ժառանգաւորաց սուրբ ուխտիս՝ տարին Զ [6] քառասունք անխափան մինչև ի գալուստն Քրիստոսի: Արդ եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց աւագ որ զմեր տուրս ի սուրբ ուխտէս պակասեցուցանէ կամ հայր որ զմեր ժամս խափանէ, ինքն որոշեալ լիցի ի Քրիստոսէ և դատող նորա սատանայ և մի տեսցէ զփառս Աստուծոյ. իսկ որք հաստատուն պահեն զաւանդս մեր, աւրհնեալ եղիցին»:

Ի սոյն որմն, ի կողմն արևմտեան վերոյգրեալ արձանին գրի և այս արձանագիր.

«Շնորհիւն Աստուծոյ ես՝ Մարիամ Ափխազաց և Հայոց թագուհի, դուստր մեծին Սենեքերիմայ և թոռն Գագկայ Հայոց արքայի, որ ետու զՏարուս ի սուրբ և ի տիեզերական ուխտս Մարմաշէն առաջնորդութեամբ հաւր Սոսթենիսի վասն Գագկայ իմ պապոյն մեղաց թողութեան և Կատային իմ հանկան. և հատուցումն բարի ընկալայ ի սրբոցս՝ զսեանն եկեղեցին զսուրբ Պետրոս ի Քրիստոս պատարագաւ զտարին ողջոյն Կատային իմ հանկանն մինչև ի գալուստն Քրիստոսի: Արդ, եթէ ոչ ի մեծամեծաց կամ ի փոքունց ի Հայոց կամ ի Վրաց, որ այս գրոյս հակառակա և զիմ գիւղն զՏարուս ի յայս ուխտէս հանէ, ինքն ելցէ ի կենացն Աստուծոյ և պարտական լիցի արեանն Քրիստոսի: Եւ մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ. իսկ որ հաստատուն պահեն զաւանդս մեր՝ աւրհնեալ եղիցին»:

Ի հիւսիսային որմն անդր արտաքուստ դնի սոյն արձանագիր վերանորոգութեան եկեղեցւոյս.

«Ի ժամանակս բարեպաշտից և աստուածասիրաց պատրոնաց մերոց աթաբակ Իւանէի և մանդատորթախուցէ Շահանշահի, հրամանաւ սոցին վերստին նորոգումն եղև հրաշափառ տաճարիս աստուածանիստ սրբոյ կաթուղիկէին մարմարոնեայ շինուածովք ի

ձեռն Ապուղամրի Մագիստրոսի, տէր Գրիգորոյ արհի եպիսկոպոսի և հարազատի Մուխարփի Թոռանցն Վահրամայ իշխանաց իշխանին ի զարմից շառաւիղէ սրբոյն Գրիգորի շինողի ի հիմանց մեծաւ տենջմամբ և յուսով և բազմագումար նորանոր ստացուածովք. այսինքն՝ յոլով գիւղորայս, այգեստանս, կուղպակս ի քաղաքն Անի և ջաղացս Գ, որոց արձանագիրն ցուցանէ մի ըստ միոջէ. և փարթամացուցեալ զվանս ամենայն գոյիւ առ ի լնուլ և առաւելուլ զպէտս կարևորս գիւրեանց և զեկաց. այլև ունէր սուրբն ժամանակս ոչ սակաւ. յետոյ աւերեալ յանաւրինաց և զվանս գեւղ արարեալ և զկաթուղիկէն բերդանման ամրոց և կայր ի խաւարի ի սգաւորութեան՝ զրկեալ յամենայն գոյիցն մինչև ցաւուրս յայսոսիկ: Իսկ ի ՈՀԴ (1225) թուականիս Հայոց քաջ և արի զաւրականն Քրիստոսի սիրելի եղբայրն իմ Խարիպն՝ իմով կամակցութեամբ խորհուրդ բարի ի միտ արկեալ ազատել զսա ի զազիր մթնազգածութենէ հասուցանել յառաջին փառաւորութիւնն և հանեալ արտաքս զշինականսն և եղև վանք քահանայից կրաւնաւորացն հաճոյացելոց Աստուծոյ. հուսկ յետոյ զարդարեցաք զսա սպասիւք, պայծառասգեստիւ սրբութեամբ, ոսկեղէն, արծաթեղէն, Հին և Նոր Կտակարանաւք եկեղեցականաւք. և ընծայեցաք ի սմա նուէր զմեր այրն և զԱզատ գիւղն և նոր ի նորոյ վանիցս ջաղացս վերաշինեցաք, ուստի անուանի Տիրաշէն*. յայսկոյս գետոյն և յայնկոյս գետոյն յԱնի՝ որ կամուրջէն ի վայր և ի վեր զխոտ և զջուրն և զհողն. և զոր ինչ ի սկզբանէ ունիմք ի քաղաքի ի մեր պապէն հայրենիք ստացուածք մեզ. նախ զսուրբ Ստեփաննոս եկեղեցին բոլոր ժողովրդեամբ. և երկու այգի ի Մարմէտ՝ որ ի նախնեաց մերոց մեզ էր հասեալ, միաւորեցաք զվերին վանքն մեծ վանիցս իւր ամենայն ստացուածովք և լիցի հրամանաւ միոյ առաջնորդի*[1]*. այսքանս կատարեցաւ, ընդ այն ժամանակս գեղեցկագեղ եղբայրն իմ Ղարիպն Մագիստրոսն գովեալն յամենայն լեզուաց մարտիրոսացաւ ի պատերազմի անաւրինաց և միայն մնացի ես Գրիգոր եղկելիս և զմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ կաթուղիկէիս մերձ առն մերոյ Վահրամ իշխանին. փոխարէն հատուցանէք սպասաւորք սորա ընդ մերոյ արդեան՝*

[1] Իսկ գրուածքն տէր Յոհան և Խաչատուր քահանայից՝ ըստ այսմ. «Մինչ առ այս այսչափ կատարեցաւ առ ժամայն գեղեցիկ եղբայրն իմ Խարիփ... թաղեցաք առ դրան սրբոյ կաթուղիկէիս մերձ առ նշխարիս հաւոյն մերոյ Վահրամայ իշխանի և փոխարէն հատուցին... ընդ մերոց արդեանցս զոր արարաք զկաթուղիկէիս զաւագ խորանին պատարագն յանուն նահատակին Քրիստոսի Խարիփին կատարել ամենայն աւուր ի սկզբանէ...» և այլն: Ի 118 համար Ճանապարհորդութեան Լեհաստանի:

զոր արարաք զկաթողիկէիս զաւագ խորան յանուն նահատակիս վկային Քրիստոսի, զաւր նահատակին կատարել յամենայն յամի ի սկզբանէ տարւոյն մինչև ցկատարումն տարւոյն՝ յայսմ հետէ մինչ ի ծագումն որդւոյն Աստուծոյ. որ ոք խափանէ կամ շորթել ջանայ յընչից եկեղեցւոյս, որոշեսցի ի փառացն Աստուծոյ և զրկեսցի ի մշտնջենական կենացն. կատարիչ գրոյս աւրհնեսցի յԱստուծոյ և ի սրբոցն, նորոգի և ի մարմին, ամէն:

Երեք ինչ նշանակին յարձանագրութեան աստ. Ա մարմարոնեայ շինուածք, որոց հետք չերևին այժմ բնաւին, այլ գուցէ յառաջագոյն լեալ իցեն մարմարոնեայք՝ խաչկալ սեղանոյն սրբոյ և ինչ ինչ շէնք ի խոնարհեալ գաւթի նորա և կամ յերկոսին սիւնաձև փոքրիկ տաճարսն, որ զկնի, յորոց անուանեալ իցէ ըստ հաւանական մտաց այս տաճար Մարմաշէն *կամ ըստ ոմանց՝* Մարմարաշէն*: Բ. Վերին վանք. տեղի սոյն վանիցս կայ տակաւին և է բարձր քան զյիշատակեալն Մարմաշէն ի լանջս նոյն կողման ձորոյն յարևելս հիւսիսոյ. և արևելեան որմն ինչ նորա կայ ի կանգուն և հեռի է ի մեծ եկեղեցւոյն իբրև ձիարշաւ մի ընդ զառիվեր: Գ. Այրն և զԱզատ գիւղն, ցուցանեն բնակիչքն ի հիւսիսոյ կողմանէ վերին վանաց զմեծ այր մի (մազարայ) կարի հարկաւոր ի պէտս բնակչացն. և Ազատ գիւղն՝ նոյն է ընդ Ազատազասմանէ գեղջն, որ յարձանագրութեան անդ Վահրամայ իշխանաց իշխանի:*

Յերկոսին կողմանս մեծի եկեղեցւոյս Մարմաշինոյ ընդ հարաւ և ընդ հիւսիս կարի մերձ նմին՝ են երկու փոքրիկ մատուռք սրածայր կաթուղիկէիւք, որոց արտաքին տաշածու քարինք բոլորովին քակեալ յայլազգեաց՝ բարձեալ են այլուր ի պէտս այլ շինութեանց ըստ հաւաստի պատմութեան բնակչացն. ուստի եթէ արձանագրութիւնք լեալ իցեն ի նոսա, ընդ այնց քարանց անհետացեալ են իսպառ: Եւ զի գուցէ սեան եկեղեցի յանուն սրբոյն Պետրոսի՝ որ յարձանագիրն Մարիամ թագուհւոյ, իցէ մին յայսց երկուց մատրանց՝ որք են արդարև սիւնաձև շինուածք:

Զի՛ք ինչ հետք պարսպի կամ սենեկաց մենաստանիս, քանզի յոլովակի փոփոխութիւնք այլազգի բնակչաց ընդ ժամանակս ժամանակս անհետացուցեալ են զայնպիսի շինուածս:

ԱՌԱՋՆՈՐԴՔ ԿԱՄ ՎԱՆԱՀԱՐՔ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ

570. Յիշատակի ոմն նախքան զԵրեմիա ի կոնդակին Յօհաննավանաց, որ ի Զաքարիա Սարկաւագէ, որ ո՛չ յիշէ զանունն:

Երեմիա, որ ի վեր անդր յարձանագրութեան, հրաժարեալ ի պարտաւորութենէ վանահայրութեան և փոխանակ իւր կացուցեալ զՍոսթենէս՝ գնացեալ կրօնաւորի ի վանսն անդ Յօհաննու, որ ի Կարբի: Եւ անդ ընկալեալ զվախճան ամփոփի անդէն, յորոյ վերայ կանգնեն արձան խաչի՝ որ ունէր գիր այսպիսի ըստ յառաջ բերելոյ նոյն յիշեալ Սարկաւագի.

«ՆՁԲ (1033) թուին:

Ես՝ հայր Երեմիա, առաջնորդ սուրբ ուխտին Մարմառաշինու, սիրեցի զվարս միայնութեան, աւանդեցի զվերակացութիւն ուխտին իմոյ անդրանկին իմում Սոսթենէսի. և ես եկեալ բնակեցայ յանապատի աստ և ի տեղւոջս ընկալայ զփոխումս: Արդ՝ աղաչեմ յիշեսջիք ի Քրիստոս»:

Զկնի՝ նոյն Սոսթենէս. առ սա գրեաց Գրիգոր Մագիստրոս զերկուս թուղթս. առաջնովն խօսի զնմանէ իբրև զառաքինի և զսուրբ առնէ. և երկրորդաւն առաքէ զոսկի մատանի ծանրագին յակինթ ակամբ՝ պարգև առ ինքն ի Մոնոմախ կայսերէ: Գովութեամբ խօսին զսմանէ և այլ արձանագիրք:

ՄԵՆԱՍՏԱՆ ՎԻՐԱՊԻՆ ԱՐՏԱՇԱՏՈՒ

571. Այս վիրապ խորագոյն յԱրտաշատ քաղաքի շինեալ ի հրամանէ թագաւորաց Հայոց վասն չարագործ և մահապարտ անձանց. տեղին ի հիւսիսային եզեր Երասխայ հեռի յԵրևանայ ընդ հարաւ իբրև չորից ժամուց՝ ի վերայ արևելեան բլրոյ քաղաքին, էր կարի խորագոյն, ուստի և յատակ նորա տղմուտ. ուր և արկաւ մեծն Գրիգոր Պարթև, զի մեռցի անդ անարև. զորմէ Ագաթանգեղոս ըստ ձեռագրին. «Արդ՝ իբրև այնմ ևս հասանէր թագաւորն (Տրդատ) ի վերայ իրացն՝ թէ արդարև որդի Անակայ Պարթևի է՝ որ սպան իսկ զԽոսրով հայրն նորա, հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռաւք և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի և իջուցանել զնա ի Վիրապն ի ներքին որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի:... Եւ զայն ԺԳ ամս՝ որ եղև Գրիգորիոս ի բերդին, ի բանտին և ի Խոր Վիրապին... ուր ընկեցին զնա, պահեալ լինէր նա կենդանի շնորհաւք Տեառն իւրոյ. իսկ զայլ մարդիկ որ միանգամ էր իջուցեալ անդր, ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաշուք դառնութեան տեղւոյն՝ վասն կարակում տղմոյն և աւձախառն բնա-

կութեան և խորութեանն. վասն չարագործաց իսկ էր շինեալ զայն տեղի և ի սպանումն մահապարտաց ամենայն Հայոց»:

Այս վիրապ մահապարտաց յԱրտաշատ քաղաքի յարևելեան լանջս բլրոյն, որպէս այժմ տեսանի, չէ՛ այնքան խորագոյն որպէս յայտնեն Ագաթանգեղոս և այլք. քանզի այժմեան խորութիւն նորա ի յատակէ եկեղեցւոյն, որ ի վերայ նորա, ցյատակ Վիրապին է քսան և հինգ աստիճանաց սանդղոց ուղղակի ի խոնարհ և յիսուն ոտնաչափ ընդարձակութիւն բոլորաձև շինուածոյն ի ներքուստ. այլ որպէս երևի կիսով չափ և աւելի ևս լցեալ են զայն հողով. զի յատակ նորա ըստ մտաց պատմութեանն՝ էր տղմուտ և կարի խոնաւ. և այս ո՛չ լինէր՝ թէ չէ՛ր Վիրապն այն խորացեալ գէթ ցհաւասարութիւն ստորակայ դաշտին. իսկ այժմեան յատակ նորա գտանի ի կիսաբաժնի անդ լանջի բլրոյն և է բարձր յերեսաց դաշտին իբրև 15 գազ պարսկային:

Այս Վիրապ մահապարտաց զկնի ելանելոյ անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և ընդհանուր լուսաւորութեան Հայաստան աշխարհի, պատուեցաւ ի հաւատացելոց ընդ այլ նշանաւոր և սուրբ տեղեաց առ ի մշտնջենաւորել զյիշատակն երեքտասանամեայ տքնութեան և վաստակոց սրբոյ հօրն մեծի. յորոյ վերայ թերևս շինեցաւ և եկեղեցի ընդ այլ եկեղեցեացն Արտաշատու, զորս կործանեցին ընդ քաղաքին զօրքն Բ Շապհոյ արքային Պարսից: Այլ անդրէն նորոգեաց զեկեղեցիսն Վահան Մամիկոնեան որդի Հմայեկայ. որպէս գրէ Վարդան. «Իսկ Վահան շինեաց զեկեղեցիսն Արտաշատու զաւերեալսն ի Պարսից»:

Զկնի ապա Գ Ներսէս կաթուղիկոս Շինող անուանեալ՝ յետ յաջորդելոյ յԱթոռ հայրապետութեանն, տայ կառուցանել զեկեղեցի և ի վերայ այսր Խոր Վիրապի Արտաշատու, ըստ Յովհաննու Զ կաթուղիկոսի. «Զկնի ապա շինէ տաճար սրբութեան և ի վերայ Վիրապի սրբոյն Գրիգորի՝ ուր ի մէջ թունաւորացն թաղեալ առաքելանուէր այրն Աստուծոյ, զկամակոր վիշապին ջախջախեաց զգլուխ»:

Ի շինութենէ աստի, որ եղև անդ ի մէջ Է–րդ դարուն մինչև ցաւերումն նորա՝ թէ որչափ միջոցք անցին, չէ՛ յայտ. այլ միայն այսքան տեղեկութիւն գոյ՝ թէ շինուածք այսր Գ Ներսէս կաթուղիկոսի ո՛չ տևեցին ընդ երկար:

Այժմեան չէնք մենաստանիս՝ եթէ երկուց եկեղեցեացն և եթէ պարսպին և սենեկացն են աշխատութեամբ Դաւիթ վարդապետի ուրումն Տփխիսեցւոյ՝ որ վախճանեցաւ յամի 1695. որոյ ահա արձա-

նագիր մահուան փորագրեալ ի վիմի յորմն եկեղեցւոյն որ ի վերայ Վիրապին մեծի ի հիւսիսոյ նորա արտաքուստ, ըստ այսմ օրինակի.

«Ի տապանի աստ ամփոփի
Մարմին Դաւիթ վարդապետի,
Որ էր վարուք առաքինի,
Կենօք մաքուր, բարուք բարի,
Մեծահաւատ, քաջ և արի,
Խոնարհամիտ, հեզահոգի,
Ազնուատոհմ յազգէ Վրացի,
Սնեալ ի սուրբ Էջմիածնի,
Շինող, հիմնող սրբո ուխտիս,
Եւ նորոգող սրբոյ վանիցս,
Եկեղեցեացս և պարսպի,
Կենդանաթաղ գերեզմանիս,
Լուսաւորչին մերոյ ազգիս,
Որ վճարեաց զկեանս աշխարհիս,
Վերափոխեալ ի յերկնայինս՝
Ի հայկական թուականին
ՌՃԽ եւ Դ (1695) ամին,
Որ զօրէնի կիւրակէին,
Փետրվարի Ժ երորդին,
Որք վայելէք յարդիւնս սորին,
Զսա յիշեսջիք առ ի բարին,
Ի ժամ սրբոյ պատարագին,
Յաղօթս և յերգս աստուածային»:

Առ որմով եկեղեցւոյս ի ներքոյ սոյն արձանագրութեան յարտաքին կուսէ աւանդեն ծերունիք թէ՝ էր գերեզման սոյն յիշեալ Դաւիթ վարդապետի, որոյ և վէմ տապանին իբր քառասուն ամօք յառաջ գտանէր ի վերայ, այլ յանքնակ լինելն մենաստանիս ի միաբանից՝ այլազգիք գեղջն բեկեալ և անհետացուցեալ են:

Սոյն այս յիշեալ եկեղեցի ի կոփածոյ քարանց օրոցաձև, փոքրագիր և անսիւն և է կից յորմն հարաւային պարսպի. ունի արձան յիշատակագրութեան տուողի զարդիւնս շինութեան յորմն անդր հիւսիսային ի վեր քան զկամար միակ դրանն՝ յայս օրինակ.

«Ի թուին ՌՃԺ [1661] և... յաւուրս Յակոբ հայրապետին, ի յառաջնորդութեան տէր Դաւիթ վարդապետին նորոգեցին զսուրբ եկեղեցիքս խօճայ Շամօնն Ագուլեցի և խօճայ Աւթանդիլն Թիֆլիզեցի, յիշեցէք ի Քրիստոս Աստուած»:

Վիրապն մեծ անկանի ուղղակի ի ներքոյ բեմի սեղանոյ եկեղեցւոյս և մուտ նորա է ընդ հարաւային աստիճանօք բեմին՝ ամրացեալ փոքր դրամբ, ընդ որ մտեալ իջանեն ի Վիրապն՝ յորում գոյ տեղի պատարագելոյ և կանգնեալ ի պատուհանի անդ արևելեան վէմքար. ի հարաւակողման այսր փոքրիկ սեղանոյ գրի սոյն արձանագիր.

«Յիշեալ լիցին առաջի Քրիստոսի խօճայ Սիմոն և իւր Բ ամուսին Գուլում–Խաթունին իւր ննջեցեալքն, որք նորոգեցին սուրբ Վիրապս. թւին ՌՃԺ (1661)»:

Դնի աստէն ի մէջ Վիրապիս այսորիկ որձաքար փայլուն վէմ մի ի գոյն մութն դեղնաշորթ, յորոյ վերայ մաշուածք, տեղիք իբրև երկուց ծնգաց, զոր աւանդութեամբ հաստատեն գործեալ այնպէս ի յաճախ ծնրադրութենէ սուրբ հօրն մերոյ մեծին Գրիգորի յերեքտասանամեայ ժամանակսն:

Ի մէջ տաճարիս ի ժողովրդանոցի յարևմտակողմն դրան է գետնափոր տեղի ինչ. զորմէ աւանդեն լինել տեղի նշխարաց մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ և Ներսէսի ուրումն եպիսկոպոսի ի սահմանացն Տարօնոյ, զորս յառաջ բերէ վերոյիշեալ Դաւիթ վարդապետ առաջնորդ վանացս ի շրջաբերական թուղթս իւր, որ գտանի օրինակեալ ի ձեռագիր Յայսմաւուրս ինչ. յորում խօսի և զնշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ որպէս թէ լցէ ի Խոր Վիրապի աստ, որ հակառակի ընդհանուր պարզ իմացութեան գրուածոց պատմութեանց ազգիս՝ զորմէ (335), որպէս վասն Լուսաւորչի, նոյնպէս և վասն վերոյիշեալ երկուց անձանցն. այլ ստուգութեամբ աւանդեն պատմիչք լինել յայսմ տեղւոջ նշխարաց Գ Ներսէսի կաթուղիկոսի՝ ըստ պատմելոյ Զամչեան հայր Միքայէլի (հատոր Բ, երես 360):

Իսկ միւս եկեղեցին՝ ուր կատարի սովորական ժամերգութիւն, է կառուցեալ ի միջին տեղւոջ քառակուսի պարսպին՝ նոյնպէս ի խարտեալ քարանց. և մեծ է դրութեամբ քան զայն որ ի վերայ Վիրապին և ունի կաթուղիկէ (զանգակատուն) և գաւիթ վայելուչ, զմի սեղան, զերկուս աւանդատունս և զմի դուռն յարևմտից:

Քառակուսի պարիսպ մենաստանիս հիւսեալ է ի հասարակ քարանց և ի կրոյ և է բաւականաչափ բարձր. և ունի հաստատուն բրգունս, զմի դուռն մեծ ընդ արևելս. ամենայն հարկաւորեալ շէնք մենաստանիս են ի մէջ պարսպին՝ է զի կամարայարկ և է զի փայտածածք:

Արտաքոյ պարսպին յարևմուտս նորա ի լանջս արևելակողման բլրոյն են քանի մեծ ապառաժ վէմք կից յիրեարս, ի վերայ միոյն են նշանք երկուց քառաթև խաչից դրոշմեալք ի վէմ անդր հնգոյն

ձևացութեամբ. և աւանդեն ոմանք լինել այնմ Օթեաց խաչ. զոր Բարդուղիմէոս և Յուդա Թադէոս ի հանդիպումն միմեանց ի բլրին Արտաշատու և յօթելն անդէն զմի գիշեր առ վիմաւն՝ դրոշմեցին զայն և անուանեցին Օթեաց խաչ: Այլ պատմութիւնն դնէ զայն բլուր Արտաշու կամ Արտաշատու մերձ ի յԱղբակ, որ կարի բացակայ է յարևելս հարաւոյ յԱրտաշատ քաղաքէ աստի. նա ի սահմանին Պարսկահայոց և սա ի դաշտին Դուին քաղաքի յԱրարատ. թէպէտ և սմա լինել այն ո՛չ երևի այնքան տարադէպ՝ յաղագս հին ձևացութեան նշանացն, կոչման բլրոյն, անուան Արտաշատու և յարմար ճանապարհորդութեան նոցին առաքելոցն:

572. Առաջնորդք մենաստանիս յիշատակեալք ի գիրս. Անտոն եպիսկոպոս յամի 1441, որ գտաւ ի ժողովն ընտրութեան Կիրակոսի Վիրապեցւոյ ի նորոգութեան աթոռոյ Էջմիածնի: Մանուէլ եպիսկոպոս յամի 1603, որ ընդ Դաւթայ կաթուղիկոսի մնաց ի Հայաստան: Եւ Դաւիթ վարդապետ Տփխիսեցի վերջին նորոգող մենաստանիս և եկեղեցեացն՝ յամի իբր 1661: Այժմեան ներկայ վանահայր մենաստանիս՝ Գալուստ վարդապետ Դարունեցի ի Կոգովիտ գաւառէ:

ՄԵՆԱՍՏԱՆ ԱՅՐԻՎԱՆԱՅ ԿԱՄ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԱՅ

573. Այս մենաստան ի ստորոտս արևմտեան հարաւոյ լերին Գեղամայ, հեռի ի գիւղաքաղաքէն Գառնւոյ ընդ յարևելս հիւսիսոյ իբրև ժամ և կէս՝ ի սկսուածս անդ ձորոյն Գառնւոյ՝ պատեալ յարևելից, յարևմտից և ի հիւսիսոյ բարձր լերամբք. և կարի մերձ անցանէ յարևելից նորա գետակն կարկաչասահ ընթացիւք զառընթափ զգլխովք մեծամեծ վիմաց և քարանց: Երբեմն Զ Յովհաննէս կաթուղիկոս խոյս տուեալ ի բռնութենէ Նսրա ոստիկանի հագարացւոյ՝ գայ յայս մենաստան. և աստ ևս չկարացեալ ունել ժոյժ՝ անցանէ ի Սևան կղզի. զայս փախստենէ իւրմէ ստորագրէ նա ինքն յայս օրինակ. «Այսպէս ապա ելեալ ի վանաց անտի Այրից՝ ի կացրդից սրբոյն Սահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ ի ձորակի միոջ, դէպ ուղիղ գնացաք և ելաք ի վերին վանս՝ ուր կայանքն անասնոցն էին. և անտի չուեալ գնացաք ի միանձնացելոց կուսակրօնից միայնարանս, որ ի Սևան կղզւոջ»:

Այս մենաստան, որպէս և վկայեն պատմիչք, է մի ի հնագոյն վանորէից Հայաստան աշխարհի, ուր որպէս և ի վեր անդր ըստ գրուածոցն եկաց ի ժամանակս ինչ սուրբ հայրապետն Իսահակ

Պարթև: Բայց չերևին նշմարանք ինչ հին շինուածոց. հիմնադրութիւն և ինչ ինչ տեղիք շրջապատ պարսպին ևեթ նկատին լեալ ի հնութեանց անտի: Զևակերպութիւն պարսպին քառակուսի, այլ արևմտեան կողմն փոքր ինչ սրացեալ կից է մեծի սեպացեալ վիմի՝ որ բաշացեալ բարձրութեամբ հայի ի մէջ անդր մենաստանին. հիւսիսային որմն նորա է ի վերայ բարձր վիմուտ առապարի, իսկ միւսքն ի խոնարհ. երկու դրունք են պարսպին՝ մեծն յարևմտեան կողմն մերձ ի սեպացեալ վէմն ընդ հարաւ, իսկ փոքրն ընդ արևելակողմն՝ որ հանէ ի գետակն:

Առաջին տաճարն, ուր լինի սովորաբար ժամերգութիւն, է կրկին՝ բոլորովին շինեալ ի կոփածոյ քարանց. ներսի տաճարն է առանց սեան բաւականաչափ բարձրութեամբ և ունի ի միջավայր տանեացն կաթուղիկէ սրածայր. երկու աւանդատունք են ի նմա յերկոսին կողմանս սրբազան սեղանոյն հանդերձ վերնատամբք՝ ընդ որս մտանեն ի բեմէ սեղանոյն. հանդէպ այսոցիկ աւանդատանց յարևմտակողմն ի մէջ տաճարիս՝ յերկոսին կողմանս արևմտեան դրան են երկու փոքր մատրունք հանդերձ սիւնազարդ վերնայարկօք, յորս որպէս երևի աղօթէին իշխանուհիք կամ իշխանազունք Հայաստանի, ուր ելանեն ընդ որմն հիւսեալ սանդղովք քարեայ. ըստ այսմ տեսանի և յինչ ինչ մենաստանս՝ որպէս յեկեղեցին Հառիճոյ վանաց. ունի և զերկուս դրունս մին յարևմտից և միւսն ի հարաւոյ:

Դրսին տաճար՝ այն է գաւիթ նորա կից այնմ ի միասին կառուցեալ՝ մեծադիր քան զայն և է ի վերայ չորից միահատոր սեանց. միջոց չորից կամարացն ձգելոց ի վերայ սեանց հաւաք գործեալ՝ է բոլորովին քանդակ ընտիր մինչև ցգագաթ կիսաբոլորակ գմբեթին՝ ուր է բոլորակաձև լուսամուտ մեծ. ունի սա զմի դուռն ընդ արևմուտս. ի մէջ գաւթի աստ յերկոսին կողմանս դրան ներսին տաճարի կանգնեալ կան ընդ որմն ի վեր պատուանդանաւ Բ ընտիր փորածու մեծամեծ խաչքարինք: Շինութիւն եկեղեցւոյս եղեալ է յամի 1214, որոյ յիշատակագրութեանն արձան գտանի ի վերայ կամարի արևմտեան դրան ներսին տաճարի արտաքուստ ի մէջ գաւթին՝ յայս օրինակ.

«Ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայի և Իւանէի նորին հարազատի և որդւոց նոցին Շահանշահին և Աւագին և յառաջնորդութեան Բարսղի միայնաւորի և աշխատութեամբ եղբարցս շինեցաւ կաթուղիկէս մեծափառ. ՈԿԳ (1214)»:

Հիւսիսային որմն գաւթի տաճարիս է բոլորովին միապաղաղ վէմ մի տաշածու. քանզի ի հիւսիսակողմն իսպառ կից եկեղեցւոյս

երկայնութեամբ ընդ արևելս և ընդ արևմուտս ի միջոցս պարսպին և եկեղեցւոյն է վէմ ահագին և բարձրութեամբ կրկին քան զեկեղեցին. և տեսակ նորա նման տեսակի երկանաքարի. այս վէմ ըստ արտաքին տեսութեանն անհարթ իբրև վիմեայ բլրակ ինչ բնական և է իսկ, այլ մէջ նորա դատարկ գրեա թէ բոլորովին, զի են ի նմա չորք տաճարք. Դ ի ներքոյ՝ հաւասար միւս ստորագրեալ եկեղեցւոյն և Դ–րդն մեծ ի վերայ այնց երիցն: Առաջին յերից անտի փորեալ է արդեամբ Պռօշ իշխանին Վասակեան և դուռն նորա ընդ մէջ վերոյիշեալ գաւթի տաճարին՝ ընդ որ սկսեալ է փորուածն. և ունի լուսամուտս ընդ հարաւ ի բարձանց. մեծութիւն փորածոյ տաճարիս է իբրև քառասուն քառակուսի գազ պարսից. և ունի բեմ և սեղան և խորհրդանոց ի միևնոյն վիմէ անբաժան: Ի հիւսիսակողմն ի մէջ տաճարիս ընդ երկայնութիւն նորա՝ իբրև երկու գազ լայնութեամբ է փորածու դատարկ տեղի ինչ ի յատակի տաճարին: Ի հիւսիսային դասէ կղերց ելանէ սևորակ ջուր անախորժ յարբումն՝ որ անցեալ ընդ յատակաւ եկեղեցւոյս և գաւթին երթայ անկանի ի գետակն. յորմն հիւսիսոյ քանդակեալ կան Բ առիւծք դէմ առ դէմ շղթայակապ. նոյնպէս քանդակեալ և արծիւ մի ի վերոյ սաւառնեալ՝ ունելով մագլօք և կտցաւ զթիկանց միոյ յառիւծուց անտի. այլ թէ զի՛նչ գուշակէ՝ չի՛ք ինչ ծանօթութիւն: Յիշատակագրութիւն չինութեան փորածու տաճարիս յանուն յիշեալ իշխանին գտանի յորմն հարաւոյ ի ներքուստ յայս օրինակ.

«Ի տէրութեան բարեպաշտ աստուածասէր թագադրին Վրաց Աւագին և Շահնշահի և որդւոյ նորա Զաքարիայի ես Պռօշ որդի Վասակա յազգէն Խաղբակա գանձագին արարի ի տերանց աշխարհիս զմեծահռչակն Այրիվանս լերամբ և դաշտաւ և ամենայն կազմութեամբ՝ որ կայր ի սմա. փորեցի ի վիմէ տուն Աստուծոյ յիշատակ ինձ և որդեաց իմոց և ամուսին իմո Խութլու–Խաթունին». կից այսմ այլ տեսակ գրով. «Իմովքն զամէն տվի ի դուռն սուրբ Գեղարդին վախմ»:

Կից այսմ տաճարի յարևելից են և երկու փոքր տաճարք նմանապէս փորեալք ի նոյն վիմի գեղեցկաձև և վայելչազարդ. և հանդոյն վերնոյն բեմքն, աստիճանքն, սեղանքն սրբազան խորհրդոյն, լուսամուտքն և այլ հարկաւոր պարագայքն բովանդակ են ի միևնոյն միապաղաղ վիմէ բոլորովին. դրունք այսոցիկ տաճարացս են յառաջին դասի անդ հիւսիսակողման ի մէջ հիւսածու գաւթի տաճարին հանդէպ սեանն արևելեան հիւսիսոյ և չունին զարձանագիր շինութեանն. ուստի թէ յորոց աշխատասիրեալք և յորում ժամանա-

կի՝ չէ՛ յայտ: Եւ գուցէ այս երկու տաճարք լեալ իցեն ի վաղուց անտի և յանուն սոցա իսկ անուանեալ իցէ այս մենաստան Այրիվանք. *քանզի ի պարսպի աստ մենաստանիս չի՛ք այլ այնպիսի չէնք բնական կամ արհեստական՝ յոր անուն անուանեալ իցէ այս մենաստան. թէև ի բացակայս, մանաւանդ ի հարաւոյ ի ձորամիջի անդ յարևելեան եզերս գետակին գտանին ինչ ինչ բնական և արհեստական այրք (մաղարայ):*

Զորրորդ տաճարն ի նոյն վիմի մեծ քան զերիսն և ի վերայ տանեաց նոցա՝ նմանապէս փորածու. դուռն նորա արտաքոյ յանկեան արևմտեան հարաւոյ մեծի վիմին. ընդ որ մտեալ և յառաջացեալ իբրև քայլս հինգ մտանէ ի տաճարն: Փորածու չէնք նորա բովանդակէ ի վերայ չորից սեանց՝ ներքնախարսխօք և վերնախարսխօք կամարազարդ յօրինեալ բոլորովին. ի միջոցս չորից սեանցն՝ ուր կամարք նոցա միանան, փորեալ է սրածայր իբրև մէջ կամ առաստաղ գմբեթի հանգոյն այլոց կաթուղիկէից տաճարաց և ունի լուսամուտս. ձև նորա կատարեալ քառակուսի՝ այլ չունի բեմ, սեղան և զայլ հարկաւորս եկեղեցւոյ, զի յատակն յամենայն կողմանս ունի զմիևնոյն հաւասարութիւն:

Փորել ետ զայս գործ մեծ՝ որդին Պռոշ իշխանի յիշատակելոյն ի վեր անդր Պապաք անուն՝ յիշատակ ինքեան և ամուսնոյն իւրոյ Ռուզուքանայ, որոց յիշատակագրութեան արձան գտանի ի վերայ շրջանակի վերին խարսխի սեանն արևելեան հիւսիսոյ՝ յայս օրինակ.

«Աւգնականութեամբն Աստուծոյ ես... Պապաքս, որդի Պռոշայ և ամուսին իմ Ըռուզուքան փորեցաք զժամատունս յինքնափոր վիմէ յիշատակ հոգոց մերոց և զաւակ մեզ անմահ ի հալալ արդեանց մերոց. և եղև առաջնորդութեամբ տէր Գրիգորի. թուին ՉԼԷ (1288)»:

Ի վերայ այդր վիմափոր մեծի շինուածոյն ի հարաւոյ են և այլ փոքր մատրունք փորեալք ի նոյն վիմի յաղագս առանձին պատարագելոյ. նոյնօրինակ փորածոյք և յարևելից՝ հանդէպ արևելեան դրան պարսպին ի նոյն մեծի վիմին:

Յարևմուտս այսոցիկ եկեղեցեաց արտաքուստ կից ընդ պարիսպն ի գրկի անդ մեծի սեպացեալ վիմին բաշացելոյն ի վերայ մենաստանին է ոստ ինչ վիմի ի հիման նորա անբաժան ի նմանէ. այս վիմեայ ոստ է բոլորովին փորածու բաժանեալ ի կրկին յարկս՝ ներքին և վերին. և դարձեալ բաժանեալ այնք ի փոքր մատրունս՝ յորս են վէմքարինք, սեղանք սրբազան խորհրդոյն և խորհրդանոցք՝ տեղիք պատարագելոյ կրօնաւորաց յառանձնութեան. մեծութիւն իւրաքանչիւր այսոցիկ մատրանց հազիւ պարունակէ զպատարա-

գիչն և զայլ չորս անձինս. ի վերնայարկի անդ ի ներքուստ յորմն հարաւոյ գտանի թուական՝ այս օրինակ.

«Ի թուիս ՉԵ (1256) նորոգեցաւ սուրբ Աստուածածինս»:

Սենեակք կամ բնակարանք միաբան կրօնաւորելոցն են առ հարաւային և արևելեան պարսպաւն. բնակարանն վանահօր կամ առաջնորդի մենաստանիս է հանդէպ հարաւային դրան հիւսածու միջին տաճարի և է կրկնայարկ. եթէ այսոքիկ և եթէ այլ սենեակք են բոլորովին ի տաշածոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ՝ հաստատ շինուածովք:

Թէպէտ կարի մերձ է գետակն, այլ հոգացեալ են առաջինքն և բերեալ ջուր ի մենաստանն՝ ընդ երկրաւ կաւակերտ խողովակաւ ի հիւսիսոյ կողմանէ: Այս ջուր մտեալ ի պարիսպն և յաւազան ինչ քարեայ հիւսածու և անտի երկբերան անցիւք յայլ աւազան և ապա անցեալ զառաջեաւ առաջնորդարանին և անցեալ ընդ պարիսպն քարեայ խողովակաւ՝ մտանէ ի փոքրիկ պարտէզն բանջարոյ և ոռոգանէ զայն. այլ այս ճանապարհ ջրոյ խափանեալ գոլով այժմ, բերեն զջուրն ի գետոյ անտի ընդ երեսս երկրի՝ որ մտեալ ընդ արևելեան դուռն պարսպին և անկեալ յառաջին ճանապարհն՝ գնայ ելանէ յայն վերոյիշեալ փոքրիկ պարտէզ:

Ի մենաստանի աստ պահիւր երբեմն Գեղարդն սուրբ մխեալն ի կող Կենարարին մերոյ Յիսուսի իբրև ի յատկացեալ ինչ տեղւոջ, զորմէ վկայեն աշխարհագրութիւնն Վարդանայ, պատմութիւնն Թովմայի Մեծոբեցւոյ, յիշատակագրութիւնն ծանրակշիռ արծաթեայ պահարանի նոյն սուրբ Գեղարդայ՝ նուիրեալն ի վերոյիշեալ Պռոշ իշխանէ և այլ զանազան գրուածք, զորս տե՛ս յԱ հատոր (42). այլ թէ յորո՛ւմ ժամանակի եղաւ յայս մենաստան և յորում միջոցի բերաւ անտի ի սուրբ այս Կաթուղիկէ եկեղեցի Վաղարշապատու, չի՛ք ինչ որոշ ծանօթութիւն. բայց ի կոնդակաց կաթուղիկոսաց տեսանի լինել նոյն սրբութեան գործեաց և երբեմն աստ ի Կաթուղիկէ եկեղեցւոջ: Գրիգոր կաթուղիկոս Ժ–րդ յիշատակէ զսուրբ Գեղարդն ի կոնդակի իւրում՝ զոր գրեաց առ միաբանս վանաց Մաղարթայ լերին ի թուականին Հայոց ՉԱ (1452) ի ԺԵ–րդ ամի, միոյ ամսոյ և տասն աւուր կաթուղիկոսութեան իւրոյ. ապաքէն ըստ գրուածոց պատմութեանց և կոնդակաց, է զի երևի պահեալ երբեմն յայս մենաստան և է զի ի հայրապետական Կաթուղիկէ եկեղեցւոջ Վաղարշապատու:

Այս մենաստան աւերեցաւ զառաջինն ի հագարացի զօրացն Նսրայ ոստիկանի և կողպտեցաւ ի զարդուց և ի զգեստուցն և յայլ

ստացուածոց յամի 923. ուր և կրօնաւորքն ի սաստիկ անողորմ հարուածոց զօրացն սակս գիւտի ընչից՝ հետզհետէ ի փոքր միջոցի վախճանեցան: Վերջին աւերութիւնն թուի լինել ի կովկասական լեզկեաց իբր հարիւր ամօք ինչ յառաջ, քանզի Սիմէոն կաթուղիկոս Երևանցի ի գրուածս իւր յիշատակէ թէ ի մենաստանի Ամենափրկ~ չին Հաւուց Թառայ որ մերձ է յայս մենաստան Այրիվանից, նստէին մինչև ի ժամանակս մեր առաջնորդք ի ցեղէն Գրիգորի Մագիստրո~ սի Պահլաւունւոյ. յորմէ որպէս երևի ի չինութեան էր յայնժամ և այս մենաստան:

Այս վերջին աւերութիւն վերանորոգեցաւ յամի 1834. քանզի սրբազնագոյն տէր Յովհաննէս Ը–րդ կաթուղիկոս ետ զայս մե~ նաստան կոնդակաւ տէր Յովհաննու այրի աւագ քահանայի եկե~ ղեցւոյն Նախիջևան քաղաքի Արարատայ, որոյ ընկալեալ յայն աւուրսն զկնկուղ վարդապատական՝ գնաց անդր և սկսաւ նորո~ գել, զոր տեսեալ ժողովրդականաց կողմանցս յաւելան օր յաւուր ի նուէրս տրոց՝ մանաւանդ տփխիսեցիք. և զի ի ժամանակսն աւերու~ թեան անդ իսկ յաճախէին աստ ջերմեռանդ ուխտաւորք բնակիչք Երևանայ և մերձակայ գաւառացն երկիցս ի տարւոջ՝ յաշնան և ի գարնան յանուն սրբոյ Գեղարդայ. ուստի և ի բնակչացս ի մոռա~ ցօնս եղեալ առաջին անուանակոչութեանն՝ **Այրիվանք**, *վերաձայնի* **Գեղարդայ վանք**: *Այս վերանորոգութիւն տևեաց ցամ Տեառն 1840, յորում ի 20 յունիսի ի սաստկութենէ երկրաշարժութեան անկան հիւսիսային և արևմտեան սալքարինքն կաթուղիկէի տաճարին. և նոյն հիւսածու տաճարի արևելեան որմն ի լուսամտէն ցկատար չի~ նուածոյն պատառեցաւ և ինչ ինչ քանդմունք և պատառմունք ի պարիսպն, ի սենեակսն վանահօր և միաբանից, ի տնտեսատունն և յայլս և ի կամարն մեծի դրան պարսպին. վէմ մի մեծ ևս հոսեալ ի դժուարագնաց առապարէն և թափ առեալ ընդ զառիվայրն՝ ոստնու և անկանի ի պարիսպ մենաստանիս և թաղի անդէն յերկիր անշարժ: Կան այժմ աստէն երեք միանձունք ի կրօնաւորաց անտի Սևանայ հանդերձ քանի սպասաւորօք:*

ԱՌԱՋՆՈՐԴՔ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ ՅԻՇԱՏԱԿԵԱԼՔ Ի ԳԻՐՍ

574. Տէր Գրիգոր յիշատակեալ ի վեր անդր յարձանագիրն Պա~ պաքայ որդւոյ Պռոշայ յամի 1288:

Տէր Յովհաննէս յիշատակեալ ի յիշատակարանի Աւետարանի միոյ յամի 1475:

Աստուածատուր եպիսկոպոս, որ ընդ Մելքիսէթ կաթուղիկոսի գնաց յԱսպահան առ շահ Ապասն, իբր յամի 1603:

Դաւիթ եպիսկոպոս ի տոհմէ Պռոշ իշխանի եկաց յառաջնորդութեան յամէ 1635 ց1675:

Ստեփաննոս եպիսկոպոս եղբայր վերնոյն՝ այր գիտնական՝ եկաց յամս 4. զի ի յերկրաշարժութեանն յամի 1679 եղև ընդ փլատակաւ. եկեղեցւոյն անապատին Անանիա առաքելոյ յԵրևան:

Դաւիթ եպիսկոպոս եղբօրորդի վերնոյն անմիջապէս զկնի նորա. սոքա երկոքեան ի միասին յիշատակին ի յիշատակարանի Յայսմաւուրի միոյ եղելոյ ի գրանոցի Աթոռոյ սրբոյ Էջմիածնի:

Պետրոս վարդապետ Ջահկեցի յիշատակեալ ի Ջամբռ անուանեալ մատենի ի թուին տաճկաց 1153. յամի Տեառն 1740:

Ղուկիանոս վարդապետ ևս ի նոյն Ջամբռ անուանեալ մատենի:

Տէր Յովհան Նախիջևանցի յիշատակեալ ի վեր անդր:

Մարտիրոս աբեղայ Վաղարշապատցի մին ի կրօնաւորաց անտի յերից որք ի վերոյ յիշատակեցան:

ՄԵՆԱՍՏԱՆ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ ՀԱՒՈՒՅ ԹԱՌԱՅ

575. Եկեղեցի յանուն Ամենափրկիչ անուանեալ պատկերի խաչելութեան Տեառն մերոյ ի Հաւուց Թառ[1] *անուանեալ վայրի՝ որ յարևելս Հիւսիսոյ գիւղաքաղաքին Գառնոյ կամ ընդ մէջ մենաստանին Այրիվանաց և Գառնւոյ՝ յարևելակողմն գետակին ի բարձրավանդակ վայելուչ տեղւոջ ի լանջի անդ լերինն. շինեալ ի Գրիգոր Մա-*

[1] Հաւուց Թառ և Հայոց Թառ. զերկոսին ևս առնուն ի գրչութիւնս իւրեանց հեղինակք, բայց հաւանելի դատի Հաւուց Թառն քան միւսն, քանզի յայդ անուն յիշատակի անդէն գիւղ ինչ. և թէպէտ յարձանագրութեան Գրիգոր Մագիստրոսի գրի՝ Հայոց Թառ, այլ գուցէ օրինակօղն այնր Յոհաննէս անուն անվարժ գոլով յայսպիսիս՝ զսովորականն լսելեաց ի գործ էառ: Մխիթար Անեցի կամ Այրիվանեցի ի միջոցս ՆԾ–ՆԿ թուոցն Հայոց դնէ զշինութիւն եկեղեցւոյս ի Գէորգ իշխանէ. «Շինի Հաւոյ Թառ ի Գէորգ իշխանէն Քեղոյ»: Եւ այլ պատմիչք Հայոց կոչեն զտեղի եկեղեցւոյս պարզապէս՝ Հաւուց Թառ. որպէս Յայսմաւուրքն ի 19 յունիսի. Վարդան աշխարհագիր՝ թէև շփոթէ զերկոսին եկեղեցիսն միևնոյն անուանակոչութեամբ և դնէ ի միում տեղւոջ, յոր միտ ընկալնու և Ստորագրութիւնն հին Հայաստանի. բայց են երկոքին ևս որոշ տեղիք ի միմեանց. մին ի Կոգովիտ գաւառի ի Դարիւնս և միւսն ի Գառնի (տե՛ս 48, 49). իսկ ամրոց Քեղոյ կամ Քեղայոյ՝ ըստ Յովհաննու կաթուղիկոսի ի Պատմութեանն զնոսն Գէորգ իշխանէն Մարզպետունւոյ. և ըստ Պատմութեանն Օրբէլեանց՝ յերես 29, ուր զերծեալ անկաւ՝ ասէ Աթաբակն Իւանէ տասն արամբք:

գիստրոսէ Վասակեան Պահլաւունւոյ ի թուականին Հայոց ՆԿԲ, այն է՝ յամի 1013: Քանզի նա ինքն Գրիգոր Մագիստրոս ի ձեռս բերեալ զայն պատկեր (զոր եբեր ի Յունաստանէ որդին Աշոտոյ իշխանի Բիւրատեան ի Դարիւնս (Պայազիտ) ի Կոգովիտ գաւառ առ հայր իւր (տե՛ս 48), նոր ի նորոյ ետ կառուցանել տաճար փառացի աստէն ի կոփածոյ քարանց և հանգոյց ի նմա հռչակաւոր պատկեր. ուստի և անուն եկեղեցւոյն վերակոչեցաւ յանուն նոյն փրկչական պատկերին՝ Ամենափրկիչ: Այլ թէ առաջին եկեղեցին մենաստանիս զինչ անուանակոչութիւն ունէր՝ չէ՛ յայտ:

Զի՛ք ինչ նշմարանք այժմ ի շինութեանց անտի եկեղեցւոյն որ ի Գրիգոր Մագիստրոսէ, քանզի յերկրաշարժութենէն դիպելոյ յամի 1679, մեծապէս խախտեալ գոլով՝ և մանաւանդ ի պատճառս կրկին շինութեան եկեղեցւոյն ի յետնոց՝ զորմէ զկնի, իսպառ անհետացեալ: Գտանելով մեր երբեմն անդ ի Կոստանդինուպոլիս յամէն 1820 ց1825, ծերունի տիրացու Առաքեալ ոմն Ճապի մականուանեալ ետ ինձ զարձանագրութիւն սոյն եկեղեցւոյ ասելով. «Խի՛ղճ է եղեալ այդ ինձ՝ յորմէ հետէ հանեալ եմ զդա՝ ի գրանոցէ Աթոռոյ Էջմիածնի, զոր ահա վերադարձուցանեմ առ ձեզ տանել դարձեալ անդր՝ ուր թերևս չգտանիցի օրինակն»: Իսկ մեր վերադարձեալ յԱթոռս՝ տեսաք զօրինակն այնր արձանագրութեան ի գրուածս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ, բայց ո՛չ զայն գրուած յայտարար թէ ո՛վ զայն արձանագրութիւն ի վիր էառ ի գրուածոց անտի եկեղեցւոյն և ե՛րբ, որ գրեալ ի ներքոյ արձանագրութեանն՝ ունէր օրինակ զայս. «Վերոյգրեալ արձանս գրեալ կայր ի վերայ սուրբ Ամենափրկչին արքայաշէն դարպասին դուրս կոյս հարաւակողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին՝ որ ի շարժմանէն խախտեալ կայր: ՌՃՀ (1721) թուին Աստուածատուր կաթուղիկոսն կամեցաւ վերստին նորոգել ի քակելն. ես մեղաւոր ծառայ սուրբ տանս քուրդ Յօհաննէս իմ ձեռամբս վեր առի զարձանս զայս և գրեցի աստ»:

Իսկ օրինակն արձանագրութեան եկեղեցւոյն էր ըստ այսմ.

«Թուին ՆԿԲ (1013), ի թագաւորութեանն Գագկայ և ի հայրապետութեան տեառն Սարգսի ես Գրիգոր Մագիստրոս, վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողաց իմոց. նաև ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն և ամենայն կազմութեամբն որ ի սմա. քառադէմբ, չորս անկեամբ՝ յաջամբ և ահեկամբ, ի դիմաց և ի թիկանց. և տուաք յիշատակ անջնջելի արձանագրով և աշխարհակալ թագաւորի թղթովն և կայ-

սերական կնքովն, հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակաւն և ի նաւակատի տաճարիս, զոր շինեցաք, ընծայեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս, որ է Հայոց Թառ, հանգստարան և օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի, որ ի փայտին, խնդրելին Յոհաննու սուրբ աւետարանչին հրամանաւ մօր Տեառն մերոյ սուրբ Աստուածածնին: Եւ նորոգեալ վերստին հաստատեցաք զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն. աստ եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ: Գրիգոր Վահրամ պատանին»:

Պարիսպ մենաստանիս ընդարձակ հիւսածու ի քարանց. և սենեակք և կացարանք միաբանիցն և այլոց հարկաւորութեանց ի մէջ անդ պարսպին, հայեցուած բովանդակ մենաստանին կարի վայելուչ և զուարճալի ընդ յարևմուտս ընդ փոքրիկ սահմանս դաշտավայրին Գառնւոյ և կիսով աւելի ընդ լայնարձակ դաշտն Արարատայ ցաւերակն Արմաւիրայ և անդր ցԲարդող լեառն՝ որ յարևմտեան եզեր դաշտին:

Ի յարևելակողմն անդ ի մէջ պարսպին է քայքայեալ կարի հնագոյն շինուած ինչ տաճարաձև, որ թերևս կարծի լինել եկեղեցին որ ի Գէորգ իշխանէն Քեղոյ կամ Քեղայոյ. իսկ յարևելս նորա ի մէջ պարսպին լեալ է տեղին եկեղեցւոյ, որ ի Գրիգոր Մագիստրոսէ, զոր վասն խախտմանն ի շարժէն և յաւերանացն, յետինք յառաջնորդաց նորա ձեռնարկեալ ի կառուցանել յայնմ իսկ տեղւոջ և զշինուածն հասուցեալ ցսալաթոռսն՝ այն է ցհիմունս կամարացն, թողեալ են այնպէս անկատար սակս վերջին ասպատակութեան կովկասեան ելուզակացն. և յօրէ անտի ցայժմ կայ այնպէս աւերակ այս մենաստան և չերևի ևս նշան ինչ անդրէն նորոգութեան:

Յարևմտակողմն հանդէպ մենաստանիս ի վայելուչ դիրս է հանգստարան, այսինքն՝ գերեզմանոց միաբան կրօնաւորելոցն ի նմին. և անդէն ի միջին տեղւոջ տաճար փոքրիկ տեղի պատարագելոյ, այլ մեծ մասամբ քայքայեալ. ունէր թէպէտ գրուած ինչ, բայց բեկեալ գոլով յայլագգեաց և մաշեալ յանձրևաց՝ չեղև առնուլ ի գիր: Գտանի քան զայս՝ փոքրիկ մատուռն մի յարևելակողմն մենաստանիս՝ թերևս ի վերայ շիրմի ուրումն իշխանաւոր կամ կրօնաւոր երևելի անձին, այլ ըստ այնմ չեղև կարելի առնուլ ի գիր զծանօթութիւն ինչ յաղագս եղծուածոցն յարձանագիր նորին:

Ջուր մենաստանիս եկեալ է յառաջագոյն ի բարձանց անտի յարևելից տեղւոյս՝ թերևս ի կողմանց Աղջոց վանաց, բայց ճանապարհ նորա քայքայեալ և աւերակ գոլով՝ չի՛ք հնար գտանել անդ ջուր ըմպելոյ:

ԱՌԱՋՆՈՐԴՔ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ ՅԻՇԱՏԱԿԵԱԼՔ Ի ԳԻՐՍ

576. Յաղագս առաջնորդաց այսր մենաստանի լինելոյ ի տոհմէ Գրիգոր Մագիստրոսի այսպէս գրէ Սիմէոն կաթուղիկոս Երևանցի ի Ջամբռ անուանեալ մատենին (յերես 1047). «Ապա վերոյիշեալ Գրի-գոր Մագիստրոս (Պալհաւիկ) մինչ վերանորոգեաց զվանքս զայս և հարստացոյց զսա հողովք և ջրովք և զորդին իւր ետ կացուցանել ի սմա առաջնորդ որպէս ասացաք. վասն որոյ և յայնմ հետէ որ-պէս թէ հայրենի մուլք արարեալ զսա որդիք և թոռունք և յետա-գայ ազգատոհմք սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զառաջնորդու-թիւն սորին, ո՛չ միայն ի յիշխանութեանն Հայոց, այլև ի ժամանակս թագաւորացն Պարսից մինչև գրէթէ ի ժամանակս մեր. որքան չէն էր վանքս այս...: Ի յազգէ վերոյգրեալ Գրիգոր Մագիստրոսին մի զկնի միոյ յաջորդելով, նստի առաջնորդ ի վանքս յայս ի նոյն գեղ-ջէն Հայոց Թառու Զաքարիա վարդապետն...: Զի սոքա ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազդ և հարուստք. յորոց թէ-պէտ ոմանք վանականք լինէին՝ ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք...: Ապա յետ սոյն Զաքարիա վարդապետիս ի փոփոխիլ, ի նուազիլ կարողութեանց և իշխանութեանց սոցա և ի բաժանիլ ազգականացն յիրերաց, սկսաւ խտրութիւն անկանիլ ի մէջ վանականացն և աշխարհականացն վասն մլքից և այլոց ընչից» և այլն:

Վահրամ՝ որ և Գրիգոր Վկայասէր, առաջին առաջնորդ մենաս-տանիս կարգեալ ի հօրէն իւրմէ ի Գրիգոր Մագիստրոսէ ի նորոգու-թեան անդ՝ այլ ի սակաւ միջոցի:

Եղիա. յամի 1205, որ գտաւ ի ժողովն Լօռւոյ յաւուրս Զաքա-րիա Սպասալարի և ի կարգի եղ զերաժշտութիւն երգոց ի մենաս-տանի աստ ըստ Կիրակոսի Գանձակեցւոյ:

Մխիթար եպիսկոպոս յամի 1294:

Զաքարիա եպիսկոպոս յամի 1441, որ գտաւ ի ժողովի ընտրու-թեան Կիրակոսի Վիրապեցւոյ ի կաթուղիկոսութիւն:

Մանուէլ եպիսկոպոս յամի 1602, յաւուրս երկուց կաթուղիկո-սացն Դաւթի և Մելքիսեթի. որ և սպանաւ յայրի անդ ի քարագնաց զօրացն Ամիրգիւնայ նախարարի:

Համազասպ եպիսկոպոս յամի 1619, յաւուրս նոյն Մելքիսէթ կաթուղիկոսի, որ և էր առաջնորդ Երևանայ:

Մկրտիչ եպիսկոպոս յամի 1627, յաւուրս Սահակ կաթուղիկոսի:

Տէր Յովհաննէս յամի 1658, յիշատակեալ ի յիշատակարանի Աւետարանի միոյ:

Մատթէոս վարդապետ յամի 1658, ի գրուածս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ:

Ստեփաննոս յամի 1696, որ գրի ի յիշատակարանի Տօնացոյց գրոց գրեալ ի սոյն մենաստանի:

Սիմէոն Ջուղայեցի. յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսի Հաղբակեցւոյ. յԱռաքել պատմիչ, յերես 396, 397:

Մարկոս վարդապետ. յաւուրս Յակոբայ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ. առ Զաքարիա Սարկաւագի՝ հատոր Ա, գլուխ ԼԱ:

Մաղաքիա վարդապետ յամի 1726. ի գրուածս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ:

Յովհաննէս վարդապետ յամի 1745. անդ:

Ազարիա վարդապետ ի նոյն ամի. ևս անդ:

Զաքարիա վարդապետ ևս անդ ի գրուածս Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ:

ՄԵՆԱՍՏԱՆ ԿԱՄ ՎԱՆՔ ՔԱՐԱՏԱԿԻ

577. Այս մենաստան յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի. կոչի և Կարմիր վանք սակս կարմրագոյն քարանց շինուածոցն, ևս և Աստապատու վանք՝ վասն մերձ գոլոյն այնմ գիւղաքաղաքի, զի մենաստանն եկեղեցեաւն հանդերձ կառուցեալ է գրեա թէ ի վերայ միաստանի վիմի ի հիւսիսային ստորոտս քարուտ ինչ լերին, յարևելեան եզեր Երասխայ, ի սպառուածս դաշտին Նախիջևանայ և Աստապատու, որք անկանին ի հիւսիսակողմն մենաստանիս:

Տեղին մենաստանիս է փոքր ինչ բարձր քան զդրութիւն դաշտին. եկեղեցին կառուցեալ է ի միջին բարձր տեղւոջն ի մէջ պարսպին. շէնք հիմանցն են ի կոփածու քարանց և այլ բովանդակ շինուածքն ի թրծեալ աղիւսոյ՝ միջակ մեծութեամբ. ունի զերկուս սիւնս, զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս և զմի դուռն ընդ արևմուտս, որոյ վերայ է և գաւիթ քարաշէն ի վերայ երկուց սեանց և ունի զանգակատուն փոքրիկ. իսկ կաթուղիկէ տաճարին ի միջավայր անդ տանեացն:

Այս տաճար չունի որոշ արձանագիր ինչ շինութեան կամ նորոգութեան, այլ դնին թուականք ևեթ յերկուս խաչվէմս, որք ամրացեալ կան յերկոսին կողմանս դրան տաճարին՝ այսպէս. «Ի թվ. ՆԻԶ

(977)». իսկ հարաւայինն՝ «Ի թվ. ՉԻԶ (1277)». որք ո՛չ յայտնեն թէ արդեօք շինութեանց կամ նորոգութեանց իցեն թուականք, թէ այնպէս այլուստ բերեալ յաւերակաց ինչ ի ժամանակի կառուցման եկեղեցւոյս ամրացան աստէն:

Գտանին ի մէջ տաճարիս և գաւթի սորին դամբարանք ոմանց վարդապետաց՝ թերևս առաջնորդաց մենաստանիս, պատուեալք մարմարոնեայ վիմօք, որոց արձանագիրք ընդ աղօտ իմն ցուցանեն զնորոգութենէ մենաստանիս:

Տապանն՝ որ ի մէջ տաճարիս առ դրան հիւսիսային աւանդատան, ունի մակագրութիւն ըստ այսմ.

«Այս է տապան դամբարանի,
Տեառն Յակոբայ վարդապետի,
Այսր սրբունյս մրյ վհի.
Էին ազինք արք երեքի.

Աստուածատուր և Պալոն և Թե
դոն որդի սոցին, ծախիւք վէմս
կազմի և կափարիչ էնէլ շիրմի:
Թվ. ՌՃԻԲ (1673)»:

«Պալոնի հայր Հայրապետ:
Թեդոնի որդի Նուրիջան:
Աստուածատուրի որդի Ակաք»:

Ի մէջ գաւթի տաճարիս մերձ յանկիւնն արևմտեան հարաւոյ գտանի տապանավէմ մարմարոնեայ, որ ունի մակագրութիւն այսպիսի.

«Յայսմ տապանի կայ պահեստի,
Յովսէփ քաջ եպիսկոպոսն արհի,
Որ է տեղեաւ Աստապատցի,
Նորոգող և բազմաշխատ այսմ ուխտի,
Աշակերտն Յակոբայ մեծի,
Որ կայ ի դուռն խորանի,
Առ Տէր հանգեաւ ՌՃԾԵ (1706)–ի,
Յաւուր սրբոյ մեծի Զատկի»:

Տաշածու քարինք արևելեան հիման սրբոյ եկեղեցւոյս արտաքուստ քայքայեալ անկեալ էին՝ զոր ետ նորոգ ամրացուցանել առաջնորդն մենաստանիս Նիկողայոս վարդապետ յամի 1831:

Շրջապատ պարիսպ մենաստանիս կառուցեալ է ի կարմրագոյն խարտեալ քարանց բաւականաչափ բարձրութեամբ՝ մանաւանդ հիւսիսայինն՝ սակս առաւել ցածուն դրութեան տեղւոյն. ունի և բրգունս նմանապէս ի տաշածու քարանց. սենեակքն առ արևմտեան և հիւսիսային պարսպօքն են ըստ առաւել մասին քարաշէն և կամարակապ՝ կրկնայարկ և եռայարկ. իսկ միւս շէնք կացարանացն փայտածածք, յորոց բազումք քայքայեալ, աւերեալ կան բացի սակաւուց հարկաւոր եղելոց:

Այս պարիսպ գոլով երկար քառանկիւնի յարևելից յարևմուտս՝ բաժանեալ է յերկուս. ի բաժնի անդ արևմտեան է տաճարն և կացարանք միաբանից քարաշէնք հանդերձ պարսպօքն. իսկ յարևելեան բաժնի տեղիքն անասնոց և վերաբերելոցն այնց. միակ պարիսպն, որ բաժանէ զմենաստանն յերկուս, գոլով ի հողոյ՝ քայքայեալ է ինքնին. իսկ քարաշէն կամար դրան նորա կայ յամբողջութեան. և ի միջոցի անդ կամարին և վերին բարաւորի դրանն եղեալ կայ խաչվէմ, յորոյ երկոսին կողմանս և անդր ի ներքոյ կամարին, ի կիսաբոլորակին գրի արձանագիր նորոգութեան պարսպացն յայս ձև օրինակի.

[«Ի ժամանակս Պարսից արքային շահ Ապասի ես՝ Պօղոս վարդապետ[1], Թումայ եպիսկոպոս, առաջնորդ ե...

[1] Այս Պօղոս վարդապետ յիշատակեալ յայսմիկ արձանագրութեան է այն, զորմէ գրեն Առաքել վարդապետ Դավրիժեցի յերես 267 և Միքայէլ Չամչեան յԳ հատոր, յերես 566:

Եւ մեք՝ Աստապատեցի քահանայք և ժողովուրդք նորոգեցինք զպարիսպս զայս և ընկերօքս իմ չինեցինք զպարիսպս ի հիմանց կամաւն ամենակալին Յիսուսի... ճող քարերոյս զՅովանէս արք...»][1]*:*

Արտաքին մեծ դուռն (դարվազայ) արևելեան պարսպի մենաստանիս մերձ յանկիւնն արևելեան հիւսիսոյ կայ յամբողջութեան. և է ընդարձակ կամարագործ ի տաշածոյ քարանց. և անդ ի միջոցս բարաւորի դրանն և կամարին եղեալ կայ խաչվէմ և ի պատուանդանի խաչին է գրուած այսպիսի. «Սուրբ խաչս բարեխօս է և յիշատակ է պարսպիս վերակացու Յովանէս վարդապետին և ծնողացն Մալխասին, Ղզեթարին և քվերն Շահփարվարին. թվին ՌՃԾԶ (1707)–ին»:

Զայս արտաքին արևելեան պարիսպ և զմասն ինչ ի հարաւային պարսպէ մինչև ցսոյն վերոյիշեալ մեծ դուռնն կամարակապ ետ քակել ի մերում ժամանակի արքայորդին Պարսից Ապպազի Միրզայ և տանել հիմնովին զքարինսն ի պէտս չինութեանց պարկէն փոսին (խանդակ) ամրոցին յիւրմէ կառուցելոյ ի բուն տեղւոջն գիւղաքաղաքին Աստապատու, որպէս և զեկեղեցի մենաստանին կուսան կանանց՝ որ ընդ մէջ այսր մենաստանի և Աստապատու:

Այս մենաստան այժմ կայ ի չինութեան և վանքական կառավարութիւնն, որ ի սմա, գտանի ընդ տեսչութեամբ հոգևոր կառավարութեանն Նախիջևանայ՝ ըստ նորոգ կարգադրութեանն. ունի ինչ ինչ կալուածս արդեանց:

Ի գետնաշարժութենէ դիպելոյ յամի 1840 ճեղքեցաւ ի տեղիս տեղիս զանգակատունն եկեղեցւոյ մենաստանիս՝ որ ի վերայ գաւթին. և ինչ ինչ խարխալմունք ի սենեակսն և ի պարիսպն քանդեցան իսպառ ձիթիհանք և ջրաղացն:

ԱՍՏԱՊԱՏ ԵՒ ՄԵԾԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻ ՆՈՐԻՆ

578. Այս հռչակաւոր գիւղաքաղաք Աստապատ անուանեալ է ի հիւսիսոյ վերոյիշատակեալ մենաստանին Քարատակի հեռաւորութեամբ իբրև կէս ժամու առ Երասխ գետով յարևելից նորա: Յառաջագոյն բազմամարդ էր այս տեղի բնակեալ ի Հայոց, այլ զկնի զանազան աւերութեանց և ասպատակութեանց Պարսից՝ դաղթեալ բնակչացն յայլ և այլ սահմանս, եղև իբրև գեօղ մի փոքրիկ. և ապա ի մերում ժամանակի արքայորդին Պարսից Ապպազի Միրզայ տե-

[1] [Ուղիղ փակագծերի վերծանությունը մերն է]:

սեալ գյարմարութիւն տեղւոյն և մերձ գոլոյն յԵրասխ գետ, ետ հանել զբնակիչսն անտի և բնակեցոյց յարևելից նորա հեռագոյն միջոցաւ և զտեղին զայն ըստ յարմար դրութեանցն ետ ձևացուցանել ամրոց պարսպապատ՝ ածեալ շուրջանակի և խրամ խորագոյն. և եդ ի նմա զզօրս և զպատրաստութիւնս զինուց. ետ շինել ի նմա և զհամբարանոցս՝ ուր ժողովէին ամի ամի զեկամուտ արդիւնս ի սահմանացն Նախիջևանայ և այլոց:

Զայս ամրոց զառաջինն անդ գրաւեցին զօրք Ռուսաց յամի 1827. ի մէջ ամրոցիս այսմիկ գտանի մեծակառոյց եկեղեցի շինեալ ի նախնի բնակչաց Աստապատու յեզեր անդ Երասխայ. քանզի ընդ մէջ Երասխայ և եկեղեցւոյս է արևմտեան պարիսպ ամրոցիս և խրամ նորա. շէնք սորին բոլորովին աղիւսակերտ՝ որմունքն, տանիքն և կաթուղիկէն. և է կրկին՝ ներսին տաճար և ընդարձակ գաւիթ նորա:

Այս տաճար կառուցեալ է յանուն սրբոյն մեծին Վարդանայ Մամիկոնեան զօրավարի. և աւանդութիւն է բնակչացն վասն ստուգաբանութեան անուանս՝ Աստապատ. քանզի ասեն թէ զկնի նահատակութեանցն մեծին Վարդանայ և ընկերաց նորուն, բերեն այսր զմարմինս նոցին. և այն ինչ պատանեն զայնս առ ի ամփոփել անդէն, երևելիք ի բնակչացն Մակուայ գան և առնուն զայնս և տանեն ամփոփեն անդ ի Մակու. և յօրէ անտի մնաց այս անուանակոչութիւն Աստապատ. իբր աստ պատեալ՝ կամ աստ տեղի պատանելոյ մարմնոց սրբոց Վարդանանց. նորին աղագաւ և անուանադրութիւն եկեղեցւոյս Սուրբ Վարդան:

Այս եկեղեցի բաւականաչափ մեծութեամբ, բարձրակամար կառուցեալ ի վերայ չորից սեանց՝ որպէս և ընդարձակ գաւիթ նորին ըստ երկայնութեանն. ունի զմի սեղան յընդարձակ կամարայարկի և զերկուս աւանդատունս և զկաթուղիկէ ի միջավայր տանեաց ներսին տաճարի:

Արձանագիր ի վերայ արևմտեան դրան ներսին տաճարի՝ յայս օրինակ.

«Ի թուականիս Հայոց ՌՃԴ (1655) կանգնեցաւ սուրբ դուռնս այս հրաշազան յօրինմամբ որ անուն Սուրբ Վարդան զօրավարին ի վայելչութիւն աստուածապահ գիւղաքաղաքիս Աստապատու՝ զոր ետ կազմել խօջայ Սաֆարն ի հալալ ընչից ի փրկութիւն հոգւ իւրոյ և ծնողաց իւրոց Միրիջանին և Նարինին և կողակցին Հոռոմին (Հռիփսիմէին) և որդւոցն պարոն Յովանիսին և Մարգարին և

քուերն խանումին և...»: Վերջին երկտող արձանագրութիւնն խորտակեալ էր ի վնասող ձեռաց:

Արձանագիր ի ճակատ բեմին սեղանոյ սրբոյ ի միջին տեղւոջ ի պատուանդանի խաչվիմին.

«Սուրբ խաչս բարեխօս է Ագուլենց[1] Պետրոսին և ծնողացն Կիրակոսին, Խաթունջանին և կողակցոյն Նունումին և դստերցն Գհֆրին[2], Ղզեթարին, Հրէքնիազին: Թվին Ռձ և է (1658)»:

Արձանագիր ի ճակատ միաստանի սեաւ մարմարոնեայ վիմի աւազանին սրբոյ.

«Յիշատակ է սուրբ աւազանս Պարոնենց Աստուածատուրին և Վէլումենց Կարապետին՝ որդի Աւետիքին: Թվին ՌՃԼ (1681)»:

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս ի գաւթի անդ յարևելեան ճակատի սեանն արևելեան հարաւոյ՝ յայս օրինակ.

«Աշակերտ տեառն Յովսէփայ մեծի բաբունապետի. սուրբ խաչս բարեխօս լիցի ամենայն եկեղեցւոյս վերակացու... Մարտիրոսի վարդապետի, որ բազում երկամբք ի յաւարտ հասոյց. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք իւրն և ծնողացն տէր Ներսէսին և Մարթային. ՌՃԾԲ (1703) թվին»:

Այս գիւղաքաղաք Աստապատ գտանի ի սահմանին Նախիջևան քաղաքի և մերձ նմին յարևմտից հարաւոյ նորա՝ հեռաւորութեամբ աւելի քան զժամ մի և ո՛չ ի Գողթն. որպէս դնէ Միքայէլ Չամչեան ի ցանկն վերջին հատորոյ Պատմութեանն ի բառն Աստապատ:

ՄԵՆԱՍՏԱՆ ՄԱՂԱՐԹԱՅ ԼԵՐԻՆ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻ

579. Մենաստան մեծահռչակ ի պարգևագիրս Աշոտոյ թագաւորի և ի կոնդակս կաթուղիկոսաց՝ կառուցեալ անդ ի խորաձորս Երասխայ ի հարաւակողման նորին առ հիւսիսային ծոցաւոր ստորոտով մեծի լերին Մաղարթայ, մերձ ի գիւղն Շամբի (Դարաշամբ) յարևելից նորա. և անկանի ընդ մէջ աւերակաց Խրամ քաղաքի և հին Ջուղայու հաւասարաչափ հեռաւորութեամբ յերկոցունցն ևս իբրև միով ժամաւ՝ ունելով զԽրամ յարևմտից և զՋուղայ յարևելից ի հիւսիսակողման անդ Երասխայ:

---

1 [Տպագրում **ագլնց**՝ պատվով]:

2 [Պատվով]:

Սկզբնաւորութիւն մենաստանիս եղեալ է յերկուց սրբոց առաքելոցն՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի ըստ վկայութեան պարգևագրի թագաւորին Աշոտոյ և կաթուղիկոսին Խաչկայ պարունակեալ ի մի կոնդակ և գրեալ ի թուականի Հայոց ՆԻԵ, այն է՝ յամի 976, յաւուրս առաջնորդութեան մենաստանիս արքեպիսկոպոսին Բաբգենի, որոյ օրինակն պահեալ ի մենաստանիս ընդ այլ հնութեանց՝ է ըստ այսմ.

580. «Անուամբ անեղին Աստուծոյ Հօր և ի փառս ծնիցելոյն ի նմանէ անեղապէս Որդւոյն Միածնի և ի փառս բղխեցելոյն յէութենէ Հոգւոյն ճշմարտի: Այս մեր դիր հոգևորական բարձր հրամանի հաստատութիւն է և օրհնութիւն և ի հոգևոր հովուութեան տեառն Խաչկայ Հայոց կաթուղիկոսի և ըստ մեծի մերոյ տէրութեան արևելից և հարաֆայնոյ Հայոց թագաւորի Աշոտ յորջորջեալ անուամբ բարեպաշտ և մեծ շահանշահի: Ես՝ Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց եկեալ ի սուրբ ուխտս աստուածաբնակ Նախավկայիս հանդերձ զօրօք թագաւորականօքս և իշխանօք տեառն Խաչկայ կաթուղիկոսի՝ երկրպագեալ սուրբ տաճարիս հին Մաղարդայ վանից: Երանելի կրօնաւորս աստուածամեծար մեծանուն տէր Բաբգէն Հայկազն նախաշաւիղ և ի Քրիստոս ծնող հոգևոր գառանց մանկանց եկեղեցւոյ... եղև ձեռնադրեալ արքեպիսկոպոսապետ: ՆԻԵ [976] տումարիս Արամեան մնացուածիս եղև կատարումն շինութեան և նորոգման աստուածաբնակ Սուրբ Նախավկայիս՝ ջանիւք և աշխատութեամբ տեառն Բաբգենի, որ էր սա շինեալ սուրբ առաքելոցն Բարդուղիմէոսի և Թադէոսի: Եւ ի սուրբ տաճարիս կայ հանգուցեալ սևեռեալ բևեռն բազկացն Յիսուսի և յարքայական թագից փուշ պսակէն ճուղ մի. և Քրիստոսի ձեռաց Գ [3] հատ մանանայն[1] և բազմահաւաք սրբութիւնքս, որք աստ կան հաւաքեալ: Եւ ետու հնձէքս և հայրենիքս և դաստակերտ և ընծայան հին Մաղարդայ վանից Սուրբ Ստեփաննոս Նախավկային, Տիրամայր Աստուածածնին և Սուրբ Գէորգ Զօրավարին անդառնալի և բարձր հրամանաւ մերով՝ թէմ և վիճակ, որ և սահմանեալ էր ի նախնեաց մերոց և ի սուրբ հայրապետացն մերոց տեառն Ներսիսէ թոռին մերոյ սուրբ Լուսաւորչին. նախ և առաջին հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախչուան, Կոկ (Կոգ) գաւառն բոլո-

[1] Վասն այսր Գ հատ մանանային գրի և ի վախճանի պատմութեան Միխայէլի Ասորւոյ՝ ի սկիզբն շարակարգութեան հովուաց Հայաստանի՝ ըստ այսմ. «Եւ ասեն շնորհաց նշան հին և նոր բերեալ ի Հայս՝ Գ [3] հատ մանանայ ի Բարդուղիմէոսէ և եդեալ տփով ի հիմն եկեղեցւոյն, որ հանդէպ հայի Գողթան գաւառին առ Երասխ գետով՝ ի տեղւոջն, զոր Մաղարթն կոչեն»:

բովին, Խոյ՝ որ է Զարևանդ գաւառն և ամենայն վիճակ իւր բոլոր-բովին մինչ ի Նուան, ի Ղարադարան՝ որ բաժանի ի Սալամաստայ. ի Երասխայ մինչ ի Մարանդայ գրիւէն, Մարանդ իւր վիճակովն, Շիրինթալն իւր վիճակովն գնայ մինչ ի դղեակն Խոսրովու, ի յԱգատ և ի Գիրան, ի Ջուղա և իւր վանքն, յԱստապատ և իւր վանքն, ի Շամբ և իւր վանքն, ի Ջաղաց տեղն և իւր վանքն, յԱրարք և իւր վանքն... տուաք ընծայ և հայրենիք անդառնալի և բարձր հրամա-նաւ մինչև ի գալուստն Քրիստոսի և ահեղ դատաստանն. և մի՛ ոք իշխեսցէ ի մեծաց և ի փոքունց արգել առնուլ...: Եւ աւարտումն եղև բանիս և գրիս ձեռամբ մեծանուն տեառն Խաչկայ կաթուղիկո-սի Ամենայն Հայոց և տէր Բաբգենի և մեծ իշխանացն՝ Ապլղարիպի իշխանին... և Հայոց, Վասակ իշխանին Սիւնեաց, Գրիգոր իշխա-նին Ըռշտունեաց, Գէորգ իշխանին Գնունեաց, Շապուհ իշխանին Արծրունեաց: Նամակիս և սիկիլիս կատարիչքն օրհնին յԱստուծոյ և յամենայն սրբոց, խափանիչքն դատին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն: Տէր Խաչիկ կաթուղիկոս Ամենայն Հայոց և պատրիարգ արևելեան տանս՝ առաքեցաք գրա-ւորական օրհնութեան հրամանաւս զմեծանուն երջանիկ տէր Բաբ-գէն արքեպիսկոպոսն գալ առ ձեզ և առաքելաբար շրջիլ ի միջի ձերում՝ վարդապետել, խրատել և ուսուցանել յօրէնս և ի պատուի-րանս Տեառն... լինել այցելու սրբոց այրեաց և կարօտելոց, կարեկից սիրովն Քրիստոսի. կոչեսցէ զարժանաւորս և զիմաստունսն ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան և քահա-նայութեան. կալցի և հրամանաւ մերով ի վերայ ձեր իշխանութիւն առաքելական կապել և արձակել յերկինս և յերկրի:... Այլև կանո-նեալ հասք և զիրաւունս զոր և պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին Աթոռոյ. Տեառնականս, զԽաչօրհնեան և զՍրբբանուէրս, զիրաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց բազմականսն, զյանկարծամահ և զառակամահ. և զամենայն իրաւունս կենաց և մահու լիով անթե-րի տուք ի ձեռս դորա զուարթ և առատ սրտիւ...: Շնորհեցաք ի ձեռս դորա ձեզ պարգևս հոգևորական զիւղն օծութեան սրբալոյս և զաստուծագործակ սուրբ մեռունն ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւ յորդէգրութիւն Հօրն երկնաւորի և ի ժառանգակցու-թիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ. զնոյն ի ճակատն նշան հաստատութեան, յօծումն քահանայութեան, ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Խաչիկ ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, շնորհօք և ողորմութեամբ նորին կաթուղիկոս Ամենայն Հայոց:

Գրեցաւ ձեռամբ Ագաթանգեղ դպրի ՆԻԵ (976) տումարի Արամեան մնացուածիս»:

Գտանի ի մենաստանի աստ խաչ մի ապակեայ տասնևութն հատուածովք ագուցելովք յերկաթ՝ տասն հատուած անկիւնաւոր ապակիքն յերկայնութեան և ութն նոյնօրինակ անկիւնաւոր յերկոսին թևսն. բարձրութիւն խաչին իբրև կանգուն մի. իսկ պատուանդան կամ բուն խաչին՝ որ ագուցանի ի ձող, է իբր թզաչափ մի արծաթի, յորոյ վերայ գոյ յիշատակութիւն յանուն Յովհաննէս Թագաւորի Հայոց և որդւոյ նորա Աշոտոյ, որ ունի օրինակ զայս.

«Յիշատակ է սուրբ խաչս Յովանէս Թագաւորին Հայոց եւ կողակից Շուշան տիկին[1] եւ որդի Աշոտ Թագաւորս բազում զօրօք եկի ի սուրբ ուխտս. ետու Շամբա ջաղացներն, Երասխի նաւն և Աստապատու հողն սուրբ Նախավկային՝ յիշատակ մեզ և ծնողաց: Թվին ՆԺԵ (966)»:

Ի ստորին ծայրի պատուանդանի խաչիս ի բոլորակ շրջանի նորին՝ յոր ագուցանի ձող, է ամրացեալ փոքրիկ օղ իմն արծաթի՝ ընդ որ անցուցանի և կապի ժապաւէն յամրութիւն ամբարձման խաչին ի գլուխ ձողոյն. և ահա յայսմանէ ըստ իմիք գուշակի լինել նոյն ապակեայ խաչին՝ խաչ դրօշակի թագաւորին Հայոց Յովհաննու:

Որպէս ունի այս մենաստան զայս խաչ հնագոյն պարգև, նոյնպէս ունի և յօրէ անտի զկալուածսն արդեանց՝ զյիշատակեալսն ի յիշատակարանի խաչին սեպհականաբար մինչև ցարդ անփոփոխ ի բազմակի փոփոխութեան իշխանաւորութեանց աշխարհի ընդ այսչափ հոլովեալ դարս:

581. Բացի պարգևագրէ աստի գտանին և այլ զանազան կոնդակք կաթուղիկոսաց Աթոռոյ Էջմիածնի տուեալք յանուն արքեպիսկոպոսաց՝ առաջնորդաց սոյն վանաց և վիճակի նորին, որք ցուցանեն զհնութիւն մենաստանիս և զընդարձակութիւն վիճակին, որոց զմիոյն ամբողջ օրինակ առեալ եդաք աստեն յաղագս առաւել բացայայտ ծանօթութեանց յիշատակելեացն.

«Անուամբ անեղին Աստուծոյ Հօր և ի փառս ծնեցելոյն ի նմանէ անեղապէս Որդւոյն Միածնի և ի գովեստ բղխեցելոյն ի Հօրէ Հոգւոյն ճշմարտի. այս մեր գիր հոգևորական բարձր հրամանի հաստատութիւն է և օրհնութիւն:

---

1 [Տպ «տկն (տիկնոջն)». սակայն տկն–ն պատվով տիկնոջն չի կարող լինել, պիտի կարդալ **տիկին**]:

Գրիգոր ծառայիցն Աստուծոյ ծառայ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ շնորհօք և ողորմութեամբ նորին կաթուղիկոս ընդհանուր ամենայն Հայաստանեայց և եպիսկոպոսապետ Մեծաց Հայոց և պատրիարգ արևելեան Վաղարշապատու, տեղապահ և յաջորդ, աթոռակալ և փոխանորդ սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի և Թադէոսի և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի. զոր գրեմք ի դրանէ աստուածադիր աթոռոյ և լուսակիր տաճարէ աստուածաշէն կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի և բազմահաւաք սրբութեանց սորա. նախ յաստուածամուխ սուրբ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի Քրիստոսի և ի թագն արքայական ի փշոց պսակէ եղեալ ի գլուխն Յիսուսի և սևեռեալ բևեռացն բազկացն Յիսուսի և ի ծածկոյթ յերեսացն Յիսուսի ի սուրբ վարշամակէն և ի տէրունական աստուածընկալ սուրբ նշանացս և ի շնորհաբաշխ աջոյն մեր Լուսաւորչին Գրիգորի և ի սուրբ կուսանաց գերեզմանացս Հռիփսիմեանց և Գայիանեանց. և այլ շրջակայ սրբութեանցս աստուածազարդ սուրբ աթոռոյս Էջմիածնի, զոր և առաքեմք նախ ի Սուրբ Նախավկայի վանքն և յիւր սեպհական թէմն և վիճակն. նախ ի յամենօրհնեալ և յաստուածապահ, յանուանի և յականաւոր մայրաքաղաքն ի Խոյ, որ է Զերևանդ (Զարևանդ) գաւառ և յամենայն վիճակն իւր բոլորովին, ի Ղարադարէն, որ բաժանի առաքելոց յերկրէն և գնայ մինչև ի Ղարաթափայն և բաժանի ի Սալմաստայ, յԵրասխայ մինչև ի Մարանդայ գրիւէն, ի Շիրինթալն իւր երկրովն, ի յաստուածախնամ գիւղաքաղաքն Ջուղա ի յԱստապատ, ի մեծ քաղաքն Նախչուան և ի Շամբու ձորն բոլորովին, որոյ յայդոցիկ բնակչացդ ի միասին՝ պատուելի քահանայից, սրբասէր կրօնաւորաց, իմաստուն վաճառականացդ, աստուածասէր ձեռագործացդ, բարեպաշտ տանուտերացդ, ձեռնահմուտ արհեստաւորացդ, աշխատասէր հողագործացդ և ամենայն չափու հասակի՝ մեծի և փոքու, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, հոգևոր զաւակաց բազմաչարչար նահատակին սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որով անուանք ձեր գրեալ են ի գրին կենաց յանմոռաց յիշատակութիւնն Աստուծոյ:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն՝ հոգևոր որդի՛ք մեր ի Քրիստոս, զի որպէս օրէն է աստուածային և սահման մահկանացու բնութեանս՝ ամենայն որդի հարազատ ժառանգել զտուն և զհայրենիս իւրեանց, այսպէս և այսու օրինակաւ եկն առ մեզ ի յազգմանէ Հոգւոյն Սրբոյ ընտրեալդ Աստուծոյ և ի մարդկանէ՝ հեզահոգի, բարեմիտ և սրբասէր կուսան և սուրբ վարդապետ տէր Աթանասդ,

որ է սնեալ և վարժեալ ի Սուրբ Նախավկայի վանքն. և ուսեալ էր զիմաստս կրթական ի ձեռն Ստեփաննոսի քաջ բաբունապետի Սալմաստեցւոյ, որ եկն ի սուրբ աթոռս ձեր ամենայն միաբանից վկայութեամբդ, մանաւանդ բոլորեցունց ձեր թէմովդ վկայած՝ նաև յԱստուծոյ իսկ. իսկ մեք որպէս խնամածու և դթած հայր ի վերայ սիրելի որդւոյ իւրոյ՝ պատշաճ և իրաւունք համարեցաք զԱթանաս վարդապետդ լինել եպիսկոպոս Սուրբ Նախավկայիդ և իւր սեպհական վիճակին և զոչ այլ ոք օտար, զի օտարն վարձկան է և ո՛չ ճշմարիտ հովիւ. վասն որոյ կոչեցաք զդա ի կարգ և յաստիճան եպիսկոպոսութեան խորհրդով ձեռնադրութեան աստուածային իշխանութեամբ: Եւ զԱթանաս վարդապետդ՝ եպիսկոպոս աստուածամուխ սուրբ Գեղարդեամբս և աստուածախօս սուրբ Աւետարանաւս և շնորհաբաշխ սուրբ Աջովս մեր Լուսաւորչին Գրիգորի ի մէջ երկնանման սուրբ տաճարիս Էջմիածնի: Եւ պարգևեցաք դմա յականաւոր սուրբ ուխտն Նախավկային՝ բոլորովին բնական և սահմանեալ վիճակ իւր՝ զոր վերագրեցաք դմա թէմ, աթոռ և հանգստեան տեղի. վասն որոյ առաջնորդութեամբ Միածնի Որդւոյն Աստուծոյ առաքեցաք զԱթանաս վարդապետդ՝ սրբազան եպիսկոպոս առ ձեզ մերով առաքելական և հայրապետական իշխանութեամբ՝ հովուել զձեզ և ուսուցանել, գնալ յօրէնս և ի պատուիրանս անարատութեամբ և սրբութեամբ՝ տալով զանձն օրինակ բարեաց ամենեցուն. մանաւանդ պահեսցէ զանձն իւր սրբութեամբ, արդարութեամբ և խոնարհութեամբ՝ առնելով ինքն և ապա ուսուցանելով ձեզ. պահելով զանձն իւր ի բամբասանաց առ մարդիկք և անդատապարտ առ Աստուած: Կոչեսցէ զիմաստունսն և զարժանաւորսն և զվկայեալսն ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան և քահանայութեան. կալցի և հրամանաւս մերով ի վերայ ձեր առաքելաբար իշխանութիւն կապելոյ և արձակելոյ:

Այլև զամենայն կանոնեալ հաս և իրաւունս ձեր՝ զոր յամենայն տարի պարտիք տալ աթոռոյ բաժին, տո՛ւք ի Սուրբ Նախավկայի վանքն ի ձեր հոգւոյ տունն. և եթէ զի՛նչ է հաս և իրաւունք՝ ա՛յս է հաս և իրաւունքն. զինչ էրէց որ ի թէմս կայ՝ նոցա տանէն զինչ հասք որ լինի, մուտքն Նախավկային է. տեառնական մատաղն որ լինի՝ երին, մորթին իւր աթոռոյն է. յանկարծամահ որ լինի՝ խ–ի՝ցն ու մատաղն եպիսկոպոսին է. և կողոպուտքն՝ լաւ խալի մի, կամ լաւ շուրջառ տան յաթոռն. զերախայրիս կալոց և հնձանաց. երախայրիքն ա՛յն է՝ յեզնագլուխն կէս մարգան հաց, յամէն հնձանէ մէկ դորակ գինի տան. զսրբանուէրն՝ որ է սրբադրամ, այդ եկե-

ղեցւոյ և խաչի լուսգին է. այս՝ յամենայն աշխարհ յոր տեղ որ քրիստոնէութիւն կայ, զայդ կուտան իւրեանց աթոռոյն. ևս առաւել զսրբանուէրն, որ եկեղեցւոյ և խաչի լուսագին է, որ ի շատէն շատ, և ի փոքրէն փոքր, որպէս ասէ Տէրն յԱւետարանն թէ՝ Որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ, և որում սակաւ՝ սակաւ, որ յամէն տարի մի անգամ սրբանուէր ժողովեն, որ սրբոյն է բաժին. և այլ զինչ հարկ որ լինի, առանց աթոռոյ հրամանին չունիք իշխանութիւն կատարել՝ թէ մատաղ, թէ խաչօրհնէք, թէ այլ ինչ պատեհն՝ աթոռոյն, որպէս յամենայն տեղի. ա՛յս է հաս ու իրաւունք աթոռոյն և բաժին՝ որպէս ասացաք զամենայն:

Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ դմա և կամ խորհիցէ իրաւանց դորա և կամ չի հնազանդի դմա, և հակառակ լինի հրամանաց մերոց և կաթուղիկոսարանիս. այնպիսիքն եղիցին ի ներքոյ պատժոյ և դատապարտութեան. իսկ հնազանդեալքն դորա և հրամանի սուրբ աթոռոյս՝ օրհնեալ լիցին յԱստուծոյ և ամենայն սրբոց և ի մէնջ, ամէն:

Եւ դուք սպասաւորք Սուրբ Նախավկայիդ՝ Յովհաննէս վարդապետ և Մկրտիչ եպիսկոպոս և տէր Հերապետ եպիսկոպոս և այլ մեծ և փոքր միաբանք սուրբ ուխտիդ, սիրով ընկալարուք զԱթանաս վարդապետիդ՝ ձեզ եպիսկոպոս, որպէս արժանաժառանգ այդմ աթոռի և գահի: Շնորհեցաք և ի ձեռն դորա ձեզ զպատուական պարգևս զիւղն սուրբ օծութեան զսրբալոյս մեռուոնն սուրբ՝ զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւն յորդեգրութիւն Հօրն երկնաւորի և ի ժառանգակցութիւն Քրիստոսի. նոյն և ի ճակատն նշան հաստատութեան ի յօծումն քահանայից և ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ. բայց յամենայն ամի նոր առցի ի մէնջ և զհինն ի նորն խառնեսցէ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Գրեցաւ գիր օրհնութեան բարձր հրամանի մեծի սուրբ աթոռոյս Էջմիածնի, ի թուականութեանս Հայոց Մեծաց ՋՂ (1541). ևս առաւել հաստատութեան՝ ձեռնագրեցաք մերով սովորական կարմիր ձեռնագրաւդ ի փառս Քրիստոսի:

Գրիգոր ծառայ ծառայիցն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի շնորհօքն և ողորմութեամբ նորին կաթուղիկոս Ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու սուրբ Էջմիածնի»:

582. Ապա յետ ժամանակաց Յակոբ վարդապետ Ջուղայեցի (որ զկնի կաթուղիկոս) կացեալ առաջնորդ մենաստանիս և մեծ ջանադ-

րութեամբ հոգ կալեալ՝ նորոգէ ի հիմանց յամի 1643 զեկեղեցին և զբովանդակ շէնս մենաստանին պարսպաւն հանդերձ:

Եկեղեցին միջակ մեծութեամբ կառուցեալ ի կոփածոյ քարանց ուղիղ քառակուսի ի վերայ երկուց սեանց. ունի զմի սեղան պատարագելոյ և զերկուս աւանդատունս և զվերնատուն յարևմտեան բաժնի՝ ի միջոցս սեանցն և արևմտեան որմոյն ի կոփեալ քարանց և ի թրծեալ աղիւսոյ. այս վերնատուն՝ որ է տեղի աղօթից ուխտաւոր կանանց, ունի զերկուս ելանելիս (նէրտիվան) յերկոսին արևմտեան անկիւնս եկեղեցւոյն ի նոյն քարեայ շինուածոց. ի միջոցս այսց ելանելեաց, սեանցն և որմոց են երկու փոքրիկ մատռունք՝ որք են ընդ վերնատամբն. ի մէջ հիւսիսային մատրան ամփոփեալ կան մասունք՝ նշխարք հազար սրբոց՝ զորս անդէն եգիտ նա ինքն Յակոբ վարդապետ ի նորոգ հիմնարկելն զայս տաճար և անդէն ի նոյն տեղւոջն դարձեալ հանգոյց և եդ ի վերայ սպիտակ վէմ մարմարոնեայ տապանաձև, որ ունի գրուած ըստ այսմ.

«Թուին ՌՂ երկի,
Հիմնարկութեամբ այսմ տաճարի,
Սուրբ հազարաց նշխարքս յայտնի՝
Ձեռամբ Յակոբ վարդապետի.
Որ յետ ինն եակ եռակ ամի՝
Կաթուղիկոս Հայոց լինի,
Դարձեալ ի տեղւոջս ամփոփի
Թվին ՌՃԷ (1658) ամի»:

Ճակատ բեմին սեղանոյ և կիսաշրջանակն կամարի նորին բարձր իբրև մարդաչափ յարդարեալ են թափանցիկ սպիտակ և սեաւ մարմարոնեայ վիմօք. և արևմտեան մեծի դրան յատակի վէմն է միապաղաղ սեաւ մարմարիոն իբրև չորից կանգնոց երկայնութեամբ, երից լայնութեամբ և երկուց թզաց թանձրութեամբ:

Կաթուղիկէ տաճարիս՝ որ ի վերայ արևելեան բաժնին, է կարի գեղեցկաձև բազմանկիւնի՝ վայելչապէս զարդարեալ երկոտասան առաքելոց և չորիցն՝ Տիրամօր կուսի, Յովհաննու Կարապետի, Ստեփաննոս Նախավկայի և սուրբ Լուսաւորչի պատկերօք եղելովք քանդակեալ ի վէմ ի վեշտասան անկիւնսն արտաքուստ. և նոյնաթիւ այլովք պատկերօք զանազան կենդանեաց ի գագաթսն անկեանց՝ յորոց իւրաքանչիւրոց բերանաց հոսին ջուրք անձրևացն իջելոց ի սեպացեալ և սրացեալ տանեաց կաթուղիկէին:

Ի հարաւակողմն եկեղեցւոյս կից ընդ որմն արտաքուստ բարձրացեալ երկ յարկօք է զանգակատուն վայելուչ՝ որոյ կրկին յարկն է

գմբէթն ի վերայ չորից սեանց: Թէպէտ հոգացեալ են տալ կառուցանել և զայլ երկուս զանգակատունս ի վերայ արևմտեան դրանն և ի հիւսիսակողմն հանդէպ հարաւային զանգակատանն, այլ որպէս երևի պանդխտութիւն նորին Յակոբայ կաթուղիկոսի և վախճանն իսկ անդ ի Կոստանդինուպոլիս եթող զայնս կիսակատար, քանզի երկոցունցն հիմունք ևս լքեալ և յարդարեալ՝ կան այնպէս թերի:

Թուական հիմնարկութեան և աւարտման տաճարիս այսորիկ գտանի յանկեան արևելեան հիւսիսոյ հիման կաթուղիկէի տանեացն արտաքուստ՝ այսպէս.

«Թվ. ՌՂԲ (1643) հիմնարկեցաւ: Թվ. ՌՃԴ (1655) աւարտեցաւ»:

Ի գագաթն կարի վայելուչ արուեստաւոր փորածու կամարի դրանն արևմտեան՝ ի ներքոյ լուսանցոյց պատուհանին ի պատուանդանի մարմարոնեայ խաչվիմի և հասարակ վիմին եղելոյ ի ներքոյ նորին՝ գրի սոյն արձանագիր.

«Ցիշատակ է և բարեխօս սուրբ խաչս Նախիջևանցի Աղամալին և կողակցոյն Մարիամին և ծնողացն Աղաջանին, Նանագուլին. որ սայ է պատճառ արևմտեան պատիս նորոգութեան: Թուին ՌՃԾԳ (1704)»:

Ի վերայ մեծի վիմին՝ որ եղեալ կայ ի վերայ դրանն արևմտեան, գրի այս արձանագիր մի և նոյն մտօք ըստ վերնոյն.

«Կամօք և ողորմութեամբն Աստուծոյ նորոգեաց սրբոյն Ստեփաննոս Նախավկայի եկեղեցւոյս արևմտեան կողմիս դրսի երեսն Նախչեւանցի Աղամալն յիշատակ իւրն և կողակցուն Մարիամին և ծնողացն Աղաջանին և Նանագուլին»:

Ի վերին ծայրս վիմեայ երկուց սեմոց այսր արևմտեան դրան գրի սոյն արձանագրութիւն: Ի ծայր հիւսիսային սեմոյն.

«Ցիշատակ է դուռս Ագուլեցի խօճայ Նիկողայոսին և կողակցացն Մարիամին և Մարգարտին և պապին Բարդուղիմէոսին և ծնողացն Ղարտաշպալուն և Զիչակին և եղբօրն Նազարին և որդւոց սոցին»:

Ի ծայր հարաւային սեմոյն.

«Տէրունին, Յարութիւնին, Ահարոնին, Սամուէլին, Եղիային, Խաչատուրին, Պօղոսին, Մովսէսին, Եղիազարին և միւս Նազարին և քվերն Եղիսաբեթին: Թվ. ՌՃԻԹ (1680)»:

Կից յայս տաճար ի հիւսիսակողմն է փոքրիկ եկեղեցի ընդ երկայնութիւն մեծի եկեղեցւոյն՝ յանուն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի, բայց օրոցաձև կամարայարկն խոնարհ: Գտանի արձանագիր ի ճակատ բեմին միատող ընդ երկայնութիւնն ի վէմ սեաւ մարմարիոն՝ ըստ այսմ.

«Յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստապատեցի խոճայ Աստուածատուրն և ծնօղացն (ծնողսն) խոճայ Արզմանն և Գիւլիխանն և որդի Վարդանն և կողակիցքն: ՌՃՀԵ (1726)»:

Այս մենաստան ունի կրկին պարիսպս՝ զմին շուրջ զտաճարաւն և զմիւսն ի հարաւակողման կից նմին: Միջոց երկոցունցն են աւելի որմունք սենեկաց քան պարիսպ, որոց չինուածք և որմունք կացուցանեն զպարիսպն յերկուս բաժինս: Յայս միջոցում են տնտեսատունք և ձիանոցք՝ են որ քարայարկք և են որ փայտածածք. ի հարաւակողման պարսպի են մեծ և փոքր սենեակք առաջնորդին կամ վանահօրն և միաբանից, նմանապէս քարայարկք և փայտածածք, կրկնայարկք և եռայարկք. բովանդակ շրջապատ պարիսպն հանդերձ բրգամբքն հիւսեալ է ի հասարակ քարանց և է բաւականաչափ բարձր: Յարևմտից կողմանէ պարիսպ տաճարին ունի դուռն մեծ երկփեղկեան երկաթապատ:

583. Հիւսիսակողմն մենաստանիս է զառիվայր իբրև քառորդ մի ժամու ցգետն Երասխ. իսկ արևելեան և արևմտեան կողմունքն են դիւր առապարք, բայց հարաւակողմն զառիվեր՝ խոտորագնաց ցգագաթն մեծի լերին Մաղարթայ: Ի պարսպէ մենաստանիս դէպ յայս կողմն՝ այն է ընդ հարաւ հեռի իբրև քարընկեց մի են ժայռք ինչ յաւազուտի անդ՝ յարևելակողմն հեղեղատին փոքու. ի ներքուստ այնց ժայռին ընդ երկրաւ ելանէ աղբիւր յորդ՝ խոնարհ յերեսաց գետնոյն աւելի քան զերիս կանգունս, որ ընդ երկրեայ կազմեալ ճանապարհաւ անցեալ ընդ հեղեղատն և խոտորեալ գլանջօք արևմտեան առապարին՝ գայ ելանէ ի դուրս հանդէպ արևմտեան դրան պարսպին և դարձուցանէ անդէն զփոքրիկ ջրաղացն: Եւ անտի իջեալ ի խոնարհ յաւազան մի մեծ՝ արբուցանէ զծառաստանսն և զայգիս վանացն՝ որք ընդ զառիվայրն աղբեր ո՛չ այնքան ախորժ յարբումն և ունի փոքր ինչ զօրութիւն լուծողական յսկզբանն:

Զայս աղբերէ աւանդեն բնակիչք մենաստանիս՝ բղխեցուցեալ առաքելոյն Բարդուղիմեայ. ընդ մէջ ական աղբերս և հեղեղատին գոյ մուտ մարդոյ ի ճանապարհն ջրոյս. ընդ որ մտեալ և իմ՝ գնացի ընդ ջրանցն ի վեր կիսահասակ փոքր ինչ ընդ աջկոյս քայլս քսան և հասի յակն աղբեր լոյս ի ձեռին. ուրանօր բազմաբերան հոսի ջուրն

ընդ պատառուածս ժայռին. և անդ յաջ կողման իբր ի պատուհան ինչ դնի խաչ երկաթեայ կարի հնագոյն ձևացութեամբ՝ որոյ և ծայր վերին թևոյն ևս բեկեալ. զորմէ ասեն չինեալ ի Բարդուղիմեայ. մտանեն աստ ուխտաւորքն ի տես աղբերս և ի համբոյր նշանին սրբոյ, այլ անձուկ գոլով ճանապարհին չկարողանան մարմնեղ և ստուար անձինք մուտ գործել:

Ի սպառուածս ծառաստանին և այգեաց՝ որք անկանին ի հիւսիսակողմն մենաստանին, յարևելեան եզեր անդ ճանապարհին կամ հեղեղատին են ապառաժք ինչ ուղղաբերձ՝ յորոց միոյն վերայ տեսանին ձևակերպութիւնք քառաթև նշանի խաչին, ի մէջ այնց գերիս ևեթ ցուցանեն ձևացուցեալ ի ձեռաց վերոյիշեալ առաքելոյն սրբոյ և չէ՛ օտար ինչ. քանզի ի յոլով տեղիս Հայաստանի՝ ընդ որ կոխեցին ոտք սրբոց առաքելոցն և աշակերտաց նոցին. մանաւանդ ի դիւաբնակ տեղիս, երևին հնագոյն ձևացութեամբ նշանք տէրունական խաչի, զորոց ճառեն և եկեղեցական մատեանք:

ԱՌԱՋՆՈՐԴՔ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ

584. Բարդուղիմէոս առաքեալ նախկին հիմնող մենաստանիս:

Բաբգէն եպիսկոպոս յիշատակեալ ի թուղթն Աշոտոյ թագաւորի և Խաչկայ կաթուղիկոսի, յամի 976:

Աթանաս եպիսկոպոս ձեռնադրեալ ի Գրիգոր ԺԱ կաթուղիկոսէ յամի 1541:

Մատթէոս եպիսկոպոս ձեռնադրեալ ի Միքայէլ կաթուղիկոսէ յամի 1563:

Մարտիրոս եպիսկոպոս ձեռնադրեալ ի Դաւիթ և ի Մելքիսէթ կաթուղիկոսաց յամի 1587:

Շմաւոն եպիսկոպոս՝ որ ընկալաւ զնշխարս մասանց Յովհաննու Կարապետի, զգտեալն յաւերակս եկեղեցւոյն հին Ջուղայու յումեմնէ այլազգի մահմէտականէ. յԱռաքել Դավրիժեցի, գլ. ԽԳ, թղթ. 498 ց501. ի հայր Միքայէլ Ջամչեան՝ հտր. Գ, յերես 646, 647:

Արիստակէս վարդապետ Շամբեցի մինչև ցվախճան կենաց իւրոց ըստ Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ (թղթ. 250):

Այժմ ևս այս մենաստան գտանի ի չինութեան և են ի նմա քանի կրօնաւոր անձինք վանահարբ հանդերձ և կան ընդ իշխանութեամբ արքեպիսկոպոսին Ատրպատականի:

ՎԵՐՋԻՆ ՎԱՆՔ ԵՐՆՋԱԿԱՅ ՅԱՆՈՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ

585. Այս մենաստան անկանի ի միջոցս Նախիջևան քաղաքի և աւանին Ագուլեաց ի սահմանի անդ Երնջակայ. և է յարևելս Նախիջևանայ հեռի չորս ժամօք, յԱգուլիս աւանէ յարևմուտս ութն ժամօք. իսկ յԵրնջակայ, որ գտանի յարևելեան հիւսիս՝ ժամ և կէս միջոցօք. և է ի դիւր տեղւոջ յարևմտեան եզեր գետակին:

Առաջին մենաստան Երնջակայ մերձ յամրոցն նորա՝ յանուն սրբոյն Գէորգայ եղև լքեալ յառաջնորդացն ինչ ինչ բանաւոր պատճառանօք. ապա Եսայի վարդապետ իսպառ լքեալ զայն՝ գայ յայս տեղի և նորոգ հիմնարկութեամբ տայ կառուցանել փառացի տաճար ի կոփածոյ քարանց յամին 1551, յանուն սրբոյն Յովհաննու Կարապետի:

Տաճարն է միջակ մեծութեամբ ի վերայ չորից սեանց. ունի զմի սեղան սրբազան խորհրդոյն և զերկուս աւանդատունս և զկաթուղիկէ ի վերայ սեանցն: Ունի յերիս տեղիս զթուական շինութեանն. զառաջինն՝ յարևմտեան ճակատ որմոյն արտաքուստ ի բարձր դրութեան անդր քան զլուսամուտն ի պատուանդանի խաչվիմին՝ ըստ այսմ.

«Եսայի և Ղազար վարդապետ շինողք. թվ. Ռ (1551)»:

Զերկրորդն՝ ի միջոցս թևոց վերոյիշեալ խաչին ըստ այսմ.

«Թվ. ՌՃԷ (1658)»:

Իսկ զերրորդն՝ ի հիւսիսակողման յորմն անդ եկեղեցւոյս՝ նոյնպէս բարձր քան զլուսանցոյցն ի խաչվիմի՝ ըստ այսմ.

«Եսայի վարդապետ շինող: Թվ. ՌՃԴ (1655)»:

Փոքրիկ գաւիթն եկեղեցւոյս հասարակ քարամբք և թրծեալ աղիւսովք, որոյ հիմունքն ևեթ կան, իսկ միւս չէնք նորա բովանդակ խոնարհեալ:

Կից յայս տաճար ի հարաւոյ է փոքրիկ երկարաձև մատուռն յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի և ունի յիշատակագրութիւն կարմիր դեղով յերկոսին գլուխս սիւնաձև հիմանց կամարին առաջնոյ՝ ըստ այսմ.

«Ի թուոյ ազինս մեր Հայկի,
Հազար հարիւր վաթսուն երեքի [1714],
Խոջայ Այվազն գովելի,
Յոյժ բարեպաշտըն ցանկալի,

Տեղեաւ գոլով Շօռօթեցի,
Շինեաց տաճարս այս նագելի,
Յանուն սրբոյն Ստեփաննոսի,
Նախավկային մարտիրոսի,
Իւրն յիշատակ է միշտ կենդանի,
Որով Քրիստոս պատարագի,
Մասն և բաժին իւրըն լիցի,
Եւ ծնողացն Մկրտչին և Կատարին,
Եւ կողակցին Թառիկին
Եւ քեռցն Աննայուն և Փառանկուն,
Եւ դստերացն և իւր տան
Արբանեակն է Մարգարիտն,
Զոր Տէր Աստուածն ամենայնի՝
Զինքն ի ցասմանց անփորձ պահի,
Երկար կենօք յայս աշխարհի,
Պայծառ փառօք ի յատենի,
Աթոռս մեծին Յովհաննիսի,
Իւրն օգնական միշտ լինիցի,
Թէ՛ առաջնորդ թէ՛ միաբանք,
Եմք յԱյվազէն շնորհակալ»:

Այս փոքրիկ տաճար ունի ի վերայ տանեաց իւր զփոքրիկ վայելուչ զանգակատուն, որոյ արևմտեան հարաւոյ սիւնն ունի յարևմտեան ճակատ իւր զարձան յիշատակագրութեան՝ այս օրինակ.

«Յիշատակ է զանգակատունս Նախչուանցի Աղաջանի որդի պարոն Աղամալին. ի ՌՃԾԴ (1705) թուին»:

Գերեզմաններոց միաբանից վանացս ի կողմն հիւսիսոյ մենաստանիս, ի վերայ փոքրիկ բլրակի, ուր կայ ամփոփեալ մարմին ուրումն Եսայեայ վարդապետի միաբանի վանացս և ի տապանավիմի անդ ի հարաւոյ կողմանէ գրի այս ինչ.

«Այս է տապան...
Եսայի երանաշնորհ հոգեընկալ վարդապետի,
Հանգեաւ ի Տէրն ամենի
Թուականին ՌՃՁ (1731)–ին»:

Այս մենաստան ունի շուրջանակի պարիսպ հանդերձ բրգամբք. բոլորովին նիւթ շինուածոցն է ի հողոյ, բացի քանի սենեկաց եղելոց ի հարաւկոյս:

Ունի այս մենաստան և արդիւնատու կալուածս ի սահմանի իւրում ի պէտս սննդեան ի նմա եղելոցն. և է այժմ ի շինութեան ընդ իշխանութեամբ հոգևոր կառավարութեանն Նախիջևանայ:

586. Հանդէպ վանացս յարևելս հիւսիսոյ իբրև յերիս քառորդս ժամու է գիւղն Քռնա կոչեցեալ՝ յարևելեան ստորոտի ուղղաբերձ սեպացեալ քարաժայռի՝ զոր այլազգիք կոչեն Իլան տաղը՝ Օձալեառն: Յայս գեղջէ էր Յովհան Քռնեցի կոչեցեալն վնասիչ հայրենեաց՝ անդ ի սկիզբն ԺԴ–րդ դարու, որոյ մենաստանն ևս կայ տակաւին առընթեր գեղջն լքեալ գլխովին, որպէս և ինքն ի համազգեաց:

ՄԵՆԱՍՏԱՆ ՅԱՆՈՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ, ԱՅՆ Է ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ ԳՈՂԹՆ ԳԱՒԱՌԻ

587. Ագուլիս աւան ուղղակի յարևելս Նախիջևանայ հեռաւորութեամբ աւելի քան զտասն ժամ. որոյ նիստն է ի ձորամիջի և ձորն երկայնեալ ի հիւսիսոյ ընդ հարաւ ցգետն Երասխ ժամ և կէս միջոցօք. ի հիւսիսային ծայրէ ձորոյն, որ սկզբնաւորի ի մեծ լեռնէն Գարուայ (339), սկսանին շէնք տանց բնակութեանց խառն ընդ այգեաց, պարտիզաց և ծառաստանաց մինչև ցգիւղն Դաշտ անուանեալ: Անցանէ ընդ մէջ աւանիս գետակ փոքրիկ, որ ընդ ջուրց աղբերց բղխելոց ի տեղիս տեղիս, ոռոգէ զայգիս, զծառաստանս և զպարտէզս:

Մենաստանն կամ եպիսկոպոսարանն այսր գաւառի է ի մէջ սոյն Ագուլիս աւանի, որոյ եկեղեցին ի սկզբանէ անտի հիմնեալ է յանուն առաքելոյն Թովմայի. և այժմ նոյն տաճար փառացի կառուցեալ ի յետնոց՝ է ի վերայ չորից մեծամեծ սեանց. շէնք նորա կատարեալ քառակուսի բաւականաչափ բարձրութեամբ. ունի կաթուղիկէ վայելչաձև ի վերայ չորից սեանցն և զերիս փոքրիկ զանգակատունս ի վերայ արևմտեան, հարաւային և հիւսիսային դրանցն և զմի սեղան սրբազան խորհրդոյն, որոյ յերկոսին կողմանս են երկու աւանդատունք:

Արձանագիր շինութեան եկեղեցւոյս գտանի ի վերայ հիւսիսային դրանն ընդ զանգակատամբն այս օրինակ.

«Ի թուականիս Հայկականի,
Մի յոբելեան երկշրջանի,
Եռակ տասանց որով վարի [1695],
Սա կառուցաւ քառակուսի.

Ձեռամբ Յոհան վարդապետի,
Որ է յաջորդ յայսմ գահի
Բազում ծախիւք անթուելի,
Զորիւք ամօք սա կատարի,
Երեք դրամքք ըստ խորհրդի,
Կամարակապ զարմանալի,
Անուամբ մեծին սուրբ Թումայի,
Նման վերնոյնըն Սիօնի,
Սա մեզ շնորհեաց պարգև բարի,
Ջաստուածամուխ աջն ձրի,
Ամուր պատուարք բոլոր թեմի,
Պաշտօնէից իւր հովանի,
Պարծանք է սա Գողթ գաւառի,
Եւ ցնծութիւն Հայոց ազգի,
Նպաստութեամբ Տեառն Յիսուսի մի եռակի»:

Թիւ սոյն արձանագրութեան հաւաքի ի ՌՃԽԴ թուականն Հայոց, այն է՝ յամի Տեառն 1695:

Ի վերայ դրանն հարաւային՝ դարձեալ ընդ զանգակատամբն, գտանի արձանագիր անուանց իշխողացն եղելոց ի ժամանակի անդ շինութեան եկեղեցւոյս ըստ այսմ.

«Իշխանութեամբ Պարսից ազգի,
Շահ Հուսէին թագաւորի,
Դիւանբէկութեամբ Մուսաբէկի,
Որ էր տեղեաւ Ագուլեցի,
Եւ Յոհաննու առաջնորդի,
Վերաշինող յայսմ թէմի.
Որոց յաւուրս սա կանգնի,
Այս վայելուչ եկեղեցի»:

Ի հարաւակողման մեծի դրանն արևմտեան յորմն անդր գրին անուանք աշխատաւոր վերակացուացն և օժանդակ եղելոցն ի շինութեան եկեղեցւոյս, ըստ այսմ.

«Յիշեցէ՛ք Ագուլեցի Քալանթար Ովանէսն, վանքիս վէքիլ Հայրապետն, մէլիք Ասկարխան, մղտեսի Հայրապետն, Վարդանն, Առաքելն, Ալէքսանն, Աղամջանն, Ովանէսն, Նահապետն, Մելքոնն, Թասալին, Աղամիրզէն, Մաթէոսն, Ամիրն, Ղուլին, Մուշկին, Գուլպասարն, որք օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս»:

Նոյնպէս ի հիւսիսակողմն այսր մեծի դրան յորմն անդր անուանք աշխատողաց և նպաստ եղելոցն.

«Յիշեցէք Ռամեցի խօջայ Աւետիքն և եղբարքն իւր Նաւասարդն և Նառչն և երէցփոխան Վարդանն և Գրիգորն և Պետրոսն, Փիրին, Նուրին, Արզանին, Վարդանն, Բարաքեազն, Գրիգորն և տէր Գրի-գորն՝ որ բազում օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս»:

Բարձր քան զայս գրուածս անուանց ի ներքոյ լուսամտին դնի թուագրութիւն հայկական խոշոր տառիւք. «Թվ. ՌՃԽԳ (1694)»՝ միով պակաս քան զիսկական թիւն չինութեան:

Արձանագիր սկզբնաւորութեան եկեղեցւոյս և անուանց գիւղո-ւէից վիճակի նորին և հաստատութեան այնց յառաքելոյն Բարդու-ղիմեայ և ի Գրիգոր Լուսաւորչէ՝ գտանի ի վերայ արևմտեան մե-ծի դրան ընդ զանգակատամբն՝ ուր է և շօշափումն Թովմայի զկող Տեառն՝ քանդակեալ ի վէմ.

«Բարդուղիմէոս ի Հայս եկեալ,
Զտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ,
Սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ,
Կոմսի անուն զիւր աշակերտն տեսուչ տեղւոյս զնա եղեալ,
Որ և զտուն Գողթ գաւառիս ի նա յանձնեալ,
Զհօտն ընտրեալ՝ մերձ Ագուլիս և Դաշտ գովեալ,
Ցղնա, Ռամիս սմա յանձնեալ,
Բուստ, Փառակա ևս տվեալ,
Բուհրուտ, Տեւի անքակ եղեալ,
Եւ Շրջու ընդ Մասրեւան,
Աղահեցիկ ցանկ հաստատեալ,
Դաստակ, Վանանդ կցորդ եղեալ,
Տրունիս, Տնակերտ միաբանեալ,
Օբովանիս և Քաղաքիկ
Եւ Անապատն յանդամիջաց,
Վեռն, Գետցիկ և Գեղերեցիկ,
Նունիս, Յորդվատ բաժին կարգեաց,
Սուրբն Գրիգոր յորժամ եկեալ
է[1] առաքելոյն նօմոս տեսեալ,
Ձեռագրով զայն հաստատեալ,
Եւ նզովիւք ամրափակեալ,
Յամի Տեառն ԳՃ և հինգ [305] հասեալ,

[1] [Հավանաբար **է**-ն վրիպակ է և պիտի լինի **և**]:

Լուսաւորչէն պատճէն գրեալ,
Արձան գրիս որ աստ եղեալ»:

Հակառակ այսոցիկ վերոյգրեալ թուականաց չինութեան եկեղեցւոյս գտաւ և գրուած ինչ այլով թուականաւ յիսուն և ինն ամօք յառաջ քան զյիշեալ ՌՃԻԴ [1675] թիւն չինութեան եկեղեցւոյս՝ այն է յիշատակարան մագաղաթեայ ձեռագիր Շարակնոցի իմիք՝ որ գտաւ յայս մենաստան առ վարդապետի ուրումն. հանգամանք չինութեան եկեղեցւոյն միևնոյն յերկոսին ևս. իսկ զչինութիւն պարսպին և սենեկացն այլովքն հանդերձ ստորագրէ յիշատակարանն՝ զորս ո՛չ ունին արձանագիրքն: Յերկոսին ևս այլ և այլ են անուանք առաջնորդացն և թագաւորացն՝ յորոց աւուրս եղեն այս չինարարութիւնք. ուստի երկոքին գրուածք ևս երևին աներկբայելի ստուգութիւնք՝ ըստ յառաջ բերեալ նոցին հանգամանացն: Ապաքէն կարելի է ասել՝ թէ երկիցս ևս եղեալ է չինութիւն եկեղեցւոյս յայնպիսի համառօտ միջոցի. առաջինն յամի 1636, իսկ երկրորդն՝ 1695. այլ թէ ի սոյն համառօտ 59 ամաց միջոցի յորպիսի արդեօք փոփոխութեանց ներքոյ անկեալ իցէ մենաստանն, մինչև կարօտանալ կրկին չինութեան եկեղեցւոյն ի հիմանէ, չի՛ք ինչ տեղեկութիւն, բայց թէ անկեալ կործանեալ իցէ ի շարժէն դիպելոյ յամին 1679 (364). և այն յիշատակարան Շարակնոցին ունէր զկնի քանի տողից գրուած՝ օրինակ զայս.

«Արդ՝ կազմեցաւ Շարակնոցս ի թուականիս Հայոց ՌՁԵ (1636), ի կաթուղիկոսութեան Էջմիածնայ խարազնազգեաց ճգնաւոր վարդապետի (Փիլիպպոս Հաղբակեցին), ի առաջնորդութեան Գողթան գաւառի սուրբ ուխտիս Թումայի ի նոյն վերասացեալ տէր Խաչատուր վարդապետաց վարդապետի՝ որ յայսմ ամի չինեաց և նորոգեաց ի հիմանց զսուրբ ուխտս Թումայի բարձրաբերձ կամարակապ և գմբէթաձև զսուրբ եկեղեցին, և բարձր պարսպով և չորեք անկիւնի խուցերով (սենեկօք) և մուդբախերով (տնտեստուն) զարդարեաց և բազում նեղութեամբ և չարչարանաւք չինեաց, զի յայսմ ամի եկն... խոնդքարն սօլթան Մուրատն ի վերայ Պարսից անթիւ և անհամար զօրօք ԸՃՌ [800000] արամբ... և էառ զամուր բերդն Երևան և էանց գնաց ի շահաստան քաղաքն Թարվէզ... յետոյ դարձաւ գնաց ի տեղի իւր. և ի հասանել աչնան ժամանակին եկն շահ Սէֆի Պարսից թագաւորն բազում և անթիւ զօրօք վասն ծովացեալ մեղաց մերոց և ժողովեաց բազում արս քրիստոնէից և ամենայն ազգաց ընդ ամենայն երկիրս տէրութեան իւրոյ և էառ,

գնաց ի յԵրևանայ բերդին վերայ առ ի առնուլ զնա. այլ ո՛չ գիտեմ զինչ լինելոցն է»:

Պարիսպ մենաստանիս է ուղիղ քառակուսի և տաճարն ի միջին տեղւոջ. ի ներքուստ ի չորից կողմանց առ պարսպօք են զանազան շէնք կացարանաց. սենեակքն արքեպիսկոպոսի կամ առաջնորդի վիճակիս են յանկեան արևմտեան հիւսիսոյ մեծ մասամբ քարաշէն և կամարակապ՝ մանաւանդ ներքնայարկքն. սենեակք միաբանաց կամ հիւրոց են առ հիւսիսային և արևելեան պարսպօքն. և խա-հանոցն ընդարձակ դմբէթաւոր յանկեան արևելեան հիւսիսոյ՝ ուր բղխի աղբիւր ականակիտ ջրոյ. ի հարաւային կողմն և մասամբ յարևմտեան առ պարսպօքն են համբարանոցքն: Այս ամենայն շի-նուածք են քարամբք և կրով և ի թրծեալ աղիւսոյ բաց յինչ ինչ շինուածոց վերնայարկաց. փայտածածք վերնայարկն հարաւային կողման, որ անկանի ի վերայ համբարանոցացն, է կարի ընդարձակ: Եւ է ուսումնարանն մանկանց բնակչաց այսր աւանի՝ որ պարու-նակէ աւելի քան զերկու հարիւր աշակերտս:

Պարիսպն ունի զերիս դրունս. Ա մեծ դուռն յարևմտեան բաժնի ի միջին տեղւոջ, որ հայի ուղղակի ընդ արևմտեան դուռն տաճա-րին. իսկ միւս երկուքն փոքր՝ և են դրունք պարտիզաց և այգեաց վանացն՝ որք շուրջ զմենաստանաւս, քան պարսպին:

Մերձ յայս մենաստան ի հիւսիսոյ նորա է փոքր մատուռն՝ զոր անուանեն Կոմսի, որ էր աշակարտ Բարդուղիմեայ առաքելոյ. շէնք այսր մատրան անշուք, խոնարհ յարկօք, երկու փոքր սեամբ. ու-նի և փոքրիկ պարիսպ, յորում են ինչ ինչ շիրիմք ննջեցելոց: Յայս տեղի մատրան ասեն լինել նահատակութեան նորին Կոմսեայ և ամփոփումն մաքուր նշխարաց նորա. և աւանդեն ևս՝ թէ երբեմն ի բրելն անդէն խորագոյն մերձ ի հիմն այսր մատրան, երևեցան ի կտաւ ծրարեալ արիւնամած քարինք ինչ՝ զորս անդրէն ամփոփեալ՝ ամրացուցին. և գուցէ այլ ուրումն քարկոծեալ սրբոյ իցեն այնք և ոչ Կոմսեայ, քանզի ըստ տէր Յովսէփայ Ջուղայեցւոյ կատարեցաւ Կոմսի իւրով մահուամբ (169): Յայս մատուռն բնակիչք աւանիս գնան երբեմն երբեմն յուխտ խնկովք և մոմովք յանուն նոյն սրբոյ առաջին հօր հաւատոյ իւրեանց:

ԱՌԱՋՆՈՐԴՔ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ ԵՒ ՎԻՃԱԿԻՆ

588. Բարդուղիմէոս առաքեալ:

Կոմսի աշակերտ Բարդուղիմեայ առաքելոյ:

Բաբելաս եպիսկոպոս յաջորդ Կոմսեայ:

Մովսէս եպիսկոպոս կարգեալ ի Գրիգոր Լուսաւորչէ, որում և յաջորդեցին:

Սահակ Տարօնացի:

Զրւանդատ:

Ստեփաննոս:

Յովհաննէս:

Սիոն եպիսկոպոս, որ գտաւ ի ժողովն Դվնայ վասն ընտրութեան Ա Աբրահամ կաթուղիկոսի յամի 594:

Մարտիրոս եպիսկոպոս, որ գտաւ ի ժողովն Կարնոյ առ Եզրիւ յամի 628:

Եսայի եպիսկոպոս յամի 768, որ գտաւ ի ժողովն Պարտաւայ և ապա զկնի եկաց կաթուղիկոս:

Խաչատուր վարդապետ յաւուրս Յակոբայ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ, զորմէ Զաքարիա Սարկաւագ, հտր Բ, գլ. 38. և ս յարձանագիրն Սուրբ Գէորգայ վանաց (403):

Պետրոս եպիսկոպոս, որ գնաց հրաւիրակ առ Եղիազար զկնի վախճանին Յակոբայ Ջուղայեցւոյ. դարձեալ նոյն Զաքարիա Սարկաւագ հտր. Բ, գլ. 52. և ս յարձանագիրն Սուրբ Գէորգայ վանաց (403):

Յովհաննէս եպիսկոպոս, որ յանկմանն Ղազարու Ջահկեցւոյ ըստ հրամանի շահին, յամի 1745, կալաւ զաթոռն տեղապահութեամբ իբրև ամիսս վեց. և ապա անդրէն ի տիրանալ Ղազարու գնաց ի վիճակ իւր ի Գողթն: Եւ այսպէս յաջորդեցին մի զկնի միոյ եպիսկոպոսունք մինչև ցՍիմէոն եպիսկոպոս, որ ի մերում ժամանակի վախճանեցաւ. և ապա այս մենաստան յամի 1837 թուեցաւ ընդ մենաստանս վիճակին Երևանայ և ժողովուրդն ընդ ժողովրդեան՝ ընդ իշխանութեամբ վիճակային հոգևոր ատենին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

589. Առ ի շարակարգել մեր զթիւ յաջորդութեան կաթուղիկոսաց Աղուանից ունէաք ի ձեռին զերկուս օրինակս պատմութեանն ի Մովսէսէ Կաղանկատուացւոյ. Ա օրինակն կարի մեծադիր և խոշոր գրով գրեալ ի Յօհանավանս, որ մերձ ի Կարբի գիւղաքաղաք, իբր յամի Տեառն 1279[1]*, յաւուրս առաջնորդութեան նոյն վանաց Համազասպայ եպիսկոպոսի ըստ ցուցանելոյ յիշատակարանի գրոցն և արձանագրութեանց այնր վանաց, որ ի Զաքարիա Սարկաւագէ: Հեղինակն այնր պատմութեան ի վերջին ԻԳ–րդ գլուխն Գ հատորոյ մատենին, որ յաղագս անուանց կաթուղիկոսացն, այսպէս խօսի ի սկզբանն.*

«Սակս հայրապետական անուան պարտ և պատշաճ վարկանելի էր զստոյգն յիշատակի դրոշմել ի գրի, բայց զի յիսկզբանցն յոլովեալ նախաշաւիղ առաջնորդաց գործք և ժամանակք և անուանք հրկէզ եղեալ յանօրինաց և կտակարանք և սպասք և տեղիք կալոյ նոցա անյայտ մեզ ո՛չ բերեալ ի լուր. այլ զայս փոքր ի շատէ արտայայտեալ բացատրեցաք առ ի գիտութիւն այնոցիկ, որք փոյթ յանձին կալեալ իցեն այսմ խնդրոյ»: Եւ ապա սկսեալ յԵղիշայ աւարտէ ի Մովսէս Դ և հաշուէ զթուականս տևողութեան իշխանութեան նոցա յԱպասայ ցնոյն Մովսէս Դ, ոչ ինչ թիւ կամ ժամանակ նշանակեալ վասն առաջնոցն. և ի սկզբան անդ անմիջապէս զկնի Եղիշայ կարգէ զսուրբն Գրիգորիս Պահլաւիկ. և ապա զկնի վեց եպիսկոպոսաց յիշէ զմիւս ևս տէր Գրիգոր *նախքան զԶաքարիայն. և յայսմ վերջին տեղւոջ դասաւորէ Կիրակոս Գանձակեցի զսուրբն Գրիգորիս Պահլաւիկ՝ ոչ ինչ յիշատակելով յառաջագոյն զայլ ոք Գրիգոր անուն: Իսկ Բ օրինակն մանրագիր և փոքրագիր առանց թուականի գրչութեան, բայց շարք անուանց կաթուղիկոսացն*

[1] [1279–ը, հավանաբար, վրիպակ է: Խոսքը Մատենադարանի թիվ 1531 ձեռագրի մասին է, որն ընդօրինակվել է 1289 թ.]:

ըստ առաջնոյն սկսեալ՝ հասանին ցՊետրոս Գ, որ վախճանեցաւ ի Թուին ՌՃԻԴ (1675). յորում ժամանակի երևի լինել և գրչութեան մատենին. ի սմա ևս շարակարգութիւն անուան սրբոյն Գրիգորի-սի է զկնի Ղազարու և նախքան զՋաքարիայն. այլ զկնի այլ գրիչ ան եղծեալ զայն՝ գրեալ է նախքան զՇուփհաղիշոյ և է յիրաւունս. զի և շարունակ իմաստ պատմութեան Կաղանկատուացւոյն և ժա-մանակք թագաւորացն Աղուանից զնոյն տան ընթերցողին դատել. քանզի բաց յեպիսկոպոսէն, զոր տարաւ ընդ իւր Ուռնայր արքայ յԱղուանս, չի՛ք այլ ուրեք յիշատակութիւն ինչ անուան ուրումն եպիսկոպոսի նախքան զսուրբն Գրիգորիս Պահլաւիկ. այլ թէ Կիրա-կոս ուստի առեալ զայն այնպէս դասաւորէ՝ չյայտնէ ինչ. բայց զայս ևէթ ասէ զՇուփհաղիշոյէ «Այլ մեք որպէս գտաք և եդաք». թողեալ զդասաւորութենէն Պահլաւկին Գրիգորիսի զՇուփհաղիշոյին վիճէ. զի ո՛չ միայն յառաջ է ժամանակաւ սուրբն Գրիգորիս քան զՇուփ-հաղիշոյ, այլ նաև քան զհնգեսին եպիսկոպոսսն զայնոսիկ, զի զկնի եպիսկոպոսին, զոր տարաւ ընդ իւր յԱղուանս արքայն Ուռնայր, ո՛չ անցին աւելի ինչ ամք մինչև ցգնալն սրբոյն Գրիգորիսի յԱղուանս, զորմէ վկայեն պատմիչք լինել 340, յորում ամի Տրդատ արքայ Հա-յոց ըստ խնդրանաց հասարակութեան հաւատացելոցն Աղուանից ետ ձեռնադրել զսուրբն Գրիգորիս Պահլաւիկ և առաքել անդր յԱ-ղուանս. և նոյն իսկ պատմիչն Աղուանից Մովսէս Կաղանկատուա-ցի ի հատորն Ա, ի գլուխն Թ ասէ. «Առնու (Ուռնայր) և զվերստին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ Հայոց Լուսաւորչէ և գա լուսազգես-տեալ ի Սուրբ Հոգւոյն՝ առաւել լուսաւորէ զԱղուանս և կայ մնայ որդի մշտնջենակալ լուսոյն. վախճանէ զմարդկային կեանս. իսկ զկնի սորա մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթուղիկոսութիւն իւրեանց. զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորայ նորին սուրբ ձեռնադրութեամբն լինել եպիսկո-պոս աշխարհին իւրոյ, որք և այսու կանոնիւ կացին աշխարհս Հա-յոց և Աղուանից» և այլն: Ըստ այսմ տեսանի և ի Թուղթն Գիւտայ եպիսկոպոսի, որ առ Վաչէ արքայ Աղուանից. և նախքան զայս ո՛չ ուրուք եպիսկոպոսի անուն կամ յիշատակութիւն առնէ պատմիչն, բայց եթէ զսրբոյ Եղիշայ և զեպիսկոպոսին այնորիկ, որ ընդ Ուռ-նայր արքայ. և զայլ եպիսկոպոսունս զկնի Գրիգորիսի դասէ՝ որպէս և Մխիթար Այրիվանեցի կամ Անեցի ի շարակարգութեան անդ ժա-մանակագրութեան իւրոյ յիշէ նախ զԵղիշա, զսուրբ Գրիգորիս և ապա զՇուփհաղիշոյ և զայլսն. այլ թէ Կիրակոս ուստի առնու՝ չի՛ք ինչ յայտնութիւն:

Զայս կնճիռ յարմարութեամբ լուծանէ Սիմէոն կաթուղիկոս Երևանցի ի Ջամբռ անուանեալ մատենին ի ճառն որ վասն երկ-պառակութեանց Աղուանից և ապստամբութեան կաթուղիկոսաց նոցին յաթոռոյ Էջմիածնի ի պատճառս ինքնագլուխ լինելոյ նո-ցա ի կաթողիկոսաց Հայոց և ասէ, թէ զկնի վարդապետք նոցին Աղուանից դասաւորեցին այնպէս նախքան զ Գրիգորիսն զայնոսիկ եպիսկոպոսունս, որպէս զի ունիցին իրաւունս ձեռնադրութեան կաթուղիկոսի իւրեանց յիւրեանց եպիսկոպոսաց. ապա թէ ոչ՝ շա-րակարգողն այնր գաւազանի կաթուղիկոսաց պարտ էր ընթանալ ըստ շարակարգութեան Կաղանկատուացւոյն՝ երբ չունէր առաջի զայլ ոք պատմիչ նախքան զնա. և չէ՛ ցարդ ևս յայտնեալ. և ըստ գրուածոց նորա արդարև չի՛ք այլ ոք. զի եթէ գտանէր՝ անհնա՛ր էր թէ ո՛չ յիշատակէր զանուն նորա: Եւ Կիրակոս ևս զայս դասաւո-րութիւն տեսանելով առանց դատողութեան մտաց պատմութեանն շարակարգէ զ Պահլաւիկն զկնի վեց եպիսկոպոսաց: Վասն որոյ մեք հայեցեալ ի միտս գրուածոց Կաղանկատուացւոյն և ի թուղթն Գիւ-տայ եպիսկոպոսի առ Վաչէ արքայ՝ երրորդ դասեցաք զնա յԵղիշայ առաքելոյ, իսկ զՇուփհաղիշոյ թողաք ըստ դասաւորութեան նորին Կիրակոսի՝ թէև գտանի ժամանակաւ վերջին և քան զԵրեմիա Ա:

[ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՆ ԱՂՈՒԱՆԻՑ]

590. Շարակարգութիւն կաթուղիկոսացն Աղուանից սկսեալ ի սրբոյն Եղիշայ աշակերտէ Թադէոսի առաքելոյ Հայոց և հասուցեալ ցվախճան կաթուղիկոսութեան նոցին՝ այն է ցտէր Սարգիս վերջին՝ հանեալ ի պատմութենէ նոցին Աղուանից և Հայոց:

ամք Տեառն	տևող. իշխան.

Ա. Սուրբն Եղիշայ, որ զկնի նահատակութեան վարդապետին իւրոյ Թադէոսի առաքելոյ չոգաւ յԵրուսաղէմ, ձեռնադրեցաւ անդ յեպիսկոպոս և վերադարձաւ յԱղուանս ի քարոզութիւն և անդէն կատարեցաւ նահատակութեամբ յամի 79՝ զկնի աշակերտելոյ զբազումս և չինելոյ զեկեղեցի ի Գիսն անուանեալ տեղւոջ (163):

Բ. Այր ոմն երանելի եպիսկոպոսական պատուով շնորհեցաւ առաջնորդ Աղուանից՝ այնինչ Ուռնայր արքայ նոցին մկրտեցաւ ի Մեծէն Գրիգորէ Լուսաւորչէ Հայոց. զորմէ Գիւտ եպիսկոպոս Հայոց ի թուղթ իւր առ Վաչագան արքայ Աղուանից, որ ի պատմութեան Մովսէսի Կաղանկատուացւոյ (հատոր Ա, գլ. ԺԱ) և Կիրակոս Գանձակեցի:

340 2 *Գ. Սուրբն Գրիգորիս Պահլաւիկ որդի սրբոյն Վրթանիսի որդւոյ մեծին Գրիգորի Լուսաւորչի, որ զկնի մահուան Մեծին Տրդատայ նահատակեցաւ յԱղուանից անտի՝ կացեալ անդ զամս Բ:*

488 *Դ. Սուրբն Շուփհաղիշոյ եկեալ յԵրուսաղէմէ, յորոյ աւուրս եղև գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի՝ այն է յամի 488. իսկ ըստ Մխիթարայ Այրիվանեցւոյ ի միջոցս 500–530 թուոցն:*

Ե. Տէր Մատթէոս Ա:

Զ. Տէր Սահակ Ա:

Է. Տէր Մովսէս Ա:

Ը. Տէր Պանտ:

Թ. Տէր Ղազար:

Ժ. Տէր Զաքարիա Ա:

ԺԱ. Տէր Դաւիթ Ա:

ԺԲ. Սուրբն Յովհան, որ էր եպիսկոպոս Հոնաց:

ԺԳ. Տէր Երեմիա Ա, յորոյ աւուրս գիրն Աղուանից ի սրբոյն Մեսրովպայ[1]*:*

552 44 *ԺԴ. Տէր Ապաս ի գաւառէն Մեծարանց. սա փոխադ-
րեաց զաթոռն հայրապետական ի Զօղա քաղաքէ ի մայ-
րաքաղաքն Պարտաւ յամի 552, ի պատճառս հինիցն
թշնամեաց:*

600 34 *ԺԵ. Տէր Վիրոյ. սա ձեռնադրեցաւ յԱբրահամ Ա կա-
թուղիկոսէ Հայոց. գերեցաւ ի Պարսս և եդաւ ի բանտի
յերկար ժամանակս՝ մինչև ցքսան և հինգ ամ յաւուրս
Խոսրովու Բ արքային Պարսից. որոյ զկնի մահուանն
ազատեցաւ և եկն յաշխարհ իւր յԱղուանս և ազատեաց
զբազում գերիս յազգէ Հայոց, Վրաց և Աղուանից ի Շա-
թախազրէ որդւոյ Ջեբուխաքանայ:*

610 *ԺԶ. Տէր Տիրանուն, զորմէ Մխիթար Այրիվանեցի ի
ժամանակագրութեանն ի միջոցս Ծ–Կ հայ թուականին.
ուր և ասէ՝ թէ արար զԼուծմունս Շ դժուարիմաց բանից:*

17 *ԺԷ. Տէր Զաքարիա Բ, այր սուրբ. սա յերաշխի էառ
զմեծ քաղաքն Պարտաւ և աղօթիւք իւրովք զերծոյց ի
գերութենէ զբազում անձինս. և ձեռնադրեաց եպիսկո-
պոս Սիւնեաց զՎրթանէս անուն ոմն:*

25 *ԺԸ. Տէր Յովհան Բ, յեպիսկոպոսութենէ Ամարասայ
կոչեցեալ յաթոռն:*

12 *ԺԹ. Տէր Ուխտանես. սա ձեռնադրեցաւ ի Կոմիտա-
սայ կաթուղիկոսէ Հայոց. անէծ զնախարարսն Աղուա-
նից վասն ազգաշաղախ ապօրէն ամուսնութեան նոցին՝
և պատուհասեալ բարձան ի միջոյ յանցաւորքն ի նոսին:*

6 *Ի. Տէր Եղիազար յեպիսկոպոսութենէ Շաքուայ. սա
եգիտ զխաչն՝ զծածկեալն ի մեծէն Մեսրովպայ ի Գիս
գիւղ. և ի նոյն կենարար փայտէն մասն առեալ եդ ի ՃԻ
դահեկան ոսկւոջ և գրեաց՝ Եղիազարայ է. և կարգ եդ
յօր խաչին տօնել ի Գիս:*

17 *ԻԱ. Տէր Ներսէս Ա, յեպիսկոպոսութենէն Գարդմա-
Ղ նայ ձեռնտուութեամբ Սպրամ տիկնոջն Աղուանից.*

---

[1] Սուրբն Մեսրովպ արար զնշանագիրս Աղուանից յաւուրս սոյն յիշեալ Երեմիա Ա եպիսկոպոսի Աղուանից իբր յամի 423. ըստ նշանակելոյ Չամչեան հայր Միքայէլի. իսկ ի վեր անդր նշանակի Շուփհաղիշոյ իբր յամի 488, դարձեալ ըստ նորուն Չամչեանի. և ի միջոցս երկոցունցն ևս յիշատակին ութն եպիսկոպոսք ըստ յառաջ բերելոյ պատմագրացն, զորս առայժմ թողեալ մեր՝ յանձն առնումք զկնի եկեալ յետախոյզ քննչաց:

որք ի միասին այնինչ կամէին փոփոխել զեկեղեցական կարգսն, աղաղակեաց հասարակութեանն առ Եղիա կաթուղիկոս Հայոց. և թէ՝ միտս ունին երկոքեան նոքա առ յոյնս. Աբդլմէլիք ամիրայ հագարացւոց լուեալ զայն՝ արձակէ ի Հայս առ նոյն Եղիա կաթուղիկոս զներքինի մի յիւրոցն և հրամայէ գնալ յԱղուանս և ընկենուլ զնա յիշխանութենէ և ընդ տիկնոջն ուղարկել յարքունի դուռն կապանօք. Ներսէս լուեալ զայն և տեսեալ ևս՝ զկնի ութն աւուր մեռանի. և իշխանք Աղուանից տան ձեռագրով ցԵղիա կաթուղիկոս Հայոց՝ մի՛ ևս միւսանգամ դնել կաթուղիկոս առանց գիտութեան և հրամանի կաթուղիկոսի Հայոց: Սա ինքն Ներսէս կալաւ զաթոռն ի խաղաղութեան զամս ԺԴ և ի խռովութեանն Գ և կէս:

710 1/զ *ԻԲ. Տէր Սիմէոն Ա. սա սարկաւագապետ եկեղեցւոյն Աղուանից՝ ընտրեցաւ յիշխանացն և ձեռնադրեցաւ յԵղիա կաթուղիկոսէ Հայոց և եբարձ զտարաձայնութիւնն ի Ներսէսէ և եդ կանոնս եօթն գլխով:*

35 *ԻԳ. Տէր Միքայէլ, որ էր յառաջն սարկաւագ ի Շաքու. սա կոչեաց զՍողոմոն զհայր Մաքենոցաց վանացն և նովաւ հանդերձ նզովեաց զիշխանս Աղուանից՝ որք զերից ազգաց զծնունդս ամուսնացուցանէին և զԹալիլէ առաջնորդ Վրաց՝ որ հրաման տայր այնպիսի ամուսնութեան:*

14 *ԻԴ. Տէր Անաստաս:*

4 *ԻԵ. Տէր Անանիա:*

17 *ԻԶ. Տէր Յովսէփ Ա, յեպիսկոպոսութենէ Ամարասայ. ի սորա հինգերորդ ամին լցաւ թուականն Հայոց յՄ [751]:*

4 *ԻԷ. Տէր Դաւիթ*[1] *Բ. սա ազատեաց զկալուած եկեղեցական և զսպաս սրբութեանցն. և ապա դեղ մահու ի դաւողաց ընկալեալ յանգէտս՝ վախճանի:*

768 9 *ԻԸ. Տէր Դաւիթ*[2] *Գ, յեպիսկոպոսութենէ Մեծ Կունենից. սա վաճառեաց Այլադենից զդաստակերտսն և զՍահմանախաչ կոչեցեալ տեղին:*

---

[1] Մի յերկուց կաթուղիկոսաց աստի յիշատակի ի Միքայէլէ Չամչեան, հատոր Բ, համար 412, ի ժողովն Պարտաւայ առ Սիոն կաթուղիկոս Հայոց յամի 768:

[2] [Տե՛ս նախորդ ծանոթագրությունը]:

1 ՀԹ. Տէր Մատթէոս Բ, յեպիսկոպոսութենէ Կապա-
ղակա. սա ևս թիւնօք ընկալնու զվախճան:
2 Լ. Տէր Մովսէս Բ:
2 ԼԱ. Տէր Ահարովն:
ՀԲ. Տէր Սողոմովն Ա:
4 ԼԳ. Տէր Թէոդորոս յեպիսկոպոսութենէ Գարդմանայ:
11 ԼԴ. Տէր Սողոմովն Բ:
25 ԼԵ. Տէր Յօհաննէս Գ. սա փոխադրեաց զկաթուղիկո-
սարանն ի Պարտաւ քաղաքէ ի Բերդակոր ի տեղի հովա-
նոցաց իւրեանց:
ԼԶ. Տէր Մովսէս Գ:
ԼԷ. Տէր Դաւիթ Դ, յեպիսկոպոսութենէ Կապաղակա.
28 սա օրհնեաց զանօրէն ամուսնութիւն տեառն Շաքուայ և
ընկալաւ յեղբօրէ ամուսնացելոյն զնախատինս:
848 25 ԼԸ. Տէր Յովսէփ Բ, յեպիսկոպոսութենէ Մեծկունենից.
ի սորա երրորդ ամին լցաւ թուականն Հայոց յԳՃ [851]:
873 17 ԼԹ. Տէր Սամուէլ յեպիսկոպոսութենէ Մեծկունենից.
սա անձամբ առեալ զպատիւն՝ լուծաւ ի Գէորգ Բ կա-
թուղիկոսէ Հայոց. այլ զկնի գնացեալ ի Դուին առ նա՝
անդրէն հաստատեցաւ յաթոռն:
8 Խ. Տէր Յովնան. սա էր դրան եպիսկոպոս Հայոց. և
մինչ ի գերութեան էր Գէորգ Բ կաթուղիկոս Հայոց՝
գնաց յԱղուանս և ձեռնադրեցաւ յաթոռն Աղուանից
առանց կամաց նորա. և իբրև դարձաւ Գէորգ Բ, միջ-
նորդութեամբ իշխանացն Աղուանից՝ ելոյծ զնա ի պատ-
ւոյն, այլ միջնորդեալ նոյն իշխանացն՝ հաստատէ զնա
անդրէն յաթոռն:
21 ԽԱ. Տէր Սիմէոն Բ. սա էր դրան եպիսկոպոս Աղուա-
նից և առաւել զարդարեաց զսուրբ խաչն սպասուք. և
գտաւ հանդերձ եպիսկոպոսօք իւրովք ներկայ ի հանդի-
սի նաւակատեաց եկեղեցւոյն Տաթևայ՝ որ հիմնարկեցաւ
յամի 895, ի Հայոց ՅԽԴ:
5 ԽԲ. Տէր Դաւիթ Ե, յառաջնորդութենէ Փառիսոսա
վանաց:
18 ԽԳ. Տէր Սահակ Բ, յեպիսկոպոսութենէ Մեծկունենից:

947 11 *ԽԴ. Տէր Գագիկ Ա, յեպիսկոպոսութենէ Գարդմանայ. ի սորա չորրորդ ամին լցաւ թուականն Հայոց ի ԴՃ և վախճանեցաւ ի ՆԷ յամի 958:*

ԽԵ. Տէր Յովհաննէս Դ. զսա յիշատակէ Միքայէլ Զամչեան (հատոր Բ, երես 837, 840). և ասէ թէ գտաւ յԱնի ի ժողովի անդ որ վասն օծման Աշոտոյ Թագաւորի: Եւս անդ յընտրութեանն Վահանայ ի կաթուղիկոսութիւն՝ յամսն 961, 965:

7 *ԽԶ. Տէր Դաւիթ Զ, յեպիսկոպոսութենէ Կապաղակա:*

6 *ԽԷ. Տէր Դաւիթ Է, ի Խոտակերաց վանացն. սա առնու ձեռնադրութիւն յԱնանիա կաթուղիկոսէ Հայոց:*

16 *ԽԸ. Տէր Պետրոս կամ Պենեղաս Ա. յեպիսկոպոսութենէ Գարդմանայ:*

6 *ԽԹ. Տէր Մովսէս Դ, յառաջնորդութենէ Փառիսոսա վանաց:*

Մինչև ցասա շարակարգին ի 23–րդ գլուխն Գ հատորոյ պատմութեանն Աղուանից ի Մովսէսէ Կաղանկատուացւոյ բացի չորիցն՝ ի նախորդէն Պահլաւկին Գրիգորիսի, ի Տիրանունայ, զոր յիշատակէ Մխիթար Այրիվանեցի և յԱնանիայէ, զոր Կիրակոս յիշատակէ և ի Յովհաննիսէ Դ՝ զոր Զամչեանն յառաջ բերէ:

Ծ. Տէր Մարկոս Ա, այր Աստուծոյ:

ԾԱ. Տէր Յովսէփ Գ. սա ի ՆՂ թուին Հայոց գտաւ ի զօրս Դաւթի՝ որ ընդդէմ Ապուսվարայ. իսկ ըստ Միքայէլի Զամչեան ի ՆՁԵ թուին, ևս և կոչեցաւ յԱնի քաղաք ի ժողովն որ վասն Պետրոս Ա կաթուղիկոսի և անկմանն Թէոսկորոսի. այլ այս թիւ ՆՁԵ յառաջ բերեալ ի Զամչեանէ երևի պակաս հինգ ամօք. քանզի արձանագիրն այգւոյ ի մեծ եկեղեցին հին Թալնայ (379) գրի յաւուրս Թէոսկորոսի կաթուղիկոսի և դնի թուական արձանագրութեանն ՆՁԹ. գիտեմք ստուգիւ՝ թէ Թէոսկորոս յաթոռոյն յԲ ամի իշխանութեան իւրոյ և անդրէն յաջորդեաց Պետրոս Ա. ապաքէն Յովսէփ Գ, կաթուղիկոս Աղուանից գնաց յԱնի ի թուին Հայոց ՆՂ և ո՛չ ի ՆՁԵ: Եւ որպէս երևի նա ինքն Յովսէփ Գ, ընդ երկար եկաց յիշխանութեանն, քանզի ասէ Մխիթար Այրիվանեցի ի միջոցս ՇԼ–ՇԼԴ հայ թուականին. «Կիւրիկէ որդի Դաւթի ետ ձեռնադրել Յովսէփայ Աղուանից կաթուղիկոսի

զտէր Բարսեղ. և զդրան էրէցն զՍարգիս ետ ձեռնադ-
րել եպիսկոպոս Հաղբատա. և յայնմ հետէ եղև աթոռ»:
Բայց Միքայէլ Զամչեան զձեռնադրութիւն Բարսղի դնէ
ի Ստեփաննոսէ Ա:

ՇԲ. Տէր Մարկոս Բ:

ՇԳ. Տէր Ստեփաննոս Ա. սա վախճանեցաւ ի ՇՇԲ
թուին Հայոց (1103) ըստ Մատթէոսի Ուրհայեցւոյ:

1103 10 ՇԴ. Տէր Յովհաննէս Ե, եղբայր Ստեփաննոսի Ա, ձեռ-
նադրեցաւ ի Բարսեղ կաթուղիկոսէ Հայոց և անդրէն
լուծաւ, ի Պատմութեան Զամչեանի (հտր Գ, համար 25):

1113 1/2 Ղ ՇԵ. Տէր Ստեփաննոս Բ. սա վախճանեցաւ ի տիս պա-
տանեկութեան՝ կալեալ զաթոռն ամ մի և ամիսս վեց:
Զկնի Ստեփաննոսի Բ ո՛չ ումեք յաջորդեալ՝ անցանէ
միջոց պարապոյ Իե ամաց. ապա.

1140 ՇԶ. Տէր Գագիկ Բ, անուանեալ և Գրիգորիս: Ձեռ-
նադրեցաւ ըստ միջնորդելոյ Աղուանից աշխարհին՝
հրամանաւ Գրիգոր Գ կաթուղիկոսի Հայոց ի Սահակայ
եպիսկոպոսէ Կարնոյ ի ՇՁԹ թուին Հայոց յամի 1140:

ՇԷ. Տէր Բժդէն. սա եթող զկարգն և էած կին:

ՇԸ. Տէր Ներսէս Բ. զսա յիշատակէ յիշատակարանն
Պատմութեան Կաղանկատուացւոյ յերկրորդ օրինակի ի
հայ թուական ՈԻ, յամի 1171:

40 ՇԹ. Տէր Ստեփաննոս Գ. սա գտաւ յԲ ժողովն Հռոմկ-
լայի:

40 Կ. Տէր Յովհաննէս Զ. սա չինեաց եկեղեցի հրաշալի ի
գաւառն Միափոր ի վանքն կոչեցեալ Խամշի. իսկ Մխի-
թար Այրիվանեցի դնէ զսա ի միջոցս հայ թուոցն «ՈԽ—
ՈԿ զԽամշի վանս Աղուանից կաթուղիկոսացն աթոռ
հաստատեցին»:

1235 27 ԿԱ. Տէր Ներսէս Գ, այր հեզ և մարդասէր, եղբայր
Յովհաննու Զ. ձեռնադրեցաւ ի ՈՁԴ Հայոց՝ յամի 1235.
սա կոչեցաւ յԷլթինայ խաթունէն Զարմաղանայ և գնա-
ցեալ ի տես նորա պատուեցաւ ի նմանէ և պատուով
վերադարձաւ ի տեղի իւր. օրհնեաց և օծ զեկեղեցին
Գանձասարայ զկառուցեալն ի Ջալալ Դօլ Հասանայ
որդւոյ Վախթանկայ որդւոյ մեծին Հասանայ ի թուին
Հայոց ՈՁԹ, յամի 1240. որպէս ցուցանէ արձանագրու-
թիւն նոյն եկեղեցւոյն: Զսմանէ վախճանեալ ասէ Վար-

դան պատմիչ ի ՉԺԱ թուին Հայոց՝ յամի 1262, ցաւով ջրգողութեան:

Մինչև ցսոյն Ներսէս Գ շարակարգէ զթիւ կաթուղիկոսացն Կիրակոս պատմիչ Գանձակեցի բացի հինգ անձանց՝ ի Տիրանունայ, ի տէր Անաստասայ, ի տէր Յովհաննիսէ Դ, ի տէր Դաւթայ Զ և ի տէր Ներսէսէ Գ: Եւ ապա անտի և այսր առեալ յինչ ինչ հատուածական թղթոց գտելոց առ Բաղտասարայ արքեպիսկոպոսի և ի յիշատակարանէ մատենից և յօրագրութեանց ոմանց կաթուղիկոսաց Հայոց. և ստուգեալ զոմանս ի նոցանէ արձանագրութեամբք շիրմաց նոցին և եկեղեցեաց աշխարհին այնորիկ՝ շարակարգեսցուք մինչև ցվախճանն՝ այն է ցտէր Սարգիս Բ:

1262 61 *ԿԲ. Տէր Ստեփաննոս Դ[1]. սա յաջորդէ յաթոռն ի թուին Հայոց ՉԺԱ [1262] և վախճանի ի թուին ՉՀԲ, յամի 1323. և յիշատակի յարձանագրութիւնսն եկեղեցւոյն և գաւթի նորին ի գիւղն Ուրեկայ ի թիւսն հայկական ՉԻԸ [1279], ՉԼԳ [1284]. յիշատակի սա և առ Միքայէլի Զամչեան (հտր Գ, համար 284):*

1323 83 *ԿԳ, ԿԴ. Տէր Սուքիաս, տէր Պետրոս Բ. Ի ՉՀԲ թուականէն Հայոց մինչև ցՊԾԵ [1406] թիւն՝ երկու կաթուղիկոսունք յիշատակին նստեալ յաթոռ, որոց անուանք Սուքիաս և Պետրոս. իսկ ամք որոշ տեղեկութեամբ իշխանութեան նոցին անյայտ:*

1406 *ԿԵ. Տէր Կարապետ յաջորդեաց յաթոռն ի ՊԾԵ [1406] թուին. հատուածական թուղթն որ առ Բաղտասար արքեպիսկոպոսն և յիշատակարանն Բ, Պատմութեան Կաղանկատուացւոյն հասուցանեն զթիւ տևողութեան իշխանութեան սորա ցՊՀԳ [1424]. բայց տապանագիրն, որ ի վանս Ճալէթու ի վերայ երից կաթուղիկոսացն, ցուցանէ զվախճան սորին ի ՊԿ [1411] թուին. և լրութիւն չինութեան եկեղեցւոյն ևս ի նոյն թիւ ըստ արձանին վանաց:*

ԿԶ. Տէր Դաւիթ Ը. սա ո՛չ ուրեք յիշատակի ի գրուածս, այլ տապանագիր սորա ցուցանէ ըստ այսմ. «Այս է հանգիստ Դաւիթ կաթուղիկոսին, ՊԿ թուին (1411)»:

[1] Ժամագիրքն տպեալ ի Շուշի յամի 1838 յիշէ զայլ երկուս կաթուղիկոսունս՝ Ներսէս և Ստեփաննոս անուն, որք ո՛չ ուրեք գտանին՝ ո՛չ ի գիրս պատմութեանց և ո՛չ ի հատուածական թուղթս. ուստի երևին լինել կրկնութիւնք անուանցն Ներսէսի Գ և Ստեփաննոսի Դ, սխալանօք գրաշարին:

1436 *ԿԷ. Տէր Մատթէոս Գ:*

1 *ԿԸ. Տէր Աթանաս:*

1441 *ԿԹ. Տէր Գրիգոր Բ Հանեցի անուանեալ Միքայէլէ Զամչեանց. յորոյ ժամանակս ասէ՝ գրեաց յԱղուանս թուղթ Կիրակոս կաթուղիկոս Վիրապեցի (հտր Գ, համար 488):*

Հ. Տէր Յովհաննէս Է, որդի Զալալին. սա ըստ տապանագրի չիրմին իւրոյ վախճանեալ է ի թուին ՉԺԹ, յամի 1470:

ՀԱ. Տէր Մատթէոս Դ:

ՀԲ. Տէր Արիստակէս Ա:

1478 *ՀԳ. Տէր Ներսէս Դ. սա հաստատեցաւ յաթոռն իւր ի ՉԻԷ թուին, յամի 1478:*

1481 *ՀԴ. Տէր Շմաւոն Ա:*

ՀԵ. Տէր Թումա Սօկութլուեցի. սա վախճանի ի թուին ՉԽԴ, յամի 1495, որպէս ցուցանէ տապանավէմն սորին անդ ի վանս Ճալէթու:

ՀԶ. Տէր Առաքեալ՝ ևս Սօկութլուեցի. յիշատակի սա ի յիշատակարանի Աւետարանի միոյ եղելոյ ի թուին ՉԻԸ [1479], ՉԾԳ [1504]. իսկ արձանագրութիւն տապանին, որ ի վանս Ճալէթու, հասուցանէ ցՉԿ [1511]:

1511 *ՀԷ. Տէր Արիստակէս Բ:*

ՀԸ. Տէր Սարգիս Ա Ղշլաղեցի. սա գնեաց գեօղս իւրովք դրամովք և յաւել ի կալուածս վանացն Գանձասարու ըստ ցուցանելոյ արձանագրութեանն ի թուին ՉՂԵ, յամի 1546. և վախճանեցաւ յամի 1555, ի մեհեկի ԺԹ, յաւուր երկուշաբթի:

1556 17 *ՀԹ. Տէր Գրիգոր Գ. յիշատակի սա ի յիշատակարանի Յայսմաւուրի միոյ գրելոյ ի թուին ՌԸ. 1559: Իսկ յամի 1573 ուրանայ զհաւատ իւր:*

1 *Զ. Տէր Դաւիթ Թ Արջաձորեցի. զսա ի նոյն ամի կախեալ ի զանգակատանէն եկեղեցւոյն Գանձասարու խեղդամահ առնեն խաչենեցիք:*

1563 *ՁԱ. Տէր Փիլիպպոս Պումեցի:*

ՁԲ. Տէր Յովհաննէս Ը. յիշատակի սա ի ձեռագիր մագաղաթեայ Աւետարանի միոյ յիշատակարանի՝ յերկրորդումն կազմի նորա ի թուին ՌԻԷ [1578]. իսկ բուն գրչութիւն Աւետարանի յամի 1337. իսկ վախճան սորին

եղև ի թուին ՌԼԵ, 1586: Յիշատակէ զսա և Զաքարիա Սարկաւագ Յօհանավանաց (Ա հտր, գլ. ԻԹ):

ՁԳ. Տէր Շմաւոն Բ Քօլատակեցի. սա վախճանի ի թուին ՌԿ յամի 1611:

1588 *ՁԴ. Տէր Արիստակէս Գ Քօլատակեցի:*

1593 *ՁԵ. Տէր Մելքիսէթ Արաշեցի:*

1596 *ՁԶ. Տէր Սիմէոն Գ, հայրենեօք Քօլատակեցի՝ բնակեալ ի Շահմասուր:*

1633 *ՁԷ. Տէր Յովհաննէս Թ. սա չինեաց զեկեղեցին Գանձակայ՝ Էլիսավէտապօլսոյ:*

1634 19 *ՁԸ. Տէր Գրիգոր Դ. սա վախճանեցաւ ի թուին ՌՃԲ, 1653, որպէս և ցուցանէ արձանագիր գերեզմանի նորա: Յիշատակի սա և ի յիշատակարանի ձեռագիր Շարակնոցի միոյ գրելոյ ի թուին ՌՃԱ [1652]:*

1653 22 *ՁԹ. Տէր Պետրոս Գ Խանձկեցի. զսա յիշատակէ արձանագիրն որ ի ճակատ բեմի վանացն Սաղիանու ի թիւն ՌՃԹ (1660) և յիշատակարան Մաշտոց գրքոյ միոյ եղելոյ ի թուին ՌՃԺԱ [1662]. յիշատակէ և Զաքարիա Սարկաւագ Յօհանավանաց (հտր Բ, գլ. 38), որ և վախճանեցաւ ի ՌՃԻԴ թուին, յամի 1675:*

Մինչև ցաստ ևս շարակարգէ յիշատակարանն երկրորդ օրինակի պատմութեան Կաղանկատուացւոյ բաց յուԹն անձանց՝ յեպիսկոպոսէն որ ընդ Ուռնայր արքայ ի Տիրանունայ ի տէր Անանիայէ, ի տէր Յօնանայ, ի տէր Յովհաննիսէ Դ, ի տէր Դաւթէ Զ, ի տէր Յովհաննիսէ Զ և ի տէր Դաւթայ Ը:

1675 26 *Ղ. Տէր Սիմէոն Դ Խոտրաշինեցի՝ կոչի և Զարաբերդցի. սա անձամբ առեալ զպատիւն առանց հաւանութեան կաթուղիկոսի Հայոց և ժողովեալ զինչս կաթուղիկոսական՝ թողու զաթոռն և բնակի ի գեղջ իւրում յենլով յայլազգի իշխանն և վախճանի ի թուին ՌՃԾ (1701):*

1676 24 *ՂԱ. Տէր Երեմիա Բ Գանձասարցի Ջալալեանց. սա ձեռնադրեալ ի Յակոբայ Ջուղայեցւոյ կաթուղիկոսէ Հայոց՝ տիրէ աթոռոյն. և այնպէս հակառակութեամբ վարեն զիշխանութիւն ինքն և Սիմէոն Դ, մինչև Յակոբ կաթուղիկոս կոչեալ առ ինքն զերկոսեան ևս՝ առնու գիր երդման և նզովից ի Սիմէոնէ՝ չլինել միւս անգամ ի խնդիր կաթուղիկոսութեան, ո՛չ ինքեան և ո՛չ ազգայնոց*

նորա. և այնպէս յանձնէ զպատիւն ցԵրեմիա: Դարձեալ ի ՌՃԻԶ [1677] թուին հակառակին ընդ իրեարս՝ յորոց տաղտկալի գրութեանց ձանձրացեալ և Եղիազարու կաթուղիկոսի Հայոց, տայ բերել զերկոսեան ևս առ ինքն յէջմիածին և խրատուք հաշտեցուցեալ միաւորէ զնոսա՝ վարել զիշխանութիւնն միաբան խորհրդով ըստ գրաւոր կանոնացն տուելոց յիւրմէ. և դնէ վճիռ, զի ի չեղել յայնց կանոնաց՝ զրկեսցէ իրաւանց. յետոյ չեղեալ Սիմէոնի՝ զրկի: Իսկ Երեմիա հասեալ ի ՌՃԽԹ [1700] թիւն՝ վախճանի:

1702 26 *ՂԲ. Տէր Եսայի Գանձասարցի՝ Քուլաթաղեցի ևս կոչի. սա նստաւ յաթոռ ի թուին ՌՃՄԱ (1702), առանց գիտութեան կաթուղիկոսի Հայոց. զոր կոչեալ առ ինքն Նահապետ կաթուղիկոս՝ խրատէ և անդրէն կոնդակաւ հանդերձ դարձուցանէ յաթոռ իւր: Սա հոգ տարեալ ետ նորոգել զարձանագրութիւնս ինչ ինչ եկեղեցեաց, մենաստանաց եղելոց ի սահմանսն անդ վիճակին իւրոյ ի թուին ՌՃԿԷ (1718) և վախճանեցաւ ի թուին ՌՃՀԷ (1728), ըստ ցուցանելոյ տապանագրի նորին. զայս թուական երկու ամաւ պակաս դնէ Սիմէոն կաթուղիկոս Երևանցի:*

1706 57 *ՂԳ. Տէր Ներսէս Ե, յազգականաց Սիմէոնի Գ, օծանի հակառակ Եսայեայ ի ՌՃԾԵ թուին, յամի 1706: Ըստ բողոքելոյ ժողովրդոցն կոչէ զերկոսեան ևս առ ինքն Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոս Հայոց ի թուին ՌՃԾԶ և քննեալ ի մէջ երկոցունցն գտանէ զՆերսէս պարտաւոր, զոր լուծանէ ի կարգէն և արձակէ: Յոչ դադարելն նորա ի յարուցանելոյ զվէճս, վերստին կոնդակաւ բանադրէ զնա նոյն Աղէքսանդր կաթուղիկոս ի յՋորդ ամին. զկնի վախճանի Եսայեայ այնու կապանօք բանադրանացն յանզղջութեան վարէ զիշխանութիւնն կաթուղիկոսական. և հուսկ ուրեմն արձակի ի կապանաց անտի ի Ղազար կաթուղիկոսէ Ջահկեցւոյ. և կացեալ այլ ևս ամս՝ վախճանեցաւ ի թուին ՌՄԺԲ (1763):*

1763 *ՂԴ. Տէր Իսրայէլ թոռն եղբօր Ներսէսի Գ. սա ամսօք ինչ յառաջ նախքան զվախճան նորին Ներսէսի օծանի կամակցութեամբ նորին ի կաթուղիկոս ի թուին ՌՄԺԲ [1763]. և ամենևին անլուր եղեալ բանից Սիմէոն կաթու-*

ղիկոսի Երևանցւոյ և ոչ գնացեալ յԱթոռ Էջմիածնի ի կոչ նորա առ ի տնօրէնութիւն երկպառակութեան ժողովրդոցն Աղուանից, որ ի պատճառս կաթուղիկոսաց նոցին, լուծանի ի կաթուղիկոսական պատւոյն ի ՌՄԺԴ [1765] թուին և կացեալ այնպէս՝ վախճանի:

1763 23 *ՂԵ. Տէր Յովհաննէս Ժ Գանձասարցի. սա ևս կամակցութեամբ միւս բաժնի ժողովրդեանն օծանի կաթուղիկոս առանց հաւանութեան, մանաւանդ ընդդէմ հրատարակեալ կամաց Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ, այլ յապստամբիլ Իսրայէլի և յանկանել ի պատւոյն՝ հաստատի ինքն յաթոռ կաթուղիկոսութեան՝ ընկալեալ զկոնդակն ի Սիմէոն կաթուղիկոսէ աստ ի տաճարի Էջմիածնի ի ՌՄԺԴ [1765] թուին և ի 25 դեկտեմբերի. և ապա այնպէս կացեալ յիշխանութեան իւրում՝ վախճանի ի թուին ՌՄԼԵ [1786], ըստ տապանագրի շիրմի նորին:*

1794 16 *ՂԶ. Տէր Սիմէոն Ե Խոտրաշինեցի՝ եղբայր վերոյիշեալ Իսրայէլի՝ ձեռնադրեցաւ ի կաթուղիկոսութիւն յամի 1794 և վախճանեցաւ ի 1810:*

1794 34 *ՂԷ. Տէր Սարգիս Բ Գանձասարցի, եղբայր Յովհաննու Ժ, ձեռնտուութեամբ Ջաւատ խանին և մէլիք Մէջլումայ հայազգի իշխանին ձեռնադրեցաւ կաթուղիկոս ի Գանձակ՝ յէլիզավէտպոլ ի թուին ՌՄԽԴ [1795], դեկտեմբերի. և ապա զկնի քանի աւուրց գրէ թուղթ առ Ղուկաս կաթուղիկոս Հայոց հանդերձ յայտարարական գրովք ժողովրդեանն սուտ համբաւով թէ Իսրայէլ կաթուղիկոսն վախճանեցաւ և վասն այնորիկ ես ձեռնադրեցայ՝ զի մի՛ դարձեալ երկպառակութիւն ծագեսցէ ի մէջ հասարակութեան ժողովրդոց վիճակիս Աղուանից և այլն: Կացեալ սորա մինչև ցամն 1815 իշխանութեամբ կաթուղիկոսութեան, ապա ի նոյն ամի հոգևոր իշխանութեամբ Աթոռոյ Էջմիածնի ըստ ձեռնտուութեան աշխարհական իշխանութեան օրհնաբանեալ տէրութեանն Ռուսաց վեր առաւ պատիւ և կոչումն կաթուղիկոսական և տուաւ միևնոյն անձին փոխան այնր կոչման պատիւն մետրապոլտութեան յարքեպիսկոպոսական պաշտաման. և կացեալ այնու վերտառութեամբ՝ վախճանեցաւ յամի 1828:*

Արձանագրութիւնք ինչ ինչ մենաստանաց, եկեղեցեաց եղելոց արտաքոյ այժմեան նահանգիս Երևանայ, զորս ոմանք ընթերցասէր անձինք հանդիպեալք ի տեղւոջն առեալ էին ի գիր ըստ օրինակացս այսց:

591. Արձանագիր երկրորդ շինութեան հրաշալի տաճարի վանիցն սրբոյն Յովհաննու Կարապետի, որ ի Բագրևանդ գաւառի, կոչեցեալ այժմ Իւչքիլիսէ՝ այն է Երեք խորան.

«Թիւ Հայոց ՉԳ քսան և մի ամսոյն (ամին) աստուածապահ Երակղի թագաւորի, հրոտից ամսոյ վեց, և վեց հարիւր երեսուն և չորս ամի Տեառն վերստին տեղիքն խորանաց Երից հաճոյիւքն Աստուծոյ հիմնարկին սրբոյ եկեղեցւոյս և ի քսան և վեց ամի նոյն Երակղի թագաւորի, յամսեանն նաւասարդի քսան և ութն եղև կատարումն նոյն գործոյս տեղւոյս. սա չէն եկաւ ամենայն իրօք վարդապետութեամբ Իսրայէլի Գո ո Աղջնցւոյ»:

592. Արձանագրութիւն վանաց Թադէոսի առաքելոյ, որ յԱրտազ գաւառի, հանեալ ի յիշատակարանէ գրոց ինչ. ընդ որ շարակարգեալ էին և զվեշտասան եպիսկոպոսունս՝ առաջնորդս այնր վանաց.

«Այս տաճար լուսակիր և երկնանման առ կայացեալ հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրմի սուրբ առաքելոյն Թադէոսի, որ ըստ բազմատեսակ յանձանաց մեր զկործանումն էառ ի շարժէ. իսկ ես նուաստ սպասաւոր նմին Զաքարիա եպիսկոպոս, որդի պարոն Մանուէլին, կարողութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան զառաջինն ի ժամանակի սաստիկ նեղութեան և հալածանաց քրիստոնէից, որ և բազում եկեղեցիք քակտին. վասն որոյ արձանագրեցաք զյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին այն և անարիւն զենման գառին Աստուծոյ հանդերձ ծնողօք և զարմիւք և զաջորդն մեր զտէր Տիրացուն. այլև զհարազատ եղբայր մեր զՊետրոս և զՍարգիս, որք ըստ կարութեան նպաստաւորք եղեն ընչիւք. կատարումն թվին ՉՀԸ (1329)»:

ԱՌԱՋՆՈՐԴՔ ՎԱՆԱՅՍ

1. Զաքարիա եպիսկոպոս Բեստացի՝ որ եղև և կաթուղիկոս և ասաց բազում ճառս և վախճանեցաւ ի Ստամպոլ:

2. Յովհաննէս եպիսկոպոս զկնի նորա:

3. Յակոբ վարդապետ յետ նորա:
4. Պետրոս վարդապետ:
5. Ներսէս եպիսկոպոս:
6. Սրապիոն եպիսկոպոս:
7. Գրիգոր եպիսկոպոս:
8. Վրթանէս եպիսկոպոս:
9. Պետրոս եպիսկոպոս Քօսեցի:
10. Դանիէլ վարդապետ:
11. Մկրտիչ եպիսկոպոս:
12. Սրապիոն եպիսկոպոս փոքր:
13. Թադէոս եպիսկոպոս:
14. Թադէոս եպիսկոպոս միւս՝ Արայիշենց:
15. Բարսեղ եպիսկոպոս Բեստենց:
16. Մկրտիչ եպիսկոպոս, որ նորոգեաց զեկեղեցի սուրբ առաքելոյն ի հիմանէ և շինեաց զդարպասն և զմատուռն ի տեղի նահատակութեան առաքելոյն և սրբուհւոյն Սանդխտոյ կուսի, որոյ ձեռնտու և գործակալք էին տէր Դանիէլ և տէր Պետրոս բազում աշխատութեամբ. ի թուականիս Հայոց ՌՃ (1651), հրամանաւ երիցս երանեալ և ճգնազգեաց Փիլիպպոս կաթուղիկոսին»:

593. Արձանագիր Հոռոմոսի վանից (Ղօշավանք), որ գտանի ի վերայ արևմտեան մեծ դրան մեծի գաւթին.

«Ի ՆՁԷ (1038) թվականիս Հայոց ետու ես Յովհաննէս շահանշահ, որդի Գագկայ շահանշահի, զիմ այգին՝ որ ի Կողբ, յիմ եկեղեցին ի սուրբ Յօհաննէս, զոր շինեցի ի վանս Հոռոմոսի հանդերձ ժամատամբս. և հարիւր բեռն աղ. յամենայն ամի ազատ յամենայն չարէ. ի հայրապետութեան տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսին և յառաջնորդութեան ուխտիս հօր Յօհաննէսի: Արդ, եթէ ոք զկնի մեր հակառակի այսմ գրոյս և իմ պարգևացս, պարտական եղիցի մեղաց իմոց առաջի Աստուծոյ և երեք հարիւր տասն և ութն հայրապետացն, որ ի Նիկիայ՝ նզովեալ եղիցի ի կեանս և ի մահ. իսկ որ հաստատուն պահեն զգիր արձանի ընծայիցս, օրհնեսցին ի Քրիստոսէ»:

Արձանագիր ի վերայ կամարի հարաւակողման ի մէջ վերոյիշեալ ժամատան նոյն Հոռոմոսի վանաց.

«Ի ՈԾ (1201) թուիս, ի տէրութեան երկրիս Զաքարիայի ես Տիգրան ծառայ Աստուծոյ և հաւատարիմ պարոնին Զաքարիայի միա-

բանեցայ սուրբ ուխտիս և ետու զիմ զջաղացն, որ ի կորդոյ շինեալ էի ի Գլիձորին, հիմնակից է ներքին դիհն Գօնիջանենց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց: Եւ միաբանք սուրբ ուխտիս խոստացան յիշել զմեզ ի պատարագն ԲԺ յամենայն ամի ի տօնի սուրբ մարգարէի Երեմիայի անխափան մինչև ի ծագումն որդւոյն Աստուծոյ. կատարողք գրոյս օրհնեսցին յԱստուծոյ»:

Արձանագիր նշխարատան ի հիւսիսակողմն դրան նոյն Հոռոմոսի վանաց.

«Շնորհիւն Քրիստոսի, ես՝ Վաչէս, որդի Սարգսի և ամուսինն իմ Մամախաթուն՝ դուստր Ապուսէրհին, շինեցաք զնշխարատունս ի վանս Հոռոմոսի յառաջնորդութեան տեառն Բարսղի արհի եպիսկոպոսի՝ որդւոյ Ամուր Երկաթայ և տուաք ընծայ զմեր գանձագին այգին ի յիշել զմեզ: Թիւ ՈՂ (1241)»:

Արձանագիր շինութեան Սուրբ Գէորգայ անապատի հրաշալի տաճարին որ ի ձորն հիւսիսակողման վանացն Հոռոմոսի, գրեալ յարևելակողմն եկեղեցւոյն արտաքուստ.

«Թիւ ՆԿԱ (1012). ով հռչակաւոր դու մեծ անուանիդ ի վկայս սուրբ Գէորգէոս, աւգնեա բարեխաւսութեամբ Գագկայ շահանշահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ. ի քոյդ բարեխօսութիւն յուսագնեալ զի ընկալցի զողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ յանվախճան արքայութեան՝ ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաւք հասանիլ լուսոյ փառաց որդւոյն Աստուծոյ, ի վերջնում դիշերին ի ծագիլ մեծի և աներեկ առաւօտին այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմի անաչառ դատաւորին՝ աղաչեմք»:

594. Արձանագիր կաթուղիկէ եկեղեցւոյ մեծի քաղաքին Անւոյ՝ առընթեր որոյ էր և կաթուղիկոսարան.

«Ի ՆԾ (1001) թուոջս Հայոց[1]*, ի ժամանակս մեծապատիւ*[2] *և հոգևոր տեառն Սարգսի Հայոց կաթուղիկոսի և ի մեծափառ թագաւորութեան Գագկայ Հայոց և Վրաց շահանշահի, ես՝ Կատրանդիէ*[3] *(Կատրամիտէ) Հայոց թագուհի, դուստր Վասակայ Սիւնեաց թագաւորի, յողորմութիւնն Աստուծոյ ապաւինեցայ և հրամանաւ առն*

---

1 [ԴՀՎ-ում (հտ. Ա, էջ 35)՝ «**Ի ՆԾ թ[ուին], ՄԺԹ թ[ուին] Հոռոմոց**»]:
2 [ԴՀՎ-ում՝ **աստուածապատիւ**]:
3 [ԴՀՎ-ում՝ **Կատրանիդէ**]:

իմոյ Գագկայ շահանշահի շինեցի զսուրբ կաթուղիկէս, զոր հիմ-նադրեալ էր մեծի Սմբատայ և կանգնեցաք տուն Աստուծոյ նորոգ և կենդանի ծնունդ հոգևոր և արձան մշտնջենաւոր. զարդարեցի և զարդուք պատուականօք նուէրք ինձ ի Քրիստոս և զարմից իմոց և որդւոցս՝ Սմբատայ, Աբասայ և Աշոտոյ»:

Կից սմին գրեալ և այս ինչ.

«Հրամայեալ եմ ես տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցւոյս, յետ ելից բարեպաշտ թագուհւոյս յիշել ի սուրբ պատարագսն, որ ի յիս-նեկին վարդավառի անխափան մինչև ի գալուստն Քրիստոսի. և արդ՝ որ ընդ արձանագիրս փոյթ կալեալ անձին կատարէ, վարձատ-րեսցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, ամէն»[1]*:*

595. Արձանագիր տաճարի վանացն Ստաքէի առաքելոյն՝ որ ի գիւղն Տաթև ի Բաղք գաւառի Սիւնեաց, գրեալ ի վերայ հարաւային սեանն.

«Այս գիր յիշատակի և արձան անջնջելի է իմ Տարսայիճիս իշ-խանաց իշխանի, որդւոյ մեծին Լիպարտի՝ եղբօր Սմբատայ մեծ իշ-խանի կողմնակալին այսմ նահանգի, որ իշխող է այսմ գաւառաց. ի դրանէն Բարկուշատայ մինչև ցսահմանն Բջնւոյ. միաբանեցայ Տաթևու սուրբ առաքելոցս և տուի զիմ հոգւոյ մասնն ի յիմ սեփ-հական ուխտս ի սուրբ եկեղեցիս գիւղս չորս՝ զոր լուեալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին. ի Շնհէր իւր սահմա-նովն լերամբ և դաշտիւ. զԽոտն աւան սահմանօք իւրովք լերամբ և դաշտիւ և ի Խոտագետ զմեր ձեռնատունկ այգին, և զՅուր իւր սահմանովն լերամբ և դաշտիւ և զՀաժիս իւր սահմանովն նմանա-պէս, զորոյ զկէսն գանձագին էի արարեալ և ի բորտի զՔէթէվանսն, իւրովք սահմանովք: Եւ եպիսկոպոսք տեղւոյս տէր Հայրապետ և տէր Սողոմոն հաստատեցին մեզ յիշատակ և կարգեցին և պատարագ վասն մեր յամենայն ամի մին քառասունք զԺ Յայտնութեանն, զԺ Զատկին, զԺ Աստուածածնին և զԺ աւագ տօներուն, զի օրն ինձ Տարսայիճիս և զի օրն իմ եղբօրն Սմբատայ: Արդ, որ յետ մեր կամ ի մերայնոց, կամ յօտարաց կամ յիշխանաց և կամ ի մերձաւորաց այս հաստատ պայմանիս և անքակ վճռիս խափանել ջանայ կամ զայն

[1] [ԴՀՎ-ում՝ Հրամաեալ եմ ես տէր Սարգիս սպասաւորաց եկեղէցոյս, յետ էլից բարէպաշտ թագուհոյս զվարդավարին յիսնեակսն միով քառասնիւ կատարել անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Եթէ ոք զարձանագրեալդ անփոյթ առնէ դատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ: Ի վեց ՌՆԼ եւ Գ ամացն Ադամա ՌԲԺ ամի մարմանալո Աստուած[աւ]ն բանի ՉԸԺ ամի հաւատալո ի Քրիստոս Հայոց: Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ: Բենէ]:

գիւղօրայքն կամ զայգին յայս եկեղեցւոյս հանել խորհի, բաժին ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն առցէ և զԿայենին և զամենայն չարագործացն առցէ զպատիժս և յերից սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի. և եթէ տաճիկ աւագութիւն փոխի և յափշտակել ջանայ՝ յԱստուծոյ և յիւր փեյղամբարէն ապիգար եղիցի և ընդ սատանայի ի դժոխս իջցէ և տամբ և զաւակօք ջնջեալ և բարձեալ եղիցի և իւր հալալն մնայ հարամ և Ռ [1000] Ռ [1000] Ռ [1000] նալաթ եղիցի: Այս եղև ի թուին Հայոց ՉԻԳ (1274), յամսեանն նոյեմբերի ԺԳ [13]. և են վկայք այսմ վճռիս՝ տէր Սարգիս արքեպիսկոպոսն Նորավանից և Սարգիս եպիսկոպոսն փակակալ սուրբ եկեղեցւոյս. և յիմ ազատաց՝ Հասան Կարապետայ որդի, Որոտ Շատլորայ թոռն, Միրանուէրայ որդին. հաստատ է կամաւն Աստուծոյ. Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիս. յուսովն Աստուծոյ ես Տարսայիճ իմ ձեռագրովս հաստատեցի զընծայքս:

Արդ, որ յետ իմ կամ յիմ զաւակաց և թոռանց և կամ յայլ իշխողաց զմեր հոգիս զրկել խորհի և զմեր յոյսն խափանել և զմեր սահմանեալս քակել ջանայ՝ ՅՃԺԸ [318] հայրապետացն նզովեալ եղիցի ի մահ և ի կեանք և կտրեալ և ջնջեալ լիցի յայս կենացս և ի հանդերձելումն, ամէն, եղիցի, եղիցի»:

596. Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից՝ զորս ժողովեաց յեկեղեցեաց և ի խաչարձանաց Եսայի կաթուղիկոս նոցին Աղուանից ի թուականութեանն Հայոց ՌԵԿԷ (1718) ի մի տետր. յորոյ գրուածոց առեալ մեր դիցուք աստէն ի տեղեկութիւն հայրենի հնութեանց:

597. Արձանագիր շինութեան եկեղեցւոյ հանգստարանի վանաց Դաթէի առաքելոյն, որ կոչի Խութայ վանք.

«Շնորհիւ ամենակարողին Աստուծոյ և միածնի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի և պարգևօք ամենասուրբ Հոգւոյն, ես՝ Արզուխաթուն նուաստ աղախին Քրիստոսի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին և ամուսին Վախտանկա թագաւորազնոյ տեառն Հաթերքոյ և ամենայն վերին Խաչենոյ, յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթուղիկէս ի տեղւոջ հանգստարանի առն իմոյ և զաւակաց իմոց՝ Հասանայ անդրանկին իմոյ և Գրիգորի, որ ի Տէրն կէսօրեայ վախճանելոց. զի վասն մեղաց խրատեաց զիս Աստուած և եբարձ ի գլխոյ իմոյ զերկոսեան պսակն վայելուչս, զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս և զկնի երից ամսոց զկրտսեր որդին իմ զԳրիգոր ի Տէրն կոչե-

ցեալ զպարտ բնութեանս հատուցանելով և վճարեաց ի կենցաղոյս և փոխեցաւ առ Քրիստոս՝ սուգ անմխիթար թողլով թշուառացելոյ մօրս իւրեանց: Այլ զի ի կենդանութեան իւրեանց յոյս ի մտի եդեալ նոցա չինել եկեղեցի յայսմ տեղւոջ և ո՛չ ժամանեցին վասն արա-գահաս լինելոյ ի վերայ նոցա մահուն և ինձ աւանդեցին անդարձիւ կատարել զփափագ սրտից նոցա. և իմ յանձն առեալ մեծ յուսով և շատ աշխատութեամբ չինեցի զքաւարանս ի փրկութիւն հոգւոց նոցա և իմս դստերաց և ամենայն զարմից: Արդ՝ աղերսիւ հայցեմ, որք երկրպագէք սրբոյ խորանիս յիշել յաղօթս ձեր զվերոյգրեալս ի սմա: Կատարեցաւ ի թուականութեանս Հայոց ՈԿԳ (1214), ի փառս Աստուծոյ[1]*»:*

Արձանագիր խաչվիմին եղելոյ ի նոյն Խուբայ վանսն՝ գրեալ յերկուս կողմանսն ևս.

«Անուն Աստուծոյ, ես՝ տէր Գրիգորէս տղայութեամբ եկի ի դուռն եկեղեցւոյս, շատ աշխատանք արարի, իշխանութիւն շահ Թահմազին էր. զվանքս տուին տըհուլ. ես ղաբուլ չարարի. գնացի նոր չէնն չինեցի երեք ջաղաց, երեք բաղճայ և եկի ի դուռն Սուրբ Առաքելոյն, չինեցի զԽութ, որ եկեղեցւոյս մալն քաշէ՝ զբաղուբաղ-ջէս և զջրաղացներս և այլ ամենայն աշխատանքս եկեղեցւոյս վախմ տուի: Արդ՝ ով որ այս գեղերանքերս և զիմ վախմերս հանել ջանայ ի Սուրբ Առաքելոյս, երեք հարիւր տասն և ութ հայրապետացն նզո-ված է. մասն և բաժին ընդ Յուդայի և Կայենի և խաչահանուացն առցէ և մեր մեղացս տէր է. և ո՛վ որ չէն պահէ և զմեզ յիշէ՝ վարձս ի Քրիստոսէ առցէ, ամէն: Թուին ՌԷ (1558)»[2]*:*

Կից վերոյգրեալ մեծի արձանին գրեալ կայր և այս ինչ.

«Եւ ի նորոգութիւն սուրբ ուխտիս և սահմանք ժառանգութեան սրբոյ եկեղեցւոյս գեղս և ագարակս իւրեանց սահմանօք զԱպա-հէն, զԵզնարածանց, զԲչանց, զԿանաչաւորն, որ ի Վայոյ ձոր և Բ տունս Արփայ՝ հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերոյգրելոցս՝ կատարի անխափան.

[1] [ԴՀՎ-ում (Ե, էջ 199) այնուհետև շարունակվում է՝ **եւ ի նորոգութիւն սուրբ ուխտիս. Եւ սահմանեցաք ժառանկութիւն եկեղեցոյս գեւղս եւ ագարակս իւրեանց սահմանաւքն, զԱպահէն եւ զԵզնարածանց եւ զԲճանց եւ զԿանաչաւորն որ ի Վայոյ ձոր, եւ երկու տուն յԱրփա. Եւ հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի զպատարագն յանուն վերագրելոցս կատարել անխափան. Եթե ոք այսմ վճռի հաստատնտ խափանումս առնէ՝ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղոյս կամ ո ոք եւ իցէ խափանեսցի յոյս նորա որ առ Քրիստոս եւ դատա-պարտեսցի յԱստուծոյ**]:

[2] [Տես նաև ԴՀՎ, Ե, էջ 215]

եթէ ոք այսմ վճռի հաստատնոյ խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղւոյս, կամ ո՛ ոք իցէ, խափանեսցի յոյս նորա՝ որ առ Քրիստոս և դատապարտեսցի յԱստուծոյ»:

ՈՐԴԻՔ ԵՒ ԹՈՌՈՒՆՔ ԴՈՓԱՅ ԵՒ ՎԱԽՄ ՆՈՅԱ

«Դոփ բարեպաշտուհի դուստր Սարգսի իշխանաց իշխանին. սա ունէր ամուսին իւր զբարեպաշտ իշխանն զ Ղարա Գրիգորն և որդի սոցա քաջ և յաղթող զօրավարն և մեծ իշխանն Հասան տէր Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շաղվաքու և այլ բազում գաւառաց. և քան զամենայն առաւել սիրէր զգեօղն Ծար, հայրենից և պարգևք քաջութեան, որ են զինք արեան տուեալ աշխարհակալացն Հայոց: Սա ունէր զկին Մամքան դուստր Քրդին. և որդի սոցա զբարի Գրիգորն և ամուսինն իւր Ասփայ դուստր կոմսի Տարսայիճին իշխեցողի կողմանն Սիւնեաց. և սա բազում ընչիւք և ծախիւք փարթամացոյց զսուրբ ուխտն զ Դադի վանս և զԽաթրի վանս, զի չինեաց զտաճարսն, որ է դարպասներն և այլ բազում արդիւնս արար. և միւս որդին տէր Յովհաննէսն, որ չինեաց զսուրբ ուխտն Գետամէջ և որդի Գրիգորին Վահրամն, որդի սորա Սարգիսն, զոր բազում արդիւնս արարեալ՝ և մի ի բազմացն այս է՝ զգեղեցիկ զանգակնին ի Դատի վանս, ի Խաթրի վանս, ի Գատամէջ, ի գեօղաքաղաքն Ծար և է մինչև ցայսօր: Որդի սորա Հասանն. և այս Հասանէս բաժանին Դոփայ ցեղն, որք են այսոքիկ. Շահանշէն Ուլուբէկանց պապ, Աղբուղէն՝ Այտինեցւոց պապ, Ջհանշէն՝ Ջհանշեցւոց պապ. և որդի Հասանայ Աղբուղէն և որդի սորա Տուրսունն և որդի սորա Այտինն և ի ժամանակի սորա ի զօրանալ իսմայելացւոցն և ի նուազիլ տանս Հայոց, ցիր և ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին. գնաց պարոն Այտինն ի դիւան և երեք ամ աշխատեաց և բազում ինչ տուեալ ազատեաց ի ձեռաց այլազգեացն զվանորայքս և զչինարէնքն, զոր Տէրն ամենայնի տացէ զվարձս վաստակոց իւրոց»:

«Կամաւն ամենակալին Աստուծոյ և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այս մեր գիր է իշխանական հրամանի.

Ես՝ Տուրսունս, Սէյտիս, Պռօշս, Գրիգորս, Հասանս և եղբարքս և որդիքս մեր զայս հաստատ սիկիլս տուաք տէր Աւագ[1] եպիսկո-

[1] [ԴՀՎ-ում (Ե, էջ 216) չիք **Աւագ**]:

պոսին և իւր եղբայր Մանուէլ[1] *աբեղային, որ մեր հայրենի աթոռն զ Դաղի վանս, զԽաթրի վանս, զ Գետամէջն, որ մեր գերեզմանատուն է ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար. զի վանորայքս մարդ չկար՝ որ յառաջն կայր և չէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր. յայս պատճառէս երես դրաք և զայս սուրբ աթոռնին ի նոքա ապսպարեցաք, և զերկու իշխանութիւնն, որ է եպիսկոպոսութիւնն և պարոնութիւնն էլ հէնց ի նոսա յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթուղիկոսն մեծ տէր Զաքարիային, տէր Աթանասին և տէր Սարգսին էր տուեալ զ Դաղի վանս, զԽաթրի վանս, զՀաղբատ իւր վիճակաւն, նոյնպէս և այս հոգևոր տէր Գրիգոր կաթուղիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթիւ»:*

«Կամաւն ամենակալին Աստուծոյ, ես՝ Սէյտիս որդի պարոն Շանչին, թոռն պարոն Հասանայ. ես Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս, որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ. ես՝ Այտինս, որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին. ես՝ Շանչանս, որդի Հասանայ, թոռն պարոն Ճահանչին, մեք չորս եղբարքս տուաք մեր վանորէիցս Ապահէն, զԽութ, զԽոզենակս իւր չորս սահմանովն, ի Զափարէն հանդէն Զագունանց Ագարակ գեղովն, Բռնչի աղբիւրովն, Թաղանանց[2] *գետովն, Պետրոսապակ, որ մեր պապերն տուեալ են, զՍոխանանց զԾովատեղն, Ջաջոռանց, Զօլբէկանց, զՅրտնոտն, յՇիռմանանց, զ Գրիգորաթաղս, զ Դատի վանս իւր Քօլատակերովն, զՀերանանց Հակառակաբերդովն, զ Նաւի աղբիւրովն, Բերդաքարովն, Կռապաշտուցովն, Ողնովն, Խոզենակուց մեծ այգին՝ Մանանա ձորովն, Ծաղիկանց, Եզնարածանց տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճոճաւոր էր, քանի որ իւր պէտքն է՝ վարէ Աստուծով ազատ է. իսկ թէ այլ մարդ վարէ (հերկէ) տասանորդն առնու և տայ վանքին անպատճառ. այս եղև մեր ուխտ առաջի Աստուծոյ և սուրբ Դաղի առաքելոյս: Արդ՝ ո՛վ ոք զկնի մեր այս վախմիաթերս այլայլէ կամ խլէ՝ թէ յորդւոց և թոռանց մերոց և յազգայնոց իցէ, առաջի Աստուծոյ պարտական և սևերես լինի, ՅԺԸ [318] հայրապետաց նզոված է, Կայենի և Յուդայի դասակից. իսկ թէ այլազգեաց կամ թուրքաց իցէ՝ իւր հալալն հարամ լինի և իւր փէղամբարէն ապիզար լիցի, ամէն»:*

---

1 [ԴՀՎ-ում՝ **Մանուէ**]:

2 [ԴՀՎ-ում (Ե, էջ 216) **Թաշանանց**]:

«Աւգնականութեամբն Աստուծոյ ես՝ Մամքան, ամուսին արիա-կանին Հասանայ և որդիս մեր տէր Գրիգոր տեարք գոլով տեղւոյս հայրենօք, որ և մեր պարոնայքն հաստատեալ էին և մեք տուաք ի սուրբ ուխտս զծովատեղն, զՃաճառանց, զՁօլպէկանց: Ես՝ Գրի-գոր, տուի զԾագունանց հողերն զմեր բաժինն իւր չորեցովն որդին իմ ի տէր Սարգիսն. ո՛վ ոք հանէ սուրբ ուխտէս, դատի Աստուծոյ: ՁԺԶ (1267)[1]: Եւ միաբանքս սահմանեցին սուրբ Ստեփաննոսի տօ-նին ժամն, որ լինի մօրն իմ և ամուսնոյն իմոյ Ասփին. թէ ոք զժամն խափանէ կամ ընծայն՝ դատի Աստուծոյ: Այլև Մոխրապակս մեր բա-ժինն ևս տուաք ի սուրբ ուխտս, ՁԿԱ (1312) թուին»:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Սմբատ իշխանս որդի մեծին Լպարտին, միաբանեցայ սուրբ ուխտիս Դադի վանացս առաջնորդութեամբ տէր Աթանէսին և գնեցի զԽռանտաշանց[2] այգին և Եղեգիս իմ գնած ձիթահանքն և այլ արդիւնք ըստ կարի և զԿանանչաւոր գեղն և այլ, որ հաստատեցի ամէն խարճովն անչար եւ ետու սուրբ կաթուղիկէս: Տէր Աթանասն և այլ միաբանքս սահմանեցին մեզ Զատկին յարու-թեան կիրակի օրն զամէն եկեղեցիքս մեզ ժամ: Արդ՝ ով խլէ զմեր տուածն կամ զժամն խափանէ, ՅԺԸ հայրապետացն նզոված եղիցի. թուին ՁԺԴ (1265)»:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Վախտանկ որդի Սմբատայ, ծառայ Յի-սուսի, և ամուսին իմ Նանայ աղախին Քրիստոսի, միաբանեցաք Դատի վանացս և տուաք ի հայրենեաց մերոց զՁիչայձորին[3] բերդէն մինչ ի[4] յայգին Խոզենակս, զՄանանայս[5]: Արդ՝ և մեծածախ մասամբ խաչ մի մեծաւ յուսով և ընակիչքս տէր Գրիգորիս և միաբանքս սահմանեցին մեզ Բ [2] օր ժամ զամէն եկեղեցիքս զտօնն Յօհաննու՝ Նանային. և տօնն Վարդանանց՝ Վախտանկայ: Արդ՝ ո՛վ ոք զընծայս և հայրենիքս հանէ ի սուրբ վանիցս և կամ զժամն խափանէ, ՅԺԸ [318] հայրապետաց նզոված է և մեր մեղացն տէր է[6]»:

---

1 [ԴՀՎ-ում (Ե, էջ 206)՝ **ՉԾԶ**: Նույն արձանագրության մեջ **ՁԸՆԾԱՆ** բառի **Ծ**-ն գրված է բոլորովին այլ կերպ և այստեղ ավելի ճիշտ կլինի կարդալ ՉԺԶ, ինչես արել է Շահխաթունյանցը]:

2 [ԴՀՎ-ում (Ե, էջ 206)՝ **զԽունտաշանց**: Սակայն արձանագրության մեջ ու-ն ամենուր գրված է երկու տառով՝ ո և ւ: Իսկ վերևում **առաջնորդութեամբ**-ի ռ-ն շատ նման է այստեղի ռ-ին և հրատարակչի **ու** ընթերցվածը հիմնավորված չէ]:

3 [ԴՀՎ-ում (Ե, էջ 202)՝ **զՇեչաչորեցն**]:

4 [ԴՀՎ-ում չիք **բերդէն մինչ ի**]:

5 [ԴՀՎ-ում չիք **զՄանանայս**]:

6 [ԴՀՎ-ում այս նախադասությունը տարբեր է՝ **Ով խափանէ զժամն կամ խլէ զմեր տուածս մեր եւ մեր ազգի մեղաց տէր է. ի թուին ՈՂ (1241) էր**]:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Հասան որդի Վախտանկայ, տէր Հաթերքու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հաւքախաղացին կացի յաւագութեան ամս Խ. շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց օգնութեամբն Աստուծոյ, և եղեն ինձ վեց որդի, զբերդերս և զգաւառս ետու նոցա և ես եկի ի վանքս մօտ իմ եղբայր պարոնտէր Գրիգորէս և եղէ կրօնաւոր և բերի զխաչաքարս ի յԱգուայ շատ աշխատութեամբ և բազում հնարիւք և կանգնեցի սուրբ նշան հոգւոյ իմոյ: Արդ՝ վասն ձեր հոգւոյդ որք ընթեռնոյք՝ զիս յաղօթս յիշեցէք. ՈՂԱ (1182) թուիս»:

«Ես Մամայ թագուհի, ամուսին Հասանայ, դուստր Կուրիկայ թագաւորին, կացաք յաւագութեան ամս Լ [30]. ես և այր իմ. և թողեալ[1] *զհայրենիքս որդւոց մերոց եկաք ի վանքս մօտ տէր Գրիգորիս և որդին մեր համանուն նորին, և զգեցաք զձև միանձանց. և կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ. որք երկրպագէք՝ յաղօթս յիշեցէք. ՈՂԱ [1182] թուիս»:*

598. Խաթրայ վանուց արձանն է.

«Շնորհիւն Քրիստոսի, ես՝ Ասփէ, դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճին, թագազարմ մօրն իմոյ Մինա–Խաթունին՝ նպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի ի շինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս՝ կամեցաւ ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննէսի, զիմ յարդար ընչից կանգնեցի բեմբ սեղան ի զենմանն Քրիստոսի, զի ամենայն կիրակէ և շաբաթ տօն ծննդեան և Տեառնընդառաջին, Զատկին, Վարդավառին, Աստուածածնին և Սուրբ Խաչին ինձ կատարի պատարագ զամէն եկեղեցիքս. որ և տուի զմեր խաս հողն բլրի հանդի զնենեկպան. Ա բահի ջուր: Թէ ոք ի մերոց կամ յօտարաց զայս՝ այս եկեղեցւոյս հանէ կամ զպատարագն խափանէ, ի փառաց որդւոյն Աստուծոյ որոշեալ եղիցի»[2]*:*

«Այս ձախակողմ խորանի սուրբ Պռօկոպիոս է, զմեծ տէր Յովհաննէս շինող եկեղեցւոյս որդին Դօփին՝ եղբայր մեծ իշխանին Հասանայ յաղօթս յիշեցէ՛ք. ձախակողման սուրբ Մինաս, զՄինայ–Խա-

---

[1] [ԴՀՎ-ում (Ե, էջ 215)՝ **ես և այրն իմ թողեալ**: Հրատարակիչը նշում է՝ «Առնում ենք Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրությունից»: Եսայի կաթողիկոսի ինքնագիրը մեզ չի հասել: Նրա ընդօրինակություններն օգտագործել և հրատարակել է Շահխաթունյանցն իր իսկ կատարած ընդօրինակությունից: Ցավոք սրտի ԴՀՎ-ում չի նշվում թէ իրենց համար հիմք է հանդիսացել Շահխաթունյանցի հրատարակությունը, թէ՞ Մատենադարանի ձեռագրերից մեկը: Եթէ ձեռագիրը, ապա ո՞րը]:

[2] [Տես նաև ԴՀՎ, Ե, էջ 129]:

թուն դուստր մեծ իշխանին Ջալալին և ամուսին Տարսայիճին յաղօթս յիշեցէք»[1]*:*

Վանքի տակի գետամիջի խաչի գիրն է.

«Կամաւն Աստուծոյ ես՝ Ասփայ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինա–Խաթունին և ամուսին հսկայազօր իշխանին Գրիգորի՝ որդւոյ մեծ իշխանին Հասանայ քաջի[2] *տեառն Աղուանից, կապեցի զխաչս, չինեցի զկարմունջս յիշատակ հոգւոց մերոց անցելոց, ներկայի և ապագայի»:*

Ջումի տակի խաչի գիրն է.

«Յորժամ թուականն էր ՈԾ (1201), բարեպաշտ պատրոնիկն Վասակ, թոռն Կիւրիկայ թագաւորին, որդի Հասանայ՝ որդւոյ Սակռայ[3] *տեառն Հաթերքոյ, Հանդաբերդոյ, Հաւքախաղացին, եղբայր Վախտանկայ նորին աթոռակալի եբեր զխաչս և ո՛չ կարաց կանգնել վասն անպարապութեան, քանզի երթեալ եղև ի Գոլաշտեան. և առ զնա յանօրինաց օգնութեամբն Աստուծոյ և բնակեցոյց անդ զորդին իւր և ինքն նահատակեցաւ ի վերայ քրիստոնէից և իջեալ լոյս ի վերայ ի տեսութիւն բազմաց. և յետոյ ՈԾ (1201) թուին կանգնեցին որդիք նորա Խոյտան և Խօչախն*[4] *յիշատակ հոգւոյ նորա և զերկրութիւն կենաց իւրեանց. որ երկրպագէք յաղօթս յիշեցէք»:*

«Ի թուին ՈՀԴ (1225)[5] *ես՝ Դօփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի և Իւանի, չինեցի զգաւիթս*[6] *և մատուռս և տուի Աւետարան և զՅանկաբակուց երկիրն և Հակուռինայ*[7] *զիմ մատաղիս իմ*[8] *հոգւոյս, Աստուածածնին ժամն Գ օր արարէք. ով խափանէ, չունի թողութիւն յԱստուծոյ»:*

599. Ըղերձու Կարմիր Աստուածածին եկեղեցւոյ արձանն է.

«Յուսով ամենակալին Աստուծոյ, ես՝ Տարսայիճս իշխանաց իշխան, որդի մեծին Լիպարտին և ամուսին իմ Մինայ–Խաթուն՝

---

1 [Տես նաև ԴՀՎ, Ե, էջ 128]:

2 [ԴՀՎ-ում (Ե, էջ 130)՝ **աջի**, որ պարզ վրիպակ է]:

3 [ԴՀՎ-ում (Ե, էջ 129-130)՝ **Սակառայ**, թեև աղբյուրը Շահխաթունյանցն է]:

4 [ԴՀՎ-ում՝ **Խույդան և Խօչաղն**]:

5 [ԴՀՎ-ում (Ե, էջ 127) ՈՀԴ-ն նշված է 1226, որ պարզ վրիպակ է և պիտի լինի 1225**]**:

6 [ԴՀՎ-ում՝ **զգաւիթս եկեղեցոյս]**:

7 [ԴՀՎ-ում՝ **Հակուդենայ]**:

8 [ԴՀՎ-ում՝ **Մատաղիսն՝ յեկեղեցիս՝ իմ]**:

դուստր մեծին Ջալալ Դօլին, կողմնակալ յայսմ նահանգի, զոր ետ մեզ Աստուած ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ, շինեցաք Աստուածածինս ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և յերկարութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակի հողն, և ներքի ծաղկոցն ի Շնհէր, ի Տաթևայ լուսագին. և կատարի ի տարին Ժ ժամ՝ Ե Յայտնութեան, Ե՝ Զատկին վասն ինձ Տարսայիճիս և Մինայ–Խաթունին. եթէ ոք ի մերոց կամ յօտարաց խափանեսցէ զսահմանեալս մեր, ՅԺԸ հայրապետաց նզոված է. թուին ՉԻԱ (1272)»:

600. Արձանագիրք Ծարայ վանաց.

«Ի ժամանակին յորում տիրեալ էր ազգն նետողաց բազում աշխարհաց և մինչև յովկիանոս ծովն և Ստամպօլն, ի Պոնտոս և մինչև ցգետն Եփրատէս տիրելով գոռոզաբար և ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան՝ զմեծամեծս և զփոքունս ի մահ և ի գերութիւն մատնելով. յայսմ ժամանակի դառնութեան, որ էաք մեք տէր Յովհաննէս Դոփեանց տրուպ և նուաստ և տկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց գնալ ի մեր հայրապետացն առաջնոց յաթոռն հռչակելին Հախպատ, այլ դարձ արարեալ ի մեր հայրենական և ի ընակ[1] *տունս հարազատ աւագ եղբօր Հասանայ քաջ զօրականին և հռչակաւոր արիացելոյն, որ և որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցւոյ և քահանայից և ամուսինն իւր բարեհամբաւ Ասփայ, դուստր մեծի կոմսի Տարսայիճի իշխեցողի կողմանցն Սիւնեաց. և մեր հայեցեալ ի ծորակս, զի հոսէին ջուրք աստի և անտի և ի միջի նոցա բլրակ մի գեղեցիկ, ես հաճեցայ ընդ սա և մտա անապատս և սկսայ շինել մատուռն մի. և յայսմ խորհրդի եկն Գրիգոր եղբօրորդի մեր և իշխան գաւառիս և այլ շատ կողմանց իշխեցող և կամեցաւ շինել զՍուրբ Աստուածածինս ի բարեխօս մեզ և ամենայն քրիստոնէից. ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինութեան եկեղեցւոյս ի թուին ՉԾ (1301)»:*

Դրան խաչի գիրն է.

«Աստուծով ես Սայտի որդի պարոն Շանշին քաջ և յաղթող զօրավարին և մեծ իշխանաց յազգէն և ի թուին ՊՀԹ (1430) տեղեացս տէր և պարոն փոքր Սիւնեաց Ականոյ և Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ՝ կանգնեցաք զխաչս հօր մերոյ Շանշին. որք երկրպագէք յաղօթս յիշեցէք»:

[1] [ԴՀՎ-ում (Ե, էջ 224)՝ **բնիկ**]:

601. Մարչի Խոտակերաց վանից խաչի գիրն է.

«Կամաւ կարողին Աստուծոյ ես՝ Էաչի, որդի Հասանայ՝ որդւոյ Պռոշայ՝ որդւոյ մեծին Վասակայ յազգէն Յաղբականց տիրեցի հայրենի երկրիս իմոյ Շապունաց և այլ յոլով գաւառաց՝ զօրավիգ և օգնական ունելով զՔրիստոս և զսուրբ նշանս Խոտակերաց, որով և նախնիքն իմ զօրացան. ետու կազմել պահարան սմին անջինջ յիշատակ. որք հանդիպիք սմա զիս և զծնողսն իմ զԱմիր Հասան և զԹաճերն և զհօրեղբայրն իմ զՊապաքն յաղօթս յիշեցէք. այլև զամենայն նախնիսն մեր և զազգատոհմն: Սուրբ նշան տէրունական, դու Էաչոյ լե՛ր օգնական: Թուին ՉԽԹ (1300)»:

Ի սմին արձանագրութեան յիշատակեալ սուրբ նշանն արծաթեայ պահարանաւ գտանի այժմ աստ ի գանձարանի սրբութեանց աթոռոյ Էջմիածնի և ունի զմիևնոյն օրինակն այսր գրուածոյ (52). տե՛ս Ա հատոր:

602. Քաթիշայ վանից արձանագիրն է.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ես՝ Սարգիս և Վարդան[1] եպիսկոպոս, հիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ (1241) թուիս շատ աշխատութեամբ զաւագ խորանն խփեցաւ. և եղբայրս իմ տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ: Ես՝ տէր Վարդան[2] կատարեցի բազում աշխատութեամբ և հալալ արդեամբ իմովք ՈՂԷ (1248)[3] թուիս, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ ազգն նետողաց զբազում գաւառս աւերեցին և մնաց այլասեռից աթոռ և վիճակ սրբոյն Գրիգորիսի, որ է հաստատեալ աջով և սուրբ նշանաւն և գաւազանաւն սրբով. վիճակեցաւ և սահմանով ի յԱղունայ գետոյ մինչ ի Երասխն, մինչ ի աւազն գատուհատի[4] Վակունիս Վաղազնագետոյ, ի Քարատնիս և Խոզանագետովն, զԱրիստ իւր գետովն, Հաքարի Հազարագետովն, Քրտագետ իւր գետովն սահմանովն, Դիզակ՝ Բէլուկան իւր գետովն և հայրենիքն եկեղեցւոյս տուինք՝ փարախն և գոտանոցն, Եկեղեցաձոր իւր սահմանովն. Ա լուծ ու հող ի Տայիս, Ա լուծ ի Դող, ի Գագս, Ա ի Մոխրենիս[5]. ո՛վ որ այս սահմանէս յետ ունէ կաթուղիկոս[6] կամ իշխան կամ հայրապետ, երեք սուրբ ժողովոյն նզոված եղիցի՝ յԱս-

[1] [ԴՀՎ-ում (Ե, էջ 182)՝ **Վրթանէս**]:

[2] [ԴՀՎ-ում (Ե, էջ 183)՝ **Վրթանէս**]:

[3] [ԴՀՎ-ում ՝ **ՈՂԵ** (1246)]:

[4] [ԴՀՎ-ում ՝ **գահտահվատի**]:

[5] [ԴՀՎ-ում՝ **Մոխրենիսն, Խաչինամարգ**]:

[6] [ԴՀՎ-ում **թագաւոր** փխ **կաթուղիկոս**]:

տուծոյ և ամենայն սրբոց անիծեալ՝ մասն և բաժին ընդ Յուդայի առցէ»:

603. Գօշայ վանից արձանն է.

«Ի ՈԽ (1191) թուին, զկնի չորս ամաց առնլոյ զԵրուսաղէմ Սալահադինին՝ սկսեալ եկեղեցիս սուրբ ի Նորս Գետիկ և կատարի ամս է [7] ի խանգար Զատկին Յունաց ձեռամբ վարդապետին Մխիթարայ ի հայրութեան Վարդանայ, ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանկայ և նորին զուգակցին Արզու-Խաթունին և նորին եղբարցն Սմբատայ, Վասակայ և խորդն Գրիգորայ և նոցին զաւակացն: Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տօնի զսուրբ Աստուածածնին Գ (3) աւուրսն. բայց զմէկն Հասանայ հօր Վախտանկայ և մէկն մօր նոցին՝ Մամին և մէկն հօր Արզու-Խաթունին՝ Քրդին բարեպաշտի անխափան»:

Աւագ խորանի գիրն է.

«Յուսով ողորմութեան Աստուծոյ, ես՝ Ճարս, որդի պարոն Ումէ-կին, թոռն Ճարին, աշխարհաւ Մանծկերտեցի, աշխարհակալութեան Ղարանուին[1] և թագաւորութեանս Վրաց Դեմետրի Բագրատուն-ւոյ. իմ հայրն Ումիկ գնեալ էր զԳետիկ ի քառասուն հազար կար-միր տուգատի. ես՝ Ճարս գնեցի զՅովս իւր ամէն սահմանօքն ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ, ի ԴՌ (4000) կարմիր տուկատ տուի Գետկա Աստուածածնին իմ հոգւոյ տանս յիշատակ անջնջելի՝ իմ ծնողացն Ումիկին և Թագուհւոյն, ինձ և իմ որդեացն Արղութին և իւր եղբարցն, առաջնորդութեամբ Ղասապ վարդապետին. և միաբանքս սահմանեցին զաւագ Ե [5] շաբաթ օրն և Զատկի օրն զամէն եկեղեցիքս պատարագ, որչափ մեք կենդանի եմք՝ մեր ծնողացն լինի և յետ ելիցն մերոց յաշխարհէս՝ մեզ լինի: Արդ, ով զայս գեղս հանել ջանայ յայս եկեղեցւոյս կամ զիմ յիշատակն խա-փանէ, ո՛վ ոք և իցէ որ լինիցի ի ծննդոցն Ադամայ՝ եղիցի նզովեալ[2]. ՉԼԲ (1283)»:

Զանգակատան գիրն է.

«Կամաւն ամենակալին Աստուծոյ, ի թուին ՉԽ (1291)[3] մեք եր-կու եղբարքս Դասապետ վարդապետ և Կարապետ եղաք հիմն ի

---

1 [ԴՀՎ-ում (Զ, էջ 71)՝ **Արղունին**]:

2 [ԴՀՎ-ում թվականից առաջ՝ **անիծած է ամենասուրբ բերանոյն Աստուծոյ, զվարձս զԿայենի, զՅուդայի առցէ**]:

3 [ԴՀՎ-ում (Զ, էջ 104) թվականից հետո՝ **պարոնութեան Իգդիշ խաթունին եւ**

վերայ եդաք զանգակատուն և եկեղեցի յանուն հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի սակաւ ընչիւք մերովք և քեռոյն մերոյ Իգնատիոսի, արդեամբք բազմօք վերագրեալ պարոնացն դրաք պարիսպ շուրջ եկեղեցւոյս և այլ աշխատութիւնս ըստ մերում կարի. Սարգիս վարդապետն զհայր վանիցս և միաբանքս հաստատեցին Զատկին և Ճրագալուցին պատարագ, որ յեկեղեցին Դասապետ վարդապետին և Կարապետին սահմանեցին: Արդ՝ աղաչեմ զամենայն ժառանգաւորսդ յիշման արժանի արարէք զամենայն աշխատեալսն ի սմա. ևս առաւել Զաքէոսն և Գրիգորն»:

Վարագայ Սուրբ Նշանի արձանն է.

«Ի թուին ՈՁ (1231) ընդ այլ աշխարհս յոլովս հարաւ գաւազան ցասմանն Աստուծոյ. գաւառն Խլաթայ ի ձեռն Խորազմին և թագաւորին. ընդ որս և մեծահռչակ սուրբ ուխտն Վարագ յիշեցեալ վասն մեղաց մերոց յայսմ ամի: Ես Ղուկաս հայր Վարագայ առեալ զտիեզերահամբաւ սուրբ նշանն՝ զչնորհեալն յԱստուծոյ ի փրկութիւն մարդկան ի ձեռն Պատրոնիկէի և սուրբ Հռիփսիմեանց և Թօթկայ. և վեց ամ շրջեցայ թափառեալ տեղւոյ ի տեղ. ապա ի կամս յառաջատես խնամոց Տեառն հասի ի Նոր Բերդն առ քրիստոսասէր իշխանն Վասակ, աստուածաբնակ Անապատ կոչեցեալ վանքս. և ազդումն ինչ լեալ առ իս՝ հաճոյանալ սուրբ նշանիս ի տեղւոջն նկատեցի և զգեղեցկաշէն եկեղեցիս արժանի հանգստեան սրբոյս և մեծարեալ ի բնաւիցս առի զվանքս և ետու զիսաչս եկեղեցւոյս Աստուծոյ առաջնորդութեամբ և վկայութեամբ տեառն Յովհաննու շինող եկեղեցւոյս առաջի հրեշտակաց և մարդկան. և հաստատեցաւ ինձ ի տօնի սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, Յակոբայ և Յովհաննու զամէն եկեղեցիքս պատարագ: Արդ՝ եթէ ոք հանել ջանայ աստի, կապանս և անէծս ժառանգեսցէ ի հոգի և ի մարմին անբժշկելի ի սուրբ նշանէս և ամենայն սրբոցն Աստուծոյ. որչափ այս եկեղեցիս չէն է, մի՛ ոք իշխեսցէ զիսաչս հանել, կամ զիմ յիշատակս խափանել»:

Դրան գլխի գիրն է.

«Ի ՈՁՁ (1237) թուին ես՝ Վասակ, որդի Դաւթի՝ որդւոյ Վասակայ, ի տանէ Բագրատունի, ի տոհմէ Դաւթայ մարգարէի, ի փառս Աստուծոյ կատարեցի եկեղեցիս՝ զոր շինեցի ի ձեռն տեառն Յովհաննու և ընծայեցի զծաղկափղի իւր կապարովն ի վանքս. և հա-

եղբարց իւրոց Արղութին եւ Թաղադամուրին... և այլն: տարբերություններն այնքան շատ են, որ հարկ չենք համարում վիմագրությունն ամբողջությամբ արտագրել]:

ւանութեամբ եղբարցս հաստատեցաւ պատարագ Յայտնութեան և Զատկին յիմ չինեալ մեծ եկեղեցիս, որպէս և իմ հօրն իւր չինեալ փոքր եկեղեցին. գրեցաւ և կնքեցաւ անուամբն Աստուծոյ, յաւուր յորում Վարագայ հայրն Ղուկաս զսուրբ նշանն ետ եկեղեցւոյս: Արդ՝ եթէ ոք զմեր տուեալ գեղերս ի մեր եկեղեցւոյս հանել ջանայ և մեր յիշատակն խափանել՝ թէ քրիստոնեայ է ի Քրիստոսէ և իւր ընտրելոցն է նզոված, եթէ այլազգի է՝ յԱստուծոյ և դինէն և յառաջնորդաց իւրոց և մեր մեղացն պարտական է»:

604. Հաղարծնոյ վանից արձանն է.

«Ի թուին ՈԾԵ (1206), ի յաշխարհակալ տէրութեան Զաքարէի և Իւանէի, յառաջնորդութեան Ստեփաննոսի, ես՝ Խալաթ որդի Սմբատայ, իմ գեօղն Քանաքեռ, Սկանդարանց հողն գնեցի և ի Հաղարծին ետու վասն իմ հոգւոյս և վասն երկարութեան կենաց Շահնշահի և Աւագին. և միաբանքս զԾառզարդարին և զերկրորդ գալստեան ժամն ինձ ետուն զամէն եկեղեցիքս. ով զայգին աստից հանէ և կամ զժամն խափանէ, մեր մեղացս տէր է[1]»:

Դրան արձանն է.

«Կամաւն ամենակալին Աստուծոյ. այս մեր գիր և յիշատակի է և արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսին, յազգէ Բագրատունեան Իւանէի և Զաքարէի. յորժամ նախախնամութիւնն Աստուծոյ եհաս յարարածս և ետ[2] տիրել սեփհական ժառանգութեան նախնեացն մերոց, ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն զԱնբերդ և թագաւորանիստ քաղաքն յԱնի. և ապա զամուրն Բջնի, զՄարանդ մինչև Գաւզանդ ի Թէվրիզ, Կարնոյ քաղաքէն մինչև ի Խլաթ, զՇաքի և զՇրուան, զԲարտա[3] մինչև ի Պէլուական և այլ բազումս իւրեանց սահմանօքն, զոր աւելորդ համարեցաք յիշատակել: Այլև զանբարկանալին Աստուած սիրեաց զթագ պարծանաց գլխոյ իմոյ զՁաքարիայն և կոչեաց առ ինքն, որոյ ձեռն եղև արիութիւն: Եւ ես չինեցի մեր հայրենի վանքն Հաղարծինս ժամատուն վիմարդեան կամարակապ ի դրան Սուրբ Գրիգորիս. և մին այգի Երևան ետու վասն յիշատակի եղբօրն իմոյ և պարտ են սպասաւորք սորա զաւագ խորանի պատարագն Զաքարէի մատուցանել անխափան. կատարիչք գրոցս օրհնեալ լինին յԱստուծոյ, ամէն»:

---

1 [ԴՀՎ-ում (Զ, էջ 24)՝ **տէր է եւ Յուդայի մասնակից եղիցի**]:
2 [ԴՀՎ-ում (Զ, էջ 22) ետ-ից հետո՝ **. . . ն արառին**]:
3 [ԴՀՎ-ում՝ **Պարտաւ**]:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՎԱՆԱՅՆ ԳԱՆՁԱՍԱՐԱՅ՝ Ի ՆԵՐՔՍ ԵՒ ԱՐՏԱՔՍ

605. Տաճարի մեջի մեծ արձանագիրն է.

«Յանուն Սուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն այս գիր արձանի է, զոր [տվի] ես նուաստ ծառայ Աստուծոյ Ջալալ Դօլայ Հասան, որդի Վախտանկայ[1]*, թոռն մեծին Հասանայ, բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արձախական աշխարհի, թագաւոր և ի*[2] *յոգնասահման նահանգի*[3]*: Զի հայրն իմ ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ և մօր իմոյ Խորիշահի, որ էր դուստր մեծ իշխանաց իշխանին Սարգսի, զի չինեսցուք եկեղեցիս*[4] *ի գերեզմանատուն*[5] *հարց մերոց ի Գանձասար. զոր սկսեալ մեր ՈԿԵ (1216) թուին*[6] *օգնութեամբ բարերարին Աստուծոյ*[7] *և ի խփել լուսամտին արևելից մայրն իմ կրօնաւորեալ չոգաւ յԵրուսաղէմ երրորդ անգամ և անդէն ի դրան Յարութեան խարազնագեաց ճգնութեամբ, բազմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ և անդէն պահեցաւ: Իսկ մեր զբազմածուփ կենցաղոյս ի մտի եդեալ փոյթ գործոյ արարեալ՝ աւարտումն եղև չնորհօք ողորմութեամբ ամենագութ Տեառն ՈՁԷ (1238) թուին գօտևորեալ ամենազան ձևօք*[8]*, պատկերազան յօրինակերտ գմբէթարդ յօրինուածով յօժարութեամբ կամաց մերոց, որպէս տեսանէ Աստուած. հոգացաք զպէտս միաբանիցս գիւղօրայս՝ Մուշեղ, Հարչանտուս, Բոլորքոչն*[9]*, մէկ լուծ Խաչինաձոր, Նորաշէնկան գետն, Այգեստանս Եղնկնի, զոր իմ հայրն էր տուեալ Սահակայն Փուրկատոստայն*[10]*. Արձաթենիսն, որ ես տուի խաչօք, գրանօք, մատամբք, նշխարօք պատուական և ձուլածու ամենայն սպասուք և հանդերձ*

---

1 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 38-40)՝ **Վախտանգա**]:

2 [ԴՀՎ-ում **ինքնակալ Խանբերդի** փխ **թագաւոր և ի**]:

3 [ԴՀՎ-ում՝ **նահանգաւք**]:

4 [ԴՀՎ-ում՝ **եկեղեցի**]:

5 [ԴՀՎ-ում՝ **գերեզմանատան**]:

6 [ԴՀՎ-ում՝**թվին Հայոց**]:

7 [ԴՀՎ-ում չիք **Աստուծոյ**]:

8 [ԴՀՎ-ում՝**ձեւով**]:

9 [ԴՀՎ-ում՝ **գեղորայս Մաչեղ, Հարջանտուս, Բոլորքոչն**]:

10 [ԴՀՎ-ում՝ **Փուրկադո ոգոյն**]:

երևելի զարդիւք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և Աստուծով ի մեր իշխանութեան եկեղեցիքս ազատ են. կամաւ տէր Վարդանայ առաջնորդի սուրբ ուխտիս և միաբանիցս գրեցաք ժամ զաւագ սեղանն բոլոր տարին մեզ, և զայլ ամէն եկեղեցիքս՝ Զատիկն իւր Ճրագալուցովն իմ հօրն է Վախտանկայ. Աստուածածնին Դ (4) օրն իմ մօրն Խորիշահին և Յայտնութեանն իւր Ճրագալուցովն իմ եղբօր Զաքարէի, զաւագ սեղանն որ իմ է յԱստուածածնէն մինչ ի խաչն իմ պապուն Հասանայ, յիսնակամտէն մինչ ի Յայտնութիւնն Մամքանայ իմ կենակցին, ութօրէից ելիցն մինչ ի առաջաւորն հասարակաց անյիշատակաց, Բարեկենդանին Ա շաբաթն իմ եղբօրն Դօլին. Ա շաբաթն իմ քուերն Մարինոյ, աղուհացից շաբաթ կիրակէքն իմ եղբօրն Իվանէի, Զատկէն մինչ ի Աստուածածինն և ի Խաչէն մինչ ի Յիսնակամուտն ինձ Հասանայ: Օրհնեցաւ եկեղեցիս ՈՁԹ (1240) թուին, ի հայրապետութեան տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի: Հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ. ով հակառակի, ոսոխն նորա Աստուած է և իւր սուրբքն: Անտօնի տօնին մին օր ժամ Յովասափ միակեցին կատարի[1] կամաւ մեծի Հասանայ»:

Ժամատան ներսն յաջ և յահեակ պսակացն է գրեալ.

«Թուին ՉԾԵ (1306)[2], կամաւն ամենակալին Աստուծոյ, ես՝ Զալալ Դօլայս, որդի Վախտանկայ կողմանցս[3] Արձախայ և ամուսին իմ Մամքան՝ թոռն Բաղուց Թագաւորին և հարազատ որդին իմ Աթաբակն[4], յետ կատարման եկեղեցւոյս հիմնարկեցաք ժամատունս և բազում աշխատութեամբ աւարտեցաւ. զոր և[5] հայցեմ անմոռաց յիշել յաղօթս ձեր. փոքր ընծայ տուի զՄուռ գեղն[6] իւր չարէքտարովն, զՃռանց իւր սահմանովն: Դարձեալ ես՝ Աթաբակս ընծայեցի յօժարութեամբ ոսկետուփ Աւետարան և պատուական սուրբ Նշան զՔրիստափորն և զմեր հայրենի հարաւակուռն, զԲլրին իւր սահմանովն. և սահմանեցին զխաչի ութօրէքն պատարագել զՔրիստոս. և թէ քրիստոսադաւան ոք հանել ջանայ ի փառացն Աստուծոյ մահով և կենօք նզոված է. և յիշատակ նորա մի՛ յիշեսցի առաջի Աստուծոյ.

---

1 [ԴՀՎ-ում **է** փխ **կատարի**]:

2 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 41)՝ «Թիւն ՉԺ է[ր]»: Այս կապակցությամբ Բարխուդարյանը գրում է. «Հրատարակիչները առաջին տողը գրել են թուին ՉԾԵ կամ ՉԺԵ, սխալ է, որովհետև Զալալ Դավլեն մեռել է 1261 թ.» Աճառյանն առաջարկում է կարդալ «ՉԺ ե» (ՀԱԲ, հտ. Դ, էջ 287)]:

3 [ԴՀՎ-ում **կողմակալ** փխ **կողմանցս**]:

4 [ԴՀՎ-ում **աթաբակ Իւանէ**]:

5 [ԴՀՎ-ում **Ա[ստուծո]վ** փխ **և**]:

6 [ԴՀՎ-ում **տեղն** փխ **գեղն**]:

և թէ մահմէտական ոք զհողն հանէ այս եկեղեցւոյս առհասարակ նզոված է յԱստուծոյ և մարգարէիցն»:

«Անուն Երրորդութեան և մի աստուածութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ես՝ նուաստ աղախին Քրիստոսի Մամախաթուն, դուստր ինքնակալ իշխանաց իշխանին Ջալալ Դօլայ Հասանին[1]*՝ տեառն Խաչենու, և բարեպաշտ մօր իմոյ Մամքանին և ամուսին մեծ պարոնին Ումեկին եկի մեծ յուսով ի սուրբ ուխտս Գանձասարայ ես և որդին իմ Վախտանկ. և սոքա խոստացան ժամ՝ զՎարդավառին տօնին զամէն եկեղեցւոյ պատարագն. քանի ես կենդանի եմ զժամն հօր և իմ մօր կատարեն, և յետ մահուանն ինձ կատարեն. կատարիչքն օրհնին Աստուծոյ. թուին ՉԻԹ (1280)»:*

Դրուցի հիւսիս և հարաւ և արևմտեան.

«Թուին ՉՂԵ (1546), կամաւն Աստուծոյ, ես՝ Սարգիս կաթուղիկոս, որդի Հատիր-Մէլիքին՝ թոռն մեծին Սայտունին. և գնեցի զհայրենիքն Կասրայ Զ [6] ստակն մինակ տանն. Դ [4] ստակ ու կէսն Առատունոց, Բ [2] ստակն Կուռալանայ, Դ [4] ստակն տուի սուրբ ուխտս Գանձասարայ. ով զայս հայրենիքս հանէ սուրբ եկեղեցւոյս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և սուրբ Ովհանէսիս կապած է»:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Վէլիճան և եղբարք իմ որդիք Սայտունին՝ թոռն մեծին Աղբաստու տեառն Խաչենու, տուաք Ալմանայ[2] *իւր չորս սահրատովն*[3] *ի սուրբ ուխտս Գանձասարայ, առաջնորդութեամբ տէր Ներսէսին. թուին ՉԽԹ*[4] *(1500)»:*

«Կամաւն ամենակալին Աստուծոյ, ես՝ տէր Եղիայ, առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարայ, տուի զիմ հոգւոյ արդիւնս. Ա Այսմաւուրք, Ա Տարեգիրք[5]*, Ա շուրջառ, Ա դախայ Գ [3] ստակն. ով ոք զայս գրենքս և հայրենիքս հանէ ի սուրբ Ովհանիսէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է. ՉԺԶ (1467) թուիս»:*

«Թուին ՉԻ (1471), ես՝ Բուտաղս[6] *ու Վախտանկս և այլ եղբարքս միաբանեցաք ու տուաք Փտուռանց, Կակաչանց, Ծաղկավանց Գ [3] ստակն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր*

---

1 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 41)՝ **Հասան[ա]**]:

2 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 44)՝ **Աշմանայ**]:

3 [ԴՀՎ-ում՝ **սահմանաւն**]:

4 [ԴՀՎ-ում՝ **ՉԻԹ**]:

5 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 43) այնուհետև՝ **Ա Գանձարան**]:

6 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 54)՝ **Պուտաղս**]:

Ներսէսին: Արդ, ով զայս վախմըս հանէ ի սուրբ ուխտէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և սուրբ Ովհաննէս Մկրտչին կապած[1]*»:*

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Մէլիքս, որդի Սայտունին, թոռն մեծին Աղբաստու, տուի չուրջառ, սկիհ ու այլ ընծայ. Կակաչանց, Փտուռանց[2]*, Ծաղկավանց Բ [2] ստակն, գնեցի, տուի ի սուրբ ուխտս Գանձասարայ. ով զայս ընծայս և վախմս հանէ ի սուրբ եկեղեցւոյս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և Յուդայի մասնակից*[3]*. Թուին ՋԽԸ (1499)»:*

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Ուլուբէկս, որդի Մէճլիսին, տուի զիմ հայրենի հողն Ղուղտանոսի[4] *կտուրն, որ ի Վարդան բերանց*[5] *է իւր սարհատովն*[6] *ի սուրբ ուխտս Գանձասարայ իմ հոգւոյ յիշատակ յառաջնորդութեան Մատթէոս վարդապետին և իշխանութեան*[7] *Զազին: Արդ, որք զհողն հանել ջանան ի սուրբ ուխտէս, մեր մեղացն պարտական են առաջի Քրիստոսի և մասն զՅուդային առցեն. և միաբանքս յիշեսցեն զմեզ իւրեանց յաղօթս. ՊԾԶ (1407) թուին»:*

«Ես Տուրսուն՝ թոռն մեծին Ջալալին, տուի Մսերսին[8] *հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսին. որք զհողն հանեն, նզոված են Աստուծոյ*[9]*. ՋԽԲ (1463) թուին»:*

«Ես՝ Այտինս և Խիմշէս՝ որդիք Աթաբակին, տուաք Ալմաճա տափ հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսին. որք զհողն հանել ջանայ, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և մասն Յուդայի առցէ[10]*. ՋԺԶ (1467) թուին»:*

---

1 [ԴՀՎ-ում չիք **Արդ, ով զայս վախմըս հանէ ի սուրբ ուխտէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և սուրբ Ովհաննէս Մկրտչին կապած**]:

2 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 45)՝ **փուտուռանուց**]:

3 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 45) չիք **ով զայս ընծայս և վախմս հանէ ի սուրբ եկեղեցւոյս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և Յուդայի մասնակից:** Այս արտահայտությունը տարբեր արձանագրություններում բերում է Շահխաթունյանցը, որոնք բացակայում են վիմագրերում: Պատճառը մեկն է՝ Շահխաթունյանցն այս արձանագրությունները չի տեսել, դրանք ավելացված են եղել Եսայի Հասան-Ջալալյանցի կողմից]:

4 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 54)՝ **զուղտանոսի**]:

5 [ԴՀՎ-ում՝ **Վարդաբերանց**]:

6 [ԴՀՎ-ում՝ **չարհատովս**]:

7 [ԴՀՎ-ում **ի [տերութեանն]**]:

8 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 44)՝ **Մսէրշին**]:

9 [ԴՀՎ-ում չիք **որք զհողն հանեն, նզոված են Աստուծոյ**]:

10 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 44) չիք **որք զհողն հանել ջանայ, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և մասն Յուդայի առցէ:** Այս հատվածը բացակայում է նաև վիմագրում, որի լուսանկարը բերված է ԴՀՎ-ում: Չի բացառվում, որ գործ ունենք երկու տարբեր արձանագրությունների հետ, մանավանդ վիմագրի վերջում պարզ երևում է թիվը՝ ՋԽԴ, իսկ Շահխաթունյանցի մոտ ՋԺԶ է]:

«Ես՝ Սմբատ, որդի[1] Փիրհամզին, տուի բեմին հողն իմ պապենց հոգւոյն ի սուրբ ուխտս Գանձասարայ, առաջնորդութեամբ տէր Ներսէսին. որք զհողն հանեն ի սուրբ ուխտէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և սուրբ Ովանէսիս կապած[2]. ՉԻ (1471)»:

«Ես՝ Պաստամ, որդի մեծին Ջալալին, տուի Կունճի հողին կալէն վերն ի սուրբ ուխտս Գանձասարայ, առաջնորդութեամբ տէր Ներսէսին. ով զհողն հանէ յուխտէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է[3]. թուին ՉԻ (1471)»:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Սայտուն, որդի պարոն Աղբաստոյ, տուի իմ հայրենեացն զՏանձաչոր[4] ի սուրբ ուխտս Գանձասարայ, առաջնորդութեամբ տէր Եղիային. սոքա ետուն տարին երեք ժամ. ով զայս հայրենիքս հանէ ի սուրբ եկեղեցւոյս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և սուրբ Ովանէսիս կապած. թուիս ՉԺԶ (1467)»:

«Ես՝ Ուսուպ, տուի բազմատուեց նովերին հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ, առաջնորդութեամբ տէր Ներսէսին. եթէ ոք զհողն հանէ, նզոված է յԱստուծոյ. ՉԽԴ (1495) թուին»:

«Թուին ԷՃԻ (1271). կամաւն Աստուծոյ, ես՝ Յովհաննէս, որդի Իվանէի, առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարայ, հրամանաւ տեառն Խաչենու Աթաբէկին և իմ հալալ արդեանց գնեցի զՎարդնաթաղս՝ մին չորից եղն և այլ ընծէք տուի ի սուրբ կաթուղիկէիս. միաբանքս տուին զՅոհաննու և Յակոբայ տօնն զամէն եկեղեցիքս պատարագ ինձ. ով խափանէ, դատի յԱստուծոյ[5]»:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ տէր Վարդան, որդի Ջալալին, տուի Ծակ խաչին հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ իշխանութեամբ Աղպաստոյ, առաջնորդութեամբ տէր Եղիային. սոքա տուին Բ [2] օր ժամ. ով խափանէ, դատի յԱստուծոյ[6]. թուին ՊՂԲ (1443)»:

«Կամաւն Աստուծոյ ամենակալին, հրամանաւ Աթաբակին՝ տեառն Խաչենու, ես՝ Բարսեղ, որդի Աբաջուր իրիցու, ամուսին իմ Մամաք, միաբանեցայ սուրբ ուխտիս. և իմ հալալ արդեանց գնեցի զՏնկին երկիրն, տուի ի կաթուղիկէս. միաբանքս ետուն Դ [4] օր ժամ աւետեաց Աստուածածնին. կատարիչքն օրհնին յԱստուծոյ և խափանողքն դատին. թուին ՉԻԵ (1276)»[7]:

---

1 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 43)՝ **որդի պարոն**]:
2 [ԴՀՎ-ում չիք **որք զհողն հանեն ի սուրբ ուխտէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է և սուրբ Ովանէսիս կապած**]:
3 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 43) չիք **ով զհողն հանէ յուխտէս, ՅԺԸ [318] հայրապետացն նզոված է**]:
4 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 42)՝ **զտանձաձոր**]:
5 [Տես ԴՀՎ, հտ. Ե, էջ 50]:
6 [ԴՀՎ-ում չիք **խափանէ, դատի յԱստուծոյ**]:
7 [Տես ԴՀՎ, հտ. Ե, էջ 51]:

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Աղաբեկի, որդի Սմբատայ, Միրին[1] *հողն՝ իմ հայրենիք էր, իմ սրտով տուի ի սուրբ ուխտս Գանձասարայ*[2] *ի փրկութիւն հոգւոյ իմոյ. ով հողն հանէ՝ դատի յԱստուծոյ*[3]*. Թուին ՌԺԲ (1563)»:*

«Ես՝ Շահնշէս, որդի Աղբուղին, տուի Նովերին հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ. ով հողն հանէ՝ սուրբ Ովանէսիս կապած է[4]*»:*

«Յուսովն Աստուծոյ, ես՝ Ապուքան և ամուսին իմ Մինայ–խաթուն, միաբանեցաք սուրբ ուխտիս իշխանութեամբ Ջալալին և առաջնորդութեամբ տէր Յոհանին, տուաք Զարեքտար և այլ ընծայ. տէրս և միաբանքս ետուն Դ [4] պատարագ աստուածայատնութեան ճրագալուցին. Բ [2]՝ ինձ, Բ [2]՝ Մինայ–խաթունին. կատարիչքն օրհնին յԱստուծոյ. ՉԿ (1311) թուին»:

606. Քօլատակ գիւղի գերեզմանատան գիրն է.

«Ի ՈՂԲ (1243) թուին, ողորմութեամբն Աստուծոյ և տէրանց խաչենոյ՝ Ջալալին և որդւոյ իւրոյ Աթաբակին, ես տէր Վարդան վարդապետ Հուռասարեցի, պարոնայքն հողն ինձ տուին. ես գնեցի զԲոռին հանդն, զՇեղջատափն, երկրին տնատեղն, տուի վասն հոգւոյ իմոյ վախմ ի սուրբ ուխտիս Գանձասարայ. սոքա տուին տարէնը[5] *Բ ժամ ի տօնի Վարդանանց. ով զհայրենիքս հանէ ի սուրբ ուխտէս, ՅԺԸ [318] հայրապետաց նզոված լիցի և իմ մեղացն պարտական»:*

607. Վաճառու եկեղեցւոյ գիրն է.

«Շնորհիւն Աստուծոյ, ես՝ Հասան, որդի Վախթանկայ և Խուրիշահի, տէր Խաչենու, չինեցի զսուրբ եկեղեցիս՝ յորժամ յայտնեցաւ մասունք սուրբ Ստեփաննոսի ի սոյն տեղւոջս ի թուին ՈՀԸ (1229): Սահմանեցի ի սպասաւորացն զժամ Զատկին վասն ինձ և վասն հօրն իմոյ[6]*»:*

---

1 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 46)՝ **Աւրին**]:

2 [ԴՀՎ-ում չիք **Գանձասարայ**]:

3 [ԴՀՎ-ում չիք՝ **ով հողն հանէ՝ դատի յԱստուծոյ**: ԴՀՎ-ում դրա փոխարեն՝ **առաջնորդութիւն**:: Գրքի խմբագիրները ծանոթագրում են՝ «թողնվել է թերի: «Որդի» բառից հետո կարելի է կարդալ… «Ջաւաւրին հողն»]:

4 [Տես ԴՀՎ, հտ. Ե, էջ 58]:

5 [ԴՀՎ–ում (հտ. Ե, էջ 24) ՝ **տարէն**, թեև վերցված է Շահխաթունյանցից]:

6 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 79) Բարխուդարյանը գրում է. «Հրատարակիչներն ունեն առաջին սյունակ միայն», այդ թվում և Շահխաթունյանցը, իսկ վիմագիրն ունի շարունակություն]:

Վաճառու փոքր եկեղեցւոյ գիրն.

«Ես՝ Մամքան թագուհի, ամուսին Զալալ Դօլին և թոռն Բաղուց թագաւորին՝ այսինքն Սիւնեաց, շինեցի զեկեղեցիքս և տուի ընծայ Ալնճայ հողն զիմ հոգւոյ. սպասաւորքս հինգ պատարագ առնեն ինձ. և ծննդեան ութ աւուրքն իմ ծնողացն առնեն՝ մինչ մեռանիմ ինձ. ով ոք որ զտուածս հանէ կամ զժամս խափանէ, դատի յԱստուծոյ և ի սրբոց. թվին Չ (1251)»[1]:

608. Մեծարանից, այսինքն Յակոբայ վանից գիրն է.

«Ի[2] *ՈԿԱ (1212) թուին*[3]*, ես՝ Խորիշահ ամուսին Վախթանկայ*[4] *տէր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարիայ*[5] *և Իվանոյ*[6]*, վերստին շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգւոյ*[7] *իմոյ, ի բարեխօս զաւակաց իմոց. Ա. Խ*[8] *ժամ ինձ, յիշատակ իմ ծնողացն: ԶՎախթանկ*[9] *և զիս յաղօթս յիշեցէք»:*

609. Յուրեկայ տաճարի արձանն է.

«Ի քահանայութեան տէր Ստեփաննոսին, զշինող եկեղեցւոյս զտէր Յովհաննէս յիշեցէք ի Քրիստոս. նաև զծնողսն և զեղբարսն իւր. ՉԻԸ (1279) թուին»[10]:

Արձանագիր գաւթի սոյն տաճարի.

«Յաշխարհակալ տէրութեան Ապաղայ խանին և ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին և ի պարոնութեան Նորադինին և Սրաջադինին և Գուրզադինին, ես՝ տէր Յովհաննէս, շինեցի զգաւիթս յիշատակ ինձ և եղբարց և ծնողաց իմոց. ՉԼԳ (1284) թուին»[11]:

610. Հաւաբտկոյ եկեղեցւոյ գիրն է.

«Թուին ՈՉԲ (1233)[12]*. էր յիշխանութեան Հասանայ՝ որդւոյ Վախտանկայ և ամուսնոյն նորա Մամքանայ, ես՝ Յովհաննէս քա-*

---

1 [ԴՀՎ-ում (հտ. Ե, էջ 80)՝**Ես Մամքան, ամուսին Զալալ Դաւլին, թոռն Բաղաց թագաւորին, շինեցի զեկեղեցիս եւ տվի Ալծո հող եւ այգի զիմ այգոյն պտուղն. Սպասաւորքս Ե պատարագ առնեն. Ինչ մեռանիմ ինձ. ով ոք որ տուածս հանէ կամ զժամս խափանէ դատի յԱստուծոյ եւ ի սրբոց. Թվ. Չ (1251)**]:

2 [ԴՀՎ–ում (հտ. Ե, էջ 12) չիք **Ի**]:

3 [ԴՀՎ–ում՝ **թիւ]:**

4 [ԴՀՎ–ում՝ **Վախտանգա]**:

5 [ԴՀՎ–ում՝ **Զաքարի]:**

6 [ԴՀՎ–ում՝ **Իւանոյ]**:

7 [ԴՀՎ–ում՝ **հոգոյ]**:

8 [Բարխուդարյանը ծանոթագրում է՝ «**մեկ քառասունք»]:**

9 [ԴՀՎ–ում՝ **զՎախտանգ]**:

10 [Տես նաև ԴՀՎ, Ե, էջ 102**]:**

11 [Տես նաև ԴՀՎ, Ե, էջ 102**]:**

12 [ԴՀՎ–ում (հտ. Ե, էջ 33)՝ «[Ռ]ԺԲ (1163)»: Բարխուդարյանը ճիշտ ձևը համարում է

հանայ[1]*, քուերորդի տէր Գրիգորի և Գէորգի եղբօրորդի և այլ միաբանքս չինեցաք սուրբ եկեղեցիս ի փրկութիւն հոգւոց մերոց*[2]*»:*

611. Բառաւայ ձորոյ եկեղեցւոյ գիրն է.

«Ի թուին ՈԼ (1181) և յիշխանութեան Սմբատայ, ես՝ Բարսեղ երէցս, Սարգիսս և եղբարքս մեր ժողովրդովքս չինեցաք զեկեղեցիս, բերաք զՋուրս. որք երկիր պագանէք, զմեզ յաղօթս յիշեցէք»:

Արձանագիրք Եղիշէի սուրբ առաքելոյ վանից.

612. Եկեղեցւոյ շինութեան գիրն.

«Թուին ՈՂԴ (1244), ես՝ Սերոբ սարկաւագս սուրբ ուխտիս չինեցի զՍուրբ Առաքեալս ի վերայ առաջին հիմանն. յաղօթս յիշեցէք»[3]*:*

«Կամաւն Աստուծոյ, ես՝ Մատթէոս Սալեցի, զեկեղեցիս թուին ՉԿԶ (1317) և զանգակատունս չինեցաւ թուին ՉՀԲ (1323). յաղօթս յիշեցէք»:

Արձանագիր շինութեան ժամատանն.

«Թուին ՉԺԴ (1264): Կամաւն Աստուծոյ, ես՝ Խաչատուր, չինեցի զժամատունս առաջնորդութեամբ տէր Սիմէօնի. աղաչեմ զմեզ յիշեցէք զիս ի Քրիստոս»:

613. Արձանագիրք Ճալէթու վանից.

«Յանուն Աստուծոյ, ես՝ Կարապետ կաթուղիկոս, չինեցի զեկեղեցիս ի թուին ՊԿ (1411)-ին, յիշատակ հոգւոյ իմ. յաղօթս յիշեցէք»:

Գրուած ի վերայ սպիտակ տապանավիմի՝ եղելոյ մերձ ի դուռն յիշեալ եկեղեցւոյդ՝ ուր ներկայ լինելով մեր յամին 1838, առաք ի գիր.

«Ի թվ. ՉԻԴ (1475) հանգիստ Թովմայ կաթուղիկոսին: Ի թվ. ՉԿ (1511) ես՝ տէր Առաքեալ կաթուղիկոս, գնեցի վերստին պարոն Հասանբէկէն եկեղեցւոյս դրան Ճալէթ գիւղս: ԳՌ [3000] թանկայ խարճ արի և տվի վասն մեր հոգւոյս սուրբ Աստուածածնինս և ով հակառակի այս գիւղ Ճալէթիս կամ խլէ...»:

ՈՁԲ-ն]:

1 [ԴՀՎ–ում՝ **Յոհան** փխ **Յովհաննէս քահանայ]**:

2 [ԴՀՎ–ում այնուհետև՝ «եւ յիշատակ ծնողաց մերոց, որք կարդայք յիշեցէք ի Քրիստոս»**]**:

3 [Տես նաև ԴՀՎ, Ե, էջ 103**]**:

Կից սմին ի նոյն տապանավիմին.

«Թիւ Կարապետ կաթուղիկոսին ՊԿ (1411)...
Այս է տապան երիցս վեհից,
Որք օծեցեալք ի տունն Աղուանից,
Աստ թափառացեալք յայնմ միջոցից,
Կան ամփոփեալք ի ներ տապանից,
Յար սպասեն հարստչին բնաւից,
Ակնկալեն յուսով պտղալից»:

614. Արձանագիր տաճարի վանացն Սաղիան գեղջ՝ որ մերձ ի քաղաքն Շամախի, գրեալ ի ճակատ բեմին սեղանոյ.

«Արդ, ես՝ մեղապարտս ի ծնունդս եկեղեցւոյ Կրկոս (թերևս Կիրակոս) պիտակ վարդապետ բնիկ յերկրէն Աղուանից, ի գեղջն Սաղիանու, շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ ետու շինել զեկեղեցիս վայելչակերտ անուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային ի ՌՃԹ (1660) թվին, ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի տեառն Յակոբայ և ի կաթուղիկոսութեան սուրբ Գանձասարայ տէր Պետրոսի. զոր և աղերսեմ զհանդիպողսդ յիշել զիս և զտէր Ղազարն հոգաբարձու վանիցս և զամենայն աշխատաւոր սորին. որք յիշեն՝ յիշեալ լիցին առաջի Աստուծոյ, ամէն»:

Ի հիւսիսային որմն տաճարին արտաքուստ.

«Նորոգեցաւ հիւսիսային կողմն տաճարիս հանդերձ գլխի սալիւքն՝ աշխատանօք առաջնորդ Ոսկան վարդապետին, և Ռ [1000] լիտր ահակի (կիր) փողն Ըսկանդարի որդի մահտեսի Յարութիւնն ետուր՝ մասնակից եղև, թվին ՌՄԼԵ (1786)»:

615. Արձանագիր տաճարի վանաց Մասէրի գեղջ՝ որ մերձ ի Շամախի քաղաք.

«Քրիստոսի թվին + ՌՈՉ (1680):

Արդ, ես՝ հուսկ Անտոն վարդապետս, նորոգեցի զԱստուածածնի վանքս: Որք հանդիպիք՝ սուրբ աղօթս յիշեցէք ի Տէր»:

616. Ի միջոցի յիշեալ գեղջդ և վանացն էտեղի գերեզմանոցաց և ի միջի մատուռն քարաշէն, յորոյ դրան վերայ ի վիմի անդ գրեալ այս ինչ.

«Աստուծով թվին ՌՃԿԸ (1719)-ին:

Շինեցաւ Սուրբ Նշանայ եկեղեցին յիշատակ ամենայն քրիստոնէից ննջեցելոց՝ եկաց և բնակաց, արանց և կանանց և ծերոց և տղայոց. մանավանդ Ջողայեցի Գէորգի որդի պարոն Պետրոսին և Շամախու Յակոբի որդի Թամուրին և Ոհանին և ծնողացն Եղիսա-

պէտին և հանգուցեալ որդւոյն Մաթէոսին. ով ընթերցողք, յորժամ ընթեռնուք, յիշեցէք ի յաղօթս ձեր Անդոն անարժան քահանայ. յիշեալ լիջիք առաջի անմահ գառին Աստուծոյ, ամէն»:

Արձանագիր ևս սոյն մատրան գրեալ ի վերայ միաստանի վիմին, որ ձգեալ է ի ճակատ բեմին սեղանոյ՝ ըստ այսմ.

«Ի թվին Ռճ եկի,
Վեցից տասանց և ութեկի, [1719],
Ի ժամանակս հայրապետի
Էջմիածնայ սուրբ աթոռի
Աստուածատուր կաթուղիկոսի,
Լուսաւորչի փոխանորդի,
Գանձասարայ սուրբ աթոռի
Տեառն Եսայեայ և տէր Ներսէսին,
Յայսմ երկրի առաջնորդ
Պօղոս անուն վարդապետի,
Յորդորանօք բարեսիրի
Անտոն անուն քահանայ
Պատճառ եղեւ եկեղեցւոյն
Աստուածընկալ Սուրբ Նշանին,
Դաւթի որդի Կարապետին,
Իւր կողակցին Գուլանամին,
Իւրեանց որդւոյն Աստուածատուրին,
Նորաբողբոջ Պօղոսի,
Այլ յիշատակ Թադէոսին,
Իւր կողակցին Սիմային,
Որդւոյն իւրեանց Արզման Կօկչին,
Իւր կողակցին Տաստագուլին,
Եղիսաբեթ իւրեանց նուին,
Դստեր իւրեանց Մանիեային,
Ծաղկեալ որդւոցն Կոկճային,
Կարապետին և Սարգսին,
Զի այս էր իղձ մերոյ սրտին
Եւ կատարումն հասուցինք»:

Վախճան Բ հատորոյ

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա.

Կարգք եւ թիւք անուանց կաթուղիկոսացն Հայոց, սկսեալ ի սրբոյն Թադդէոսէ առաքելոյն եւ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մինչեւ յայս վայր՝ ի տէր Յօհաննէս սրբազնասուրբ կաթուղիկոսն, հաւաքմամբ ուրումն բանասիրի, ի փառս մեծին Աստուծոյ:

1. Տէր Թադդէոս առաքեալ
2. Տէր Ադդէ
3. Տէր Փիլիպպոս
4. Տէր Ղեւոնդ
5. Տէր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
6. Տէր Արիստակէս
7. Տէր Վրդանէս
8. Տէր Յուսիկ
9. Տէր Փառներսեհ
10. Տէր Ներսէս Մեծն
11. Տէր Սահակ
12. Տէր Ձաւէն
13. Տէր Ասպուրակէս
14. Տէր Սահակ սուրբն
15. Տէր Յովսէփ
16. Տէր Գիւտ
17. Տէր Յօհան Մանդակունին
18. Տէր Բաբկէն
19. Տէր Սամուէլ
20. Տէր Մօշէ
21. Տէր Սահակ
22. Տէր Քրիստափոր
23. Տէր Ղեւոնդ
24. Տէր Ներսէս
25. Տէր Յովհաննէս
26. Տէր Մովսէս, որոյ յաւուրս եդաւ թուականս Հայոց:
27. Տէր Աբրահամ
28. Տէր Յօհան Բագարանեան
29. Տէր Կոմիտաս
30. Տէր Քրիստափոր
31. Տէր Եզր
32. Տէր Ներսէս
33. Տէր Անաստաս
34. Տէր Իսրայէլ
35. Տէր Սահակ
36. Տէր Եղիա
37. Տէր սուրբ Յօհան Օձնեցին
38. Տէր Դաւիթ
39. Տէր Տրդատ
40. Տէր Տրդատ
41. Տէր Սիմօն
42. Տէր Եսայի
43. Տէր Ստեփաննոս
44. Տէր Յովաբ
45. Տէր Սողոմօն
46. Տէր Գէորգ
47. Տէր Յովսէ
48. Տէր Դաւիթ
49. Տէր Յովհաննէս
50. Տէր Զաքարիա
51. Տէր Գէորգ
52. Տէր Մաշտոց
53. Տէր Յովհաննէս
54. Տէր Ստեփաննոս
55. Տէր Թէոդորոս
56. Տէր Եղիսէ
57. Տէր Անանիա
58. Տէր Վահան
59. Տէր Ստեփաննոս
60. Տէր Խաչիկ
61. Տէր Սարգիս
62. Տէր Պետրոս
63. Տէր Խաչիկ
64. Տէր Գրիգոր Վկայասէրն
65. Տէր Բարսեղ
66. Տէր Գրիգորիս
67. Տէր Ներսէս Կլայեցին
68. Տէր Գրիգոր Տղայն
69. Տէր Գրիգոր Քարավէժն

70. Տէր Յոհաննէս
71. Տէր Գրիգոր Ապիրատն
72. Տէր Յոհան Մեծաբարոյն
73. Տէր Դաւիթ Արքակաղնեցին
74. Տէր Կոստանդին Բարձրբերդցի
75. Տէր Յակոբ գիտնականն
76. Տէր Կոստանդին Պրօնագործն
77. Տէր Ստեփաննոս Հռօմայեցին
78. Տէր Գրիգոր Անաւարզեցին
79. Տէր Կոստանդին Կեսարացին
80. Տէր Կոստանդին Լամբրոնացին
81. Տէր Յակոբ Սսեցին
82. Տէր Մխիթար
83. Տէր Մեսրոբ
84. Տէր Կոստանդին
85. Տէր Պօղոս
86. Տէր Թէոդորոս
87. Տէր Կարապետ
88. Տէր Դաւիթ
89. Տէր Կարապետ
90. Տէր Գրիգոր Խանձողատն
91. Տէր Կոստանդին
92. Տէր Յովսէփ
93. Տէր Գրիգոր Մուսաբէկէնց
94. Տէր Կիրակոս
95. Տէր Գրիգոր
96. Տէր Արիստակէս
97. Տէր Զաքարիա
98. Տէր Սարգիս
99. Տէր Յոհաննէս
100. Տէր Սարգիս
101. Տէր Արիստակէս
102. Տէր Թադդէոս
103. Տէր Եղիշէ
104. Տէր Ներսէս
105. Տէր Զաքարիա
106. Տէր Սարգիս
107. Տէր Գրիգոր
108. Տէր Ստեփաննոս Սալմաստեցի
109. Տէր Միքայէլ
110. Տէր Բարսեղ
111. Տէր Գրիգոր
112. Տէր Ստեփաննոս Առնջեցի
113. Տէր Թադդէոս
114. Տէր Առաքեալ
115. Տէր Դաւիթ
116. Տէր Մելքիսէթ
117. Տէր Սրապիոն
118. Տէր Սահակ
119. Տէր Մովսէս
120. Տէր Փիլիպպոս Հաղբակեցի
121. Տէր Յակոբ Զուղայեցի
122. Տէր Եղիազար
123. Տէր Նահապետ
124. Տէր Աղէքսանդր
125. Տէր Աստուածատուր
126. Տէր Կարապետ
127. Տէր Աբրահամ
128. Տէր Աբրահամ
129. Տէր Ղազար
130. Տէր Մինաս
131. Տէր Աղէքսանդր
132. Տէր Յակոբ
133. Տէր Սիմէօն
134. Տէր Ղուկաս
135. Տէր Յովսէփ անուանեալ
136. Տէր Դանիէլ
137. Տէր Դաւիթ
138. Տէր Եփրեմ
139. Տէր Յոհաննէս, որ կայ այժմ եւ վարէ զիշխանութիւն կաթուղիկոսութեանն եւ Տէր տացէ նմա զկեանս ընդ երկայն աւուրս:

Ժամագիրք, Շուշի, 1838, էջ 579-584:

Անուանք եւ թիւք կաթուղիկոսացն Աղուանից, սկսեալ ի սրբոյն Եղիշէէ առաքելոյն յաշակերտէ սրբոյ առաքելոյն Թադէոսի մինչեւ ի տէր Մարգիս վերջին կաթուղիկոս, որ էր ի տոհմէ Հասան Ջալալեանց:

1. Տէր սուրբ Եղիշէ առաքեալ
2. Տէր Մատթէ
3. Տէր Սահակ
4. Տէր Մովսէս
5. Տէր Պանդ
6. Տէր Ղազար
7. Տէր սուրբն Գրիգորիս
8. Տէր Զաքարիայ
9. Տէր Դաւիթ
10. Տէր Յոհան
11. Տէր Երեմիայ. Ի սորա աւուրս արար գիր Աղուանից երանելին Մեսրովբ, որ եւ Հայոց եւ Վրաց ետ զնշանագիր ջանիւ մեծաւ
12. Տէր Շուփաղիշոյ
13. Տէր Աբբաս եպիսկոպոս ի Մեծիրանց
14. Տէր Վիրոյ
15. Տէր Զաքարիայ այր սուրբ
16. Տէր Յոհան եպս. Ամարասայ
17. Տէր Ուխտանէս
18. Տէր Եղիազար եպս. ի Շաքուայ
19. Տէր Ներսէս եպս. ի Քարթմանայ
20. Տէր Սիմէօն. սա զպղտորումն Ներսիսի եբարձ յարկրէ
21. Տէր Միքայէլ ի Շաքուայ
22. Տէր Անաստաս
23. Տէր Յօսէփ եպս. յԱմարասայ
24. Տէր Դաւիթ եպս. յԱմարասայ
25. Տէր Դաւիթ եպս. ի Մեծկունէից
26. Տէր Մատթէոս եպս. ի Գաբաղակայ
Գրիգորիոս, քրոջորդի Գրիգոր կաթողիկոս Վկայասէրի, որի կողմից կարգուեց առաջնորդ Եգիպտոսի Հայոց, 1077 թ. – 249: ***142***
Գրիգորիս Պահլաւիկ (մօտ 295-338). որդի Վրթանէս Ա Պարթեւի, թոռ Գրիգոր Լուսաւորչի: Կաթողիկոս Աղուանից, Աղուանից եկեղեցու հիմադիրը – 124, 165, 190, 589, 590: ***84***, ***110***, ***122***, ***432-435***, ***439***
Գրիգորիս (Գրիգորէս) Պարոնտէր, որդի Վախտանգի, եղբայր Խաչենի իշխան Հասանի: Առաջնորդ Դաղիվանքի: Յիշւում է 1182 թ. – 597: ***455***
Գրիգորիս, տէր, միաբան Դաղի վանքի, ԺԳ դ. – 597: ***454***
Գրիգորիս վարդապետ, ԺԳ դ.՞ – 490: ***339***
Գրիգորիս *տես* Գագիկ Բ, կաթողիկոս Աղուանից
Գրիգորիս, 1557 թ. – 521: ***350***
Գօրգէ *տես* Գէորգ

Դաղէ (նաեւ՝ Դաթէ, Դաղիու), աշակերտ Թադէոս առաքեալի, նահատակուեց Արցախում, ուր իր գերեզմանի վրա կառուցուեց Դաղի վանքը. Ա դ. – 186, 597: ***117***, ***453***
Դանան. աշակերտ Մեսրոպ Մաշտոցի, առաջնորդ Եկեղեաց գաւառի, Ե դ. – 124: ***83***
Դանիէլ վարդապետ, առաջնորդ Սեւանայ վանքի, 1557 թ.: Նոյն թուին յիշւում է Սեւանայ վանքի նշանաւոր դռան վրայի արձանագրութեան մէջ – 521, 524: ***350***, ***357***
Դանիէլ վարդապետ, առաջնորդ Արտազ գաւառի Սուրբ Թադէոս առաքեալի վանքի, 1651 թ. – 592: ***447***
Դանիէլ, որդի Յովսէփի, 1766 թ. – 101: ***69***
Դանիէլ Ա Սուրմառեցի. կաթողիկոս Հայոց, 1807-1808 թթ. – 309-311: ***164***, ***165***
Դանիէլ, պատրիարք Կ. Պոլսի *տես* Դանիէլ Ա Սուրմառեցի, կաթողիկոս Հայոց
Դասապետ, Քահանայապետի հետ նուիրատուութիւն կատարեց Ներքին Տէլիչէր գիւղի Սուրբ Աստուածածին վանքին, 1207 թ. – 483: ***327***
Դասապետ վարդապետ, եղբօր՝ Կարապետի հետ շինեց Գոշավանքի պարիսպը եւ զանգակատունը, 1291 թ. – 603: ***459***, ***460***
Դաստագիւլ (Դաստագուլ), կին Աւագ Երեւանցու, 1639 թ. – 405: ***275***
Դաստագիւլ (Տաստագուլ), կին Արզումանի և հարս Թադէոսի, որ նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Դաւիթ մարգարէ – 630: ***460***
Դաւիթ Ա, կաթողիկոս Աղուանից, Դ դ. – 590: ***435***
Դաւիթ Անյաղթ, փիլիսոփա, Ե դ. – 117, 118, 522: ***78***, ***80***, ***353***, ***354***
Դաւիթ Սահառունի, իշխան, շինեց Մրէնի տաճարը, 613 թ. – 374: ***233***
Դաւիթ. պարսիկ. նախ անունը Սուրհան էր, մկրտուեց Անաստաս կաթողիկոսի կողմից եւ վերանուանուեց Դաւիթ, 661 թ. – 218: ***132***

Դաւիթ Դունեցի, նահատակուեց Դուինում, 701 թ. – 384, 418: ***246***, ***295***
Դաւիթ Բ, կաթողիկոս Աղուանից, 763-767 թթ. – 590: ***437***
Դաւիթ Ա Արամօնեցի, կաթողիկոս Հայոց, 728-741 թթ. – 129, 223, 441: ***89***, ***133***, ***315***
Դաւիթ Գ, կաթողիկոս Աղուանից, 767-776 թթ. – 590: ***437***
Դաւիթ Բ Կակաղեցի, կաթողիկոս Հայոց, 806-833 թթ. – 233: ***135***
Դաւիթ Դ, կաթողիկոս Աղուանից, 822-850 թթ. – 590: ***438***
Դաւիթ Բագրատունի, որդի Աշոտ Ա-ի եւ եղբայր Սմբատ Ա թագաւորի, մահացել է 903-914 թթ. ընթացքում – 238: ***137***
Դաւիթ Ե, կաթողիկոս Աղուանից, 922-928 թթ. – 590: ***438***
Դաւիթ Զ, կաթողիկոս Աղուանից, 962-968 թթ. – 590: ***439***, ***441***, ***443***
Դաւիթ Է, կաթողիկոս Աղուանից, 968-974 թթ. – 590: ***439***
Դաւիթ, հայր Կիւրիկէի, 1040 թ. – 590: ***439***
Դաւիթ Ա Անհողին, թագաւոր Կիւրիկեան, 989-1048՞ թթ., եղբօրորդի Գագիկ Ա թագաւորի – 246: ***139***
Դաւիթ Ա, կաթողիկոս Աղթամարի, 1113-1165՞ թթ. – 251: ***144***
Դաւիթ Գ Արքակաղնեցի կաթողիկոս, 1207-1211 թթ.: Շահխաթունեանցն իբրեւ մահուն թուական դնում է 1206, որը, հաւանաբար, վրիպակ է: Կաթողիկոսների գահացանկի մէջ չի մտնում – 256: ***146***
Դաւիթ, հայր Փէճարենց Մխիթարի, 1211 թ. – 533: ***367***
Դաւիթ Բագրատունի, իշխան Նոր-Բերդի, որդի Վասակի, հայր Վասակի, յիշւում է 1192-1237 թթ. – 603: ***460***
Դաւիթ, վկա եղաւ մի այգի Պետեւանին վաճառելուն, 1266 թ. – 433: ***314***
Դաւիթ, որդի Քրդի և եղբայր Հասանի, 1283 թ. – 405: ***274***
Դաւիթ, որդի Վրաց Դեմետրէ թագաւորի, 1285 թ. – 435: ***314***
Դաւիթ Հէճուպ, որդի Հոնայի, թոռ Ալուեցու. նուիրատուութիւն կատարեց Յովհաննավանքին, 1300 թ. – 405: ***274***, ***275***
Դաւիթ, Գրիգոր քահանայի եւ Մանասի հետ շինել (հաւանաբար՝ վերանորոգել) տուեցին Աշտարակի Կարմրաւոր եկեղեցին. ԺԳ դ.՞ - 401: ***264***
Դաւիթ, 1325 թ. – 444: ***316***
Դաւիթ երէց, կանգնեցրեց մի խաչքար Զօրախաչ գիւղում, 1342 թ. – 556: ***374***
Դաւիթ Դ կաթողիկոս, 1398 թ. – 267: ***149***
Դաւիթ Ը, կաթողիկոս Աղուանից. մահացել է 1411 թ. – 590: ***441***, ***443***
Դաւիթ, հայր Տատլուղանի՝ կնոջ Փիրամզայի, որ նորոգեց Առնեղ գիւղի Սուրբ Գրիգոր եկեղեցին, 1549 թ. – 536: ***368***
Դաւիթ Թ Արջաձորեցի, կաթողիկոս Աղուանից, ԺԶ դ. – 590: ***442***
Դաւիթ Դ Վաղարշապատցի (Շահխաթունեանցի մօտ՝ Ե), կաթողիկոս Հայոց, 1590-1629 թթ. – 290, 291, 324, 572, 576, 584: ***151***, ***152***, ***188***, ***398***, ***407***, ***423***
Դաւիթ վարդապետ, առաջնորդ Բջնիի, ԺԶ-ԺԷ դդ. – 485: ***333***
Դաւիթ, թագաւոր Վրաց, 1669 թ. – 403: ***267***
Դաւիթ եպիսկոպոս Պռոշեան, առաջնորդ Գեղարդավանքի, 1635-1675 թթ. – 574: ***404***
Դաւիթ վարդապետ, առաջնորդ Յովհաննավանքի, աւարտեց վանքի վերանորոգումը, 1669-1683 թ. – 403: ***266-268***
Դաւիթ վարդապետ Խաղբակեան, առաջնորդ Գեղարդավանքի, 1687 թ. – 42: ***39***, ***40***
Դաւիթ եպիսկոպոս, հօրեղբայր Դաւիթ վարդապետ Խաղբակեանի: Յիշւում է 1687 թ. – 42: ***40***
Դաւիթ վարդապետ Տփխիսեցի, առաջնորդ Խոր-Վիրապի վանքի, 1661-1695 թթ. – 571, 572: ***395-398***
Դաւիթ աբեղայ Պռոշեցի (Պռոշեան), առաջնորդական տեղապահ Գեղարդայ վանքի, 1698 թ. – 53: ***50***
Դաւիթ, առաջնորդ Երեւանի Անանիա առաքեալի եկեղեցու, ԺԷ-ԺԸ դդ. – 421: ***303***
Դաւիթ, հայր Կարապետի, որ նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Դաւիթ Ե Էնէգեթցի, կաթողիկոս Հայոց, 1801-1807 թթ. – 114, 128, 309, 310,

324, 331, 423: ***75***, ***76***, ***87***, ***164***, ***165***, ***188***, ***196***, ***305***
Դեկոս, Հռոմի կայսր – 177, 178, 180: ***114***, ***115***
Դեղ, վկա եղաւ մի այգի Պետեւանին վաճառելուն, 1266 թ. – 433: ***314***
Դեմետրէ, թագաւոր Վրաց, 1283-1285 թթ. – 435, 603: ***314***, ***459***
Դեմետրէ Բագրատունի, թագաւոր Վրաց, 1385 թ. – 384, 603: ***246***, ***459***
Դեոսկորոս, առաջնորդ Սանահնի վանքի. Յովհաննէս-Սմբատ թագաւորը նրան դարձրեց կաթողիկոս. չընդունուելով ժողովրդի կողմից, վտարուեց գահից 1039 թ. – 247: ***140***
Դէլուղարդաշ, պապ Էհիէի, 1513 թ. – 567: 381
Դիլանջի, հայր Ամրումի, 1609 թ. – 405: ***276***
Դիոկղետիանոս, Հռոմի կայսր – 173, 181, 317: ***113***, ***115***, ***180***
Դիոնէսիոս, հայրապետ Աղէքսանդրիայի, Գ դ. – 177: ***114***
Դիւան, Սահիպ, հայր Զաքարէի, ԺԴ դ. – 484: ***330***
Դխտիկ *տես* Դստրիկ
Դոլվաթբէկ (Դօլվաթբէկ), Սակավիողը գնեց եւ նուիրեց Յովհաննավանքին, 1584 թ. – 405: ***275***
Դոմետիանոս կայսր – 170: ***112***
Դոփ, դուստր Սարգսի, քոյր Զաքարիայի եւ Իւանէի, ԺԳ դ. – 484, 597, 598: 331, ***452***, ***455***, ***456***
Դոփ (Դուփ), պապ Գրիգոր իշխանի, 1303 թ. – 484: ***331***
Դստրիկ (Դխտիկ, Դուստր), Մամիկոնեան տիկին, կին Վարդան Մամիկոնեանի, թոռ Սահակ Պարթեւ կաթողիկոսի, Ե դ. – 197: ***128***
Դօլվաթբէկ *տես* Դոլվաթբէկ

Եաղուպ (Աղուպ) Բէկ, իշխանաւոր Երեւանի, 1441 թ. – 419: ***297***
Եաղուպ Բէկ, Երեւանի խան, 1557 թ. – 419, 521: ***297***, ***350***
Եաղուբ Բլրցի (Երեւանի), հայր մելիք Մինասի, որի արդեամբ նորոգուեցին Էջմիածնի Մայր տաճարի սիւները, 1777 թ. – 23: ***28***
Եզր Ա Փառաժնակերտցի, կաթողիկոս Հայոց, 630-641 թթ. – 13, 216, 327, 328, 486, 588: ***21***, ***131***, ***193***, ***334***, ***431***
Ելտկուզ չարագործ, յիշւում է 1163 թ. - 381: ***243***, ***244***
Եղբայրիկ (սեռ. Եղբայրկան), հայր Վահրամի, 1216 թ. – 405: ***271***
Եղիա Ա Արճիշեցի, կաթողիկոս Հայոց, 703-717 թթ. – 221, 590: ***133***, ***437***
Եղիա, առաջնորդ Հաւուց Թառի, 1205 թ. – 576: ***407***
Եղիա, տէր, առաջնորդ Գանձասարի վանքի, 1467 թ. – 605: ***464***, ***466***
Եղիա, հայր Յակոբջանի, 1660 թ. – 79: ***57***
Եղիա, ոմս, 1680 թ. – 582: ***421***
Եղիա, որդի Գրիգոր Թոխաթեցու, 1765 թ. – 101: ***69***
Եղիազար, կաթողիկոս Աղուանից, 683-689 թթ. – 335, 590: ***202***, ***436***
Եղիազար, միաբան Աստուածընկալ Սուրբ Նշան վանքի, 1207 թ. – 464: ***322***
Եղիազար, ոմս, 1680 թ. – 582: ***421***
Եղիազար Ա Այնթապցի, կաթողիկոս Հայոց, 1681-1691 թթ. – 18, 19, 31, 295-297, 325, 330, 331, 404, 423, 588, 590: ***24-26***, ***32***, ***155-158***, ***191***, ***194***, ***196***, ***271***, ***305***, ***431***, ***444***
Եղիազար եպիսկոպոս, առաջնորդ Սեւանի վանքի, ԺԸ դ. – 524: ***358***
Եղիազար, հօրեղբայր Գրիգոր Խօջաջանեանի, 1771 թ. – 107: ***71***
Եղիշէ (նաեւ՝ Եղիշայ) եպիսկոպոս, սուրբ, աշակերտ Թադէոս առաքեալի, Ա դ. – 67, 163, 589, 590: ***11***, ***54***, ***108***, ***109***, ***432-435***
Եղիշէ Ա Ռշտունի, կաթողիկոս Հայոց, 941-946 թթ. – 241: ***137***
Եղիշէ Բ, աթոռակից Սարգիս Գ կաթողիկոսի, 1504-1506 թթ., կաթողիկոս Հայոց՝ 1506-1515 թթ. Հայոց կաթողիկոսների գահացանկի մէջ չի մտնում – 43, 281, 282: ***41***, ***150***
Եղիշէ, հայր Փիրհամզայի, 1513 թ. – 567: ***381***
Եղիշէ սարկաւակ Դարանակուց, միաբան Տաթեւի վանքի, 1513 թ. – 567: ***381***
Եղիսաբեթ, ոմս, 1680 թ. – 582: ***421***
Եղիսաբեթ (Եղիսապետ), կին Յակոբ Շամախեցու և մայր Թամուրի և Ոհանի, որ նուիրատուութիւն կատարեցին Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***

Եղիսաբէթ, երկրորդ կին Թադէոսի, որ նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Եղիսաբեթ, կին Կարապետ Պապայեան Ագուլեցու, 1784-1786 թթ. – 26, 95: ***30***, ***66***
Ենովք, աշակերտ Մեսրոպ Մաշտոցի, Ե դ. – 124: ***83***
Եպիփան, տեսուչ կրօնաստանի, Դ դ. – 193: ***124***
Եսայի Ա Եղիպատրուշեցի. նախ առաջնորդ Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի՝ 768 թ., ապա կաթողիկոս Հայոց, 775-788 թթ. – 227, 588: ***134***, ***431***
Եսայի վարդապետ, առաջնորդ նախ Երնջակի Սուրբ Գէորգ վանքի, ապա՝ Սուրբ Յովհաննու Կարապետի, 1551 թ. – 585: ***424***
Եսայի վարդապետ, առաջնորդ կամ միաբան Երնջակի Սուրբ Յովհաննու Կարապետի վանքի, 1655 թ. – 585: ***424***
Եսայի վարդապետ, միաբան Երնջակի Սուրբ Ստեփաննոս Նախավկայի, 1731 թ. – 585: ***425***
Եսայի Հասան-Ջալալեանց (Գանձասարցի, Քուլաթաղեցի), կաթողիկոս Աղուանից, 1702-1728 թթ. – 590, 596, 616: ***6***, ***444***, ***450***, ***455***, ***471***
Եսուաղէն (նաեւ՝ Արսվաղ), թագաւոր Աղուանից, Ե դ. – 124: ***83***, ***84***
Երակղ *տե՛ս* Հերակլ
Երաստ, նահապետ, թոռ Արամայիսի, թոռան թոռ Հայկ նահապետի – 368: ***226***
Երեմիա մարգարէ – 593: ***448***
Երեմիա եպիսկոպոս Աղուանից, Ե դ. – 124: ***83***, 84
Երեմիա սարկաւագ, աշակերտ Սահակ Պարթեւ կաթողիկոսի, Ե դ. – 197: ***127***
Երեմիա Ա, կաթողիկոս Աղուանից, Ե դ. – 589, 590: ***434***, ***436***
Երեմիա Բ Ջալալեանց Գանձասարցի, կաթողիկոս Աղուանից, 1676-1700 թթ. – 590: ***443***, ***444***
Երեմիա, ճգնաւոր, առաջնորդ Թեղենիսի վանքի, ընկերակից Ստեփաննոս Ասողիկի, Ժ դ. – 479: ***325***
Երեմիա, առաջնորդ Մարմաշէնի վանքի. գնաց Յովհաննավանք, ուր եւ վախճանուեց, 1033 թ. – 405ա, 569, 570: ***280***, ***391***, ***393***, ***394***
Երեմիա, գրիչ, օրինակեց մի վիմագիր արձանագրութիւն, 1358 թ. – 484: ***331***
Երեմիա վարդապետ Մեղրեցի, բառարանագիր, ԺԷ դ. – ***40***
Երկաթ, հայր Աշոտի, որ իր այգին նուիրեց Յովհաննավանքին. ԺԳ դ. – 405: ***278***
Երմոգինէ, սուրբ – 74: ***56***
Երուազ քրմապետ, եղբայր Երուանդ Բ թագաւորի – 168, 373: ***111***, ***232***
Երուանդ Ա թագաւոր, Ն. Ք. 569 թ. – 84, 418: ***58***, ***59***, ***296***
Երուանդ Բ թագաւոր, Ա դ. – 166, 168, 368, 373, 418: ***110***, ***111***, ***226***, ***227***, ***232***, ***296***
Եւա, մայր Յովհաննէս ամիրա Կեսարացու, 1790 թ. – 112: ***75***
Եւագր, Երեւանում գտնուող նրա որդու այգին Մխիթարը գնեց եւ նուիրեց Հառիճայ վանքին, 1224 թ. – 568: ***386***
Եւկլիդէս (Էւկլիտոս) – 117: ***78***
Եւղաղ, եպիսկոպոս Եդեսիայի, Ա դ. – 159: ***104***
Եւոլխութլու, հայր Չաղանի, 1334 թ. – 568: ***385***
Եւսեբիոս Կեսարացի, համարւում է քրիստոնէութեան պատմահայրը, հեղինակ նշանաւոր «Եկեղեցական պատմութեան», 260-339 թթ. – 167, 170, 175-177, 180, 187: ***110***, ***111***, ***113-115***, ***118***
Եւստաթէոս (նաեւ՝ Ստաթէ), աշակերտ Թադէոս առաքեալի, Ա դ. – 165: ***110***
Եւստռատիոսեանք – 182: ***115***
Եփրեմ, տեսուչ կրօնաստանի, Դ դ. – 193: ***124***
Եփրեմ Ա Զորագեղցի, կաթողիկոս Հայոց, 1809-1830 թթ. – 27, 37, 38, 114, 128, 311, 325, 331, 403: ***30***, ***36***, ***76***, ***88***, ***165***, ***166***, ***190***, ***196***, ***269***
Եփրեմ արքեպիսկոպոս, առաջնորդ Բջնիի. Գրիգոր Մագիստրոսը նրան ուղղուած ունի մի թուղթ – 485: ***332***
Եփրեմ եպիսկոպոս, նրա անուամբ մի այգի է եղել Վաղարապատում – 140: ***98***
Եփրոսինէ, մայր Գաբրիէլ հարիւրապետի, 1793 թ. – 421: ***304***

Զազ, 1407 թ. – 605: ***465***
Զազայ, աթաբակ, հայր աթաբակ Շահինշահի, 1358 թ. – 484: ***330***
Զալ, 1654 թ. – 521: ***351***

Զալ, Երեւանի խան, 1679 թ. – 419, 420, 427: ***299***, ***302***, ***309***
Զամանադին, ղազի Երևանի – 134: ***93***
Զապէլ թագուհի, ԺԳ դ. – 257: ***146***, ***147***
Զաւէն Ա Մանազկերտցի, կաթողիկոս Հայոց, 377-381 թթ. – 195: ***126***
Զաքար, հայր Միրզա Հանավանցու, 1609 թ. – 405: ***276***
Զաքարիա, հայր Յովհաննէս Կարապետի, սուրբ – 165: ***110***
Զաքարիա եպիսկոպոս, աշակերտ Թադէոս առաքեալի, առաջին առաջնորդ Արտազի, 68-72 թթ. – 160, 166, 168, 187: ***105***, ***110***, ***111***, ***119***
Զաքարիա Ա, կաթողիկոս Աղուանից, Դ կամ Ե դ. (Աճառեանը Զաքարիա Ա-ն դնում է Դ դ., իբրեւ յաջորդ Գրիգորի: Շահխաթունեանցը եւս Զաքարիային համարում է յաջորդ Գրիգորի, բայց դնում է Ե դ.) - 589, 590: ***432***, ***433***, ***435***
Զաքարիա Բ, կաթողիկոս Աղուանից, 629-644 թթ. – 590: ***436***
Զաքարիա կաթողիկոս Բեստացի. նախ առաջնորդ էր Արտազի Սուրբ Թադէոս առաքեալի վանքի, ապա եղաւ կաթողիկոս Աղուանից. քանի որ Շահխաթունեանցը նշում է որ Զաքարիան գրել է բազմաթիւ ճառեր, ուստի, ամենայն հաւանականութեամբ, նկատի ունի Զաքարիա Ձագեցի կաթողիկոսին, որ *տես* - 592: ***446***
Զաքարիա Ա Ձագեցի, կաթողիկոս Հայոց, 855-876 թթ. – 235, 384, 597: ***135***, ***246***, ***453***
Զաքարիա վարդապետ, առաջնորդ Հաւուց Թառի, ԺԱ դ. – 576: ***407***
Զաքարիա (Զաքարէ), որդի Սարգսի, հայր Սարգսի, պապ Նանայի, ԺԲ դ. – 405: ***275***
Զաքարիա (նաև՝ Զաքարէ), Ամիրսպասալար Երկայնաբազուկ, 1205-1215 թթ. – 256, 404, 405, 410, 435, 460, 484, 485, 492, 493, 524, 533, 568, 573, 576, 593, 604, 608: ***146***, ***270***, ***272***, ***273***, ***276***, ***287***, ***314***, ***320***, ***329***, ***330***, ***332***, ***341***, ***342***, ***357***, ***367***, ***384-387***, ***399***, ***407***, ***447***, ***461***, ***468***
Զաքարիա (Զաքարէ), որդի Վախտանգի, եղբայր Հասան Ջալալ Դօլի, 1216 թ. – 605: ***463***
Զաքարիա Ամիրսպասալար, որդի Շահանշահի, թոռ Զաքարիա Ամիրսպասալարի – 573: ***400***
Զաքարիա, պարոն, թոռ Աւագի, 1325 թ. – 444: ***316***
Զաքարիա (նաեւ՝ Զաքար). ծնողների՝ Ղուտալչաքի եւ Ասնաւորի հետ Քարգործենց հողը նուիրեց Աշտարակի Սուրբ Մարիանէ եկեղեցուն, 1326 թ. – 401: ***263***, ***264***
Զաքարիա եպիսկոպոս, առաջնորդ Արտազի Սուրբ Թադէոս առաքեալի վանքի, 1329 թ. – 592: ***446***
Զաքարիա (Զաքարէ), որդի Սահիպ Դիւանի, ԺԴ դ. – 484: ***330***
Զաքարիա, գնեց Մուղնի գիւղը եւ նուիրեց Յովհաննավանքին, 1425 թ. – 405: ***275***
Զաքարիա եպիսկոպոս, առաջնորդ Հաւուց Թառի, 1441 թ. – 576: ***407***
Զաքարիա Գ, կաթողիկոս Աղթամարի, 1434-1464 թթ. – 276: ***150***
Զաքարիա Բ (Շահխաթունեանցի մօտ՝ Գ) Վաղարշապատցի, կաթողիկոս Հայոց, 1515-1520 թթ. – 282: ***150***
Զաքարիա (Զաքարէ) Հանավանցի, հայր Միրզի, որ այլոց հետ Ամրումի այգին նուիրեցին Յովհաննավանքին, 1609 թ. – 405: ***276***
Զաքարիա, եղբայր Յովհաննէս վարդապետ Մուղնեցու և պարոն Վարդանի, ԺԷ դ. – 403: ***268***
Զաքարիա եպիսկոպոս Վաղարշապատցի. Դաւիթ եւ Մովսէս կաթողիկոսների քարտուղարն էր, ապա եղաւ առաջնորդ Յովհաննավանքի, 1637-1639 թթ.: Մահացել է 1659 թ. – 17, 405, 405ա: ***24***, ***275***, ***282***
Զաքարիա Սարկաւագ Քանաքեռցի, ԺԷ դ. – 17, 19, 85, 126, 297, 325, 330, 364, 385, 403-405ա, 407, 410, 411, 413, 423, 433, 436, 451, 485, 524, 570, 576, 588-590: ***24***, ***26***, ***61***, ***87***, ***158***, ***191***, ***195***, ***219***, ***248***, 265-267, ***265***, ***267***, ***269-271***, ***279-282***, ***284***, ***289***, ***290***, ***305***, ***313***, ***315***, ***319***, ***333***, ***357***, ***393***, ***394***, ***408***, ***431***, ***432***, ***443***,
Զաքարիա, եղբայր Դաւիթ վարդապետի, 1670 թ. – 403: ***268***
Զաքարիա խալիֆայ, կազմեց Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի տապանաքարը, 1680 թ. – 295: ***157***
Զաքարիա արքեպիսկոպոս Գուլլասպեան Թիֆլիզեցի (նաեւ՝ Տփխիսեցի) – 76, 519, 521, 524, 525, 528, 530: ***56***, ***347***, ***350***, ***357***, ***360***, ***362-364***

Զաքարիա, սարաֆ, 1766 թ. – 101: ***70***
Զաքարիա վարդապետ, առաջնորդ Հաւուց Թառի, ԺԸ դ. – 576: ***408***
Զաքարիա Կաղզվանցի, պատրիարք Կ. Պոլսի, ԺԸ դ. – 308: ***163***
Զաքէոս, 1291 թ. – 603: ***460***
Զգօն – 190: ***123***
Զեմենտոս եպիսկոպոս, երկրորդ առաջնորդ Արտազ գաւառի, 72-76 թթ. – 168: ***111***
Զիժազատայ, հօրաքոյր Գրիգոր Խօջաջանեանի, 1771 թ. – 107: ***71***
Զիպիտայ, քոյր Գրիգոր Խօջաջանեանի, 1771 թ. – 107: ***71***
Զնջիլ կոմս – 44, 46: ***42***, ***43***, ***46***
Զոթիկոս եպիսկոպոս Կոմանայի, Բ դ. – 175: ***113***
Զոհրապ (Զաւրհապ), որդի Փիրհամզի, որ կանգնեցրեց մի խաչքար, 1549 թ. – 537: ***368***
Զոհրապ (Զօրապ), 1654 թ. – 521: ***351***
Զուզա, մայր կամ կին Մխիթարի՝ առաջնորդի Նորադուսի Սուրբ Աստուածածնի վանքի, ԺԳ դ.՞ - 533: ***367***
Զրւանդատ, առաջնորդ Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի – 588: ***431***
Զօհրայ, Երեւանի խան, 1691 թ. – 407, 419: ***283***, ***299***

Էաչի Խաղբակեան, որդի Հասանի, 1300 թ. – 52, 601: ***49***, ***50***, ***458***
Էլթինայ խաթուն, կին Չարմաղանի, 1235 թ. – 590: ***440***
Էլիազ, որդի խոջա Փանոսի, որ հիմնովին վերակառուցեց Երեւանի Անանիա առաքեալի եկեղեցին, ԺԸ դ. – 421: ***303***
Էհիէ, որդի Բուդաղի, 1513 թ. – 567: ***381***

Ըռզաղուլի *տե՛ս* Ռզա Ղուլի
Ըսկանդար *տե՛ս* Սկանդար
Ըռուզուբան *տե՛ս* Ռուզուբան

Թագուհի, դուստր Աբասի, կին Յովհաննէս-Սմբատ թագաւորի: Բոլոր գիտնականները թագուհին ընդունել են բուն իմաստով, որը մենք չենք բացառում: Սակայն արձանագրութեան բովանդակութիւնից ելնելով հնարաւոր ենք համարում նաեւ վերջինիս հատուկ անուն լինելը: Յիշւում է 1038 թ. – 375: ***234***
Թագուհի, դուստր Սահակ երէցի, նուիրատուութիւն կատարեց Աշտարակի Սուրբ Մարիանէ եկեղեցուն, 1281 թ. – 401: ***262***
Թագուհի, կին Ումեկի, մայր Ճարի, 1283 թ. – 603: ***459***
Թագուհի, տատ Յովհանջան Գերագեանցի, 1785 թ. – 25: ***29***
Թագուհի, քոյր Յովհանջան Գերագեանցի, 1785 թ. – 25: ***29***
Թագուհի, տատ Գրիգոր Խօջաջանեանի, 1771 թ. – 107: ***71***
Թագուհի, մի տուն եւ մի այգի նուիրեց Աշտարակի Սուրբ Մարիանէ եկեղեցուն, 1281 թ. – 401: ***262***
Թադէոս (նաեւ Յուդա, Ղէբէոս, Թադէ), առաքեալ – 3, 32, 39-42, 45, 46, 58, 62, 74, 81, 159-168, 170, 172, 186, 187, 542, 571, 579-581, 590: ***11***, ***15***, ***33***, ***37-41***, ***44***, ***45***, ***51***, ***53***, ***56***, ***57***, ***104-111***, ***113***, ***117-119***, ***371***, ***398***, ***414***, ***417***, ***435***
Թադէոս *տե՛ս* Թէոդորոս Քռթենաւոր
Թադէոս Ա, աթոռակալ Սարգիս Գ կաթողիկոսի, 1499-1504 թթ. – 280, 281: ***150***
Թադէոս Բ, աթոռակալ Գրիգոր ԺԲ Վաղարշապատցի կաթողիկոսի, 1576 թ. – 289, 290: ***151***
Թադէոս կաթողիկոս (ստոյգ չգիտենք՝ Ա-ն թէ Բ-ն) – 492: ***342***
Թադէոս եպիսկոպոս, ատենադպիր Ղուկաս կաթողիկոս Կարնեցու (1780-1799) – 127: ***87***
Թադէոս եպիսկոպոս, առաջնորդ Արտազի Սուրբ Թադէոս առաքեալի վանքի – 592: ***447***
Թադէոս եպիսկոպոս Արայիշենց (այլ), առաջնորդ Արտազի Սուրբ Թադէոս առաքեալի վանքի – 592: ***447***
Թադէոս, նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Թադէոս Ղափանցի, հայր Գրիգոր Թողաթեցու, 1765 թ. – 101: ***69***
Թադէոս եպիսկոպոս, ատենադպիր Ղուկաս կաթողիկոս Կարնեցու, ԺԸ դ. – 127: ***87***
Թադէոս, միաբան Սեւանի վանքի, ԺԹ դ. – 528: ***362***
Թալիլէ, առաջնորդ Վրաց – 590: ***437***
Թահմազ Ա, Պարսից շահ, 1524-1576 թթ. – 303, 419, 597: ***160***, ***297***, ***451***

Թահմազ Ղուլի բէկ, Երևանի խան, որդի Ամիրգունա նախարարի, ԺԷ դ. – 14, 291, 419: ***22***, ***152***, ***298***
Թահմազ շահ, 1722 թ. – 299, 303: ***159-161***
Թահմազ, խան Երեւանի, 1734 թ. – 302: ***160***
Թաղա, հայր Սուլխանի, Ձալի եւ Ձօրապի, 1654 թ. – 521: ***350***, ***351***
Թաղադամուր, 1291 թ. - ***460***
Թաճեր, կին Ամիր Հասանի եւ մայր Էաչի, 1300 թ. – 52, 601: ***49***, ***458***
Թամամ, կոյս, նահատակ, 1691 թ. – 413: ***290***
Թամամ, մայր Իսահակ վարդապետ Փառակեցու, 1788 թ. – 72: ***55***
Թամար, թագուհի Վրաց,1184-1212 թթ., կոչուած այստեղ նաեւ Դդօփալ, պարոն – 405, 568: ***276***, ***387***
Թամար, կին Հեջուպ Վահրամի, 1229 թ. – 568: ***389***
Թամարա, Ռուսաստանի դեսպան Կ. Պոլսում – 309: ***164***
Թամուր Ղայաբէկ, որդի տաճիկ Բուրճալիբէկի, ԺԷ դ. – 148: ***100***
Թամուր, որդի Յակոբ Շամախեցու. եղբօր՝ Ոհանի հետ նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***470***
Թայիկ, կին Վահրամի, 1216 թ. – 405: ***271***, ***272***
Թայիկ, որդի Քուրդ Անբերդեցու – 405: ***277***
Թանգրիղուլի, որդի մելիք Ղուկասի, 1513 թ. – 567: 381
Թառիկ, կին Այվազ Շոռոթեցու, որ նորոգեց Երնջակի Սուրբ Ստեփաննոս Նախավկայի մատուռը, 1714 թ. – 585: ***425***
Թասալ, նուիրատու Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի, ԺԷ դ. – 587: ***427***
Թարխան Քիթաշինեցի, 1513 թ. – 567: ***381***
Թարխան Ոսկանեան, նուիրատու Մաստարա գիւղի, ԺԷ դ. – 136: ***95***
Թաքան-Խաթուն, մայր Ձանխաթունի, որ մի այգի նուիրեց Յովհաննավանքին. ԺԳ դ. – 405: ***278***
Թեդոն, նուիրատուութիւն կատարեց Քարատակի վանքի առաջնորդ Յակոբ վարդապետի դամբարանին, 1673 թ. – 577: ***409***
Թեկղի, կոյս – 9: ***18***
Թէոդոս Մեծ, Հռոմի կայսր, 379-395 թթ. – 123, 193: ***82***, ***125***
Թէոդոս Փոքր, Հռոմի կայսր, 408-450 թթ. – 124, 198: ***82***, ***84***, ***128***
Թէոդոս, սպարապետ Յունաց – 193: ***125***
Թէոդոս (նաեւ՝ Թէոդորոս) Անբերդեցի, մականունը՝ Չրքին, իշխանաց իշխան, որդի Քուրդ Անբերդցու, նուիրատուութիւն կատարեց Յովհաննավանքին, ԺԳ-ԺԴ դդ. – 405: ***277***
Թէոդորոս Մոպսուեստացի – 197: ***127***
Թէոդորոս (նաեւ՝ Թադէոս) վարդապետ Քռթենաւոր, առաջնորդ Արագածոտն գաւառի Սուրբ Աստուածածին վանքի, Է դ. – 125, 568: ***85***, ***389***
Թէոդորոս, կաթողիկոս Աղուանից, 781-785 թթ. – 590: ***438***
Թէոդորոս Ռշտունի, Է դ. – 217, 418: ***132***, ***296***
Թէոդորոս, Գնունեաց եպիսկոպոս, Է դ.: Միքայէլ Չամչեանը նրան անուանում է նաեւ Թադէոս, հաւանաբար նոյնացնելով Թէոդորոս Քռթենաւորի հետ, որը եւս կոչուել է Թադէոս, Թադէոս Գիտնական – 378: ***236***
Թէոդորոս Ա Ռշտունի, կաթողիկոս Հայոց, 930-941 թթ. – 240, 241, 250: ***137***, ***143***
Թէոդորոս Ալախօսիկ, եղել է դռան եպիսկոպոս Սարգիս կաթողիկոսի, իսկ 1077 թ. Փիլարտոսի հրամանով կաթողիկոս է նստել Հոնիում. գահընկեց է արուել 1090 թ.: Մահացել 1095 թ. – 249, 250: ***141***, ***143***
Թէոդորոս Բ Կիլիկեցի, կաթողիկոս Հայոց, 1382-1392 թթ. – 265: ***149***
Թէոսկորոս. արձանագրութիւնը նրան դնում է իբրեւ Հայոց կաթողիկոս 1040 թ., սակայն այդ ժամանակ կաթողիկոս էր Պետրոս Գետադարձը – 379, 590: ***240***, ***439***
Թէոփիլոս եպիսկոպոս Անտիոքացի, աշակերտ Թադէոս առաքեալի. մահացել է 60 թ. – 160, 167: ***105***, ***110***, ***111***
Թիրվանտայ *տես* Թուրուանդա
Թոդոս դես Թէոդոս
Թոռնիկ Ա Մամիկոնեան, իշխան Սասնոյ, ԺԱ դ. – 249: ***141***
Թովմա (նաեւ՝ Թովմաս, Թումա) առաքեալ – 36, 64, 80, 157, 159, 160, 161,

187, 587: ***35***, 44, ***53***, ***57***, ***103***, ***105***, ***106***, ***118***, ***428***
Թովմա Արծրունի, պատմագիր, Թ դ. – 335: ***204***
Թովմա (Թովմաս, Թումաս), քահանայ, Սադուն Արծրունի իշխանի արեւշատութեան համար կառուցեց մի խաչ, 1268 թ. – 401: ***265***
Թովմա (նաեւ՝ Թումա) վարդապետ Մեծոփեցի, պատմագիր, ԺԴ-ԺԵ դդ. – 13, 42, 85, 405ա, 485, 573: ***21***, ***41***, ***61***, ***281***, ***333***, ***402***
Թովմա (Թումա) Սօկուլուեցի, կաթողիկոս Աղուանից. մահացել է 1495 թ. (գուցէ՝ 1475 թ.) – 590, 613: ***442***, ***469***
Թովմա (Թումա) եպիսկոպոս, առաջնորդ Քարատակի վանքի, ԺԷ-ԺԸ դդ. – 577: ***410***
Թովմա Յովսէփեան Ղօրղանեանց Տփխիսեցի. բարերար. նրա առաջարկով Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցը գրեց իր «Ստորագրութիւնք»-ը – 313, 314, 316: ***9***, ***10***, ***169***, ***170***, ***177***, ***178***
Թումա *տես* Թովմա
Թումիան, ըստ տեղական աւանդութեան, Հռիփսիմեանց կոյսերից, որ նահատակուեց Շողակաթ եկեղեցու մոտակայ այգում: Տեղացիներն այդ այգին կոչում են Թումիան – 332: ***198***
Թուրուանդա (Թուրվանտ), մայր Դաւիթ վարդապետի, 1670 թ. – 403: ***268***
Թուրուանդա (Թիրվանտա), դուստր Յովհանջան Գերագեանցի, 1785 թ. – 25: ***29***
Թօթալ Օսման *տես* Օսման Թօթալ
Թօթիկ – 603: ***460***
Թօխմախ *տես* Մահմատ խան

Իբրահիմ խալիֆա Ալփաւուտ, ԺԸ դ. – 136: ***96***
Իբրահիմ աղա, վեզիր Հիւսէին Ալի Երևանի խանի, 1760 թ. – 138: ***97***
Իբրահիմ փաշա, 1728 թ. – 419: ***299***
Իբրահիմ, Պարսից շահ, 1748 թ. – 303: ***161***
Իգդիշ խաթուն, 1291 թ. - ***459***
Իգնատիոս Աստուածազգեաց – 38: ***36***
Իգնատիոս, քեռի Դասապետ վարդապետի և Կարապետի, 1291 թ. – 603: ***460***
Ինանիկ, հայր Դաւիթ վարդապետի, 1687 թ. – 42: ***40***
Ինկիկ (գուցէ Խնկիկ), նուիրատուութիւն կատարեց Ասլը-Քիլիսէ մենաստանին, ԺԳ դ. – 478: ***324***
Ինճիճեան Ղուկաս (1758-1833), վարդապետ, հայագետ, Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ – 423, 521, 525, 561: ***9***, ***306***, ***307***, ***349***, ***359***, ***376***
Ինոկենտիոս Ը պապ, 1492 թ. – 45: ***45***
Ինոկենտիոս պապ, 1697 թ. – 33: ***34***
Իպնդօկլ, հարկահան – 228: ***134***
Իսահակ Պարթեւ *տես* Սահակ Պարթեւ
Իսահակ վարդապետ Փառակեցի, առաջնորդ Սուրբ Թադէոս առաքեալի (Թադէի) վանքի, 1788 թ. – 72: ***55***
Իսմայէլ շահ Սէֆի, 1635 թ. – 293, 419: ***154***, ***298***
Իսրայէլ եպիսկոպոս, Է դ. – 335: ***202***, ***203***
Իսրայէլ, տէր, խմբագիր Յայսմաւուրքի, ԺԳ դ. – 178: ***114***
Իսրայէլ եպիսկոպոս Աղուանից – 188: ***121***
Իսրայէլ Ա Ոթմսեցի, կաթողիկոս Հայոց, 667-677 թթ. – 219: ***132***
Իսրայէլ Գանձակեցի, կաթողիկոս Աղուանից, 1763 թ.-ից: Մահացել է 1765 թ. – 590: ***444***, ***445***
Իսրայէլ Գոռ Աղջնցի – 591: ***446***
Իվանէ *տես* Իւանէ
Իւանէ, աթաբէկ, որդի Մեծն Սարգսի, եղբայր Զաքարիա Ամիրսպասալարի, ԺԳ դ. – 392, 405, 484, 490, 533, 568, 569, 573, 575, 598, 604, 608: ***253***, ***272***, ***329***, ***330***, ***339***, ***367***, ***387***, ***391***, ***399***, ***404***, ***456***, ***461***, ***468***
Իւանէ, որդի Վախտանգի, եղբայր Հասան Ջալալ Դօլի, 1240 թ. – 605: ***463***
Իւանէ, որդի Շահանշահի, հայր Աղբուղայի, 1267 թ. – 380, 397, 410: ***241***, ***256***, ***287***
Իւանէ, հայր Գանձասարի վանքի առաջնորդ Յովհաննէսի, 1271 թ. – 605: ***463***, ***466***
Իւանէ, որդի Շահնշահի, եղբայր Խարկրծեալ սպարապետի, 1385 թ. – 384: ***246***

Լալա փաշա (Ղարա Մուստաֆա), 1577 թ. – 419: ***298***
Լալա, Բէկ, հայր Երեւանի Մահմատ Ղուլի խանի, 1654 թ. – 419: ***298***
Լենկ Թեմուր (Լանկթամուր) – 485: ***333***

Լեւոն Բ Մեծագործ, Կիլիկիայի Հայոց իշխանապետ, 1198-ից՝ թագաւոր. մահացել է 1219 թ. – 48, 253-256: ***48***, ***145***, ***146***
Լեւոն Գ, Կիլիկիայի Հայոց թագաւոր, 1269-1289 թթ. – 258, 259: ***147***
Լեւոն Ե, Կիլիկիայի Հայոց թագաւոր, 1327 թ. – 260, 261: ***148***
Լեւոն Զ, Կիլիկիայի Հայոց թագաւոր, 1374-1375 թթ. – 264: ***148***
Լիպարիտ, հայր Տարսայիճի, 1274 թ. – 595, 599: ***449***, ***456***
Լիպարիտ, իշխան, հայր Սմբատի – 597: ***454***
Լիւսիաս (նաեւ՝ Լիւսիա), դուքս, դատաւոր – 172, 181: ***112***, ***115***
Լուդովիկոս թագաւոր, ԺԲ դ. – 45, 46: ***44***, ***46***
Լուսաւորիչ *տես* Գրիգոր Լուսաւորիչ
Լուսիոս Ե, Հռոմի պապ, ԺԲ դ. – 253: ***145***

Խադ (Խաթ), աշակերտ Թադէոս առաքեալի՞, առաջնորդ Սիւնեաց. նրա գերեզմանի վրա է կառուցուել Խաթրայ վանքը. Ա դ. – 186: ***117***
Խադ սարկաւագ Ներսէս Մեծի (353-373), որի կողմից ձեռնադրուեց եպիսկոպոս եւ առաջնորդ Բագրեւանդի եւ Արշարունիքի – 193: ***124***
Խաթուն, մայր Գրիգոր քահանայի, 1284 թ. – 550: ***374***
Խաթուն, դուստր Հիջուպ Վահրամի, ԺԳ դ. – 568: ***389***
Խաթուն, քոյր Յովհանջան Գերագեանցի, 1785 թ. – 25: ***29***
Խաթունջան, մայր Ագուլենց Պետրոսի, 1658 թ. – 578: ***413***
Խալաթ, որդի Սմբատի, 1206 թ. – 604: ***461***
Խալիլ Օզբէկ խան Երեւանի, 1752 թ. – 419: ***300***
Խաղբակ, նախահայր Խաղբակեան իշխանական տոհմի, հայր Վասակի, ԺԱ դ. – 42, 490: ***40***, ***339***
Խանում, քոյր Սաֆարի, 1655 թ. – 578: ***413***
Խանում, կին Միայսարի – 64: ***53***
Խաչատուր *տես* Խաչիկ
Խաչատուր, վերակառուցեց Սուրբ Եղիշէ առաքեալի վանքը, 1264 թ. – 612: ***469***
Խաչատուր քահանայ, Յովհաննէս քահանայի հետ գրե՞ց Խարիպի վկայաբանութիւնը, 1225 թ. – 569: ***392***
Խաչատուր վարդապետ, մի խաչքար կանգնեցրեց Մաստարայ գիւղի շրջակայքում. ժամանակն անյայտ, բայց հաւանաբար ոչ ուշ քան ԺԳ դարը – 378: ***238***
Խաչատուր քահանայ, մատենագիր, ԺԳ դ. – 569: ***392***
Խաչատուր, մականունը՝ Ալթիղօլաճ, առաջնորդ Յովհաննավանքի, ԺԵ-ԺԶ դ. - 405ա: ***281***
Խաչատուր վարդապետ, առաջնորդ Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի, 1636 թ. – 587, 588: ***429***, ***431***
Խաչատուր վարդապետ Կեսարացի, առաջնորդ Նոր-Ջուղայի, մահ. 1646 թ. – 295: ***155***
Խաչատուր արքեպիսկոպոս, առաջնորդ Գողթն գաւառի, 1669 թ. – 403: ***268***
Խաչատուր, ոմն, 1680 թ. – 582: ***421***
Խաչատուր վարդապետ Ջուղայեցի, առաջնորդ Մաքենեաց վանքի, ԺԷ դ. - 561: ***377***
Խաչատուր վարդապետ Կարնեցի Առաքելեան (1666-1728), մատենագիր – 33: ***34***
Խաչիկ Ա Արշարունի, կաթողիկոս Հայոց, 973-992 թթ. – 132, 245-247, 386, 579, 580, 584: ***92***, ***138***, ***139***, ***248***, ***414-416***, ***423***
Խաչիկ Բ Անեցի, կաթողիկոս Հայոց, 1058-1065 թթ. – 248, 249: ***140***, ***141***
Խաչիկ, առաջնորդ Յովհաննավանքի, 1171 թ. – 405ա: ***280***
Խաչիկ, ազգակա՞ն Մխիթար քահանայի, որն իր այգին նուիրեց Տանձուտի վանքին. ԺԳ դ. – 405: ***278***
Խաչիկ Էմսիազեան Ջուղայեցի, նուիրատու, 1785 թ. – 109: ***73***, ***74***
Խաչիկ աղա Ջնթլումեան, նրա ծախքով կառուցուեց Հռիփսիմէի վանքի զանգակատունը, 1790 թ. – 322: ***186***
Խարիպ (նաեւ՝ Ղարիպ) Մագիստրոս, նահատակ, եղբայր Գրիգորի, 1225 թ. – 569: ***392***
Խարիսիմոս, որդի Աղամալ Շոռոթեցու, 1694 թ. – 333: ***200***
Խարկրծեալ, սպասալար, 1385 թ. (Խարկրծելը վրացերէն Մխարգրձելի-Երկայնաբազուկ բառից է. այս թուին սպասալար Երկայնաբազուկ չի յիշ-

ւում, նաեւ Խարկրծել անուամբ որեւէ մէկը. հաւանաբար շփոթութիւն կա) – 384: ***246***

Խդըր (Խըտըր) Կեսարացի, նրա արդեամբ նորոգութիւններ կատարուեցին Էջմիածնի Մայր տաճարում, 1786 թ. – 26: ***30***

Խդմաթ Ղուլիբէկ, որդի տաճիկ Բուրճալիբէկի, ԺԷ դ. – 148: ***100***

Խըտըր *տես* Խդըր

Խիմշէ, որդի Աթաբակի. նուիրատուութիւն կատարեց Գանձասարի վանքին, 1467 թ. – 605: ***465***

Խոդլու, կին Չաղանի, 1334 թ. – 568: ***385***

Խոյանդզայ, կին Շահանշահի, 1318 թ. – 414: ***292***

Խոյտան, որդի Վասակի – 598: ***456***

Խոնայ *տես* Հոնայ

Խոշաք, կին Իւանէ աթաբեկի, մայր Աւագի, յիշւում է 1214-1258 թթ. – 405, 490: ***273***, ***339***

Խոռեմայ զօրավար – 320: ***185***

Խոսրով, թագաւոր Հայոց, հայր Տրդատ Մեծի – 177, 187, 188, 398, 571: ***114***, ***118-120***, 257, ***394***

Խոսրով Փոքր, թագաւոր, 351 թ. – 84: ***59***

Խոսրով Ա Մեծ, կոչուած՝ Նուշիրվան, թագաւոր Պարսից, 531-579 թթ. – 159, 212: ***104***, ***130***

Խոսրով Բ, թագաւոր Պարսից, 590-628 թթ. – 590: ***436***

Խոսրով Ապրուէզ, Պարսից շահ – 320: ***184***

Խոսրով Բ Կոտակ, որդի Տրդատ Մեծի, թագաւոր Հայոց, 330-338 թթ. – 190, 197, 398: ***123***, ***126***, ***257***

Խոսրով Քէյ, Երեւանի խան, 1648 թ. – 134, 419: ***94***, ***298***

Խոսրո[վանոյշ], թագուհի Հայոց, կին Աշոտ Գ Ողորմածի, 954-977 թթ. – 380: 243

Խոսրովիդուխտ, քոյր Տրդատ Մեծի, Գ-Դ դդ. – 318, 423: ***183***, ***307***

Խոսրովիկ, միաբան Հռիփսիմէի վանքի, ԺԷ դ. – 324: ***190***

Խորենացի *տես* Մովսէս Խորենացի

Խորիշահ, կին Վախտանգի, մայր Հասան Ջալալ Դօլի, 1216-1229 թթ. – 605, 607, 608: ***462***, ***463***, ***467***, ***468***

Խորիշահ Մամիկոնեան, կին Քուրդ իշխանի, մայր իշխանաց իշխան Հասանի, յիշւում է 1244-1283 թթ. – 405, 410, 464: ***273***, ***274***, ***288***, ***321***

Խորիշահ, կին Զաքարիայի, դուստր Վասակի, ԺԳ դ. ? – 405: ***277***

Խորիշահ, կին Քոշաքշերի, 1306 թ. – 484: ***331***

Խոցադեղ, վկա եղաւ մի այգի Պետեւանին վաճառելուն, 1266 թ. – 433: ***314***

Խուանդ-Խաթուն, կին Քուրդ Անբերդցու, ԺԳ-ԺԴ դդ. – 405: ***277***

Խուանդզէ *տես* Խոյանդզայ

Խուդաբանդայ (Խուտաբանտայ), Պարսից շահ, 1578 թ. – 419: ***298***

Խուզիմա ոստիկան – 130, 232: ***90***, ***135***

Խուլլու-Խաթուն, կին Պռոշ իշխանի, 1268 թ. – 42, 573: ***40***, ***400***

Խուլլու-Խաթուն (Խուտ-Խաթուն), կին Քուրդի, 1329 թ. – 408: ***285***

Խուլլու-Խաթուն (Խոդլու), կին Եւոլ-Խուլլուի, 1334 թ. – 568: ***385***

Խուպասար, հայր Սանասարի և Պաղտասարի, 1235 թ. – 568: ***386***

Խուտ-Խաթուն *տես* Խուլլու-Խաթուն

Խօչախ, որդի Վասակի, 1201 թ. – 598: ***456***

Խօչաք, կին Սահիպ Դիւանի, մայր Զաքարէի – 484: ***330***

Ծերթա, միաբան Աստուածընկալ Սուրբ Նշան վանքի, 1207 թ. – 464: ***322***

Կալաչևսկի Սիմոն Ֆէօդորովիչ, Երեւանի գաւառապետ, 1839 թ. – 419: ***301***

Կալիմոքոս, յոյն բանաստեղծ – 117: ***78***

Կախաբեր (Կախայբեր), հայր Քրդի, 1244-1247 թթ. – 404, 490: ***270***, ***336***

Կաղանկատուացի *տես* Մովսէս Կաղանկատուացի

Կամենաս, Անիի յոյն քաղաքապետ, 1047 թ. – 247, 248: ***140***

Կանտիբօ, գնդապետ, Երեւանի նահանգապետի տեղակալ, 1829 թ. – 419: ***300***

Կատայ թագուհի, կին Գագիկ Ա թագաւորի, տատ Մարիամ թագուհու, ԺԱ դ. – 569: ***391***

Կատար, մայր Այվազ Շոռոթեցու, որ նորոգեց Երնջակի Սուրբ Ստեփաննոս Նախավկայի մատուռը, 1714 թ. – 585: ***425***

Կատարեալ կոյս *տես* Թամամ

Կատարինէ կոյս – 75: ***56***

Կատրամիդէ թագուհի, կին Գագիկ թագաւորի, Ժ-ԺԱ դդ. – 594: ***448***
Կատրանդինէ *տես* Կատրամիդէ
Կարապետ, վկա եղաւ մի այգի Պետեւանին վաճառելուն, 1266 թ. – 433: ***314***
Կարապետ, հայր Հասանի, 1274 թ. – 595: ***450***
Կարապետ, եղբայր Դասապետ վարդապետի, որի հետ կառուցեցին Գետկայ վանքի պարիսպն ու զանգակատունը, 1291 թ. – 603: ***459***, ***460***
Կարապետ Ա Կեղեցի, կաթողիկոս Հայոց, 1393-1404 թթ. – 266: ***149***
Կարապետ, կաթողիկոս Աղուանից, 1406 թ. – 590: ***441***
Կարապետ Բ կաթողիկոս, 1403-1418 թթ.: Հայոց կաթողիկոսների գահացանկի մէջ չի մտնում - 268, 613: ***149***, ***469***, ***470***
Կարապետ եպիսկոպոս, առաջնորդ Յովհաննավանքի, 1441 թ. – 405ա: ***281***
Կարապետ քահանայ, 1557 թ.– 521:***350***
Կարապետ եպիսկոպոս, առաջնորդ Սեւանայ վանքի, ԺԶ-ԺԷ դդ. – 524: ***357***
Կարապետ քահանայ, 1660 թ. – 79: ***57***
Կարապետ, հայր Դաւիթ վարդապետի և պարոն Վարդանի՝ եղբօրորդիների Յովհաննէս վարդապետ Մուղնեցու, որ վերակառուցեց Սուրբ Գէորգ եկեղեցին, 1669-1670 թթ.. – 403: ***268***
Կարապետ Վէլումենց, 1681 թ. – 578: ***413***
Կարապետ վարդապետ, առաջնորդ Բջնիի, ԺԷ-ԺԸ դդ ՞– 485: ***333***
Կարապետ Բ (Շահխաթունեանցի մօտ՝ Գ) Ուլնեցի, կաթողիկոս Հայոց, 1726-1729 թթ. – 300, 325: ***159***, ***191***
Կարապետ, որդի Դաւթի, նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Կարապետ, որդի Արզամանի, որ նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Կարապետ Թաւրիզեցի, 1731 թ. – 75: ***56***
Կարապետ, պատրիարգ Երուսաղէմի, 1762-1768 թթ. – 101: ***70***
Կարապետ Պապայեան Ագուլեցի. նրա արդեամբ Էջմիածնի Մայր տաճարում կատարուեցին նորոգութիւններ, 1784-1786 թթ. – 26, 95: ***30***, ***66***
Կարապետ, որդի Յովհաննէս ամիրա Կեսարացու, 1790 թ. – 112: ***75***
Կիմաթ (Կիմայթ), մայր Սանասարի և Բաղդասարի, 1235 թ. – 568: ***386***
Կիպրիանոս եպիսկոպոս Կարգեդոնացւոց, Գ դ. – 180: ***115***
Կիռ Մանուէլ *տես* Մանուէլ կայսր
Կիրակոս ճգնաւոր, Ե դ. – 160: ***106***
Կիրակոս, յիշւում է իբրեւ «գծծակերպ գիտնական», առաջնորդ Թեղենիսի վանքի, Ժ դ. – 479: ***325***
Կիրակոս Գանձակեցի, պատմագիր, ԺԲ դ. – 44, 85, 188, 335, 479, 576, 589, 590: ***43***, ***61***, ***121***, ***204***, ***325***, ***407***, ***432-435***, ***439***, ***440***
Կիրակոս, յոյն դպիր – 117: ***78***
Կիրակոս Ա Վիրապեցի, կաթողիկոս Հայոց, 1441-1443 թթ. – 13, 87, 126, 133, 275, 276, 405ա, 485, 572, 576, 590: ***20***, ***21***, ***62***, ***63***, ***86***, ***93***, ***149***, ***150***, ***281***, ***333***, ***398***, ***407***, ***442***
Կիրակոս վարդապետ, ԺԵ դ. – 405ա: ***281***
Կիրակոս, հայր Ագուլենց Պետրոսի, 1658 թ. – 578: ***413***
Կիրակոս վարդապետ, առաջնորդ Սաղիան գիւղի վանքի, 1660 թ. – 614: ***470***
Կիրակոս, եղբայր Դաւիթ վարդապետ Խաղբակեանի, 1687 թ. – 42: ***40***
Կիւլիստան, կին Յովհանջան Գերագեանցի, 1785 թ. – 25: ***29***
Կիւրիկէ թագաւոր Կիւրիկեանց, որդի Դաւիթ Անհողինի, ԺԱ դ. – 590: ***439***
Կիւրիկէ (Կուրիկէ) Գ թագաւոր Կիւրիկեանց, ԺԲ դ. – 597: ***455***
Կիւրիկէ թագաւոր, հայր Վասակի – 598: ***456***
Կիւրիոն, կաթողիկոս Վրաց – 13, 213: ***21***, ***130***, ***131***
Կղենէոս (նաեւ՝ Կղէոնիոս), եպիսկոպոս Կապադովկիայի, նահատակուեց 287 թ. – 181: ***115***
Կղէնիոս *տես* Կղենէոս
Կղէովպ, եղբայր Յովսէփ Աստուածահօր – 162: ***107***
Կոգնատիոս *տես* Կոն
Կոկճայ, որդի Թադէոսի, որ նուիրատուութիւն կատարեց Մասէր գիւղի Աստուածընկալ Սուրբ Նշան եկեղեցուն, 1719 թ. – 616: ***471***
Կոմիտաս (Կումիտաս) Ա Աղցեցի, կաթողիկոս Հայոց, 613-628 թթ. – 11, 13,

214, 320, 321, 325, 590: ***20***, ***21***, ***131***, ***184-186***, ***190***, ***436***
Կոմսի *տես* Կումսի
Կոն (նաեւ՝ Կոնոս, Կոգնատիոս), եպիսկոպոս Եդեսիայի, Գ դ. – 173: ***113***
Կոնոս դեռ Կոն
Կոստանդ, Բիւզանդիայի կայսր – 190: ***123***
Կոստանդիանոս կայսր, 306-337 թթ. – 45: ***44***
Կոստանդին, Բիւզանդիայի կայսր, 658 թ. – 217, 261, 335, 378, 418: ***132***, ***202***, 204, ***236***, ***296***
Կոստանդին Ծիրանածին (Պերփերուժէն), Բիւզանդիայի կայսր, 912-958 թթ. – 238: ***137***
Կոստանդին Մոնոմախ, Բիւզանդիայի կայսր, 1042-1054 թթ. – 247, 490, 570: ***140***, ***335***, ***337***, ***394***
Կոստանդին, հայր Հեթումի, 1224 թ. – 257: ***147***
Կոստանդին կաթողիկոս Սսի, 1246 թ. – 484, 485: ***332***
Կոստանդին Ա Բարձրբերդցի, կաթողիկոս Հայոց, 1221-1267 թթ. – 257, 258, 405, 405ա, 484: ***146***, ***147***, ***272***, ***280***, ***330***
Կոստանդին Բ Կատուկեցի (Պրոնագործ), կաթողիկոս Հայոց, 1286-1289 թթ. – 259: ***147***
Կոստանդին Դ Լամբրոնացի (Կոստանդին Գ-ն Կեսարացին է, իսկ Կոստանդին Դ-ն՝ Լամբրոնացին: Շահխաթունեանցը Կոստանդին Բ Կատուկեցին և Կոստանդին Գ Կեսարացին նոյնացրել է: Ժամանակագրական կարգով սա Կոստանդին Դ Լամբրոնացին է), կաթողիկոս Հայոց, 1323-1326 թթ. – 260: ***148***
Կոստանդին Դ, Կիլիկիայի թագաւոր, 1344-1363 թթ. – 261: ***148***
Կոստանդին Ե (Շահխաթունեանցի մօտ՝ Դ) Սսեցի, կաթողիկոս Հայոց, 1372-1374 թթ. – 263: ***148***
Կոստանդին Զ Վահկացի, կաթողիկոս Հայոց, 1430-1439 թթ. – 272: ***149***
Կոստանեանց Կարապետ (1853-1920), հայագետ – ***78***
Կոստաս կայսր – 335: ***204***
Կորիւն վարդապետ, մատենագիր, Ե դ. – 83, 119: ***58***, ***80***, ***81***
Կուլալ, վկա եղաւ մի այգի Պետեւանին վաճառելուն, 1266 թ. – 433: ***314***
Կումիտաս *տես* Կոմիտաս
Կումսի (Կոմսի), առաջնորդ Սուրբ Թովմայի վանքի, Ա դ. – 161, 169, 171, 587, 588: ***106***, ***111***, ***112***, ***428***, ***430***, ***431***
Կունզուտ Գանձակեցի, 1513 թ. – 567: ***381***
Կրասովսկի, գեներալ-լեյտենանտ, Երեւանի նահանգապետ, 1827 թ. – 419: ***300***
Կրասիլևսկի Զինովի Կոնդրատիչ, Երեւանի գաւառապետ, 1839 թ. – 419: ***301***

Հազարբէկ, որդի Սահմադինի, 1288 թ. - 398: ***258***
Հազարտիկին (արձանագրութեան մէջ՝ Ռ տիկնա, որ Շահխաթունեանցն ընթերցել է Ռատինիկ, Ղաֆադարեանը[1] տուել է ճիշտ ձեւը՝ Հազարտիկին). ազգակամն Մխիթար քահանայի, որն իր այգին նուիրեց Տանձուտի վանքին. ԺԳ դ. – 405: ***278***
Հաճիբէկ *տես* Հաջիբէկ
Համազասպ եպիսկոպոս Մամիկոնեան, առաջնորդ Յովհաննավանքի. յիշւում է 1279-1300 թթ. – 398, 405, 405ա, 408, 490, 589: ***258***, ***273***, ***274***, ***278***, ***280***, ***285***, ***432***
Համազասպ, տէր, առաջնորդ Հառիճայ վանքի, 1235 թ. – 568: ***385***, ***386***, ***388***, ***389***
Համազասպ, առաջնորդ Կեչառիսի վանքի – 490, 492: ***339***, ***342***
Համազասպ եպիսկոպոս, առաջնորդ Հաւուց Թառի, 1602-1619 թթ. – 576: ***407***
Համազէ – 378: ***237***
Համամ Արեւելցի, իշխան – 236: ***136***
Համայ /?/, հայր կամ մայր Հոռոմ երէցի, որ մի այգի նուիրեց Ուշիի եկեղեցուն, 1329 թ. – 408: ***285***
Համզէ Պահլաւունի, եղբայր Վահրամի, 1015-1029 թթ. - 378, 569: ***390***
Հայդիկ, Ե դ. – 85: ***61***
Հայկ նահապետ – 60, 343, 368: ***52***, ***213***, ***225***,
Հայրաձայն, կանգնեցրեց մի խաչքար Գեոլ գիւղի եկեղեցում, 1284 թ. – 550: ***374***

[1] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանք, էջ 65, 85, 86:

Հայրապետ, նուիրատուութիւն կատարեց Արզաքանի վանքին, 1271 թ. – 481: ***326***
Հայրապետ եպիսկոպոս, առաջնորդ Տաթևի վանքի, 1274 թ. – 595: ***449***
Հայրապետ քահանայ, հօրեղբայր Գրիգորի, 1284 թ. – 550: ***374***
Հայրապետ (Հերապետ) եպիսկոպոս, միաբան Մաղարդայ վանքի, 1541 թ. – 581: ***419***
Հայրապետ, մահտեսի, նուիրատու Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի, ԺԷ դ. – 587: ***427***
Հայրապետ, վէքիլ Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի – 587: ***427***
Հայրապետ, հայր Պալոնի, որ նուիրատուութիւն կատարեց Քարատակի վանքի առաջնորդ Յակոբ վարդապետի դամբարանին, 1673 թ. – 577: ***409***
Հայրապետ, որդի Կարապետ Պապայեան Ագուլեցու, 1784-1786 թթ. – 26, 95: ***30***, ***66***
Հայրուտ, հայր Գրիգոր քահանայի, Աբրահամի եւ Հայրաձայնի, որ կանգնեցրին մի խաչարձան Գեօլ գիւղի եկեղեցում, 1284 թ. – 550: ***374***
Հանէս Հանավանցի, այլոց հետ Ամրումի այգին նուիրեցին Յովհաննավանքին, 1609 թ. – 405: ***276***
Հաջիբէկ (Հաճիբէկ), 1358 թ. – 484: ***330***, ***331***
Հասան Գնթունի, բերդապահ Կարսի, Թ դ. – 238: ***137***
Հասան Պահլաւունի, իշխան, շինեց Կեչառիսի եկեղեցիներից մէկը, 1003 թ.: Հայր Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու. Շահխաթունեանցը կարծում է, որ կա շփոթութիւն, քանի որ Գրիգոր Մագիստրոսի հօր անունը Վասակ է: Սակայն ինչպէս ցոյց է տուել Գարեգին կաթողիկոս Յովսէփեանը, խօսքը հայտնի Գրիգոր Մագիստրոսի մասին չէ – 49, 490: ***48***, ***336***, ***337***
Հասան, որդի Վախտանգի, իշխան Հաթերքի և Խաչենի, ամուսին Մամայ թագուհու, 1182 թ. – 597, 603: ***455, 459***
Հասան Մեծ, ԺԱ դ. – 490: ***338***
Հասան, հայր Վասակի, որդի Սակռի, ԺԲ-ԺԳ դդ. – 598: ***456***
Հասան, որդի Խաչենի իշխան Վախտանգի, սպանուեց պատերազմի ժամանակ, 1214 թ. – 597: ***450***
Հասան, ամուսին Ռուզուքանի. նրանց որդին շինեց Կեչառիսի Սուրբ Յարութիւն եկեղեցին, 1220 թ. – 490: ***340***
Հասան Ջալալ Դօլայ, մեծ իշխան Խաչենի, որդի Վախտանգի, թոռ Հասան Մեծի, յիշւում է 1229-1243 թթ. – 405, 590, 599, 605-607, 610: ***338***, ***440***, ***457***, ***462-464***, ***467***, ***468***
Հասան, որդի Կարապետի, 1274 թ. – 595: ***450***
Հասան իշխան, որդի Քրդի, յիշւում է 1279-1283 թթ. (*տես* նաեւ Ամիր-Հասան) – 42, 405, 490: ***40***, ***273***, ***274***
Հասան, իշխան Արագածոտն գաւառի, որդի Քրդի, մահացել է 1283 թ. – 410: ***287***
Հասան (նաեւ՝ Ամիր-Հասան) Խաղբակեան, որդի Պռօշ իշխանի, հայր Էաչի, մահացել է 1292 թ. – 42, 52, 601: ***40***, ***49***, ***458***
Հասան Բ Դոփեան, իշխան, որդի Ղարա Գրիգորի և Դոփի, ԺԳ դ. – 597, 598, 600: ***452***, ***455***, ***457***
Հասան Գ Դոփեան Ծարեցի, իշխան Բջնիի, սպանուեց Լենկ Թեմուրի կողմից, 1384 կամ 1387 թթ. – 597: ***452***
Հասան, հայր Շահանշահի, պապ Սէյտի, ԺԴ-ԺԵ դդ. – 597: ***453***
Հասան, թոռ նախորդ Հասանի – 597: ***453***
Հասան (Ուզուն), Երևանի խան, 1471 թ. – 419: ***297***
Հասան Բէկ, թոռ Բայանդուրի (Բայանտրոյ), Երեւանի խան, 1475 թ. – 419: ***297***
Հասան Ալի, Ղաջար, Երեւանի խան, 1755 թ. – 419: ***300***
Հասան, եղբայր Հիւսէյին խանի, 1806-1827 թթ. – 419: ***300***
Հասանալի, որդի Ջահանշահի – 276: ***150***
Հասանբէկ, պարոն, Առաքել կաթողիկոսին վաճառեց Ճալէթու գիւղը 1511 թ. – 613: ***469***
Հատիր-Մէլիք, հայր Սարգիս կաթողիկոսի, 1546 թ. – 605: ***464***
Հարմայ (Յարմա), նահապետ – 368: ***226***
Հեթում Սեբաստոս, իշխան Լամբրոնի, ԺԲ դ. – 255: ***146***
Հեթում Ա, Կիլիկիայի թագաւոր, 1226-1270 թթ. – 257, 258: ***146***, ***147***
Հեղինէ դշխուհի, մայր Կոստանդիանոս կայսեր, մահացել է 327 թ. – 45: ***44***

Հեղինէ դշխուհի, դուստր Աղուանից իշ-
խանի, մայր իշխան Գրիգոր Մամիկո-
նեանի, Է դ. – 335: ***202***
Հեղինոս, հոգեւոր հովիւ Տարսոնի, Գ դ.
– 180: ***115***
Հերակլ, կայսր Բիւզանդիայի, Է դ.– 216,
320, 335, 591: ***131***, ***185***, ***204***, ***446***
Հերիքնազ (Հրէքնիազ), դուստր Պետրո-
սի, 1658 թ. – 578: ***413***
Հէճէպ Դաւիթ *տես* Դաւիթ Հէճէպ
Հիւսէյին փաշայ Տէրէնտէցի, 1735 թ. –
419: ***299***
Հիւսէյին Ալի Երեւանի խան, 1764-
1806 թթ. – 137, 138, 343, 419, 426,
427: ***97***, ***213***, ***300***, ***308-310***
Հիւսէյին Ղուլի խան, սարդար Երևանի
– 336, 368, 369, 380, 430, 482: ***210***,
226, 228, ***242***, ***310***, ***326***
Հիւսէին (Հուսէին), Պարսից շահ – 587:
427
Հմայակ Մամիկոնեան, հայր Վահանի,
եղբայր սուրբն Վարդան Մամիկոնեա-
նի, Ե դ. – 10, 571: ***19***, ***395***
Հոլ ոստիկան – 233: ***135***
Հոնայ (նաեւ՝ Խոնայ), հայր Հէճուպ Դաւ-
թի, 1300 թ. – 405: ***274***
Հոռոմ երէց, մի այգի նուիրեց Ուշիի
Սուրբ Սարգիս եկեղեցուն, 1329 թ. –
408: ***285***
Հոռոմ *տես* Հռիփսիմէ
Հուլաւու խան, էլղան – 188, 257: ***121***,
147
Հուսէին *տես* Հիւսէին
Հուրի, հայր Հանէս Հանավանցու, որ
այլոց հետ Ամրումի այգին նուիրեցին
Յովհաննավանքին, 1609 թ. – 405:
276
Հռիփսիմէ կոյս – 39, 58, 59, 67, 79, 317-
321, 323, 324, 326, 333, 334, 603:
37, ***51***, ***52***, ***54***, ***57***, ***180-187***, ***189***,***190***,
192, ***201***, ***460***
Հռիփսիմէ (Հոռոմ), կին Սաֆարի,
1655 թ. – 578: ***412***
Հրահատ – 131: ***91***
Հրահատ, որդի իշխան Ներսէհ Կամսա-
րականի, Է դ. – 379: ***239***

Ղազան խան (1295-1304) – 568: ***385***
Ղազար, սուրբ – 36: ***36***
Ղազար, կաթողիկոս Աղուանից, Դ դ. –
589, 590: ***433***, ***435***
Ղազար Փարպեցի, պատմիչ, Ե դ. – 9,
10, 13, 85, 131, 395, 396, 405ա, 436:
18, ***19***, ***21***, ***61***, ***62***, ***91***, ***255***, ***279***, ***315***
Ղազար վարդապետ, Եսայի վարդապե-
տի հետ շինեց Երնջակի Սուրբ Յով-
հաննու Կարապետի վանքը, 1551 թ.
– 585: ***424***
Ղազար սարկաւագ, միաբան Վանէվա-
նից, 851 թ. – 561: ***377***
Ղազար, տէր, հոգաբարձու Սաղիան գիւ-
ղի վանքի, 1660 թ. – 614: ***470***
Ղազար սարկաւագ, միաբան Մաքենեաց
վանքի, ԺԷ դ. - 561: ***377***
Ղազար վարդապետ Թաւրիզեցի,
1701 թ. – 67: ***54***
Ղազար (նաեւ՝ Ղազարոս) Ա Ջահկեցի,
կաթողիկոս Հայոց, 1737-1751 թթ. –
98, 99, 104, 303, 304, 331, 418, 521,
588, 589, 590: ***67***, ***68***, ***70***, ***160-162***,
195, ***296***, ***351***, ***431***, ***433***, ***444***
Ղազար վարդապետ Աստապատցի, միա-
բան Սուրբ Հռիփսիմէի վանքի, ԺԸ դ.
– 127, 325: ***87***, ***192***
Ղասապ վարդապետ, առաջնորդ Գօշա-
վանքի, 1283 թ. – 603: ***459***
Ղարա Մուստաֆա *տես* Լալա փաշա
Ղարանու (Արղուն խան) – 603: ***459***
Ղարիպ Մագիստրոս *տես* նաև Խարիպ
– 569: ***392***
Ղարտաշպալի, հայր խոջա Նիկողայոս
Ագուլեցու, որ նուիրատուութիւն կատա-
րեց Մաղարդայ վանքին, ԺԷ-ԺԸ դդ.
– 582: ***421***
Ղեւոնդ (Ղեւոնդիոս, Ղեւոնդէս), Կեսա-
րիայի արքեպիսկոպոս, պատրիարք,
Գ դ. – 3, 180, 184, 185, 188: ***15***, ***115-***
117, ***120***
Ղեւոնդ (Ղեւոնդէոս), աշակերտ Մեսրոպ
Մաշտոցի, Ե դ. – 123: ***82***
Ղեւոնդ Ա Եռաստեցի, կաթողիկոս Հա-
յոց, 545-548 թթ. – 209: ***130***
Ղեւոնդ պատմիչ, Ը դ. – 48, 384, 418:
47, ***245***, ***295***
Ղեւոնդ (Ղեւանդ) Մարաղացի, տէր,
1731 թ. – 75: ***56***
Ղեւոնդիոս *տես* Ղեւոնդ
Ղզեթար, դուստր Պետրոսի, 1658 թ. –
578: ***413***
Ղզեթար, մայր Քարատակի վանքի վե-
րակացու Յովհաննէս վարդապետի,
1707 թ. – 577: ***411***

Ղոչի (Ղօչէ) Հանավանցի, այլոց հետ Ամրումի այգին նուիրեցին Յովհաննա-վանքին, 1609 թ. – 405: ***276***
Ղորղանեան *տես* Թովմա Ղորղանեան
Ղուբաթ, որդի Փիրի, 1513 թ. – 567: ***381***
Ղուլամալի, Երեւանի խան, 1779 թ. – 419: ***300***
Ղուլի, նուիրատու Գողթն գաւառի Սուրբ Թովմայի վանքի – 587: ***427***
Ղուկաս աւետարանիչ – 167: ***110***
Ղուկաս, առաջնորդ Վարագայ վանքի, 1231-1237 թթ. – 603: ***460***, ***461***
Ղուկաս, նախ առաջնորդ Տեղերի վանքի, ապա՝ Յովհաննավանքի, 1599 թ. – 405ա: ***281***
Ղուկաս վարդապետ, առաջնորդ Յովհաննավանքի, 1631 թ. – 405ա: ***282***
Ղուկաս, առաջնորդ Տաթեւի վանքի, 1513 թ. – 567: ***381***
Ղուկաս, մելիք, հայր Թանգրիղուլի, 1513 թ. – 567: ***381***
Ղուկաս Ա Կարնեցի, կաթողիկոս Հայոց, 1780-1799 թթ. – 24-26, 95, 102, 109, 111-114, 127, 308-310, 321, 331, 333, 404, 421, 590: ***28-30***, ***66***, ***70***, ***73-75***, ***87***, ***163***, ***164***, ***186***, ***197***, ***200***, ***271***, ***304***, ***445***
Ղուկաս, որդի Միայսարի – 64: ***53***
Ղուկաս Ինճիճեան *տես* Ինճիճեան Ղուկաս
Ղունկիանոս հարիւրապետ – 39, 45, 160: ***37***, ***44***, ***105***
Ղունկիանոս վարդապետ, առաջնորդ Գեղարդավանքի, ԺԸ դ. – 574: ***404***
Ղուպասար, որդի Միայսարի – 64: ***53***
Ղուտալչաք, ամուսնու՝ Ասնաւորի եւ որդու՝ Զաքարիայի հետ կատարեցին մի շարք բարեգործութիւններ, այդ թւում Քարգործենց հողը նուիրեցին Աշտարակի Սուրբ Մարիանէ եկեղեցուն, 1326 թ. – 401: ***263***, ***264***
Ղօչէ *տես* Ղոչի

Ճահանշա *տես* Ջահանշահ
Ճար Մանծկերտացի, հայր Ումեկի, պապ Ճարի, 1283 թ. – 603: ***459***
Ճար Մանծկերտացի, որդի Ումեկի, 1283 թ. – 603: ***459***
Ճավճավաձէ Գարսեւանեան Ալէքսանդր, Վրաց իշխան, գեներալ-մայոր, Երեւանի նահանգապետ, 1828 թ. – 419: ***300***
Ճոսլին կոմսի տիկին – 251: ***144***

Մաթութ, Նազխաթունի հետ մի այգի վաճառեց Պետեւանին, 1266 թ. – 433: ***314***
Մալխաս Շաղկերտցի, հայր նահատակ Թամամ կոյսի, 1691 թ. – 413: ***290***
Մալխաս, հայր Քարատակի վանքի վերակացու Յովհաննէս վարդապետի, 1707 թ. –577: ***411***
Մալխութ, պապ Դօլվաթբէկի, 1584 թ. – 405: ***275***
Մակար վարդապետ Շամշադինեցի (Շամշոյլտէ), միաբան Սեւանայ վանքի: Մահացել է 1825 թ. մարտի 1-ին – 530: ***363***, ***364***
Մակարիոս, եպիսկոպոսապետ Երուսաղէմի, Դ դ. – 190: ***122***
Մակլիխուսա, աղա – 384: ***246***
Մահմատ խան, մականունը՝ Թօխմախ, Երեւանի խան, 1583 թ. – 419: ***298***
